ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ
ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿՈՂՆԵՐ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Մաշտոցի անվան Մատենադարանը եւ «Մատենադարանի բարեկամներ»
հիմնադրամը երախտագիտություն են հայտնում
բարերար **Մաքսիմ Հակոբյանին**
սույն գրքի հրատարակությունը հովանավորելու համար

“MATENADARAN”
MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

SAMUEL ANETSI
AND CONTINUATORS

THE CHRONICLE

From Adam to 1776

Critical Text, Study and Commentary by Karen Matevosyan

“NAIRI” Publishing House
Yerevan – 2014

“МАТЕНАДАРАН”
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МАШТОЦА

САМУЭЛ АНЕЦИ
И ПРОДОЛЖАТЕЛИ

ХРОНОГРАФИЯ

От Адама до 1776 г.

Подготовка текста, исследование и комментарии
Карена Матевосяна

Издательство “НАИРИ”
Ереван - 2014

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ
ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿՈՂՆԵՐ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Ադամից մինչեւ 1776 թ.

Աշխատասիրությամբ Կարեն Մաթեւոսյանի

«ՆԱԻՐԻ»
Երեւան - 2014

ՀՏԴ 93/99
ԳՄԴ 63.3
Ս

Տպագրվում է
Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ Վահան Տեր-Ղեւոնդյան

պատմական գիտությունների թեկնածու

Ս Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ Կարեն Մաթեւոսյանի / խմբագիր՝ Վ. Տեր-Ղեւոնդյան. – Եր.: «Նաիրի», 2014, - 504 էջ:

Գիրքը ներկայացնում է 12-րդ դարի պատմիչ Սամվել Անեցու ժամանակագրությունը (Ադամից մինչեւ 1163 թ.), հետագայում կատարված ընդմիջարկություններով ու այն շարունակած հայտնի եւ անհայտ հեղինակների հավելումներով՝ հասնելով մինչեւ 1776 թվականը: Պահպանվել են ժամանակագրության 70-ից ավելի ընդօրինակություններ, որոնցից քաղվել են բազմաթիվ նորահայտ տեղեկություններ: Նյութը ներկայացվում է ուսումնասիրությամբ եւ ծանոթագրություններով:

Նախատեսված է հայագետների եւ պատմությամբ հետաքրքրվող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 93/99
ԳՄԴ 63.3

ISBN 978-5-550-01754-8

© Մաշտոցի անվ. Մատենադարան

© Կարեն Մաթեւոսյան, 2014 թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սամվել Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ» Ժամանակագրությունը[1] 12-րդ դարի հայ մատենագրության նշանավոր երկերից է, որը գրվել է Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու (1113-1166) պատվերով: Այն սկսվում է Ադամից եւ հասնում մինչեւ 1163 թվականը: Չնայած ժամանակագրական այդ մեծ ընդգրկմանը՝ երկը, հարուստ բովանդակության եւ սեղմ շարադրանքի շնորհիվ, միջնադարում բազմաթիվ ընդօրինակություններ է ունեցել: Այժմ հայտնի է Ժամանակագրության ամբողջական կամ մասնակի ընդօրինակություն պարունակող յոթ տասնյակից ավելի ձեռագիր:

1818 թ. լատիներեն թարգմանությամբ (Յոհ. Զոհրաբ, Ա. Մայ), 1876 թ. ֆրանսերենով (Մ. Բրոսսե) եւ 1893 թ. հայերեն հրատարակությամբ (Ա. Տեր-Միքելյան) գիտական աշխարհին հայտնի դարձած այս Ժամանակագրության հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ նրա երկրորդ մասը՝ Քրիստոսի ծննդից սկսած, Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի» հետեւողությամբ գրված է ժամանակագրական աղյուսակների եղանակով, որտեղ ուղղահայաց թվաշարքերում յուրաքանչյուր տարի առանձին տող է զբաղեցնում: Քանի որ ամեն մի տարվա դիմաց տեղեկություն չկա, եւ աղյուսակներում բավականաչափ ազատ տեղեր են մնացել, դրանք հետագայում լրացվել են մեծ թվով ընդմիջարկություններով ու հավելումներով:

Ժամանակագրությունը հետագայում նաեւ շարունակվել է տարբեր հեղինակների ձեռքով, որոնց թվում են Սյունյաց մետրոպոլիտ, պատմիչ Ստեփանոս Օրբելյանը, Կիլիկյան Հայաստանի նշանավոր իշխան Հեթում պատմիչ Կոռիկոսցին, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք Եփրեմ Ղափանցին եւ ուրիշներ: Ստեփանոս Օրբելյանը, որը ձեռքի տակ ունենալով Սամվել Անեցու Ժամանակագրության լրացված եւ Հայոց ՈԽԲ (1193) թվականով ավարտվող օրինակ, պատշաճ է համարել այն շարունակել, ինչպես ինքն է գրում՝ «...**բերել հասուցանել մինչ ի մերս ժամանակ**»[2], եւ հասցրել է մինչեւ 1290 թվականը: Այդ նույն սկզբունքով ժամանակագրությունը շարունակելով՝ ոմանք այն հասցրել են ընդհուպ մինչեւ 18-րդ դարի երկրորդ կեսը:

Նախկինում Ժամանակագրության ձեռագրերն առանձին ուսումնասիրության չեն ենթարկվել եւ պատմիչի հեղինակային շարադրանքն ու հետագայի ընդմիջարկությունները չեն զատորոշվել, ուստի այլոց հայտնած տեղեկությունները հաճախ վերագրվել են Սամվել Անեցուն: Բնագրական այս անորո-

---

[1] Երկի երկարաշունչ վերնագիրը չկրկնելու համար այն այսուհետեւ անվանում ենք Ժամանակագրություն՝ որպես հատուկ անուն:

[2] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, հրատարակության համար պատրաստեց Ա. Աբրահամյանը, Երեւան, 1942, էջ 21, 31: Այս եւ հաջորդ մեջբերումներում ընդգծումները մերն են – Կ. Մ.:

շությունից զերծ չեն հիմնականում ուշ շրջանի ձեռագրերի հիման վրա կատարված վերը նշված հրատարակությունները, հատկապես 1893 թ. վաղարշապատյան հրատարակությունը, որի համար օգտագործվել է 13 ձեռագիր:

Վերջին տարիներին Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերի ուսումնասիրության շնորհիվ հստակեցվեցին Ժամանակագրության բնագրական շերտերը եւ ի հայտ բերվեցին վաղագույն ձեռագրերը[3]: Դրանց միջոցով հնարավոր եղավ կազմել ու հրատարակել Սամվել Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց…» երկի՝ այլ հեղինակների ընդմիջարկություններից ու լրացումներից զտված համեմատական բնագիրը (2011 թ.)[4]:

Ժամանակագրության հետազոտության եւ հրատարակման հաջորդ փուլը սույն հրատարակությունն է, որտեղ Սամվել Անեցու երկը ներկայացվում է հետագայի լրացումներով եւ հայտնի ու անհայտ շարունակողների հավելած նյութերով (պատմիչի հեղինակային բնագիրը շարվածքով տարբերվում է լրացումներից), որի համար օգտագործվում են Ժամանակագրության գրեթե բոլոր ձեռագրերը:

Ստորեւ՝ ուսումնասիրության մասում, նախ համառոտ անդրադառնում ենք Սամվել Անեցուն եւ նրա Ժամանակագրությանը, երկի ձեռագրերին ու հրատարակություններին, այնուհետեւ՝ հավելումներին ու լրացումներին, Ժամանակագրությունը շարունակած հեղինակներին եւ վերջապես՝ ներկա հրատարակության հիմնական ձեռագրերին: Բնագիրը ներկայացվում է երեք մասով. առաջինը Սամվել Անեցու Ժամանակագրության Ա մասն է՝ Ադամից մինչեւ Քրիստոսի ծնունդը, երկրորդը՝ Բ մասը՝ ժամանակագրական թվաշարքով՝ տարբեր հեղինակների լրացումներով՝ Քրիստոսի ծննդից մինչեւ 1163 թ., երրորդը՝ Սամվել Անեցու շարունակողների ժամանակագրությունը (1164-1776 թթ.): Սամվել Անեցու հեղինակային բնագրից դուրս բոլոր հավելումների ու ժամանակագրական միավորների սկզբում համառոտագրությամբ նշվում է աղբյուրը (ձեռագիրը), իսկ եթե հեղինակը հայտնի է, նաեւ նրա անունը:

Այսպիսով՝ ներկա հրատարակությամբ հայագետների սեղանին է դրվում Սամվել Անեցու՝ Ադամից սկսվող ու 1163 թվականով ավարտվող Ժամանակագրության հենքի վրա բազմաթիվ լրացումներով մինչեւ 1776 թ. շարունակված, տասնյակ հեղինակների գրություններն ամփոփող եւ առաջին անգամ ներկայացվող բազմաթիվ ժամանակագրական միավորներ պարունակող մի հարուստ պատմական սկզբնաղբյուր:

---

[3] Կ. Մաթեւոսյան, Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերը եւ նորահայտ լրացումները, Երեւան, 2009, էջ 5-98:

[4] Սամուէլ Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, (բնագիրը կազմեց՝ Ա. Հայրապետեանը, առաջաբանը՝ Կ. Մաթեւոսեանի, խմբագիր՝ Գ. Տէր-Վարդանեան), Երեւան, 2011 (այսուհետեւ՝ Անեցի, 2011):

Ներկա աշխատանքը կատարվել է Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանում մեր գործընկերների աջակցությամբ, որոնց խորին շնորհակալություն ենք հայտնում. նախ՝ Անահիտ Հայրապետյանին՝ Սամվել Անեցու հնագույն ձեռագրերի համեմատությամբ հեղինակային բնագիրը վերականգնելու եւ հրատարակելու համար[5], սույն գրքի խմբագիր՝ Մատենադարանի գիտնական քարտուղար Վահան Տեր-Ղեւոնդյանին, շահեկան խորհուրդների համար՝ միջնադարյան սկզբնաղբյուրների ուսումնասիրության բաժնի վարիչ Էդվարդ Բաղդասարյանին եւ գլխավոր ավանդապահ Գեւորգ Տեր-Վարդանյանին, գրքի բնագրի սրբագրական աշխատանքին մասնակցած գիտաշխատողներ Թամարա Մինասյանին, Լուսինե Թումանյանին եւ Խաչիկ Հարությունյանին:

Պատմագիտական եւ աղբյուրագիտական հարցերում խորհրդատվության համար շնորհակալություն ենք հայտնում պատմական գիտությունների դոկտոր Հայրապետ Մարգարյանին, կրոնագիտական եւ լեզվի հարցերում աջակցության համար՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր Հակոբ Քյոսեյանին եւ լեզվաբանության դոկտոր Հրաչ Մարտիրոսյանին:

Աշխատանքն ըստ ամենայնի խրախուսելու եւ սույն գրքի հրատարակման համար շնորհակալություն ենք հայտնում Մատենադարանի տնօրեն Հրաչյա Թամրազյանին:

Երուսաղեմում պահվող Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերի ի նորո թվայնացված օրինակները մեզ տրամադրելու համար երախտապարտ ենք Երուսաղեմի Հայոց պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանին, տնօրեն Ժողովին, միաբաններ՝ Բարսեղ վրդ. Գալեմտերյանին, Շնորհք աբդ. Պալոյանին, Տիրան աբդ. Հակոբյանին եւ ձեռագրատան պատասխանատու Արփիկ Գահուեճյանին:

Վենետիկում Ժամանակագրության ձեռագրերն ուսումնասիրելու ընթացքում (2011 թ.) մեզ ցուցաբերած օժանդակության համար շնորհակալություն ենք հայտնում Մխիթարյան միաբանության աբբահայր Եղիա ծայրագույն վարդապետ Քիլաղպյանին, իսկ Վիեննայում պահվող ձեռագրերի մանրաժապավենները տրամադրելու համար՝ Պողոս վարդապետ Գոջանյանին:

Գրքի տպագրության համար շնորհակալություն ենք հայտնում բարերար Մաքսիմ Հակոբյանին, «Մատենադարանի բարեկամներ» հիմնադրամին, «Նաիրի» հրատարակչության եւ տպագրատան աշխատակիցներին:

[5] Տե՛ս Անեցի 2011:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՍԱՄՎԵԼ ԱՆԵՑԻ

Սամվել Անեցին[6] Անիի գլխավոր եկեղեցու՝ Մայր տաճարի (Կաթողիկե) քահանա էր եւ ժամանակակիցների շրջանում հեղինակություն վայելող մարդ, քանի որ աշակերտել էր հռչակավոր վարդապետ Հովհաննես Սարկավագին (Իմաստասեր) եւ հմուտ էր պատմության ու տոմարի հարցերում: Ուստի՝ պատահական չէ, որ նրան ժամանակագրություն է պատվիրել ժամանակի Հայոց կաթողիկոսը՝ Գրիգոր Գ Պահլավունին, որն այդ տարիներին աթոռակալում էր Մեծ Հայքի սահմաններից դուրս՝ Հռոմկլայում:

12-րդ դարում Անին քաղաքական բուռն իրադարձությունների կիզակետում էր, իսկ Մայր տաճարը՝ որպես նախկին կաթողիկոսարանի եկեղեցի, քաղաքի հոգեւոր կյանքի կենտրոնն էր ու խորհրդանիշը: 1124 թվականից հետո հաջորդաբար այս եկեղեցում են սպասավորել Հովհաննես Սարկավագ բանիբուն վարդապետը, որից հետո նրա սաները՝ Գրիգոր ավագերեցը, ապա՝ Սամվել Անեցին, իսկ դարի վերջերին մեկ այլ քահանա-պատմիչ՝ Մխիթար Անեցին:

Անիի այս շրջանի պատմությունը հատկանշվում է որպես մի տեւական պայքարի շրջան, որ մղում էին մի կողմից Շադդադյան ամիրները՝ քաղաքում իրենց իշխանությունը պահպանելու, մյուս կողմից՝ զորացած Վրաց թագավորության գահակալները՝ Անին ու նրա շրջակայքը գրավելու համար: Քաղաքի հայ հոգեւորականությունն այդ ժամանակ զգալի ազդեցություն ունեցող խավ էր: Մինչեւ 1105 թ. Անիում էր գահակալում կաթողիկոս Բարսեղ Ա Անեցին (1081-1113), որը լիարժեք գործունեության արտոնություն էր ստացել սել-

---

[6] Սամվել Անեցու վերաբերյալ տե՛ս Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 121-122, Գ. Զարբհանալեան, Պատմութիւն հայկական հին դպրութեան, Վենետիկ, 1886, էջ 600, 650-651, Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց՝ յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ Ե (այսուհետեւ՝ Անեցի, 1893): Ա. Զամինեան, Հայ գրականութեան պատմութիւն, մասն Ա, Նոր Նախիջեւան, 1914, էջ 191, Ա. Աբրահամյան, Սամվել Անեցու տոմարական եւ տիեզերագիտական աշխատությունները, «Էջմիածին», 1952, Ա, էջ 31, Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, Երեւան, 1970, էջ 94, Ն. Պողարեան, Հայ գրողներ, Երուսաղէմ, 1971, էջ 240, Ս. Տ. Մելիք-Բախշյան, Հայոց պատմության աղբյուրագիտություն, Երեւան, 1979, էջ 173, Լ. Բաբայան, Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության, Երեւան, 1981, էջ 176, A Bibliography of Classical Armenian Literature To 1500 ad, by R. W. Thomson, Brepols-Turnhout, 1995, p. 191, Կ. Մաթեւոսյան, Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը, էջ 10-29 եւ այլն: Ժամանակագրության ուսումնասիրությամբ զբաղվել է Մատենադարանի ցուցադրության բաժնի վարիչ Սամսոն Լալաֆարյանը (1923-1994), սակայն նրա հետազոտությունն անավարտ է մնացել:

ջուկյան սուլթան Մելիքշահից (1072-1092): Հենց Բարսեղի նախաձեռնությամբ Անիում վերաբացվեց կաթողիկոսարանի վարդապետարանը, որի ուսուցչապետությունը հանձնվեց Հովհաննես Սարկավագին[7]: Սամվել Անեցու Ժամանակագրության հետագայի լրացնողներից մեկը նշել է Հովհաննես Սարկավագի անեցի սաներից մի քանիսին, որոնց շարքում է մեր ժամանակագիրը. «…**տէր Խաչատուր եւ Գրիգոր եւ Յովաննէս եւ Սամուէլ, ամենեքեան սոքա Անեցիք**»[8]:

Հայտնի է, որ Հովհաննես Սարկավագն Անիում ոչ միայն զբաղվել է մանկավարժությամբ, այլեւ տոմարի բարեկարգման հարցերով[9], տոմարագիտություն ուսուցանել նաեւ իր սաներին[10]: Այդ գիտելիքները կիրառող նրա սաներից էր Սամվել Անեցին, որը Ժամանակագրությունից բացի գրել է նաեւ տոմարական աշխատություն՝ «Մեկնութիւն տումարի, զոր արարեալ է Սամուէլի քահանայի ի խնդրոյ Ստեփանոսի Իմաստասիրի»[11]: Ցավոք, պատվիրատուի վերաբերյալ անունից բացի ոչինչ հայտնի չէ: Գործը շարադրված է հարց ու պատասխանի ձեւով, ընդ որում՝ Սամվել Անեցին օգտվել է Անանիա Շիրակացու «Քննիկոն» աշխատության տոմարագիտական բաժնից՝ երբեմն առանձին հատվածներ նույնությամբ արտագրելով: Հայտնի է նաեւ, որ Սամվել Անեցին 1165 թ. խմբագրել է «Պատճէն տումարի» գործը[12]:

Բարսեղ Ա Անեցուն 1113 թ. Քեսունի Կարմիր վանքում հաջորդած կաթողիկոսը՝ Գրիգոր Գ Պահլավունին, 1120-ական թվականներին փորձեց կաթողիկոսական աթոռը վերահաստատել Անիում[13]: Այս մասին հաղորդող միակ պատմիչը Սամվել Անեցին է, ըստ որի՝ կաթողիկոսն Անի գալու վերա-

---

[7] Կ. Մաթեւոսյան, Հովհաննես Սարկավագի գործունեությունն Անիում, «Էջմիածին», 2005, Է-Ը, էջ 59-72:

[8] Անեցի, 1893, էջ 128, սույն գրքում՝ էջ 208: Այս տեղեկությունները նախորդ ուսումնասիրողները վերագրել են հենց Սամվել Անեցուն, մինչդեռ այն հետագայի հավելում է՝ իրազեկ մարդու ձեռքով կատարված:

[9] Գ. Բրուտյան, Օրացույց հայոց, Ս. Էջմիածին, 1997, էջ 115-145, Ռ. Վարդանյան, Հայոց տոնացույցը, Երեւան, 1999, էջ 230-266:

[10] Այդ մասին նշվում է վարդապետի վարքում (Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երեւան, 1956, էջ 121):

[11] Ա. Աբրահամյան, Սամվել Անեցու տոմարական…, էջ 30-36:

[12] Ռ. Վարդանյան, «Պատճէն տումարի Հայոց»-ի խմբագրությունների ժամանակի որոշումը, Երեւան, 2007, էջ 195-196, Գ. Սիմոնյան, Ռ. Վարդանյան, Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տոմարի Հայկազնեայ» տոմարական ժողովածուն, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Տարեգիրք, Ա, Երեւան, 2006, էջ 60, 69, 71:

[13] Բարսեղ Ա Անեցին 1105 թ. Անիից Կիլիկիայի սահմանների մոտ գտնվող Քեսունի հայկական իշխանություն մեկնեց մահամերձ Գրիգոր Բ Վկայասեր (1066-1105) կաթողիկոսի կանչով, որի մահից հետո մնաց տեղի Կարմիր վանքում: Բարսեղը դժբախտ պատահարի զոհ դարձավ 1113-ին, բայց դեռեւս մահամերձ վիճակում հասցրեց որպես իր հաջորդ հաստատել երիտասարդ Գրիգոր Գ-ին՝ Գրիգոր Վկայասերի քրոջ թոռանը: Երկու տարի անց Քեսունի իշխանությունը վերացավ, եւ Գրիգոր Գ-ն եղբոր՝ Ներսես Շնորհալու հետ տեղափոխվեց Տլուք գավառի Ծովք փոքրիկ ամրոցը, որը կաթողիկոսի համար այնքան էլ ապահով հանգրվան չէր: 1151-ին նա տեղափոխվեց Հռոմկլա, այն գնելով Եդեսիայի կոմս Ջոսլին Բ-ի այրի Բեաթրիսից:

բերյալ պայմանավորվածություն ուներ քաղաքի Շադդադյան ամիր Աբու-լ-Ասվարի հետ՝ «...սրբազան հայրապետն եւ առաջնորդն հաւատոյ **տէր Գրիգորիս, վասն զի ուխտ սիրոյ ունէր առ Ապլսուար՝ վասն իւր սեփական աթոռոյս, գալ այսրէն նորա յաւժար կամակցութեամբ**»[14]: Սակայն քաղաքական իրադարձությունները, մասնավորապես 1124-1126 թթ. քաղաքի գրավումը վրացիների կողմից, խափանեցին այս ծրագիրը:

Գրիգոր Գ Պահլավունին երկրորդ անգամ փորձում է Անի տեղափոխվել 1149-50 թվականներին, ինչպես հաղորդում է Սմբատ Սպարապետը, բայց հանգամանքների բերումով տեր դառնալով Հռոմկլա անառիկ ամրոցին՝ այնտեղ է հաստատում կաթողիկոսարանը[15]: Չնայած դրան՝ կաթողիկոսը շարունակում է սերտ կապեր պահպանել Անիի հետ, որի մի վկայությունը կարելի է համարել ժամանակագրության պատվիրումը Մայր տաճարի երեց Սամվել Անեցուն:

Իր օգտագործած աղբյուրները ժամանակագրության սկզբում թվարկելուց հետո հեղինակը, դիմելով պատվիրատուին, գրում է. «Իսկ իմ մոռացեալ զտգիտութիւն եւ զանուսումնութիւն իմ, ի թախանձելոյ քո, սրբազգեացդ Գրիգոր, յաղթեցայ ի սիրոյ կամաց ձեր, առ ի գրել, զոր կամեցար եւ այժմ աւժանդակեալ ի Հոգւոյն Սրբոյ, ժողովեցից ի սոցանէ կարճ ի կարճոյ զախորժակս ձեր զբանից հանդէս, միայն զճշմարտութեանն գնալով զհետս»[16]:

Պատմիչը նշում է տեղեկությունների համառոտ հիշատակման իր սկզբունքը՝ «կարճ ի կարճոյ», սակայն քիչ անց դրանից շեղվում է, երբ ընդարձակ տեքստով գրում է Գրիգոր Գ Պահլավունու կաթողիկոսական ընտրության ու գործունեության մասին[17]: Այս հատվածի վերջում Սամվել Անեցին ուղիղ խոսքով դիմում է Գրիգոր Գ Պահլավունուն. «Բայց վասն զի զսկիզբն ամաց եւ զյաջորդել առաջնորդութեան, կամիմք տակաւին նշանակել, եւ այսպիսի յաջողուածք եւ այլ բարեբախտութիւնք եւ գործք գործելիք զկնի ամաց աւրստաւրէ յաւելաւ, այնր աղագաւ աստանաւր թողաք զայլոցն պատմութիւն, զորս եթե արժանի լինիմք յիւրում տեղւոջ գրեսցուք: **Եւ աստանաւր զայսոսիկ ծանուսցուք մերոյ հրամանատուիդ եւ պատուասիրի**»[18]: Այստեղ Սամվել Անեցին հստակորեն Գրիգոր Գ-ին անվանում է իրեն «հրաման տվող», պատվիրատու, մի փաստ, որը զարմանալիորեն անտեսել են որոշ ուսումնա-

---

[14] Սույն գրքում՝ էջ 208:

[15] Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 168, Կ. Մաթեւոսյան, Անի, Ս. Էջմիածին, 1997, էջ 61,62:

[16] Անեցի, 2011, էջ 27, սույն գրքում՝ էջ 80: Մարդկության պատմությունն սկսելով Ադամից եւ հասնելով մինչեւ Հիսուս Քրիստոսի ծնունդը՝ պատմիչը մեկ անգամ եւս անվանապես դիմում է պատվիրատուին (սույն գրքում՝ էջ 114):

[17] Գրիգոր Լուսավորչից սկսած՝ բոլոր կաթողիկոսներին Սամվել Անեցին մի քանի բառ կամ մի քանի տող է նվիրել, իսկ Գրիգոր Գ Պահլավունու գահակալմանը՝ ձեռագրի մի քանի էջ:

[18] Սույն գրքում՝ էջ 203-204:

սիրողներ եւ հիմնվելով Ժամանակագրության վերջում եղած հավելումլրացումների թվականների վրա, որոնք անցնում են Գրիգոր Գ-ի մահվան՝ 1166 թվականը, երկի պատվիրատու են կարծել Գրիգոր Դ Տղա (1173-1193) կաթողիկոսին[19]: Հետազոտողների մեծ մասը, ձեռքի տակ ունենալով Ժամանակագրության Ա. Տեր-Միքելյանի 1893 թ. հրատարակությունը, ուր Սամվել Անեցու Ժամանակագրության վերջին նշումը դրված է Հայոց ՈԻԹ (1180) թվականի դիմաց, թերես ուշադրություն չի դարձրել նույն էջի տողատակի ծանոթագրությանը, ուր ասվում է, որ այդ եւ նախորդ՝ 1176 թվականի իրադարձության մասին նշված է եղել հրատարակության համար օգտագործված 13 ձեռագրերից միայն մեկում[20]:

Իրականում Սամվել Անեցու երկը միանշանակ վկայում է, որ Ժամանակագրության պատվիրատուն Գրիգոր Գ Պահլավունին է[21], իսկ հեղինակի վերջին գրառումը, ինչպես հնագույն ձեռագրերի ուսումնասիրությունն է ցույց տալիս, կատարվել է 1163 թվականի դիմաց՝ պատվիրատուի կենդանության ժամանակ:

Ժամանակագրության վերջում Սամվել Անեցին անդրադարձել է 1161-1163 թթ. դեպքերին: Նա նախ նշում է, որ 1161 թ. Անին գրավել է Վրաց Գեորգի Գ թագավորը (1156-1184) եւ շեշտում, որ ինքը դրա ականատեսն է եղել. «ՈԺ (1161): Յայս ամս թագաւորն Վրաց Գուորգի առ զԱնի յունիս ի ԺԳ (13): Եւ ապա յաւգոստոս ամսամտին՝ կոտորէ զՇահի Արմէնն, եւթն հազարաւ ՁՈ (80 000) **եւ այսորիկ ականատես եղեաք մեք**»[22]:

Ապա պատմիչը գրում է շրջակա մահմեդական իշխանությունների պա-

---

[19] Ուսումնասիրողների այս խմբի մեջ են Ղ. Ալիշանը (Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 121-122), Ա. Զամինյանը (Ա. Զամինեան, նշվ. աշխ., էջ 191), Ս. Մելիք-Բախշյանը (Ս. Մելիք-Բախշյան, նշվ. աշխ., էջ 173) եւ այլք: Հ. Աճառյանը տարակուսում է, թե Անեցին «գրել է Գրիգոր Գ (կամ Դ՞) կաթողիկոսի հորդորանքով» (Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 4, Երեւան, 1948, էջ 384): «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական բազմահատորյակում Լ. Բաբայանը նույնպես Անեցու պատվիրատու է համարում Գրիգոր Տղային (Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ, հ. III, Երեւան, 1976, էջ 805): Այս տեսակետը, ինչպես եւ Ժամանակագրության ավարտի կարծեցյալ 1180 թվականը, մուտք են գործել նաեւ հայկական չորս հանրագիտարան (Հայկական սովետական հանրագիտարան, հ. 10, Երեւան, 1984, էջ 161, Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 4, Երեւան, 2003, էջ 328, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 885, Ով ով է. հայեր, կենսագրական հանրագիտարան, հ. 2, Երեւան, 2007, էջ 391):

[20] Անեցի, 1893, էջ 139:

[21] Իրավացիորեն Գրիգոր Գ Պահլավունուն են Սամվել Անեցու պատվիրատու համարել Գ. Զարբհանալյանը (Գ. Զարբհանալեան, նշվ. աշխ., էջ 600, 650-651), Մ. Օրմանյանը (Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, Էջմիածին, 2001, էջ 1394), Մ. Աբեղյանը (Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, էջ 103), Ա. Առաքելյանը (Ա. Առաքելյան, Հայ ժողովրդի մտավոր զարգացման պատմություն, հ. Ա, Երեւան, 1959, էջ 468): Այս խնդրի մասին հանգամանորեն տե՛ս Կ. Մաթեւոսյան, Սամվել Անեցու Ժամանակագրության, էջ 34-46:

[22] Սույն գրքում՝ էջ 218:

տասխան գործողությունների մասին, որոնք Խորասանի սուլթանի գլխավորությամբ 1163-ին պարտության մատնեցին Գեորգիին. «ՈԺԲ (1163): Ապա զաւրաժողով լիեալ սուլտանն Խորասանայ՝ եկեալ ի դուռն քաղաքիս Անւոյ եւ զարհուրեցոյց զբնակիչք սորա, յետ L (30) աւուր գնաց գաղտագողի աղուեսաբար եւ հար զթագաւորն Գւորգի եւ զաւար նորա էառ եւ **դարձաւ ի տեղի իւր**»[23]: Սա Սամվել Անեցու ժամանակագրության մեջ եղած հեղինակային վերջին նախադասությունն է, որից հետո, ժամանակագրության հնագույն ընդօրինակության մեջ՝ Մ5619 ձեռագրում[24] (Կամրջաձոր, 1176 թ.), ավարտանշան է դրված:

Ընդամենը մեկ տարի անց՝ 1164 թվականի վերջերին, վրացիներն ստիպված Անին վերադարձնում են Շադդադյաններին[25], սակայն այս փաստն արդեն տեղ չի գտել Սամվել Անեցու մոտ, քանի որ նա ժամանակագրության շարադրանքը դադարեցրել է 1163-ին:

Ժամանակագրության հնագույն ձեռագրերի ավարտական հատվածների ուսումնասիրությունից երեւում է, որ 1163 թվականից հետո՝ մինչեւ 1173 թ., նրա մեջ ավելացվել է եւս չորս վկայություն[26], հավանորեն ուրիշ մեկի ձեռքով, որից հետո նոր միայն Ժամանակագրությունը բազմացման համար տրվել է ընդօրինակողներին[27]:

Սամվել Անեցու կենսագրության վերաբերյալ գրականության մեջ կարելի է հանդիպել որոշ անհամոզիչ ենթադրությունների: Օրինակ՝ Արշակ Տեր-Միքելյանը նրան ենթադրաբար նույնացրել է Կիլիկիայում ապրած գրիչ Սամվելի հետ, որը Ներսես Լամբրոնացու (1153-1198) հանձնարարությամբ 1190 թ. Սկեւռայում ձեռագիր է ընդօրինակել եւ մի ընդարձակ հիշատակարան գրել[28]: Սակայն այն հանգամանքը, որ իրեն «նուաստ եւ յետին» գրիչ կոչող այս Սամվելը Սկեւռայի միաբան էր եւ վանքի մոտ գտնվող

---

[23] Սույն գրքում՝ էջ 218:

[24] Մ5619 – Մատենադարանի թիվ 5619 ձեռագրի համառոտագրությունն է: Ժամանակագրության բոլոր ձեռագրերի ցանկը համառոտագրություններով ներկայացված է գրքի վերջում:

[25] Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երեւան, 1980, էջ 116:

[26] Դրանք են՝ 1166 թ. Գրիգոր Գ-ի մահը եւ եղբոր՝ Ներսես Դ-ի նրան հաջորդելը, 1167 թ. երկրաշարժը Երզնկայում, 1168 թ. Թորոս իշխանի (Կիլիկիա) մահը, 1173 թ. Ներսես Դ-ի մահը եւ Գրիգոր Տղայի հաջորդելը: Նկատենք, որ Սամվել Անեցին Կիլիկիո ոչ մի իշխանի անուն չի տալիս, եւ չի բացառվում, որ այս մի քանի հավելումը կիլիկյան ծագում ունեն:

[27] Այս մասին հանգամանորեն տե՛ս Կ. Մաթեւոսյան, Սամվել Անեցու ժամանակագրության հնագույն ձեռագրերը, ակադեմիկոս Ն. Մառի ծննդյան 140 եւ մահվան 70-ամյակներին նվիրված ժողովածու, Երեւան, 2005, էջ 37-48, նույնի՝ Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը, էջ 40-46, 72, 95:

[28] Անեցի, 1893, էջ Ե:

Լամբրոնն անվանում է «ամրոց տէրանց մերոց», անհավանական է դարձնում Սամվել Անեցու հետ նրա նույնության հնարավորությունը:

Իսկ Ա. Աբրահամյանը մատնանշում է Զմմառի հավաքածուի ձեռագրերից մեկը, որի գրիչը հունարեն եւ հայերեն խառն տառերով հիշատակություններ է թողել՝ իրեն անվանելով «Սանւիել մեղապարտ քահանա», եւ որն ըստ հեղինակի, «պատմա-տոմարագիտական բովանդակությամբ արժեքավոր ունիկում է՝ գրված հայ ականավոր ժամանակագիր Սամուել Անեցու կողմից 1178 թ.»[29]: Հիշյալ ձեռագիրը բազմազան նյութերի ժողովածու է, որի միայն սկզբի մասն է այս գրչինը[30], շարունակությունը գրել են ուրիշները, մի մասը Թադեոս քահանան՝ 1123 թ. Դրազարկում, իսկ ձեռագրի վերջում դարձյալ հունարեն եւ հայերեն խառնագրով հիշատակվում են Սիմեոն եւ Ռստակես քահանաները[31]: Ձեռագիրը թերեւս հայ-հունական սերտ առնչություններ ունեցող միջավայրի՝ ենթադրաբար կիլիկյան շրջանի ծնունդ է: Զմմառի ձեռագրացուցակը կազմող Մ. Քեշիշյանը նշված «Սանւիել» քահանային իրավացիորեն չի նույնացնում Սամվել Անեցու հետ[32]:

Սամվել Անեցու կենսագրության առնչությամբ գրականության մեջ (Գ. Զարբհանալյանից սկսած) կարելի է հանդիպել մի թյուր տեղեկություն այն մասին, որ նա աշակերտել է Գեւորգ վարդապետին: Իրականում այդ մասին վկայող հատվածը, որ տեղ է գտել Ժամանակագրության 1893 թ. հրատարակության մեջ, հավելում է Մ1486 ձեռագրում եւ վերաբերում է ոչ թե Անեցուն, այլ այդ ձեռագրի գրիչ Սահակ Երզնկացուն, որը հիշատակել է իր ուսուցչին[33]:

Սամվել Անեցին, պատմական բուռն իրադարձությունների ականատես հեղինակ լինելով, հատկապես հայրենի քաղաքի՝ Անիի պատմության դրվագներին անդրադառնալիս ավելի բծախնդիր է: Դա երեւում է, օրինակ, Գագիկ Բ-ի գահակալման եւ Անիի բյուզանդական տիրապետության տակ անցնելուն նվիրված մեծ հատվածում, որտեղ նա, ի տարբերություն այլ հայ պատմիչների, քննադատաբար է անդրադառնում երիտասարդ արքայի գործունեությանը[34]: Անիի պատմության մեկ այլ դրվագ վերաբերում է 1120-ական թվականներին, որի ականատեսն էր նա: 1110 թ. Անիի մահացած ամիրին՝ Մա-

---

[29] Ա. Աբրահամյան, Հայկական ծածկագրություն, Երեւան, 1978, էջ 147-148, նույնի՝ Հայոց գիր եւ գրչություն, Երեւան, 1973, էջ 271:

[30] Այս գրչին պատկանող էջերում տեղ են գտել «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ» (1ա-45ա), «Մղոնահամարք ճանապարհաց» (45ա-46ա), «Տոմար» (47ա-105բ): Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանի, կազմեց Մ. Քէշիշեան, Վիեննա, 1964, էջ 490-491:

[31] Նույն տեղում, էջ 495:

[32] Նույն տեղում, էջ 804:

[33] Տե՛ս սույն գրքում՝ էջ 142 եւ համապատասխան ծանոթագրությունը:

[34] Այս մասին տե՛ս Կ. Մաթեւոսյան, Սամվել Անեցին Անիի պատմության մասին, «Էջմիածին», 2006, Բ-Գ, էջ 72-85:

նուչեին փոխարինած որդին՝ Աբու-լ-Ասվարը, ի տարբերություն հոր, բարյացակամ չէր հայերի նկատմամբ: Նա անզգուշություն է ունենում վիրավորելու նաեւ անեցիների կրոնական զգացումները, երբ Խլաթում մի մեծ մահիկ պատրաստելով՝ բերում ու բարձրացնում է Անիի Կաթողիկեի գմբեթին: Սելջուկները տաճարը մզկիթի էին վերածել դեռ 1064 թվականին՝ քաղաքի գրավումից հետո, եւ Աբու-լ-Ասվարը, փաստորեն, միայն հին մահիկը փոխարինում է նորով, բայց քաղաքի զորացած հայ բնակչությունը չի հանդուրժում այդ արարքը եւ, օգտագործելով նոր մահիկի տեղադրման առիթը, ընդվզում է ամիրի դեմ: Անեցիները դիմում են Վրաց Դավիթ Դ Շինարար (1089-1125) թագավորին, որը պատեհ առիթն օգտագործելով, 1124 թ. արշավելով հեշտությամբ գրավում է Անին, գերում ամիրին իր ընտանիքով: Ուշագրավ է, որ Անի գալու հրավերով Դավիթ թագավորի մոտ մեկնած անեցի բանագնացները հոգեւոր դասի ներկայացուցիչներ՝ դպիրներ էին[35]:

Քաղաք մտած Վրաց թագավորի առաջին գործերից մեկն այն է լինում, որ հանդիսավոր ծեսով վերստին օծել է տալիս Կաթողիկեն: Մատթեոս Ուռհայեցին, Վարդան Արեւելցին, ինչպես նաեւ անանուն վրացի պատմագիրը քաղաքի գրավման մասին գրելիս հիմնականում անդրադառնում են Կաթողիկեի վերաօծման դեպքին[36]: Իսկ ահա իրադարձությունների ականատեսը՝ Սամվել Անեցին, միանգամայն այլ տեսանկյունից է կատարվածը ներկայացնում:

Սամվել Անեցին Կաթողիկեի հետ պատահածի մասին լռում է գուցե այն պատճառով, որ չէր ուզում իրադարձության կրոնական կողմն ընդգծել՝ նկատի ունենալով Աբու-լ-Ասվարի եւ իր պատվիրատու Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսի հարաբերությունները կամ թերեւս խուսափում է պատմել Կաթողիկեի՝ երբեւէ մզկիթի վերածված լինելու մասին[37]: Սակայն պատմության այս հատվածը զանց առնելով՝ Սամվել Անեցին կամա թե ակամա ներկայացնում է անեցիների ընդվզման հիմնական պատճառը, որն Անիի շուրջն ստեղծված անկայուն վիճակն էր, վրացիների ու սելջուկների պարբերական դարձած ասպատակությունները, ավազակությունը, որից ելք գտնելու համար քաղաքացիները դիմում են հիշյալ քայլին: Նա գրում է. «Ի բազում հինահարութեանց

---

[35] Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, հ. Ա, Երեւան, 1934, էջ 218:

[36] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները՝ Հ. Բարթիկյանի, Երեւան, 1991, էջ 392, Վարդան Արեւելցի, Տիեզերական պատմություն, աշխարհաբար թարգմանությունը՝ Գ. Թոսունյանի (գրաբար տեքստը վերահրատարակությունն է 1862 թ. Վենետիկի հրատարակության), Երեւան, 2001, էջ 122-123, Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, հ. Գ, Երեւան, 1955, էջ 42-43:

[37] Կաթողիկեի ավագերեցը լինելով՝ Սամվել Անեցին, իր Ժամանակագրության մեջ այս եկեղեցին տարբեր առիթներով մեծարելով կոչում է «պայծառափառ», «մեծափառ», «սխրատեսիլ»: Վերջին ածականը գուցե հեղինակային նորաբանություն է, քանի որ հայ մատենագրության մեջ նրանից առաջ եւ հետո, որքան մեզ հայտնի է, «սխրատեսիլ» բառը չի հանդիպում:

եւ իսպառսպուռ ջնջելոյ, **ասպատակ արձակելով յաշխարհս մեր՝ երբեմն ի Վրաց, երբեմն ի Սկիւթականաց՝ անհնարին նեղութեամբ տարակուսեալ տառապեալ բնակիչք քաղաքիս Անւոյ եւ Շիրակ գաւառի խորհեցան ելս գտանել մրրկին**...»[38]: Հենց այս էր քաղաքի ու Շիրակ գավառի բնակչության դժգոհության բուն պատճառը, որը նշում է Սամվել Անեցին, իսկ մյուս հեղինակները հիմնականում գրում են ընդվզման առիթի՝ նոր մահիկի տեղադրման մասին: Փաստորեն, Անիի շրջանը ենթարկվել է ասպատակությունների ինչպես մահմեդականների, այնպես էլ վրացիների կողմից, եւ տարակուսած քաղաքացիները, որպես ստեղծված դրությունից դուրս գալու ելք, որոշել են ապավինել քրիստոնյա ուժեղ հարեւանին՝ «...ձեռս տալով յարքայն Վրաց ի Դաւիթ, նենգեցին ամիրային Ապլսուարայ՝ որդւոյ Մանուչէի, որ տիրէր քաղաքին յետ հաւրն մահու, առնլով զթագաւորն ի ներքս, բանալով զդրունս քաղաքին, որ ընդ մտանելն առ ժամայն եղեւ վնաս արեան եւ ոչ միոյ շնչոյ»[39]: Անիի այս «անարյուն» գրավումը, սակայն, դրամատիկ շարունակություն է ունենում. «Բայց (Դավիթը – Կ. Մ.) կալեալ զԱպլսուար որդւովքն, ընդ իւր խաղացոյց յերկիրն Վրաց, ի մահարար տեղւոջ բնակեցոյց զնոսա, ուր երկուս յորդւոցն, հանդերձ հարբն, վճարեցին զկենցաղոյս»[40]: Պատմիչներից միայն Սամվել Անեցին է նշում Աբու-լ-Ասվարի եւ նրա որդիների մահվան պատճառը՝ այն, որ նրանց բնակեցրել են «ի մահարար տեղւոջ»:

Անեցի պատմիչն այնուհետեւ գրում է Դավթի մահվան եւ որդու՝ Դեմետրեի հաջորդելու մասին, ապա նշում, որ Աբու-լ-Ասվարի անդրանիկ որդին՝ Փատլունը, որը Խորասանում էր, կատարվածի մասին տեղեկանալով, շտապում է Անի եւ պաշարում քաղաքը: Սկսվում է սով, որից փրկվելու համար պարիսպներից դուրս եկող տղամարդիկ կոտորվում են, իսկ կանայք ու երեխաները «վաճառակուր» լինում: Վրացիները ժամանակ առ ժամանակ զինական ուժեր են ուղարկում՝ «արք ընտիրք, որպէս եւ անուանին քաջագաւտիս Իւանէ՝ որդի Ապուլեթի, որ բազում արութիւնս ցուցեալ՝ զասպատակս կոտորէր: Եւ ի զաւրաժողով լինել ի վերայ քաղաքիս Փատլնոյ բազում հեծելովք, առ ոչինչ համարեալ զեկեալս ի պարտութիւն, այլեւ սակաւ արամբք պատճառ եղեւ փրկութեան քաղաքիս, մարտակցութեամբ բնակչաց սորա»[41]:

Ժամանակագրության այս հատվածում Սամվել Անեցին հարազատ քաղաքի հերոսական ինքնապաշտպանության մասին գրելիս, ասես հակիրճության իր սկզբունքից շեղվելով, ոգեշունչ տողերով արձանագրել ու պատմությանն է

---

[38] Տե՛ս սույն գրքում՝ էջ 206: Ժամանակագրության 1893 թ. հրատարակության մեջ, հիշյալ հատվածում բացակայում են «երբեմն ի Վրաց» բառերը (Անեցի, 1893, էջ 125): Այդ առաջինը նկատել է Հ. Մարգարյանը (Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի, էջ 88:

[39] Նույն տեղում:

[40] Նույն տեղում:

[41] Սույն գրքում՝ էջ 207:

փոխանցել անեցի մի խիզախ կնոջ՝ Այծյամի անունը. «Եւ յայսմ պատերազմի առաքինացաւ կին մի ի վերայ պարսպացս, առնացի ստացեալ սիրտ՝ հալածականս առնէր քարամբք զմարտուցեալսն, յելանել ընդ պատուարն՝ առ ոչինչ համարեալ զխոցուածս նետիցն, զոր վիրաւորէին արտաքուստ, եւ էր անուն նորա, ըստ արժանի արագութեան նորա, **Այծեամն կոչեցեալ**»[42]:

Պատմիչը խոսքը շարունակում է՝ գրելով, որ քանզի վրաց իշխանությունն ամենուրեք չէր հաստատվել, սովն ու մյուս դժվարությունները շարունակվում էին, ստիպված են լինում քաղաքը հանձնել Փատլունին՝ պայմանով, որ հորը դավաճանողներից վրեժխնդիր չլինի[43], սակայն հետո նա այլեւայլ միջոցներով վրեժ է լուծում: Այդ ժամանակ երկիրը թեեւ խաղաղվում է սովորական դարձած ավազակություններից, սակայն, հեղինակի խոսքերով, անխնա հարկապահանջության եւ այլ պատճառներով վրա են հասնում թշվառության ժամանակներ, որոնք ձգվում հասնում են մինչեւ այդ տողերի շարադրման օրերը. «**յաղագս վերոյգրեալ նեղութեանց եւ վասն հարկապահանջ յափշտակութեանց եկն եհաս ի վերայ մեր վերջին աղքատութիւն եւ տառապանք անհնարինք... եւ աստանաւր յաւելաւ յաճախապէս՝ մի զհետ միոյ մինչեւ յաւուրսս յայսոսիկ, յորում եմքս**»[44]:

Այս համատեքստում է Սամվել Անեցին նշում, որ անեցիների ապստամբությունը (քաղաքը վրացիներին հանձնելը), որի պատճառով խափանվել էր կաթողիկոսի՝ Անիում հաստատվելու ծրագիրը, զայրացրել է Գրիգոր Գ Պահլավունուն՝ «**սրբազան հայրապետն... յորժամ լուաւ զհամբաւս զայս՝ առաւել զայրացաւ տրտմագին ցասմամբ առ գործողս իրին**»[45]:

Ինչպես երեւում է, ժամանակագրությունը շարադրելու ընթացքում Սամվել Անեցին նամակագրական կապի մեջ է եղել պատվիրատու կաթողիկոսի հետ: Համենայն դեպս, նա հենց կաթողիկոսի հանձնարարությամբ ժամանակագրության մեջ մուծել է իր ուսուցիչ Հովհաննես Սարկավագի պատմական թղթերից քաղված բավական մեծ հատվածներ, որոնք վերաբերում են սելջուկներին ու Մելիքշահին: Այդ թղթերը Հովհաննես Սարկավագն ամենայն հավանականությամբ ժամանակին գրել է Բարսեղ Ա Անեցի կաթողիկոսի հանձնարարությամբ, որը հարկադրված էր առնչվել, բանակցել սելջուկների հետ եւ ցանկանում էր տեղեկություններ ունենալ նրանց մասին: Այդ նյութը հետաքրքրել է նաեւ Սամվել Անեցու պատվիրատուին, եւ նա վերոնշյալ հատվածների սկզբում կամ վերջում ուղիղ խոսքով դիմում է Գրիգոր Գ-ին՝ պարզաբանում տալով յուրաքանչյուր հատվածի վերաբերյալ:

---

[42] Սույն գրքում՝ էջ 207:

[43] Մատթեոս Ուռհայեցին գրում է նաեւ մեկ այլ կարեւոր պայմանի մասին. ամիրը խոստանում է, որ Կաթողիկեն այլեւս միայն հայերին պետք է պատկանի, եւ ոչ մի մահմեդական այնտեղ չպետք է ոտք դնի (Մատթեոս Ուռհայեցի, էջ 400-401):

[44] Սույն գրքում՝ էջ 207:

[45] Նույն տեղում, էջ 208:

Սամվել Անեցու անձնական կյանքի մասին քիչ բան գիտենք. հայտնի է, որ ամուսնացյալ քահանա էր՝ երեց: Բարեբախտաբար, պահպանվել են տեղեկություններ նրա որդու եւ թոռան մասին: Անիի մերձակա Խծկոնքի վանքի Ս. Սարգիս եկեղեցու 1233 թ. արձանագրության համաձայն՝ Սամվել Անեցու թոռը՝ Աբրահամ երեցը, Անիում գտնվող իր ունեցվածքից արժեքավոր նվիրատվություն է կատարել Խծկոնքի վանքին: Արձանագրության մեջ նա հիշում է հորը՝ Սարկավագ քահանային, եւ համբավավոր պապին՝ վերջինիս հիշատակին նվիրելով կատարած նվիրատվության դիմաց ստացած վեց պատարագներից երկուսը[46]: Այս արձանագրության շնորհիվ հայտնի է դառնում, որ Սամվել Անեցու քահանա որդին Սարկավագ անունն է կրել: Կարելի է ենթադրել, որ Սամվել Անեցին իր որդուն սակավ հանդիպող Սարկավագ անունով է կոչել ի պատիվ սիրելի ուսուցչի՝ Հովհաննես Սարկավագի: Հնարավոր է, որ Սամվել Անեցու որդի Սարկավագ քահանան է 1151 թ. նորոգել Անիի Ս. Սարգիս եկեղեցին, որը գրականության մեջ երբեմն կոչվում է նաեւ Սարկավագի եկեղեցի[47]:

Սամվել Անեցու թոռ եւ Սարկավագի որդի Աբրահամ երեցից հետո այս քահանայական տոհմը շարունակվել է, թե ոչ, հայտնի չէ[48]: Բայց Սամվել Անեցու տոհմի երեք սերնդի մասին պահպանված վկայությունն արդեն իսկ ուշագրավ իրողություն է, քանի որ նա այս առումով թերեւս միակն է իրենից առաջ եղած հայ պատմիչների շարքում:

---

[46] «Ի ՈՉԲ (1233) թուիս շնորհիւն Քրիստոսի, ես Աբրահամ երէց, որդի Սարկաւագ քահանայի, **թոռն Սամուէլ երիցոյ Անեցի** ետու զիմ գանձագին Բ (2) տուն նորաշէն եւ ի վերէն Բ (2) կուղպակ ի սուրբ ուխտս ի Խծկաւնս... եւ փոխարէն հատուսցէն մեզ յամենայն ամի Զ (6) աւր պատարագ՝ Դ (4) Աբրահամու եւ Բ (2) **տէր պապ երիցու**...»: Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 211:

[47] Պահպանված արձանագրությունը վկայում է. «Ի թուին Ո (1151) ես Սարկաւագ քահանա զայս ծերացեալ տաճարս Սըրբոյն Սարգսի վերըստին նորոգեցի ի հըմանէ ի յիմոց գուց. Որք ի ներկայդ էք զիս եւ ծնաւղս յիշեսջիք ի Քրիստոս Յիսուս» (Դիվան հայ վիմագրության, պր. Ա, կազմեց՝ Հ. Օրբելի, Երեւան, 1966, էջ 56): Սույն արձանագրությունը Անիի Շադդադյան տիրապետության շրջանից հայտնի առաջին եկեղեցաշինական վկայագիրն է: Եկեղեցին նորոգող Սարկավագ քահանան պետք է որ քաղաքում ամուր հենարան ունեցող մարդ լիներ, իսկ հեղինակավոր Սամվել Անեցին այն մարդն էր, որը կարող էր որդու գործունեության երաշխավորը լինել:

[48] Խծկոնքի արձանագրության մեջ Աբրահամի հիշատակած իր բոլոր ազգականները (Խոցադեղ, Հովհաննես երեց, Տիրանց, Շահման) արդեն մահացել էին: Այս հանգամանքը վկայում է, որ 1233 թ. արձանագրության գրության ժամանակ Աբրահամն առաջացած տարիքի մարդ էր: Աբրահամի ազգականները թաղվել են վանքի Ս. Սարգիս եկեղեցու մոտ՝ «...ի Սուրբ Սարքսի կողման ննջեցեալսն (թվարկում է անունները)...» (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 211): Գուցե պատահական չէ, որ Սամվել Անեցու որդի Սարկավագը նորոգել է Անիի Ս. Սարգիս եկեղեցին, իսկ վերջինիս որդին հիշատակում է իրենց ազգականների՝ Խծկոնքի Ս. Սարգիս եկեղեցու մոտ թաղված լինելը: Հնարավոր է, որ սուրբ Սարգիսն այս ընտանիքի հովանավոր սուրբն է եղել:

Սամվել Անեցու ծննդյան եւ մահվան թվականները ստույգ հայտնի չեն: Ուսումնասիրողները սովորաբար պատմիչի ծնունդը վերագրում են 12-րդ դարի առաջին տասնամյակին, մահը՝ նույն դարի 80-ականներին[49]: Հիմնական տվյալներն են՝ Սամվել Անեցին հայրենի քաղաքում ուսանել է Հովհաննես Սարկավագի դպրոցում, հավանաբար 1110-20-ականներին, քանի որ Սարկավագը մահացել է 1129 թ.: Հնարավոր է, որ 1130-ական թվականներից քահանայագործել է Կաթողիկեում: Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսից ժամանակագրություն կազմելու պատվեր ստանալով՝ աշխատել է ու շարադրանքը հասցրել մինչեւ 1163 թ.: Ռ. Վարդանյանի հաշվարկներով Սամվել Անեցին 1165 թ. խմբագրել է «Պատճէն տումարի» գործը[50]:

Հնարավոր է, որ 1166 թ. պատվիրատու կաթողիկոսի մահն անորոշության է մատնել հեղինակին, այդ պատճառով էլ նա ժամանակագրության մեջ համապատասխան վերջաբան չի գրել: 1173 թ. մի քանի վկայություններ են ավելացվել ժամանակագրության մեջ, որոնց հեղինակը Սամվել Անեցին չէ, ուստի կարծում ենք, որ նա մահացել է մինչեւ այդ, կամ հենց 1173 թվականին: Կարելի է ենթադրել, որ պատմիչի մահից հետո ժամանակագրության մայր օրինակը հայտնվել է նրա ժառանգների կամ աշակերտների ձեռքում, որոնք էլ այն լրացրել են վերջին տասնամյակի (1163-1173 թթ.) դեպքերի մասին հակիրճ տեղեկություններով ու այն ընդօրինակման տրամադրել: Պատահական չէ, որ ժամանակագրության հնագույն ընդօրինակությունները ծագում են Անիի մերձակա վայրերից՝ Կամրջաձորից՝ 1176 թ., եւ Հոռոմոսի վանքից, որտեղ ժամանակագրությունը հավանաբար արտագրվել է 1177 թվականին:

---

[49] Ա. Աբրահամյան, Սամվել Անեցու տոմարական, էջ 31, Ս. Մելիք-Բախշյան, նշվ. աշխ., էջ 173, Լ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 177:

[50] Ռ. Վարդանյան, «Պատճէն տումարի Հայոց»-ի խմբագրությունների ժամանակի որոշումը, էջ 195-196:

«ՀԱՒԱՔՄՈՒՆՔ Ի ԳՐՈՑ ՊԱՏՄԱԳՐԱՑ...» ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սամվել Անեցին Ժամանակագրությունը գրել է Եվսեբիոս Կեսարացու (մոտ. 260-340) նշանավոր Ժամանականքի («Քրոնիկոնի»)[51] սկզբունքով՝ ժամանակագրական տարբեր համակարգերի ներդաշնակեցմամբ կազմված աղյուսակներով: Ժամանակագրությունը սկսվում է փոքր առաջաբանով, որից հետո առաջին մասում, որտեղ աղյուսակներ չկան, հիմնականում Աստվածաշնչից, Եվսեբիոս Կեսարացուց ու Մովսես Խորենացուց քաղված տեղեկություններով Ադամից հասնում է մինչեւ Քրիստոսի ծնունդը: Երկրորդ մասը[52], որն աղյուսակներով է (բացառությամբ համեմատաբար մեծ հատվածների), սկսվում է Քրիստոսի ծննդյան հիշատակությամբ եւ ավարտվում 1163 թվականին վերաբերող տեղեկությամբ:

Դատելով ձեռագրերից Սամվել Անեցու աշխատությունն սկզբնապես վերնագրված է եղել՝ «Սամուելի քահանայի հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ»[53]: Վերնագրին համապատասխանելով՝ Ժամանակագրությունը հիմնականում «պատմագիրների գրքերից հավաքված... ընտրողաբար քաղված» աշխատություն է: Հեղինակը բարեխղճորեն է օգտվել սկզբնաղբյուրներից, հաճախ դրանց նկատմամբ քննական վերաբերմունք հանդես բերել: Երբեմն հեղինակը աղբյուրներում ստույգ թվական չգտնելով, առաջարկում է երկու տարբերակ, օրինակ՝ «Բայց լինի ի սպանմանէ Բէլայ ի Հայկայ մինչեւ ցՎաղարշակ ամք ՌՁԾ (1950) կամ ՌՁԽԲ (1942)»[54]: Նա չի խուսափում նաեւ իր չպարզած հանգամանքների մասին գրելուց, օրինակ՝ «Իսկ զՌըշտունին եւ զԳողթնեցին՝ հատուածս ի Սիսականէն, ո՛չ գիտեմ թե յանուն արա՞նցն զգաւառսն անուանեալ, թե՞ յանուն գաւառացն զնախարարութիւնսն անուանեալ»[55]:

Իր օգտագործած Հայոց պատմագրքերը եւ հեղինակներին Սամվել Անե-

---

[51] Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ Ժամանականք (հայերեն, լատիներեն), Վենետիկ, 1818: Եվսեբիոս Կեսարացու Ժամանակագրության աղյուսակային սկզբունքը Սամվել Անեցուց առաջ չի կիրառվել հայ մատենագրության մեջ, թեեւ այդ երկից օգտվել են դեռեւս Ագաթանգեղոսն ու Մովսես Խորենացին, նաեւ հետագայի պատմիչները:

[52] Միջնադարում եւս Ժամանակագրությունն ընկալվել է որպես երկմասնյա գործ, քանի որ գրիչներից ոմանք իրենց հիշատակարանը թողել են առաջին մասի ավարտից հետո, իսկ երբեմն ընդօրինակել են միայն առաջին կամ երկրորդ մասը: Սամվել Անեցու Ժամանակագրությունն իր կազմած ձեռագրացուցակում երկմասնյա գործ է ներկայացնում նաեւ Հ. Տաշյանը (Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց՝ Յակովբոս Տաշեան, Վիեննա, 1895, էջ 290-291):

[53] Տարբեր ձեռագրերում վերնագրում ընդմիջարկություններ ու փոփոխություններ են կատարվել (տե՛ս սույն գրքում՝ բնագրի առաջին ծանոթագրությունը. էջ 358):

[54] Սույն գրքում՝ էջ 111:

[55] Սույն գրքում՝ էջ 112:

ցին թվարկում է ժամանակագրության սկզբում. «Իսկ մերայինս ազգի ասել առաջին պատմագիր **զԱգաթանգեղոս**, որ գրեաց զպատճառ լուսաւորելոյ զՀայս սրբոյն Գրիգորի՝ նորասքանչ համբերությամբ եւ ապա **Մովսէս Խորենացի** հաւաստապատում եւ զկնի **Եղիշէ**, եւ **Ղազարիկ**, եւ **Փաւստոս, որ է Բուզանդ** պատմիչ յառաջ քան զինքն: Եւ Հերակղն ի **Սեբիոսէ** եպիսկոպոսէ ասացեալ: Եւ **Ղեւոնդ երիցու**, եւ **Շապհոյ**, եւ **տէր Յովաննէս**, եւ ի վերջին ժամանակս **Ստեփաննոս վարդապետ՝ մականուն Ասողիկ**»[56]:

Բացի այդ՝ Սամվել Անեցին օգտագործել է իր ուսուցչի՝ Հովհաննես Սարկավագի պատմական թղթերը, որոնցից պատվիրատուի ցանկությամբ սելջուկների պատմությանը վերաբերող մի քանի համեմատաբար ծավալուն մեջբերում է կատարել եւ դրանով իսկ փրկել այդ հատվածները, քանի որ թղթերի բնագրերն այժմ կորած են[57]: Իր ժամանակի դեպքերը նա ներկայացրել է որպես ականատես՝ հաճախ այլ պատմիչներից տարբերվող վերաբերմունք դրսեւորելով այս կամ այն իրադարձության նկատմամբ:

Ժամանակագրության սկզբում հեղինակը խոսում է ժամանակի բնույթի մասին՝ «Յերիս որոշմունս բաժանեալ սահմանեցան թիւք ժամանակաց՝ յանցեալն, ի ներկայն եւ յապառնին», ապա անդրադառնում ժամանակի աստվածաշնչային եւ աստվածաբանական ընկալումներին՝ օգտվելով հիմնականում Եւսեբիոս Կեսարացուց, նաեւ նշում է ժամանակագրության անհրաժեշտության մասին. «...իւրաքանչիւր ոք ի կորովաբան եւ յիմաստախոհ արանց յազգին իւրում զժամանակագրութիւնս կարգեալ ձեռնարկեաց, առ որս երեւելագոյն քան զյոլովս եղեւ Եւսեբի երանելի...»[58]: Այնուհետեւ հեղինակը թվարկում է իրենից առաջ եղած պատմագիրներին, որոնցից օգտվել է՝ հասնելով մինչեւ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, ապա ուղիղ խոսքով դիմում է պատվիրատու կաթողիկոսին: Պատմիչը նշում է առաջին մասի իր հիմնական երկու աղբյուրը՝ Եւսեբիոս Կեսարացուն եւ Մովսես Խորենացուն[59], որից հետո հակիրճ ներկայացնում է երկի ընդգրկումն ու կառուցվածքը. «**Եւ նախ յԱդամայ սկսեալ՝ կատարեսցուք ի Նոյ, եւ անտի մինչեւ ցԱբրահամ եւ ապա ըստ քրոնիկոնին գաւազանօք զրաւեսցուք ի ներկայս, զաւելորդսն թողլով եւ զկարեւորսն ի ներքս մուծանելով**...»[60]:

Սամվել Անեցին հասնելով Ժամանակագրության առաջին մասի ավարտին,

---

[56] Սույն գրքում՝ էջ 79-80: Նշելի է, որ Ասողիկին հաջորդած 11-րդ դարի պատմիչ Արիստակես Լաստիվերցու Պատմությունն անծանոթ է եղել Սամվել Անեցուն:

[57] Կ. Մաթեւոսյան, Հովհաննես Սարկավագի պատմական թղթերն ըստ Սամվել Անեցու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 6, Երեւան, 2005, էջ 122-131:

[58] Սույն գրքում՝ էջ 79:

[59] «Եւ ի յոլովիցն առաւել զերկոքումբքս թեւակոխեսցուք, ձեռնտու ունելով զնոսա, զԵւսեբի ասէմ եւ զՄովսէս Խորենացի» (սույն գրքում՝ էջ 80):

[60] Սույն գրքում՝ էջ 80: Աբրահամի անունից հետո Մ5619 ձեռագրում ընդմիջարկություն է արված՝ «եւ անտի մինչեւ ի ծնունդն Քրիստոսի»:

կրկին դիմում է պատվիրատուին՝ նշելով, որ աշխատության այդ հանգրվանը Քրիստոսի ծնունդն է. «Արդ, վասն զի ըստ կանխադիր խոստմանցն ժամանեցաք յայսոսիկ, ուրանաւր կէտ եդեալ էր բանից, **հասանել ի յայտնութիւն մարմնացելոյ Բանին Աստուծոյ**...»: Շարունակելով պատվիրատուին ուղղված խոսքը՝ նա հատվածը եզրափակում է ժամանակագրական սյունակների մասին ծանուցմամբ. «Սկսեալ ի ծննդենէն Քրիստոսի յառաջին ամէն, զոր կարգեցից բուն թուական, եւ զթագաւորս Հոռովմոց, Հրէից եւ Պարսից եւ զմերոյ ազգի, ստոյգ գտակաւ գրեցից անյապաղ»[61]:

Սամվել Անեցու ժամանակագրական աղյուսակների սկզբնամասի հիմնական տեղեկությունները՝ Քրիստոսից մինչեւ 325 թվականը, բառացի կամ որոշ համառոտումներով քաղված են Եւսեբիոս Կեսարացու Քրոնիկոնից: Այստեղից են վերցված հռոմեական կայսրերի եւ հրեա թագավորների տարիները՝ ժամանակագրական սյունակներով, նաեւ Երուսաղեմի, Ալեքսանդրիայի եւ Անտիոքի եպիսկոպոսների մասին բոլոր տեղեկությունները: Իսկ Մովսես Խորենացուց նա քաղել է Պարսից եւ Հայոց Արշակունիների գահակալության թվերն ու տարիների քանակը, Հայոց առաջին կաթողիկոսների թվականները, որոնք, սակայն, զգալիորեն տարբերվում են նրանց՝ այժմ պատմագիտության մեջ ընդունված տարեթվերից: Սամվել Անեցին այս շրջանի վերաբերյալ ունեցել է նաեւ այլ աղբյուրներ:

Քանի որ աղյուսակներով մասն ավելի բարդ էր ժամանակագրական տարբեր համակարգերը ներդաշնակեցնելու առումով, հեղինակը ստիպված է եղել քննական մոտեցում ցուցաբերել, ճշտել թագավորների գահակալման, կաթողիկոսների աթոռակալության թվականները: Եւ քանի որ թվականները նշանակվում էին հաջորդաբար (ուղղահայաց հերթականությամբ), որեւէ մեկի իշխանության թեկուզ մեկ տարվա տարբերությունը մեխանիկորեն փոխում էր նաեւ հաջորդի թվականները: Մինչդեռ Սամվել Անեցու ունեցած աղբյուրները տարբեր տեղեկությունների առումով հաճախ անմիաբան էին, ուստի հասնելով Տրդատ Գ-ի եւ Ս. Գրիգոր Լուսավորչի ժամանակներին՝ պատմիչը ստիպված է լինում բացատրություն տալ, տարակուսել՝ «յաղագս անմիաբան գրելոյ պատմագրացն» եւ փորձել գտնել ժամանակագրական ճիշտ պատկերը[62]:

Աղյուսակների մասում էջի կենտրոնը զբաղեցնում են ժամանակագրական հինգ ուղղահայաց սյունակները, ուր առաջին սյունակում նշվում է Փրկչական թվականը, հաջորդ սյունակներում հռոմեական (այնուհետեւ՝ բյուզանդական) կայսրերի տարիները, սկզբնական մասում՝ հրեական ու պարսից թագավորների թվականները (ավելի ուշ՝ պարսից թագավորների սյունակում արաբ խա-

[61] Սույն գրքում՝ էջ 113-114:
[62] Նույն տեղում՝ էջ 127:

լիֆաների կառավարման տարիները) եւ Հայոց թագավորների տարիները[63]: 72 թվականից հետո հրեական թագավորների անունները դադարում են, եւ սյունակները դառնում են չորսը: Հայաստանում քրիստոնեության հաստատումից հետո՝ Գրիգոր Լուսավորչից սկսած, ավելանում է Հայոց կաթողիկոսների տարիները ներկայացնող սյունակը, իսկ Հայոց մեծ թվականի հաստատումից հետո՝ այդ թվականի սյունակը: Սրանից զատ, սյունակների սկզբում՝ դրանցից դուրս դրված է օլիմպիադայի թվականը (սկսվում է Ք.ա. 776 թվականից)[64]:

Աղյուսակների կարգի փոփոխմանը Սամվել Անեցին անդրադառնում է Բագրատունյաց թագավորության անկման մասում: Նշելով, որ Հայոց թագավորների իշխանության հաջորդական թվականներն այլեւս չեն լինելու, հեղինակը գրում է, որ այդտեղից սկսած մինչեւ իր ապրած ժամանակը չորս սյունակ է պահպանում՝ Փրկչական թվականը, կայսրերի տարիները, հայրապետների տարիները եւ Հայոց թվականը:

Ժամանակագրության երկրորդ մասում էջի կենտրոնը զբաղեցնող ժամանակագրական սյունակների աջ ու ձախ կողմում գծված են աղյուսակներ՝ նախատեսված համապատասխան տեղեկությունների համար (մեծ տեքստի հատվածներում աղյուսակներն ընդհատվում են): Ա. Տեր-Միքելյանը 1893 թ. հրատարակության մեջ աղյուսակները համարել է «անընթերցանելի», «ժամանակագրական համեմատութեան բազմաթիւ սխալներ» ունեցող եւ որոշել «...դուրս ձգել այդ տաղտկալի աղիւսակն, որ ոչ մի օգուտ չկարէ տալ՝ բացի խանգարիչ լինելուց պատմութեան եւ նորա ամբողջ ընթացքին»[65]: Նկատենք, որ մինչ այդ ժամանակագրության լատիներեն եւ ֆրանսերեն թարգմանությունները հրատարակվել էին աղյուսակներով:

Հարկ է նշել, որ աղյուսակները հրատարակության տեսակետից, իրոք, որոշ դժվարություն են ներկայացնում, քանի որ երբեմն մակագրությունները ոչ միայն աջ ու ձախ կողմերում են, այլեւ հենց նեղ սյունակների հատվածում: Ժամանակագրական անհամապատասխանություններ աղյուսակներում նույնպես կան[66], սակայն դեպքերի հիշատակման այս եղանակը հնարավորություն

---

[63] Արշակունյաց թագավորության անկումից հետո նշվում են Հայոց մարզպանների, ապա Հայոց իշխանների եւ ավելի ուշ՝ Բագրատունի թագավորների տարիները:

[64] 16-րդ դարից սկսած՝ ի հայտ են գալիս ձեռագրեր, ուր օլիմպիադայի թվականը նույնպես առնված է սյունակի մեջ:

[65] Անեցի, 1893, էջ ԻԵ-ԻԷ: Այս գրքում աղյուսակների բացակայության մասին Ա. Աբրահամյանը գրում է. «Տպագրական դժվարությունների պատճառով, դժբախտաբար, հնարավոր չի եղել Սամվել Անեցու ժամանակագրությունը տալ զուգահեռ գրաֆաներով, ինչպես ձեռագրում է, ուստի եւ տպագիրը չունի այն արժեքը, ինչ ձեռագիրն է» (Ա. Աբրահամյան, Մատենադարանի ձեռագիր գանձերը, Երեւան, 1959, էջ 41):

[66] Սամվել Անեցու ժամանակագրության հատկապես 4-7-րդ դարերի հատվածում բազմաթիվ են հայտնի պատմական դեպքերի ոչ ճիշտ թվագրումները: Օրինակ՝ Հայոց կաթողիկոսների թվականները ներկայացված են զգալի շեղումներով, որը վերանում է միայն 8-րդ դարի սկզբից:

է տալիս որեւէ իրադարձության թվականը տեսնել ժամանակագրական տարբեր հարթություններում: Մխիթար Անեցու պատմության հրատարակիչ Հայրապետ Մարգարյանը պատմիչի աղբյուրներին անդրադառնալիս նշում է, որ նա Սամվել Անեցու Ժամանակագրությունը համարում էր ամենահավաստին, «քանի որ վերջինիս հեղինակն արդեն հաղթահարել էր այն տքնաջան աշխատանքը, որն անհրաժեշտ էր բոլոր աղբյուրները պրպտելով համապարփակ ու ամփոփ ժամանակագրություն կազմելու համար»[67]: Սամվել Անեցու ժամանակագրական աղյուսակները գնահատել է նաեւ Ստեփանոս Օրբելյանը՝ գրելով. «Զայս գաւազանք եւ չափ ժամանակաց գտաք ճշդիւ սահմանեալ եւ եդեալ Սամուէլի ճշտաբան քահանայի...»[68]: Հնագույն ձեռագրերի համեմատությամբ կատարված Ժամանակագրության 2011 թ. հրատարակության մեջ պահպանված են հեղինակային աղյուսակները:

Վաղարշապատյան հրատարակության մեջ աղյուսակների հանվելուց հետո թողնվել է հիմնականում Փրկչական թվականը, հազվադեպ նաեւ Հայոց թվականը, հանգամանք, որը վնասել է բուն Ժամանակագրությանը, քանի որ տարբեր դեպքերի թվականներն ավելի ստույգ են հենց Հայոց թվականով: Իսկ Ժամանակագրության մեջ Փրկչական թվականի վերաբերյալ ժամանակին կատարված կարեւոր ճշտումն, ըստ որի՝ այն 2 տարով ավելի վաղ է արդի թվագրումից, ցավոք, ծանոթ չի եղել ուսումնասիրողներից շատերին:

Ժամանակին Լ. Խաչիկյանը եւ Վ. Հակոբյանը նշել են, որ «Սամուել Անեցին հետեւել է այն տոմարագետներին, որոնք Քրիստոսի ծննդյան տարեթիվը դրել են այժմ գործող թվականից 2 տարի առաջ, ուստի Սամուելի... ժամանակագրության մեջ, ամենուրեք, քրիստոնեական եւ հայկական թվականների տարբերությունը ոչ թե 551, այլ 553 տարի է»[69]: Այս դիտողությունն արվել է Ա. Աբրահամյանի պատրաստած՝ Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրության հրատարակության առիթով: Վերջինս այն ընդունել է եւ Հովհաննես Սարկավագի մատենագիտության մեջ նշում է. «Միջնադարյան հայ մատենագրության մեջ գործող քրիստոնեական թվականն այն թվականը չէ, ինչ որ գործ ենք ածում մենք ներկայումս, այլ քրիստոնեական՝ այսպես կոչված հայկական հաշվումների թվականը, որը երկու տարով ավելի է, քան մեր ներկայումս գործածած թվականը, այլ խոսքով ասած, ըստ հայկական հաշվարկների, Քրիստոսի ծնունդը եղած պետք է լինի մեր ներկա թվականից 2 տարի

[67] Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ. Մարգարյանի, Երեւան, 1983, էջ 31:
[68] Սույն գրքում՝ էջ 231:
[69] Լ. Խաչիկյան, Վ. Հակոբյան, Ինչպես չպետք է հրատարակվեն պատմական սկզբնաղբյուրները, ՀՍՍՌ ԳԱ հասարակական բաժանմունքի Տեղեկագիր, 1949, թիվ 2, էջ 82:

առաջ»[70]: Սամվել Անեցին այս հարցում հետեւել է իր ուսուցչին՝ Հովհաննես Սարկավագին, ըստ որի՝ «Ի ծննդենէն Քրիստոսի ի հայ թվականն՝ ՇՕԳ (553)»[71]: Սույն սկզբունքը որդեգրելով՝ Սամվել Անեցին ժամանակագրության Փրկչական ՇՕԴ (554) թվականի դիմաց նշել է Հայոց Ա (1) թվականը[72]: Ասվածն ավելի ակնառու կարելի է տեսնել ստորեւ ներկայացվող աղյուսակում:

	Հայկական քրիստոնեական (Փրկչական) թվական, ըստ Սամվել Անեցու եւ այլոց	
	Ա (1)	
Արդի թվագրում	Բ (2)	
1	Գ (3)	
2	Դ (4)	
3	Ե (5)	
4	Զ (6)	
…	…	
549	ՇՕԱ (551)	
550	ՇՕԲ (552)	
551	ՇՕԳ (553)	Հայոց թվական
552	ՇՕԴ (554)	Ա (1)
553	ՇՕԵ (555)	Բ (2)
554	ՇՕԶ (556)	Գ (3)
555	ՇՕԷ (557)	Դ (4)
556	ՇՕԸ (558)	Ե (5)
557	ՇՕԹ (559)	Զ (6)

[70] Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 300, նույնի, Հայ գիր եւ գրչություն, Երեւան, 1973, էջ 110-111, տե՛ս նաեւ Բ. Թումանյան, Տոմարի պատմություն, Երեւան, 1972, էջ 132:

[71] Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դդ., հ. 1, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երեւան, 1951, էջ 23, Գ. Բրուտեան, Յովհաննէս Սարկաւագի ժամանակագրական համակարգը, Երեւան, 1999, էջ 68-72, Գ. Սիմոնյան, Ռ. Վարդանյան, Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տոմարի Հայկազնեայ» տոմարական ժողովածուն, էջ 75, 96:

[72] Մ5619, 73բ:

Հայ միջնադարյան պատմագրության մեջ Սամվել Անեցու ժամանակագրությունն իր նախատիպը չունի: Սակայն հետաքրքրությունից զուրկ չէ դիտարկել կառուցվածքային այն զուգահեռը, որն առկա է Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի «Տիեզերական պատմության» եւ Սամվել Անեցու երկի միջեւ՝ պատմիչ-պատվիրատու առնչությունների տեսակետից: Բանն այն է, որ ե՛ւ Ասողիկը, ե՛ւ Սամվել Անեցին կատարել են կաթողիկոսական պատվեր, երկուսն էլ աշխատել են Անիում՝ թերեւս օգտվելով Անիի կաթողիկոսարանի նույն գրադարանից: Ասողիկն առաջին պատմիչն է, որ ժամանակագրական տվյալներ հաղորդելիս (7-10-րդ դդ.) հիմնվում է Հայոց թվականի վրա, միաժամանակ շահեկանորեն տարբերվելով նախորդ պատմիչներից՝ Պատմության սկզբում թվարկում է այն հեղինակներին, որոնց երկերից օգտվել է. «Որպէս եւ ճշմարիտ թուողն ժամանակաց **Եւսեբի Պամփիլեայ** սկսեալ ի մարդն առաջին... Եւ **զկնի նորա Սոկրատէս**: ...Իսկ ըստ հայումս՝ նախ եւ առաջին քաջն **Ագաթանգեղոս, որ նորասքանչ հրաշից եւ չարչարանաց սրբոյն Գրիգորի** եւ աստուածածանօթութեանս մերոյ է պատմիչ: Եւ զկնի մեծն **Մովսէս**...»[73]: Նշելով ինը հայ պատմիչի անուն՝ Ասողիկը խոսքն ուղղում է իր պատվիրատու Սարգիս Ա կաթողիկոսին (992-1019):

Նույնն է անում Սամվել Անեցին՝ ժամանակագրության սկզբում գրելով. «...Երեւելագոյն քան զյոլովս եղեւ **Եւսեբի** երանելի, ի մէջ առաջնոցն եւ վերջնոցն. եւ **զհետ նորա Սոկրատէս** պատմագիր այլօք բազմօք: Իսկ մերայինս ազգի ասել առաջին պատմագիր **զԱգաթանգեղոս՝ որ գրեաց զպատճառ լուսաւորեալոյ զՀայս սրբոյն Գրիգորի՝ նորասքանչ համբերութեամբ**: Եւ ապա **Մովսէս Խորենացի**...»: Ասողիկի Պատմությանը հետեւելով՝ Սամվել Անեցին ճիշտ նույն հաջորդականությամբ թվարկում է հայ պատմիչներին, հաճախ բնութագրական միեւնույն բառերով՝ վերջում ավելացնելով միայն Ասողիկի անունը («եւ ի վերջին ժամանակս Ստեփաննոս վարդապետ մականուն Ասղնիկ...»)[74], որից հետո դիմում է իր պատվիրատու Գրիգոր կաթողիկոսին:

Աղբյուրների թվարկումից հետո Ասողիկը Սարգիս կաթողիկոսին հայտնում է, որ դրանցից՝ «**յամենեցունց ի սոցանէ**»[75] օգտվել է եւ մատուցել նրա իսկ

---

[73] Ստեփանոսի Տարօնեցւոյ Պատմութիւն տիեզերական, աշխատասիրութեամբ՝ Ստ. Մալխասեանցի, ՍՊբ, 1885, էջ 6-7 (այսուհետեւ՝ Ստեփանոս Տարոնեցի):

[74] Անեցի, 1893, էջ 2-3, Սույն գրքում՝ էջ 79-80: Ասողիկին եւ Սամվել Անեցուն հետեւելով՝ իր երկի սկզբում օգտագործված աղբյուրների մատենագիտական ցանկ է ներկայացնում նաեւ Մխիթար Անեցին: Սա կարելի է համարել Անիի պատմագրության որդեգրած ուշագրավ սկզբունք: Այս ժամանակաշրջանում էր նաեւ, որ Ս. Գրքի եւ եկեղեցական գրականության վերաբերյալ մատենագիտական աշխատություններ ստեղծեցին Դավիթ Քոբայրեցին եւ Աբասի որդի Գրիգոր վարդապետը (Պ. Մուրադեան, Կովկասեան մշակութային աշխարհը եւ Հայաստանը, պր. Ա, Երեւան, 2008, էջ 308-314, տե՛ս նաեւ Գ. Տէր-Վարդանեան, Շիրակի մտաւոր-գրական մշակոյթի կենտրոնները եւ Բագրատունեաց-անիական շրջանի հայ մատենագրութիւնը, Հանդէս ամսօրեայ, 2000, էջ 236):

[75] Ստեփանոս Տարոնեցի, էջ 7:

հրամանի համաձայն, իսկ պատմության երկրորդ հանդեսի սկզբում նշում է, որ վաղ շրջանի մասին գրել է. «...քաղուածոյս Աստուածայնոց գրոց՝ **կարճ ի կարճոյ՝ համառօտիւ**...»[76]: Նույն կերպ Սամվել Անեցին աղբյուրների թվարկումից հետո դիմելով պատվիրատու Գրիգոր կաթողիկոսին գրում է, որ գործը ձեռնարկել է նրա կամքով, աղբյուրներից նյութեր ժողովել համառոտաբար՝ «**ժողովեցից ի սոցանէ կարճ ի կարճոյ**՝ զախորժակս ձեր՝ զբանից հանդէս»[77]:

Ինչպես որ Ասողիկը, դեպքերի սովորական շարադրանքը հասցնելով պատվիրատու Սարգիս Ա կաթողիկոսի գահակալությանը, մի առանձին գլուխ է նվիրում նրան՝ պատմելով, թե ինչպես «նստուցանեն **զնա յաթոռ կաթողիկոսութեան մեծաշուք պատուով**» եւ գովաբանական խոսքեր չի խնայում[78], նույն ձեւով էլ Սամվել Անեցին, ժամանակագրորեն հասնելով Գրիգոր Գ-ի աթոռակալությանը, դադարեցնում է աղյուսակագիր տեքստը եւ գրում էջով մեկ, պատմելով, թե ինչպես «Տէր Գրիգորիս **մեծաշուք պատուով նստեալ յաթոռ**...»[79] եւ այլն:

Ակնառու է, որ Սամվել Անեցին աչքի առաջ է ունեցել կաթողիկոսական պատվեր կատարող Անիում աշխատած իր նախորդ պատմիչի օրինակը: Բնական պիտի լիներ՝ տեսնելու երկու հեղինակների աշխատությունների եզրափակումը նույն սկզբունքով: Ասողիկը Պատմությունն ավարտել է «Բան վախճանի փառատրական ի սպառուած յիշատակարանիս» հատվածով, ուր նշում է թվականը՝ 1004, երախտագիտությամբ գրում պատվիրատուի մասին եւ հիշատակ հայցելով՝ եզրափակում երկը: Մոտավորապես նույնը պիտի աներ նաեւ Սամվել Անեցին, սակայն, ինչպես վերը նշվեց, նա ժամանակագրությունն առանձին վերջաբանով չի եզրափակել. հնարավոր է, որ գործը դադարեցրել է պատվիրատուի մահվան պատճառով (1166 թ.), կամ էլ հատուկ է առանց ամփոփման թողնվել՝ հետագա շարունակության ակնկալիքով:

Սամվել Անեցու ժամանակագրությունը թեեւ հիշատակվում է հայ մատենագրությանը վերաբերող գրեթե բոլոր աշխատություններում, սակայն հայ հետազոտողների կողմից առանձին ուսումնասիրության չի արժանացել: Նախկինում ժամանակագրության մանրակրկիտ հետազոտման առաջին եւ թերեւս միակ փորձը Մ. Բրոսսեի մի հրապարակումն է[80]: Հայ պատմագրության մեջ ժամանակագրության վերաբերյալ եղած գնահատականները շատ տարբեր են՝ չեզոք վերաբերմունքից մինչեւ քննադատություն:

---

[76] Ստեփանոս Տարոնեցի, էջ 59:
[77] Սույն գրքում՝ էջ 80:
[78] Ստեփանոս Տարոնեցի, էջ 259-260:
[79] Սույն գրքում՝ էջ 202:
[80] **M. Brosset, Samuel d'Ani; revue de sa chronologie, Bulletin de l'Académie Impériale des sciences, Tome XVIII, S. Petersbourg, 1874, p. 402-442.** Համացանցում տե՛ս **http://www.biodiversitylibrary.org/item/24406#page/5/mode/1up**

Հետազոտողներից նրանք, ովքեր փորձել են Ժամանակագրությանն ու նրա հեղինակին անդրադառնալ՝ հիմնվելով 1893 թ. վաղարշապատյան հրատարակության վրա, ակամա հայտնվել են դժվար կացության մեջ, քանի որ այնտեղ եղած հետագայի ընդմիջարկությունները, որոնք միախառնված են հեղինակային տեքստին, երբեմն ներքին հակասություններ են առաջացնում: Լ. Բաբայանն, օրինակ, Սամվել Անեցուն համարում է հակասական եւ պատմական կարեւոր անցքերի նկատմամբ «անորոշ վերաբերմունք» ունեցող հեղինակ[81]: Կարծելով, թե Մատթեոս Ուռհայեցու Ժամանակագրությունը Սամվել Անեցու աղբյուրներից մեկն է, նա գրում է. «Դժվար է բացատրել, թե ինչու հույների կողմից Անիի գրավման մասին գրելիս Սամուելը հարազատ չի մնացել իր աղբյուրին՝ Ուռհայեցուն, չի պահպանել նրա ոգին, իսկ ասենք, նույն Գագիկի եւ Մարկոսի շան մասին նույն աղբյուրի գրածը ամբողջությամբ արտագրել է առանց փոփոխելու»[82]: Իրականում Սամվել Անեցին ընդհանրապես ծանոթ չի եղել Մատթեոս Ուռհայեցու երկին. դրա առանձին տեղեկություններ ու հատվածներ Ժամանակագրության մեջ մուծվել են հետագայում:

Մի քանի այլ հավելումների առաջացրած թյուրիմացություններին կանդրադառնանք քիչ հետո: Ինչպես վերեւում տեսանք, հենց հետագայում կատարված հավելումների ու լրացումների պատճառով է, որ անգամ Ժամանակագրության պատվիրատուի ինքնության եւ ավարտման թվականի հարցը երկար ժամանակ մնացել է բաց եւ ամենատարբեր ենթադրությունների առիթ դարձել:

Ներկա հրատարակությունը թույլ է տալիս հստակ տարբերակված կերպով տեսնել Սամվել Անեցու Ժամանակագրության բնագիրը եւ նրա մեջ կատարված բոլոր լրացումները:

[81] Լ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 182-185:
[82] Նույն տեղում, էջ 184:

ՁԵՌԱԳՐԵՐԸ

Սամվել Անեցու ժամանակագրությունը պահպանվել է հիմնականում ամբողջական, իսկ մի քանի ձեռագրերում՝ մասնակի ընդօրինակություններով: Ժամանակագրության առավել մեծ թվով մատյաններ պահվում են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում՝ 36, Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի Սրբոց Հակոբյանց վանքում եւ Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում՝ 13-ական ձեռագիր, Վիեննայի Մխիթարյանների մոտ՝ 4 ձեռագիր, մեկական օրինակներ գտնվում են Զմմառում, Փարիզում, Տյուբինգենում, Հռոմում (Վատիկանում), Սանկտ Պետերբուրգում: Ձեռագրերի ցանկն ըստ հավաքածուների հետեւյալն է. Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. թիվ 481, 482, 1483, 1484, 1486, 1717, 1718, 1719, 1770, 1865, 1869, 1897, 1898, 1899, 2965, 3072, 3613, 3681, 3965, 5120, 5596, 5613, 5619, 5889, 6331, 6354, 6483, 6644, 7261, 8481, 9795, 9796, 10200, 10202, 10485, 10983, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանք, ձեռ. թիվ 69, 169, 343, 743, 783, 1051, 1221, 1288, 1553, 1801, 2170, 3397, 3701, Վենետիկի Մխիթարյանների մատենադարան, ձեռ. թիվ 288, 511, 721, 869, 911, 959, 1023, 1227, 1246, 1253, 1734, 1769, 2261, Վիեննայի Մխիթարյանների մատենադարան, ձեռ. թիվ 65, 89, 167, 465, Փարիզի Ազգային գրադարան, ձեռ. թիվ 192, Զմմառի վանք, ձեռ. թիվ, 207, Տյուբինգենի գրադարան, ձեռ. թիվ 93, Վատիկան, ձեռ. թիվ 3, Սանկտ Պետերբուրգի Արեւելյան ձեռագրերի ինստիտուտ, ձեռ. թիվ B 280:

Ժամանակագրության ձեռագրերի տվյալների քննությունը թույլ է տալիս մի քանի ընդհանրացում կատարել: Պարզվում է, որ ամենից շատ ընդօրինակություններ են պահպանվել 17-րդ դարից: Ըստ դարերի ընդօրինակությունները հետեւյալ կերպ են դասակարգվում. 12-րդ դ.՝ 3 մատյան, 13-րդ դ.՝ 6, 14-րդ դ.՝ 4, 15-րդ դ.՝ 1, 16-րդ դ.՝ 9, 17-րդ դ.՝ 35, 18-րդ դ.՝ 8, 19-րդ դ.՝ 6:

Տարբեր ընդօրինակություններում ժամանակագրության ավարտման թվականը կամ շարունակության ավարտի թվականները հետեւյալ պատկերն են ներկայացնում. 1173 թվականով ավարտվող օրինակների թիվը՝ 8, 1180-ականներին ավարտվողները՝ 2, մինչեւ 13-րդ դար շարունակված ձեռագրերի թիվը՝ 9: Ավելի շատ հավելումներ ու լրացումներ կատարվել են 14-րդ դարում: Այստեղ առանձնանում է ընդօրինակությունների մի խումբ՝ 9 մատյան, ուր ժամանակագրությունը հասցված է մինչեւ 1335 թվականը: Մինչեւ 1338-1348 թթ. հասնող օրինակները 7-ն են, 1423-1425 թթ. հասնող օրինակները՝ 4-ը: Ժամանակագրությունը շարունակված է մինչեւ 1660-90-ական թվականները՝ 6 մատյանում, եւ հասնում է մինչեւ 18-րդ դար՝ 4 ձեռագրում:

Գրչության վայրերի վերաբերյալ կարելի է ասել, որ հնագույն ձեռագրերը ծագում են Անիի շրջանից (Անի, Կամրջաձոր, Հոռոմոս): 16-17 դդ. ժամա-

նակագրության 5 ընդօրինակություն է կատարվել Եւդոկիայում (Թոխաթ), մյուս կենտրոններից պահպանվել են երկուական (Հռոմոս, Ուռհա, Բաղեշ, Ամիթ, Կամենեց, Կ. Պոլիս) եւ մեկական օրինակներ (Ուռընկար, Կարին, Նոր Գետիկ վանք, Սանահին, Ամրդոլու վանք, Տրապիզոն, Սեբաստիա, Կեսարիա, Արմաշ, Երուսաղեմ, Իլով):

Սամվել Անեցու Ժամանակագրության հեղինակային բնագիրը վերականգնելու համար առաջնային նշանակություն ունեն Մատենադարանի երկու՝ 1176 թ. Կամրջաձորում եւ 1177 թ. Հռոմոսում ընդօրինակված ձեռագրերը: Այս մատյանները նաեւ օգնում են որոշ պատկերացում կազմելու պատմիչի ինքնագիր մատյանի գրչական մանրամասների վերաբերյալ: Օրինակ՝ աղյուսակներից դուրս, ընդարձակ տեքստով պատմելով Բագրատունի վերջին թագավոր Գագիկ Բ-ի գահազրկման ու Բագրատունյաց թագավորության անկման մասին՝ Սամվել Անեցին նշում է. «Զի դադարեաց իշխանութիւնն թագաւորական, պարտ է եւ ի կանոնացս դադարեցուցանել»: Դրան հաջորդող հայոց թագավորների թվականների սյունակում Սամվել Անեցին «ողբ» հիշեցնող սրտառուչ խոսք է գրել՝ «Աւա՜ղ զի ոչ գոյր թագաւոր Հայոց...» եւ այլն: Քանի որ ժամանակագրական սյունակի լայնությունը բավարարում է ընդամենը երկու-երեք երկաթագիր թվատառ գրելուն, ապա նշված ոչ մեծ հատվածը ձգվում է մի քանի էջ: Հնագույն բոլոր ձեռագրերում այս հատվածը գրության ճիշտ նույն ձեւն ունի, ներառված է ժամանակագրական նեղ սյունակի մեջ[83]: Սա նշանակում է, որ այն հենց այդպես է եղել Սամվել Անեցու ինքնագիր մատյանում:

Ժամանակագրության ձեռագրերը եւ բնագրերը կարելի է խմբավորել՝ նկատի ունենալով տարբեր հանգամանքներ, որոնք առավել էական են տվյալ ձեռագիրը կամ բնագիրը բնորոշելու համար:

Հնագույն ձեռագրեր.

Մ5619 (Կամրջաձոր, 1176 թ.), Մ3613 (Հռոմոս, 1177 թ.), սրանից ընդօրինակված՝ Մ3965 (շարունակված):

Բնագրի նախնական սահմանը (1173 թ.) պահպանած եւ սակավ հավելումներով ձեռագրեր

Մ1719, Մ6644, Մ1718, Ե69, Ե783, Ե1801, Վ511, Վ721

Ստեփանոս Օրբելյանի նախօրինակի՝ մինչեւ 12-րդ դարի վերջերը լրացված ձեռագրեր՝

Մ8481, Մ9796, Ե1221, Ե3397, Մ6331

Հեղինակային (որոշակի հեղինակ ունեցող) հավելումներով ձեռագրեր՝

Մ1897 (Հայրապետ վարդապետ, 13-րդ դ.)

Մ8481 (Ստեփանոս Օրբելյան, 13-րդ դ.)

---

[83] Մ5619, 96բ-97ա, Մ3613, 62ա-62բ:

Մ1898 (Հեթում Կոռիկոսցի, 13-րդ դ.), սրանից ծագող՝ Մ2965 (շարունակված)
Մ3681 (Նաթանայել Հավուցթառեցի, 14-րդ դ.)
Մ1486 (Սահակ Երզնկացի, 16-րդ դ.), սրանից ընդօրինակված՝ Ե1553, Մ10200
Այլ օրինակից լրացված («Այս յայլ օրինակէ է, յետեւ ի ձեռս անկաւ…» հատվածն ունեցող), 1320 կամ 1424 թվականը հասնող եւ համանման հավելումներով խումբ՝
Մ1869, Մ1483, Մ1484, Մ6483, Վ288
Թադեի վանքում պահված օրինակից ծագող 17-րդ դ. վերջին եւ 18-րդ դ. սկզբին լրացված ձեռագրերի խումբ՝
Մ482, Մ6354, Մ7261, Մ10202, Վ869, Վ2261
Թերի կամ հատվածական բնագրերով ձեռագրեր՝
Մ5596, Մ9795, Մ10485, Ե1535, Ջ207, Վ1246, Վի465

Քանի որ ժամանակագրության ձեռագրերի մի զգալի մասն օգտագործված է այս հրատարակության մեջ, դրանց մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է տեսնել ստորեւ՝ «Ներկա հրատարակության հիմնական ձեռագրերը» բաժնում, իսկ ձեռագրերի ամբողջական ցանկը՝ ժամանակագրական հերթականությամբ՝ գրքի վերջում:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սամվել Անեցու Ժամանակագրությունը նախ հրատարակվել է օտարալեզու թարգմանություններով: Յոհ. Զոհրաբը եւ Ա. Մայը հինգ ձեռագրի հիման վրա այն թարգմանել են լատիներեն եւ Եւսեբիոս Կեսարացու Ժամանականքի հետ հրատարակել Միլանում՝ 1818 թ., իսկ 1839-ին գիրքը վերահրատարակվել է Հռոմում[84]: Լատիներեն թարգմանության մեջ ժամանակագրությունը հասնում է մինչեւ 1173 թ. (Գրիգոր Տղայի աթոռակալությունը վերջին նշումն է): Հրատարակության համար օգտագործված ձեռագրերից է 1287 թ. մի արժեքավոր ժողովածու (Վատիկան, N 3, Մատենադարան, դրսի մանրաժապավեն, թիվ 1103): Ցավոք, գրքի առաջաբանում հստակ չի նշվում, թե որ հավաքածուների որ ձեռագրերն են, այլ միայն ընդհանուր նշումներ են արվում դրանց վերաբերյալ: Վատիկանի ձեռագրից բացի՝ մյուս չորսը հավանաբար Մոնֆոկոնի ձեռագրերն են: Դրանցից մեկը կազմողները համարում են հիմնական օրինակ, որը 1207 թվականին է գրված: Մյուսը կոչում են «բյուզանդական» օրինակ, հաջորդը թերի օրինակ է, չորրորդը՝ ուշ շրջանի մատյան՝ 1698 թ., բազմաթիվ հավելումներով[85]:

Մ. Բրոսսեն 1876 թ. Սամվել Անեցու Ժամանակագրությունը հրատարակել է ֆրանսերեն թարգմանությամբ Սանկտ Պետերբուրգի Կայսերական ակադեմիայում պահվող 17-րդ դարի մի ձեռագրից (այժմ Ռուսաստանի ԳԱ Սանկտ Պետերբուրգի Արեւելյան ձեռագրերի ինստիտուտ /նախկին Արեւելագիտության ինստիտուտ/ B-42), ուր ժամանակագրությունը շարունակված է մինչեւ 1346 թ.[86]: Առաջաբանում հրատարակիչը նշում է, որ Սամվել Անեցու երկը բաղկացած է երկու մասից. առաջինը քաղագրություն է Եւսեբիոս Կեսարացուց, որը պատմական նորություն չի պարունակում, ուստի ինքը զանց է առնում, իսկ երկրորդ՝ աղյուսակավոր մասը, հեղինակային շարադրանքով հասնում է մինչեւ 1179 թ., ապա շարունակվում մինչեւ 1346 թ., որն ինքը ներկայացնում է եւ ծանոթագրում ըստ կարողության[87]: Այնուհետեւ Մ. Բրոսսեն ներկայացնում է Անեցու երկը ժամանակագրական աղյուսակներով, ընդ որում յուրաքանչյուր բացվածքում աջակողմյան էջը հատկացնում է բնագրին, իսկ ձախակողմյանը՝ աջում եղած նյութին վերաբերող ծանոթագրություններին: Բացի նշված ձեռագրում եղած նյութից՝ Մ. Բրոսսեն ներկայացրել է նաեւ

---

[84] Samvelis presbyteri Anienasis, Temporum usque ad suam aetatem ratio e libris historicorum summatim collecta. Opus ex Hainaniis quinque codicibus ab Joanne Zohrabo doctore Armenio diligenter exscriptum atque emendatum Joannes Zohrabus et Angelus Maius primum conjunctis curis Latinitate donatum aptisque illustratum edidervnt, Mediolani, 1818, p. 42-80. Վերահրատարակությունը տե՛ս Patrologiae Graecae, Tomus 19, p. 600-742: Կարելի է գտնել նաեւ հմացանցում:

[85] Patrologiae Graecae, Tomus 19, p. 602-604.

[86] M. Brosset, Collection d'Historiens Arméniens, S.-Petersbourg, 1876, p. III., p. 449-484.

[87] M. Brosset, Collection d'Historiens Arméniens, p. III.-VI.

լատիներեն հրատարակությունից թարգմանված եւ իր ձեռագրում բացակայող բազմաթիվ ժամանակագրական միավորներ՝ համապատասխան նշում թողնելով (Լա թ):

Սամվել Անեցու Ժամանակագրության հայերեն առաջին հրատարակությունը կատարել է Արշակ Տեր-Միքելյանը 1893 թ. Վաղարշապատում՝ ձեռքի տակ ունենալով էջմիածնի մատենադարանի 13 ձեռագիր՝ երկու հնագույնը՝ 13-րդ դարի (Մ1897, Մ1898), մյուսները՝ 16-18-րդ դարերի մատյաններ[88]: Նա ժամանակագրությունը ներկայացրել է հետագայի հավելումներով, քանի որ իր ունեցած մատյանները Սամվել Անեցու հեղինակային բնագիրն ու հետագայի հավելումները տարանջատելու հնարավորություն չեն տվել:

Վաղարշապատյան հրատարակությունը բաղկացած է առաջաբանից, ուր հրատարակիչը ներկայացնում է Սամվել Անեցու կենսագրությունը, հրատարակության համար օգտագործված ձեռագրերը, յուրովի հիմնավորվում է ժամանակագրական աղյուսակների դուրս թողնվելը (էջ Գ-Լ): Ապա՝ ներկայացվում է Ժամանակագրության բնագիրը (էջ 1-160): Հրատարակիչը հիմնական է համարել իր օգտագործած մատյաններից Բ օրինակը (Մ1899, գրված 1676 թ. Ամրդոլու վանքում, գրիչ՝ Պողոս Գավառցի) եւ մյուսները համեմատել դրա հետ: Ըստ այդ ձեռագրի՝ հրատարակիչը ժամանակագրությունը հասցրել է մինչեւ 1335 թ., ապա առանձին ենթավերնագրի տակ ներկայացրել «Շարունակութիւն այլ օրինակներից» (էջ 161-174)՝ դեպքերի հիշատակությունը հասցնելով 1424 թ., որից հետո ԺԳ օրինակից քաղել է 1392-1665 թվականներին վերաբերող տեղեկություններ (էջ 175-180): Ապա «Յաւելուածներ» բաժնում ներկայացրել է հարակից հինգ պատմական բնագիր (էջ 183-243) եւ գիրքն ավարտել ընդհանուր բնույթի ծանոթագրություններով (էջ 245-301):

Վաղարշապատյան հրատարակության մեջ հետագայի հավելումները չափազանց մեծ տեղ են զբաղեցնում: Օրինակ՝ 1000 թվականից մինչեւ 1163 թվականն ընկած ժամանակամիջոցի վերաբերյալ Սամվել Անեցու հեղինակային շարադրանքը հրատարակության մեջ նույն ժամանակաշրջանը ներկայացնող հատվածի միայն մեկ երրորդ մասն է կազմում: Ցավոք, հետազոտողներից ոմանք, այս հանգամանքին անծանոթ լինելով, Սամվել Անեցու Ժամանակագրության 1893 թ. հրատարակության մեջ առկա՝ հետագայում մուծված տեղեկությունները համարել են հեղինակինը, որի հետեւանքով որոշ թյուրիմացություններ են առաջացել:

2011 թ. Մատենադարանն իրականացրեց Սամվել Անեցու «Հաւաքմունք ի

---

[88]Ձեռագրերից մեկը (Մ1719), որը հին նախօրինակից արտագրված լինելով, պահպանել է ժամանակագրության գրեթե անխաթար բնագիրը, հրատարակիչը համարել է պակասավոր՝ այդ վերագրելով գրչի անուշադրությանը, գրելով՝ «խիստ անուշադրութեամբ փայլում է գրչակը» (Անեցի, 1893, էջ ԺԵ):

գրոց պատմագրաց…» երկի համեմատական բնագրի հրատարակությունը՝ պահպանելով աղյուսակները (բնագիրը կազմել է Անահիտ Հայրապետյանը)[89]: Դրա համար օգտագործվեցին պատմիչի ապրած դարաշրջանից՝ 12-րդ դարի երկրորդ կեսից պահպանված երեք հնագույն ձեռագրերը (Մ5619, Մ3613, Ե1801) եւ հին նախօրինակ ունեցած 17-րդ դարի մեկ այլ մատյան (Մ1719), ինչպես նաեւ երկի 1893 թ. հայերեն հրատարակությունը (առանց հավելումները ներառելու): Այս հրատարակության շնորհիվ Սամվել Անեցու Ժամանակագրության հեղինակային բնագիրն առաջին անգամ հստակորեն տարանջատվեց հետագայի ընդմիջարկություններից ու հավելումներից:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԸ

Սամվել Անեցու Ժամանակագրության առաջին մասում (Ադամից մինչեւ Քրիստոսի ծնունդը) եղած հավելումները փոքր թիվ են կազմում, բայց դրանք առկա են արդեն 1176 թ. Կամրջաձորի օրինակում (Մ5619): Լրացումներ կատարած գրիչը դրանց սկզբում սովորաբար գրում է «այլուստ», որով զգուշացնում է այլ տեղից քաղած լինելը: Հավելումները, սկսվելով որեւէ պարբերության ավարտին, շարունակվում են լուսանցքներում թերթի եզրերով բոլորաձեւ գրված տողերով: Հավանական է, որ այս ավելացումները կատարվել են ձեռագիրն ընդօրինակելուց ոչ շատ ժամանակ անց: Նույն հավելումները 13-րդ դարի Մ1898 մատյանում նույնպես առանձնացված են տողատակում (ստորին լուսանցքում), որը վկայում է այն մասին, որ գոյություն է ունեցել մի հին նախօրինակ, որտեղ այդ հավելումները հստակ տարբերվել են Ժամանակագրության հեղինակային բնագրից, եւ գրիչները դրանք յուրովի տեղավորել են համապատասխան էջերում: Բայց Մ1898 ձեռագրում հավելումներ արված են նաեւ բնագրի մեջ եւ մեծ հավանականությամբ մատյանի պատվիրատու Հեթում Կոռիկոսցու ցուցումով կամ հենց նրա ձեռքով:

Ժամանակագրության երկրորդ՝ աղյուսակավոր մասում հավելումներն անհամեմատ մեծ թիվ են կազմում: Հարկ է նշել, որ Սամվել Անեցու դարաշրջանին (մինչեւ 12-րդ դարի վերջերը) վերաբերող հավելումները նախկինում մեծ մասամբ վերագրվել են հենց Սամվել Անեցուն: Բերենք մի քանի հատկանշական օրինակ: Անիի բյուզանդական նվաճման մասին գրողներից ոմանք հետեւյալ մեջբերումն են կատարում Սամվել Անեցու Ժամանակագրության 1893 թ. հրատարակությունից. «Տէր Պետրոս եւ ազատ Սարգիս եւ Գրիգոր Բջնեցին նենգեցին զԳագիկ եւ զԱնի ետուն ի կայսրն Յունաց. վասն որոյ

[89] Անեցի, 2011, 152 էջ: Այս գիրքը, ի տարբերություն նախորդ երեք հրատարակությունների, ունի անվանացանկեր:

ելին ի բընիկ աշխարհէն իւրեանց՝ Տէր Պետրոս եւ Գրիգոր Վասակայ որդին, Գագիկ եւ այլք իշխանք Հայոց եւ եկին ի Հռոմս»[90]: Հնագույն ձեռագրերից ոչ մեկը չունի նման տեղեկություն: Խնդիրն այն չէ, թե հիշատակությունն ինչ չափով է իրականությանը համապատասխանում, պարզապես այն չի պատկանում Սամվել Անեցու գրչին:

Մաղաքիա Օրմանյանը Պետրոս Ա կաթողիկոսի (1019-1054) մասին գրում է, թե ինչպես Տրապիզոնի ջրօրհնեքի ժամանակ Արիստակես Լաստիվերցու նկարագրած՝ մյուռոնը լցնելու պահին ջրի ցոլարձակումը հետագա պատմիչները դարձրել են հրաշք, եւ ավելացնում է. «գետին ընթացքին կենալուն կամ ետ դառնալուն պարագան յետիններէ միայն յիշուած է, զոր չունին խոհականագոյն պատմիչներ՝ Լաստիվերացին եւ Վարդան»[91]: Իսկ «հետո եկողների» ձեռքով պատմության «աճումը» ցույց տալու համար գրում է. «Անեցիին մօտ կը կարդանք. «Տէր Պետրոս արգել զգետն ժամ մի հրաշիւք ամենազօր սուրբ նշանին, առաջի Վասիլ թագաւորին»[92]: Ստացվում է, որ «հրաշքի» մասին առաջին հայտնողը Սամվել Անեցին է, մինչդեռ մեր համառոտաբան պատմիչն ընդհանրապես չի անդրադարձել Պետրոս կաթողիկոսի Տրապիզոն կատարած այցին[93]:

Այս եւ տասնյակ այլ մեծ ու փոքր տեղեկություններ, որ տարբեր հրատարակություններում տեղ են գտել որպես Սամվել Անեցու վկայություններ, իրականում այլոց ներմուծումներն են նրա ժամանակագրության մեջ: Բազմաթիվ են հատկապես Կիլիկիայի հայկական իշխանության հիմնադիր Ռուբեն Ա-ի մասին հավելումները: Դրանք Մատթեոս Ուռհայեցու հայտնածի հետ համեմատելով Լ. Տեր-Պետրոսյանը գրում է. «Եթե փորձելու լինենք դասդասել Սամուել Անեցու հաղորդած տեղեկությունները Ռուբենի մասին, ապա Մատթեոսի նշած երկու փաստի փոխարեն կստանանք միանգամից տասներեքը»[94]: Դրանք թվարկելուց հետո նա բացատրում է, որ «Անեցու «Ժամանակագրության» սկզբնական բնագրում (Մատենադարան, ձեռ. Թ. 5619, 1176 թ.) իսպառ բացակայում են Ռուբինյաններին եւ ընդհանրապես կիլիկյան անցուդարձերին վերաբերող տվյալները», որոնք հետագայի հավելումներ են[95]: Ուսումնասիրության ընթացքում թյուրիմացություններից խուսափելու համար հեղինակը Մատենադարանի հիշյալ ձեռագրի բնագիրը համարում է «Սամուել Անեցու «Բուն ժամանակագրություն», իսկ Ա. Տեր-Միքելյանի 1893 թ. հրատարակութ-

---

[90] Անեցի, 1893, էջ 107-108:
[91] Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 1406:
[92] Նույն տեղում, հմմտ. Անեցի, 1893, էջ 106:
[93] Ա. Տեր-Միքելյանի հրատարակությունից մեր հիշատակած վերջին երկու եւ Անեցուն չպատկանող մի քանի այլ մեջբերումներ անելով՝ Լ. Բաբայանը պատմիչին մեղադրում է պատմական փաստերը հաշվի չառնելու, դրանք կամայական ներկայացնելու եւ այլ «մեղքերի» մեջ: Լ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 180-185:
[94] Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, Երեւան, 2007, էջ 65:
[95] Նույն տեղում, էջ 70:

յունը՝ «Խմբագրյալ ժամանակագրություն»[96]: Հենց այս «Խմբագրյալ ժամանակագրության» մեջ են Ռուբեն Ա-ին վերաբերող 13 տվյալները: Ա. Տեր-Միքելյանին անծանոթ ձեռագրերի ուսումնասիրության արդյունքում մեզ հաջողվեց դրանց թիվն ավելացնել եւս երկուսով[97]:

Սամվել Անեցու Ժամանակագրության երկրորդ մասի գրության աղյուսակային սկզբունքը, ուր էջերի կենտրոնում տարիների թվաշարքն է, իսկ աջ ու ձախ սյունակները հատկացված են տեղեկություններին, հնարավորություն է տվել հետագայում կողային մասերում եղած ազատ տեղերում զանազան նոր տեղեկություններ ավելացնել, որ արել են գրիչները, ստացողները ու բանիմաց ընթերցողները: Բնականաբար, հաջորդ գրիչներն ընդօրինակել են նաեւ այդ տեղեկությունները: Միեւնույն ժամանակ, ընդօրինակողները եւ ուրիշներ ոչ միայն տեղեկություններ են մուծել ժամանակագրության տարբեր մասերում, այլեւ շարունակել են՝ հեղինակի նշած վերջին թվականից (1163 թ.)՝ հասցնելով մինչեւ իրենց ապրած ժամանակը: Հավանաբար, նրանք այդպես վարվելու համար հիմնավորում են գտել Սամվել Անեցու երկի վերնագրում՝ «**յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս**»՝ արձանագրելով իրենց համար «ներկա» ժամանակի դեպքերը:

Այսպիսով՝ մի կողմից զանազան ընդմիջարկություններ ստանալով, մյուս կողմից տարբեր հեղինակների ձեռքով շարունակվելով՝ Սամվել Անեցու երկը դարերի ընթացքում դարձել է պատմական ամենատարբեր տեղեկությունների հավաքածու: Դրա շնորհիվ Ժամանակագրության ձեռագրերից շատերը պարունակած նյութի առումով ստացել են միանգամայն ինքնուրույն արժեք:

Հետաքրքիր է, որ միջնադարյան գրիչները չեն կասկածել, որ Ժամանակագրությունը պետք է անընդհատ շարունակվի: Նրանցից ոմանք ձեռագրում իրենց ապրած ժամանակին վերաբերող նշումներն անելուց հետո ժամանակագրական աղյուսակներ են գծել նաեւ գալիք ժամանակների համար: Ձեռագրերից մեկի՝ 18-րդ դարի սկզբներին ապրած գրիչը, մի քանի թերթերի վրա աղյուսակներ գծելով, տարիների թվաշարքը հասցրել է մինչեւ Փրկչական ՍԻ (2020) եւ Հայոց ՌՆԿԹ (2020) թվականը (Մ3965, 86բ):

Սամվել Անեցու Ժամանակագրության հիմքի վրա որպես դրա շարունակություն է ստեղծվել Ստեփանոս Օրբելյանի Ժամանակագրությունը, որը հրատարակել է Ա. Աբրահամյանը: Նույն սկզբունքով է ժամանակագրությունը շարունակել նաեւ Հեթում պատմիչ Կոռիկոսցին, որից մի հատված հրատարակել է Լ. Տեր-Պետրոսյանը[98]:

---

[96] Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 70:

[97] Մ7261, 58ա, Մ6354, 316ա (տե՛ս ստորեւ բնագրերի բաժնում 1100 եւ 1197 թթ. ներքո):

[98] Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Ա, Երեւան, 2005, հավել. 2 (Սամուել Անեցու մի նորահայտ շարունակողի ժամանակագրական ցանկը), էջ 483-484:

Անանուն հեղինակների երկու այլ մանր ժամանակագրություններ հրատարակել են Վ. Հակոբյանը[99], Ն. Պողարյանը[100]:

Ժամանակագրության ձեռագրերում եղած հավելումների ու լրացումների մի զգալի մասը տեղ է գտել Ա. Տեր-Միքելյանի հրատարակության մեջ, իսկ Մատենադարանի 14 ձեռագրից քաղված նյութերի մեկ այլ խումբ մենք հրատարակել ենք 2009 թվականին[101]: Ներկա հրատարակության մեջ ներառված է այդ ամենը, նաեւ այլ անտիպ նյութեր ժամանակագրության մեզ հասու եղած բոլոր մատյաններից[102]:

Այսպիսով՝ հավելումների ու լրացումների հանգամանքը նկատի ունենալով՝ կարող ենք ասել, որ Սամվել Անեցու Ժամանակագրությունը ո՛չ նրա գրած վերջին տեղեկությամբ եւ ո՛չ էլ հեղինակի մահով չի ավարտվել, այլ դրանից հետո շարունակվել է շուրջ 700 տարի: Այդ ընթացքում տասնյակ հեղինակների բազմաթիվ ու բազմաբնույթ հավելումներով հարստանալով եւ հարյուրավոր ժամանակագրական միավորներ ներառելով՝ այն դարձել է պատմական եւ այլ նյութերի յուրօրինակ հանրագիտարան:

ՍԱՄՎԵԼ ԱՆԵՑՈՒ ՇԱՐՈՒՆԱԿՈՂՆԵՐԸ

Հայ պատմագրության մեջ Սամվել Անեցու շարունակողներին առանձին անդրադարձ չի եղել: Դեռեւս Կ. Եզյանցը Հովհաննես Դարդելի ժամանակագրության առաջաբանում նկատի ունենալով միջնադարյան հայ պատմիչներին՝ հետեւյալ միտքն է հայտնում. «Հայ պատմիչները, որոնցից վերջինն է Սամուէլ Անեցու շարունակողը, իրենց տարեգրութիւնները հասցնում են մինչեւ 1340 թիւը…»[103]: Իրականում Սամվել Անեցու Ժամանակագրությունն ունեցել է բազմաթիվ շարունակողներ, որոնց կատարած հավելումներն անցնում են 1340 թվականը եւ ձեռագրերից մեկում հասնում մինչեւ 1776 թվականը: Ժամանակագրությունը շարունակած անձանց Սամվել Անեցուց տարանջատելու համար Լ. Խաչիկյանը, Ա. Տեր-Միքելյանի հրատարակությունը հղելով, ուշ շրջանի դեպքերի կապակցությամբ օգտագործել է «Սամուէլ (շարունակող)» ձեւակերպումը[104]:

---

[99] Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 317-332:

[100] Ն. Պողարյան, Ժամանակագրություն (11-18-րդ դդ.), «Բանբեր Մատենադարանի», հ. 9, Երեւան, 1969, էջ 257-282:

[101] Կ. Մաթեւոսյան, Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերը…, էջ 98-175:

[102] Հավելումների մեջ կան այնպիսիները, որոնք պատմական կամ այլ տեսանկյունից հետաքրքրություն չեն ներկայացնում, սակայն թերեւս հետաքրքրական են համարվել իրենց գրության եւ Ժամանակագրության մեջ մուծման ժամանակ: Այդպիսի հավելումների թվին կարելի է դասել ժողովրդական զրույցի ոճով գրված որոշ նյութեր կամ տեղեկություններ մարդկանց ու կենդանիների մեջ ոչ նորմալ ծնունդների մասին եւ այլն: Որոշ հավելումներ էլ հիշատակարանային բնույթ ունեն:

[103] Յովհաննու Դարդելի Ժամանակագրութիւն Հայոց, ՍՊԲ, 1891, էջ ՀԱ:

[104] Լ. Խաչիկեան, Աշխատութիւններ, հտ. Գ, Երեւան, 2008, էջ 8, 47, 67:

Ինչպես նշել ենք, սույն գրքում մենք ժամանակագրության ամեն մի հավելման սկզբում նշում ենք տվյալ ձեռագրի համարը, իսկ եթե հայտնի է հավելման հեղինակը, նաեւ նրա անունը: Հասկանալի է, որ լրացում կատարողների մեծ մասի անուններն անհայտ է, բայց նրանցից ոմանց խոսքերից երբեմն երեւում է, որ գրում են իրենց ժամանակի դեպքերի մասին: Օրինակ՝ Կիլիկիայում 1367 թ. կատարված մի լրացման հեղինակը գրում է՝ «Մեռաւ Կոստանդին եւ թագաւորէ միւս Կոստանդին յայլմէ ազգէ, **որ յայժմ ունի զթագաւորութիւնն**»[105]: Ե3701 ձեռագիրը լրացնողներից մեկը նշում է, որ 1479 թ. Լուսավորչի Աջը կրկին անհետացել է Սսից եւ չկա արդեն 38 տարի, հետեւաբար, գրառումը նա կատարել է 1517 թ.[106]: Մեկ ուրիշը՝ 17-րդ դարում տեղեկությունները սկսելով 15-րդ դ. սկզբից՝ հասնում է մինչեւ իր ապրած ժամանակը. «...նստաւ շահ Սուլեյմանն, **որ այժմ տիրէ Արեւելեան աշխարհիս**, ի թվականիս Հայոց ՌԵԼԶ (1687)»[107]:

Ստորեւ անանուն հեղինակներից միայն մեկին ենք հատուկ անունով կոչել Անանուն Տարոնեցի, քանի որ հավելումների բնույթից երեւում է նրա բնակության վայրը, որն ըստ ամենայնի Տարոնն է: 12-րդ դարում նրա հավելած բավական մեծ ու հետաքրքրական մի հատվածը գրված է ականատեսի անմիջականությամբ եւ առանձին պատմական երկ է հիշեցնում:

Այսպիսով՝ ներկայացվող ժամանակագրության մեջ անվանապես նշվող հեղինակներն են՝ Անանուն Տարոնեցի, Հայրապետ վարդապետ, Հեթում Կոռիկոսցի, Ստեփանոս Օրբելյան, Նաթանայել Հավուցթառեցի, Եփրեմ Ղափանցի, որոնց համառոտակի կանդրադառնանք ստորեւ՝ հատկապես ցույց տալով, թե նրանք ինչպես են վարվել Սամվել Անեցու ժամանակագրության՝ իրենց ձեռքը հասած օրինակների հետ եւ ինչ լրացումներ են կատարել:

ԱՆԱՆՈՒՆ ՏԱՐՈՆԵՑԻ

Այս հեղինակի՝ ժամանակագրության մեջ մուծած բնագիրը ներկայացնում է Տարոնի (Մշո) Ս. Կարապետ վանքում եւ Շահ Արմենների կամ Խլաթի ամիրության մեջ 1185-1186 թվականներին կատարված դեպքերը: Տեքստը պահպանվել է մի քանի ձեռագրում: Մատենադարանի թիվ 8481 ձեռագրից քաղելով՝ 1942 թ. այն հրատարակել է Ա. Աբրահամյանը՝ որպես Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրության մի հատված[108]: Այն Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրության հրատարակության տարբերակով պահպանվել է նաեւ Ե3397 ձեռագրում, որը հրատարակել է Ն. Պողարյանը[109]:

---

[105] Սույն գրքում, էջ 281:
[106] Նույն տեղում, էջ 300:
[107] Նույն տեղում, էջ 386:
[108] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 19-20:
[109] Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 10, կազմեց Նորայր եպս. Պողարեան, հ. Ժ, Երուսաղէմ, 1990, էջ 289-290:

Նույն հատվածն ավելի ընդարձակ եւ ստույգ ընդօրինակությամբ պահպանվել է նաեւ Մ9796 ձեռագրում: Որպես Ստեփանոս Օրբելյանի Ժամանակագրության մաս հրատարակված հատվածի թվականը՝ ՈԼ (1181)[110], սխալ է, իսկ Մ9796 ձեռագրում նշված է ՈԼԴ (1185), որը հաստատվում է նաեւ այլ աղբյուրներով: Բացի այդ, Ա. Աբրահամյանի եւ Ն. Պողարյանի հրատարակած օրինակներում կան տարընթերցումներ ու որոշ կարեւոր հատվածների կրճատումներ, իսկ տեքստի վերաբերյալ ծանոթագրություններ չեն արված: Նույն բնագիրն առկա է նաեւ Ե1221 եւ Մ6331 ձեռագրերում: Բոլոր թվարկվածները ձեռագրական առանձին խումբ են կազմում, որը հատկանշվում է հենց Անանուն Տարոնեցու հավելման առկայությամբ եւ նրանով, որ այս խմբի ձեռագրերից մեկն է, որ նախօրինակ է ծառայել Ստեփանոս Օրբելյանի համար (որն էլ այն շարունակել է):

Բնագրի հեղինակը, որը դեպքերի ժամանակակիցն է եղել, պատմում է Սուքման Բ Շահ Արմենի մահից հետո՝ 1185-1186 թթ. Խլաթի ամիրությունում առաջացած անիշխանության ժամանակ տեղի ունեցած դեպքերի եւ առավել հանգամանորեն՝ Սուրբ Կարապետ վանքին բաժին հասած դժբախտություններին, ապա անդրադառնում Ուխտիք (Օլթի) քաղաքի շուրջ ծավալված անցքերին, որին միջամտել են Կարինի ամիրը եւ Խլաթի նոր ամիր Բեկթամուրը:

Այն, որ բնագրի հեղինակը դեպքերի ժամանակակիցն ու Ս. Կարապետի վանքին մոտ կանգնած մարդ է եղել, երեւում է վանքից հեռացած միաբանների վերադարձի մասին նրա գրած հիշատակարանային ձեւակերպում հիշեցնող խոսքերից. «...ժողովեցան ըստ առաջին ուխտին հաստատելոյ **եւ են այժմ խաղաղացեալ փոքր մի**, **այլ զառաջիկայն Աստուած գիտէ**»: Հեղինակի բնակության տարածքի մասին է հուշում նաեւ այն, որ նա Շահ Արմենին համարում է «Հայոց ազգիս ամիրայն», «քաղցր բարուց» տեր (Շիրակում կամ Սյունիքում ապրողը նման բան չէր գրի), այսինքն՝ Խլաթի ամիրության բնակիչ էր, հավանաբար՝ տարոնեցի: Հեղինակը, որպես իրադարձություններն ի մոտո դիտարկող, գերության ու կողոպուտի մասին գրելուց հետո նշում է երկրագործ բնակչության համար աղետալի մի իրողություն՝ «զամենայն անդաստանս անխնամաբար կերակուր արկին խաշանց իւրեանց եւ անասնոց»: Նրա խոսքն անմիջական է եւ գրված թարմ տպավորությունների ազդեցությամբ: Հեղինակը կարեւոր դեպքերի առնչությամբ, որպես կանոն, նշում է ժամանակով համընկնող եկեղեցական տոների անունները, որն էլ դրանց ամսաթվերը ճշգրտությամբ որոշելու հնարավորություն է տալիս:

Բացի հիշյալ մեծ հատվածից, ամենայն հավանականությամբ, նույն հեղինակին են պատկանում նաեւ Սասունի Վիգեն իշխանի մասին զույգ հակիրճ հավելումները (1168 եւ 1175 թ.):

---

[110] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 19:

ՀԱՅՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ

Հայրապետ վարդապետը, հավանաբար, 12-րդ դարի վերջին կամ 13-րդ դարում ապրած մարդ է, որն ընդօրինակել է Մ1897 Ժողովածուն եւ նրա մեջ՝ Սամվել Անեցու Ժամանակագրությունը՝ այն օժտելով փոքրաթիվ, սակայն հետաքրքրական ընդմիջարկություններով: Նրա հիշատակագրություններում գրչության ժամանակի ու տեղի վերաբերյալ նշում չկա, միայն հիշում է իր երկու եղբայրներին՝ «...զեղբարց իմոց Կարապետին եւ զԽաչատրին յիշեայ, ո՛վ պատուական վերծանող եղբայր ի Քրիստոս»[111]:

Հայրապետ վարդապետի ընդօրինակած մատյանը, ի տարբերություն ժամանակագրության հնագույն ձեռագրերի, պատկանում է հավելումներ պարունակող խմբին. կամ նախօրինակն արդեն այդպիսին է եղել, կամ, որ ավելի հավանական է, Հայրապետն է այդ հավելումների հեղինակը: Նա ոչ միայն մի քանի նոր տեղեկություններ է մուծել, այլեւ որոշ դեպքերում Սամվել Անեցու տեղեկություններին բացատրական բնույթի ավելացումներ կատարել: Օրինակ՝ 1124 թ. Անիի գրավման մասին պատմությունը Սամվել Անեցին սկսում է հետեւյալ խոսքերով. «Ի բազում հինահարութեանց…», իսկ Հայրապետի ձեռագրում կարդում ենք. «Եւ աստանաւր առնու մեծազաւրն Դաւիթ զմայրաքաղաքն Հայոց զԱնի այսու պատճառաւ. Ի բազում հինահարութեանց…» (73ա):

Դատելով հիշատակարանում առկա որոշ արտահայտություններից՝ «շարագրեցի զսոսա **ի շահ եւ ի յաւգուտ մանկանց եկեղեցւոյ**..., յիշեայ, ով պատուական **վերծանող եղբայր**..., **ո՛վ աստուածասէր ընթերցող ուսմամբ**»[112], կարելի է ենթադրել, որ հավելումների հեղինակը հենց ինքը՝ Հայրապետ վարդապետն է, որը «ուսմամբ» ընթերցողների գործը հեշտացնելու համար Սամվել Անեցու հայտնած տեղեկություններին փոքրիկ բացատրական ավելացումներ է արել:

Հայրապետ վարդապետի ընդմիջարկություններում առավել աչքի զարնողը Անիին վերաբերող հատվածներում կատարված հավելումներն են: Դրանք ոչ միայն ճշգրիտ են, ինչպես օրինակ՝ Անիի Սմբատաշեն պարիսպների տեղորոշումը, այլեւ երբեմն պարունակում են ուշագրավ մանրամասներ, ինչպես Սմբատի հիմնադրած Կաթողիկե եկեղեցու անկյուններում թագավորի անվան գրության փաստը: Հետաքրքրական են նաեւ Կատրամիդե թագուհու անվան «Կտրանիդե» ձեւով գրության, Ս. Փրկչի եկեղեցու կառուցողի անվան եւ պաշտոնի նշման, Վահրամ Պահլավունու պապի անվան հիշատակման հանգամանքները, որոնք Հայրապետ վարդապետի՝ Անիին քաջածանոթ

---

[111] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց՝ Ա. Մաթեւոսյան, Երեւան, 1984, էջ 905:

[112] Նույն տեղում:

լինելու մասին են վկայում:

Հայրապետի ձեռագրի որոշ տեղեկություններ (օրինակ՝ Կյուրիկե Ա-ին եւ Կյուրիկյաններին վերաբերող 3 նշում) եղել են այն օրինակում, որը շարունակելով՝ 13-րդ դարի վերջին իր ժամանակագրությունն է կազմել Ստեփանոս Օրբելյանը: Բայց այդտեղ Հայրապետի՝ Անիին վրաբերող հավելումները չկան: Հետեւաբար՝ Հայրապետի ձեռագիրն Օրբելյանի մատյանի նախօրինակը չի եղել, միաժամանակ Հայրապետի ձեռագրի բոլոր հավելումները չէ, որ նրան են պատկանում:

ՀԵԹՈՒՄ ԿՈՌԻԿՈՍՑԻ

Հայ միջնադարյան մատենագրության նշանավոր դեմքերից է իշխան Հեթում Կոռիկոսցին, որը հայ պատմագրության մեջ հայտնի է Հեթում Պատմիչ, իսկ եվրոպականում՝ Հայթոն Հայ անունով (Hayton l'Arménien): Նա Կիլիկիո Հեթում Ա (1226-1269) թագավորի եղբայր Օշին պայլի որդին էր, նշանավոր իշխան, տերը Կոռիկոս ծովափնյա բերդաքաղաքի եւ մի շարք ամրոցների, եղել է նաեւ պետական բարձր պաշտոններում, մասնակցել դիվանագիտական առաքելությունների ու պատերազմների: Դրան զուգահեռ Հեթում Կոռիկոսցին պատմագիտական նախասիրություններով անձնավորություն էր. 1293-1296 թթ. ժամանակամիջոցում գրել է մի շարք ազգաբանական (տոհմաբանական) աշխատություններ՝ նվիրված Ռուբինյաններին, Երուսաղեմի ու Կիպրոսի թագավորներին եւ Անտիոքի իշխաններին, ֆրանսագիր հեղինակների գործերից թարգմանել է մի ծավալուն ժամանակագրություն՝ «Պատմութիւն խրոնիկոնին, զոր նըւաստ ծառայս Քրիստոսի Հեթումս տէր Կուռիկաւսոյ փոխեցի ի Ֆռանգ գրոց ի թուին Հայոց ՉԽԵ (1296)»[113], ապա դրա հիմքի վրա կազմել մեկ այլ համառոտ ժամանակագրություն՝ «Համառոտ պատմութիւն ժամանակաց հաւաքեալ ի զանազան պատմութեանց, այսինքն՝ ի Հայոց, ի Ֆռանկաց, ի Յունաց, ի յԱսորւոց գրենաց, աշխատութեամբ իմոյ, ծառայիս Աստուծոյ Հեթմոյ, տեառն Կուռիկաւսոյ, ի թվականիս Հայոց ՉԽԵ (1296)»[114]:

1305 թ. Կիպրոս տեղափոխված Հեթումը 1307 թ., որպես իր բարեկամ եւ Կիպրոսի կառավարիչ Ամորիի պատգամախոս Ֆրանսիա մեկնելով, հանդիպել է Հռոմի Կղեմես Ե (1305-1314) պապին եւ նրա հանձնարարությամբ պատրաստել «Ծաղիկ պատմութեանց Արեւելից աշխարհի» երկը: Կոռիկոս-

[113] Հրատարակությունը տե՛ս Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 37-80:

[114] Այս ժամանակագրությունը նախկինում երեք հրատարակություն է ունեցել, որոնցից երրորդում (Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 33-114), այն վերագրվել է Հեթում Բ թագավորին, որը սխալմունք է: Ժամանակագրության երեք խմբագրություններից միայն մեկն է Հեթում թագավորինը: Տե՛ս Կ. Մաթեւոսյան, Հեթում պատմիչ Կոռիկոսցին եւ նրա ժամանակագրությունը, Երեւան, 2011, էջ 32-82:

ցին այն թելադրել է հին ֆրանսերենով, որը գրի է առել Նիկոլաս Ֆալկոնը, ապա անմիջապես թարգմանել լատիներեն, որից հետո հեղինակը երկը հանձնել է Հռոմի պապին: Արեւելքի բազմաթիվ երկրների պատմության դրվագներ ներկայացնող այդ քառամաս երկի վերջին հատվածը խաչակրաց նոր արշավանքի կազմակերպման ռազմաքաղաքական մի ուշագրավ ծրագիր է, որը, սակայն, տարբեր պատճառներով չի իրականացել:

Եվրոպացի ուսումնասիրողները բարձր են գնահատել Հեթում Կոռիկոսցու «Ծաղիկ պատմութեանց...» երկը եւ անգամ համեմատել Մարկո Պոլոյի ու նույն ժամանակաշրջանում այլոց գրած ուղեգրությունների հետ: Իսկ նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին, Հեթումին համարելով ֆրանսերենով ստեղծագործած առաջին հայը, նշում է, որ եթե մյուսները Արեւելք եկած ճանապարհորդներ էին, ապա նա բուն արեւելցի էր, հայ մարդ, որը թե՛ իր ծագումով, թե՛ գործունեության դիվանագիտական ասպարեզով մասնագիտական երաշխավորն էր իր գրածի[115]: «Ծաղիկ պատմութեանց...» երկը թարգմանվել է եվրոպական մի շարք լեզուներով եւ 16-17-րդ դարերում տարբեր երկրներում ունեցել է բազմաթիվ հրատարակություններ:

Հեթում Կոռիկոսցու հայերեն գործերի հիմնական մասը տեղ են գտել Մ1898 ձեռագրում: Գրչության ժամանակի հիշատակարան չի պահպանվել եւ ձեռագրացուցակներում նշված է, որ գրիչն անհայտ է: Սակայն, բարեբախտաբար, պահպանվել է Հեթում Կոռիկոսցու 1293 թ. ստացած Ավետարանը (Ս. Էջմիածնին, ձեռ. թիվ 1250), որի հիշատակարանում կարդում ենք. «...ես՝ Հեթում... ստացա զսուրբ Աւետարանս եւ փափագեալ սրտի բաղձանաւք **ետու գրել զսա իմոյ իսկ հրովարտակաց դպրի՝ Վասլի, որ երբեմն սարկաւագ լեալ՝ եւ այժմ ծառայէ ինձ միամտութեամբ եւ մտերմաբար սիրով**»[116]: Ինչպես տեսնում ենք, Վասիլը, որը նախկինում սարկավագ է եղել, հետո ծառայության է անցել Հեթում Կոռիկոսցու մոտ, որպես նրա հրովարտակները գրող քարտուղար՝ դպիր, միաժամանակ եղել է իշխանի համախոհը՝ «միամիտը» եւ բարեկամը: Վասիլի ընդօրինակած ու կազմած այս Ավետարանի գրչության համեմատությունը Մ1898 ձեռագրի հետ, հատկապես բարդ գրությամբ տառերի (ձ, զ, ծ, ճ, ջ, չ, ֆ) նույնականությունը, ոչ մի կասկած չեն թողնում, որ դրանք նույն գրչին են պատկանում: Հետեւաբար՝ Մ1898 ձեռագիրը, որն ամփոփում է Հեթում Կոռիկոսցու երկերի հիմնական մասը, ընդօրինակել է նրա դպիր Վասիլը[117]:

---

[115] Ֆ. Ֆէյտի, Հեթում Պատմիչ հեղինակ «Ծաղիկ պատմութեանց Արեւելեան Աշխարհի» գրքին, Փարիզ, 1939, էջ 7:

[116] Կ. Մաթեւոսյան, Հեթում պատմիչ Կոռիկոսցին եւ նրա ժամանակագրությունը, էջ 98:

[117] Վասիլ գրիչն է ընդօրինակել Վենետիկում պահվող թիվ 1040 մատյանը («Փիլոնի Եբրայեցւոյ մատենագրութիւնք»)՝ գրված 1296 թ., ստացող՝ Հեթում Բ: Հիշատակարանում Վասիլն իր անունից հետո գրում է՝ «որ երբեմն սարկաւագ...»: Նույն կերպ է նա իրեն կոչում Հալեպի թիվ 39 ձեռագրում (Ավետարան), որը կազմել է 1300 թվականին (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 789, 873):

Մ1898 ձեռագիրը սկսվում է Սամվել Անեցու ժամանակագրությամբ[118] (թերթ 6ա-96բ, հաջորդող 97ա-122բ թերթերը չեն գրված), որի առաջին մասը՝ Ադամից մինչեւ Քրիստոս, ամբողջական է, ունի փոքր հավելումներ, սակայն աղյուսակավոր երկրորդ մասը (32ա թերթից)՝ Քրիստոսի ծննդից մինչեւ 1294 թ., ամբողջովին խմբագրված է, ընդ որում՝ կատարված փոփոխություններն այնքան հիմնավոր են, որ կարելի է ասել հեղինակը Սամվել Անեցու ժամանակագրությունից վերցրել է միայն արտաքին ձեւը, իսկ մնացածը կառուցել է իր հայեցողությամբ: Կատարված հիմնական փոփոխություններից մեկն այն է, որ էջերի կենտրոնում գտնվող ժամանակագրական ուղղահայաց թվաշարքի սյունակների թիվն ավելացված է մեկով, որը հատկացված է Հռոմի պապերին[119], մյուսը՝ Ժամանակագրության Հայոց մեծ թվականի առաջին տարին դրված է Փրկչական ՇՕԲ (552) թվականի դիմաց (59բ)՝ ի տարբերություն Սամվել Անեցու բնագրի, ուր 554 թվականի դիմաց է: Ինչպես վերեւում նշել ենք, Սամվել Անեցու եւ մի քանի այլ հայ հեղինակների մոտ Փրկչական (այսպես կոչված՝ «հայկական քրիստոնեական») թվականը 2 տարով ավելի է եւ Հայոց մեծ թվականի հետ տարբերությունը ոչ թե 551, այլ 553 տարի է: Այսինքն՝ այս ձեռագրում Փրկչական եւ Հայոց թվականները ներդաշնակեցված են, եւ հավելյալ 2 տարին զեղչված է: Մյուս առանձնահատկությունն այն է, որ սկզբի մի քանի էջերից հետո Սամվել Անեցու ժամանակագրությունից խիստ սակավաթիվ տեղեկություններ են պահպանված, դրա փոխարեն ավելացված են Կիլիկիային եւ խաչակիրների պետություններին

---

[118] Ձեռագրում Սամվել Անեցու ժամանակագրությանը հաջորդում են Հեթում Կոռիկոսցու երկերը՝ նախ «Պատմութիւն խրոնիկոնին...» ժամանակագրությունը (123ա-167բ), ապա՝ ազգաբանական երկերը (168ա-175բ): Դրանից հետո զետեղված է այլ հեղինակի՝ Միքայել Ասորու ժամանակագրությունը (176ա-217բ), որը սակայն, սկսվում է ոչ թե Ադամից (ինչպես Միքայել Ասորու բուն երկում է), այլ բավական ուշ շրջանից՝ Մուհամմեդի հայտնվելուց՝ «Երեւեցաւ Մահմէտ որդի Աբդլայի...» (176ա): Այս հանգամանքը ցույց է տալիս, որ ժողովածուն կազմվել է նախապես մշակված ծրագրով: Քանի որ ձեռագրի սկզբում զետեղված Սամվել Անեցու ժամանակագրությունը սկսվում է Ադամից եւ տալիս է հնագույն պատմության անհրաժեշտ տվյալները, ժողովածուն կազմողը Միքայել Ասորու ժամանակագրությունից դուրս է թողել սկզբի մասը՝ կրկնությունից խուսափելով: Ուշագրավ է նաեւ, որ ձեռագրում՝ Հեթում Կոռիկոսցու նյութերի լուսանցքներում (151բ, 155ա, 155բ, 174բ եւ այլն), բուն գրչի ձեռքով ժամանակագրական բնույթի կամ այլ մանրատառ հավելումներ են արված, որոնք, հավանաբար, կատարվել են ժողովածուն կազմողի ցուցումով: Ձեռագրի մյուս նյութերի մի մասը պատմաաշխարհագրական եւ տեղեկատվական բնույթ ունեն եւ լիովին համապատասխանում են Հեթում Կոռիկոսցու նախասիրություններին:

[119] Սյունակներից առաջինը՝ «Ի Քրիստոսէ», Փրկչական թվականն է, որից հետո ավելացվել է երկրորդը՝ «Պապ ի Հռոմ», որը չկա Սամվել Անեցու ժամանակագրության մեջ, հաջորդ սյունակներն են «կայսր Հռոմայ», «կաթողիկոս Հայոց», «թագաւոր Հայոց», «ի թուականութեան Հայոց» (Հայոց մեծ թվականը): Իսկ կոնկրետ անձանց անունները եւ տարիներն այս ձեռագրում, ի տարբերություն Սամվել Անեցու երկի, գրվել են ոչ թե թվաշարքերի սյունակների վերեւում, այլ էջի աջ եւ ձախ մասերի՝ պատմական վկայությունների համար նախատեսված լայն սյունակներում:

վերաբերող Հեթում Կոռիկոսցու երկերից քաղված բազմաթիվ տեղեկություններ:

Այդ փոփոխությունները կարող էր կատարել կա՛մ անձամբ Հեթում Կոռիկոսցին, կա՛մ դրանք արվել են նրա հանձնարարությամբ՝ Վասիլի ձեռամբ: Երկու դեպքում էլ հեղինակի ինքնությունը չի փոխվում, քանի որ Սամվել Անեցու երկի մեջ մուծված ժամանակագրական միավորները չնչին բացառություններով, նույնությամբ կամ կրճատումներով քաղված են հիմնականում Հեթում Կոռիկոսցու «Պատմութիւն խրոնիկոնին...» եւ մասամբ՝ «Համառոտ պատմութիւն ժամանակաց հաւաքեալ ի զանազան պատմութեանց» ժամանակագրություններից: Մի շարք հանգամանքներ խոսում են այն մասին, որ այս մատյանի պատվիրատուն հենց Հեթում Կոռիկոսցին է եղել եւ Վասիլին հանձնարարել է ժողովածուի մեջ ընդօրինակել իր հեղինակած եւ իրեն անհրաժեշտ նյութերը:

Կարող է հարց առաջանալ, թե ինչն է դրդել ժամանակագրություն թարգմանած եւ սեփական ժամանակագրությունը կազմած Հեթում Կոռիկոսցուն լրացնելու եւ շարունակելու նաեւ Սամվել Անեցու ժամանակագրությունը: Քանի որ Սամվել Անեցու ժամանակագրությունը կազմված է աղյուսակային սկզբունքով, եւ այստեղ որեւէ տեղեկություն-փաստ կարելի է տեսնել ոչ միայն որոշակի թվականի դիմաց, այլեւ իմանալ, թե դա, օրինակ, բյուզանդական ո՞ր կայսեր, արաբական ո՞ր ամիրապետի, Հայոց ո՞ր թագավորի եւ կաթողիկոսի որերորդ տարվա մեջ է եղել, այսինքն՝ պատմական ժամանակն արտահայտվում է ոչ միայն թվականների շարքով, այլեւ տարբեր հարթություններում, տվյալ ժամանակի քաղաքական եւ հոգեւոր իշխանության գլուխ հանդիսացող անձանց տարիների խորքի վրա, կարծում ենք՝ հենց այս հանգամանքն է պատճառ դարձել, որ ժամանակագրություններով հետաքրքրված Հեթում Կոռիկոսցին իր հավաքած նյութի մի մասը փորձել է տեղաբաշխել նաեւ Սամվել Անեցու ժամանակագրական աղյուսակային համակարգի մեջ: Դրա համար է նա կատարել Փրկչական եւ Հայոց թվականների ներդաշնակեցումը եւ ժամանակագրական թվաշարքի սյունակների թվում ավելացրել Հռոմի պապերի սյունակը, որոնց գահակալության տարիները ժամանակագրական առանցք են հանդիսանում նրա թարգմանած «Պատմութիւն խրոնիկոնին…» ժամանակագրության համար:

Սամվել Անեցու՝ 1163 թվականով ավարտվող ժամանակագրությունը շարունակելով (հասնելով 1294 թ.)՝ կազմողը նաեւ ավելացրել է Հռոմեական սրբազան կայսրության գահակալների, Կիլիկիայի Հայոց իշխանների ու թագավորների, Անտիոքի իշխանների, Երուսաղեմի եւ Կիպրոսի թագավորների անուններն ու գահակալության տարիները, նշել ժամանակի որոշ կարեւոր ռազմաքաղաքական իրադարձություններ՝ արդյունքում ստանալով ժամանակագրական իրեն անհրաժեշտ համապատկերը:

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը (մահ. 1303 թ.) ոչ միայն նշանավոր եկեղեցական գործիչ էր, այլեւ բազմարդյուն հեղինակ, աստվածաբան, պատմիչ, բանաստեղծ: Որպես հոգեւոր պետ ու նաեւ քաղաքականությանը մոտ կանգնած գործիչ՝ անհրաժեշտաբար պիտի տեղյակ լիներ պատմությանը, ուստի հսկայական աշխատությամբ գրել է Սյունյաց աշխարհի ամբողջական պատմությունը: 1297 թվականին իր նստավայր Նորավանքում ավարտած «Պատմութիւն նահանգին Սիսական» կոթողային աշխատության մեջ նա հանդես է գալիս որպես պատմության նկատմամբ հետազոտական վերաբերմունք ունեցող հեղինակ, ներկայացնում Սյունիքի պատմությունն ու աշխարհագրությունը՝ դրա համար օգտագործելով ոչ միայն նախորդ պատմիչների երկերը, այլեւ դիվանական նյութեր, նամակներ, վիմագրեր եւ այլն:

Ինչպես երեւում է, մինչեւ Սյունյաց պատմության շարադրմանն անցնելը, Ստեփանոս Օրբելյանը կազմել է 1193-1290 թվականներն ընդգրկող մի ժամանակագրություն: Ձեռքին ունենալով Անեցու ժամանակագրության օրինակներից մեկը, որը հասնում էր մինչեւ 1193 թվականը, նա այն լրացրել է «պակասող» հարյուրամյակի տվյալներով: Այդ մասին նա նշում է հենց հիշյալ գործի սկզբնամասում՝ հայտնելով, որ Սամվել Անեցու ժամանակագրության աղյուսակները նա շարունակել է՝ հասցնելով մինչեւ իր ապրած ժամանակը:

Այդ լրացված ժամանակագրությունը եզակի օրինակով պահվում է Մատենադարանում (Մ8481), որը 1942 թ. հրատարակել է Ա. Աբրահամյանը՝ «Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի» վերնագրով: Բայց դրանից հետո Ստեփանոս Օրբելյանի հեղինակ լինելու հարցը վիճարկել են Լ. Խաչիկյանը եւ Վ. Հակոբյանը հանգամանալից հոդվածով[120]: Այս հարցը Վ. Հակոբյանն արծարծել է նաեւ «Մանր ժամանակագրությունները» հրատարակելիս: Նա՝ որպես հնարավոր մեկ այլ հեղինակ՝ Օրբելյանից տարբեր Ստեփանոս եպիսկոպոս, նշում է մի քանի փաստարկ ու նաեւ Մոմիկի՝ Նորավանքում ընդօրինակած ձեռագրի 1292 թ. հիշատակարանը. «...եւ վերադիտողի Տանս Սիւնեաց Տեառն Տէր Ստեփաննոսի, առաջնորդի սուրբ ուխտիս...»[121]: Եթե անգամ Մոմիկը միայն այսքանը գրած լիներ, դարձյալ անհնար էր կասկածել, որ նա խոսում է հենց Ստեփանոս Օրբելյանի մասին, որը ոչ միայն Սյունյաց

---

[120] Լ. Խաչիկյան, Վ. Հակոբյան, Ինչպես չպետք է հրատարակվեն պատմական սկզբնաղբյուրները, էջ 77-87: Գրախոսության առաջին եւ հիմնական մասը նվիրված է Ստեփանոս Օրբելյանի հեղինակության հանգամանքի ժխտմանը: Գրախոսականի երկրորդ մասը ժամանակագրության հրատարակության մեջ տեղ գտած բազմաթիվ թերությունների (սխալ վերծանությունների, տառասխալների, ծանոթագրությունների մակերեսայնության) արդարացի քննադատություն է:

[121] Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 33:

մետրոպոլիտն էր, այլեւ Օրբելյանների հոգեւոր կենտրոն եւ մետրոպոլիտական աթոռանիստ Նորավանքի առաջնորդը: Սակայն ավելի պերճախոս են նշված հատվածին նախորդող տողերը. «...գծագրեցի... ի փառաբնակ եւ ի հոյակապ եւ ի հռչակաւոր մենաստանիս Նորավանս կոչեցելոյ, յարքունապատիւ գահոյս հայրապետութեան, գերափառ եւ մեծապատիւ, հրաշազան, ամէնիմաստ հզաւր իմաստասիրի եւ բանիբուն ռաբունապետի եւ արհիական քաւչապետի եւ վերադիտողի Տանս Սիւնեաց Տեառն Տէր Ստեփաննոսի...»[122]: Այստեղ չնչին կասկած իսկ չի կարող լինել, որ Մոմիկը նկատի ունի իր հովանավոր եւ Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանին:

Նկատենք, որ ժամանակագրության մի քանի հատվածին Հ. Քոսյանի կազմած ցուցակի միջոցով ծանոթացած առաջին բանասերը՝ Ն. Ակինյանը, չի կասկածել, որ հեղինակը Ստեփանոս Օրբելյանն է[123]: Այս տեսակետը հարակից տվյալներով հիմնավորել է նաեւ Է. Բաղդասարյանը[124]:

Ժամանակագրության մեջ հեղինակն իրեն կոչում է «այցելու», այսինքն՝ եպիսկոպոս՝ «**ես՝ նուաստ Ստեփաննոս անուամբ այցելու**»: Ուշագրավ է, որ Ստեփանոս Օրբելյանին այդպես է կոչում նաեւ Գլաձորի համալսարանի ուսուցչապետ Եսայի Նչեցին, նրա պատվերով գրած գործի նախաբանում. «**Տէր Ստեփաննոս՝ այցելու եւ վերադիտող գերահռչակ եւ առաքելական աթոռոյ Տանդ Սիւնեաց**...»: Ի պատասխան հղած գրության մեջ Օրբելյանն իր մասին բավարարվում է գրելով՝ «**ի նուաստ Ստեփանոսէ**...»[125]:

Այսպիսով, մենք համոզված ենք, որ Սամվել Անեցու ժամանակագրության շարունակությունը կազմող՝ 1193-1290 թթ. ժամանակահատվածի հեղինակ Ստեփանոս եպիսկոպոսը, որը նաեւ նշում է, թե Կոստանդին Բ Կատուկեցու (1286-1289) աթոռանկությունից հետո հաջորդ կաթողիկոսի ընտրության համար իրեն հրավիրել են Սիս («...հրաւիրեցին զմեզ եւ զայլ եպիսկոպոսունս եւ զայլ իշխանս Արեւելից՝ երթալ ի թագաւորութիւնս մեր ի Սիս»), բայց ինքը չի գնացել («...որում անպարապ գտեալ ո՛չ ժամանեցաք»)[126], չէր կարող ուրիշ մեկը լինել, քան Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը: Այս հրավերի ու իր մերժման մասին Ստեփանոս Օրբելյանը գրում է նաեւ Սյունիքի պատմության մեջ[127]:

Լ. Խաչիկյանի եւ Վ. Հակոբյանի գրախոսականի դիտողություններից մեկը

---

[122] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 677-678:

[123] «Հանդէս ամսօրեայ», 1921, էջ 177-178, Ցուցակ ձեռագրաց, որ ի «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1976, էջ 11:

[124] Է. Բաղդասարյան, 13-րդ դարի մի ժամանակագրության հեղինակի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, թիվ 2, էջ 210-216:

[125] Մ1276, 3ա, 176ա: Ավելի ընդարձակ մեջբերումները տե՛ս Ա. Մաթեւոսեան, Նորավանքը միջնադարյան համալսարանների համակարգում, «Նորավանք-99» ժողովածու, Ս. Էջմիածին-Մոնթրէալ, 1999, էջ 56-57:

[126] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 31:

[127] Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 440-441:

վերաբերում է ժամանակագրության ընդգրկմանը. «Ստեփանոս Օրբելյանի անունով հրատարակված ժամանակագրության ճիշտ կեսը (էջ 11-21, տող 27) պատկանում է Ս. Անեցուն… ուստի՝ հրատարակիչը սխալ է գործել՝ Ստեփանոսի անվամբ հրատարակելով Մատենադարանի N 8481 ձեռագրի 197ա-203բ էջերի բազմաթիվ հատվածները: Ստեփանոսի ժամանակագրությունը սկսվում է ձեռագրի 204 էջից»[128]: Այս դիտողության մեջ ճիշտ է, որ այդ մասը չի պատկանում Ստեփանոսին, բայց նաեւ ամբողջովին չի պատկանում Սամվել Անեցուն: Նշված ձեռագրում Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրությանը նախորդող հատվածը Սամվել Անեցունն է միայն մասամբ (մինչեւ 1163 թվականը): Այն բառացիորեն ողողված է հետագայի հավելումներով, որոնք տեղ են գտել նաեւ մի քանի այլ մատյաններում, որոնցից հնագույններն են Մ9796, Ե1221 եւ Ե3397 ձեռագրերը:

Մ8481 ձեռագիրը, հավանաբար 14-15-րդ դդ. ընդօրինակվել է կամ անմիջապես Օրբելյանի լրացրած կամ միջնորդավորված օրինակից: Ձեռագրում Սամվել Անեցու ժամանակագրության առաջին (առանց աղյուսակների) մասը բացակայում է եւ սկսվում է երկրորդ՝ աղյուսակավոր մասից՝ հասնելով 1193 թ., որից հետո այն շարունակել է Ստեփանոս Օրբելյանը (204ա-214ա)՝ ժամանակագրությունն ավարտելով իր հոր՝ Տարսայիճ Օրբելյանի մահվան հիշատակությամբ:

Ժամանակագրության հրատարակիչ Ա. Աբրահամյանը գրում է. «Օրբելյանի «ժամանակագրության» ուսումնասիրությունից երեւում է, որ Օրբելյանը նպատակ չի ունեցել կազմել ինքնուրույն ժամանակագրություն, այլ ցանկացել է լրացնել ու շարունակել Անեցու «ժամանակագրութիւնը»: 197ա թերթից սկսած նա սկսել է կատարել մասնակի լրացումներ մինչեւ 202բ, այնուհետեւ շարունակել է ինքը՝ առանց սահմանազատելու իր գրած «ժամանակագրութիւնը» Սամվել Անեցու «ժամանակագրութիւն»-ից»[129]:

Նկատենք, որ այս ձեռագրում Սամվել Անեցու ժամանակագրությունը ոչ միայն ավելացումներ ունի, այլեւ կրճատումներ: Կա՛մ Օրբելյանի ձեռքը հասած ձեռագիրը այդպիսին է եղել, կա՛մ նա ինքն է համապատասխան փոփոխություններ կատարել, որն ավելի հավանական է: Այս երկին անդրադարձած նախորդ ուսումնասիրողները (Ա. Աբրահամյան, Վ. Հակոբյան, Լ. Խաչիկյան), հիմնականում կենտրոնանալով լրացնող հեղինակի գործի, այսինքն՝ ժամանակագրության 1193-1290 թթ. ժամանակահատվածի վրա, անհրաժեշտ ուշադրություն չեն դարձրել Սամվել Անեցու ժամանակագրության տեքստին, որի պատճառով կատարված միջամտությունների ամբողջական պատկերը չի պարզվել: Հարցին այդ տեսակետից մոտենալու դեպքում տեսնում ենք, որ Ստեփանոս Օրբելյանը ոչ միայն շարունակել, այլեւ նախորդ հատվածներում

[128] Լ. Խաչիկյան, Վ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 83, 87:
[129] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 4:

կրճատումներ է կատարել, մի տեղում ծանոթագրություն թողել, այսինքն, որոշ իմաստով հանդես է եկել որպես խմբագիր:

Նկատելի կրճատումները սկսվում են Աբաս Բագրատունու մասին հատվածից, որն ավարտվում է «եբարձ զխռովարար աւազակսն»[130] բառերով, իսկ շարունակությունը, որ վերաբերում է Արշարունիքի եւ Շիրակի որոշ վանքերի հիմնադրմանը, այս ձեռագրում չկա (196բ):

Գրիգոր Նարեկացու մասին եղած երկու հավելումները (197ա) տարբերվում են Սամվել Անեցու երկի՝ այլ օրինակներում եղած հավելումից[131]: Հայոց ՆԽԲ (993) թվականի հատվածում Ստեփանոս Օրբելյանը նկատել է ժամանակագրական խախտում եւ նշել այդ մասին[132]:

Բագրատունիների անկման մասին Սամվել Անեցու գրած ողբն այս մատյանում (199բ) ժամանակագրական սյունակի մեջ է, ինչպես հնագույն ձեռագրերում, միայն սյունակն ավելի լայն է գծված[133]: Դրանից հետո Անեցին ունի երկու մեծ հատված, մեկը Հայոց ՇԻԱ (1072) թվականի դիմաց՝ Մանազկերտի ճակատամարտի, մյուսը՝ Մելիքշահի իշխանության մասին (քաղված Հովհաննես Սարկավագի թղթից), որոնք ժամանակագրության հնագույն՝ Կամրջաձորի օրինակում չորս էջ են զբաղեցնում[134], բայց Օրբելյանի ձեռագրում բացակայում են:

Հայոց ՇԽԲ (1093) թվականի դիմաց Մելիքշահի մահվան մասին հատվածը (200ա), որ Անեցու մոտ բավական ընդարձակ է, այստեղ կիսատ է ներկայացված[135]: Սամվել Անեցու բնագրում դրան հաջորդում է Հայոց ՇԽՁ (1097) թվականի դիմաց դարձյալ Հովհաննես Սարկավագից քաղված մի հատված, որը վերաբերում է խաչակրաց առաջին արշավանքին[136], որը նույնպես չկա

---

[130] Հմմտ. Անեցի, 1893, էջ 99:

[131] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 11, Անեցի, 1893, էջ 103:

[132] ՆԽԲ (993) թվականի հատվածում նշված է Անանիա Մոկացու մահից հետո Վահան Սյունեցու աթոռակալության մասին տեղեկությունը (197բ), որից առաջ Օրբելյանը ծանոթագրել է. «Զկնի մահուան Անանիայի հայրապետի է պատմութիւնս, որ է ՆԺՁ (967) թուին Հայոց: Յաւրինակն այսպէս էր, զնոյն եւ մեք կարգեցաք» (Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 11): Իսկապես, հիշյալ հատվածը Սամվել Անեցու բուն գործում հենց Հայոց ՆԺՁ (967) թվականից հետո է: Հավանաբար Օրբելյանի ձեռքին եղած օրինակում թերթերի հետեւառաջություն է եղել, եւ հիշյալ հատվածը, որը, ծավալուն լինելով, գրված է աղյուսակներից դուրս, հայտնվել է 993 թվականի մասում: Օրբելյանը նկատել է սխալը, ծանոթագրել այդ մասին, բայց քանի որ «յաւրինակն այսպէս էր», ինքն էլ այդպես է թողել:

[133] Հատվածի վերջին բառերը հրատարակության մեջ սխալ են. «…կրսեր որդոյն Քամայ եկաք՝ զտէրութիւն նորա» (Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 14): Ձեռագրում՝ «…կրսեր որդոյն քամայեցաք զտէրութիւն նորա» (199բ):

[134] Մ5619, 97բ-99ա, հմմտ. Անեցի, 2011, էջ 125:

[135] Մինչեւ՝ «…խռովութիւն եղեւ ամենայն քրիստոնէից զամս Դ (4)»:

[136] «Հռովմայեցիք ելին ընդ Թիրակ…»: (Մ5619,100բ, սույն գրքում, էջ 199): Օրբելյանի ձեռագրում նշված է Մանուչե ամիրայի մահվան մասին Անեցու տեղեկությունը, որը հրատարակության մեջ դուրս է մնացել (Մ8481, 200բ, հմմտ. Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 16):

Օրբելյանի ձեռագրում: 1124-26 թթ. վրացիների կողմից Անիի գրավման մասին Սամվել Անեցու բնագրում եղած ծավալուն հատվածը, որը Կամրջաձորի օրինակում երեք ու կես էջ է զբաղեցնում, այս ձեռագրում չկա (201ա), այլ միայն կարճ նշված է. «...ՇՀԳ (1124) թուին Դաւիթ թագաւոր... առնու զԱնի եւ ինքն մեռանի»[137]: 1140-ական թվականների դեպքերին վերաբերող մասում Հայոց ՇՂԷ (1148) թվականի դիմաց Սամվել Անեցու մոտ առկա խաչակրաց երկրորդ արշավանքի մասին տեղեկությունը եւս այս ձեռագրում չկա (201բ):

Կրճատումների մեջ նկատվում է երկու կարգի օրինաչափություն: Նախ՝ դրանք կատարված են ծավալային նկատառումով, հանված են մեծ, աղյուսակներից դուրս գրված հատվածները: Սրանք հիմնականում այն նյութերն են, որոնք Սամվել Անեցին գրել է՝ շեղվելով իր որդեգրած «կարճ ի կարճոյ» սկզբունքից՝ հավանորեն իր պատվիրատուի հետաքրքրությունները բավարարելու համար, ինչպիսիք են Մելիքշահին եւ Անիի 1124-26 թթ. դեպքերին վերաբերող հատվածները: Երկրորդը, կարծես թե, քաղաքական կամ դավանաբանական է, քանի որ ձեռագրում դուրս են թողնված խաչակիրներին վերաբերող Սամվել Անեցու մոտ եղած ընդամենը երկու տեղեկությունները:

Չի կարելի բացառել, որ Օրբելյանի ձեռքն անցած նախօրինակն արդեն կրճատումներով է եղել, սակայն ավելի հավանական է, որ այդ կրճատումները նա ինքն է արել: Սրանում ավելի ենք համոզվում՝ ծանոթանալով հետագայի հավելումների գրեթե նույն կառուցվածքն ունեցող Մ9796, Ե1221 եւ Ե3397 ձեռագրերի համապատասխան հատվածներին, ուր չի արված Օրբելյանի ձեռագրում եղած կրճատումներից եւ ոչ մեկը: Նկատենք, որ ինչպես Բագրատունիների անկման մասին Սամվել Անեցու ողբի ժամանակագրական սյունակի մեջ գրված լինելը, այնպես էլ այլ մանրամասներ վկայում են, որ Ստեփանոս Օրբելյանի նախօրինակը թեեւ ունեցել է մասնակի հավելումներ, սակայն հիմնականում քիչ է տարբերվել հեղինակային բնագրից[138]: Ըստ երեւույթին՝ Ստեփանոս Օրբելյանին անհրաժեշտ է եղել ունենալ Քրիստոսի ծննդից մինչեւ իր օրերը հասնող մի համառոտ, աղյուսակավոր ժամանակագրություն, առանց ծավալուն ընդհատումների: Դրա համար էլ նա չի վերցրել Անեցու երկի առաջին մասը, այլ միայն երկրորդը՝ աղյուսակավորը՝ դրանից ընտրողաբար դուրս թողնելով մեծ, կամ ոչ այնքան մեծ, բայց ինչ-ինչ պատճառներով իրեն անհարազատ հատվածները:

Ստեփանոս Օրբելյանը շարունակելով ժամանակագրությունը աղյուսակի Հայոց ՈՒԲ (1193) թվականից հետո էջով մեկ գրել է. «Զայս գաւազանք եւ չափ ժամանակաց գտաք ճշդիւ սահմանեալ Սամուէլի ճշ[մար]տաբան քահա-

---

[137] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 17, հմմտ. Մ5619, 103ա-105ա:

[138] Գրիգոր Գ Պահլավունու տարիների թիվը նշված է «ամս Ծ» (50) (թերթ 201ա), թեեւ տարիների թվարկումը հասնում է մինչեւ ԾԳ (53) (202ա): Կաթողիկոսի տարիների թիվը Ծ (50) է նշված նաեւ Կամրջաձորի օրինակում (Մ5619, 103ա):

նայի զկարգս թագաւորաց եւ կայսերաց, [ընդ որոց] եւ կաթողիկոսացն [Հայոց]՝ սկսեալ յառաջին ամէ [մարմնա]նալոյ Տեառն, մինչեւ ի ՌԾՂԵ (1195) ամն եւ ի ՈՒԲ (1193) թիւն Հայոց» (թերթ 204ա)[139]: Ցավոք, շարունակությունը, ուր Օրբելյանը նշում է, թե ինքն ինչ է պատրաստվում անել, սկզբում վնասված մասեր ունի, սակայն հիմնական ասելիքը հասկանալի է. «Եւ հանդէպ միմեանց եդեալ զիւրաքանչիւր/// որ յիւրաքանչիւր ժամանակսն իրագործեցան /// սակաւուք զթերին, միայն ամբողջ պահել զհամա[ռոտագ]ոյն եւ զկարգ հայրապետացն եւ զվերջին թագաւորութիւնն Հայոց՝ որ ի Կիլիկիայ, ի ներսի գաւառսն եւ զՎրացն՝ արտաքոյ միայն զանուանսն, նաեւ համառաւտիւք զգործս եւ զբանս, որ յիւրաքանչիւր ժամանակս եղեն, բերել հասուցանել մինչ ի մերս ժամանակ» (204ա)[140]:

Դրանից հետո, մինչեւ աղյուսակ գծելը, նա պատմում է Գրիգոր Դ Տղային հաջորդած կաթողիկոսների մասին, նախ՝ նշելով Գրիգոր Ե Քարավեժին (որին հին հեղինակներից ոմանց պես Տղա մականունն է տալիս՝ երիտասարդ տարիքը նկատի ունենալով), ներկայացնում նրա ողբերգական մահը: Ապա՝ Օրբելյանը նշում է Գրիգոր Զ Ապիրատին[141] եւ հայտնում մի տեղեկություն, որ հայ պատմիչներից ոչ մեկը չունի, եւ միայն Միքայել Ասորի պատրիարքի ժամանակագրության մեջ է արձանագրված[142]: Այն նշելուց հետո Օրբելյանը գրում է. «Ես՝ նուաստ Ստեփաննոս անուամբ այցելու կարգեցից ի գաւազանս սկիզբն արարեալ» (թերթ 204բ)[143]: Դրանից անմիջապես հետո նա գծել է ժամանակագրական աղյուսակ, ուր երեք սյունակ կա՝ Փրկչական թվականով, Հայոց կաթողիկոսների տարիներով եւ Հայոց թվականով: Կաթողիկոսներից առաջինը նշել է Գրիգոր Ե Քարավեժին՝ Հայոց ՈՒԳ (1194) թվականի դիմաց՝ 1 տարի, ապա Գրիգոր Զ Ապիրատին՝ Հայոց ՈՒԴ (1195) թվականի դիմաց՝ 7

---

[139] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 21, Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 35:

[140] Նույն տեղում:

[141] «Եւ ապա յաջորդէ ի տեղին միւս Գրիգորիս, Ապիրատն կոչեցեալ, եղբաւր որդի մեծ հայրապետացն Գրիգորի եւ Ներսէսի, որ եւ ի մահուան նորին նախ սա քարոզեցաւ կաթողիկոս» (204բ): Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 21:

[142] Ներսես Շնորհալու մահից հետո նրա մոտ գտնվող Գրիգոր Ապիրատը ստանձնել է կաթողիկոսական պարտականությունները, որը շատ կարճ է տեւել, քանի որ աթոռը նախանշված հավակնորդ է ունեցել՝ հանձին Գրիգոր Տղայի, որն էլ Կիլիկիո Մլեհ իշխանի աջակցությամբ (նրա կինը Գրիգոր Դ Տղայի քույրն էր) շուտով գրավել է այն (Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի ասորւոց պատրիարքի, Երուսաղեմ, 1871, էջ 472-473, տե՛ս նաեւ Գրիգոր Տղա, բանաստեղծություններ եւ պոեմներ, աշխատասիրությամբ Աս. Մնացականյանի, Երեւան, 1972, էջ 20-30): Լամբրոնի եւ Տարսոնի եպիսկոպոսությունը ստացած Գրիգոր Ապիրատը, այնուամենայնիվ, կաթողիկոս է դարձել Գրիգոր Տղայից եւ Գրիգոր Քարավեժից հետո:

[143] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 21, Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 35:

տարի (204բ)[144]: Նույն էջի վերջում Օրբելյանը գրում է. «Աստանաւր կամիմ կարգել զնորոգ թագաւորութիւնն Հայոց» (204բ), պատմում է Կիլիկիայում Լեւոն Ա-ի թագադրության մասին եւ արդեն հաջորդ էջում ժամանակագրական սյունակների շարքում Փրկչական թվականից հետո ավելացնում Հայոց թագավորների տարիները. Հայոց ՈՒԶ (1197) թվականի դիմաց՝ «Թագաւոր Հայոց Լեւոն կացեալ ամս ԻԵ (25)» (205ա)[145]: Այդ չորս սյունակներն Օրբելյանը պահպանում է մինչեւ ժամանակագրության վերջը: Իր խոստման համաձայն՝ նա իրադարձությունները ներկայացնում է համառոտ, սակայն անհամեմատ ընդարձակ է գրում այն դեպքերի մասին, որոնք վերաբերում են Սյունիքին:

Այսպիսով՝ Ստեփանոս Օրբելյանը նախ համառոտել է Սամվել Անեցու ժամանակագրությունը, որը նրա ձեռքն է հասել արդեն որոշ հավելումներով, ապա 1193 թվականից հետո շարունակել է մինչեւ 1290 թվականը եւ եզրափակել իր հոր՝ Սյունյաց իշխան Տարսայիճ Օրբելյանի մահվան մասին հիշատակությամբ:

ՆԱԹԱՆԱՅԵԼ ՀԱՎՈՒՑԹԱՌԵՑԻ

Հավուց թառի վանքի առաջնորդ Նաթանայել եպիսկոպոսը հիշատակվում է վանքի 14-րդ դարի կեսերի երկու վիմագիր արձանագրություններում եւ այժմ կորած մի ձեռագրի հիշատակարանում, սակայն նրա մասին մեր տեղեկություններն անհամեմատ ավելանում են՝ շնորհիվ Սամվել Անեցու ժամանակագրության ընդօրինակություններից մեկի (Մ3681), որի հետագայի ստացողն ու լրացնողն է եղել: Ժամանակագրության Նաթանայելի լրացրած օրինակի շնորհիվ մենք, փաստորեն, կարող ենք խոսել 14-րդ դարի կեսերին ապրած մի նոր հեղինակի մասին:

Նաթանայել եպիսկոպոսի անունն առաջին անգամ հրապարակել է Գ. Հովսեփյանը՝ վկայակոչելով վերջինիս հիշատակագրությունը ժամանակին Սեբաստիայի Ս. Նշան վանքում պահված ձեռագրում. «Աստանաւր յիշեցէք ի սուրբ եւ ի մաքրափայլ յաղաւթս ձեր՝ զիս՝ զմեղապարտ, զնուաստ եւ զհողոյ հաւասար Նաթանայէլ եպիսկոպոս եւ առաջնորդ սուրբ եւ հռչակաւոր մեծ մենարանիս Հայոց թառայ, որ է սկիզբն սորայ ի սուրբ Լուսաւորչէն նոցա եւ հիմնարկութեամբ հաստատե(ա)լ եւ հանդիսացեալ սուրբ թարգմանչացն՝ Սահակայ եւ Մեսրոպայ»[146]: Դրանից հետո նա գրում է. «Նաթանայել եպիս-

---

[144] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 22, Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 36:

[145] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 22, Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 37:

[146] Գ. Հովսեփյան, Հավուց թառի Ամենափրկիչը..., Նյութեր եւ ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Բ, Երեւան, 1987, էջ 24-25, հմմտ. Ցուցակ հայերէն ձեռագրաց Ս. Նշան վանուց ի Սեբաստիա, (կազմեց՝ Թորգոմ Գուշակեան), Վիեննա, 1961, էջ 102:

կոպոսն ապրում է ԺԴ դարի երկրորդ կեսում կամ, որ ավելի հավանական է, ԺԵ-ի վերջերում, որովհետեւ այդ ժամանակների համար միայն տեղեկություն չունինք վանքի մասին»[147]: Նաթանայելին հետագայում որեւէ այլ ուսումնասիրող չի անդրադարձել:

Այժմ Նաթանայել եպիսկոպոսին պատկանած ձեռագրում (Մ3681) նրա ձեռքով գրած 1343 թ. հիշատակարանի շնորհիվ պարզվում է, որ նա ապրել է 14-րդ դարում եւ առաջնորդ եղել դարակեսին: Սեբաստիայի ձեռագրի հիշատակարանը կարեւոր է այն առումով, որ այնտեղ եպիսկոպոսն իր անունը գրել է ամբողջովին, մինչդեռ վերոնշյալ հիշատակարանում, ինչպես նաեւ Հավուց թառի երկու արձանագրություններում՝ կրճատ՝ «Նաթ»: Ինքնագիր հիշատակարանում նշված է՝ «Ես նուաստ Նաթ եպ Հայոց թառոյ...»: Իսկ արձանագրություններում անվան կրճատ գրված լինելը պատճառ է դարձել թյուրըմբռնման: Մասնավորապես դրանք հրատարակած Գ. Հովսեփյանը արձանագրությունների մեջ հիշատակված անձանց միջոցով միանգամայն ճիշտ է որոշում գրության ժամանակը՝ 14-րդ դարի կեսեր, բայց այդ անունը կարդացել է «ԱԹՆ» եւ գրում է. «Երկու արձանագրություններն էլ ժամանակակից են իրար, նույն գրչի ձեռքով, նույն Աթանասի առաջնորդության ժամանակ»[148]: Մինչդեռ Հավուց թառում Աթանաս անունով առաջնորդ այլ աղբյուրներում չի հիշվում եւ այժմ արդեն հստակ է, որ վիմագրի գրիչն ընդամենը գրել է Նաթանայելի կրճատ անունը՝ «ՆԱԹ»: Արձանագրություններից առաջինը վերաբերում է Մանաս Երեւանցու դուստր Բեսուլունի նվիրատվությանը[149], իսկ երկրորդը հետաքրքրական է նրանով, որ սկզբում հիշատակվում են այն մարդիկ՝ Շահնշահ Գ Զաքարյանն ու պարոն Թամարը, որոնց անուններն առկա են նաեւ Նաթանայելի ստացած ժամանակագրության հիշատակագրություններում[150]:

Սամվել Անեցու ժամանակագրության թերթերի վրա Նաթանայելի թողած հիշատակագրություններից պարզվում է, որ նա հալածանքների պատճառով մի որոշ ժամանակ ապաստանել է Անիի մերձակա Մաղասբերդում՝ իր բարեկամ պարոն Ամիրզայի ընտանիքում: Այս մասին նա գրում է բերդում վեց ա-

---

[147] Գ. Հովսեփյան, Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 25:

[148] Գ. Հովսեփյան, Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 31: Այն, որ այստեղ «Աթանաս» անուն չի կարող լինել, երեւում է նրանից, որ երկու դեպքում էլ անվան առաջին երկու տառերը «ՆԱ» (կամ «ԱՆ») գրված են կցագիր, որին հաջորդում է «Թ»-ն: Այսինքն՝ համառոտագրությունը «ԱԹՆ» կարդալու համար պետք է կցագրի մի տառը գրել «Թ»-ից առաջ, մյուսը՝ հետո, որը կցագրության մեջ չի կիրառվում:

[149] Նույն տեղում, էջ 30:

[150] «[Շնոր]հիւն Ա(ստուծո)յ եւ ողորմութ(եամ)ք մեր պ(ա)ր(ոն)ացն [դիտոփալ] Թամարին եւ աթաբակ Շահանշահի, մեք մեղուցեալ ծառայքս մուլահր Ամիր Սարգիս Նորագաւթեցի եւ ամուսին իմ էրմանի եւ եղբայր իմ Ամիր, միաբանեցաք սրբոցս եւ տվաք յէրեւան զմեր գանձագին հայրենիք այգին... Տ(է)ր Նաթ(անայել) եւ այ[լ միաբան]քս խոս[տացան ի տ]արին Զ (6) պատ(արագ)...» (Գ. Հովսեփյան, Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 30):

միս մնալուց հետո եւ պատահական չէ, որ հիշատակարանի առաջին բառը ամսանվան հիշատակությունն է՝ «սահմի»: Սա նաեւ ենթադրել է տալիս, որ նա հենց այդ ժամանակ է ձեռք բերել մատյանը եւ հիշատակագրել իր հետ կատարվածը. «ՉՂԲ (1343) սահմի: **Ես նուաստ Նաթ**(անայել) **եպ**(իսկոպոս) **Հայոց թառոյ** յոյժ ...ե(ա)լ եւ անմխիթար տրտմե(ա)լ եւ ի լալագին աչա[ւք] ...կացի ի Մաղըսբերդ Զ (6) ամիս եւ յԱստուած հաւատարիմ հո[գե]ւոր եղբայրն իմ Ամիրզայն մեծաւ սիրով ընկալաւ զիս եւ քաղցրութեամբ մխիթարեց, Աստուած զինքն մխիթարէ. ամէն»[151]:

Իր հյուրընկալ Ամիրզայի ընտանիքի անդամներին Նաթանայելը հիշատակում է ձեռագրի տարբեր էջերի, ցավոք, վատ պահպանված հիշատակագրություններում[152]: Սակայն դրանց մեջ հիշվում են նաեւ Զաքարյան Շահնշահ Գ-ն ու նրա եղբայր Շրվանշահը, ինչպես նաեւ «պարոն Թամարը», ովքեր, ինչպես տեսանք վերը նշված արձանագրությունից, Հավուց թառի վանքի պարոններն էին: Հիշատակագրություններից մեկից երեւում է, որ այդ ընթացքում բերդը հարձակման է ենթարկվել: Ահավասիկ այդ կարճ եւ հատվածաբար պահպանված տողերը. «Աստուած լոյս արայ խաւարն, որ/// բազում զորաւք եկն ի վերայ բերդիս **Մաղասայ**///» (92բ): «///աց սրբոցն միջնորդութեամբ ազա[տեա՞] [զՇահ]անշահն ի յանաւրի[նաց] (4ա): «///այ **զպարոն Թամարն** եւ **զՇրվանշահն** ի ձեռա/// եւ ժառանգեցայ զտունս հայրէնի. ամէն» (5ա): «(Քրիստոս) որդի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, սուրբ Աստուածածնիդ միջնորդութեամբ եւ քո ///ած խաչիդ եւ սուրբ Ամենափրկչիդ եւ սուրբ/// (114բ), [զ]**Շահան[շ]ահ** եւ **զՇրվանշահ**[14] յանաւրինացն չարեն/// եա եւ հաստատեա///»(115ա):

Ինչպես երեւում է, հիշատակագրություններում Հավուց թառի եպիսկոպոսն Աստծո ողորմածությունն է հայցում «պարոն Թամարի, Շահանշահի եւ Շրվանշահի» համար, որպեսզի նրանք ազատվեն անօրեններից եւ տեր դառնան իրենց հայրենի ժառանգությանը: Շահնշահ Գ-ն Անիում իշխած վերջին Զաքարյանն էր, Շրվանշահը՝ նրա եղբայրը, որոնք, ինչպես երեւում է նաեւ այլ աղբյուրներից, հալածանքի են ենթարկվել[153]:

---

[151] Մ3681, թերթ 83բ-84ա: Մեկ այլ տեղում պահպանվել է հետեւյալը՝ «Ես Ն[աթանայել] /// ստացայ զգիրքս ի յիշա[տակ]///» (91ա):

[152] «Քրիստոս Աստուած պահեայ զպարծանաց եղբայրքն զպարոն Ամիրզայն եւ զԹանզուքն եւ փրկեայ ի չարեաց» (45բ): «Քրիստոս Աստուած քում արդ բարեխաւսութեամբ/// յարքայութիւնդ հոգեւոր մաւրն իմ Արազ Խաթունին, որ բազում ար[ար]/// զմեզ ///եայ զԱմիրզայն եւ զՄաղազ Խաթ[ունն]» (93բ-94ա): Այս գրություններով ուրվագծվում է Ամիրզայի ընտանիքը: Թանզուքը նրա եղբայրն էր, Արազ Խաթունը՝ հավանաբար մայրը, իսկ Մաղազ Խաթունը պետք է որ Ամիրզայի կինը եղած լինի:

[153] Մ1519 ձեռագրի 14-րդ դարի մի հիշատակարանում գրիչը նշում է՝ «...աթապակ Շահանշահին եւ եղբաւր իւրոյ պարոն Շրվանշահի...» (Գ. Յովսեփեան, Յիշատակարանց ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 891): Ըստ 1357 թ. մեկ այլ հիշատակարանի՝ Շահնշահ Գ-ը «Տաճկաց զորքի» հարձակումից մազապուրծ փախել է Անիից (Մ6764, 264ա, Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 364):

Սամվել Անեցու Ժամանակագրության մեջ հավելումները Նաթանայելը հավանորեն կատարել է Հավուց թառ վերադառնալուց հետո՝ դատելով դրանցում եղած որոշ արտահայտություններից («յառ որ մերն կայ», «ի Հայոց թառոյ, ի յաստ») եւ Ամենափրկիչ խաչի հիշատակությունից, որը վանքի գլխավոր սրբությունն էր:

Նաթանայելի հիմնական նպատակն է եղել Հայոց պատմության ժամանակագրական ընդհանուր շղթայում ավելացնել իր վանքի՝ Հավուց թառի պատմության կարեւոր դրվագները: Այդ համատեքստում նա ուշագրավ տեղեկություններ է հայտնում վանքի հիմնադրման, անվան, պատմության, կատարված շինարարական ձեռնարկների, այնտեղ պահվող սրբությունների, սեփականության, նվիրատվությունների մասին, միաժամանակ ուշագրավ տեղեկություններ ունի Գառնիի, Կոխթի (Գողթ), նաեւ Հասանյան (Ապիրատյան) իշխանատոհմի վերաբերյալ:

ԵՓՐԵՄ ՂԱՓԱՆՑԻ

17-րդ դարի վերջերին Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքներից է եղել Եփրեմ Ղափանցին[154], որը գրասեր մարդ էր, հավաքել, նաեւ հեղինակել է տաղեր, կազմել մի Տաղարան եւ ընդօրինակել տվել 1695 թ. (Մատենադարան, ձեռ. թիվ 7717): Հետաքրքիր է, որ նա ստացել է Սամվել Անեցու Ժամանակագրության երկու ընդօրինակություն, մեկը 1687 թ.՝ Մ2965, որի հիշատակարանում կարդում ենք «Զայս ժողովածու գիրքս եւ գաւազանագիրքս է Ադրիանուպօլսոյ առաջնորդ Եփրէմ վարդապետի ի վայելումն իւրում անձին ՌՃԼԶ (1687) թուականին (118ա): Մյուսը Մ3965 ձեռագիրն է, որտեղ նա հավելումներ է կատարել Ժամանակագրության վերջին հատվածում:

Մեկընդմեջ երկու անգամ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքի եւ Ադրիանուպոլսի (Էտիրնե) առաջնորդի աթոռը զբաղեցրած Եփրեմ Ղափանցին 1699-ին Ադրիանուպոլսում էր[155]: 1701 թվականի օգոստոսին այս քաղաքում պատահած մեծ հրդեհի մասին Սամվել Անեցու Ժամանակագրության վերջում ավելացրած հատվածում նա իրեն համարում է «ծերունի վարդապետ»: 1701 թ. սեպտեմբերի 1-ին նա կրկին պատրիարք է ընտրվում, սակայն շարունակում է մնալ Ադրիանուպոլսում, որտեղ այդ տարվա վերջին ավարտում է իր հիմնած Ս. Աստվածածին եկեղեցու կառուցումը:

1702 թ. մարտի 7-ին Եփրեմ Ղափանցին աթոռանկ է արվում եւ հեռացվում Կոստանդնուպոլսից՝ ուղարկվելով Էջմիածին: Իր հետ ունենալով Անեցու ձեռագիրը (Մ3965)՝ նա ժամանակագրության մեջ արձանագրում է Էջմիածին

---

[154] Եփրեմ Ղափանցու գործունեության մասին տե՛ս Յ. Սիրունի, Պոլիս եւ իր դերը, հ. Ա, Պէյրութ, 1965, էջ 599-603:

[155] Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, էջ 3080, 3089, 3109, 3122:

հասնելու օրը (օգոստոսի 1)։ Եփրեմ Ղափանցին Ժամանակագրության մեջ հիշատակություններ է ավելացրել նաեւ իր նախկին ուսուցիչների՝ Երնջակի Ս. Կարապետ վանքի առաջնորդ Եսայի վարդապետի եւ Գրիգոր Զեյթունցու վերաբերյալ[156]։ Եփրեմ Ղափանցու հավելումները կատարված են կա՛մ իր, կա՛մ իր քարտուղարի ձեռքով։ Համենայն դեպս, նույն ոճն ունեցող հավելումները հասնում են մինչեւ 1735 թվականը։

[156] Տե՛ս Ա. Այվազյան, Հայոց եկեղեցին 18-րդ դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, Երեւան, 2003, էջ 232։

ՆԵՐԿԱ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը բազմաթիվ են, ուստի՝ այբուբենի տառերով կամ այլ պայմանական եղանակով դրանք անվանակարգելու փոխարեն նախընտրել ենք պահպանել ձեռագրերի համապատասխան հավաքածուներում ունեցած համարները՝ սկզբում դնելով հավաքածուն մատնանշող սկզբնատառ՝ օրինակ՝ Մ5619, որը նշանակում է Մատենադարանի թիվ 5619 ձեռագիր, իսկ մյուս բոլոր հավաքածուների դեպքում նշվում է քաղաքի անվան սկզբնատառը: Այս եղանակը թույլ է տալիս անմիջապես տեղեկանալ, թե որ հավաքածուի որ թվահամարի մատյանից է տվյալ ժամանակագրական միավորը:

Ստորեւ համառոտ ներկայացնում ենք այն հիմնական ձեռագրերը, որոնց հիման վրա կազմվել է սույն հրատարակության բնագիրը: Մի փոքր ավելի հանգամանորեն են ներկայացվում հնագույն երկու ձեռագրերը, որոնցից երկրորդի (Մ3613) գրիչ՝ Հռոմոսում աշխատած Մխիթար Անեցին, մեր կարծիքով համանուն պատմիչն է:

Նյութի ծանրաբեռնումից խուսափելու համար զերծ ենք մնում մատյանների մանրամասն նկարագրությունից եւ հիշատակարանների ամբողջական մեջբերումից՝ բավարարվելով ժամանակագրության համար կարեւորություն ունեցող տվյալները վկայակոչելով եւ ձեռագրերում առկա հավելումների վերաբերյալ հակիրճ բացատրություն տալով:

Մ5619 Ժողովածու է[157], որի մեջ տեղ գտած Սամվել Անեցու ժամանակագրությունն առայժմ հայտնի հնագույն ընդօրինակությունն է՝ կատարված Կամրջաձորի վանքում[158], 1176 թ., Ավետիս գրչի ձեռքով եւ Քրիստափոր վարդապետի հանձնարարությամբ: Գլխավոր հիշատակարանի առաջին մասում գրիչը յուրովի բնութագրում է ժամանակագրությունը, ապա նշում ստացողին, գրչության ժամանակն

[157] Ձեռագիրը գրված է թղթի վրա (թերթ՝ 226, 16,8x12 սմ), բոլորգրով, աղյուսակները եւ սկզբնամասի որոշ սկզբնատողերը՝ վարդագույնով, ժամանակագրության թերթերը՝ 6ա-108ա (հաջորդում են հավելումներ): Որպես հնագույն թվակիր օրինակ՝ արժանացել է ուսումնասիրողների ուշադրությանը. տե՛ս Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 464, Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 20, Գ. Աբգարյան, Մատենագրական նորույթներ, ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1964, № 1, էջ 84, Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի…, էջ 11, 88, L. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Ա, էջ 474-481:

[158] Շիրակի սահմանակից Արշարունիք գավառում գտնվող Կամրջաձորի վանքը ծաղկում է ապրել 11-12-րդ դարերում, հայտնի էր իր բանիբուն վարդապետներով ու հմուտ գրիչներով: Վանքի նշանավոր վարդապետներից է եղել Սամվել Կամրջաձորեցին, որը Սարգիս Ա Սեւանցի կաթողիկոսի հանձնարարությամբ պատրաստել է Սեբաստիայի մետրոպոլիտին ուղարկվելիք պատասխան թուղթը: Վանքի վարդապետներից է եղել Հովհաննես Սարկավագի ուսուցիչ Գեւորգ Ուռճացին:

ու վայրը. «Ձեռամբ անպիտանի եւ ապիկար անձին Աւետիս կոչեցելոյ տառագծեցաւ այս համառաւտ յայտարարութիւնք իրաց գործեցելոց եւ ցոյցք ժամանակաց ի նախաստեղծէն եւ այսր, հրամանաւ տեառն իմոյ սրբազանի Քրիստափորի, ի ՈԻԵ (1176) թուականութեանն Հայոց, ի տիեզերահռչակ ուխտս Կամրջաձոր» (108ա): Գրիչը եւս երկու անգամ հիշատակում է ստացողին:

Ժամանակագրության վերջին թերթին (107ա) 1163 թվականից հետո դրված ավարտանշանը կարեւոր կռվաններից մեկն է այն հեղինակային բնագրի ավարտ համարելու համար: Այստեղ ավարտելով ժամանակագրությունը՝ գրիչն իր հիշատակարանը գրել է ոչ թե անմիջապես թերթի հաջորդ երեսին (107բ), քանի որ այդտեղ նախապես աղյուսակ էր գծել, այլ 108ա թերթում: Հետագայում, երբ այս նույն ձեռագրում, 108բ թերթից սկսած, նոր ժամանակագրություն են կցել, 107բ թերթի աղյուսակի վրա արտագրել են անհայտ հեղինակի այն ծանոթագրությունը, որը վերաբերում է Սամվել Անեցու ժամանակագրության ավարտին եւ տեղ է գտել բազմաթիվ այլ ձեռագրերում. «Աստանաւր զտեղի առեալ կացին շարագրութիւնքս գեղեցկաբանին Սամուէլի…»:

ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԸ պատկանում են տարբեր գրիչների: Դրանցից մի քանիսը ժամանակագրության առաջին (առանց աղյուսակների) մասում են: Գրիչը սեւ թանաքով երեք կարգի միջամտություն ունի. տառեր կամ բառեր ավելացնելով՝ սրբագրական աշխատանք է կատարել, մուգ թանաքով անցել է Ավետիսի գրի վրայից (հավանաբար դրանց որոշ մաշվածության պատճառով), եւ որոշ փոքր տեղեկություններով հավելումներ է կատարել:

Հետագայում ձեռագրում ժամանակագրությունը շարունակվել է: **Առաջին շարունակողը** մուծել է Կիլիկիայի 12-14-րդ դարերի պատմությանը վերաբերող՝ այլ աղբյուրներից հայտնի տեղեկություններ պարունակող մի ժամանակագրություն, որը հասնում է մինչեւ Հայոց ՉՂԶ (1347) թվականը (Մ5619, 108բ-113բ): Առաջին շարունակողի հայտնած տեղեկությունները, որ հավանաբար քաղվել են Սամվել Անեցու ժամանակագրության մեկ այլ ձեռագրից, տեղ են գտել ժամանակագրության վաղարշապատյան հրատարակության տարբեր էջերում:

Երկրորդ շարունակողի հավելումները (114ա-118բ) գրված են նոտրգրով եւ հավանորեն նույնպես քաղվել են ժամանակագրության մեկ այլ ձեռագրից: Այստեղ նախ երեք թերթ (114ա-116բ) դատարկ է, միայն գծված են աղյուսակները: Հաջորդ թերթերում (117ա-118ա) տեղ է գտել յոթ վկայություն, վերջինը Հայոց ՉԽԸ

(1499) թվականի դիմաց, որը վերաբերում է Բայազիտ Բ-ի (1481-1512) մի արշավանքին: Դրանից հետո տարեթվերի շարքը շարունակված է (118բ) եւ հասցված մինչեւ Հայոց ՁՀԲ (1523) թվականը, որից կարող ենք եզրակացնել, որ երկրորդ շարունակողն ապրել է 16-րդ դարի առաջին կեսին: Այդ ձեռագրով մի հիշատակարան է եղել Սամվել Անեցու Ժամանակագրության ավարտն ազդարարող ծանոթագրությունից հետո, որը ջնջված է, սակայն պահպանվել է առաջին տողը. «Սեբի գիրքս յիշատակ է Մարտիրոս վարդապետին» (107բ):

Մ3613 Սամվել Անեցու Ժամանակագրության հնությամբ երկրորդ մատյանը[159], որը ստեղծվել է Հոռոմոսի վանքում[160], այն փոքրաթիվ օրինակներից է, որոնք պարունակում են միայն Ժամանակագրությունը (ձեռագրերի մեծագույն մասը ժողովածուներ են):

Գրիչն ու ստացողը Մխիթար Անեցի աբեղան է, որը հիշատակարանում իրեն անվանում է Հոռոմոսի վանքի աշակերտ[161]: Ձեռագրում Սամվել Անեցու բնագիրը հիմնականում զերծ է միջամտությունից, եղած հավելումները գրությամբ հստակ առանձնանում են: Ձեռագիրն ուշագրավ է նաեւ նրանով, որ գրիչը նույնպես անեցի է, ընդ որում, մեծ հավանականությամբ, Սամվել Անեցու կրտսեր ժամանակակից՝ պատմիչ Մխիթար Անեցին[162]: Գրչի՝ միաժամանակ մատյանի ստացողը լինելու հանգամանքը («Ձմեղաւոր ստացաւղս եւ զաշխատաւորս զՄխիթար եւ ծնաւղսն մեր եւ եղբարսն յիշել աղաչէմ» (35բ), վկայում է նրա պատմագիտական նախասիրությունների մասին: Մխիթար Անեցին միջամտություն է կատարել երկի վերնագրում, որով ընդգծել է Սամվելի անեցի լինելը. «Սամուելի քահանայի հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժա-

[159] Գրված է թղթի վրա (թերթ՝ 79, 16,5x11,5 սմ), բոլորգրով, սեւ թանաքով (միասյուն, տող՝ 24 եւ 26), աղյուսակները՝ կարմրագիծ, Ժամանակագրության թերթերը՝ 1ա-70բ:

[160] Անիի արվարձաններից ոչ հեռու գտնվող Հոռոմոսի վանքը բացառիկ դեր է ունեցել քաղաքի կյանքում: Բագրատունյաց շրջանում այն թագավորների դամբանավայրն էր եւ վայելում էր արքունիքի հովանավորությունը: Վանքը նաեւ առաջնակարգ հոգեւոր կենտրոն էր՝ հայտնի իր դպրոցով ու գրչատնով: Անիի շրջանից ամենից մեծ թվով ձեռագրեր մեզ հասել են հենց Հոռոմոսից, ընդ որում, 12-րդ դարի վերջին քառորդը եւ 13-րդ դարի առաջին տասնամյակներն առավել արդյունավետ շրջան են եղել: Այդ ժամանակ են վանքում աշխատել գրիչ Հովհաննեսն ու նրա եղբայր Վարդանը, հայտնի գրիչ եւ մանրանկարիչ Իգնատիոս Հոռոմոսցին, կազմարար Աբրահամը եւ ուրիշներ:

[161] «Ձյետնեալս արդիւնական գործոց զչուառ գրիչս զՄխիթարիչ Անեցի սուտանուն աբեղայ եւ աշակերտ բանի ի վանացն Հոռոմոսի, սնեալ առ ոտն Սուրբ Յովանիսի յիշեսջիք ի Քրիստոս աղաչէմ» (Մ3613, 26բ):

[162] Կ. Մաթեւոսյան, Սամվել Անեցու Ժամանակագրության Մխիթար Անեցու ընդօրինակությունը, «Էջմիածին», 2006, Ժ-ԺԱ, էջ 88-100:

մանակաց անցելոց մինչեւ ի ներկայս, ծայրաքաղ, **քաղաքաւ անեցի**» (1ա): Սամվել Անեցու նկատմամբ Մխիթարի ակնածանքի արտահայտություն կարելի է համարել նաեւ այն, որ ժամանակագրության մի հատվածում, որտեղ հեղինակն ասում է՝ «իսկ իմ մոռացեալ զտգիտութիւն եւ զանուսումնութիւն իմ», նա հանել է վերջին երկու բառերը:

Հոռոմոսի ձեռագրի վերջին թերթը թույլ է տալիս ենթադրություն անել մատյանի գրության թվականի մասին: Մխիթարի գծած ժամանակագրական աղյուսակը վերջանում է էջի կեսին, այսինքն՝ գրիչը նախապես որոշել է, թե մինչեւ որ թվականն է նշելու եւ ըստ այդմ գծել աղյուսակը՝ հասնելով Հայոց ՈԻԶ (1177) թվականին: Հնարավոր է, որ դա ձեռագրի գրության թվականն է, քանի որ միեւնույն սկզբունքն է կիրառված Սամվել Անեցու ժամանակագրության Կամրջաձորի օրինակում: Այնտեղ աղյուսակն ավարտվում է Հայոց ՈԻԵ (1176) թվականով (Մ5619, 107ա), իսկ հիշատակարանում Ավետիս գրիչը նշում է, որ մատյանը գրել է «ի ՈԻԵ (1176) թուականութեանն Հայոց...» (Մ5619, 108ա):

ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԸ ձեռագրում հետագայում կատարել է մի անանուն գրիչ՝ օգտագործելով ավելի բաց գույնի թանաք, որն իսկույն տարբերվում է Մխիթար Անեցու գրից: Հավելումների հեղինակը նույն թանաքով ու գրչությամբ մատյանի վերջում թողել է մի տեղեկություն, որը վկայում է նրա ապրած ժամանակի մասին. «...եւ այժմ թվական Փրկչին է Ռ եւ Ն (1400) եւ է նահանջ... Եւ թվականն Հայոց է Պ եւ ԽԹ (1400)» (71 բ):

Շուրջ 1400 թվականին հավելում կատարողը, որը հավանաբար քաղկեդոնական դավանանքի հետեւորդ է եղել, չի բավարարվել դրանով, այլ երբեմն իմաստային աղավաղման հանգեցնող միջամտություններ է կատարել: Օրինակ՝ 633 թ. Կարինի ժողովին վերաբերող հատվածում նա ջնջել է Սամվել Անեցու բնագրի բառերից մի քանիսը եւ նորերը գրել, որից հետո տեղեկությունն իմաստափոխվել է: Սամվել Անեցին գրել է. «Հերակլի ի ժողով արարեալ ի Կարնոյ քաղաքի, կոչէ եւ զԵզր ի Հայոց, որ տգիտաբար հաւանեալ Քաղկեդոնի, վասն զի ոչ տարաւ զՅոհան Մայրավանեցի, որ Աստուածային Գրոց բանիբուն ճանաչիւր...»: Անանուն գրչի միջամտությամբ հատվածը հետեւյալ տեսքն է ստացել (նրա ավելացրած բառերն ու տառերը դնում ենք փակագծերում). «Հերակլի ի ժողով արարեալ ի Կարնոյ քաղաքի, կոչէ եւ զԵզր ի Հայոց, որ (եւ) հաւանեալ Քաղկեդոնի (ժողովոյն, բազում եպիսկոպոսօք եւ իշխանօք նզովեցին) զՅովհան Մայրա(գոմ)եցի, որ (հերետիկոս) ճանա-

չիւր…» (Մ3613, 45ա):

Մխիթար Անեցու ընդօրինակած տեքստի վերջին էջում պահպանվել է նաեւ Հայոց կաթողիկոսների՝ այլ գրչի պատկանող մի փոքր ցանկ, որի երկու ուշագրավ տվյալ նույնպես ներառել ենք սույն հրատարակության մեջ:

Ե1801 Մատյանը[163] ,հավանորեն, ստեղծվել է 12-րդ դարի վերջերին կամ 13-րդ դ. սկզբին: Թեեւ գրչության ժամանակի հիշատակարան չունի, բայց ժամանակագրությունը մեկ կազմի մեջ է ամփոփված Հռոմոսի հայտնի գրիչ Հովհաննեսի՝ 1187 թ. ընդօրինակած Բարսեղ Կեսարացու «Վեցօրէից» գրքի հետ՝ որպես երկրորդ մաս: Ձեռագրերը նույն կազմի մեջ են եղել 1236 թվականից առաջ, որի մասին կարելի է եզրակացնել ժամանակագրության վերջին թերթի վրա եղած հիշատակարանից: Այստեղ գրիչը նշում է ձեռագրի առաջին մասի սկզբում եղած վերնագիրը՝ «Գիրքս այս կոչեցեալ Վեցաւրեա», իսկ բուն հիշատակարանը գրում է երկրորդ մասի՝ Ժամանակագրության վերջին թերթին, որը ցույց է տալիս, թե 1236-ին մատյանները եղել են մեկ կազմի մեջ եւ այդպես էլ Անիի մոնղոլական գրավումից հետո տարվել են Կիլիկիա. «Ի թուականիս Հայոց ՈՁԵ (1236), ի դժնդակ ժամանակի, յանիծեալ յազգէն Քամա, կոչեցեալ անդադար (իմա՝ թաթար – Կ.Մ.) ի պաշարեալ զմայրաքաղաքն Անի, եւ զամենիսեան ի սուր սուսերի մաշեալ, զսրբութիւնսն անարգեալ եւ զգրեանս գերի վարեալ: **Եւ գիրքս այս կոչեցեալ Վեցաւրեա, բերաւ յաշխարհ Կիլիկեցւոց** եւ ստացա զգիրքս քահանա անուն կոչեցեալ Հայրապետ...»[164]: Շատ հավանական է, որ, որ գրքերը միասին կազմել է հենց Հովհաննես գրիչը Հռոմոսում, քանի որ նա ոչ միայն Բարսեղ Կեսարացու գործի ընդօրինակողն էր, այլեւ մատյանի ստացողը («զՅովանէս զաշխատասիրողս եւ զստացողս յիշեսջիք...»)[165], միաժամանակ՝ գրասեր մարդ էր, գրիչ ու կազմարար, եւ հավանական է, որ Սամվել Անեցու Ժամանակագրության այդ օրինակն էլ նրան է պատկանել[166]:

---

[163] Գրված է թղթի վրա, բոլորգրով, սյունակները գծված կարմիրով, Ժամանակագրության թերթերը՝ 387-557, (Մատենադարան, դրսի մանրաժապավեն թիվ 750):

[164] Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ձ, կազմեց Ն. Պողարեան, Երուսաղէմ, 1972, էջ 163-164:

[165] Նույն տեղում, էջ 162: Այս մատյանը Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայի» հայերեն պահպանված հնագույն օրինակն է (Կ. Մուրադյան, Բարսեղ Կեսարացին եւ նրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ, Երեւան, 1976, էջ 138-139):

[166] Հովհաննեսից հայտնի է 1181-1187 թթ. Հռոմոսում ընդօրինակած երեք ձեռագիր, որոնցից երկուսի ստացողն էր (Ե1801 եւ Ե3299):

Ն. Պողարյանը տեքստի մասին նշում է. «Ժամանակագրական աղիւսակներ համառօտ տեղեկութիւններով, առանց յետնագոյն այն յավելումներու որոնք կը գտնուին Արշակ Տէր-Միքելեանի հրատարակութեան մէջ»[167]: Այս մատյանի տեքստը լեզվական առումով մոտ է Կամրջաձորի օրինակին: Ձեռագրի վերջում բուն գրչի ձեռքով արված ամենավերջին նշումը Գրիգոր Տղայի աթոռակալության մասին է, սակայն գրված է միայն կաթողիկոսի անունը, իսկ մականունը՝ «Տղա կոչեցեալն», ավելացված է այլ գրով եւ որպես դրա շարունակություն՝ էջի ստորին լուսանցքում հավելում է արված այս կաթողիկոսի գործունեության մասին:

Մ1897 Ժողովածու է[168], գրիչը՝ Հայրապետ վարդապետը, որը հավանորեն նաեւ հավելումների հեղինակն է (այս մասին նշվել է վերեւում): Ձեռագրում Ժամանակագրության սկիզբը թերի է, սակայն պակասում է միայն առաջին թերթը: Ավարտվում է Սամվել Անեցու հնագույն ձեռագրերից հայտնի վերջին տեղեկությամբ (Ներսես Շնորհալու մահվան եւ Գրիգոր Տղայի աթոռակալության մասին):

Մատենադարանի ձեռագրացուցակում մատյանի գրչության ժամանակ է համարվում 12-րդ դարը[169]: Վ. Հակոբյանը ձեռագիրը համարել է Սամվել Անեցու Ժամանակագրության երկու հնագույն ձեռագրերից մեկը[170], թեեւ Հայրապետ վարդապետի թողած հիշատակագրություններում գրչության ժամանակի ու տեղի վերաբերյալ նշում չկա: Ա. Մաթեւոսյանը Հայրապետ վարդապետի հիշատակարանները հրատարակել է 13-րդ դարի անթվական հիշատակարանների շարքում: Այս ձեռագիրը Ժամանակագրության վաղարշապատյան հրատարակության համար Ա. Տեր-Միքելյանի օգտագործած ձեռագրերի մեջ հնագույնն է (Թ օրինակ), սակայն հրատարակիչն անտեղյակ է եղել դրան եւ պատշաճ կերպով չի ներկայացրել տարընթերցումները:

Հ3 Հռոմում (Վատիկան, N 3) պահվող ձեռագիրը (Մատենադարան, դրսի մանրաժապավեն, թիվ 1103), 1287 թ. մի արժեքավոր Ժողովածու է, որն ընդօրինակել է Ստեփանոս գրիչը Հեթում Կոռիկոսցի իշխանի համար: Սա մեկն է այն 5 ձեռագրերից, որոնցից ժամանա-

[167] Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 6, էջ 163:
[168] Գրված է թղթի վրա, բոլորգրով (թերթ՝ 284, 25,5x16,5սմ):
[169] Ցուցակ ձեռագրաց Մատենադարանի, հ. Ա, էջ 670:
[170] Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 20:

կագրությունը լատիներեն են թարգմանել Յոհ. Զոհրաբը եւ Ա. Մայը:

Ձեռագրում տեղ է գտել Ժամանակագրության միայն երկրորդ՝ աղյուսակային մասը, որը սկսվում է առանց վերնագրի (327բ-368բ): Բոլոր էջերում գրադաշտը (կենտրոնում՝ ժամանակագրական սյունակները եւ աջ ու ձախ կողմերում՝ վկայությունների համար նախատեսված աղյուսակները) տողատված է եւ վերցված շրջագծի մեջ: Սամվել Անեցու երկի բոլոր մեծ հատվածները, որ գրվել են աղյուսակներից դուրս՝ էջով մեկ, այս ձեռագրում ընդհանրապես չեն ներառվել, իսկ միջին ծավալի հատվածները գրված են լուսանցքներում: Ժամանակագրության 361բ թերթում (Հայոց ՇԽԲ՝1093) այլ գրով նշված է «Ֆռ» եւ հաջորդիվ կան հավելումներ, հիմնականում խաչակիրների պատմության վերաբերյալ: Այս հատվածի տեղեկությունների ստույգ թվականները Փրկչական թվականի ներքո են, ինչպես որ Մ1898 ձեռագրում է: Քանի որ Սամվել Անեցու ձեռագրերի մեծ մասում առկա է երկու տարվա տարբերություն Փրկչական եւ Հայոց թվականների միջեւ, եւ այդ սկզբունքով է կազմված սույն հրատարակության թվացանկը, ապա այս ձեռագրի 12-13-րդ դդ. տեղեկությունների դեպքում, անհրաժեշտ է նկատի ունենալ այդ հանգամանքը եւ իմանալ, որ, օրինակ, մի տեղեկության համար նշված արդի 1170 եւ Հայոց՝ ՈԺԹ (1170) թվականը, որ Փրկչական ՌԵՀԲ (1172) թվականի դիմաց է, այս ձեռագրերում՝ Փրկչական ՌԵՀ (1170) թվականի դիմաց է գտնվում: Այսինքն՝ Փրկչական թվականն է ճիշտը:

ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԸ ձեռագրում հասնում են մինչեւ 1271 թ.: Դրանք հավանորեն Լեւոն Բ-ի (1269-1289) ժամանակ են կատարվել, քանի որ լրացված վերջին տողում գրված է «Հայոց թագաւոր Լեւոն ամս» (367ա) եւ գահակալության տարիների քանակը չի նշված:

Մ1898 Ձեռագիրը ժողովածու է, որտեղ Ժամանակագրությունը զբաղեցնում է 6ա-96բ թերթերը[171]: Գրչության ժամանակը, վայրը, գրիչն անհայտ են, սակայն դատելով գրչությունից ու մի շարք այլ հանգամանքներից՝ մատյանը գրվել է Հեթում Կոռիկոսցու ատենադպիր Վասիլի ձեռքով, 13-րդ դ. վերջերին:

Գրիչը բավական լայն է գծել աղյուսակները, որի պատճառով ամեն էջում իրար տակ ընդամենը 10 տարի է տեղավորվել՝ այլ ձե-

[171] Գրված է մագաղաթի վրա, բոլորգրով (թերթ 280, 23,5,17,5սմ): Ձեռագրի 97ա-121բ թերթերին աղյուսակները գծված են, բայց ոչինչ չի գրված: Բնագիրն սկսվում է կիսախորանով եւ գլխագրով:

ռագրերի 18-20 տարիների փոխարեն, միաժամանակ սյունակների վերին մասում չի նշել գահակալների անունները, այլ հաջորդաբար գրել է. «Ի Քրիստոսէ» (Փրկչական թվական) «Պապ ի Հռոմ» (ավելացրել է մի սյունակ, որը չկա Սամվել Անեցու Ժամանակագրության մեջ), «կայսր Հռոմայ», «կաթողիկոս Հայոց», «թագաւոր Հայոց», «ի թուականութեան Հայոց»: Իսկ կոնկրետ անձանց անունները եւ տարիները գրել է աղյուսակում պատմական վկայությունների համար նախատեսված մասերում:

Ձեռագրում Սամվել Անեցու Ժամանակագրության հատվածում եղել են բազմաթիվ պակասող թերթեր, որոնք նոր մագաղաթյա եւ թղթյա թերթերով լրացվել են ձեռագրի՝ 1747 թ. նորոգման ժամանակ[172]: Փաստորեն, ժամանակագրությունից դուրս են մնացել այն տեղեկությունները, որոնք եղել են սկզբնական մատյանի կորած թերթերի վրա[173]: Մի շարք տեղերում (1078, 1204, 1250, 1268 թվականների դիմաց) արվել են հավելումներ այլ ձեռքով, բայց դրանք հավանաբար հեռու չեն գրչության ժամանակից: Ժամանակագրության բնագիրը որոշ տեղերում ակներեւ միջամտության է ենթարկվել նաեւ 19-րդ դարում:

Այս ձեռագրում Հայոց թվականի առաջին տարին դրված է Փրկչական ՇՕԲ (552) թվականի դիմաց (59բ)՝ ի տարբերություն Սամվել Անեցու հեղինակային գործի, ուր 554 թվականի դիմաց է, այսինքն՝ Փրկչական եւ Հայոց թվականները ներդաշնակ են: Օրինակ՝ այս ձեռագրում արդի 1070 թ., Հայոց՝ ՇԺԹ 1070) դիմաց արված հավելումը Փրկչական ՌՀ (1070) թվականի դիմաց է:

Ձեռագրում աղյուսակը գծված է մինչեւ Փրկչական ՌՅ (1300),

---

[172] Ձեռագիրը ստացել է Հակոբ եպիսկոպոս Շամախեցին, իսկ նորոգման մասին հիշատակարանում գրված է. «Վերստին նորոգեալ կազմեցաւ գիրքս եւ գրեցաւ յիշատակարանս ի ՌԾՂ եւ Զ (1747)» (Մ1898, 280բ): Ձեռագրի՝ դրանից ավելի վաղ մի ստացող երկու տեղում իր անունն է թողել՝ «Գրիգոր վարդապետին է» (16բ-17ա, 135ա):

[173] Դրանք ներառում են հետեւյալ թվականները՝ 21-140 թթ. (թերթ՝ 33-38), 161-320 թթ. (թերթ՝ 40-47), 381-420 թթ. (թերթ՝ 51-52), 521-600 թթ. (թերթ՝ 58-61), 681-760 թթ. (թերթ՝ 66-69), 781-820 թթ. (թերթ՝ 71-72), 861-920 թթ. (թերթ՝ 75-77), 1021-1060 թթ. (թերթ՝ 83-84), 1161-1180 թթ. (թերթ՝ 90): Բարեբախտաբար, այս մատյանը կամ նրանից կատարված մի ընդօրինակություն նախօրինակ է ծառայել Մ2965 ձեռագրի համար, որի անանուն գրիչը ժամանակագրության մեջ Հայոց թվականի ընդունման հատվածում ծանոթագրել է. «Յայլ օրինակս զՀայոց թուականն ի Քրիստոսի ՇՕԱ (551) ամէն էր սկսեալ» (թերթ 86բ): Դա հենց Մ1898 ձեռագրի (Հեթում Կոռիկոսցու) սկզբունքն է, ուր Փրկչական եւ Հայոց թվականները ներդաշնակեցված են (ունեն 551 տարվա տարբերություն եւ ոչ 553-ի): Մենք փորձել ենք այդ ձեռագրի 1021-1060 եւ 1161-1180 թթ. հատվածներում եղած այլ նյութերի շարքում գտնել Մ1898 ձեռագրից ծագող տեղեկությունները: Հավանաբար այդպիսիք են 1029, 1163, 1169 թվականների դիմաց նշված միավորները:

Հայոց ՉԽԹ (1300) թ., բայց բուն գրչի վերջին տեղեկությունը Փրկչական ՌՄՂԴ (1294), Հայոց ՉԽԳ (1294) թվականի դիմաց է (96բ):

ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐՆ առաջին հերթին վերաբերում են Հռոմի պապերին (նշվում են պապերի անունները, ազգությունը, աթոռակալության տարիները, ամիսներն ու օրերը), որոնց մասին տվյալները քաղված են Հեթում Կոռիկոսցու «Պատմութիւն խրոնիկոնին» թարգմանական գործից (1296 թ.): Այստեղ կան նաեւ միավորներ, որոնք փոքր տարբերություններով (երբեմն բառացի) կրկնվում են Հեթում պատմիչի «Համառոտ պատմութիւն ժամանակաց հաւաքեալ ի զանազան պատմութեանց…» ժամանակագրության մեջ եւ դրա հիմքի վրա շարունակված Հեթում Նղիրցու ժամանակագրական գործում[174]:

Մ3681 Ժողովածու է[175], որտեղ Սամվել Անեցու ժամանակագրությունը զբաղեցնում է առաջին մասը, իսկ երկրորդ մասը՝ «Յաղագս աղանդոյն Մայրագոմեցւոյ», գրված է այլ գրով: Ձեռագիրն ընդօրինակել է Հայրապետ կրոնավորն Արճեշի գավառի Ուռընկար վանքում, 1315 թ.՝ «Գրեցաւ գիրքս երկրիս Արճիշո ի Սուրբ ուխտս որ Ուռընկար անուանակոչի սրբոյն... (ի) խնդրոյ սուրբ եւ խստակրաւն ընդրեալ վարդապետի Յովհաննէս, ձեռամբ Հայրապետի սուտանուն կրաւնաւորի եւ յոյժ մեղաւորի: Արդ, որք հանդիպիք սմա՝ յիշեցէք զՅովհաննէս վարդապետ եւ ծնողսն իւր... Ի թվականիս ՉԿԴ (1315)» (1բ):

Հայրապետ գրիչը ժամանակագրության անաղարտ գաղափար օրինակ է ունեցել, եւ ինքն էլ ընդմիջարկություններ չի արել[176]:

ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԸ պատկանում են 1343 թ. ձեռագիրը ձեռք բերած

---

[174] Այդ ժամանակագրությունն առաջին անգամ հրատարակել է Ա. Մաթեւոսյանը 1963 թ. (Ա. Մաթեւոսյան, Հեթում Ախտուց տիրոջ եւ Վասիլ մարաջախտի ժամանակագրությունները, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, 4, էջ 183-201), 2007-ին այն կրկին հրատարակել է Լ. Տեր-Պետրոսյանը ավելի մանրամասն ծանոթագրություններով (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 527-553):

[175] Գրված է թղթի վրա (թերթ՝ 116, 16,5x12 սմ), բոլորգրով, ժամանակագրությունը զբաղեցնում է 2ա-89բ թերթերը:

[176] Հնագույն մատյանների նման այստեղ եւս ժամանակագրության վերջին տեղեկությունը Գրիգոր Տղայի աթոռակալության մասին է, բայց չեն նշված կաթողիկոսի մականունը (Տղա) եւ նրա տարիների թիվը (թերթ 90ա): Սա վկայում է նախօրինակի հնության մասին: Բնագիրը միջնամասում պակասող էջեր ունի (հնարավոր է, որ նախօրինակն է այդպիսին եղել): Ժամանակագրության առաջին մասը հասնում է մինչեւ Թորգոմի սերնդին վերաբերող հատվածը (վերջին ընթերցվող բառը՝ «Ժամանեսցուք»), իսկ երկրորդ՝ աղյուսակավոր մասն սկսվում է Փրկչական ՄՂ (290) թվականով (Մ3681, 47բ-48ա):

Հավուց թառի վանքի եպիսկոպոս Նաթանայելին: Սակայն մատյանում 1315-ից հետո մինչեւ 1343 թվականն արված երկու փոքր հավելում կա Վասպուրականի թագավորների մասին:

Սամվել Անեցու Ժամանակագրության ընդօրինակությունը Նաթանայել եպիսկոպոսի ձեռքն է հասել արդեն բավական վնասված (հավանաբար ժամանակին տուժել է ջրի ազդեցությունից): Թերեւս այդ է պատճառը, որ Նաթանայելը որոշ էջերում Հայրապետ գրչի բաց թանաքով գրած տողերի կամ առանձին բառերի վրայից անցել է իր գործածած մուգ թանաքով, վնասված 81-րդ թերթը փոխարինել է նորով ու արտագրել տեքստը: Կարծում ենք՝ նրա միջամտությամբ է փոխվել նաեւ Ժամանակագրության վերնագրի բառերից մեկը՝ «ի գրոցը» դարձել է «ի հնոց» (2ա):

Մ8481 Ընդօրինակված է Ժամանակագրության այն նախօրինակից, որը լրացրել է Ստեփանոս Օրբելյանը (հանգամանորեն տե՛ս վերեւում): Մինչեւ 1193 թ. եղած հավելումները հիմնականում նույնն են, ինչոր Մ9796, Ե1221 եւ Ե3397 ձեռագրերում:

Բուն մատյանը ենթադրաբար 14-15-րդ դարի Ժողովածու է[177]: Ընդօրինակող գրիչը, որի անունը չի պահպանվել, բնագրում որոշ բառեր բաց է թողել՝ հավանաբար նախօրինակից չկարողանալով վերծանել, երբեմն էլ սխալ է արտագրել[178]: Նրա գործը բավական բարդ է եղել այն առումով, որ ստիպված էր փոքրաչափ մատյանի էջերին տեղավորել ոչ միայն Սամվել Անեցու բնագրի տեղեկությունները, այլեւ կատարված հավելումները: Ձանազան տեղեկությունների խառնաշփոթից խուսափելու համար նա երբեմն դրանք առանձնացրել է կարմիր եզրագծերով: Ձեռագրում Սամվել Անեցու Ժամանակագրությանը նախորդում է Միքայել Ասորու Ժամանակագրությունը, որին կցված է նաեւ «Վասն քահանայութեան» ճառը (3ա-161բ) եւ Վարդան Արեւելցու հիշատակարանը (162ա-170ա):

Սամվել Անեցու գործը սկսվում է աղյուսակներով (171ա) եւ շարունակվում մինչեւ այնտեղ, ուր Ստեփանոս Օրբելյանը համապատասխան նշում է կատարում Անեցու երկի ավարտման եւ իր առաջիկա անելիքի մասին (204ա):

---

[177] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Ձեյթունյան, Փ. Անթաբյան, Երեւան, 1970, էջ 754, Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 4: Ձեռագիրը գրված է թղթի վրա, բոլորգրով (թերթ՝ 215, 15,4,11 սմ):

[178] Ա. Աբրահամյանը նշում է մի քանի այդպիսի օրինակ (Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 4): Դրանց ավելացնենք եւս մեկը. Հայոց ՂԶ (647) թվականի դիմաց Արծափի գրավման մասին Անեցու նշումը. «Արծափա առն», այս ձեռագրում դարձել է «Արծաթափառն» (Մ8481, 187բ):

Ե1221 Մատյանը պատկանում է վերը նշված խմբին (Մատենադարան, դրսի մանրաժապավեն, թիվ 749), Երուսաղեմի ձեռագրացուցակում ներկայացված է հպանցիկ, նշված են ժամանակագրության՝ 1893 թ. հրատարակության հետ համընկնող տեղերը, մինչդեռ չհամընկնողները չեն դիտարկվել: Ցուցակից դուրս են մնացել անգամ գրչի եւ ստացողի անունները[179]: Պատճառն այն է, որ ժամանակագրության առաջին մասի ավարտին, ուր Սամվել Անեցու՝ պատվիրատու Գրիգոր Գ Պահլավունուն հասցեագրված խոսքն է՝ «Արդ, ով սրբազգեաց տեր իմ Գրիգոր…», ընդօրինակող գրիչը վերափոխել է. «Արդ, ով սրբազգեաց տեր իմ **Յակոբ**, հարկեցա ի թախանձելո քո…» (էջ 38)[180]: Շարունակությունը նույնպես Անեցու խոսքերի որոշ փոփոխություններով շարադրանք է՝ գրչի անվան նշումով՝ «...ողորմութիւն արասցէ Քրիստոս... ինձ՝ **վերջին գծողիս՝ Դաւթի** եւ ամենայն հաւատացելոց» (էջ 39): Այսպիսով ձեռագրի գրիչը Դավիթն է, ստացողը՝ Հակոբը:

Ձեռագրի տարբեր էջերում, աղյուսակների ազատ մասերում եւ լուսանցքներում անկանոն գրով ժամանակագրական տարբեր հաշվարկներով կամ կրոնական բովանդակությամբ զանազան ընդմիջարկություններ կան (էջ 40, 41, 43, 53-55, 68, 69, 86, 87, 96-99):

Ե1221 ձեռագրում, ինչպես եւ Մ9796 ձեռագրում, աղյուսակներից առաջ (ժամանակագրության առաջին մասի վերջում) տեսնում ենք Բարսեղ Կեսարացու «Ի սուրբ քառասունսն» քարոզից քաղված հատվածը («Անցանք մեք ընդ հուր եւ ընդ ջուր…» սկսվածով)՝ միայն ավելի համառոտված: Ստեփանոս Օրբելյանի օրինակում այն բացակայում է, քանի որ այնտեղ Սամվել Անեցու ժամանակագրությունը սկսվում է աղյուսակներից:

Ձեռագրում Տարոնի պատմությանը եւ Երուսաղեմի գրավմանը նվիրված հատվածներից հետո ժամանակագրությունը շարունակվում է ՈԼԵ (1186) թվականի դիմաց գրված տեղեկությամբ. «Լեւոն եղբայր Ռուբէնի իշխան ամս Ժ (10), որ եւ թագաւորեաց յետո ամս ԻԵ (25)» (էջ 115), որին հաջորդում է փառաբանական խոսք Հայոց թագավորության վերականգնման կապակցությամբ: Ավարտվում է 1292 թվականով (էջ 118):

---

[179] Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց՝ Ն. Պողարեան, հ. Դ, Երուսաղէմ, 1969, էջ 359-360:

[180] Ձեռագիրը ոչ թե թերթակալված, այլ էջակալված է:

Մ9796 17-րդ դարի ժողովածու է, գրիչն ու գրչության վայրն անհայտ են[181]: Ձեռագրի սկզբում (թերթ 1բ)՝ էջի վերին մասում, թանաքով գրված է. «Միքայէլ արքեպիսկոպոսին է»: Սրանից վերեւ եւ ներքեւ պահպանվել է մատիտով գրված, դժվարությամբ ընթերցվող հետեւյալ մակագրությունը. «Մինչեւ զԳրիգոր կաթ(ողիկոս), եղբայր Ներսիսի Շնորհալւոյն, յորոյ խնդրոյ յօրինեաց Սամուէլ զայս ժամանակագրութիւնն՝ 1164, թուական Հայոց ՈԺԳ»: Փաստորեն, այստեղ ճիշտ է նշված Անեցու ժամանակագրության սահմանը, թեեւ ներկա ձեռագրում այն շարունակված է մինչեւ 1187 թ.:

ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԸ չեն եղել Ա. Տեր-Միքելյանի օգտագործած 13 ձեռագրերում, ուստի չկան վաղարշապատյան հրատարակության մեջ: Սակայն դրանք եղել են Օրբելյանի օգտագործած օրինակում, հրատարակվել են նրա ժամանակագրության հետ: 1185-1186 թվականների դեպքերը ներկայացնող հատվածը (Անանուն Տարոնեցի) այս ձեռագրում պահպանվել է առավել ամբողջական ու անսխալ ընդօրինակությամբ: Ինչպես Ստեփանոս Օրբելյանի մոտ, այնպես էլ այս խմբի մյուս ձեռագրերում վերոնշյալ հատվածն ունի Հայոց ՈԼՁ (1187) թվականին Սալահեդդինի կողմից Երուսաղեմի գրավմանը վերաբերող շարունակություն: Մ9796 ձեռագրում այն անավարտ է վերջին թերթերի կտրված լինելու պատճառով (պակասում է մի քանի տող):

Մ1486 Ժողովածու է՝ կազմված 16-րդ դարի վերջերին[182]: Տեր-Միքելյանը հրատարակության համար օգտագործել է որպես Գ օրինակ: Սամվել Անեցու ժամանակագրության հատվածում եղած հիշատակարաններից երեւում է, որ գրիչը երզնկացի Սահակ երեցն է. «Ով եղբայր, յիշեցէք զհողոյ հաւասար եւ զանպիտան Երզնկացի Սահակ երէցս, որ տգիտութեամբ գրեցի զանհասկանալի գիրքս եւ զխրթիմ գիրքս, որ ոչ գիտէի զելն եւ զմուտն: Թէ այլ ինչ մտացուած բան կայ՝ վաղիւն գրեմ, թէ Հոգին Սուրբ առաջնորդէ» (130ա)[183]: Այս հիշատակարանը նկատի ունենալով՝ Ա. Տեր-Միքելյանը նշում է, որ «այս օրինակը տգէտ գրչի է պատկանում», բայց բնագրի վերաբերյալ նկատում է՝ «համանման Բ-ին»[184]: Եւ իրոք, այն նույն ընդգր-

[181] Գրված է թղթի վրա, նոտրգրով (թերթ՝ 122, 15x10,2 սմ): Ժամանակագրությունը զբաղեցնում է 2ա-76բ թերթերը, աղյուսակները սկսվում են 37բ թերթից:

[182] Մատյանը գրված է թղթի վրա, բոլորգրով եւ նոտրգրով (թերթ՝ 211, 26x18սմ): Սկզբում տարբեր պատմական նյութեր են, իսկ 104բ-167ա թերթերում՝ Անեցու ժամանակագրությունը:

[183] Մյուս հիշատակագրությունը նույնպես բնութագրում է գրչին. «Գրեցաւ ձեռամբ Սահակ երիցուս, գիտեանաք, որ Դ (4) ամիս է ջուր չէմ խմեր. ամէն» (Մ1486, 159բ):

[184] Անեցի, 1893, էջ ԺԱ:

կումն ունի, ավարտվում է ՉՉԴ (1335) թվականի տեղեկությամբ, իսկ հրատարակության բազմաթիվ տողատակերում կարելի է կարդալ՝ «Գ եւս ունի այս կտորը», այսինքն՝ հիմնական Ա եւ Բ օրինակներից բացի Գ օրինակն էլ ունի այդ:

Հետաքրքիր է, որ Գ օրինակում Սամվել Անեցու հեղինակային բնագրի ամենավերջին տեղեկությունը (1163 թ.) տարընթերցումով է, որը չի նշված 1893 թ. հրատարակության մեջ (տե՛ս ստորեւ՝ 1163 թ. տեղեկությունը):

ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԸ մեծ թիվ են կազմում, նման են Մ1899-ին, բայց նաեւ ինքնուրույն կտորներ ունեն: Այս ձեռագրում արված մի ընդմիջարկություն լուծում է Սամվել Անեցու Ժամանակագրության մեջ մուծված Գեւորգ վարդապետին վերաբերող հատվածի հարցը, որը դեռ Գ. Զարբհանալյանը, համարելով հեղինակային, այս վարդապետին թյուրիմացաբար Սամվել Անեցու ուսուցիչ է համարել (նրան հետեւել են այլ հեղինակներ), մինչդեռ Գեւորգը սույն մատյանի գրիչ Սահակ Երզնկացու ուսուցիչն էր (տե՛ս ստորեւ բնագրում՝ 551 թ. ներքո եւ համապատասխան ծանոթագրությունը):

Մ1899 Ժողովածու է՝ գրված 1676 թվականին Ամրդոլու վանքում, գրիչն է Պողոս Գավառցին՝ Վարդան Բաղիշեցու սանը, որի համար էլ ընդօրինակել է մատյանը[185]: Այս ձեռագիրը Ա. Տեր-Միքելյանը հրատարակության համար օգտագործել է որպես հիմնական օրինակ (Բ օրինակ): Նա գրում է. «...մի գեղեցիկ գրուած գրչագիր է, որ եւ հարազատագոյն երեւալով իւր կաղապարի հնութեամբ՝ ծառայել է ինձ իբրեւ հիմնական Ա-ից յետոյ: Սա հասցնում է Սամուէլի պատմութիւնն մինչեւ 1337 թուականը»[186]: Սակայն ձեռագիրն ավարտվում է Հայոց ՉՉԴ (1335) թվականի տեղեկությամբ՝ «Ի ՉՉԴ (1335) ի լնուլ չափոյ մեղաց մերոց...» (73բ-74ա), որը նաեւ 1893 թ. հրատարակության մեջ զետեղված վերջին տեղեկությունն է:

ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԸ մեծ թիվ են կազմում: 1893 թ. հրատարակության մեջ սխալ է սպրդել՝ 114-117 էջերում Հայոց ՇԻ (520) եւ ՇԼ (530) թվականներով բոլոր տեղեկությունները (որոնք այդպես են Մ1899 ձեռագրում) դարձել են ՇՀ (570)-ով սկսվող, որը թյուրիմացությունների պատճառ է դարձել: Եթե հայտնի դեպքի վերաբերյալ կան նաեւ այլ սկզբնաղբյուրներ եւ հեշտ է ճշտում կատարելը, ապա այդ վրիպումը ցավալի հետք է թողել այն տեղեկության մեջ, ո-

[185] Ձեռագիրը գրված է թղթի վրա, բոլորգրով (թերթ՝ 447, 23x17սմ): Նկարազարդ անվանաթերթով Ժամանակագրությունը ձեռագրի սկզբում է (1ա - 74ա):
[186] Անեցի, 1893, էջ Թ:

որի համար ժամանակագրությունը միակ սկզբնաղբյուրն է: Այսպես՝ «Ի ՇՀԲ (1123) ամին ի բռնութենէն Տաճկաց ել Օշին իշխանն ի ժառանգութենէն իւրմէ՝ որ կոչի Մայրեաց ջուրք՝ հանդէպ Գանձակայ... եւ եկեալ յաշխարհն Կիլիկեցւոց...»[187] արժեքավոր տեղեկությունը, որը Բ օրինակում միանգամայն հստակ ունի ՇԻԲ (1073) թվականը (60բ): Այս տեղեկության առնչությամբ Բ. Ուլուբաբյանը, քննադատելով նախորդ ուսումնասիրողներին, գրում է, որ նրանք կրկնել են «Ալիշանի սխալ կարծիքը Օշինի՝ Գանձակից ելնելու տարեթվի մասին. իբր թե այդ կատարվել է 1073 թ., մինչդեռ Սամվել Անեցին՝ այս առթիվ տեղեկություն հաղորդող միակ աղբյուրը, տարեթիվ է համարում ՇՀԲ (1123)-ը»[188]: Իրականում Ղ. Ալիշանն օգտվել է ժամանակագրության Վենետիկում պահվող ձեռագրերից եւ ոչ թե 1893 թ. հրատարակությունից, դրա համար էլ ճիշտ թվականն է նշել՝ 1073: Ավելացնենք, որ հիշյալ տեղեկությունը հավելում է Սամվել Անեցու ժամանակագրության մեջ:

Մ 7261 Մ10202 Այս երկու մատյանները[189] միասին են ներկայացվում, քանի որ երկրորդն ընդօրինակված է առաջինից[190]: Մ7261 ձեռագիրը Սամվել Անեցու շարունակված ժամանակագրությունից հետո (հասնում է մինչեւ 18-րդ դ. սկիզբը) ունի նաեւ այլ նյութեր (Թովմա Մեծոփեցւոյ Պատմութիւն, Կիրակոս Բանասիրի՝ Վարք Թովմայի Մեծոփեցւոյ, փոքրիկ նյութ՝ «Անունք քաղաքացն», ուր թուղթ է ուղարկել Պողոս առաքյալը), իսկ վերջին էջում՝ հիշատակարան, որը ձեռագրացուցակում համարվում է հետագայի. «Հիշատակարան հետագայի՝ 107ա (ԺԷ դ.)»[191]: Փոքրիկ գրությունը զետեղված է էջի ներքեւում, թվական չունի, բայց բովանդակությունը վերաբերում է գրչությանը. «Ես Մինաս ծառայ Աստուծոյ զայս գիրքս սուրբ գրե[ցի] ձեռամբ իմով»: Դրանից քիչ վերեւ ավելի մանր տառերով փոքրիկ չափածո է գրված. «Գծող բանիցս այսմ տառի,/ Անհաս բանից անծիր բառի,/ Որ եմս տրուփ, որ մեղս առի,/ Որ կամիմ մեղս ծ///»: Միանգամայն հնարավոր է, որ այս հիշատակարանները հետագայի չեն եւ պատկանում են հենց ձեռագրի գրչին: Մատյանի պահվելու վայրին է վե-

[187] Նույն տեղում, էջ 117:
[188] Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երեւան, 1975, էջ 96:
[189] Մ7261 (17բ - 71ա), Մ10202 (16բ - 75ա) - երկու ձեռագիրն էլ գրված են թղթի վրա, սկսվում են «Գաւազանագիրք Աստուածաշունչ գրոց» պատկերազարդ նյութով, երկրորդում էջ առ էջ կրկնվում է առաջինի ձեւավորումը, միայն մանրանկարներն անավարտ են (դեմքերը չեն պատկերված): Ժամանակագրությունը երկուսում էլ սկսվում է լուսանցազարդով ու «Յ» զարդագրով:
[190] Կ. Մաթեւոսյան, Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը..., էջ 143-144:
[191] Ցուցակ ձեռագրաց Մատենադարանի, հ. Բ, էջ 494:

ռաբերում հետեւյալ մակագրությունը՝ «Ի դրան Սուրբ Առաքելոյ Թադէուսին 59» (1ա):

Նշված ձեռագրերից բացի Ս. Թադեի վանքում պահված օրինակից ծագող եւ մինչեւ 17-րդ դ. վերջերն ու 18-րդ դ. սկիզբը լրացված ձեռագրերի խմբին են դասվում նաեւ Մ6354[192], Մ482, Վ869, Վ2261 մատյանները:

Մ482 Այս ձեռագիրը[193] վերը նշված խմբի միակ օրինակն է, որը պահպանել է ժամանակագրության 1453 թվականից սկսվող մի առանձնացված հատված, եւ որը Վ. Հակոբյանը հրատարակել է որպես առանձին ժամանակագրություն՝ «Անանուն ժամանակագրություն» (18-րդ դ.) խորագրով՝ նշելով, թե «ժամանակագրությունը կազմված է Ս. Անեցու ժամանակագրության օրինակով»[194]: Սակայն իրականում այն ոչ թե ինքնուրույն ժամանակագրություն է, այլ Սամվել Անեցու ժամանակագրության շարունակված օրինակից առանձնացված հատված: Թադեի վանքում մոտավորապես 1734 թ. այդ գործը կատարած անանուն հեղինակը որպես նախօրինակ վերցրել է տեղի հավաքածուի ձեռագրերից մեկը, ամենայն հավանականությամբ ներկայիս Մ7261 մատյանը, եւ այնտեղից ընդօրինակել մի հատված Սամվել Անեցու ժամանակագրության շարունակությունից՝ սկսելով թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի գրավումից եւ հասնելով մինչեւ վերջ՝ 1702 թ., որից հետո շարունակել է մինչեւ իր ապրած օրերը եւ եզրափակել 1734 թվականով (Աբրահամ Կրետացու աթոռակալում): Իր գործը նա օժտել է երկարաշունչ վերնագրով, որի համառոտ բովանդակությունն է՝ «Մասնաւոր ժամանակագրութիւն եւ գաւազանագիրք, սկսեալ ի թուականութեանն… (1453)… մինչեւ նարդեանս ժամանակի, որում զգիրս գրեցի, եւ առ ապա եղելոցն ապառնի, աշխատասիրութեամբ

[192] 17-րդ դարի ժողովածու է՝ գրված թղթի վրա (թերթ՝ 327, 25x18 սմ), ժամանակագրությունը զբաղեցնում է 267ա-325բ թերթերը, առաջին մասը՝ մինչեւ աղյուսակները, գրված է բոլորգրով, իսկ երկրորդ մասը (286ա թերթից)՝ նոտրգրով: Գրիչներն են Հովհաննես եւ Դավիթ վարդապետները: Ժամանակագրությունն ունի Մ7261 եւ Մ10202 ձեռագրերում կրկնվող բազմաթիվ հավելումներ: Վերջին վկայությունը վերաբերում է 1687 թվականին (325ա), աղյուսակը գծված է մինչեւ 1735 թ.:

[193] Ձեռագիրը ժողովածու է, ունի 94 թերթ, սկզբի մասը՝ (21բ-44ա) Անտոն սարկավագը գրել է 1711 թ. Թադեի վանքում, մյուս նյութերի հեղինակներն անհայտ են: Հավանաբար, վերջնականապես կազմվել է 1751 թ.: Ժամանակագրությունը զբաղեցնում է 45ա-50ա թերթերը:

[194] Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 317-332: Հրատարակության մեջ ժամանակագրությանը նախորդող ներածականում կամ ծանոթագրություններում չի նշված, թե որ ձեռագրից է քաղված բնագիրը:

ումեմն չարժանի յիշելոյ…»[195]:

Կարծում ենք, որ «մասնաւոր ժամանակագրութիւն» ասելով՝ հեղինակը նկատի ունի այս գործի՝ հենց ընդհանուրից առանձնացված լինելու հանգամանքը:

Մ1719 Ժողովածու է[196], որը կազմվել է 17-րդ դարի սկզբներին: Ձեռագրի սկզբում «Ավետարանք հանգստեան» ընթերցվածներ են՝ բոլորգրով (1բ-37ա), որոնց գրիչը, հիշատակարանի համաձայն, Նիկոլ Լովցին է, եւ գրել է 1615-ին (32բ)[197]: Դրան հաջորդում են մանր նյութեր, ապա Սամվել Անեցու Ժամանակագրությունը (43ա-125ա), որի հատվածում հիշատակարան չկա: Ձեռագրի վերջնամասում Ձատիք գրչի հիշատակարանն է՝ գրված 1616 թ. (161ա):

Այս ձեռագիրն ընդօրինակված է ժամանակագրության հին եւ անաղարտ օրինակից, զերծ է հետագայի հավելումներից, ավարտվում է հնագույն ձեռագրերի նման (1173 թվականով): Ձեռագիրն Ա. Տեր-Միքելյանի օգտագործած Ձ օրինակն է, որը նա համարել է թերի, մինչդեռ նրա ձեռքին եղած մատյանների մեջ հենց սա է պարունակում Սամվել Անեցու հեղինակային բնագրին ամենից հարազատ տեքստը: Հատկանշական է, որ այստեղ վերջին վկայության մեջ նշված չեն Գրիգոր Դ-ի մականունը (Տղա) եւ աթոռակալության տարիների թիվը: Ձեռագրի վերջին երկու էջերի բացվածքը (124բ-125ա), հնարավոր է, որ պահպանել է Անեցու Ժամանակագրության ավարտական մասի նախնական կառուցվածքը[198]:

Մ5889 Ժողովածու է [199], ենթադրաբար 17-րդ դարի, որի գրչության հիմնական տվյալներն անհայտ են: Ձեռագրի բուն գրչի տեքստն ավարտվում է 59բ թերթում, սակայն մինչ այդ եւ դրանից հետո (60ա-60բ) այլ ձեռագրով կատարված են մի քանի հավելումներ: Հնագույն հավելումը վերաբերում է Թեոդորոս Ռշտունուն, վերջինը՝ 1453 թվականին:

---

[195] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, էջ 898:

[196] Գրված է թղթի վրա, բոլորգրով եւ նոտրգրով (թերթ՝ 185, 19,6x15,7սմ):

[197] Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երեւան, 1974, էջ 546:

[198] Տե՛ս Կ. Մաթեւոսյան, Սամվել Անեցու Ժամանակագրության…, էջ 74:

[199] Գրված է թղթի վրա, նոտրգրով (թերթ՝ 84, 19x12,5 սմ), ժամանակագրությունը զբաղեցնում է 17բ-61բ թերթերը:

Մ2965 Ժողովածու է (17-րդ դ.)[200]: Ա. Տեր-Միքելյանի օգտագործած ԺԳ օրինակն է, որի հավելումների մի մասը նա ներկայացրել է առանձին[201]: Գրիչը դժգոհ է եղել գաղափար օրինակից եւ գրում է. «Օ՜շ - թէ զերծանէի ի խառնեալ օրինակէս» (թերթ 105ա): Փրկչական ՇՕԴ (554) թվականի դիմաց Հայոց Ա (1) թվականը դնելով՝ ծանոթագրում է. «Յայլ օրինակս զՀայոց թուականն ի Քրիստոսի ՇՕԱ (551) ամէն էր սկսեալ» (86բ), այսինքն՝ ձեռքին ունեցել է առնվազն երկու օրինակ: Այդ երկրորդը, որտեղ Փրկչական եւ Հայոց թվականները համապատասխանեցված են, հավանաբար կա՛մ Մ1898 (Հեթում Կոռիկոսցու, Վասիլ գրչի գրած) մատյանն է եղել, կա՛մ դրանից արտագրված օրինակ:

Բայց ձեռագիրը վերջում ունի նաեւ ուշ շրջանի հավելումներ (հասնում է 1666 թվականը), որոնք զանց է առել Ա. Տեր-Միքելյանը:

S93 Տյուբինգենի (Գերմանիա) համալսարանում պահվող (թիվ 93) 17-րդ դարի վերջերի Ժողովածուն պարունակում է ժամանակագրության հավելումներով առատ մի օրինակ (ձեռագիրն էջակալված է՝ էջ 421-520): Տյուբինգենի ձեռագրացուցակում նշված է մատյանի գրիչ Հակոբի անունը[202], սակայն ժամանակագրության հատվածում պահպանվել է նրա բուն գրչի՝ Կարապետ քահանայի չափածո հիշատակարանը[203]: Ժամանակագրությունը հասնում է մինչեւ 1424 թ., բայց շարունակության մեջ Կարապետն ունի նշում, որ այլ տեղերից լրացումներ է կատարում («պակասն հոս գրեցաք եւ թվական եդաք» (էջ 511):

U42 Ռուսաստանի ԳԱ Սանկտ Պետերբուրգի Արեւելյան ձեռագրերի ինստիտուտի (նախկին Արեւելագիտության ինստիտուտ) B-42 Ժողովածուն[204] սկսվում է Միքայել Ասորու ժամանակագրությամբ (1ա), որին հաջորդում է Սամվել Անեցու ժամանակագրության Ա մասը՝ 109ա - 124բ, եւ Բ մասը՝ 136ա-173ա: Այս ձեռագրի հիմքի

---

[200] Գրված է թղթի վրա, նոտրգրով (թերթ՝ 121, 21,5x15սմ): Ժամանակագրության թերթերը՝ 64ա-115ա:

[201] Վերնագրել է՝ «Շարունակութիւն ԺԳ օրինակէն» (Անեցի, 1893, էջ 175-180):

[202] Systematisch-alphabetisches Handschriftenverzeichnis der königlichen und universitäts bibliothek zu Tübingen, von Franz Nikolaus Fink und Leonhard Bezzenberger, Tübingen, 1907, p. 129-130:

[203] «Զծոյլս ի բարիս / Զաւժարս ի չարիս / Զքահանայս յետնիս / Զկարապետ գերիս / Ոչ եմ յիշելիս / Ի յայսմ սուրբ տառիս» (S93, էջ 485):

[204] Գրված է թղթի վրա, բոլորգրով (թերթ՝ 181, 20, 5x14, 5): Ձեռագրի մասին տե՛ս К. Юзбашян, Армянские рукописи в Петербургских собраниях (каталог), Православный Палестинский сборник, выпуск 104, С. Петербург, 2005, с. 139-140:

վրա ժամանակագրությունը ֆրանսերեն թարգմանությամբ հրատարակել է Մ. Բրոսսեն:

Սանկտ Պետերբուրգի ձեռագրում Սամվել Անեցու բուն ժամանակագրության վերջին նշումը վերաբերում է 1173 թ. Գրիգոր Տղայի աթոռակալությանը, ինչպես հնագույն ձեռագրերում (իսկ աղյուսակը գծված է մինչեւ 1179 թ.): Դրան հաջորդում է Սամվել Անեցու երկի ավարտի մասին հետագայի ծանուցումը («Աստանօր զտեղի առեալ կացին շարագրութիւնք գեղեցկաբանին Սամուէլի...»), որից հետո ժամանակագրությունը շարունակվում է մինչեւ 1346-ին Կամախում տեղի ունեցած դեպքի հիշատակումը[205]:

Մ3965 Ձեռագիրը[206] գրվել է Կամենեցում 1624 թ., Ներսես Կամենեցու ձեռքով, որի մասին վկայում է հիշատակարանը. «Գրեցաւ Գաւազանագիրքս ձեռամբ մեղաւոր եւ անարժան Ներսէս դպրապետի, ի քաղաքն Կամէնից, որդոյ Հօլուպ վոյթի, թվին ՌՀԳ (1624) հոկտէմբեր ամսոյ Գ (3): Աստուած ողորմի վարպետաց հոգոյն» (63բ): Ժամանակագրությունը զբաղեցնում է 13ա-86բ թերթերը, սակայն վերջին վկայությունը 82բ թերթի վրա է եւ ավարտվում է 1735 թվականի դեպքի նկարագրությամբ: Հաջորդ մի քանի թերթերին 18-րդ դարում գծված տարեթվերի աղյուսակներն են, որոնք հասնում են մինչեւ Փրկչական ՍԻ (2020) եւ Հայոց ՌՆԿԹ (2020) թվականը (թերթ 86բ): Ժամանակագրության բնագիրն ընդօրինակվել է Մխիթար Անեցու՝ 1177-ին Հռոմոսում կատարած ընդօրինակությունից (Մ3613): Կամենեցում նույն Ներսեսն ընդօրինակել է ժամանակագրության մեկ այլ օրինակ, սակայն ուրիշ նախօրինակից (Մ1718):

ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԸ հիմնականում պատկանում են Եփրեմ Ղափանցուն եւ կատարվել են 18-րդ դ. սկզբին:

Ե3701 18-րդ դարում նոտրգրով գրված մատյան է (ունի 192 էջ), որտեղ Սամվել Անեցու Ժամանակագրության շարունակությունը կազմող մի ծավալուն հատված Նորայր արքեպս. Պողարյանը 1969-ին հրատարակել է «Բանբեր Մատենադարանի» տարեգրքում[207]: Ձեռագիրը սկզբից պակասավոր է, սկսվում է չորրորդ պրակից, աղօուսակի Հայոց ՆՂԵ (1046) թվականով, հասնում մինչեւ 22-րդ էջը, ուր Սամվել Անեցու երկն ավարտվում է («Աստանօր զտեղի առեալ

---

[205] M. Brosset, Collection d'Historiens Arméniens, p. 467-484:

[206] Ձեռագիրը գրված է թղթի վրա, նոտրգրով (թերթ՝ 116, 19x16 սմ):

[207] Ն. Պողարյան, Ժամանակագրություն (11-18-րդ դդ.), «Բանբեր Մատենադարանի», հ. 9, Երեւան, 1969, էջ 259-282:

կացին շարագրութիւնք գեղեցկաբանին Սամուէլի...»), իսկ ժամանակագրությունը տարբեր հավելումներով շարունակվում է մինչեւ 1778 թ.[208]: Ն. Պողարյանը նշում է, որ ամբողջ բնագիրը չի հրատարակում, այլ՝ «հանելով անկէ ընտրովի քաղված մը, նախապատվություն տալով հայ ժողովրդի կյանքին հետ մոտեն կապ ունեցող տեղեկությանց»[209]:

Երուսաղեմի ձեռագրացուցակի 1991-ին լույս տեսած 11-րդ հատորում Ն. Պողարյանը ձեռագրի կամ ժամանակագրության մասին հավելյալ մանրամասներ չի հայտնում, միայն նշում է «Բանբեր Մատենադարանի» տարեգրքի հրապարակման մեջ տեղ գտած մի քանի վրիպումները:

Բարեբախտաբար, 2013-ի աշնանը մենք Երուսաղեմից ստացանք այս ձեռագրի թվայնացված տարբերակը եւ հնարավորություն ունեցանք ժամանակագրությունը լրացնելու զգալի թվով մինչև այժմ անտիպ նյութերով, որոնց մեջ հատկապես արժեքավոր են Կիլիկիայի 15-18-րդ դդ. պատմությանը վերաբերող բազմապիսի տեղեկությունները:

Օգտագործել ենք նաեւ Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի մի շարք ձեռագրեր՝ Վ288, Վ869, Վ1227, Վ1253, Վ2261: Հետաքրքրական է հատկապես 14-րդ դարին պատկանող Վ1253 մատյանը, որն ընդօրինակել է Հակոբ գրիչը: Դատելով հավելումներից՝ նա Երզնկայի կամ շրջակայքի բնակիչ էր: Ժամանակագրությունը հասնում է մինչեւ 1301 թ.:

---

[208] Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1991, հ. ԺԱ, էջ 139-140:

[209] Նույն տեղում, էջ 259:

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ ԲՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջին մասում ներկայացվում է Սամվել Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց…» երկի Ա մասը՝ Ադամից մինչեւ Քրիստոսի ծնունդը: Սամվել Անեցու աշխատության երկրորդ մասն սկսվում է աղյուսակներով՝ Քրիստոսի ծննդից հասնելով մինչեւ 1163 թ.: Քանի որ ժամանակագրության 2011 թ. հրատարակության մեջ ժամանակագրական աղյուսակները ներկայացված են հեղինակային բնագրին համապատասխան եւ ամբողջականորեն, այստեղ դրանք չենք կրկնել՝ նկատի ունենալով հրապարակվող նյութի ծավալի անհամեմատ մեծացումն ընդմիջարկությունների ու լրացումների հաշվին: Պահպանել ենք երկու թվական՝ Փրկչականը («Հայկական քրիստոնեական թվականը», որը երկու տարով ավելի է արդի թվագրությունից եւ օգտագործվել է Սամվել Անեցու եւ նրա շարունակողների մեծ մասի կողմից) եւ Հայոց մեծ թվականը՝ համապատասխան թվատառերի սյունակներով: Միաժամանակ, նկատի ունենալով ժամանակագրությունից օգտվողների լայն շրջանակը, նյութի ընկալումը դյուրացնելու համար Հայոց մեծ թվականի հաստատման տարվանից սկսած՝ թվաշարքի առաջին տողում զետեղել ենք Հայոց թվականին համապատասխանեցված արդի թվականը՝ թվանշաններով: Նույն նպատակով տեքստերում եղած բոլոր թվատառերի կողքին փակագծում դնում ենք դրանց թվային համարժեքը: Քանի որ թվատառերը արտահայտում են ոչ միայն թվեր, այլեւ երբեմն հերթական համար, դա նշում ենք համապատասխան ձեւով (օրինակ՝ «յԱնտիոք Բ (2-րդ) եպիսկոպոս էկաց Իգնատիոս»):

Այս երկու հատվածներում Սամվել Անեցու Ժամանակագրության բնագիրը եւ զանազան ձեռագրերում կատարված լրացումները տարբերակվում են տառաձեւով. Անեցու գրածը՝ ուղիղ եւ մուգ տառերով, լրացումները՝ նրբագիծ եւ շեղագիր:

Երրորդ մասում, որը ներկայացնում է Սամվել Անեցու շարունակողների ժամանակագրությունը, շարվածքը միատարր է:

Քանի որ Սամվել Անեցու բնագրում թագավորների անունները եւ նրանց տարիների թիվը գրված է աղյուսակներում, օրինակ՝ «Արքեղաոս ամս Թ», իսկ որ երկրի թագավոր լինելը միայն սյունակի վերեւում (օրինակ՝ «Հրէից»), ուստի դրանք մեկտեղում ենք հետեւյալ կերպ՝ «**Արքեղաոս** (Հրէից) **ամս Թ** (9)»: Հայոց կաթողիկոսների դեպքում փակագծում ավելացնում ենք «կթղ.»:

Սամվել Անեցու բնագրից բացի, նշված ամեն մի տեղեկության սկզբում համառոտագրությամբ ցույց է տրվում աղբյուրը՝ այն ձեռագիրը (կամ ձեռագրերը), որից քաղված է տվյալ նյութը: Եթե նույն իրադարձության մասին մեկից ավելի տեղեկություն ունենք, որոնք տարբերվում են կարեւոր մանրամասներով, երկուսն էլ դնում ենք զուգահեռաբար, բայց եթե տարբերությունը

տարընթերցման բնույթ ունի (տարբերվող թվական, հատուկ անուն եւ այլն), այդ մասին նշվում է ծանոթագրության մեջ: Այն դեպքում, երբ տեղեկությունը ձեռագրում գրված է թվաշարքից դուրս եւ անթվական է, զետեղում ենք ժամանակագրորեն իր մոտավոր տեղում՝ նշելով՝ «անթվական»:

Եթե հայտնի է, թե ով է կատարել հավելումը կամ լրացումը, ապա ձեռագրի թվահամարից հետո նշվում է նրա անունը: Հասկանալի է, որ այդ հեղինակներն իրենք էլ օգտվել են այլ աղբյուրներից, եւ նրանց տեղեկությունների մի մասի հեղինակն իրենք չեն, այլ միայն փոխանցողը:

Ձեռագրերից բացի, գրքում ներառել ենք նաեւ այն հավելումները, որոնք չկան մեր օգտագործած ձեռագրերում, սակայն եղել են լատիներեն հրատարակության համար օգտագործված Մոնֆոկոնի գրադարանի չորս ձեռագրերում: Ժամանակին այդպես է վարվել նաեւ Մ. Բրոսսեն՝ ֆրանսերեն հրատարակությունը լրացնելով լատիներեն հրատարակության տվյալներով: Այստեղ այդ հավելումները բերում ենք թարգմանաբար, յուրաքանչյուրի սկզբում դնելով «Լատ. հր.» համառոտագրությունը:

Ընթերցողների ուշադրությունը հրավիրում ենք այն հանգամանքի վրա, որ բնագիրը թեպետ ժամանակագրություն է, որտեղ առաջնային պետք է լինի տարեթվերի ճշգրտությունը, սակայն հատկապես հավելումների հեղինակներից շատերը դրա վրա ուշադրություն չեն դարձրել, եւ ժամանակագրական խախտումները բավական մեծ թիվ են կազմում: Սովորական են տարբեր պատճառներով առաջացող մի քանի տարվա տարբերությունները[210]: Հետեւաբար, որեւէ տեղեկություն փնտրելիս հայտնի թվականի հատվածում այն չգտնելու դեպքում անհրաժեշտ է ծանոթանալ առնվազն մերձակա երկու տասնամյակի ժամանակագրական նյութերին:

Պետք է նկատի ունենալ, որ որոշ տեղեկությունների տարեթվերն ավելի ստույգ են Փրկչական թվականով: Ինչ վերաբերում է առաջին սյունակին, ապա չպետք է մոռանալ, որ այն համապատասխանեցված է Հայոց թվականին, այսինքն երրորդ սյունակի թվականն է՝ գումարած 551, որի տարիները, ըստ տոմարական ճշգրիտ հաշվարկի, այժմյան համապատասխան թվականի (տարվա) ամիսների շրջանակից որոշ չափով դուրս են գալիս: Օրինակ՝ Հայոց Շ (500) թվականը (առաջին սյունակում՝ 1051 թ.) ընդգրկում է 1051 թ. մարտի 9-ից 1052 թ. մարտի 7-ը, կամ՝ Հայոց ՈԺ (610) թվականը՝ 1161 թ. փետրվարի 9-ից 1162 թ. փետրվարի 8-ը եւ այլն[211]:

---

[210] Ժամանակագրական խախտումների մի մասը գալիս է աղյուսակներում տողերի խտությունից, երբ վերեւում եղած տեքստը մեծ լինելով՝ ներքեւում գտնվող տեղեկության տեքստը մի քանի տողով ցած է իջեցնում, հետեւաբար՝ նաեւ տեղաշարժում է մի քանի տարով, քանի որ ամեն մի տողը մեկ տարի է:

[211] Բոլոր թվականների տարեմուտը (նավասարդի 1-ը) նշող ամբողջական ցանկը տե՛ս Բ. Թումանյան, Տոմարի պատմություն, էջ 50-112, նույնի՝ Առձեռն տոմարացույց, Երեւան, 1965, էջ 15-30:

Ծանոթագրությունների վերաբերյալ նկատենք. քանի որ նյութը չափազանց ծավալուն է՝ առաջին մասում ընդգրկելով աստվածաշնչային ու Արեւելքի հնագույն պատմության գործիչների անվանացանկեր՝ գահակալների ու այլոց հարյուրավոր անուններով, իսկ երկրորդ մասի սկզբում Երուսաղեմի, Ալեքսանդրիայի, Անտիոքի, Հռոմի եպիսկոպոսների եւ շատ ուրիշների բազմաթիվ անուններն են, որոնք գլխավորապես քաղված են Եւսեբիոս Կեսարացու Քրոնիկոնից, այդ հատվածների վերաբերյալ նվազագույն թվով ծանոթագրություններ ենք կատարել: Իսկ հետագա ծանոթագրություններում շեշտը դրել ենք հայկական նյութի եւ հատկապես այն տեղեկությունների վրա, որոնք նորություն են կամ կարող են հետաքրքրություն ներկայացնել աղբյուրագիտական, պատմական եւ այլ առումներով, նպաստում են դեպքերի թվականների ճշգրտմանը եւ այլն:

Որոշ անվանափոխված հատուկ անունների, ձեւափոխված բառերի կամ եզրերի վերաբերյալ առանձին ծանոթագրություն չենք կատարել, քանի որ բացատրությունը տալիս ենք անվանացանկերում, օրինակ՝ Արակլիա (Հերակլիա), Շօշ - տե՛ս Սպահան, Վաստան - տե՛ս Ոստան, կամ առարկայական ցանկի տիտղոսների բաժնում՝ ըմբրուր (իմպերատոր), կոմս (նաեւ՝ գունթ), բրինձ (պրինց), գռալ (կառոլ), եւ այլն:

Ներկա հրատարակության մեջ ձեռագրերում կիրառված ուղղագրությունը հիմնականում թողնվել է անփոփոխ, բացվել են համառոտագրությունները: Գրչի վրիպած կամ ենթադրվող տառերը նշվում են կոր փակագծում՝ ( ), մեր վերականգնած տառերը՝ ուղիղ փակագծում՝ [ ], թափված, ջնջված տեղերը՝ համապատասխան նշանով՝ /// :

Անվանացանկերում ընդգրկել ենք միայն բնագրում, ինչպես նաեւ ուսումնասիրության ու ծանոթագրությունների մեջբերումներում եղած, այլ աղբյուրներում հիշատակված անունները:

Բ Ն Ա Գ Ի Ր

ՍԱՄՈՒԷԼԻ ՔԱՀԱՆԱՅԻ ՀԱՒԱՔՄՈՒՆՔ Ի ԳՐՈՑ ՊԱՏՄԱԳՐԱՑ
ՅԱՂԱԳՍ ԳԻՒՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՑ ԱՆՑԵԼՈՑ ՄԻՆՉԵՒ Ի ՆԵՐԿԱՅՍ
ՇԱՅՐԱՔԱՂ ԱՐԱՐԵԱԼ

Ա

ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄԱՍ Ա

(Ադամից մինչեւ Քրիստոսի ծնունդը)

ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԼՐԱՑՈՒՄՆԵՐՈՎ

ՄԱՍ Բ

(Քրիստոսի ծննդից մինչեւ 1163 թ.)

Բ

ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑՈՒ ՇԱՐՈՒՆԱԿՈՂՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

(1164 – 1776 թթ.)

ՍԱՄՈՒԷԼԻ ՔԱՀԱՆԱՅԻ ՀԱՒԱՔՄՈՒՆՔ Ի ԳՐՈՑ ՊԱՏՄԱԳՐԱՑ ՅԱՂԱԳՍ ԳԻՒՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՑ ԱՆՑԵԼՈՑ ՄԻՆՉԵՒ Ի ՆԵՐԿԱՅՍ ԾԱՅՐԱՔԱՂ ԱՐԱՐԵԱԼ[1]

Յերիս որոշմունս բաժանեալ սահմանեցան թիւք ժամանակաց յանցեալն, ի ներկայն եւ յապառնին: Իսկ յաւժարութիւն կամաց մարդկութեանս ներհուն լինել տեսանի անցելոցն եւ ապառնեացն, առաւել քան ներկային՝ որպէս ուսաք ի գրոց՝ հարցաքննեալ զայսոսիկ յարանց աստուածայնոց եւ արտաքնոց: Որոց իւրոցն ծանաւթիցն ասէր Կենարարն, թե՝ «ոչ է ձեզ գիտել զժամս եւ զժամանակս, զոր Հայր եդ յիւրում իշխանութեան»[2], ո՛չ միայն ասէր զայս վասն կատարածի, այլ վասն ամենայն ժամանակաց ետ վճիռ, ասէ ճշմարտապատումն Եւսեբի: Զի զժիտ եւ զդատարկախոյզս արգելու սակաւ բանիւս՝ մի՛ ոգորիլ հասու լինել ստուգիւ գիտութեան ժամանակաց: Բայց այս հրամանք աստուածային եւ տիրականք տրամագիծ եւ ճշմարիտ տուեալ եղեւ, զի զվայրաքննինս արգելուցու յանաւգուտ աշխատութեանց, զի զայնոսիկ՝ որք պիտոյքն են գիտել եւ նկատել, ուսոյց եւ ծանաւթս արար ի ձեռն գրոց մարգարեականաց, որք զկնի միմեանց դրոշմեալ են ի գիրս նոցա, մինչեւ ի մարմնանալ Աստուածն բանի, սկսեալ ի Մովսէսէ՝ յաստուածապարգեւ պատգամացն: Իսկ ի յոլովից պատճառանաց երկու միայն բաւական են ի կարեւորացն արտայայտել մի՝ զի կարկեսցէ զբերան նոցա, ոյք անսկիզբն եւ անվախճան ասել իշխեցին զարարածս, եւ միւսն՝ զի զանկեալս ի հայրենի ժառանգութենէն կանգնեսցէ յուսով աւետաբեր գալստեանն իւրոյ, ի դարս դարս առակաւք եւ տեսլեամբք ճշգրտեսցէ զտնաւրէնութեանն խորհուրդ: Իսկ յետ այսորիկ զամենակատար գիտութիւն ուսուցեալ իւրոց աշակերտացն առաքմամբ Հոգւոյն Սրբոյ, զորս հազարապետս եւ խորհրդագէտս կամաց իւրոց արարեալ, եւ տեղեակ անճառելեացն, յորոց լուսալրութենէ լցան արարածք եւ ուսեալք ի նոցանէ զսահմանս ամենայնի, ձեռնարկեցին գրել զանցեալն եւ զներկայն, եւ զապառնիս՝ իբրեւ յաշակերտաց ճշմարտէն վարժեալք զճշմարտութիւն, եւ իւրաքանչիւր ոք ի կորովաբան եւ յիմաստախոհ արանց յազգին իւրում զժամանակագիտութիւնս կարգեալ ձեռնարկեաց: Առ որս երեւելագոյն քան զյոլովս եղեւ Եւսեբի երանելի՝ ի մէջ առաջնոցն եւ վերջնոցն, եւ զհետ նորա Սոկրատէս պատմագիր այլովք բազմաւք:

Իսկ մերայինս ազգի ասել առաջին պատմագիր զԱգաթանգեղոս, որ գրեաց զպատճառ լուսաւորելոյ զՀայս սրբոյն Գրիգորի՝ նորասքանչ համբերութեամբ եւ ապա Մովսէս Խորենացի հաւաստապատում եւ զկնի Եղիշէ, եւ Ղազարիկ, եւ Փաւստոս, որ է Բուզանդ պատմիչ յառաջ քան զինքն: Եւ Հերակլն ի Սեբիոսէ եպիսկոպոսէ ասացեալ, եւ Ղեւոնդ երիցու, եւ Շապհոյ, եւ տէր Յովաննէս, եւ ի վերջին ժամանակս Ստեփանոս վարդապետ՝ մականուն Ասղնիկ: Այսոքիկ զՀայոց, եւ այլք բազումք զանցնիւր ազգաց պատմիչք,

միայն յելանելոյն Ադամայ ի դրախտէն, զի զդրախտին կեանս անյայտացուցեալ, որպէս ասէր Տէրն, եւ վասն աւուրն գալստեան եւ ժամու ոչ ոք գիտէ, որում զիրեշտակս եւ զՈրդի ասելովն արգել բնաւ զիարցանել: Արդ, եթե Ինքն է գալոց, զիարդ Ինքն ոչ գիտիցէ զժամն, բայց զի մի՛ տրտմեցուսցէ զնոսա, ասաց այսպէս:

Իսկ իմ մոռացեալ զտգիտութիւն եւ զանուսումնութիւն իմ, ի թախանձելոյ քո, սրբազգեացդ Գրիգոր, յաղթեցայ ի սիրոյ կամաց ձեր՝ առ ի գրել զոր կամեցար եւ այժմ աւժանդակեալ ի Հոգւոյն Սրբոյ, ժողովեցից ի սոցանէ կարճ ի կարճոյ զախորժակս ձեր զբանից հանդէս, միայն զճշմարտութեանն գնալով զհետս: Եւ յոլովիցն առաւել զերկոքումբքս թեւակոխեսցուք, ձեռնտու ունելով զսոսա՝ զԵւսեբի ասեմ եւ զՄովսէս Խորենացի: Եւ նախ յԱդամայ սկսեալ՝ կատարեսցուք ի Նոյ, եւ անտի՝ մինչեւ ցԱբրահամ *(Մ5619) եւ անտի մինչեւ ի ծնունդն Քրիստոսի,* եւ ապա ըստ քրոնիկոնին գաւազանաւք զրաւեսցուք ի ներկայս, զաւելորդսն թողլով եւ զկարեւորսն ի ներքս մուծանելով, թերեւս հասանիցես փափագելոյն:

Արդ, աւելորդ վարկաք ասելով զանվաւեր պատմութիւնս Քաղդեացւոց եւ զդժական անուանակոչութիւնս, յորս եթե ոք կարաւտասցի, առ ձեռն պատրաստ ունի զգիրս զարմանալւոյն Եւսեբեայ, առանց որոյ եւ ոչ մեք կարասցուք գրել եւ որ զնոցանէ գրեալն է յիւրում տեղւոջն՝ կարի ի դէպ է եւ պիտանի, զի թեպէտ եւ այլանման զանուանսն կոչէ զնախնեացն հարց, եւ զթիւս համարոցն առաւելեալ անչափութեամբ, սակայն թիւ հարցն զոյգ աստուածայնոց են: է եւ այլ իմն պատճառ զառ ի նոցանէ անրջաբանեալսն գրելոյ, զի Քաղդեայ էր Աբրահամ, եւ նորին նախնիքն ի Քաղդեացւոց աշխարհէն էին, որպէս Գիրք Արարածոցն յայտ արարեալ ցուցանեն: Արդ, վասն զի առ ի նոցանէ ճառեցեալքն վկայեն մասնաւոր իրաւք ճշմարտութեանն՝ զջրհեղեղէն եւ զաշտարակաշինութենէն, եւ զայլ յետ նոցա վաւերական վարկան յիշել հարքն երանելիք, զորս բաւական համարեցաք զնոցայն աշխատութիւն գրել մեզ միայն, զոր մերոյս պատշաճաւոր է խնդիրս:

Եւ արդ, սկիզբն ժամանակագրութեանց յելանելոյն Ադամայ ի բազմերանն կայանից կարգեցին երիցունքն քաջահմուտ: Եւ որ այլ իմն բաջաղի գիտել զժամանակաց թիւս այնր բնակութեան, կամ յարարչութենէ երկնի եւ երկրի ասել համարձակին, մի՛ հաւատար, զի յորմէ հետէ ել յանուշակ կենացն եւ կոչեցաւ Ադամ, զհասարակ զբնաւ մարդիկ նշանակելով, յայնմ հետէ առ սկիզբն ժամանակագրութիւնս, եւ զայն ըստ եւթանասնիցն թարգմանութեան, զի բազում անմիաբանութիւն ի մէջ Եբրայեցւոցն մանաւանդ վասն թուոյ ժամանակաց գտանի: Բայց որք եւթանասնիցն հետեւեցին՝ իբրեւ ի Հոգւոյն Սրբոյ առաջնորդեալք, նոցա եւ մեք ուշ եդեալ շարադրեսցուք զձեռնարկեալս:

ԱՌԱՋԻՆ, ԹԷ ՁԻԱՐԴ ՅԱԴԱՄԱՅ ՄԻՆՉԵՒ Ի ՋՐՀԵՂԵՂՆ ԳՐԵՑԱՆ ՅԵՒԹԱՆԱՍՆԻՑՆ

Ա (1) Նախնի մարդն Ադամ, յետ ելանելոյն ի դրախտէն, լեալ ամաց ՄԼ (230), ծնանի զՍէթ յԵւայէ կնոջէ իւրմէ: Եւ եկեաց այլ եւս ամս Չ (700)՝ մինչեւ ի ՃԼԵ (135), ամն Մաղաղիէլի, ծնանի այլ ուստերս եւ դստերս, մեռանի ՋԼ (930) ամաց:

Բ (2) Սէթ լեալ ամաց ՄԵ (205), ծնանի զԵնովս յԱզովրայ կնոջէ իւրմէ: Եւ եկեաց այլ եւս ամս ՉԷ (707)՝ մինչեւ Ի (9)երորդ ամն Ենովքայ, ծնանի ուստերս եւ դստերս, մեռանի ՋԺԲ (912) ամաց:

Գ (3) Ենովս լեալ ամաց ՃՂ (190), ծնանի զԿայինան ի Նուենա կնոջէ իւրմէ, եւ եկեաց այլ եւս ամս ՉԺԵ (715)՝ մինչեւ ԾԳ (53) ամն Մաթուսաղայի, ծնանի ուստերս եւ դստերս, մեռանի ՋԵ (905) ամաց:

Դ (4) Կայինան լեալ ամաց ՃՀ (170), ծնանի զՄաղաղիէլ ի Մաղաղեդա կնոջէ իւրմէ: Եւ եկեաց այլ եւս ամս ՉԽ (740) մինչեւ ՋԱ (81), ամն Ղամեքայ, ծնաւ ուստերս եւ դստերս, մեռաւ ՋԺ (910) ամաց:

Ե (5) Մաղաղիել լեալ ամաց ՃԿԵ (165), ծնանի զՅարեդ ի Դնայ կնոջէ իւրմէ եկեաց այլ եւս ամս Չ Լ (730)՝ մինչեւ ԽԸ (48) ամն Նոյի, ծնանի ուստերս եւ դստերս, մեռաւ ի ՊՂԵ (895) ամաց:

Զ (6) Յարեդ լեալ ամաց ՃԿԲ (162), ծնանի զԵնովք ի Բառաքայ կնոջէ իւրմէ, եւ եկեաց այլ եւս ամս Պ (800)՝ մինչեւ ՄՁ (280) ամն Նոյի, ծնանի ուստերս եւ դստերս, մեռանի ՋԿԲ (962) ամաց:

Է (7) Ենովք լեալ ամաց ՃԿԵ (165), ծնանի զՄաթուսաղայ ի Յադընեռա կնոջէ իւրմէ, եւ եկեաց այլ եւս ամս Մ (200), հաճոյ եղեալ Աստուծոյ, փոխեցաւ յամի ԼԳ (32) Ղամեքայ, ծնանի ուստերս եւ դստերս փոխեցաւ ՅԿԵ (365)ամաց:

Ժողովին յԱդամայ մինչեւ ի փոխիլն Ենովքայ ազգք է (7), ամք ՌՆՋԷ (1487):

Ը (8) Մաթուսաղայ լեալ ամաց ՃԿԷ (167), ծնանի զՂամեք ի Յեդնա կնոջէ իւրմէ, եւ եկեաց այլ եւս ամս ՊԲ (802), սմա անցանել զջրհեղեղաւն ամաւք, որ զկենաց նորա թիւ յայտ առնէ: Իսկ եթե որպէս յայլ աւրինակս կա եկեաց այլ եւս ամս ՉՁԲ (782), ծնաւ ուստերս եւ դստերս, մեռաւ ՋԿԹ (969)ամաց:

Թ (9) Ղամեք լեալ ամաց, ՃՁԸ (188), ծնանի զՆոյ ի Բեդնա կնոջէ իւրմէ եւ եկեաց այլ եւս ամս ՇԼԵ (535), յառաջագոյն քան զհայր իւր զՄաթուսաղայ վախճանէր Ղամեք եւ եկեաց այլ եւս ցամս Նոյի ՇԼԵ (535), ծնանի ուստերս եւ դստերս, մեռանի ՉԻԳ (723) ամաց:

Ժ (10) Նոյ լեալ ամաց Շ (500), ծնանի զՍեմ, զՔամ, զՅաբեթ ի Նոյեմզարա[3] կնոջէ իւրմէ եւ եկեաց այլ եւս ամս Ճ (100)՝ մինչեւ ցջրհեղեղն, եւ յետ ջրհեղեղին ամս ՅԾ (350), մեռաւ ՋԾ (950) ամաց: *(Մ5596) Եւ յետ ջրոյն եղեւ Նոյի որդի մի՝ Մանիտոն անուն եւ դուստր մի՝ Աստղիկ անուն[4]:*

Ժողովին ի փոխմանեն ենովքայ մինչեւ ցջրհեղեղն ազգք Գ (3), ամք, ՉԾԵ (755), իսկ յԱդամայ ազգք Ժ (10), ամք ՍՄԽԲ (2242) :

ԹԷ ՉԻԱՐԴ ՅԵՏ ՋՐՀԵՂԵՂԻՆ ԳՐԵՆ ԵՒԹԱՆԱՍՈՒՆՔՆ Ի ՍԵՄԱՅ ՄԻՆՉԵՒ ՅԱՌԱՋԻՆ ԱՄՆ ԱԲՐԱՀԱՄՈՒ

ԺԱ (11) Սէմ լեալ ամաց Ճ (100), ծնանի զԱրփաքսաթ՝ յերկրորդ ամէ յետ ջրհեղեղին, ի Դիզակղիբադա կնոջէ իւրմէ, եւ եկեաց այլ եւս ամս Շ (500), ծնանի ուստերս եւ դստերս, մեռաւ Ո (600) ամաց:

ԺԲ (12) Արփաքսադ լեալ ամաց, ՃԼԵ (135), ծնանի զՍաղայ ի Ռաբուիայ կնոջէ իւրմէ եւ եկեաց այլ եւս ամս ՆԳ (403), ծնանի ուստերս եւ դստերս, մեռաւ ՇԼԸ (538) ամաց:

(Մ5619) Այլուստ, յոլովք ասեն, թէ այն է լեզուն Ադամա, որ առ եբեր մնաց յաշտարակին բաժանմանն, զոր լեզու եւ այժմ Հրէայք ունին, եւ ոչ զոր Ասորիք, եւ այլք՝ թէ Քաղդէացի էր նախնի լեզուն, վասն տեղոյն՝ ուր աշտարակն էր:

ԺԳ (13) Սաղայ լեալ ամաց ՃԼ (130), ծնաւ զԵբեր ի Մուքա կնոջէ իւրմէ եւ եկեաց այլ եւս ամս ՆՋ (406)՝ մինչեւ յեւթներորդ ամն Սերուքայ, ծնանի ուստերս եւ դստերս, մեռաւ ՇԼՋ (536) ամաց:

ԺԴ (14) Եբեր լեալ ամաց ՃԼԴ (134), ծնանի զՓաղեկ ի Զուբայ կնոջէ իւրմէ, եւ եկեաց այլ եւս ամս ՆԼԳ (433)՝ մինչեւ ԼԸ (38) ամն Նաքովրայ, ծնանի ուստերս եւ դստերս, մեռաւ ՇԿԷ (567) ամաց:

ԺԵ (15) Փաղեկ լեալ ամաց ՃԼԴ (134), ծնաւ զՌագաւ ի Զիուրա կնոջէ իւրմէ, եւ եկեաց այլ եւս ամս ՄԹ (209)՝ մինչեւ ՀԵ (75) ամն Սերուքայ, ծնաւ ուստերս եւ դստերս, մեռաւ ՅԽԳ (343) ամաց:

Յաւուրս Փաղեկայ բաժանեցաւ երկիր, զի Փաղեկն բաժանումն լսի: Եւ սա յառաջ քան զհայր իւր վախճանի: Առ սովաւ աշտարակագործութիւնն եղեւ, եւ ի միոջէ բարբառոյն ի բազումս բաշխեին ըստ ազգի ազգի լեզուք նոցա, զորոց վկայեն աստուածեղեն գրոց եւ արտաքնոցն վիպասանք:

Եւ գումարին ի ջրհեղեղէն մինչեւ ցաշտարակն ազգք Ե (5), ամք ՇԻԵ (525), յԱդամայ՝ ազգք ԺԵ (15), ամք ՍՉԿԷ (2767):

ԺԶ (16) Իսկ յետ Փաղեկայ *(Մ5619) Ի սորա աւուրս եղեւ սկիզբն զինագործութեան եւ բերդի շինութեան)* Ռագաւ լեալ ամաց ՃԼԵ (135), ծնանի զՍերուք ի Սուրա կնոջէ իւրմէ, եւ կեցեալ այլ եւս ամս Մէ (207)՝ մինչեւ ՀԵ (75) ամն Նաքովրայ, ծնանի ուստերս եւ դստերս, մեռանի ՅԽԲ (342) ամաց:

(Մ5619, Մ1898) Այլուստ: Սերուք շինեաց զՍրուճ: Ի սորա աւուրս կին ոմն թագաւորեաց ի վերա Տանն Թորգոմա եւ զաւրուսն ամենայն եսպան եւ կանայս արար զաւրականս: Եւ յամենայն տարի միանգամ երթեալ յաշխարհ խառնակէին ընդ այրս եւ ծնեալք զարուս սպանանէին եւ զէգսն պահէին: Եւ

ժողովեալ մետասան թագաւորք բարձին զնոսա, եւ առին զամուրս:

ԺԷ (17) Սերուք լեալ ամաց ՃԼ (130), ծնանի զՆաքովր ի Մեղքա կնոջէ իւրմէ, եւ կեցեալ այլ եւս ամս Մ՝(200) մինչեւ ՇԱ (51) ամն Աբրահամու, ծնանի ուստերս եւ դստերս, մեռանի ՅԼ (330) ամաց:

ԺԸ (18) Նաքովր լեալ ամաց ՀԹ (79), ծնաւ զԹարայ ի Յեսքայ կնոջէ իւրմէ, եւ կեցեալ այլ եւս ամս ՃԺԹ (119) մինչեւ ի ԽԹ (49) ամն Աբրահամու, ծնաւ ուստերս եւ դստերս, մեռանի ՃՂԸ (198) ամաց:

(Մ5619) Այլուստ. Աստ շինեցաւ Դիմիշկ ի Մաւրբոս Հիւթացոյն, իսկ Յովսեպոս ասէ, թէ ի Յուսայ, որդոյ Արամայ Հայկազնոյ շինեցաւ Դամասկոս:

ԺԹ (19) Թարայ լեալ ամաց Հ (70), ծնաւ զԱբրահամ յեդնա կնոջէ իւրմէ եւ եկեաց մինչեւ ԼԵ (35) ամն Իսահակայ, այլ եւս ամս ՃԼԵ (135), ծնաւ ուստերս եւ դստերս մեռաւ Թարայ ՄԵ (205) ամաց:

Ի (20) Աբրահամու ամն առաջին ժողովի ի ջրհեղեղէն մինչեւ յառաջին ամն Աբրահամու ազգք Թ (9), ամք, ՋԽԲ (942), իսկ յԱդամայ՝ ազգք ԺԹ (19), ամք, ՎՃՁԴ (3184): Զի ինքն Աբրահամ լինիցի Ի (20)երորդ ազգ եւ այս ըստ եւթանասնիցն թարգմանութեան:

Բայց վասն զի բազումք ի տեղեկագունից պատմագրաց, յաւելուն ի թիւ ազգացս եւ ամացս, զԿայինան՝ ՃԻ (120) ամաւք, եւ ասեն զնա որդի Արփաքսադայ եւ հայր Սաղայ եւ գրեն այսպէս՝ Արփաքսադ կեցեալ ամս ՃԼԵ (135), ծնանի զԿայինան յՌաբուիայ կնոջէ իւրմէ, կեցեալ այլ եւս ամս ՆԳ (403), մեռանի: Կայինան կեցեալ ամս ՃԻ (120), ծնանի զՍաղայ ի Սեքա կնոջէ իւրմէ, կեցեալ այլ եւս ամս ՅՂԵ (395), մեռանի: Եւ վասն այսորիկ վկայս ունելով արս հռչակաւոր եւ հմտագոյն՝ զԻւրեգինէս եւ զԳրիգոր Աստուածաբան եւ զԵպիփան Կիւպռացի, մանաւանդ զհոգընկալ աւետարանիչն զՂուկաս՝ գրեալ յազգաբանութեանն եւ ըստ այսոցիկ լինի Աբրահամ համարեալ առ յԱդամայ առաջներորդ քսաներորդ, եւ թիւ համարոցն, զոր Եւսեբի ՎՃՁԴ (3184) գրէ, յԱդամայ ցԱբրահամ լինի ՎՅԴ (3304):

Դարձեալ եւ Մովսէս Խորենացի, վասն զուգահաւասարութեան ծննդոց, յերից որդւոցն Նոյի մինչեւ ցԱբրահամ շարակարգէ յիւրում պատմութեանն զՆոյն նահապետ, եթե Կայինան չորրորդ ի Նոյէ եւ երրորդ ի Սեմայ, նոյնպէս եւ զԹիրաս չորրորդ ի Նոյէ եւ երրորդ Յափեթէ ասէ, եւ զՄեստրայիմ՝ չորրորդ ի Նոյէ, եւ երրորդ ի Քամայ եւ վասն սոցա գրեաց նոյն պատմագիրս Մովսէս այսպէս, թե դժուարահաւաք եւ տաժանելի է, որպէս գիւտ ժամանակացն ի սկզբանէ, առաւել գիւտն ազգաց յերից որդւոցն Նոյի: Զի Գիրք աստուածային զիւր ազգն ի բաց հատեալ, այսինքն՝ զՍեմ, ելիք զայլսն իբրեւ զարհամարեալս եւ իւրոցն անարժան կարգածոցն բանի համարեալ: Ասէ դարձեալ, թե այսոքիկ թեպէտ եւ ոչ ուրեք ի բնագրի գտանի ի մերումս թարգմանութեան, եւ ոչ ի ժամանակագրաց ուրեք գտաք կարգեալ, այլ յընթերցասիրէ եւ յուշմագունէ ումեմնէ Ասորւոյ, եւ հաւատարիմ մեզ թուեցաւ, քանզի Մեստրայիմդ

Մեծրայիմ, որ թուի Եգիպտոս եւ Նեբրովք, որ է Բել[5]: Եւ կարգէ զհաւասարութիւն երից ազգացն այսպէս:

Սէմ	Քամ	Յաբեթ
Արփաքսադ	Քուշ	Գամեր
Կայինան	Մեստրայիմ	Թիրաս
Սաղայ	Նեբրովք	Թորգոմ
Եբեր	Բաբ	Հայկն
Փաղեկ	Անեբիս	Արամանեակ
Ռագաւ	Արբէլ	Արմայիս
Սերուք	Քայաղ	Ամասիայ
Նաքովր	Արբէղ	Գեղամ
Թարայ	Նինոս	Հարմայ
Աբրահամ	Նինուաս	Արամ

Յետ որոյ ասաց եւ զայս զի թեպէտ եւ ամք ժամանակաց ծննդոցն Քամայ մինչեւ ցՆինոս ոչ ուրեք գտանին թուեալ, եւ կամ թե առ մեզ ոչ հասեալ, իսկ մերոյն Յաբեթի ամենեւին ոչ, սակայն ասացեալ ազգաբանութիւնս հաւաստի է երից ցեղիցն մետասան գոլով ցԱբրահամ եւ ցՆինուաս, եւ ցԱրամ, զի Արայն ԲԺ (12)երորդ է յետ Նինոսի՝ մանուկ տիովք վախճանեալ ի Շամիրամայ: Եւ է ճշմարիտ, եւ մի՛ ոք երկբայեսցի զհաւաստին, ասէ, որչափ կարացաք ընտրեցաք ի բանս, որոյ ոչ զոք ընդդիմանալ կարծեմ, բայց եթե զճշմարտութեանն քակել խորհելով զոճ, եւ յայսոսիկ իւրաքանչիւր միտք որպէս կամին՝ ուրախասցին:

Այլ մեք, յերից որդւոցն Նոյի սկսցուք մի մի կարգաւ գրել մինչեւ ցյայտնութիւն Աստուածն Բանի, նախ զՍէմայ ազգաբանութիւնն, եւ ապա՝ զՔամայն, եւ ապա՝ զՅաբեթին:

ԶՍէմ՝ զերէց որդին Նոյի, արտաքինքն Զրուան անուանեն եւ զՔամ՝ Տիտան եւ զՅափեթ՝ Յապիտոստէ, եւ ո՛չ միայն զայսոսիկ, այլ յԱդամայ սկեսալ այլանման անուանս նահապետացն, եւ անհուն թիւս ամաց նոցա մի ըստ միոջէ համարին այսպիսի ձեւով:

Ադամ Ա (1) Աղաւրոս՝ շարս տասն եւ բաժանեն զշար մի ՎՈ (3600) թիւս ամաց, գրեալ ի նորին վերայ, ներս իմն եւ սոսս, ներ մի ի ներիցն է Ո (600) ամ, եւ սոսս մի ի սոսիցն է Կ (60) ամ:

Սէթ Բ (2) Աղապարոս՝ շարս երեք:

Ենովս Գ (3) Աղմեղովն՝ շարս տասն եւ երեք:

Կայինան Դ (4) Ամմենովն՝ շարս տասն եւ երկու:

Մաղաղիէլ Ե (5) Ամէգաղարոս՝ շարս տասն եւ ութ:

Յարեդ Զ (6) Դաւոնոս՝ շարս տասն:

Ենովք է Ե (7) Եւենդովրաքոս, շարս տասն եւ ութ:

Մաթուսաղա Ը (8) Ամեմփսինոս, շարս տասն:

Ղամեք Թ (9) Ոտիարտէս, շարս ութ:

Նոյ Ժ (10) Քսիսութրոս՝ շարս տասն եւ ութ:

Միանգամայն տասն թագաւորացս շարս ՃԻ (120) ասեն լեալ, որք առնեն ՍԽԳ (2043) բիւրս ամաց զայսոսիկ Քաղդեացւոցն վիպագիրք: Բայց թողլով զանվաւերսն, ի Գրոց աստուածայնոց սկսցուք շարադրել, զի ասէ այսպէս՝

Սեմայ ծնանին որդիք Ե (5)՝ Եղամ եւ ի նմանէ Իլամացիք, եւ Ասուր եւ ի նմանէ Ասորեստանեայք, եւ Արփաքսադ եւ ի նմանէ Քաղդէացիք, եւ Ղուդ եւ ի նմանէ Ղազոնացիք, եւ Արամ եւ ի նմանէ Արամացիք, որ եւ Ասորիք անուանին:

Եւ որդիք Արամայ՝ Հուս եւ ի նմանէ Ղագացիք, եւ Եմուղ եւ ի նմանէ Եմուղացիք, եւ Գաթեր եւ ի նմանէ Գասփենացիք, եւ Մոսոք եւ ի նմանէ Մոսէնացիք եւ որդի Արփաքսադայ՝ Սաղայ, եւ որդի Սաղայի Եբեր, եւ ի նմանէ Եբրայեցիք:

Եւ որդիք Եբերայ՝ Փաղեկ, եւ ի նմանէ կարգի ազգն Աբրահամու եւ Յեկտան, եւ Յեկտանայ լինին որդիք երեքտասան առաջինն Եղմովդադ, եւ ի նմանէ Հնդիկք, եւ Սաղեք եւ ի նմանէ Բակտրիանոսք, եւ Ասարմովթ եւ ի նմանէ Արաբացիք, եւ Յարաք եւ ի նմանէ Յարաքացիք, եւ Զոդորամ եւ ի նմանէ Կամեղացիք, եւ Եզեղ եւ ի նմանէ Արիանացիք, եւ Դեկղա եւ ի նմանէ Կեդրուսացիք, եւ Գեբաղ եւ ի նմանէ Սկիւթացիք, եւ Աբիմեէղ եւ ի նմանէ Վրկանիկք, եւ Սաբեի եւ ի նմանէ Արաբացիք առաջի, եւ Ուփիր եւ ի նմանէ Արամացիք, եւ Զեւիղայ եւ ի նմանէ Գիմնոսոփիստայք, եւ Յովբաբ եւ ի նմանէ Արադացիք:

Ամենեքին սոքա որդիք Յեկտանայ՝ եղբաւր Փաղեկայ: Եւ եղեւ բնակութիւն սոցա ի Մասեաց մինչեւ ի գալ ի Սփերեա լեառն արեւելեայց[6]: Եւ այլուր ասի, թե է բնակութիւն ամենայն որդւոցն Սեմայ ի Բակտրոնէ մինչեւ յՌինոյկորուրոն, որ մեկնէ ընդ Ասորիս եւ ընդ Եգիպտոս եւ ընդ ծովն Կարմիր, ի բերանոյ ծովուն, որ է յանդիման Ասիանեա, այսինքն է՝ Հնդկաց աշխարհին:

Որդիք Քամայ առաջինն՝ Քուշ եւ ի նմանէ Քուշացիք, եւ Մեստրայիմ եւ ի նմանէ Տրոգղացիք, եւ Քանան եւ ի նմանէ Ափրիացիք եւ Փիւնիկեցիք: Եւ որդիք Քուշա՝ Սաբայ եւ Իղա եւ Սաբաաթ, եւ Ռեգմայ, եւ Սաբակաթա եւ որդիք Ռեգմա՝ Սաբա եւ Յուդադան:

Դարձեալ ասէ աստուածային Գիրն, թե Քուշ ծնաւ զՆեբրովթ, նա սկսաւ լինել սկայ ի վերայ երկրի, եւ նա էր սկայ որսորդ առաջի Տեառն Աստուծոյ, եւ սկիզբն թագաւորութեան նորա Բաբէղովն եւ Որեդ, եւ Աքադ, եւ Քաղանէ, յերկրին Սենաար: Յերկրէն յայնմանէ ել Ասուր եւ շինեաց զՆինուէ եւ զՌոբովթ քաղաք, եւ զՔաղան, եւ զՌասեման՝ ի մէջ Նինուէի եւ ի մէջ Քաղանայ, այն է քաղաք մեծ:

Եւ Մեստրայիմ՝ հայր Եգիպտացւոցն, ծնանի զՂուդիիմ, եւ ի նմանէ Ղիդացիք, եւ զՍենէիմ եւ ի նմանէ Պամփիւղացիք, եւ զՍաղբիմ եւ ի նմանէ Լիբէացիք, եւ զՆեփթաղիիմ եւ զՊատրոսոնիիմ եւ ի նմանէ Կրետացիք, եւ զՔասղնիիմ եւ ի նմանէ Լիկէացիք, յորմէ ելին Փղշտացիք, եւ զԿապթորիմ եւ ի նմանէ

Դակէացիք:

Եւ Քանաան ծնաւ զՍիդոն՝ զանդրանիկ իւր, եւ ի նմանէ Սիդովնացիք, եւ զՔետացին եւ զԵբուսացին եւ զԱմուրիացին, եւ զԳերգեսացին, եւ զԽեւացին, եւ զԱրուկացին, ուստի՝ Տրիպողիտք, եւ զԱմինացին, եւ զԱրադէոն եւ ի նմանէ Արադացիք, եւ զՍամրին եւ ի նմանէ Որթոսեցիք, եւ զԱմաթի եւ ի նմանէ Ամաթուսացիք:

Եւ յետ այսորիկ սփռեցան ազգք Քանանացւոց ընդ ամենայն ԼԲ (32), եւ եղեն սահմանք նոցա ի Սիդովնէ մինչեւ ի Գալիգերարայ եւ ի Գազայ եւ մինչեւ գալ ի Սոդոմ եւ ի Գոմոր, յԱդեմա եւ ի Սեբոիմ, եւ ի Լասայ եւ այլուր ասի, թե է բնակութիւն նոցա յՌինոյկորուրայ մինչեւ ի Գադիրովն՝ ընդ կողմն հարաւոյ:

ԴԱՐՁԵԱԼ Ի ՆՈՅՆ ԳՐՈՑ ՅԱՐԱՐԱԾՈՑ

Որդիք Յաբեթի՝ Գամեր եւ ի նմանէ Գամիրք, եւ Մագովք եւ ի նմանէ Կեղտք, եւ Գաղատացիք, եւ Մադա եւ ի նմանէ Մարք, եւ Յաւան եւ ի նմանէ Հելլէնք եւ Յոյնք, եւ Եղիսա եւ Թոբել եւ ի նմանէ Թետաղք, եւ Մոսոք եւ ի նմանէ Լիւրիկեցիք, եւ Թիրաս եւ ի նմանէ Թրակացիք, եւ Քետէիմ եւ ի նմանէ Մակեդովնացիք:

Եւ որդիք Գամերա՝ Ասքանազ եւ ի նմանէ Սարմատք, եւ Ռիփաթ եւ ի նմանէ Սորոմատք, եւ Թորգոմ եւ ի նմանէ Հայք: Եւ որդիք Յաւանա՝ Եղիսա եւ ի նմանէ Սիկիլացիք եւ Աթենացիք, եւ Թարսիս եւ ի նմանէ Վիրք եւ Տիւրենացիք, եւ Կիտիիս՝ ուստի Հոռոմք եւ Լատինացիք, եւ ի սոցանէ մեկնեցան կղզիք ազգաց յերկիր իւրեանց ընդ ամենայն ազգք ԵԺ (15)ան:

Եւ ունին սոքա ի Մարաց մինչեւ ի Սպեռիոս, որ ծգի մինչեւ յՈվկիանոս եւ հայի ընդ հիւսիսի: Եւ ապա թուէ ազգս ԾԱ (51) եւ սահմանս նոցա ի Մարաց, ընդ կողմն հիւսիսոյ մինչեւ ի Գադիրոն, եւ ծգին ի Պաւտամինոս գետոյ մինչեւ ի Մաստուսիա, որ է Իլիոն:

Արդ, վասն զի խոստացաք յերից որդւոցն Նոյի, զիւրաքանչիւրոցն ազգաբանութիւն առանձին կարգագրել՝ մինչեւ ի մարմնանալն Քրիստոսի, իսկ Աստուածային Գիրն միայն զՍեմայն գրեալ ունի զծննդոցն յայտնաբանութիւն եւ զՔամայն եւ զՅաբեթին միայն այսչափ յիշէ, որչափ գրեցաքս ի սմա: Վասն որոյ սկսցուք յառաջին ամէն Աբրահամու զազգն Սեմա, զի մինչեւ ցայս վայր գրեցաք վերստին, թեպետ եւ յոյժ սակաւ ի յոլովից եւ զայլոցն զկնի, ուստի եւ ժողովել մարթասցուք ի ճշմարիտ վիպագրաց, յարտաքնոց եւ ի ներքնոց:

Սկսանելի է ուրանաւր եթող ազգաբանութեանն կարգ տեղի տուեալ, որք ի մէջս եղեն պատմութիւնք: Զի ասացաւ անդ Թարայ լեալ ամաց Հ (70), ծնանի զԱբրահամ եւ զՆաքովր եւ զԱռան եւ Առան ծնաւ զՂովտ: Եւ մեռաւ Առան առաջի հաւր իւրոյ Թարայի, ուր ծնաւ յերկրին Քաղդեացւոց: Եւ առին իւրեանց կանայս Աբրահամ եւ Նաքովր Աբրամ՝ զՍարա, եւ Նաքովր՝ զՄեղքայ, զդուստր

Առանայ: Եւ էր Սարա ամուլ եւ ոչ ծնանէր: Եւ առ Թարա զորդիս իւր եւ ել յաշխարհէն Քաղդեացւոց՝ երթալ յերկիրն Քանանացւոց: Եւ եկին մինչեւ ի Խառան եւ բնակեցան անդ: Եւ եղեն ամենայն աւուրք Թարայի Մ (200), եւ մեռաւ ի Խառան:

(Մ1898) Աստ շինեցաւ Երուսաղէմ ի Մելքիսեդեկէ Քանանացոյ քահանայէ մեծէ: Յայսմ ժամանակի թագաւորեալ Շամիրամ կին Նինոսի շինեաց թլեր բլուր ի հողոյ կուտեալ ամրոց: Բայց այլք վասն թլերոյ ասեն թէ ի յաճախել պատկերապաշտութեանն, եհան Աստուած հողմ փոթորիկ յերկիր, որ առեալ զկուռսն թաղեաց ի տեղիս տեղիս, եւ բնակեալ ի նոսա դեւքն կան ի նոսին ի տանջանս ի կուռսն. վասն որոյ եւ կախարդք միշտ զկախարդութիւնսն առ թլօքն առնեն[7]:

Եւ յեւթանասուն եւ հինգ ամի կենացն իւրոց Աբրամ Աստուծոյ յայտնութեանն արժանաւորի, յորում առնու հրաման ելանել յերկրէն իւրմէ: Եւ ել ի Խառանէ եւ բնակեցաւ յերկրին Քանանացւոց, եւ յՁԶ (86) ամի կենաց նորա լինի որդի յԱգարա՝ աղախնէ Սարայի, եւ անուանեաց Իսմայէլ, ուստի եւ Իսմայէլացւոց ազգն: Սոքա են Ագարենացիք, որք եւ Սարակինոսք եւ Տաճիկք կոչին: Եւ ի ՂԹ (99) ամի կենաց նորա դնէ նմա Աստուած ուխտ թլփատութեան, եւ թլփատի ինքն եւ ամենայն արու անթլփատ ի տան նորա: Եւ առնու զԱբրահամն անուն՝ փոխանակ Աբրամու, եւ զՍառռայ՝ փոխանակ Սարայի: Ի նմին ամի երեւի նմա Աստուած, հանդերձ հրշտակաւքն՝ ի Մամբրէ, յորում զպարգեւական զաւակն խոստանայ տալ նմա: Նախ ի մարգարէիցն Աբրահամու Աստուծոյ Բանն յայտնեալ ի մարդկան կերպարանս, զկոչումն հեթանոսաց գուշակէր, զոր ի մեզ եհան ի գլուխ վարդապետական աւետեաւքն յամենայն հեթանոսս, Աստուծոյ Բանն Աստուած: Արդ, լեալ Աբրահամ Ճ (100) ամեան, ծնանի զԻսահակ ի Սառռայէ կնոջէ իւրմէ եւ Սառռա Ղ (90) ամեան էր, յորժամ ծնաւ զԻսահակ, եւ եկեաց Սառա յետ ծնանելոյն զԻսաակ ամս Լէ (37), եւ մեռանի: Եւ յետ մահուանն Սառայի առաքէ Աբրահամ զընդոծին իւր զեղիազար Դամասկացի ի Միջագետս, եւ առնու զդուստրս Բաթուէլի զՌեբեկա՝ զքոյր Ղաբանա, Սահակայ որդւոյ իւրոյ կնութեան, եւ ապա ինքն առեալ զՔետուրայ կին, յորմէ ծնաւ որդիս վեց: Եւ այսպէս եղեն ծնունդք Աբրահամու յերից կանանց նախ ի Հագարա Եգիպտացւոց Իսմայէլ, ուստի ազգն Իսմայէլացւոց: Եւ ի Սառայէ լինի Իսահակ, ուստի ազգն Հրեից եւ ի Քետուրայ լինի ազգն Պարթեւաց, յորոց քաջն Արշակ՝ նախնի ազգաց Պահլաւականին եւ Արշակունւոյն: Արդ, կեցեալ Աբրահամ յետ ծնանելոյն զԻսահակ ամս Հե (75), ընդ ամենայն ամաց ՃՀԵ (175) մեռանի:

Իսահակ լեալ ամաց վաթսնից, ծնանի զԵսաւ եւ զՅակովբ՝ յետ Ի (20) ամի առնլոյն զՌեբեկայ, կեցեալ այլ եւս ամս ՃԻ (120), ընդ բնաւ ՃՁ (180) ամաց մեռանի:

(Մ1989) Յոբ յորդոցն Եսաւա Շ (500) ամաւ յառաջ քան զՄովսէս եւ է (7) ամ վիրեալ էր. յԵսաւա են Ֆռանգք:

Իսկ Յակովբայ լինի որդիս ԲԺ (12)ան եւ դուստր մի, ի յերկուց դստերացն Ղաբանայ՝ ի Լիաէ եւ ի Հռաքելայ, եւ յերկուց աղախնաց նոցա՝ ի Բաղղա եւ ի Զեղփա: Եւ թեպէտ եւ առաջին որդի Ռուբէն էր, զոր ծնաւ ՁԵ (85) ամի կենաց նորա, եւ զՇմաւովն՝ ՁԶ (86) ամին, սակայն զՂեւի առնուն ի կարգ, զոր ծնաւ ՁԷ (87) ամին, յորմէ ազգէ մեծն Մովսէս, զոր համարին այսպէս՝ Յակովբ ամաց ՁԷ (87)անց ծնանի զՂեւի՝ ի Լիաէ կնոջէ իւրմէ: Ղեւի լեալ ամաց ԽԶ (46)ից, ծնաւ զԿահաթ: Կահաթ ամաց ԿԳ (63)ից ծնանի զԱմրամ: Ամրամ ամաց, Հ (70)ից ծնանի զՄովսէս: Մովսէս ամաց Ձ (80)ից հանէ զժողովուրդն յեգիպտոսէ:

Դարձեալ եւ ըստ Եւսեբեայ ժամանակական կանոնացն՝ ՂԲ (92)ամին Յակովբայ լինի նմա որդի Յովսէփ՝ ի Հռաքէլայ կնոջէ իւրմէ: Եւ յեւթն եւ ի Ժ (10) ամին իւրոյ Յովսէփ վաճառի յեղբարցն յեգիպտոս, եւ լեալ ի տան բանդին ԱԺ (11) ամ, յերեսներորդ ամին տիրէ եգիպտացւոցն ամս Ձ (80), կեցեալ ամս ՃԺ (110)՝ մեռանի: Առաջի ամի լիութեանն եգիպտոսի տիրէ Յովսէփ, եւ Ը (8)երորդ ամն սկիզբն սովոյն նոցա եւ յերկրորդում ամի սովոյն իջեալ Յակովբայ յեգիպտոս՝ ՃԼ (130) ամաց, կեցեալ այլ եւս անդ ԺԷ (17) ամ, վախճանի ՃԽԷ (147) ամաց, ի ԻԶ (26) ամին թագաւորութեանն Յովսիփայ, որ այլ եւս եկեաց Յովսէփ ամս ԾԴ (54):

Յետ մահուանն Յովսէփու ծառայեն որդիքն Իսրայէլի եգիպտացւոցն ամս ՃԽԴ (144), յիջիցն Յակովբայ լինի ամք ՄԺԵ (215) ի ԿԴ (64) ամի յեգիպտոս ծառայութեանն ծնանի Մովսէս: Եւ լեալ ամաց Ձ (80)ից, եւ Ահարովն եղբայր Մովսէսի՝ ՁԳ (83)ից, հանեն զժողովուրդն յեգիպտոսէ եւ Խ (40) ամ առաջնորդեալ ժողովրդեանն յանապատին, վախճանի ամաց ՃԻ (120)ից:

(1898) Կանքարիս կոչէր ընգղմեալն փարաւոն, եւ որք ոչ էին զկնի նորա ի ծովն ամենայն ոք զգործն յորում կայր աստուածացոյց, որպէս պատճառ փրկութեան անձին իւրոյ եղեալ: Յայսմ ժամանակի եմուտ աստեղագիտութիւն ի Քաղդէացիս եւ զօձ պաշտելն սկաս ի պղընձի օձէն զոր պաշտեցին Իսրայէլացիքն եւ յառաջին օձն, իբր թէ բարի խրատ ետ մարդոյն, այլ Աստուած մախացաւ:

Իսկ Յեսու որդի Նաւեայ յետ Մովսէսի անցուցեալ զնոսա ընդ Յորդանան, առաջնորդէ յերկիրն աւետեաց ամս ԻԷ (27), կեցեալ ամս ՃԺ (110), վախճանի:

Զկնի Յեսուայ դատաւորք դատեցան առաջնորդութեամբ, որոց առաջին՝

Ա (1) Գոդոնիէլ ամս Խ (40): *Մ1898) Ի սորա աւուրս էր Յարգիացոցն, Փելաւտոնոսն բարուախաւս անասնոց եւ թռչնոց:*

Բ (2) Աւովդ ամս Ձ (80): *Մ1898) Ի ժամանակս Աւովդա շինեցաւ Իլիոն քաղաք յԻլոսէ, եւ Աքայիա յԱքիոյ, եւ յետոյ ի Պտղոմեանց, որ եւ կոչեցաւ*

Պտղոմիդայ: Աստ ասեն եղեալ թագաւոր ի Թեբաիս՝ Ապողոն երաժիշտ, որ զքարինսն շրջէր նուագաւք:

Գ (3) Բարակ եւ Դեբովրայ ամս Խ (40):

Դ (4) Գեդեովն ամս Խ (40):

Ե (5) Աբիմելեք ամս Գ (3):

Զ (6) Թովղայ ամս ԻԲ (22): *Մ1898) Ի Թովղա աւուրս շինեցաւ Տարսոն ի Կիլիկիայ, ի Բրիսոսէ որդւոյ Տանայի, եւ յետո ի Սենեքերիմայ, եւ կոչեցաւ Թարսին, որ է Տարսոն: Եւ աստ շինեցաւ Կարքեդոն եւ Իլոն առաւ: Աստ ասեն զերաժիշտն Փիլիմոն, որ արար պատկեր՝ շարժուն ոտիւք:*

Է (7) Յայիր ամս ԻԲ (22):

Ը (8) Յեփթայի ամս Զ (6): *Մ1898) Աստ շինեցաւ Կիւրինէ քաղաք եւ Սուր, զԽ (40) ամաւ յառաջ քան զտաճարն[8]:*

Թ (9) Եսեբոն ամս Է (7):

Յետ Եսեբոնի յԵբրայեցւոց աւրինակի գրի Դատաւոր:

Ժ (10) Իղոն ամս Ժ (10), որ չկա Եւթանասնիցն:

ԺԱ (11) Դաբդովն ամս Ը (8): Ի սորա երրորդ ամին Իլիոն[9] առաւ:

ԺԲ (12) Սամփսովն ամս Ի (20):

ԺԳ (13) Հեղի ամս Խ, յԵւթանասնիցն Ի (20) ամ ասէ:

ԺԴ (14) Սամուէլ եւ Սաւուղ ամս Խ (40):

Եւ արդ, վասն զի ըստ կարգի համարողութեանն Մատթէեան աւետարանին յԱբրահամէ իջանել ազգացն ցՅովսէփ եւ Մարիամ կոյս, ցուցանելով զազգն Սեմայ խոստացաք, զոր յորդւոցն Յակովբայ զՅուդայինն ծնունդսն էր պարտ էր շարագրել, զի յայնմ շառաւեղէ ծագեաց Տէրն: Բայց հարկ եղեւ վասն Մովսէսի եւ Յեսուայ եւ որք դատեցանն զժողովուրդն՝ մինչեւ ցԴաւիթ արքայ, զՂեւի յիշել, փոխանակ Յուդայի:

Արդ, սկսցուք ուստի արժանն է դարձեալ:

Յակովբ ամաց ՁԸ (88) ծնանի զՅուդայ ի Լիայ կնոջէ իւրմէ:

Յուդայ ամաց ԽԸ (48) ծնանի զՓարէս:

Փարէս ամաց ՃԹ (59) ծնանի զԵզրովն:

Եզրովն ամաց ՃԸ (58) ծնանի զԱրամ:

Արամ ամաց ԽԵ (45) ծնանի զԱմինադաբ:

Ամինադաբ ամս ԽԵ (45) ծնաւ զՆաասովն:

Եւ էր, ասէ, Ամինադաբ սպարապետ զաւրուն Յուդայի ի հանել Մովսէսի զորդիսն Իսրայէլի յԵգիպտոսէ: Եւ առնին յառաջին ամէն Աբրահամու մինչեւ ցելսն յԵգիպտոսէ ազգք Ը (8), ամք ՇԵ (505), յԱդամայ՝ ազգք ԻԸ (28), ամք ՎՈՁԹ (3689):

Նաասովն ամաց ԽԴ (44) ծնաւ զՍաղմովն: Եւ էր, ասէ, Նաասովն իշխան բիւրաւորացն Յուդայ յանապատին: Եւ եղեւ քոյր սորա Եղիսաբեթ՝ կին Եղիազարու, որդւոյ Ահարովնի, յորոց ծնաւ Փենեես եւ այսպէս խառնեցաւ ազգն

Յուդայ եւ Ղեւեայ խնամութեամբ:

Սաղմովն ամաց ԼԵ (35) ծնաւ զԲոոս: Եւ էր, ասէ, Սաղմովն իշխան ցեղին Յուդայ, յորժամ անցոյց ընդ Յորդանան զժողովուրդն Յեսու, եւ առ զՌահաբ իւր կին, զոր աւետարանիչն սուրբ Ռէքաբ կոչէ: Սա շինէ զԲեդղէէմ քաղաք ի գետինս Յուդայ:

Բոոս ամս ՃԸ (108) ծնանի զՈվբէթ: Առեալ Բոոս կին զՀռութ Մովաբացի Եպիփան՝ Ամանտացի ասէ զՀռութ, այսինքն՝ Ամովնացի:

Ովբէթ ամս Ճ (100) ծնանի զՅեսսէ:

Յեսսէ ամս ՃԼ (130) ծնանի զԴաւիթ:

Ա (1) Դաւիթ ամս ԾԸ (58) ծնանի զՍաղովմովն սա յԼ (30)երորդ ամի թագաւորեաց ամս Խ (40), կեցեալ ամս Հ (70):

Բ (2) Սաղովմոն ամս ԻԲ (22) ծնանի զՌոբովամ: Սա ի չորրորդ ամի թագաւորութեան իւրում կազմէ զհանդերձանս տաճարին: Ժողովին ի Մովսէսէ եւ յելիցն յԵգիպտոսէ, ցՍաղովմոն եւ ցշինուած տաճարին ամք ՆՁ (480), յԱդամայ՝ ՏՃԿԹ (4169): Սա յերկոտասան ամին թագաւորէ ամս Խ (40), կեցեալ ամս ԾԲ (52):

Յետ Սաղովմոնի յերկուս բաժանեցաւ թագաւորութիւնն Իսրայէլի ի Սամարիայ Ժ(10) ազգին տիրէ Յորոբովամ որդի Նաբատայ, որք կոչեցան թագաւորք Իսրայէլի եւ յԵրուսաղէմ թագաւորէ Ռոբովամ որդի Սաղովմոնի, որ կոչեցաւ թագաւոր Յուդա:

Գ (3) Ռոբովամ թագաւորէ յԵրուսաղէմ ամս ԺԷ (17):

Դ (4) Աբբիայ ամս Գ (3):

Ե (5) Ասայ ամս ԽԵ (45):

Զ (6) Յովսափատ ամս ԻԵ (25):

Է (7) Յովրամ ամս Ը (8):

Ը (8) Ոքոզիայ ամ Ա (1):

Թ (9) Գոդողիա մայրն ամս Է (7):

Ժ (10) Յովաս ամս Խ (40):

Զայս երիս թագաւորս՝ զՈքոզիայ, եւ զԳոդողիա մայրն, եւ զՅովաս եւ զԱմասիայ, ոչ գրեալ է յազգահամարսն աւետարանիչն, վասն լինելոյ դուստր եւ թոռունք Աքայաբու:

ԺԱ (11) Ամեսիայ ամս ԻԹ (29):

ԺԲ (12) Ազարիայ, որ եւ Ոզիա, ամս ԾԲ (52), ի ԽԹ (49) ամի Ոզիայ եղաւ առաջին ողոմպիադն:

ԺԳ (13) Յովաթամ ամս ԺԶ (16):

ԺԴ (14) Աքազ ամս ԺԶ (16), ի ԱԺ (11) ամի Աքազու գերեցաւ Իսրայէլ ի Սաղմանասարա:

ԺԵ (15) Եզեկիայ ամս, ԻԹ (29) յիններորդ ամի Եզեկիայի Ռոմէլոս զՀռոմ շինեաց: յԱբրահամէ ՌՄՁԳ (1283) ամք: *(Մ1898) Առ սովաւ էր՝ մարգարէն Միքիա Մորստացի: Սոյն ինքն Եզեկիա խորտակեաց զօձն պղնձի զոր արար Մովսէս, զի մինչեւ ցայն պաշտէին զնա որդիքն Իսրայէլի, եւ անուանէին զանուն նորա (եւ) Նէեսթան[10], յոլովք ի նոցանէ ուսան զօձապաշտութիւն:*

ԺԶ (16) Մանասէ ամս ՃԵ (55):

ԺԷ (17) Ամովս ամս ԺԷ (17):

ԺԸ (18) Յովսիայ ամս ԼԱ (31):

ԺԹ (19) Յովաքազ ամիսս Գ (3), զՅովաքազ գերի տարաւ Նեքաւով եւ թագաւորեցոյց զԵղիակիմ:

Ի (20) Եղիակիմ, որ եւ Յովակիմ, ամս ԺԲ (12): Ի սորա Ժ (10)երորդ ամին Նաբուքոդոնոսոր զՀրէաստան հնազանդեաց եւ հարկ առեալ յԵղիակիմայ գնաց:

ԻԱ (21) Յովակիմ, որ եւ Յեքոնիայ, ամիսս Գ (3): Դարձեալ ել Նաբուքոդոնոսոր եւ առ զՅովակիմ գերի:

ԻԲ (22) Մատթանի, որ եւ Սեդեկիայ, ամս ԺԱ (11):

ՅԲԺ (12)ան ամի Սեդեկիայ Նաբուքոդոնոսոր Քաղդեացի առ զԵրուսաղէմ եւ զտաճարն հրձիգ առնէ տեւեաց տաճարն զամս ՆԽԲ (442): Սկիզբն գերութեանն եղեւ ԽԷ (47) ողոմպիադաւն՝ ի չորրորդ ամէն, եւ ձգեցաւ ամս Հ (70): Յետ Ի (20) ամի գերութեանն վախճանի Նաբուքոդոնոսոր: Իսկ ըստ ազգաբանութան Մաթէի ծնանի Յեքոնիայ՝ զՍաղաթիէլ ամաց ՃԶ (56):

Զաւրաբաբէլ՝ ՃԶ (56): Աբիուդ՝ ԽԵ (45):

Եղիակիմ՝ Կ (60): Ազովր՝ ԼԹ (39):

Սադովկ՝ ԼԱ (31): Ի Սադովկա առաջին ամին Աղեքսանդր Մակեդովնացի:

Աքին՝ ԼԴ (34): Եղիուդ՝ Լ (30): Եղիազար՝ ԿԲ (62):

Մատթան՝ ԼԸ (38): Յակովբ՝ Կ (60): Յովսեփ՝ ՀԶ (76):

Յիսուս Քրիստոս ծնանի ի Բեդղեեմ Հրեաստանի: Եւ առնին ի նորոգմանէ տաճարին մինչեւ ցծնունդն Քրիստոսի ամք ՇԺԸ (518): Ի Սաղովմովնէ եւ յառաջին շինութենէն յերկրորդն ամք ՇԺԲ (512) եւ յելիցն ի Սաղովմոն ամք ՆՁ (480) եւ յԱբրահամէ յելքն ամք ՇԵ (505), եւ ի ջրհեղեղէն յԱբրահամ ամք ՁԽԲ (942), եւ յԱդամայ ի ջրհեղեղն ամք ՍՄԽԲ (2242) եւ միանգամայն յԱդամայ ի ծնունդն Քրիստոսի ամք ՐԵՂԸ՝ (5198), ըստ Եւթանասնիցն:

Դարձեալ գրեմք եւ զթագաւորսն Իսրայէլի եւ զժամանակս նոցա: Յետ մահուանն Սաղովմովնի, որպէս եւ ասացաւ վերագոյն, ի սկզբան թագաւորութեանն Ռոբովամու, յառաջին ամին, թագաւորէ ի Սամարիայ ի վերայ Ժ (10) ազգին՝

Ա (1) Յերոբովամ որդի Նաբատայ ամս ԻԲ (22): Եւ որպէս մարգարէանային յաւուրս Դաւթի՝ Գադ, Նաթան, Ասափ, նոյնպէս եւ յաւուրս Սաղովմովնի՝ Սա-

դովկ, Աքաիայ Սելոնացի, Սամեայ, նոյնպէս եւ յաւուրս նորա մարգարէանային եւ յաւուրս որդւոյ սորա Նաբատայ՝ Աքիայ, Սամեայ եւ որ ի Սամարիայ, ի վերայ սեղանոյն՝ զՅովա, Յովէլ, Ազարիայ, որ եւ Ադդով, Անանիայ:

Բ (2) Նաբատ ամս Բ (2):

Գ (3) Բաաս ամս ԻԴ (24):

Դ (4) Էղա ամս Բ (2):

Ե (5) Զամբրի աւուրս է (7):

Զ (6) Ամբրի ամս ԺԲ (12):

Է (7) Աքայաբ ամս ԻԲ (12):

Առ սովաւ մարգարէք Աբիդու, Եղիայ, Յեսու, Ոզիէլ, Միքայէլ, իսկ սուտ մարգարէք՝ Սեդեկիայ, Եղիեզեր:

Ը (8) Ոքոզիայ ամս Բ (2):

Թ (9) Յովրամ ամս ԺԲ (12): Դարձեալ մարգարէանայ Եղիայ եւ Եղիսեէ, յետքներորդ ամի Յովրամայ վերացաւ Եղիայ:

Ժ (10) Յէու ամս ԻԸ (28): Զսպառնալիս բարկութեան առ Աքայաբ եւ առ Եզաբէլ կին նորա՝ Յէու հան ի գլուխ, զի կոտորեաց զՀ (70) որդիսն Աքայաբու, եւ զՍիդովնացին յեզաբէլ եւ Ն (400) մարգարէ զգարշելեացն, եւ էր մարգարէ յԻսրայէղի Ազարիայ:

ԺԱ (11) Յովաքազ ամս ԺԷ (17): Ի սորա աւուրս Յովաս արքայ Յուդայ սպանանէ զԱզարիայ, եւ Եղիսէ մեռաւ:

ԺԲ (12) Յովաս ամս ԺԶ (16):

ԺԳ (13) Յորոբովամ ամս ԽԱ (41): Ի սորա աւուրս մարգարէանային, Ովսէէ, Ամովս, Եսայի, Յովնան:

ԺԴ (14) Զաքարիայ ամիսս Զ (6):

ԺԵ (15) Սեղղում աւուրս ԽԵ (45):

ԺԶ (17) Մանայէմ ամս Ժ (10):

ԺԷ (17) Փակեէ ամս Ժ (10):

Ի յիններորդ ամին Փակեի եդաւ առաջին ողոմպիադն:

ԺԸ (18) Փակեէ ամս Ի (20):

ԺԹ (19) Ովսեէ ամս Թ (9):

Առ Ովսէի Ժ (10) ցեղքն գերեցան ի Սաղմանասարայ, եւ բարձաւ թագաւորութիւնն Իսրայէղի, որք ի Սամարիայ, ի ԱԺ (11)ան ամի Աքազու տեւեալ ամս ՄԾ (250): Ուստի ցաւեր տաճարին յերուսաղէմ ի Նաբուքոդոնոսորայ, առ Սեդեկեաւ լինին ամք ՃԾԶ (156)՝ ի Մնացորդաց:

Յազգէ Ղեւեայ քահանայք ցգերութիւնն Յուդա. Ահարովն, Եղիազար, Փենէես, Աբիովտ, Բորքի, Ոզիայ, Զարեա, Մարիովթ, Ամարիայ, Աքիտովփ, Սադովկ, Աքիամաս, Ազարիա, Յովնան, Ազարիայ, Ամարիա, Աքիտովփ, Սադովկ, Եղում, Եղքիայ, զԱզարիայ, Զարեի, Յովսեդեկ, որ գնաց ի Բաբէլովն ի ժամա-

նակի գերութեանն Յուդայ ի Նաբուքոդոնոսորայ: Այսոքիկ գրեալ է ի գիրս Մնացորդաց:

Եւ արդ, որպէս յԳԺ (13)ան ամի Յովսիայ արքայի Յուդա սկիզբն արար մարգարէութեանն Երեմիայ, եւ դարձեալ ԻԲ (22) ամի նորուն Սոփոնիայ եւ Երեմիայ մարգարէանային: Եւ դարձեալ ի չորրորդ ամին Սեդեկիայ՝ Բարուք եւ Երեմիա, եւ որպէս յԸ (8)երորդ ամի գերութեանն՝ Դանիէլ եւ Եզեկիէլ ի Բաբիլովնի: Եւ կամ յԼԸ (38) ամին Անգէոս եւ Զաքարիայ, եւ ի վերջոյ ի ԿՁ (66) ամին նոյնք՝ Անգէ եւ Զաքարիայ, եւ Մաղաքիաս: Յայլում պատմութեան ասի մարգարէանալ ի սոսինս Նաւումայ, Ամբակումայ, Մաղաքիայ, Դանիէլի:

Արդ այսպէս որպէս ի գերութեանն տեսանողս եւ մարգարէս տուեալ, նոյնպէս եւ յարձակմանն յետ Հ (70) ամացն առաջնորդէր Զաւրաբաբէլ, որ նորոգէր զտաճարն եւ զքաղաքն եւ քահանայապետաւք վարէին մինչեւ ցաւծեալն առաջնորդ: Յորում կատարեցաւ մարգարէութիւն Նահապետին Յակովբայ, զի ասէր՝ «մի պակասեսցէ իշխան Յուդայ եւ մի պետ յերանաց նորա, մինչեւ եկեսցէ այն որ իւրն է իշխանութիւնե»[11]:

Արդ, էր ընդ Զաւրաբաբելի քահանայապետ Յեսու Յովսեդեկի որդի Յակիմաս, որ եւ Յովակիմ, որդի Յեսուայ Եղարոս, որ եւ Եսէասիբ, որդի Յակիմայ:

Էր եւ Եզր քահանայ եւ դպիր աւրինացն սրբոց եւ վարդապետ երեւելի նոցա, որ ի Բաբիլովնէ ի Հրէաստան ելանէր:

Յովդայ, որդի Ասիբայ: Առ սովաւ Նեեմի՝ տակառապետ Արտաշեսի, որ եւ էր եբրայեցի, ելանէ ի Բաբիլովնէ յերուսաղէմ եւ կանգնէ զպարիսպն:

Յոհաննէս որդի Յովդայի:

Յատդուս որդի Յովհաննու: Առ սովաւ Աղեքսանդր Մակեդովնացի եկեալ յերուսաղէմ, Աստուծոյ երկիր եպագ:

Ոնիայ՝ որդի Յատդեա: Սիմովն որ արդարն կոչեցաւ:

Եղիազար՝ եղբայր Սիմովնի: Առ որով եւթանասունքն թարգմանեցին զեբրայեցի աստուածեղեն գիրսս ի Յոյն բարբառ՝ հրամանաւ Պտղոմեա:

Մանասէ՝ հաւրեղբայր Եղիազարու:

Ոնիայ՝ որդի Սիմովնի արդարւոյ:

Սիմովն՝ որդի Ոնեա: Առ սովաւ Յեսու Սիրաքայ:

Ոնիայ՝ որդի Սիմովնի: Իսկ ետ ԼԳ (33) ամաց Անտիոքոս Եպիփանէսն երթեալ ի Հրէաստան, զքահանայապետութիւնն Հրէից Յեսովայ, որ եւ Յասոնն կոչէր, տայր եղբաւր Ոնիայ եւ ապա ի նմանէ հանեալ տայր Ոնիայ, որ եւ Մենեղաւոսն կոչէր: Եւ յետ Ե (5) ամի երթեալ յԵուսաղէմ, կողոպտէր զտաճարն, եւ զԱրամազդայ ողոմպիական զպատկերն կանգնէր, եւ ի Շամրին՝ զաւտարասիրին Արամազդայ:

Առ այնու ժամանակաւ Մատաթիայ ոմն ի քահանայիցն, որդի Ասամովնեա,

ի Մովդէիմ գեղջէ, հանդերձ որդւովքն մարտնչէր ընդ զաւրսն Անտիոքայ, յորում եւ Յուդայ որդի նորա հալածէր զնոսա, եւ զտաճարն սրբէր եւ զհայրենի կրաւնսն նորոգէր, որ զերիս ամս եղծեալ էր: Իսկ յետ Մենեղեա քահանայապետի Հրէից՝ Աղկիմոս, որ եւ Ակիմոս, որ չէր յազգէ քահանայիցն, յաջորդէ զքահանայութիւնն: Վասն որոյ Ոնիայ քահանայի որդի երթայ Եգիպտոս, քաղաք շինէ զԱմովպողիս, եւ ի նմա տաճար՝ նման Երուսաղէմին: Իսկ Աղկիմոս գրգռեալ ընդ Յուդայի, եւ յետ սակաւ աւուրց սատակի յԱստուծոյ: Եւ ամենեքին Յուդայի տային զքահանայութիւնն:

Յուդայ, որ եւ Մակաբէ, ամս Գ (3), ի ճԾԵ (155) ողոմպիադին:

Յովնաթան, որ եւ Ափուք, ամս ԺԹ (19):

Սիմովն, որ եւ Թարոսի, ամս Ը (8):

Հիւրկանոս, որ եւ Յովնաթէս, ամս ԻՁ (26):

Արիստաբուլոս ամ մի: Արիստաբոլուս ի վերայ քահանայութեան թագ եդ:

Յաննէոս, որ եւ Աղեքսանդրոս, ամս ԻԵ (25):

Աղեքսանդրայ կին Աղեքսանդրու ամս Թ (9): Այս Աղեքսանդրայ Սաղինա կոչեցաւ:

Հիւրկանոս ամս ԼԴ (34), զի Արիստաբուլոս եւ Հիւրկանոս՝ որդիք Աղեքսանդրու, ընդ միմեանս կռուեին:

Պոմպիս Հռովմայեցի եկեալ, զԱրիստաբուլոս կապեալ, ընդ իւր տարաւ, եւ զՀիւրկանոս քահանայապետ հաստատէր, որ զկնի ԼԴ (34) ամաց գերեցաւ ի Պարթեւաց: Եւ վախճանի Հրեից թագաւորութիւնն, եւ աւծեալքն առաջնորդք, զոր Դանիէլն ասաց. «զի աւծեալ առաջնորդք քահանայապետքն էին, որք յետ դարձի գերութեանն առաջնորդեին ժողովրդեանն»:

Սկսեալք առ Դարեհիւ՝ ի ԿԵ (65) ողոմպիադին, դադարեցին ի ճՁՁ (186) ողոմպիադին, ըստ Դանիելեան մարգարեութեանն նշանակաւ է (7)երորդաց, զի յետ Հիւրկանեայ ո՛չ եւս ի քահանայական ազգէն կային, այլ աննշանք, ամսաւրեայք եւ տարեւորք: Եւ Հերովդէս այլազգի տիրէր, յորոյ ԼԲ (32) ամի ծնանի Տէր մեր Յիսուս Քրիստոս, որում փառք յաւիտեանս ամէն:

Արդ, ըստ յառաջադրին պայմանի զազգն Սեմա նշանակեցաք մինչեւ ցգալուստն Քրիստոսի, աւժանդակեալք յԱստուածաշունչ Գրոց: Ժամ է, արդ, զՔամայն շարագրել, ո՛չ այնպէս որպէս զՍեմայն՝ որդի ի հաւրէ պայազատել, այլ զթիւս ամաց եւ զանուանս թագաւորաց, եւ թե որ ազգ հարստացեալ, մի զմիով ելեալ հանեին առ մարմնանալ Փրկչին: Եւ յորում տեղւոջ մնաց բանն, յորժամ զՔամայն գրեցաք զսերունդ, որչափ ուսաք ի Գրոց Սրբոց, անտի առցուք ի ծեռս գրել ի ստոյգ մատենից՝ ըստ Եւսեբեայ ժամանակական կանոնացն եւ Մովսէսի Հայոց վիպագրի, որ ասէ այսպէս՝ զԲելայ, առ որով նախնին մեր Հայկ: Բազումք բազում ինչ այլ ընդ այլոյ պատմեցին, բայց ես ասեմ զԿռոնոսդ անուն եւ զԲել, Նեբրովթ լեալ, որպէս եւ Եգիպտացիքն թուեն հաւա-

սար Մովսէսի, այսպէս:

Եփեստոս՝ արեգակն, Կռոնոս, որ է Քամ, Քուշ, Նեբրովթ, թողեալ զՄեստրայիմ, զի առաջին իւրեանց ասեն լեալ մարդ զեփեստոս: Հաւելի է ի սմին Բելայ զառաջիկայ շարագրութիւնս:

(Մ1898) Սա շինեաց զՈւռհայ, զոր յետոյ քակեաց Սենեքերիմ, եւ շինեաց Սելեւկիոս, որեւ զՍելեւկիա շինեաց: Յետ Խ (40) ամի մահուանն Բէլայ՝ որ է Նեբրովթ, ասեն թագաւորեալ Կամբիրոս Քաղդէացի: Սա շինեաց զՇաւշ քաղաք, որ է Ասպահան, սա եգիտ զներկուածս, եւ զնկարս ի կտաւսն. սա երեք աչք ունէր, եւ եղջիւր եւ էր հսկայ, եւ սա շինեաց չափս եւ կանգունս եւ կշիռս, եւ եհան զՆեբրովթեանսն:

Ա (1) Բել ամենայն Ասիաստանի թագաւորէ, բաց ի Հնդկաց, ամս ԿԲ (62):

Բ (2) Նինոս նոյնպէս յետ Բելայ ամս ԾԲ (52), ի ԽԳ (43) ամին Նինոսէ ծնանի Թարայ զԱբրահամ:

Գ (3) Շամիրամ կին Նինոսի ամս ԽԲ (42):

Դ (4) Զամես որ եւ Նինուաս ամս ԼԲ (32):

Ե (5) Արիոս ամս Լ (30):

Զ (6) Արաղիոս ամս Խ (40):

Է (7) Քսերքէս, որ եւ Բաղէոս, ամս Լ (30):

Ը (8) Արմամիթրէս ամս ԼԸ (38):

Թ (9) Բեղոքոս ամս ԼԵ (35):

Ժ (10) Բաղէոս ամս ԺԲ (12):

ԺԱ (11) Աղտադաս ամս ԼԲ (32):

ԺԲ (12) Մամիղոս ամս Լ (30, ի սորա ԺԴ (14) ամին վախճանի Յովսէփ:

ԺԳ (13) Մամիղոս միւս ամս Լ (30):

ԺԴ (14) Սպարեթոս ամս Խ (40):

ԺԵ (15) Մանքաղէոս ամս Լ (30):

ԺԶ (16) Սփերոս ամս Ի (20): Ի սորա յերրորդ ամին նախ Կեկրոպս թագաւորեաց Աթենացւոցն:

ԺԷ (17) Ասկատադէս ի սորա ութերորդ ամին Մովսէս լեալ Զ (80)ամեա եւ հանէ զժողովուրդն յեգիպտոսէ:

ԺԸ (18) Ամինտէս ամս ԽԵ (45):

ԺԹ (19) Բեղոքոս ամս ԻԵ:

Ի (20) Բաղեպարէս ամս Լ (30):

ԻԱ (21) Ղամբրիդէս ամս ԼԲ (32):

ԻԲ (22) Պաննիաս ամս ԽԵ (45):

ԻԳ (23) Սովսարմոս ամս ԺԹ (19):

ԻԴ (24) Զովսարէս ամս Ի (20):

ԻԵ (25) Ղամբերէս ամս Լ (30):

ԻԶ (26) Միթրէոս ամս ԻԷ (27):

ԻԷ (27) Տաւտանէս ամս ԼԱ (31): Ի ԻԵ (25) ամին Տաւտանեա ելիոն քաղաք առաւ:

ԻԸ (28) Տեւտէոս ամս Խ (40):

ԻԹ (29) Ոթինեւս ամս Լ (30):

Լ (30) Դերկիւղղոս ամս Խ (40):

ԼԱ (31) Եւպաղղէս ամս ԼԸ (38): Սորա ԼԳ (33) ամն, չորրորդ ամն Սաղովմոնի, եւ շինել տաճարին:

ԼԲ (32) Ղաւոսթենէս ամս ԽԵ (45): Հրէից ազգն յերկուս բաժանի:

ԼԳ (33) Պերտիադէս ամս Լ (30):

ԼԴ (34) Ոփրատէոս ամս Ի (20):

ԼԵ (35) Ոփրատանէս ամս Ծ (50):

ԼԶ (36) Ակրապաղէս ամս Խ (40):

ԼԷ (37) Թոնոս Կոնկողերոս, որ կոչի յունարէն Սարդանապալլոս ամս Ի (20): *(Մ1898) Ի սորա ժամանակս գնաց Յունան քարոզ ի Նինուէի եւ սա է, որ զղջացաւ եւ դարձեւ առ Տէր:*

Այս Սարդանապաղղոս երեսներորդ եւթներորդ էր ի Բելա, Ասորեստանեաց վերջին լեալ թագաւոր, թուլամորթ եւ բարեկեաց, յուլութեամբ անցոյց, քան որ յառաջ էին քան զինքն, վասն որոյ եւ Վարբակէս ոմն՝ Մեդացի գաւառաւ, առաքինի արութեամբ եւ լաւ սրտին քաջութեամբ, զաւրավար էր Մարաց, մի յայնցանէ, որք ամի-ամի երթային ի Նինոս քաղաք՝ ի զաւրավարութիւն: Սա ծանուցեալ զանմարդի բարս նորա, խտացուցանէր առատութեամբ բարեկամս իւր, մանաւանդ զսպարապետն Բաբիլացւոց զԲելեսուս, որով տուեալ ճակատ, ի պարտութիւն մատնեալ զՍարդանապաղղոս: Եւ նա մտեալ յապարանս իւր, զանձն հրոյ ճարակ տուեալ մեռանի: Իսկ Վարբակէս զԲելեսիւս Բաբիլովնի արքայ կացուցեալ, որպէս զմերն Պարոյր պսակեալ, վասն աւգնականութեան գտեալ եւ ի նմանէ եւս, ինքն ի Մարս փոխեաց զիշխանութիւնն Ասորեստանեաց: Եւ էր անիշխանութիւն մինչեւ ցԴէոկէս Մարաց թագաւոր: Իսկ ի միջին ժամանակին առանձին հարստանային Քաղդեացիք, որոց ուրոյն իմն գրին ժամանակացն յաջորդութիւնք: Եւ այլ ազգք ընդ իւրաքանչիւր թագաւորաւք են:

Եւ արդ, աստանաւր գրել պարտ է զԲաբիլացւոց թագաւորս:

Ա (1) Փուայ ամս ԺԶ (16): Ի սորա ԶԺ (16)ան ամին եդաւ առաջին ողոմպիադն:

Բ (2) Թագղաթփաղսար ամս ԻԷ (27): Սա յերրորդ ամին ել ի Հրէաստան, եւ զմեծ մասն գերեաց:

Գ (3) Սաղմանասար Ասորեստանեայց ամս ԺԶ (26): Եւ սա յերրորդ ամին իւր եւ յութերորդ ողոմպիադին գերեաց զտասն ցեղսն Իսրայէղի, եւ եբարձ զթագաւորութիւնն որ ի Սամարիայ:

Դ (4) Սենեքերիմ Ասորեստանեայց ամս ԺԸ (18): Սա ել ի վերայ Երուսաղէմի, եւ զքաղաքսն Յուդայ պաշարեաց, ուստի մինչեւ ի Նաբուքոդոնոսոր թուեն Քաղդեացւոց վիպագիրք ամս ՁԸ (88) եւ ասեն յետ Սենեքերիմայ՝

Ե (5) Ասորդան որդի նորա ամս Ը (8):

Զ (6) Ասամովգէս ամս ԻԱ (21):

Է (7) Եւ նորին եղբայր ամս ԻԱ (21):

Ը (8) Եւ ապա Նաբուպաղսար ամս Ժ (10):

Թ (9) Մարուդաք Բաղդան ամս Ժ (10):

Ժ (10) Եւ ապա Նաբուքոդոնոսոր ամս ԽԳ(43)՝ ի ԽԲ (42) ողոմպիադին:

Սա ի Ժ (10)երորդ ամի Եղիակիմայ եւ իւրն, հնազանդեաց զՅրեայս եւ զմեծ մասն ի գերութիւն տարաւ, զԴանիէլ եւ զերեք մանկունքն յետ Գ (3) ամի, զի այլ եկն եւ տարաւ գերի եւ զՅովակիմ: Իսկ ի ԻԳ (23) ամի իւր առ զԵրուսաղէմ: Եւ յետ Ե (5) ամսոց այրեաց Նաբուզարդան դահճապետ զտաճարն: Ի Ի (20) ամի գերութեանն վախճանի Նաբուքոդոնոսոր եւ յաջորդէ ի տեղի նորա որդի նորա, որ է Բաղտասար:

ԺԱ (11) Եւ Իղմարուդաք ամս Բ (2):

ԺԲ (12) Յետ որոյ Աստիադէս ամ մի: Յորս ետես երեւեալ յորմն գրեալ զգիրն, զոր մեկնեաց Դանիէլ:

ԺԳ (13) Դարեհ Մար ամս Դ (4):

ԺԴ (14) Դարեհ Արշաւիր ամս Գ (3): Եւ ապա բարձեալ Բաբիլացւոցն իշխանութիւն:

Բայց մեք զՄարացն կարգեսցուք զթագաւորս յետ Սարդանապաղեա թագաւորէ առաջին՝

Ա (1) Վարբակէս ամս ԻԸ (28):

Բ (2) Սովսարմոս ամս Լ (30):

Գ (3) Մամիկար ամս Խ (40:

Դ (4) Կարդիկէաս ամս ԺԳ (13):

Ե (5) Դիոկէս ամս ԾԴ (54): Սա զԵկբատանայ շինեաց:

Զ (6) Փրաւորտէս ամս ԻԴ (24):

Է (7) Կւաքսարէս ամս ԼԲ (32):

Ը (8) Աժդահակ ամս ԼԸ (38): Զսա սպանանէ Տիգրան Հայկազնի աջակից Կիւրոսի Պարսից: Եւսեբի եւ այլ պատմագիրք ասեն, թե միայն Կիւրոս ընկէց զԱժդահակ, եւ եբարձ զՄարաց թագաւորութիւնն, բայց Մովսէս՝ Տիգրանայ ասէ սպանեալ զԱժդահակ, եւ ճշմարտէ յոլովակի իրաւք տեսլեամբ երազոյն, եւ խորամանկ կեղծաւորութեամբ առնուլ զքոյրն Տիգրանայ, եւ նմա յայտնել զխորութեան սրտին խորհուրդն, զոր իմացեալ Տիգրանայ՝ զոր ետես յանուրջս, նա ի տունջեան կատարեաց, այլ թեեւ զԿիւրոս ասեն, չէ անդէպ, զի ի միում գոլով ժամանակի, եւ Տիգրան գործակալ եւ նիզակակից Կիւրոսի՝ զնո-

որա կատարէ զիրամանս:

Բայց յայսմ վայրի կամիմ եւ զԼիւդացւոց թագաւորութենէն գրել, զի Բժ (12)ան ամի Սովսարմիւսեայ Մարաց թագաւորին կարգեցաւ առաջին ողոմպիադն, եւ ի նմին թագաւորէ Լիւդացւոց առաջին՝

Ա (1) Արդւսոս Աղիատտայ ամս ԼԶ (36):

Բ (2) Աղիատտէս ամս ԺԴ (14):

Գ (3) Մեղէս ամս ԺԲ (12):

Դ (4) Կանդաւղէս ամս Ժէ (17): Զայսմ զԿանդաւղեայ վէպ համբաւէ Հերոդոտոս, թէ տռփեալ յիւր զուգակիցն, կարծեր քան զամենայն կին գեղեցիկ գոլով նմա, եւ մերկ ի հանդերձէն՝ գաղտ ցուցանէր զնա Գիգեա, զոր իմացեալ զայն ամուսնոյն՝ ցասմամբ զեղոյր ընդ առականսն, տայր սպանանել զԿենտուղայ, կին լինելով ինքն Գիգեայ[12]:

Ե (5) Գիգէս ամս ԼԶ (36):

Զ (6) Արդւս ամս ԼԸ (38):

Է (7) Սարդիարտէս ամս ԺԵ (15):

Ը (8) Աղիատտէս ամս ԽԹ (49):

Թ (9) Կրոյիսոս ամս ԺԵ, զոր ի ԴԺ (14)ան ամի Կիւրոսի ասի վախճանեալ ի նմանէ, եւ վճարիլ թագաւորութեանն Լիդացւոց: Իսկ Մովսէս Հայոց պատմագիր՝ Արտաշեսի Պարթեւի ասէ կալեալ զԿրոյիսոս, եւ բազում վկայս ի մէջ ածէ, զոր իւրում գիրսն գտցես:

Արդ, ըստ այս գունի պատմութեանս՝ զԲաբիլացւոցն եւ զՄարացն եւ զԼիւդացւոցն բարձեալ զիշխանութիւն, թագաւորէ՝

Ա (1) Կիւրոս ամս Լ (30): Սա յառաջին ամին իւրոյ արձակեաց զգերի ազգին Հրէից Ե (5) բիւրս, որք ելեալ յԵրուսաղէմ, զսեղանն կանգնեցին եւ հիմունս արկին տաճարին: Եւ վասն շուրջակայ ազգացն անկատար մնաց գործն մինչեւ ցԴարեհ Վշտասպեա: Տմւրիս բամբիշն Մասագեցւոց սպան զԿիւրոս:

Բ (2) Կամբիւսէս ամս Թ (9):

Գ (3) Մոգքն երկու եղբարք ամիսս Ը (8):

Դ (4) Դարեհ ուստր Վշտասպեա ամս ԼԶ (36): Ի սորա երկրորդ ամին շինէ Զաւրաբաբել զտաճարն, եւ կատարի ի Դ (4) ամս՝ ի ԿԵ (65) ողոմպիադին:

Ե (5) Քսերքսէս Դարեհի ամս ԻԱ (21):

Զ (6) Արտաւան ամիսս Է (7):

Է (7) Արտաշէս Երկայնաբազուկ ամս Խ (40): ԶԻսթեր ոմանք առ սովաւ ասեն, բայց ես չառնում յանձն, ասաց Եւսեբի, զի Եզրի գիրքն որ առ սովաւ էին, չյիշէ ինչ անդ:

Ը (8) Քսերքսէս ամիսս Բ (2):

Թ (9) Սոկդիանոս ամիսս է (7):
Ժ (10) Դարեհ հարճորդի ամս ԺԹ (19) ի ՁԹ (89) ողոմպիադն:
ԺԱ (11) Արտաշէս ուշեղ ամս Խ (40): Առ սովաւ Իսքեր:
ԺԲ (12) Արտաշէս, որ եւ Ովքոս, ամս ԻՁ (26):
ԺԳ (13) Արտաշէս Ովքայ ամս Դ (4):
ԺԴ (14) Դարեհ Արշամա ամս Ձ (6): Բաւեալք՝ ամս ՄԼ (230):
Ապա Աղեքսանդր Մակեդովնացի թագաւորէ յառաջին ամի ՃԺԱ (111) ողոմպիադին, եւ յէ (7-րդ) ամի իւր զԲաբիլովն կալաւ, զԴարեհ սպան եւ եբարձ զՊարսից տերութիւնն:

Իսկ աստանաւր վասն զԱղեքսանդր յիշելոյ, կամիմք ի սկզբանէ զթագաւորսն Մակեդովնացւոց զգրի հարկանել, զի Աղեքսանդրոս ո՛չ առաջին, այլ ԻԴ (24) էր, իսկ առաջին թագաւոր Մակեդոնացւոց եղեւ:
Ա (1) Կարանաս ամս ԻԲ (22):
Բ (2) Կոինոս ամս ԺԲ (12):
Գ (3) Տիւրիմաս ամս ԼԸ (38):
Դ (4) Պերդիկաս ամս ԾԱ (51):
Ե (5) Արգեղոս ամս ԼԸ (38):
Զ (6) Փիլիպպոս ամս ԼԸ (38):
Է (7) Այերայոս ամս ԻՁ (26):
Ը (8) Աղկետաս ամս ԻԹ (29):
Թ (9) Ամինտաս ամս Ծ (50):
Ժ (10) Աղեքսանդր ամս ԽԴ (44):
ԺԱ (11) Պերդեկոս ամս ԻԸ (28):
ԺԲ (12) Արքեղայոս ամս ԻԴ (24):
ԺԳ (13) Որեստես ամս Գ (3):
ԺԴ (14) Արքեղաւոս ամս Գ (3):
ԺԵ (15) Ամինտաս ամ մի:
ԺԶ (16) Պաւսանիաս ամ մի:
ԺԷ (17) Ամինտաս ամս Զ (6):
ԺԸ (18) Արգէոս ամս Բ (2):
ԺԹ (19) Ամինտաս ամս ԺԸ (18):
Ի (20) Աղեքսանդրոս ամ մի:
ԻԱ (21) Պտղոմէոս ամս Դ (4):
ԻԲ (22) Պերդիկաս ամս, Զ (6):
ԻԳ (23) Փիլիպպոս ամս ԻՁ (26):
ԻԴ (24) Աղեքսանդրոս Փիլիպեան ամս ԺԲ (12) եւ ամիսս Զ (6): Սա տիեզերակալեաց՝ ընկեցեալ զբազում թագաւորս, կեցեալ ամս ԼԲ (32), վախճանի ի Բաբիլովն: Եւ ապա ի բազումս անկեալ իշխանութեանն: Թագաւորէ նմին Մա-

կեդոնացւոցն Փիլիպպոս, որ եւ Արիդեոս: Եւ յԱղեքսանդր Եգիպտոսի՝ Պտղոմէոս Ղագոսի: Եւ յետ Ե (5) ամի Ասիացւոց թագաւորէ Անտիգոնոս: Եւ յետ ԺԲ (12) ամի մահուանն Աղեքսանդրի, Ասորւոց եւ Բաբիլովնի եւ վերնոյ կողմանցն թագաւորեաց Սելեւկիոս Նիկանովր:

Իսկ վասն յիշելոյ զսոսա յայսմ վայրի կամիմք եւ զանուանս իւրաքանչիւրոցն գրով ցուցանել: Յետ Աղէքսանդրի թագաւորէ Մակեդոնացւոց առանձինն՝

ԻԵ (25) Փիլիպպոս, որ եւ Արիդէոս ամս է (7):

ԻԶ (26) Կասանդրոս ամս, ԺԹ (19):

ԻԷ (27) Որդիք սորա ամս Դ (4):

ԻԸ (28) Դեմետրիոս ամս Ե (5):

ԻԹ (29) Պիւռոս ամիսս է (7):

Լ (30) Լիսիմարքոս ամս Ե (5) եւ ամիսս է (7):

ԼԱ (31) Պտղոմէոս Կերաւնոս ամ մի եւ ամիսս Թ (9):

ԼԲ (32) Մեղեագրոս ամիսս Բ (2):

ԼԳ (33) Անտիպատրոս աւուրս ԽԵ (45):

ԼԴ (34) Սոսթենես ամս Բ (2):

ԼԵ (35) Անտիգոնոս Գոնատաս ամս ԼԶ (36):

ԼԶ (36) Դեմետրոս ամս Ժ (10):

ԼԷ (37) Անտիգոնոս ամս ԺԵ (15):

ԼԸ (38) Փիղղիպոս ամս ԽԲ (42):

ԼԹ (39) Պերսեւս ամս Ժ (10):

Յետ սպանմանն Պերսեւսի, Հռովմայեցիքն զՄակեդոնացիսն ազատս արարին, ինքնաւրէն աղիկամիս թողին ամս ԺԴ (14):

Խ (40) Սուտ Փիղիպպոսն ամ մի: Բովանդակ ամս ՈԽԷ 647):

Ժամանակ է եւ զայլոցն գծագրել:

Յետ Ե (5), ամի մահուանն Աղեքսանդրի, թագաւորէ Ասիացւոց՝

Ա (1) Անտիգոնոս ամս ԺԸ (18):

Բ (2) Դեմետրիոս Պողիորկետես ամս ԺԷ (17): Սոքա այսքան: Ընդ երկոսեանն ամս ԼԵ (35):

Կամիմ եւ զոր յետ սոցայս շարակարգել: Ասորւոց եւ Բաբիլովնի եւ վերնոյ կողմանցն՝ յետ ԲԺ (12)ան ամի մահուանն Աղեքսանդրի, թագաւորէ՝

Ա (1) Սելեւկոս Նիկանովր ամս ԼԸ (38):

Բ (2) Անտիոքոս Սովտէր ամս ԺԹ (19):

Գ (3) Անտիոքոս Թեոս ամս ԺԵ (15): Ի սորա ԱԺ (11)ան ամի Պարթեւք ի Մակեդոնացւոց ապստամբեցին: Եւ ի նոցանէ թագաւորէ Արշակ, ուստի Արշակունիքն:

Դ (4) Սելեւկոս Կաղինիկոս ամս Ի (20):

Ե (5) Սելեւկոս Կերունոս ամս Գ (3):

Զ (6) Անտիոքոս մեծն ամս ԼԶ (36):

Է (7) Սելեւկոս ամս ԺԲ (12): Առ սովաւ Մակաբաէացւոց երկրորդ պատմութիւնն:

Ը (8) Անտիոքոս Եպիփանէս ամս ԺԱ (11): Սա զՀրեայս նախ բռնադատէր կռապաշտել անհնարին վշտաւք, զոր ուսցիս ի գրոցն Մակաբէացւոց:

Թ (9) Անտիոքոս Եւպատովր ամս Բ (2):

Ժ (10) Դեմետրիոս Սովտէր ամս ԺԲ (12): Ի սորա յերրորդ ամի Յուդայ Մակաբէ զաւրավար Հրեից:

ԺԱ (11) Աղեքսանդրոս ամս Թ (9) եւ ամիսս Ժ (10):

ԺԲ (12) Դեմետրիոս ամս Գ (3):

ԺԳ(13) Անտիոքոս Սիդէացի ամս Թ (9): Արշակ Պարթեւ զԱնտիոքոս սպանանէ:

ԺԴ (14) Դեմետրիոս միւսանգամ ամս Դ (4):

ԺԵ (15) Անտիոքոս Գրէպոս ամս ԺԲ (12):

ԺԶ (16) Անտիոքոս Կւզիկենոս ամս ԺԸ (18):

ԺԷ (17) Փիլիպպոս ամս Բ (2): Ասորոց իշխանութիւն ցսոսա հասեալ, վախճանէր ի ՃՀԲ (172) ողոմպիադին:

Գրեմք եւ զՊտղոմեացն ժամանակսն:

Զկնի մահուանն Աղեքսանդրի թագաւորէ Եգիպտոսի, որպէս ասացաւ, յԱղեքսանդր՝

Ա (1) Պտղոմէոս Ղագիոս ամս Խ (40):

Բ (2) Պտղոմէոս Փիլադելփոս ամս ԼԸ (38): Սա զՀրէից գիրսն ի Յոյն լեզու ետ թարգմանել:

Գ (3) Պտղոմէոս Եւերգետես ամս ԻԶ (26):

Դ (4) Պտղոմէոս Փիլոպատովր ամս ԺԷ (17):

Ե (5) Պտղոմէոս Եպիփանէս ամս ԻԴ (24):

Զ (6) Պտղոմէոս Փիլոմետովր ամս ԼԵ (35): Ի սորա Ի (20-րդ) ամին Յուդայ Մակաբէ զաւրավար Հրէից:

Է (7) Պտղոմէոս Եւերգետես ամս ԻԹ (29):

Ը (8) Պտղոմէոս Փիսկոն, որ եւ Սովտէր, ամս ԺԷ (17):

Թ (9) Պտղոմէոս, որ եւ Աղեքսանդրոս, ամս Ժ (10):

Ժ (10) Պտղոմէոս, որ մերժեցաւն, ամս Ը (8):

ԺԱ (11) Պտղոմէոս Դիոնուսոսն ամս Լ (30):

ԺԲ (12) Կղէոպատրայ ամս ԻԲ (22): Ի սորա յերրորդ ամին թագաւորէ Հռովմայեցւոց Գայիոս, որ եւ Յուլիս, ամս Ե (5)աւ ապա Աւգոստոս՝ ամս ՃԶ (56), որ սպան զԿղ(է)ոպատրիայ ի ԵԺ (15)ան ամի իւրում, եւ տիրէ Եգիպտոսի:

Պտղոմեանց ժամանակք ՄՂԶ (296):

Արդ, վասն զի յայսոցիկ ժամանեցաք թագաւորութիւն մեծարգոյ, պարտ վարկաք նախ գրել զթողլոց ազգացն զթագաւորսն, զի յետ ճառելոյ վասն Պտղոմեացն ի գիրսն Եւսեբա, ասէ վասն Յունաց, որպէս Յոյնք գրեն զնախնեացն պատմութիւնս, եւ ապա զանուանս իւրաքանչիւրոցն գրէ:

Արդ, սկսանիմք զեգիպտացւոցն նախ, եւ զայլս ընդ նմին, եւ վերջոյ զՀռովմայեցւոցն, յորում ամենայնքն բովանդակին:

Առաջին հարստութիւն Եգիպտացւոցն ի Մանեթայ ասացեալ, ունել ասէ նախ՝

Ա (1-ին) Մենես Թիւնեացի եւ սորա է (7) որդիք ամս ՄԾԸ (258):

Բ (2-րդ) Հարստութիւն Թ (9) թագաւորաց ամս ՄՂԷ (297):

Գ (3-րդ) Հարստութիւն Մեմփացւոց Ը (8) թագաւորաց ամս ՃՂԸ (298):

Դ (4-րդ) Հարստութիւն ԺԷ (17) թագաւորաց Մեմփացւոց ամս ՆԿԸ (468):

Ե (5-րդ) Հարստութիւն Եղեփանտացւոց ԼԱ (31) թագաւորաց ամս Ճ (100):

Զ (6-րդ) Հարստութիւն Կինմինիտովկրիս ամս ՄԴ (204):

Է (7)երորդ հարստութիւն Կինմինիտովկրիս, որ յիւրում ժամանակս քաջ քան զամենայն արս էր եւ գեղեցիկ քան զամենայն կանայս:

Ը (8-րդ) Հարստութիւն Մեմփացւոց Ե (5) թագաւորաց ամս ՀԵ (75):

Թ (9-րդ) Հարստութիւն Մեմփացւոց Ե (5) թագաւորաց ամս Ճ (100):

Ժ (10-րդ) Հարստութիւն Հերակղիոպողիտացւոց չորս թագաւորաց ամս Ճ (100):

ԺԱ (11-րդ) Հարստութիւն նոցա եւս ԺԹ (19) թագաւորաց ամս ՃՁԷ (187):

ԺԲ (12-րդ) Հարստութիւն Դիոպողիտացւոց ԺՁ (16) թագաւորաց ամս ԾԹ (59):

ԺԳ (13-րդ) Հարստութիւն Դիոպողիտացւոց Է (7) թագաւորաց ամս ՄԽԸ (248):

ԺԴ (14-րդ) Հարստութիւն նոցա դարձեալ Կ (60) թագաւորաց ամս ՆԾԴ (454):

ԺԵ (15-րդ) Հարստութիւն Քսոիտացւոց ՀՁ (76) թագաւորաց ամս ՃՁԴ (184):

ԺԶ (16-րդ) Հարստութիւն Դիոպողիտ թագաւորաց ամս ՄԾ (250):

ԺԷ (17-րդ) Հարստութիւն Թեբայեցւոց Ե (5) թագաւորաց ամս ՃՂ (190): ՁԺ (16)ան հարստութիւնս կշռի առաջին ամին Աբրահամու:

ԺԸ (18-րդ) Հարստութիւն հովիւքն ամս ՃԳ (103): Ի դեպ է կոչել զհովիւսս զՅովսէփ եւ զեղբարս նորա:

ԺԹ (19-րդ) Հարստութիւն Դիոպողիտացւոց ԾԹ (59) թագաւորաց ամս ՅԽԸ (348): Աստանաւր ԱԺ (11)երորդ թագաւորք են Քերես, յորոյ ՁԺ (16-րդ) ամին Մովսէս անցոյց զժողովուրդն, եւ նա ի տեղն մնաց:

Ի (20-րդ) Հարստութիւն Դիոպողիտ Ե (5) թագաւորաց ամս ՃՂԴ (194):

Յայսմ ամի առաւ Ելիոն: յԱբրահամէ ամք ՊԼԵ (835):

ԻԱ (21-րդ) Հարստութիւն Դիոպողիտ ԺԲ (12) թագաւորաց ամս ՃՀԸ (178):

ԻԲ (22-րդ) Հարստութիւն Տանիացւոց է (7) թագաւորաց ամս ՃԼ (130):

ԻԳ (23-րդ) Հարստութիւն Բուբաստիացւոց Գ (3) թագաւորաց ամս ԻԹ (29):

ԻԴ (24-րդ) Հարստութիւն Տանիացւոց Գ (3) թագաւորաց ամս ԽԴ (44):

ԻԵ (25-րդ) Հարստութիւն Բոկքորիս Սաիտացի ամս ԽԳ (43): Առ սովաւ գառն խաւսեցաւ, զսա կենդանւոյն այրեաց Սաբանոն, որ յետ սորա:

ԻԶ (26-րդ) Հարստութիւն եթեովպացւոց Գ (3) թագաւորաց ամս ԽԴ (44):

ԻԷ (27-րդ) Հարստութիւն Սաիտացւոց Թ (9) թագաւորաց ամս ՃԿԷ (167):

ԻԸ (28-րդ) Հարստութիւն Պարսից Ը (8) թագաւորաց ամս ՃԻ (120) եւ ամիսս Դ (4):

ԻԹ (29-րդ) Հարստութիւն Ամուրտայոս Սաիտացի ամս Զ (6):

Լ (30-րդ) Հարստութիւն Մենդիսացւոց Դ (4) թագաւորաց ամս ԻԱ (21):

ԼԱ (31-րդ) Հարստութիւն Սեբեննիտացւոց Գ (3) թագաւորաց ամս Ի (20):

ԼԲ (32-րդ) Հարստութիւն Պարսից Գ (3) թագաւորաց ամս ԺԶ (16): Որոց վերջին Դարեհ, զոր սպան Աղեքսանդր: Յառաջին ամէ ԶԺ (16)երորդ հարստութեանն մինչեւ յէ (7)երորդ ամն Աղէքսանդրի, որ սպան զԴարեհ եւ կալաւ զեգիպտոս, եւ շինեաց զԱղեքսանդր, լինին ամք ՌՈԶէ (1687):

ԶՍիկովնացւոց թագաւորացն արդ ձեռնարկեմ գրել, որոց առաջին ի ԵԺ (15)ան ամն Բելայ կացեալ թագաւոր:

Ա (1) Եգիպտեւս ամս ՃԲ (52):

Բ (2) Եւրոփս ամս ԽԵ (45): Ի ԻԲ (22-րդ) ամին Եւրոփայ ծնանի Աբրահամ:

Գ (3) Տեղքին ամս Ի (20):

Դ (4) Ապիս ամս ԻԵ (25):

Ե (5) Թեղքսիոն ամս ՃԲ (52):

Զ (6) Եգիդրոս ամս ԼԴ (34):

Է (7) Թուրիմաքոս ամս ԽԵ (45): Ի Զ (6-րդ) ամի Թուրիմաքայ թագաւորէ Արգիացւոց առաջին Ինաքոս:

Ը (8) Ղեւկիպոս ամս ՃԳ (53):

Թ (9) Մեսապոս ամս ԽԷ (47):

Ժ (10) Երաստոս ամս ԽԶ (46):

ԺԱ (11) Պտղեմէոս ամս ԽԹ (49):

ԺԲ (12) Որթոպողիս ամս ԿԳ (63):

ԺԳ (13) Մարաթիոս ամս Ժ (10):

ԺԴ (14) Մարաթոս ամս Ի (20):

ԺԵ (15) Բեւրեւս ամս ՃԵ (55):

ԺԶ (16) Կորաքս ամս Լ (30):

ԺԷ (17) Եպոպեւս ամս ԼԵ (35):

ԺԸ (18) Ղաւոմեդոմ ամս Խ (40):

ԺԹ (19) Սիկիոն ամս ԽԴ (44): Սիկիոն, յորմէ Սիկովնացիք կոչեցան, որք յառաջ Եգիպտացիք կոչէին:

Ի (20) Պաւղիբոս ամս Խ (40):

ԻԱ (21) Ինաքոս ամս ԽԲ (42):

ԻԲ (22) Փեստոս ամս Ը (8):

ԻԳ (23) Անդրաստոս ամս Դ (4):

ԻԴ (24) Պողիփիղէս ամս ԼԱ (31):

ԻԵ (25) Պեղասգոս ամս Ի (20):

ԻԶ (26) Զեւքսիպոս ամս ԼԱ (31): Բաւեալք յամս ՉԾԸ (958): Յետ որոց քուրմք Կառնեայ ամս ԼԳ (33), այլ ոչ թագաւորք:

Թագաւորք Արգիացւոց սկսեալք ի վեցերորդ ամի Թուրիմաքայ, որոց առաջին՝

Ա (1) Ինաքոս ամս Ժ (10): Ուստի Ինաքիայ աշխարհն կոչէր:

Բ (2) Փորոնեւս ամս Կ (60):

Գ (3) Ապիս ամս ԼԵ (35):

Դ (4) Արգոս ամս Հ (70): Ուստի աշխարհին անուն փոխեցաւ Արգիայ:

Ե (5) Կրիասոս ամս ԾԴ (54):

Զ (6) Փորբաս ամս ԼԵ (35):

Է (7) Տրիոպաս ամս ԽԷ (47):

Ը (8) Կրոտովպոս ամս ԻԱ (21):

Թ (9) Սթենեղոս ամս ԺԱ (11):

Ժ (10) Դանաւոս ամս Ծ (50):

ԺԱ (11) Ղինկեւս ամս ԽԱ (41):

ԺԲ (12) Աբաս ամս ԻԳ (23): Դարգանեայ թագաւորեաց Տրովս, ուստի եւ Տրովացիք կոչեցան:

ԺԳ (13) Պրոիտոս ամս ԺԵ (15):

ԺԴ (14) Ակրիսիոս ամս ԼԱ (31): Արգիացւոց թագաւորք դադարեցին յամս ՇԽԴ (544):

Ի Ճ (100)երորդ ամի յԵգիպտոս ծառայութեանն, եւ յԼԲ (32) ամի Փորբասայ Արգիացւոց թագաւորէ Աթենացւոց նախ առաջին՝

Ա (1) Կեկրովփս Դիփւեւս ամս Ծ (50):

Բ (2) Կրանոս ամս Թ (9):

Գ (3) Ամփիքտիոն ամս Ժ (10):

Դ (4) Երեքթիոնիոս ամս Ծ (50):

Ե (5) Պանդիոն ամս Խ (40):

Զ (6) Երեքթեւս ամս Ծ (50):

Է (7) Կեկրովփս երկրորդ ամս Խ (40):

Ը (8) Պանդիոն ամս ԻԵ (25):

Թ (9) Եգեւս ամս ԽԸ(48):
Ժ (10) Թեսեւս ամս, Լ (30):
ԺԱ (11) Մենէս ամս ԻԳ (23), Իլիոն առաւ:
ԺԲ (12) Դեմոփոն ամս ԼԳ (33):
ԺԳ (13) Ոքսինտէս ամս ԺԲ (12):
ԺԴ (14) Ափիդաս ամ մի:
ԺԵ (15) Թիմուտէս ամս Ը (8):
ԺԶ (16) Մեղանթոս ամս ԼԷ (37):
ԺԷ (17) Կոդրոս ամս ԻԱ (21):
ԺԸ (18) Մեղոն ամս Ի (20):
Մինչեւ ցկեանս իշխանք՝
ԺԹ (19) Ակաստոս ամս ԼԶ (36):
Ի (20) Արքիպպոս ամս ԺԹ (19):
ԻԱ (21) Թերսիպոս ամս ԽԱ (41):
ԻԲ (22) Փորբաս ամս ԼԱ (31):
ԻԳ (23) Մեգակղէս ամս Լ (30):
ԻԴ (24) Դիոգնիտէս ամս ԻԸ (28):
ԻԵ (25) Փերակղոս ամս ԺԹ (19):
ԻԶ (26) Արիփրոն ամս Ի (20):
ԻԷ (27) Թեսպիեւս ամս ԻԷ (27):
ԻԸ (28) Ագամեստովր ամս Ի (20):
ԻԹ (29) Եսքւղոս ամս ԻԳ (23): Յեսքւղայ առաջին ամին Լիւդացւոց առաջին թագաւորէ Արգիսոս: Եւ ի սորա երկրորդ ամին եդաւ առաջին ողոմպիադն, զայս ողոմպիաս եդ Իփիտոս Պրաքսիւոն Իդեմոնեայ եւ յայն ժամանակէ թուի Յունաց ժամանակագրութիւնն վաւերական, զի յառաջ քան զայս իւրաքանչիւր ոք որպէս յաւժարէր՝ հրաման տայր:
Լ (30) Աղկմիոն ամս Բ (2):
ԼԱ (31) Քարոբս ամս Ժ (10):
ԼԲ (32) Եսիմեդես ամս Ժ (10):
ԼԳ (33) Կղեդիկոս ամս Ժ (10):
ԼԴ (34) Իպպոմենէս ամս Ժ (10):
ԼԵ (35) Ղեոկրատէս ամս Ժ (10):
ԼԶ (36) Ափսանդրոս ամս Ժ (10):
ԼԷ (37) Եռւքսէաս ամս Ժ (10): Աթենացւոց թագաւորք եզերեցին յետ ՊՀԳ (873) ամաց:
Պահանջէ կարգադրութիւնս ընդ սոսա եւ զՂակեդոմոնացւոցն գրել որոց նախ ի ԶԺ (16) ամի Սամուէլի եւ Սաւուղայ թագաւորէ՝
Ա (1) Եւռւսթեւս ամս ԽԲ (42):
Բ (2) Ագիս ամ մի:

Գ (3) Եքեստրատոս ամս ԼԵ (35):
Դ (4) Ղաբովտիս ամս, ԼԷ (37):
Ե (5) Դորիսթովս ամս ԻԹ (29):
Զ (6) Ագեսիղաւոս ամս ԽԴ (44):
Է (7) Արքեղաւոս ամս Կ (60):
Ը (8) Տեղեկղոս ամս Խ (40):
Թ (9) Աղկամանէս ամս ԼԷ (37): Եւ սպառեցան յամս ՅԻԷ (327):
Միով ամաւ զկնի սոցա առաջին ամին, որ է ԵԺ (15) ամ Սամուէլի եւ Սաւուղայ, թագաւորէ Կորնթացւոցն առաջին՝
Ա (1) Աղետէս ամս ԼԵ (35):
Բ (2) Իքսիոն ամս ԼԷ (37):
Գ (3) Ագեղաւոս ամս ԼԷ (37):
Դ (4) Պրիմնիս ամս ԼԵ (35):
Ե (5) Բակիս ամս ԼԵ (35):
Զ (6) Ագեղաս ամս Լ (30):
Է (7) Եւդեմոս ամս ԻԵ (25):
Ը (8) Արիստոմեդիս ամս ԼԵ (35):
Թ (9) Ագեմոն ամս ԺԶ (16):
Ժ (10) Ալեքսանդրոս ամս ԻԵ (25):
ԺԱ (11) Մեղեստէս ամս ԺԲ (12):
ԺԲ (12) Աւտոմենէս ամս Բ (2): Բաւեալք յամս ՅԻԴ (324): Ի միում ամի սոքա եւ Լակեդոմոնացիքն վճարեցան յառաջին ողոմպիադին:
Վերջոյ ամենեցուն հեթանոսական ազգաց եւ թագաւորաց, կամեցաք զՀռովմայեցւոցն արտայայտել շարս, զի յայլոց ոչ ոք ժամանեաց առ որ մերն է բաղձալի, այսինքն՝ ծագումն յերկնից լուսոյ Քրիստոսի, արեգականն արդարութեան:
Իսկ սոքա զոր հանդերձեալս եմ գրել, թեպէտ եւ գիշերի անկան յուղիս, զառաջինն ընդ այլ խաւարագնացսն, սակայն ի նոցանէ բազումք արժանի եղեն լուսոյ, զոր յիւրում տեղւոջ տեսցես:
Եւ արդ, յետ Գ (3) ամաց առնլոյն զԵլիոն, թագաւորէ Լատինացւոց՝ Բ (2) ամաւ յառաջ քան զՍամփսովն, որ է ԻԹ (29-րդ) ամ Տաւտանեայ, զառաջինն՝
Ա (1) Ենիաս ամս Գ (3):
Բ (2) Ասկանիոս ամս ԼԸ (38):
Գ (3) Սիղուիոս Ենեայ ամս ԻԹ:
Դ (4) Ղատինոս Սիղուիաս ամս ԼԱ (31): Ղատինացի կոչի ազգ յՂատինոսէ զամս ՆԿ (460):
Ե (5) Ենիաս Սիղուիաս ամս Ծ (50):
Զ (6) Աղբաս Սիղուիաս ամս ԼԹ (39):
Է (7) Եպիտոս Սիղուիաս ամս ԻԶ (26):

Ը (8) Կապիս Սիղուիաս ամս ԻԸ (28):

Թ (9) Անքիսէս Սիղուիաս ամս ԺԳ (13):

Ժ (10) Տիբերիոս Սիղուիաս ամս Ը (8):

ԱԺ (11) Ագրիպպաս Սիղուիաս ամս ԽԱ (41):

ԺԲ (12) Արիմուղոս Սիղուիաս ամս ԺԹ (19):

ԺԳ (13) Աւենտիոս Սիղուիաս ամս ԼԷ (37):

ԺԴ (14) Պրոկաս Սիղուիաս ամս ԻԱ (21):

ԺԵ (15) Ամուղիոս Սիղուիաս ամս ԽԳ (43): Ի սորա ԺԹ (19-րդ) ամին առաջին ողոմպիադն:

ԺԶ (16) Ռոմեղղոս ամս ԼԸ (38): Սայ ԹԺ (19-րդ) ամի իւրոյ, որ էր Դ (4) ամ, ԱԺ (11) ողոմպիադին, տաճարս եւ պարիսպս ի Հռովմ շինեաց, յորմէ համարին զամս շինութեան նորա ցյառաջին ամն Փիղիպպոսի, եւ Ղատինացիք եւ Հռովմայեցիք կոչեցան, եւ լինի յԵնեայ՝ յՌոմելոս ամք ՆԻԶ (426):

ԺԷ (17) Նումաս Պոմպիլոս ամս ԽԱ (41):

ԺԸ (18) Տուղոս Իտեղիոս ամս ԼԲ (32): Նումաս Պոմպիլոս Բ (2) ամիս յաւել ի տարի՝ զյուն եւ զփեքան, զի յառաջագոյն Ժ (10) ամիս անուանէր:

ԺԹ (19) Անկոս Մարկուս ամս ԻԳ (23):

Ի (20) Տարկինոս Պրիսկոս ամս ԼԷ (37):

ԻԱ (21) Սերբիղոս Տուղոս ամս ԼԴ (34):

ԻԲ (24) Տարկենիոս Սուպերբոս ամս ԼԵ (35):

Աստանաւր դադարեն սոքա: Եւ ապա հիպատք յետ թագաւորացն կալան զՀռոմ՝ Բրուտեանք: Ապա՝ ռամկապետք, եւ յետ այնորիկ դիկատորք, որ են ճարտարախաւսք: Եւ դարձեալ հիպատք, որք կացին յետ Տակինայ մինչեւ ցՅուլիոս Գայիոս զամս ՆԿ (460):

Իսկ յետ սոցա՝ ի յերկրորդ ամի ՃՁԴ (184) ողոմպիադին, միահեծան թագաւորէ Հռովմոց՝

Ա (1) Գայիոս Յուլիոս ամս Ե (5)՝ պակաս է (7) ամիս, ի սմանէ յառաջ կայսերք անուանեցան, մինչեւ ցսա համարին ամք Կղէոպատրայ Բ (2) ամ, զի Ի (20) ամ զՀռովմայեցւոցն ձեռամբ կեայ:

Բ (2) Աւգոստոս ամս ՃՁ (56) եւ ամիսս Զ (6): Ի սորա առաջին ամէն Անտիոքացիք զամս իւրեանց թուեն: Ի սորա Ժ (10-րդ) ամին բարձան Հրէիցն առաջնորդք, եւ թագաւորէ Հերովդէս այլազգի: Իսկ ի ԽԲ (42-րդ) ամի Աւգոստոսի եւ ԼԲ (32-րդ) ամի Հերովդի անժամանակ Որդին Աստուծոյ ժամանակաւ ծնեալ լինի ի Սրբոյ Կուսէն եւ նմա փառք յաւիտեանս ամէն:

Զնախաւորութիւն երկուց ազգացն՝ Սեմայ եւ զՔամայ, արտասանեալ համառաւտեցաք որչափ մարթ էր: Հասուցեալ զսոսա պայազատաւք եւ ժամանակաւք մինչեւ ի յամսն, յորում յայտնեցաւ մարմնովն Տէր, որ կամեցաւ լինել մարդ:

Եւ արդ, ըստ ուխտադրութեան յառաջաբանին եւ զՅաբեթին արկցուք ձեռն ի գործ գրել, զոր ըստ ազգի, եւ զորս փոխանորդութեամբ ի նոցանէ Պարթեւացն, մինչեւ այսոքիմբք ժամանեսցուք առ որ արար զերկոսին մի՝ Տէր մեր: Եւ զի առ Թորգոմ եկեալ անդանաւր բանն առ զտեղի, ի նմանէ աստանաւր սկսայց պատմաբանել:

Թորգոմ, ասէ, ծնանի զՀայկն:

Ա (1) Այս Հայկ ի մէջ սկայիցն մի յայնցանէ էր, որք յղացան զամբարտաւանութիւն եւ ծնան զամպարիշտ խորհուրդ աշտարակաշինութեանն, որք յետ փլանելոյ ամբարտակին՝ անլուր բարբառոյ միմեանց լեալ բաժանմամբ լեզուացն, եւ խրոխտանաւք ի վերայ միմեանց տիրապետել կամելով: Սա ամբարձ զձեռն ընդդէմ Բէլայ, որ յայլոցն յինքն յափշտակեալ բռնանայր երկրի, ո՛չ հնազանդեալ Բէլայ, առնու զորդի իւր զԱրամանեակ, զոր ծնաւ ի Բաբիլովն, չուեալ յԱրայրադ ոգւովք Յ (300), եւ երկուց յարեցելովք, ի նա շինէ տուն կալուածոյ ի լեռնոտան եւ տա Կադմեայ որդւոյ Արամանեկայ: Եւ ինքն երթայ ի տեղի մի ընդ արեւմուտս հիւսւսոյ եւ անուանէ զնա Հարք:

Իսկ միապետեալ Բէլայ զայլսն ամենայն, կոչէ եւ զՀայկ ի Բաբիլովն, որում ո՛չ առեալ յանձն, գայ ի վերայ նորա բազում խրոխտանաւք: Եւ Հայկն նետահար արարեալ զԲէլ սատակէ, կեցեալ ամս ոչ սակաւս մեռանի՝ յանձն առնելով զաղխն Արամանեկայ:

Բ (2) Արամանեակ որդի Հայկա յետ մահուան հաւրն թողու զերկու եղբարս իւր՝ զԽոռ եւ զՄանաւազ ի Հարք: Եւ զորդին Մանաւա զԲազ ի Մանաւազայ եւ ի Բազայ լեալ նահապետութիւն Մանաւազեան եւ Բզնունեաց, եւ որ Գնունին անուանին, իսկ ի Խոռայ՝ ազգն Խոռխոռունեաց, եւ Արամանեակ բնակի ի լեռնամէջս դաշտի, եւ կոչէ զլեառնն Արագած: Սա կեցեալ ամս, ծնանի զԱրամայիս, եւ այլ ամս շատս՝ մեռանի:

Գ (3) Արմայիս որդի Արամանեկայ սա շինէ իւր տուն ի վերայ ոստոյ միոյ՝ առ եզերբ գետոյն եւ կոչէ յիւր անուն Արմաւիր: Եւ զգետն յանուն թոռին իւր Երաստայ՝ Երասխ[13]: Եւ զորդի իւր զՇարայ՝ զյոլովածին եւ շատակեր, առաքէ ընդ հիւսիսի՝ ի դաշտ մի արգաւանդ եւ բերրի, յորոյ անուն կոչեցաւ Շիրակ: Այս Արմայիս ծնանի զԱմասիայ, կեցեալ ամս շատ՝ մեռանի:

Դ (4) Ամասիայ որդի Արմայիսայ սա բնակէ յԱրմաւիր, ծնանի զԳեղամ եւ զՓարոխ, եւ զՑոլակ: Շինէ մերձ ի լեառնն Բ (2) տունս եւ տա Բ (2) որդւոցն՝ արւոյն Փարոխա եւ կայտառին Ցոլակայ, որք կոչին յանուն նոցա Փարոխոտ եւ Ցոլակերտ եւ լեառնն՝ յանուն իւր Մասիք: Սա կեցեալ ամս սակաւ յԱրմաւիր, մեռաւ:

Ե (5) Գեղամ որդի Ամասիայ սա ծնաւ զՀարմայ, շինէ զեզր ծովակի միոյ, եւ կոչէ զլեառնն Գեղ եւ զշէնսն՝ Գեղարքունի, եւ զծովն՝ Գեղարքունւոյ ծով: Ծնանի Գեղամ եւ զՍիսակ եւ սահմանս հատանէ նմա ի ծովէն ընդ արեւելս կոյս, ընդ որ անցանէ գետն Երասխ յորձանուտ խոխոջիւք ի դաշտն, որ կոչի Քաղա-

վազ, եւ աշխարհն այն անուանի Սիւնիս եւ Պարսք յստակագոյն Սիսական կոչեն: Շինէ դաստակերտ մի եւ յիւր անուն կոչէ Գեղամի, զոր ի Գառնկայ յիւրոյ թոռնէ Գառնի կոչեցաւ: Յետոյ ի սորա ծննդոց՝ առ Արտաշեսիւ, Վարաժ անուն ի վերայ որսոց, յորմէ տունն Վարաժնունի: Այս Գեղամ հրամայէ որդւոյ իւրում Հարմայի բնակել յԱրմաւիր: Եւ յետ ամաց բազմաց մեռանի:

Զ (6) Հարմայ որդի Գեղամայ սա ծնեալ զԱրամ, յետ ամաց ինչ մեռանի:

Է (7) Արամ որդի Հարմայի սա բազում գործք քաջութեան ցուցեալ պատերազմաւ, ընդարձակէ զաշխարհ իւր ընդ Դ (4) կողմունս, յորոյ անուն ամենայն ազգք զաշխարհս մեր անուանեն Յոյնք՝ Արմէնք կոչելով, եւ Ասորիք եւ Պարսք՝ Արմնիկ: Ընբռնէ զՆիւքարն՝ կոչեցեալն Մադէս, եւ կախէ զպարսպէն: Երկրորդ իւր անուանեաց զսա Նինոս: Եւ համարձակութիւն տայ վարսակալ ածել մարգարտեա, թեպէտ եւ վերին աչաւք: Եւ զԲարշամ սպանանէ, հալածական առնէ ի միջերկրեայցն զՊաապիս Քաղաղայ Տիտանեան՝ արկանելով ի կղզի ինչ յԱսիայ: Եւ զՄշակ ոմն յազգէ իւրմէ թողու անդ, որ շինեաց զՄաժաք, եւ յետոյ կոչեցաւ Կեսարիայ: Հրամայէ անդ եւ լեզու հայկական ուսանել, վասն որոյ անուանեն զտեղին զայն Պրոտոն Արմենեան, որ թարգմանի Առաջին Հայք: Եւ անտի մինչեւ ի սահմանս իւր լից մարդկամբ, որք Երկրորդ եւ Երրորդ անուանեցան Հայք, այլ եւ Չորրորդ: Այս է Մովսէսին:

Իսկ այլ պատմագիրք այսպէս ասեն ի Կապուդկացւոց Կեսարեան մինչեւ ցՊոնտոսի կողմ ասեն Առաջին Հայք, եւ ի Պոնտոսէ մինչեւ ցՄելիտինէ՝ Երկրորդ Հայք, եւ անտի մինչեւ ցսահմանս Ծոփաց՝ Երրորդ Հայք, եւ անտի մինչեւ ցքաղաքն Մատիւրոսաց, յԱղձնիս արեւմտեայ՝ Չորրորդ Հայք, իսկ զսեպհականն իւր աշխարհ՝ Մեծ Հայք: Եւ զայսոսիկ փոխեաց Մաւրիկ, զոր յիւրում տեղւոջ գրեցից: Սա ծնաւ զԱրայ, յետ ամաց մեռանի:

Ը (8) Արայ Գեղեցիկ որդի Արամայ սա պատուի ի Նինոսէ որպէս եւ հայրն իւր: Իսկ յետ մահուանն Նինոսի շռայլն Շամիրամ յետ չինազանդել հրամանաց Արայի, ելանէ պատերազմաւ ածել ի բուռն, որ սպանաւ անդէն Արայ ի խռանն: Եւ յետ այնորիկ վարարն Շամիրամ շինէ զամուրն աւան, որ այժմ կոչի Վան եւ զորդին Արայի Կարդոս առեալ՝ Արայ անուն եդ եւ ապա ինքն հալածի ի Զրադաշտէ մոգէ, որ էր նահապետ Մարաց, զոր ի գալն իւր ամի-ամի ի Հայս կողմնապետ թողոյր զԶրադաշտ կողմանցն Ասորեստան: Յայսմ պատերազմի մեռաւ Արայեանն Արայ, եւ ծանակեալն Շամիրամ փախստական լեալ ի Հայս, սատակի ի Զամեսայ որդւոյ իւրոյ, որ է Նինուաս:

Թ (9) Արայեանն Արայի որդի Անուշաւան. այս Անուշաւան Սաւսանուէր հարուստ եւ հանճարեղ յիր եւ ի բան, սա տուայտեալ՝ շատ արհամարհանս կրէ ի Զամեսայ: Եւ աւգնականութեամբ բարեկամաց շահի զմասն ինչ աշխարհիս, յետոյ՝ ողջոյն իսկ: Ի սմանէ յառաջ ո՛չ ըստ ազգի, այլ ըստ յառաջադիմութեան արանց բռնակալաց տիրեն աշխարհիս եւ անուանք նոցա այսոքիկ են՝ Պարէտ, Արբոկ, Զաւան, Փառնակ, Սուր: Առ սովաւ Յեսու Նաւեայ կոյս սուրբ եւ ա-

րի:

Ի սատակել Յեսուայ զՔանանացիսն անցին փախստական յԱդռաս, նաւելով ի Թարսիս եւ այս յայտնի դրոշմամբն, որ ի յարձանս Ափրիկացւոց աշխարհին գրեալ կան այսպէս. «Ի Յեսուայ գողոյ փախուցեալ եմք նախարարք Քանանացւոց, եկաք բնակել աստ, յորոց մի եւ քանի դաս պատուականագոյն մեր ի Հայս»: Եւ ստուգեալ գտաք զազգն Գնթունեաց ի նմանէ, զայս եւ բարք ազգին յայտ առնէ Քանանացի գոլ:

Յետ Սուրա՝ Հաւանակ, Վաշտակ, Հայկակ. զՀայկակ ասեն առ Բելիքոսիւ, եւ ամբոխ արարեալ անխորհրդաբար մեռանի:

Ամբակ, Առնակ, Շաւարշ, Նորայր, Վստամ, Կար[14], Գռակ, Հրանտ, Ընծակ, Գլակ, Հաւրա, Զարմայր սա աւգնական Պռիամու ի Տաւտանայ առաքեալ ընդ եթեովպացի զաւրացն, եւ մեռանի ի քաջացն Ելլենացւոց:

Պերճ. սա էր յաւուրս Դաւթի արքայի Իսրայէղի: Արբուն, Բազուկ, Հոյ, Յուսակ, Կայպակ, Սկայորդի, Պարոյր: Այս Պարոյր որդի Սկայորդւոյ Հայկազնի, աւգնական լեալ Վարբակայ Մարի, բառնան զթագաւորութիւնն ի Սարդանապաղղայ: Եւ թագ եդեալ սմա Վարբակայ, լեալ առաջին պսակաւոր ի Հայկազնեաց:

Հրաչեա որդի Պարոյրա. Հրաչեա սա կոչի վասն առաւել բոցակնագոյն եւ պայծառերես լինելոյն: Առ սովաւ գերեաց զերուսաղեմ Նաբուքոդոնոսոր: Եւ սա զմի ի գերելոց գլխաւորաց Հրէիցն խնդրեաց ի Նաբուքոդոնոսորայ՝ անուն Շամբաթ, եւ բնակեցոյց առ ինքեան մեծաւ պատուով, յորմէ եղեն ազգ Բագրատունեաց, եւ Սմբատդ անուն է Շամբաթ: Բայց յետ Հրաչեա պայազատէ զթագն՝ Փառնաւազ, Պաճոյճ, Կռոնակ, Փաւոս, Հայկակ, Երուանդ, Տիգրան:

Այս Տիգրան հուժկու լեալ ամենայն նախնեացն իւրոց, զորոյ զառաւել ներբող գովեստի ուսցիս ի պատմութենէ մեծին Մովսէսի: Սա Թ (9)երորդ ի Պարոյրայ առաջին թագաւորէ, առ որով եկին որդիքն Սենեքերիմայ՝ Ադրամելիք եւ Սանասար, յետ սպանանելոյ նոցա զհայրն իւրեանց, եկին փախստական առ Պարոյր: Եւ բնակեցոյց զՍանասար առ Ասորեստան կողմամբն, եւ աճեցեալ լցին զՍիմն լեառն: Եւ նոցա իմաստնագոյնք վասն մտերմութիւն ցուցանելոյ կոչեցան բդեաշխք: Իսկ յԱդրամոզանէն՝ Արծրունիք եւ Գնունիք: Իսկ ի Պասքամայ թոռնէ Հայկակայ լեալ Անգեղատուն: Յետ սպանանելոյ նորա զԱժդահակ, որ թարգմանի վիշապ, զկին նորա զառաջին զԱնոշ ամենայն զարմիւ կացուցանէ առ թիկունս Մասեացոտս, որ է Տամբատ, մինչեւ ցԳողթն, յորոց մին՝ Վրանջունիք, եւ Աժդանականն:

Արդ, լինի որդի Տիգրանայ՝ Բաբ, Տիրան, Վահագն, յորմէ Վահունիք, Առաւան սորա, յորմէ Առաւենեան: Իսկ յԱռաւենայ՝ Ներսեհ, եւ ի Ներսեհէ՝ Զարեհ, ուստի ազգն Զարեհաւանեան: Իսկ ի Զարեհէ՝ Արմոգ, յԱրմոգայ՝ Բագամ, ի Բագամայ՝ Վան, ի Վանայ՝ Վահէ: Սա ընդվզեալ մեռանի յԱղեքսանդրէ Մակեդոնացւոց: Ցայս վայր տերութիւնն Հայկազանց դադարէ:

Յայսմ հետէ մինչեւ ցթագաւորութիւնն Վաղարշակայ ի Հայս ո՛չ ինչ ստուգիւ ունիմ ասել, քանզի շփոթեալք, այր զարամբ ելեալք, եւ վասն այնորիկ եղեւ դիւրաւ մուտ յաշխարհս Արշակայ Պարթեւի, որ թագաւորեցոյց Հայոց զՎաղարշակ զեղբայր իւր:

Բայց լինի ի սպանմանէ Բէլայ ի Հայկայ մինչեւ ցՎաղարշակ ամք ՌՁԾ (1950) կամ ՌՁԽԲ (1942):

Յետ բառնալոյ Հայկազանցն տերութեան յԱղեքսանդրէ, մեռանի Աղեքսանդրոս, որ թագաւորեաց ամս ԺԲ (12): Եւ զկնի մահու նորա իշխողութիւն նորա ի Դ (4) բաժանեալ, զոր գրեցաք յիւրում տեղւոջ:

Արդ, մի ի սոցանէ Սելեւկիոս, որ զկնի Աղեքսանդրի կալաւ զԲաբիլովն, որ եւ ընդ այլոց ազգաց եւ զՊարթեւս հնազանդեաց մեծաւ պատերազմաւ, եւ վասն այնորիկ կոչեցաւ Նիկանովր: Սա թագաւորեաց ամս ԼԱ (31):

Անտիոքոս Սովտեր որդի սորա ամս ԺԹ (19):

Անտիոքոս Թեոս ամս ԺԷ (17): Ի սորա ԱԺ (11-րդ) ամի ապստամբեն Պարթեւք ի Մակեդոնացւոցն, որոց թագաւորեաց նախ Արշակ քաջ՝ ի զաւակէ Աբրահամու, ի Քետուրական ծննդոց, ի քաղաքին որ կոչի Բաղի, ամս ԼԱ (31):

Եւ ապա որդի նորա Արտաշէս ամս ԽՁ (46):

Եւ ապա Արշակ մեծ ամս ԾԳ (53): Այս Արշակ մեծ թագաւորեցոյց զեղբայր իւր զՎաղարշակ աշխարհիս Հայոց յէ (7)երորդ Ի (20)երորդ ամի Պտղոմեա եւ Երգիտեա, ի Դ (4) ամի ՃԿԷ (167) ողոմպիադին՝ տալով սմա սահմանս զհիւսիսի եւ զարեւմուտս մերոյ աշխարհիս: Սա էր այր քաջ եւ խոհեմ, սահմանեաց կարգս կենցաղականս, նախարարութիւնս եւ նահապետս նոցա հաստատէ եւ այլ բազում յաւրինուածս տանց, ազգաց, քաղաքաց, շինից, դաստակերտաց, զաւրաց, կողմնակալաց՝ ընդ որս սակաւուք անցայց նշանակաւ:

Արդ, նախ սկսանի ի գլխոյ իւրմէ, եւ զԲագարատ որ ի Հրեից, առնէ թագադիր ասպետ եւ տա իշխանութիւն դնել թագ ի գլուխ թագաւորին եւ զգեցուցանաւղ իւր զձեռս ի զաւակացն Քանանու, եւ կոչէ զազգն Գնթունի, ո՛չ գիտեմ էր աղագաւ ի Քանիդայ: Եւ թիկնապահ իւր ի զաւակացն Խոռա Հայկազնոյ՝ զՄաղխազ, եւ անուն զնախնականն պահէ Մաղխազունիք: Եւ զԴատ՝ ի զաւակէ Գառնկայ, որ ի Գեղամայ՝ ի վերայ որսոց, որոյ որդի Վարաժ՝ յանուն սորա կոչի ազգն Վարաժնունի: Եւ զԳաբաղ ոմն ի վերայ կուտիցն, եւ զԳաբեղ սպասարար, եւ շէնս սոցա տա, յորոց անուն եւ ազգքն Աբեղեանք, եւ Գաբեղեանք, եւ զԱրծրունիսդ՝ արծիւ ունիս, եւ զԳնունիսդ՝ գինի ունիս: Սոքա յորդւոցն Սենեքերիմայ: Եւ զՍպանդունիսդ ի վերայ զենարանացդ, եւ զՀաւնունիսդ՝ բազէակիրս եւ բազէակալս, եւ զՁիւնականսդ՝ զձիւնակիրսն ամարանի:

Կացուցանէ եւ պահապանս արքունի զհին զարմից թագաւորացն, որ Բուն Ոստանն անուանի, որպէս եւ Վիրք այժմ Սեփեծուլն կոչեն:

Եւ երկրորդ իւր ի զաւակաց Աժդահակայ Մարաց, որ Մուրացեանդ կոչեն:

եւ յարեւելից կողմանէ զերկուս նահապետութիւնս՝ զՍիսակեանն եւ որք ի տանէն Կադմեայ:

Եւ յարեւելից հիւսւսոյ զԱռան կարգէ կողմնակալ ի ծննդոց Սիսակայ եւ աշխարհն յանուն քաղցր բարուց նոցա կոչի Աղուանք: Եւ ի սորա ծննդոց սերին ազգն Ուտէացւոց եւ Գարդմանացւոց, եւ Ծաւդէացւոց, եւ Գարգարացւոց իշխանութիւնն:

Եւ Գուշարայ, որ յորդւոցն Շարայի, ժառանգեցուցանէ զԿանգարս, զՁաւախս, զտերութիւնն Տաշրայ եւ զԱշոցաց: Եւ ընդդէմ Կովկասու կարգէ զիզաւր ազգն ի զաւակէ Միհրդատայ՝ Դարեհի նախարարի, եւ կոչէ բդեաշխ Գարգարացւոց: Եւ ի հովտին մեծի Բասենոյ կարգէ նահապետութիւն ի զաւակէ Հայկակայ, զՈրդունին կոչեն, եւ ի զաւակէ Պասքամայ զՏուրք ոմն, զոր վասն դժնեա երեսացն Անգեղեա ասեին, կարգէ կուսակալ արեւմտից, եւ կոչէ զանուն տեղւոյն Անգեղտուն:

Եւ ի Չորրորդն կոչեցեալ Հայք հաստատէ զմեծ նահապետութիւնն Ծոփաց, այլ եւ զնախարարութիւնն Ապահունեաց, եւ զՄանաւազեանն եւ զԲզնունեացն, եւ զայր ոմն սրտեա եւ ուժեղ Սղաք անուն՝ թե յորդւոցն Հայկայ եւ թե յառաջագունից քան զնա, կարգէ սակաւ արամբք՝ պահել զլեառնն, որսալ քաւշս, եւ կոչէ Սղկունիք, եւ ի սոյն իրս զՄիանդակն անդառնալի, յորմէ Մանդակունիք, եւ յորդւոցն Վահագնի կարգէ քուրմս, եւ կոչէ զազգն Վահունիք: Այսպէս եւ զԱռաւեանեանն եւ Ջարեհաւանեանն, եւ զՇարաշան ի տանէ Սանասարայ[15] հաստատէ բդեաշխ մեծ յարեւմտից հարաւոյ, տալով գաւառ զյԱրծնն եւ զլեառնն Տորոս, որ է Սիմ, եւ զԿղէսուրն ամենայն, եւ զՄոկացին ի նոյն գաւառի գտեալ նախարարութիւն կարգէ եւ ի նոյն գաւառաց զԿորդուացին, զԱնձեւացին, զԱկէացին: Իսկ զՌըշտունին եւ զԳողթնեցին՝ հատուածս ի Սիսականէն, ո՛չ գիտեմ թե յանուն արա՞նցն զգաւառսն անուանեալ, թե՞ յանուն գաւառացն զնախարարութիւնսն անուանեալ :

Արդ, զայսր թագաւորի զյաւրինուածս կարգադրեալ, զամենայն գրել ո՛չ կամեցաք, որպէս եւ ոչ զայլոց անցելոց եւ զապագայից զկնի զի յոլովակի են մատեանք անցն իւրոց ի գրի: Միայն զբացայայտութիւն նախարարութեանց ցուցաք, որ թե կամեսցի ոք գիտել, ուսցի գտակաւ հաստատեալ եւ այլ բազում իրս թագաւորականս:

Եւ յետ թագաւորելոյ՝

Ա (1) Վաղարշակ ամս ԻԲ (22), մեռանի ի Մծբին:

Բ (2) Արշակ որդի նորա ամս ԺԳ (13):

Գ (3) Արտաշէս որդի Արշակայ ամս ԻԵ (25):

Սա յառաջադէմ եղեալ քան զամենայն, ոչ եղեալ երկրորդ Պարսից, այլ զՊարսից թագաւորն արարեալ իւրն երկրորդ, անհամար զաւրաւք դիմէ յԱրեւմուտս, եւ հնազանդեցոյց զբազումս, եւ մեռաւ յիւրացն:

Դ (4) Տիգրան որդի նորա ամս ԼԳ (33):

Սա ոչինչ ընդհատ ի հաւրն քաջութենէ գործէ արութիւնս, բայց դարձեալ եղեւ երկրորդ Պարսից: Առ սովաւ Վակոն յեղուզակ, յորմէ լեառն Վակունիք:

Ե (5) Արտաւազդ որդի Տիգրանայ ամս Բ (2):

Զ (6) Արջամ, որ եւ Արշամ, եղբայր Տիգրանայ ամս Ի (20): Առ սովաւ զառաջինն Հայոց մասնաւորիլ հարկս Հռովմոց:

Է (7) Աբգար որդի Արշամայ՝ ԼԸ (38), ի սորա երկրորդ ամի թագաւորութեանն հարկին Հռովմայեցւոց ամենայն Հայք, զի ել հրաման յԱւգոստոս կայսերէ, ասե աւետարանագիրն, աշխարհագիր առնել ընդ ամենայն տիեզերս, վասն որոյ ելին եւ ի Հայս, յորում ամի ծնաւ ի Կուսէ Տէր մեր եւ Աստուած Յիսուս Քրիստոս:

Ի Վաղարշակայ ամք ՃԺէ (117): Եւ էր այն ամ թագաւորութեանն Աւգոստոսի ԽԲ (42), եւ Հերովդի այլազգւոյ յերուսաղէմ ամք ԼԲ (32):

Իսկ Արշակունեացն, որ Պալհաւիկսն կոչին, եւ կամ թե Պարսից թագաւորք, Արշաւրի ամք ԻԱ (21) յորոյ ի Ի (20)երորդ ամին թագաւորէ Հայոց Աբգար: Եւ են ի նախնոյն Արշակայ այսոքիկ թագաւորք Պարսից՝

Ա (1) Արշակ քաջ ամս ԼԱ (31):

Բ (2) Արտաշէս ամս ԽԶ (46):

Գ (3) Արշակ մեծ եղբայր Վաղարշակայ ամս ՃԳ (53):

Դ (4) Արշական ամս ԼԱ (31):

Ե (5) Արշանակ ամս Լ (30):

Զ (6) Արշէս ամս Ի (20):

Է (7) Արշաւիր ամս ԽԶ (46): Ի սորա Ի (20-րդ) ամի ծնունդն Քրիստոսի, եւ է Դ (4) ամ ՃՂԴ (194) ողոմպիադին:

Արդ, վասն զի ըստ կանխադիր խոստմանցն ժամանեցաք յայսոսիկ, ուրանաւր կէտ եդեալ էր բանից, հասանել ի յայտնութիւն մարմնացելոյ Բանին Աստուծոյ սկսեալ ի նախաստեղծ մարդոյն, յորս ժողովին ամք ՐՃՂԸ (5198)՝ ըստ եւթանասնիցն թարգմանութեան, զոր ըստ մասին գրեցից արդ այսպէս՝ յԱդամայ մինչեւ ցջրհեղեղն գումարին ամք ՍՄԽԲ (2242), ի ջրհեղեղէն յաշտարակն ամք ՇԻԵ (525): Եւ անտի յԱբրահամ ամք ՆԺէ (417), եւ ի ջրհեղեղէն յԱբրահամու ծնունդն ամք ՋԽԲ (942), եւ յԱբրահամէ մինչեւ ի Մովսէս յելսն յԵգիպտոսէ ամք ՇԵ (505), եւ յելիցն մինչեւ ցՍաղովմովն եւ ցառաջին շինուածն ամք ՆՋ (480), եւ յառաջին շինածոյ տաճարին յերկրորդ շինութիւնն ամք ՇԺԱ (511), եւ անտի ի ծնունդն Քրիստոսի ամք ՇԺԸ (518), որոց շարադրութիւնն լինի ՐՃՂԸ (5198)[16]: Ի ծննդենէն Քրիստոսի մինչեւ ի սուրբն Գրիգոր ամք ՅԺԲ (312), եւ անտի ի Հայ թուականն՝ ամք ՄԽԱ (241):

(Մ7261, Մ10202) Ըստ Լատինացւոց յԱդամայ մինչեւ ի Քրիստոս ԴՌՕԱ (4051) ամ է, Դանիէլի եւ թերորորդք եւ թերորորդքն մինչեւ ի տաճարին շինութիւնն ՆՂ (490) ամ է եւ անտի մինչեւ ի յայտնութիւն Քրիստոսի, որ մկրտեցաւ ԿԲ (62), ՇԲ (502) թիւն ՅՀԴ (374) ամ է, յորում մեռաւ օծեալ Տէրն:

Արդ, ո՛վ սրբազգեաց տէր իմ Գրիգոր, հարկեցայ ի թախանձելոյ ձեր զեղկելի անձն իմ, ետու զանարհեստ ձեռն իմ ի մշակութիւն այս գործոյ, մոռանալով զբաջաղմունս կեցաղականիս, որ յարաժամ զզուէի գործել զառաքինութիւն, ջանացի յոյժ եւ ի նեղ կեանս մարմնաւորականիս արտայայտեցի զամենագեղեցիկ աստուածարեալ Եւսեբեա զպատմութիւնս կրկին գրելով, որպէս զցայտումն արեւու, որ ի մթին տեղիս ծագէ եւ լուսաւորէ, է այսպէս գանձս աստուածային, որ զխաւարեալ միտս մարդոյ զարթուցանէ ի գիտութիւն ժամանակաց անցաւորիս: Եւ դարձեալ հմտանալով այս կենցաղոյս, ծանաւթանա վերին գիտութեանն, որ անճառն է եւ անբաւելին եւ ծնանի զաստուածպաշտութիւն, որպես Եւագր երանելի ասէ գիտնական եւ արդիւնական:

Սկսեալ ի ծննդենէն Քրիստոսի յառաջին ամէն, զոր կարգեցից բուն թուական, եւ զթագաւորս Հռովմոց, Հրեից եւ Պարսից, եւ զմերոյ ազգի ստոյգ գտակաւ գրեցից անյապաղ[17]:

(Մ7261, Մ10202) Աննա Գ (3) այր էառ. առաջինն էր Յովակիմ, յորմէ ծնաւ զՄարիամ, մայրն Տէառն, եւ յետ մահուան Յովակիմայ էառ զԿղեոպա, յորմէ ծնաւ միւս այլ Մարիամ եւ ամուսնացոյց Ալֆիոս Յովսեփայ, ասէ եւ Կղեոպաս Յովսեփայ յեղբայրն է Ալֆիոսի, յորմէ ծնան Դ (4) որդիք՝ Յովսէ, Թադէոս, Սիմոն, Յակոբոս եւ յետ մահուն Կղեոպա, նոյն Աննայս էառ միւս այր, որ կոչէր Սօղովմէ, յորմէ ծնաւ դուստր մի այլ անուն Մարիամ, որ ետ զնա ի կնութիւն Զեբեդեա եւ ի նմանէ ծնաւ Բ (2) որդի՝ յՀովհաննէս աւետարանիչ եւ Յակոբոս մեծն[18]:

ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐՈՎ

(Քրիստոսի ծննդից մինչեւ 1163 թ.)

Սկսեալ ի Քրիստոսէ	
Ա 1	**Յիսուս Քրիստոս ի Բեդղէմ ծնանի:** **Կիւրենիոս ի Հռոմայ եկեալ ի Հրէաստան, աշխարհագիր արար[19]:** *(Մ1898) Յայսմ ամի եղեւ ծնունդն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյն մերոյ եւ մոգուցն գալն յերկրպագութիւն եւ ընծայիլն ի տաճարն եւ գնալն յԵգիպտոս[20]: (Անդ, այլ գրով) Այն երեք թագաւորն որ եկին յերկրպագութիւն Տեառն՝ են անօքն այսոքիկ՝ Մէլքոն թ(ա)գ(ա)ւորն Պարսից, երկրորդ թ(ա)գ(աւ)որն Հնդկաց՝ Գասպար, երրորդ թ(ա)գ(աւո)րն Արաբացոց՝ Բաղտասար:* *(Մ3965) Յառաջին ամին ծննդեան Քրիստոսի էր կայսր Հռոմայ Հոգտաւիոս, որ կոչեցաւ Օգոստոս///, սա արար զամենայն տիեզերս ընդ միոյ իշխանութեամբ, բայց այսպիսի մեծ կայսր ոչ էր առանց արատոյ, այլ ունէր յինքն բազում պոռնկական ախտ, մինչեւ ի մերձաւորն իւր եւ ննջէր ի մէջ ԺԲ (12) կանանց եւ ԺԲ (12) կուսից[21]:*
Բ 2	
Գ 3	**Սեկունդոս Պլթագորեան փիլիսոփոս ճանաչիւր:** **Աբգար զՓերուրի՝ եղբայր Հերովդի սպանանէ[22]:** *(Մ1898) Հերովդէս զմանգունսն Բեթղէեմի կոտորեաց, որ էր թիւ նոցա հարիւր եւ քառասուն եւ չորս հազար:*
Դ 4	**Յուդաս Գալիլէացի ապստամբեցոյց զՀրեայս:** **Հերովդէս զՏեառն մերոյ իմացեալ զծնունդն, զմանկունսն կոտորեաց:** *(Մ3613) Դարձն Քրիստոսի յԵգիպտոսէ, եւ երթալ բնակիլն ի Նազարեթ:* *(Մ1898) Յոհաննէս աւետարանիչն ծնանի ի ծնողաց իւրոց.*
Ե 5	
Զ 6	**Արքեղաոս** (Հրէից) **ամս Թ** (9)**:** **Հերովդէս սաստիկ չարչարանաւք սատակի:**
Է 7	**Չորրորդապետս արար զՀերովդէս Աւգոստոս եւ զԱնտիպատրոս եւ զԼիւսիայ եւ զՓիլիպպոս՝ զեղբարս Արքեղաոսի:**

Ը 8	*(Մ1898) Ընգեցաւ յիշխանութենէն Երուսաղէմի վասն խստութեան բարուց իւրոյ Արքեղայոս:*
Թ 9	
Ժ 10	**Աթենադորոս Տարսոնացի Փիւսիկեան:**
ԺԱ 11	
ԺԲ 12	*(Մ3613) Յիսուս Քրիստոս ԲԺ-ն (12) ամաց յԵրուսաղէմ ի տաճարն նստէր ընդ վարդապետսն լսէր ի նոցանէ եւ հարցանէր զնոսա:* *(Մ1898) Եկաց Յիսուս Քրիստոս յԵրուսաղէմ եւ անմենեքեան զարմանային ընդ իմաստութեան նորա, զի ամենեցուն տայր պատասխանի:* *(Ս42) ՅԽԴ (344) ամ եկաց Սիմէոն[23]:*
ԺԳ 13	
ԺԴ 14	**Նուազութիւն արեգական եղեւ եւ Աւգոստոս վախճանեցաւ:**
ԺԵ 15	**Տիբեր** (Հռոմայեցւոց) **ամս ԻԳ** (23)**:** **Հերովդէս** (Հրէից) **ամս ԻԴ** (24)**:**
ԺԶ 16	
ԺԷ 17	**Աբգար զեղեսեա քաղաք շինէ[24]:**
ԺԸ 18	
ԺԹ 19	**Շարժմամբ ԺԳ** (13) **քաղաք կործանեցաւ ի Բիւթանիայ:**
Ի 20	
ԻԱ 21	
ԻԲ 22	
ԻԳ 23	
ԻԴ 24	
ԻԵ 25	**Փիլիպպոս չորրորդապետ զԿեսարիա շինեաց զոր Փիլիպպեան կոչեն:**
ԻԶ 26	**Արտաշես** (Պարսից) **ամս ԼԴ** (34)[25]**:**
ԻԷ 27	**Երթն Աբգարու ի Պարթեւս համոզել ի մէջ եղբարցն[26]:** **Պիղատոս ոստիկան Հրէաստան ի Տիբերեա առաքի:**
ԻԸ 28	
ԻԹ 29	
Լ 30	**Յովհաննէս՝ Զաքարիայ որդին քարոզէր յանապատին Յորդանան գետոյ եւ տա աւետիս ամէնեցուն, թէ ի միջի նոցա է աւծեալն Աստուծոյ: Նա եւ ինքն իսկ Յիսուս աւծեալն Աստուծոյ՝ անտի առնէ սկիզբն կենարար եւ աւետաւոր վարդապետութեանն արդեամբք եւ բանիւք զաստուածեղէն զաւրութեանն առաքինութիւն տեսողաց ցուցանէր: Եւ ժողովին մինչեւ ցամս ԵԺ** (15)**-երորդ Տիբերեայ կայսեր, որ առաջիս կայ յերկրորդ նորոգութենէ տաճարին ամք ՇԽԸ** (548)**: Իսկ Սաղովմոնէ եւ յառաջին կազմածոյ տաճարին ամք ՌԿԴ** (1064)**: Եւ ի Մովսիսէ եւ յելիցն յեգիպտոսէ ամք ՌՇԽ** (1540)**: Իսկ յԱբրահամէ եւ ի Նինեա եւ ի Շամիրամայ ամք ՍԽԴ** (2044)**: Եւ ի ջրհեղեղէն ամք ՍԶՁԶ** (2986)**: Եւ**

	յԱդամայ ամք ՐՄԻԸ (5228)[27]**:** *(Մ3613) Յիսուս Քրիստոս եկն ի Գալիլէէ ի Յորդանան առ Յովհաննէս մկրտիլ ի նմանէ:*
ԼԱ 31	**Յիսուս աւծեալն Աստուծոյ Տէր մեր զկենարար ամենեցուն զվարդապետութիւնսն քարոզէր եւ զմի ըստ միոջէ գրեալ նշանագործութիւնսն կատարէր:** **Յիսուս աւծեալն Աստուծոյ Տէր մեր իւրոց աշակերտաց զխորհուրդ արքայութեանն երկնից յայտնէր եւ զդարձն յամենեցուն Աստուածն հեթանոսաց քարոզել հրամայէ:** *(Մ6354) Քարոզութիւն սրբոյ առաքելոյն Թադէոսի եւ հաւատալն Աբգարու թագաւորին ի Քրիստոս:* *(Մ3613) Յիսուս Քրիստոս Խ (40) աւուրբ յառաջ քան զօր մահուն, զաստուածային փառս իւր եցոյց ի Թափոր լերինն:*
ԼԲ 32	
ԼԳ 33	
ԼԴ 34	**Յիսուս աւծեալն Աստուծոյ Տէր մեր, ըստ մարգարէութեանցն, որ զնմանէ էին գայր ի չարչարանս ԺԹ** (19)**-երորդ ամի Տիբերեա թագաւորութեանն, ըստ որում ժամանակի եւ յայլ յունական յիշատակս գտաք ըստ սմին աւրինակի բանից պատմեալ, թէ արեգակն նուազեաց եւ Բիւթենիայ շարժեցաւ, Նիկիայ մեծ մասն կործանեցաւ, որ եւ միաբանք իսկ պատմին իրացն, որ ի չարչարանս կենարարին մերոյ պատահեցան: Գրե եւ Փղեգոն, որ զողոմպիադացն անդստին զնոցին ի նոցանէ յԳԺ** (13)**-երորդումն պատմէ զայս ձեւ աւրինակ բանից, թէ ի չորրորդում ամի երկերիւրորդի ողոմպիադին, եղեւ մեծ նուազութիւն արեգականն, քան զոր յառաջագոյն ոք ոչ գիտէր, եւ գիշեր վեցերորդ ժամ տունջեանն եղեւ, մինչեւ աստեղաց յերկինս երեւել, շարժումն մեծ ի Բիւթանիայ եւ մեծ մասն Նիկիայ կործանեցաւ, զայս այժմու յիշատակեալ այրս եւ այս մեծ իսկ նշանակ է ամին, յորում կենարարն մեր չարչարէր, ըստ վկայութեան Յովհաննու Աւետարանին, որ յետ ԵԺ** (15)**-երորդ ամին Տիբերեայ երեքամեա ժամանակ վարդապետութեան նորա լեալ վկայէ, ըստ նոցին ժամանակաց եւ Յովսեպպոս պատմէ, թէ յաւուրն Պենդեկոստէից դղորդիւն եւ սաւսափիւն նախ զքահանայիւքն պատէր, եւ ապա բարբառ յանկարծակի անդուստ ի ներքին տաճարէն լսելի լինէր զայս ձեւ աւրինակ բանից, թէ գնամք աստի գնամք, եւ այլ իմն նոյն Յովսէպպոս գրէ, որպէս թէ Պիղատոս դատաւոր առ այնու ժամանակաւ զկայսերական պատկերն գիշերի, ուր չէր աւրէն ի տաճարն էմոյծ կանգնեաց, եւ մեծի խռովութեան եւ կռուոյ սկիզբն արկ ի մէջ Հրէիցն, եւ անտի բազում վիշտք ի վշտաց հասանէին ազգին Հրէից**[28]**:**

	(Մ3613) Ամի տեառն ԼԴ (34) Պետրոս առաքեալ յետ գալստեան Սուրբ Հոգոյն նստաւ եպիսկոպոս յԵրուսաղէմ զամս Դ (4):
ԼԵ 35	**Երուսաղեմացւոց եկեղեցւոյն ձեռնադրութիւն յառաքելոցն առնու եպիսկոպոսութեան Յակովբոս եղբայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:** **Փիլովն Աղեքսանդրանցի այր բանիբուն ճանաչէր:**
ԼԶ 36	
ԼԷ 37	**Սանատրուկ** (Հայոց) **ամս Լ** (30)[29]**:**
ԼԸ 38	**Հետ մահուան հաւատացելոյն Աբգարու յԲ** (2-ի) **բաժանի թագաւորութիւնն նորա՝ Անանուն յեղեսեա եւ Սանատրուկ քեռորդի նորա ի Հայս, որ հաւատաց ի քարոզել առաքելոյն Թադէոսի եւ դարձեալ թողու զհաւատն: Սպան զառաքեալն եւ զմի դուստր իւր, զսուրբն Սանդուխտ:** **Գայիոս** (Հռոմայեցւոց) **ամս Դ** (4)**:**
ԼԹ 39	**Ագրիպպա** (Հրէից) **ամս է** (7)**:**
Խ 40	**Պետրոսի առաքելոյ նախ զԱնտիոքայ եկեղեցին հաստատէ, եւ ապա ի Հռոմ երթեալ քարոզէր եւ կաց անդ առաջնորդ զամս Ի** (20)**:** *(Մ2965) Գրեաց Մատթէոս աւետարանիչն իւր աւետարանն:*
ԽԱ 41	
ԽԲ 42	**Մարկոս աւետարանիչ, թարգման Պետրոսի, յԱղեքսանդր երթեալ քարոզէր զՔրիստոս ամս ԻԲ** (22)**:** **Կղաւդիոս** (Հռոմայեցւոց) **ամս ԺԴ** (14)**:**
ԽԳ 43	
ԽԴ 44	
ԽԵ 45	
ԽԶ 46	**Եպիսկոպոս յԱնտիոք Եւոդիոս յետ Պետրոսի:** **Ագրիպպաս որդի Ագրիպպա** (Հրէից) **ամս ԻԶ** (26)**:** *(Մ3613) Պետրոս, իշխանն առաքելոց, նստի յաթոռ քահանապետութեան ի Հռոմ զամս ԻԵ (25), յամիսս է (7), աւուրս Ը (8):*
ԽԷ 47	**Ի լինել հանդիսի ի Հռոմ գտան բիւրք ՈՂԴ** (694) **եւ Ռ** (1000) **մի:**
ԽԸ 48	
ԽԹ 49	
Ծ 50	*(Ե343) Գրեաց Մարկոս զաւետարանն յԱղեքսանդրիա:* *(Լատ. հր.) Բարդուղիմէոս առաքեալ նահատակեցաւ ի Հայս, յԱրեբան քաղաքի:*
ԾԱ 51	
ԾԲ 52	
ԾԳ 53	**Եգիպտացին զոր հազարապետն հարցանէր զՊաւղոս:**
ԾԴ 54	

ԾԵ 55	
ԾԶ 56	**Ներոն** (Հռոմայեցւոց) **ամս ԺԴ** (14):
Ծէ 57	
ԾԸ 58	
ԾԹ 59	
Կ 60	
ԿԱ 61	**Դարեհ** (Պարսից) **ամս Լ** (30):
ԿԲ 62	
ԿԳ 63	**ՅԱղեքսանդր յետ Մարկոսի եպիսկոպոս Անանիաս ամս ԻՁ** (26):
ԿԴ 64	**ԶՅակովբոս զեղբայրն Տեառն սպանին Հրեայքն քարամբք եւ յաջորդէ զաթոռ եպիսկոպոսութեանն Երուսաղէմի Շմաւովն, որ է Սիմովն:**
ԿԵ 65	
ԿԶ 66	
ԿԷ 67	**Երուանդ** (Հայոց) **ամս Ի** (20):
ԿԸ 68	
ԿԹ 69	**Պետրոս եւ Պաւղոս ի Հռովմ վկայեցին ի Ներովնէ: Յետ Պետրոսի ի Հռոմ եպիսկոպոս Ղինոս ամս ԺԴ** (14), **յԱնտիոք Բ** (2-րդ) **եպիսկոպոս էկաց Իգնատիոս:**
Հ 70	**Վեսպիանոս** (Հռոմայեցւոց) **ամս Ժ** (10):
ՀԱ 71	*(Մ2965) Եկաց պապ ի Հռոմ Լինոս յաշխարհէն Իտալիոյ, յերկրէն որ կոչի Դուսգան, ամս ԺԱ (11) ամիսս Գ (3) եւ աւր ԺԲ (12):*
ՀԲ 72	**Ժողովի մինչեւ ցերկրորդ ամն Վեսպիանոսի յորում եղեւ եւ հուսկ աւերն Հրեից, ի կենարարին քարոզութենեն ամք ԽԲ** (42): **Իսկ յԱնտիոքա պաշարմանէն ամք ՄԼԸ** (238): **Եւ յերկրորդ շինութենէ տաճարին ամք ՇՂ** (590): **Եւ յԱ** (1-ին) **շինութենէն ամք ՌՃԳ** (1103): **Հուսկ յետոյ վերջի աւեր տաճարին: Տիտոս զՀրէայս պաշարեաց եւ զերուսաղէմ ի հիմանց բրեաց, Զ** (6) **բիւր կոտորեաց, պատմէ Յովսէպոս, սովով եւ սրով ՃԻ** (120) **բիւր եւ այլ եւս Խ** (40) **եւ Ծ** (50) **բիւրոց գերեաց**[30]:
ՀԳ 73	
ՀԴ 74	
ՀԵ 75	
ՀԶ 76	
ՀԷ 77	
ՀԸ 78	
ՀԹ 79	
Ձ 80	**Տիտոս** (Հռոմայեցւոց) **ամս Բ** (2):

	Ի Հռոմ եպիսկոպոս երկրորդ Կղէտոս ամս Ը (8)**:**
ՁԱ 81	
ՁԲ 82	**Դոմետիանոս** (Հռոմայեցւոց) **ամս Ժ** (10)**:**
ՁԳ 83	
ՁԴ 84	
ՁԵ 85	**Աղեքսանդր եպիսկոպոս Բ** (2-րդ) **Աբիղիոս ամս ԺԳ** (13)**:** **Պատերազմ եւ մահ Երուանդայ եւ Երուազայ յԱրտաշիսէ:**
ՁԶ 86	
ՁԷ 87	**Արտաշէս** (Հայոց) **ամս ԽԱ** (41)**:**
ՁԸ 88	**Ի Հռոմ եպիսկոպոս Գ** (3-րդ) **Կղէմէս ամս Թ** (9)**:** **Երկուց ամսոց անուանք փոխեցան. Սեպտեմբերի՝ Գերմանիկոս եւ Հոգտեմբերի՝ Պարթիկոս:**
ՁԹ 89	
Ղ 90	
ՂԱ 91	**Արտաշես շինէ զԱրտաշատ որ կոչիւր բլուր ի խառունս Երասխա եւ Մեծամաւրայ եւ փոխէ ի նա զամենայն գեղեցկութիւն Երուանդայ քաղաքին**[31]**:** **Արշակ** (Պարսից) **ամս ԺԷ** (17)**:**
ՂԲ 92	
ՂԳ 93	
ՂԴ 94	
ՂԵ 95	
ՂԶ 96	**Յոհաննէս տուաւ ի Պատմոս կղզին, ուր ետես զյայտնութիւնն:**
ՂԷ 97	*(Մ2965) Սուրբն Դիոնէսիոս նահատակեցաւ ընկերօքն:*
ՂԸ 98	**Ներուաս** (Հռոմայեցւոց) **ամս Ա** (1)**:**
ՂԹ 99	**ՅԱղեքսանդր երրորդ եպիսկոպոս Կեդրոն ամս ԺԱ** (11)**:** **Տրայիանոս** (Հռոմայեցւոց) **ամս ԺԹ** (19)**:**
Ճ 100	**Ի Հռոմ եպիսկոպոս Դ** (4-րդ)**,** *(Մ3613) Անակլիտոս ամս Թ (9) եւ ամիսս Բ (2) եւ աւուրս Ժ (10):*
ՃԱ 101	
ՃԲ 102	**Յոհաննես արձակեցաւ ի Պատմոսէ:**
ՃԳ 103	
ՃԴ 104	
ՃԵ 105	**Ի Հռոմ եպիսկոպոս Ե** (5)**-երորդ Աղեքսանդրոս ամս Ժ** (10)**:**
ՃԶ 106	
ՃԷ 107	
ՃԸ 108	**Արտաշէս** (Պարսից) **ամս Ի** (20)**:**
ՃԹ 109	**Յետ Իգնատիոսի, եպիսկոպոս յԱնտիոք Գ** (3-րդ) **Հերովն:**

	(Մ2965) Սուրբն Իգնատիոս գազանակուր եղեւ:
ճժ 110	**Արտաշէս մեր հարկեաց Տրայիանոսի:** **Յերուսաղէմ եպիսկոպոս Գ** (3-րդ) **Յուստոս:**
ճժԱ 111	**Յաղեքսանդր եպիսկոպոս Դ Կաորիմոս ամս ԺԲ** (12)**:**
ճժԲ 112	
ճժԳ 113	**Յերուսաղէմ եպիսկոպոս յետ Յուստոսի Դ** (4-րդ)՝ **Զակքէոս, եւ ապա Ե-երորդ** (5-րդ)՝ **Տովբիաս: Իսկ Զ** (6-րդ)՝ **Բենիամին, Է** (7-րդ)՝ **Յոհաննէս, Ը** (8-րդ)՝ **Մատաթիաս, Թ** (9-րդ)՝ **Փիլիպպոս:**
ճժԴ 114	**Ի Հռոմ եպիսկոպոս Զ** (6-րդ) **Քսեստոս ամս ԺԱ** (11)**:**
ճժԵ 115	
ճժԶ 116	
ճժէ 117	
ճժԸ 118	**Ադրիանոս** (Հռոմայեցւոց) **ամս ԻԱ** (21)**:** **Արտաշէս կարգէ նախապետութիւնս զԴիմակիսեան եւ զՏրունիս եւ զԱմատունիս եւ զԱռաւեղեանս**[32]**:**
ճժԹ 119	
ճԻ 120	
ճԻԱ 121	**Աղեքսանդր եպիսկոպոս Ե** (5-րդ) **Յուստոս ամս ԺԱ** (11)**:**
ճԻԲ 122	
ճԻԳ 123	
ճԻԴ 124	
ճԻԵ 125	**Երուսաղէմ եպիսկոպոս յետ Փիլիպոսի Ժ** (10-րդ)՝ **Ենեկաս, ԺԱ** (11-րդ)՝ **Յուստոս, ԺԲ** (12-րդ)՝ **Ղեւի, ԺԳ** (13-րդ)՝ **Եփրեմ, ԺԴ** (14-րդ)՝ **Յովսի, ԺԵ** (15-րդ)՝ **Յուդա: Սոքա թլփատութենէ անտի մինչեւ պաշարումն Ադրիանոսի:**
ճԻԶ 126	**Ի Հռոմ եպիսկոպոս Է** (7-րդ) **Տեղեսփորոս ամս ԺԱ** (11)**:**
ճԻէ 127	
ճԻԸ 128	**Պերոզ** (Պարսից) **ամս ԼԴ** (34)**:** **Արտաւազդ** (Հայոց) **որդի Արտաշէսի ամս Բ** (2)**:**
ճԻԹ 129	
ճԼ 130	**Տիրան** (Հայոց) **որդի Արտաշէսի ամս ԻԱ** (21)**:** **ՅԱնտիոք Դ** (4-րդ) **եպիսկոպոս Կոռնելիոս:**
ճԼԱ 131	
ճԼԲ 132	
ճԼԳ 133	**ՅԱղեքսանդր եպիսկոպոս Զ-երորդ** (6-րդ) **Եւմենես ամս ԺԲ** (12)**:**
ճԼԴ 134	
ճԼԵ 135	**Վաղենտինոս հերձուածապետ եւ Կերդոն Մարկիոնացի:**
ճԼԶ 136	**Ի Հռոմ Ը** (8-րդ) **եպիսկոպոս Հւգենէս ամս Դ** (4)**:**

ճԼէ 137	**Յերուսաղէմ ԺՁ** (16-րդ) **եպիսկոպոս հեթանոսաց Ա** (1-ին) **եկաց Մարկոս:**
ճԼԸ 138	
ճԼԹ 139	**Տիտոս Անտոնինոս, որ կոչեցաւն բարեպաշտաւն** (Հռոմայեցւոց) **հանդերձ որդւովքն՝ Աւրեղեաւ եւ Ղուկէաւ ամս ԻԳ** (23)**:**
ճԽ 140	**Ի Հռոմ Թ** (9-րդ) **եպիսկոպոս Պիոս ամս ԺԵ** (15)**:**
ճԽԱ 141	
ճԽԲ 142	
ճԽԳ 143	
ճԽԴ 144	**ՅԱնտիոք եպիսկոպոս Երոս:**
ճԽԵ 145	
ճԽԶ 146	**ՅԱղեքսանդր եպիսկոպոս է** (7-րդ) **Մարկովն ամս Ժ** (10)**:**
ճԽէ 147	
ճԽԸ 148	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Էճիանոս առաջին, ազգաւ Յոյն, ամս Ե (5), ամիսս Զ (6), աւուրս է (7):*
ճԽԹ 149	
ճՕ 150	
ճՕԱ 151	**Տիգրան** (Հայոց) **որդի Արտաշեսի ամս ԽԳ** (43)**:**
ճՕԲ 152	
ճՕԳ 153	**Վաղեգիոս Պերոզ կոչեցաւ, այսինքն՝ յաղթող, վասն ի Հռոմայեցիսն արշաւելոյ:**
ճՕԴ 154	**Ի Հռոմ եպիսկոպոս Ժ** (10-րդ) **Անիկետոս ամս ԺԱ** (11)**, առ որով Պաւղիկարպոս երթեալ ի Հռոմ զբազումս ի հերեսիոտացն դարձոյց:** *(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Անակլետոս առաջին, ազգաւ Սուրինա, ամս Թ (9), եւ ամիսս Գ (3), աւուրս Դ (4):*
ճՕԵ 155	
ճՕԶ 156	**ՅԱղեքսանդր եպիսկոպոս Ը** (8-րդ) **Կեղադիոն ամս ԺԴ** (14)**:**
ճՕէ 157	
ճՕԸ 158	
ճՕԹ 159	
ճԿ 160	*(Մ6354) Սաբէլ հերձուածող, որ ասաց Երրորդութիւն, մի անձ եւ մի բնութիւն, զնոյն ի խաչ ելեալ, զոր նգովեաց եկեղեցի սուրբ, Գ (3) անձ եւ մի բնութիւն դաւանելով:*
ճԿԱ 161	**Երուսաղէմի եպիսկոպոս Ժէ** (17-րդ)՝ **Կասիանոս, ԺԸ** (18-րդ)՝ **Պուպղիոս, ԺԹ** (19-րդ)՝ **Մաքսիմոս, Ի** (20-րդ)՝ **Յուլիոս, ԻԱ** (21-րդ)՝ **Գայիանոս, ԻԲ** (22-րդ)՝ **Սիմաքոս, ԻԳ** (23-րդ)՝ **Այիոս, ԻԴ** (24-րդ)՝ **Յուլիանոս, ԻԵ** (25-րդ)՝ **Ապիոն:**
ճԿԲ 162	**Մարկոս Աւրեղիոս Անտոնինոս, որ եւ Բերոս եւ Ղուկիոս Աւրեղիոս**

	Կամոդոս ամս ԺԹ (19)**:** **Վաղարշ** (Պարսից) **ամս Ծ** (50)**:**
ճԿԳ 163	
ճԿԴ 164	**Վաղեգիոս Պերոզ՝ արքայ Պարթեւաց ի Հռովմայեցւոց վայրս արշաւեաց ի վերջ:**
ճԿԵ 165	
ճԿԶ 166	**Հռովմայ եպիսկոպոս ԺԱ** (11-րդ) **Սովտեր ամս Թ** (9)**:**
ճԿԷ 167	
ճԿԸ 168	**Ի հասանել հալածանացն վկայեաց Պողիկարպոս:** **ՅԱնտիոք եպիսկոպոս Զ** (6-րդ) **Թեոփիլոս, որոյ բազում գիրք եւ ցայժմ շրջին:**
ճԿԹ 169	
ճՀ 170	
ճՀԱ 171	**ՅԱղեքսանդր եպիսկոպոս Ագրիպպինոս ամս ԺԲ** (12)**:**
ճՀԲ 172	**Դիոնէսիոս եպիսկոպոս Կորնթացի:**
ճՀԳ 173	**Ապողինարես Ասիացի յԵրապոլիտացւոց նահանգին եպիսկոպոս ճանաչէր:**
ճՀԴ 174	
ճՀԵ 175	**Ի Հռոմ եպիսկոպոս ԺԲ** (12-րդ) **եղեւ Թորոս ամս ԺԵ** (15)**:**
ճՀԶ 176	
ճՀԷ 177	
ճՀԸ 178	
ճՀԹ 179	**Անտիոքու եպիսկոպոս Մաքսիմոս Դ** (4)**:**
ճՁ 180	
ճՁԱ 181	**Կոմոդոս** (Հռոմայեցւոց) **ամս ԺԳ** (13)**:**
ճՁԲ 182	**Աղեքսանդրի եպիսկոպոս Ժ** (10-րդ) **Յուլիանոս ամս Ժ** (10)**:**
ճՁԳ 183	**Իրենիոս եպիսկոպոս Ղունգուն քաղաքի Գալլեացւոց:**
ճՁԴ 184	
ճՁԵ 185	
ճՁԶ 186	**Երուսաղէմի եպիսկոպոս ԻԶ** (26-րդ)՝ **Մաքսիմոս, Իէ** (27-րդ)՝ **Անտոնինոս, ԻԸ** (28-րդ)՝ **Վաղէս, ԻԹ** (29-րդ)՝ **Դողիքիանոս, Լ** (30-րդ)՝ **Նարկեսոս, ԼԱ** (31-րդ)՝ **Դիոս, ԼԲ** (32-րդ)՝ **Գերմանիոն, ԼԳ** (33-րդ)՝ **Գուրդիանոս, ԼԴ** (34-րդ)՝ **դարձեալ նոյն Նարկեսոս: Սոցա չեղեւ յայտնի ժամանակն, վասն չգիտելոյ ամբողջ զվերակացութիւնն**[33]**:** *(Ս5619) Աստ եղեւ խնդիր վասն աւուրն Զատկի, որպէս պատմէ Եւսեբի:*
ճՁԷ 187	
ճՁԸ 188	

ճՁԹ 189	Ի Հռոմ եպիսկոպոս ԺԳ (13-րդ) Բիկտոր ամս ԺԲ (12):
ճՂ 190	
ճՂԱ 191	
ճՂԲ 192	ՅԱնտիոք եպիսկոպոս Ը (8-րդ) Սերապիոն:
ճՂԳ 193	
ճՂԴ 194	Եղինոս Պերտինաքս (ի Կոստանդնուպալիս) ամ Ա (1): Վաղարշ (Հայոց) ամս ԻԱ (21): ՅԱղեքսանդր եպիսկոպոս ԺԱ (11-րդ) Դեմետրիոս ամս ԽԴ (44):
ճՂԵ 195	Սեւերոս (ի Կոստանդնուպալիս) ամս ԺԸ (18)[34]:
ճՂԶ 196	Կղեմես երեց յԱղեքսանդր եւ Պանտենոս փիլիսոփայ ի մերմէ ոճոյս ճանաչէին:
ճՂԷ 197	Վաղարշ շինէ զՎաղարշաւան ի Բասեան, պատէ պարսպաւ եւ զաւանն Վարդգէս՝ ի վերայ Քասաղ գետոյ եւ անուանեաց Վաղարշապատ, որ եւ Նոր քաղաք[35]:
ճՂԸ 198	
ճՂԹ 199	Կեսարացւոց եպիսկոպոս Պողիկրատէս եւ Բակքիւղղաս:
Մ 200	
ՄԱ 201	
ՄԲ 202	
ՄԳ 203	Ղէոնիդէս հայր Իւրեգինէի վկայեաց: Ի Հռոմ եպիսկոպոս ԺԴ (14-րդ) Զեփիւնոս ամս ԺԲ (12):
ՄԴ 204	
ՄԵ 205	
ՄԶ 206	
ՄԷ 207	
ՄԸ 208	
ՄԹ 209	
ՄԺ 210	
ՄԺԱ 211	
ՄԺԲ 212	Արտաւան (Պարսից) ամս ԼԱ (31):
ՄԺԳ 213	Անտոնինոս որդի Սեւերեա, որ կոչեցաւն Կաղղում ամս է (7):
ՄԺԴ 214	Խոսրով (Հայոց) ամս ԽԸ (48):
ՄԺԵ 215	Ի Հռոմ եպիսկոպոս ԺԵ (15-րդ) Կաղիւստոս ամս Թ (9): ՅԵրուսաղէմ եպիսկոպոս ԼԶ (36-րդ) Աղէքսանդրոս: ՅԱնտիոք եպիսկոպոս Թ (9-րդ) Եկղիպիադէս:
ՄԺԶ 216	
ՄԺԷ 217	Խոսրով միաբանէ զզաւրս Հայոց անցեալ ընդ լեառն մեծ, վրէժ պահանջէ զհաւրն մահուան, վանեալ զնոսա եւ նշան կանգնէ անդէն[36]:

ՄԺԸ 218	
ՄԺԹ 219	
ՄԻ 220	**Մարկիանոս** (Հռոմայեցւոց) **ամս Ա** (1):
ՄԻԱ 221	**Անտոնինոս միւս** (Հռոմայեցւոց) **ամս Դ** (4): **ՅԱնտիոք եպիսկոպոս Ժ** (10-րդ) **Փիլիպպոս:** **Ուռհայի թագաւորէ Աբգար:**
ՄԻԲ 222	
ՄԻԳ 223	
ՄԻԴ 224	**Ի Հռոմ եպիսկոպոս ԺՁ** (16-րդ) **Ուրբանոս:**
ՄԻԵ 225	**Աղեքսանդրոս՝ Մամեա ուստր** (Հռոմայեցւոց) **ամս ԺԳ** (13):
ՄԻԶ 226	
ՄԻԷ 227	
ՄԻԸ 228	
ՄԻԹ 229	
ՄԼ 230	
ՄԼԱ 231	**ՅԱնտիոք եպիսկոպոս ԺԱ** (11-րդ) **Զեբենոս:**
ՄԼԲ 232	
ՄԼԳ 233	**Ի Հռոմ եպիսկոպոս ԺԵ** (15-րդ) **Պոնտիանոս ամս Թ** (9): **Իւրեգինէս ի դպրոց էր յԱղեքսանդր:**
ՄԼԴ 234	
ՄԼԵ 235	
ՄԼԶ 236	
ՄԼԷ 237	
ՄԼԸ 238	**Մաքսիմիանոս** (Հռոմայեցւոց) **ամս Գ** (3): *(Ս5619) ՁԱղեքսանդրոս Մամեա ոմանք ԺԳ (13) ամ ասեն եւ այլք ԺՁ (16):*
ՄԼԹ 239	
ՄԽ 240	
ՄԽԱ 241	**Գորդիանոս** (Հռոմայեցւոց) **ամս Ձ** (6):
ՄԽԲ 242	**Ի Հռոմ եպիսկոպոս ԺԸ** (18-րդ)՝ **Անտերոս ամիս մի եւ ապա ԺԹ** (19-րդ)՝ **Բարիանոս ամս ԺԳ** (13):
ՄԽԳ 243	**Սպանեալ զԱրտաւան, Արտաշիր որդի Սասանա եւ բառնա զթագաւորութիւն նոցա, որք բաւեցին յամս ՆԾԴ** (454): **Արտաշիր** (Պարսից) **ամս ԽՁ** (46):
ՄԽԴ 244	
ՄԽԵ 245	
ՄԽԶ 246	
ՄԽԷ 247	**Փիլիպպոս** (Հռոմայեցւոց) **ամս Է** (7):

ՄԽԸ 248	Հազար ամ Հռովմայ լցաւ:
ՄԽԹ 249	
ՄՕ 250	
ՄՕԱ 251	Ի Հռոմ եպիսկոպոս Ի (20-րդ) Կոռնելիոս ամս Գ (3):
ՄՕԲ 252	
ՄՕԳ 253	Յաղեքսանդր եպիսկոպոս ԺԳ (13-րդ) Դիոնէսոս ամս ԺԵ (15):
ՄՕԴ 254	Դեկոս (Հռոմայեցւոց) ամ Ա (1):
ՄՕԵ 255	Ի Հռոմ եպիսկոպոս ԻԱ (21-րդ)՝ Ղուկիոս ամիսս Ը (8), եւ ապա ԻԲ (22-րդ)՝ Ստեփանոս՝ ամս Բ (2): Յերուսաղէմ Մըզաբանոս ԼԵ (35-րդ) եպիսկոպոս: Յանտիոք եպիսկոպոս ԺԲ (12-րդ) Բաբիղաս եւ ապա ԺԳ (13-րդ)՝ Փաբիանոս: Գաղղոս եւ Վաղոսիանոս (ի Կոստանդնուպաւլիս) ամ Ա (1) եւ ամիսս Թ (9):
ՄՕԶ 256	
ՄՕԷ 257	Նաւատիոս հերձուածս յարոյց: Ի Հռոմ եպիսկոպոս ԻԳ (23-րդ) Քսեստոս ամս ԺԱ (11): Յանտիոք՝ ԺԴ (14-րդ), Դեմետրիանոս: Վաղերիանոս եւ Գաղիանոս (Հռոմայեցւոց) ամս ԺԵ (15):
ՄՕԸ 258	
ՄՕԹ 259	
ՄԿ 260	
ՄԿԱ 261	Յանտիոք ԺԵ (15-րդ) եպիսկոպոս Պաւղոս Սամոստացի, որ հերետիկոս գտեալ մերժեցաւ յԱստուծոյ:
ՄԿԲ 262	Խոսրով սպանաւ յԱնակայ եւ անիշխան լիեալ աշխարհս Հայոց զամս Իէ (27): Բաւեալք ի Վաղարշակայ ամք ՅՂԸ (398):
ՄԿԳ 263	
ՄԿԴ 264	
ՄԿԵ 265	Ի Հռոմ եպիսկոպոս ԻԴ (24-րդ) Դիոնէսոս ամս Թ (9):
ՄԿԶ 266	
ՄԿԷ 267	
ՄԿԸ 268	Յաղեքսանդր եպիսկոպոս ԺԴ (14-րդ) Մաքսիմոս ամս ԺԸ (18), եւ յերուսաղէմ՝ ԼԶ (36-րդ) Հումենիոս:
ՄԿԹ 269	
ՄՀ 270	
ՄՀԱ 271	
ՄՀԲ 272	Սամոստացին զԱրտեմոնի հերձուածն նորոգեաց, ընդ որոյ անկանելն եկաց փոխանակ ԺԶ (16) Դոմնոս: Կղաւդիոս (Հռոմայեցւոց) ամս Բ (2):

ՄՀԳ 273	
ՄՀԴ 274	**Աւրեղիանոս** (Հռոմայեցւոց) **ամս Զ** (6):
ՄՀԵ 275	**Ի Հռոմ եպիսկոպոս ԻԵ** (25-րդ) **Փելիքս ամս ԺԹ** (19):
ՄՀԶ 276	
ՄՀԷ 277	
ՄՀԸ 278	
ՄՀԹ 279	
ՄՁ 280	**Պրոբոս** (Հռոմայեցւոց) **ամս է** (7):
ՄՁԱ 281	
ՄՁԲ 282	**Ի Հռոմ եպիսկոպոս ԻԶ** (26-րդ) **եւ ապա ԻԷ** (27-րդ)՝ **Գայիոս:**
ՄՁԳ 283	**Լաւոդիկեցւոց եպիսկոպոս Անատողէս:**
ՄՁԴ 284	
ՄՁԵ 285	**ՅԱնտիոք ԺԵ** (15-րդ) **Կիւրղոս:**
ՄՁԶ 286	**Մոլեկան աղանդն Մանիքեցւոց ի վարս մարդկան եմուտ:** **ՅԱղեքսանդր ԺԵ** (15-րդ) **եպիսկոպոս Թէովնաս ամս ԺԹ** (19):
ՄՁԷ 287	**Կարաս** (Հռոմայեցւոց) **հանդերձ որդւովքն Կարինաւ եւ Նումերիանոսիւ ամս Բ** (2): **Ի Կարա վախճանելն ի Միջագետս, Նումերիանոսի առ նովաւ լինէր սպանանել ի Թրակ եւ Կարինոս ի նոյնպէս ի Կորնակա պատերազմին:**
ՄՁԸ 288	
ՄՁԹ 289	**Դիոկղետիանոս** (Հռոմայեցւոց) **ամս Ի** (20): **Կոնակ սպարապետ մեծին Խոսրովայ հաւրն Տրդատա, ասեն յերկարեալ զամս կենացն ամս ՃԿ** (160) **եւ ունել ի ժամ մահուանն զաչս եւ զլսելիս, եւ զհերս եւ զատամունս եւ զզաւրութիւն մարմնոյ մանկութեան: Սա եհար զԿարոս կայսր, եւ սպանաւ Կարոս որդւովն իւրով ի պատերազմին**[37]: **Մինչեւ ցայսոսիկ ժամանեալ վայր, անկասկած հետեւմամբ առաջնորդ ունելով զհաւաստապատում գիրս ծայրագոյն զյառաջասացեալ վարդապետացն**[38]: **Իսկ յայսմ հետէ՝ ի տեղւոջս, որ պիտոյացաւ այլ ինչ յաւելուլ ի շարագրութիւնս մեր աշխատութիւն եւ տարակուսանք անկաւ, յաղագս անմիաբան գրելոյ պատմագրաց, ոմն առաւել եւ ոմն նուազ շարագրելով, եւ կամ թէ ոչ բնաւ: Սակայն եւ մեք զբնախաւսիցն զոճ պահելով, սկսցուք ըստ կարի զհետ ճշգրտութեանն հետեւեալ, եւ զառաջին ամն Տրդատայ զուգել, երկրորդ ամին Դիոկղէտիանոսի՝ ըստ Մովսէսի Հայոց պատմագրի, եւ ոչ Թ** (9)**երորդին կամ առաջներորդին ըստ ոմանց: Իսկ զՇապհոյ Պարսից, եթէ ՀԳ** (73) **ամ համարիս թագաւորեալ, սկսանելի է ի սպանմանէն Խոսրովու, ապա թէ ԽԶ** (46) **ամ համարիս, զոյգ ընդ Տրդատայ, զԻԷ** (27) **ամն ընդ Արտաշիրի հաւրն իւր ի կեանս եւ զԽԶ** (46),

	յետ մահուն: Եւ այսպէս զկանոնեալսն հասուսցուք մինչեւ զՀայոց թուականն կամաւքն Աստուծոյ, ի յոլովիցն զստուգագոյնն սիրելով:
ՄՂ 290	
ՄՂԱ 291	**Տրդատ** (Հայոց) **ամս ՃԶ** (56)**:** **Շապուհ** (Պարսից) **ամս ԽԶ** (46)**:** *(Մ2965) Թագաւորեաց Հայոց Տրդատ որդի Խոսրովու, ամս ՃԶ (56):*
ՄՂԲ 292	**Սուրբն Գրիգոր սաստիկ տանջեալ վիրապընկէց լինէր:**
ՄՂԳ 293	
ՄՂԴ 294	
ՄՂԵ 295	
ՄՂԶ 296	*(Լատ. հր.) Քաջագործութիւնք Տրդատայ ի Պարսս եւ ի Հայս, յառաջ քան զհաւատալն*[39]*:*
ՄՂԷ 297	
ՄՂԸ 298	
ՄՂԹ 299	
Յ 300	
ՅԱ 301	**Ի Հռոմ եպիսկոպոս ԻԸ** (18-րդ) **Մարկեղիանոս ամս Ժ** (10):
ՅԲ 302	
ՅԳ 303	
ՅԴ 304	**Յերուսաղէմ եպիսկոպոս ԼԸ** (38-րդ) **զԱբդաս:** **ԵԺ**(15)**-ան ամի Տրդատայ, յորում ճգնազգեաց կուսանքն սուրբ Հռիփսիմեանքն քաջութեամբ նահատակեցան ի Վաղարշապատ քաղաքի եւ աստուածային զանազան նշանք եղեն առ Տրդատ եւ առ աշխարհն Հայոց, սուրբն Գրիգոր ելեալ ի բանդէ վիրապին աստուածային այցելութեամբ լուսաւոր վարդապետութեանն սկիզբն առնէ, եւ հարուածոցն բժշկութիւն, եւ ցուցումն յԱստուծոյ՝ Սուրբ Կաթողիկէին, եւ այլոց վկայարանիցն հիմնարկութիւն**[40]**:**
ՅԵ 305	**Հայրապետ** (Հայոց) **սուրբ Գրիգոր ամս Լ** (30)**:** **Առաջին ամ աստուածածանաւթութեանն Հայոց:**
ՅԶ 306	**Յերուսաղէմ ԻԹ** (29-րդ) **եպիսկոպոս Հերմոն:**
ՅԷ 307	**յԵԺ** (15)**-երորդ ամին Տրդատայ, նստի յաթոռ սուրբ առաքելոյն Թադէոսի սուրբն Գրիգոր:** **ՅԱնտիոք եպիսկոպոս ԺԹ** (19-րդ) **Տիրանոս:**
ՅԸ 308	**ՅԱղեքսանդր ԺԶ** (16-րդ) **եպիսկոպոս Պետրոս ամս Ժ** (10):
ՅԹ 309	**Կոստանդիանոս** (Հռոմայեցւոց) **ամս ԼԴ** (34)**:** **Ի Հռոմ եպիսկոպոս ԻԹ** (29-րդ) **Միղտիադէս:**
Յժ 310	*(Մ9796, Ե1221) Յայսմ ամի շինեցաւ Ս. Կարապետն, մականուն Գլակավանք կոչեցեալ, զոր շինեաց սուրբն Գրիգոր ի գալն ի Կեսարու՝ հայրապետ գոլով, բերելով զնշխարս Կարապետին եւ հաստատեալ*

	ի տեղին յայն, եւ ի Մատրավանսն զկուռսն խորտակելով՝ զօրութեամբն Քրիստոսի եւ սուրբ Կարապետի[41]:
ՅԺԱ 311	
ՅԺԲ 312	*(Մ3681, Նաթանայել Հավուցքառեցի) Յայսմ ամի շինեց արքայն Հայոց Տրտատ զարմանալին տեսողաց զհովանոցն քեռն իւրոյ աւրեորդին Խոստրովիթխթոյ ի գեղաքաղաքին ի Գառնի, որ այժմ կոչի Սարաւոյթ Դրդատայ[42], յառ որ մերն կայ գերեզման սուրբ հայրապետացն Հայոց տէր Գէորգայ եւ երիցս երանե(ա)լ սուրբ ճգնաւորին տէր Մաշտոցին եւ տէր Յովանեսի[43], եւ սուրբն Գրիգոր շինե(ա)ց զՍուրբն Գրիգոր եկեղեցին ի Գառնի եւ կանկնե(ա)ց նշանք տէրունական[44]:* *(Մ1899) Յայսմ ամի Կոստանդիանոս ընդարձակեաց զԲիւզանդիա եւ անդ փոխեաց զթագաւորութիւնն Հռոմայ, եւ յիւր անունն կոչեաց Կոստանդնուպոլիս:*
ՅԺԳ 313	
ՅԺԴ 314	
ՅԺԵ 315	
ՅԺԶ 316	**ՅԱղեքսանդր Պետրոս վկայեաց եւ յաջորդէ զեպիսկոպոսութիւն ժէ** (17-րդ) **Աքիղղաս ամիսս է** (7)**: ՅԱղեքսանդր եպիսկոպոս ԺԸ** (18-րդ) **Աղեքսանդրոս ամս ժէ** (17)**:** *(Մ3613) Կոստանդիանոս կայսրն դարձաւ ի Քրիստոս եւ մկրտեցաւ ի Սեղբեստրոսէ[45]:*
ՅԺԷ 317	
ՅԺԸ 318	
ՅԺԹ 319	**Ի Հռոմ ԼԱ** (31-րդ) **եպիսկոպոս Սիղուէստրոս:**
ՅԻ 320	
ՅԻԱ 321	
ՅԻԲ 322	
ՅԻԳ 323	
ՅԻԴ 324	
ՅԻԵ 325	**Արիոսի եւ Աղեքսանդրոսի գժտութիւն:**
ՅԻԶ 326	
ՅԻԷ 327	
ՅԻԸ 328	
ՅԻԹ 329	**Աստանաւր աւարտումն Քրոնիկոն գրոցն Եւսեբեայ[46]:** **Սուրբ ժողովն Նիկիայ ՅԺԸ** (318)**-իցն[47]:** *(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Մարկոս առաջին, ազգաւ Հռոմայեցի, ամս Գ (3), ամիսս Թ (9), աւուրս Ի (20):*
ՅԼ 330	**Յետ Ի** (20-րդ) **ամին Կոստանդիանոսի կոչեցան թագաւորք Յունաց**

	եւ Հռոմոց, զի թագաւորեցին ի Կոստանդինուպաւլիս[48]:
ՅԼԱ 331	
ՅԼԲ 332	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Յուլիոս առաջին, ազգաւ Հռոմայեցի, ամս ԺԸ (18), ամիսս Բ (2), աւուրս Ե (5):*
ՅԼԳ 333	
ՅԼԴ 334	
ՅԼԵ 335	Սուրբն Գրիգոր բնակեալ ի Մանեա այրսն եւ ընդ ժամանակս երեւէր եւ հաստատէր ի հաւատս, բայց յորժամ եկն Արիստակէս ի ժողովոյն Նիկիայ, այլ ոչ ոք ետես բնաւ, բազում ամս բնակեալ ի նմա փոխի ի կարգս հրեշտակաց: Հովուաց գտեալ զսուրբն Գրիգոր վախճանեալ՝ թաղեցին, ոչ գիտելով ոք իցէ տեսչութեամբ Աստուծոյ, եւ յետ բազում ամաց յայտնեալ ճգնաւորի ումեմն Գառնկոյ եւ եդաւ ի գեւղն Թորդան նշխարք սրբոյն[49]:
ՅԼԶ 336	Ներսէհ (Պարսից) ամս Թ (9): Ռստակէս (կբղ.) ամս է (7):
ՅԼԷ 337	
ՅԼԸ 338	
ՅԼԹ 339	
ՅԽ 340	
ՅԽԱ 341	
ՅԽԲ 342	Արքեղաւոս յաղագս կշտամբելոյն ի սրբոյն Ռստակիսայ սպան զնա սրով ի Ծոփաց գաւառին:
ՅԽԳ 343	Բազմապատիկ երանելին Կոստանդիանոս հանգեաւ յամսեան մայիս, որ ահեկանի ի ԻԲ (23)ն: Կոստանդին եւ Կոստանդ եւ Կոստանտոս (Հռոմայեցւոց) որդիք Կոստանդիանոսի ամս ԽԴ (44): Վրթանէս (կբղ.) ամս ԺԵ (15): *(Մ5619) Կոստանդինոս ի Գալլիայ, Կոստաս ի Հռոմ եւ Կոստանդէս ի Կոստանդնուպօլիս, որ համախոհ եղեւ Արիոսի եւ ասաց դարձուցանել զսայ եւ ընդունել եւ էհաս նմա դատաստան Աստուծոյ:*
ՅԽԴ 344	Երեւումն սուրբ Խաչին յԵրուսաղէմ առ Կիւրղիւ հայրապետի: *(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Լիպէրիոս առաջին, ազգաւ Հռոմայեցի, ամս Թ (9), ամիսս Զ (6), աւուրս Ե (5):*
ՅԽԵ 345	Որմիզդ (Պարսից) ամս Գ (3):
ՅԽԶ 346	Մեծազաւր արքայն Տրդատ դեղակուր եղեալ ի զաւրաց իւրոց վախճանի, յորմէ հետէ նուաստանալոյ առին սկիզբն Հայք[50]: Խոսրով (Հայոց) ամս Թ (9):
ՅԽԷ 347	Յետ մահուան Տրդատա, Սանատրուկ՝ որ ի կողմանս Աղուանից,

	սպանանէ զսուրբն Գրիգորիս՝ զերեց որդին Վրթանայ, ընթադրեալ ի ծիսն ի Վատնիանեան դաշտի, եւ եդաւ յԱմարաս նշխարք սրբոյն: *(Մ3613) Տէր Յուսիկ եւ տէր Գրիգորիս թոռունք սրբոյն Գրիգորի Լուսաւորչի ամս Զ (6): Զսա բրածեծ արարեալ արքայն Տիրան յաղագս ոչ թողլոյ մուծանել զպատկերս կռոց յեկեղեցի եւ վախճանի ի ծեռաց նորա: Իսկ սուրբն Գրիգորիս առաքեալ կաթուղիկոսն կողմանն Աղուանից եւ անդ կատարի նահատակութեամբ:*
ՅԽԸ 348	**Շապուհ** (Պարսից) **ամս ՀԲ** (72)**:**
ՅԽԹ 349	
ՅՕ 350	
ՅՕԱ 351	
ՅՕԲ 352	
ՅՕԳ 353	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Ֆիլիքս երկրորդ, ազգաւ Հռոմայեցի, ամս Դ (4), ամիսս Զ (6), աւուրս Դ (4):*
ՅՕԴ 354	**Սկիզբն Մ** (200)**եկին Անդրէասայ**[51]**:** *(Լատ. հր.) Զաւրաւարն Բագարատ եւ Վահան Ամատունի յաղթեն զապստամբս*[52]*:*
ՅՕԵ 355	**Տիրան** (Հայոց) **ամս ԺԳ** (13)**:**
ՅՕԶ 356	**Յայսմ ժամանակի ասեն եդեալ զԱրտեմոնի**[53] **ընթերցուածն:**
ՅՕԷ 357	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Լիպէրիոս երկրորդ, ազգաւ Հռոմայեցի, ամս Գ (3), ամիսս Է (7), աւուրս Ե (5):*
ՅՕԸ 358	**Զսուրբն Վրթանէս թէպէտ եւ բազում անգամ կամեցան նախարարքն նենգիւ սպանանել, սակայն ոչ այնպէս, այլ իւրով մահուամբ վճարի: Յուսիկն** (կթղ.) **ամս Զ** (6)**:**
ՅՕԹ 359	
ՅԿ 360	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Դամասիոս առաջին, ազգաւ Սպանացի, ամս ԺԸ (18), ամիսս Բ (2), աւուրս Ժ (10):*
ՅԿԱ 361	
ՅԿԲ 362	
ՅԿԳ 363	**Զսուրբն Յուսիկ սպան Տիրան եւ զԴանիէլ քահանայ**[54]**: Յուսիկն եւ Գրիգորիս եղբարք, որդիք Վրթանիսի:**
ՅԿԴ 364	**Փառներսեհ** (կթղ.) **ամս Ե** (5)**: Փառներսեհ, ոչ ի նոյն ազգէ**[55]**, այլ ի Տարաւնո, ի գեղջէ Աշտիշատոյ:**
ՅԿԵ 365	
ՅԿԶ 366	
ՅԿԷ 367	**Յուլիանոս** («ի Կոստանդնուպաւլիս») **ամ Ա** (1) **եւ ամիսք Ը** (8)**:**
ՅԿԸ 368	**Արշակ** (Հայոց) **ամս Լ** (30)**:**
ՅԿԹ 369	**Յուբիանոս** («ի Կոստանդնուպաւլիս») **ամ Ա** (1)**: Զսուրբն Ներսէս** (կթղ.) **ամս ԼԴ** (34)**:**

	Սուրբն Ներսէս զբնաւ կարգ եկեղեցւոյ բարւոք եւ վայելչապէս նորոգէր: **Սուրբն Ներսէս որդի Աթանագինի, թոռն Յուսկանն, թոռին սրբոյն Գրիգորի**[56]**:** *(Մ3613) Սա վախճանի ի ծեռանէ արքային Պապա, յաղագս յանդիմանելւոյ ի նմանէ, դեղ մահոյ արբուցեալ նմա: Եւ նա լի Հոգով Սրբով բազում ինչ ի հանդերձելւոցն մարգարէացաւ վասն կործանման քահանայապետութեան եւ թագաւորութեան ազգիս Հայոց եւ վասն գալստեան Ներհինն եւ եւս՝ զոր թէ կամիս գտցէս յիւրումն ճա(ռիս):*
ՅՀ 370	**Վաղենտիանոս եւ Վաղէս** («ի Կոստանդնուպալիս») **ամս ԺԱ** (11)**:**
ՅՀԱ 371	
ՅՀԲ 372	
ՅՀԳ 373	
ՅՀԴ 374	
ՅՀԵ 375	
ՅՀԶ 376	*(Լատ. հր.) Եպիսկոպոսն Բագրեւանդա եւ Արշարունեաց զերանելին Խաղ, աջակից եղեալ սրբոյն Ներսէսի՝ ի բարեկարգութիւն եկեղեցւոյ*[57]*:*
ՅՀԷ 377	
ՅՀԸ 378	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Սիրիկոս առաջին, ազգաւ Հռոմայեցի, ամս ԺԳ (13), ամիսս ԺԱ (11), աւուրս ԺԵ (15):*
ՅՀԹ 379	
ՅՁ 380	
ՅՁԱ 381	**Բազում նեղութիւն հասեալ ի Վաղեսէ քրիստոսեան ոճոյս, վասն Արիանոսացն, որ եւ զՆերսէս աքսորէր ի կղզի, զառաքեալն յԱրշակայ ի պատճառս սիրոյ, յորոյ ժամանակս էր եւ մեծն Բարսիղ եւ եղբայր նորին Գրիգոր եւ Գրիգոր Աստուածաբան:** **Գրատիանոս** («ի Կոստանդնուպալիս») **ամս Ե** (5)**:**
ՅՁԲ 382	
ՅՁԳ 383	
ՅՁԴ 384	
ՅՁԵ 385	
ՅՁԶ 386	**Թեոդոս մեծ** («ի Կոստանդնուպալիս») **ամս ԻԷ** (27)**:**
ՅՁԷ 387	**Մեծին Թեոդոսի բազում բարեգործութիւն պատմի յիւրում ժամանակս յաւէտ առ Հայք:** *(Մ3681, Նաթանայել Հավուցթառեցի) Եւ առաւել զմեծ հայրապետն եւ զպ[ատրիարգ]ն Հայոց զՆե[ռսես] պատվե(ա)ց, քան զայլ պատրիարգերն Յունաց*[58]*:*
ՅՁԸ 388	

ՅՁԹ 389	Երեւեցան ի Հնդիկս գազանք, ցլափիղք, ընծուղտք ձիանմանք եւ այլ զանազան բազմադիմիք:
ՅՂ 390	
ՅՂԱ 391	
ՅՂԲ 392	
ՅՂԳ 393	
ՅՂԴ 394	
ՅՂԵ 395	
ՅՂԶ 396	Սուրբ ժողովն Կոստանդնուպաւլսի ՃԾ (150)-իցն վասն հոգեմարտին Մակեդոնայ եւ գումարին ի Նիկիա ժողովն ամք ԿԷ (67)[59]: Զուիթ երէց Արտաշատու վկայեալ սպանաւ ի Շապհոյ:
ՅՂԷ 397	
ՅՂԸ 398	Արշակ սաւուղաբար արարեալ յԱնյուշն բերդի, ի Խուժաստան մեռանի եւ թագաւորէ Պապ որդի նորա: Պապ (Հայոց) ամս է (7):
ՅՂԹ 399	*(Մ3613) Երանելին Ճէրօնիմոս զամենայն սուրբ գիրս թարգմանէ յԵբրաեցոց լեզվէ ի Լատինն[60]:*
Ն 400	
ՆԱ 401	
ՆԲ 402	
ՆԳ 403	Սպան զսուրբն Ներսէս Պապ, դեղով մահու[61]: Շահակ ի զաւակէ Աղբիանոսի ի Հարքայ ի Մանազկերտոյ, (կթղ.) ամս Դ (4):
ՆԴ 404	
ՆԵ 405	Պապ վճարի չարամահութեամբ ի Թեոդոսէ վասն իւրոյ անզգամութեան եւ ի տեղին թագաւորեցուցեալ զՎարազդատ ոմն ի նմին ազգէ: Վարազդատ (Հայոց) ամս Դ (4):
ՆԶ 406	
ՆԷ 407	Զաւեն (կթղ.) ամս Դ (4), եղբայր Շահակայ:
ՆԸ 408	
ՆԹ 409	Արշակ եւ Վաղարշակ (Հայոց) ամս Դ (4):
ՆԺ 410	
ՆԺԱ 411	Արկադէս եւ Ոնորիոս («ի Կոստանդնուպաւլիս») ամս ԻԶ (26): Ասպուրակէս (կթղ.) ամս Ե (5), եւ սա նոցին եղբայր Շահակայ եւ Զաւենա:
ՆԺԲ 412	Թագաւորք Յունաց եւ Պարսից, զաշխարհս Հայոց յերկուս բաժանեցին յաւուրս Արշակայ, որ երթեալ բնակէր առ Յունաւք: Արշակ տիրէր արեւմտային մասին եւ Շապուհ արեւելայնոյս՝ զԽոսրով Բագ-

	ռատունի[62] **թագաւորեցուցեալ:** **Զարմանալին սուրբն Յոհան Ոսկեբերան առ սոքաւք լիեալ եպիսկոպոս քաղաքին Կոստանդինուպալսի:**
ՆԺԳ 413	**Խոսրով** (Հայոց) **ամս Ե** (5)**:**
ՆԺԴ 414	
ՆԺԵ 415	
ՆԺԶ 416	**Զսուրբն Սահակ որդի մեծին Ներսիսի յաջորդէ յաթոռ հայրապետութեան Հայաստանեաց:** **Սուրբն Սահակ** (կթղ.) **ամս ՃԱ** (51)**:** *(Մ3613) Տէր սուրբ Սահակ Սուրէնեան, Պալհաւ, որդի Մեծին Ներսեսի, թոռին Յուսկանն, թոռին սրբոյն Գրիգորի, ամս ՃԱ (51): Առ սա եկեալ նախարարացն Հայոց խնդրէին միաբանել ի չարախօսութիւն թագաւորին իւրեանց Արտաշիրի առ Պարսից արքայն Շապուհ: Որ ոչ միաբանեալ նոցա, ընգենուն յաթոռոյն զկաթուղիկոսն եւ զթագաւորն եւ զոմն Սորմակ բարդէշ, փառամոլ եւ սուտանուն քահանայ կացուցանեն ի տեղի իւր ի նոյն Պարսից արքայէն հաստատեալ*[8]*:* *Իսկ յայնմ ժամանակէ կողմ Ասիոյ զոր ոմանք սովորեալ տօնէն զտօն Ծննդեանն եւ զՄկրտութեան ի միում աւուր՝ յունվար Զ (6): Միաբանեալք ընդ միմեանս ամենայն տիեզերք ըստ Հռոմա սուրբ եկեղեցոյն սահմանեցին տօնել զտօն Ծննդեանն Քրիստոսի ի դեկտեմբեր ամսոյ ի Իե (25) եւ զտօն Մկրտութեան ի յունվար, ի Զ (6): Ի ժամանակս Յոհաննու Ոսկեբերանին, գրեն ամենայն եկեղեցիս այսպես եւ առ սուրբն Սահակ՝ այսպես կատարել եւ գնալ ի համաձայնութիւն կաթուղիկէ եկեղեցոյն: Իսկ նա աքսորեալ գոլով յԱրտաւազ գաւառի, անկարանայր զիրն*[63]*:*
ՆԺԷ 417	*(Մ3681, Նաթանայել Հավուցքառեցի) (Սուրբն Սահակ) արար սկիզբն շինվածոյ մեծա/// եւ վայելչաշէն զարմանակերտ եւ հոյակապ ուխտին Հայոց թառոյ եւ ժողովեց կրաւնաւորս Գճ (300) հնտակերս եւ բոկագնայ:*
ՆԺԸ 418	**Վռամշապուհ** (Հայոց) **ամս ԻԱ** (21)**:** *(Վ288) Ի նստելոյն յաթոռն սրբոյն Ներսիսէ մինչեւ ի սուրբն Սահակ՝ Խէ (47) ամ է, ի սրբոյն Սահակայ մինչեւ ի Հայոց թուականն՝ ճԼէ (137) ամ է: Ի Լուսաւորչէն մինչեւ ի Ներսէս՝ ԿԳ (63) ամ է: Ի Ներսիսէ մինչեւ ի թուականն՝ ճՁԴ (184) ամ է:*
ՆԺԹ 419	
ՆԻ 420	**Արտաշիր** (Պարսից) **ամս Գ** (3)**:**
ՆԻԱ 421	*(Մ1899, Վ288) Թագաւորն Արկադէոս՝ էր ողջախոհ եւ ժուժկալ՝ եւ ի ներքոյ ծիրանեացն ագանէր ի ծածուկ մազեղէն՝ նման հօրն իւրոյ՝ եւ սիրէր զկրօնաւորս: Այլ թագուհին՝ Եւդոքիայ, երկրորդ եզաբէլ՝ էր*

	ժանդաբարոյ եւ յանդուգն՝ որ եւ յաքսորս ետ զսուրբն Յոհաննէս Ոսկիբերանն:
ՆԻԲ 422	
ՆԻԳ 423	**Սկիզբն դպրութեանս Հայոց:** **Մաշդոց, որ եւ Մեսրոբ երանելի եւ մեծն Սահակ զԴանիելի նշանագիրսն յաւրինէին ընկերաւքն հանդերձ: Եւ յետ միոյ ամի դարձեալ աստուածատուր նշանագրաւք, զնոյն յեղանակեալ, որով եւ դպրութիւնք եւ գիրք աստուածային ուղղեալ թարգմանէին[64]:** **Վռամ** (Պարսից) **որ եւ Կրման՝ ամս ԺԱ** (11)**:** *(Մ3681, Նաթանայել Հավուցքառեցի) [հայրա]պետն Սահակ եւ Մաշտոց վարդապետն հիմնարկեցին եւ անուանեցաւ աթոռ Հայոց եւ թառ թարգմանութե(անց) /// [Հաւ]ուց թառ ան[ուան]աւ[65]:*
ՆԻԴ 424	
ՆԻԵ 425	
ՆԻԶ 426	*(Մ1899) Յայսմ ժամանակի փայլէր սուրբն Յոհան Ոսկիաբ(երա)նն ի Կոստանդնուպօլիս, որ եկաց հայրապետ Օէ (57) ամ: Որ բնաւ ոչ երդուաւ եւ ոչ երդմնեցոյց, ոչ սուտ խօսեցաւ՝ եւ ոչ նզովեաց զոք, եւ ոչ էարբ գինի, եւ ոչ ծիծաղեցաւ՝ եւ ընդ ումեք ոչ ճաշակեաց: Եւ յորժամ երթայր յաքսորս՝ եհար զձեռն յեկեղեցին եւ ասաց. «ողջ մնա՛ սուրբ եկեղեցի՝ բնակարան փառացն Տեառն, ես ի պարգեւացն Աստուծոյ երկոտասան Ռ (12 000) ճառս եդի ի գանձս քո՝ որ է ճառս գիրք ԸՃ (800)»: Սա ապաշխարութեան քարոզ ասացաւ ի հրեշտակէ՝ առաջի Երրորդութեան գոլ[66]:* *(Մ3681, Նաթանայել Հավուցքառեցի) Յասմ ամի շինեց սուրբ հայրապետն Հայոց Սահակ զՍուրբ Կաթողիկէն ի Գառնոյ ձորին ի վերա գետին եւ ժողովեց բազում կրաւնաւորս հնտակեր եւ բոկագնայ եւ հաստատեց վանք եւ ինքն առանձնանայր ի Հայոց թառոյ ի յաստ եւ անուանեցաւ Գետոց վանք[67] [եւ այ]ժմ ունի զտեղիս զայս սուրբ ուխտն [Հաւուց] թառ:*
ՆԻԷ 427	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Լիաւն առաջին, ազգաւ Դուսկան, ամս ԻԱ (21), ամիսս Ը (8), աւուրս Իէ (27):*
ՆԻԸ 428	
ՆԻԹ 429	
ՆԼ 430	*(Մ3613) Ի Յիպօնիոյ քաղաքն Աֆրիքա տիեզերալոյս մեծ վարդապետն ընդհանուր եկեղեցոյ զսուրբն Օգոստինոս ծաղկէր անպատմելի գիտութեամբ եւ վարիւք: Յետ ՀԶ(76) ամի իւրոյ հասակին եւ ԻԹ (29) ամի իւրոյ եպիսկոպոսութեան յանգեաւ ի Քրիստոս[68]:*
ՆԼԱ 431	
ՆԼԲ 432	

ՆԼԳ 433	
ՆԼԴ 434	**Յազկերտ** (Պարսից) **ամս ԺԱ** (11)**:**
ՆԼԵ 435	
ՆԼԶ 436	
ՆԼԷ 437	**Թեոդոս փոքր** (Հռոմայեցոց) **ամս Լ** (30)**:** *(Մ1899) Փոքր Թէոդոս թագաւորն էր այր սուրբ եւ չորակեր, մինչ զի անձէթ եւ անգինի էր սեղան նորա յաւուրս պահոցն. եւ էր յոյժ անոխակալ եւ ողորմած, այնչափ որ ի հարցանելն թէ «ընդէ՞ր թողուս զմահապարտսն կենդանի» եւ նա ասէր՝ «երանի թէ կարէի զմեռեալսն ի կեանս դարձուցանել՝ թող թէ զկենդանիսն ի մահ փոխել»: Սա աղօթիւք իբրեւ զեզեկիա զբազումս ի զօրացն Պարսից սատակեաց: Առ սովաւ էին արք երեւելիք՝ Սիմէօն յԱնտիոք եւ Մօր Պարսամ ի Մելտենի, եւ պիղծն Նեստոր Կոստանդնուպօլսի պատրիարգն:*
ՆԼԸ 438	**Առաջին ժողովն յԵփեսոս վասն Նեստորի Մ** (200) **հարանցն: Եւ գումարի ի Կոստանդնուպաւլսի ժողովոյն ամք ԽԲ** (42)**, ի Նիկիայոյն՝ ճԷ** (107)[69]**:**
ՆԼԹ 439	**Վռամշապուհ բարւոք վախճանին, ապա եղբայր իւր Խոսրով ամ մի եւ ապա Շապուհ որդի Յազկերտի ամս Դ** (4)**:**
ՆԽ 440	
ՆԽԱ 441	
ՆԽԲ 442	
ՆԽԳ 443	
ՆԽԴ 444	**Վռամ** (Պարսից) **ամս ԻԱ** (21)**:** (Հայոց) **Անիշխան լեալ ամ Ա (1):**
ՆԽԵ 445	**Արտաշէս** (Հայոց) **որ եւ Արտաշիր ամս Զ** (6)**:**
ՆԽԶ 446	(Մ1484, Վ288) Շինէ Մարուքա զՄուֆարդին:
ՆԽԷ 447	
ՆԽԸ 448	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ էլիաս առաջին, ազգաւ Սարտայն, ամս Զ (6), ամիսս Գ (3), աւուրս Ժ (10):*
ՆԽԹ 449	
ՆՕ 450	
ՆՕԱ 451	**Աստանաւր բարձաւ թագաւորութիւնն Արշակունեաց եւ հայրապետութիւն ի ցեղէն սրբոյն Գրիգորի** *(Մ3613) ըստ մարգարէութեանն սրբոյն Ներսէսի, զոր ասաց յորժամ դեղ մահոյ ետուն նմա. «Յետ Օ(50) ամաց բարձցի քահանայապետութիւն եւ թագաւորութիւն յազգէ իմմէ»,* **վասն որոյ եղեւն իսկ, զի յետ այսորիկ թէպէտ եկաց այլեւս ամս ԺԶ** (16) **սուրբն Սահակ, եւ լուսաւոր վարդապետութեամբ պայծառացոյց զաշխարհս Հայոց, սակայն անարժան վերակացուաւք եւ Պարսիկ մարզպանաւ, որպէս զՎեհմիհր Շապուհ ի**

	տեղի թագաւորին Արտաշրի եւ զաւսոխասէրն զՍուրմակ ի տեղի սրբոյն Սահակայ, որ եկաց ամ մի, եւ յետ Սուրմակայ Բրքիշոյ, վատթար քան զնա, ամս Գ (3)**: Եւ յետ սոցա Շմուէլ եւս անպիտան ամս Ե** (5)**:** **Բայց մեք զաւուրս սոցա անիշխանութիւն կանոնէսցուք միայն, զի զկանոնեալսն ոչ շփոթեսցէ, եւ զսրբոյն Սահակայ զկնի ԼԵ** (35)**ին գրեսցուք, եւ թէ Վարդանայ մարզպանութիւնն յորժամ սկսաւ:** *(Մ1899) Հայոց անիշխանութիւն ամս ԺԳ (13):*
ՆՕԲ 452	
ՆՕԳ 453	
ՆՕԴ 454	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Սիմբլիսիոս առաջին, ազգաւ Դիպուրսացի, ամս ԺԳ (13), ամիսս ///, աւուրս Զ (6):*
ՆՕԵ 455	
ՆՕԶ 456	
ՆՕԷ 457	*(Լատ. հր.) Երանելին Աղան ի փառաւոր տանէն Արծրունեաց, արհամարեալ զկեանս աշխարհի, ետու զանձն իւր յուսումն Գրոց եւ ի վարժումն հոգեւորս*[70]*:*
ՆՕԸ 458	
ՆՕԹ 459	
ՆԿ 460	*(Մ1898) Բ (2-րդ) ժողովն Եփեսոսի վասն Ֆլավիանոսի եւ Եւտիքի*[71]*:*
ՆԿԱ 461	
ՆԿԲ 462	**Դարձեալ վասն Փղաբիանոսի Բ** (2-րդ) **ժողովն յԵփեսոս, յետ ԻԴ** (24) **ամի Ա** (1-ին) **ժողովոյն ի վախճանելն Կիւրղի Աղեքսանդրացւոյ**[72]**:**
ՆԿԳ 463	
ՆԿԴ 464	**Վարդան լիեալ մարզպան հրամանաւ Վռամա ամս ԺԷ** (17)**:**
ՆԿԵ 465	**Յազկերտ** (Պարսից) **ամս ԺԹ** (19)[73]**:**
ՆԿԶ 466	
ՆԿԷ 467	**Յետ մահուան սրբոյն Սահակայ, Յովսէփ աշակերտ նորին յաջորդէ զաթոռ եպիսկոպոսութեան ամս Բ** (2)**, հրամանաւ Մեսրոբայ, որ եւ նա կատարի ի նոյն ամի:** **Կաթողիկոս Յովսէփ ամս Բ**(2)**:** **Աստանաւր աւարտումն պատմութեան Հայոց գրելոյն Մովսէսի**[74]**:** *(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Ֆիլիքս երկրորդ, ազգաւ Հռոմայեցի, ամս Ժ (10), ամիսս ԺԱ (11), աւուրս ԺԸ (18):*
ՆԿԸ 468	
ՆԿԹ 469	**Տէր Գիւտ** (կթղ.) **ամս ԺԵ** (15)[75]**:**
ՆՀ 470	
ՆՀԱ 471	**Մարկիանոս** («ի Կոստանդնուպալիս») **ամս Ե** (5)**:**
ՆՀԲ 472	**Ժողովն Քաղկեդոնի հրամանաւ Մարկիոնի եւ Պողքերա քեռ Թէո-**

	դոսի վրիժախնդիր Նեստորի եւ էին ժողովեալքն ՈԼԶ (636)[76]**:**
ՆՀԳ 473	
ՆՀԴ 474	
ՆՀԵ 475	
ՆՀԶ 476	**Հասելոց նեղութեանցն ի Յազկերտէ սրբոց Վարդանանցն:** *(Մ3681) Սուրբն Վարդան բազ[ում] զորաւք նահատակեալ/// եւ պսակեցաւ զանթառամ պսակաւ Քրիստոսի:* **Լեւոն մեծ** («ի Կոստանդնուպալիս») **ամս ԺԷ** (17)**:**
ՆՀԷ 477	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Բէլասիոս առաջին, ի յԱսֆերոյ, ամս Դ (4):*
ՆՀԸ 478	
ՆՀԹ 479	**Կատարումն սրբոց Ղեւոնդեանցն Բ** (2) **ամաւ զկնի այսորիկ:**
ՆՁ 480	
ՆՁԱ 481	(Հայոց) **Հնազանդութեան եւ անիշխան լինելոյն ամք Զ** (6): *(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Անաստասիոս երկրորդ, ազգաւ Հռոմայեցի, ամս (1):*
ՆՁԲ 482	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Սիգմաքոս առաջին, ազգաւ Սարտայն, ամս ԺԶ (16):*
ՆՁԳ 483	**Զղջալ ասէ յաղագս աւերելոյս զՀայս Յազկերտի եւ չարամահ լինել Վասակայ ըստ եղիշայի**[77]**:**
ՆՁԴ 484	**Պերոզ** (Պարսից) **ամս ԻԵ** (25)**:** **Տէր Յոհան Մանդակունի** (կթղ.) **ամս ԺԲ** (12)[78]**,** *(Մ2965) ի մարզպանութեան Մանգնոսի Մամիկոնոյ:*
ՆՁԵ 485	*(Մ7261) Երանելին Տէառնթագ յԱրշարունեաց, կատարեցաւ քաջութեամբ վասն Քրիստոսի ի զօրաւարէն Պարսից*[79]*:*
ՆՁԶ 486	
ՆՁԷ 487	**Մանկնոս**[80] (Հայոց) **ամս Ի** (20)**:** *(Մ3072, Տ93) Բարսամայ ճգնաւորի սքանչելագործութիւն աստ է:*
ՆՁԸ 488	
ՆՁԹ 489	
ՆՂ 490	*(Լատ. հր.) Իմաստասէրն Դաւիթ ի Հարք գաւառէ, ի Հերեթն գեղջէ յայտնի եղեւ*[81]*:*
ՆՂԱ 491	
ՆՂԲ 492	**Մովսէս Քերդողահայր**[82] *(Մ2965) ընդ Զենոն, (Մ1719) զոր Ծնընդեան, զԱպաշխարութեան եւ զՂազարու, եւ զՏեառնընդառաջին շարական (արար):*
ՆՂԳ 493	**Զենոն** («ի Կոստանդնուպալիս») **ամս ԺԳ** (13)**:** **Ընդ Զենոնի թագաւորեցին Լեւոն փոքր եւ Բասիլիսկոս ժամանակս ինչ:**
ՆՂԴ 494	

ՆՂԵ 495	**Ճգնազգեաց սուրբն Թաթուլ թողեալ զամենայն վասն Քրիստոսի Վարոսիւ հանդերձ եղբարբ իւրով երիցու**[83]**:**
ՆՂԶ 496	**Զենոն գիր վասն ուղղափառութեան գրեալ ԲԺ** (12) **գլուխ նզովից ժողովոյն Քաղկեդոնի:** **Տէր Բաբգեն** (կթղ.) **ամս Ե** (5)**:**
ՆՂԷ 497	
ՆՂԸ 498	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Աւրինիստա առաջին, ազգաւ Գամբանիացի, ամս (10):*
ՆՂԹ 499	**Եգիտ Գառնիկ երանելի զնշխարս սրբոյն Գրիգորի ի Մանեա այրսն եւ հանգուցին ի Թորդան:**
Շ 500	
ՇԱ 501	**Տէր Սամուէլ** (կթղ.) **ամս Ե** (5)**:**
ՇԲ 502	**Պայծառանայր սուրբ Սիմեոն Սիւնական յԱղէքսանդրիայ, այլ եւ Տիմոթէոս երեց ուղիղ հաւատով իմաստասէր:**
ՇԳ 503	
ՇԴ 504	
ՇԵ 505	
ՇԶ 506	**Անաստաս** («ի Կոստանդնուպալիս») **ամս ԺԷ** (17)**:** **Վաղարշ** (Պարսից) **ամս Գ** (3)**:** **Վահան** (Հայոց) **ամս ԼԱ** (31)**:** **Տէր Մաւշէ** (կթղ.) **ամս Ը** (8)**:**
ՇԷ 507	**Վահան պսակեաց զեկեղեցիս նորոգութեամբ, մանաւանդ զԿաթողիկէն**[84]**: Նոյն Վահան Մամիկոնեան զԱլանս արգելական արար:**
ՇԸ 508	**Ղազարիկ Փարբեցի ժամանակագիր եւ ճարտասան:** *(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Յոհաննէս առաջին, ազգաւ Դուսգան, ամս Գ (3):*
ՇԹ 509	**Կաւատ** (Պարսից) **ամս Է** (7)**:**
ՇԺ 510	
ՇԺԱ 511	**Անաստաս ընդ Զենոնի յուղղափառս գրեցաւ:** *(Տ93, Մ1899) Սայ կոտորեաց զդպրատունսն յՍտամբալ՝ զի գործ անարժան գտաւ ի նոսա, եւ եղեւ քաղաքին մեծ տրտմութիւն: Սայ շինեաց զքաղաք զՏարայ, եւ անուանեաց Անաստապալիս: Եւ յաւուրս սորայ ի շարժէ ընկղմեցաւ Նիկիոյպալիս:* *(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Ֆիլիքս չորրորդ, ազգաւ Սպանիացի, ամս Դ (4):*
ՇԺԲ 512	
ՇԺԳ 513	*(Լատ. հր.) Հայք բաժանեալ ի Կաւատայ, խորհեն յաղագս պատերազմին:*
ՇԺԴ 514	**Տէր Սահակ** (կթղ.) **ամս Ե** (5)**:**

ՇԺԵ 515	**Կաւատ զԱմիթ եառ** *(Մ1899) եւ սպան ՁՈ (80 000) եւ մտեալ թագաւորն յեկեղեցին, եւ տեսեալ զպատկերն Քրիստոսի, եւ եհարց թէ ո՞վ է այն եւ նոքա ասեն թէ «Աստուածն իւրեանց է». եւ նա ասէ՝ «Նա ասաց՝ ես տաց զդա ի ձեռս քո»: Եւ արդ՝ ես ոչ առի զսա՝ այլ Աստուածն իւրեանց՝ զի մեղան նմա[85]:* *(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Պաւնաւֆանց երկրորդ, ամս Դ (4):*
ՇԺԶ 516	**Ջամասպ** (Պարսից) **ամս Բ** (2)**:**
ՇԺԷ 517	
ՇԺԸ 518	**Կաւատ** (Պարսից) **ամս ժէ** (17)**:** *(Մ1899) Երեւեցաւ ի սոյն ժամանակս կին մի ի Կիլիկիա՝ գիրկ[86] մի երկայն քան զամենայն մարդ՝ եւ կերակուր մարդոյ ուտէր՝ եւ բնաւ ոչ խօսէր, եւ յանցանելն ընդ փողոցսն՝ առնոյր յամէն խանութէ փող մի, եւ կեցեալ բազում ժամանակս՝ անյայտ եղեւ[87]. զորմէ ասեն ոմանք, թէ ի յավէրժահարսանցն էր:*
ՇԺԹ 519	**Տէր Քրիստափոր** (կթղ.) **ամս Ե** (5)**:**
ՇԻ 520	
ՇԻԱ 521	
ՇԻԲ 522	
ՇԻԳ 523	**Յուստիանոս** («ի Կոստանդնուպաւլիս») **ամս Թ** (9)**:** *(Մ1899) Այս Յուստիանոս եղեւ սկիզբն թագաւորացն Յունաց ի Կոստանդնուպօլիս, զի մինչ ի սա ամենեքեան Ֆռանկք էին: Էր սա ի գեղջէ միոյ որ կոչի Բեդրինա, որոյ ջուրն այնպիսի իմն է՝ որ թէ շատ եփեն արիւն դառնայ:*
ՇԻԴ 524	**Տէր Ղեւոնդ** (կթղ.) **ամս Բ** (2)**:**
ՇԻԵ 525	
ՇԻԶ 526	**Տէր Ներսէս** (կթղ.) **ամս Թ** (9), *(Մ3613) Աշտարակեցի: Սա արար ժողովք ի Դվին հրամանաւ արքային Պարսից Կաւ(ատ), վասն բաժանման ի Յունաց եւ զտօն ծննդեանն եւ զմկրտութեան ի միում աւուր առնել սահմանեաց: Եւ յաւել զխաչեցարն յերէքսրբեանն: Եւ արգել ոչ գնալ յերուսաղէմ[88]:* *(Մ3072) Այստ եղեւ ժողովն Դվնայ եւ ի բաց կացին ի Յունաց եւ ի ժողովոյն Քաղկեդոնի եւ միաւորեալ մի բնութիւն ասացին Քրիստոսի, եւ «զխաչեցարն» յաւելին յերեքսրբեանն: Եւ աստ ասէ, եդաւ թուական Հայոց Ստեփաննոս եպիսկոպոս Տարօնացի պատմագիրն[89]:* *(Մ7261, Մ10202) Մինչ ի սա (Ներսէս կթղ. - Կ. Մ.) ընկալեալ եղեւ ժողովն Քաղկեդոնի, իսկ ի բռնադատելն զիշխանս Հայոց արքային Պարսից յուրացութիւն վասն միաբանութեան ընդ Յունաց ի պառակտել, ժողով արարեալ ի Դուին Ժ (10) եպիսկոպոսաց Ներսէս, նզովե-*

	ցին զժողովն Քաղկեդոնի կրճիմն[90] իմն ի մէջ արկեալ ի բաց կացին ի Յունաց, դաւանելով ի Քրիստոս մի անձն եւ անշփոթ միաւորեալ մի բնութիւն եւ զերեքսրբեանն ի դէմս Քրիստոսի երգեցին եւ զայլ ինչ նորագոյն աւանդութիւնս:
ՇԻԷ 527	**Արեգակն ամենեւիմբ նուաղեցաւ, յետ որոյ սովն խստագոյն:**
ՇԻԸ 528	
ՇԻԹ 529	
ՇԼ 530	*(Մ7261, Մ10202) Ստեփաննոս Տարօնացի աստ ասէ եդեալ զքուականն Հայոց:*
ՇԼԱ 531	**Մամբրէ եղբայր Մովսէսի, դառնայր ի Հայս, զորմէ ասեն երրորդ գրեալ փիլիսոփոս:** **Եզրաս Անգեղացի, աշակերտ Մովսէս եպիսկոպոսի Բագրեւանդայ զդասս ճարտասանաց բազմացոյց[91]:**
ՇԼԲ 532	**Յուստիանոս** («ի Կոստանդնուպալիս») **ամս ԼԶ** (2)**:**
ՇԼԳ 533	
ՇԼԴ 534	
ՇԼԵ 535	**Խոսրով** (Պարսից) **ամս ԽԷ** (47)**:** **Տէր Յովանէս** (կթղ.) **ամս ԺԵ** (15)**:**
ՇԼԶ 536	
ՇԼԷ 537	**Վահան Մամիկոնեան բարւոք վճարեցաւ, յետ որոյ եկաց Վարդ եղբայր նորա:** **Վարդ** (Հայոց) **ամս Գ** (3)**:**
ՇԼԸ 538	
ՇԼԹ 539	
ՇԽ 540	**Յետ Վարդա մարզպանք տաճիկք տիրեցին աշխարհիս Հայոց:**
ՇԽԱ 541	**Խոսրով զԱնտիոք եառ եւ տարեալ ի Պարս բնակեցոյց յիւր անուն:**
ՇԽԲ 542	**Ի սուրբ Գրիգորէ ամք ՄԾԲ** (252) **յայս վայրս թուական Հայոց:**
ՇԽԳ 543	
ՇԽԴ 544	**Մժեժ Գնունի** (Հայոց) **ամս ԼԴ** (34)**:**
ՇԽԵ 545	
ՇԽԶ 546	
ՇԽԷ 547	**Սաստիկ մարդամահն որպէս ոչ ոք յիշէր, սկսեալ յարեւմտից:**
ՇԽԸ 548	
ՇԽԹ 549	
ՇՕ 550	**Տէր Մովսէս** (կթղ.) **ամս Լ** (30)**:** **Նշանք յՈստանին Հայոց, վասն որոյ երանելին Մախոժ հաւատաց[92]:** *(Մ7261) Զի խաչաւն հուր ատրուշանի շիջաւ:*
ՇՕԱ 551	**Սուրբն Մանաճիհր, որ անուանեցաւն Գրիգոր՝ ազգաւ Ռաժիկ, մարտիրոսութեամբն կատարեցաւ[93]:**
ՇՕԲ 552	

Արդի թուակ.	Փրկչական թուական	Հայոց թուական	
	ՇՁԳ 553		Աստանաւր լցեալ լինին ամք ի ծննդենէն Քրիստոսի ՇՁԳ (553), յորում եւ բովանդակեցան կանոնք Մ (200)-եկին Անդրէասայ, զորոյ զկնի կարգեցաւ թուական Հայոց՝ այսպիսի պատճառաւ: Ի լրման Մ (200)-եկին լրումն Զատկին ի մարտի ԻԵ (25) էր, եւ ի սկզբանն ապրիլի՝ Դ (4): եւ վասն զի ոչ ի սկիզբն կարացին գնալ, զի յետ ԻԵ (25)-ին ԳԺ (13) էր ապրիլի, եւ Թ (9) լրմունք ի մէջ. եւ այնր աղագաւ սկսան շփոթել տաւնք ամենայն եւ արհեստ իրողութեանն, որպէս ասացաւ: Ապա իմաստունք ժամանակին ի միասին եկեալ կարգեցին թուական Հայոց, որով ուղղեսցեն զՋատիկն Տեառն՝ այլովքն հանդերձ, բայց ոչ կարացեալ ի ճշմարտութեանն կալ անսխալ զամս Թ (9): Իսկ ի Ժ (10)-երորդ թուականին էաս անուն[94] իմաստուն մտաւք, ժողովեաց առ ինքն արս կորովամիտս եւ հանճարեղս եւ կարգեցին զանտարակուսելի աւրինակն, որ հինգ հարիւրեակն կոչի: Այս է պատճառն թուականին Հայոց, զոր ի կարգ կանոնացս յարմարեսցուք, վասն դիւրահասութեան ժամանակաց: *(Մ1486, Սահակ Երզնկացի) Մինչեւ ցգիր թուականիս մերոյ ուղղեալ էր սրբոյ վարդապետին իմոյ Գէորգեայ ըստ քրաւնիկոնին զնահանջն եւ ասէ՝ տեսի ի Շ (500)-եկին զգիր թվականին առաջնին ամն նահանջ, ոչ գիտելով զգիարդն՝ թողլով աստի եւ յառաջ ըստ գրեալսն[95]:*
552	ՇՁԴ 554	Ա 1	Սուրբն Յիզտբուզիտ որ եւ Մախոժ, վկայութեամբ վճարեցաւ ի Քրիստոս[96], սոյնպէս եւ Սահակ եւ Սամուէլ եւ Յզըմխուաստ ի նոյն ազգէ: *(Մ1719) զԱրդէ ի Գամրաց, զՓենեհեզ ի Հրէաստանի, զՈհան ի Արգու, զՈվբէլ Եթովպիու, զՍերգի Մակեդոնու, զԳրիգոր Ասորոց եւ այլ Զ (6) արամբք:*

			Յուստիանոս եւ Խոսրով հաշտեալ[97]**, եւ ծաղկէր ուխտ ընդհանրական եկեղեցւոյ:** *(Մ3613) Յուստիանոսս այս շինեաց զսուրբ Սոֆիա եւ այլ բազում եկեղեցիք եւ զարմանալի շինուածք ի Կոստանդինոպոլիս:*
553	ՇՕԵ 555	Բ 2	*(Մ6354) Յայսմ ժամանակի եղեւ կրկին բաժ(ա-ն)ումն ի Յունաց եւ ի Քաղկեդոնական ժողովոյն:*
554	ՇՕԶ 556	Գ 3	
555	ՇՕԷ 557	Դ 4	**Աստ է գրեալ զՎրաց բաժանումն:**
556	ՇՕԸ 558	Ե 5	
557	ՇՕԹ 559	Զ 6	
558	ՇԿ 560	Է 7	
559	ՇԿԱ 561	Ը 8	
560	ՇԿԲ 562	Թ 9	
561	ՇԿԳ 563	Ժ 10	**Ի սմին ամի եղաւ Շ** (500)**եակն:**
562	ՇԿԴ 564	ԺԱ 11	**Իռիոն պատառեաց զկանոն Զատկի:**
563	ՇԿԵ 565	ԺԲ 12	
564	ՇԿԶ 566	ԺԳ 13	
565	ՇԿԷ 567	ԺԴ 14	**Աջ աստուածային երեւեցաւ ի սուրբ մատրանն, այլ եւ նշան ահեղ հրաշափայլ եւ արիւնատեսակ յերկինս:**
566	ՇԿԸ 568	ԺԵ 15	**Յուստիանոս** («ի Կոստանդնուպաւլիս») **ամս ԺԴ** (14)**:** *(Մ2965) Կայսր եկաց ի Հռոմ Լիպերինոս ամս է (7), սովաւ Լունկուպարտքն առին զԻտալիա եւ աւիրեցին:*
567	ՇԿԹ 569	ԺԶ 16	**Դարձեալ մարդամահ:**
568	ՇՀ 570	ԺԷ 17	
569	ՇՀԱ 571	ԺԸ 18	
570	ՇՀԲ 572	ԺԹ 19	
571	ՇՀԳ 573	Ի 20	
572	ՇՀԴ 574	ԻԱ 21	**Մարզպանք** (Հայոց) **Տաճիկք ամս ԼԶ** (36)**:**
573	ՇՀԵ 575	ԻԲ 22	**Ժամանակք երկպառակութեան մարտից անթիւ սպանմանց գերութեանց առից, բանդից, խիստ սովոյ եւ մարդամահի եւ այլ բազմադիմի խռովութեանց, ուր մոռացումն աստուածապաշտութեան:** **Իշխանք Հայոց ապստամբեալ ի Պարսից ի ձեռն Վարդայ որդւոյ Վասակայ Մամիկոնեան, ձեռն**

			ետուն ի Յոյնս[98]**:** *(Մ5596) Մարգպանք Տաճիկք զկնի Մժեժա մարզ-պանութեանն՝ զամս ԼԴ (34):*
574	ՇՀԶ 576	ԻԳ 23	
575	ՇՀԷ 577	ԻԴ 24	
576	ՇՀԸ 578	ԻԵ 25	
577	ՇՀԹ 579	ԻԶ 26	
578	ՇՁ 580	ԻԷ 27	**Տէր Աբրահամ** (կթղ.) **ամս ԻԳ** (23)**:**
579	ՇՁԱ 581	ԻԸ 28	
580	ՇՁԲ 582	ԻԹ 29	**Տիբեր** («ի Կոստանդնուպալիս») **ամս Ե** (5)**:**
581	ՇՁԳ 583	Լ 30	**Որմիզդ** (Պարսից) **ամս ԺԲ** (12)**:**
582	ՇՁԴ 584	ԼԱ 31	**Դարձեալ յուզէր խռովութիւն վասն ժողովոյն Քաղկեդոնի:**
583	ՇՁԵ 585	ԼԲ 32	*(Մ1899) ՁՍմբատ չարախօսեալ առ Շապուհ Խոսրով՝ եւ նա թողեալ ի վերայ նորա գազանս եւ նա հարեալ զարջն սատակեաց, եւ կալեալ զեղջերաց ցլուն սպան զնա: Եւ կալեալ ականջաց զառիւծուց՝ հեծաւ ի վերայ նորա. զայս ամենայն յաղթութիւն արար ի միում աւուր, եւ ինքն մեծարեցաւ դարձեալ ի Պարսից յարքայէն: էր հասակաւն բարձր եւ լայն՝ եւ տեսլեամբն գեղեցիկ, եւ յանցանելն ընդ անտառսն՝ բռնէր Բ (2) ձեռօքն զճիւղս անտառին՝ եւ կցեալ զոտսն՝ վերացուցանէր զձին՝ եւ լինէր ձիովն ի կախ ի ծառէն*[99]*:*
584	ՇՁԶ 586	ԼԳ 33	
585	ՇՁԷ 587	ԼԴ 34	**Մաւրիկ** («ի Կոստանդնուպալիս») **ամս Ի** (20)**:**
586	ՇՁԸ 588	ԼԵ 35	
587	ՇՁԹ 589	ԼԶ 36	
588	ՇՂ 590	ԼԷ 37	**Գրիգոր եւ Վրթանէս վարդապետք Հայոց գնացին ի Յոյնս եւ ոչինչ աւգտէցուցեալ զնոսա, դարձան նզովելով: Յայսմ վայրի եկին ի Հայս Ասորիք արք քաջաբանք եւ կամէին սերմանել զաղանդն Նեստորի եւ նզովեալ հալածեցան, բայց ոմանք ընկալան եւ նոքա թարգմանեցին նոցա գիրս սուտս, զԳաւրտոսակ եւ Կիրակոսակ, զՊաւղոսի տեսիլն, զԱդամայ զապաշխարութիւնն եւ Դիաթեկ, զՄանկութիւն Տեառն եւ զՍեբիոս եւ զճիռն աւրհնութեան եւ զԱնթաքչելի մատեանսն եւ**

			Աւետարանի մեկնութիւն զՄանեա, եւ որ հաւատայ նոցա՝ նզովի[100]:
589	ՇՂԱ 591	ԼԸ 38	
590	ՇՂԲ 592	ԼԹ 39	
591	ՇՂԳ 593	Խ 40	**Բուն շարժմունքն:**
592	ՇՂԴ 594	ԽԱ 41	
593	ՇՂԵ 595	ԽԲ 42	**Աստանաւր Սմբատ Բագրատունի բազում մարտըս յարդարէր առաւել քաջութեամբ առ թշնամիսն Խոսրովու, վասն որոյ պատուեալ զՍմբատ տա նմա զմարզպանութիւն Վրկանի եւ նա երթեալ գտանէ ազգս գերեալս ի Հայոց անդ, որ Սագաստանն կոչի, մոռացեալ զլեզու եւ զդպրութիւն, զոր նորոգեալ Սմբատայ եւ զհաբել ոմն եպիսկոպոս տայ ձեռնադրել կաթողիկոսին Հայոց կացոյց վիճակ աթոռոյս սրբոյն Գրիգորի[101]:** **Խոսրով** (Պարսից) **ամս Լէ** (37)**:**
594	ՇՂԶ 596	ԽԳ 43	*(Մ1898) Կայսր եկաց ի Հռոմ Ֆաւդոս կացեալ ամս Ը (8):*
595	ՇՂԷ 597	ԽԴ 44	
596	ՇՂԸ 598	ԽԵ 45	
597	ՇՂԹ 599	ԽԶ 46	
598	Ո 600	ԽԷ 47	
599	ՈԱ 601	ԽԸ 48	
600	ՈԲ 602	ԽԹ 49	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Աւնաւրիոս առաջին, ազգաւ Գամբանիացի, ամս ԺԴ (14):*
601	ՈԳ 603	Օ 50	**Տէր Յոհան** (կթղ.) **ի Կոգովտէ, ի գեղջէ Բագարանէ ամս ԻԶ** (26)[102]**:** **Ոմանք ի պատմագրաց զտէր Աբրահամ եւ զտէր Յոհան ի միում ամի ասեն վախճանեալ եւ ոմանք այսպէս, որպէս գրեալս ենք:**
602	ՈԴ 604	ՕԱ 51	*(Մ1898) Կայսր եկաց Հռոմայեցոց Հերակլ որդով իւրով Կոստանդեաւ ամս ԼԲ (32):*
603	ՈԵ 605	ՕԲ 52	
604	ՈԶ 606	ՕԳ 53	**Պէսպէս մահք:**
605	ՈԷ 607	ՕԴ 54	**Մաւրիկ վասն խստութեան բարուցն ազգաւ եւ որդւովք ողորմատէս մահուամբ կորնչի յիւրոց զաւրացն:** **Փոկաս** («ի Կոստանդնուպաւլիս») **ամս Ը** (8)**:**
606	ՈԸ 608	ՕԵ 55	

607	ՈԹ 609	ՕԶ 56	
608	ՈԺ 610	ՕԷ 57	**Հոռիան Պարսից զաւրավար առ զԵրուսաղէմ ՃՌ** (50 000) **սպան եւ ԲՌ** (2000) **տարաւ, եւ զփայտ փրկական խաչին եւ զայլ սպասք սրբութեան եդ ի տան գանձու Խոսրովու թագաւորին:** **Յետ մարզպանացն սպանման Ճիհր Բուրզենայ, Ճիհր Վշնասպուհենա, Ճիհր Վղովն Միհրանայ եւ այլ Տաճկաստանեացն:** **Դաւիթ Սահռունի՝ ամս Լ** (30)**:**
609	ՈԺԱ 611	ՕԸ 58	
610	ՈԺԲ 612	ՕԹ 59	
611	ՈԺԳ 613	Կ 60	*(Մ7261, Մ10202) Մահմետի իշխանութիւն եւ տիրել Արապկաց:* *(Լատ. հր.) Սմբատ Բագրատունի դարձեալ շինեաց զեկեղեցին Սրբոյն Գրիգորի ի Դւին, կոփածոյ քարամբք, յոյժ գեղեցիկ եւ հոյակապ, քան զնախկինս*[103]*:*
612	ՈԺԴ 614	ԿԱ 61	
613	ՈԺԵ 615	ԿԲ 62	**Հերակլ** («ի Կոստանդնուպալիս») **ամս ԼԱ** (31)**:** **Շինուած կաթուղիկէին Մրենոյ**[104]**:**
614	ՈԺԶ 616	ԿԳ 63	*(Մ1899) Յայսմ ժամանակի ի Քրիստոսի ՈԺԶ (616) ամին, եւ ի Հայոց ԿԳ (614) թվին, խաւարեցաւ կէս արեգականն, յարեգի՝ աշնան ամսոյ, մինչեւ ի քաղոց ամիս՝ ի սկիզբն ամարանն, մինչ յուսահատեցան մարդիկք եւ ասէին՝ չըղորդի արեգակն յաւիտեանս:*
615	ՈԺԷ 617	ԿԴ 64	
616	ՈԺԸ 618	ԿԵ 65	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Յոհաննէս չորրորդ ի Դաղմատիոյ ամս Ա (1):*
617	ՈԺԹ 619	ԿԶ 66	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Թէոդորոս առաջին ազգաւ Յոյն ամս Զ (6):*
618	ՈԻ 620	ԿԷ 67	
619	ՈԻԱ 621	ԿԸ 68	*(Մ1899) Յամս Հերակլի կայսեր՝ առին Տաճիկք զիշխանութիւնն Պարսից՝ եւ ի պատերազմելն՝ Պարսիկ ամիրայ մի փախչէր՝ ի մերկ Արապէ միոյ, եւ Պարսիկն բազում անգամ դառնայր եւ նետէր զՏաճիկն, եւ նետն ոչ մտանէր, եւ ի փախչելն Պարսկին՝ հանդիպեցաւ բահ մի ցըցեալ՝ եւ փորձիւ եհար՝ եւ ի թափ անցոյց զնետն, վասն*

			որոյ գիտաց, որ յԱստուծոյ էր, եւ իջեալ ի ծիոյն՝ մերկացաւ ի զինուցն եւ անկաւ առաջի Տաճկին՝ որ եսպան զնա. եւ Տաճիկն ասէր՝ թէ նալի կըտոր մի գրապանս էր՝ եւ Ժ (10) անգամ նետն յայն դիպէր:
620	ՈԻԲ 622	ԿԹ 69	
621	ՈԻԳ 623	Հ 70	*(Մ1899) Պարսիկք զերուսաղէմ առին եւ տարան զխաչն գերի՝ յամս Հերակլի:* *(Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Յայսմ ամի յայտնեցաւ Մահմէտ առաջնորդն Տաճկաց, ուստի եւ սկսանի թուականն Տաճկաց[105]:*
622	ՈԻԴ 624	ՀԱ 71	
623	ՈԻԵ 625	ՀԲ 72	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Մարդին առաջին ի Դիպիւրդենայ ամս Զ (6):*
624	ՈԻԶ 626	ՀԳ 73	**Արծես առաւ:**
625	ՈԻԷ 627	ՀԴ 74	**Աստանաւր ի բաց կացին Վիրք ի միաբանութենէ Հայոց հաւանեալք աղանդոյն Քաղկեդոնի ի ձեռն Կիրիոնի Վրաց առաջնորդի, առ որ բազում թուղթս մաղթանաց հայրապետն Հայոց Աբրահամ[106]:**
626	ՈԻԸ 628	ՀԵ 75	
627	ՈԻԹ 629	ՀԶ 76	**Տէր Կոմիտաս** (կթղ.) **ամս Ը** (8)**:**
628	ՈԼ 630	ՀԷ 77	**Մեծ պատրիարգն Կոմիտաս շինէ զսուրբ տիկնոջն Հռիփսիմեա վկայարանն հրաշալի եւ պայծառ շինուածովք, զի խրթին էր յառաջն շինեալ գտանէ եւ ի նմին զնշխարս ոսկերաց սրբոյն եւ ոչ համարձակեցաւ բանալ զմատանեալն ի սրբոյն Գրիգորէ եւ սրբոյն Սահակայ, այլ եւ իւրովն կնքեալ մատանեաւ ամփոփէ անդէն[107]:**
629	ՈԼԱ 631	ՀԸ 78	**Սպանանէ Հերակլ զԽոսրով թագաւորն Պարսից:** *(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Եւգինէս առաջին ազգաւ Հռոմայեցի ամս Բ (2):*
630	ՈԼԲ 632	ՀԹ 79	**Կաւատ** (Պարսից) **ամ Ա** (1)**:**
631	ՈԼԳ 633	Ջ 80	**Արտաշիր** (Պարսից) **ամս Բ** (2)**:** *(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Վիդելիանոս ի Գամբանիոյ ամս ԺԴ (14):*
632	ՈԼԴ 634	ՁԱ 81	
633	ՈԼԵ 635	ՁԲ 82	**Հերակլ զԽոռիան թագաւորեցուցանէ, փոխարէն առեալ զխաչն փրկական, զոր սպանին զաւրք իւր: Խոռեմ** (Պարսից) **ամ Ա** (1)**:**

634	ՈԼՁ 636	ՁԳ 83	**Խոսրով** (Պարսից) **ամ Ա** (1):
635	ՈԼԷ 637	ՁԴ 84	**Արաբիա կռիւն**[108]: **Բորն եւ Զարմդուխտ** (Պարսից) **ամ Ա** (1): **Տէր Քրիստափոր** (կթղ.) **ամս Բ** (2): *(Մ1899, Վ288) Մահմետ զերուսաղէմ էառ:*
636	ՈԼԸ 638	ՁԵ 85	**Յազկերտ** (Պարսից) **ամս ԼԸ** (38):
637	ՈԼԹ 639	ՁՁ 86	**Տէր Եզր** (կթղ.) **ամս Ժ** (10):
638	ՈԽ 640	ՁԷ 87	**Հերակլի ժողով արարեալ ի Կարնոյ քաղաքի, կոչէ եւ զեզր ի Հայոց, որ տգիտաբար հաւանեալ Քաղկեդոնի, վասն զի ոչ տարաւ զՅոհան Մայրավանեցի, որ աստուծային գրոց բանիբուն ճանաչիւր եւ ի դարձին յանդիմանեալ ի նմանէ, հալածեաց զՅոհան, Մայրագոմեցի կոչելով**[109]**: Իսկ Եզրի, յաղագս յաւանութեանն առնու զերիս մասն Կողբայ եւ զԱղտսն**[110] **բովանդակ:** **Թէոդորոս Ռըշտունի** (Հայոց) **ամս ԻԵ** (25):
639	ՈԽԱ 641	ՁԸ 88	**Ելն Տաճկաց ի Հայս, եւ Թէոդորոս Հայոց իշխան նստաւ:** *(Մ5619) Սորա որդի էր Վարթ Պատրիկ:* *(Մ5889) Եւ այս Թէոդորոս Ըռշտունի շինեաց Աղթամար կղզի:*
640	ՈԽԲ 642	ՁԹ 89	
641	ՈԽԳ 643	Ղ 90	
642	ՈԽԴ 644	ՂԱ 91	
643	ՈԽԵ 645	ՂԲ 92	
644	ՈԽՁ 646	ՂԳ 93	**Յայտնեցաւ աղանդ յաշակերտաց Յոհաննու Մայրագոմեցւոյ, որոյ Սարգիս ասէին, զոր մի ոք իշխեսցէ զսուրբ հայրն բամբասել**[111]**:** **Կոստանտին** («ի Կոստանդնուպալիս») **ամս Գ** (3):
645	ՈԽԷ 647	ՂԴ 94	*(Մ1899) Զկարնոյ քաղաք առին ի Հայոց:* *Ի ՁԵ եւ ԽԷ (647) ամին Քրիստոսի՝ քակեցին զպատկերն պղընձի՝ զմին յեօթն հրաշիցն, որ յՈստոն կղզին, Ճ եւ է (107) ոտն*[112] *եւ էր ԳՌ (3 000) բեռն պղնձոյ*[113]*:* *Յայսմ ամի եմուտ Մաւի զօրավարն Տաճկաց ի Կիպրոս, եւ արարին շատ պղծութիւն. եւ ել բազում աւարաւ: Արարին պղծութիւն յեկեղեցին Եպիփանու, զի ոչ գոյր եղեալ սահման նորա ի նմա:*

			(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Ստէաւտիդոս առաջին ազգաւ Հռոմայեցի ամս Դ (4):
646	ՈԽԸ 648	ՂԵ 95	Յայսոսիկ աւուրս յայտնութիւն սուտ մարգարէին Սարակինոսաց, աղանդելոյն ի Կերինթոսէ եւ յԱրիանոսաց, որոյ անուն Մահմետ անուանիւր, յազգէ Իսմայէլի՝ որդւոյ Հագարու, որ աշակերտեցաւ ի մինակեցէ միոյ, որոյ ունուն Բխիրայ կոչիւր՝ Արիանոս աղանդով, ի յանապատին Սինայ, զոր զետեղեալ բազմացան ի հալածել Սառայի զԱգար զաղախինն յերեսաց իւր[114]: Արդ, յաւուրս Կոստընտի որդւոյ Հերակլեա՝ առաւ Դուին ի Տաճկաց, ասէ պատմագիրն[115], եւ սպանին յաւուր Յայտնութեանն ի սուրբ վկայարանի սրբոյն Սարգսի ԲԺ (12) հազար եւ արեամբ կոտորելոցն ծածկեցաւ սուրբ սեղանն եւ աւազանն եւ զայլն գերեցին աւելի քան զԼԵ (35) հազար: Ապա ժողովեաց հայրապետն Ներսէս զդիակունս անկելոցն ի պատերազմին ի նմին վկայարանի, զոր նորոգապէս շինեաց ի վերայ նորա: Աստանաւր նստի գլուխ ազգին Իսմայէլի նախ Քաղարթ անուն, զոր եւ գիրն աստուածային պատմէ, թէ քաղարթաշուրթն ժողովուրդն յագեցուսցե զսուրս իւրեանց յարենէ: Սա կեցեալ ամս Ը (8) վախճանի, յետ որոյ Ամրան ամս ԺԲ (12): Բայց հասեալ Քըղըրթ ի Դամասկոս Միջագետաց եւ մինչեւ ի քաղաքն Ամիթ խանձեալ բազում աւարաւ: Ապա երիս սպայս մի ի Հռոմ արձակէ Յազ անուն եւ խրատտու Յովել, որք կոտորեցին ի Հոռոմոց Հ (70) հազար, եւ ի Պարսից կողմն արձակէ զԱւթման ամիրայ եւ զՄաւիէ զաւրավարն, նոքա հարին զՄւրդատ Ի (20) հազարաւ եւ զՄուշեղ սպարապետն Հայոց իւրով սպայիւն: Եւ տիրեցին բոլոր աշխարհիս Հայոց, Պարսից եւ Ասորւոց, Եգիպտացւոց, Մարաց եւ Պարթեւաց եւ Պաղեստինացւոց: Բայց պատճառ ելոյ նոցա այս է, լիեալ էր իշխան ոմն կողմանցն Դամասկոսի Սարգիս անուն, նա բազում ինչ յափշտակէր յԻսմայէլացւոց վաճառականացն, զոր երիցս աղերսիւ խնդրեալ Քղերթի եւ նորա ոչ թողա-

			ցուցեալ, ապա ժողովեալ զիւրոյ ազգին զայր եւ զձի եւ երիցս ասպատակեալ առին զիւրեանցն եւ զնոցայն եւ յորժամ զաւրացաւ ի վերայ Հայոց, ապա սկսաւ շրջել զհաւատս նոցա, եւ նոքա ոչ հաւանէին: Իսկ իշխանին Իսմայէլի գտեալ խորհրդակից զոմն Մահմետ անուն, գլուխ վաճառականացն Եգիպտացի, որ տեղեակ էր նուազ աւրինացն Մովսէսի, բայց հաստատեալ էր աղանդովն Արիոսի եւ Կերինթոսի, այն որ մարմնաւորապէս ասաց զարքայութիւնն ի վերայ երկրի, կերակուր պորտոյ եւ ամուսնութիւն յետ յարութեանն, ուսոյց եւ աւրէնս հակառակ հնոյ եւ նորոյ աւրինադրութեանց, իմանաւղ զանարժանս եւ խաւսելով զանուղայս, յոյժ ծաղանաւք խայտառակեաց զուխտադրութիւնն Աբրահամու, որպէս եւ գրեալ է, թլփատեսցի ձեր ամենայն արու յաւուր Ը (8)երորդի, իսկ սա ոչ միայն զարս, այլ եւ զկանայս անգամ, որով գարշելի այպանեաց զնշանակ ուխտին Տեառն, այլ եւ ջրով լոկով ողողանիլ հանապազ փոխանակ մկրտութեան աւազանին, այլ եւս յոլով անարժան եւ մոլեկան աւանդութիւնս եւ ծիծաղելիս: Զսա ստացեալ աւրէնսդիր պատգամաբեր եւ զաւրավար, ամս Ի (20): Եւ կոտորեցին զԲզնունիս զԱղուոյովիտ եւ զՏարաւն: Եւ Մահմետս այս արգել զսուրն եւ բանիւ խրատու նորա հնազանդեցուցին ինքեանց զմեծ մասն տիեզերաց: Եւ անմոռաց երդմամբ կնքեաց մուրհակ Հայոց աշխարհիս, համարձակ ունել զքրիստոնէութիւնն եւ վաճառեաց նոցա զհաւատս նոցա յամենայն տանէ առեալ Դ (4) դրամ եւ Գ (3) մոդ խորբալ[116] եւ ձիատաւպրակ մի եւ պարան մի մազէ եւ ձեռնարար մի: Իսկ ի քահանայից եւ յազատաց եւ ի հեծելոց ոչ հրամայեաց առնուլ զհարկն[117]: Եւ ի տիրելն աշխարհաց կոչեցան ամիրիմումնիք[118], որ յետ Ի (20) ամին Մուահմդայ տիրեցին Ապուբաքար, Աւթման եւ Ամր ամս ԼԸ (38): *(3613) Պիղծ Մահմէտս այս Խ (40) ամաց էր, յորժամ սկսաւ զսուտ օրէնքն իւր, եւ ԻԳ (23) ամ*

			բռնակալեաց, ԿԳ (63) ամաց վճարեաց զգարշելի կեանս իւր եւ էջ ի դժոխս ներքինս: Այլ եւ չորս ազգք են տաճիկք. Շաֆէիղի, Հանիֆի, Համբալի եւ Մալէքի[119]:
647	ՈԽԹ 649	ՂՁ 96	**Արծափա առն[120]:** **Կոստանդին** («ի Կոստանդնուպալիս») **ամս Ի** (20):
648	ՈՕ 650	ՂԷ 97	**Ի ԻԴ** (24) **ամի բռնակալութեանն Ապուբաքարայ՝ Աւթմանայ եւ Ամրայ եւ էր յառաջին ամէն Քըղըրթի եւ Մահմետի իսմայէլացւոց ԽԸ** (48) **ամ, բարձաւ թագաւորութիւնն Պարսից յազգէ Սասանայ, յորոյ տեղ նշանակեցից զԻսմայելեանն ազգ:** **Ապուբաքր, Աւթման եւ Ամր ամս ԼԸ** (38): *(1899) Յայսմ ժամանակի բարձաւ իշխանութիւն Պարսից, տեւեալ ամս ՆԺԸ (418), որ կոչէրն Սասանեան, եւ առին Տաճիկք զիշխանութիւն Պարսից՝ եւ կոչեցան Ամիր-ըլ-մումնիք:* *Ամիր-ըլ-մումնիք Տաճկաց Մահմետ ամս Ի (20), Ապուպաքր ամս Ը (8), Օթման ամս Ժ (10), Օմար ամս Ի (20), Մաւէ ամս ԻԲ (22), Մրուան ամ մի, յեզիթ՝ ամս Գ (3), Աբդլմելիք ամս ԻԲ (22), Վլիթ ամս Դ (4), Օմառ ամս Բ (2), եզիթ՝ ամս Զ (6), Հէշմ ամս ԺԹ (19), Վլիթ ամ մի, Մրուան ամս Ը (8), Ապդլա ամս ԻԲ (22), Ապդլազիզ ամս Գ (3), Մահդի ամս Թ (9), Մուսի ամս Ժ (10), Հարուն, ամս ԻԳ (23), Մահմետ ամս Ե (5), Մայմուն ամս ԺԷ (17), Իպն Մրէթ ամս Թ (9), Հարուն ամս ԺԸ (18), Զաբր ամս ԺԶ (16), յիշատակ սոցա ի կորուստն եղիցի[121]:*
649	ՈՕԱ 651	ՂԸ 98	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Պաւնիոս առաջին ազգաւ Հռոմայեցի ամս Ա (1):*
650	ՈՕԲ 652	ՂԹ 99	
651	ՈՕԳ 653	Ճ 100	**Տէր Ներսէս** (կթղ.) **ամս Ի** (20): *(Վ959) Ի սորա Ի (20) ամին Վարագա Սուրբ Խաչն երեւ(եցաւ):* *(Տ93) Խաչն երեւեցաւ ի Վարագ[122]:*
652	ՈՕԴ 654	ՃԱ 101	**Հայրապետն Ներսէս շինէ զՍուրբ Գրիգոր, զզարմացուցիչն տեսողաց: Բայց յառաջ շինէ զվկայարան սրբոյն Սարգսի ի Դւին, եւ զոր ի վերա վիրապի սրբոյն Գրիգորի[123]:**

			(Մ3681, Նաթանայել Հավուցքառեցի) եւ ի Գառնի ի վերայ բլրին, որ հայի ի դաշտն Դվնայ, շինել զեկեղեցին յանուն Եղիայ մարգարէին[124]*:* *(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Լեւոն երկրորդ Սիկիլիացի ազգաւ ամս Գ (3):*
653	ՈԾԵ 655	ՃԲ 102	
654	ՈԾԶ 656	ՃԳ 103	
655	ՈԾԷ 657	ՃԴ 104	(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Բէնէդիքտոս երկրորդ ազգաւ Հռոմայեցի ամս Ա (1):
656	ՈԾԸ 658	ՃԵ 105	(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Յոհաննէս Անտիոքացի, ամս Գ (3):
657	ՈԾԹ 659	ՃԶ 106	**Պատառումն զատկի:**
658	ՈԿ 660	ՃԷ 107	**Երեւանու կռիւն, յորում զզիարդն գտցէս, առ պատմագրութիւնս առաջնոցն: Շապուհ եւ Ասղնիկ յիշէն**[125]**:**
659	ՈԿԱ 661	ՃԸ 108	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Կաւնոն առաջին ազգաւ Հռոմայեցի ամս Ա (1):*
660	ՈԿԲ 662	ՃԹ 109	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Սերճիոս Անտիոքացի ամս ԺԳ (13):*
661	ՈԿԳ 663	ՃԺ 110	
662	ՈԿԴ 664	ՃԺԱ 111	**զԴւին եւ զՊտիզ այրեցին Հոռոմք**[126]**:** **Մաւիէ** (ամիրապետ) **ամս ԻԲ** (22)**:**
663	ՈԿԵ 665	ՃԺԲ 112	**Համազասպ** (Հայոց) **ամս է** (7)**:**
664	ՈԿԶ 666	ՃԺԳ 113	
665	ՈԿԷ 667	ՃԺԴ 114	
666	ՈԿԸ 668	ՃԺԵ 115	**Տէր Անաստաս** (կթղ.) **ամս Զ** (6)**:**
667	ՈԿԹ 669	ՃԺԶ 116	
668	ՈՀ 670	ՃԺԷ 117	**Հայրապետն Անաստաս կոչէ առ իւր զմեծ վարդապետն Անանիայ յԱնէնից գեղջէ, անշարժ ըստ այլոց ազգաց դնել տաւմար եւ մերոյ ազգիս, զոր արարեալ մեծաւ ջանիւ եւ մինչ կամեին ժողովով հաստատել, զնոյն վախճանի սուրբն Անաստաս**[127]**: Անփոյթ եղեալ իրն զկնի եկելոցն, այլ առաջին կարգաւն վարէին:**
669	ՈՀԱ 671	ՃԺԸ 118	
670	ՈՀԲ 672	ՃԺԹ 119	**Գրիգոր** (Հայոց) **ամն Ժ** (10)**:** *(Մ5596) Գրիգոր Մամիկոնեան որ էր իշխան աշխարհիս Հա[յո]ց պատիւ ունելով պատրկութեան, սպանին խազիկք ի պատերազմի եւ Ներսեսի Շի-*

			ռակացի իշխան եկաց[128]*:*
671	ՈՀԳ 673	ճԻ 120	**Շինուած կաթողիկէին յԱրուճ, յորում մկրտի նահատակն Քրիստոսի Դաւիթ, որ յաշխարհէն Պարսից եկն՝ Սուրհան անուն, եւ վասն վկայութեան Քրիստոսի, կախեցաւ ի փայտէ ի Դւին**[129]**:** *(Մ3681, Նաթանայել Հավուցքառեցի) եւ սուրբ գլուխ նորայ (Դավիթ Դվնեցու - Կ. Մ.) կայ ի Հաւուց թառ*[130] *եւ այլ նշխարքն կայ ի///*
672	ՈՀԴ 674	ճԻԱ 121	**Տէր Իսրայէլ** (կթղ.) **ամս Զ** (6)**:**
673	ՈՀԵ 675	ճԻԲ 122	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Լեւոն երրորդ՝ ազգաւ Հռոմայեցի ամս Բ (2):*
674	ՈՀԶ 676	ճԻԳ 123	
675	ՈՀԷ 677	ճԻԴ 124	**Կոստանդին որդի Կոստանդէ** («ի Կոստանդնուպաւլիս») **ամս ԺԴ** (14)**:** *(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Յոհաննէս որդի Պաղտնի ամս Գ (3):*
676	ՈՀԸ 678	ճԻԵ 125	
677	ՈՀԹ 679	ճԻԶ 126	
678	ՈՁ 680	ճԻԷ 127	**Տէր Սահակ** (կթղ.) **ամս ԻԶ** (26)**,** *(Մ2965) ի Ձորոյ, ի գեղջէն Արքունայ ի մարզպանութեան Ներսեհի եւ Աշոտոյ. սա եկն ի Խառան եւ անդ մեռաւ:* *(Մ5619) Տէր Սահակ Ձորափորոյ ի գեղջէ Արքուայ, սա գնաց ընդդէմ Մահմէտի, ի Խառան մեռանի: Սա գնաց ընդդէմ Տաճկ(ա)ց Մահմէտի*[131]*:* *(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Յոհաննէս է (7) երրորդ ազգաւ Յոյն, ամս Բ (2):*
679	ՈՁԱ 681	ճԻԸ 128	
680	ՈՁԲ 682	ճԻԹ 129	**զԳրիգոր Մամիկոնեան սպանին ի պատերազմի Խազիրք եւ Ներսէհ Շիրակացի իշխան եկաց: Ներսեհ** (Հայոց) **ամս Գ** (3)**:** *(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Սիզիոնոս Սուրիացի, ամս Ա (1):*
681	ՈՁԳ 683	ճԼ 130	
682	ՈՁԴ 684	ճԼԱ 131	
683	ՈՁԵ 685	ճԼԲ 132	**Աշոտ** (Հայոց) **ամս Գ** (3)**:**
684	ՈՁԶ 686	ճԼԳ 133	**Իզիտ** (ամիրապետ) **ամս Դ** (4)**:**
685	ՈՁԷ 687	ճԼԴ 134	
686	ՈՁԸ 688	ճԼԵ 135	**Աշոտ սպանաւ ի Տաճկաց: Ներսեհ Կամսարական** (Հայոց) **ամս Գ** (3)**:**

687	ՈՁԹ 689	ճԼՁ 136	
688	ՈՂ 690	ճԼԷ 137	**Մրուան** (ամիրապետ) **ամ Ա** (1)**:** *(Լատ. հր.) Եպիսկոպոսն Արշարունեաց Գրիգոր եւ վարդապետն Փիլոն պայծառանան գիտութեամբ յաւուրս Ներսեսի Կամսարականի*[132]*:*
689	ՈՂԱ 691	ճԼԸ 138	**Յուստիանոս** («ի Կոստանդնուպալիս») **ամս ԺԲ** (12)**:** **Աբդլմլիք** (ամիրապետ) **ամս ԻԱ** (21)**:** **Սմբատ Բագրատունի Բիւրատեան** (Հայոց) **ամս Ի** (20)**:**
690	ՈՂԲ 692	ճԼԹ 139	
691	ՈՂԳ 693	ճԽ 140	
692	ՈՂԴ 694	ճԽԱ 141	*(Վ288) Ի սոյն ամի շինեաց Մսլիմն զՄամեստիա, որ է Մսիս, բարձր պարսպաւք:*
693	ՈՂԵ 695	ճԽԲ 142	**Յուստիանոս ի վերայ յարուցեալ հատին զքիթսն եւ նա փախեաւ ի Հնդիկս եւ առեալ անտի զաւրս եկն սպան զմեծամեծս իւր եւ դարձեալ թագաւորեաց:**
694	ՈՂԶ 696	ճԽԳ 143	
695	ՈՂԷ 697	ճԽԴ 144	
696	ՈՂԸ 698	ճԽԵ 145	**Կարի**[133] **ծմեռն յորում Բզնունեաց ծովն սառեաւ եւ կոտորումն ուխտի սրբոյն Գրիգորի ի Բագրեւանդ եւ անդ ի Բագուան:**
697	ՈՂԹ 699	ճԽԶ 146	
698	Չ 700	ճԽԷ 147	*(Լատ. հր.) Կաթողիկոսն Սահակ՝ այր իմաստուն եւ սրբակրաւն, եւ իշխանք Հայոց, գերեալ յԱբդալլահէ յուղարկին ի Դամասկոս:*
699	ՉԱ 701	ճԽԸ 148	
700	ՉԲ 702	ճԽԹ 149	**Պատերազմն ի Վարդանակերտ ի ծեռն քաջին Սմբատայ:**
701	ՉԳ 703	ճՕ 150	**Լեւոն** («ի Կոստանդնուպալիս») **ամս Գ** (3)**:** **Տէր Եղիայ** (կթղ.) **ամս ԺԳ** (13)**:**
702	ՉԴ 704	ճՕԱ 151	**Մահմետ զծովն Գեղամա յարձակեաց եւ առ զՍեւան:**
703	ՉԵ 705	ճՕԲ 152	
704	ՉԶ 706	ճՕԳ 153	**Ափսիմարոս** («ի Կոստանդնուպալիս») **ամս Դ** (4)**:**
705	ՉԷ 707	ճՕԴ 154	**Կասմ ամիրայ զՎասպուրականի իշխանսն կոտորեաց:**

706	ՉԸ 708	ճՕԵ 155	
707	ՉԹ 709	ճՕԶ 156	
708	ՉԺ 710	ճՕԷ 157	**Յուստիանոս** («ի Կոստանդնուպալիս») **ամս Զ** (6):
709	ՉԺԱ 711	ճՕԸ 158	**Աշակերտք Անանիայի՝ Հերմոն եւ Տրդատ եւ Ազարիայ, Եզեկիէլ եւ Կիրակոս երթեալ յԵրուսաղէմ, հաւանեցան երկաբնակացն, եւ ի դարձին ոչ ընկալաւ զնոսա ճշմարիտ վարդապետն Անանիայ, իսկ նոքա ուր հասանին, զնա ասէին պատճառ հայհոյութեանն, զոր մի ոք իշխեսցէ ասել կամ հաւատալ[134]:**
710	ՉԺԲ 712	ճՕԹ 159	**Առ այսու ժամանակաւք այրեցին զիշխանսն Հայոց ի Նախճաւանի[135], եւ այնր աղագաւ պակասեցաւ կարգ այսր գաւազանի, վասն զի գրէ տէր Յովաննէս[136] յիւրում գեղեցկաբան շարադրութեանն, այսպէս ասէ եթէ վասն զի սպառ սպուռ տիրեցին Հագարացիքն Հայաստանեաց, եւ մեծամեծք աշխարհիս նուազեցան, եւ թէպէտ եւ մնացեալ էին, սակայն ղաւղեալ թաքուցեալք կային ընդ լծով ծառայութեան նոցա, վասն այսորիկ իսկ ասէ յայսմ վայրի պակասեաց ի պատմութենէ աստի կարգ իշխանացն մերոց: Իսկ յաւուրս տեառն Տրդատայ դադարեցին հէնք նոցա, ուստի եւ ես սկսայց շարագրել ի տողիս յայսմիկ:** **Վլիթ** (ամիրապետ) **ամս Թ** (9):
711	ՉԺԳ 713	ճԿ 160	
712	ՉԺԴ 714	ճԿԱ 161	
713	ՉԺԵ 715	ճԿԲ 162	*(Լատ. հր.) Շուշան, դուստր Վահանայ Կամսարականայ, անկեալ ի ձեռս թշնամեաց նահատակի ի Խառան[137]:*
714	ՉԺԶ 716	ճԿԳ 163	**Փիլիկոս Վարդան** («ի Կոստանդնուպալիս») **ամս Գ** (3):
715	ՉԺԷ 717	ճԿԴ 164	**Տէր Յովանէս Աւծնեցին** (կթղ.) **ամս ԺԱ** (11): *(Մ3613) Սա արար զժողով ի Մանազկերտ հրամանաւ ամիրապէտին տաճկաց Օմարա եւ ձեռնտուութեամբ խալիֆային, որ ի Բաղտատ, եւ կային անտ Զ (6) եպիսկոպոսք յԱսորոց եւ եդին կանոնս միաբանութեամբ խոստովանել զՔրիստոս մի բնութիւն, մի կամք եւ մի ներգործութիւն*

			եւ ոչ արկանել ջուր ի սուրբ իւղոյ զպատարագին եւ ի յաղուհացն զաւաք շաբաթ օրն լուծանել զպահքն: Եւ յաւաք հինգշաբթւոջն ոչ հաղորդել ժողովրդեանն ասելով նուիրումն է խորհրդոյն, զի Տէրն ոչ է խաչեալ եւ ոչ յարուցեալ, եւ զծուկն եւ զձեթ, զգինի եւ զթան, զպանիր եւ զծու միապես կարգեց: *(Մ7261, Մ10202) Օծնեցին Յոհաննէս հնգետասան աշխարհաց Հայաստանեայց երկոտասանեորդն ի սմանէ Գուգարացն չորրորդ եւ ի Ո (600) եւ ԻՁ (26) գաւառաց իշխեցօղ եւ Ջ (900) գաւազանաց կարգաւորիչ:* *(Մ3681, Նաթանայել Հավուցթառեցի)[138] եւ արար ժողով եւ հաստատեց զազգս Հայոց ի յուղղափառ դաւանութիւն զոր զսուրբ հարքն ի Նիկիայ սահմանեցին եւ եկն ի ժողովս Գաբրիել Վրաց կաթողիկոսն ԺԵ (15) եպիսկոպոսաւք[139] եւ նզովեց զժողովն Քաղկեդոնի:* *(Մ1899) Ի ՃԿԴ (715) թուին՝ եղան նշանք մեծամեծք ի մարտի ամսոյ մինչեւ յապրիլն. օդդ հող եւ փոշի տեղայր՝ եւ ցերէկն գիշեր թուէր, եւ երեւեցան Գ (3) սիւնք ամպեղէնք հրախառն ի կողմն հիւսիսոյ Գ (3) օր: Եւ ելանէին ի վեր՝ եւ իջանէին ի վայր: Եւ յետ այնորիկ երեւեցաւ աստղ մի ի չափ լուսնին, եւ ի ցերեկի երեւէր զերիս աւուրս: Եւ շարժ եղեալ պատառեցաւ երկիր՝ եւ ելին աղբիւրք ի գոյն արեան: Եւ եռայր ծովն իբրեւ զկաթսայ: Եւ ի սոյն ամի ի շարժէ գիւղ մի յոտն լերինն Թաբորի ի յիւր տեղւոյն ոստեալ ի բաց վազեաց Բ (2) միլ[140], եւ ինչ ոչ խախտեցաւ շինուածն: Եւ Մընբէճ[141] ընկղմեցաւ, եւ Նիկիա բոլոր բլաւ, եւ Գ (3-րդ) մասն Կոստանդնուպօլսի եւ այլ եւս բազում քաղաքք տապալեցան ի Բիւթանիա:*
716	ՉԺԸ 718	ՃԿԵ 165	
717	ՉԺԹ 719	ՃԿՁ 166	**Թեոդոս** («ի Կոստանդնուպաւլիս») **ամ Ա** (1)**:** *(Մ1899) Ի ՃԿՁ (717) թուին, մինչ նստէր սուլտան Աբդլայ ի վրանն իւր՝ յՈւրհայ, յանկարծակի եղեւ ամբոխ յոյժ՝ եւ սկսան գնալ ի գերեզմանսն, գնաց*

			եւ սուլտանն զկնի, եւ տեսին զի արք Ը (8) ելեալք էին ի գերեզմանացն միջովք չափ ի վեր, ներկեալ մօրուօք, եւ զտեղի առեալ կային զերիս տիւս եւ զերիս գիշերս: Եւ կացին պահապանք ի վերայ նոցա, եւ հանապազ հարցանէին՝ եւ ոչ խօսեցան բնաւ, եւ նեղեալք թաղեցին զնոսա դարձեալ եւ ոչ ինչ իմացան:
718	ՉԻ 720	ՃԿԷ 167	**Արտեմ** («ի Կոստանդնուպաւլիս») **ամ Ա** (1)**:**
719	ՉԻԱ 721	ՃԿԸ 168	**Լեւոն** («ի Կոստանդնուպաւլիս») **ամս ԻԴ** (24)**:** **Սուլիման** (ամիրապետ) **ամս Բ** (2)**:**
720	ՉԻԲ 722	ՃԿԹ 169	**Սուլիման զԴարբանդ եառ:**
721	ՉԻԳ 723	ՃՀ 170	**Սուրբ իմաստասէրն Յոհան կանոնական կարգաւք պայծառացոյց զեկեղեցիս, զսա կոչէ ամիրապետն ի դուռն իւր եւ վասն առաւել վայելչութեան սորա պատուէ մեծագոյն պատուով:** **Ամիրմումնի Ոմառ ամս Գ** (3)**:**
722	ՉԻԴ 724	ՃՀԱ 171	(Մ3613) Ծռազատիկ:
723	ՉԻԵ 725	ՃՀԲ 172	**Մահն Աշոտոյ, յորում եւ խոզասպանութիւնն**[142]**:**
724	ՉԻԶ 726	ՃՀԳ 173	**Իզիտ** (ամիրապետ) **ամս Զ** (6)**:** *(Մ3613) Որոշեցին զՈհան Տիկորեցի*[143]*:*
725	ՉԻԷ 727	ՃՀԴ 174	**Ժողովն Մանազկերտայ ի Յովաննէ:**
726	ՉԻԸ 728	ՃՀԵ 175	**Տէր Դաւիթ** (կթղ.) **ամս ԺԳ** (13)**:**
727	ՉԻԹ 729	ՃՀԶ 176	**Տէր Դաւիթ յԱրամունեաց ի Կոտայուցն, յորում շինեալ եկեղեցի տուն բնակութեան հայրապետական, փոխելով ի նմա զաթոռն ի Դւնա, զի նեղեցաւ անդ յաւճրագործ ազգէն Մահմետի:**
728	ՉԼ 730	ՃՀԷ 177	
729	ՉԼԱ 731	ՃՀԸ 178	
730	ՉԼԲ 732	ՃՀԹ 179	**Շամահէշմ**[144] (ամիրապետ) **ամս ԺԹ** (19)**:**
731	ՉԼԳ 733	ՃՁ 180	**Դարբանդ շինեցաւ դարձեալ:** *(Մ7261, Մ10202) Ստեփանոս Սիւնեցին գրեաց պատասխանի թղթոյն Գերմանոսի պատրիարգին հրամանաւ տեառն Դաւթի հայրապետի*[145]*:*
732	ՉԼԴ 734	ՃՁԱ 181	
733	ՉԼԵ 735	ՃՁԲ 182	
734	ՉԼԶ 736	ՃՁԳ 183	
735	ՉԼԷ 737	ՃՁԴ 184	
736	ՉԼԸ 738	ՃՁԵ 185	
737	ՉԼԹ 739	ՃՁԶ 186	*(Վ1253) Վահան Գողթնեցի նահատակեցավ*[146]*:*

738	ՉԽ 740	ՃՁԷ 187	
739	ՉԽԱ 741	ՃՁԸ 188	**Տէր Տրդատ** (կթղ.) **ամս ԻԴ** (24): **Սուրբ Գրիգորի վանքն այրեցաւ**[147]:
740	ՉԽԲ 742	ՃՁԹ 189	**Տէր Տրդատ յԱւթմսոյ գեղջէ, այր պարկեշտ եւ սուրբ եւ փայլեալ ամենայն առաքինութեամբ:**
741	ՉԽԳ 743	ՃՂ 190	
742	ՉԽԴ 744	ՃՂԱ 191	
743	ՉԽԵ 745	ՃՂԲ 192	**Կոստանդին** («ի Կոստանդնուպալիս») **ամս ԼԳ** (33):
744	ՉԽԶ 746	ՃՂԳ 193	
745	ՉԽԷ 747	ՃՂԴ 194	**Կոստանդին որդի Լեւոնի կոչեցաւ Կաւաղինոս այսինքն թրքաժողով, զի զաւրքն Տաճկաց բանակեալ էին առ ափն Ալիւս գետոյ: Իսկ նա հրամայեաց թրիք ժողովել եւ արկանել ի գետն, եւ նոցա տեսեալ ահաբեկք եղեն, կարծեցեալք անթիւ լիեալ զաւրացն եւ փախեան ի նմանէ: Պատմի ի միում աւուր զկնի միմեանց Ե** (5) **առիւծ սպանեալ սորա:**
746	ՉԽԸ 748	ՃՂԵ 195	
747	ՉԽԹ 749	ՃՂԶ 196	
748	ՉՕ 750	ՃՂԷ 197	
749	ՉՕԱ 751	ՃՂԸ 198	**Վլիթ** (ամիրապետ) **ամս Բ** (2): *(Վ288) Փոքր Մահմէտ էառ զՀայս եւ զՊարսիկս*[148]*:*
750	ՉՕԲ 752	ՃՂԹ 199	
751	ՉՕԳ 753	Մ 200	**Մրուան** (ամիրապետ) **ամս Զ** (6): *(Մ1899, Տ93) Շինեաց Զաֆար ամիրայն զԲաղդատ՝ որ ասի միջոց, զի ընդ մէջ է Պարսից եւ Ասորոց: Եւ ի սոյն ամի յայտնեցաւ կին մի ի Բուխարայ, որք ասէին թէ ի ծննդէնէ բնաւ չէր կերեալ՝ ոչ կաթն եւ ոչ այլ ինչ՝ եւ զարգացեալ էր հասակաւ եւ եղեալ կին. եւ էր գէր եւ երկայն. եւ բերին զնա ի Բաղդատ առ Զաֆարն՝ զոր փորձեալ եգիտ այնպէս: Եւ արար Զաֆարն ժողով գիտնոց՝ եւ եհարց, թէ իսկի լեալ է երբէք այնպիսի ոք՝ եւ ասեն՝ ոչ: Այս Զաֆարս այնքան ճշդիւ ժողովեաց ի քրիստոնէից զոսկի եւ զարծաթ, մինչեւ զգերեզմանս մեռելոցն բանային՝ եւ զոսկին առեալ տային ի նա: Ուսան եւ Յոյնք բանալ զգերեզ-*

			մանս՝ որ եւ գտին զգերեզման շինողին Նիկոմի-դեա բազում ոսկւով, զղջացեալք թողին:
752	ՉՕԴ 754	ՄԱ 201	
753	ՉՕԵ 755	ՄԲ 202	
754	ՉՕԶ 756	ՄԳ 203	**Պատառումն զատկի:** *(Լատ. հր.) Իշխան Սահակ Բագրատունի՝ առաքինի եւ խաղաղասէր:* *Յայսմ ժամանակի երկու որդիքն Վահանայ՝ Արծրունեաց իշխանի՝ Սահակ եւ Համազասպ, ելեալ ընդդէմ թշնամեաց՝ եկելոց ի վերայ Վասպուրականի, զբազում քաջութիւնս ցուցեալ, փառաւք նահատակեցան[149]:*
755	ՉՕԷ 757	ՄԴ 204	
756	ՉՕԸ 758	ՄԵ 205	
757	ՉՕԹ 759	ՄԶ 206	**Աբդըլա** (ամիրապետ) **ամս Գ** (3)**:**
758	ՉԿ 760	ՄԷ 207	
759	ՉԿԱ 761	ՄԸ 208	
760	ՉԿԲ 762	ՄԹ 209	**Բ** (2) **աստեղք երեւեցան, մի յարեւելս, եւ մի յարեւմուտս:** **Ապդալայ** (ամիրապետ) **ամս ԻԲ** (22)**:**
761	ՉԿԳ 763	ՄԺ 210	
762	ՉԿԴ 764	ՄԺԱ 211	**Աշոտ Բագրատունի** (Հայոց) **ամս ԻԲ** (22)**:** **Տէր Տրդատ** (կթղ) **ամս Գ** (3)**: Տէր Տրդատ միւս ի Դասնաւորից:**
763	ՉԿԵ 765	ՄԺԲ 212	
764	ՉԿԶ 766	ՄԺԳ 213	
765	ՉԿԷ 767	ՄԺԴ 214	**Տէր Սիոն ամս Ը** (8)**: Տէր Սիոն ի Բագուանից, սա առ ոտամբն Սիմն կոչեցեալ լեառն, զցամաքեալ աղբեւրն հսկմամբ աղաւթից դարձեալ բղխեցոյց:**
766	ՉԿԸ 768	ՄԺԵ 215	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Լեւոն չորրորդ ազգաւ Հռոմայեցի ամս Ի (20):*
767	ՉԿԹ 769	ՄԺԶ 216	**Կոստանդին զԿարնոյ քաղաք առ եւ յետ Բ** (2) **ամին շինեաց զնա Իզիտ ամիրայ:**
768	ՉՀ 770	ՄԺԷ 217	
769	ՉՀԱ 771	ՄԺԸ 218	
770	ՉՀԲ 772	ՄԺԹ 219	
771	ՉՀԳ 773	ՄԻ 220	*(Մ3613) Կարի ծմեռն, ոչխարն Ա (1) դրամ, եզն՝ Ե (5):*
772	ՉՀԴ 774	ՄԻԱ 221	**Յաւուրս յայս եղեւ կոտորումն Քաղիւնոյ, Արենոյ,**

			Թալնա, ուր սպանան ոգիք Չ (700) **եւ գերեցան ՌՄ** (1200)[150]**:**
773	ՉՀԵ 775	ՄԻԲ 222	**Մուշեղ Մամիկոնեան եւ Սամուէլ, այլովք ազատագունդ զաւրաւքն Հայոց, կոտորեցան յաւուրս Զատկացն յԻսմայէլացւոցն:** **Յայսմ ժամանակի էր Ստեփանոս դրան երեց, որ բանիբուն ճանաչէր, հաս ի կատարումն ամենայն իմաստասիրական եւ գրամատիկոս արհեստից, հանդերձ հոգեւորական առաքինութեամբ: էին եւ վարդապետք յաշխարհիս Հայոց՝ ընտրեալք եւ լուսաւորք, տէր Եփրեմ եւ Անաստաս եւ Խաչիկ եւ Դաւիթ Հռոմաեցին: Մեծ իմաստասէրն Ստեփանոս Սիւնեցի՝ աշակերտ Մովսէսի**[151]**:**
774	ՉՀԶ 776	ՄԻԳ 223	**Տէր Եսայի** (կթղ.) **ամս ԺԳ** (13)[152]**:** **Տէր Եսայի՝ ի Նիգ գաւառէ, ի գեղջէ Եղիպատրուշա, սա էր որդի կնոջ այրւոյ, որ շրջէր մուրացիկ առ դրունս կաթողիկոսարանին՝ սնուցեալ մեծաւ յուսով զորդին, որ եւ եհաս յաստիճան հայրապետութեանն արժանապէս:**
775	ՉՀԷ 777	ՄԻԴ 224	
776	ՉՀԸ 778	ՄԻԵ 225	
777	ՉՀԹ 779	ՄԻԶ 226	
778	ՉՂ 780	ՄԻԷ 227	
779	ՉՂԱ 781	ՄԻԸ 228	**Սմբատ** (Հայոց) **ամս ԻԲ** (22)**:** *(Վ288) Կոտորումն իշխանացն Արծրունեաց Սահակայ եւ Համազասպայ:*
780	ՉՂԲ 782	ՄԻԹ 229	**Լեւոն** («ի Կոստանդնուպալիս») **ամս Ե** (5)**:**
781	ՉՂԳ 783	ՄԼ 230	
782	ՉՂԴ 784	ՄԼԱ 231	**Մահադի** (ամիրապետ) **ամս Ժ** (10)**:**
783	ՉՂԵ 785	ՄԼԲ 232	
784	ՉՂԶ 786	ՄԼԳ 233	
785	ՉՂԷ 787	ՄԼԴ 234	**Կոստնդին** («ի Կոստանդնուպալիս») **եւ Եռինէ մայրն ամս Ժ** (10)**:** **Ի սոցա աւուրս կանգնումն եղեւ պատկերացն ի Հռոմ եւ եղեւ տեսանել սոցա տապան մի մեծ մարմարեա, զարմացան եւ հրամայեցին բանալ զնա եւ գտին գրեալ ի նմա, թէ զինչ աւգուտ է ծածկելդ զիս, զի յաւուրս Կոստանդեայ եւ Եռինեա մաւր նորա տեսանելոց է արեգակն զիս:**

786	ՉՁԸ 788	ՄԼԵ 235	**Ի վախճանելն Եսայայ Իպն Դաւկլ կողոպտէ զեկեղեցին ի Դւին եւ բազում կաշառաւք յաջորդի յաթոռն Ստեփանոս:** **Տէր Ստեփանոս** (կթղ.) **ամ Ա** (1)**:** **Տէր Ստեփանոս ի Դւնա:**
787	ՉՁԹ 789	ՄԼՁ 236	**Տէր Յովաբ** (կթղ.) **ամ Ա** (1)**:** **Տէր Յովաբ յՈստանէն, ի կուրապաղատէն**[153]**:**
788	ՉՂ 790	ՄԼԷ 237	**Տէր Սողոմոն** (կթղ.) **ամ Ա** (1)**:** **Տէր Սաղոմոն ի Մաքենոցաց վանիցն, ծերացեալ առաւել:**
789	ՉՂԱ 791	ՄԼԸ 238	**Տէր Գորգ** (կթղ.) **ամս Գ** (3)**:** **Տէր Գորգ, որ հոյլ որբուկն**[154] **կոչիւր, յԱրագածոտնէ:**
790	ՉՂԲ 792	ՄԼԹ 239	
791	ՉՂԳ 793	ՄԽ 240	
792	ՉՂԴ 794	ՄԽԱ 241	**Մաւսէ** (ամիրապետ) **ամ Ա** (1)**:** **Տէր Յովսէփ** (կթղ.) **ամս ԺԱ** (11)**:** **Տէր Յովսէփ յԱրագածոտանէ, ի բնակչաց Սրբոյն Գրիգորի:**
793	ՉՂԵ 795	ՄԽԲ 242	**Ամիր Ահարոն Ռաշիտն** (ամիրապետ) **ամս ԻԶ** (26)**:**
794	ՉՂԶ 796	ՄԽԳ 243	
795	ՉՂԷ 797	ՄԽԴ 244	**Յետ Ժ** (10) **ամին ի միասին թագաւորելոյ, ասեն ընկեցեալ զմայրն իւր Կոստանդին, ինքն թագաւորեաց ամս է** (7)**: Եւ ապա մաւրն ընբռնեալ զորդին՝ բրեաց զաչս նորա, եւ թագաւորեաց ամս Ե** (5) **մայրն Երինէ:** **Նիկիփոր** («ի Կոստանդնուպաւլիս») **ամս Թ** (9)**:**
796	ՉՂԸ 798	ՄԽԵ 245	**Երկու եղբարք՝ Սահակ եւ Յովսէփ իսմաէլացիք կատարեցան վկայութեամբ խոստովանելով զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին, Կարնոյ քաղաքի** (Մ3613) (որ է Արզրումն), **յարաց ի ԺԵ** (15) **յաւուր հինգշաբաթուջ:**
797	ՉՂԹ 799	ՄԽՁ 246	
798	Պ 800	ՄԽԷ 247	
799	ՊԱ 801	ՄԽԸ 248	
800	ՊԲ 802	ՄԽԹ 249	**Առ յԱդամայ ամք Ց** (6000)**:** **Ի Քրիստոսէ՝ ՊԲ** (802)**:**
801	ՊԳ 803	ՄՃ 250	**Աշոտ որդի Սմբատա՝ Մսակերն** (Հայոց) **ամս Ի** (20)**:**
802	ՊԴ 804	ՄՃԱ 251	*(Տ93) ՄՃԱ (802) թըվին շարժեցաւ երկիր սաս-*

			տիկ եւ լերինքն կողոտու, որ կան աստի եւ անտի, հրպեցան առ միմեանս եւ տեսին մարդիկք եւ փլաւ լեառն մի, եւ անկաւ յԵփրատ եւ արգել զնա աւր մի եւ գնայր գետն ի վեր եւ բազում լերինք խլեցան եւ յոլով աղբիւրք բացան ջրոյ եւ կպրոյ եւ նաֆթոյ եւ բազումք խցան յաղբերաց:
803	ՊԵ 805	ՄՕԲ 252	**Խաշնամահն, եւ սուտ թագաւորն Թոմայ ի Կարնոյ քաղաքն եկն, եւ տարան Ասորիս զՍմբատ եւ զԳրիգոր՝ որդի Քուրդկայ:** **Տէր Դաւիթ** (կթղ.) **ամս Իէ** (27)**:** **Տէր Դաւիթ ի Մազազայ ի գեղջէ Կայկաղա:**
804	ՊՁ 806	ՄՕԳ 253	**Ի Բուլղարս եմուտ Նիկիփոռ, եւ կորեաւ ինքն եւ իւրքն:** **Միքայել** («ի Կոստանդնուպաւլիս») **ամս Գ** (3)**:**
805	ՊԷ 807	ՄՕԴ 254	
806	ՊԸ 808	ՄՕԵ 255	**Սովն ընդհանուր, ի մի քաղաքին Կարնա գտան մեռեալք մին աւրն՝ Վ** (3000)**:**
807	ՊԹ 809	ՄՕԶ 256	**Լեւոն** («ի Կոստանդնուպաւլիս») **ամս Ը** (8)**:**
808	ՊԺ 810	ՄՕԷ 257	**Եկն թշնամին յԱսկի դուռն, եւ առան բազում քաղաքք, եւ գերեցաւ մայր քաղաքացն Մակեդոնացւոց Անդրիանուպաւլիս եւ զպատկէրսն ընկէց Լեւոն[155]: Սա շինեաց զԲիւզու եւ զԱրկադուպաւլիս, սա զԿամախ էառ:**
809	ՊԺԱ 811	ՄՕԸ 258	
810	ՊԺԲ 812	ՄՕԹ 259	
811	ՊԺԳ 813	ՄԿ 260	*(Մ1899) Ի սոյն ամի ծովն ընկէց յերկիրն Կիլիկեցւոց ծուկն մի՝ որ Խ (40) գիրկ երկայն էր՝ եւ նոյնչափ լայն՝ իբրեւ գբլուր մի, զոր ժողովեալ երկիրն կտրատեցին եւ կերան:*
812	ՊԺԴ 814	ՄԿԱ 261	
813	ՊԺԵ 815	ՄԿԲ 262	
814	ՊԺԶ 816	ՄԿԳ 263	
815	ՊԺԷ 817	ՄԿԴ 264	**Միքայել** («ի Կոստանդնուպաւլիս») **ամս Թ** (9)**:**
816	ՊԺԸ 818	ՄԿԵ 265	**Մահմատ** (ամիրապետ) **ամս Գ** (3)**:** *(Լատ. հր.) Հագարացին Սեւադա, որ առեալ էր զիւր կին Արուսեակ ի տանէն Բագրատունեաց, համոզեր զիշխանս Հայոց ելանել ընդդէմ յամիրապետին[156]:*

817	ՊԺԹ 819	ՄԿՁ 266	
818	ՊԻ 820	ՄԿԷ 267	
819	ՊԻԱ 821	ՄԿԸ 268	**Մայմուն** (ամիրապետ) **ամս ԻԱ** (21)**:**
820	ՊԻԲ 822	ՄԿԹ 269	
821	ՊԻԳ 823	ՄՀ 270	**Սմբատ որդի Աշոտոյ** (Հայոց), **որ Ապլաբասն կոչէր, ամս ԼԵ** (35)**:**
822	ՊԻԴ 824	ՄՀԱ 271	
823	ՊԻԵ 825	ՄՀԲ 272	
824	ՊԻԶ 826	ՄՀԳ 273	**Թէոփիլոս** («ի Կոստանդնուպալիս») **ամս ԺԵ** (15)**: Կռուի ընդ Թոմայի մոլորեցուցչի:** *(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Եւգինէս երկրորդ՝ ազգաւ Հռոմայեցի ամս Գ (3):*
825	ՊԻԷ 827	ՄՀԴ 274	
826	ՊԻԸ 828	ՄՀԵ 275	**Եմուտ Թէոփիլոս յԱսորիս եւ առ զքաղաքն Զուպատրայ, եկն եւ ի Հայս եւ առ զամուրն զՊաղին եւ զՄեծկերտն եւ զԱնկղ ի գաւառին Դեգիս եւ զԽոզան:**
827	ՊԻԹ 829	ՄՀԶ 276	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Վալենտիանոս առաջին ազգաւ Հռոմայեցի ամս (1):*
828	ՊԼ 830	ՄՀԷ 277	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Գրիգոր չորրորդ ազգաւ Հռոմայեցի ամս ԺԵ (15):*
829	ՊԼԱ 831	ՄՀԸ 278	
830	ՊԼԲ 832	ՄՀԹ 279	**Տէր Յոհանէս** (կթղ.) **ի գաւառէ Կոտայից ամս ԻԲ** (22)**, ի գեղջէ Ովայից:**
831	ՊԼԳ 833	ՄՁ 280	
832	ՊԼԴ 834	ՄՁԱ 281	
833	ՊԼԵ 835	ՄՁԲ 282	*(Մ1899) Թէոփիլոս կայսրն ի Տրապիզոն եմուտ: Նոյն սա զՊարսիկք կոտորեաց:*
834	ՊԼԶ 836	ՄՁԳ 283	**Շինէ Սմբատ զսուրբ քաւարանն մեծապայծառ զարդու յերազգաւորս, որ արդ Շիրակաւանն կոչի:** *(Մ5596) Շինէ Սմբատ զուրբ քաւարանն յերա[զ]գաւորս մե[ծ]ապայծառ զարդուք եւ կոչի այժմ Շի[ր]ակաւան տեղին այն եւ եկեղեցին ա/// ան եւ բնակարան անհաւատից եւ գայր…*[157]*:*
835	ՊԼԷ 837	ՄՁԴ 284	
836	ՊԼԸ 838	ՄՁԵ 285	
837	ՊԼԹ 839	ՄՁԶ 286	
838	ՊԽ 840	ՄՁԷ 287	**Յութերորդ ամին տեառն Յովաննիսի քիլք**[158]

			ոմանք ի նմին տանէ՝ բանս հայհոյութեան զսըրբոյն բերեին ի բերան, որք չարամահ սատակմամբ կորեան նանրալեզուքն, որպէս որք առ Նարկեսոսիւն յերուսաղէմ:
839	ՊԽԱ 841	ՄՁԸ 288	**Միքայէլ** («ի Կոստանդնուպաւլիս») **ամս ԻԴ** (24)**:**
840	ՊԽԲ 842	ՄՁԹ 289	**Ապուսահակ Մահմետ** (ամիրապետ) **ամս Բ** (2)**:**
841	ՊԽԳ 843	ՄՂ 290	
842	ՊԽԴ 844	ՄՂԱ 291	**Ահարոն** (ամիրապետ) **ամս Դ** (4)**:**
843	ՊԽԵ 845	ՄՂԲ 292	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Սերճիոս երկրորդ ազգաւ Հռոմայեցի, ամս Գ (3):*
844	ՊԽԶ 846	ՄՂԳ 293	**Բնակիչք Սիմն կոչեցեալ լերին սպանին զԱպուսէթ ոստիկան՝ առաքեալ ի Հայս յամիրապետէն:** *(Մ1898) Կայսր եկաց Հռոմայեցոց[159] Կլաւդայրն եւ Լաւիզն ամս ԺԳ (13):*
845	ՊԽԷ 847	ՄՂԴ 294	
846	ՊԽԸ 848	ՄՂԵ 295	**Զափր** (ամիրապետ) **ամս ԺԶ** (16)**:** *(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Լեւոն հինգերրորդ, ազգաւ Հռոմայեցի ամս Ը (8):*
847	ՊԽԹ 849	ՄՂԶ 296	
848	ՊՕ 850	ՄՂԷ 297	**Յաւուրս Զափրի ամիրապէտի Իսմայէլական ազգին, եւ սպարապետին Հայոց Սմբատայ Խոստովանողի, եկն ոմն յերկիրս Հայոց ոստիկան՝ Ապուսէթ անուն, եւ ընդ գալն ըմբռնեալ զԲագարատ իշխանն կապանաւք ետ տանել առ Զափր: Իսկ բնակիչք Տաւրոս լերին, որ Սասունքն արդ անուանին, յաղագս զվրէժ խնդրելոյ զԲագարատայ, ի միասին ժողովեալ միաբան զինուորութեամբ, սպանին զԱպուսէթ եւ հալածական արարին զզաւրս նորա:** *(Մ9796, Վ288) Յայսմ ամի շինեցաւ Գանձակ:*
849	ՊՕԱ 851	ՄՂԸ 298	
850	ՊՕԲ 852	ՄՂԹ 299	
851	ՊՕԳ 853	Յ 300	
852	ՊՕԴ 854	ՅԱ 301	**Տէր Զաքարիայ** (կթղ.), **ի Կոտայս գաւառէ, ի գեղջէ Զագայ, ամս ԻԲ** (22)**:**
853	ՊՕԵ 855	ՅԲ 302	**Իսկ չարագոյնն քան զամենեսեան Բուխայ[160], եկեալ բազում զաւրու ի չարագործէն Զափրայ յաշխարհս Հայոց, վրիժախնդիր սպանմանն Ապուսիթայ, եւ աղետս եւ հալածանս եւ վիշտս՝**

			սպանման հասոյց ամենեցուն, մանաւանդ ազատաց եւ հեծելագունդ զաւրաց. եւ զորս անխայէր ի մահուանէ, զնոսա հրապուրէր յուրացութիւն Քրիստոսի, դառնալ ի կրաւնս անկրաւնս դենին իւրեանց: Յորոց յոլովք արիացան եւ ամրացուցին զանձինս վահանաւ եւ զինու Քրիստոսի, առ ոչինչ համարեալ զպէսպէս տանջանարանս եւ զցաւս մարմնոց, զոր հնարէր չարիմացն, յաղագս հանդերձեալ բարեացն: Յորոց մի էր սուրբն Աստուծոյ Ատոմ յԱղփագոյ գաւառէ իւրովք ընկերաւքն՝ համբեր զանազան կտտանաց, եւ պայծառացան անզուգական պսակաւն: Իսկ թիւ վկայիցն, իբրեւ հարիւր եւ յիսնից, բայց յայնցանէ, որ յայլ եւ այլ գաւառս վկայեցին, որոց տաւն կարգեցին ի մեհեկանի ԻԵ (25): Էին ոմանք, որք անընմբերք եղեալք, զվատ անուն ժառանգեալք, զրկեցան ի կենացն անվախճան, եւ այսմ ոչ ժամանեցին: Բայց ամպարիշտ եւ գազանաբարոյն Բուխայ, իբրեւ ետես զամենայն կամս իւր աջողեալ, ապա զբռամբ ածեաց զմեծամեծս աշխարհիս, զորս խաբէութեամբ եւ զորս բռնաւորական իշխողութեամբ, որպէս եւ զմեծ զսպարապետն Հայոց զՍմբատ, որ մականուն Ապլաբասն կոչիւր, յաւէտ թէ ցանկալին հրեշտակաց, որ ճշմարիտ ծանաւթութիւն է Քրիստոսի, զի Խոստովանող կոչեցաւ: Յերթալ անուղային Բուխայի առ ամիրապետն, զայլսն կապանաւք եւ զՍմբատ կեղծիւք եւ դաւող խոստմամբք չարեաց, ընդ իւր տանէր: Բայց նա քանզի վախճան կենաց հասեալ էր տեառն Յովաննիսի, զՋաքարիայ կացուցանէր յաշտիճանն սուրբ փոխանակ նորա, որ ի միում աւուր եհաս ի քահանայականէն սկսեալ, մանաւանդ եթէ ի սարկաւագութենէն ի գլխաւորական գահ կաթողիկոսութեան[161]: Իսկ զտարեալսն ընդ իւր անաւրէնն, զամենեսին հրամանաւ բռնաւորին իւրեանց բանդարգել առնէին, կամ ուրանալ զքրիստոսատուր աւրէնս ասէին, կամ մեռանել կտտանաւք: Որում հաւանեալ բազմաց զանգիտեալք ի մարմնական մահուանէ,

			բայց ի սրբոյն Սմբատայ, որ յոլովակի եւ համարձակ բանիւք դաւանեաց զՔրիստոս եւ իւրով մահուամբ ել յաշխարհէս: Իսկ ի նախարարացն նոյնպէս մի ոմն Ստեփանոս, որ Կոնն կոչէին՝ համարձակ դաւանութեամբ վկայեաց Քրիստոսի ՅԲ (853) թուականին Հայոց: Բայց զխոստովանողին Սմբատայ զմարմինն, բազմազուարճ սաղմոսերգութեամբ հանգուցին ժողովք հաւատացելոցն ի վկայարանի սրբոյն Դանիէլի մարգարէին, ուր ընկեցեալ լինէր ի գուբն առեւծուց: Իսկ զկնի մահուանն Սմբատայ, առնու զտերութիւնն Աշոտ որդի նորա, որ նախնեացն ամենեցուն վեհագոյն գտաւ եւ կրթէր զինքն ի հրահանգս սիրոյ եւ բարեպաշտութեան, յինքն յանկուցանելով զսիրտս ամենեցուն: Եւ վասն այսպիսի համբաւոյ՝ ոստիկան ոմն, որ Ալի Արմնի կոչէր, եկեալ յամիրապետէն, յետ սպարապետութեանն իշխանաց իշխան զնա Հայոց կացուցանէր զամս Լ (30): Եւ ապա յաղագս առաւել լաւութեան, թագաւորական պսակաւն ճոխաբար թագ կապեալ յերկոցունց թագաւորացն Իսմայէլացւոցն եւ Յունականէն ամս Ե (5): Աշոտ (Հայոց) ամս ԼԶ (36):
854	ՊՕԶ 856	ՅԳ 303	Մեծաշուք բախտի պատահեալն Աշոտ որդի Սմպատայ *(Մ1897, Հայրապետ վրդ.) Խոստովանողի* ամենայն նախնեացն գեր ի վերոյ եղեալ, *զընդ լծով կացեալքս լծադիրս բազում ազանց կացոյց*[162]*:* *(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Նիկաւլայոս ամս ԺԱ (11):*
855	ՊՕԷ 857	ՅԴ 304	
856	ՊՕԸ 858	ՅԵ 305	
857	ՊՕԹ 859	ՅԶ 306	
858	ՊԿ 860	ՅԷ 307	*(Մ7261, Մ10202) Հայոց ՅԷ (858) Աստ եղեւ ժողովն Շիրակուանայ յորում միաբանեցան Հայք ընդ Յունաց եւ ընկալան զժողովն Քաղկեդոնի եւ զերկու բնութիւնս միաւորեալ ասել ի մի Քրիստոս*[163]*:*
859	ՊԿԱ 861	ՅԸ 308	

860	ՊԿԲ 862	ՅԹ 309	
861	ՊԿԳ 863	ՅԺ 310	
862	ՊԿԴ 864	ՅԺԱ 311	**Մահմատ** (ամիրապետ) **ամ Ա** (1)**:**
863	ՊԿԵ 865	ՅԺԲ 312	**Ի սուրբ քառասնորդսն շարժմունք անհնարինք տապալեալ յատակեցին զյոլովս տեւեալ զերիս ամիսս:** **Վասիլ** («ի Կոստանդնուպալիս») **ամս ԻԲ** (22)**:** **Ահամատ** (ամիրապետ) **ամս Դ** (4):
864	ՊԿԶ 866	ՅԺԳ 313	**զՎասիլն ասեն ի Տարաւնոյ, ի գեղջէ Թլայ: Սա շինեաց զՍուրբ Զաւրավարսն:**
865	ՊԿԷ 867	ՅԺԴ 314	
866	ՊԿԸ 868	ՅԺԵ 315	
867	ՊԿԹ 869	ՅԺԶ 316	**Ապուաբդիալա** (ամիրապետ) **ամս Գ** (3):
868	ՊՀ 870	ՅԺԷ 317	
869	ՊՀԱ 871	ՅԺԸ 318	
870	ՊՀԲ 872	ՅԺԹ 319	**Մահմետ** (ամիրապետ) **ամս ԼԳ** (33)**:**
871	ՊՀԳ 873	ՅԻ 320	
872	ՊՀԴ 874	ՅԻԱ 321	**Աշոտ լիեալ իշխանաց իշխան,** *(Մ1897), Հայրապետ վրդ.) ի ԺԹ (19) ամի իւրոյ իշխանութեանն:*
873	ՊՀԵ 875	ՅԻԲ 322	
874	ՊՀԶ 876	ՅԻԳ 323	**Տէր Գեորգ ի քաղաքագեղջէն Գառնո ամս ԻԲ** (22)**:**
875	ՊՀԷ 877	ՅԻԴ 324	**Ի Կոտանդինուպալիս էր Փոտ պատրիարգ:** *(Մ2965) Կաթողիկոս էկաց տէր Գորգ ի քաղաքագեղջէն Գառնւոյ՝ ամս ԻԲ (22) յաւուրս թագաւորին Աշոտոյ որդւոյ Սմբատայ, որ գերեցաւ եւ Համամ բարեպաշտ թագաւորն Աղուանից եհան*[164]*:*
876	ՊՀԸ 878	ՅԻԵ 325	
877	ՊՀԹ 879	ՅԻԶ 326	*(Մ3681, Նաթանայել Հավուցթառեցի) եւ սուրբ հայրապետն եւ մեծ պատրիարգն Հայոց սուրբն Գէորք վերստին նորոգեց զնախադրական ուխտն Հաւուց թառ եւ պայծառացոյց, փարթամացոյց գոյիւք եւ ա[ռա]ր իրն բնակ[ար]ան յամար[այ]նի ժամանակս*[165]*:*
878	ՊՁ 880	ՅԻԷ 327	
879	ՊՁԱ 881	ՅԻԸ 328	
780	ՊՁԲ 882	ՅԻԹ 329	
881	ՊՁԳ 883	ՅԼ 330	

882	ՊԶԴ 884	ՅԼԱ 331	
883	ՊԶԵ 885	ՅԼԲ 332	
884	ՊԶԶ 886	ՅԼԳ 333	
885	ՊԶԷ 887	ՅԼԴ 334	**Աշոտ իշխանաց իշխան թագաւորեաց Հայոց ամս Ե** (5)**:** **Ի բառնալոյ Արշակունեաց թագաւորութեանցն մինչեւ ցթագաւորութիւնս Բագրատունեաց լինին ամք ՆԼԴ** (434)**:** **Լեւոն** («ի Կոստանդնուպաւլիս») **ամս ԻԶ** (26)**:** *(Ե1553) Սա (Աշոտը - Կ. Մ.) պսակեցաւ յԲ (2) թագաւորաց, ի Հոռոմոց Վասլէ եւ ի Տաճկաց Մահմէտ անուն: Սա առաջին թագաւոր ի Բագրատունեաց, որ են Հրէա, դարձեալ ի Քրիստոս, զոր գերեաց Տիգրան թագաւոր Հայոց, արար թագադիր: (Մ3681, Նաթանայել Հավուցքառեցի) Եւ (Աշոտ) եկեալ ի Գեղամայ ծովակն եւ տեսե(ա)լ զսուրբ ճգնաւորն եւ զվարդապետն զՄաշտոց եւ տեսե(ա)լ զմիաբանս ուրախ եղ[եւ յո]յժ եւ պարգ[եւեա]ց թագաւոր[ն] /// լոյսն /// զոր /// ե(ալ) էր Վ[ա]ս[ի]լ կայսրն [Ա]շոտոյ՝ Մաշդոց/// կայ ի [Հա]յոց Թ[առ]*[166]*:*
886	ՊԶԸ 888	ՅԼԵ 335	
887	ՊԶԹ 889	ՅԼԶ 336	
888	ՊՂ 890	ՅԼԷ 337	
889	ՊՂԱ 891	ՅԼԸ 338	**Աշոտ յետ զամենայն ինչ ըստ Աստուծոյ յարդարելոյ, փոխի մահուամբ ի կարգ սուրբ թագաւորացն:** **Սմբատ** (Հայոց) **ամս ԻԴ** (24)**:** *(Մ1897, Հայրապետ վրդ.) Սմբատ որդի Աշոտոյ, երկրորդ թագաւոր յետ հաւրն իւր, սա կոչեցաւ Տիեզերակալ, որ եւ մարտիւրոսացաւ*[167]
890	ՊՂԲ 892	ՅԼԹ 339	
891	ՊՂԳ 893	ՅԽ 340	
892	ՊՂԴ 894	ՅԽԱ 341	**Մաշդոց ճգնաւորական հանդիսիւ եւ իմաստասիրական արհեստիւ պայծառանայր:** *(Մ2965) Տէր Մաշտոց Ժ (10) ճգնաւորք պայծառանայր:*
893	ՊՂԵ 895	ՅԽԲ 342	
894	ՊՂԶ 896	ՅԽԳ 343	

895	ՊՂԷ 897	ՅԽԴ 344	
896	ՊՂԸ 898	ՅԽԵ 345	**Տէր Մաշդոց** (կթղ.) **ի Սեւան, ամ Ա** (1): *(Վ288) Շարժն տարաւ զԴվին քաղաք առհասարակ եւ պակաս մարդ ապրեցաւ:*
897	ՊՂԹ 899	ՅԽՁ 346	**Տէր Յովանէս** (կթղ.), **ամս ԻԸ** (28): **Աշակերտ նորա եւ ազգային ըստ երկակի ազգականութեան հոգենիւթ եւ աստուածապարգեւ առնն Աստուծոյ ասեմ՝ Մաշդոցի, ի Գառնոյ, ուստի եւ սուրբ հայրապետն Գէորգ:**
898	Ջ 900	ՅԽԷ 347	
899	ՋԱ 901	ՅԽԸ 348	
900	ՋԲ 902	ՅԽԹ 349	
901	ՋԳ 903	ՅՕ 350	**Արդ կամիմ աստանաւր յաղագս բռնակալութեան ազգին Իսմայէլի ցուցանել զվերջահասութեանցն նշանակս, զի ի թագաւորել Բագրատունեացն ազգի թեպետ եւ նոցա հրամանաւ, եւ նոքա ունէին յայնժամ զմեծ մասն աշխարհի, մանաւանդ թէ եւ արդ իսկ: Այլ սակայն ոչ միով ամիրապետաւ՝ որպէս ի նախնի Մահմետէն մինչեւ զՋափր եւ ցորդիս նորա, զի ի կամս անձանց, զոր ախորժէին, զայն կացուցանէին, եւ այս նշանակ է եղծման եւ վատթարելոյ իշխանութեանն: Յաւետ եւս յորժամ ի բազումս բաժանի մի տերութիւնն, որպէս նոցայն, զի Սաւփարն տիրէր յաշխարհին Խորասանու, եւ Ալաւիկն Ապութորապ՝ ի Բասրացւոց քաղաքին, եւ Յիսէ որդի Շեխայ՝ ի Պաղեստինէ, եւ որդին Ապլտփոյ՝ ի Դլմաց աշխարհին. եւ այլք ոմանք ի տեղիս տեղիս խռովութիւնս յարուցեալ, ջանային բռնութեամբ իշխել իրերաց. եւ վասն այսորիկ շփոթեալք խանգարին ի կանոնքս անկանել անուանք ամպարիշտ բռնաւորացն: Բայց յորոց եւ է, ոստիկանք չարք եւ անոպայք արձակեալք յաշխարհս մեր լինէին, որպէս գազանաբարոյն Բուխայ, եւ անաւրինագոյն Ափշինն՝ որդի յառաջագոյն եկելոյն չարագործին Ապուսիճայ, եւ կամ եւս չարագունին եւ ապականչին Յուսփայ եղբաւր՝ Ափշընայ եւ Նըսրայ, որ Սբքի կոչիւր: Եւ այլոց նոյնպիսեաց հակառակաց Քրիստոսի, որք**

			մինչեւ ցբառնալ ամիրմումնեացն՝ իշխել եւ ցտիրելն Սկիւթական ազգիս[168], որ արդ եւս է, ոչ պակասեցին աւար հարկանել զերկիր Հայաստանեայցս, բայց սակայն վասն զի ոչ յայտնի զանուանց նոցա դիրս գտաք ի պատմագրութիւնս ումեք, եւ ոչ մեք կարացաք գրել. թուի թե եւ ոչ ի դպրութեան կենաց, այլ յարծանս ամպաորշտաց: Իսկ յետ նոցա Սկիւթացւոցն առնուլ զբռնակալութիւնն, այսպիսի պատճառաւ: Ընթերցաք գրեալ վարդապետին մեծի, որ Սարկաւագ վերակոչի անուանեալ: Զի ասէ թէ Պարսից եւ Մարաց զմիմեամբք ելանելով տուր եւ առիկ փոխանորդութեամբ, մինչեւ յաւուրս մեր: Եւ Սկիւթական ազանց ոչ հելլենախոհիցն, այլ բարբարոսացն եղեալ մուտ յաշխարհն, որպէս ասեն այսպիսի պատճառաւ: Զյոլովս նուաճեալ ազինս, որ յայն ժամանակի թագաւորքն, որոց ոչ հասին առ մեզ անուանքն, վասն չառնելոյ ումեք փոյթ թողուլ ապագայիցն մատենագրութեամբ, զյիշատակս տիրագործութեան կամ զանուանս իշխանացն: Եւ կրեալ ապա ընդդիմութիւն ի Հնդկականացն, ոչ սակաւ ժամանակս հրաւիրեն յոքնառատ խոստմամբք պարգեւաց զխուժադուժսն ի մարտակցութիւն: Եւ մարտուցեալ նոքաւք ժամանակս ինչ, ընկրկէր զապստամբն, եւ զի կամէր միւս անգամ գումարել ի մարտ, անդրէն դառնալ արգելոյր զեկեալսն: Եւ ի լինել պատաղմանն, լքանէր զկենցաղս արքայն: Իսկ Մեդացւոցն եղեալ դաշնադիրք ընդ աւտարսն, մերժեն զՊարսիկն եւ գրաւեալ զիշխանութիւնն, որպէս ոմանք ասեն Սկիւթացւոցն, այլ որպէս վարկանիմ Բակտրացւոցն, բառնան զյոլովից ազանց տերութիւնս՝ մեծամեծ պատերազմաւք, անազարմաբար զամենեսեան սատակելով: Զայսոսիկ նշանակաւ գրոյ եցոյց մեզ Իմաստասէրս մինչեւ ցՄելքաշահն, զոր յիւրում տեղւոջն գրեցից սորին ձեռնտուութեամբ: Իսկ զհաւր նորա ժամանակ, զարիւնախանձին Ալփ-

			ալսանայ, եւ զնորին հաւր եւ զհաւուց, զոր Տուղլուբէք եւ Մահմուտ եւ Սարչուկ անուանք են նոցա: Տեսաք երբեմն գրեալ սորին ձեռաւք[169] ստոյգ գտակաւ, եթէ հանդիպիմք մատենին եւ մեք շարագրեսցուք. եթէ ոչ, լքցուք իբրեւ զարանց յուսացելոց ի զաւրութիւնս իւրեանց եւ զաւրացելոց ի նանրութիւն, որք խլեցան յարկացն Աստուծոյ եւ յերկրէն կենդանեաց. եւ մեք յուսալով յողորմութիւնն Աստուծոյ խոստովան եղիցուք անուան նորա, որ արար եւ համբերեսցուք, զի քաղցր է առաջի սրբոց իւրոց: Յայսմ հետէ ի կարգս կանոնացն եկեսցուք զհետինն, ուր թողաք, եւ վասն նախաճառեալ բանիցս հանցուք արտաքս զմին. եւ ասասցուք խրախուսութեամբ. «նոքա ի ձեռանէ քումմէ մերժեցան, մեք ժողովուրդք եւ խաշն արաւտի քո»[170]:
902	ՋԴ 904	ՅՕԱ 351	*(Լատ. հր.) Սմբատ զկուրապաղատն Ատրներսեհ կացուցանէ թագաւոր Վրաց[171]:*
903	ՋԵ 905	ՅՕԲ 352	
904	ՋԶ 906	ՅՕԳ 353	
905	ՋԷ 907	ՅՕԴ 354	
906	ՋԸ 908	ՅՕԵ 355	*(Լատ. հր.) Սմբատաւան շինեցաւ[172]:*
907	ՋԹ 909	ՅՕԶ 356	*(Լատ. հր.) Գլուխ զաւրացն Գագիկ իշխան, բաժանի ի Սմբատայ[173]:*
908	ՋԺ 910	ՅՕԷ 357	*(Լատ. հր.) Աբլղարիբ Հաւնունի զաւրաւարն Արծրունեաց, էառ զՍեբաստ[174]:*
909	ՋԺԱ 911	ՅՕԸ 358	*(Մ1899) Ապլղարիպն զՍեբաստիա էառ:*
910	ՋԺԲ 912	ՅՕԹ 359	
911	ՋԺԳ 913	ՅԿ 360	**Ալեքս** («ի Կոստանդնուպալիս») **ամս Գ** (3):
912	ՋԺԴ 914	ՅԿԱ 361	*(Մ1897, Հայրապետ վրդ.) Յաւուրս յայսոսիկ ոստիկան ոմն եկեալ ի Պարսից չար եւ գազանաբարոյ Յուսուփ անուն, որ էր եղբայր Ափշնայ եւ նորա որոպքին կոչէր, որդիք Ապուսիճայ ամպարշտի, եւ դաւող եւ հնարիմաց նենգութեամբ ի ձեռն ածեալ զթագաւորն Հայոց զՍմբատ, որ Տիեզերակալն կոչէր, զորդի Աշոտի եւ վասն խոստովանելոյ զՔրիստոս կախեալ եղեւ զփայտէ ի Դուին քաղաքի, նման գոլով Քրիստոսի՝ Տեառն*

			իւրում, եւ զէ (7) ամ անիշխան կացին: *(Մ7261, Մ10202) Ուսուֆ ամիրայն սպան զՍմբատ եւ թագաւորեցոյց զԳագիկ ի տանէն Արծրունեաց, որդի Դերենկան եւ քրւերորդի Սմբատայ Բագրատունւոյ ի վերայ Վասպուրականաշխարհին: Սա շինեաց զԱղթամարայ զՍուրբ Խաչի վանքն եւ զեկեղեցին գեղեցիկ յօրինուածօվ:*
913	ՁԺԵ 915	ՅԿԲ 362	**Յետ սպանմանն Սմբատայ թագաւորի տիեզերակալի, որդւոյ Աշոտոյ ի ձեռաց ամպարշտին Յուսփայ, որդւոյ Ապուսիճայ ոստիկանի եկելոց ի Հայս, ի Դւին քաղաքի կախեալ զփայտէ, անիշխան լիեալ երկիրս ամս է** (7)**:**
914	ՁԺԶ 916	ՅԿԳ 363	**Ռոմանոս** («ի Կոստանդնուպալիս») **ամս Իէ** (27)**:**
915	ՁԺէ 917	ՅԿԴ 364	
916	ՁԺԸ 918	ՅԿԵ 365	*(Մ5889) Գագիկ նոր թագաւոր, որ Արծրունեաց, շինեաց Աղթամար սուրբ յեկեղեցի Սուրբ Խաչին եւ իշխէր Գագիկ միայն Վասպուրականի*[175]*:*
917	ՁԺԹ 919	ՅԿՁ 366	
918	ՁԻ 920	ՅԿէ 367	
919	ՁԻԱ 921	ՅԿԸ 368	
920	ՁԻԲ 922	ՅԿԹ 369	**Թագաւորէ Հայոց Աշոտ որդի Սմբատայ՝ հրամանաւ կայսեր, ամս Ը** (8)**:**
921	ՁԻԳ 923	ՅՀ 370	
922	ՁԻԴ 924	ՅՀԱ 371	
923	ՁԻԵ 925	ՅՀԲ 372	
924	ՁԻԶ 926	ՅՀԳ 373	
925	ՁԻէ 927	ՅՀԴ 374	**Տէր Ստեփանոս** (կթղ.) **ամ Ա** (1)**:**
926	ՁԻԸ 928	ՅՀԵ 375	**Տէր Թէոդորոս** (կթղ.) **ամս ԺԱ** (11)**:** *(Մ7261, Մ10202) Ի յԱղթամար տէր Թէոդորոս թաղած է յԱստուածածնի ժամատունն՝ ի Սուրբ Խաչի շինե(ա)լն, սա կաթուղիկոս էր:* *(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ , Լեւոն ժէ(17) երրորդ ազգաւ Հռոմայեցի ամս Ա (1):*
927	ՁԻԹ 929	ՅՀԶ 376	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Ստեփաննոս Ը(8) երրորդ, ամս Ա (1):*
928	ՁԼ 930	ՅՀէ 377	**Աբաս որդի Սմբատայ** (Հայոց)**, եղբայր Աշոտոյ ամս ԻԴ** (24)**:**
929	ՁԼԱ 931	ՅՀԸ 378	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Յոհաննէս ԺԲ (12)*

			երրորդ, ամս Դ (4):
930	ՁԼԲ 932	ՅՀԹ 379	**Աբաս որդի Սմբատայ շինէ զաստուածաբնակ տաճարն զԿաթողիկէ ի Կարս՝ հրաշազան յաւրինուածովք:** **Յաւուրս սորա եղեւ խաղաղութիւն աշխարհիս Հայոց, զի եբարձ զխռովարար աւազակս:** **Առ սովաւ[176] հաստատեցան ուխտք սրբութեան Կամրջաձոր եւ Կապուտքար ի գաւառին Արշարունեաց, եւ հռչականունն[177] Հոռովմոսին կոչեցեալ վանք եւ Դպրէվան ի Շիրակ գաւառի:**
931	ՁԼԳ 933	ՅՁ 380	
932	ՁԼԴ 934	ՅՁԱ 381	
933	ՁԼԵ 935	ՅՁԲ 382	
934	ՁԼԶ 936	ՅՁԳ 383	*(Մ1898) Պեպ եկաց ի Հռոմ, Լեւոն ԺԸ (18) երրորդ, ամս Գ (3):*
935	ՁԼԷ 937	ՅՁԴ 384	*(Լատ. հր.) Յոյնք պահէն ի կողմն Բէրա: Իսկ յետ յաղթելոյ զԲէրա Աբաս ետ փորել զաչս նորայ[178]:*
936	ՁԼԸ 938	ՅՁԵ 385	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Ստեփաննոս Թ (9) երրորդ, ամս Գ (3):*
937	ՁԼԹ 939	ՅՁԶ 386	**Տէր Եղիսէ**[179] (կթղ.) **ամս է** (7)**:**
938	ՁԽ 940	ՅՁԷ 387	
939	ՁԽԱ 941	ՅՁԸ 388	*(Մ1899, Մ5596) Ի տէր Եղիսէէն[180] էառ զԱղթամար Գագիկ եւ ետ նմա զԻլի, շինեաց եւ կատարեաց անդ զեկեղեցին, եւ է թաղած ի Բերդաձոր[181]:* *(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Մարդին երրորդ ամս Ա (1):*
940	ՁԽԲ 942	ՅՁԹ 389	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Աղապիտոս երկրորդ, ամս Բ (2):*
941	ՁԽԳ 943	ՅՂ 390	
942	ՁԽԴ 944	ՅՂԱ 391	**Կոստանդին որդի Լեւոնի** («ի Կոստանդնուպաւլիս») **ամս ԺՁ** (16)**:** *(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Յոհաննէս ԺԳ (13) երրորդ, ամս է (7):*
943	ՁԽԵ 945	ՅՂԲ 392	
944	ՁԽԶ 946	ՅՂԳ 393	**Տէր Անանիայ Մոկացին** (կթղ.) **ամս ԻԲ** (22), *(Մ1899) Ե (5) ամ. յԱղթամար՝ եւ ԺԷ (17) ամ ի Վարագ եկաց[182]:* *Զդաստառակն Քրիստոսի տարան յՈւրհայոյ ի Կոստանդնուպոլիս:*

945	ՁԽԷ 947	ՅՂԴ 394	
946	ՁԽԸ 948	ՅՂԵ 395	
947	ՁԽԹ 949	ՅՂԶ 396	
948	ՁՕ 950	ՅՂԷ 397	*(Հ3, Մ1899) զՄարաշ առին:*
949	ՁՕԱ 951	ՅՂԸ 398	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Բէնէդիքտոս, Ե (5) երրորդ, կացեալ ամիսս Բ (2), եւ աւուրս Ե (5):* *(Հ3, Մ1899) Կարին առին:* *(Մ7261) Յայսոսիկ ժամանակի էր սուրբ հայրն Վարդուկ, որ զգազանս հնազանդեցոյց եւ զկոյր կորիւնս առիւծոց լուսարաեաց: Որ եւ էր բեմն բարձեալ, զՔրիստոս մրմնջ(եալ) ի կերպ աղքատի ունէր: Այլ եւ սուրբ հայրն Կարմիր, որ աղօթիւք զվիշապն սատակեց: Սոքա ի Կաղզվանայ ձորն բնակէին, սքանչելագործք եւ առաքինութեամբ զարդարեալք[183]:*
950	ՁՕԲ 952	ՅՂԹ 399	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Լեւոն ԺԹ (19) երրորդ, ամս Ա (1):* *(Մ3681) Դերէնեկ ի Վասպուրական[184]:* *(Հ3) ՁՀամտուն Իսարն խանգրեցին:*
951	ՁՕԳ 953	Ն 400	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Յոհաննէս ԺԴ (14) երրորդ ամս Ժ (10):*
952	ՁՕԴ 954	ՆԱ 401	**Աշոտ որդի Աբասայ** (Հայոց) **ամս ԻԷ** (27)**:** *(Մ1897, Հայրապետ վրդ.) Այս Աշոտ որդի Աբասայ, Ողորմած կոչեցաւ, վասն որոյ եւ եղեւ իսկ:* *(Մ5619) Ի սորա աւուրս շինեցան Հաղբատ եւ Սանահին ՆԺ (961) թուիս Հայոց:* *(Լատ. հր.) Մեռաւ Աբաս խաղաղութեամբ եւ բարւոք ծերութեամբ:* *(Հ3) Սով եկն:*
953	ՁՕԵ 955	ՆԲ 402	
954	ՁՕԶ 956	ՆԳ 403	*(Հ3) Մարախ եկն (Մ1899) յոյժ բազում:*
955	ՁՕԷ 957	ՆԴ 404	*(Լատ. հր.) Մոկաց եպիսկոպոսն Դաւիթ յԱպարնից վանից, փայլէր իմաստութեամբ եւ սրբութեամբ[185]:*
956	ՁՕԸ 958	ՆԵ 405	*(Հ3, Մ1899) ՁՍամուսատ առին:*
957	ՁՕԹ 959	ՆԶ 406	
958	ՁԿ 960	ՆԷ 407	**Ռոմանոս** («ի Կոստանդնուպաւլիս») **ամս Դ** (4)**:** *(Մ1899) ՁԱնարզաբայ առին եւ զՀալապ:*
959	ՁԿԱ 961	ՆԸ 408	*(Մ1899) Ռոմանոս թագաւորն կոտորեաց զՏաճ-*

			կաստան, զՀամտուն խանգրեցին: *ՅԱրակլիա՝ սով:* *(Լատ. հր.) Աշոտ զորանայ յիշխանութեամբ ի ձեռն բանակին ՂՌ (90 000) արանց, որոյ գլուխ էր զաւրաւարն Գոռ[186]: Աշոտ յաղթեալ զՀամտունն, զոր ընկճեալ էր յամիրապետէն, ստանայ Բ (2) թագս[187]:*
960	ՁԿԲ 962	ՆԹ 409	
961	ՁԿԳ 963	ՆԺ 410	*(Մ1899) Տանն Պարսից Մահմուտ առաջին:* *(Մ1898) Պապ եկաց Ի Հռոմ Բէնէդնքտոս վեցերորդ ամս Ձ (6):*
962	ՁԿԴ 964	ՆԺԱ 411	**Նիկիփոր** («ի Կոստանդնուպաւլիս») **ամս է** (7)**:** *(Մ7261, Մ10202) Գագիկ թագաւոր օծաւ Հայոց, որ է նոյն Աշոտ որդի Աբասայ[188]:* *(Մ1486) Ռոմանոս զՀռոմկլայն էառ[189]:* *(Մ1899) ՁՏլուք առին եւ մեռաւ Ռոմանոս. սա էառ զՏարսոն ի Տաճկէն:*
963	ՁԿԵ 965	ՆԺԲ 412	
964	ՁԿՁ 966	ՆԺԳ 413	
965	ՁԿԷ 967	ՆԺԴ 414	*(Մ1899) Մսիս առաւ մինչեւ ի դուռն Անտիոքայ:*
966	ՁԿԸ 968	ՆԺԵ 415	**Տէր Վահան** (կթղ.) **ամ Ա** (1)**:** *(Մ1897, Հայրապետ վրդ.) Շինեաց ի Սեւորդիսն զիրաշալի զուխտսն զՀաղբատ եւ զՍանահինն կինն Աշոտայ Ողորմածին՝ Խոսրովանուշ, վասն արեւշատութեան որդւոց իւրոց Գուրգենայ, Սմբատայ եւ Գագկայ, ՆԺԵ (966) թվին[190]:*
967	ՁԿԹ 969	ՆԺՁ 416	**Յետ մահուան տեառն Անանիայի, կացեալ յաթոռ սրբոյն Գրիգորի տէր Վահան ի Բաղաց: Սա դաշնադիր եղեւ ընդ Վիրս միաբան դաւանութեամբ, վասն որոյ ժողովեալ յամուրն Անի ի թագաւորութեանն Աշոտոյ որդւոյ Աբասայ, բազում եպիսկոպոսաց եւ խաչակրաւն վանականաց, որք ծանուցեալ հաւաստեաւ զհերձուած կորստական մտաց նորա. զի ետ բերել պատկերս վասն նորոգման աղանդոյն Քաղկեդոնի[191], եւ որոշեալ զնա հալածական արարին. եւ միաբանեալ նստուցանեն յաթոռ սրբոյ Լուսաւորչին զՍտեփանոս, հարազատ արեան սրբոյ առնն Աստուծոյ Մաշդոցի, որ ի Սեւան: Եւ էր սա հետեւեալ վա-**

			րուց նորա, որ եկաց յաթոռ հայրապետութեանն ամս Բ (2)**: Իսկ վասն զի Վահանիկն կենդանի էր ի Վասպուրական, հաւանեցոյց զոմանս ի պարզամտաց, սուտ զնմանէ կարծել զհամբաւ հերձուածոյն: Եւ վասն այնորիկ զմիջոց Հայաստան աշխարհիս լցին նզովիւք: Իսկ ի հրամանէ Աստուծոյ ի միում ամի մեռան երկոքին, եւ ամ մի անվերակացու լեալ: Ապա հրամանաւ թագաւորին Աշոտոյ, որ Ողորմածն կոչիւր, ժողով լեալ ընտրելոց արանց եւ եպիսկոպոսաց սրբոց կացուցանեն յաստիճան հայրապետական զերանելի այրն Աստուծոյ զտէր Խաչիկ՝ զհարազատ տեառն Անանիայի մեծի հայրապետին, որ բանիւ վարդապետութեան սանձեաց զբերանս հերձուածողաց սրբասէր եւ քրիստոսասէր գոլով**[192]**:** **Տէր Ստեփանոս** (կթղ.) **ամս Բ** (2)**:** *(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Պանոս երկրորդ, ամս Դ (4):* *Թագաւորեաց Յունաց Նկիկֆաւռ ամս է (7), սա էառ զՏարսոն ի Տաճկէն:* *(Մ1899) Ի ՆԺԶ (967) թվին շինեցաւ Հաղբաղ, եւ Սանահինն՝ Ժ (10) ամաւ առաջ քան զՀաղբատ շինեցաւ ի Խոսրովանուշ թագուհոյն՝ ի կնոջէն Աշոտոյ Շահնշահի[193]:* *Արեգակն խաւարեցաւ եւ սրբոյն Պետրոսի մատն բերաւ ի Հայս:*
968	ՁՀ 970	ՆԺԷ 417	*(Վ511) Յայսմ ամի շինեցաւ Հաղբատ եւ Սանահինն, Ժ (10) ամաւ յառաջ շինեցաւ Հաղբատ ի Խոսրովանոյշ թագուհոյ, ի կնոջէ Աշոտոյ շահանշահի[194]:*
969	ՁՀԱ 971	ՆԺԸ 418	**Կուռժան** («ի Կոստանդնուպաւլիս») **ամս Զ** (6)**:** **Անէութիւն հայրապետական աթոռոյն, ամ Ա** (1)**:**
970	ՁՀԲ 972	ՆԺԹ 419	**Տէր Խաչիկ** (կթղ.) **ամս ԺԹ** (19)**:** *(Մ1899) Յովհաննէս Չըմշկիկն ի Չըմշկածակուցն՝ եպան զՆիկիֆոռ կայսրն՝ խորհրդով թագուհւոյն նորա զոր եւ էառ՝ եւ նստաւ թագաւոր յԸստամբոլ:* *Այս Յովհաննէս Չըմշկիկ յորժամ եպան զՆիկիֆոռ՝ եւ եղեւ ինքն թագաւոր. ելեալ յԸստամբոլայ*

			ի դուրս բազմօք զօրօք՝ եւ ի մեծէն Կեսարիոյ մինչեւ ի դուռն Բաղդատայ եւ մինչ յԵրուսաղէմ ծովեզերօքն էառ՝ եւ հարկատու արար ԳԵ (300) քաղաք: Կոտորեաց եւ զզօրսն խալիֆային եւ էառ ի նոցանէ ԽՈ (40 000) ձի եւ ջորի. եւ յղեաց ԲՈ (2 000) ծառայ եւ ԺՈ (10 000) ձի Հայոց արքային Աշոտոյ՝ զի Աշոտ տուեալ էր յոգնականութիւն նմա ՁՈ (80 000) ձիաւորս եւ այլ բազում հետեւակս: Գրեաց գիր ողջունի առ Աշոտ՝ թէ ի յաղթութեան մերում շահեցաք զազատութիւնն Երուսաղէմի, այլեւ զհողաթափն Քրիստոսի եւ զպատկերն որ ի Բիւրիտոն, եւ զհերսն Յովհաննու. եւ զմարմին սրբոյն Յակոբայ Մծբնայ՝ տանիմք ի պահպանութիւն քաղաքին մեր՝ եւ դուք ողջ լերուք: *Եւ գիտելի է՝ զի Չիմշկիկ Յոհաննէս հայ էր ազգաւ եւ ի սպանանելն զՆիկիփոռ՝ փախոյց խնամօք զորդիսն Ռոմանոսի՝ երկուցեալ ի թագուհւոյն. զի մի նենգիւ սպանցէ զանմեղ տղայսն. եւ յետոյ բերեալ թագաւորեցոյց զնոսա ի նմին քաղաքի: Եւ յետ Ե (5) ամաց զըղջացաւ Չիմշկիկ ընդ սպանումն Նիկիֆոռայ, եւ զորդիսն Ռոմանոսի բերեալ, զՎասիլ եւ զԿոստանդին, եւ եդ զթագն ի գլուխ Վասլին. եւ ինքն երկիր եպագ նմա եւ գնացեալ ի վանս կրօնաւորեցաւ՝ եւ բարւոք վախճանեցաւ:*
971	ՁՀԳ 973	ՆԻ 420	*(Լատ. հր.) Տեր Խաչիկ, որ լեալ երբեմն եպիսկոպոս Արշարունեաց, դնէ զաթոռ իւր յԱրգինա, մերձ ի յԱնի, եւ անդ շինէ զմեծ Կաթողիկէն[195]: (Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Պաւնաւֆանս է (7) երրորդ ամս Ե (5):*
972	ՁՀԴ 974	ՆԻԱ 421	*(Մ3681) Համազասպ ի Վասպուրական[196]:* *(Մ1899) Գիսաւոր աստղ երեւեցաւ:*
973	ՁՀԵ 975	ՆԻԲ 422	
974	ՁՀԶ 976	ՆԻԳ 423	
975	ՁՀԷ 977	ՆԻԴ 424	**Վասիլն** («ի Կոստանդնուպալիս») **ամս ԾԲ** (52)**:** *(Մ1899) Չիմշկիկ զղջացեալ եթող զթագաւորութիւն եւ եղեւ կրօնաւոր՝ եւ թագաւորեցոյց զՎասիլ որդի Ռամանոսին: Սա բարի անուն*

			ստացեալ յաշխարհի, վասն որոյ զբազում հակառակորդս իւր արար հնազանդ: *(Մ8481) Ի սորա ժամանակս մեծ իմաստասէրն եւ բազմամասնեայ առաքինին Գրիգոր Նարեկացին, որ Հսկողն կոչեցաւ: Զարմանալին բնաւից եւ անյաղթ հռետորն, վարդապետ Հայոց Գրիգոր Նարեկացին փայլէր յաշխարհի:* *(Լատ. հր.) Մեռաւ Աբուսահլ Արծրունի թագաւորն Վասպուրականի, եւ յաջորդեն որդիքն՝ Աշոտ, Գուրգեն եւ Սենեքերիմ:*
976	ՁՀԸ 978	ՆԻԵ 425	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Բէնէտիքտոս է (7) երրորդ, ամս Թ (9):* *(Մ3681, Նաթանայել Հավուցթառեցի) եւ ոմանք ասէն թե Վասիլ կայսրն Աշոտ թագաւորին պարգեւեց զԱմենափրկիչ խաչն եւ մասն Տէրունական խաչէն, որ Աստուածընկալ ասեն եւ մնան երկուքն ի Հա[ւու]ց թառ մեծափայծառ փառաւք[197]:*
977	ՁՀԹ 979	ՆԻՁ 426	*(Վ1253) Նարեկացի Գրիգոր առնէ զմեկնութիւն երգ երգոցին:*
978	ՁՁ 980	ՆԻԷ 427	*(Մ1898) Կայսր եկաց Հռոմայեցոց Հեռի առաջին ամս ԺԲ (12) եւ ամիս Զ (6):*
979	ՁՁԱ 981	ՆԻԸ 428	**Սմբատ շահանշահ որդի Աշոտոյ ամս ԺԳ** (13)**:** **Իսկ եւ իսկ ընդ թագաւորելն Սմբատայ լիր արկեալ պարսպի քաղաքին Անոյ, բարձրաբերձ բրգամբք, եւ լայնատարած տեղեաւք, յԱխուրեան գետոյն մինչեւ ցԾաղկոցաձորն կոչեցեալ վայր: Հիմնարկեաց զԿաթուղիկէն պայծառափառ ի նմին քաղաքի, զոր ոչ կարաց աւարտել վասն կանխաժաման մահու կենաց իւրոց:** *(Մ1897, Հայրապետ վրդ.) Սմբատ Շահնշահ որդի Ողորմածին Աշոտոյ, սա ի սկզբան թագաւորութեան իւրոյ լիր արկէալ պարսպի քաղաքին Անւոյ մեծատարած տեղաւք ընդարձակագոյն քան զհին շինուածն, բարձրաբերձ բրգամբք հաստակառոյց վիմաւք ի կողմանէ ի կողն, յարեւելից հիւսիսոյ մինչեւ յարեւմուտս հիւսիսոյ տողս արկեալ շինուածոյն յԱխուրեան գետոյ մինչեւ ցԾաղկոցաձորն կոչեցեալ վայր:* *Դարձեալ նոյն թագաւոր Սմբատ Շահնշահ յետ*

			շինուածոյ քաղաքին հիմնարկէ զԿաթուղիկէն պայծառափայլ ի նմին քաղաքի, չափ աշտիճանացն եւ երկուս կարգս ի տաճարէն, յորում կայ ի քառակողմն կուսէ անկեանցն դրոշմ գծոյ անուան նորա[198], եւ ոչ կարաց աւարտել վասն կանխաժամանմ մահու կենաց իւրոց:
980	ՋՂԲ 982	ՆԻԹ 429	
981	ՋՂԳ 983	ՆԼ 430	
982	ՋՂԴ 984	ՆԼԱ 431	*(Մ1899) Յաւուրս յայսոսիկ փայլէր իբրեւ զարեգակն իմաստութեամբ եւ առաքինութեամբ սուրբ այրն Աստուծոյ Գրիգոր Նարեկացին, որ ի Հայք, ի գաւառն Վասպուրական, որդի տեառն Խոսրովու՝ Անձաւացեաց եպիսկոպոսին:* *(Լատ. հր.) ՁՄեծ իշխանն Հայոց Գրիգոր Պահլաւունի ի տոհմեն Սրբոյն Գրիգորի, մեռանի ի Նիգ գաւառի, յոյժ ծերացեալ՝ ճե (105) ամեայ[199]:*
983	ՋՂԵ 985	ՆԼԲ 432	
984	ՋՂԶ 986	ՆԼԳ 433	
985	ՋՂԷ 987	ՆԼԴ 434	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Յոհաննէս ժԵ (15) երրորդ ամս Ա (1):* *(Մ10200) Վարդան մռտեց ի Վահան եւ ըմբռնեալ Վասիլն սպան զնա, եւ Սոփի ի շարժէն աւերեցաւ[200]:*
986	ՋՂԸ 988	ՆԼԵ 435	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Յոհաննէս ԺԶ (16) երրորդ ամս Ժ (10):*
987	ՋՂԹ 989	ՆԼԶ 436	**Սկիզբն շինուածոյ մեծանուն եւ վայելչաշէն զարմանակերտ եւ հոյակապ ուխտին Մարմաշինոյ ի քրիստոսասէր իշխանաց իշխանէն Վահրամայ** *(Մ1897, Հայրապետ վրդ.), որ էր թոռն Ապուղամրի, (Մ3072, Մ1483, Վ288), սկսեալ ի ՆԼԵ (986) ամէն եւ աւարտեալ ի ՆԽԳ (994), որ լինի Ը (8) ամ[201]:*
988	ՋՂ 990	ՆԼԷ 437	
989	ՋՂԱ 991	ՆԼԸ 438	**Զկնի ԺԹ** (19) **ամին տեառն Խաչկա անառաջնորդ եկաց երկիրս Հայոց ամս Բ** (2), **զոր ի նոյն գրեսցուք:**
990	ՋՂԲ 992	ՆԼԹ 439	
991	ՋՂԳ 993	ՆԽ 440	**Տէր Սարգիս** (կթղ.) **ամս ԻԴ** (24)**:**
992	ՋՂԴ 994	ՆԽԱ 441	**Գագիկ որդի Աշոտոյ, եղբայր Սմբատա շահան-**

			շահի ամս ԻԹ (29)**:**
993	ՁՂԵ 995	ՆԽԲ 442	**Սուրբ Գրիգորն գերահռչակ, զոր նախկի սկիզբն առնու ի շինել թագաւորն Գագիկ ի յԱնի ի վերա Ծաղկոցաձորոյն վայրիւք, գաղափար առեալ զլուսազարդ զիրաշալի զՍուրբ Գրիգորն զշի-նեալն ի Ներսիսէ հայրապետէ, եւ կատարեաց զաստուածակերտ փարախն բանաւոր հաւտին Քրիստոսի ի հազար ամի մարմնանալոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի[202]:** *(Մ1899) Գնաց Վասիլ կայսրն ի Բուլղարս՝ եւ փախստական եղեւ: Եւ յետ Զ (6) ամի ժողովեաց զօրս բազումս եւ դարձեալ գնաց եւ կալաւ զարքայն Բուլղարաց զԿուտն՝ որ է Ալօսիան, եւ եսպան մահացու դեղով եւ զկին նորա եւ զորդիսն գերի էառ:*
994	ՁՂԶ 996	ՆԽԳ 443	
995	ՁՂԷ 997	ՆԽԴ 444	
996	ՁՂԸ 998	ՆԽԵ 445	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Գրիգոր հինգերորդ ազգաւ Սաքսոն ամս Բ (2):*
997	ՁՂԹ 999	ՆԽԶ 446	
998	Ռ 1000	ՆԽԷ 447	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Յոհաննէս ԺԷ (17) երրորդ, ամս Ա (1):* *(Մ1899, Մ10200) Հոռոմք զՄամլայն հարին յԱպահունիս: Եւ ի սոյն ամի Դաւիթ Կուրապաղատն մեռաւ:* *(Լատ. հր.) Ստեփաննոս Ասողիկ՝ վարդապետ եւ պատմիչ փայլէր իմաստութեամբ[203]:*
999	ՌԱ 1001	ՆԽԸ 448	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Սեղբեստրոս երրորդ ամս Դ (4):* *(Մ6354) (անթվական) Ի սկսանել թագաւորութեան թուրքաց Ծ (50) այր հայ ազգաւ, նեղեալք ի նոցունց, ելին յանապատ սպառազինեալք, եկին ի Մարաշ, գտին այր մի քաջ, Փիլարտոս, հայ ազգաւ եւ նովաւ առին զԿիլիկիայ[204]:*
1000	ՌԲ 1002	ՆԽԹ 449	*(Մ1899) Ելին ազգն թուրքաց եւ աւերեցին զգաւառն Վասպուրականի. եւ յոյժ նեղեալ լինէր թագաւորն նոցա Սենեքարիմ: Վասն որոյ յետ ԻԲ (22) ամի նեղութեան՝ ետ զաշխարհն իւր ի Վասիլ թագաւորն ի ՆՀ (1021) թվին: Եւ էառ փոխան*

			զՍեբաստիա իւր գաւառօքն: Բայց զվանորայսն ոչ ետ Սենեքարիմ ի Վասիլ. զի կայցեն ազատս, եւ աղօթս արասցեն Սենեքարիմայ եւ որդւոց նորա. եւ էին ճԺԵ (115) վանք եւ ոմանք ԹԵ (900) վանք ասեն. իսկ երկիրն զոր էառ Վասիլն՝ էին ՀԲ (72) բերդս եւ ԴՌ (4 000) գիւղս եւ Ը (8) քաղաք:
1001	ՌԳ 1003	ՆԾ 450	
1002	ՌԴ 1004	ՆԾԱ 451	*(Մ3681, Նաթանայել Հավուցթառեցի) Գէորք իշխանաց իշխանն[205], որդի Հասանայ[206], եղբար Ապիրատին[207] վերըստին նորոգեց զնախադրական հռչակաւոր սուրբ ուխտն զՀաւուց թառ եւ շինեց զփառաւոր զհրաշալի Կաթողիկէն Թ (9) խորանաւ[208]: Եւ արար գանձագին զմերձակա գեղն զԿոխթ[209] ի Գագիկ շահանշահէ եւ Յովանիսէ եւ ետ Հաւուց թառոյ Սուրբ Կաթողիկէին հայրենիք եւ ետ ի հայրենե(ա)ց իր զԳետոց վանսն եւ զՀովայսն վանքագեղ[210] եւ ժողովեց ԳԵ (300) կրաւնաւոր:* *(Մ7261, Մ10202) Աստանօր առնու կատարումն Ստեփանոսի Տարոնացւոյ պատմագրութիւն: Զկնի նորա սկսանի Արիստակէս Լաստիվերցի զաղէտս, որ ի թուրքաց եւ ի թոնդրակացւոց, մինչեւ ի ՇԼ (1081)[211]:* *(Վ288) Աստանօր տիեզերալոյս եւ մեծ վարդապետն Հայոց Գրիգորիոս Նարեկացին, որդի տեառն Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի, յայսմ վայրի շինեաց զիւր գիրքն[212]:*
1003	ՌԵ 1005	ՆԾԲ 452	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Յոհաննէս ԺԸ (18) երրորդ ամս Ա (1):*
1004	ՌԶ 1006	ՆԾԳ 453	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Յոհաննէս ԺԹ (19) երրորդ ամս Ե (5):*
1005	ՌԷ 1007	ՆԾԴ 454	*(Մ10202, Մ1899) Եկ աստղ մի ի տեսիլ հրոյ՝ որոյ զհետ եղեւ շարժ սաստիկ. եւ ցաւն, որ կոչի խուլի[213], եւ պակասեցան մարդ եւ անասունք յոյժ:*
1006	ՌԸ 1008	ՆԾԵ 455	
1007	ՌԹ 1009	ՆԾԶ 456	*(Մ1899) Մոլորեցին Յոյնք զՁատիկն եւ ոչ վառեցաւ լոյսն յԵրուսաղէմ յայնմ աւուր վասն որոյ կոտորեցին անօրէնքն ի քրիստոնէիցն ԺՌ (10 000)*

			ոգիս:
1008	ՌԺ 1010	ՆՕԷ 457	**Կաթողիկէն սխրատեսիլ զոր հիմնադրեաց Սմբատ յիւրում քաղաքին յԱնի, աստանաւր գլխաւորեցաւ հրամանաւ եւ արդեամբք Կատրամիդեա[214] թագուհւոյ, որ էր կին Գագկայ շահանշահի, եղբաւր Սմբատայ:**
1009	ՌԺԱ 1011	ՆՕԸ 458	*(Մ1898) Պապ եկաց Ի Հռոմ, Սերճիոս չորրորդ ամս Գ (3):*
1010	ՌԺԲ 1012	ՆՕԹ 459	**Սմբատ Մագիստրոս շինեաց զիրեշտակաբնակ եւ զփափագատենչ վանքն, որ Բագնայր յորջորջի, ժողովե տղարանց աստուածայնոց[215]:**
1011	ՌԺԳ 1013	ՆԿ 460	
1012	ՌԺԴ 1014	ՆԿԱ 461	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Բէնեդիքտոս Ը (8) երրորդ ամս Ի (20):*
1013	ՌԺԵ 1015	ՆԿԲ 462	*(Մ3681, Նաթանայել Հավուցթառեցի) եւ աստ ասեն եկե(ա)լ ի Հայս Վա[սի]լ կայսրն [եւ ուն]ել ընդ ինքե[ա]ն զխաչն փրկչական եւ զպատկե[ռն] տիրական զսուրբ Ամենափրկիչն եւ պարգեւ[եաց] արքային Հայոց Գա[գկայ] շահանշահի[216] եւ թագ[աւորն] պարգեւե(ա)ց Գեորգայ իշխ[ան]ին/// զարեգակն/// մ[եծ մ]ենարանն եւ խաչն մեծահրաշ եւ բազում ակամբ յաւրինե(ա)լ եւ [ո]ր ի գլուխս դրոշային [որ] կայս/// յերեւան գեղա[ք]աղաքն[217], որ ասեն երկ[ու]/// եւ ի սուրբ նշան եւ է անունն ///այ Տէրունական սուրբ նշանն:*
1014	ՌԺԶ 1016	ՆԿԳ 463	*(Մ1899) Վասիլ կայսրն իսկապէս էառ զԲուլղարս:*
1015	ՌԺԷ 1017	ՆԿԴ 464	**Պետրոս** (կթղ.) **ամս L** (30)[218]**:**
1016	ՌԺԸ 1018	ՆԿԵ 465	*(Մ1898) Կայսր եկաց Հռոմայեցոց Հեռի երկրորդ ամս Խ (40):* *(Մ1899) Աստղ երեւեցաւ իբրեւ զսիւն:*
1017	ՌԺԹ 1019	ՆԿԶ 466	*(Մ1486, Մ6354, Մ10200) Մեռաւ Գագիկ շահանշահ[219]:* *(Մ1899) Վասիլ թագաւորն գնաց ի Վիրս եւ աւերեաց զՎրացտուն, եւ արար անմարդ ԻԴ (24) գաւառս՝ սրով, հրով եւ սովով: Եւ էին զօրավարք Վրաց ըՌատն եւ Զուատն եւ խրեալ ըՌատն ի մօր, ի դաշտին Շիրակայ:* *Իսկ Վասիլ դարձաւ եւ ձմերեաց ի Հռոմս եւ*

			դարձեալ ել ի Վիրս: *ԸՌատն եւ Զըւատն եղբարք հարազատք Լիպարտին, բազում քաջութիւնս ցուցին ընդդէմ կայսերն Յունաց Վասլի, բայց յետոյ խրեցաւ Ռատն ի մօրատն՝ եւ սպանաւ եւ կալեալ զԶըւատն տանէին: Իսկ թագաւորն Վրաց ետ զորդին իւր եւ թափեաց զԶըւատն:*
1018	ՌԻ 1020	ՆԿԷ 467	*(Մ8481) Շարժ եկն սաստիկ:*
1019	ՌԻԱ 1021	ՆԿԸ 468	
1020	ՌԻԲ 1022	ՆԿԹ 469	
1021	ՌԻԳ 1023	ՆՀ 470	**Յովանէս, որ եւ Սմբատ, որդի Գագկայ Շահնշահի** (Հայոց) **ամս Ի** (20)**:** *(Մ1899) եւ Աշոտ եղբայր նորա, Դրուց աշխարհիս թագաւորեաց, եւ գնաց ի Բաղդատ առ խալիֆայն եւ նա ետ Աշոտայ ԼՌ (30 000) դեկան, զոր բերեալ արար պահարան Սուրբ Նշանին Վարագայ:* *Ի թուին Հայոց ՆՀ (1021), ետ Սենեքարիմ զիւր թէմն ի Վասիլն՝ եւ էառ զՍեւաստ իւր թիմօքն:* *(Մ2965) եւ եկն անդ Ե (5) որդովքն, որք էին Դաւիթ, Ատոմ, Կոստանդին, Վէստ եւ Ապուսահլ[220]:* *Վաղճանի տէր Սարգիսն, որ եկաց կաթողիկոս ամ Լ (30): Զկնի Բ (2) ամի կաթողիկոսութեան տէր Պետրոսի վաղճանի[221]:* *(Մ8481, Ե1221) Թուրքն էհար զԱպիրատն[222]:* *(Լատ. հր.) Յովհաննէս Կոզեռն՝ վարդապետ եւ ճարտասան:*
1022	ՌԻԴ 1024	ՆՀԱ 471	
1023	ՌԻԵ 1025	ՆՀԲ 472	
1024	ՌԻԶ 1026	ՆՀԳ 473	**Մեծապատիւ Վեստն Սարգիս[223], զկնի բազում շինուածոց, բերդից եւ եկեղեցեաց զիրաշալի վանքն զԽցկունս շինեաց, պայծառ պսակաւ զարդարեալ սուրբ քաւարանաւն, որ ճանաչի անուն Սուրբ Սարգիս[224]:** **Նաեւ՝ զԾառաքար վանքն բերդ արարեալ, պարսպեալ հաստահեղոյս կրով, բրգունս ծուլածոյս, յորում եւ ընդ սրբոյ խորանարդ տաճարին կանգնելոյ յանուն սուրբ Գէորգա, շինէ Բ** (2) **այլ յարակիցս գմբեթաւորս, զՍուրբ Յովաննէս եւ**

			Սուրբ Սեքենոս[225]**:** *(Մ1899) Զրօրհնէքն ի Տրապիզոն. տէր Պետրոս արգել զգետն ժամ մի հրաշիւք ամենազօր սուրբ նշանին՝ առաջի Վասլի թագաւորին*[226]*:*
1025	ՌԻԷ 1027	ՆՀԴ 474	*(Մ1899) Յայսմ ամի Ֆուկասն եւ Օռվիզն եւ Նիկիֆոռան մռտեցին ի Վասլէն եւ Դաւիթ՝ որդին Սենեքարիմայ եսպան զՕռվիզն*[227]*:*
1026	ՌԻԸ 1028	ՆՀԵ 475	**Կոստանդի** («ի Կոստանդնուպալիս») **ամս Գ** (3)**:**
1027	ՌԻԹ 1029	ՆՀԶ 476	
1028	ՌԼ 1030	ՆՀԷ 477	*(Մ1899) Արծակումն սատանայի որ կապեցաւ ի մկրտութիւնն Քրիստոսի, զի պատառեցաւ երկինքն յերեկոյին ժամու եւ մեծ նշան եղեւ յերկրի, զի լոյս սաստիկ տարածեցաւ եւ դողաց ամենայն երկիր: եւ իբրեւ եկին առ վարդապետն Կոզեռ՝ ասաց՝ ի յայսմ ամի արծակեցաւ սատանայ ի Ռ (1000) ամ կապանացն*[228]*:* *Ի սոյն ժամանակի առաւ Բերկրի ի Տաճկաց. եւ հեղաւ բազում արիւն քրիստոնէից եւ եղեւ մեծ աւեր քաղաքին:*
1029	ՌԼԱ 1031	ՆՀԸ 478	**Ռոմանոս** («ի Կոստանդնուպալիս») **ամս Ե** (5)**:** *(Մ2965, Հեթում Կօռիկոսցի) Եղեւ պատերազմ մօտ ի Սուրբ Պետրոս, զոր Զառլն արարի*[229]*:*
1030	ՌԼԲ 1032	ՆՀԹ 479	
1031	ՌԼԳ 1033	ՆՁ 480	
1032	ՌԼԴ 1034	ՆՁԱ 481	*(Լատ. հր.) Ռոմանոս ետու զդուստրն իւր կնութեան ի թագաւորն Հայոց Յովհաննէս*[230]*:*
1033	ՌԼԵ 1035	ՆՁԲ 482	
1034	ՌԼԶ 1036	ՆՁԳ 483	**Միխայէլ** («ի Կոստանդնուպալիս») **ամս Զ** (6)**:** *(Մ1486, Մ5619) Սա շինեաց զՍուրբ Յարութիւն՝ յերուսաղէմ, զաւերեալն, զի Միխաէլս այս, ցաւոտ ասեն՝ ի դիւէ եւ շինեաց զսուրբ անարծաթն ի թագաւորութեան իւրում:*
1035	ՌԼԷ 1037	ՆՁԴ 484	*(Մ1899) Յաւուրս Միքայէլի զՈւրհայ էառ Թուրքն: Խաւարեցաւ արեգակն սխրալի եւ եղեւ սով սաստիկ եւ սգացաւ մեծ վարդապետն Կոզեռն Յովհաննէս եւ ասաց զեղծումն կարգաւորաց, եւ զաւեր աշխարհիս յանարժան քահանայից:*
1036	ՌԼԸ 1038	ՆՁԵ 485	*(Մ3681, Նաթանայել Հավուցթառեցի) Յայսմ ամի խաւարեցաւ արեգակն*[231] *ահաւոր եւ սոսկալի*

			տեսլամբ, որպէս ի խաչելութեան Քրիստոսի եւ գոլե(ա)ց առհասարակ ամենայն երկիր եւ մեռա[լ] արքայն Հայոց Յովանէս, եղբայր [Ա]շոտոյ, որդի Գագկայ, որդոյ Աշոտայ, որդոյ Սնպատայ, որդոյ Երկաթա[232]/// *(Լատ. հր.) Իշխանն Գրիգոր Մագիստրոս Պահլաւունի փայլէր իմաստութեամբ:*
1037	ՌԼԹ 1039	ՆՁԶ 486	*(Մ1899, Վ869) Ի ՆՁԶ (1037) թվին Հայոց, զայրացեալ տէր Պետրոս կաթողիկոսն յԱնի ի Յովանէս թագաւորէն եւ յիշխանացն եւ գնացեալ ի Վասպուրական գաւառ եւ եկաց Դ (4) ամ ի Ձորավանս Սալնապատի, զոր շինեալ էր տէր Ներսէսի: Եւ ապա խաբանօք յուղարկեալ տարան յԱնի եւ եդին յարգելանի, եւ նստուցին փոխանակ նորա զԴէոսկորոս հայրն Սանահնի՝ կաթուղիկոս՝ ընդ որ յոյժ բարկացեալ խռովեցան ամենայն եկեղեցականք եւ ոչ լինէր խաղաղութիւն մինչեւ եկեալ Աղուանից կաթուղիկոսն[233] համոզեաց զնոսա ի խաղաղութիւն մեծաւ աղաչանօք հանեալ զտէր Պետրոս ի բանդէն եւ յուղարկեալ զԴէոսկորոս ի վանս իւր:* *Եւ դարձեալ յետ ժամանակի սրտառեալ տէր Պետրոս գնաց առ Սենեքարիմ Վասպուրականի ի Սեբաստիա՝ եւ անդ հանգեաւ եւ եդաւ ի վանս Սուրբ Նշանին:*
1038	ՌԽ 1040	ՆՁԷ 487	*(Մ3613) Շինուած Հոռոմոսի վանացն վերի Սուրբ Յովհանէսի, ի թագաւորէն Յովհաննիսէ կատարեցաւ[234]:*
1039	ՌԽԱ 1041	ՆՁԸ 488	(Մ8481) Մեռաւ Աշոտ թագաւոր:
1040	ՌԽԲ 1042	ՆՁԹ 489	**Կուռոզի**[235] («ի Կոստանդնուպալիս») **ամս Բ** (2)**:** **Գագիկ որդի Աշոտոյ** (Հայոց) **ամս Բ** (2)**:** *(Լատ. հր.) Գագիկ՝ զորդի Աշոտոյ, յաջորդէ զՅովհաննէս, որոյ մեռեալ ոչ եթող զաւակ:*
1041	ՌԽԳ 1043	ՆՂ 490	*(Մ1899, Վ869) Ի ՆՂ (1041) թվին մեռան Յովհաննէս եւ Աշոտ թագաւորքն Հայոց:*
1042	ՌԽԴ 1044	ՆՂԱ 491	**Մոնոմախ** («ի Կոստանդնուպալիս») **ամս ԺԲ** (12)**:** **Ապա զկնի Գագկայ ոչ ոք ի սմին ազգէ, զի զքսան եւ զմի ամ Յոյնք տիրեցին: Եւ զկնի այնր եկն**

			Ալփասլանն եւ առ զմայրաքաղաքս Հայոց զԱնի եւ յոյժ կործանեաց զեկեղեցի Աստուծոյ: *(Մ1899) Մօնոմախն մենամարտիկ թարգմանի:*
1043	ՌԽԵ 1045	ՆՂԲ 492	
1044	ՌԽԶ 1046	ՆՂԳ 493	*(Մ1486) Եզընկայն ի շարժէն ընկղմեցաւ:*
1045	ՌԽԷ 1047	ՆՂԴ 194	Արդ յետ մահուանն Սմբատայ որ եւ Յովանէսն, միաբանեալ ազատագունդ զաւրացն եւ իշխանացն, յաւէտ եւս պատրիարգին տեառն Պետրոսի. ժողովեցան առ դրունս մեծափառ Կաթուղիկէին՝ ի մայրաքաղաքս յԱնի, եւ հաստատեն զԳագիկ զեղբաւրորդին Յովաննիսի, թագաւոր ի վերայ ինքեանց ի տեղի հաւրեղբաւր իւրոյ, որ ո՛չ պատերազմական արութեանց ջանայր, որով վարի իշխանութիւնն[236], մանաւանդ զի առ այնու ժամանակաւն աւելի իմն զդէպ էր քաջանալ, զի շփոթումն Իսմայէլականացն եւ ի վերայ յառնել Սկիւթացւոցն, որպէս ասացաք յառաջագոյն, ընդ այսու ամանակաւք կարծի գոլ եւ Յունացն՝ չէր անվրդով, զի ընդ կնոջ ծեռամբ նուաճէր եւ նոցայն թագաւորութիւն[237]: Բայց սա, զի ի մանկութենէ ընդ դպրութեան գրոց վարժեալ էր, ի նոսին զբաւսնոյր եւ ի տերութեանն աւուրս, զոր իմացեալ ազգին Յունաց, առ իւրեանս կոչեցին խաբկանաւք. յաւէտ եւս ի սադրելոյ իշխանացն, որք երդմամբ հաստատեցին պահել զիշխանութիւն նորա աննենգ ի վերայ իւրեանց, եւ ոչ կացին յուխտին Տեառն, եւ կատարած գործոյն կորուստ անգիւտ անձանց եւ այլոց բազմաց եղեւ, զի Յոյնք զգնացեալն ի կղզւոջ արգելին եւ ի տեղի նորա կատապանս արձակեալ ամի ամի: Իսկ բնակչաց քաղաքիս եւ իշխանաց զմիմեամբք ելանելով անճոռին յոխորտանաւք, եւ ի միմեանս յարձակեալ խորամանկութեամբ եւ ստաբանութեամբ խորհէին զխորհուրդն նենգութեան՝ մատնել զմիմեանս կայսեր, բաղբաղելով զձեռն տալն առ Հագարացիսն, որք եւ իշխանացն, անգամ զհայրապետն, եւ նորա՝ զնոսա, սորին գաղափարաւ զրաբանեալ, զորս յոչ կամս առեալ տանէին ի բնակութենէ իւրեանց:

			Իսկ մնացեալքն, իբրեւ զանտերունչս անկուշեալ կիցս ընկենուին. եւ այսպիսի սարասիւ երկարեալ ամս ԻԱ (21)[238]: Յետ որոյ՝ հուր հարաւային բքոյն շարժեալ եւ եբեր զգազանն մարդախանձ, որ հրդեհեալ բնաջինջ արար զազգս մեր. մանաւանդ զԱնի քաղաք, զոր պաշարեալ զաւուրս ԻԵ (25) եւ ապա առեալ որպէս ի տեսչութենէ Աստուծոյ, զի ի յաճախել մեղաց մերոց, զխնամս տեսչութեանն Աստուծոյ ի ցասումն բարկութեան շարժէ: Իսկ նոցա ի բերան սրոյ անազարմաբար արկեալ՝ կոտորելով իբրեւ զմայրս անտառաց, շաղախէին զերկիր արեամբ՝ պղծելոց գործովք եւ պոռնկացելոց գնացիւք: Եւ բարկացաւ սրտմտութեամբ Տէր ի վերայ մեր, եւ գարշեցոյց զժառանգութիւն իւր յոյժ: Այլ մերն, վասն զի դադարեաց իշխանութիւն թագաւորական, պարտ է եւ ի կանոնացս դադարեցուցանել. զի թէպէտ եւ գոյր ուրուք գաւազան տերութեան, որպէս Կիւրիկէին կամ այլ ուրեք, յորժամ տեսին զանհնարին աղէտ կործանման զգլխաւորի տեղւոյս՝ անձնատուր եղեալ ընդ ձեռամբ վիշապին, կամաւ ելին փախստեամբ առ կայսրն Յունաց: Եւ նոքա տիրեցին ընդհանուր աշխարհիս: Իսկ մեք զկանոնելոցս չափ՝ հասուցուք մնացելովքս մինչեւ ի մերս ժամանակ զմարդեղութեան Արարչին ըստ սահմանելոյս սկիզբն դնելով, եւ զկայսերացն, հայրապետական եւ թուական, թուովն սկսեալ անտի, ուր զվախճանն եառ[239]: *(Վ911, Մ6354, Մ1899) Տէր Պետրոս եւ ազատ Սարգիս եւ Գրիգոր Բջնեցին նենգեցին զԳագիկ եւ զԱնի ետուն ի կայսրն Յունաց, վասն որոյ ելին ի բընիկ աշխարհէն իւրեանց՝ տէր Պետրոս եւ Գրիգոր՝ Վասակայ որդին, Գագիկ եւ այլք իշխանք Հայոց եւ եկին ի Հոռոմ[240]:* *(Մ1899) Գագիկ զԱնի ետ եւ զՇամնդաւ էառ[241]:*
1046	ՌԽԸ 1048	ՆՂԵ 495	Աւաղ զի ոչ գոյր թագաւոր Հայոց, կարծեմ խափանիլ կամի այս գաւազանս[242]: Բայց թէ զայն չարժէաք ոչ ածէր Աստուած զդառն սուգս ի վերայ մերոյս ազգի, զի ետես Տէր Արարիչն զիպար-

			տուքիւն մեր եւ հակառակ կալով կսկեծեցոյց զմեզ որպես ի հնումն զԻսրայէլ, զի թէ յանդրանիկն ոչ խնայեաց, զիարդ ի կրտսերս գթայր, որ նման գոլով կրտսեր որդւոյն քամահեցաք զտէրութիւն նորայ: *(Վ1227) Յայսմ ամի բարձաւ թագաւորութիւն Հայոց ի ՆՂԵ (1046) թուականին: Զկնի տէր Պետրոսին, որ տիրեաց ժամանակ հայրապետութեան ամք Լ (30) եւ սայ յետ կործանմանն Անւոյ վտարեալ զաթոռս հայրապետութեան իւրոյ ի Սեբաստիայ*[243]*:*
1047	ՌԽԹ 1049	ՆՂԶ 496	*(Վ1253) Գրիգոր Մագիստրոսն պլուետիկոս եղեալ*[244]*:*
1048	ՌՕ 1050	ՆՂԷ 497	*(Մ1899) ՆՂԷ (1048) թվին հուր էջ յերկնից եւ այրեաց զսուրբ Պետրոս՝ յԱնտիոք եւ պատառեաց զխորանն, եւ ընկղմեցաւ գանգռն*[245]*: Դարձեալ հուր էջ ի վերայ եկեղեցւոյ սրբոյն Պետրոսի՝ եւ այրեաց զքար եւ զփայտ նորա, եւ այլ Խ (40) եկեղեցիս յԱնտիոք:*
1049	ՌՕԱ 1051	ՆՂԸ 498	*(Մ8481) Մեռաւ Աբաս թագաւոր*[246]*:*
1050	ՌՕԲ 1052	ՆՂԹ 499	*(Լատ. հր.) Տաճիկք առին զԱրծն քաղաք եւ ի սուր սուսերի մաշեցին զՃԽՌ (140 000) բնակիչս եւ զմնացեալսն ի գերութիւն վարեալ, զիրոյ ճարակ արարին զքաղաքն*[247]*:*
1051	ՌՕԳ 1053	Շ 500	
1052	ՌՕԴ 1054	ՇԱ 501	*(Մ9796, Ե1221) Վախճանի թագաւորն Դաւիթ*[248]*:*
1053	ՌՕԵ 1055	ՇԲ 502	*(Մ1899) Տէր Պետրոս ի գնալն առ Մոնամախ թագաւոր յԸստամբոլ, օրհնէ զտէր Խաչիկ քուեր որդին իւր ի ՇԲ (1053) թվին եւ թողու ի տեղի իւր եւ ինքն երթայ առ կայսրն Յ (300) արամբք եւ Ճ (100) եպիսկոպոսօք եւ վարդապետօք եւ մեծաւ պատուով մեծարեաց զնա արքայ եւ եկաց անդ ամս Դ (4):*
1054	ՌՕԶ 1056	ՇԳ 503	**Կուռաթոդոռն** («ի Կոստանդնուպալիս») **ամս Գ** (3)**:** *(Մ7261, Մ10202) Առաքեաց Մօնոմախն զՊեռոս, որ եկեալ ի Պաղին եւ յԱրկղնի եւ էառ զամրոցս նոցա եւ զիշխանսն Հայոց, որք անտ, զոմանս էսպան եւ զոմանս տարաւ ի Բիւզանդիա*[249]*:*

1055	ՌՕԷ 1057	ՇԴ 504	*(Մ1899) Կիրթոտոռն, սա կոչի Կոմանում[250], որ բըռնութեամբ էառ զթագաւորութիւնն եւ յետոյ աբեղայ եղեւ եւ զթագաւորութիւնն իւրով կամաւ ետ ի Տուկիծն:*
1056	ՌՕԸ 1058	ՇԵ 505	*(Մ1899, Տ93) Ի ՇԵ (1056) թըւին եկն ամիրայ մի Պարսից՝ Դինար անուն եւ զՄելտենի քաղաքն ի սուր քարշեաց. մինչ զի ծըփայր յարենէ ի ծայրէ ի ծայր. եւ տղայքն ի գիրկս մարցն մասն մասն յօշեալ լինէին. եւ զօրքն Յունաց հասեալ ոչ իշխեցին պատերազմել: Եւ ի մտանելն Դինարայ ի Տարօն բազում աւարաւ, իշխանն Հայոց Թոռնիկ՝ որդին Մուշեղայ, կազմեցաւ ի պատերազմ. եւ հայեցաւ ի վանս Գլակայ եւ ասէ. «Սուրբ Կարապետ հասիր մեզ յօգնութիւն» եւ կոտորեալ զզօրսն Պարսից էառ զառ եւ զաւար ի նոցանէ եւ արար ուրախութիւն քրիստոնէից[251]:* *Ի սոյն ամի ձիւն եկն յամենայն աշխարհս Կ (60) օր: Գիշերն հոսէր ընդ երեսս երկրի եւ ցերեկն գայր յարեւելս եւ յարեւմուտս, ի հիւսիս եւ ի հարաւ, եւ մէկ օրն կարմիր ձիւն եկն եւ կոտորեցան երէք եւ թռչունք, եւ փախուցեալք ի տունս եւ ի փողանս մտանէին. եւ տմարդիկքն անողորմ կալեալ ուտեին. բայց ողորմածքն դարմանէին եւ արձակէին. եւ Նասրդօղ ամիրայն Մուֆարդնայ Խ (40) մոթ[252] ցորեան եւ Խ (40) գարի եւ Խ (40) կորեկ ետ ցանել ի դաշտին եւ բազում խոտ եւ դարման եւ շատք այնու ապրեցան:* *Լատ. հր.) Յակոբ վարդապետ Սանահնեցի փայլէ գիտութեամբ:*
1057	ՌՕԹ 1059	ՇԶ 506	**Դուկիծն** («ի Կոստանդնուպալիս») **ամս Ժ** (10)**:** *(Ե3701) Յայսմ թուին փոխեցաւ ի Քրիստոս տէր Պետրոս ի Սեբաստիայ եւ եդաւ ի վանս Սուրբ Նշանին, կեցեալ յաթոռն հայրապետական ամս ԽԲ (42), եւ յաջորդէ տէր Խաչիկ ամս Ը (8), ոմանք (ասեն)՝ ամս Բ (2):* *(Մ1899) Տէր Խաչիկ քուեր որդի տէր Պետրոսի՝ ամս է (7)[253]:* *(Վ959, անթվական) Տէր Խաչիկ քուեր որդի տէր Պետրոսի՝ ամս Բ (2) եւ յետ այնորիկ զամս չորս*

			առանց կաթողիկոսի մնաց աշխարհս Հայոց, զի վտարեցաւ աթոռ հայրապետութեան ի Սեբաստիայ եւ խափանեցին Յոյնք ձեռնադրել կաթողիկոս Հայոց, մինչեւ Մարիամ՝ դուստր թագաւորին Գագկա[254] մեծաւ աղաչանաւք խնդրեաց յարքայէն Հռոմոց եւ նայ լուաւ աղաչանացն Մարիամու: Եւ առաքեաց Մարիամ, խնդրեաց եւ եգիտ զԳրիգորիս՝ զորդի Գրիգորի Մագիստրոսի՝ Պահլաւունի ազգաւ: Սա թողեալ զհայրենի պատիւն, կրաւնաւորութեան հետեւեցաւ եւ բռնադատեալ զսա բազում աղաչանաւք նստուցին յաթոռ հայրապետութեան յամի ՇԺԴ (1065) թուականին Հայոց: *(Լատ. հր.) Տէր Խաչիկ քուեր որդի զտէր Պետրոսի նստէր յԱնի: Տուկիծն տարաւ զնա ի Կոստանդնուպալիս եւ պահանջէր զգանձս եւ շատ չարիս արար ընդ Հայոց կաթողիկոսն:*
1058	ՌԿ 1060	ՇԷ 507	*(Մ1899) Տէր Խաչիկ՝ քուեր որդին տէր Պետրոսի, շատ չարիս կրեաց ի Յունաց, զի Տուկիծն տարաւ զնա յՍտամբոլ եւ կամէր առնել Քաղկեդոնիկ եւ պահանջէր զգանձս տէր Պետրոսին եւ Գ (3) ամիս[255] արգելական արար եւ հրով փորձեալ ի նոցանէ՝ ոչ այրեցաւ:*
1059	ՌԿԱ 1061	ՇԸ 508	
1060	ՌԿԲ 1062	ՇԹ 509	*(Մ1899) Ի ՇԹ (1060) թվին եղեւ սով սաստիկ եւ Թուրքն էառ զՍեւաստ:* *Խաւարեցաւ արեգակն ի տրէ ի Ժ (10) յաւուր չորեքշաբթի:*
1061	ՌԿԳ 1063	ՇԺ 510	
1062	ՌԿԴ 1064	ՇԺԱ 511	*(Մ8481) Գագիկ՝ Աբասայ որդին, զիւր հայրենիքն ի Դուկծին ետ եւ իւր փոխան առ:*
1063	ՌԿԵ 1065	ՇԺԲ 512	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Աղեքսանդր երկրորդ ի Մելանոյ՝ ամս ԺԷ (17):* *Վախճանեցաւ Տաւղրիլ սուլտանն Խորասանա եւ տիրեաց Ալփասլանն[256]:*
1064	ՌԿԶ 1066	ՇԺԳ 513	**Յայսմ թուականի ի տաւնի Տիրամաւրն յաւուր երկշաբաթւոջ, առաւ Անի քաղաք յԱլփասըլանէն, զոր կոտորեաց անխնամաբար ի սուր սուսերի եւ ի գերութիւն վարեաց զկանայս եւ զմանկունս:**

			(Մ9796, Մ8481) էառ եւ զԱխլքաղաք: Եւ իսկոյն Բագարատ զԿիւրիկէ կալաւ եւ զՇամշուլտէ էառ[257]: *(Մ1486) Սուլտանին որդին էառ զԱնի եւ Իւանէ որդին բազում վնաս արար ի Տլուք:* *(Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Ալփասլանն էառ զԱնի:* *(Լատ. հր.) Մեռաւ Տէր Խաչիկ ի գիւղն Թաւբլուր:*
1065	ՌԿԷ 1067	ՇԺԴ 514	**Տէր Գրիգորէս** (կթղ.) **ամս Ի** (20)[258]**:** *(Մ3613) Տէր Գրիգորիս որդի Գրիգորի Մագէստրոսի թողեալ զհայրենի պատիւն, հետեւեցաւ կրօնաւորութեան եւ բռնադատեալ նստուցաւ յաթոռ հայրապետութեան եւ Վկայասէր անուանէցաւ, գնաց ի Կոստանդինօպոլիս եւ բազում ճառս սրբոց թարգմանեաց ի Յունաց ի Հայս:* *(Մ7261) ...Թարգմանեաց զմեկնութիւն Գործոց Առաքելոցն:* *Սպանին Հռոմք զՎասակ, եղբայր կաթողիկոսին Վահրամայ, զտէրն Անտիոքու[259]:* *(Մ1899) Զկնի տէր Խաչկայ նստի հայրապետ Վահրամ որդի Գրիգորի Մագիստրոսի՝ որ էր մտեալ ի կարգ աշխարհի՝ բայց կեցեալ էր սրբութեամբ՝ եւ կոչեցաւ տէր Գրիգորիս: Սա կոչեցաւ Վկայասէր՝ զի բազում ճառս թարգմանեաց ի Հայս եւ սա խնդրեաց ի հօրէ իւրմէ զմեկնութիւն քերականին՝ եւ կեցեալ յերկար ժամանակս՝ եւ վախճանեցաւ ի ՇՕ (1101) թվին ի Սեաւ լեառն, որ կոչի Տորոս, մերձ գոլով Բարսղի:* *Ի սորա աւուրս էին Հայոց Զ (6) կաթուղիկոսք:* *Դարձեալ յայսմ ամի եմուտ Գագիկ ի Կոստանդնուպոլիս ի ՇԺԴ (1065) թվին եւ եղեւ քննութիւն հաւատոյ եւ երեւեցաւ անդ ուղղափառութիւնս Հայոց ճշմարիտ, եւ փառաւորեցաւ Գագիկ ընդ այլ գիտնականսն Հայոց որք ընդ նմա էին վարդապետք եւ իշխանք յորժամ գնաց: Եւ Գագիկ փառաւք ի Հռոմաց եւ եկեալ ի Կեսարիա եւ էր անդ մետրապոլիտ մի Մարկոս անուն որ ունէր շուն մի. եւ վասն ատելութեան զոր ունէր ընդ Հայս՝ կոչէր զիւր շանն անուն*

			արմէն եւ ի գալն Գագկայ յոյժ մեծարեաց զնա մետրոպոլիտն: Իսկ Գագիկ մինչդեռ ուրախութեամբ ուտէին եւ ըմպէին ի դարպասն մետրապոլտին՝ ասէ Գագիկ՝ «տէր հոգեւոր, լուեալ եմ թէ ազնիւ շուն մի ունիս. բեր տեսցուք զնա: Եւ եպիսկոպոսն հրամայեաց կոչել զնա՝ եւ զանուն ոչ տային՝ վասն որոյ շունն անլուր եղեալ ոչ գայր. ասէ արքայ՝ «զիւր անուն տուք որ գայ»: Ասէ եպիսկոպոսն՝ վասն արիութեանն եւ տիրասիրութեանն «արմէն» կոչէմք, եւ յասելն «արմէն» եկն շունն: Եւ ետ արքայ ածել զշունն եւ զմետրապոլիտն ի խորք[260] մի եւ այնչափ հարին, մինչ մեռաւ մետրապոլիտն ի շանէն, եւ շունն ընդ նմա. եւ ինքն կողոպտեալ զեպիսկոպոսարանն՝ գնաց անտի[261]: *(Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Ալփասլանն առաքեաց զՍուլիման[262] քուերորդին իւր յաշխարհն Հոռոմոց եւ Հայոց ընդ դէմ Յունաց: Յայսմ ամի Գագիկ դարձեալ ի Կոստանդնուպալսէ եսպան զմետրապալիտն Կիսարոյ:*
1066	ՌԿԸ 1068	ՇԺԵ 515	
1067	ՌԿԹ 1069	ՇԺԶ 516	**Դիուժէնն** («ի Կոստանդնուպալիս») **ամս Ե** (5)**:** **Մեռաւ Գագիկ շահանշահ թագաւորն Վանանդայ**[263]**:** *(Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Կաթողիկոս եկաց Հայոց տէր Գրիգորիս Վահրամն, որ կոչեցաւ Վկայասէր, ամս ԺԶ (16):*
1068	ՌՀ 1070	ՇԺԷ 517	*(Մ1899) Ի սոյն ամի ի ՇԺԷ (1068) թվին երեւեցաւ աստղ մի գիսաւոր եւ եղեւ սով սաստիկ, եւ Գոմէշտիկին[264] Պարսիկ ամիրայ մի, ի զօրացն Ալփասլան սուլտանին՝ եկն յԱսորեստան, ի Նսեբին[265], յԱմիթ եւ յՈւրհայ եւ կոտորեաց զզօրսն Յունաց:*
1069	ՌՀԱ 1071	ՇԺԸ 518	
1070	ՌՀԲ 1072	ՇԺԹ 519	*(Մ2965, Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Դեաւժենն[266] եկն յարեւելս եւ էառ զՄանծկերտ ի Թուրքաց եւ Ալփասլանն պատերազմեալ յաղթեաց նմա եւ կալաւ զնա եւ դարձեալ ազատեաց ուխտադրութեամբ[267]: Ոմանք զկոտորիլն Դիաւժենին ի թու.*

			Հայոց ՇԺԸ (1069) են գրեալ[268]: Եւ ի ՇԺԹ (1070) Գողձախմատն[269] աւերեաց զՍեւ լեառն եւ կոտորեաց զնա Գրիգոր Պիխտն[270] ի դաշտն Հարունոյն, ի մամխենուտն[271]: *(Մ9796, Մ8481) Բագարատ զՓատլուն եհար եւ ձերբակալ արա:* *Ի նոյն ամի սուլտանն ի Քարթլ եմուտ[272]:*
1071	ՌՀԳ 1073	ՇԻ 520	**Եկ թագաւորն Դիոժէնն բազում զաւրաւք ի պատերազմ ընդ Պարսս, եւ եկն ի Մանազկերտ եւ առ զնա՝ զոր լուեալ բռնաւորին Ալփասըլանայ, եկն ընդ առաջ. եւ եղեւ սաստիկ պատերազմ, եւ պարտեցաւ Դիուժէնն եւ ըմբռնեցաւ ի նմանէ եւ հարկ եդեալ ի վերայ նորա՝ եթող: Իսկ ազգ նորա ոչ հնազանդեցան նմա, այլ թագաւորեցուցին զՄիխայէլ որդի Դուկծին: Դարձեալ պատերազմեալ Միխայէլ հար զԴիուժէնն, եւ զաւրացն քուրծ ագուցեալ նմա՝ ածին առ թագաւորն Միխայէլ, իսկ եւ կուրացեալ ի ճանապարհին զաչս նորա փորեցին հրամանաւ կայսեր, եւ յանհնարին խստութենէ կսկծոյն մեռաւ ի ՇԻԱ** (1072) **թուականին:** **Միխայէլ** («ի Կոստանդնուպաւլիս»): *(Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Եղեւ սով սաստիկ եւ Կումիշտիկին եկն յՈւռհա եւ կոտորեաց զՀոռոմոց զաւրսն:*
1072	ՌՀԴ 1074	ՇԻԱ 521	**Ի սմին ամի դատաստանք արդարադատին եւ երկայնամտին Աստուծոյ, յուզեցան ի վերայ խրոխտ եւ անգառագիղ գազանին, որ Ալփասըլանն կոչէր: Եւ մինչդեռ մրմռայր զայրագնութեամբ տիրել տիեզերաց, եւ զմղձկեալ սրտին դառնութիւնն թափել, եւ յայնոսիկ զորս ոչ էր արկեալ զբռամբ, յեղակարծ ժամանակի սրախոխող լեալ, բարձաւ ամպարիշտն յերկրէ, եւ ոչ ետես զփառս Աստուծոյ: Բայց ասեն թէ նախքան զարձակել դառնացեալ շնչոյն՝ հայեցաւ ընդ սպանողն, եւ հիացաւ զարհուրելով, եւ ապա սատակեալ էջ ի դժոխս՝ լի դառնութեամբ, ներկեալ զոգի իւր արեամբ անմեղաց եւ արդարոց:** **Աստանաւր զխոստացեալ պարտսն հատուցից**

			զմնացուածս բանից զոր եթող հարկ տեղւոյն այնորիկ այսու պատշաճեալ ամանակի, զի ասէ Իմաստասէրն[273] աստուծային, թէ՝ «իբրեւ առնոյր զփառս իշխանութեանն բարեբախտն Մելքաշահն, զկնի հաւրն մահուան Ալփասլան կոչեցելոյն, մեծապէս կարգաւք յաւրինէր զթագաւորութիւնն ըստ անուանն արդարեւ եղեալ արքայ արքայից, ոչ հետեւեալ հաւրն բարուց եւ կամաց, այլ յաւետ մանաւանդ զընդդէմսն ախորժեալ, մինչ զի եւ մտահաճ եղեալ զնորայսն բասրեր իմացմունս իբր եղեալ հակառակ խաղաղութեան եւ կենաց մարդկան՝ արեամբ եւ զրկմամբ խնդացեալ: Իսկ ինքն իմաստաբար քաղաքավարութեան կարգաւք հանդերձէր զամենայն: Արդ, խոհեմն այն եւ արի քան զյոլովս ի թագաւորաց եւ քան զամենեսեան որ առ մեւք, ոչ այնքան տանէր հոգ, որքան արդարութեամբ առ ամենեսին վարիլ, զի մի ոք լիցի տրտում ի զրկելոյ եւ հպարտ ի գոռոզաց: էր եւ ազատաբարոյ եւ մեծախորհուրդ, այլ եւ տեսիլ մարմնոյն արժանի թագաւորութեան, ընդ որում հեզութիւն ի քաղցրութիւն բարուցն լծակցեալ առներ սիրելի ամենեցուն, զոր միայն կոչեցի թագաւոր եւ փարթամ: Սա ի դոյզն ժամանակի փոքր ինչ նուազ զբոլորս հնազանդէր զտիեզերս, զոր այլք ի թագաւորաց, կամ ի բազում ժամանակս, կամ եւ ոչ բնաւ: Բայց ոչ այնքան պատերազմաւ եւ բռնութեամբ, որքան սիրով եւ քաղցրութեամբ, զի թէ սակաւ ժամանակաւ այնքան զաւրեաց, կարծեմ թէ եւ ոչ Եւրոպէ կարէր ոչ տալն մուտս արքայութեան նորա, եթէ յոլովեալ էին կենաց նորա ժամանակք»[274]: Արդ, ասաց զայս զկենաց նորա, որ տիրեաց ամս Ի (20): Իսկ գրեցից զոր ինչ վասն մահուն է ասացեալ: *(Մ1898, Հեթում Կոռիկոսցի) ԶՊիխտն յԱնդրիունն խեղդեցին ծառայք իւր[275]:* *(Ե1221, Վ288) Մեռանի Բագրատ[276]:*
1073	ՌՀԵ 1075	ՇԻԲ 522	*(Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Մեռաւ Ալփասլանն եւ եկաց սուլտան Խորասանա որդի նորա Մելէք-*

			շահն, այր քաղցր եւ իմաստուն: *(Մ1899) Չոգաւ տէր Գրիգորիս ի Կոստանդնուպոլիս վասն թարգմանութեան:* *(Ե1221) Սուլտան առ զՇամ(շ)ուլտէ աւուրս Կ (60):* *(Մ1486, Մ1899, Ե3701) Ի ՇԻԲ (1073) ամին ի բռնութենէն Տաճկաց ել Օշին իշխանն ի ժառանգութենէ իւրմէ՝ որ կոչի Մայրեաց ջուրք՝ հանդէպ Գանձակայ՝ ունելով ընդ իւր զեղբայրն իւր զՀալկամ եւ զմայրն իւր եւ զամուսինն իւր, ազատագունդ իշխանօքն եւ ամենայն աղխիւն, ունելով ընդ իւր եւ զմատն սուրբ առաքելոյն Պետրոսի: Եւ եկեալ յաշխարհն Կիլիկեցւոց եւ աջողմամբն Քրիստոսի եւ սուրբ մատին առաքելոյն՝ էառ ի Տաճկաց եւ զականաւոր բերդն Լամբրօն. որ է մերձ առ ստորոտով լերինն Տօրոսի՝ ի գահ մայրաքաղաքին Տարսոնի[277]:*
1074	ՌՀՁ 1076	ՇԻԳ 523	*(Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Թագաւորն Հայոց Գագիկ սպանաւ ի Կենդռաւսկաւի՝ յորդւոցն Մանտալէի:* *(Մ8481) Մելիքշահ սուլտանն զՓատլուն էհան ի հայրենեացն եւ զկնի Թ (9) ամաց դարձեալ անդրէն դարձոյց:*
1075	ՌՀԷ 1077	ՇԻԴ 524	
1076	ՌՀԸ 1078	ՇԻԵ 525	
1077	ՌՀԹ 1079	ՇԻԶ 526	*(Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Մեռաւ Ապլղարիպ իշխանաց իշխանն՝ Հասանայ որդին եւ թաղեցաւ ի Պապեռաւնն[278]:* *(Մ1899) ի ՇԻԶ (1077) թւին նստաւ կաթուղիկոս տէր Սարգիս[279] եւ յայսմ ամի էին Դ (4) կաթուղիկոսք՝ տէր Գրիգորիս Վահրամն, տէր Գէորգ վարդապետն, տէր Սարգիս եւ Աղուանիցն: Ընկեցին յաթոռոյն զտէր Գէորգ վարդապետն եւ զտէր Սարգիս եւ եկաց միահեծան կաթուղիկոս Հայոց տէր Գրիգորիս: Եւ յետ մահուանն իւրոյ ետ զքըւէր որդիս իւր՝ զԳրիգորիս եւ զՆերսէս՝ ի տէր Բարսեղ, որ եկաց կաթուղիկոս զկնի տէր Գրիգորիսի ամս ԼԱ (31)[280]:*
1078	ՌՁ 1080	ՇԻԷ 527	*(Մ3681, Նաթանայել Հավուցքառեցի) Այսմ ամի*

			թագաւորն Հայոց Գագիկ գնաց ի Տարսոն քաղաք եւ դարձե(ա)լ եկն Ռ (1000) արամբք ի դաշտն Առճեասայ[281] ի բերդն Կիզիստռոյ եւ անդ սպ[անա]լ յաստուածուրաց Հոռոմոցն: Եւ եղեւ սով սաստիկ ընդ ամենայն աշխարհս խաչայ-պաշտից վասն զի մտաւ Թուրքն եւ տարածեցաւ, որ ոչ մնաց տեղիք եւ խափանեցաւ վաստակաւորութիւն եւ հատաւ կերակուր յերկրէ[282]: *(Մ1898) Կալաւ զիշխանութիւն Հայոց Ռոբէն Մեծն՝ ազգական թագաւորին Հայոց Գագկայ, կացեալ ամս[283]:*
1079	ՌՁԱ 1081	ՇԻԸ 528	
1080	ՌՁԲ 1082	ՇԻԹ 529	**Ալէքսն** («ի Կոստանդնուպալիս») **ամս ԼԸ** (38) **եւ ամիսս է** (7)**:** *(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Կլէմայնս երրորդ ամս Ե (5):* *(Մ8481, Ե1221) Մեռաւ Աղսարթանն[284]:* *(Լատ. հր.) Գէորգ եւ Ստեփաննոս փայլէն վարդապետութեամբ[285]:*
1081	ՌՁԳ 1083	ՇԼ 530	*(Մ1486, Մ1899) Յայսմ ամի եղեւ ահագին սով ընդ ամենայն երկիր եւ աւերեցաւ արեւելք: Այլեւ ի սոյն ամի, եւ այլք ասեն թէ ի ՇԻԵ (1076) ամին, գնաց թագաւորն Գագիկ ի Տարսուս առ Աբըլ-ղարիպ իշխանն Հայոց վասն խնամութեան եւ ի դառնալն մեր յԱռճիաս՝ կալան զնա իշխանքն Յունաց եւ խեղդեցին զնա Գ (3) եղբարք, որք էին ի միում բերդի, եւ ինքն Գագիկ ընդ անցանելն առ նոքօք խոնարհեցաւ ի տես նոցա եւ յողջոյն: Եւ այլք ասեն, թէ ի յորս կայր եւ ի քուն գտեալ Մանդպեանքն՝ տարան ի բերդն Կանդռօսկաւի եւ անդ սպանին: Իսկ իշխանքն Հայոց եւ ամենայն զօրք նոցա լքան եւ յամենայն տեղիս ցրուեցան, յորոց իշխան մի արեանառու Գագկայ՝ Ռուբէն անուն, որ կալեալ ունէր զԿօսիտառայ բերդն. յորժամ լուաւ զմահն Գագկայ՝ յարուցեալ ամենայն զարմօք իւրովք եւ եկն ի կողմանս Փռիւգիոյ՝ դիմելով ի գիւղ մի Կոլմօզօլօ անուն. եւ անդ բնակեալ, յորում լերին էին բնակեալ բազումք յազգէն Հայոց՝ զորս զամենեսեան*

			զնոսա առ ինքն կոչեալ մեծն Ռուբէն եւ նոքօք զօրացեալ էառ զլեռնային կողմանսն՝ զՀոռոմսն անտի ի բաց մերժեալ եւ զնոցա տեղիսն առեալ: Եւ Հ (70) ամաց լեալ բարեպաշտ կենօք վերափոխեցաւ առ Քրիստոս եւ թաղեցաւ ի սուրբ ուխտն Կաստաղոն թողեալ զիշխանութիւն ի յիւր հարազատ որդին ի Կոստանդին որ եւ տիրեաց հռչակաւոր բերդին, որ Վահկայ կոչի, յորում տուն եդ ինքեան անդ եւ զտէրութիւն իւր հաստատեաց, եւ նովաւ բազում տեղիս էառ:
1082	ՌՁԴ 1084	ՇԼԱ 531	**Տէր Բարսեղ** (կթղ.) **ամս Լ** (30)[286]: *(Վ511) Լիպարիտն տաճիկ եղեւ եւ Կիւրիկէ Շաքոյ թագաւորն ի սուլտանն չոգաւ եւ դարձաւ անդրէն պատուով[287]:* *(Մ1899) Ի ՇԼԱ (1082) թվին էառ Սուլէմանն զԱնտաք[288]:*
1083	ՌՁԵ 1085	ՇԼԲ 532	*(Մ1899) ՇԼԲ (1083) թւին նստաւ տէր Բարսեղ յաթոռ հայրապետութեան՝ որդին Վասակայ, եւ զամենայն հակառակսն հնազանդեցուցանէ, որք էին յայնմ ժամանակի Զ (6) կաթուղիկոսք, գնացեալ առ մեծ սուլտանն Մելիքշահ, որ ի Խորասան բազում համարձակութեամբ ընդ քաղաքամէջսն Պարսից՝ ձիով եւ խաչալամով, որ առաջի ամբարձեալ էին ի ձողի:* *(Մ1898, Հեթում Կօռիկոսցի) Թագաւորեաց Յունաց Ալէքսն ամս ԼԸ (39): Ի սորա աւուրս շարժեցաւ բասաճն Ֆռանկաց[289]:* *Կաթողիկոս եկաց Հայոց տէր Բարսեղ ամս ԼԳ (33), (Վ288) …ամս ԼԱ (31)[290]:* *Ի ՇԼԲ (1083) թվին Բուզան ամիրայ էառ զԳանձակ, զՓատլուն կալաւ եւ ի սուլտանն տարաւ[291]:* *(Մ9796, Մ8481) Ի ՇԼԲ (1083) թուին Խոշուռն էառ զԿարնոյ քաղաք առանց խողխողման սրոյ, ի նոյն ամի Թուրքն էառ զՔուրթաթիս եւ զՍամցխէ, ի նոյն ամի Բարսէղ առնու ձեռնադրութիւն կաթողիկոսութեան ի Հաղբատ:*
1084	ՌՁԶ 1086	ՇԼԳ 533	*(Մ3681, Նաթանայել Հավուցքառեցի) Առաւ քաղաքն Անտիոք ի քրիստոնէից[292]:*

1085	ՌՁԷ 1087	ՇԼԴ 534	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Վիքտորիոս երրորդ ամս Դ (4):* *(Վ288) Ի սոյն ժամանակս ի Դ (4) բաժանեցաւ կաթուղիկոսութիւն Հայոց՝ տէր Վահրամ՝ յԵգիպտոս, տէր Բարսեղ՝ յԱնի, տէր Պօղոս՝ հայրն Վարագայ՝ ի Մարաշ, տէր Թորոս՝ ի Հեյնի[293]:*
1086	ՌՁԸ 1088	ՇԼԵ 535	*(Մ1899) Սպանին զսուլտանն Սուլէման:*
1087	ՌՁԹ 1089	ՇԼԶ 536	*(Մ1899) ի ՇԼԶ (1087) թվին ի սուլտանն գնացին Հայոց եւ Վրաց թագաւորքն՝ Կիւրիկէ եւ Գօրգի[294]: Եկն ի Խորասանայ Մելիքշահ սուլտանն եւ էառ զԱնտաք՝ զՖիլառտոսն տաճկացոյց յիւր կամաց եւ ետ նմա զՄարաշ եւ կոխեալ երիվարաւն ի ծովն՝ եւ ետ շուքր Աստուծոյ, որ տիրեաց խաղաղութեամբ ի ծովէն Պարսից մինչեւ ի ծովն արեւմտից. եւ ծուկն խորովեալ եկեր եւ զքուրն կապեալ ի ծովն ընկէց՝ եւ դարձաւ յԱնտիոք եւ ետ զԱնտիոք՝ էլիսանին, եւ զՀալպ Աղսնկոյրին եւ զՈւռհայ՝ Բուզանին եւ ինքն ի Խորասան գնաց:* *(Մ1898, Հեթում Կօռիկոսցի) Եկն սուլտանն Խորասանա Մելէքշահն եւ առ զԱնտիոք եւ զԿիլիկիա, եւ զՖիլառտոսն[295] տաճկցոյց, տալով նմա զՄարաշ: Ետ եւ զՀալպ՝ Ախսնղոտին եւ զՈւռհա՝ Բուզանին եւ զԱնտաք՝ էլիսանին եւ ինքն գնաց ի Խորասան:*
1088	ՌՂ 1090	ՇԼԷ 537	
1089	ՌՂԱ 1091	ՇԼԸ 538	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Ուրբանոս ամս ԺԱ (11):* *(Լատ. հր.) Սով սարսափելի յաշխարհիս Հայոց եւ զանաւրինութիւն յոյժ:*
1090	ՌՂԲ 1092	ՇԼԹ 539	
1091	ՌՂԳ 1093	ՇԽ 540	
1092	ՌՂԴ 1094	ՇԽԱ 541	*(Մ1898, Հեթում Կօռիկոսցի) Մեռաւ սուլտանն Մելէքշահ եւ եկաց որդի նորա Պէկիարուխմ[296], յաւուրս սորա պառակտեցաւ իշխանութիւն Թուրքաց ի բազում մասունս, եւ ի գալ բասածին, սա էր սուլտան ի Պարսս՝ Թուրք գոլ ազգաւ:*
1093	ՌՂԵ 1095	ՇԽԲ 542	**Յայսմ ամի մեռաւ Մլըքաշահն:** **Իսկ վասն զի յաւուրս թագաւորութեան սորա առաւել խաղաղացաւ աշխարհ ամենայն՝ մանաւանդ երկիրս Հայոց, որ ի նախկի բռնակա-**

			լացն ի սպառսպուռ զկործանման բաժակ արբեալ էր յանցեալ ժամանակս, ախորժելի եղեւ բանիւ դրուատիւք վարդապետին սրբոյ[297] գրել եւ խոստանալ դարձեալ գրել արուեստաբան եւ երկայն պատմութեամբ: Եւ յորժամ զկենացն վճարէ զասացուած, զմահուէանէն ապա այսպէս է գրեալ, թէ ի ՇԽԱ (1092) թուականին սպանաւ մեծ հազարապետն արքային Պարսից Մելքաշահի, որում անուն էր Հասան, իսկ ըստ պատուոյ աշտիճանին՝ Վզուրկ Խաւջայ, եւ զկնի աւուրց ԻԸ (28)-ից մեռանի եւ ինքն Մելքաշահն, զորմէ համբաւէր յոմանց, դեղակուր ի կնոջէն լինել, որ էր հեզ առ ամենեսեան եւ քաղցր բարուք, յաւէտ առ ազգս քրիստոնէից: Եւ յետ մահու նորա, անպատմելի եղեւ եւ խռովութիւն ամենայն ազգաց՝ զամս Դ (4), զի եղբայր նորա Դըդուշն եւ որդի նորա Բեքիարուխն, զայսոսիկ զամս մարտիւ պատերազմաց զբարեյարմարութիւն զամենայն ի բաց կտրեցին, վասն ոչ ընդ փոյթ միոյ ի նոցանէ տիրելոյ՝ հոսմունս արեանց իբրեւ եւ զուղխից լինէր, ոչ միայն զինակիր նահատակաց, այլ առհասարակ ազանց եւ գաւառաց, եւ նեղութիւնք վշտաց, սովոյ եւ գերութեան, եւ այսպէս բարիքն ի բաց վճարեցան ընդ խզման կենաց թագաւորին, որոյ երկք եւ աշխատութիւնք թագաւորականք ուրոյն՝ եւ շահն եւ աւգուտն՝ հասարակ ամենեցուն, մեծամեծքն եւ ընտրելիքն մանաւանդ զխաղաղականն ասեմ կեանս, եւ զանկարաւտս եւ զանհակառակս, զի սիրէր զազգս մեր այնքան, մինչ զի աղաւթս հայցել եւ աւրհնութիւն. յորմէ եւ անդ երբեմն չոգաւ հայրապետն[298], ա՜ւշ թէ միայն էր աշակերտեալ քրիստոսական կրաւնից եւ կարգաց: Արդ ի քաղաքին յորում սնաւ եւ թագաւորեաց Ասպահան, որ է մայր քաղաքացն Պարսից՝ մեռանի անդ: *(Մ7261, Մ10202) Սորա (Մելիքշահի - Կ. Մ.) որդին Տափար սուլտան նստաւ եւ նորա որդիքն՝ աւագն Մահմուտ՝ ի Պարս եւ կրսերն՝ Մելիք՝ ի Գանձակ*

			Հայոց նստան սուլտանք:
1094	ՌՂԶ 1096	ՇԽԳ 543	Սկիզբն շրջանի հինգհարիւրեկին: Սովն չարալլուկ ի լնուլ չափոյն ըստ Ամուրհացոյն. պատառեցաւ դժնդակ երկանցն չար ծնունդն եւ հուր եկեր զգեղեցկութիւն անապատի՝ փոքր ինչ նուազ եւ սպառ իսկ[299]:
1095	ՌՂԷ 1097	ՇԽԴ 544	Սպանաւ Ղըդուշն արքայ Դամասկոսի եւ Պաղեստինացւոց եւ նոցա մերձաւորացն ի Բեքիարուքէն ի Սպահանն պատերազմաւ:
1096	ՌՂԸ 1098	ՇԽԵ 545	*(Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Շարժեաց Աստուած զմեծ բասաճն Ֆռանգաց գալ ի թափումն Երուսաղէմի[300]:*
1097	ՌՂԹ 1099	ՇԽԶ 546	Հռոմայեցիք ելին ընդ Թիրակ ի կողմանս Ասիացւոց խնդրել զքէն վրիժուց տառապանաց քրիստոնէից՝ ի Սկիւթացւոց եւ ի Պարսից՝ հանդերձ Տաճկաստանաւ: Եւ բազում կրեցին նեղութիւն յորդւոյն սատանայի Ալեքս կոչեցելոյ, որ էր թագաւոր Յունաց ի Կոստանդինուպալիս՝ գաղտնի եւ յայտնի նենգութեամբ, մահարար կերակրովք եւ ի ծովու նենգելով իւրովքն, յորս վստահացուցանէրն զնոսա, եւ բարբարոսացն խորամանկութեամբ զինքն ունաւղաւք վարդապետ, որում հատուցէ Տէր, քանզի եւ չէր իսկ քրիստոնեայ, որպէս լուաք ի յոլովից, որպէս եւ ոչ մայր նորա: Եւ այս բանք գրեալ էր վարդապետին Սարկաւագին: *(Լատ. հր.) Հայոց իշխանն Կոնստանդին զորդի Ռուբենի, զպատիւս մեծ արժանացեալ ի Յունաց:* *(Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Բասաճն էառ զՆիկիա ի Սուլիման շահէն:* *(Մ9796, Ե1221) Հրանուշիկն եկն:*
1098	ՌՃ 1100	ՇԽԷ 547	*(Մ1486, Մ1899) Եղեւ թափումն Անտիոքայ եւ Երուսաղէմի եւ Ուրհայոյ ի ձեռաց անօրինաց:* *Ի սոյն ամի ի ՇԽԷ (1098) թվին առին Հռոմայեցիք զԵրուսաղէմ ի Տաճկաց եւ կոտորեցին զնոսա սրով ԿԵՌ (65 000) ի տաճարին եւ այլ բազումս ի քաղաքին: Եւ տէր Վահրամ յԵրուսաղէմ էր յառնուլ քաղաքին, զոր կամեցան սպանանել Հագարացիքն՝ ի վտանգելն ի Հռովմայեցւոց, եւ*

			խնամքն Աստուծոյ պահեաց՝ եւ ոչ սպանին: Եւ տուկն Գօնդօփրէ[301] տիրեաց Երուսաղէմի, եւ ի ՇԽԹ (1100) ամի մեռաւ Գօնդօփրէ եւ եկաց առաջին թագաւոր Երուսաղէմի Պաղտինն՝ եղբայր Գօնդօփրէի, կոմսն Ուրհայոյ ամս ԺԷ (17): (Մ1898, Հեթում Կօռիկոսցի) Պարոն եկաց Հայոց՝ յաշխարհն Կիլիկեցոց, Կոստանտին որդի Ռովբէնա՝ ամս Ե (5)[302]: *Բասաճն էառ զԱնտիոք եւ զՈւռհա:* *(Հ3) Զաւրքն Ֆռանկաց առին զՄեծն Անտիոք ի յանաւրինաց:*
1099	ՌՃԱ 1101	ՇԽԸ 548	*(Մ1898, Հեթում Կօռիկոսցի) Եղեւ թափումն Երուսաղէմի եւ տուկն Գունդաւֆրէ տիրեաց Երուսաղէմի:* *(Հ3) Զաւրքն Ֆռանկաց առին զՍուր[303], քաղաքն յերուսաղէմ:*
1100	ՌՃԲ 1102	ՇԽԹ 549	*(Մ1899) ի ՇԽԹ (1100) թվին Կոստանդին՝ որդին Ռուբենի, յաւուր միում նստեալ էր ի Վահկայն եւ եդեալ կայր առաջի իւր արծաթի սկուտեղ մի եւ այն յանկարծակի թռեաւ եւ գնաց յանկիւնս տանն եւ ի մէջ այլ է (7) սկուտեղացն, որք անդ կային, եմուտ, եւ զայն նշան ասացին մահուանն Կոստանդեայ, որ եւ մեռաւ իսկ եւ թաղեցաւ ընդ հօրն իւրում ի սուրբ ուխտն Կաստաղօն եւ զիշխանութիւնն նորա էառ անդրանիկ որդի նորա՝ Թորոս, ամս ԻԹ (29)[304] կացեալ, եւ Լեւոն եղբայր նորա կայր առ նմա:* *Այս Թորոս իմաստութեամբ եւ քաջութեամբ առաւել գտաւ, որ եւ իսկոյն զվրէժ արեան Գագկայ թագաւորին առեալ, զՄանտալէի որդիսն կալեալ եսպան եւ զբերդն Կանդռասկաւի քակեաց եւ զբազմութիւն գանձուցն էառ եւ զբնակիչսն եբեր բնակեցոյց առ ափն Պառատիս գետոյ. որ այժմ Ներքի Կրակայ կոչի: Գտաւ անդ եւ զպատկեր սուրբ Աստուածածնին եւ ընդ ինքեան բերեալ եւ յորժամ տիրեաց Անարզաբու՝ շինեաց զմեծ տաճարն եւ անդ եդ զպատկեր Տիրամօրն: Շինեաց սա եւ զսուրբ ուխտն Դրազարկ եւ զՄաշկաւորն եւ զայլս բազումս զոր վերստին նորո-*

			գեաց եւ պարգեւօք փարթամացոյց: *(Մ7261, Մ10202) Այս Թորոս իշխան եւ եղբայր իւր Ստեփանէ, որդիք էին Լեւոնի իշխանին, որդւոյ Կոստանդեայ, որդւոյ Ռուբենայ, թոռունք Գագկայ Արծրունեաց[305]:* *(Մ1898, Հեթում Կօռիկոսցի) Պապ եկաց ի Հռոմ, Պասկալ երկրորդ ամս ԺԹ (19): Վախճանեցաւ Գունդաւֆրէ եւ պսակեցաւ առաջին թագաւոր Երուսաղէմի Պաղտին[306] եղբայր նորա, առաջին կոմսն Ուռհայու:* *(Վ288) Պատառումն Ձատկին:*
1101	ՌԵԳ 1103	ՇՕ 550	*(Ե3701) Ոչ վառեցաւ լոյսն Երուսաղէմ յաւուր շաբաթու, այլ ի կիրակի իններորդ ժամու:* *(Մ1899) Առաւ Շէզառն յանօրինաց:* *(Հ3) Ձաւրքն Ֆռանկաց առին զԿեսարիա Պաղեստինացոց[307]:*
1102	ՌԵԴ 1104	ՇՕԱ 551	*(Ե3701) Ի տօնի Ծառզադարի ծռազատիկ արարին տասն ազգք. Հայք եւ Ասորիք ուղիղ կացին:*
1103	ՌԵԵ 1105	ՇՕԲ 552	*(Մ1898, Հեթում Կօռիկոսցի) Պարոն եկաց Հայոց Թորոս՝ անտրանիկ որդին Կոստանտեա՝ ամս ԻՁ (26):*
1104	ՌԵԶ 1106	ՇՕԳ 553	**Մեռաւ Բեքիարուխն որդի Մելքաշահին:** *(Հ3) Ձաւրքն Ֆռանգաց առին զԱքքա[308] ի յանաւրինաց:*
1105	ՌԵԷ 1107	ՇՕԴ 554	**Խզըլն էառ զԼաւռէ եւ զուխտսն սուրբ:** *(Վ511) Խզըլն առ զԼաւռէ՝ եւ զուխտսն սուրբ զՀաղբատ եւ զՍանահինն այրեաց:* *(Վ1253, Մ1486) Մեռաւ տէր Վահրամ եւ թաղեցաւ ի Կարմիր վանքն, յաւուրս Գող Վասլին:* *(Մ1899) Այժմ երեւեցաւ աստղ գիսաւոր:*
1106	ՌԵԸ 1108	ՇՕԵ 555	
1107	ՌԵԹ 1109	ՇՕԶ 556	**Սպանաւ Սկիւթացի բռնաւորն Խզըլն, որ թարգմանի կարմիր, յառման քաղաքին Դւնայ ի զաւրացն Պարսից, զոր պաշարեցին զԶ** (6) **ամիս[309]:**
1108	ՌԵԺ 1110	ՇՕԷ 557	
1109	ՌԵԺԱ 1111	ՇՕԸ 558	*(Հ3) Ձաւրքն Ֆռանգաց առին զՏռապաւլիս[310] ի յանաւրինաց:*
1110	ՌԵԺԲ 1112	ՇՕԹ 559	**Մեռաւ Մանուչէ ամիրայն Անւոյ**[311]: *(Մ1899, Հ3) Ձաւրքն Ֆռանգաց առին զՊէրուբ եւ*

			զՍայիտէ[312]*:*
1111	ՌԵԺԳ 1113	ՇԿ 560	*(Լատ. հր.) Փառաւոր եւ բարեպաշտ իշխանն Գող Վասիլ, զտէրն բազում գաւառաց, փոխեցաւ ի Քրիստոս*[313]*:*
1112	ՌԵԺԴ 1114	ՇԿԱ 561	
1113	ՌԵԺԵ 1115	ՇԿԲ 562	Վախճանեցաւ տէր Բարսիղ հայրապետն Հայոց, եւ յաջորդէ զաշտիճանն տէր Գրիգորիս մեծաշուք պատուով նստեալ յաթոռ վիճակի սրբոյն Գրիգորի Հայաստանեայցս լուսաւորչի, որ յազգէ նորուն հարազատութեան ճանաչի[314]: Եւ յաղագս աստուածընկալ եւ հոգընկալ շնորհի ընկալելոյ եւ սրբական եւ մաքրափայլ վարուց պատուեալ փառաւորութեամբ, ոչ միայն ի մերազնեայ ա-րանց, այլ եւ յաւտարասեռ թագաւորաց եւ իշխա-նաց, մանաւանդ ի Հռովմայեցւոց թագաւորացն եւ պատրիարգացն: Սա չոգաւ ի քաղաքն սուրբ յերուսաղէմ եւ անդ տեսեալ եւ երկրպագեալ տե-ղեացն սրբութեան, ուր Աստուածն մարդացաւ: Հաղորդ եղեւ չարչարանացն Քրիստոսի, զի եւ փառացն ակն ունիցի կցորդել: Եւ անդ ծանու-ցեալ եւ իմացեալ զառատահոս ծաւալումն աս-տուածային շնորհին ի վերայ հայրապետին, ազգն Հռովմայեցւոց՝ իշխողք աշխարհացն, որ Փռանգք կոչին, եւ ընդ վայելչազգեաց եւ ընդ պատշաճագեղ տեսիլ մարմնոյն, ծանեան եւ զհոգւոյն գեղեցկութիւնն եւ ի բանս հաւատոյ զճշմարտութիւն ամենեւիմբ, զոր պայծառ եւ կանոնական կարգաւ, եւ քանոնով վարդապե-տական ճոխութեամբ բարբառէր: Ուրախացան հաճելութեամբ եւ առաւել սէր հաստատեցին ընդ հայրապետին եւ ընդ ազգս մեր, եւ ամենայն այսպէս տեսչութեամբ Աստուծոյ նախախնամի, զոր ոչ մերժէ Տէր զժողովուրդ իւր, զոր առ անզգամս ժողովրդոց ասէ սաղմոսերգն՝ հան-դերձ հետագայ բանիւքն: Բայց վասն զի զսկիզբն ամաց եւ զյաջորդել առաջնորդութեան, կամիմք տակաւին նշանակել, եւ այսպիսի յաջողուածք եւ այլ բարեբախ-տութիւնք եւ գործք գործելիք զկնի ամաց

			աւրստաւրէ յաւելաւ, այնր աղագաւ աստանաւր թողաք զայլոցն պատմութիւն, զորս եթե արժանի լինիմք յիւրում տեղւոջ գրեսցուք: Եւ աստանաւր զայսոսիկ ծանուսցուք մերոյ հրամանատուիդ եւ պատուասիրի[315]: Ի նոյն թուականին ՇԿԲ (1113), յորում վախճանեցաւ Բարսիլիոս կաթողիկոս, փոխի մահուամբ առ Տէր, Գէորգ վարդապետն երանելի, անուանեալ Մեղրիկ: Ի սմին ամի եւ արին Հռովմայեցւոց Տանգրի, որ ունէր զԱնտիոքացւոց քաղաքն՝ հանդերձ այլովք եւս բազմաւք քաղաքաւք եւ գաւառաւք, այր աստուածասէր եւ բարի, մեռանի մահու դեղովք ի պատրիարգէն իւրեանց, ի նմին յԱնտիոք քաղաքի: Ի նոյն ամի ի պահս Քառասնորդաց սուրբ պասեքին, ի հինգերորդում շաբաթուն չորեքշաբաթի աւուրն, յորում գոյացան լուսաւորքդ, խաւարեցաւ արեգակն: Տէր Գրիգորիս (կթղ.) ամս ԾԳ (53)[316]: *(Մ1899) Աստ ի վախճանելն տեառն Բարսղի եւ ի նստիլն տեառն Գրիգորիսի տղայ հասակաւ՝ ժե (15) ամաց յաթոռ հայրապետական, Դաւիթ անուն ոմն եպիսկոպոս յաթոռն Աղթամարայ՝ արհամարհէ զտղայութիւնն Գրիգորիսի եւ ապըստամբեալ նստի կաթուղիկոս՝ հաւանեցուցեալ ինքեան եւ զաթոռն Սիւնեաց եւ զԹադէոսի առաքելոյն՝ տարի մի, եւ յետոյ դարձան նոքա ի հնազանդութիւն մեծ աթոռոյն, եւ Աղթամար մնաց յիւր ապստամբութիւնն:* *Ի սոյն ամի ի ՇԿԲ (1113) թվին կործանեցան բազում բերդեր եւ քաղաք եւ գիւղք եւ վանորայք եւ Մարաշ հիմն ի վեր տապալեցաւ եւ շարժեցաւ ի Մօսլայ մինչեւ յՈւրհայ: Եկն եւ ի գարունն մարախ յոյժ եւ սաստիկ:* *(Մ1899) Հանգեաւ ի Քրիստոս բարեպաշտ իշխանն Գող[317] տէրն Քեսնոյ, Բեհեսնոյ, Մարշայ, Ռապնայ, Փարզմանայ, Հռոմկլայիին, Մասրոյ[318] եւ այլ գաւառաց:* *Մեռաւ եւ յայսմ ամի Տանգրի՝ տէրն Անտիոքու եւ*

			էառ զիշխանութիւնն Ռուճելն: *(Մ1897, Մ5596, Ե1221) Մերժեցան ի հայրենեաց որդիքն Կիւրիկէի[319]:*
1114	ՌԵԺԶ 1116	ՇԿԳ 563	*(Մ1899) Ժողովեցան խորդք եւ արագիլք ի դաշտն Ամթայ՝ ի տեղին որ կոչի Թըլխըմօ, անթիւ բազմութեամբ: եւ ապա յիւրաքանչիւրոցն է (7), է (7) դեսպան արձակեցին առ միմեանս՝ զաւուրս Գ (3) եւ ապա բախեցին զմիմեանս մեծապէս ճչիւք, եւ կռուեցան յԳ (3) ժամէ աւուրն՝ մինչեւ ց'ինն ժամն, եւ անկան յերկուց կողմանցն բազմօք յոյժ, եւ պարտեցան արագիլքն եւ փախեան՝ եւ խաղաղացաւ պատերազմն՝ եւ զպատճառն գիտէ Արարիչն[320]:*
1115	ՌԵԺԷ 1117	ՇԿԴ 564	*(Մ1899) Ի ՇԿԴ (1115) թվին շինեցին քրիստոնեայք զՔարաք եւ զՇօպագ[321]:*
1116	ՌԵԺԸ 1118	ՇԿԵ 565	*(Մ1899) Ի ՇԿԵ (1116) թվին մեռաւ Պաղտինն՝ թագաւորն Երուսաղէմի: եւ երկրորդ թագաւոր եկաց միւս այլ Պաղտինն տ(ը) Պուրք ազգական նոցա՝ ամս ԺԵ (15):*
1117	ՌԵԺԹ 1119	ՇԿԶ 566	
1118	ՌԵԻ 1120	ՇԿԷ 567	**Մեռաւ Ալեքսն եւ թագաւորէ որդի նորա Կալաւժանն:** **Կալաւժանն** («ի Կոստանդնուպալիս») **ամս ԺԳ** (13)**:** *(Մ1899) Մեռաւ Ալէքսն եւ թագաւորեաց որդի նորա Պէրփէրօժանն՝ ամս ԺԶ (16)[322]:* *(Մ1897) Դաւիթ թագաւորն Ափղազաց զաւրացեալ խաչիւն Քրիստոսի, հար զէլխազի եւ զՄլըք Տուղրիլն[323]:*
1119	ՌԵԻԱ 1121	ՇԿԸ 568	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, ճէլայզ երկրորդ ամիսս Ժ (10): Կալիստոս երկրորդ ամս Ե (5):* *(Մ1899, Մ1486) ի ՇԿԸ (1119) թվին էառ Տաճիկն եւ Թուրքն զՈւռհայ քաղաք ի Ֆռանգաց՝ եւ կոտորեցին, ԼՌ (30 000) սպանին, եւ ԺԶՌ (16 000) գերեցին եւ զլիով զրոյցն յայլոց պատմողաց տեղեկանաս:* *Դարձեալ ի սոյն ամին ի ՇԿԸ (1119) թվին եղեւ սաստիկ պատերազմ ի Կարմիրովիտ եւ պարտեալ զօրքն Փռանգաց եւ Հայոց վասն անօրէ-*

			նութեան իշխանաց եւ դատաւորաց, եւ Ռուճէլ տէրն Անտաքու բազում զօրօք կոտորեցաւ: Եւ յառաջ քան զայս պատերազմս սիւնք հրեղէնք երեւեցան յերկինս ի հիւսիսոյ եւ յարեւելից՝ յերեկօրեայ մինչեւ ցառաւօտն, եւ երկիր ամենայն իբրեւ խանձիւ բորբոքէր: *(Հ3) Մեռաւ Պաղտինն առաջին թագաւորն յԵրուսաղէմի:*
1120	ՌՃԻԲ 1122	ՇԿԹ 569	**Դաւիթ թագաւորն Վրաց եհար զԵլխազի եւ զՄլոքն:**
1121	ՌՃԻԳ 1123	ՇՀ 570	
1122	ՌՃԻԴ 1124	ՇՀԱ 571	**Դաւիթ թագաւորն եառ զՏփխիս:** *(Մ1899) Շարժն տարաւ զԽորասան յաւուր ուրբաթու եւ փլաւ մեծ մսքիթն եւ կորոյս ԸՌ (8 000) այր եւ կին:*
1123	ՌՃԻԵ 1125	ՇՀԲ 572	
1124	ՌՃԻԶ 1126	ՇՀԳ 573	**Ի բազում հինահարութեանց եւ իսպառսպուռ ջնջելոյ, ասպատակ արծակել յաշխարհ մեր, երբեմն ի Վրաց[324], երբեմն ի Սկիւթականաց, անհնարին նեղութեամբ տարակուսեալ տառապեալ բնակիչք քաղաքիս Անւոյ եւ Շիրակ գաւառի, խորհեցան ելս գտանել մրրկին, ձեռս տալոյ յարքայն Վրաց ի Դաւիթ, նենգեցին ամիրային Ապլսուարայ՝ որդւոյ Մանուչէի, որ տիրէր քաղաքին յետ հաւրն մահու. առնլով զթագաւորն ի ներքս՝ բանալով զդրունս քաղաքին, որ ընդ մտանելն առ ժամայն, եղեւ վնաս արեան եւ ոչ միոյ շնչոյ: Բայց կալեալ զԱպլսուար որդւովքն, ընդ իւր խաղացոյց յերկիրն Վրաց, ի մահարար տեղւոջ բնակեցուցեալ զնոսա, ուր երկուս յորդւոցն հանդերձ հարբն վճարեցին զկենցաղս[325]: Նոյնպէս եւ քաջն Դաւիթ մեռանի անդէն, եւ թագաւորէ աշխարհին Վրաց որդի նորա Դեմետրէ, գովեալ յամենայն մանկական արութիւնս: Իսկ Փատլուն՝ անդրանիկն Ապլսուարայ, գնացեալ յառաջագոյն ամաւք առ ամիրապետն ի Խորասան, յորժամ լուաւ զայսպիսի լուր զհաւրէն եւ զտեղեացս, փութացաւ գալ յերկիրս մեր, եւ շուրջ զքաղաքաւս զիշխողս իւրաքանչիւր տե-**

			ղեաց ի բանի արարեալ պաշարեաց զսա: Վասն որոյ եւ զամն զայն ողջոյն աւրըստաւրէ սաստկացան հարուածք սովոյն: Եւ բնակիչք սորա ի կողմունս կողմունս ելս առնելով գիշերի, յորոց վերայ անկեալ դարանեալքն՝ զարս կոտորէին, որոց արեամբ եւ ոսկերաւք ծածկեցաւ երկիրս, եւ զկանայս եւ զմանկունս վաճառակուր առնէին: Եւ թէպէտ եւ տեղակալք գային յաշխարհէն Վրաց, երբեք երբեք արք ընտիրք որպէս եւ անուանին քաջագաւտիս Իւանէ՝ որդի Ապուլեթի, որ բազում արութիւնս ցուցեալ՝ զասպատակս կոտորէր: Եւ ի զաւրաժողով լինել ի վերայ քաղաքիս Փատլնոյ բազում հեծելովք, առ ոչինչ համարեալ զեկեալս ի պարտութիւն, այլ սակաւ արամբք պատճառ եղեւ փրկութեան քաղաքիս մարտակցութեամբ բնակչաց սորա[326]: Եւ յայսմ պատերազմի առաքինացաւ կին մի ի վերայ պարսպացս, առնացի ստացեալ սիրտ հալածականս առնէր քարամբք զմարտուցեալսն, յելանել ընդ պատուարն՝ առ ոչինչ համարեալ զխոցուածս նետիցն, զոր վիրաւորէին արտաքուստ, եւ էր անուն նորա ըստ արժանի արագութեան նորա, Այծեամն կոչեցեալ[327]: Սակայն վասն զի թագաւորութիւնն Վրաց չէր հաստատեալ բովանդակ, եւ սովն եւ մարդախանձութիւնն[328] յոլովացաւ, ապա հարկեցան տալ անդրէն առ Փատլուն, զսա դաշինս երդմանց պահանջեալ ի նմանէ ՝ չառնուլ վրէժս ի նենգչաց հաւր նորա եւ եղբարց, զոր թէպէտ եւ յանձն առնոյր, այլ յետ զպարապ առնլոյ, իւիք իւիք հնարիւ առ վրէժս հասուցեալ նոցա զհատուցումն, յորոյ իշխանակալութեանն թէպէտ եւ խաղաղանայր գաւառս ի սովորական հինից, այլ յաղագս վերագրեալ նեղութեանց եւ վասն հարկապահանջ յափշտակութեանց, եկն եհաս ի վերայ մեր վերջին աղքատութիւն եւ տառապանք անհնարինք, որ յառաջագոյն ժամանակաւք ունէր զաշխարհս Հայոց: Եւ աստանաւր յաւելաւ յաճախապէս, մի զհետ միոյ մինչեւ յա-

			ուրուս յայսոսիկ յորում եմքս: **Բայց սրբազան հայրապետն եւ առաջնորդն հաւատոյ տէր Գրիգորիս, վասն զի ուխտ սիրոյ ունէր առ Ապլսուար վասն իւր սեփական աթոռոյս, գալ այսրէն նորա յաւժար կամակցութեամբ, յորժամ լուաւ զհամբաւս զայս, առաւել զայրացաւ տրտմագին ցասմամբ առ գործողս իրին[329]: Եւ այս ամենայն լինի յետս ընդդէմ եւ անուղայ իմացուածք ի յառաւելութենէ մեղաց, զի իբրեւ տուն դառնացողաց արարաք զանձինս մեր եւ իբրեւ զմոռացասէրն Յակովբ յաւելաք մեղս յանաւրէնութիւնս, կաշառաւք մարգարէանամք, եւ պակասեցան յունայնութեան աւուրք մեր, զի թողաք զայն որ ծնաւ զմեզ, եւ նա ետես սրտմտեցաւ նախանձեցաւ եւ դարձոյց զերեսս իւր՝ սպառնացեալ զկծեցուցանել զմեզ անպիտան եւ անմիտ ազգաւ, եւ արբուցանել զբաժակ բարկութեան, եւ պահել զմրուրն, դարձեալ արբուցանել, եթէ մնայցեմք ի նմին անզղջութեան:** **Իսկ մեք ի կարգ շարադրութեանն գնասցուք, զի զանձնէ ամբաստանեմ[330]:** *(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Ինաւսանդ երկրորդ ամս ԺԳ (13):* *(Մ1899) Ի ՇՀԳ (1124) ամին էառ Դաւիթ զԳագ եւ զՏէրունականն: Ի սոյն ամի ի ՇՀԳ (1124) թվին եւ զԱնի էառ, եւ ինքն մեռանի, եւ որդի նորա Դեմետր թագաւորէ:* *(Հ3) Զաւրքն Ֆռանգաց առին զՍուրն յանաւրինաց:*
1125	ՌՃԻԷ 1127	ՇՀԴ 574	*(Մ1486, Մ1899) Ի ՇՀ (1121) թվին վարդապետն Կիրակոս կանոնադիր Դրազարկուն հանգեաւ ի Քրիստոս: Ի սոյն ամի մեռաւ եւ պարոն Թորոս եւ թաղեցաւ ի Դրազարկն, եւ էառ զիշխանութիւն նորա Լեւոն[331] եղբայրն իւր, վասն զի զԿոստանդին որդին նորա կալան ոմանք ամբարիշտք՝ եւ մահացու դեղոք հանին ի կենաց. եւ կեցեալ Լեւոն պարոն ամս ԺԲ (12): Այս պարոն Թորոս, որ մեռաւ առաջինն է եւ ոչ վերջին՝ որ էր որդի եղբօր սորա՝ Լեւոնի, զոր տարաւ*

			Պէռփէռօժանն գերի, զԼեւոն եւ զերկու որդիս նորա՝ զԹորոս եւ զՌուբեն: Իսկ այս Թորոսս որդի է Կոստանդեայ որդւոյ առաջնոյն Ռուբենի:
1126	ՌՃԻԸ 1128	ՇՀԵ 575	*(Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Կայսր եկաց Հռոմայեցոց Կլաւդայրն ամս Թ (9)[332]:*
1127	ՌՃԻԹ 1129	ՇՀԶ 576	
1128	ՌՃԼ 1130	ՇՀԷ 577	*(Մ1899) Ի ՇՀԷ (1128) թվին արքայն Դեմետր եհար զխարա Սնգուռն աթաբակի Նորիբերդին բազում զօրօք: Եւ ի սոյն ամի Ապուլէթ եւ Իվանէ որդի նորա զԴմանիս առին եւ յայսմ ամի առին զխունան Իւանէ եւ Սմբատ:*
1129	ՌՃԼԱ 1131	ՇՀԸ 578	**Փոխեցաւ ի Քրիստոս մահուամբ մեծ վարդապետն՝ Սարկաւագն ի Հաղբատ:** *(Մ1899) Ի ՇՀԸ (1129) թվին փոխի յաշխարհէս մեծ վարդապետն Սարգիս՝ որ է ի Փառիսոսոյ՝ որդի քահանայի միոյ՝ եւ աշակերտ սորա Երեմիա, որ եւ յասելն վարդապետին թէ՝ լուռ լեր զամս Գ (3) լուռ եկաց՝ ընդ միտս եւ ընդ Աստուծոյ խօսէր, որ եւ Անձրեւ կոչեցաւ: Եւ ընկերք սորա՝ տէր Խաչատուր եւ Գրիգոր եւ Յովաննէս եւ Սամուէլ ամենքեան սոքա Անեցիք[333]:* *(Մ1486) ԶԼեւոնն խանգրեաց տէրն Մարաշայ Պաղտինն եւ յետ երից ամաց տէրն Անտիոքայ Պետեւինն կալաւ զԼեւոնն: Իսկ որդիքն Լեւոնի յարեան հակառակ միմեանց, եւ կալեալ զհարճեղբայրն իւրեանց զԿոստանդին՝ խաւարեցուցին զաչսն: Իսկ Պէտեւինն յետ երկուց ամսոց էառ զորդիսն Լեւոնի պատանդ՝ մինչեւ ետուն զՄըսիս եւ զԱտանայ եւ զՍարուանդիքարն եւ ԿՌ (60 000) դեկան գին եւ ապա արձակեաց զԼեւոն:* *(Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Պարոն եկաց Հայոց Լեւոն որդի Կոստանտեա եւ եղբայր Թորոսի՝ ամս Դ (4):*
1130	ՌՃԼԲ 1132	ՇՀԹ 579	**Փլաւ Ամենափրկիչն յԱնի** *(Մ1897, Հայրապետ վրդ.) շինեալն յԱպլղարիփ մարզպանէն* **ի մարերի ժԵ** (15) **յաւուր հինգշաբթի:** *(Մ1899) Ի ՇՀԹ (1130) թվին էառ Լեւոն զքաղաքսն Կիլիկիոյ զՄսիս, զԱտանայ, եւ զՏարսուս*

			եւ քանզի տէր ոչ գոյր Անտիոքայ՝ յարեան Ֆռանկք ի վերայ նորա անձնադիր լինելով տապալեցին զերկիր: Եւ ի ՇՁ (1131) ամին էառ Լեւոն զՔարն Սարուանդի եւ եղեւ խռովութիւն ի մէջ Ֆռանգին եւ Լեւոնի: Իսկ Լեւոն եւ իւր քուերորդին եղեն ի մի կողմն, եւ թագաւորն եւ զօրքն Անտիոքայ ի մի կողմն, եւ աւերեցին զաշխարհն Կիլիկիոյ. եւ զկնի նոցա անօրէն ազգքն Իսմայէլի եկին եւ գերեցին զազգն քրիստոնէից անհամար բազմութեամբ եւ կրկին աւերեցաւ աշխարհն Կիլիկիոյ:
1131	ՌՃԼԳ 1133	ՇՁ 580	**Ննջեաց յայսմ ամի լուսաւորիչ սուրբ վարդապետն Դաւիթ Ալաւկայ որդի:** *(Մ1899) Ի ՇՁ (1131) Կուզն ամիրայ եհար զԱպուլէթ եւ զԻւանէ:* *Ի ՇՁ (1131) թվին մեռաւ թագաւորն Երուսաղէմի Պաղտինն տ(ը) Պուրք: Եւ երրորդ թագաւոր եկաց՝ Ֆուքն, իւր փեսայն՝ ամս ԺԲ (12)[334]:*
1132	ՌՃԼԴ 1134	ՇՁԱ 581	**Մեռաւ Փատլուն ի պատերազմի, տիրեալ ամս է** (7)**: Եւ յետ նորա եկաց եղբայր նորա՝ Մահմուտն[335]:** **Մանիլ** («ի Կոստանդնուպալիս») **ամս ԽԶ** (46)**:** *(Մ1899) Ի ՇՁԱ (1132) թվին մեռաւ Լեւոնն եւ կրսեր որդի նորա Ռուբէն ի Կոստանդնուպոլիս, եւ մնաց Թորոսն անդ, զոր յետ Բ (2) ամաց եկն եւ էառ զԱմուտայն եւ զԱռիւծ բերդ եւ զՎահկայն եւ նովաւ զբոլոր աշխարհն Կիլիկիոյ. զՄսիս եւ զԱտանայ եւ զՏարսուս եւ եհաս մինչեւ ի գահն Սաւրիոյ եւ մինչեւ ի ծովն մեծ՝ ծագէ ի ծագ տիրեալ:*
1133	ՌՃԼԵ 1135	ՇՁԲ 582	**Արեգական խաւարեցաւ յաւգոստոս Բ** (2)**, ի չորեքշաբաթուջ աւուր, ի սկսման յեւթն ժամէն, մինչեւ ցհասարակ աւուր Թ** (9) **ժամուն:** *(Մ1486) Եկ Պէռփէռօժէնն եւ էառ զԿիլիկիայ լերամբք եւ դաշտօք եւ ամրոցօք. եւ զԼեւոնն՝ կնաւ եւ Բ (2) որդւովք Թորոսիւ եւ Ռուբենիւ կապեաց եւ առաքեաց ի Կոստանդնուպոլիս, իսկ Բ (2) որդիք նորա՝ Ստեֆանէ եւ Մլէհն՝ ոչ պատահեցան յընդբռնել հօրն իւրեանց քանզի*

			առ կոմսն Ուռհայու էին գնացեալ, որ էր նոցա քեռի: Իսկ կայսրն զբոլոր Կիլիկիա էառ, եւ զՀայոց զօրսն ի սպառսպուռ ջնջեաց: *(Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Կայսրն Յունաց կալաւ զպարոն Հայոց Լեւոն, եւ դարձեալ տիրեցին Կիլիկիոյ Յոյնք՝ ամս ԺԱ (11)[336]:*
1134	ՌՃԼԶ 1136	ՇՁԳ 583	*(Մ1899) Ի ՇՁԳ (1134) թվին Պարոն Թորոսն՝ տէրն Կիլիկիոյ՝ զերծեալ ի գերութենէ զկնի մահուան հօր իւրոյ Լեւոնի՝ զոր գերեալ թագաւորն Ստամբօլայ՝ զի խափանեսցեն զառաջանալն նոցա, եւ նա զերծեալ եկն հետեւակ առ Աթանաս պատրիարգն Յակոբկաց եւ նա ետ նմա զձին իւր՝ եւ ԲԺ (12) այր՝ որք ածին զնա ի գիշերի ի բերդն՝ զոր Ամուդայն կոչեն, եւ այնու դարձեալ տիրեաց բոլոր երկրին[337]: Եւ ոմանք ասեն թէ ի ՇՁԳ (1134) ամին եկն Պէռփէռօժանն ի Կիլիկիա եւ մեռաւ յԱնաւարզայ՝ յիւրոյ դեղեալ նետէն՝ որ վասն որսոյ խոցեալ եղեւ՝ եւ թագաւորեաց Մանուիլ որդի նորա ընդ նորա:* *(Մ1468) Ի սոյն ամի եկն յաղթող եւ քաջ զօրականն Քրիստոսի Թորոս՝ որդի Լեւոնի, եւ զԿիլիկիա բոլոր էառ, որպէս վերոյ գրեցաք: Բայց ասեն ոմանք, թէ նաւով յԱնտիոք ել եւ եկն ի Կիլիկիայ եգիտ զեղբայրն իւր զՍտէֆանէն՝ եւ հնարիւք նախ զԱմուտայն առին, եւ ապա նովաւ այլոցն տիրեալ: Իսկ այլք ասեն՝ թէ մինչ ի Կոստանդնուպօլիս էր՝ դշխոյ կին մի սիրեաց զնա՝ եւ ետ նմա գանձս բազումս, եւ Թորոս զգանձն հետ բերեալ գնաց ի լեառն Վահկայինն՝ եւ յայտնեաց զինքն քահանայի միոյ. եւ քահանայն ուրախացեալ գործ եդ նմա հովուի. եւ ի Հայոց որք մնացեալք էին եւ ի լերինն բնակէին՝ պատմեաց նոցա քահանայն եւ փութով միաբանեցան եւ ի վեր առին զԹորոսն՝ եւ նախ Վահկայինն տիրեաց՝ եւ ապա այլ բոլոր Կիլիկիոյ՝ եւ զիշխանութիւնն Յունաց էառ՝ եւ զնոցին զօրսն իսպառ վանեաց:*
1135	ՌՃԼԷ 1137	ՇՁԴ 584	*(Մ1486, Մ1899) Ի ՇՁԴ (1135) յազգէն յԱլեայ Բ (2) արք՝ անուն միոյն Աբդլայ եւ միւսոյն Մա-*

			մունի, որդիք Աբդլայ խալիֆային Եգիպտոսի, որք յետ մահուան հօրն՝ փախեան յաւագ եղբօրէն իւրեանց եւ անցին յաշխարհն Ափրիկոյ՝ եւ Բ (2) գրովքն զոր ունէին ընդ ինքեանս, որ մինն ուսուցանէր զարուեստ քեմիային եւ միւսն զտլսմաթին[338] եւ զսուտ հրաշից կախարդութեան եւ նոքօք հարստացան եւ աճեցին եւ հաւանեցուցին ինքեանց եւ օրինացն Մահմետի զվայրենաբարոյ եւ զանարուեստ եւ զաղքատ եւ զանթագաւոր եւ զբարբարոս ազգսն եւ առին ի նոցանէ կանայս եւ փարթամացուցին զերկիրն, եւ եդին յորդոց իւրեանց իշխանս եւ խալիֆայս այլեւ հանէին դիւթութեամբ ի գերեզմանաց զդեւս ի կերպարանս մեռելոց նոցա, որք ասէին՝ «այդ է հաւատ եւ աստուածպաշտութիւն, երանելիք էք, թէ առնիցէք զոր դոքա ասեն, եւ յետ մահու անեզրապէս թագաւորէք»: Եւ նոքա ափշեալ զարմանային եւ հաւատային նոցա՝ եւ նոքա առեալ թլփատէին զնոսա: Վասն որոյ՝ զօրացեալք ի բազմութիւն յոյժ տիրեցին աշխարհաց բազմաց՝ շինելով բերդերս պղընձիս եւ երկաթիս. եւ եղեն մեծ եւ հզօր թագաւորութիւն: Առին զՍպանիայ եւ հարկատու արարին մեծ աւարաւ եւ գերութեամբ. եւ պաշարեալ զմեծն Հռոմ եւ մերձ էին յառնուլ, վասն որոյ Ֆռանցէզքն աղաչեցին զԱլամանսն գալ եւ թափել զնոսա. որք եկեալ հարին զԱբդլմունիսն. եւ վասն այնորիկ շահեցան Ալամանքն ի Ֆրանցէզացն զօնբրուրութիւն: *(Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Կայսր եկաց Հռոմայեցոց Քուռաթ երկրորդն ամս Ա (1)[339]:*
1136	ՌՃԼԸ 1138	ՇՁԵ 585	*(Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Կայսր եկաց Հռոմայեցոց Ֆրտրիկն ամս Ժ (10)[340]:*
1137	ՌՃԼԹ 1139	ՇՁԶ 586	*(Մ8481) Ի ՇՁԶ (1136) թուականին կալաւ Դեմետրէ զԱպուլէթ եւ զԻւանէ[341]:*
1138	ՌՃԽ 1140	ՇՁԷ 587	
1139	ՌՃԽԱ 1141	ՇՁԸ 588	**Շարժմամբ կործանեցաւ Գանձակ քաղաք:** *(Մ1899) Ի ՇՁԸ թվին՝ ի ժէ (17) արեգ ամսոյ, շարժմամբ կործանեցաւ Գանձակ քաղաք եւ*

			սուրբ վարդապետքն Գրիգոր եւ Սարգիս ընկղմեցան, եւ եկեղեցին Հաղբատայ փլուզանի: *Յայսմ ամի Խարա Սնգուռն զԻւանէ եհար ի Գանչէնքն[342]:* *(Մ1897, Հայրապետ վրդ.) Շարժն սաստիկ, որ կործանեաց զԳանձակ շահաստան, յորում եւ փլաւ սուրբ կաթուղիկէն Հաղբատ, այլ եւ մեռանին մին հարուածոյ Բ (2) սիւնքն հաւատոյ Գրիգոր եւ Սարգիս վարդապետք, որդի Թոքակերի եւ Կորխեցին[343] կոչեցեալ:*
1140	ՌԵԽԲ 1142	ՇՁԹ 589	
1141	ՌԵԽԳ 1143	ՇՂ 590	
1142	ՌԵԽԴ 1144	ՇՂԱ 591	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Սելեստինոս երկրորդ ամիսս Ե (5):*
1143	ՌԵԽԵ 1145	ՇՂԲ 592	*(Մ1898) Պապ եկաց Ի Հռոմ, Լիւսիոս երրորդ ամս Բ (2):* *(Մ1899) Ի ՇՂԲ (1143) ամին Զօլի առնու զամուրսն Խաչենոյ խաբէութեամբ եւ երդմամբ յինքն յանկուցանելով զսիրտս իշխանացն, եւ մաշեաց զերկիրն սովով եւ սրով եւ գերութեամբ, ընդ որս քահանայք եւ սուրբ կտակարանք եւ կրօնաւորք առ ոտս անկան անօրինաց:* *Ի ՇՂԲ (1143) թվին թագաւորն Երուսաղէմի Ֆուքն՝ մեռաւ[344]: Եւ չորրորդ թագաւոր եկաց Պաղտինն՝ որդի նորա՝ ամս Ի (20):*
1144	ՌԵԽԶ 1146	ՇՂԳ 593	*(Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Պարոն եկաց Հայոց ի Կիլիկիա Թորոս որդի Լեւոնի, զերծեալ ի բանտէն Կոստանտինուպաւլսու՝ ամս ԺԳ (13)[345]:*
1145	ՌԵԽԷ 1147	ՇՂԴ 594	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Որոգինէս երրորդ ազգաւ Բիզան ամս Ը (8):* *(Մ1899) Ի ՇՂԴ (1145) թվին՝ սպան զմեծն Իւանէ Դեմետրէ թագաւորն: Եւ ի սոյն ամի եկն Զօլի ամիրապետն եւ պաշարեաց զՏայուշ՝ զաւուրս Խ (40) եւ էառ զնա՝ հանելով զթագաւորն Աբաս առանց վնաս առնելոյ[346]:* *(Հ3) Ըռե տը Ֆրանցն պաշարեաց զԴամասկոս:*
1146	ՌԵԽԸ 1148	ՇՂԵ 595	*(Մ1899) Ի ՇՂԵ (1146) թվին, եղեւ երկրորդ Բայսաճն Ֆռանկաց. յորս եկն՝ Քուռաթ ըմբրուրն Ալամնաց. եւ Լօիզ ռե տէ Ֆռանսն[347]:* *(Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Կայսր եկաց Հռո-*

			մայեցոց Հեռի Ե (5)-երորդն ամս Ե (5)[348]:
1147	ՌՃԽԹ 1149	ՇՂԶ 596	*(Մ1486) Ի ՇՂԶ (1147) թվին ի սադրելոյ Մանուիլ կայսերն, եկն սուլտանն յԻկոնիոյ, Խլիճ Ասլանն յաշխարհն Կիլիկիոյ՝ զի զԹորոսն կալցէ՝ եւ իջեալ ի դաշտին Անաւարզայ՝ եւ պաշարեաց զԹիլն Համտնոյ: Իսկ բարձրեալն Աստուած շարժեալ պատուհասեաց զնա՝ առաքելով ճանճ եւ պիծակ անդ. եւ ժանդախտիւք չարչարեաց զնա եւ զզօրս իւր. եւ յայնժամ պարոն Թորոսն ել ի Խաւատանէքն ի դուրս՝ եւ զսուլտանին երկիրն զՀռոմք աւերեաց՝ եւ բազում աւարս եւ գերիս առեալ դարձաւ՝ եւ Խլիճ Ասլանայ պարգեւս առաքեաց յերկիրն իւր ընդ որոյ գործն զարհուրեցաւ՝ եւ ի ցաւոցն վտանգեալ՝ ել գնաց յաշխարհն՝ եւ սիրով կապեցաւ ընդ Թորոսն:* *Ի ՇՂԶ (1147) թվին Ըմբրուրն եւ Ռէ տէ Ֆրանսն պաշարեցին զԴամասկոս՝ որ է Դըմըշխ, եւ ոչ կարացին առնուլ:*
1148	ՌՃՁ 1150	ՇՂԷ 597	**Առ այսու թուականաւս ազգն Հռոմայեցւոց զաւրաժողով լեալ բիւրք բիւրուց, դիմեցին յայսկոյս յովկիանոսի ընդ նոյնն, ընդ Թիրակ, ըստ առաջին անցիցն, զոր նշանակեցաք ի ՇԽԶ** (1097) **թուականին, եւ մոռացան զանհնարին նեղութիւնսն, զոր եցոյց որդին բելիարայ՝ Ալեքսն անդանաւր այնոցիկ, որք ոչ իմացան զխարդախ խաբէութիւն նորա՝ համարելով զնա հաւատակից եւ պաշտաւնեայ Քրիստոսի, վասն այսորիկ եւ սոքա աստանաւր, զի չյիշեցին զանցս աղետիցն, ինքեանք առաւել խաբեալք եւ պատրեալք ի նորին թոռնէն, որոյ անունն ըստ նեռինն, Դերաքրիստոս կոչի, սոյնպէս եւ սորայս տարորոշ եւ հեռի ամենայնիւ ի գործս եւ ի կրաւնս Եմմանուէլին, Մանուէլ անուանի:** *(Մ1486) Ի ՇՂԷ (1148) թվին մեռաւ սուլտանն Խորասանայ Մասուտն եւ իւրոյ տղային եդ աթապակ՝ ամիրայ մի էլտկուզ անուն, որ եւ սպանեալ զտղայն՝ ինքն եղեւ սուլտան, եւ ի նմանէ կոչեցան Աթաբակեանք՝ յորոյ անունն է եւ դեկան աթաբակի: Եւ յայսմ ամի էառ Ստեֆանէ՝*	

			հայրն Լեւոն թագաւորի, զՄարաշ:
1149	ՌճՁԱ 1151	ՇՂԸ 598	*(Մ1486) Ճիլարտն՝ տէրն Սայիտոյ՝ գաղտ կոտորէր զքրիստոնեայսն՝ յորոց ըմբռնեալ սպանաւ գլուխն չարեաց:*
1150	ՌճՁԲ 1152	ՇՂԹ 599	*(Վ1253) Սարգիս վարդապետն զԿաթողիկէսն մեկնէր[349]:*
1151	ՌճՁԳ 1153	Ո 600	*(Մ1899) Ի ՀԵ (1151) թվին էառ պարոն Թորոսն դարձեալ զԱնաւարզայ եւ զԹիլն եւ զՄսիս՝ եւ զՏարսուս եւ հասեալ մինչեւ ի գահն Սօրիոյ[350] եւ բոլոր Կիլիկիոյ տիրապետեալ ծագէ ի ծագ: Եւ ի սոյն ամի շարժեցաւ բարկութեամբ պարոն Թորոս ի վերայ Յունաց եւ սպան ի նոցանէ ԺՌ (10 000) վասն Ստեֆանէի, որ կալեալ եղեւ ի Յունաց՝ եւ յեռանդեան կաթսայ արկեալ եղեւ: Իսկ Անդրոնիկոս երդնոյր, թէ «չեմ պատճառ սպանմանն, ասէ, Ստեֆանէի» եւ աղաչեաց զթագաւորն Երուսաղէմի եւ ետ նմա ոսկի բազում ի Կոստանդնուպօլսէ եւ նա արարեալ խաղաղութիւն ի մէջ նոցա:* *(Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Կայսր եկաց Հռոմայեցոց Ֆրտրիկն, որ խեղդեցաւ ի գետն Սելեւկիոյ, ամս ԼԹ (39)[351]:*
1152	ՌճՁԴ 1154	ՈԱ 601	
1153	ՌճՁԵ 1155	ՈԲ 602	*(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Անաստաս չորրորդ՝ ամս Ա (1):* *(Հ3) Ձաւրքն Ֆռանգաց առին զԱսխալան[352] ի Տաճկաց:*
1154	ՌճՁԶ 1156	ՈԳ 603	**Հարին զՍալդուխն Վիրք ի դուռնն Անւոյ եւ կալան զինքն եւս[353]:** *(Մ1898) Պապ եկաց Ն Հռոմ, Ադրիանա չորրորդ ազգաւ Ընկլեզ՝ ամս է (7):* *(Մ1486) Ի սոյն ամի ելեալ պարոն Թորոս ի Մարաշ եւ կոտորեաց անթիւ զՏաճիկսն:* *(Ե3701) Յայս յարկ նուիրանացն ասացեալ եղեւ ի տէր Բարսէղ եպիսկոպոսէ Դրազարկու, ճոն կոչեցելոյ, որ զՄարկոս աւետարանն մեկնեաց:*
1155	ՌճՁԷ 1157	ՈԴ 604	
1156	ՌճՁԸ 1158	ՈԵ 605	**Վախճանի Դեմետրէ Վրաց թագաւոր եւ թա-**

			գաւորէ որդի նորա՝ Դաւիթ, եւ յետ Բ (2) ամի եւ նա վախճանեալ, առնու զիշխանութիւնն եղբայր նորին Գուրգի:
1157	ՌԵԾԹ 1159	ՈՁ 606	*(Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Պարոն եկաց Հայոց Մլեհ, եղբայր Թորոսի՝ ամս է (7)[354]:* *(Մ1899) Ի ՈՁ (1157) թվին առաւ Ասխալան յանօրինաց:* *Ի ՈՁ (1157) թվականիս կրօնաւորեալ մեռաւ պարոն Թորոսն՝ եւ նստաւ յաթոռ նորին՝ Մլիէ եղբայրն իւր՝ ամս է (7): Եւ ի սոյն ամի պառակտեցան Տաճիկքն յերկուս ազգս. մինն կոչեցաւ Ռաֆթիք եւ միւսն Սուննիք եւ են հակառակ միմեանց:* *Եւ գիտել պարտ է վասն իշխանացն Ռուբենեանց, որք յետոյ թագաւորեցին ի Սիս, զի զանազան կերպիւ պատմեն վիպասանքն զժամանակն եւ զթիւ ամաց նոցա: Որոց առաջինն է Ռուբէն, որ ի ՇԻԵ (1076) թվին, ի սպանանելն Գագկայ՝ եկեալ ի գիւղն Կոռմօզօլօ՝ եւ առեալ զլեռնային կողմանսն՝ եւ զկնի սակաւ ամաց մեռանի. եւ որքանն չէ յայտ: Եւ զկնի Կոստանդին որդի նորա տիրէ Վահկային եւ այլոց բազմաց, մեռանի ի ՇԽԹ (1090) թվին ընդ ինքն եւ ընդ հայրն կացեալք ամս ԻԴ (24): Եւ յերկու որդւոցն Կոստանդեայ՝ նստի անդրանիկն Թորոս՝ պարոն՝ ամս ԻԹ (29) ընդարձակեալ զերկիրն՝ եւ շինեալ զԴրազարկն եւ զՄաշկեւորն եւ մեռանի ի ՇՀԸ (1129) թվին, եւ նստի պարոն՝ եղբայրն իւր Լեւոն ամս ԺԲ (12): Եւ սա էառ զբոլոր Կիլիկիա եւ տիրեալ ամենին եւ ի ՇՁԶ (1137) թվին ել Պէռփէռօժէն՝ եւ տարաւ զինքն Բ (2) որդով գերի, զմեծն՝ Թորոս եւ զՌուբէն: Եւ Լեւոն եւ Ռուբէն մեռանին ի Կոստանդնուպօլիս ի ՇՂ (1141) թվին, եւ զկնի Գ (3) ամաց ի ՇՂԳ (1144) թվին զերծանի մեծն Թորոս ի գերութենէ եւ գայ տիրէ բոլոր Կիլիկիոյ՝ եւ մասինն Սաւրիոյ՝ կացեալ պարոն ամս ԺԴ (14) մեռանի ի ՉԵՁ (1157) թվին, եւ նստի եղբայրն նորա Հարասիրտն Մլեհ՝ պարոն ամս է (7): Եւ ապա Ռուբէն՝*

			որդին Ստեֆանէի, նստի պարոն՝ ի ՈԺԳ (1164) թվին ամս ԻԲ (22) եւ ի ՁԵԼԵ (1186) թվին՝ մեռանի: Եւ նստի եղբայրն իւր Լեւոն Ժ (10) ամ՝ պարոն եւ ԻԲ (22) ամ եւս՝ թագաւոր, եւ զկնի այլքն կարգաւ եւ այս ըստ ոմանց պատ-մագրաց: *Իսկ մեք այսպէս ոչ եդաք զի ոչ յարմարէր ի շարս թագաւորացն Յունաց, զի Պէռիէռօժէն որ ի ՇՁԶ (1137) ասէ՝ թէ գերի տարաւ զԼեւոն, նա ի ՇՁ (1131) թվին մեռեալ է[355], կացեալ ամս ԺԳ (13): Վասն այն եւ ես փոխեցի ըստ այլ պատ-մագրաց՝ զի յարմարեսցին ընդ շարս թագաւո-րացն Յունաց: Զի ըստ այլոցն՝ Կոստանդին՝ որդին Ռուբէնի, մեռանի ի ՇՕԱ (1102) թվին, ընդ ինքն եւ ընդ հայրն կացեալք ամս ԻԶ (26): Եւ զկնի Թորոս ամս ԺԹ (19) մեռանի ի ՇԻ (1121) թվին: Եւ ապա Լեւոն ամս ԺԲ (12) եւ մեռանի ի ՇՁԱ (1132) թվին: Եւ զկնի Գ (3) ամաց ի ՇՁԳ (1134) Թորոս զերծեալ ի գերութենէ գայ տիրէ աշխարհին ամս ԻԴ (24) զոր յառաջն ԺԴ (14) ասացի եւ ապա մեռանի ի ՈՁ (1157) թվին: Եւ ապա Մլեհն ամս է (7) եւ ապա այլքն, եւ այսպէս յարմարի ընդ կարգս թագաւորացն:*
1158	ՌԵԿ 1160	ՈԷ 607	*(Մ1899) Իսկ ի ՈԷ (1158) ամին, այր ոմն էուբ անուն եւ եղբայր իւր Շիրաքօ՝ որդիք Սուլի-մանայ՝ քուրդ ազգաւ, ելեալք ի Դընայ վասն աղքատութեան, եւ եկին ի Միջագետս՝ եւ գնացեալք ի Թկրիթ մըտին փայտակիր: Այս էուբս՝ տեսանէր յերազի, զի ելանէր հուր յերե-սաց իւրոց՝ եւ այրէր զբազում աշխարհս. եւ պատմեաց զերազն ջիտի միոյ՝ եւ նա մեկնեաց՝ թէ ծնանիս որդի, որ տիրէ բազում աշխարհաց. եւ նա ասաց՝ թէ լինի այդ՝ տացէ այն որդին իմ քեզ եւ որդւոց քոց յամենայն ամի Ռ (1000) կարմիր դեկան, եւ գրեցին զայս: Եւ ի սոյն ամի ծնաւ էուբն զՈւսուֆն՝ եւ ի զարգանալ մանկանն՝ էառ զնա Շիրաքօ հօրեղբայրն իւր՝ եւ գնաց առ Նուրադին սուլտանն Հալպայ. եւ Շիրաքօ՝ էր այր իմաստուն՝ եւ սուլտանն արար*

			զնա զօրապետ՝ եւ առաքեաց ի Մսր, եւ Ուսուֆ որ անուանեցաւ Սալահատին՝ էր ջանդար առաջի Նուրադնին՝ եւ էր հաճոյ յաչս նորա: եւ զկնի մահուան հօրեղբօրն իւրոյ՝ կացոյց զնա ի տեղի իւր: Եւ նա սպան զխալիֆայն որ ի Մսր՝ եւ նստաւ ինքն տղայ հասակաւ սուլտան՝ եւ անուանեցաւ Սալահատին. եւ եկեալ առ նա ջհուտն եւ եբեր զգիրն. եւ էառ զկարմիր դեկանսն ըստ թուոյ ամաց երազոյն: Բայց էուբն ի հարուածոց ձիոյ մեռաւ՝ եւ Ուսուֆն՝ օր ըստ օրէ յառաջանայր:
1159	ՌԵԿԱ 1161	ՈԸ 608	
1160	ՌԵԿԲ 1162	ՈԹ 609	*(Ե3701) Ի Միլան եղեւ այնքան մեծ ծմեռն եւ ձիւն սաստիկ, զի ԽԵՌ (1140) անձինք մեռան եւ չորացան ամենայն պտղաբերք եւ բոյսք:*
1161	ՌԵԿԳ 1163	ՈԺ 610	**Յայս ամս թագաւորն Վրաց Գեորգի առ զԱնի յունիս ի ԺԳ** (13)**: Եւ ապա յաւգոստոս ամսամտին՝ կոտորէ զՇահի Արմէնն, եւթն հազարաւ ՁՌ** (80 000) **եւ այսորիկ ականատես եղեաք մեք: Ի ԳՌ** (3000) **գրով այն էր, որ գերեաց, թող զանկեալ դիակունսն, որ ծածկէր զանդաստանս մեր:**
1162	ՌԵԿԴ 1164	ՈԺԱ 611	**Ապա ի միւս ամին յաւգոստոս Ա** (1) **առ զԴւին քաղաք եւ ԿՌ** (60 000) **գերեաց եւ քանդեաց զսուտ աղաւթանոցս նոցա:** **Ձմեծ աւանն Աշնակ այրեաց չարագլուխ Ելտկուզն զոր Ր** (5000) **ասեն զայրածսն**[356]**:**
1163	ՌԵԿԵ 1165	ՈԺԲ 612	**Ապա զաւրաժողով լեալ սուլտանն Խորասանա, եկեալ ի դուռն քաղաքիս Անւոյ եւ զարհուրեցոյց զբնակիչք սորա, յետ Լ** (30) **աւուր գնաց գաղտագողի աղուեսաբար եւ հար զթագաւորն Գեորգի եւ զաւար նորա էառ եւ դարձաւ ի տեղի իւր**[357]**:** *(Մ1486, տարբերակ) Ապա զաւրաժողով լեալ սուլտանն Խորասանա, եկեալ ի դուռն քաղաքիս Անւոյ եւ զարհուրեցոյց զբնակիչք սորա եւ յետ սակաւ աւուրց դարձավ աշխարհի իւր ոչ ինչ կարացեալ ստանանել սորայ, զի Տէր պահպանէր Ինքն հովանի Աջովն Իւրով, որ աւրհնեալ է յաւիտեանս, ամէն*[358]*:*

			(Մ1899) Ի ՈԺԲ (1163) թվին եկն Ելտկուզ աթաբակն բազում զօրօք ի դաշտն Գագայ եւ հուր արկեալ կամէր այրել զսուրբ խաչն՝ զԳագայ Սուրբ Սարգիսն, յորոյ զօրութենէն եռաց ի մէջ բանակի նոցա օձ թունալի խածանող եւ ծայն ճչին եւ եղուկ հարուածին զցայգն ողջոյն ոչ դադարէր՝ զոր լուեալ թագաւորն Գօրգի՝ լնոյր աւարաւ փախստէիցն: *Ի ՈԺԲ (1163) թվին թագաւորն Երուսաղէմի Պաղտինն մեռաւ եւ Ե (5)երորդ թագաւոր եկաց Երուսաղէմի Ամառի:* *(Մ2965, Հեթում Կոռիկոսցի) Թագաւորն Երուսաղէմի Ամառի գնաց յԵգիպտոս եւ էառ զՍքանտարիա եւ զՊլպէս[359]:* *(Մ8481) Ի ՈԺԲ (1163) թուին մեռաւ տէր Գէորգ առաջնորդն Հաղբատայ:*

ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑՈՒ ՇԱՐՈՒՆԱԿՈՂՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

(1164-1776 թթ.)

Արդի թուակ.	Փրկչական թուական	Հայոց թուական	
1164	ՌԵԿԶ 1166	ՈԺԳ 613	(Մ1899) Ի ՈԺԳ (1164) թվին իշխանքն սպանին զչարասիրտն Մլեհ ի Սիս եւ բերեալ զՌուբէն՝ զորդի Ստեֆանէի, որ առ Բակուրան էր զարգացեալ ինքն՝ եւ եղբայրն իւր Լեւոն՝ ի Պապառօն բերդն, եւ եդին յաթոռն Հայոց Կիլիկիա ամս ԻԲ (24):
1165	ՌԵԿԷ 1167	ՈԺԴ 614	(Մ8481) Ի ՈԺԴ (1165) շինեցաւ գ(մ)բեթն Հաղբատայ ի ձեռն հաւր Յովհաննիսի:
1166	ՌԵԿԸ 1167	ՈԺԵ 615	(Մ5619) Վախճանի տէր Գրիգորէս եւ յաջորդէ զկնի նորա եղբայր նորուն տէր Ներսէս[360]: Տէր Ներսէս ամս է: (Մ1486) Եւ ի սոյն ամի կայսրն Յունաց բազում զօրօք կոտորեցաւ ի Թուրքմանէն յաւուրս Խլիճ Ասլան սուլտանին:
1167	ՌԵԿԹ 1168	ՈԺԶ 616	(Մ5619) Աստ եղեւ շարժն Եզնկային[361]: (Մ1899) Ի ՈԺԶ (1167) թվին թագաւորն Երուսաղէմի Պաղտինն Ամառի սակաւ զօրօք կոտորեաց զբազում զօրս Սալահատնին յԵրուսաղէմ եւ ի գալ միւս ամին ՈԺԷ (1168) թվին դարձեալ Ֆռանգն կոտորեաց զզօրս Սալահատնին ի Պաղեստինէ, ի տեղին, որ կոչի Անց Յակոբայ, բայց յետոյ յաղթեցաւ ի Տաճկաց:
1168	ՌԵՀ 1170	ՈԺԷ 617	(Մ5619) Յայսմ ամի մեռաւ մեծի իշխանն Հայոց Թորոս[362]: (Ե1221, Մ9796, Անանուն Տարօնեցի) Եհան Շահի Արմէնն զմեծ իշխանն Վէգեն ի Սանսնոյ[363]: (Մ3681, Նաթանայել Հավուցթառեցի) Եւ կատարեցաւ նոր վկայն Քրիստոսի սուրբն Յովսէփ[364] ի Դվին քաղաքի ի յազգականաց իւրոց եւ էր ազգաւ ի Պարսից եւ Սարգիս քահանայ առե(ա)լ զլուսայ/// նշխար նորա տարաւ ի գերադրականն ի Հայոց թառ եւ անդ հանկու/// եւ յետոյ շինեց///

			(զվկայարան) նորա: (Մ2965, Հեթում Կոռիկոսցի) Եղեւ շարժ սաստիկ եւ փլան քաղաքք եւ բերդեր ի Սէիլ, այսինքն՝ Սուր, Աքքա, Տրապօլիս, Յարկա, Լատիկն, Վալանին, Անտաք, յաւուր տօնի Պետրոսի եւ Պօղոսի առաքելոցն[365]: (Ե3701) Ահագին շարժ եղեւ յեզընկէն, ԺԲՌ (12 000) մարդ մեռաւ:
1169	ՌՃՀԱ 1171	ՈԺԸ 618	(Մ1486) Ի սոյն ամի մեռաւ կայսրն Յունաց Մանուիլն, կրաւնաւոր եղեալ: Սա յոյժ կամէր զմիաբանութիւն Հայոց ընդ Հոռոմոց, առ որ տէր Ներսէս զթուղթսն գրեաց: (Մ2965, Հեթում Կոռիկոսցի) Առին զՊլինաս անօրէնքն ի քրիստոնէից եւ շինեցաւ վանքն Վալմունդ[366]: (Ե3701) Եկն ձիւն սաստիկ յաւուրս Սուրբ Խաչին՝ ԻԵ (25) թիզ, եւ ի Հնդիկս՝ ԺԴ (14) թիզ:
1170	ՌՃՀԲ 1172	ՈԺԹ 619	(Մ8481, Ե1221) Վախճանի թագաւորն Կիւրիկէ ի Մածնաբերդին[367] եւ թաղեցաւ ի Հաղբատ: Ի նոյն ամի ազատեցաւ Ապիրատն գնով[368]: Ի նմին ամի շարժն բազում քաղաք կործանեաց, ընդ որս եւ մեծ մայրաքաղաքն Արաբացոց՝ Բերիա, որ է Հալապ: (Հ3) Եղեւ շարժ մեծ եւ փլաւ Անտաք, Տրապօլիս եւ այլ բազում քաղաքք: (Մ7261, Մ10202) Արար Սարգիս վարդապետն մեկնութիւն Կաթողիկեաց թղթոցն, որ կոչի Սարգիս գիրք[369]:
1171	ՌՃՀԳ 1173	ՈԻ 620	
1172	ՌՃՀԴ 1174	ՈԻԱ 621	
1173	ՌՃՀԵ 1175	ՈԻԲ 622	(Մ5619) Փոխի մահուամբ առ Քրիստոս տէր Ներսէս, եւ փոխանորդէ զաթոռն տէր Գրիգոր Տղայ կոչեցեալն[370]: Տէր Գրիգոր ամս Ի (20): (Վ1253) Սա ժողովս արար վասն սիրոյ եւ միաբանութեան առ Յոյնս, կամակցութեամբ տէր Ներսէսի Լամբրունացւոյ: (Ե1801) Սա շինեաց ի Կլայն հոյակապ եկեղեցի, ի նմանութիւն յարեւելեան տաճարացն եւ պատ-

			ռաստեաց ի նմա զդիրս Բ (2) լուսաւորչացն՝ զիօր եղբարցն իւրոց, զտէր Գրիգորիսի եւ զՆերսեսի: (Մ1899, Մ2965, Մ10983) Հանէ եւ ի Ծովուցն[371] զնշխարս Մեծին Գրիգորիսի, զքեռոյն Ապիրատայ՝ հաւոյն իւրոյ զտէր Վահրամայ, եւ դնէ ընդ երկուց լուսաւորչացն[372]: (Մ1899) Եւ զկնի, ինքն եւս փոխի մահուամբ առ Քրիստոս, եւ կայ հանգուցեալ ի սուրբ ուխտն Դրազարկ:
1174	ՌՃՀԶ 1176	ՈԻԳ 623	(Վ1253) Բրինծն Անտիոքու նենգաւ որսաց զՌոբէն որդի Ստեփանէի, զտէրն Կիլիկիոյ, այլ եւ սադրելոյ իշխողին Լամբրունին, սակայն Լեւոն քաջութեամբ ուներ զիշխանութիւն, որ եւ տուեալ զԹիլն եւ զՄսիս թափեաց զեղբայր իւր զՌոբէն[373]: (Մ8481, Ե3397) Առ Գաւրգի վերստին զԱնի եւ ետ զնայ Իւանէի[374]:
1175	ՌՃՀԷ 1177	ՈԻԴ 624	(Մ9796, Ե1221, Անանուն Տարօնեցի) Ի սոյն ամի մեռաւ Վէգեն՝ տէրն Սասնո[375]: (Մ8481, Ե3397) Ի ՈԻԴ (1175) թուին աթաբակ էլտկուզն պաշարեաց զԱնի եւ ավերեաց բազում եկեղեցի ի Շիրակ գաւառի, ընդ նմին եւ զՋաւա-խեթ, եւ առժամայն դառնալովն ի Դւին սատակի ինքն, եւ սուլտանն, եւ այլք բազումք ի մեծա-մեծացն:
1176	ՌՃՀԸ 1178	ՈԻԵ 625	(Մ1899) Ի ՈԻԵ (1176) թվին կոտորեաց Սալա-հատին զՖռանգն ի Տաբարիայ նենգութեամբ կոմսին Տրապօլսի, զոր Սալահատինն իւրովի եսպան զնա, բայց զթագաւորն ապրեցոյց եւ ազատեաց մեծաւ պատուով: Եւ ի սոյն թվին, ի ՈԻԵ (1178) ամին կայսրն Յունաց Մանուէլն յաղթեցաւ ի Խլիճ Ասլան սուլտանէն՝ մերձ Իկօնն[376]: (Մ8481, Ե3397) Ի ՈԻԵ (1176) թուին խաւարեցաւ արեգակն ի ԺԱ (11) ապրիլի, յաւուրս կիւրակէի յերկրորդ ժամու՝ մինչեւ աստեղք երեւեցան: Ի նոյն ամի Ափխազաց թագաւորն դարձոյց զԱնի առ իւր տեարսն[377]:
1177	ՌՃՀԹ 1179	ՈԻԶ 626	(Մ8481, Ե3397) Մեռաւ Աբասն, որ եղեւ դադա-րումն ազգին Բագրատունեաց[378]:

			Ի նոյն ամի երկպառակեցան զաւրքն Վրաց: (Հ3) Պաղտին Զ(6)երորդ թագաւոր Երուսաղէմի յաղթեաց Սալատին սուլտանին[379]:
1178	ՌՃՁ 1180	ՈԻԷ 627	
1179	ՌՃՁԱ 1181	ՈԻԸ 628	(Մ5619) Աստանաւր զտեղի առեալ կացին շարագրութինքս գեղեցկաբանին Սամուէլի, զոր բազում երկասիրութեամբ հոգ տարեալ ստուգագրութեան եւ ճշգրտիւ հասուցեալ մինչեւ յիւրն ժամանակ, եւ վասն զի պատմագրութեանց սահման է զանցելոցն եւ զներկայէն ճառել, իսկ յառաջիկայն ոչ գոյ հնար անցանել: Այլ թէպէտ յայսմ հետէ դարձեալ մտանէ կանոն իշխանութեան Հայոց ի շարագրութիւնս, սակայն սխալն յոլով տեսանի կանոնացս, վասն զի յայսմ հետէ այլոյ ուրուք է շարագրութիւնս, եւ գրէթէ Քրիստոսի ծնընդեանն ամք եւ թուականն Հայոց միայն գայ անսըխալ[380]: (Մ2965) Ռուբէն անդրանիկ որդի Ստէֆանէի եւ եղբայր Լեւոնի պարոն եկաց Հայոց ամս Թ (9)[381]: (Մ7261) Իգնատիոս վարդապետն արար մեկնութիւն Ղուկասու աւետարանին ՈԻԸ (1179)[382]:
1180	ՌՃՁԲ 1182	ՈԻԹ 629	(Հ3) Անաւրէնք յաղթեցին Կի[383] թագաւորին Երուսաղէմի եւ առին զերկիրն:
1181	ՌՃՁԳ 1183	ՈԼ 630	(Մ3072, Մ1869) Վաղճանի Գէորգի, եւ թագաւորէ Թամարն[384]: Թաղիադինն երեկ: (Մ1899) Ի ՈԼ (1181) թվին եօթներորդ թագաւոր եկաց Երուսաղէմի Պաղտինն Փոքր, որդին մարգիզի[385], յառաջ քան զմեռանելն Պաղտ(նի) ի գոդոյն:
1182	ՌՃՁԴ 1184	ՈԼԱ 631	(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Ուրբանոս երկրորդ ազգաւ Լաւնպարտ ամս Ա (1):
1183	ՌՃՁԵ 1185	ՈԼԲ 632	(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Գրիգորիոս Ը (8) երրորդ, ամիսս Ա (1):
1184	ՌՃՁԶ 1186	ՈԼԳ 633	(Մ1898) Պապա եկաց ի Հռոմ, Կլէմէնտես երրորդ ազգաւ Հռոմայեցի ամս Զ (6):
1185	ՌՃՁԷ 1187	ՈԼԴ 634	(Մ9796, Ե1221, Անանուն Տարօնեցի) Կամիմ աստանօր զանցս աղէտից եւ չարչարանաց ամենայն աշխարհի պատմել[386], առաւել ի վերայ աշխարհիս Հայոց, նախ ի վերայ քրիստոնէից, զի ի ՈԼԴ

			(1185) թվին մեռանի Հայոց ազգիս ամիրայն, որ յելից իրացն ունէր զանունն Շահի Արմէնն կոչեցեալ. այս(ինքն) թագաւոր Հայոց, յաղագս քաղցր բարուց իւրոց, զի ունէր զգութ եւ զողորմութիւն ամենեսեան: Իսկ առ այսու թուականաւս մեռանի[387] արտաքս աթոռոյն իւրոյ, ի գեօղն Սարդխան կոչեցեալ եւ վասն զի ազգն Թուրքաց առհասարակ միաբանեալ էին ի պատերազմի ընդդէմ Պարթեւական ազգին, որ Քուրդն կոչի[388], վասն որոյ պատրաստական գտեալ զինքեանս եւ զժամն դիպող, յարձակեցան ամենեքին առհասարակ ի վերայ ազգիս քրիստոնէից եւ հարին ի սուր սուսերի, զարս եւ զկանայս եւ զմանկունս վարեցին ի գերութիւն, քակեցին զբազում եկեղեցիս յափշտակելով զԿտակարանս սուրբս, նաեւ զտունս, յորում բնակեալ էին մարդիկ, այրեցին առհասարակ եւ զամենայն անդաստանս անխնամաբար կերակուր արկին խաշանց իւրեանց եւ անասնոց, զի ժամ էր հնձոց, առհասարակ ամենեքեան մաշեցան սովով եւ սրով եւ գերութեամբ: Աւերեցին զբազում վանորայս, որ եւ զմեծ, հռչակաւոր, հոյակապ ուխտն սրբոյ Կարապետի նշխարացն, զոր սրբոյն Գրիգորի բերեալ ի Կեսարացոց քաղաքէն եւ անդ եդեալ եւ հիմնարկեալ տեղին կոչէ յանուն սրբոյն՝ Սուրբ Կարապետ, մականուն Գլակայ վանս, յանուն առաջին առաջնորդին, զոր պատմութիւնն ցուցանէ, եւ Աթանագինէ հայրապետին եւ այլ բազում միանձանց ճգնաւորաց խոտաճարակաց, որ անդ հանգուցեալ են, զոր եւ բազում բժշկութիւնս կատարէր Աստուած ի ձեռն սրբոյն, նաեւ բազում մասամբք Տէրունականաց զարդարեալ էր եւ քահանայիւք սրբազանիւք, փառաւոր եւ անյաղթելի փիլիսոփայիւք, ունէր զհոգեւոր փարթամութիւն եւ զմարմնաւոր, եւ յայսմ ժամանակի առաւել պայծառանայր ամենայնիւ յառաջացեալ ի կամս Աստուծոյ, զի եկք եւ պանդուխտք անդ հանգչէին, յաղագս ուսմանց եւ աստուածայնոց երաժշտական արհեստից յամենայն տեղեաց անդր ժողովելով:

			Իսկ յաղագս այսպիսի համբաւուն լինելոյ ո՛չ կարաց տանել այսմ ճշմարտութեան թշնամի, այլ յարոյց ի վերայ զկամարարս իւր, զնախասացեալ ազգսդ, որք միանգամ յարձակեցան ի վերայ տեղեացն սրբութեան, զբնակութիւնսն հրոյ ճարակ տուեալ եւ զինչսն յաւարի առեալ զԿտակարանս սուրբս եւ զսպասն սրբութեան գերի վարեալ ցրուեցին ընդ ամենայն ոլորտս տիեզերաց, զբազումս ի կրօնաւորացն սրբոց սպանին եւ զմեծ եպիսկոպոսն սուրբ զՍտեփաննոս[389] զկոչեցեալն, Երեմիայի որդի, սպանին, եւս այս գործեցաւ յաւուրս պահոց Վարդաւառի տօնին[390], քանզի առին զԱսղունից բերդն, որ այժմ կոչի Կարճկօնից բերդ, եւ զՀանդերձաբերդն կոչեցեալ[391], որ թէպէտ ամուր էր, սակայն ի հնարագիտութենէ չար ազգացն անգան եւ նոքա ի սուր սուսերի: Իսկ ի խաղաղել փոքր մի թշուառութեանցն, յաւուրս տօնի Սրբոյ Խաչին դարձեալ ժողովեցան որք մնացեալք էին ի բարկութենէն, սպասաւորք Սրբոյ Կարապետին լալագին անգանելով առաջի սրբոյն, զի մի՛ իսպառ բարկասցի, կամելով միաբանական ուխտիւ առ միմեանս բնակել, զի յայնժամ դեռեւս խցաւորք էին, իւրաքանչիւր ոք զիւրն հոգալով եւ ո՛չ զընկերին, իսկ յայնմ հետէ կամեցան զմիմեանց բեռն բառնալ, ըստ գրեցելումն, թէ ոչ ոք ասէր զընչից իւրոց, թէ իւր իցէ, զոր եւ արարին իսկ: Բայց զի ոչ եւս էր հաստատեալ աթոռ բռնակալութեան աշխարհին, զի ոչ ունէր ժառանգ թագաւորութեան իւրոյ Շահի Արմէնն, վասն որոյ իւրաքանչիւր ոք աւազակաբար բազում սպանութիւն գործէին, որ եւ յարձակեցան կրկին անգամ ի վերայ սպասաւորաց Սրբոյ Կարապետին յաւուրս տօնի Սրբոյ Խաչին[392], ի գիշերի եւ հալածական արարին զմնացեալսն եւ Բ (2) քահանայիցն սպանին, վասն որոյ երկուցեալ փախեան, անբնակ թողլով զտեղին զայն զամն ողջոյն, եւ ապա յերկրորդ ամին ժողովեցան ըստ առաջին ուխտին հաստատելոյ եւ են այժմ խաղաղացեալ փոքր մի, այլ զառաջիկայն Աստուած գիտէ:

			Ի նոյն ամի թշուառութեան, բռնակալն Կարնո քաղաքի[393] յարուցեալ ի վերայ անառիկ բերթին Օխթիքն անուանեալ եւ առեալ զնա յաւուրս տօնի Սուրբ Աստուածնին[394], իսկ ի գալ աշնանային աւուրց, յօր տաւնի Խաչ Գիւտին, Բէկթամուրն[395], որ եղեւ աթոռակալ Շահի Արմէին, զի զօրապետ էր զօրաց նորայ, սայ յարուցեալ բազում զօրօք եկն ի դուռն Կարնո քաղաքի, խնդրելով զՕխթիքն դարձուցեալ ի բնիկ տէրն իւր եւ իբրեւ ոչ դարձոյց, առ զերկիրն ամենայն յաւարի եւ զմասն քաղաքին հրով այրեաց եւ զԲասեանսն զերկուսին ի գերութիւն վարեաց, որ եւ զհամար գերութեան ԸՌ (8000) ասացին, զոր գտին եւ գնեցին, թող զկորուսեալսն եւ զսպանեալսն: Իսկ յաւուրս պահոց Առաջաւորին[396] ապստամբեցին քաղաքացիքն, որ Աւխթիքն ասացաք, կամելով յառաջին տէրն իւրեանց դառնալ, զոր վաղիմաց եղեալ ամիրայն Կարնո քաղաքի յարձակեալ ի վերայ նոցա բազում զօրօք եւ զամենեսեան ի գերութիւն վարեաց, զինչս նոցա յափշտակելով գրաւեաց ընդ իւրոյ իշխանութեան զքաղաքն եւ զբերդն: Ի նոյն ամի էառ Բէկթամուրն զՎան եւ զՈստան եւ զԲաղէշ, զաշխարհն այրեաց մինչեւ հնազանդեցոյց ընդ իւրով իշխանութեամբն: (Մ1899) Ի ՈԼԴ (1185) թվին մեռանի Շահի Արմէն սուլտանն Խլաթայ ի գեօղն որ կոչի Սարթիան[397] եւ էառ զտեղի նորա Բակդամուրն՝ ծառայն իւր: Մեռաւ թագաւորն Երուսաղէմի Պաղտին Գոդին[398]: (Մ1486) Ի ՈԼԴ (1185) թվին բրինձն Անտաքու Պէմունտն՝ արար սէր ընդ Սալահատինն՝ որ տիրեաց բազում աշխարհաց, եւ ի սադրելոյ իշխողի Լամբրունին, նենգիւ որսաց զՌօբէնն՝ զորդին Ստեֆանէի՝ զտէրն Կիլիկիոյ, զի յղեաց առ նա եւ խաբանօք ի սէր եւ ի ճաշ կոչեաց, եւ իբրեւ եկն ըմբռնեաց եւ ի բանդ եդ յԱնտաք: Եւ Պէմունտն յայն վստահացեալ եկն մինչեւ ի Թիլն Համտնոյ՝ կարծեաց թէեւ զԿիլիկիա զբռամբ ածէ, սակայն ոչինչ կարաց առնել, զի Լեւոնն եղբայրն Ռուբենի՝ քաջութեամբ ունէր զիշխանութիւնն, որ եւ տուեալ

			կամօք զԹիլն, եւ զՄսիս եւ զՔարն Սալուանդի եւ ՃՌ (100 000) դեկան՝ եւ թափեաց զեղբայրն իւր զՌուբէնն, որ եւ յետոյ էառ զՄսիս եւ զայլդ:
1186	ՌՃՁԸ 1188	ՈԼԵ 635	(Մ1486) Ի ՈԼԵ (1186) թվին պարոն Ռուբէն ի վախճան կենաց հասեալ նախ կրաւնաւոր եղեւ աւրհնեալ՝ եւ զԼեւոն զեղբայրն իւր բազում բանիւ խրատեալ՝ եւ ի յաթոռ իւրոցն նախնեացն եդեալ՝ եւ պատուէր ետ նմա՝ ոչ յաւտարուստ փեսայ ածել եւ ոչ հարսն, զի մի՛ տիրեսցեն Հայոց, եւ ինքն փոխի մահուամբ առ Քրիստոս եւ կայ թաղեալ ի Դրազարկն: (Մ1899) Ի ՈԼԵ (1186) թվին մեռաւ Փոքր Պաղտինն Երուսաղէմի՝ որդի մարկիզի: Եւ եկաց Ը (8)-երորդ թագաւոր մայր նորա թագուհին Սպիլն եւ իւր հայրգիրն[399]: Իսկ ի ՈԼԵ (1186) ամին երեւեցաւ նոր իմն սքանչելի եւ աստուածահրաշ տեսիլ ի քաղաքն յՈւրհայ: Զի յանկարծակի ի մէջ գիշերի մեծ լոյս եւ ահագին երեւեալ ի վերայ քաղաքին եւ էջ ի ջրհորն ուր էր դաստառակն Քրիստոսի եդեալ, եւ գիշերապահք բերդին եւ քաղաքին տեսին, որք էին այլազգիք եւ զաղաղակ բարձեալ անդէն հասին, եւ տեսին զլոյսն զայն որպէս Գ (3) մոմեղէնս բոցարձակ ի մէջ ջրին, երբեմն գալ լուսոյն ի միաւորութիւն բոլորաձեւ՝ որպէս երկիր, եւ երբեմն որպէս թէ ծածկիլ ի ջրոյն՝ եւ երեւիլ խիտ առ խիտ նման աստեղաց՝ եւ կամ կայծակնուտ կրակարանաց՝ եւ ի վերայ ջրին բոց սաստիկ որպէս ձիթալիր ճրագաց երեւիլ ամենայն ազգաց. եւ յայս հանդէս տեսութեան երթային ամենայն աշխարհն Տաճկաց, եւ որպէս անհաւատալի լինելով նոցա իրացն, իջուցին ի հորն զոմն Տաճիկ տեսանել եւ ձեռօքն իմանալ զլոյսն՝ որոյ իջեալ եւ կեցեալ անդ իբրեւ ժամս Բ (2) եւ ի յամելն՝ ի վեր քարշեցին զայրն զայն որպէս մեռեալ եւ ապա յետ ժամուց ինչ եւ պահուց անցելոց՝ ի խելս եկն եւ բացեալ զաչսն աղաղակեաց մեծածայն, օրհնելով զԱստուածածինն եւ զՔրիստոս եւ ասէր, թէ «եւ ես քրիստոնեայ եմ»:

			Ապա ժողովեցան ի վերայ աւելի քան զԵՌ (5000) մարդկան՝ եւ հարցանէին թէ «զի՞նչ տեսեր», եւ նա ասէ՝ «տեսի ի հորն կին մի ծիրանազգեստ՝ նստեալ յաթոռ լուսոյ եւ մանուկ մի լուսատեսիլ ի գիրկս նորա եւ ի վերայ ծնկաց մանկանն դաստառակ, եւ ի վերայ գիրք խաչանման, եւ ծեր այր մի սքանչելատէս նստեալ մերձ առ նոսա եւ Բ (2) հրեշտակք թեւաւորք առաջի նորա, այժմ ես քրիստոնեայ եմ»: Եւ գնացեալ առ քահանայսն մկրտեցաւ, եւ ապա եւս քան զեւս բազմացան ժողովք յամենայն կողմանց ի տեսիլ հրաշիցն՝ որ ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն: (Մ1898, Հեթում Կօռիկոսցի) Պարոն եկաց Հայոց Լեւոն, եղբայր Ռովբէնի եւ որդի Ստեփանէի՝ ամս ԺԱ (11)[400]: (Մ3072, Մ1869) Լեւոն եղբայր Ռուբենի իշխան ամս Ժ (10) եւ ետոյ թագաւորեաց ամս ԻԵ (25):
1187	ՌՃՁԹ 1189	ՈԼՁ 636	(Մ1899) Ի ՈԼՁ (1187) թվին եղեւ կոտորումն քրիստոնէից ի Սալահատնէն մերձ յԵրուսաղէմ, եւ կալան զթագաւորն՝ Կին, եւ անյայտ եղեւ սուրբ խաչն Քրիստոսի, յորում աւուր տվին զԱքայ ի Սալահատինն՝ եւ ապա զԱսխալան, որ եւ ի սոյն ամի էառ Սալահատինն զԵրուսաղէմ եւ զամէն Սէիլն, բաց ի Սրոյ եւ ի Տրապօլսէ: Ի ՈԼՁ (1187) ամին եղեւ պարոն Կիլիկիոյ երկրիս՝ Լեւոն, որդի Ստեփանէի, որդւոյ Լեւոնի, որդւոյ Կոստանդեայ, որդւոյ Ռուբէնի՝ որ էր արեանառու թագաւորին Հայոց Գագկայ: Սա կացեալ պարոն՝ ամս Ժ (10) եւ ապա օծաւ թագաւոր Հայոց եւ թագաւորեաց ամս ԻԲ (22): (Մ8481, Մ9796, Ե1221) Ի ՈԼՁ (1187) թուին իշխանն Եգիպտոսի ժողովեալ զամենայն զաւրս Տաճկաց, որ ընդ իւրով իշխանութեամբ, միաբան ամենեքումք գնացին ի վերայ սուրբ քաղաքին Երուսաղէմի, եւ պաշարեաց զնա: Այլ եւ նենգութեամբ իշխանացն Ֆռանգաց, որ զանուն միայն ունելով զքրիստոնէութեան, զի թողեալ զմիաբանութիւն, որ առ իւրեանց թագաւորն, դաշինս

			եդեալ յաղագս կաշառաց ընդ անաւրէն իշխանն Սալահադին կոչեցեալ, ետուն զթագաւորն ի ձեռս այլազգեացն եւ ապա առեալ զքաղաքն սուրբ, եւ զԱսխալան, զամուրն քան զամենայն դղեակս, պատրանաւք կոչե(ա)լ ի դուրս զԿին թագաւորին[401], զի անդ էր ամրացեալ, եւ խոստանայր ազատել զթագաւորն: Եւ իբրեւ առ զամրոցն, ստեաց ուխտին ըստ իւրեանց սովորութեան եւ յայնմհետէ սկսաւ չարաչարել ազգն քրիստոնէից եւ զամենայն գաւառսն եւ քաղաքսն, զոր ունէր Ֆռանգն, էառ, է՛ր զոր բռնութեամբ, եւ է՛ր զոր խաբէութեամբ: Եւ մնաց միայն Սուր եւ այլ դղեակք ամուր: Եւ եկեալ յԱնտիոք եւ պաշարեաց զնա եւ առեալ հարկս միոյ ամաց եւ անդի առաքեաց զամենայն զաւրութիւնս իւր երկիրն Տարսոնացոց, ի վերայ թագաւորին Լեւոնի, եղբաւր Ռուբենի, եղբաւրորդոյ Թորոսի մեծին իշխանին Հայոց, որդոյ Ստեփանեա, որոյ զյոյս եդեալ առ Աստուած եւ ապաւինեալ յաղաւթս սրբոց կրաւնաւորացն, որք էին ընդ իւրով իշխանութեամբ եւ յարուցեալ ի վերայ նոցա, զամենեսեան առաթուր արարեալ յերկիր կործանէր զզաւրս նոցա, անթիւ լեալ կորուսեալքն, որպէս թէ ՁՌ (80 000)-աց, զի կրաւնաւորքն ուրախութեամբ մտեալ ի մէջ պատերազմին, որպէս յաւուրս սրբոց Վարդանանցն երանելի քահանայքն: Բայց անաւրէն Սալահադին, յորժամ պաշարեաց զԵրուսաղէմ զաւուրս ԻԵ (25) եւ նեղեալ բնակչացն տեղոյն, անձնատուր եղէն՝ տալով գինս ամենայն անձին իւրաքանչիւր՝ դահեկանս Ժ (10), յորում անթիւ լեալ զհամար գանձուցն, եւ կալեալ զբազումս զաւրականացն Քրիստոսի, սպանանէր, ո՛չ առնելով գանձս վասն նոցա, այլ արեան նոցա ծարաւի գտեալ, հեղոյր յերկիր չարաչար տանջանաւք, որ եւ զմիաբանեալ նահատակսն Քրիստոսի, զոր ֆրերքն անուանէին, միահամուռ զամենեսեան ի սուր սուսերի մաշեաց, ընդ նմանին եւ զմեծ իշխանն կոչեցեալն Ռնալտ բրինձ[402]՝ կացուցեալ առաջի իւր խնդրէր զուրացութիւն առ Քրիստոս, եւ ասաց

			թքանէր ի նշանն կենսակիր, զոր ի պատերազմին առեալ ի գերութիւն եւ առ իւր ունէր, յայնժամ եւ նա համարձակեալ եթուք յերեսն Սալահադնին եւ բազում բանս հայհոյութեան խաւսեցեալ առ նա եւ առ սուտ վարդապետն իւրեանց Մահմէտ, եւ երկրպագեալ խաչին Քրիստոսի առժամայն սպանաւ առաջի փրկութեան փայտին, վասն անուանն Քրիստոսի: (Մ2965) Մխիթար քահանայ Կաթողիկեցի թարգմանեաց զպատճառ խաւարման արեգական եւ լուսնի ի Պարսկէ: (Ե3701) Յայսմ ամի թարգմանեաց Մխիթար պատուեալ քահանայն Կաթուղիկեցի զպատճառս խաւարման արեգական եւ լուսնի ի Պարսկէ միոջէ, Ոճիքէ անունն, զոր ասէր թարգմանեալ ի Յունաց ի Պարս[403]: Դարձեալ ի սոյն թվին խաւարեցաւ արեգակն:
1188	ՌԵՂ 1190	ՈԼԷ 637	
1189	ՌԵՂԱ 1191	ՈԼԸ 638	(Վ288) ԶԹամարն կոտորեաց Թուրքն սաստիկ յոյժ ի դուռն Շամքօրայ[404]:
1190	ՌԵՂԲ 1192	ՈԼԹ 639	(Մ1898, Հեթում Կօռիկոսցի) Կայսր եկաց Հռոմայեցոց Հեռի որդի Ֆրտրկին ամս Թ (9)[405]: (Մ1899) Յայսմ ամի զօրաժողով լեալ ազգն Իսմայիլի՝ եւ շարժեալ բազմօք զօրօք գայ յերկիրն Կիլիկիոյ, որոյ զօրագլուխն Ռըստոմ[406] կոչիւր. յորմէ Լեւոնն ոչ զարհուրեալ ի բազմութեան զօրացն՝ գալով նա ի բերդն որսոյ, այլ յԱստուած ապաւինեալ, եւ ի սուրբ վկայն Գէորգէոս, սակաւ արամբք ընդդեմ ելեալ՝ եւ զբազմութիւն ի զայն յաղթահարեալ, քարոզի թէ ի սուրբ Գէորգեայ Ռըստոմն այն խոցեալ եղեւ եւ սատակեալ, եւ ամենայն զօրքն ցրուեցան, զորոց զհետ մտեալ Լեւոն սակաւ զօրօք եւ ի սպառ սպուռ սրով խողխողեաց զնոսա եւ ջնջեաց, էառ եւ աւար բազում եւ անթիւ, որով յոյժ փարթամացեալ եղեւ զօրօք իւրովք: (Վ1253) Եմուտ ըՌըստոմն Թուրքման ի Կիլիկէ եւ սպանաւ ի Լեւոնէ ԺՌ (10 000) -աւ[407]:
1191	ՌԵՂԳ 1193	ՈԽ 640	(Հ3) Անաւրէնք առին զԱքքայ ի քրիստոնէից:

1192	ՌԵՂԴ 1194	ՈԽԱ 641	(Մ1899) Ի ՈԽԱ (1192) թվին շարժեցավ տունն Ֆռանգաց գալ ի թափումն Երուսաղէմի՝ եւ ի ճանապարհին կոտորեցին զԿօնն եւ յոլովս թուրք եւ եկեալ ի Սէլեւկիայ թագաւորն նոցա լողացեալ ի գետն Սէլէֆկիոյ՝ անդ խեղդեցաւ[408]:
1193	ՌԵՂԵ 1195	ՈԽԲ 642	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Զայս գաւազանք եւ չափ ժամանակաց գտաք ճշդիւ սահմանեալ եւ եդեալ Սամուէլի ճշ[մար]տաբան քահանայի, զկարգս թագաւորաց եւ կայսերաց, ընդ [որոց եւ] կաթուղիկոսացն Հայոց՝ սկսեալ յառաջին ամէ [մարմնա]նալոյ Տեառն մինչ ի ՌԵՂԵ (1195) ամն եւ ի ՈԽԲ (1193) թիւն [Հայոց]: Եւ հանդէպ միմեանց եդեալ զիւրաքանչիւր /// որ յիւրաքանչիւր ժամանակսն իրագործեցան /// սակաւուք զթերին, միայն ամբողջ պահել զհամա[ռոտագ]ոյն եւ զկարգ հայրապետացն, եւ զվերջին թագաւորութիւնն Հայոց՝ որ ի Կիլիկիայ, ի ներսի գաւառսն եւ զՎրացն արտաքո[յ] միայն զանուանսն նաեւ համառաւտիւք, զգործս եւ զբանս, որ յիւրաքանչիւր ժամանակս եղեն, բերել հասուցանել մինչ ի մերս ժամանակ: Արդ՝ յետ մահուան տեառն Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի, յաջորդի յաթոռն Գրիգորիս Տղայ[409] ամ մի: Եւ յաղագս զրաբանութեան ինչ ըմբռնեալ եղեւ ի մեծ իշխանէն Կիլիկոյ՝ Լեւոնէ եւ արգելեալ յամուրն Կոպիտառայ: Ի գիշերի կամեցաւ ելանել եւ կախեալ ընդ բարձր պարիսպն, անկաւ եւ մեռաւ: Եւ ապա յաջորդէ ի տեղին միւս Գրիգորիս, Ապիրատն կոչեցեալ, եղբաւրորդի մեծ հայրապետացն՝ Գրիգորի եւ Ներսէսի, որ եւ ի մահուան նորին, նախ սա քարոզեցաւ կաթողիկոս եւ զկնի եկն էրէց եղբաւր որդի վայելչագեղն Գրիգորիս եւ ի ձեռն Մլեհա իշխանին, հրամանաւ եւ ուժով Նորադին ամիրային եհան զնա եւ նստաւ ինքն[410]: Եւ ետ նմա տեղի եւ գաւազան, զԼամբռաւն եւ զՏարսուս եւ զԿէսարիայ իւր գաւառաւքն, որ եւ զկնի եկն յաթոռն, որ եւ զաւրացեալ Յիսուսիւ,

			ես՝ նուաստ Ստեփաննոս անուամբ այցելու[411] կարգեցից ի գաւազանս սկիզբն արարեալ: (Մ6354) Զաքարէ եւ Իւանէ յառաջեցին եւ տիրեցին բազում աշխարհաց: (Վ288) Մելիք էտիլն ի Խլաթ գնաց եւ չըկարաց առնուլ[412]: (Մ1899) Ի ՈՒԲ (1193) թվին մեռաւ Խլիճ Ասլանն ի Կօնն, կացաւ ամս ԼԸ (38):
1194	ՌՃՂԶ 1196	ՈՒԳ 643	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Կաթողիկոս տէր Գրիգորիս ամ Ա (1): Յայս թվիս փայլէր մեծ ջահն եկեղեցոյ Ներսէս Լամբրոնեցին ի ճգունս եւ յիմաստս եւ մեկնեաց գրեանս զԲԺ (12)-անքն, զԱռակս, զՅոբն, զՊատարագն եւ զՍա[ղ]մոսս եւ այլ բազումս: Մէլիք էդիլն եկն ի Խլաթ պաշարեաց եւ չկարաց առնուլ: (Մ1718) Տէր Գրիգորիս Տղայն, որ դիպուածով վաղճանեցաւ: (Մ1899) Տէր Գրիգորիս միւս այլ եղբօրորդի նորին տեառն Ներսիսի ամս Բ (2) եւ քարավէժ լեալ ի դղեկէն Կօպիտառոյ՝ եւ կայ ի Դրազարկն հանգուցեալ: Ի ՈՒԳ (1194) թվին մեռաւ Սալահատինն եւ եթող ԻԴ (24) որդի, եւ զամենեսեան կացոյց սուլտանն եւ մելեքնի: Ի ՈՒԳ (1194) թվին Պարոնն Հայոց Լեւոն՝ կալաւ զՏիմունդ բրինձն Անտիոքայ եւ եդ ի բանտի ի կլայն Սսոյ:
1195	ՌՃՂԷ 1197	ՈՒԴ 644	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Կաթողիկոս տէր Գրիգորիս Ապիրատն՝ ամս է (7): (Հ3) Մեռաւ Սալահատինն եւ իր աղբայրն Սֆըտինն նստաւ յաթոռ նորա[413]: (Մ1899) Ի ՈՒԴ (1195) թվին՝ ազատեցաւ Տիմունդ բրինձն Անտիոքայ ի բանտէն եւ խնամեցաւ ընդ պարոն Լեւոնի:
1196	ՌՃՂԸ 1198	ՈՒԵ 645	(Մ1899) Տէր Գրիգորիս Ապիրատ միւս այլ եղբօրորդի առաջնոց կաթուղիկոսացն տէր Գրիգորիսի եւ Ներսիսի, եւ հօրեղբօրորդի այս Գրիգորիսիս՝ որ քարավէժ եղեւ: Սա եկն առ թա-

			գաւորն Լեւոն վասն Գրիգորիսիս, որ քարավէժ եղեւ՝ եւ վախճանի ի մայրաքաղաքն Սիս՝ կացեալ յաթոռ հայրապետութեան՝ ամս Ը (8): Իսկ այլք ի պատմագրաց ասեն, թէ սա գնաց ի Հռոմկլայէն ի Սիս առ ի թափել զքուերորդի իւր զՀեթում, զոր կապեալ էր թագաւորն Լեւոն, եւ մեռանի անդէն ի Սիս ի սուրբ Խըճկտոր, զոր ուխտ Արքակաղնին ասեն: (Վ959) ԶԳրիգոր Ապիրատն վախճանի ի Սիս ի մարտի Դ (4-ին), կացեալ յաթոռ հայրապետութեան ամս է (7) եւ ամիս Ժ (10): (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Ի ՈՒԽԵ (1196) թւին մեծ սպարապետքն Վրաց, որդիք Սարգսի՝ Զաքարէի, Իւանէի[414], առին ի Տաճկէն զամուրն զԱնբերդ եւ զԲջնի: (Հ3) Մելիք յԱտիլն էառ զճաֆն[415]:
1197	ՌԵՂԹ 1199	ՈՒԽԶ 646	(Վ1253) Տեսեալ զառաջադիմութիւն բարեպաշտին Լեւոնի, թագ առաքեն նմա ազգն Փռանգաց եւ հայրապետն Հայոց Գրիգոր Ապի(րատն) աւծանեն զնա թագաւոր Հայոց: Եւ ազգն հագարացւոցն, որ ի Դամասկոս եւ ի սահմանս նոցա, առաքեն առ նա՝ հարկս տալ նոցա: Եւ իսկոյն դիմեալ ի վերայ նոցա թագաւորն Լեւոն, եհար զնոսա հարուածս մեծամեծս, եւ յայնմհետէ զահի հարկեալ երկնչէին ամենեքեան: (Մ1899) Ի ՈՒԽԶ (1197) թվին օծեալ եղեւ թագաւոր Հայոց Լեւոն՝ թագաւորելով ի վերայ Տանս Թորգոմայ՝ ամս ԻԲ (22), առաքելով նմա թագ երկուց կայսերացն՝ Յունաց եւ Ֆռանգաց, որով օծեալ եղեւ ի կաթուղիկոսէն Հայոց տէր Գրիգորէ՝ թագաւոր[416], որ արար շատ ուղղութիւն: Սա շինեաց զսուրբ ուխտն Ակնէր կոչեցեալ, եւ զեկե(ղե)ցիս բարձրացուցեալ եւ աշխարհի շինօղ եղեալ, զի բազում ամրոց եւ դղեակս շինեաց, եւ զԿիլիկէ շրջապնդեաց: Սա զմեծ Անտիոք յինքն գրաւեաց՝ եւ եղբօր դստերն իւրոյ ետ՝ այլ եւ զգաւառն Արասուս էառ եւ Պաղրասայ դղեկին[417] տիրեալ եղեւ: Սա իմաստութեամբ զԼամբրօն յինքն գրաւեաց:

			(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Աստանաւր կամիմ կարգել զնորոգ թագաւորութիւնն Հայոց: Լեւոն, որդի Ստեփանեայ, եղբաւր Ռոբինա, յետ բազում քաջութեանց եւ առման ՀԲ (72) բերդից, վերապատուի ի Յունաց եւ ի Հոռոմոց թագաւորացն Բ (2) թագիւ, եւ վերին տեսչութեամբն աւծանի թագաւոր Հայոց յարեւմուտս, Կիլիկիայ: Թագաւոր Հայոց Լեւոն կացեալս ամս ԻԵ (25): (Մ6354) Թագաւորեաց Լեւոն, որդի Ստէֆանէի, որդւոյ Լեւոնի Ռուբենանց յազգէ Արշակունեաց[418]: (Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Պարոնն Հայոց Լեւոն պսակեցաւ թագիւ եւ եկաց առաջին թագաւոր ի Կիլիկիա՝ ամս ԻԴ (24): Կաթողիկոս եկաց Հայոց տէր Գրիգորէս Ապիրատն ամս է (7)[419]: (Մ1869, Մ3072) Խանգարեցին զՁատիկն եւ ընդ աստուածասպանսն տօնեցին այլազգք, իսկ ի կատարման սրբոյ Յարութեան աւուրց, բերին յեղբարց մերոց զաւետիս լուծման կանթեղաց ի գերեզմանէն Քրիստոսի ի մեր Ձատկին, եւ յամօթ եղեն հակառակողքն: Օրհնութիւն, գոհութիւն եւ փառաբանութիւն բերանալիր խնդութեամբ ամենողորմ Տեառն, զի արդար եւ ոչ ըստ մեղաց մերոց արար, այլ ընդ իւրում անբաւ ողորմութեան գթացեալ ի մեզ, կանգնելով վերստին զանկեալքս եւ զկործանեալքս, յարուցանել կամեցաւ ողորմածն, որ յարոյց մեզ թագաւոր յազգէ մերմէ՝ զԼեւոն որդի Ստեփանէի՝ այր բարեպաշտ եւ քրիստոսասէր, քաջ եւ արի ի պատերազմի, որ նորոգեաց եւ պայծառացոյց զեկեղեցի, վասն որոյ տօնեսցուք մինչեւ յանկիւնս սեղանոյ, փառաւորելով զԱստուած: Մոլորեցան Վիրք եւ Հռոմք եւ խանգարեցաւ Ձատիկն, իսկ Հայք անշփոթ մնացին:
1198	ՌՄ 1200	ՈԽԷ 647	(Վ288) Ձաքարէ եւ Իւանէ տիրեցին Հայոց եւ Վրաց եւ զԱնի բերդ առին ՈԽԷ (1198) թըւին[420]: (Ե1288) ՈԽԷ (1198) թվին Ձաքարէ եւ Իւանէ

			առին զԱնբերդ: (Մ1869, Մ3072) Ի ՈԽԷ (1198) թվին փոխի մահուամբ առ Քրիստոս տէր Ներսէս Լամբրոնեցին՝ ամաց ԽՁ (46)-ից: Սա մեկնեաց զսաղմոսն՝ եւ զառակսն՝ եւ զպատարագն եւ թարգմանեաց բազում գիրս ի Յունաց եւ ի Ֆռանգաց՝ ընդ որս եւ զՅոհաննու տեսլեան մեկնիչն թարգմանեաց յԱնտիոք՝ եւ զ՝«էր ընդ եղբարսն» ինքն մեկնեաց: (Մ7261, Մ10202) Այլ եւ զգիրս պատրիարգական աթոռոց եւ եպիսկոպոսաց թարգմանեաց սուրբն Ներսէս ի Յունաց:
1199	ՌՄԱ 1201	ՈԽԸ 648	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Զաքարէ էառ ի տաճ[կէ]ն զԱնի[421]:
1200	ՌՄԲ 1202	ՈԽԹ 649	(Հ3) Մեռաւ բրինձն Անտաքոյ Պէմունտն եւ տիրեաց որդին իւր կոմսն Տրապալլսոյ[422]: Ցամաքեցաւ գետն Եգիպտոսի, եւ սատկեցան ի նոցանէ բազումք ի սովոյ:
1201	ՌՄԳ 1203	ՈՁ 650	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Մեծ սպարապետքն Հայոց եւ Վրաց Իւանէ եւ Զաքարէ առին զԴւին եւ կոտորեցին եւ թափեցին զաշխարհս Հայոց ի Տաճկէն, ի Կուռ գետոյ մինչեւ յերասխ եւ Բարքուշատա մինչ ի Մժնկերտ:
1202	ՌՄԴ 1204	ՈՁԱ 651	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) ՈՁԱ (1202) թւին կաթողիկոս տէր Յոհանէս Մեծաբարոյն, ամս ԺԸ (18): Ի սոյն ամի Ռուքնադին սուլտանն էառ զԿարնոյ քաղաք եւ կոտորեցաւ ի Զաքարիայէ[423]:
1203	ՌՄԵ 1205	ՈՁԲ 652	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Զաքարէ էառ զԲջնի: ՈՁԲ (1203) թւին Զաբա, Սաբա բահատուրն[424] եկն ի Տփխեաց [Տու]ննն, զՍախոտէ աւիրեաց եւ դարձաւ: Զաւրն Վրաց ի հետ գնաց եւ ի Կոտմանա կոտորեաց եւ բարձոյ[g]: Ի գալն ամին Ֆռանգն էառ զԿոստանդինուպալիս ի Հոռոմէն: (Մ1898, Հեթում Կօռիկոսցի) Կաթողիկոս եկաց Հայոց տէր Յոհանէս ամս ԺԸ (18):
1204	ՌՄԶ 1206	ՈՁԳ 653	(Մ1898, Հեթում Կօռիկոսցի) Կայսր եկաց ի Ֆռանկնոյն Կոստանդինուպալլսոյ Պաղտինն[425] առաջին կացուցեալ զնա գունքը տը

			ֆլանտրն[426] եւ տուկն Վնէժու, որ առին զնա կացեալ ամս[427]: (Մ1899) Թագաւորն Լեւոն ժողովեալ բազում եպիսկոպոսունս, եւ եդին զտէր Յովհաննէս Խճկտոր կաթուղիկոս զարքեպիսկոպոսն Սսոյ, որ էր այր արքայակերպ՝ առատասիրտ եւ ողորմած հեզ եւ խոնարհ բարուք կացեալ ամս Թ (9): Եւ ընկեցեալ եղեւ յաթոռոյն հրամանաւ թագաւորին Լեւոնի: Եւ զկնի սորա տէր Դաւիթ Արքակաղնցին, եւ կացեալ սա ամս Բ (2), մեռանի, եւ դարձեալ եդին զտէր Յովհաննէս Խճկտոր յաթոռ, որ եկաց ամս Ե (5)[428]: (Հ3) Հեմրի թագաւորն Կիպրոսի գնաց ծովով յեգիպտոս եւ կոտորեաց բազումս յանաւրինաց[429]:
1205	ՌՄԷ 1207	ՈԾԴ 654	(Մ1689, Վ288) Աշրաֆն զՄուշ էառ: Վրացին զԱրճիշ կոտորեաց: (Վ1253) Տէր Յոհանէս. սա ապստամբեալ ի թագաւորէն Լեւոնէ ի Հռոմկլայն, եւ դարձեալ գայ ի հնազանդութիւն եւ սիրով եւ խաղաղութեամբ կացեալ վախճանի, ամս ԺԸ (18) կացեալ: էառ Կոստանդնուպաւլիս Փռանգն ի Հոռոմէն:
1206	ՌՄԸ 1208	ՈԾԵ 655	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Յայսմ ամի էառ Զաքարէ ի Տաճկէն զԿարս[430]: Եւ Աւագն Իւանէի որդի եղաւ: Ի գալ ամին մեռաւ Թամարն, եւ որդին Լաշա Գաւրգին թագաւորեաց Վրաց[431]:
1207	ՌՄԹ 1209	ՈԾԶ 656	(Մ1899) Ի ՈԾԶ (1207) թվին թագաւորն Հայոց Լեւոն կալաւ զսեւաստն Հեռի՝ որդոքն եւ զԿոնստանց Խումարտաշն եւ զճօշլին եւ զՊաղտինն[432]: (Մ1898, Հեթում Կօռիկոսցի) Պապ եկաց ի Հռոմ Ինաւսանդ երրորդ ամս Թ (9): Կայսր եկաց Հռոմայեցոց Աւդունն[433] ծնեալ ի Սաքսոնաց, որ եւ հակառակ եկաց եկեղեցոյ, ամս Թ (9):
1208	ՌՄԺ 1210	ՈԾԷ 657	(Մ1899) Ի ՈԾԷ (1208) թվին Խոսրով Շահ սուլտանն յԻկոնիոյ՝ որդին Խլիճ Ասլանին, էառ զԲերդուսն եւ կալաւ զտէրն նորա զԳրիգորն:

1209	ՌՄԺԱ 1211	ՈԾԸ 658	(Մ7261, Մ10202) Զաքարէ եւ Իւանէ իշխանք յազգէ Հայոց, սպասալարք Թամար դիդօփլին Վրաց, առին ի Թուրքաց զԿարս եւ զԱրարադեան աշխարհն եւ գերեցին զԱրտաւիլ քաղաք եւ բազում եկեղեցեաց շինութեան առիթք եղեն: (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) ՁԻւանէ աթաբակն ի Խլաթ կալան եւ յոլով աւուրս պահեցին, եւ զդուստ(ր)ն Թամթի բազում աղախնաւք եւ ծառայիւք եւ յոլով գանձիւք ետ ի գինս իւր յամիրայն եւ ազատեցաւ[434]: Զհայերն ի Մանծկերտո[յ] հանին[435]:
1210	ՌՄԺԲ 1212	ՈԾԹ 659	(Մ1899) Ի ՈԾԹ (1210) թվին պսակեցաւ ռէ ճուանն ընդ թագուհին Մարիայ՝ որ եղեւ Ժ (10)-րդ թագաւորն Երուսաղէմի: (Վ1253) էին ի սոյն ժամանակի բարեպաշտ իշխանք յԱրեւելս՝ Զաքարէ եւ Իւանէ, երկոքին եղբարք, որդիք Սարգսի իշխանի բարեպաշտի, որդւոյ Վահրամի, որդւոյ Զաքարիա:
1211	ՌՄԺԳ 1213	ՈԿ 660	
1212	ՌՄԺԴ 1214	ՈԿԱ 661	(Մ1899) Յայսմ ամի ընկեցեալ լինի տէր Յովհաննէս յաթոռոյն եւ դնի տէր Դաւիթ Արքակաղընցին ամս Բ (2), եւ մեռանի, եւ դարձեալ դնի տէր Յովհաննէս, որ արար շատ բարութիւնս ի վերայ երկրի: (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Ի ՈԿԱ (1212) թվին Մելիք Աշրափն մեռաւ, եւ Մէլիք Ավհադինն նստաւ: Յայսմ ամի Զաքարէ եւ Իւանէ կամեցան միաբանել զՀայս եւ զՎիրս եւ ժողովք արարին ի Գետակն բազում հարանց եւ վարդապետաց, ընդ որս էին աշխարհալոյս եւ աստուածազգեաց վարդապետքն՝ Գոշ Մխիթարն, Մոնօնիկն եւ Տուրքիկն: Եւ ոչ կարացին միաբանել, այլ հաստատուն մնացին Հայք յուղղափառ հաւատս, որ եւ խրոխտացեալ Զաքարէ վարդապետացն, նզովեցաւ ի նոցանէ, եւ գնաց յԱրտաւէլ եւ կոտորեաց: Եւ ի գալ ամն մեռաւ ի ճանապարհին եւ եդաւ ի Սանահինն ուխտ[436]: (Մ1484) Այժմ Լեւոն թագաւորէ, ամս ԻԵ (25)[437]:

1213	ՌՄԺԵ 1215	ՈԿԲ 662	(Ե3701) Վաղճանեցաւ Մխիթար վարդապետն, որ մականունն Գոշ կոչեցաւ: (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Կատարի սուրբ եւ աշխարհալոյս վարդապետն Գոշ Մխիթարն ի Գետիկ:
1214	ՌՄԺԶ 1216	ՈԿԳ 663	
1215	ՌՄԺԷ 1217	ՈԿԴ 664	(Մ1899) Տէր Յովհաննէս Խճկտորն դարձեալ ամս Ե (5):
1216	ՌՄԺԸ 1218	ՈԿԵ 665	(Մ1898, Հեթում Կօռիկոսցի) Պապ եկաց ի Հռոմ, Աւնորիոս երրորդ ազգաւ Հռոմայեցի ամս ԺԱ (11): Կայսր եկաց Հռոմայեցոց Ֆրտրիկն[438], որ յետոյ բանադրեցաւ եւ աքսորեցաւ ի ժառանգութենէ, ամս: (Հ3) Տվին զԱնտիոք յՌոբէն բրինձն[439], եւ մեռաւ Աւդ կայսրն եւ եղեւ կայսր Ֆրտրիկն: (Մ1899) Ի ՈԿԵ (1216) թվին սուլտան Քաքաուզն Հոռոմոց եկն բազմօք զօրօք ի վերայ թագաւորին Լեւոնի եւ պաշարեաց զբերդն զԿապանն, եւ թագաւորն Լեւոն զօրօք իւրովք մարտեաւ ընդ նմա եւ զառաջինն յաղթեաց, բայց յետոյ զօրքն անմտութեամբ պարտեցան ի սուլտանէն, զի առանց թագաւորին ի մարտն մտին եւ յաղթեցան, յոլովք ի սուր մաշեցան, եւ այլս բազումս կապանօք գերի տարան, յորմէ սուլտանն արիացաւ եւ զբերդին սղարն պընդեաց: Իսկ թագաւորն Լեւոն ոչինչ տխրեցաւ, այլ զմնացեալ զօրսն ժողովեաց եւ ընդ այլ կողմն յաշխարհն Հոռոմոց արշաւեաց, եւ սաստիկ աւերեաց զաշխարհն սուլտանին, եւ բազում աւարաւ դարձեալ եկն ուրախութեամբ: Իսկ սուլտանն լուեալ զհամբաւ չարեացն, չոգաւ յաշխարհն իւր եւ եդ երդումն ընդ թագաւորին, եւ արարին սէր, եւ տուեալ զբերդն Լուլվայ՝ եւ թափեաց զիշխանսն եւ զամենայն գերիսն: Եւ յայսմ ամի Մելիք էտըլը սաստիկ քակեաց եւ աւերեաց զԵրուսաղէմ, զի էառ զլուր գալստեան Ֆռանգին, եւ Մելիք էտլը՝ եղբայր էր Սալահատնին:

			(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Դաւիթ թագաւորն ծնաւ որդի Լաշային: Մէլիք էդիլն մեռաւ:
1217	ՌՄԺԹ 1219	ՈԿԶ 666	(Ե3701) Մեռաւ Ֆախրատինն յեզնկայն[440]: (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Թագաւորն արենարբու ազգաւ Նետողացն՝ Չանկըզ ղանն եկն յեզրն Երանու[441]:
1218	ՌՄԻ 1220	ՈԿԷ 667	(Մ1899) Դարձեալ ի ՈԿԷ (1218) թվականիս թագաւորն Հայոց Լեւոն էառ դաւով ի գիշերի զԱնտիոք: Եւ ծնաւ դուստր մի թագաւորին Զապէլ անուն: Եւ ի սոյն ամի Քաքայուզ սուլտանն պաշարեաց զբերդ Կապանն եւ կալաւ զիշխանսն Հայոց՝ զԿոստանդին գօնդըստապլն, որ կոչեցաւ աւագ պարոն, եւ զԿոստանդին՝ զԼամբրօնին տիրոջ տղայն, եւ զԿեռսակ: Ի ՈԿԷ (1218) թվին թագաւորին Լեւոնի վախճան մահուն հասանէ, եւ նորա ժողովեալ առ ինքն զիշխանսն, դնէ պայլ Հայոց իշխան մի որում անուն էր Սիր Ադան՝ Հոռոմ դաւանութեամբ[442]: Զդուստրն իւր ի նա յանձնէ եւ ի կաթուղիկոսն տէր Յովհաննէս եւ ինքն փոխի առ Քրիստոս: Եւ հանեալ զսիրտն եւ զփորոտին դնեն ի սուրբ ուխտն Ակներ, զոր ինքն շինեալ էր եւ յոյժ սիրէր զտեղին՝ վասն բարւոք կարգաւորութեան նոցա: Եւ զմարմինն տարեալ ի Սիս՝ եդին պատուով յիւր շինեալ եկեղեցին: Ապա յետ աւուրց ինչ Սիր Ադանն սպանեալ եղեւ խորհրդով իշխանացն[443]: Եւ եդին զԿոստանդին պայլ Հայոց, որ էր տէր Բարձրբերդոյ եւ գունդստապլ, եւ թագաւորին Լեւոնի քեռորդի, եւ զդուստր թագաւորին, որ էր ժառանգ մնացեալ՝ զԶապէլն առ ինքն առեալ, զոր յետ երից ամաց ամուսնացուցին ընդ Փիլիպ թագաւորին, որ էր որդի կոյր բրընծին[444] Անտիոքու, որ եկաց ամս Գ (3), եւ վասն զի արհամարեալ լինէին նախատանօք ի նմանէ իշխանքն Հայոց, զի ծաղր առնէր զնոսա եւ նոքա ոչ կարացին տանել նախատանացն, այլ ըմռնեալ զնա՝ եդին երկաթի կապանօք ի

			Բարձրբերդ, եւ իշխանքն երդմամբ հնազանդեցան Կոստանդեայ, որ պայլ եդին՝ եւ աւագ պարոն կարգեցին եւ զՁապէլ թագուհին ամուսնացուցին ընդ կրսեր որդւոյ նորա՝ Հեթմոյ, եւ թագաւոր օծին Հայոց:
1219	ՌՄԻԱ 1221	ՈԿԸ 668	(Մ1899) Ի ՈԿԸ (1219) ամին վախճանի կաթուղիկոսն տէր Յովհաննէս եւ դնի ի Դրազարկն: Եւ յաջորդէ զաթոռն տէր Կոստանդին Բարձրբերդցին՝ այր սուրբ եւ առաքինի: Տէր Կոստանդին ամս Խէ (47): (Ե3701) Մէլիք Ղազի զԽլաթ էառ, եւ սովն երեկ: Մեռանի թագաւորն Լեւոն, եւ Բ (2) ամ իշխանք տիրէն:
1220	ՌՄԻԲ 1222	ՈԿԹ 669	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Անէութիւն հայրապետացն[445]: ՈԿԹ (1220) թւին ագեւոր աստղն ելաւ, եւ զԹաթարն Վրացին կոտորեաց ի Կռոմանա ջրին[446]: (Ե3701) Յայսմ ամի յղեաց Չինումէչինու Չանկիզ խանն՝ ազգաւ Թաթար, զօրք ի Շահաստան, որ եկեալ առին:
1221	ՌՄԻԳ 1223	ՈՀ 670	(Մ1898, Հեթում Կօռիկոսցի) Թագաւորեաց Հայոց Ֆիլիպ՝ որդի կոյր բրընծին, ամս Ե (5)[447]: Կաթողիկոս եկաց Հայոց տէր Կոստընդին Բարձրբերդցին ամս Խէ (47): (Վ1253) Փիլիպոս յԱնտիոքա, Փռանգ ազգաւ, առեալ զդուստր թագաւորին Լեւոնի՝ թագաւորէ ամս Գ (3): (Մ3072, Մ1869) Ի թվին ՈՀ (1221) ագեւոր աստղ երեւեցաւ, Թաթարն զՎրացին կոտորեաց, Լեւոն թագաւորն մեռաւ:
1222	ՌՄԻԴ 1224	ՈՀԱ 671	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Ի ՈՀԱ (1222) թվին նստուցին ի Սիս կաթուղիկոս զտէր Կոստընդին մեծափառ, որդի Թափչի[448], ի Բարձրբերդ:
1223	ՌՄԻԵ 1225	ՈՀԲ 672	(Ե3701) Լաչ թագաւորն մեռաւ, ըՌուզուքան նստաւ[449]: Եւ Շահմելիքն ի Կարնոյ քաղաքն տարան: Հեղեղն զԽլաթ տարաւ:
1224	ՌՄԻԶ 1226	ՈՀԳ 673	(Վ1253) Առեալ զդուստր թագաւորին Լեւոնի՝ Փիլիպոս կամեցաւ գնալ յԱնտիոք, զոր կալեալ

			կորուսին, եւ զթագուհին տըւեալ Հեթմոյ՝ թագաւորեցուցին: (Մ7261, Մ10202) Եւ զի Լեւոն որդի ոչ ուներ, այլ դուստր մի Զապէլ անուն, զոր ետուն Փիլիպեայ ումեմն Ֆռանկի, որ ոչ վարէր զիշխանութիւն ըստ կամաց իշխանացն, վասն որոյ ընկեցեալ զնա, ետուն Զապէլ Հեթմոյ՝ որդւոյ Կոստանդեայ, եւ թագաւորեցուցին զնա: (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Ի ՈՀԳ (1224) թվին Լաշա Գօրգի մեռաւ, եւ Ռուսադան թագաւորեաց: Եւ հեղեղն զխլաթ աւերեաց: Ի սոյն ամի Աշրաֆն զխլաթ էառ ի Ղազուն:
1225	ՌՄԻԷ 1227	ՈՀԴ 674	(Մ1899) Ի ՈՀԴ (1225) թվին ըմբռնեցին իշխանքն զթագաւորն Ֆիլիպ յայնկոյս գետոյն Զահանայ, որ ունէր ընդ իւր եւ զԶապէլ թագուհին եւ գնայր յԱնտաք եւ կապեալ զնա եդին ի զընտան, իսկ խորհրդով կաթուղիկոսին եւ ամենայն իշխանացն զԶապէլ՝ դուստրն Լեւոնի արքայի, ամուսնացուցին ընդ Հեթմոյ՝ որդւոյ Կոստանդեա աւաք պարոնին, եւ օծին զնա թագաւոր Հայոց, եւ թագաւորեաց ի Կիլիկէ ի ՈՀԵ (1226) թվին՝ կացեալ ամս ԽԵ (45): (Մ5889) Ի թվին ՈՀԴ (1225) փայլէր իմաստութեամբ սուրբ վարդապետն Վանական ի վերին կողմանս Աղվանիցն. սայ աշակերտ մեծին Մխիթարայ, որ վաղճանեցաւ[450]: (Ե3701) Ամիր Զաքարէ մեռաւ: (1484) Սուլտանն եհար զՎրացին ի Գառնի[451]: (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Ոչ գոյր թագաւոր[452]: Յայսմ թվականիս բազում աւեր եւ անչափ դառնութիւն եւ սպանմունք հասաւ աշխարհիս մեր, զի բորբոքեաց ի հարաւոյ հուր բարկութեան եւ եկեր զգեղեցկութիւն աշխարհիս մեր: Եկ Զալալադին սուլտանն Խորասանայ, որդի Խորազմա շահի, եւ եկն փախստեամբ յերեսաց Նետողաց: Եւ անց անդ Պարսիկս ի մէջ երկրայս, աւերելով եւ կոտորելով, եւ զերկիրս Հայոց հրդեհէ սրով, քակեաց եւ աւերեաց եւ

			հանդիպեալ զօրացն մերոց՝ Հայոց եւ Վրաց ի գաւառն Այրարատու, արձանանայր ընդդէմ նոցին: Եւ էր մեծ զօրավարն Իւանէ, ժողովեալ զօրս ԿՌ (60 000): Բայց բարկութիւնն Աստուծոյ զարթուցեալ էր ի վերայ սոցա վասն անօրէն եւ անուղղ(ե)այ գնացից իւրոց: Առանց յաղթութեան եւ պատերազմի փախստական լինէին ընդ քաղաքագեղն Գառնոյ: Եւ առանց ձեռին եւ սրոյ իբր յաներ(եւ)ոյթ հրեշտակէ ուժգին հողմով հարեալք գահավէժ եղեն ընդ մեծ խրամն, եւ առհասարակ սատակեցան, եւ սակաւ ի նոցանէ, թէ ապրեցան եւ ինքն մազապուրծ եղեալ անկան ի յամուրն Քեղէ: Իսկ խորազմիքն անտէրունջ գտեալ զաշխարհս, յանխնայ կոխեաց եւ աւերեաց եւ գնաց մինչ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, եւ արեամբ քրիստոնէից ելից զսուրբ տաճարն եւ զփողոցսն, բայց ինքն, ասի սպանեալ ի Հռոմոց յաննշան արանց: Եւ զկնի այսորիկ ամենայն ցասումն եւ պատուհաս բազմացաւ յաշխարհիս մեր չարաշշուկք, զի ի ջուրս եւ յամանս եւ յանկողինս եռային ի տուէ եւ ի գիշերի: Եւ եկն մարախ սաստիկ եւ եկեր մինչ ի ծովն Ովկիանոս, եւ ապա սով սաստիկ, որ չեւ էր եղեալ յաշխարհի, եւ ապա գայլ մարդախանձ, այսպէս տեսիլ եղաք ամենայն մսեղեաց: Եւ յետ Բժ (12) ամի Խորասմին ոչ շատացաք այնու, այլ եկն ազգն Նետողաց Թաթարն, անընդել եւ ահագնատեսիլ եւ անյագ գազանն: Եւ ծածկեցին զերեսս աշխարհի, զորոց զանհնարին գործսն եւ զանցս աղէտիցն, ոչ բնաւ լեզու բանիւ բացայայտել, այլ միայն լռել, որոց գլխաւորքն կոչէին Չորման եւ Չաղաթայ, զորս յիւրում տեղոջ թուականին կարգեցից: (Հ3) Մեռաւ Քուրետի սուլտանն Դամասկոսի[453]:
1226	ՌՄԻԸ 1228	ՈՀԵ 675	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Թագաւորէ Հեթում, այր բարի եւ յաղթանդամ, յաջողակ յամենայն բանս, թագաւորէ ԽԵ (45) ամ: (Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Թագաւորեաց Հայոց Հեթում՝ որդի Կոստանտեա աւագ պարոնին

			Հայոց, ամս ԽԵ (45)[454]: Ի ՈՀԵ (1226) թուին Խորազ[մ]քն ի Խլաթ եւ եկն Խ (40) օր պաշարեաց եւ չկարաց առնուլ: (Ե3701) Ղազան էառ զԽլաթ:
1227	ՌՄԻԹ 1229	ՈՀԶ 676	(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ , Գրիգորիոս Թ (9) երրորդ ազգաւ Գամբանիացի ամս ԺԵ (15): (Մ1869, Մ3072) Խորազմ էառ զՄուշ եւ զՏօ-ղոտափ: Քեմիլն էառ զԱմիթ: (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Խայտն կո-չեցեալ Աննայ[455] ուժով սուլտանին նստի կա-թուղիկոս ի Հռոմ[456], հակառակ աթոռոյն Կոս-տանդեա եւ ղապալեաց զկաթուղիկոսութիւնն, որ եւ յետ բազում հնարից, աղօթիւք խնդրէ տէր Կոստանդին բառնալ յերկուցն մինն, եւ որ հաճոյն է Տեառն մնալ եւ միամտել: Ապա ի տեսլեան հրեշտակ Տեառն գրէ յաջ թաթի ձեռինն տէր Կոստանդնայ՝ եթէ բարձցի կա-թուղիկոսութիւնն յԱննայէ եւ տացի Կոստանդ-նայ ծառայի Աստուծոյ, եւ եղեւ այնպէս, զի ի գի-շերի սատակեալ այրն այն, բարձաւ ի միջոյ[457]: Եւ փայլէր ի Կիլիկիա տէր Գրիգոր Սկիւռացին: Մեռաւ աթաբակ Իւանէ:
1228	ՌՄԼ 1230	ՈՀԷ 677	(Ե3701) Հոռոմցին կոտորեաց զԽորազմն: Հո-ռոմցին էառ զԽլաթ: Քէմիլն ի Հոռոմն եկաւ եւ չկարաց առնուլ: Եւ յայս ամի նորոգեցաւ պարիսպն Տարսօնի ձեռամբ թագաւորին Հայոց Հեթմոյ: (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Խորազմն զՄուշ, զՏօղուտափ եւ զՀամբպետ աւերեաց: (Մ7261, Մ10202) Ըմբրօր Ֆտրիկն էանց յայս կոյս ծովուն եւ շինեաց զԵօֆն, եւ արար սէր ընդ Քէմլն եւ դարձուցին սիրով ի քրիստոնեայսն զերուսաղէմ, զՆազարէթ եւ զԼիոն[458]:
1229	ՌՄԼԱ 1231	ՈՀԸ 678	(Մ1899) Ի ՈՀԸ (1229) թվին եկն Խորազմն եւ Ժ (10) ամիս սղարեալ զԽլաթ եւ էառ զնա, նոյնպէս եւ զԿարնոյ քաղաք, եւ եդ մելիք Կարնոյ քաղաքայ զՍուչմանն, եւ գնացեալ ի Միջագետս եհաս մինչեւ ի Հալապ եւ յոյժ աւե-րեաց զնա եւ գերեաց: Իսկ Ալադին սուլտանն եւ

			Աշրաֆն մարտեան ընդ նոսա եւ կոտորեցին զնոսա յոյժ եւ զՍուչման ամիրայն[459]՝ որ առաջնորդ էր Խորազմին՝ կալան եւ սպանին: (Վ1253) էին եւ զաւրք թագաւորին Հայոց Հեթմոյ եւ Փռանգաց ծովեզերաց՝ ընդ յԱլատին սուլ-տանին, որ եւ յաղթութիւն արարին իսկ: Ալամնաց թագաւորն ել բազում զաւրաւք ի Կիպրոս կղզի եւ գնաց ի յԵրուսաղէմ երկիր պագանել: Իսկ փրէրքն Դամփլուն[460] գրեցին [զսու]լտանն Մսրայ՝ ի Քէմլն, գալ զաւրաւք, զի տացէն զումբրուրն ի ձեռս նորա: Իսկ Քէմլն զգիր փրէրացն առաքեաց առ ումբրուրն եւ եցոյց զնենգութիւն ազգին իւրոյ, եւ ետ սիրով յԵրուսաղէմ յումբրուրն եւ արարին ընդ միմեանս սէր, եւ գնաց ումբրուրն եւ սպառնայր փրէ-րացն[461]: (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Փռանգն յԵրու-սաղէմ էառ, եւ Հոռմցին զԽորազմն կոտորեաց եւ զԿարնոյ քաղաքն էառ:
1230	ՌՄԼԲ 1232	ՈՀԹ 679	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Խորազմն զԽլաթ աւերեաց:
1231	ՌՄԼԳ 1233	ՈՁ 680	(Վ1253) Կոտորեաց զՏաթարն յեզնկայ քա-ղաքն, ի սոխնոցն բազում մարդիկ: (Ե3701, Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Թաթարն զԽորազմն կոտորեաց եւ զԳանձակ էառ:
1232	ՌՄԼԴ 1234	ՈՁԱ 681	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Թաթարն եկն ի Խլաթ շատ աւեր արար, եւ Քէմիլն էառ զԱմիթ: (Ե1801) ՈՁԱ (1232), Առաւ Գանձակ քաղաք ի Տաթարեն:
1233	ՌՄԼԵ 1235	ՈՁԲ 682	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Հոռմցին էառ զԽլաթ:
1234	ՌՄԼԶ 1236	ՈՁԳ 683	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Հոռմցին զԽար-բերդ էառ:
1235	ՌՄԼԷ 1237	ՈՁԴ 684	(Մ1899) Ի ՈՁԴ (1235) թվին եկն Թաթարն հրա-մանաւ Չանկըզ խանին, որ էր զօրավար Չար-մաղան նուինն, եւ աւերեաց զբազում գաւառս, զՀայոց, զՎրաց եւ զԱղուանից եւ գերի վարեաց զամենեսին: (Ե3701) Եկն Խորազմն եւ Ժ (10) ամիս պա-

			շարեաց զԽլաթ եւ առ զնա: Իսկ Ալատին սուլթանն եւ Աշրաֆն կոտորեցին զնա Եասսի Ջիմէնն: (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Շահնշահ՝ որդի Զաքարէին, էառ զՍուրբ Մարի: Եւ Հոռմեցին էառ զՈւռհայ, զԽառզս եւ Աւերակսն[462]:
1236	ՌՄԼԸ 1238	ՈՁԵ 685	(Ե3701) Թաթարն էառ զԱնի եւ զամենայն տիեզերս[463]: Դարձեալ ի սոյն թվին շարժ եղեւ Եզընկան, եւ եկեղեցի մի փլաւ: (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Յայսմ ամի էառ Չորմանն եւ Չաղաթայն զբոլոր երկիրս մեր՝ զԱնի, զԿարս եւ զԼաւռէ, զՍուրբ Մարի: Եւ զԱւագն ի դուրս բերին ի բերդէն Կայենոյ: (Վ1253) Շարժ եղեւ, եւ ի Սուրբ Գրիգոր եւ ի Թորդան եկեղեցի փլաւ եւ դարձեալ շինեցաւ:
1237	ՌՄԼԹ 1239	ՈՁԶ 686	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Մեռաւ Ալադինն, Աշրափն եւ Քէմլին: (Հ3) Զաւրքն Հալպա կոտորեցին զԴամբլցիք ի Դարպսակն[464]: Եղեւ պատերազմ Լանկպարտացն ի Կիպրոս, եւ յաղթեցան Լանկուպարտքն[465]:
1238	ՌՄԽ 1240	ՈՁԷ 687	(Ե3701) էառ թագաւորն[466] զԼոռի եւ զԱնի: Եւ Սարաճինացիք հալածեցան ի Սպանիոյ:
1239	ՌՄԽԱ 1241	ՈՁԸ 688	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Արեգակն խաւարեցաւ, եւ Թաթարն զԿարնոյ քաղաք եւ զգաւառն աւերեաց, եւ Հոռմցին զԿարս էառ: (Ե3701) Խաւարեցաւ արեգակն, եւ այսմ թըվին մեռաւ Աւագն: (Հ3) Ռե տը Նաւարն եւ այլք բազումք ի Ֆռանգաց եկին ի յԱքքա եւ կոտորեցան ի Ղազզէ եւ յԱսխալան[467]:
1240	ՌՄԽԲ 1242	ՈՁԹ 689	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Սուտ վարդապետ մի յարեաւ Մահմետի ի Հոռոմք եւ անուանեաց զինքն Բաբ Ռասուլ[468] եւ յետ սա-կաւուց բարձաւ չարն ի միջոյ:
1241	ՌՄԽԳ 1243	ՈՂ 690	(Վ1253) Իշխանն Աւագ՝ որդի Իւանէի, եկն առ Չարմաղանն եւ ի սկզբանն սպառնացաւ, բայց յետոյ մեծարեաց եւ ետ ի ձեռն նորա զիւր

			աշխարհն եւ ընդ ինքեան շրջեցուցանէր, եւ գան ի վերայ քաղաքին Անոյ եւ զի ոչ եկին հնազանդութիւն, պատերազմաւ առնու զնա եւ բազում կոտորած առնէ: Բայց նախախնամութիւն Աստուծոյ երեւեցոյ, զայր մի ի մէջ նոցա, Ասորի ազգաւ, անուն նորա Սիմէոն, զոր Ռապան Աքա կոչէին, որ եւ բազում դիւրութիւն քրիստոնէիցն զնովաւ[469] լիներ. զի երթեալ առ ղանն ա՛ռ թուղթ ի նմանէ, զի մի՛ զանմեղ մարդիկ սպանցեն եւ լսէին ամենեքեան նմա: Ապստամբեաց Լամբրաւնացի Կոստանդին ի թագաւորէն Հեթմոյ եւ ել առ ի Խիաթատին սուլտանն եւ առեալ զաւրս գայ ի Կիլիկէ եւ յաղթեալ լինի: (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Հալբցին զԽորազմն կոտորեաց, եւ Հոռմցին զԱմիթ էառ: (Մ7261, Մ10202) Սկիզբն թագաւորութեանց օսմանացոց, Օսմանն շինական գոլով յարեցաւ յԱլատին սուլթանն Միջագետաց եւ առեալ զօրս ի նմանէ եւ էառ զԲուրսայ եւ թագաւորեաց ամս ՃԸ (58), որոյ անուամբն Օսմանլու կոչեցան:
1242	ՌՄԽԴ 1244	ՈՂԱ 691	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Առ այսու ժամանակաւ փայլէր ծերացեալ աւուրբք մեծ վարդապետն Վանական՝ աշակերտ Գոշին, եւ լցոյց զերկիրս աշակերտելաւք, որք փայլէին գիտութեամբ, որպէս զաստեղս՝ զՎարդան, զԿիրակոս, զՈւսէփ, զԱռաքեալն եւ այլք բազում, որք էին սիւնք եկեղեցոյ: Թաթարն զԿարնոյ քաղաք էառ եւ բազում գրեանս եւ սպաս եկեղեցոյ գերեցին եւ լցաւ երկիրս մեր[470]: (Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Պապ եկաց ի Հռոմ, Սէլէստինոս չորրորդ ծնեալ ի Մելանոյ կացեալ աւուրս ԺԷ (17): Կլիմցի քարմտերն[471] գողցան զՊռականա[472] ի Թուրքէն: (Ե3701) Պաչօն էառ զԿարնոյ քաղաքն, Հոռոմք՝ զեզընկայն, եւ ԺՁՌ (16 000) մարդ մեռաւ: (Հ3) Մելիք Նասրն ետ զերուսաղէմ քրիստո-

			նէիցն, եւ Խորազմիքն մտին ի Շամպն:
1243	ՌՄԽԵ 1245	ՈՂԲ 692	(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ Ինաւսանդ չորրորդն ամս ԺԱ (11): (Մ1899) Ի ՈՂԲ (1243) թվին, եկն Թաթարն ի Հոռոմս, որոյ զօրավար էր Բաչօ նուինն, եւ խանգրեաց զԽիաթադին սուլտանն եւ էառ զբոլոր Հոռոմք եւ տիրեաց: (Ե3701) Յաղթեաց Թաթարն սուլթանն Խայաթատնին եւ էառ զամէն Հոռոմք: Եւ Հոռոմցին յԱմիթ եկաւ, չկարաց առնուլ, էառ զՍեւերակն, զՈւրհայ եւ զԽառան: (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Թաթարն զՀոռոմք կոտորեաց, զեզնկան, զ[Սեւ]աստ եւ զԿեսարիա[473] էառ:
1244	ՌՄԽԶ 1246	ՈՂԳ 693	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Թաթարն ի Հալապա[յ] դուռն գնաց եւ զԲաղէշ էառ: (Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Խորազմիք մտան յերկիրն Երուսաղէմի եւ խանգրեցին զՍէիլցիք[474]:
1245	ՌՄԽԷ 1247	ՈՂԴ 694	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Թաթարն զԲաղդատա դուռն նվազեցոյց: Եւ Ռուգնադին սուլտանն մեռաւ, եւ որդիքն ի Հոռոմք գնացին: (Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Հոռ(ո)մաց հեծելն սղարեցին զՏարսուս եւ թագաւորն Հեթում ետ զՊռականա եւ արար հաշտութիւն[475]: Ինաւսանդ պապն բանադրեալ եհան ի ժառանգութենէ զՖրտրիկ ընբրուրն[476]:
1246	ՌՄԽԸ 1248	ՈՂԵ 695	(Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Պարոն Սմբատ՝ գաւնտուստապլն Հայոց, գնաց ի Կիուկ խանն: Թագաւորեաց Կիպրոսի Հեռի գէրն[477]: (Մ7261) Յայսմ ժամանակի առաքեաց Կոստանդին կաթողիկոս ընծայս եւ անօթս եկեղեցոյ սուրբ Թադէոս առաքելոյն եւ թուղթ շրջաբերական ի ձեռն նորա առաջնորդ Յովսէփ վարդապետին, զի շին(ե)սցէ զեկեղեցին եւ զգաւիթ նորա հրամանաւ Թաթարին, որ(ոյ) անուն էր Անագուրակ նուին[478]: (Ե3701) Տիրեաց Թաթարն աշխարհին: Մեռաւ Աշրաֆն, Քէմիլն, Տէլէդինն:

1247	ՌՄԽԹ 1249	ՈՂԶ 696	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Ռուսադանն մեռաւ, եւ Փոլատն ի Վրացտուն էրեկ: (Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Մսրցիք առին ի Ֆռանգնոյն զՏապարի եւ զԱսխալան[479]: (Ե3701) Հալապցին զԽորազմ կոտորեաց: Թաթարն զՀոռոմցին կոտորեաց եւ զՍեւաստ էառ: Թաթարն զԲաղտատայ դուռն վազեց: Սուլթան Ղիսատինն[480] մեռաւ, Գ (3) որդի եթող:
1248	ՌՄԾ 1250	ՈՂԷ 697	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Դաւիթ թագաւորն[481] բազում հնարիւք զերծեալ ի ձեռաց Ռուսուդանին, եկն ի ղանէն եւ նստաւ յաթոռն: (Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Լաւիզ ըռէ տը Ֆրանցն եկն զաւրաւք ի Կիպրոս:
1249	ՌՄԾԱ 1251	ՈՂԸ 698	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Յայսմ ամի մեռանի Աւագն՝ որդի Իւանէի, անորդի եւ թողու դուստր մի Խոշաք անուն, եւ սուգ անհնարին պատեաց զերկիրս մեր, եւ կին նորա Գոնցայն առնէ զտէրութիւն աշխարհիս: Կրկին անգամ յաւարի հարուբէնալն պեղծ զաշխարհս մեր, եւ Սամցխէ աւիրեցին, եւ Պապայն փախեաւ: (Մ1869, Ե3701) Արեգակն խաւարեցաւ: Պապայ Ռասուլն ելաւ[482]: (Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Ըռէ տը ֆրանցն էառ զՏամիաթ[483]: (Վ1253) Տէր Սարգիս եպիսկոպոս լեալ Եզընկային:
1250	ՌՄԾԲ 1252	ՈՂԹ 699	(Մ1898, Հեթում Կոռիկոսցի) զԸռէ տ(ը) ֆրանցն կալան Մսրցիք եւ առեալ գին զՏամիաթն եւ ՃՌ (100 000) մարկ արծաթ, ազատեցին զնա[484]: Կայսր եկաց Հռոմա Կիլամ տը Հաւլանդն ի յԱլամնաց, կացեալ ամս[485]: (Վ1253) Թագաւորեաց Մանկո ղանն: (Ե3701) Թաթարն զԱմիթ կոտորեաց: Աւագն մեռաւ:
1251	ՌՄԾԳ 1253	Չ 700	(Մ7261, Մ10202) Ի սոյն ամի եղեւ խնդիր ի Լատինացւոց վասն Հոգւոյն Սրբոյ, թէ ի Հօրէ եւ յՈրդոյ բխէ, եւ գրեցին առ մեր կաթողիկոսն, զոր

			եւ ընկալեալ եղեւ ի հայրապետին Կոստանդեայ եւ ի թագաւորէն եւ ի Վանական վարդապետէն եւ ի Կիրակոս վարդապետէն պատմագրէ: Եւ ի Վարդան վարդապետէն ոչ եղեւ ընկալեալ, Հաղբատեցւոյ[486]: (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) յՉ(1251) թւին կատարեցաւ սուրբն Աստուծոյ Վանական վարդապետն եւ տէր Յովան[ն]էս մեծ եպիսկոպոսն Սիւնեաց: (Մ1899) Ի Չ (1251) թվին փոխի առ Քրիստոս սուրբ եւ առաքինի այրն Աստուծոյ եւ իմաստուն վարդապետն Վանական՝ յԱրեւելս Հ (70) ամաց[487]: Մեռանի իմաստուն եւ բարեպաշտօն եւ պարկեշտ թագուհին Զապէլ դուստր Լեւոն թագաւորին, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի: (Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Սիր Հալկամն[488] գողացաւ զՊռականա ի Թուրքէն, եւ ի սոյն գիշերն առին եւ զՆորբերդ յանաւրինաց տուրտուութեամբ[489]: Բրինծ եկաց Անտաքո Պեմունդ զերրորդն[490]: (Ե3701) Այսմ ամի եկն մարախ:
1252	ՌՄԾԴ 1254	ՉԱ 701	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Մանգու ղանն[491] թագաւորեաց իւրում ազգին՝ տիրեալ ընթանուր աշխարհի: Եւ մարախ եկն յերկիրս: (Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Վախճանեցաւ թագուհին Հայոց Զապէլ: Ըռէ տը ֆրանցն շինեաց զճաֆն, եւ Ճուլիան՝ Սայիտոյ տէրն՝ էառ կին զՖիմի դուստր թագաւորին Հայոց Հեթմոյ[492]: (Վ1253) Ի սահմանս Խաչենոյ կարկուտ եկն սաստիկ, եւ ասացին՝ ձկունք զհետ անկանել իբրեւ թզաչափս: (Ե3701) Թաթարն Կարնոյ քաղաքն էառ:
1253	ՌՄԾԵ 1255	ՉԲ 702	(Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Թագաւորն Հայոց Հեթում գնաց ի Մանկո խանն, եւ դուստր նորա՝ Սպիլ եղեւ կին Պեմունդ բրընծին Անտիոքա: (Ե3701) Թաթարն ի Հալպայ դուռն գնաց:

			Եւ Աւետիսն[493] զԱրճեշն շինեաց:
1254	ՌՄԾՁ 1256	ՉԳ 703	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Եկն աշխարհաւերն Արղուն Ալադինն[494] եւ արար աշխարհագիր, զաշխարհս ամենայն եւ զամենայն գլուխ եդ ընդ հարկաւ: (Ե3701) Շարժ եղեւ էզընկէն եւ Արղունն խան նստաւ, սա համարեաց զաշխարհս եւ եդ հարկ ի վերայ ամենից գլխոց: (Մ1898, Հեթում Կօռիկոսցի) Պապ եկաց ի Հռոմ Աղէքսանդր չորրորդն ամս է (7): Յայտնեցան Աղաճարիքն եւ Իսլամպակն[495]: Ըռէ տը ֆրանցն դարձաւ իւր աշխարհն: Վախճանեցաւ Քուռաթ[496] որդի ընբրուրին: (Վ1253) Շարժմամբ կործանեցաւ Եզնկայն:
1255	ՌՄԾԷ 1257	ՉԴ 704	(Վ1253) Թագաւորն Հեթում գնաց առ Մանկո խանն եւ դարձաւ ի մի ամ:
1256	ՌՄԾԸ 1258	ՉԵ 705	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Աստ մեռաւ Բաղու ղանն հիւս(ի)ւսային եւ որդին իւր Սարթախն: Հուլաւուն եկն յԱլամութս[497], զՄլիէտն էառ, եւ Բաչուն ի Հոռոմք գնաց եւ զսուլտան կոտորեաց: (Մ1898, Հեթում Կօռիկոսցի) Թագաւորն Հայոց Հեթում եկն ի Մանկո խանէն, եւ արշաւեաց ի Մուռանտինն, եւ ձիաւորեցոյց զԼեւոն որդի իւր[498]: (Վ1253) Եկն Ղատա ղանն յԵզնկայն եւ զՔուրդն կոտորեաց եւ զԿամախ սղարեաց: (Մ1869) էջանն զԲաղդատ էառ Ուղայունայ՝ եւ ապրեցաւ ամս ԺԳ (13):
1257	ՌՄԾԹ 1259	ՉՁ 706	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Ղադա ղանն զէզնկայն աւերեաց:
1258	ՌՄԿ 1260	ՉԷ 707	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Հուլաւուն զԲաղդատ էառ, եւ Արղունն[499] Ապաղանին որդի ելաւ: (Մ1898, Հեթում Կօռիկոսցի) Վախճանեցաւ թագաւորեղբայրն Հայոց պարոն Լեւոն՝ մարաջախդն Հայոց: Հուլայուն խանն էառ զԱլամուդ ի Հաշիշեցն[500] եւ զՊաղտատ ի խալիֆայէն:

1259	ՌՄԿԱ 1261	ՉԸ 708	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Դաւիթ թագաւորն յԱփխազք մտաւ, եւ Դէմէտրէ եղաւ: Հուլաւոյն պաշարեաց ամ մի զՄուփարղինն եւ սովամահ արարեալ էառ զքաղաքն[501]: (Մ1898, Հեթում Կօռիկոսցի) Հեթում թագաւորն գնաց ի Տրապաւլիս, եւ ձիաւորեցոյց զորդին իւր զպարոն Թորոս, եւ առին զՄունդաս եւ խանգրեցին զԹուրքն, որ սղարեց զՄունդաս[502]:
1260	ՌՄԿԲ 1262	ՉԹ 709	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Թաթարն զՀալպ աւերեաց, եւ Մանկու ղանն գնաց յԱստուած: (Մ1898, Հեթում Կօռիկոսցի) Հուլայունն էառ զՀալպ եւ տիրեաց Շամպուն[503] եւ ի սոյն ամի Մսրցիք խանգրեցին զՔիթպաւղայն եւ սպանին զԽուբուզ սուլտանն Մսրա եւ եկաց Պնտուխտարն[504]: Հեթում թագաւորն գնաց ի յՈւճն, հետ Ալիճախին[505]: Ճուլիան Սայիտոյ տէրն ծախեց Դամփլուն զՍայիտէ եւ զՊիաֆաւրդն: Թուրքմանքն բռնեցին զՊերուբայ տէրն: (Մ1899) Ի ՉԹ (1260) ամին եկն Հուլայուն ի Հալապ՝ եւ էառ եւ աւերեաց յօյժ զքաղաքն եւ զբերդն, անթիւս սպան եւ անթիւս գերեաց, նոյնպես էառ եւ զԴըմըշխ: Եւ ի սոյն ամի Պունդուխտարն նստաւ սուլտան Մսրայ: (Ե3701) Սուլթանն Մսրայ կոտորեաց զզօրս Թաթարին, որ էր գլխաւորն՝ (Ք)իթպուղայն, եւ ի սոյն թվին Հուլաւու խանն էառ զՀալապ: (Մ1484) Բարաքէն ի դուրս երեկ, դարձաւ եւ մեռաւ:
1261	ՌՄԿԳ 1263	ՉԺ 710	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) ՁՁաքարէ սպանին եւ հայրն՝ Շահանշահ մեռաւ[506]: Եւ ի սոյն ամի կատարի վկայական մահուամբ մեծ իշխանն Խաչենոյ Ջալալն ի Ղազմինն, հրամանաւ Արղունին, եւ բերեալ դնի ի Գանձասար: (Մ1898, Հեթում Կօռիկոսցի) Պապ եկաց ի Հռոմ Ուրբանոս չորրորդն, որ կացեալ էր պատրիարգ Երուսաղէմի ամս Գ (3):

			Հեթում թագաւորն Հայոց փեսայացոյց զԿոստանտին՝ որդի տեառն Սարվանդիքարին, ի դուստր իւր Ռիթա: Եւ ի սոյն ամի մեռաւ Ճաւֆրի՝ տէրն Սարվանդիքարին[507]: Պելիան Արսուֆին տէրն ծախեց զԱրսուֆն Ոսպեթլուն[508]: Վախճանեցաւ թագուհին Կիպրոսի Բլաժանսն եւ եղեւ պայլ Կիպրոսի Ոյկ տը Լըզինայն[509]: Պալիաւլաւղն էառ զԿոստանտինուպալիս ի Ֆռանգնոյն[510]: (Ե3701) Եւ ի սոյն թուին Պաղտատ աւերեաց:
1262	ՌՄԿԴ 1264	ՉԺԱ 711	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Խուլի եւ Բալախայն փախեան[511]: Եւ զԴաւիթ թագաւորն ի դուրս էբեր պարոն Ումեկն[512]: (Մ1484) Շահաբանդին եկեղեցի շինեաց ի Տըփխիս[513]: Պալախէն եւ Ղուլին փախեան, եւ թագաւորն Հեթում ի դուրս երեկ:
1263	ՌՄԿԵ 1265	ՉԺԲ 712	(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Կլեմայես չորրորդ, ամս է (7): (Մ1899) Ի ՉԺԲ (1263) թվին էառ Հուլայուն զՄօսլ: Ի սոյն ամի փոխեցաւ առ Քրիստոս Կոստանդին աւագ պարոնն եւ թագաւորահայրն՝ ալեւորեալ բարւոք ծերութեամբ եւ լի աւուրբք: Շինեաց զսուրբ ուխտն Խորին, եւ առընթեր նմին զՄիակեցերն նաեւ զԼիսանկան: (Մ5889) Ի թուին ՉԺԲ (1263) ամին փոխի մահուամբ ի Քրիստոս Յոհանէս Գառնեցին[514], յայսմ ամի փայլէր իմաստութեամբ սուրբ Ստեփանոս վարդապետն, որդի Յուսկայ քահանայի ի կողմունս Բերկրու եւ Վասպուրականի[515]:
1264	ՌՄԿԶ 1266	ՉԺԳ 713	(Ե3701) Շահպանտինն տարաւ զվարդապետն Վարդան ի մօտ Հուլաւու խանին, զբազում բանս իմաստութեան հարցումն արար եւ մեծաւ պատուով պատուեաց զվարդապետն: Եւ ագեւոր աստղ երեւեցաւ: (Վ1253) Հրամանաւ Հուլաւունին գնաց տէր Սար[գի]ս ի Կոստանդնուպալիս եւ առնու զդուստր

			թագաւորին՝ Պալիալաւղի, եւ ի դառնալն, զի վախճանեալ էր, առնու Ապաղայ[516]: (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Մեծ բարեպաշտ քրիստոնէից յոյսն Առաւնղուզ[517] խաթունն մեռաւ ընդ Հուլաւուին, եւ ասին՝ դեղակուր լեալ երկուքն յանիծեալ Սահիպէն[518]: Հուլաւուն մեռաւ եւ Ապաղայն յաթոռ նստաւ: (Մ1484) Փոքր թագաւորն զՔարթլ ալափեաց:
1265	ՌՄԿէ 1267	ՉԺԴ 714	(Մ1899) Ի ՉԺԴ (1265) թվին ծնաւ թագաւորին Հայոց որդի՝ Հեթումն[519]:
1266	ՌՄԿԸ 1268	ՉԺԵ 715	(Մ1899) Ի ՉԺԵ (1266) ամին՝ եկն Մսրցին յաշխարհն Կիլիկիոյ եւ աւերեաց յոյժ, այրեաց զկէս երկրին եւ անթիւս կոտորեաց սրով եւ զբազումս գերի տարաւ, ընդ որս եւ զԼեւոն՝ անդրանիկ որդի թագաւորին Հեթմոյ, եւ զմիւս որդին եսպան՝ զԹորոս: Եւ զօրագլուխն էր Սըմբլմօթ: (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Մսրցին մտաւ ի Կիլիկէ՝ զՍիս եւ զայլ աշխարհն աւերեաց, եւ զթագաւորին Բ (2) որդիքն գերեցին՝ զԹորոսն սպանին եւ զԼեւոն գերեցին, աւաղ եւ եղուկ եղեւ Հայոց: Բարքն ի դուրս եկն, որ էր ղան հիւսիսային աշխարհին, եւ պատնէշ կապեաց ի Կուռ գետոյ վերայ եւ ի դառնալն մեռաւ ինքն: (Ե3701) Կոստանդին կաթողիկոսն բերաւ ի Ֆրանկաց զհիւանդ օծանելոյ կարգի օրինակն՝ զձէթ օրհնելոյն եւ հիւանդ օծանելոյն[520]: (Մ1484) էջանն մեռաւ:
1267	ՌՄԿԹ 1269	ՉԺԶ 716	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Մեռաւ սուրբ կաթուղիկոսն Կոստ(ա)նդին ի Ծառզարդար աւրն, եւ պարոն Ումեկն մեռաւ ի Տփխիս: (Մ1899) Տէր Յակոբ ամս Ի (20): Այս տէր Յակօբ այր սուրբ եւ առաքինի եւ յոյժ գիտնական, որ արար զլուծմունս նուրբ գրեանցն դժուարալոյծ բանիցն: (Վ1253) Տէր Յակոբ (կթղ.) ի Տարաւնոյ գաւառէ, ամս ԺԸ (18): (Մ1484) ՁԱնի ծախեցին Շահինշ(ահ)ին որդիքն: Թաքուբարն փախեաւ:

1268	ՌՄՀ 1270	ՉԺԷ 717	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Յայս թւին առաւ աստուածային մայրաքաղաքն Անտաք ի Փունտըխդար սուլտանէն Մսրայ, գերեալ եւ կոտորեալ աւելի զԺԲ (12) բիւր, քակեալ բազում եկեղեցի՝ յատակեցին եւ ծովացուցին զքաղաքն, Ռ (1000) աւաղ մեզ: (Մ1898) Պնդուխտար սուլտանն Մսրայ էառ զԱնտաք ի քրիստոնէից, որ է ի բասածին առնելոյն մինչեւ աստ ՃԿՁ (166) ամ[521]: Կաթողիկոս եկաց Հայոց տէր Յակոբ վարդապետն ամս ԺԹ (19)[522]: (Մ1899) Ի ՉԺԷ (1268) թվին՝ ազատեցաւ ի Մսրայ Լեւոն՝ որդի թագաւորին Հեթմոյ՝ եկեալ մեծաւ փառօք եւ պատուով ի սուլտանէն եւ եղեւ մեծ ուրախութիւն հօրն եւ աշխարհիս Հայոց: Ի ՉԺԷ (1268) թվին զմեծն Անտիոք այրեաց Մսրցին Պանտուխտար սուլտան եւ աւերեաց իսպառ սպուռ:
1269	ՌՄՀԱ 1271	ՉԺԸ 718	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Սահիպն զԽոշաքն էառ ՉԺԸ (1269) թվին: Մեռաւ Աւագ Սարգիս՝ որդի Շահանշահի: Մեծ գոռոզն Թագուդարն մտեալ յԱփխազք, իսկ Սիրամոնն զաւրաւք ի հետմտեալ կոտորէ, եւ զինքն ըմբռնեալ ածէ առ Ապաղայն:
1270	ՌՄՀԲ 1272	ՉԺԹ 719	(Մ1899) Ի ՉԺԹ (1270) թվին վախճան կենաց հասեալ թագաւորին Հեթմոյ, որոյ մեծաւ զղջմամբ բազում բարութիւնս գործեալ եւ կրօնաւոր եղեալ՝ Մակար անուանեցաւ եւ զաստի կեանս թողեալ՝ առ անմահ արքայն Քրիստոս վերափոխեալ լինի եւ կայ հանգուցեալ ի սուրբ ուխտն Դրազարկ: (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Ղան Ապաղայն գնաց բազում զօրաւք ի Խորասան եւ կռուեալ ընդ Փարախին՝ կոտորէ եւ դառնա մեծ յաղթութեամբ: Ի սոյն ամի վճարեցան Բ (2) թագաւորքն՝ Հեթում Հայոց եւ Դաւիթ Վրաց[523]:

			Կատարեցաւ սուրբ վարդապետն Վարդան եւ յետ Ն (50) աւուր՝ Կիրակոս վարդապետն ի Կիլիկիայ:
1271	ՌՄՀԳ 1273	ՉԻ 720	(Մ1898, Հեթում Կոռիկոսցի) Պապ եկաց ի Հռոմ, Գրիգորիոս Ժ (10) երրորդ, զոր տարան ի յԱքայոյ ամս Դ (4): Թագաւորեաց Հայոց Լեւոն, որդի Հեթմոյ՝ ամս ԺԸ (18)[524]: (Մ1899) Ի ՉԻ (1271) ամին օծաւ Լեւոն թագաւոր՝ որդի թագաւորին Հեթմոյ, ի Տարսոն, էր սա այր հեզ եւ երկայնամիտ եւ ժուժկալ, քաղցրատեսիլ եւ պարկեշտ, ողորմած եւ ունկնդիր առ նա բողոքելոց: Սիրէր զեկեղեցիսն Աստուծոյ եւ զվանորայս եւ զեկեղեցականս, մանաւանդ զվարդապետս որ եւ տուն կարգեաց վարդապետաց վասն վարժելոյ զմանկունս զսուրբ ուխտն՝ Մեծքար կոչեցեալ: էր սա ԼԵ (35) ամաց յորժամ օծաւ թագաւոր Հայոց՝ կեցեալ ամս ԺԹ (19): (Ե3701) Այսմ ամի Ժ (10) ազգ քրիստոնէից մոլորեցան վասն Ջատկին:
1272	ՌՄՀԴ 1274	ՉԻԱ 721	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Յայսմ ամի կատարեցաւ մեծ եւ փառաւոր իշխանն Սմպատ ի ցեղէն Աւրբէլանց: Դեմէտրէ թագաւորէ Վրաց[525]:
1273	ՌՄՀԵ 1275	ՉԻԲ 722	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Եկն Արղունն եւ կրկին զՎիրս եւ զՀայս աշխարհագիր առնէ: Եւ Տրապիզոնա թագաւորն տա զդուստրն ի կնութիւն զդիտոփալն: Աստանաւր յայտնեցան նշխարիք սրբոց ի Թիլն էզնկային եւ համբաւեցին, թէ սրբոյն Ներսէսի է: (Վ1253) Յայտնեցաւ նշխարք սրբոյն Ներսէսի ի Թիլն: (Ե3701) Դեմետր թագաւոր նստաւ, եւ յայտնեցան նշխարք սրբոյն Մեծին Ներսէսի:
1274	ՌՄՀԶ 1276	ՉԻԳ 723	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Մսրցին ի Սիս մտաւ եւ այրեաց զՍիս եւ զէաս: Եւ շարժն զԱրճէշ եւ զԽլաթ տարաւ սաստիկ:
1275	ՌՄՀԷ 1277	ՉԻԴ 724	(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Կլեմայես Ե (5) երրորդ կացեալ աւր Գ (3), եւ Ադիանոս Ե (5) եր-

			որորդ ամս ԺԱ (11): (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Սիրամոնն յԱփխազ մտաւ եւ բազում աւեր էած: Եւ Արղուն Աղէն մեռաւ: (Վ1253) Կատարեցաւ Սուրբ Կաթողիկէն յեզընկայն:
1276	ՌՄՀԸ 1278	ՉԻԵ 725	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Յայսմ ամի սպանաւ ի Տաճկաց մեծ արքեպիսկոպոսն էզնկային տէր Սարգիս եւ որդին իւր[526] եւ այլ քահանայք, որոց գլխաւորքն՝ Տուքարն եւ Ջալապին: Եւ Ապաղայն ի Հռոմք գնաց եւ վրէժխնդիր եղեւ արեան նորա, եւ բազում ամիրայք էսպան, եւ զՆիկիտա[527] եւ զԽարբերդոյ երկիրն աւերեաց: (Վ1253) Աստանաւր զմեծ քահա(նայա)պետն Եկեղեաց գաւառին զտէր Սարգիս, ի սուրբ քառասնորդսն, անաւրէն հագարացիքն սպանին: (Ե3701) Եւ զԵզեկ եպիսկոպոսն:
1277	ՌՄՀԹ 1279	ՉԻՁ 726	(Մ1899) Ի ՉԻՁ (1271) թվին՝ երկրորդ անգամ եկն Մըսրցին Պեկպար սուլտանն, որ էր ծառայ Պանդուխտարին, յերկիրն Կիլիկեցւոց, եւ այլք ասեն, թէ Պունդուխտարն ինքն եկն բազում զօրօք եւ այրեաց զգիւղ եւ զքաղաք եւ զամենեսին ի սուր սուսերի մաշեաց եւ գերի վարեաց, կտրեաց եւ զկամուրջն Մամուեստիոյ, որ էր ի վերայ Ջահան գետոյ, եւ եհաս մինչեւ ի Կոռիկոս: (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Մսրցին եկն ի Կեսարիա յանցեալ ամն եւ նետահար եղեալ՝ դարձաւ ի Դմշխ, եւ սատակեցաւ անիծեալ Փունդխտարն, եւ յետոյ նստաւ Ալփին: Թաւդան նուինն ԺԵՌ (15 000)-աւ յԱպլասթայն կոտորեցաւ ի Փունդուխտա[ր] սուլտանէն Մսրայ, եւ զՓարուանայն[528] յԱլատաղն կոտորեցին եւ այլս բազումս սպանին:
1278	ՌՄՁ 1280	ՉԻԷ 727	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Ապաղայն ի Խորասան գնաց եւ դարձաւ ի Մուղան: Եւ Լաւռոյ աթաբակն եւ զՏրապիզոնա թագաւորն էսպան:
1279	ՌՄՁԱ 1281	ՉԻԸ 728	(Վ1253) Հռոմոց Թուրքն այրեաց զհռչակաւոր

			մենաստանն զՍկեւռայն եւ գերեաց զԱւագ Մլիճն եւ սպանի բնակչացն անձինս Զ (6): Մանկու Թամուրն Մսըր գնաց կոտորեցաւ: (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Կատարի մեծ վարդապետն Յովսէփ ի վանսն Ախչոյ:
1280	ՌՄՁԲ 1282	ՉԻԹ 729	(Ե3701) Յայսմ ամին յետ ԻԲ (22) ամին եւ ԻԳ (23) յաւուր թագաւորութեանն Միխայէլի, թագաւորէ Յունաց որդի նորա Անդրոնիկոս: (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Ապաղայն ի Քէթոյն եկն եւ զՁալալ Թօրէն էսպան:
1281	ՌՄՁԳ 1283	ՉԼ 730	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Մեռաւ Մանկու Դէմուրն՝ եղբայր Ապաղանին, ի Ջաղաթոյն եւ Շիպաուչին՝ ի Բաղդատ, եւ նստաւ յաթոռն բռնութեամբ Թագուդարն՝ Ահմատ անւանեալ, Մահմետի աւրինաւքն: Մանգու Դէմուրն գնաց բազում զաւրօք ի Հալբ, եւ պարտեցաւ ի դաշտն Համսա ի Մսրցոյն եւ փախեաւ: Եւ Աբաղէն ի Ռահբէն գնաց եւ դարձաւ ի Բաղդատ: (Ե3701) Շարժ եղեւ Եզընկէն, Աստուած պահեաց, որ ոչ փլաւ:
1282	ՌՄՁԴ 1284	ՉԼԱ 731	(Ե3701) Եկն Մանկու Թամուրն հեծելովք ի Հոռոմք, եւ գնաց առ նայ Լեւոն թագաւորն Կիլիկիոյ, եւ դիմեալ ի վերայ Եգիպտացւոցն ի սահմանս Պաղեստինոյ. սկիզբն յաղթեաց, բայց յետոյ յաղթեցաւ՝ քսու բանիւք, եւ երկուցեալ յետս դարձուցին, եւ թագաւորն դարձաւ ի տեղի իւր[529]: (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Մեռաւ աթաբակ Սադունն[530], կինն՝ Թամարն, լայր թագաւորն Դեմէտրէ: Յարեգ ամիս մեռաւ եւ Ալադին սահիպն: Պակասեաց բարի եւ խաղաղ աշխարհաշէն ղանն մեր Ապաղայն ի Համիան ի սահմի ԻԲ (22)[531]:
1283	ՌՄՁԵ 1285	ՉԼԲ 732	(Վ1253) Արղունն նստաւ գլուխ Տաթարին, որ էր յոյժ սիրող քրիստոնէից: (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Վճարի Շահաբադինն ի Տփխիս: Յայսմ ամի, ի նաւասարդի արեգակն խաւա-

			րեցաւ եւ Պալիալօղն, Հոռոմ կայ[ս]րն, մեռաւ եւ որդին յաթոռն նստաւ: (Ե3701) Շարժն անցոյց զԱրճեշ եւ զԽլաթ: (Մ1484) Ապաղէն ի Հոռոմք մտաւ եւ զՓարուանէն եսպան: Ապաղէն զՏրապիզոնու թագաւորն եսպան: Ապաղէն ի Քեթուն գնաց, զՊապառադինն եւ զՉալա(լ) Թօրէն եսպան: Մեռաւ Ապաղէն ի Խէ (47), միայն՝ ժէ (17) ամ նստաւ:
1284	ՌՄՉԶ 1286	ՉԼԳ 733	(Վ1253) Թագաւորն Լեւոն գնաց առ Արղունն, որ էր գլուխ Տաթարին: Սպանաւ Ահմատ խանն յԱրղունէն: (Վ288) Ի Տփխիս ջրհեղեղ երեկ: (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Մեռանի մեծ եւ բարի իշխանն Հայոց Պռաւշ եւ դնի ի Կեչառուս: Յայս թուականիս եղեն զրոյցք յոլովք եւ զարմանալիք, զոր ի կարճոյ յիշատակեցից: Ի ՉԼԱ (1282) թուին մինչ պակասեաց Ապաղայն, եկն ժառանգ թագաւորութեանն իւրոյ, որդին իւր Արղունն, որ սնեալ էր ի Խորասան, աննման տեսակաւ եւ վայելչագեղ հասակաւ, յոյժ ծանաւթ եւ սիրող քրիստոնէից աւրինացս: Եւ ոչ կարաց առնուլ զտախտ արքայութեանն, այլ բռնացեալ ի վերայ ոմն ի նոյն ցեղէ Թագուդար անուն, եւ յափշտակեալ յինքն զտէրութիւնն, նստի յաթոռն ի Դառն դաշտին, որ այժմ Ալատաղ կոչեն, յԱրտազ գաւառի: Եւ էր ի ծածուկ Մահմետի աւրինաւքն, որ եւ բացայայտեաց զդենն եւ անուանեաց զինքն Ահմատ: Եւ զբնիկ անուն տէրութեանն, որ էր ղան, եդ սուլտան, եւ այսպէս բարձրացան գլուխք ամենայն Տաճկաց: Եւ ժողովէին առ նա ամենայն զազրատեսիլ եւ գարշագործ պաշտաւնեայքն Մահմետի՝ շեխքն եւ ջվալախիքն: Եւ նորա թողեալ զսահման թագաւորութեանն եւ զհոգս զաւրացն ի աշխարհացն, միայն զցայգ եւ զցերեկ կայր եւ զբօսնոյր ի մէջ նոցին: Եւ ի միում աւուր դոյզն ինչ պատճառաւ սպանանէ զեպիսկոպոսն Բերկրոյ, այլ եւս քահանաիւք,

			որք կարգեցան ի դասս սրբոցն: Եւ յերկրորդ ամին սկիզբն արարեալ արքայաշէն տան բնակութեան ի դաշտին Դւնա, մերձ ի սուրբ Վիրապն, ի վերայ ոստոյ միոյ: Եւ եդ հրամայատար եւ գործակալ զմեծ եւ զարքա-յաշուք իշխանն Հայոց զՏարսաիճն, եղբայր Սմպատա արքայի: Եւ ինքն կեցեալ ամս Գ (3) խորհեր ի մտին բառնալ եւ ջնջել ամենեւին զաւանդ քրիստոնէից եւ զամենեսեան բռնի ածել ի հաւատս իւր եւ միապետել զամենայն ազգս: Եւ զայս խորհրդածութեամբ չար գոր-ծակցացն Սահիպ Դիւանին եւ Հասամանկլի շեխոյն, եւ ոչ կարէր յայտնել, զի կասկածէր յորդոյ Ապաղանին՝ յԱրղունէն: Ապա ի ձմե-ռնային ժամանակն ըմբռնեալ զեղբայրն իւր, զմեծ գոռոզն Ղաւնղրաթին եւ սպանանէ եւ այլ բազումս, ընդ որս եւ զերկու որդիքն մեծ կողմնակալին Վրաց ցագանին, կորուսանեն եւ զսուլտանն Հոռոմաց զԽիաթադինն: Զայսոսիկ արարեալ եւ ի ժամ գարնան ի յՉԼԳ (1284) թուին ժամ տուեալ մարտի, ի լոյս բերեալ զմթին խորհուրդն, հրաւիրակ հանեալ ընդ երեսս աշխարհի, հրամայեաց ժողովիլ ամենայն զաւրուն յամենայն կողմանց բոլոր պատրաս-տութիւնք, որ եւ երագ հասեալ կուտէին առ նա անհուն բանակաւք, աւելի քան ՃՌ (100 000)-աց, եւ առեալ գնա, խաղա գոռալով, հպարտ եւ գոռոզ մտաւք եւ հասանի յաշխարհն Խորա-սանա առ ի բառնալ զժառանգ թագաւո-րութեանն զԱրղունն: Եւ ապա ասպատակ հա-նեալ զընդիրսն, որոց զաւրագլուխ քաջազաւրն Ալինախ կոչեցեալ, յառաջեալ զնա մարտիկսն, զոր Մանղլա կոչէին: Եւ գնացեալ նորա գտանէ զԱրղունն սակաւուք եւ պատերազմէ եւ յաղթեալ ի նմանէ դառնա մեծ ամաւթով առ Ահմատն: Եւ նորա մռմռեալ հրամայէ առհասարակ յարձակիլ ի վերայ: Իսկ սակաւաձեռն գոլով Արղունն փախըստեա լինի եւ անկանի յամուր մի, անառիկ մի, յոյժ լայն եւ ընդարձակ, եւ յոլով

			անգամ խնդրէ հաշտութիւն եւ խաղաղութիւն եւ ինքեան ծառայաբար կեալ: Իսկ նորա խոր-ամանկութեամբ խոստացեալ եւ յղէ խնդրակս գալ առ ինքն ի մեծամեծացն /// նորա յամենայն հնարից զերծուցման ապաւի[նեալ քրիստ]ոնէից: Եւ ի մեծ զաւարավարն Սարգիս[532] /// աւք ելանէ եւ գա առ նա: Եւ իբրեւ մերձեցաւ, ձեռս ի յետս կապեցին, որպէս մահապարտ եւ այնպէս ածին ի դուռն արքունի: Ապա ժողովեցան ամենայն բազմութիւնք անթիւ զաւրացն ի տեսութիւն աննման գեղոյն եւ աւտար պատկերին: Ի նոյն ժամուն հրամայէ փողոց կարգիլ բազմութեանն եւ անցուցանէին զանմեղ մանուկն ընդ մէջն, եւ միաբան գոռացին ահեղ աղաղակաւ՝ մօրէ, մօրէ, այսինքն թէ՝ յաղթեցաք: Եւ էր ամենեցունց ի ծածուկ սրտի սուգ եւ յակն արտասուս, առեալ տանէին ի կողմն մահապարտաց եւ նստուցանէին միայն, եւ ի բացեա բազում արք պահակ լինէին: Եւ ինքն իմացեալ, զորպէս որս վայրի ողորմ դիմօք այսր անտր ակն արկէր: Իսկ Ահմատն առեալ զյաղթութիւնն եւ պանծացեալ յանձն դառնայ եւ յառաջէ ընդ զօրսն եւ հրամայէ բերել զնա զկնի, զի կամէր առ գեղեցիկ հարճն իւր հասուցանել եւ առաջի նորա սպանանել, վասն իւրոյ սաստիկ չարութեանն: Իսկ ապա Աստուածն քրիստոնէից, որ ոչ կամեցաւ թողուլ զգինս արեան իւրոյ ի կորուստ, այլ խնայեաց յեկեղեցի եւ արար իրաւուն արդար: Եւ այնմ գիշերի ետ սիրտ ամենայն բազմութեան Արղունին: Եւ դարձան ի նա ամենայն զօրքն ձեռնտուութեամբ Բուղային, եւ Առուխին, եւ Թագանային, եւ կամօք Հուլաչու ղանին: Եւ յարեան ի մէջ գիշերին եւ հանեն զնա ի կապանացն: Եւ զԱլինախն, եւ զամենայն բարեկամսն Ահմատին կոտորեցին յանկողինս իւրեանց: Եւ ի վաղիւն հանին զնա յերիվար եւ ամենեքեան ծունր ածեալ հնազանդեցան եւ հեծան ընդ նմա, եւ որ ոչ հնազանդէր սպանանէին, եւ պնտեցան զկնի Ահմատին, եւ նորա լուեալ փաղչի եւ

			զգենու հանդերձ կանացի, զոր եւ գտեալ քարշեն եւ չարամահ սատակեն, չարն չարաւ բարձաւ ի միջոյ: Ընդ նմին եւ ամենայն համախոհք իւր՝ Շեխն, (Հ)ասամանկլի եւ Սահիպն եւ այլք բազումք: Իսկ աստուածակոչն այն եւ աստուածադիր Արղունն արքայակերպ ճոխութեամբ գայ ի հայրենի աշխարհն եւ իջանէ յԱլատաղն եւ անդ հարեալ զտախտն արքունական, նստի ղան եւ թագաւոր ի վերայ ամենայն աշխարհի: Եւ խաղաղանայ աշխարհս, խնդան քրիստոնեայք եւ պայծառանան եկեղեցիք ի փառս Քրիստոսի, խնամողին զմեզ, որում փառք յաւիտեանս:
1285	ՌՄՁԷ 1287	ՉԼԴ 734	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) ՌՄՁԷ (1287) թվին կատարեցաւ կաթողիկոսն տէր Յակոբ յիսնակին պահոցն, եւ եղաւ ի Դրազարկն: Այջէն մեռաւ[533]: (Մ1899) Ի ՉԼԴ (1285) թվին փոխեցաւ առ Քրիստոս ամենաբարի թագուհին Լեւոն թագաւորին՝ Կեռանն, եւ կայ ի Դրազարկն: (Վ1253) Հաւլաչաւն եւ Քայղաթուն ծմերեցին յեզնկայն: Խարամանն գերեաց զերկիրն Տարսոնի՝ Կիլիկիա: Տէր Կոստանդին, որ եւ մերժեցաւ յաթոռոյն, ամս Գ (3):
1286	ՌՄՁԸ 1288	ՉԼԵ 735	(Մ3613) Տէր Կոստանտն պրունգործին որդին[534] ամս Գ[535]: (Ե3701) Արղուն նստաւ գլուխ Թաթարին ամս է (7), որ էր յոյժ սիրող քրիստոնէից, եւ թագաւորն Լեւոն գնաց առ Արղունն: (Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Աւնորիոս չորրորդ ամս Ա (1): (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) ՁԲուղայն «չինքս» անուանեցին, որ է իշխանաց իշխան: Սպանին՝ զՄաժդատինաթարն, զԱլիչքաիբանն, զՍադադինն եւ զՀարոն՝ Սահիբի որդին:
1287	ՌՄՁԹ 1289	ՉԼՁ 736	(Մ1898) Պապ եկաց ի Հռոմ, Նիկաւլայոս ի կարգէ Մնուրացն ամս է (7):

			(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Ձմեռն խիստ եղեւ: Մեռան մեծ իշխանք ի Խաչէն՝ Աթաբակ՝ որդի Ջալալին եւ Հասան՝ թոռն Դա[ւ]փին, եւ ապա մեռաւ Ճարն ի Տփխիս[536]: Նստաւ մեծափառ շքով կաթողիկոս Հայոց տէր Կոստանդին՝ այր գիտնական եւ արդիւնական, հայր Խորնին: (Ե3701) Շարժ եղեւ ի Եզընկէն ի մայիսի ամսոյն ահագին, եւ բազում մարդիկ մեռան, որ թիւն միայն Աստուծոյ է գիտելի:
1288	ՌՄՂ 1290	ՉԼԷ 737	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Մեծ կոտորումն եղեւ ի Բուղայէն եւ սպանին տարապարտ զթագաւորն Վրաց Դեմէտր ի դաշտին Մուղանայ՝ յեզրն Կուր գետոյն: Մեռաւ բնաւին բարին Լեւոն թագաւորն Հայոց, ի գարնան ժամանակն եւ յաշունն աքսորեցին զկաթողիկոս Կոստանդին, եւ զիրաւ պատճառն ոչ գիտեմ: (Մ2965) Աքսորեցաւ Կոստանդին կաթողիկոսն եւ նստաւ տէր Ստեփաննոս կաթողիկոս եւ զՏրապօլիս էառ Թուրքն: (Ե3701) Տէր Ստեփաննոս (կթղ.) յեկեղեաց գաւառէ ի գեղջէ Խախայ, ամս Դ (4) եւ Հեթում թագաւորէ ամս է (7):
1289	ՌՄՂԱ 1291	ՉԼԸ 738	(Մ1899) Ի ՉԼԸ (1289) թվին փոխեցաւ առ Քրիստոս թագաւորն Լեւոն եւ եթող է (7) որդի եւ Գ (3) դուստր, որոյ անդրանիկ որդին՝ Հեթում, առնու զպարոնութիւն Հայոց, ոչ ամուսնանայ ընդ կնոջ օրինօքն Աստուծոյ, այլ առանց կնոջ մնալով՝ զգենու զգեստ կրօնաւորի, եւ այնպես կացեալ ամս ԺԸ (18) եւ սպանեալ եղեւ յանօրէն Պիլարղու նուինէն՝ առ ոտն բերդին Անաւարզու՝ ինքն եւ եղբօրորդին իւր՝ թագաւորն Լեւոն, եւ գունտըստապլն եւ այլ բազում իշխանք, ոգիք Խ (40): Եւ է (7) որդիքն Լեւոնի այսոքիկ են՝ Հեթումն, Թորոս, Սմբատ, Կոստանդին, Օշին, Ալինախն եւ Ներսէս: (Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Թագաւորէ Հայոց արժանապատիւ այրն եւ բնաւին բարին

			Հեթում՝ որդին Լեւոնի: Եկին զօրք բազումք Թօդա Մանկուին ի դուռն Դարբանդին, եւ զօրաժողով եղեալ յոյժ, եւ Արղունն ախոյանանայ ի Սպիտակ ջրին, եւ առանց պատերազմի դառնան նոքա: (Վ1253) Շարժ եղեւ յեզնկայն, եւ բազումք մեռան ի քաղաքին: (Վ288) Գերեցին Մոլեւոնին փողն:
1290	ՌՄՂԲ 1292	ՉԼԹ 739	(Մ8481, Ստեփանոս Օրբէլեան) Տէր Ստեփաննոս կաթողիկոս Հայոց: Կամիմ եւ աստանաւր զբազում բանից եւ գործոց, որ յայսմ ամի եղեն, սակաւուք նշանակել ձեզ: Ի թագաւորելն Արղունին եւ ի տիրելն ի վերայ ամենայն աշխարհաց եւ ի սատակելն զթշնամիսն, էր բուն պատճառն եւ զաւրավիգն Բուղայն կոչեցեալ, որ յետոյ «չինքսան» անւանեցին: Սա ի մահու եւ ի կապանաց հանեալ զնա թագաւորեցոյց ի վերայ ամենայնի: Եւ սակս այն մեծի երախտեացն պատուեցաւ եւ փառաւորեցաւ ի նմանէ եւ եդաւ ի վերայ ամենայն գործոյ եւ տանն արքունի եւ զաւրաց եւ աշխարհաց իւրոց, այնքան, զի միայն յանուանէն ինքն ունէր զտէրութիւնն եւ Արղունն բաց ի զբաւսնլոյն ի խաղս եւ ի թատերս եւ յորսս, որպէս աւրէնն է հեթանոսաց, այլ ինչ ոչ հոգայր եւ ցնորէր, այլ ամենայն նմա ապաստան լինէր: Եւ էր այրն այն ազամբ Ջալակիր կոչեցեալ եւ այն ազգ յոլով էր, քան զամենայն ազգս եւ յաղթող: Ապա ժողովեալ յինքն, զաւրացաւ, բարձրացաւ, գոռոզացաւ, հպարտացաւ այրն այն եւ ոչ կարաց հանդուրժել իրացն, այլ կամեցաւ անձամբ յափշտակել յինքն եւ զաթոռ թագաւորութեանն եւ զբնիկ այրսն արմատա(ւ)ք ի ջնջել: Ահա այսպէս խորհուրդ ի մէջ առեալ, յինքն գրաւէ զսիրտս ամենայն մէծամեծացն ի ծածուկ: Իսկ կամքն վերին, որ յայնպիսի մահուանէն յափշտակեաց զնա եւ թագաւորեցոյց նոյն եւ աստ տնաւրինեաց, զի զծածուկ խորհուրդ սրտի նորա

			ծանոյց ազդմամբ Արղունին: Եւ յաւուր պայ- մանին, յորում կամէր խորհրդակցաւքն կոխել զազատն արքունի Բուղայն, ինքն իսկ Արղունն վառեալ սուսերաւք եւ զրահիւք ԴՌ (4000) այր, յաւուր տարէմտին իւրեանց եւ խաղայ յանկարծ յառաւաւտուն ի վերայ բանակին եւ տանն Բուղային, զոր գիտացեալ փախըստեա(յ) անկանի ի շամբ մի մեծ եւ երթայ ի տուն Աւլջա խաթունին, եւ անկանի յոտս նորուն, զի զեր- ծուսցէ զարիւն նորայ, ընդ որում երագ ժամա- նեալ ըմբռնէին եւ հանեալ անտի չարամահ սատակէին, ընդ նմին եւ զամենայն ազգատոհմն եւ զարու զաւակ նորին ջնջէին, եւ զամենայն խորհրդակիցսն ի մեծամեծաց սատակեցին՝ զԱրուխն, եղբայր նորին ի Բաղտատայ, զՈւ- ճանն հազարապետ, զՄաժուն հազարապետ, զԽարաունաս թուխլուխն[537] հազարապետ, զԱ- շակ թուխլուխն հազարապետ, զՂազանն ի Շարուն Դ (4) հազարապետ, զՁալալադին սա- հիպն, զՇիմոն քահանայն ասորի եւ բժշկապետ եւ այլս բազումս ի մեծաց եւ ի փոքունց: Եւ եղեւ հարուածք մեծ, եւ հեղաւ արիւն բազում, եւ էր շշուկ եւ ահ մեծ ի վերայ ամենեցուն: Եւ եղեւ այս ի մեծ դաշտին Մուղանայ, յեզր Կուրա, որ էր անհուն գետոց ասպնջական[538]: Աստանաւր ի սոյն աւուրս եղեւ սուգ մեծ եւ անհնարին ամենայն քրիստոնէից, զի թագաւորն Վրաց Դեմէտրէ, վասն խնամութեան նորին, որ տըւեալ էր զդուստրն իւր ի հարսնութիւն Բուղային, կալան եւ եդին ի բանդի, որպէս թէ համախոհ էր նորին, եւ յետ բազում հարցա- փորձութեանց եւ ամենեւիմբ անպարտ լինելոյն, սպանանեն զնա ի նոյն դաշտի եւ ջնջեն ի սպառ զթագաւորութիւն ն(որա) եւ տան զորդին նորա զԴաւիթ ի պա(տ)անդ, եւ զայլսն վարատեալ ցրուեն այսր եւ անդր: Բայց նախ քան զայս բերեալ էին դուրս զՎաղթանգ՝ որդի թագաւորին Սոնաց (Դ)աւթի եւ փեսայացուցեալ քեռ իւրոյ՝ Արղունն, տայ զթագաւորութիւնն Դեմէտրէի նմա

			եւ յուղարկէ ի յարքունական գահն ի Տփխիս, եւ կացուցանէ նմա եւ ամենայն զաւրացն Վրաց սպասալար զորդի Սադոնին՝ զԽութլու Բուղայն[539]: Ի սոյն ամի փոխի մեծ բարեպաշտ թագաւորն Հայոց Լեւոն, եւ յաջորդէ զտեղին որդին իւր՝ արին եւ բնաւին բարին Հեթում, որ ունէր եղբայրս վեց: Եւ յաւուրս գարնան եկն Ալփին, սուլտանն Մսրայ եւ պաշարեաց զմեծ մայրաքաղաքն Տրապալիս, եւ ձեռնտուութեամբ ոմանց յիշխանացն առեալ եղեւ քաղաքն աստուածային, եւ գերեալ եւ կոտորեալ եղեն անհուն քրիստոնեայք: Կործանեցաւ եւ աթոռ բրնձին եւ պատրէարգին, որ փոխեցաւ անդ յԱնտաքու: Եւ անձնաւոր պատկերն Քրիստոսի, որ կանգնեալ կայր ի մէջ եկեղեցոյն, քարշեցաւ եւ անարգեալ խորտակեցաւ ի փողոցսն, անցն անտի եւ աւերեցան բազում եկեղեցիք: Ի սոյն աւուրս մրտեցան ի Խորասան Քէնքշոյն ի ցեղէն իւր եւ Նաւռուզն՝ որդի Արղունին, եւ փախուցին զՂազանն՝ որդի ղան Արղունին, եւ սպանին զՆօխա Արղուչին, եւ Թագանայն փախեաւ եւ եկն ի վեր, եւ ընկեցին զնա ի մեծ պատույն ի դրան արքունի: Եւ յաղագս այդր պատճառի կասկածեաց յազգայնոցն իւրոց, որպէս թէ խորհրդակիցք են Նաւռուզին եւ այլ ապըստամբելոցն զաւրս բազումս առաքէ ի Խորասան ի վերայ նոցա, եւ ինքն աստ ձեռնակալ առնէ զմեծ զաւրաւորսն՝ զՀուլաչու ղանն, զԽարա Նօխայն, որդի Ջէումուտին, զՋաւջկապն, զմինն կորուսին եւ զԲ (2)սն՝ եդին ի բանտի, ի բերդն Գարդաքու, որ ի Մլիդստան: Եւ զԲ(2) որդիք Ահմատին, որ մնացեալ էին, ընկեցին յանբնակ կղզի մի մեծ աղի ծովուն[540], որ մերձ ի Թավրէժ, եւ դեռեւս շմոր էին: Բայց ինքն իսկ Արղունն յաջող ածէր յամենայն իրս ի բանս զինչ եւ առնէր:

			Ի սոյն ամի եւ դեսպանս մեծամեծս եկեալ ի Հռոմա, հր[ա]մանաւ պապին քարոզեցին զՔրիստոս եւ կանգնեցին եկեղեցի [մե]ծ, բազում ծախիւք ի դրան արքունի: Եւ սահմանեցին անխափան կատարել զպաշտաւն փառաբանութեանն Աստուծոյ եւ մեծ խնդութիւն ամենայն քրիստոնէից: Եւ յաւծանելն կանգնեալ կ[այ ան]հուն հանդէսիւ ինքն Արղունն եւ աւրհնեալ կողակ[ից]ն իւ]ր Ու[ր]ու[կ] խաթունն, զաւուրս Գ (3) ի Խաչի տաւնին [ա]ւծողն մեծ կաթողիկոսն, որ ի Բաղդատ Նեստոր ԲԺ (12) [եպիսկոպոսաւք] /// ի Հայոց [եւ] եպիսկոպոսն Վ[ա]ռագա(յ) /// եւ կացուցին զոմն այ(ր) իմաստուն եւ կուսակրաւն քահանայ [աստուածա]բան էրէց Ռապան Սումա կոչեցեալ, այդ այդպէս եղեալ: [Իս]կ յետ ամի միոյ բան ինչ բասրանաց եւ կարծիք յոլով վնասուց եդեալ եւ վկայեալ ի վերայ մեծ քահանայապետին մերոյ Կոստնդնա[ն], զորոյ զիրաւն Աստուած միայն գիտէ, եւ թագաժառանգն Հեթում մեծ ժողովով եւ յոլով հարցաքննութեամբ ի բազում աւուրս տեսեալ զարժանն լուծին դադարեցուց[ի]ն զնա ի պատուոյ կաթողիկոսութեանն, կացեալ ամս Գ (3), եւ ի ձեռն թղթոց մեծապատիւ արամ[բ]ք հրաւիրեցին զմեզ եւ զայլ եպիսկոպոսունս եւ զայլ իշխանս արեւելից երթալ ի թագաւորութիւնն մեր՝ ի Սիս, յընդրութիւն նորոգ հայրապետին, որում անպարապ գտեալ ոչ ժամանեցաք, այլ թողաք ի շնորհս Հոգոյն եւ յընդրութիւն նոցին[541]: Իսկ ի յՉԼԹ (1290) թուին մեռաւ Տարսաիճն՝ եղբայր Սմպա[տայ]՝ որդի մեծին Լիպարտի, ի ցեղէն Աւրբէլեանց, եւ եդաւ ընդ հարսն իւր, ի Նորավանս, ի Վայոց ձոր[542]:
1291	ՌՄՂԳ 1293	ՉԽ 740	(Մ1484, Վ288) Ի ՉԽ (1291) Քաղաթուն խան նստաւ ամս Գ (3): (Ե3701) Մոլորեցան Յոյնք եւ արարին ծռազատիկ: Եւ յայսմ ժամանակին ի Կիլիկիոյ երկիրն կային թագաւորք Հայոց, որ նոքա ընդ Յու-

			նաց արարին, եւ կէսքն ուղիղ են կացեալք[543]: (Ս42) Յայսմ ամի մոլորմանն, եկն եհաս Զատիկ եւ հակառակութիւն եղեւ մեծ եւ Հայք յԲս (2-ի) բաժանեցան, զի տէրութիւն Կիլիկոյ հետ Յունաց արարին եւ սակաւք՝ ո՛չ: Իսկ թագաւորն եւ կաթողիկոսն ժողովեալ՝ զնոյն ճշմարտեցին:
1292	ՌՄՂԴ 1294	ՉԽԱ 741	(Ե3701) Առին զՀոռոմկլայն եւ զկաթողիկոսն՝ զտէր Ստեփաննոսն, գերի վարեցին յԵգիպտոս:
1293	ՌՄՂԵ 1295	ՉԽԲ 742	(Մ1899) Ի ՉԽԲ (1293) թվին՝ եկն Մելիք Աշրաֆ՝ սուլտանն Մըսրոյ, բազում զօրօք ի վերայ Հոռոմկլային եւ պաշարեաց զնա բազում՝ աւուրս՝ մինչեւ էառ եւ տարաւ զտէր Ստեփանոս կաթուղիկոս եւ զԱջ սուրբ Լուսաւորչին գերի ի Մսր, բազում եպիսկոպոսօք՝ քահանայիւք եւ ժողովրդօք եւ կեցեալ անդէն տարի մի վախճանեցաւ[544]: (Վ288) Դարձեալ գերեցին զԹիլն: (Մ3613) Տէր Գրիգոր Թուրքերիցանց, ամս, ԺԴ (14), Ե (5)[545]: Կաթողիկոսք ամեն ՀԲ (72), թվին ԷՃԽԲ (1293)-ին: (Մ1899) Այս տէր Գրիգոր Անաւարզեցի՝ մականուն Տուրքերիցանց, այր գիտնական եւ յոյժ հմուտ Հին եւ Նոր Կտակարանաց: Սա արար բազում երգս շարականաց եւ պայծառացոյց կարգաւ զեկեղեցիս Հայաստանեայց՝ կացեալ ամս ԺԳ (13):
1294	ՌՄՂԶ 1296	ՉԽԳ 743	(Մ1898, Հեթում Կօռիկոսցի) Պապ եկաց ի Հռոմ Սէլէստինոս Ե (5)-երրորդ, այր կրաւնաւոր կացեալ ամիսս Զ (6) եւ հրաժարեաց: Եւ Պաւնաւֆանց Ը (8)-երրորդ, ամս[546]: (Վ288) Ի ՉԽԳ (1294) Բատօ ղանն՝ եղբայր Ապաղին, խան նստաւ ամս Ա (1): Ղազանն նստաւ ամս Թ (9), շատ պատերազմեցաւ ընդ Մսր: (Ե3701) Խան Ղազանն մեծ հալածանս յարոյց եկեղեցոյ եւ բարեպաշտն Հեթոմ խաղա(ղե)ցոյց գնալով յԱրեւելս, պատահելով դառնութեան ժամանակին:

1295	ՌՄՂԷ 1297	ՉԽԴ 744	(Մ2965) Գնաց Հեթում ի ղան Ղազան եւ ել հրաման ի ղանէն աւերել զեկեղեցիս: (Ե3701) Սմպատ ամս Բ (2) թագաւորէ Սսայ, ոչ հաւանութեամբ Կիլիկեցոցն, այլ բռնութեամբ: Զի Հեթումն յանձնեաց ի նա զերկիրն եւ ինքն եւ եղբայր իւր Թորոս գնացին ի Բուզանդիայ եւ յորժամ դարձան անդրէն, տեսին զի թագաւորեալ էր, ոչ մտին յերկիրն: Եւ յետոյ կալեալ զերկուսին եղբայրսն եւ զերիցագունին զՀեթմոյ զաչսն կուրացոյց, եւ զԹորոսն սպան:
1296	ՌՄՂԸ 1298	ՉԽԵ 745	(Ե3701) Քակեցին զեկեղեցիքն ի ձեռն Նաւրուզին[547]: Եւ զկնի նորին եղբայրն՝ Հայրպանտէն ամս ԺԲ (12) :
1297	ՌՄՂԹ 1299	ՉԽԶ 746	(Մ1899, Մ2965) Ի ՉԽԶ (1297) թվին աւագ պարոնն Հեթում, զաթոռ թագաւորութեան իւրոյ վստահանայ յեղբայրն իւր ի Սմբատ, եւ ինքն առեալ զմիւս եղբայրն զԹորոս՝ եւ գնաց առ կայսրն Յունաց յԸստամպօլ: Իսկ Սմբատն ինքնածեռն ելեալ, եւ խորհրդով կաթուղիկոսին եւ իշխանացն՝ օծանի թագաւոր Հայոց ի Սիս եւ յորժամ դարձան Հեթումն եւ Թորոսն զկնի տարւոյ միոյ յաշխարհն իւրեանց եւ յաթոռն, Սմբատայ երես շրջեալ ոչ եթող զնոսա ի տունն իւրեանց հայրենի: Եւ նոքա դարձան անդէն առ կայսրն, եւ առեալ ոսկի բազում գնացին առ ղանն Ղազան յԱրեւելս: Իսկ Սմբատն յառաջագոյն էր գնացեալ ի Թաթարն բազում գանձիւք, եւ առեալ էր ի ղանէն իւր կին, որ էր ի ղանի ազգէն, դարձեալ գայր յաշխարհն իւր՝ եւ ի սահմանս Կեսարիոյ հանդիպեցան նմա Բ (2), եղբարքն իւր՝ եւ նա կալեալ զնոսա եւ տարեալ եդ ի բանտի ի Բարձրբերդ, եւ յետ սակաւ աւուրց խորհրդով նենգաւոր իշխանացն՝ եսպան զեղբայրն իւր զԹորոս՝ եւ եհան զաչս Հեթմին, զոր իմացեալ միւս եղբօրն նոցին Կոստանդնի, որ էր տէր Կապան բերդին, եւ ժողովեալ զօրս բազումս եւ եկն ի մարտ ընդ Սմբատին, եւ Սմբատ փախուցեալ ի նմանէ ել ի Հոռոմս՝ եւ եկեալ Կոստանդին եւ գտեալ զՀեթումն կեն-

			դանի, յոյժ ուրախացաւ, թէպէտ եւ ընդ սպանումն Թորոսին տրտմեցաւ, եւ յետոյ կալեալ զՍմբատն՝ եդ ի բանտի, եւ ինքն կացեալ պարոն Կիլիկիոյ տարի մի եւ Սմբատն թագաւոր՝ ամ մի: Բայց յետոյ կալեալ Հեթումն զԿոստանդին եւ զՍմբատն, եւ առաքէ յաքսորս առ կայսրն՝ ի Կոստանդնուպօլիս, եւ ինքն առնու զԼեւոն՝ զորդին Թորոսի՝ եղբօրն իւրոյ, որ սպանեալ եղեւ ի Սմբատայ, եւ էօծ թագաւոր Հայոց ի ՉՕԵ (1306) թվին, եւ ինքն ունէր զաւագ պարոնութիւնն: (Ե3701) Կոստանդին՝ որդի Լեւոնի՝ եղբայր Թորոսի, Հեթմոյ եւ Սմպատայ, պատերազմի ընդ Սմպատայ եւ ըմբռնեալ զնա եդ ի բանտի: Եւ գտեալ զՀեթում՝ առողջացոյց զմի ակն, եւ թագաւորէ Ա (1) ամ: Եւ զկնի մի ամի իշխանքն Հայոց դրդեցին զՀեթում, եւ նա աքսորեաց զնայ ընդ Սմպատայ:
1298	ՌՅ 1300	ՉԽԷ 747	(Մ1899) Ի ՉԽՁ (1297) թվին թագաւոր Հայոց Սմբատն էր, եւ Մսրցին եմուտ ի Կիլիկէ եւ առհասարակ այրեաց զգեօղ եւ զքաղաք՝ եւ զբազումս եսպան եւ զայլս գերի վարեաց: Եւ այլք զայս՝ ՉԽԷ (1298) թվին ասեն եղեալ, եւ ճիշդն այն է[548]: (Ե3701) Հեթոմն զԿոստանդին աքսորէ ընդ Սմպատայ, եւ ինքն գնաց ի Տաթարն: Յայսմ ամի Մսրայ Լաչինն[549] եկն ի Կիլիկիայ եւ անթիւ բերդորայք մեռան ի սովոյ եւ ի ջրոյ: Եւ յայսմ ամի կացուցաւ եւ կարգեցաւ յամ յոբելեան ի Հռոմ:
1299	ՌՅԱ 1301	ՉԽԸ 748	(Մ1899) Ի ՉԽԸ (1299) թվին էր Պարոն Հայոց Կոստանդին, եւ ի սոյն ամի եղեւ սով սաստիկ, եւ մոթ ցորեանն ԲՃՕ (250) դրամ:
1300	ՌՅԲ 1302	ՉԽԹ 749	(Ե1051, Ս42) Յարեան ոմանք, որ պահօք ճգնէին, բայց զեկեղեցի, զքահանայ, զխոստովանութիւն արհամարհէին. եւ իսմայելացիքն յինքեանս ջանային քարշել, եւ ընչիւք զերծան ի նոցանէ, կացեալք քրիստոնեայք[550]:
1301	ՌՅԳ 1303	ՉՕ 750	(Մ1899) Ի ՉՕ (1301) թվին փոխեցաւ առ Քրիս-

			տոս սուրբ եւ առաքինի վարդապետն Գէորգ Սկեւռացին[551]: (Մ1484, Ե3701) Գնաց Հեթում ի Դամասկոս, ի խան Ղազանն:
1302	ՌՅԴ 1304	ՉԾԱ 751	(Ե3701) Յայսմ ամի Մսրցին Գ (3) անգամ եկաւ ի Կիլիկիայ եւ յԱտանայ եւ ի Տարսօն, եւ սպան բազումս եւ գերեաց: Յայսմ ամի արար Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոսն զՀակաճառութեան գիրքն ընդդէմ երկաբնակաց[552]:
1303	ՌՅԵ 1305	ՉԾԲ 752	(Մ1484, Ե3701) Դարձեալ գնաց Հեթում ի Դամասկոս եւ շփոթեալ դարձաւ առ Ղազանն: Ղազանն մեռաւ եւ նստաւ եղբայր իւր՝ Խարբանտան: Սա եդեալ խարշ առնուլ ի քրիստոնէից: Եւ ոմանց ի մորթն կարեցին վասն աղքատութեան[553]:
1304	ՌՅԶ 1306	ՉԾԳ 753	(Ե3701) Յայսմ ամի սատակեցաւ խան Ղազանն, որ ուրացաւ զՔրիստոս, քանզի մինչ ի սա քրիստոնեայք էին նախնիք իւր՝ նեստորական դաւանութեամբ, ըստ Վարդանայ: Եւ սա ուրացաւ, ասեն, վասն ժամուն երկարութեան, զի խազով էր ամենայն ինչ: Եւ նստաւ վերայ գրեալ եղբայրն՝ Խարբանտան:
1305	ՌՅԷ 1307	ՉԾԴ 754	(Ե3701) Տէր Կոստանդին ամս ԺԵ (15), սա հրամանաւ Հեթմոյ ջուր էարկ ի սուրբ խորհուրդն, եւ զտօնս առնէր ըստ նմանութեան Ֆռանկաց, յորով սպանմունք եղեն յոլովք:
1306	ՌՅԸ 1308	ՉԾԵ 755	(Մ1486) Կաթողիկոս տէր Կոստանդին Կեսարացին ամս ԺԶ (16): Յաւուրս սորայ արար ժողով աւագ պարոնն Հեթում, եւ միաբանեցան ընդ եկեղեցին Հռոմայ, եւ հաւանեցին առնել զտօն Ծննդեան Քրիստոսի ի դեկտեմբերի ԻԵ (25), եւ զամենայն տօնս սրբոց՝ յիւրաքանչիւր տեղիս՝ ուր եւ դիպեսցի: Այլ արկանել ջուր ի սուրբ խորհուրդն, եւ այս գործեցաւ ի թվին ՉԾԶ (1307), ի Սուրբ Զատիկն: (Մ1899) Ի ՉԾԵ (1306) ամին օծանի թագաւոր Լեւոն՝ որդի պարոն Թորոսին ի Սիս կեցեալ տարի մի՝ եւ սպանաւ ընդ Հեթմոյ:

			(Մ2965) Ղորբանտայ ղանն հրամայեաց քրիս- տոնէից կամ թուրքասցէն եւ կամ տացէն Ը (8) դահեկանս եւ թքանիցէն յերեսս եւ ապտակես- ցէն եւ ճողեսցէն զմորուսն եւ կարկատան մի սեւ ի վերայ աջոյ ուսոյն կարեսցէն, նախատինք վասն Քրիստոսի: (Ե3701) Խաբանումն ժամհարին եւ ջուր արձա- կեցաւ ի վերայ Եզընկային եւ բազում վնաս արար: Ի բռնակալութեան ազգին Նետողաց Խարբան- տայ խանն, որ էր չար եւ ատեցօղ քրիստոնէից, եւ պատրեալ ի դիւթականաց եւ յաղանդաւորաց շեխաց եւ խորհուրդ չար ի մէջ բերելով, գոր- ծակցաւն իւրեանց սատանայիւ, սկսան մար- տնչիլ ընդ անյաղթելի վիմին Քրիստոսի, եւ հանել զհրովարտակ ընդ ամենայն տիեզերս, որ ընդ իւրով իշխանութեամբ էին, ի վերայ քրիստո- նէից՝ այնու կա՛մ դառնալ ի մոլար դաւանութիւն Մահմէտի, կա՛մ տալ զխարճ ամէն մարդ իւրոյ գլխոյն զութն դահեկան, եւ թուք եւ ապտակ ի յերեսն եւ զմորուսն ճողել եւ սեւ կարկտան մի ի վերայ աջոյ յուսին կարել՝ նախատինք վասն Քրիստոսի: Եւ չար դեսպանք իբրեւ զարենարբու գազան արձակեցան ի վերայ ամենայն քրիստոնէից, ընդ ամենայն քաղաքս եւ ի գաւառս, ի վանո- րայս եւ յամենայն տեղիս քննայոյզ լինէին ահացուցանելով զամենեսեան: Քանզի այսպէս գրեալ է ի մահաբեր հրովարտաքին, ոչ զժամ օրհնել եւ ոչ յեկեղեցի մտանել եւ ոչ զմանկունս մկրտել, կամելով միահաղոյն բառնալ զամե- նայն կրօնս քրիստոնէից: Իսկ բանաւոր հօտքն համբերեցին յամենայն նեղութեան եւ ետուն նմա, զոր խնդրեաց: Իսկ անօրէն եւ անբարիշտ Խարբանտայ խանն, իբրեւ ետես, եթե այնու ոչ կարաց յաղթել քրիստոնէիցն, յաւել այլ եւս հարուածս ի վերայ քրիստոնէից. կամ զամենեսեան ներքինիս առեալ, կամ զմի ակն հանել, կամ դառնալ ի

			կրօնն Մահմէտի, որոյ վասն բազումք մեռան վասն անուան Քրիստոսի եւ բազումք զանգի-տեալ դարձան ի կրօնս նոցա:
1307	ՌՅԹ 1309	ՉԾՁ 756	(Ե3701) Օշին ամս ԺԴ (14): Յաւուր աւագ սուրբ Զատկին Կոստանդին կա-թողիկոս արար ժողով ընդ աւագ պարոնն Հեթում, եւ միաբանեցան ընդ եկեղեցոյն Հռոմայ, եւ քակեցին զուխտ սուրբ Լուսաւորչին մերոյ, եւ հաւանեցան առնել զտօն Ծննդեան Քրիստոսի ի դեկտեմբերի ԻԵ (25), եւ զամենայն տօնս սրբոց՝ յիւրաքանչիւր տեղիս՝ ուր եւ դիրքն, եւ ջուր արկանել ի սուրբ խորհուրդն: Ի ՉԾՁ (1307) թվին եկեալ նենգութեամբ յաշ-խարհն Կիլիկեցւոց՝ որոյ աղագաւ անօրէն նուինն Պուլարղու՝ եւ կոչեցեալ առ ինքն խորա-մանկութեամբ իբրեւ ի խորհուրդ զաւագ պա-րոնն Հեթում, եւ նա ոչ գիտացեալ զնենգութիւն նորա, գնաց առ նա՝ ունելով ընդ իւր զնոր օծեալ տղայ թագաւորն Լեւոն զեղբօրորդին իւր, զՕշին սինէգալն, որ յայնժամ գունդստապլն էր՝ զայլ բազում իշխանս, որք իբրեւ եկին առ նա՝ յարեաւ ի վերայ եւ եսպան զամենեսին՝ առ ոտս Անարզաբու, եւ կամէր զԿիլիկիայ յինքն յափշտակել: Բայց ի խնամոցն Աստուծոյ ոչ տարաւ ընդ իւր զեղբայրն իւր զՕշինն, որ իբրեւ լուաւ զեղեալսն, իսկոյն եկն ի բերդն Սըսայ եւ ժողովեաց զմնացեալ իշխանսն՝ եւ զօրս բազումս եւ մարտուցեալ ընդ պղծոյն՝ եհան յերկրէն, եւ մնաց մինչեւ եկն եղբայրն իւր՝ Ալինախն, ի ղանէն, զի անդ էր գնացեալ, եւ ապա օծաւ Օշինն թագաւոր Հայոց:
1308	ՌՅԺ 1310	ՉԾԷ 757	(Մ1899) Թագաւոր Օշինն՝ որդի թագաւորին Լեւոնի Մեծի՝ եղբայրն Հեթմոյ՝ օծեալ ի մայրա-քաղաքն Տարսուս, կացեալ ամս ԺԳ (13): (Ե3701) Եկն Սմպատ ի Կիլիկէ, եւ եդին ի դղեակն:
1309	ՌՅԺԱ 1311	ՉԾԸ 758	(Մ1899) Ի ՉԾԸ (1309) թվին ժողովեցան ի մայ-րաքաղաքն Սիս բազմութիւն աբեղայից եւ կրօ-նաւորաց, եւ սարկաւագաց, որք բնակեալ էին ի

			վանք եւ յանապատս՝ ծերք եւ տղայք, այլեւ վարդապետք եւ եպիսկոպոսք, եւ բազմութիւնք ժողովրդոց՝ արանց եւ կանանց՝ վասն ոչ առնլոյ յանձն արկանել ջուր ի սուրբ խորհուրդն, եւ վասն այլ եւս նորածեւ օրինացն, զոր թագաւորն Օշին խորհրդակցութեամբ կաթուղիկոսին եւ իշխանացն կալեալ զնոսա եւ զվարդապետսն էարկ ի բանդ ի բերդն եւ եսպան յարանցն եւ ի կանանց զբազումս, եւ ի կրօնաւորացն սակաւ ինչ: Իսկ զաբեղայսն էարկ ի նաւ եւ առաքեաց յաքսորս ի Կիպրոս կղզին եւ բազումք անդէն մեռան, եւ ժողովեալքն յայն՝ այնպէս վրճարեցան: (Ե3701) Ի սադրելոյ իշխանացն կորուսին զՍըմպատն, հանին զվարդապետն ի բանտէն եւ դարձեալ աքսորեցին:
1310	ՌՅԺԲ 1312	ՉՕԹ 759	(Ե3701) Գրեաց թագաւորն յԱրեւելք եւ վասն ջրի ասաց ժողով լինել եւ ո՛չ եկին յԱրեւելցիք[554]:
1311	ՌՅԺԳ 1313	ՉԿ 760	(Ե3701) Մորեխ եկն աշխարհ եւ արար բազում վնաս:
1312	ՌՅԺԴ 1314	ՉԿԱ 761	
1313	ՌՅԺԵ 1315	ՉԿԲ 762	(Վ288) Յայսմ ամի առաւ մայրաքաղաքն Մելտենի ի Հայոց եւ ի Հագարացոց եւ խոտոր գերութեամբ վարեցան յեգիպտոս[555]:
1314	ՌՅԺԶ 1316	ՉԿԳ 763	
1315	ՌՅԺԷ 1317	ՉԿԴ 764	
1316	ՌՅԺԸ 1318	ՉԿԵ 765	(Ե3701) Գլուխ ազգին Նետողաց՝ Խարբանտայ մեռանի յիւրոցն, եւ նստաւ Ապու Սայիտն՝ Խարպի որդին:
1317	ՌՅԺԹ 1319	ՉԿԶ 766	(Մ1899) Ի ՉԿԶ (1317) թվին փոխի մահուամբ առ Քրիստոս պարոն Ալինախն՝ եղբայր Հեթմին եւ Օշին թագաւորին, եւ կայ հանգուցեալ ի Դրազարկն: Եւ պատճառ մահու նորա այս է. լոգացեալ եղեւ եւ գետն Տարսոնի, էր ընդ նմա ի լողկանալն տաճիկ ձի մի եւ եհար զնա ոտամբն ի գլուխն, եւ այս եղեւ պատճառ մահու նորա: (Ե3701) Ի սոյն ամի եմուտ յաշխարհն Կիլիկիոյ չարն Թամուրտաշն՝ տիրելոյ աղագաւ եւ նստաւ Գ (3) օր յառաջեւ Սսայ եւ ահ տագնապի անկաւ ի վերայ նորա ի Տէառնէ. ելեւ գնաց: Եւ յելանելն

			բազում գերի տարան ընդ ինքեանս եւ զբազումս սպանին:
1318	ՌՅԻ 1320	ՉԿԷ 767	
1319	ՌՅԻԱ 1321	ՉԿԸ 768	(Մ1899) Ի ՉԿԸ (1319) թվին եղեւ ահագին շարժ յարեւելս, եւ զԹադէոս առաքելոյն վանքն եւ զեկեղեցին կործանեաց եւ զտունսն փլոյց եւ Հե (75) ոգի եսպան, զոր դարձեալ վերստին շինեաց զեկեղեցին եւ զվանքն տէր Զաքարէ: Այլեւ ի Գեղա(ր)քունի ընկղմեաց զբազում գեօղս հանդերձ արամբք, եւ յայլ եւս տեղիս:
1320	ՌՅԻԲ 1322	ՉԿԹ 769	(Մ1899) Ի ՇԿԹ (1320) թվին, փոխի մահուամբ առ Քրիստոս թագաւորն Օշին, եւ մինչ կենդանի էր, արար կտակ եւ եդիր պայլ զՕշին տէրն Կոռիկոսու եւ զեղբայր իւր զԿոստանդին, եւ զպարոն Հեթում տէրն Նղրին, եւ վստահանայ ի նոսա զորդին իւր զԼեւոն եւ զթագուհին իւր՝ զոր յետոյ էառ ի Ֆռանգաց, եւ զերկիրս Կիլիկիոյ կառավարել նոցա եւ սնուցանել զորդին իւր եւ ծառայել միամտութեամբ մինչեւ ի Ժ (10) ամս, եւ ապա յանձնել զաթոռ թագաւորութեան եւ զաշխարհս յորդին իւր Լեւոն՝ եւ ինքն փոխեցաւ առ ճշմարիտ թագաւորն Քրիստոս, եւ կայ հանգուցեալ ի Դրազարկն: Իսկ Օշին՝ տէրն Կոռիկոսու, ամուսնացուցանէր զդուստր իւր ընդ Լեւոնի եւ օծանէ թագաւոր: Եդիր եւ զեղբայրն իւր գունդըստապլ, եւ ինքն էառ զմնացեալ թագուհին իւր ի կնութիւն, եւ եղեւ պարոն Կիլիկիոյ՝ եւ տէր Տարսոնի եւ բերդին Պապառօնին, եւ տիրեաց բովանդակ գաւառին Սաւրիոյ, եսպան եւ զքոյր թագաւորին Օշնի՝ զՁապլունն եւ զաւագ որդի նորա, որք յետոյ սպանեալ եղեն ի թագաւորէն Լեւոնէ Բ (2) եղբարքն: (Վ288) ՉԿԹ (1320) Փոխի մահուամբ ի Քրիստոս Օշին եւ թագաւորէ որդի նորա Լեւոն ԲԺ (12)-ան ամեայ, հանգոյն Սողովմոնի[556]:
1321	ՌՅԻԳ 1323	ՉՀ 770	(Վ288) Վաղճանեցաւ տէր Կոստանտին կաթողիկոսն եւ Մովսէս վարդապետն յԵզնկայն[557]: Երընջին եւ Ղուռումչին նստան:

			(Մ1899) Ի ՉՀ (1321) թվին եկն անօրէն նուիրնն Թամուրտաշն՝ որդի Չօպանին յերկիրն Սըսոյ՝ եւ զբազում վնաս գործեաց, զբազումս եսպան՝ եւ զբազումս գերի վարեաց եւ ել ի Հոռոմս: (Ե3701) Յայսմ ամի Մսրցին, յորժամ լուաւ զմահն Օշնի, եմուտ ի Կիլիկիայ եւ ԻՌ (20 000) մարդ գերեաց՝ եւ զբազումս սպանին եւ յոլով տեղ այրեցին, եւ զԱյաս իսպառ ջնջեցին, եւ զմինիրայն եւ զբերդն քակեցին:
1322	ՌՅԻԴ 1324	ՉՀԱ 771	(Մ1899) Մսրցին եկն յաշխարհն Կիլիկիոյ, զբազում վնաս գործեաց, ընդ որս եւ զԱտանայ այրեաց, եւ զբերդն նորին քակեաց:
1323	ՌՅԻԵ 1325	ՉՀԲ 772	(Մ1899) Կաթուղիկոս տէր Կոստանդին Լամբրօնացին: Սա չոգաւ յԵգիպտոս առ Նասր սուլտանն եւ արար սէր եւ խաղաղութիւն ընդ Լեւոն թագաւորին տղայոյ, կացեալ ամս Դ (4): (Մ5889) Յայսմ ժամանակի փայլէր իմաստութեամբ Մխիթար վարդապետն ի Մեծոփայ վանս, հանդերձ աշակերտօքն[558]: (Ե3701) Եկն Չօպանն[559] ի Հոռոմք ի խնդիր Տամուրտաշէն: Եւ տարան առ խանն եւ սպանին զՏմըշխ խօճան եւ Չօպանն փախեաւ:
1324	ՌՅԻԶ 1326	ՉՀԳ 773	
1325	ՌՅԻԷ 1327	ՉՀԴ 774	
1326	ՌՅԻԸ 1328	ՉՀԵ 775	(Ս42, Ե3701) Վերացոյց Ապու Սայիտն զՉօպանն, որ զաշխարհս ի ձեռն ունէր, եւ մեռաւ ի փախչելն: Ի սոյն ամի որդի նորա Տամուրտաշն եկն ի վերայ Եզընկային, եւ դարձեալ փախեաւ ի Մսըր եւ անդ սպանաւ ի սուլտանայ:
1327	ՌՅԻԹ 1329	ՉՀԶ 776	(Մ1899) Կաթուղիկոս տէր Յակոբ՝ սա քուեր որդի գոլով տէր Գրիգորի Անաւարզեցւոյն՝ կացեալ ամս: (Ե3701) ...ամս ԺԴ (14)[560]: Ի սոյն ամի սպանին զեպիսկոպոսն Կարնոյ՝ զտէր Գրիգորիս, եւ ջուրն ի խորհուրդն էր:
1328	ՌՅԼ 1330	ՉՀԷ 777	(Մ1899) Ի ՉՀԷ (1328) թվին փախեաւ Չոպանին որդին՝ Դամուրտաշն, եւ գնաց ի Մըսր:
1329	ՌՅԼԱ 1331	ՉՀԸ 778	
1330	ՌՅԼԲ 1332	ՉՀԹ 779	(Մ1899) Ի ՉՀԹ (1330) թվին առաքեաց թագաւորն Լեւոն զօրս ի յԱտանոյ եւ ըմբռնեաց

			զՕշին՝ տէրն Կօռիկօսու, եւ զեղբայր նորին զԿոստանդին գունդստապլն, եւ եսպան ի սադ- ռելոյ իշխանացն եւ ի քսու արանց, եթէ խորհեալ են բառնալ զքեզ եւ ինքեանք թագաւորել, եւ առաքեաց զՕշնին գլուխն ի Մըսր՝ առ Մելիք Նասր սուլտանն, եւ զեղբօր նորին՝ յԱրեւելս՝ առ Բուսայիտ ղանն[561], եսպան եւ զթագուհին իւր յաղագս աղտեղի գործոց նորա, եւ էառ իւր թա- գուհի ի Ֆռանգաց՝ զդուստր թագաւորին Սի- կիլիոյ կղզոյն:
1331	ՌՅԼԳ 1333	ՉՂ 780	(Ս42) Յայսմ ամի եկն Շէխ Հասան Ուսլուպէկն ի Կամախ[562]:
1332	ՌՅԼԴ 1334	ՉՂԱ 781	
1333	ՌՅԼԵ 1335	ՉՂԲ 782	(Ե3701) Կապոյտ նշան դրին քրիստոնէից:
1334	ՌՅԼԶ 1336	ՉՂԳ 783	(Ե3701) Մեռաւ Ապու Սայիտ խանն եւ նստաւ ի տեղի նորա Արփայ քայունն կէս ամ եւ սպանաւ: Եւ նստաւ Մուսայ խանն Գ (3) ամիս, եւ նստաւ Ահմատ խանն Ա (1) տարի եւ սպանաւ: Եւ նստաւ Սուլէման խանն: (Վ911, Մ1899) Ի ՉՂԳ (1334) ամին մեռաւ Բու- սայիտ ղանն եւ նստաւ Արփա ղանն Զ (6) ամիս, եւ եկեալ քեռի Բուսայիդին՝ Ալիփաշայ նուինն ի Բաղդատայ՝ զԱրփա ղանն եսպան, վասն զի քրիստոնեայ էր՝ յառաջին ղանորաց զարմէն, եւ ինքն իւրովի այլ նոր ղան եդ ի թախթն՝ Մուսի անուն, որ ոչ ելաւ եւ ոչ զօրացաւ եւ ինքն Ալի- փաշայն վարէր զիուքմն[563] օրդուին՝ տարի եւ կէս, եւ արար հրաման քակել զեկեղեցիս, եւ քակեցին ի բազում տեղիս՝ ի Մօսլայ մինչեւ ի Խլաթ եւ ի Սալամաստ: Մինչ որ գնաց առ նա տէր Զաքարիա[564] Աղթամարայ կաթուղիկոսն՝ պայազատն եւ արքայազարմն, եւ ապա եբարձ զչար հուքմն: Իսկ յաւուրս հնձոցն մարտեաւ ընդ Խաջիթ աղային եւ սպանաւ ի սահմանս Հերայ քաղաքին ի ՉՂԴ (1335) թւականին:
1335	ՌՅԼԷ 1337	ՉՂԴ 784	(Վ911, Մ2965) Ի սոյն ամի չարագլուխ ամիրան Հալպայ հրամանաւ Մէլէք Նասր՝ սուլտանին Մսրայ, գաղտագողի յերկիրն Սսայ եմուտ եւ զբազում աւերս արար, զորս եսպան եւ զորս

			հրով այրէաց եւ զորս գերի վարեաց եւ արար անապատ զբազմամարդ աշխարհն Հայոց: (Մ1899, Մ10200) Ի ՉՁԴ (1335) ի լնուլ չափոյ մեղաց մերոց եւ հարցն մերոց, որ յազոխանալ ատամնառութեան նոցա ժամանեաց որդւոցս՝ ստիպեցին զանօրեն բռնաւորն Մըսրոյ՝ զՆասրն, փութացուցանել զկորուստն մեր, ուստի ի խաղաղութեան եւ ի սիրոյ ժամանակի զչարագլուխ ամիրայն Հալպայ՝ նենգութեամբ եւ գաղտագողի յանկասկած ժամու՝ եւ յանակնունելի պահու՝ փութանակի ձիընթաց արձակեալ բազմօք զօրօք՝ յաւուրս հնձոց՝ ի տօնի Համբարձման Քրիստոսի եւ ի մի գիշեր՝ եւ ի մի օր՝ հասեալք ի Մամուէստիա եւ յԱտանայ՝ եւ ի Թագաւորաշէնն[565]՝ եւ ի բոլոր դաշտս Մլունին, զի թերեւս ըմբռնել կարասցեն զթագաւորն Լեւոն՝ յանհոգս եւ յապահովս գտեալ զամենեսեան, մանաւանդ, զթագաւորն անկազմ եւ անպատրաստ՝ եւ թափուր ի զօրաց, մինչեւ զի ի յաւէտ անհոգութենէն, ի բաղանիս գոյր առ ի լուանալ՝ եւ արշաւեալ ի շէնս եւ ի բազմամարդ երկիրս Հայոց՝ սփռեցան ընդ քաղաքս եւ ընդ գիւղս մինչ ի Տարսոն՝ եւ գտեալ զամենեսեան յանհոգս եւ ի խաղաղ ժամանակի, մինչ զի ի տեղիս տեղիս հարսանիս առնէին եւ խրախճանային, եւ յանխնայ կոտորեցին զբազումս սրով, զեկեղեցականս եւ զաշխարհականս՝ զայր եւ զկին, եւ զմանկունս՝ եւ հրդեհեալ այրեցին զտունս եւ զապարանս՝ զեկեղեցիս եւ զարտորայս՝ եւ առեալ զառ եւ զաւար՝ եւ գերեալ զարս եւ զկանայս եւ զորդիս, եւ զոսկի եւ զարծաթ երկրիս անթիւս եւ անհամարս: Նաեւ զբազմութիւն յոյժ անբան կենդանեաց, ուրախութեամբ հանեալ տարան յաշխարհն իւրեանց: (Ե3701) Ի սոյն ամի խասրեցին զԵզնկայն Թամուրտաշն եւ որդի նորա փոքր Շէխ Հասանն, եկն Սարդիպէկն, եւ ի սոյն յամի յԱրադնանն[566] խսարեց զՍեւաստ, մինչեւ ի սովոյն նեղեալ տուին զքաղաքն:

			Ի սոյն ամի երթայ Սուլուպէկն ի Շէխ Հասանի վերայ:
1336	ՌՅԼԸ 1338	ՉՂԵ 785	(Վ869) Յետ մահուանն Լեւոնի, վասն ոչ գոլոյ նմա որդի, առնու զթագաւորութիւնն Կոստանդին Ջուան Ա (1) ամ, որ յազգէ նորին, որ եւ սա վասն անպարկեշտ վարուց սպանեալ եղեւ ի զօրաց իւրոց[567]: (Ե3701) Յայսմ ամի ազգն Իսմայելեան յարեան ի վերայ Կիլիկէի, զբազումն ի սուր մաշեցին եւ վարեցին ի գերութիւն յԵգիպտոս եւ ի Ղարաման, զի թագաւորն Լեւոն ոչ էր, այլ գնացեալ էր յօգնութիւն Ֆրանկաց, վասն ազատութեան քաղաքին Երուսաղէմի, զի եգիպտացիքն առեալ էին զԵրուսաղէմ:
1337	ՌՅԼԹ 1339	ՉՂԶ 786	(Ե3701) Մարտի Գ (3), յաղուհացիցն երկուշաբթի խաւարեցաւ արեգակն:
1338	ՌՅԽ 1340	ՉՂԷ 787	(Ե3701) Վախճանեցաւ սուրբ վարդապետն Եսայի[568]: Մահմատ ամբարչին նստաւ[569]: Ալիփաշան սպանաւ ի Խալիդ Աղայէ: Եւ յայսմ ամի եկն Շէխ Հասանն, որդի Տամուրտաշին, ի վերայ Եզընկին եւ համբաւ հանին, թէ Տամուրտաշն ելեր է ի Մսրայ, եւ ի հետէ նստան ՂԸ (98) օր: (Մ1483) ՁՏամուրտաշի որդին՝ Շեխ Հասանն, կինն սպան[570], եւ նստաւ խան Մելիք Աշրաֆն, որ էր եղբայր Շեխ Հասանին:
1339	ՌՅԽԱ 1341	ՉՂԸ 788	(Ե3701) Յայսմ ամի եկն Եաշպատինն ի վերայ Եզընկին: Ի սոյն ամի եկն Խալիթն ի վերայ Եզընկին եւ այրեաց:
1340	ՌՅԽԲ 1342	ՉՂԹ 789	(Վ869) Կոստանդին ամս Բ (2): Կիտն Կոստանդին, որդի պարոն Բաղդնին[571] հօր քւեր որդի Լեւոնին. սա էր որդի պարոն Հեթմոյ՝ թոռն չորրորդ Լեւոնին: Տէր Մխիթար (կթղ.) ամս ԺԴ (14)[572]:
1341	ՌՅԽԳ 1343	ՉՂ 790	(Ե3701) Եկին հրամանաւ փոքր Շեխ Հասանին Նաշիտօնն եւ Թօտօնն ի վերայ Եզընկին եւ նստան ԺԲ (12) օր:

1342	ՌՅԽԴ 1344	ՉՂԱ 791	(Վ869) Միւս Կոստանդին (թագ.) ամս ԺԱ (11):
1343	ՌՅԽԵ 1345	ՉՂԲ 792	
1344	ՌՅԽԶ 1346	ՉՂԳ 793	(Մ6354) Յոհան վարդապետն Քռնեցի[573] արար միաբանութիւն ընդ Ֆռանկաց միջնորդութեամբ Բարդուլիմոսի եպիսկոպոսին Մարաղոյ: (Ս42, Ե3701) Ի նախանձու իշխանացն սպանին զԿոստանտինոս թագաւորն եւ զեղբայրն իւր Մէմընդին, եւ նստաւ միւս Կոստանդին ի Սիս քաղաքի: Եւ յայսմ ամի Ալփին եկն ի Կարնոյ քաղաք եւ հարկապահանջութեամբ նեղեաց, մինչ զի ամենայն երկիր ի սպառ աւերեցաւ[574]: Մեռաւ մեծ իշխանն պարոն Վասիլն Մարաջախտն՝ նոյեմբերի ԺԸ (18):
1345	ՌՅԽԷ 1347	ՉՂԴ 794	
1346	ՌՅԽԸ 1348	ՉՂԵ 795	(Ե3701) Սպանանէ Ելականն զՏօրխանն որդի Չօպանին եւ զԻշտօնն եւ այլ բազում գլխաւորք: Եւ մեռաւ Սաթիպէկն եւ Էլնպէկն ի Կամախ: (Մ42 տարբերակ) Սպանանէ Ելականն զՍորղանն որդի Չոպանին եւ զԻշիտոնն եւ այլ բազում գլխաւորք: Եւ մեռաւ Սթիպակն եւ յԵնապակն ի Կամախ:
1347	ՌՅԽԹ 1349	ՉՂԶ 796	(Ե3701) Յայսմ ամի մեռաւ պարոն Թորոս Լիպարենց, յուլիսի Ա (1):
1348	ՌՅՕ 1350	ՉՂԷ 797	(Ե3701) Եղեւ սով սաստիկ ի վերայ աշխարհիս Հայոց զամս Գ (3) եւ գայլք արձակեցան ի մարդիկ, եւ ապա անկաւ մահտարաժամ, եւ անապատ արար զբազմամարդ երկիրս Հայոց, եւ յոլովից գերեզմանք՝ փոր գազանաց եղեն, վասն զի շատք անթաղ մնացին եւ անծնունդ ժամանակի:
1349	ՌՅՕԱ 1351	ՉՂԸ 798	
1350	ՌՅՕԲ 1352	ՉՂԹ 799	
1351	ՌՅՕԳ 1353	Պ 800	(Ե3701) Բայբուզան զԽլաթ էառ եւ գնաց ի Մէրտին, եւ տարաւ զդուստր սուլթանին ի Թավրէզ՝ Աշրաֆին:
1352	ՌՅՕԴ 1354	ՊԱ 801	
1353	ՌՅՕԵ 1355	ՊԲ 802	

1354	ՌՅՕԶ 1356	ՊԳ 803	(Վ2261) Տէր Մեսրոպ (կթղ.) ամս ԻԶ (26): Սա եբարձ զջուրն ի պատարագէն:
1355	ՌՅՕԷ 1357	ՊԴ 804	
1356	ՌՅՕԸ 1358	ՊԵ 805	(Ե3701) Շարժ եղեւ Եզընկէն. ի յօրն է (7) եւ Ը (8) հեղ երերայր, սակայն Աստուծով վնաս չեղեւ: Եւ ի Սպանիայ երեւեցաւ սիւն մի հրեղէն ի յերկնիս, եւ եղեւ շարժ ահագին: Եւ մեռաւ Կոստանդին թագաւոր, եւ թագաւորէ միւս Կոստանդին՝ որդի պարոն Հեթմոյ:
1357	ՌՅՕԹ 1359	ՊԶ 806	(Ե3701) ԶԱշրաֆն եսպան Զանբէկն, եւ Ախին նստաւ: Սաստիկ պատերազմաւ կռուեցան սուլթան Վայիսն եւ Ախին, յետոյ ձերբակալ արարին զԱխին եւ ածին առաջի սուլթանին, եւ նա ետ սպանանէլ զնա եւ ինքն նստաւ խան ամս ժէ (17)[575]:
1358	ՌՅԿ 1360	ՊԷ 807	
1359	ՌՅԿԱ 1361	ՊԸ 808	
1360	ՌՅԿԲ 1362	ՊԹ 809	
1361	ՌՅԿԳ 1363	ՊԺ 810	
1362	ՌՅԿԴ 1364	ՊԺԱ 811	
1363	ՌՅԿԵ 1365	ՊԺԲ 812	(Վ288, Ե3701) Ի ՊԺԲ (1363) արեգակն խաւարեցաւ, եւ շարժն Մշու երկիրն տարաւ, եւ զվանորայքն խախտեաց: Ի սոյն թուին Ամիրատին եկն ի վերայ Արծկու ԺԵՌ (15 000) զօրօք, ընդ հեծեալ եւ ընդ հետեւակ:
1364	ՌՅԿԶ 1366	ՊԺԳ 813	(Վ288) Ի ՊԺԳ (1364) թուին ել Թամուրտաշն՝ որդին Աշրաֆի, եւ եկն ի վերայ երկրիս, որ տիրէր թախտին եւ եկեալ յԱրծկէ սպանաւ: Ի սոյն ամի եկն մահտարաժամ եւ սաստիկ աւէր արար Հայոց աշխարհիս:
1365	ՌՅԿԷ 1367	ՊԺԴ 814	
1366	ՌՅԿԸ 1368	ՊԺԵ 815	(Ե3701) Ֆռանկն զՍքանտարիայ էառ եւ շատ ղազայ[576] արար եւ ԺԲՌ (12 000) կոյս աղջիկ գերի տարաւ, թող զայլ կանայս եւ զտղայս: Եւ յայն բանէն խստացան Տաճիկքն եւ արարին հալածումն քրիստոնէից: Եւ զամենայն ուխտաւորս Երուսաղէմի ի կապանս պահեցին Գ (3) ամ: Եւ զՍուրբ Յարութեան դուռն փակեցին:

1367	ՌՅԿԹ 1369	ՊԺԶ 816	(Մ6354) Մեռաւ Կոստանդին, եւ թագաւորէ միւս Կոստանդին յայլմէ ազգէ, որ յայժմ ունի զթագաւորութիւնն[577]: (Ե3701) Յայսմ ամի ի Կոստանդնուպօլիս շարժ եղեւ եւ անձրեւք սաստիկ եւ կայծակունք: Եւ եղեւ այնպիսի մահտարաժամ, մինչ զի սակաւք ոմանք մնացին: Եւ ի հոկտեմբերի ամսոյն եղեւ ցուրտ սաստիկ, մինչ որ ծովն Պոնտոսի պաղեցաւ ԴՃ (400) միլս եւ տեղեաց ձիւն ԼԶ (36) կանգուն, եւ ցամագեցան գետք եւ աղբիւրք եւ մնացին մինչեւ ի փետրվարի ամսին:
1368	ՌՅՀ 1370	ՊԺԷ 817	(Ե3701) Յայսմ ամի անցին Թուրք(ք) ընդ դրունս Կասբից՝ ի Հայաստան:
1369	ՌՅՀԱ 1371	ՊԺԸ 818	(Մ7261, Մ10202) Սպանաւ քաջ սպարապետն Լիպարիտ ի պատերազմի Տաճկաց, որոց գլխաւորն Մաճակ[578] կոչիւր, առ թագաւորաւն Կոստանդեաւ:
1370	ՌՅՀԲ 1372	ՊԺԹ 819	(Ե3701) Սէյիտ Խօրօնն եկն ելաւ ի յԱրծկոյ բերդն եւ սպանաւ անդէն ԻԵ (25) հոգով, յաւուրս աւագ պահոց:
1371	ՌՅՀԳ 1373	ՊԻ 820	
1372	ՌՅՀԴ 1374	ՊԻԱ 821	
1373	ՌՅՀԵ 1375	ՊԻԲ 822	(Ե3701) Յայսմ ամի փափն փոխեաց զաթոռն իւր ի Ֆրանցոյ՝ ի Հռոմ:
1374	ՌՅՀԶ 1376	ՊԻԳ 823	(Մ7261, Մ10202) Տէր Կոստանդին (կթղ.)[579]: Ապա թագաւորեաց Լեւոն՝ որդի բրնձին, ՊԻԳ (1374), զոր Մսրայ սուլտանն հանդերձ թագուհեաւն եւ բազում իշխանօք եւ ժողովրդեամբ գերի տարաւ եւ բարձաւ թագաւորութիւն Հայոց ի Սըսայ: Այս թագաւորս Լեւոն է (7) ամիս թագաւորեաց, եւ ապա գերեցաւ եւ անուն գլխաւորին, որ գերեցն՝ Այշեխուր կոչիւր[580]: (Ե3701) Յայսմ ամի զՍիս առին Տաճկունքն եւ սպանին զԿեչեղակ վարդապետն, որ Գրոց աշակերտէր: Եւ դեկտեմբերի Ը (8-րդ) օրն՝ ուրբաթու շարժ եղեւ Եզընկէն, եւ Ա (1) ժամ հանդարտեցաւ, կրկին շարժեցաւ եւ պարիսպ քաղաքին փլաւ:

1375	ՌՅՀԷ 1377	ՊԻԴ 824	(Վ288) Ի ՊԻԴ (1375) սովն սաստիկ էր յԱսորեստան: Զամիր Հաճն սպանին, զԴիադնի որդին, Բաղէշու տիրոջ որդին, որ էր այր բարի ի քրիստոնէից: (Ե3701) Եւ Վայիսի որդի Հուսէյն նստաւ:
1376	ՌՅՀԸ 1378	ՊԻԵ 825	(Մ7261, Մ10202) Տէր Պօղոս (կթղ.)[581]: (Ե3701) Յայսմ ամի առաւ յերուսաղէմ ի թշնամեաց խաչին Քրիստոսի:
1377	ՌՅՀԹ 1379	ՊԻԶ 826	
1378	ՌՅՁ 1380	ՊԻԷ 827	
1379	ՌՅՁԱ 1381	ՊԻԸ 828	
1380	ՌՅՁԲ 1382	ՊԻԹ 829	(Մ1483, Ե3701) Սուլտան Ահմատն զերկու եղբարսն սպանեաց՝ եւ ինքն նստաւ: Սպան զմեծամեծս հօր իւրոյ, եւ կորոյս զամենեսեան: Եւ միւս եղբայրն շարժեցաւ ընդ նմա ի պատերազմ Շահզատայ անուն, եւ զօրապետ նորա Փիր Ալիպատիկ, եւ եկեալ մեծաւ զօրաւ ի վերայ սուլտան Ահմատին, եւ կոտորեցին երկոքին զօրքն ի դաշտին Արտազու՝ եւ ցրուեցան զօրքն:
1381	ՌՅՁԳ 1383	ՊԼ 830	(Վ869) Աստ գտեալ եղեւ զարհեստ թվանկի եւ թօփի ի Վէնետիկցւոցն: (Ե3701) Զայս գործ քան զամենայն յառաջ Վէնէտիկցիք ի կիր առին ընդդէմ Զինիվիզացւոց: Եւ Թուղթամ իշխան Ղրիմին առաքեաց զզօրս ի Դավրէժ եւ զքսան բիւր գերի տարաւ:
1382	ՌՅՁԴ 1384	ՊԼԱ 831	(Վ869) Տէր Թէոդորոս (կթղ.) ամս Թ (9), զսա սպանին ԺԶ (16) տանուտէրօք: (Մ1483, Ե3701) Տէր Թէոդորոս գնաց ի Մսըր, եւ մեծաւ պատուով ընկալաւ զնա սուլթան Բարխուղն[582]:
1383	ՌՅՁԵ 1385	ՊԼԲ 832	
1384	ՌՅՁԶ 1386	ՊԼԳ 833	(Մ5889) Ելանել Լանկ Թամուրին եւ տիրել ամենայն յերկրիս Պարսից եւ գալն յերկիրն Հայոց եւ ըմբռնե(ա)լ զԻլդրում Պայազիտն եւ երկաթի կաֆասօվ տանելն եւ գալն ի վերայ Վանայ եւ անթիւ մարդիք բերդէն ի վայր ձգելն եւ այլ ամենայն չարիս, զոր գործեաց չարն եւ գնացեալ ի Սմըրղանդ[583]: (Ե3701) Քեղայոյ խանն նստաւ:

			Ի սոյն թվին Բուրհան ղատին եսպան զտէրն Սեբաստիոյ, եւ զՍտեփաննոս եպիսկոպոսն Սեբաստիոյ նահատակեաց եւ զՍրբոց Քառասնից վանքն քակեաց:
1385	ՌՅՁԷ 1387	ՊԼԴ 834	
1386	ՌՅՁԸ 1388	ՊԼԵ 835	(Մ7261, Մ10202) Մեռաւ Յովհաննես վարդապետն Որոտնեցին, նստաւ Գրիգոր վարդապետ Տաթեւացին[584]: Ի թվին ՊԼԵ (1386) սուլտանն Թարվիզու Ահմատն՝ որդի Օյիս խանին, փախեաւ ի Լանկ Թամուրէն եւ գնաց ի Բաղդատ: (Մ1484, Տ93) Ի ՊԼԵ (1386) ամին Թուրքն էառ զբերդն Որոտան՝ եւ մեծ վարդապետն Կախիկն[585] գնաց փախստական ի Ծարայ եւ պարոն Գօրգունէն դարդամահ եղեւ ընդ նմին: Եւ Մաղաքիայ ճգնաւորն ի նոյն աւուր մեռաւ, ի տարելից նոցին տկարացաւ եւ ի նոյն օր մեռաւ եւ եդաւ մերձ յերջանկոյ վանքն: (Ե3701, Մ2965) Թամրազ խանն գնաց մինչ ի Դըմշխ եւ եկն եհաս ամս ԺԷ (17) գնաց ի Սմըրղնդ եւ մեռաւ: (Մ1869) ՊԼԵ (1386) թվին Լանկ Թամուրն եկն ի Թավրէժ եւ ի Նախչըւան, եւ անտի ի միում աւուր կալաւ մինչեւ ի Կարբի եւ ի Բջնի, ի Գառնի՝ Սուրմարի, ի Կողբ. եւ անտի գնաց ի Վրացտուն եւ արար ղազայ զՏփխիս քաղաք, եւ կալեալ զթագաւորն Բագրատ տաճկացոյց եւ գնացեալ ձմերեաց ի Մուղան: Եւ ի գալ տարւոյն (շարունակութիւնը՝ 1387 թ.):
1387	ՌՅՁԹ 1389	ՊԼՁ 836	(Մ1869) յաւուրս աւագ Ձատկին՝ ել ի Սիւնիս, եւ սփռեալ տարածեցաւ, եւ գնաց հետ Թուրքմընին մինչ ի Համթայ ջուրն, եւ դարձեալ եկն ի վերայ Վանայ, եւ խսարեաց զնայ զաւուրս ԻԵ (25) եւ առեալ զնա յաւուր հինգշաբաթոջ, յաթոռաց պահոց սբ. Խաչին, եւ զամեսեան ի բերդն ի վայր ելից՝ էՌ (7000) մարդ, եւ անց գնաց ի յաշխարհն Սմրղանդայ եւ յետ Ձ (6) ամաց դարձեալ եկն ի դուրս Թամուրն՝ եւ էջ ի Բաղդատ, եւ անդ կոտորեաց բազում մարդ, եւ

			գլուխ միներանի շինեաց Զ (6) եւ գնաց ի Միջագետս Ասորոց՝ եւ անդ կոտորեաց զբազում մարդիկք: Եւ էր որդի սուլտան Ահմատին ի բերդն Էրզնջակայ, եւ եկեալ Վրացիքն տարան, եւ լսեաց Թամուրն եւ բարկացեալ եկն ի դուրս մեծ բարկութեամբ, եւ գնաց ի Վրացտուն, շատ աւեր եւ վնաս արար, սրով եւ հրով եւ գերութեամբ, քակեաց զմեծամեծ եկեղեցիս ի Տփխիս: Եւ դարձեալ անտի էջ ի Շամայ տունն, եւ գնաց մօտեցաւ Երուսաղէմայ, բայց անտ ոչ եմուտ, եւ դարձաւ բազում աւարաւ՝ եւ գնաց ի թախտն: Եւ ի միւս այլ տարին գնաց ի Հոռոմս եւ էառ զԿամախ եւ զայլ բազում տեղիս, եւ ի Սեբաստիայ բազում կենդանիս թաղեաց աւելի քան զԲՌ (2000) եւ դարձաւ ի տեղի իւր: Եւ ի միւս այլ ամին դարձաւ ի Հոռոմս եւ զՅըլտրում խանն կալաւ, որ ունէր անթիւ հեծեալս եւ անհամար զօրս, ցրուեաց եւ գերեաց զամենեսեան: Յայսմ թվին, յունիսի ԻԳ (23), նահատակեցաւ Ստեփաննոս եպիսկոպոս ի Սեբաստիայ քաղաքի: (Վ869, Մ7261) Օսմանցի Պայազիդն թագաւորեաց ամս ԺԴ (14):
1388	ՌՅՂ 1390	ՊԼԷ 837	(Մ7261, Մ10202) Արար Տաթեւացին զՀարցմանց գիրքն:
1389	ՌՅՂԱ 1391	ՊԼԸ 838	
1390	ՌՅՂԲ 1392	ՊԼԹ 839	
1391	ՌՅՂԳ 1393	ՊԽ 840	(Վ869) Տէր Կարապէտ Բոկիկ Կեղեցի[586] (կթղ.) ամս ԺԲ (12): (Մ7261, Մ10202) Գրիգոր վարդապետ Տաթեւացին՝ զՊարապմանց լուծմունք[587]: (Ե3701) Յայսմ ամի կին ոմն Արճիշեցի, անունն Եղիսաբէթ, նահատակեցաւ քարկոծմամբ վասն անուանն Քրիստոսի, յաւուր տօնի սրբոց Քառասնից, ի Վան քաղաքի[588]:
1392	ՌՅՂԴ 1394	ՊԽԱ 841	(Մ2965) Թամուրլանկն դարձեալ եկն ի Բաղտատ եւ ի Միջագետս եւ աւերեաց զնոսա եւ դարձաւ յաշխարհն իւր: Սուլտան Ահմատի որդի

			սուլտան Տահիրն կայր ի բերդն Յալնջոյ, եւ Վրաց թագաւորն եկեալ գերեաց եւ տարաւ զնա ի Տփխիս: (Մ6354) Կատարեցաւ սուրբ վկայն Աւագ ի Բաղէշ[589]:
1393	ՌՅՂԵ 1395	ՊԽԲ 842	(Մ1869) ՊԽԲ (1393) թվին զտէր Թէոդորոսն ի Սիս սպանին, եւ նստաւ ի տեղի նորա Բոկիկ Կարապետն ամս ԺԲ (12): Յորժամ զտէր Թէոդորոսն ի Սիս սպանին, ի նոյն ամի զտէր Զաքարիայն յԱղթամարայ կաթուղիկոսն քարկոծ արարին յՈստան, զերկուսն ի միում ամի ՊԽԲ (1393):
1394	ՌՅՂԶ 1396	ՊԽԳ 843	
1395	ՌՅՂԷ 1397	ՊԽԴ 844	
1396	ՌՅՂԸ 1398	ՊԽԵ 845	
1397	ՌՅՂԹ 1399	ՊԽԶ 846	
1398	ՌՆ 1400	ՊԽԷ 847	(Ե3701) Յայսմ ամն նահատակեցաւ քարկոծմամբ կին ոմն Մոկացի հայ ազգաւ Թամար անուն, վասն անուանն Քրիստոսի, յՈստան քաղաքի[590]:
1399	ՌՆԱ 1401	ՊԽԸ 848	(Մ7261, Մ10202, Մ6354) Լանկ Թամուրն ելեալ ի Սմրղանտայ եւ գնաց աւ(եր)ելով զաշխարհս մինչեւ ի ծովն ովկիանոս ամս ԺԷ (17), զոր արարեալ է Թովմայ Մեծոփեցի վարդապետն զպատմութիւն եւ զաւերումն աշխարհի, որոց ազգի անունն Ջաղաթայ կոչի: Որդի Թամուրին Եարանշահ, որ նստաւ ի Թաւրէզ, եւ որդի նորա Օմար յաջորդեաց զտեղի նորա եւ բռնութեամբ դարձոյց զԲուրթէլ ի հաւատոց, որդի Իւանէի Օրբելեանց՝ տէրն Որոտանա, եւ զՏարսայիճ, տէրն Եղեգեաց եւ զՍօղրաթմիշ, տէրն Մակուայ, եւ զՂիտան, տէրն Անբերդի[591] յԱրարատէ, որք բազումք յետոյ զղջացան եւ ի հաւատն Քրիստոսի հաստատեցան[592]: Միւս որդի Թամուրին՝ Շահռուհ, որ թագաւորեցաւ ի Հրէ քաղաք, եւ որդի նորա Ուլուբէկ, որ նստաւ ի Սամրղանդ, որոյ աւուրս ղաշայ Ասորոյ բարձաւ քրիստոնեութիւն ի Սուլթանիոյ[593]:
1400	ՌՆԲ 1402	ՊԽԹ 849	(Մ2965) Թամուր դարձեալ եկն եւ էառ զբազում

			գերիս ի Վրաց եւ տարաւ յաշխարհն իւր եւ սատակեցաւ: Զտէր Թորոսն եւ զտէր Զաքարիայն սպանին: (Մ7261, Մ10202) Ծերենց Գրիգոր վարդապետն ի բազմաց գրոց ժողովեաց զայսմաւուրեաց պատմութիւնն[594]:
1401	ՌՆԳ 1402	ՊԾ 850	
1402	ՌՆԴ 1404	ՊԾԱ 851	(Մ7261) Ի սոյն ժամանակս Լանկ Թամուրն սատակեցաւ, յետ որոյ որդիք նորա՝ Շահռուհ եւ Եարանշահ, տիրեցին Թարվիզու, յետ սոցա Ահմատ խանն՝ որդի Օյիս խանին, որ փախուցեալ էր ի Թամուրէ: Ապա յարեաւ Ղարայ Ուսուֆն, ազգաւ Թուրքման եւ հալածական արար զամենայնսն եւ թագաւորեաց միայն: Զկնի նորա, որդի նորա՝ Սկանդարն եւ ապա եղբայր նորա Ջհանշահն եւ ապա Հասանն եւ ապա Եաղուպ շահն, որոյ քոյրն էր կին Շըխհայտարին, յորմէ ծնաւ Իսմայէլ, եւ նա՝ զԹահմազ, եւ նա՝ զԽուտապանդէն, եւ նա՝ զմեծ Շահ Ապասն, եւ նա՝ զշահ Սէֆի, թոռն իւր: Յետ շա(հ) Սեփուն նստաւ երկրորդ Շահ Ապասն, զկնի նորա նստաւ շահ Սուլեյմանն, որ այժմ տիրէ Արեւելեան աշխարհիս, ի թվականիս Հայոց ՌՃԼՋ (1687) ամին[595]:
1403	ՌՆԵ 1405	ՊԾԲ 852	(Վ869) Ի սոյն ժամանակի Լանկ Թամուրն շինեաց յԱղուանից արեւելս քաղաք մի՝ Բաղաղայ անուն, եւ ի տօնի Հրեշտակապետացն եկն ձիւն սաստիկ եւ սպան ի շինօղացն ԴՌ (4000) անձինս: Եւ ապա չըւեալ գնաց ի Սմրղընդ եւ անդ սատկեցաւ: Թիւ ժամանակաց նորա, որ տիրեալ դրուց աշխարհիս՝ ամս ԺԸ (18): Յետ մահուանն, որդիքն եւ թոռունքն ընդ իրեարս խառնեցան պատերազմաւ եւ ի միմեանս սատակեցան, եւ բնաջինջ եղեն եւ յետք նոցին, ոչ երեւէին:
1404	ՌՆԶ 1406	ՊԾԳ 853	(Մ7261, Մ10202) Տէր Յակոբ ամս Բ (2), սմա դեղ մահու արբուցին[596]: (Մ5889) Վաղճանի Սարգիս վարդապետն Սորբեցին[597]:

1405	ՌՆԷ 1407	ՊԾԴ 854	(Վ869) Տէր Գրիգոր ամս է (7)՝ Խանձողատն, զոր եւ աքսորեցին եւ հոգով սպանին[598]: (Մ1869) Շնմզդին՝ Բաղէշու տէրն, եկն եւ այրեաց զԱրծկոյ երկիրն, եւ սպանեաց շատ մարդ եւ քահանայ, բայց առնուլ ոչ կարաց, եւ խսարեաց զնա աւուրս ԺԳ (13) եւ տէր նորա եդ ամիր Եզդին: Եւ ի գալ միւս ամին, որ էր թիւն ՊԾԵ (1406) եկն ի վերայ Ղարաիւսուֆն եւ արար դաւ ի յԱրճէշոյ եւ յԱրծկոյ, եւ Շնդին՝ ընկեր նմա, արար շատ աւեր, եւ այրեաց զերկիրն Վաստանայ եւ Վանայ. եւ նստաւ աւուրս Լ (30) յԱմկոյ եւ ի Շատրւանայ այրեցին եւ սպանին շատ մարդ եւ քահանայ եւ դարձեալ գնաց ի Վրացտուն, եւ արար ղազայ եւ եկեալ սատակեցաւ:
1406	ՌՆԸ 1408	ՊԾԵ 855	(Մ1869) Ղարաիւսուֆն Թուրքմանն, որ բազում տարիք փախստական լեալ էր ի Թամուրէն, յորժամ էջ Թամուրն ի Շամայ տունն եւ կալեալ զԻւսուֆն կապանաւք տարաւ յեգիպտոս եւ եդ ի խստագոյն բանդս ներքինս: Եւ յորժամ սատակեցաւ Թամուրն, եւ անտի արձակեալ Իւսուֆն, եկն ի վերայ Հայոց աշխարհիս եւ արար շատ աւեր եւ գնաց ի Թավրէզ եւ այլ յառաջ, եւ մլքեաց բազում տեղիս՝ մինչեւ ի Սուլտանիայ եւ Օրէլ քաղաք:
1407	ՌՆԹ 1409	ՊԾԶ 856	(Մ5889) Սատակումն Լանկ Թամուրին եւ իբր շուն գոչելն ի մաղադ եւ ապա ի խոր իջուցանել եւ ջուր անցուցանել, զի գարշելի ձայն ոչ դադարէր[599]:
1408	ՌՆԺ 1410	ՊԾԷ 857	(Ե3701) Յայսմ ամի Շմիզդնի հեծեալքն եկին եւ այրեցին զԼատուն, եւ բարկացեալ յամիր Եզտին գնաց եւ այրեաց զվատսուն գիւղ ի Բաղիշոյ: Ի սոյն ամի մարախ եկն եւ զյոլով տեղիս կերաւ[600]:
1409	ՌՆԺԱ 1411	ՊԾԸ 858	(Մ7261) Վաղճանեցաւ սուրբ Գրիգոր աստուածաբան ռաբունապետն, եւ եդաւ ի Տաթեւու վանքն:
1410	ՌՆԺԲ 1412	ՊԾԹ 859	(Մ5889) Շինումն Մեծոփայ վանիցն եւ օծումն ձեռամբ Տաթեւացուն[601]:
1411	ՌՆԺԳ 1413	ՊԿ 860	

1412	ՌՆԺԴ 1414	ՊԿԱ 861	(Մ7261, Մ10202) Տէր Պօղոս ամս Բ (2) յԱրարատէ: Սմա դեղ մահուան արբուցին[602]:
1413	ՌՆԺԵ 1415	ՊԿԲ 862	(Մ7261) Յետ բառնալոյ թագաւորութեան Հայոց ի Սըսայ ի ՊԿԲ (1413) ժողովեցան թագաւորազունքն եւ իշխանքն եւ բազումք ի ժողովրդենէն, մտեալ ի նաւ գնացին ի Ֆռանկստան, ԼՌ (30 000) տուն քրիստոնեայք՝ Հայ ազգաւ[603]: (Ե3701) Տէր Կոստանդին ամս Ժ (10):
1414	ՌՆԺԶ 1406	ՊԿԳ 863	
1415	ՌՆԺԷ 1417	ՊԿԴ 864	
1416	ՌՆԺԸ 1418	ՊԿԵ 865	
1417	ՌՆԺԹ 1419	ՊԿԶ 866	(Ե3701) Յայսմ ամի նահատակեցաւ սուրբ Իսահակ պարսիկ վարդապետն, յապրիլ ԺԸ (18):
1418	ՌՆԻ 1420	ՊԿԷ 867	(Ե3701) Ի տրէի Ի (20) արեգակն խաւարեցաւ:
1419	ՌՆԻԱ 1421	ՊԿԸ 868	(Մ1869) Ամիր Եզդին բարկացեալ Վաստանայ գնաց ի Բաղէշու երկիրն եւ այրեաց Կ (60) գեօղ՝ մինչեւ ի գաւառն Սեղմայ[604]: Ի սոյն ամի մարախն զամենայն բոլորս կերաւ, բայց ի մեր բոլորս վնաս ոչ արար, հազար ամանաթ ի ցանելոյ մի դադարիք, ով չցանեց՝ տունն աւերեցաւ:
1420	ՌՆԻԲ 1422	ՊԿԹ 869	(Մ7261, Մ10202) Օսմանցի Մուրատն թագաւորեաց ամս ԻԹ (29):
1421	ՌՆԻԳ 1423	ՊՀ 870	(Ե3701) Առաջին գալն Շախրուխին, որ յաղթեաց Թուրքմէնին եւ գնաց: Եւ Ջաղաթէն եկն յաշխարհս Հայոց:
1422	ՌՆԻԴ 1424	ՊՀԱ 871	(Ե3701) Շախրուխն եկն ի Ղարաբաղն:
1423	ՌՆԻԵ 1425	ՊՀԲ 872	(Մ1869) Մեռաւ մելիքն Վաստանայ՝ եւ հայրն նորա՝ ամիր Եզդին եւ իւր որդին: (Ե3701) Աղեքսանդր[605] եկն:
1424	ՌՆԻԶ 1426	ՊՀԳ 873	(Մ1869) Ըսքանդարն սպան զՇնմըզդին եւ աւերեաց զերկիրն՝ եւ զՎան քաղաք եւ զՎաստան անմարդաբնակ արար: Ի սոյն ամի իշխանութեան Ըսքանդարին, եւ ի պարոնութեան սուլտան Ահմատին եւ ի կաթուղիկոսութեան տէր Պօղոս(ին) յԵրուսաղէմ Յարութեան դուռն՝ Բ (2) ամ փակեալ կայր: (Ե3701) Յայսմ ամի նահատակեցաւ Ստեփանոս վարդապետն ի Հիզան, որ է ի վանիցն Գա-

			մաղիէլի, եւ Պետրոս էրէց աշխարհի, որ միմեանց ուրացութեան պատճառ եղեն, վասնորոյ ի միասին յանձն առին զնահատակութիւն վասն անուանն Քրիստոսի:
1425	ՌՆԻԷ 1427	ՊՀԴ 874	(Մ7261, Մ10202) Տէր Գրիգոր ամս Գ (3), յաւուրս սորա Աջն դարձաւ ի գաւառ իւր[606]: (Ե3701) Նահատակեցաւ ի վանքն Ցիպնայ Գրիգոր վարդապետն Ծերենց[607]:
1426	ՌՆԻԸ 1428	ՊՀԵ 875	
1427	ՌՆԻԹ 1429	ՊՀԶ 876	(Մ7261, Մ10202) Ի ՊՀԶ (1427) Սկանդար իմիրզէն՝ որդի Ղարայ Ուսուֆին, էառ զբերթն Մակուայ ի ձեռաց երկաբնակաց եւ զՆըւան՝ ի Քրթաց եւ եղեւ խաղաղութիւն[608]:
1428	ՌՆԼ 1430	ՊՀԷ 877	
1429	ՌՆԼԱ 1431	ՊՀԸ 878	(Ե3701) Շախրուխն երկրորդ անգամ եկն եւ կոտորեաց զԹուրքն ի Սալմաստ, եւ զԲուսայիտն խան եդ եւ գնաց յաշխարհն իւր:
1430	ՌՆԼԲ 1432	ՊՀԹ 879	(Ե3701) Դարձեալ եկն Շախրուխն. Դեմետրէն դէմ գնաց ի Ղարաբաղն: Եւ ի սոյն թվին մահ եկն յաշխարհս:
1431	ՌՆԼԳ 1433	ՊՁ 880	(Մ5889) Զօրք անողոք չաղաթային եկեալ յերկիրն Արճշու եւ Արծկու ի վերայ Սքանդարին եւ նայ փախուցեալ եւ զօրացն չաղաթին գերեալ զերկիրն Արճշու եւ Վանայ բազում եւ անթիւ գերի տարեալ Խորասան[609]: (Ե3701) Յայսմ ամի եղեւ սով սաստիկ ի Դաւրէժ եւ ի Վասպուրական, եւ տարաժամ մահն սփռեցաւ ընդ չորեք կողմն աշխարհիս, եւ սուրն աստուածային մանրէր՝ ոչ գիտելով զմեծ եւ ըզփոքրն, եւ ո՞վ կարէ պատմել զկսկիծն զայն:
1432	ՌՆԼԴ 1434	ՊՁԱ 881	
1433	ՌՆԼԵ 1435	ՊՁԲ 882	
1434	ՌՆԼԶ 1436	ՊՁԳ 883	
1435	ՌՆԼԷ 1437	ՊՁԴ 884	(Ե3701) Զկնի Ժ (10-րդ) ամի տէր Կոստանդեայ յաջորդէ տէր Յովսէփ[610]:
1436	ՌՆԼԸ 1438	ՊՁԵ 885	(Ե3701) Նահատակեցին զՄուրատշան ի Բզնունիս եւ լոյս ծագեաց ի վերայ նորա[611]:
1437	ՌՆԼԹ 1439	ՊՁԶ 886	(Ե3701) Սպան զԻսքէնտէրն որդին իւր, եւ ինքն թագաւորեաց[612]:

1438	ՌՆԽ 1440	ՊՁԷ 887	(Ե3701) Ղուլն եկն Եզընկէն: Նստաւ Ջհանշահն: Ալէքս թագաւորն Վրաց սպան մահադեղով զՊէշգինի իշխանն Հայոց՝ որդին Սմպատայ Օրպէլեանց: Առաքել վարդապետն Բաղիշեցին զՊատմութիւն Յովասափու[613] արար:
1439	ՌՆԽԱ 1441	ՊՁԸ 888	(Ե3701) Ձկնի Դ (4-րդ) ամին տէր Յովսէփին յաջորդէ տէր Գրիգոր Սսեցին Մուսապէկենց: Յայսմ ամի շինէ Նախաշ եպիսկոպոսն Մկրտիչ զմեծ Կաթուղիկէն ի յԱմիթ, ի յանուն սրբոյն Դէդորոսի:
1440	ՌՆԽԲ 1442	ՊՁԹ 889	(Ե3701) Ջհանշահն բարկացեալ Հայոց ազգին գնաց ի Վրացտունն, էառ զՇամշուլտէ. ԳՌ (3000) այր կոտորեցաւ եւ ԹՌ (9000) գերեցաւ[614]:
1441	ՌՆԽԳ 1443	ՊՂ 890	(Մ2965) ՁԱՋ Լուսաւորչին ի Սսոյ գողացեալ բերին յէջմիածին եւ վերստին հաստատեցին զկաթուղիկոսութիւնն, զԽոր Վիրապայ հայրն՝ տէր Կիրակոս, օրհնելով կաթուղիկոս: (Վ869, Վ2261) Մինչ յայս կաթողիկոսք ի Սիս նստէին: Յետ այսօրիկ ազդմամբ Հոգոյն Սրբոյն ժողովեցան ի Վաղարշապատ եպիսկոպոսք եւ վարդապետք եւ հաստատեցին զաթոռ սուրբ Լուսաւորչին՝ զՍուրբ էջմիածին, եւ աւրհնեցին կաթողիկոս զտէր Կիրակոսն՝ ճգնաւոր առաջնորդն Սուրբ Վիրապին, որ եկաց ամս Բ (2) ի թւին ՊՂ (1441)[615]: (Ե3701) Յայսմ ամի ի Սսայ վանիցն անյայտ եղեւ Աջն սրբոյն Լուսաւորչին եւ յարեւելցիք յորժամ լուան, օծեցին զԿիրակոս Խորվիրապեցին կաթողիկոս, եւ այս եղեւ պատճառ նորոգութեան Սրբոյն էջմիածնի: Յայսմ ամի այրեցին զԽտրշան ի Մարսվան հրով, Հայ ազգաւ, պատճառելով, թէ ի ճանապարհին զմեր օրէնքն անարգեաց, եւ մեք կարծեցաք զնա գոլ Թուրք, վասն զի ի գլուխն ճերմակ փաթեր էր: Եւ յայնմ օրէ զճերմակ չալման վերացուցին ի գլխոց քրիստոնէից:
1442	ՌՆԽԴ 1444	ՊՂԱ 891	(Ե3701) Սսայ Գրիգոր կաթողիկոսն, որ Մուսա-

			պէկենց ասի, զկնի Գ (3)-ից ամաց վաղճանեցաւ եւ ոչ օծեցին զոք ի տեղի նորա վասն Բ (2) պատճառի. մինն, զի էջմիածին գոյր կաթողիկոս տէր Կիրակոս, եւ միւսն, զի Լուսաւորչի Աջն անյայտ եղեւ: Եւ մնաց Սսայ աթոռն Բ (2) տարի խաբան, մինչ որ ընկեցին զտէր Կիրակոսն, ապա օծեցին Սսացիք զտէր Կարապետ կաթողիկոսն:
1443	ՌՆԽԵ 1445	ՊՂԲ 892	(Ե3701) Յայսմ ամի զտէր Կիրակոսն փոխեցին վասն նախանձու, եւ Մակուեցի Գրիգոր եպիսկոպոսն նստաւ կաթողիկոս ղապալով եւ Թուրքով[616]: Եւ յայսմ ամի յուլիսի ԺԴ (14-րդ) օրն, Զ (6) օր առաջ քան զլրումն, խաւարեցաւ լուսինն: (Վ2261) Տէր Գրիգոր Մակուեցի՝ առաջնորդ սուրբ առաքելոյն Թադէոսի, ԺԲ (12) ամ ղապալով նստաւ:
1444	ՌՆԽԶ 1446	ՊՂԳ 893	(Ե3701) Եւ յորժամ ընկեցին զտէր Կիրակոսն, լուան Սսացիք զայն համբաւն, չընդունեցին զԳրիգորն, պատճառելով թէ ղապալով եւ Թուրքաց ընտրութեամբ է: Վասն որոյ օծեցին ի Սիս զտէր Կարապետն կաթողիկոս, որ էր աշակերտաց Գրիգորի Մուսապէկեան, զի էրէց էր եւ ի նմանէ օծաւ եպիսկոպոս: (Վ869, Ե3701) Ջհանշէն զԱխալցխայ գերեաց:
1445	ՌՆԽԷ 1447	ՊՂԴ 894	
1446	ՌՆԽԸ 1448	ՊՂԵ 895	(Ե3701) Ջաղանթէն գնաց ի վերայ…: Շահրուխն իւր մահուամբն մեռաւ:
1447	ՌՆԽԹ 1449	ՊՂԶ 896	(Մ5889) Վաղճանի Թումայ վարդապետն Մեծոփեցին[617]:
1448	ՌՆՕ 1450	ՊՂԷ 897	
1449	ՌՆՕԱ 1451	ՊՂԸ 898	(Մ7261, Մ10202) Սկիզբն թագաւորութեանց Օսմանացոց. Օսմանն շինական գոլով յարեցաւ յԱլատին սուլթանն Միջագետաց եւ առեալ զօրս ի նմանէ եւ էառ զԲուրսայ եւ թագաւորեաց ամս ՕԸ (58), որոյ անուամբն Օսմանլու կոչեցան: Օսմանցի Մահմատն թագաւորեաց ամս ԼԱ (31), ի չորորդ ամին՝ ՋԲ (1453) թվին էառ զՍտամբօլ:
1450	ՌՆՕԲ 1452	ՊՂԹ 899	(Ե3701) Վաղճանեցաւ Կիրակոս կաթողիկոսն, զոր ընկեցին յէջմիածնայ աթոռոյն:

1451	ՌՆԾԳ 1453	Ջ 900	(Ե3701) Մեռաւ սուլթան Մուրատն գլխացաւութեամբ. ԽԹ (49) տարի ապրեցաւ, թագաւորեաց ամս ԼԱ (31), եւ Ժ (10) օր պահեցին զմարմինն, մինչ որ զորդին թագաւորեցուցին զՄուհամէտն, փետրվարի Գ (3):
1452	ՌՆԾԴ 1454	ՋԱ 901	(Մ2965, Ե3701) Ջիհանշահն էառ զեզնկան:
1453	ՌՆԾԵ 1455	ՋԲ 902	(Մ5889) Սուլթան Մահմատն էառ Ըստամպոլ, յոր է Կոստանդնուպոլիս, ի ձեռաց Յունաց: (Մ7261) զԿոստանդինուպոլիս էառ սուլթան Մահմատն եւ անդ հաստատեաց զաթոռ թագաւորութեանն, եւ էր թագաւոր Յունաց վերջին Կոստանդին[618], որ սպանաւ ի նմին: (Ե3701) Սուլթան Մահմատն էառ զԸստամպոլ ի ձեռաց Յունաց Մանուէլի: Եւ այս կերպիւ առին զնա. քանզի չորս հարիւր նաւ ի ծովէն ի տօնան մայով յղեաց եւ Հ (70) նաւ այլ՝ ի Ղալաթիու կողմանէն, ի ցամաքեն քարշեալ՝ ի յէուպին յառաջեւն ի ծովն ընկեցին եւ ի վերայ կարմունճ պատեցին եւ զսակէրն անցուցին: ԾԱ (51) օր ճանկ արարին եւ ԼՌ (30 000) մարդ յԱյա Սոֆին լցուաւ. ծեծվեցան եւ զնոսա եւս ջարդեցին, եւ զօրքն Թուրքաց յարեամբ յագեցան: Եւ թագաւորն Յունաց՝ Մանիլ, ի նաւ մտեալ փախչէր եւ ի փախչելն ըմբռնեցին որդովքն եւ ընտանեօքն, եւ երկրորդում օրն զգլուխն կտրեցին, ի ձող ցցեալ ի քաղաքին շուրջ ածեցին եւ զՍուրբ Սոփիայի խաչերն եւ այլ ոսկեղէն եւ արծաթեղէն անօթքն խորտակեցին եւ քերեցին զորմունքն: Եւ կարթացին անդ զՂուրայանն եւ արարին ճամի եւ զզանկակներն իջուցին եւ խորտակեցին եւ զանկակապուրճսն մինարայ արարին, եւ եդին զոմն, որ անունն զՂզլպէկն կոչեն՝ առաջին դատաւոր: Եւ զայլն տեսցես յոտանաւորն, զոր Առաքել վարդապետն Բաղիշեցին շինեալ էր ի վերայ առմանն Ստամպոլու:
1454	ՌՆԾԶ 1456	ՋԳ 903	(Մ7261) Ճհանշէն՝ որդի Ղարայ Ուսուֆին, գնացեալ էառ զՀամատան, զՍաւայ, զԱսպահան, զՌէ, զՂազվին, զԳիլան, զՔաշան, զՇիրազ, զՔարման եւ զԸԽորասան եւ զքաղաքս անթիւ

			եւ բազումս: (Ե3701) Յայսմ ամի մեռաւ Ըստամպօլու առաջին դատաւորն, զոր Ղզըլպէկ կոչեն:
1455	ՌՆԾԷ 1457	ՁԴ 904	(Մ7261) Տէր Արիստակէս (կթղ.)՝ Ձ (6): (Ե3701) Յայսմ ամի էառ սուլթան Մուհամէտն զերկիրն Մոռայու:
1456	ՌՆԾԸ 1458	ՁԵ 905	(Ե3701) Յայսմ ամի էառ սուլթան Մուհէմէտն զկէս Թէմոնի եւ զՍնապու բերդն եւ զՏարախլընն եւ զՊուռունուն եւ գնացին ի Կուրճուստան: Եւ յայսմ ամի եղեւ մահ տարաժամ եւ ջնջէին ազգատոհմաւն տունքն ընտանեօքն:
1457	ՌՆԾԹ 1459	ՁՁ 906	(Ե3701) Յայսմ ամի սուլթանն Եգիպտոսի Մելիք Տահիր Չախմախ Տահիրին ի Պարխուխին պարոնացն էր, յետ ԺԴ (14) ամի մելիքութեան իւրում կամաւն եթող զմելիքութիւն իւր տալով զնա յորդոյ իւրում Մանսուր Օսմանին, եւ ինքն յետ միոյ ամսոյ մեռանի, եւ նստի եղբայրն Մելիք Մանսուր որդի Չախմախին:
1458	ՌՆԿ 1460	ՁԷ 907	(Ե3701) Յայսմ ամի եղեւ գետնաշարժ Եզընկէն, եւ մեռաւ ԼԲՌ (32 000) հոգի: Եւ ի յայսմ ամի մեռաւ թագաւորն Կիպրոսի ռէ Ճուանն: Եւ ի յայսմ ամի էառ Օսմանցին զբերդն Հերսիքէ:
1459	ՌՆԿԱ 1461	ՁԸ 908	(Ե3701) Յայսմ ամի առին զբերթն զԻզնիկ, զբերդն Տերաճ եւ զՊօսնայու երկիրն:
1460	ՌՆԿԲ 1462	ՁԹ 909	(Ե3701) Յայսմ ամի, յետ ԺԷ (17-րդ) ամին Գրիգորի, նստի յէջմիածին կաթողիկոս տէր Զաքարիայ[619]: Եւ յայսմ ամի զՎէքէ մանուկն, զորդի պարոն Վարդին, զտէրս Համշինու, ըմբռնեաց Շահալին եւ ետ ի ձեռն սօֆուն, որ Շէխ կոչէին: Եւ ի յայսմ ամի սուլթան Մահմուտն ձեռօք էառ զՏրապիզոն՝ ծովով եւ ցամաքով, յօգոստոսի ամսոյն:
1461	ՌՆԿԳ 1463	ՁԺ 910	(Մ7261, Մ10202) Տէր Զաքարիայ Աղթամարցի (Հայոց կթղ.) Ե (5): Չիթարն զՏրապիզոն էառ: (Ե3701) Յայսմ ամի Սսայ Տաճիկքն եկին գաղտ ի գիշերի ի սուրբ յաթոռն եւ առաջի Կարապետ

			կաթողիկոսին արարին ուխտ դաշինք ընդ Հայոց ազգին, որք են ի Սիս եւ միաբանեցան եւ ի վաղիւն առհասարակ գնացին ի դուռն դարպասին, առ ի ըմբռնալ զՄելիք յՕմարն: Եւ նա իմացաւ, էառ առ ինքն զԹուրքմէնք տեղոյն եւ նովաւ մարտեաւ եւ յաղթեաց զքաղաքացիսն: Եւ եմուտ Թուրքմէնն ի քաղաքն եւ տունս յոլով թալանեցին, որոց Դ (4) մեծեմեծաց տունք էին ի Տաճկաց եւ Գ (3) յիշխանացն Հայոց էին՝ զՊաղտօնին տղին, զԼեւոնին, եւ զԳրիգորին, որ զԱնցմկցայ կամուրջն նորոգեաց, եւ յիշատակն կայ գրեալ մինչեւ ցայսօր ժամանակի: Եւ մտեալ ի սուրբ աթոռն եւ յափշտակեցին զամենայն կահ եւ զսրբութիւնս նորա, եւ ելեալ գնացին[620]:
1462	ՌՆԿԴ 1464	ՁԺԱ 911	(Մ7261) ՁԱջ սուրբ Լուսաւորչին տարաւ տէր Զաքարիայն ի յԱղթամար կղզին: (Ե3701) Յայսմ ամի էառ սուլթան Միամէտն զՄիտիլն իւր երկրովն ի սեպտեմբերի ամսոյ:
1463	ՌՆԿԵ 1465	ՁԺԲ 912	(Ե3701) Առին զԿօլունճէ Հիսար երկիրն Ղարամանայ:
1464	ՌՆԿԶ 1466	ՁԺԳ 913	(Ե3701) Յայսմ ամի սուլթան Մահմէտն զտէրն Ղարամանայ սուրկուն եբեր Ըստամպօլ՝ զՓիր էհմէտ պէկն, քանզի անհնազանդ եղեւ թագաւորին մասամբ իւիք: Եւ յայսմ ամի էառ զերկիրն Արակլիու՝ զԱղսարայու բերթն, զԿօկիսոնու բերդն եւ զՊուրսայու հայերն աւար արարին եւ զանօթս եկեղեցոյն կողոպտեցին եւ տարան Ըստամպօլ: Եւ յայսմ ամի ապրիլի ԻԲ (22) եղեւ փոխումն տէր Ներսէս եպիսկոպոսին յԱնկուրիոյ: էր սա յերկրէն Ղրիմայ՝ աշակերտ Սարգիս վարդապետին, եւ որպէս զարեգակն փայլէր յերկրին Հոնաց, զոր բազումք երկրորդ Շնորհալի կոչէին: Եւ էր աղքատասէր եւ ճգնազգեաց, ծրի առնոյր եւ ծրի տայր, ի բաղնիս ոչ մտանէր եւ ի կին մարդ բնաւին ոչ հայէր, եւ շնորհիւն Սրբոյ Հոգոյն անդադար քարոզէր Հայոց, Ֆռանկաց եւ Յունաց, բազում ի մեծամեծ Տաճկաց քաղաքին

			լսէին զբանն նորին եւ արդարեցուցանէին զանձինս իւրեանց՝ հաւատալով բանից նորին: Ի սորա յաւուրս եղեւ ժողով տղայոց, քանզի թագաւորն Տաճկաց ժողովեաց զմանկունս քրիստոնէից եւ տարաւ Ըստամպօլ, եւ տէր Ներսէս գնաց զհետ մանկանց, եւ եբեր զթուղթ ազատութեան Հայոց, զոր Մահմէտն տուեալ էր, եւ շաւաղաթլէմէ կոչէն, եւ թագաւորն ոչ ինչ համարեցաւ զթուղթն, բայց միայն զԱնկուրիոյ մանկունքն շնորհեաց նմա: Եւ յետ Զ (6) ամաց տարան զծնօղք մանկանցն Ըստամպօլ եւ գնացեալ սրբոյն զհետ նոցա, եւ անդ հիւանդացաւ եւ մեռաւ իսկ՝ ԽԵ (45)-ամաց, եւ անդ թաղեցաւ, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի:
1465	ՌՆԿէ 1467	ՁԺԴ 914	
1466	ՌՆԿԸ 1468	ՁԺԵ 915	(Մ7261) Տէր Սարգիս (կթղ.)՝ Ը (8): (Ե3701) Յայսմ ամի դարձեալ էառ Ջիանշահն զՊաղտատ եւ սպան զիւր որդին: Եւ այսմ ամի Մսրայ սուլթանն կոչեցեալ Աշրաֆ Նըլպալ եւ Նասր Ֆարխ յետ Ը (8) ամի սուլթանութեան կամաւ եթող զթաղթն, զոր է (7) քաղաք էր տուեալ եւ ետ Ֆէրաղաթին եւ յետ Ա (1) յաւուր մեռաւ:
1467	ՌՆԿԹ 1469	ՁԺՁ 916	(Մ2965) Ջպարոն Լոյսն նահատակեցին ի Կաֆայ: (Ե3701) Յայսմ ամի Հասան բէկն գնաց ի Վրացտունն եւ գերեցոյց: Եւ յայսմ ամի էառ սուլթան Մուհէմէտն զԱլայիայ, եւ էր սորա պարոնն Ղըլըճ Ասլան պէկն. իւր կամաւն զբերդն դատարկեցոյց եւ թագաւորին թէսլիմ արաւ, եւ թագաւորն զԿօմուլճէ նմա թիմար ետ եւ յղեաց յՈւռոմէլի: Եւ էառ սուլթան Մուհէմէտն ի յայսմ ամի զՂարահիսարն, առ եւ ելից եւ զԱղրիպու բերթն: Եւ յայսմ ամի Աջպան ի Սիս՝ Հեթում Սպիտակերեց Խազոնց կոչեցեալ[621]: Եւ յայսմ ամի թագաւորեաց ի Գերմանիկէ Շահսուարն, որ էր որդի թագաւորին Գերմանիկոյ, եկն ի վերայ Սսայ, քանզի հակառակ եղեալ Մսրայ սուլթանին եւ շատ աւեր էած սուլթանայ

			աշխարհին եւ զկօչէփէ Թուրքմենքն զամենեսեան եզարկ եւ թալանեց եւ անթիւ չարութիւնս գործեաց: Եւ այժմ Սիս ընդ իշխանութեամբ Մսրայ սուլթանին, վասն որոյ խորհեցաւ չարութիւն Սսայ քաղաքին, բերթին եւ Վագայու, եւ յունիսի Բ (2-րդ) օրն էկաւ ի վերայ Սսայ բազում հեծելօք եւ զքաղաքն հրկէզ արաւ: Եւ զայս ետես Աջպան, եկեաւ, էառ զաջերն եւ տարաւ ի Կոպիտառայ, զի մի անկանիցէ ի ձեռս բռնաւորին: Իսկ Շահսուարն, զկնի հրակէզ առնելոյ զթագաւորանիստ քաղաքն Սիս, ելեալ անտի եւ գնաց էառ զԱտանայ եւ զԹարսիս եւ զծովահայեաց քաղաքն զԱյաս, զԱնաւարզա եւ զԿովռայ եւ զամենայն դաշտս եւ զՊախրազու բերդն, զԼեւոն բերդն, զԿոպիտառայ, զԲարձրբերդն եւ տիրեաց ամենայն լեռնակողմանցն: Եւ ելաւ յետոյ սուլթանայ հեծելն եւ գնաց Շահսուարն ընդդէմ Շամցուն եւ կոտորեաց եւ արար փախստական մինչեւ ի Հալապ եւ թալանեաց զՀալպայ գեղորայքն եւ գնաց յԱնտիոք եւ զնա եւս թալանեաց, եւ դարձեալ եկն գոռոզաբար ի վերայ Սսայ բերդին եւ հսարեաց զբերդն: Եւ Չաքամ պարոնն կայր ի բերդին եւ Ը (8) հեղ պատերազմ արարին եւ իջին քրիստոնեայքն ի բերդէն եւ շատ Տաճիկ սպանին: Եւ շատ սղարեցին զբերթն, եւ նա պահեաց: Իսկ Սսեցիքն անճրկեցան եւ տվին զբերդն ի դեկտեմբերի ԻԳ (23) եւ եդ Շահսուարն պարոն ի Սիս՝ զՇարամէնտն, եւ գնաց[622]:
1468	ՌՆՀ 1470	ՁժԷ 917	(Ե3701) Յայսմ ամի գնաց դարձեալ Շահսուարն յերկիրն Շամայ եւ առեալ Ռ (1000) տուն Շամցի տաճիկ եւ եբեր ելից ի Սիս քաղաքի: Եւ դարձեալ ելաւ ի Շամու հեծել եւ գնաց Շահսուարն ընդդէմ նոցա: Իսկ Սսու Թուրքերն եւ Շամցիքն միաբանեցան ի մայիսին ԺԴ (14)-ն եւ արարին պատերազմ, եւ խլեցին զբերթն պարոնին, ձիանն եւ զջորեստանքն, եւ պարոնն կալաւ Ը (8) քրիստոնեայ եւ եդ ի հորն: Եւ քաղաքա-

			ցիքն ամենեքեան թողին զտունն եւ զըռզակն[623] եւ փախեան: Եւ Աջպան Սպիտակէրէցն առեալ զաջերն եւ զայլ սրբութիւնս եւ գնաց ի Կոպիտառայ՝ առ Թորոս եպիսկոպոսն եւ ամրացան ի բերդին: Եւ Ֆարսախ Թուրքմէնն թալանեաց զՍիս քաղաքն, եւ առին շատ մալ եւ եկեղեցոյ անօթ, զոր չեմք կարեր ընդ գրով արկանել: Եւ Շարամէնթ պարոնն Սսայ արար երթումն եւ դաշին եւ յղեաց մարդ ի Կոպիտառայ, առ Սսացիքն, եւ ասաց, թէ բերէք ԺԲՌ (12 000) ղրուշ, որ տամ զձեր մարդիկն: Եւ Սսացիք ոչ գիտէին զնորա նենգութիւնն, առին շատ մալ եւ ձի, գնացին ի Սիս, եւ իջին ի բերդէն եւ ըմբռնեցին զամենայն քրիստոնեայսն եւ եդին ի հոր բանդին: Եւ առին զմալն եւ զձիանքն եւ շատ ըռզակ: Եւ սպան Գ (3) Տաճիկ, վասն որոյ ի մնացեալ իշխանացն ոմանք գնացին ի Տէրէնտէու բերդն, մօտ ի Շահսուարն, եւ առին ի նմանէ հրաման եւ եկեալ հանեցին զբանտարգեալ քրիստոնեայսն: Եւ յայսմ ամի էտիլ կոչեցեալ Ֆախին առեալ զՖարսախն եւ եմուտ ի Սսայ բերդն գողութեամբ, եւ թալանեաց եւ շատ մալ էառ եւ շատ անօթ սրբութեանց: Եւ յայսմ ամի Սեաւ Արաբացիք ԺԸ (18) գունտ հազարաց զօրօք պաշարեցին զՄելիտինէ կոչեցեալ կղզին, որ յայժմ Մալթայ ասի, քանզի կամեցան կործանել եւ հողոյ հաւասար առնել զնա, բայց զկնի երից աւուրց երեւեցաւ սուրբ առաքեալն Պօղոս՝ աստղալից զգեստիւք, ահեղ իմն երեւմամբ, հեծեալ երիվար եւ սուր ի ձեռին, եւ շուրջ պատեալ զնովաւ անհուն բազմութիւն, դիմեաց ի վերայ Սեւոցն, որ թէպէտ նոքա ձգեցին ընդդէմ նորա բազում նետս, սակայն նետքն յետ դառնային ի ձգողսն, որ բազումք վիրաւորեցան եւ դարձան յամօթալից յետս:
1469	ՌՆՀԱ 1471	ՁԺԸ 918	(Ե3701) Յայսմ ամի Թուրքն էառ զՆեգրոպօնթ եւ ետ զբազում վնասս եւ հարուածս քրիստոնէից:

			Յայսմ ամի եղեւ մահտարաժամ ընդ ամենայն երկիր, եւ մեռան բազումք կարգաւորք եւ իշխանք եւ տանուտէրք, եւ ի Սիս Աջպան[624] սուրբ Լուսաւորչի Աջոյն մեռաւ, զոր ի նոյն ժամանակի Նաղաշ եպիսկոպոսն ասաց զողբն ի վերայ տղայոց, որ է սկիզբն «Արարիչն արարածոց» եւ այլ ողբ ի վերայ իշխանացն, որոյ սկիզբն՝ «Երազ է եւ սուտ եղբարք» եւ այլն: Եւ յայսմ ամի սպան Հասան բէկն զՋիհանշահն յետ ԼԱ (31) ամի շահութեան, որ եկն ի վերայ յԱմթայ, եւ եղեւ վերջ սոցա թագաւորութեանն, քանզի չունէր ժառանգ, վասն զի ինքն սպան զորդին իւր ի Պաղտատ եւ վերջացաւ թագաւորութիւն սոցին, որ տիրեցին ԿԸ (68) ամ, ինքն եւ իւր հայրն՝ Իսքէնտէրն եւ պապն՝ Ղարա Յուսուֆն, որ ՊԾ (1401) թվին թագաւորեաց յետ Լէնկ Թէմուրին: Եւ յայսմ ամի եկն Եզդինշերն եւ թալանեաց յերկիրն ըՌշտունեաց յաւուր ծննդեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ: (Մ2965) Մահ անկաւ յամենայն աշխարհ, եւ Նախաշ վարդապետն զողբն ասաց:
1470	ՌՆՀԲ 1472	ՋԺԹ 919	(Ե3701) էառ Օսմանցին զՋիլիֆքու բերդն՝ Կէտիք Հասան փաշային ձեռօքն, եւ զբերդն էրմէնիկու՝ Ահմէտ փաշային ձեռօքն:
1471	ՌՆՀԳ 1473	ՋԻ 920	(Ե3701) Յայսմ ամի, զկնի Ժ (10-րդ) ամին Արիստաքէսի, նստի էջմիածին տէր Աբրահամ ամ մի: (Մ7261) Տէր Աբրահամ (կթղ.):
1472	ՌՆՀԴ 1474	ՋԻԱ 921	(Ե3701) Յայսմ ամի նստի տէր Արստաքէս երկրորդն: Եւ յայսմ ամի մէզուլ արարին ի Մսըր զսուլթան զՄէլիք Մեյիսէ Թուֆէտէհատն, յետ Ջ (6) ամին եւ ի ռամազան ամսին զթախտն ի Մէլիք Խօշղատէմն տուին: Եւ էր սա ի Մէլիք Մօլտինին ծառայիցն եւ էառ Գ (3) քաղաք: Եւ ի Սիս Կիլիկեցոցն եկեղեցի մի մինարէլի ճամի մի շինեաց: Եւ եբեր զդարպասին ջուրն ի դուռն ճամուն՝ կամարաւ աղբիւր վազեցոյց, որ կայ ի ճակատ աղբիւրին զթվական շինօղին, եւ ի Սսայ խարաճէն ԳՌ (3000) դրամ վախըֆ արաւ

			ճամիյին մուղրոցն եւ սպասաւորացն մինչեւ ցայսօր:
1473	ՌՆՀԵ 1475	ՋԻԲ 922	(Ե3701) Յայսմ ամի եկն Հասապէկն ի Հոռոմոց տունն բազում զօրօք եւ շատ աւեր արար: Եւ ի սեպտեմբերի առաջին օրն էառ զԹօխաթն եւ այրեաց զքաղաքն երկրովն եւ գերեաց բազումս, եւ էանց Կեսարիայ եւ էառ զնա եւ դարձաւ ի Սեբաստիայ եւ այրեաց զգեղորայքն եւ բազում վնաս արար քրիստոնէիցն եւ գնաց ի Շամ: Եւ յայսմ ամի ելեալք զօրք ի Մսրայ եւ եկին ի Հալապ, եւ բազմացան յոյժ ի Հալէպ եւ եկեալ նստան յեզր գետոյն Եփրատայ՝ ընդդէմ Պէրայու, եւ ի միւս կողմանէն նստաւ թագաւորն Պարսից Հասանպէկն, եւ ոչ կարաց առնել զբերդն Պէրայու Մսրցին: Եւ մինչ ոչ կարացին առնել զՊէրայ, կապեցին ի վերայ Եփրատայ կամուրջ եւ անցին գնացին ի վերայ Ուրհայու եւ կոտորեցին զբազումս եւ բազում աւարաւ դարձան:
1474	ՌՆՀԶ 1476	ՋԻԳ 923	(Մ7261) Տէր Յոհաննէս (կթղ.)՝ Բ (2): (Մ2965) ԶԴաւիթ՝ զորդի Գրիգորի քահանային, ի Խարբերդ նահատակեցին[625]: (Ե3701) Յայսմ ամի կոտորեաց հունքէրն զՀասանպէկն, եւ այսմ ամի գնաց Օսմանցին ի վերայ Ղարայ Պաղտօնին եւ Պօյվատէն յառաջ կոտորեաց զԹուրքն, որ ԲԵՌ (200 000) էին: Եւ ետոյ փախեաւ Ստեֆան Պօյվատէն[626] եւ առին զերկիրն նորայ: Եւ այսմ ամի գնացին ի վերայ մեծ Սքէնտէրու, բազում ճէնկ արարին յառաջ եւ յետոյ, վերջն յունվարի Ա-ն (1-ին) օրն՝ երեքշաբթի առին: Եւ յայսմ ամի երկրորդ Արիստագէս կաթողիկոսն էջմիածնայ վաղճանեցաւ յետ Բ (2) ամին, եւ նստաւ տէր Սարգիսն:
1475	ՌՆՀԷ 1477	ՋԻԴ 924	(Ե3701) Յայսմ ամի յղեաց սուլթան Միամէտն զԿէտիկ Ահմատ փաշայն Շ (500) ղատրղայով ի վերայ Կաֆայու, որ միաբանեցան ընդ Թաթարին նահատակից գոլով միմեանց՝ Ը (8) օր առին զԿաֆայ իւր երկրովն՝ զՂրիմն եւ զամենայն

			կողմունս նորին եւ գերեցին ԺՌ (10 000) տղայս, թող զաղջկունս եւ զծառայս եւ զայլս, եւ զպարոնայքն կոտորեցին յունիսի Զ (6) օրն: (Մ7261) ԶԿաֆայ առին Տաճիկք ի Ֆռանկաց[627]:
1476	ՌՆՀԸ 1478	ՁԻԵ 925	(Մ7261) Միւս տէր Սարգիս (կթղ.)՝ ԺԷ (17): ԶԳողգոթա առին Վրացիք ի Հայոց[628]: (Ե3701) Յայսմ ամի եղեւ մահտարաժամ, եւ առին Վրացիքն զԳողգոթայ ի Հայոց եւ ելան զօրք յերկիրն Վրաց եւ բազում աւար արարին:
1477	ՌՆՀԹ 1479	ՁԻԶ 926	(Մ7261) Աջ սուրբ Լուսաւորչին բերաւ յԱղթամարայ ի Սուրբ էջմիածին ձեռամբ Վրդանէս եպիսկոպոսին: (Ե3701) Յայսմ ամի, յետ ԻԶ (26) ամի կաթողիկոսութեան, վաղճանի Սսայ Կարապետ կաթողիկոսն եւ թաղեցաւ ի Թոխատու վանքն, ի Սուրբ Աննայի ժամատանն, ի հիւսիսային յորմին տակն: Եւ նստաւ ի Սիս տէր Ստեփաննոս Սարաձորցի ամս ԺԱ (11):
1478	ՌՆՁ 1480	ՁԻԷ 927	(Ե3701) Յայսմ ամի Մարսվանցի էմիրտովլէթն[629], որ արուեստիւ բժիշկ էր, ի Ստամպօլ քաղաքի, ժողովեաց զՄուֆրէտէթ[630] կոչեցեալ գիրքն ի մի տուփ, ի Հայոց լեզուն, ի Հոռոմոց, ի յԱռապին եւ ի Թուրքաց:
1479	ՌՆՁԱ 1481	ՁԻԸ 928	(Ե3701) Յայսմ ամի յայտնեցաւ Աջն սուրբ Լուսաւորչի ի Սիս քաղաքի, ի ժամանակն Ստեփաննոսի կաթողիկոսին Սսայ: Եւ յօրէ յօրմէ անյայտ եղեւ սուրբ Աջն մինչեւ ցաստ՝ ԼԸ (38) ամ է[631]: Եւ յայսմ ամի յետ Յովհաննէսի նստի կաթողիկոս յէջմիածին տէր Սարգիս:
1480	ՌՆՁԲ 1482	ՁԻԹ 929	(Ե3701) Յայսմ ամի եկն Պալն ի Մսրայ ի վերայ Ուրհայու բազում զօրօք:
1481	ՌՆՁԳ 1483	ՁԼ 930	(Ե3701) Յայսմ ամի յետ տէր Սարգսի նստի կաթողիկոս էջմիածին Ստեփաննոս Առընջեցին:
1482	ՌՆՁԴ 1484	ՁԼԱ 931	(Մ7261) Օսմանցի Պայազիտն թագաւորեաց ամս ԼԱ (31): (Մ2965) Սուլթան Մէհմէտն մեռաւ, որդին սուլթան Պայազիտն նստաւ: Շարժ եղեւ յեզնկան,

			ԼՌ (30 000) ոգիք մնացին ի ներքոյ գետնոյն: (Ե3701) Յայսմ ամի շարժ եղեւ Եզընկէի, եւ ԼՌ (30 000) մարդ ի ներգոյ հողին մնաց: Եւ յայնմ ամի անկաւ հուր յերկնից եւ այրեաց զՄէտինէ քաղաքն եւ զտուն Մէհմէտին բնակչօք իւրովք հանդերձ: Եւ այսմ ամի, յետ Ա (1) ամին Ստեփաննոսի, նստի յէջմիածին կաթողիկոս երրորդ՝ տէր Սարգիս:
1483	ՌՆՁԵ 1485	ՁԼԲ 932	(Ե3701) էառ սուլթան Միամէտն զԱղքիրմէնն եւ զՄալ-Տէփեսին եւ անդ մեռաւ սուլթան Միամէտն ի մայիսի Գ-ն (3) երեքշաբթի օրն, եւ բերին Ստամպօլ թաղեցին. սա թագաւորեալ ամս ԼԴ (34) եւ մեռանի, եւ թագաւորէ որդի նորա Պայազիտն ամս ԼԱ (31), յետ ԺՁ (16) աւուր մահուան հօրն եւ թագաւորեաց ի մայիսի ԺԹ-ն (19):
1484	ՌՆՁՁ 1486	ՁԼԳ 933	(Ե3701) Յայսմ ամի էառ Պայազիտն զՔիլի եւ յետոյ գնաց էառ զԱղքիրմէն եւ զմարդիկն սուրկուն արաւ Ըստամպօլ: Եւ Եաղուբ պէկն Շէխ Հայտարն էառ:
1485	ՌՆՁԷ 1487	ՁԼԴ 934	(Ե3701) Յայսմ ամի յետ ԺԳ (13) ամի եւ Ձ (6) ամսոյն Ղօշղատամեն նստի սուլթան Մէլիք Տահիր Պլպան Բ (2), զկնի Բ (2) աւուր մազուլ արարին եւ Իսքենտրուն յղեցին, եւ նստուցին Մէլիք Տահիր Թամղրան, եւ զկնի միոյ աւուր զայն եւս մազուլ արարին եւ յղեցին ի Տմեաթն եւ յետոյ՝ Իսքենտրուն, եւ նստաւ Մէլիք Աշրաֆն սուլթան Ղաթրիապն եւ է սա ի Մէլիք Չախմախին մարդկանց, այնքան ատիլ մարդ էր, որ գրէթէ ի նախնի սուլթանաց աւերեցեալ երկիրն բոլոր նորոգեաց եւ բազում շինութիւն արար[632]:
1486	ՌՆՁԸ 1488	ՁԼԵ 935	(Ե3701) Յայսմ ամի էառ Օսմանցին զՓօլեայ կղզին եւ էառ Կեսառ, Կէտիկ Միամատ փաշայն՝ զՖրատօս, ապա Մսեի փաշայն շատ ճէնկ արար եւ յետոյ ետուր զնա:
1487	ՌՆՁԹ 1489	ՁԼՁ 936	(Ե3701) Յայսմ ամի զկնի Ձ (6) ամին Սարգսի նստի էջմիածին տէր Ստեփաննոս:
1488	ՌՆՂ 1490	ՁԼԷ 937	(Ե3701) Յայսմ ամի յետ ԺԱ (11) ամին Ստեփաննոսի նստի ի Սիս կաթուղիկոս տէր Յովհաննէս, ի գաւառէն Սեւետիոյ, ի նահանգէն յԱնտիոքու:

			Եւ յայսմ ամի գնաց Անատօլայն որդի Շահ-սուարին ի Սեբաստիայ եւ գնացեալ եղբայրն Պուտախ պէկն ի սուլթան Պայազիտն գանկատ արար, թէ իմ եղբայրն զրկեաց զիս ի ժառանգութենէ հօր իմոյ եւ ինձ բաժին ոչ ետ յերկրէն: Եւ թագաւորն ետ Պուտախ պէկին բազում զօրք, որ եկեալ ի Սեբաստիայ ի ՋԼԸ (1489) թվին ի վերայ Անատօլային եւ կոտորեցին զնա եւ բազում տեղիք աւար առին եւ ի Սեբաստիայ բազումք սրախոխողք եղան. եւ Պուտախ պէկն առեալ զերկիրն յեղբօրէն եւ տիրեաց նմա, թէպէտ բազումք սրոյ ճարակ եղեն:
1489	ՌՆՂԱ 1491	ՋԼԸ 938	(Ե3701) Զկնի մի ամի տեառն Յովհանիսի նստի ի Սիս կաթուղիկոս տէր Յովհաննէս Թլկուրանցին, յունվարի Զ (6) ի չորեքշաբթի յաւուրն. սա կալաւ զաթոռն հայրապետութեան ամս ԼԶ (36):
1490	ՌՆՂԲ 1492	ՋԼԹ 939	(Ե3701) Յայսմ ամի Եաղուբ պէկն մեռաւ, սունգուրն կանգնեցաւ: Եւ յայսմ ամի Հրէայք համայնգաման հալածեալք եղեն ի Սպանիոյ:
1491	ՌՆՂԳ 1493	ՋԽ 940	(Մ7261) Սկիզբն թագաւորութեան Ղզլպաշին: (Ե3701) Յայսմ ամի թագաւորէ Լեհին Զեկմունդ Կոստանդին:
1492	ՌՆՂԴ 1494	ՋԽԱ 941	(Մ7261) Շահ Իսմայիլն՝ որդի Շըխ Հայտարին, քեռորդի Եաղուբ փադշային, թագաւորեաց ամս ԼԴ (34): (Ե3701) Յետ է (7) ամին Ղաթրիպին նստի Մսըռ սուլթան Շէնսուրն, որ էր ի Մսրայ: Եւ այսմ ամի եղեւ այնպիսի սաստիկ անձրեւ յԻտալիա, մինչ զի քառասուն հազար մարդիկ ջրասուզեալք մեռան եւ բազում գեղորայք քակտեալք աւերեցան:
1493	ՌՆՂԵ 1495	ՋԽԲ 942	(Մ7261) Տէր Արիստակէս (կթղ.)՝ Զ (6): (Ե3701) Ի Բաբերթ նահատակեցաւ Շնոֆոր կինն, վասն զի ոչ ետ տեղի պոռնկութեան:
1494	ՌՆՂԶ 1496	ՋԽԳ 943	(Ե3701) Յայսմ ամի նահատակեցաւ Հռոմկըլայեցի Թորոս, որդի թագաւորին Օշնոյ, օգոստոսի Ա (1)[633]:
1495	ՌՆՂԷ 1497	ՋԽԴ 944	(Մ7261, Մ10202) Ի թվականիս Փրկչին ՌԴԵՂԷ

			(1495) Ամէրիգայ, որ է Նոր աշխարհ, գտեալ եղեւ յԻտալացի Քրիսդոֆորոս Գոլոմպունի աբեղայէ: Յետոյ Ֆլորէնցացի Ամէրիգոս եգիտ զմասունս նորա եւ Ամէրիգայ կոչեցաւ ըստ անուան նորա: Սա է ի ներքոյ երկրիս հակոտնեայս մեզ եւ մեծ է քան զերիս մասունս, որ յայս աշխարհիս բաժանին, որոյ տիրէ արքայն Սպանիացւոց եւ կոչի Ենկիդունիա, որ է՝ Նոր աշխարհ: (Ե3701) (Ը)ստ ոմանց աստ ասեն գտեալ զՆոր աշխարհն Հնդկաց յԱմերիկոս Վեսպիճինոսէ: Եւ ոմանք՝ ի ՌՇՁԲ (1582) թվին ասեն գտեալ ի Քրիստափորէ Կոլումպէ Ջէնուիզացւոյ:
1496	ՌՆՂԸ 1498	ՋԽԵ 945	(Մ7261) Տէր Սարգիս (կթղ.): Յազգէն Նետողացն Ռստամ փադշահն տիրէր Վասպուրականայ: (Ե3701) Յայսմ ամի ի Միլան քաղաքի տեսին զերիս արեգակունք եւ ի գիշերի տեսին զբազում հեծեալս յընդանալ ի յօդս եւ բազում մարդակերպք կենդանիք պատերազմեալք ընդ միմեանս: Եւ կին մի ծնաւ զերկուս զաւակս կցեալս ընդ միմեանս՝ զարու եւ զէգ, եւ երկաքանչիւրն ունէր զչորս բարցս եւ զչորս բազուկս: Եւ ի նոյն ժամանակի ծնաւ կին մի ի յԱլամանս զորդի, որ ուներ զերկու գլուխ, զչորս ձեռս եւ զվեց ականջս: Եւ կին մի եղեւ ընդ առն իւրում զամս Ժ (10) եւ յետոյ փոխեցաւ ի բնութիւնէ կանացի եւ եղեւ այր: Յայսմ ամի նահատակեցաւ տէր Աստուածատուր քահանայ Տիւրիկեցի յԵրուսաղէմ քաղաքի, վասն ի Քրիստոս հաւատոցն, ինն երորդումն ապրիլի, եւ մնաց սուրբ մարմինն Ը (8) օր անկեալ ի դուռն Սուրբ Յարութեան: Եւ ապա տարեալ թաղեցին զնա ի Սուրբ Սիօն:
1497	ՌՆՂԹ 1499	ՋԽԶ 946	(Ե3701) Յայսմ ամի թագաւորեաց էվանդն, քանզի մեռաւ սուլթան Մսրայ Մէլիք Աշրաֆն Ղէթիպան, եւ ոչ թագաւորեցուցին զորդի նորա յետ ԺԱ (11) ամի սուլթանութեան, եւ նստի Շէնսուրն, որ էր ի Մսրայ, եւ մինչ ի սա ԺԸ (18) սուլթան նստան ի Քէրէզէն ի վեր ամս ՃԺԹ (119):

1498	ՌՇ 1500	ՁԽԷ 947	(Ե3701) Յայսմ ամի եղեւ մահտարաժամ ի բազում տեղիս, եւ Վէլէթ պէկն թալանեաց զերկիրն Գեղամայ:
1499	ՌՇԱ 1501	ՁԽԸ 948	(Մ7261) Տէր Թադէոս (կթղ.)՝ Ե (5): (Ե3701) Յայսմ ամի նորոգեցաւ Լուսաւորիչ եկեղեցին ի Ղալաթիայ, յաւուրս տեառն Սարգսի կաթողիկոսի: Եւ այսմ ամի ելաւ շահ Իսմայէլն:
1500	ՌՇԲ 1502	ՁԽԹ 949	(Մ7261) Շահ Իսմայիլն եկն եւ զԱլվանտն էառ: (Ե3701) Յայսմ ամի շինեցան եկեղեցիքն ի Հալէպ՝ Սուրբ Քառասունքն Հայոց եւ դարպասն եւ Հոռոմոց եկեղեցին:
1501	ՌՇԳ 153	ՁՇ 950	(Մ2965) Կարմիր գլուխ շահ Իսմայիլն փախոյց զԱլվանտն եւ ինքն կալաւ զթախտն նորին: (Ե3701) Յայսմ ամի կարմիր գլուխ շահ Իսմայէլն պատերազմեցաւ ընդ Ալվանտին եւ փախոյց զնա եւ ինքն էառ զթաղթն եւ նստաւ: Եւ նոյն շահ Իսմայէլն ելաւ Արտաւիլու եւ եկն Եզընկէն: Եւ էառ Շէհիթպէկն զՎան:
1502	ՌՇԴ 1504	ՁՇԱ 951	(Ե3701) էառ կարմիր գտակն զԹավրէզն: Եւ ազգն Մարաց առին զՎան, զԱխտամար, զԱրծկէ եւ եղեւ շատ աւերք:
1503	ՌՇԵ 1505	ՁՇԲ 952	(Ե3701) Դարձեալ ելաւ Արտաւիլու շահ Իսմայէլն եւ գնաց ի վերայ Շամախու, եւ սպան զսուլթան նորա եւ այլ բազում չարիս գործեաց: Եւ եղեւ յայնմ ամի մահտարաժամ:
1504	ՌՇԶ 1506	ՁՇԳ 953	(Մ7261) Տէր Եղիշէ (կթղ.)՝ Բ (2): (Ե3701) Յայսմ ամի ելաւ սօֆին յաշխարհս Հայոց, որ ելեալ էր յԱրտաւիլու, եւ ել ընդդէմ նորա Ալվանտ սուլթանն, թոռն սուլթան Հարանին, եւ սօֆին յաղթեաց զնա եւ արար փախստական եւ դարձեալ եկն Եզընկէն: Եւ յայսմ ամի յետ/// ամին տեառն Սարգսի, նստի տէր Ատոմ, առաջնորդն Վարագայ, եւ զկնի Ատոմայ նստի տէր Եղիայ՝ ի ՁՇԷ (1508) թվին:
1505	ՌՇԷ 1507	ՁՇԴ 954	
1506	ՌՇԸ 1508	ՁՇԵ 955	(Մ7261) Տէր Ներսէս (կթղ.)՝ Թ (9):
1507	ՌՇԹ 1509	ՁՇԶ 956	(Ե3701) Յայսմ ամի ըստ Սուրիոսի, ի ԺԴ (14)-ն

			սեպտեմբերի, յաւուրս տօնին Վերացման Սրբոյ Խաչին, դիզացաւ ծովն, որ ի մէջ Կոստանդնուպօլսի եւ Ղալաթիոյ, այնչափ, մինչեւ բարձրացաւ ի վերայ քան զպարիսպն երկաքանչիւր քաղաքաց, եւ սպան զբազումս եւ ջրահեղցոյց եղեն միայն ի Կոստանդնուպօլիս Տաճիկք երեքտասան հազար:
1508	ՌՇԺ 1510	ՋԾԷ 957	(Ե3701) Յայսմ ամի նահատակեցին ի Կոստանդնպօլիսն զէջմիածնայ նուիրակսն գլխատմամբ սրոյ, յաւուր տօնի յԱւետարանչացն, Սարգիս եպիսկոպոսն եւ զԴաւիթ կրօնաւորն[634]:
1509	ՌՇԺԱ 1511	ՋԾԸ 958	
1510	ՌՇԺԲ 1512	ՋԾԹ 959	
1511	ՌՇԺԳ 1513	ՋԿ 960	
1512	ՌՇԺԴ 1514	ՋԿԱ 961	(Ե3701) Յայսմ ամի յետ Զ (6) ամի եւ Ը (8) օր Մէլիք Տահիրին նստի ի Մսրոռ Մէլիք Աշրաֆ Ջամպլադն: Եւ յայսմ ամի փոքր որդին Պայազիտին՝ սուլթան Սելիմ կոչեցեալն ԽԳ (43) ամաց էր, որ սպան զՊայազիտն՝ զհայրն իւր եւ ինքն թագաւորեաց: Եւ եղեւ աղմուկ եւ խռովութիւն ի մէջ Բ (2) եղբարցն վասն թագաւորութեան, զոր եւ գնաց մեծ եղբայրն նորա՝ Ահմէտն, մինչեւ ի ծովն ովկիանոս եւ յամօթալից դարձաւ յետս վասն չթագաւորելուն. եւ եղեւ որդի նորա Սօֆի Մուրատն: Եւ յետ նորա եկեալ յԱրեւելից չար եւ անօրէն եւ արեանարբուն Նուռ Ալին եւ բազում աւար արար ի Հայոց եւ ի Տաճկաց, եւ հեղին զարիւն անմեղաց ի Թօխաթ: Եւ յետոյ եկեալ Սնուն փաշայն եւ գնաց մարտեաւ ընդ նոցա եւ դարձաւ փախստական, եւ անկեալ շատք ի զօրաց Հայոց եւ Տաճկաց արեամբ թաւալմամբ, զոր բազում անգամ վշտօք եւ նեղութեամբ զաշխարհս նեղացուցին:
1513	ՌՇԺԵ 1515	ՋԿԲ 962	(Մ2965) Սուլթան Սէլիմն զհայր իւր՝ զսուլթան Պայազիտն եսպան, եւ ինքն նստաւ: (Ե3701) Յայսմ ամի առնուաւ սուլթան Ահմէտն որդովք եւ դստերօք իւրովք, եւ փախստականք եղեն զօրք նորա: Եւ սուլթան Սէլիմն կոտորեաց

			զզօրս շահ Իսմայէլին:
1514	ՌՇԺՁ 1516	ՁԿԳ 963	(Ե3701) Յայսմ ամի ելաւ Սէլիմ հունտքէրն ի վերայ Սոֆուն բազում զօրօք եւ եղեւ մահ տղայոց եւ կարկուտ անկաւ յերկնից հիանալի, եւ եղեւ սղութիւն բազում, մինչ զի մայրք զորդիս կերան ի բազում տեղիս:
1515	ՌՇԺԷ 1517	ՁԿԴ 964	(Մ7261) Տէր Զաքարիայ (կթղ.)՝ Ե (5): Սուլթան Սելիմն ել ի վերայ Սօֆուն եւ էառ զնա, որ ասի Չալտրանայ կռիւն, ընդ շահ Իսմայէլին: Սոյն թագաւորս էառ զԿամախայ բերդն եւ զԱ-միթ, զՄսր եւ զՇամ, եւ արար տղայ ժողով ի քրիստոնէից: (Ե3701) Յայսմ ամի թագաւորն Խորասանու Հուսէյնն, որ կոչիւր պէյ Ղարայօղլու, յայնմ ժա-մանակին քաջ էր հռչակեալ իւր յերկիրն, կամաւ եկն Ըստամպօլ եւ հնազանդեցաւ: Եւ առին զբերդն Կամախու եւ զբերդն Պայպուր-տու: Եւ թագաւորն Սէլիմն զկնի յաղթութեան շահ Իսմայէլին դարձաւ եւ ձմեռեաց յԱմասիայ վասն Բ (2) պատճառի, մինն՝ զի յոյժ սաստիկ ձմեռ էր, եւ միւսն՝ զի սղութիւն խիստ էր, որ ամենեւին կերակուր ոչ գտանիւր: Իսկ յորժամ եկն գա-ռունն, ել եւ գնաց ի յԱնատօլային երկիրն, որ տիրէր Գերմանիկոյ եւ Կոկիսոնոյ սահմանացն: Եւ Շահսուարի որդի երկրորդ Անատոլային (երկ-րորդ Շահսուարն այն երկրին հաքիմն էր), եւ կրկին նորայ շնորհեաց թագաւորն զերկիրն, զի հնազանդեցաւ թագաւորին, զի նախ քան զգա-լուստ թագաւորին եղբօր որդիքն վիճէին ընդ նմա: Եւ սիքէն եւ ղուփփէն, այսինքն՝ ըստկին գիրն թագաւորին անուանն եղեւ, եւ դարձեալ թագաւորն Ըստամպօլ: Եւ յայսմ ամի Մարթին Լութեր սկսաւ մուծանել զիւր աղանդն ընդդէմ եկեղեցոյ:
1516	ՌՇԺԸ 1518	ՁԿԵ 965	(Ե3701) Կրկին գնաց թագաւորն Սէլիմ ի վերայ շահ Իսմայէլին եւ յայսմ ամի էառ զՏիեարպէքիր եւ զբոլոր սանճախն նորին:

1517	ՌԾԺԹ 1519	ՁԿՁ 966	(Մ2965) Այս Սէլիմս էառ զՇամ եւ զՄսր, եւ արար զմանչ ժողովելն: (Ե3701) Յայսմ ամի մինչ թագաւորն Սէլիմ գնայր ի վերայ շահ Իսմայէլին, եկն ի Հալապ եւ սուլթան Մսրայ Աշրաֆ Ճամբլաթն, ընդ առաջ եկն թագաւորին, վասն պատերազմի բազում զօրօք եւ այլ զօրքն Հալպայ, եւ արարին ճէնկ մեծ ի Մէրճն ասաց տեղն, զսուլթան Ճամբլաթն ի ձիոյն ընկեցին եւ անդ սպանին յետ Ա (5) ամի եւ ԺԸ (18) աւուր սուլթանութեանն: Ի Մըսրը նստուցին զմելիք Ատիլ՝ զորդին Նասըրդին Թումայ Պինային, եւ ի նոյն օրն յետ կէս աւուր սպանեցին, որ տիրեաց Չէրքէզն Մսրայ ամս ՃԼԸ (138) եկ սուլթան՝ ԻԴ (24): Եւ տիրեաց Օսմանցին ի յԱմթայ մինչեւ ի Բերիայ, ի Դամասկոս, յերուսաղէմ եւ յեգիպտոս, եւ գրէթէ բոլոր Արապըստան, սաֆաթ արաւ, գնաց ի Հաճն եւ դարձաւ ի Հալէպ եւ անդէն ի Ստամպօլ:
1518	ՌԾԻ 1520	ՁԿԷ 967	(Ե3701) Յայսմ ամի առաւ Սուրբ Թորոսայ եկեղեցին յԱմթայ ի Տաճկաց եւ բազում վնաս եղեւ քրիստոնէից: եւ յայսմ ամի անկան յերկնից ՌՄ (1200) քարինք մեծամեծք, մինչ զի մինն ի նոցանէ կշռիր ՃԿ (160) լիտր, եւ այլ ոմն Կ (60) եւ ոմն աւելի եւ ոմն՝ պակաս, եւ ունէին զգոյն երկաթի եւ զհոտ ծծմբոյ:
1519	ՌԾԻԱ 1521	ՁԿԸ 968	(Ե3701) Յայսմ ամի սուլթան Սէլիմն արար զտղայ ժողովն:
1520	ՌԾԻԲ 1522	ՁԿԹ 969	(Մ7261) Տէր Սարգիս (կթղ.)՝ ԺՁ (16):
1521	ՌԾԻԳ 1523	ՁՀ 970	(Մ7261) Մեռաւ սուլթան Սէլիմն եւ թագաւորեաց որդի նորա սուլթան Սուլէյման ամս ԽԵ (45): (Ե3701) Յայսմ ամի գնաց սուլթան Սէլիմ յԱտրանայ ի զբօսնուլ, եւ ի Չօրլուին մօտն որ գնաց հանդիպեցաւ նմա յանկարծակի ցաւ մի, զոր տամլէ կոչեն, եւ մեռանի ՕԹ (59) ամաց՝ թագաւորեալ ամս Թ (9) եւ Թ (9) ամիս: Եւ վէզիրն Օ (50) օր պահեց զմարմինն նորա, մինչ որ զշահզէտէն Ըստամպօլայ բերին, որ անունն Սուլէման կոչիւր: Նախ ի յԱտրէնէ թագաւոր կարթացին զանունն եւ ապա զմարմին սուլթան Սէլիմին Ըս-

			տամպօլ տարեալ թաղեցին: Եւ այսմ ամի սուլթան Սուլէմանն արար զառաջին պատերազմն, քանզի գնաց ի վերայ Մաճառին եւ կոտորեցաւ ի Թուքէն ՃՕ (150) այր եւ ապա էառ Թուրքն ի Մաճառէն զՊէլըրղատ: Յայսմ ամի զկնի ԺԳ (13) ամին տէր Եղիշէի նստի յէջմիածին տէր Սարգիսն հինգերորդ:
1522	ՌՇԻԴ 1524	ՋՅԱ 971	(Մ2965) Այրեցին զՊեխին որդին զՍաֆարն: (Ե3701) Յայսմ ամի այրեցին ի հուր զՊեխին որդին զՍէֆէրն ի Սեբաստիայ, վասն անուանն Քրիստոսի:
1523	ՌՇԻԵ 1525	ՋՅԲ 972	
1524	ՌՇԻԶ 1526	ՋՅԳ 973	(Մ7261) Հոռոմոց թագաւորն եկն եւ շահ Իսմայիլն փախեաւ:
1525	ՌՇԻԷ 1527	ՋՅԴ 974	(Ե3701) Յայսմ ամի զօրքն Բօրբօնի ասպատակեցին զՀռոմ: Եւ ի Մելտինի նահատակեցին զԿարապետ եկեղեցպանն՝ ազգաւ հայ, որ վասն անուանն Քրիստոսի հրով այրեցին: Եւ ի յԱմիթ զՊուտախն նահատակեցին հրով, վասն անուանն Քրիստոսի, յունիսի ԺԳ (13)[635]: Եւ այսմ ամի զկնի ԼՁ (36) ամի տեառն Յովհաննէսի Թլկուրանցոյն, որ թաղեցաւ ի Վագէն[636], ի Սուրբ Թորոսի եկեղեցոյն, նստի ի Սիս տէր Յովհաննէս Քիլիսցի, որ Կայծակ մակկոչէին, ամս ԺԴ (14):
1526	ՌՇԻԸ 1528	ՋՅԵ 975	(Մ7261) Շահ Թահմազն թագաւորեաց ամս ՕԱ (51): Սուլէյմանն էառ զՊուտում, թախտն Ընկռուզաց[637]: (Ե3701) Եւ ի սոյն թվին Աբմաճայ խալիֆան ելաւ:
1527	ՌՇԻԹ 1529	ՋՅԶ 976	(Ե3701) Յայսմ ամի Տուրզու Հոռոմն գլուխ քաշեաց, եւ գնաց Հուսէյն փաշան ի վերայ նոցա, կոտորեաց զՀոռոմքն եւ գերեաց զբազումս:
1528	ՌՇԼ 1530	ՋՅԷ 977	(Ե3701) Յայսմ ամի նահատակեցաւ Թորոս ի Ուրհայ[638]: Եւ յայսմ ամի գնաց սուլթան Սուլէման ի վերայ Պէլըղատու եւ էառ զնա, բայց Մաճարն կոտորեաց ի Թուրքէն ՃՌ (100 000) մարդ, եւ յետոյ

			սուլթանին կողմն զօրացաւ եւ յաղթեաց զնոսա, եւ գնաց Օսմանցին աւերելով մինչեւ ի Ղանտահար եւ եբեր անթիւ գերիք՝ արք եւ կանայք եւ ինչք բազում եւ դարձաւ յԸստամպօլ:
1529	ՌՇԼԱ 1531	ՋՀԸ 978	(Ե3701) Յայսմ ամի յեամանու երկիրն Ա (1) ճալալի էլաւ Սքենտէր անուն, եւ իւր զօրքն զգլուխն կտրեալ յղեցին ի Ստամպօլ՝ թագաւորին: Եւ թագաւորն զայն երկիրն Ուրուստէմին ետ եւ հրամայեաց, թէ յիմ անունն լինի ըստկին զարպն, այսինքն՝ սիքէն, եւ ի ղուբբայն թող կարթան իմ անուան հետն զՈւրուստամին անունն:
1530	ՌՇԼԲ 1532	ՋՀԹ 979	(Ե3701) Յայսմ ամի արար սուլթան Սուլէման զերկրորդ սէֆէրն ի վերայ կղզեացն Ֆռանկստանու եւ անցաւ Ըսկուտարու եւ նստաւ ի վերայ Ըռստօսին, եւ էառ զբերդն, որ Հսարըրահնին կոչիւր, եւ զբերդն զԻստէնկոյ, զբերդն էյտուսոյ, զբերդն Պուտուն, զբերդն Թէճպալու, զբերդն Ապնաք:
1531	ՌՇԼԳ 1533	ՋՁ 980	(Մ7261) Սկիզբն եղեւ տղայ ժողովելոյ: (Ե3701) Յայսմ ամի տղայ ժողով արար թագաւորն, զոր Թաթէոս վարդապետն ողբ ասաց վասն նոցա:
1532	ՌՇԼԴ 1534	ՋՁԱ 981	(Ե3701) Յայսմ ամի արար թագաւորն սէֆէրն կրկին ի վերայ Ընկռուզաց երկրին եւ գնաց էառ բերդն Բեթրի, եւ զբերդն Այլուխի, զբերդն Եզնիկ, զբերդն Սուրսիկ, զբերդն Սումթուն, զբերդն Տիլղուվար, զբերդն Զարտալ, զբերդն Ըրչի, զբերդն Ղուրունճայ, զբերդն Պարխազ, զբերդն Թարմուր Թարախջայ, զբերդն Թուգամի եւ այլ բազում բերդորայք: Եւ ընդ թագաւորին Ընկռուզաց մեծ պատերազմ արարին եւ ի փախչիլն ի ձիոյն անկաւ եւ ոտքն կտրեցաւ, մեռաւ: Եւ առին զՊուտուն՝ զԻնկըլիզու[639] թախտն, որ նստի գրալ նոցա, զգեղեցիկ քաղաքն Պուտան եւ առին զՊուտանու պարէպար եղեալ բերդորայքն եւ վնաս յոլովս գործեցին:
1533	ՌՇԼԵ 1535	ՋՁԲ 982	(Մ7261) Սուլթան Սուլէյմանն բազում զօրօք գնաց ի վերայ Պարսից եւ նա փախեաւ ի Խո-

			րասան, եւ ինքն եկեալ ի Բաղտատ ծմերեաց եւ էառ զնա, եւ գարունն գնաց ի տեղի իւր: (Մ2965) ՁՏեւու վանից Հայրապետ աբեղայն այրեցին: (Ե3701) Յայսմ ամի այրեցին զՀարապետ աբեղայն ի Սառուցու վանացն ի Սեբաստիայ: Եւ յայսմ ամի սուլթան Սուլէման արար զչորրորդ սէֆէր դարձեալ ի վերայ Ընկռուզաց…:
1534	ՌՇԼՁ 1536	ՁՁԳ 983	
1535	ՌՇԼԷ 1537	ՁՁԴ 984	(Ե3701) Յայսմ ամի արար թագաւորն զվեցերորդ սաֆարն ի վերայ Պարսից եւ յղեաց զԻպրահիմ փաշայն զվէզիրն իւր, զի շահ Թահմազն նեղութիւն կուտայ Հանիֆու ճոմայաթին: Եւ Իպրահիմ փաշայ գնաց ի Թավրէզ եւ այսքան բերդ էառ ի գնալն՝ զբերդն զԱզրաթի, զբերթն զԱտիմաճու, զբերդն զԱսմալ, զբերդն Վաստան, զբերդն Արճիս, զբերդն էվնիկ, սոքա ամենաւքն մարդով հնազանդեցան թագաւորին եւ զբանալիք բերդորէից բերին Իպրահիմ փաշային: Եւ Կիլանու պարոնն՝ Մուզէֆէ խանն ԽՌ (40 000) Կիլանի զօրօք եկն առ Իփրահիմ փաշայն եւ հնազանդեցաւ թագաւորին Օսմանցոց: Եւ ի Շնքուռկու գեղէն քահանայ մի այրեցին:
1536	ՌՇԼԸ 1538	ՁՁԵ 985	(Մ7261) Տէր Գրիգոր (կթղ.)՝ Ե (5): (Մ2965) Խօճայ Օգջայն[640] նահատակեցին ի Սեբաստիայ: (Ե3701) Թագաւորն Սուլէման, յորժամ դարձաւ ի Պարսից երկրէն, եկն ձմեռեաց ի Պաղտատ եւ շատ գանձ մսխեաց անդ, եւ յորժամ եկն գարունն էառ զՊաղտատու կողմանց բերդորայքն եւ զանդ եղեալ պարոնայք իւրաքանչիւր զեաղլըխն ի պարանոցն ձգեալ, եւ Քրտստանու երկիրն հնազանդ եղեն: Եւ շահ Թահմազն էլչի յղեաց թագաւորին վասն հաշտութեան եւ թագաւորն հաշտեցաւ ընդ նմա եւ դարձաւ, եւ եկն Ըստամպօլ եւ յետ ԺԴ (14) աւուր սպան զվեզիրն իւր զԻպրահիմ փաշայն: Եւ յայսմ ամի էր թագաւորն Մարաշոյ Ալի պակն, որ էառ զԽալիֆան Շահալին, զի բազում արիւն

			հեղուքիւն եղեւ եւ Բ (2) անգամ զյԱլի պէկն ի ձիոյն ձգեցին եւ յետոյ Ալի պէկն էառ զգլուխն Ղալիֆին եւ յղեաց ի հօնտքէրն: Այս Ալի պէկն յետոյ ապստամպեցաւ ի սուլթան Սուլէմանէն եւ նա յղեաց ի վերայ նորա զՎահրաթ փաշայն, որ եկն ի Յարդուխ յօվասին, կտրեաց զգլուխն նորա եւ տարաւ առ թագաւորն: Եւ թագաւորն ետ զերկիրն իւր թէմովն Տուրղատ Իրլի որդոյն՝ Միմատ խանին, որ դարձաւ ի Պարսից: Եւ աստ բարձեալ եղեւ իշխանութիւն Անատոլային, զոր տիրեցին Ե (5) թագաւորք, ամս ՃՀ (170) Գերմանիկոյ եւ նորին նահանգացն, այլ եւ Կիլիկոյ եւ նորին սահմանացն, եւ անունք Ե (5) թագաւորացն են այսոքիկ՝ Անատոլայն եւ որդին Շահսուրն, եւ երկրորդ Անատոլայն եւ որդին երկրորդ Շահսուրն, եւ որդին Ալի պէկն, զոր սպան թագաւորն: Ի Գերմանիկէ Ճ (100) ամ յիշխեցին եւ Կիլիկիայ՝ Հ (70) ամ: Եւ այսպէս յերկուս բաժանեցաւ թագաւորութիւնն սորա, զԳերմանիկէ տուեալ Տուղրատլու պարոնայց, եւ Կիլիկէ՝ Ռամատանցուն. այս Ռամատանցին շինեաց զբերդն Ատանայու եւ կամուրջն՝ առաջի դրան, եւ տարեալ զՍսայ բերդին եւ զպարիսպին դուռն՝ զմինն Ատանու բերդին դուռ արար եւ զմիւսն՝ կարմնճին: Եւ բազում շէնք շինեաց յԱտանայ, որ յայժմ անյայտ են: Եւ յայսմ ամի նահատակեցին ի Սեբաստիայ զխոճայ Խուպիճանն եւ զԿօկճան, եւ ասաց ոտանաւոր ի վերայ նոցա Յովասափ Սեբաստացին, եւ այլ բազում ոտանաւորս:
1537	ՌՇԼԹ 1539	ՋՋԶ 986	(Ե3701) Յայսմ ամի եօթերորդ սէֆէրն արար սուլթան Սուլէմանն ի վերայ Ֆրանկստանու եւ ծովով գնաց էվլէնին պէրէպէրն ի ծովուն եզերն եւ ի ճէզայիրն, որ ի ծովն եղեալ բերդորայքն եւ զգիւղքն եւ զքաղաքն առնէր: (Մ7261) Սա եսպան զԻբրահիմ փաշայն, որ եղեւ պատճառ տղայ ժողովելոյ:
1538	ՌՇԽ 1540	ՋՋԷ 987	
1539	ՌՇԽԱ 1541	ՋՋԸ 988	(Ե3701) Յայսմ ամի թագաւորն Սուլէման արար

			զութերորդ սէֆէրն ի վերայ Ղարայ-Պուղտանին, զի յառաջ խարճ կուտայր թագաւորին եւ յայսմ ապստամբիլ կամեցաւ եւ խարճին ճուղապ[641] ետուր: Յոյնք արարին զծռազատիկ, եւ Յունաց առաջնորդն տաճկացաւ, որ էր Կեսարացի, վասն դաշին, զոր եդ սակս ելման լուսոյն: Յայսմ ամի յետ ԺԴ (14) ամին տեառն Յովհաննէսի նստի ի Սիս կաթողիկոս Զեյթունցի տէր Սիմէոն, ապրիլի է (7), օրն երկուշաբթի, ամս՝ Զ (6): (Մ2965) Յոյնք ծաղկազարդին Զատիկ են արարեալ:
1540	ՌՇԽԲ 1542	ՋՁԹ 989	(Ե3701) Յայսմ ամի արար սուլթան Սուլէման զիններորդ սէֆէրն ի վերայ Ինկլիզու սահմանացն, եւ նոքա պատերազմեցան ընդ նմա, սակայն բազում ճանկ լինելուն անթիւ քրիստոնեայք ջարդեցան:
1541	ՌՇԽԳ 1543	ՋՂ 990	(Մ7261) Տէր Ստեփաննոս Սալմաստեցի (կթղ.)՝ ԺՁ (16): Սուլթան Մուստաֆան յԱմասիայ եկն եւ թագաւորեաց ի նմա ամս ԺԳ (13), եւ սպանաւ ի հօրէն: (Ե3701) Յայսմ ամի արար սուլթան Սուլէման զտասներորդ սէֆէրն ի վերայ Փէճ գրալին թապի եղեալ բերդից, որ ի ճանապարհի վերայ են եւ էառ զնոսա եւ շատ եկեղեցիք ճամի արար եւ զգանձ եկեղեցեաց, զոսկի եւ զարծաթ գրաւեաց: Եւ յայսմ ամի շահ Թահմազն գնաց ի Վրացտուն եւ աւերեաց զՏպխիս եւ զերկիրն ամենայն, զբազում գերիս արար եւ անհամար: Եւ այսմ թուին Հումայ փատըշահն եկն յոտն շահ Թահմազին եւ գնաց:
1542	ՌՇԽԴ 1544	ՋՂԱ 991	(Ե3701) Յայսմ ամի շահզատէ Մուհէմէտն մեռաւ ի Մանիսայ եւ բերին մարմինն Ըստամպոլ եւ Ա (1) ճամի շինեցին ի վերան եւ թաղեցին ի մէջն: Եւ յայսմ ամի ի Պահռիսի վաճառական մի Գ (3) անգամ վասն մարգարիտի տալղըճի իջոյց ի ծովն, ամէն Ա (1) անգամ ԻԵՌ (25 000) մառչի-

			լաւ, առաջինն իւր դրամովն, իսկ երկրորդն եւ երրորդն՝ շահով, զոր յետոյ ելաւ մին մեծ մարգարիտ, որ ի վերայ նորա պատկեր Քրիստոսի խաչելութեան նկարեալ է, եւ վաճառականն տարեալ առ թագաւորն Սպանիու եւ թագաւորն ետ վաճառականին գին մարգարտին ԲԵՌ (200 000) մառչիլ եւ էառ: Յետ ԻԱ (21) ամին տեառն Սարգսի նստի կաթողիկոս էջմիածին տէր Գրիգոր, ամս Ե (5):
1543	ՌՇԽԵ 1545	ՋՂԲ 992	(Ե3701) Յայսմ ամի դարձեալ գնաց սուլթան Սուլէման ի վերայ շահ Թահմազին ի Թէվրուզ եւ ոչ կարաց առնուլ զնա, եւ էառ զՎան եւ պարսպեաց: Եւ առեալ զԱրճէշ եւ զԽլաթ, Բաղէշ եւ զՄէրտին եւ նորոգեաց զպարիսպն Ուրհայու եւ գնաց Ըստամպօլ: Եւ այսմ ամի եղեւ տղայ ժողով, եւ Մաղաքիայ վարդապետն Դերջնցին գնաց ի Ստամպօլ, եւ ասաց, թէ զսիրտ թագաւորին կամիմ համբուրել, զի գրեալ է, թէ սիրտ թագաւորաց ի ձեռին Աստուծոյ են, զԱստուծոյ աջն կամիմ համբուրել, քանզի զոր ինչ առնէ թագաւորն ձեռամբ Աստուծոյ է: Եւ թոյլ ետուն եւ համբուրեաց, եւ վերացոյց յիւր երկրէն, այսինքն ի Դերջանու եւ ի Բաբերթու զտղայ ժողովն, աղաչելով զթագաւորն: Եւ յայսմ ամի ի Թօխաթ նախանձեցաւ սատանայ ընդ քրիստոնէայսն եւ շարժեաց զմահմէտականքն, որք յարուցին հալածանս ի վերայ քրիստոնէիցն Թօխաթու, եւ քակեցին զԸ (8) եկեղեցիքն ի միասին եւ ի մեծի տրտմութեան թողին զազգս Հայոց: (Մ7261) Թօխաթու զԸ (8) եկեղեցին ի միասին քակեցին այլազգիքն յապրիլի Թ (9):
1544	ՌՇԽԶ 1546	ՋՂԳ 993	(Ե3701) Յայսմ ամի եղեւ շարժ յԱլպստան եւ ընկղմեցաւ կէսն եւ Զէյթուն ի ներքեւ հողուն եւ լեռան մնաց, եւ ի ներքոյ հողոյն ձայն աղաղակին մարդկանց կու գայր ի պատառուածէն, եւ մինչեւ Զ (6) ամիս դողաց: Եւ զի մարդիկքն յոյժ մեղօք ի հետեւեալ էին եւ չէին անսալ

			առաջնորդին իւրեանց, այլ ըստ կամաց իւրեանց գնացին, վասն որոյ պատժեցան յԱստուծոյ արդար դատաստանէն:
1545	ՌՇԽԷ 1547	ՋՂԴ 994	(Մ7261) Դէրջնցի Մաղաքիայ վարդապետն գնաց առ թագաւորն Սուլէյման եւ խափանեաց զտղայ ժողովելն: (Ե3701) Յայսմ ամի Ալխաս Իմիրզան, շահ Թահմազին եղբայրն, որ փախեաւ ի նմանէ, ընդ Տէմիր-ղափին անցաւ ընդ Չէրքեզու երկրէն եւ ի Թաթարի երկրէն, եկն ի Կաֆայ եւ նաւով էանց յԸստամպօլ, եւ եղեւ ծառայ թագաւորին: Եւ յայսմ ամի, յետ Զ (6) ամի տեառն Սիմէոնի, նստի ի Սիս կաթողիկոս տէր Ղազար Զեյթունցին, որ է հօր եղբօր որդի Սիմէոն կաթողիկոսին, ամս Գ (3):
1546	ՌՇԽԸ 1548	ՋՂԵ 995	(Ե3701) Յայսմ ամի յետ Ե (5) ամին տէր Գրիգորի նստի կաթողիկոս էջմիածին տէր Ստեփաննոս Սալմաստացին: Եւ յայսմ ամի Իլախաց աշխարհն, յերկիրն Կամինիցու, ջուրն կանաչ վազեաց եւ ջրային կենդանիքն ի ջրէն ի դուրս նետէին զինքեանս եւ մեռանէին: Եւ եղեւ մահտարաժամ ի Կամէնու քաղաքն, եւ մեռան ԴՌ (4000) անձինք: (Մ2965) Խոնդքարն[642] աւերեաց զԹարվէզ, եւ տէրն Թարվիզու շահ Թահմազն եկն եւ աւերեաց զԽնուս, զԲասէն, զԱրզրում, զԴերջան, զԿեղի, զԲաբերդ, զԵզնկան, զԸսպեր:
1547	ՌՇԽԹ 1549	ՋՂԶ 996	(Ե3701) Յայսմ ամի, յետ Գ (3) ամին կաթողիկոսության Ղազարու Զեյթունցուն (գնաց վախճանեցաւ ի Ֆռնօս) նստի կաթողիկոս ի Սիս տէր Թորոս, ի փետրվարի Բ (2-րդ) օրն, երեքշաբթի:
1548	ՌՇՕ 1550	ՋՂԷ 997	(Մ7261) Շահին եղբայր Ալխասն եկեալ հնազանդեցաւ խոնդքարին եւ միւս տարին խոնդքարն գնաց ի վերա շահին: (Ե3701) Յայսմ ամի Ալխասն, որ եկն եւ ծառայ եղեւ թագաւորին, հանեալ տարաւ զհօնտքարն ի Թավրէզ ի վերայ եղբօր իւրոյ, որ աւերեաց

			զԹավրէզն, իսկ տէրն Թավրիզու շահ Թահմազն մինչ ետես զաւեր երկրին իւրում, եկն եւ ինքն աւերեաց զԽնուս, զԲասէն, զԱրզրում, զԴերջան, զԿեղի, զԲաբերդ, զեզընկէն, զՍպէր եւ զայլ անթիւ վնաս արար[643]:
1549	ՌՇՕԱ 1551	ՋՂԸ 998	(Ե3701) Յայսմ ամի մահ եկն յաշխարհս: Եւ այսմ ամի արար թագաւորն դարձեալ զտղայ ժողովն:
1550	ՌՇՕԲ 1552	ՋՂԹ 999	(Մ2965) ՅԱրզրում զՀ (70) ազատորդիս ի միում գիշերի կոտորեցին: (Ե3701) Յայսմ ամի ջարդեցին յԱրզրում քաղաքի զազատորդիսն եօթանասուն հոգի ի մէկ գիշերի եւ մեծ աղէտ եղեւ: Եւ յայսմ ամի սուլթան Սուլէման, յետ առնելոյ զերկոտասան սէֆէրն ի վերայ շահին, դարձաւ յԸստամպօլ մեծաւ ուրախութեամբ եւ բազում աւարաւ եւ գանձիւ:
1551	ՌՇՕԳ 1553	Ռ 1000	(Ե3701) Եւ շահն յորժամ լուաւ զչուելն թագաւորին, դարձաւ եւ եկն ի յԱրճեշ եւ շատ աւեր արար. զվանորայքն քակեաց, զմիաբանքն սպանեաց, զԽլաթ եւ զԱրծկէ էառ, զայգիքն կտրեցին եւ զՏարոնոյ արտորայքն այրեցին, զԲասէնու երկիրն հրձիք արարին, ի Կապնոյ մինչեւ ի Սիս զքրիստոնեայսն զամէնն փախուցին, ոչ Հայ ասաց եւ ոչ Թուրք: Ի ձեռս սոցա անկեալքն սրոյ ճարակ արարին, որ եւ ոմն ի բանաստեղծացն ասաց ողբ ի վերայ նոցա, որ է սկիզբն այս. *«Յորժամ Ռ (1000) ամն լցաւ թվական Հայոց տօմարին, // Ազգ մի՝ Ղզլպաշ կասեն, շարժեցաւ նման վիշապին»* եւ այլն: Եւ յորժամ լուաւ սուլթան Սուլէման զվնասն շահին, զոր արար ընդ երկիրն իւրոյ, առաքեաց ի վերայ նորա զվէզիրն իւր՝ զԱհմատ փաշայն անթիւ զօրօք, հազար-հազարօք, եւ շահն ոչ կարաց ընդդէմ կալ, այլ փախչելով ղօղեալ ի լերինս եւ էլչի առաքեաց՝ մեղա գոչելով: Եւ խնդրեաց զհաշտութիւն եւ զվէզիրն հաշտեցաւ եւ դարձաւ Ըստամպօլ: Եւ յայսմ ամի պարոնն Պուղտանու եւ յՈւլահու՝ Ստեփան կոչեցեալն, բազում չարիս գործեաց

			ընդ ազգս Հայոց, զի քաղկեդոնիս արասցէ: Խորհուրդ արաւ ընդ իշխանս իւր եւ եմուտ ի Հայոց եկեղեցին յաւուր տօնի Վերափոխման Աստուածածնի եւ ել ի խորանն եւ լրբութեամբ ձգեաց զձեռն ի սուրբ խորհուրդն եւ էարկ ի յերկիր եւ արաւ կոխան յոտից իւրեանց, նոյնպէս եւ զսուրբ մեռոնն եհեղ յերկրի, եւ զարդիւնս եւ զսրբութիւնս եկեղեցոյ կողոպտեաց, եւ զգրեանս այրեաց եւ զբազում եկեղեցիս քակեաց եւ բազում չարչարանօք չարչարէր զուղղափառս որ ի Հայոց, եւ բազումս կրկին մկրտեաց եւ զոչ հաւանողսն անողորմաբար չարչարէր եւ այլ բազում չարիս գործեաց, զոր աւելորդ համարեցայ գրել, զի մի լիցի առիթ ծանձրութեան ընթերցասիրացդ:
1552	ՌՇՕԴ 1554	ՌԱ 1001	(Ե3701) Յայսմ ամի յորժամ դարձաւ սուլթան Սուլէման ի պատերազմէն, որ ընդ շահ Թահմազին, այրէաց զՆախչուան եւ աւերեաց բազում գաւառս ի Հայոց:
1553	ՌՇՕԵ 1555	ՌԲ 1002	
1554	ՌՇՕԶ 1556	ՌԳ 1003	(Մ7261) Սուլթան Սուլէյմանն գնաց ի վերայ Պարսից՝ եւ զերեւան եւ զՆախչուան գերեալ տարան[644]: (Ե3701) Հօնքէրն եկն ի վերայ շահ Թահմազին, նստաւ ի Նախչուան, զՍահաթ աւերեաց եւ զբազում գերիս արար:
1555	ՌՇՕԷ 1557	ՌԴ 1004	
1556	ՌՇՕԸ 1558	ՌԵ 1005	(Ե3701) Յայսմ ամի զԹորոս կաթողիկոսն Սսայ ընկեցին յաթոռոյն, յետ Ժ (10) ամի կաթողիկոսութեան: Եւ պատճառ անկման նորին այս էր. զի էրէց էր, եւ զկնի մեռանելոյն կնոջն եղեւ եպիսկոպոս եւ ուներ որդի անառակ, մտեալ ի կարգ աշխարհի, եւ ամուսինն մեռաւ եւ էառ կոյս աղջիկ, ինքն այրի գոլով, թէպէտ բազում անգամ խրատեցաւ ի հօրէն, սակայն ոչինչ աստեաց ի նա խրատ հօրն, եւ վասն այնորիկ բարկացեալ մերձակա եղեալ աթոռակալքն, որոց մինն էր Զեյթունցի Արիստաքես վարդապետն, որք ընկեցին զնա, եւ եդին ի Սիս կաթողիկոս զտէր

			Խաչատուր Չորուկ կոչեցեալն, որ էր ի Սեբաստիու նահանգացն: Եւ Թորոս կաթողիկոսն գնաց ի Լեւոնբերդն եւ անդ եկաց մինչեւ ի վաղճան կենաց իւրոց, եւ թաղեցաւ ի Սուրբ Յովանէսայ եկեղեցոյն, որ ի Լամբերդ[645], ի հարաւային յորմին տակն: Եւ յորժամ նորոգեցին զԼեւոնբերդին զեկեղեցին՝ ՌԺԲ (1563) թվին, զգերեզմանն նորա ի ներս առին: Յայսմ ամի ի մարտի ԻԱ (21), ագեւոր աստղ մի երեւեցաւ յերկինս:
1557	ՌՇԾԹ 1559	ՌՁ 1006	(Մ7261) Տէր Միքայէլ (կթղ.)՝ Թ (9): (Ե3701) Յայսմ ամի, յորժամ ընկեցին զԹորոսն յաթոռոյն, ձեռնադրեցին զտէր Խաչատուր կաթողիկոսն, Չորուկ մակկոչեցեալն, էր սա ի Սեբաստիոյ, այր խստակրօն եւ ճգնաւոր խարազանասգեաց, ի վերայ մերկ մարմնոյն մազեղէն ագանէր եւ կանափեայ գօտով շրջէր, եւ միշտ հետեւակ գնայր ի ճանապարհս, եւ առաւել ճգնութենէն Չորուկ կոչեցաւ: Վասն սորա ասեն, թէ գնաց ի Հռոմկլայ, յուխտ գերեզմանին տեառն Ներսէսի Շնորհալոյն եւ խնդրեաց տեսանել զնա մարմնաւոր աչօք, որ եւ ետես իսկ զնա՝ կանգնեալ ի վերայ յաթոռոյն, խաչն եւ գաւազանն ի ձեռն, որ եւ օրհնեցաւ ի նմանէ: Ել անտի եւ գնաց եւ յանցանիլն ընդ Եփրատ, զձեռն ի ճէպն տարաւ, զի Գ (3) շահի տացէ, վասն իւր եւ վասն Բ (2) սեաւգլխացն, որ ընդ նմայն էին: Եւ զի ունէր սովորութիւն երանելին, զի զոր ինչ տային նմա, բնաւին ոչ նայէր ի նա, արծաթ թէ ոսկի, այլ ի ճեպն ձգեր, եւ ի տալն նոյնպէս, վասն որոյ յանգէտս ել ի ձեռին Բ (2) ոսկի, ետ նաւավարին: Եւ եղեւ սովորութիւն, որ մինչեւ ցայսօր ժամանակի ի վարդապետաց զնոյն պահանջել ի Պէրէճուկ եղեալ նաւավարքն: Եւ յայսմ ամի բացին զնոր դուռն յԱմթայ: Եւ յայսմ ամի արար Ղուկաս Կեղեցին զՀռոմայեցոցն տումարն, որ է սկիզբն՝ «Այս պատճէն Հռոմայ»: (Մ2965) Ղուկաս վարդապետն Կեղեցի զտո-

			մարն Հռօմայեցւոց ոտանաւորեաց:
1558	ՌՇԿ 1560	ՌԷ 1007	(Ե3701) Յայսմ ամի արար սուլթան Սուլէման աշխարհագիր: (Մ7261) Սուլթան Պայազիտն եկն յԱմասիայ, դարձեալ գնաց ի Կոնիայ, ի վերայ եղբօրն, եւ յաղթեցաւ ի նմանէ, եւ փախստական գնաց ի Ղզլպաշն եւ անտ մեռաւ հրամանաւ հօրն իւրոյ՝ սուլթան Սուլէյմանին:
1559	ՌՇԿԱ 1561	ՌԸ 1008	
1560	ՌՇԿԲ 1562	ՌԹ 1009	(Ե3701) Յայսմ ամի սուլթան Պայազիտն Դ (4) որդովն, ԼՌ (30 000) մարդով եկն առ շահ Թահմազն: Եւ ըստ ոմանց՝ այսմ ամի վաղճանեցաւ Թորոս կաթողիկոս Սսացին:
1561	ՌՇԿԳ 1563	ՌԺ 1010	(Ե3701) Յայսմ ամի շահ Թահմազն սպան զՊայազիտն Դ (4) որդովն հրամանաւ հօրն իւրոյ՝ սուլթան Սուլէմանին:
1562	ՌՇԿԴ 1564	ՌԺԱ 1011	(Ե3701) Յայսմ ամի բերին զմեռեալք շահզատէ Պայազիտին եւ որդոցն, Պայազիտն ի Սեւաստ թաղեցին եւ զորդիքն տարեալ Ըստամպօլ թաղեցին:
1563	ՌՇԿԵ 1565	ՌԺԲ 1012	(Ե3701) Յայսմ ամի մահ տարածեցաւ ընդ ամենայն երկիր, եւ բազում տեղիք եղեն յանապատ ի մարդկանէ: Եւ յայսմ ամի Թորոս Թօխատեցին ասաց զՀերիսային տաղն:
1564	ՌՇԿԶ 1566	ՌԺԳ 1013	(Ե3701) Յայսմ ամի արար սուլթան Սուլէման զվեշտասներորդ սէֆէրն ի վերայ Ստիֆարու եւ առին զնա:
1565	ՌՇԿԷ 1567	ՌԺԴ 1014	
1566	ՌՇԿԸ 1568	ՌԺԵ 1015	(Մ7261) Տէր Բարսէղ (կթղ.)՝ Զ (6): Մեռաւ սուլթան Սուլէյմանն, եւ թագաւորեաց որդի նորա՝ սուլտան Սէլիմն ամս Թ (9): (Ե3701) Յայսմ ամի սուլթան Սուլէման գնաց ի վերայ Փէճայ եւ անդ մեռաւ: Եւ յայսմ ամի ԺԵ (15) մայիսի, որ օր էր ուրբաթ, հանդիպեցան միմեանց Սսայ Խաչատուր կաթողիկոսն եւ Էջմիածնայ Միքայէլ կաթողիկոսն եւ արարին բազում ուղղութիւն կարգաց եւ առաքեցին ի Վէնէտիկ զեզընկացի Մելիքսեթ եպիս-

			կոպոսն՝ վասն հաստատութեան տպագրատանն Հայոց գրոց, որ եւ եղեւ իսկ, եւ սկիզբն Սաղմոս տպագրեցին եւ յետոյ բազում գրեանս: Եւ յայսմ ամի ի Տրապիզոն քաղաքի ի մէջ գիշերի լոյս մեծ եւ պայծառ երեւեցաւ մերձ ծովն Պոնտոսի եւ խաչ մի ընդ լուսոյն եւ աստղ մի յոյժ մեծ եւ պայծառ, եւ նախքան զայս յաւուր միում երեւեցան Գ (3) արեգակունք եւ ի վերայ նոցա աղեղ. Գ (3) ժամ մնացին եւ անյայտ եղեն:
1567	ՌՇԿԹ 1569	ՌԺՁ 1016	(Ե3701) Յայսմ ամի թագաւորեաց սուլթան Սէ-լիմն՝ որդի սուլթան Սուլէմանին:
1568	ՌՇՀ 1570	ՌԺԷ 1017	(Ե3701) Սիմոն եկն շահ Թահմազի ոտն:
1569	ՌՇՀԱ 1571	ՌԺԸ 1018	
1570	ՌՇՀԲ 1572	ՌԺԹ 1019	(Ե3701) Յայսմ ամի Օսմանցոց թագաւորն սուլ-թան Սէլիմ յղեաց ի վերայ Կիպրոսի ԳՃՌ (300 000) ձիաւոր եւ ՁՌ (80 000) հետեւակ, առին զԼեւքօշէ զբերդն մեծ զԿիպրոսին եւ ՀՌ (70 000) այր ի սուր քաշեցին ի Յունաց եւ ի Ֆռանկաց եւ ՁՌ (80 000) այր եւ կին եւ տղայ գերի առին, տարի մի եւ է (7) ամիս նստան ի Մանդուսին վերայ, ի յանառիկ բերդին եւ ի Ֆռանկոյն ՃՌ (100 000) եւ ԼԵՌ (35 000) մարդ հրով կորուսին, եւ յետոյ կամաւ զբերդն տուին եւ զՖռանկաց պարոնն սպանեցին եւ զայլսն կապանօք գերի տարին:
1571	ՌՇՀԳ 1573	ՌԻ 1020	(Մ2965) Առին զԿիպրոս կղզին Թուրքք[646]:
1572	ՌՇՀԴ 1574	ՌԻԱ 1021	(Մ7261) Տէր Գրիգոր (կթղ.)՝ Գ (3):
1573	ՌՇՀԵ 1575	ՌԻԲ 1022	(Ե3701) Յայսմ ամի շահ Թահմազն մեռաւ:
1574	ՌՇՀԶ 1576	ՌԻԳ 1023	(Ե3701) Յայսմ ամի շահ Իսմայէլ թաղթին նստաւ Ե (5) տարի:
1575	ՌՇՀԷ 1577	ՌԻԴ 1024	(Մ7261) Մեռաւ սուլթան Սէլիմն, եւ թագաւորեաց որդի նորա սուլթան Մուրատն ամս Ի (20):
1576	ՌՇՀԸ 1578	ՌԻԵ 1025	(Մ7261) Տէր Ստեփաննոս Առընճի (կթղ.)՝ Բ (2): (Ե3701) Յայսմ ամի ագեւոր աստղ մի երեւեցաւ, եւ ի յեզընկայն շարժ եղեւ յոյժ ահագին ի նո-յեմբերի հինկն ի մէջ գիշերի, որ ոչ ոք կարաց ի շէնս բնակիլ Դ (4) ամիս, եւ ապա դադարեաց շարժն:

			Ի սոյն թվին շահ Իսմայէլն մեռաւ: Դարձեալ ի սոյն թվին զշահ Թահմազն ի մէջ բաղնեացն խեղդեցին, յետ նորա զսուլթան Հայ-տարն սպանին, զպզտիկ շահ Իսմայէլին ի բեր-դէն ի դուրս բերին, ի թաղթն ելավ յետ նոցա յէմիր Համզայ Միրզէն:
1577	ՌՇՀԹ 1579	ՌԻԶ 1026	(Մ7261) Տէր Թադէոս (կթղ.)՝ Բ (2): Սուլթան Մուրատն էառ զՇրուան եւ զմիւս տա-րին՝ զԴամուր- Ղափուն: Զշահ Թահմազն ի բաղնիսն խեխտեցին, եւ զՍիսմայէլն եդին թագաւոր եւ նա եսպան զիւր է (7) եղբարսն, եւ իշխանքն սպանին զՍիսմայէլն եւ եդին զմիւս եղբայր նորա՝ զԽուտապանտան շեխ գոլով՝ թագաւոր եւ զաչացու, որ եւ թա-գաւորեաց ամս Ե (5): (Մ481) Գեսաւոր աստղ ելաւ յարեւմուտս ծարն յարեւելք, մեծ եւ երկայն եւ բազում աւուրք ե-րեւէր յարեւմտի ցժամանակն մինչեւ Բ (2) - Գ (3) ժամ գիշերուն[647]:
1578	ՌՇԶ 1580	ՌԻԷ 1027	(Ե3701) Յայսմ ամի Խուտաբանտայն եկեալ թախտին նստաւ: Եւ յայսմ ամի ի փետրվարի Զ (6) -էն մինչեւ ի ԺԵ (15) մարտի եղեւ շարժ ահագին ի Մարսվան քաղաքի, զի որոտումն սաստիկ գայր յանդնդոց եւ դողալով երերայր յերկիր, եւ բազում շինուա-ծոց կործանումն եղեւ, որ եւ վասն ահի ոչ կարէին ի շէնս մտանել, այլ ԼԷ (37) օր վրանաւ յարտաքոյ բնակութեանցն կային:
1579	ՌՇԶԱ 1581	ՌԻԸ 1028	(Մ7261) Տէր Առաքել (կթղ.)՝ է (7): Մեծ Շահ Ապասն թագաւորեաց ամս Օ (50): (Մ2965) Զերեւան էառ Խուտաբանտէն[648]:
1580	ՌՇԶԲ 1582	ՌԻԹ 1029	(Ե3701) Յայսմ ամի Լալայ փաշան երեկ եւ զերեւան գերեաց[649]: Յայսմ ամի Լատինացիք զնոր տօմարն շինեցին: Եւ դարձեալ ի սոյն թվին մեծ եւ առաջին Շահ Աբասն ի մաշատումն ի թախտ նստաւ:
1581	ՌՇԶԳ 1583	ՌԼ 1030	(Ե3701) Յայսմ ամի Թոխաթու չայ Մէհէլլէն եղեւ

			հեղեղ սաստիկ, որ Գ (3) տուն հիմնայատակ արար, մարդօք եւ անասնօք տարեալ: Եւ յայսմ ամի նեղացաւ սուլթան Մուրատն ի Հրէից համարձակութենէն, վերացոյց զփակեղն ի գլխոց նոցա, եւ ոչ թէ միայն Հրէից, այլ եւ ի գլխոց քրիստոնէից եւ հրամայեաց դնել գտակ: (Մ2965) Սուլթան Մուրատն եբարձ զփակեղն ի գլխոյ Հայոց եւ Հրէից՝ զի զգտակ դիցեն:
1582	ՌՇՁԴ 1584	ՌԼԱ 1031	(Մ7261) Վեհապետ փափն Հռոմայ Գրիգորիոս ԺԳ (13-րդ), էր հմուտ աստղաբաշխութեան, արար ժողով եւ քննութիւն եւ ուղղեաց զտօմարն գարնանամտին այսպես. քանզի տարին ունի ՅԿԵ (365) աւուրս եւ Ձ (6) ժամս, բայց կատարեալ Ձ (6) ժամս, այլ պակաս ոոպէիւք ինչ եւ առաջինքն ի Դ (4) տարին Ձ, Ձ (6, 6) ժամս կատարեալ կարծելով զմի օրն ի մուտն մարտի ի բաց ձգէին, որ օրն այն էր վերջին օր փետրվարի ԻԹ (29), եւ կոչէին զայն առաջին օրն մարտի, զամն զայն եւ կոչէին ամ նահանջի: Իսկ նահանջի օրն այն ոչ էր կատարեալ ԻԴ (24) ժամ, այլ ոոպէիւք ինչ պակաս: Եւ այսպէս պակաս ի դուրս ձգելով ի Նիկեայ ժողովոյն մինչեւ ի Քրիստոսի ՌՇՁԲ (1582) թվին գարնանամուտն Ժ (10) օր յետ էր մնացեալ եւ արեգակն ի խոյն չմտած Ժ (10) օր յառաջ գայր եւ ծռէր զՁատիկն: Վասն որոյ զԺ (10) օրն ի յետ ձգել կանոնեաց, զի յորժամ հին տօմարն յունվարի Ա (1) լինի, նոցա նորն՝ ԺԱ (11) լինի, եւ մարտի Ժ (10-ը), Ի (20-ը) լինի նոցա եւ գարնանամուտն ուղիղ ըստ տօմարական եւ աստղաբաշխական արհեստին ուղղեցին զՁատիկն:
1583	ՌՇՁԵ 1585	ՌԼԲ 1032	(Մ7261) Ձերեւան առին եւ գերեցին եւ նոր բերդ շինեցին, որ այժմ կայ հաստատուն: (Ե3701) Յայսմ ամի Երեւանու բերդն շինեցաւ:
1584	ՌՇՁՁ 1586	ՌԼԳ 1033	(Ե3701) Յայսմ ամի շարժ եղեւ յեզընկայն յունիսի ժէ (17), սուրբ Լուսաւորչի երկուշաբթի, Գ (3) ժամն յանկարծ դողումն եղեւ, քաղաքն առհասարակ բլաւ, ԺԵՌ (15 000) այր եւ կին մեռան, ԵՌ (5000) մարդ այլ ի ներքոյ հողոյն

			մնաց, զորս կիսամահ հանեցին, ոմանք ապրեցան եւ ոմանք սախատ եղեն: Եւ կին մի ի ժամ շարժին կոչեաց զՍուրբ Նշանն ի յօգնութիւն եւ յետ ԺԳ (13) աւուր հանին զորդի նորա կենդանի ի ներքոյ հողոյն եւ Ղուլօղլին ողբ ասաց ի վերայ նոցա[650]:
1585	ՌՇՁԷ 1587	ՌԼԴ 1034	(Մ7261) Օսման փաշայն զԹավրեզ էառ եւ զՇրուան եւ Շամախի: Իսկ Ֆահրատ փաշայն էառ Գանճայն եւ զամենայն սահմանս նորայ[651]:
1586	ՌՇՁԸ 1588	ՌԼԵ 1035	(Մ7261) Տէր Դաւիթ (կթղ.)՝ Ե (5):
1587	ՌՇՁԹ 1589	ՌԼԶ 1036	
1588	ՌՇՂ 1590	ՌԼԷ 1037	
1589	ՌՇՂԱ 1591	ՌԼԸ 1038	
1590	ՌՇՂԲ 1592	ՌԼԹ 1039	(Ե3701) Յայսմ ամի Քուրթն գլուխ քաշեց եւ եկն Եզընկէն:
1591	ՌՇՂԳ 1593	ՌԽ 1040	(Ե3701) Յայսմ ամի Քիզիրօղլին էլաւ ջալալի՝ Քուրդ ազգաւ[652]:
1592	ՌՇՂԴ 1594	ՌԽԱ 1041	(Ե3701) Յայսմ ամի Սեբաստիոյ Տաճիկքն ոխացան ընդ Հայոց եւ առին զՍրբոյ Լուսաւորչայ եկեղեցին: Եւ ի սոյն թվին Իփրահիմ փաշայն աւերեաց զԱմիթ հարկապահանջութեամբ:
1593	ՌՇՂԵ 1595	ՌԽԲ 1042	
1594	ՌՇՂԶ 1596	ՌԽԳ 1043	(Մ7261) Տէր Մելքիսէթ (կթղ.)՝ Ժ (10): (Մ2965) Մեռաւ սուլտան Մուրատն, եւ նստաւ սուլտան Մահմատն:
1595	ՌՇՂԷ 1597	ՌԽԴ 1044	(Ե3701) Այսմ ամի յունվարի Զ (6) մեռաւ սուլթան Մուրատն եւ թագաւորեաց Միամատ՝ որդի նորա, յունվարի ԻԲ (22) ամս ԺԲ (12), սա էառ Բ (2) բերդս ի Մաճառաց: (Մ7261) Մահմուտ սուլթան թագաւորեաց ամս Ժ (10):
1596	ՌՇՂԸ 1598	ՌԽԵ 1045	
1597	ՌՇՂԹ 1599	ՌԽԶ 1046	(Ե3701) Յայսմ ամի Ղարայ Եազիճի ելաւ ջալալի[653]: Եւ յայսմ ամի ի Ֆրանցայ երեւեցաւ կենդանակերպ մի աննման կանդանեաց, որ ունէր զգլուխ մայմունի, զականջս ընծոյ, զեղջիւրս խոյոյ, զաչս բուի, զտուտ յօձի եւ զմարմին մարդոյ,

			բայց թաւամորդ եւ ոտք ձիոյ: Եւ յայսմ ամի ի յերկիրն Ընկլիզաց լեառն մի մեծ վերացաւ ի տեղւոջէ իւրմէ եւ եկաց յայլում տեղի: Եւ ի Սպանիայ կին մի յետ ԺՁ (16) ամի ի կանացի բնութիւնէ փոխեցաւ ի յայրական բնութիւն ըստ ամենայն անդամոց: Եւ յայսմ ամի վաղճանեցաւ Տիրատուր կաթողիկոսն Սսայ, որ հակառակ Ազարիայ կաթողիկոսին ձեռնադրեցաւ, եւ ո՛չ ընդունեցին: Եւ թաղեցաւ ի Թօխաթ, ի Սուրբ Ստեփանոսայ եկեղեցին, առաջի դրան մատուռին Սրբոյն Նիկողայոսի:
1598	ՌՈ 1600	ՌԽԷ 1047	(Ե3701) Յայսմ ամի ապստամբեցաւ Ղարայ Եազիճն: Եւ ներքինի Ջաֆար փաշայն ելաւ ջալալի, նստաւ ի Թավրէզ: Եւ յայսմ ամին ի մայիս ամսոյն խաւարեցաւ արեգակն: Եւ ահագին շարժ եղեւ յԱմասիայ եւ ի Չօռում, եւ շատ շինուածոց տապալումն եղեւ մինչ ի չորս ամիս, եւ ապա դադարեցաւ երերումն: Եւ այսմ թվին մահ անասնոց եղեւ սաստիկ[654]:
1599	ՌՈԱ 1601	ՌԽԸ 1048	(Ե3701) Յայսմ ամի մարտի յամսոյ ԺԷ (17) յայնպիսի դառնաշունչ ձմեռ եղեւ, որ ահագին գետք սառեալ պաղեցան: Եւ յայսմ ամին զօրացաւ Ղարայ Եազիճին եւ էառ զՈւրհայու բերդն ի հոկտեմբերի Թ (9): Այս Եազիճին սուխտայ էր ի Կապաթովկիոյ եւ եկեալ էր յՈւրհայ առ մօլլամի ուսման աղագաւ եւ յետոյ եղեւ թֆենկճի, եւ եկաց զինուորութեամբ ի սպասաւորութիւն այլոց իշխանաց եւ վասն քաջութեան ինքնագլուխ եղեալ ժողովեաց զընկերս ապստամբեալս ի թագաւորէն եւ բազմացոյց զզօրս իւր մինչ, զի ասէին, թէ ԼՁ (36) հազարապետս ըստացաւ, այսինքն՝ փոչուքպաշի: Եւ ասէն, թէ յամենայն յաւուր երեսուն մոթ գարի տայր երիվարացն, եւ այս Միջագետաց մոթն է, որ ամէն մոթ ԲՃԻԴ (224) լիտր գայ Հռոմանց լտրովն, եւ օրն Ռ (1000) դուռուշ ծախք ունի՝ Ե (5) հարիւրն ռոճիկ եւ Ե (5) հար-

			իւրն մասրաֆ[655]: Եւ ի սոյն թվին Հուսէյն փաշան ապստամբեցաւ ի թագաւորէն եւ կողոպտեաց զբազում տեղիս եւ եկեալ պաշարեաց զԿեսարիայ, եւ ի նոյն ամին գնացեալ յՈւրհայ միաբանեցաւ ընդ Եազիճին: Եւ է (7) մարդ ի գլխաւորաց քաղաքին եսպան Եազիճին, զոմանս կախելով, զոմանս խեղդելով, զի որն պարոն էր եւ որն չաւուշ, եւ ինքն տիրեաց քաղաքին եւ փախոյց զփոխանորդն փաշային: Եւ ի հոկտեմբերի ԺԵ-ին (15) յաւուր երկուշաբթին Փեալայ փաշայն եւ Մախսուտ բէկն եկին ի վերայ Եազըճուն ի յՈւրհայ եւ սաստիկ պատերազմն արարին ի դիմաց սուրբ դաստառակին եւ ոչ կարացին առնուլ զնա: Եւ յետ յերից աւուրց ի ԺԸ-ն (18) հոկտեմբերի եկն եհաս վէզիրն, որ փոխանորդէ թագաւորին՝ Մահմէտ փաշայ կոչեցեալն, եւ խսարեաց զյՈւրհայ ՀԳ (73) օր, վասն որոյ ելեալ Ղարայ Եազիճին եկն ի Չօռում եւ նստեալ անդ աւերեաց զշրջակայ երկիրն հարկապահանջութեամբ: Եւ ի սոյն թվին ապստամբեցաւ Ճօսէ սէֆէրն:
1600	ՌՈԲ 1602	ՌԽԹ 1049	(Ե3701) Յայսմ ամի ըմբռնեալ Եազիճին զՀուսէյն փաշայն, որ ապստամբեալ էր ի թագաւորէն եւ աւերեալ զբազում երկիր եւ միաբանեալ ընդ Եազիճուն. զսա ըմբռնեալ Եազիճին ըստ խնդրոյ վէզիրին ետ ի ձեռս նորա եւ այսու պատճառաւ հաշտեցան ընդ միմեանս, մանաւանդ զի Եազիճին ի ծածուկ կաշառօք կուրացոյց զաչս վէզիրին, եւ դարձեալ ի նմանէ չուէաց յԱմիթ ի դեկտեմ(բեր) ԻԴ (24): Եւ յետ այնորիկ Ղարա Եազիճին սկսաւ չարչարել զՈւրհայ սաստիկ հարկապահանջութեամբ եւ գլխատեաց քահանայ մի Աբրահամ անուն, եւ զայլ մի տանուտէր Սքէնտէր անուն, յունվարի ԻԲ (22) օրն, երեքշաբթի[656]: Եւ ի սոյն թվին Ղարա Եազիճին տիրեաց Թոխաթու, Ամասիոյ եւ Մարսվանու եւ Չօռոմու, եւ եղեւ սով, որ Ա (1) լիտրն ալիւր ֆլօրի մի եղեւ, եւ Ա

			(1) քիլէ գարի՝ Ա (1) ղուռուշ եղեւ: Եւ ի սոյն թվին ապստամբեցաւ Ղարաղաշն[657]:
1601	ՌՈԳ 1603	ՌԾ 1050	(Ե3701) Յայսմ ամի Եազիճին աւերեաց զՍեբաստիայ՝ կողոպտելով եւ այրելով եւ զբազումս կոտորելով, եւ եղեւ սով մեծ: Եւ ի սոյն թվին Ղարա Եազիճին յաղթեաց Իպրահիմ փաշային ի Կեսարիայ: Եւ ի սոյն թվին թալնեաց եւ կողոպտեաց Լավանտն, որ Սաթըռճի կոչիւր՝ զՍիս քաղաքն Կիլիկեցոցն[658]: Եւ ի սոյն թվին ապստամբեցաւ Ահմէտ փաշայն: Եւ ի սոյն թվին Հասան փաշայն եկն ի յԱմիթ: Եւ յայսմ ամի մեծ մահ եղեւ: Եւ յայսմ ամի Շահ Աբաս արքայն Պարսից վարեաց զջուղայեցիսն ի Հին Ջուղայու, որ էր ի Վասպուրական աշխարհի Մեծին Հայոց, առ Երասխաւ, ի հիւսիսոյ կողմանէ եւ տարաւ բնակեցոյց յերկիրն Պարսից՝ յԱսպահան եւ անուանեաց Նոր Ջուղայ: (Մ7261) Ղարա Եազիչին զՍեւաստ էառ եւ զբազումս կոտորեաց:
1602	ՌՈԴ 1604	ՌԾԱ 1051	(Ե3701) Յայսմ ամի Հասան փաշայն խսարեցաւ ի Թոխաթ: Եւ այսմ ամի սատակեցաւ Ղարայ Եազիճին: Ի սոյն թվին այրեաց ջաղալին զԹոխաթ քաղաք: Եւ ի սոյն թվին ներքինի Խոսրոֆ փաշայն նեղացոյց զԱմիթ հարկապահանջութեամբ:
1603	ՌՈԵ 1605	ՌԾԲ 1052	(Մ7261) Տէր Սրապիոն (կթղ.)՝ Բ (2): Սրապիոն վարդապետն Ուրհայեցի եդին կաթողիկոս ի Սուրբ Էջմիածին եւ անուանեցին Գրիգորիս: (Ե3701) Յայսմ ամի ապստամբեցաւ Թաւուլն, եւ յայսմ ամի առաջին Շահ Աբասն եկն ի Թաւրէզ պատերազմեցաւ ընդ Օսմանցոյն եւ էառ ի նոցունց զԹաւրէզ եւ զՆախչուան:
1604	ՌՈԶ 1606	ՌԾԳ 1053	(Մ7261) Շահ Ապասն եկաւ Հատլպեճան եւ զՀայոց ազգ քշեց ի Սպահան. զԵրեւան, զՆախչուան եւ զՋուղայ եւ զայլ կողմանսն՝ յԱլաշկերտու եւ Խօյայ, եւ տարաւ ի Գիլան եւ

			յՍպահան եւ տիրեաց Ատրպատականու ի Թարվզու մինչեւ յԵրեւան, մինչ ի Գանճայ եւ ի Շրվան, Շամախի: (Ե3701) Յայսմ ամի օգոստոսի ԺՁ (16) եղեւ ի Կաֆայն բազում ճայթմունք եւ կայծակ եւ սաստիկ անձրեւ եւ հեղեղք մեծամեծք, եւ ղուլայ[659] մի փլոյց եւ հովիւ մի հօտիւն հեղեղն տարաւ: Յայսմ ամի նոյն Շահ Աբասն էառ զԵրեւան քաղաք պատերազմաւ ի Օսմանցոց: Եւ ի սոյն թվին Ջալալօղլի սարտարն եկն, զինչ որ ճալալի կայր զամէնն ժողովեաց եւ զՂարաղաշն այլ եբեր եւ հետն տարաւ ի վերայ շահին: Եւ ի սոյն թվին մեռաւ սուլթան Մահմէտ հունտքէրն, եւ նստաւ սուլթան Ահմէտն թագաւոր ամս ԺԴ (14): Եւ ի սոյն թվին ապստամբեցաւ Ինջուղան:
1605	ՌՈէ 1607	ՌՕԴ 1054	(Մ7261) Ջալալօղլի սարդարն եկեալ յաղթեցաւ ի Շահ Ապասէն եւ դարձաւ: (Ե3701) Յայսմ ամի ապստամբեցաւ Յուլարղստին: Եւ ի սոյն թվին Ջանփօլատցի Ալի փաշայն, որ էր յամիրայ Քիլիսու եւ զօրացեալ սա էառ զՀալապ քաղաք եւ տիրեաց նմա ամս երկուս եւ կէս ապստամբեալ ի թագաւորէն: Եւ ի սոյն թվին Ջալալօղլի սարդարն բազում զօրօք եկն Երեւան, այս գալն սորա առաջին գալն է, որ եկն ի վերայ շահին եւ յայսմանէ պատճառէ նոյն առաջին Շահ Աբասն զԱտրպատականի աշխարհի բնակիչսն՝ զՀայ, զՏաճիկ, զՋհուտ, ի միասին քշեաց եւ տարաւ յԱսպահան. այս է մեծ սուրկունն: Դարձեալ ի սոյն թվին մինչդեռ Ջալալօղլին ամրացեալ էր ի բերդն Վանայ, պաշարեցին զնա զօրքն Պարսից, նա ի գաղտ դարանէն ելեալ եմուտ ի նաւ եւ փախուցեալ գնաց յԱրծկէ եւ անտի անկաւ բերդն Խնուսայ, եւ ապա գնացեալ յԱրզրում ժողովեաց առ ինքն զզօրս իւր, եւ զօրքն Պարսից ժողովեալ զերկիրն ըՌշտունեաց գնացին յաշխարհն իւրեանց[660]:

			Այսմ ամի Առաքէլ վարդապետն Դաւրիզեցի դնէ զսկիզբն պատմարգին իւրոյ:
1606	ՌՈԸ 1608	ՌՕԵ 1055	(Մ2965) Սով եղեւ ի Վան եւ յԱրզրում, եւ ոչ մնաց շուն եւ կատու, այլեւ եկեր որդի զհայր, եւ հայր զորդի, եւ ի սովոյ մեռանողաց ոչ էր հնար թաղման, վասն որոյ ի Սուրբ Միաբանից եկեղեցւոյ բակն խոր փոս փորեցին, եւ էճ (700) ոգի միանգամայն լցին եւ թաղեցին, եւ այսպէս առնէին: Այլեւ եղեւ այլ եւս սաստիկ սով ի Ստամպօլու մինչեւ Թարվէզ եւ ի Պաղտատ, եւ մինչ ի Տամուր Ղափուն, եւ կերին զշուն, զկատու եւ զկենդանի եւ զմեռեալ մարդ: Գայլք զօրացան եւ զմարդիկ ուտէին, որք անուանեցան մարդագայլք[661]: (Ե3701) Յայսմ ամի Ջալալօղլի սարտարն երկրորդ անգամ եկն ի վերայ շահին ի Թավրէզ, յաղթեցաւ եւ փախեաւ, եւ Ղզըլպաշն զնոցա խազնէն էառ, եւ ջարդեաց ի նոցանէ ԺԲ (12) փաշայ զօրօքն իւրեանց, ի հոկտեմբեր ԻԵ (25), եւ Ջալալօղլին, որ փախեաւ գնաց ի յԱմիթ եւ անդ մեռաւ փետրվարի Զ (6): Եւ ի սոյն թվին նոյն առաջին Շահ Աբասն գնաց ի վերայ Գանճայու եւ էառ զնա յՕսմանցոց:
1607	ՌՈԹ 1609	ՌՕԶ 1056	(Մ7261) Նոյն տէր Մելքիսէթ, Դաւիթ՝ ԺԹ (19): (Ե3701) Յայսմ ամի առաջին Շահ Աբասն գնաց ի Շամախի եւ պատերազմաւ էառ զնա ի յՕսմանցոց: Եւ ի սոյն թվին ջալալին եկն յԱրզրում ի մայիսի ԺԷ (17)՝ օրն կիրակի, եւ յուլիսի Ե (5)՝ օրն կիրակի, ել եւ գնաց, սակայն շատ վնաս արար:
1608	ՌՈԺ 1610	ՌՕԷ 1057	(Ե3701) Յայսմ ամի առաքեաց սուլթան Ահմէտն զՄուրատ փաշայն ի վերայ Ջանփօլատցի Ալի փաշային՝ ի Հալապ, եւ եկեալ կոտորեաց զզօրս նորա ի դաշտին, որ կոչի Գօգարչինլուկ, եւ զինքն փախստական արար: Եւ ի սոյն թվին Դաւուր անուն ջալալին աւերեաց զԽարբերդու գաւառն եւ զԲալուայ: Եւ յայսմ ամի յուլիսի Լ (30)՝ օրն շաբաթ, եկն սօֆին յԱրզրում եւ այրեաց զվաստակ երկրին,

			թէ՛ գիւղիցն եւ թէ՛ քաղաքին, եւ Ա (1) օգոստոսի ել գնաց (օրն երեքշաբթի), վասն որոյ եղեւ սով սաստիկ, որ Դ (4) տրամ հացն Ա (1) ստակ տային, եւ բազումք զմիմեանս կերան ի մարդ-կանց, եւ այլք զպեղծ կենդանիս ըսպառեցին յուտելոյն:
1609	ՌՈԺԱ 1611	ՌՕԸ 1058	(Ե3701) Յայսմ ամի Մուրատ փաշէն սուրկուն արար:
1610	ՌՈԺԲ 1612	ՌՕԹ 1059	(Ե3701) Յայսմ ամի ել Մուրատ փաշայն Ըստամ-պօլու բազմօք զօրօք եւ գնաց ի Թաւրէզ, եւ խիստ ծիւն եկն ի վերայ զօրացն, եւ նուաղեցան ի ցրտոյն, Չիլ փաշայն եւ Ֆրանկին ընկան, յետ դարձաւ եկն ի յԱմիթ եւ ձմեռեաց անդ: Եւ ի սոյն ամին յուլիսի ԼԱ (31), օրն երեքշաբթի, սօֆին եկն յԱրզրում, խիստ կռիւ արար ընդ Թուրքչա Պիլմէզին հետ Թաթարին եւ օգոստոսի Գ (3) ել եւ գնաց յաւուր յուրբաթի, եւ տեղոյն տէրն յայնժամ Հասան փաշան էր:
1611	ՌՈԺԳ 1613	ՌԿ 1060	
1612	ՌՈԺԴ 1614	ՌԿԱ 1061	(Ե3701) Յայսմ ամի Մուրատ փաշայն մեռաւ յԱմիթ, եւ էառ զվէզիրութիւն Նասիֆ փաշայն, եւ ել Նասիֆ փաշայն յԱմթայ եւ զէլչին ի հետն տարաւ ի Ըստամպօլ եւ արար զհաշտութիւն ընդ Պարսից: Եւ էլչին յետ դարձոյց հետ Հասան փաշային: Եւ այսմ ամի յուլիսի ԻԱ (21) կարկուտ անկաւ ի Կաֆայ:
1613	ՌՈԺԵ 1615	ՌԿԲ 1062	(Ե3701) Յայսմ ամի առաջին Շահ Աբասն գնաց զՎրաց տունն գերեցոյց:
1614	ՌՈԺԶ 1616	ՌԿԳ 1063	(Մ7261) ՁՄելքիսէթ կաթողիկոսն չարչարեցին եւ Ը (8) քար նշանաւոր Սուրբ էջմիածնի եւ զԱջ Լուսաւորչին տարան ի Սպահան հրամանաւ Շահ Ապասին[662]: (Ե3701) Յայսմ ամի առաջին Շահ Աբասն զՍուրբ էջմիածնայ քարերն եւ զսրբոյն Գրիգորի Աջն հանեալ յէջմիածնէ տարաւ յԱսպահան: Եւ ի սոյն ամի ի գիւղաքաղաքն յՈւլաշ, մերձ ի Սեբաստիա, զՍուրբ Փրկչայ եկեղեցին շինեցին:

1615	ՌՈԺԷ 1617	ՌԿԴ 1064	(Ե3701) Յայսմ ամի ի մայիսի ԻԵ (25) յաւուր ուրբաթի Դ (4) ժամ շարժ եղեւ ի Կաֆան, զբերդին եւ զքաղաքին պարիսպն եւ զեկեղեցիքն փլոյց եւ արար բազում աւերք: Ի Ղրիմն եւ ի Դադարստան սաստիկ մահ եղեւ:
1616	ՌՈԺԸ 1618	ՌԿԵ 1065	(Ե3701) Յայսմ ամի յուլիսի Ի (20), որ օր էր կիրակի, հարիւր շայխայ մարդով ի լի Ուռուս էկաւ ի Կաֆայ եւ արարին շատ աւեր մինչեւ ի կէսօր, եւ եթէ ոչ հասանէին զօրք Թաթարին եւ փախուցանէին, գրեթէ զբոլոր քաղաքն բնաջինջ արարեալ էին: Եւ յայսմ ամի եւս բազում մորեխք եկին ի Կաֆայ, որ զերեսս երկրին թուի թէ ծածկեցաւ, եւ լուսինն խաւարեցաւ: Եւ յայսմ ամի Օքուզ Ահմէտ փաշայն եկն ի վերայ Երեւանայ Բ (2) ամիս եւ կէս նստաւ, չկարաց առնուլ, ջարդեցաւ եւ յետս դարձաւ: Եւ յայսմ թվին Ուռուսն կոխեաց զՏրապիզոն:
1617	ՌՈԺԹ 1619	ՌԿՁ 1066	(Մ2965) Շահ Ապազն յԱգուլիս զտէր Անդրէաս քահանայն նահատակեաց վասն քրիստոսական հաւատոյն, եւ թաղեցին ի Խցածորի եկեղեցին[663]:
1618	ՌՈԻ 1620	ՌԿԷ 1067	(Մ2965) Մեռաւ սուլթան Ահմատն եւ նստաւ եղբայրն սուլթան Մուստաֆայն Ճ (100) օր: Ձգեցին զՄուստաֆայն եւ եդին զորդի սուլթան Ահմատին՝ սուլտան Օսմանն:
1619	ՌՈԻԱ 1621	ՌԿԸ 1068	(Ե3701) Յայսմ ամի ի նաւասարդի ամսոյն շող թրաձեւ երեւեցաւ յարեւելից դէմ յարեւմուտս եւ զկնի շողոյն յարեւելից աստղ մի երեւեցաւ, միշտ ընթանայր ի հիւսիս:
1620	ՌՈԻԲ 1622	ՌԿԹ 1069	(Ե3701) Յայսմ ամի սուլթան Օսմանն գնաց ի պատերազմն ի վերայ Լեհին եւ ոչ կարաց առնուլ: Եւ ի սոյն թվին, մինչ թագաւորն Օսման ի վերայ Լեհին էր, ի կողմն հիւսիսոյ երկինքն վառեցաւ կէս գիշերի, որպէս թէ յարեգակն ի յամպն վազէ ի ծագել ժամուն այրի, նոյնպէս եղեւ: Եւ յորժամ թագաւորն դարձաւ ի պատերազմէն եւ գնաց ի յԸստամպօլ, իւր ղուլն չարացաւ եւ սպանին զթագաւորն:

			(Մ2965) Խեղդեցին զսուլտան Օսմանն: (Մ7261) Ենիչէրիքն սպանին զՕսմանն եւ կրկին թագաւորեցուցին զՄուստաֆայն տարի եւ կէս:
1621	ՌՈԻԳ 1623	ՌՀ 1070	(Մ2965) Յունվարի ԺԴ (14), ծովն ի Ստամպօլ պաղեցաւ, եւ մարդիք գնային ի վերայ:
1622	ՌՈԻԴ 1624	ՌՀԱ 1071	(Ե3701) Նոյն սուլթան Մուստաֆայն կրկնակի նստաւ թագաւոր, եւ ՃՕ (150) օր, եւ դարձեալ մազուլ արարին զնա, զի պակասախելք էր: Եւ ի սոյն թվին առաջին Շահ Աբասն գնաց զՂանտահար քաղաքն էառ պատերազմաւ: Եւ ի սոյն թվին յԻման Ղուլի խանն գնաց զՀուրմուզ քաղաքն էառ պատերազմաւ: Եւ յայսմ ամի ի Շահ Աբասեն պարգեւ եկն Օսմանցու թագաւորին՝ Դ (4) փիղ, Բ (2) միեղջերու եւ Բ (2) զեպր եւ այլ բազում գանձս:
1623	ՌՈԻԵ 1625	ՌՀԲ 1072	(Մ7261) Եդին զՕսմանի որդին՝ զՄուրատն, թագաւոր, ամս ԺԹ (19): Շահ Ապասն զՂանտահար էառ, անտի դարձեալ զԲաղտատ էառ: (Ե3701) Յայսմ ամի նստաւ սուլթան Մուրատ թագաւորն ի սեպտեմբեր Ա (1): Եւ ի սոյն թվին Ապազայ փաշայն, որ նստէր յԱրզրում քաղաքի, ելեալ յԱրզրումայ եւ գնաց մինչեւ յԱնկուրիայ, եւ շատ ենկիջէրի ջարդեաց զանզան տանջանօք, վրէժխընդիր լինելով արեան սուլթան Օսման թագաւորին, եւ դարձեալ եկն յԱրզրում: Եւ ի սոյն թվին դարձեալ մանչ ժողովօղն ել, եւ զտուլպէնտն[664] ի գլխոց քրիստոնէին վերացուցին:
1624	ՌՈԻԶ 1626	ՌՀԳ 1073	(Մ7261) Տէր Սահակ (կթղ.)՝ Ե (5): (Ե3701) Յայսմ ամի Բաղտատայ նստօղ Պէքիր փաշայն մարդ յուղարկեաց առաջին Շահ Աբասին, թէ եկ, որ զԲաղտատ քեզ տամ, վասն որոյ Շահ Աբասն գնաց, իսկ փաշայն ստեաց եւ ոչ ետ, իսկ Շահ Աբասն իւրով թրովն էառ զՊաղտատ:
1625	ՌՈԻԷ 1627	ՌՀԴ 1074	(Ե3701) Յայսմ ամի օգոստոսի ամսոյն ի Համթայ գիւղն, որ կոչի Քապիկ, եղեւ նշան մեծ,

			զի ծնաւ կին մի զմեռած զաւակ Բ (2) գլխէն, Ա (1) գլուխն մարդոյ եւ Ա (1) գլուխն հորդոյ, եւ մարմինն բոլոր հորդոյ, ոտքն կճղակն, աքինն՝ ամենն հորդի, բայց մինն գլխոյ՝ մարդոյ[665]: Յայսմ ամի հարիւր եւ քառասուն ղայեթ ըՌուս եկն ի վերայ Տրապիզոնայ եւ զներքին բերդն էառ, ապրիլ ԻԳ (23), յաւուր կիրակէի, եւ եկաց Դ (4) օր, սակայն Ռ եւ ԵՃ (1 500) ըՌուս ջարդեցին ի նոցանէ: Եւ ի սոյն թվին Վրաց Մովրովն[666] պատերազմեցաւ ընդ Պարսից եւ կոտորեաց ի նոցանէ զբազում զօրս եւ զՂարչղայ խանն, զԻւսուֆ խանն, զՂազախ խանն սպան[667]: Եւ յետ Բ (2) ամսոց միւսանգամ զօրաժողով եղեն Պարսիկք եւ եկին ի վերայ Վրացոց եւ գլուխ Վրաց էր նոյն Մովրովն, որ եւ յայսմ պատերազմի եւս կոտորեաց զնոսա եւ զԱմիրգունայ խանն, զՇահպանտայ խանն եւ զՍէլիմ սուլթան սպան: Եւ յայսմ ամի յԱրզրում նստող յԱպազա փաշայն, զկարաւանսն, որ յարեւելից եւ յարեւմտից գային յԱրզրում եւ գնային, հնարիւք եւ խաբեութեամբ արգել զամենեսեան, մինչ որ բազում կարաւանք ժողովեցան, եւ ապա յաւուր միում զինչս եւ զստացուածս նոցա յափշտակեաց եւ յետոյ ապստամբեցաւ ի թագաւորէն եւ եղեւ ջալալի[668]:
1626	ՌՈԻԸ 1628	ՌՀԵ 1075	(Ե3701) Յայսմ ամի Հաֆիզ Ահմատ փաշայն ԳԵՌ (300 000) մարդով եկն ի վերայ Բաղտատայ, ոչ կարաց առնուլ, հեծելն ջարդեցաւ եւ յետս դարձաւ, եւ այսմ ամին Օսմանցին երիս ոսկիս խարճ էառ ի Հայոց:
1627	ՌՈԻԹ 1629	ՌՀԶ 1076	(Մ2965) Ղզլպաշն դարձեալ եկն ի վերայ Վրացւոց, եւ նոյն Մովրովն կոտորեաց զհեծեալսն, եւ սպան զՇահպանտա խանն, զԱմիրկունայ խանն, զՍէլիմ սուլթանն: Մօսէս վարդապետն[669] էառ հրաման Շահ Ապասէն եւ սկսաւ շինել զպարիսպն էջմիածնի եւ զայլ շինւածսն: (Ե3701) Յայսմ ամի Խալիլ փաշայն վէզիր եղեւ,

			եկն յԱրզրում ի վերայ յԱպազին, իսկ յԱպազն գլուխ քաշեաց վերստին զենկիչարիսն ջարդեաց, վեց փաշայ ըմբռնեաց, զերկուսն ի դուրսն սպանեաց եւ զչորսն ի բերդն տարաւ եւ զբերդի դուռն փակեաց: Եւ Խալիլ փաշայն նստաւ ի վերայ բերդին Բ (2) ամիս եւ կէս, է (7) լաղում եբաց, սակայն չկարաց առնուլ զբերդն, ել եւ գնաց: Եւ ի կէս ճանապարհին զթօփերն ի վայր ձգեաց եւ յԱպազայն զկնի նորա եհաս, զութսուն ղաթար ուղտն եւ վաթսուն ղադար ջորի բեռամբ էառ եւ շատ մարդ ըմբռնեաց եւ զբազումս ջարդեաց, եւ վէզիրն գնաց ի Թօխաթ: Եւ յայսմ ամի Մօսէս վարդապետն, որ եղեւ յետոյ կաթողիկոս էջմիածնայ, էառ զհրաման լուսարարութեան սուրբ իջման տեղեացն, որ եւ եկեալ յէջմիածին, սկիզբն արար նորոգութեան եկեղեցոյն պարսպին եւ այլ շինուածոց հրամանաւ առաջին Շահ Աբասին:
1628	ՌՈԼ 1630	ՌՀԷ 1077	(Ե3701) Յայսմ ամի Խոսրոֆ փաշայն վէզիր եղեւ եւ եկն յԱրզրում ի վերայ Ապազային, Վրաց Մովրովն, որ նա եւս ի հետն էր՝ ԺԵ (15) օր ՌՇԳ (1503) թօփ կպոյց, երեք դիմաց փլոյց զբերդի պարիսպն, ըմբռնեաց զԱպազայն եւ տարաւ ի Ըստամպօլ:
1629	ՌՈԼԱ 1631	ՌՀԸ 1078	(Մ7261) Տէր Մովսէս (կթղ.)՝ Դ (4): Մովսէս Սիւնեաց նստաւ կաթողիկոս ի Սուրբ էջմիածին, եւ նորոգեաց զՍուրբ Կաթուղիկէն եւ պարսպեաց շուրջանակի եւ արար բազում ուղղութիւն: (Ե3701) Յայսմ ամի առաջին Շահ Աբասն մեռաւ ի Ֆահրապատ, ի յԱշրաֆ քաղաքի եւ փոխանակ նորա, նորին թոռն շահ Սէֆին ի Սպահան թաղքն նստաւ թագաւոր Պարսից: Ի սոյն թվին յունվարի ԺԳ (13) յաւուրս Յայտնութեան Տէառն, զՄովսէս վարդապետն օծեցին կաթողիկոս էջմիածնայ, սա կալաւ զաթոռ ամս Դ (4), գնաց յԱսպահան առ շահ Սէֆին եւ եբարց զհարիւր թուման մուղադայն բազում աշխատութեամբ[670]:

1630	ՌՈԼԲ 1632	ՌՀԹ 1079	(Մ2965) Նիկօլ եպիսկոպոսն Լեհու արար զդաւանութիւն եւ յինքն գրաւեաց զեկեղեցիսն Հայոց: (Ե3701) Յայսմ ամի եղեւ սկիզբն հակառակութեան Իլովացոց ժողովրդին, ընդ եպիսկոպոսին իւրեանց, եւ այս եղեւ պատճառ Իլով քաղաքի փափադաւանութեան, թէպէտ ի ՌՃԱ (1652) թվին հաշտեցան ներկայութեամբ Փիլիպպոս կաթողիկոսին, սակայն նոյն ֆրանկութիւնն արմատացաւ մինչեւ ցայսօր ժամանակի ի միջի նոցա: Յայսմ ամի սուլթան Մուրատն առաքեաց զվէզիրն իւր զԽոսրով փաշայն ի վերայ Պաղտատու՝ առնուլ զնա, եւ նա գնաց դէպ ի Համատան, եհաս մինչ ի Դարգազին եւ անտի դարձաւ եւ եկն ի Թօխատ ձմեռեաց: Իսկ սուլթան Մուրատ բարկացեալ առաքեաց զՄուրթազայ փաշայն ի Թօխաթ, որ զԽոսրոֆ փաշայի գլուխն կտրեաց:
1631	ՌՈԼԳ 1633	ՌՁ 1080	(Ե3701) Յայսմ ամի Կեսարացի Գրիգոր վարդապետն շինեաց զԹումարզայու կարմունճն՝ երկոտասան աչեայ, զոր բաց ի հացէն ԻԳՌ (23 000) իռեալ գնաց, եւ ԺԱ (11) ամօք հազիւ թէ ի գլուխ եհան:
1632	ՌՈԼԴ 1634	ՌՁԱ 1081	(Մ2965) Ի վերայ Սելէնիկու մոխիր տեղաց Գ (3) օր եւ Գ (3) գիշեր: Ի Լեհ խաշնամահ անկանի ումեմն, եւ նա հայհոյէ զԱստուած եւ ասէ, «երբ սպանանես՝ եկ եւ կեր»: Ուստի պատուհասեալ շուն դառնայ ինքն եւ զիւր սատակեալ խաշինսն ուտէ: Մեռաւ Մօսէս կաթուղիկոսն եւ թաղեցաւ ի Կոզեռն[671] մօտ Կոզեռ վարդապետին, մայիսի ԺԴ (14):
1633	ՌՈԼԵ 1635	ՌՁԲ 1082	(Մ7261) Տէր Փիլիպպոս (կթղ.)՝ ԻԲ (22): Փիլիպպոս Հաղբակեցին նստաւ կաթողիկոս եւ յաւել ի նորոգութիւն եւ ի բարեձեւութիւն կրկնապատիկ, քան զՄովսէս կաթողիկոսն: Սա դարձոյց զԱջ սուրբ Լուսաւորչին ի Սպահանայ ի Սուրբ էջմիածին: (Ե3701) Յայսմ ամի յունվարի ԺԳ (13), յաւուր տնօրէնութեան Տեառն, Մովսէս կաթողիկոսի աշակերտ զՓիլիպոս վարդապետն օրհնեցին

			կաթողիկոս Սրբոյ Էջմիածնի: Եւ յայսմ ամի ի դեկտեմբերի ամսոյն սուրբ Յակոբայ բարեկենդանին օրն օրհնեցին ի Սիս զտէր Սիմէոն վարդապետն կաթողիկոս: Սա կալաւ զաթոռն ամս Ի (20) յառաջ եւ յետոյ, զի ի ՌՂԳ (1644) հրաժարեցաւ, եւ յետ Դ (4) ամին դարձեալ Ե (5) ամ վարեաց զիշխանութիւնն: Եւ ի սոյն ամի յօգոստոսի ամսոյն սուլթան Մուրատն կարի սաստիկ եասախ արար պեղծ թուրքունին, եւ յիւր տէրութեան աշխարհին ղաւախանայսն խափանեաց: Եւ յայսմ ամի ի Պէլրղատ քաղաքի՝ Տաճիկ խոզ է եղեր[672]:
1634	ՌՈԼԶ 1636	ՌՂԳ 1083	(Մ2965) Մոլորեցան Յոյնք, եւ արարին զծռազատիկ, իսկ Հայք, Հապաշք, Ասորիք եւ Ղփտիք ուղիղ կացին: (Ե3701) Եւ ի սոյն թվին օգոստոսի ամսոյն սուլթան Մուրատն գնաց ի Լեհաց վերայ ի պատերազմն եւ հնազանդեալ դարձուցին: Դարձեալ ի սոյն թվին սուլթան Մուրատն զվերոյ գրեալ զԱպազայ փաշայն սպան:
1635	ՌՈԼԷ 1637	ՌՂԴ 1084	(Ե3701) Յայսմ ամի Սուլթան Մուրատն էճՌ (700 000)[673] մարդով եկն ի վերայ Երեւանայ բերդին նստաւ եւ թօփով ծեծեաց զբերդն մեծաւ զօրութեամբ Թ (9) օր եւ էառ զբերդն եւ զիշխանն բերդին զԴահմազ ղուլի խանն իւրով պարոներովն առաքեաց ի Ըստամպօլ: Եւ ԺԲՌ (12 000) մարդ քաջ պատերազմօղ եդ ի մէջ բերդին եւ ինքն էանց գնաց ի Թաւրէզ եւ անտի դարձաւ ի վերայ Վանայ եւ գնաց Ըստամպօլ: Եւ զՄանօղլին բերեալ ի Ըստամպօլ սպան: Եւ զՀուսէյն էֆէնտի մուֆտին սպան թագաւորն: Եւ ի սոյն թվին մայիսի ԺԴ (14) օրն չորեքշաբթի սուրկուն արար թագաւորն՝ Հայոց, Հոռոմոց եւ Տաճկաց: Եւ յայսմ ամի յՕսմանցոց աշխարհն Ա (1) լիտր լեղակն ՁԷ (87) ռիալի եղեւ: (Մ7261) Սուլթան Մուրատն եկեալ էառ զԵրեւան եւ գնացեալ ի Թարվէզ: Ի նոյն ամի ի դարձ նորին եկն շահ Սէֆին, յետ էառ զԵրեւան:

1636	ՌՈԼԸ 1638	ՌՁԵ 1085	(Ե3701) Յայսմ ամի թագաւորն Պարսից շահ Սէֆի հարիւր հազար մարդով եկն ի վերայ Երեւանայ, նստաւ Գ (3) ամիս, բազում աշխատութեամբ եւ պատերազմաւ զբերդն էառ յՕսմանցոց եւ զիշխանն բերդին զՄուրդազայ փաշայն եւ բազում զօրս ի նոցանէ սպան, եւ զՇխիճան փաշայն եւ զԻբրահիմ փաշայն եւ զՄամին փաշէն ըմբըռնեաց, տարաւ յաշխարհն Պարսից եւ ի յերեւան կարգեաց իշխան զՔալպի Ալի խանն: Եւ յայսմ ամի Օսխորդ գիւղն վերուստի ի վայր իջաւ եւ վանից փարախն անդ շինեցաւ:
1637	ՌՈԼԹ 1639	ՌՁՁ 1086	(Ե3701) Յայսմ ամի Օսխորտու աղբիւրն վերակացութեամբ Բաղիշեցի մահտասի Սիմաւոնին ի գիւղն իջավ: Եւ յորժամ դարձաւ ի Պաղտատու սուլթան Մուրատն, եկն ի Թօխաթ եւ ետ սալեր կապել ի Թօխաթու փողոցնին:
1638	ՌՈԽ 1640	ՌՁԷ 1087	(Ե3701) Յայսմ ամի սուլթան Մուրատն գնաց ի վերայ Պաղտատայ ի պատերազմն եւ ի նոյեմբերի Զ (6) եհաս ի Պաղտատ եւ ծեծեաց զբերդն ԼԸ (38) օր մեծաւ զօրութեամբ եւ ի դեկտեմբերի ԺԴ (14) էառ զՊաղտատ եւ դարձեալ եկն յԱմիթ: Եւ ի սոյն թվին Թաթարն եկն յերկիրն յԱրարատու: Եւ ի սոյն թվին Փիլիպպոս կաթուղիկոսն զԼուսաւորչի Աջն խնդրեալ ի շահ Սեֆի թագաւորէն եւ հանեալ յՍպահանայ՝ եբեր ի Սուրբ էջմիածին:
1639	ՌՈԽԱ 1641	ՌՁԸ 1088	(Մ7261) Իպրահիմն ամս Ժ (10):
1640	ՌՈԽԲ 1642	ՌՁԹ 1089	(Ե3701) Յայսմ ամի սրբոյ Սարգսի շաբաթու հինգշաբթին օրն մեռաւ սուլթան Մուրատն, եւ նստաւ ի տեղի նորա թագաւոր եղբայրն սուլթան Իպրահիմն:
1641	ՌՈԽԳ 1643	ՌՂ 1090	(Ե3701) Յայսմ ամի ի Կէնճէ, ի Թաւրէզ եւ ի Սպահան եղեւ շարժ մեծ, որ մինչեւ ԼՌ (30 000) մարդ ի ներքեւն հողոյ մնաց եւ անթիւ շինուածք կործանեցան, մինչեւ Բ (2) ամիսն, օրն Բ (2) եւ Գ (3) անգամ շարժէր եւ յետ նորա ի Ժ (10) եւ ի Ի

			(20) օրն՝ մի անգամ, եւ մինչեւ հինգ ամիս, ապա դադարեցաւ ողորմութեամբն Աստուծոյ: Եւ յայսմ թվին ըՌուսն էկաւ Ղազախու[674] բերդն էառ, եւ շատ մարդ ջարդեաց յՕսմանցոց: (Մ2965) Շարժ եղեւ ի Թարվէզ եւ յիւր շրջակայսն, եւ փլաւ շամղազանն եւ ուստայ շէկիրտ ամարաթին: (Մ482) Մակուայ բերդն քակեցին: (Մ10202) Թաթարն եկն եւ սակաւ ինչ գերեաց զգաւառն Նիգ եւ Կոտոյէից եւ Ծաղկոցաց[675]:
1642	ՌՈԽԴ 1644	ՌՂԱ 1091	(Մ7261) Մեռաւ ի Քաշան շահ Սէֆին, եւ թագաւորեաց որդի նորա երկրորդ Շահ Ապասն, ամս ԻԴ (24): Շարժ եղեւ ի Թարվիզ եւ ի Թուխուրկան ՌԲԵ (1 200) մարդ աւելի մեռան: (Մ2965) Երեկ մարախ յերկիրն Երեւանու: Սուլտան Իպրահիմն խափանօք էառ զմասն ինչ ի Կրիտու, եւ յետ ԻԸ (28), ամաց տիրեաց բովանդակին: (Ե3701) Եւ յայսմ ամի վաղճանեցաւ Գրիգոր վարդապետն Կեսարացին, որ զԹումարզու կարմունճն շինեաց, եւ թաղեցաւ ի Ղալաթիայ, ի հարաւային կողմն եկեղեցոյն, ջանացողութեամբ Սսացի Շահին Չէլէպուն, որ յայնմ ժամանակի էր այր երեւելի ի դուռն արքունի եւ ծանոթ մեծամեծաց: Եւ այս Շահին Չէլէպին Սսացի գոլով, շատ երախտիք արար Սսայ քաղաքին ի կողմանէ թագաւորական իրաւանց եւ հարկաց: Եւ շինեաց ի Սիս պանդոկս եւ կարմունճս ի վերայ ճանապարհի եւ յանցս գետոց: Իսկ Սսացիք, նախանձեալ ընդ փառաց նորա, ուխտ եդին ընդ միմեանս չանցանել ընդ կարմունճն Շահանին, որ ի միջոյ երկուց լերանց շինեալ էր ի վերայ գետոյն, մերձ Լամբերդու, եւ մինչեւ ցայսօր ժամանակի թողեալ զկարմունճն, ընդ ջուրն անցանել: Եւ եղեւ այս սովորութիւն ի մէջ սսացոց, որ մինչ բացասել կամին զիրէ զմեքէ, ասեն՝ «կէչմէյէլիմ Շահանըն քօփրուսընտէն»[676]: Եւ գետն անպակաս տանէր երբեմն մարդ եւ

			երբեմն գրաստ: Եւ նոքա լաւ համարեն զկորուստ ընչից եւ զանձանց, քան յանցանել զաւանդութիւնս նախնեացն:
1643	ՌՈԽԵ 1645	ՌՂԲ 1092	(Ե3701) Յայսմ ամի եկն մարախ յերկիրն Արարատու: Եւ Օսմանցին յետ էառ պատերազմաւ զքաղաքն Ազախ ի Ռուսէն:
1644	ՌՈԽԶ 1646	ՌՂԳ 1093	(Ե3701) Յայսմ ամի ի մայիսի ամսոյն գիշեր մի մինչեւ ի ճաշուն, ի Սիս քաղաքի հող տեղեաց յերկնից եւ ծածկեաց զխոտս եւ զբոյսս, վասն որոյ եղեւ սով սաստիկ, որ Սսայ Ա (1) լիտր ալիւրն Ա (1) իրեալի եղեւ:
1645	ՌՈԽԷ 1647	ՌՂՂ 1094	(Մ7261) Տաճիկք զԿիրիտն առին խաբեութեամբ, բերթ մի, եւ L (30) ամ պատերազմեալ զբովանդակն առին ի Վենետկացցն:
1646	ՌՈԽԸ 1648	ՌՂԵ 1095	(Ե3701) Յայսմ ամի Օսմանցիք սէֆէր արարին ծովուն, համբաւեցին, թէ գնամք ի վերայ Մալթայ կղզոյն, եւ խափ տուեալ գնացին ի վերայ Կրէտէ կղզոյն, որ էր ի ձեռն Վենետիկցոց եւ դիւրաւ առին զնա, զի բնակիչք կղզոյն յօժարէին յառնուլն Օսմանցոց: Եւ յայսմ ամի ի գիւղն Ենկիեափան պատանի մի խօսեցաւ եւ ասաց, թէ այսինչ տեղ քարէ խաչ մի կայ, հանեցէք եւ պատուեցէք ըստ արժանոյն, զի սրբութեամբ է, վասն որոյ ոմանք հաւատացեալք ի բանն պատանոյն գնացեալ փորեցին եւ գտին զնա, որպէս ասաց պատանին, եւ էր խաչն քարեայ, սակայն ամենեւին տեղի կռանի եւ գործիքի ոչ երեւեր ի նա, եւ փայլէր իբր թէ նոր է օծեալ. հիացան, պաշտեցին, պատուեցին եւ տարածեցաւ համբաւ ընդ նոյն նահանգոյն, եւ բազումք գային յուխտ եւ երկրպագութիւն՝ զոհիւք եւ պատարագօք, եւ սքանչելի լինէին ի նմանէ, եւ եհաս համբաւս այս յականջս Ներսէս վարդապետի Սեբաստացոյ, որ եղեւ Սսայ կաթողիկոս, գիր գրեաց նայ՝ թէ մի՛ ընդունիք, եւ նոքա ոչ մեկնեցան ի նմանէ, մինչ որ ինքն՝ Ներսէս վարդապետն եկն անդ, մինչ գնայր ի Սիս օծանիլ կաթողիկոս, ետես եւ ծանեաւ զիրն գոլ դիւական, վասն որոյ ձեռօք խորտակեաց, զոր

			իսկոյն դեւն ել ի նմանէ ակներեւ ամենեցուն եւ հալածեցաւ, եւ զպատանին բժշկեաց, քանզի դեւն նովաւ խօսէր հանգոյն վիուկ կնոջն:
1647	ՌՈԽԹ 1649	ՌՂՋ 1096	(Ե3701) Յայսմ ամի եկն պարգեւ Օսմանցուն Բ (2) փիղս եւ ի նոյն ամի կին մի ծնաւ որդի մի երեսն փիղանման, ի Թոխաթ քաղաքին: Եւ զայն լուեալ դատաւորն կոչեաց զկինն եւ եհարց զպատճառն: Ասաց կինն, թէ յորժամ ելաք ի տես հանդիսի փղին, յայնժամ եկն փիղն եւ էանց անտի, զոր ես կայի, եւ ես յօժարութեամբ նայեցայ ի փիղն, որ եւ ի նմին աւուր սաղմն առեալ էի. նկարեցաւ մանուկս յորովայնի իմում ի նոյն կերպարան: Եւ նոքա, որք գիտունք էին, հաւատացին, եւ յետ Ե (5) ամաց մեռաւ մանուկն:
1648	ՌՈԾ 1650	ՌՂԷ 1097	(Ե3701) Յայսմ ամի յապրիլի Բ (2) սաստիկ եւ ահագին շարժ եղեւ ի Վանայ քաղաքն, եւ փլաւ կէս պարսպի քաղաքին եւ յոլով եկեղեցիք եւ բազում մաչիթներ, շինուածք կործանեցան, եւ բազում մարդիկ մնացին ի ներքոյ հողոյն: Եւ Վարագայ վանից եկեղեցիքն աւերեցան եւ այլ վանորայք, որք ի գաւառին էին, աւերեցան, եւ յաւուրս Ը (8) ի շարժման եկաց, որպէս զնաւ ի վերայ երեսաց ջրոյ, եւ ապա հանդարտեցաւ. ի Դ (4) օրն, ի Ժ (10) օրն եւ ի Ե (5) օրն մի անգամ շարժէր, եւ մինչեւ յունիսն, եւ ապա դադարեցաւ ողորմութեամբն Աստուծոյ: (Մ2965) Շարժ սաստիկ եղեւ ի Վան եւ ի շրջակայսն իւր եւ եկեղեցիք եւ մզկիթք բազումք փլան, եւ կէս պարսպի քաղաքին: Մաղուլ արարեալ զսուլթան Իպրահի(մ)ն եւ յետոյ սպանին, եւ եդին ի տեղի նորին զիւր որդի սուլթան Մահմէտն: Երկրորդ Շահ Ապազն էառ զՂանտահար: Ղզլպաշի զօրքն ի Թիֆլիզու գնացին ի Կախէթ ի վերայ Թամրազ թագաւորին Վրաց եւ սպանին զորդի նորա զԴաւիթ, եւ ցցեցին զգլուխ նորա ի ձողի եւ զպայրաղն իւր խաչովն կախեցին գլխի վայր եւ անցուցեալ ի մէջ Թիֆլիզու տարան առ թագաւորն իւրեանց[677]: (Մ7261) Զսուլթան Իբրահիմն խեղդամահ արա-

			րեալ, զորդին իւր Ահմէտ թագաւորեցուցին, որ իշխեաց ամս Խ (40):
1649	ՌՈՃԱ 1651	ՌՂԸ 1098	(Ե3701) Յայսմ ամի ի մայիս Լ (30) եղեւ շարժ ահագին յԱնթապ քաղաքի:
1650	ՌՈՃԲ 1652	ՌՂԹ 1099	
1651	ՌՈՃԳ 1653	ՌՃ 1100	(Մ2965) Կաթուղիկոսն Փիլիպպոսն ել յէջմիածնայ գնալ յԵրուսաղէմ՝ շրջելով ամ մի բոլոր ի Հռոմաց տուն: (Մ7261) Փիլիպպոս հոգեւոր տէրն գնաց յԵրուսաղէմ, զՍուրբ Յակոբայ մէջն սալկապ արար եւ գնացեալ ի Ստամպօլ, դարձաւ յաթոռն՝ ի Սուրբ էջմիածին, եւ հիմնարկեալ զանկատունն, վախճանեցաւ: (Ե3701) Յայսմ ամի Փիլիպոս կաթողիկոսն ի Սուրբ էջմիածնայ գնաց Երուսաղէմ, բայց ամ մի ի քաղաքսն Հռոմստանայ շրջեցաւ եւ ի մտանել ՌՃԱ (1652), եմուտ Երուսաղէմ Բժ-ան (12) վարդապետօք եւ Խ (40) միաբանօք: Զսուրբ Յակոբայ մէջն գոյնըզգոյն քարամբք եւ մտախինլերով սալեաց եւ զաւագ բեմն բարձրացոյց, զի ցած էր յառաջագոյնն: Եւ յայսմ ամի վաղճանեցաւ Սիմէոն կաթողիկոսն ՀԱ (71) ամաց: Սա էր ի Սեբաստիոյ ի Սալչուկ գիւղէն: Եւ վախճան սորին եղեւ ի Սիս, յաւուր Աւագ ուրբաթի եւ եդաւ հաւասար Յովաննէս կաթողիկոսին, ի գաւիթն Սրբոյ Աթոռոյն, որ ի վերայ գերեզմանաց նոցա նկարեալ միթր եւ գաւազան: Սա կալեալ զաթոռն ամս ԺԵ (15), եւ յետ Ե (5) այլ հրաժարեալ: Սա եդ յաթոռն Սսայ ՀԲ (72) գիրք յիշատակ, եւ Գ (3) սկիհ եւ ականակուռ սաղաւարտ մի: Եւ ականակուռ թագն Կառկառցի Յակոբ վարդապետին եբեր ի Հալպայ եւ այլ մանր գրեանս եւ Աստուածաշունչ մի եւ Սաղմոս, զսոսա ամենեքեան յիշատակ եթող զկնի իւր, որ յիշատակն օրհնութեամբ եղիցի: Եւ յայսմ ամի Սարգիս վարդապետ պատրիարգ Կոստանդնուպօլսի ուրացաւ:
1652	ՌՈՃԴ 1654	ՌՃԱ 1101	(Ե3701) Յայսմ ամի Փիլիպպոս կաթողիկոսն ել

			յերուսաղէմայ եւ գնաց ի Կոստանդնուպօլիս, եկաց անդ ամ մի եւ արար բազում ուղղութիւն եւ վճարեաց զպարտս եկեղեցեաց ԼՌ (30 000) մառչիլ, եւ եկն առ նայ Նիկօլ եպիսկոպոս Իլովայ եւ էառ զարձակումն ի բանադրանաց իւրոց: Եւ յայսմ ամի Հնտստանայ թագաւորն Շահիջան է (7) լաք[678] մարդ յղարկեաց ի վերայ Ղանտահարայ Ովրզանկէլ փաչահզատէն, Սայդուլէ խանն սարդար կարգեաց, որք գնացին Բ (2) ամիս եւ կէս նստան ԻՌ (20 000) սպահիք վայր անկան, թող զԲաջիբաթիարի Օրտուպազարի հալալ խօրն: Եւ յայսմ ամի ի սեպտեմբերի ամսոյն ի լրման գոլով խաւարեցաւ լուսինն, եւ ի Սեբաստիայ եկն այնքան պիծակք, որ զվաճառանոցն խափանեաց, զի ոչ ոք կարէր ի դուրս շրջիլ: Յայսմ ամի մարտի Ժ (10) ի մուտս արեւուն՝ արեգակն արիւն դարձաւ եւ յետոյ սեւացաւ, ի ԺԱ-ին (11) նոյնպէս եղեւ, եւ լուսինն՝ ԺԱ-ին (11) յառաւօտուն խաւարեցաւ եւ ի մարտի Ի (20) արեգակն նոյնպէս եղեւ. այսմ ամի թէ՛ արեգակն եւ թէ՛ լուսին բազում անգամ այսպէս եղեն: Եւ յայսմ ամի մերձ Պախջայ Սարայն[679], ձմեռն Թաթարնին սարայ կանեն կերան եւ արբեցան եւ ճաշակեցին զպտուղ արբեցութեան, սկսան կոտորել զմիմեանս եւ, ԻԵ (25) մարդ սատակեցաւ, եւ մինն ի նոցանէ իւր ձեռօքն զհայրն կախեաց ի գիշերի ի խանն: Եւ մերձ Պախջայ Սարայու գիւղ մի Յոյն, ի միասին տաճկացան՝ քահանայ եւ ժողովուրդ, սակս արքունական հարկացն:
1653	ՌՈԾԵ 1655	ՌԵԲ 1102	(Տ93) Թվին ՌԵԲ (1653) օգոստոսի Բ (2) պատկեր օրն չորեքշաբթի, խավարեցաւ արեգակն է (7-րդ) ժամուն աւուրն մինչեւ Թ (9) ժամն: Յայսմ ամի մեռան վաղճանեցան էջմիածնա կաթողիկոսն տէր Փիլիպոսն եւ Սըսայ Ներսէս կաթողիկոսն Սեփաստացի եւ Առիստակէս վարդապետն Խարդբերդցի[680]:
1654	ՌՈԾԶ 1656	ՌԵԳ 1103	(Մ2965) էջմիածնի զանկակատունն սկսան շինել:

			(Ե3701) Յայսմ ամի ի գարնանային եղանակին ի դղեակն Վահկայ, ի Սիս Կիլիկեցոց փոշի տեղեաց յերկնից օր մի, մինչեւ յերեկոյ: Եւ յայսմ ամի յէջմիածնայ զանկակապուրճն հիմն արկին եւ սկսան շինել: Յայսմ ամի օգոստոսի Բ (2) օրն Գ (3) մասն արեգականն խաւարեցաւ, եւ աստեղք յերկնից երեւեցան որպէս ի գիշերի: Յայսմ ամի ի հոկտեմբերի Բ (2) ի Դաւթայ Թունեցոյն տօնին վաղճանեցաւ Սեբաստացի Ներսէս կաթողիկոսն Սսայ եւ թաղեցաւ ի Սեբաստիայ:
1655	ՌՈԾԷ 1657	ՌԵԴ 1104	(Մ2965) Մարտի ԻԵ (25), մեռաւ կաթուղիկոսն Փիլիպպոս, հինգերորդ կիրակէին քառասնորդաց, եւ թաղեցաւ Լ (30) մարտի յեկեղեցի սրբուհւոյն Հռիփսիմէի: Յապրիլի Ը (8) ի Ծաղկազարդին օրհնեցաւ Յակոբ վարդապետն Ճիւղայեցի կաթուղիկոս էջմիածնի[681]: Նահատակեցաւ ի Մարաց ոմն հայ՝ Աւետիս անւանբ, եւ երկնայնով լուսով փառաւորեաց զնա Աստուած: (Մ7261) Տէր Յակոբ (կթղ.)՝ Ի է (27): Յակոբ վարդապետն Ջուղայեցի նստաւ կաթողիկոս ի Սուրբ էջմիածին եւ կատարեաց զանկակատունն եւ երեք զքահրեզն, բազում ծախիւք: (Ե3701) Յայսմ ամի զԴաշտեցի Հայերն ի Սպահան քաղաքի միջէն հանին եւ յեզր քաղաքի բնակեցուցին հրամանաւ երկրորդ Շահ Աբասին: Բաղիշու տէրն Աւդալխան, որ փախեաւ յերեսաց Ահմատ փաշային Վանու, եկն դարձեալ եւ սպան զորդին իւր եւ ինքն նստաւ[682]:
1656	ՌՈԾԸ 1658	ՌԵԵ 1105	(Ե3701) Յայսմ ամի զԵրեւանցի Հայերն հանեցին ի Սպահանայ եւ յեզր քաղաքի բնակեցուցին հրամանաւ երկրորդ Շահ Աբասին: Եւ ի սոյն թվին ազգն Քրթաց նահատակեցին զայր ոմն քրիստոնէայ Աւետիս անուն, հայ ազգաւ, յաշխարհէն Մարաց, ի բերդն, որ կոչի Փիզան, եւ Քրիստոս փառաւորեաց զնա երկնային լուսովն:
1657	ՌՈԾԹ 1659	ՌԵԶ 1106	(Ե3701) Յայսմ ամի զՋհուտսն, որ բնակեալ են

			յԱսպահան քաղաքի եւ յայլ քաղաքսն Պարսից բռնութեամբ եւ չարչարանօք տաճկացուցին: Եւ յայսմ թվին Դադիանայ[683] թագաւորն մեռաւ եւ թագաւորութիւնն խանգարեցաւ, զի չունի որդի ժառանգ նորա: Եւ յայսմ ամի ի փետրվարի Իէ (27) վաղ-ճանեցաւ Ջուղայեցի Սիմէոն վարդապետն ի Թոխաթ քաղաքի եւ անդ թաղեցաւ: Սա կարի վարժ էր քերականութեան արուեստին եւ հանճարոյ յարտաքնոց գրոց եւ քաջաբան հակաճառող ընդդէմ ամենից ազգաց: (Մ2965) Մեռաւ ի Թոխաթ Ճիւղայեցի Սիմոն վարդապետն, որ քերականութեան եւ արտաքնոց գիտող ասիւր եւ հակաճառող ընդդէմ ազգաց, որպես յիշէ Կլեմէսն:
1658	ՌՈԿ 660	ՌԵԷ 1107	(Մ2965) Ապրիլի Ա (1) Սեւանայ կղզոյ առաջնորդ Բարսեղ վարդապետն մինչ կոտորէր զսառից ծովուն վասն ճանապարհ առնելոյ ափին, Ձ (6) ոգւովք, հողմն կուտեալ զալիսն սառիւք, եւ սուզեցան ի խորս, վարդապետն եւ աբեղան եւ Բ (2) աշխարհականք: Իսկ սարկաւագն եւ Ա (1) աշխարհականն զերծան[684]: (Ե3701) Յայսմ ամի ի սրբոյ Զաքարիայի գերեզ-մանէն, որ կայ ի մէջ Կօմըրկենու եւ Կէմէրէկու յԱզիազոն քաղաքի[685], որ Մուտառային կոչէ Թուրքն եւ այն գերեզմանին՝ Ձէքի տէտի ասեն, եղեւ հրաշք իմն, զի Բ (2) յայլազգի յամուլ կին հաւատով եկին յուխտ նոյն գերեզմանին եւ բերին ուլ մի մատաղ եւ խնդրեցին ի սրբոյն՝ զաւակ: Եւ մինչ աղօթէին մերձ գերեզմանին, ոմն յընկերակից կանայսն ընդ կատակս արկեալ ասի, թէ ձեզ եղջերաւոր որդի տացէ սուրբն, եւ նոքա ասեն՝ ո՛չ այդպէս, այլ պէնկլի[686] զաւակ խնդրեմք ի նմանէ: Եւ եղեւ, զի յղացան եւ ծնան արու զաւակս, որ ունէին երկոքեանն զշարս պէնկից ի պարանոցս, հանգոյն քոմնեկի, որ եւ զայս տեսեալ փառս տային Աստուծոյ, որ փա-ռաւորէ զսուրբս իւր զանազան սքանչելեօք:
1659	ՌՈԿԱ 1661	ՌԵԸ 1108	(Մ7261) Տաքեւու Մեծ Անապատն շարժեցաւ ի

			տեղոջէն Բ (2) վտաւանաւ[687]: Ետոյ Յակոբ հոգեւոր տէրն բերեալ զմիաբանսն ի ներքոյ Տաթեւու եւ անդ հիմնարկեաց զանապատն եւ զեկեղեցին, եւ աւարտեաց զայն Արիստակէս վարդապետն: (Ե3701) Յայսմ ամի Ղարայ Ղալխանի տէր մեծ երիսքաւն, որոյ անունն էր Ձալ[688], գնաց յԱսպահան ի դուռն շահին եւ ձեռնտուութեամբ շահի էհտիմալ տօլվաթին ո՛չ սպանաւ, այլ կենդանի դարձաւ յաշխարհն իւր:
1660	ՌՈԿԲ 1662	ՌԵԹ 1109	(Ե3701) Յայսմ ամի Մարտի ամսոյ Ա (1) Պաշիաչուխի[689] թագաւորն՝ Աղէքսանտրն, մեռաւ, եւ փոխանակ նորա որդին թագաւորեաց, որ Բագարատ կոչի: Եւ ի սոյն թվին այս Բագարատս, որ նստաւ թագաւոր փոխանակ հօրն իւրոյ, իւր խորդ մայրն զսորին զերկուսին աչսն խաւարացոյց[690], զի ներհակութիւն անկաւ ի մէջ նոցա, եւ իշխանք անմիաբան եղեն ընդ միմեանս, վասն որոյ երկիրն աւերեցաւ եւ թագաւորութիւնն խափանեցաւ: Եւ յայսմ ամի հրաման արար թագաւորն Պարսից երկրորդ Շահ Աբասն, որ յազգէն Մահմետականաց հազառ եւ հինկ հարիւր տուն Թուրք տարան ի Կախէթ լցին, որ անդ բնակին:
1661	ՌՈԿԳ 1663	ՌԵԺ 1110	(Ե3701) Յայսմ ամի Կովկաս լերին բնակեալ Վրացիքն, ազգն, որ ասի Թուշ եւ Փշաւ[691], եկին ի գիշերի եւ զայն հազառ եւ հինկ հարիւր տուն Թուրքսն ի սուր քաշեցին ի ծերոց մինչեւ ցստնդեայն: Եւ ի սոյն թվին շահն զէհթիմալ տօլվէթն ընկեց յիշխանութենէ, վասն երիսքաւին, քանզի, ասացաւ առաջի խանացն նաեւ առաջի շահին, թէ թէլադրութեամբ երիսքաւին կոտորեցին Վրացիքն զհազառ եւ հինկ հարիւր տուն Թուրքսն: Դարձեալ ի սոյն թվին նոյն երիսքաւի եղբօր որդիքն զիւր գլուխն կտրեցին եւ տարան առ ոտն շահին թէլադրութեամբ Շահնուազ խանին Թիֆլիզու, որ եւ ինքն եւս յազգէն Վրաց էր, որպեսզի ինքն հաւատարիմ երեւեսցի առաջին շահի:

			Եւ ի սոյն թվին Թամրազ թագաւորն, որ էր տէր Կախեթու, ելեալ ի Վրաստանայ գնաց յԱսպահան առ երկրորդ Շահ Աբասն հնազանդ նմա եւ որպէս սովորութիւն է նենգաւոր ազգին Պարսից, զառաջինն սիրով եւ մեծարանօք ընկալան զնա, բայց յետոյ վասն քրիստոնեականի հաւատոյն եւ օրինացն, բանիւն իշխանացն նենգեաց զնա շահն եւ ձգեաց յերեսաց եւ առաքեաց յաքսորս յաշխարհն Ֆահրապատու ի քաղաքն Աստարապատ, եւ անդ մեռաւ: Եւ բազումք ասէին, թէ կամօք շահին դեղեալ մեռուցին զնա[692]: Գնալն Թամրազին ի Սպահան առ շահն ՌԵԺ (1661) թվին եղեւ եւ զկնի Բ (2)-ուց ամաց ի ՌԵԺԲ (1663) թվին մեռուցին զնա, այլեւ յարանցն, որք ընդ Թամրազին էին, զընտիրսն սպանին, բայց զմարմին Թամրազին հրամանաւ շահին տարան յերկիրն իւր ի Կախէթ առ թոռն նմին՝ Թամրազին:
1662	ՌՈԿԴ 1664	ՌԵԺԱ 1111	(Մ7261, Մ10202) Հայկական ի զաւելեալ թիւն ի բաց ձգեցաք եւ ըստ Լատինացւոց համեմատութեամբ գրեցաք զՓրկչին մերոյ ընդ մերոյս հաւասար[693]:
1663	ՌՈԿԵ 1665	ՌԵԺԲ 1112	(Մ3965, Եփրեմ Ղափանցի) Թուին ՌԵԺԲ (1663) Զեյթունայ առաջնորդ կատարեալ երաժիշտ Գրիգոր աստուածաբան վարդապետն հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս յիւրում մենաստանի, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի[694]:
1664	ՌՈԿԶ 1666	ՌԵԺԳ 1113	
1665	ՌՈԿԷ 1667	ՌԵԺԴ 1114	(Ե3701) Աստանօր զկայ առին վիպասանութիւնք Առաքել վարդապետին Թաւրէզացւոյ, որ ունի զպատմութիւն վատսուն ամաց: (Մ2965) Երեւեցաւ աստղ մի գիսաւոր:
1666	ՌՈԿԸ 1668	ՌԵԺԵ 1115	(Մ7261) Շահ Ապասն յԱշրաֆ մեռաւ եւ եդին թագաւոր զշահ Սէֆին եւ ետոյ փոխեալ զանունն, շահ Սուլէյման կոչեցին: Աստանօր եղեւ տպագրութիւն Աստուածաշունչ գրոց ի Լատինացւոց տնատեալ եւ համաբարբառով գլխարկեալ, զգեղեցիկ յօրինուածով՝ ի ձեռն Ոսկան վարդապետին Երեւանցւոյ:

1667	ՌՈԿԹ 1669	ՌԵԺԶ 1116	
1668	ՌՈՀ 1670	ՌԵԺԷ 1117	
1669	ՌՈՀԱ 1671	ՌԵԺԸ 1118	(Ե3701) Յայսմ ամի սաստիկ մահ եղեւ յԱնթափ, տեւեաց ամիսս Ե (5) եւ մեռան ոքիք ԿՌ (60 000): Եւ ի Բերիայ ի մի օր Ռ (1000)-էն մին պակաս մեռաւ ի քրիստոնէից եւ ի թուրքաց: Վասն որոյ համարօղքն, որ կային ի գերեզ-մանատանց հրամանաւ մեծամեծաց քաղաքին, որ ամենայն երեկոյին ծանուցանէին զքիւ մե-ռելոցն, մինչ տեսին, զի ի հազարէն մին թիւ պակաս մնաց, ընբռնեցին զմի ի շանց փողոցաց եւ կախեցին ի դուռն քաղաքին, զի թիւ հա-զարին լնանիցի: Եւ յայնմ օրէ սկսաւ մահն նուազիլ, որ տեւեաց ամիսս Զ (6), որ եւ թիւ մեռնողացն ՃՕՌ (150 000) սակաւ ինչ աւելի: Եւ գրեթէ ի քաղաքս ծովեզերայք, ոչ ոք մնաց որ ոչ եմուտ ի նմա մահ, սկսեալ յԵգիպտոսէ մինչեւ ի Կոստանդնուպօլիս:
1670	ՌՈՀԲ 1672	ՌԵԺԹ 1119	
1671	ՌՈՀԳ 1673	ՌԵԻ 1120	
1672	ՌՈՀԴ 1674	ՌԵԻԱ 1121	
1673	ՌՈՀԵ 1675	ՌԵԻԲ 1122	(Ե3701) Յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս սրբազան Խաչատուր կաթողիկոսն Սսայ զկնի ժէ (17) ամի կաթողիկոսութեան, եւ յաջորդէ տէր Սահակ:
1674	ՌՈՀԶ 1676	ՌԵԻԳ 1123	(Մ3965, Եփրեմ Ղափանցի) Թուին ՌԵԻԳ (1674) Նախճուանայ Սուրբ Կարապետու վանաց ա-ռաջնորդ Եսայի աստուածաբան վարդապետն ի Ձ (80) ամեայ գոլով առ Աստուած փոխեցաւ եւ թաղեցաւ ի Սուրբ Էջմիածինն, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի[695]:
1675	ՌՈՀԷ 1677	ՌԵԻԴ 1124	
1676	ՌՈՀԸ 1678	ՌԵԻԵ 1125	(Մ481) Ի սոյն ամի Շահնաւազ խանն Վրաց ե-լեալ Ռ (1000) արամբք մեծամեծօք եւ բազմաւ ընծայիւք ի տեսութիւն շահ Սուլէմանին եւ հա-սեալ ի Խուշկառու հիւանդացաւ եւ յետ տա-սանց աւուրց հիւանդութեան իւրում մեռաւ, սեպտեմբեր Իէ (27) սուրբ Գէորգայ պաս չորեք-շաբթին ի մուտս արեւու, իսկ զօրք, որք ընդ

			նմայ, մինչ ի դեկտեմբեր քսան եւ հինգն դեռեւս ի յԱսպահան են[696]:
1677	ՌՈՀԹ 1679	ՌՃԻԶ 1126	
1678	ՌՈՁ 1680	ՌՃԻԷ 1127	(Մ7261) Սաստիկ շարժ եղեւ յերեւան եւ ԸՌ (8000) մարդ մեռան, եւ Հաւուց թառու եկեղեցիքն եւ Գեղարդին եւ Գետարգելին փլան, եւ Տրդատայ թախտն ի Գառնի, ի հիմնէ կործանեցաւ, եւ այլ բազում եկեղեցիք եւ ապարանք յատակեցան[697]:
1679	ՌՈՁԱ 1681	ՌՃԻԸ 1128	(Մ7261) Յակոբ կաթողիկոսն դիմեաց ի մեծն Հռոմ, գնաց ի Ստամպօլ եւ անտ վաղճանեցաւ, եւ մնաց յաթոռն անտէրունչ ամս Բ (2): Յետ որոյ նստաւ Եղիազար կաթողիկոս Կլայեցի[698] յաթոռ Սուրբ էջմիածնի: (Ե3701) Յայսմ ամի վաղճանեցաւ տէր Յակոբ կաթողիկոսն յէջմիածնի, մինչ էր ի Կոստանդնուպօլիս եւ թաղեցաւ անդ, զկնի ԻԵ (25) ամաց կաթողիկոսութեան, եւ յաջորդէ տէր Եղիազար Հռոմկլայեցի ամս ԺԴ (14):
1680	ՌՈՁԲ 1682	ՌՃԻԹ 1129	
1681	ՌՈՁԳ 1683	ՌՃԼ 1130	(Մ7261) Տէր Եղիազար (կթղ.)՝ Ժ (10) : (Վ2261) Ի սոյն թվին նահատակեցաւ ի Ստամբօլ Գրիգոր ոմն ի Կարնոյ, ի գեղջէն Կանայ, մայիս ԺԹ (19):
1682	ՌՈՁԴ 1684	ՌՃԼԱ 1131	(Վ2261) Ի սոյն ամի մահտարաժամ ընդ ամենայն երկիր:
1683	ՌՈՁԵ 1685	ՌՃԼԲ 1132	
1684	ՌՈՁԶ 1686	ՌՃԼԳ 1133	
1685	ՌՈՁԷ 1687	ՌՃԼԴ 1134	(Ե3701) Այսմ ամի մահ անկաւ ի սահմանս Միջագետաց, եւ մեռան անհամար անձինք:
1686	ՌՈՁԸ 1688	ՌՃԼԵ 1135	
1687	ՌՈՁԹ 1689	ՌՃԼԶ 1136	(Մ7261, Մ10202, Մ6354) Յայսմ ժամանակի Օսմանցւոց թագաւորն Մահմէտ բանս հայհոյութեան խօսեցաւ ի Քրիստոս: Գրեաց առ թագաւորսն քրիստոնէից առ կայսրն Ալամանայ, թե որպէս ունիմ զգերեզման Աստուծոյ քոյ, նոյնպէս կամիմ իշխել ի վերայ Հռօմայ եւ ամենայն արեւմտեայց եւ անհուն բազմութեամբ յարեաւ ի պատերազմ եւ պարտեցաւ ի զօրութիւնէն Աս-

			տուծոյ եւ օժանդակութեամբ փափին եւ առեալ եղեւ Պուտում քաղաք մեծ եւ յառաջեցին մինչեւ ի Բէլրղատ քաղաք Նամցա կայսրն եւ Լէհայ գռալն եւ Վենետիկացւոց թուճն, Ա(ստուծո)վ[699]: Թագաւորն Օսմանցւոց Մէհմետն յաղթեալ ի Ֆռանկաց թագաւորէն, ընկեցաւ, եւ եդին զեղբայր նորա զՍուլէյմանն թագաւոր:
1688	ՌՈՂ 1690	ՌՃԼԷ 1137	
1689	ՌՈՂԱ 1691	ՌՃԼԸ 1138	(Մ7261) Վաղճանեցաւ Լեհացի Ստեփաննոս վարդապետն, որ բազում գրեանս թարգմանեաց Ֆռանկաց ի Հայս:
1690	ՌՈՂԲ 1692	ՌՃԼԹ 1139	
1691	ՌՈՂԳ 1693	ՌՃԽ 1140	(Մ7261) Տէր Նահապետ (կթղ.)՝ ԺԴ (14): (Մ7261) Վախճանեցաւ Եղիազար կաթողիկոսն, եւ նստաւ նորա աշակերտն Նահապետ կաթողիկոս[700]:
1692	ՌՈՂԴ 1694	ՌՃԽԱ 1141	(Վ2261) Աւետիք վարդապետ շինե(ա)ց ի հիմանէ զԽնդրակատար Սուրբ Աստուածածին վանքն[701] զարմանալի: (Մ10202) Իսկ ի ՌՃԽԱ (1692) թուին յարեաւ գազան մի մարդակեր յաշխարհն Արարատեան եւ աղջիկ մի ի Սուրբ Էջմիածնայ գեղջեն յափշտակեաց եւ այլոց տեղեաց բազում վնաս հասոյց, մինչ զի ի գիշերի ոչ ոք կարէր հանգիստ կալ, կամ այլ ուրէք երթալ, եւ ետոյ անյայտ եղեւ: Եւ յետ այնորիկ եկն մարախ բազում յամսեանն օգոստոսի, բայց ոչինչ վնասեաց, միայն եկեր սակաւ ինչ տերեւ բամբակոյ եւ էանց մինչեւ ի լեռն Արագած եւ ոչնչացեալ փուչ եղեն[702]: Ի սոյն ամի Գ (3) քրիստոնեայք ի յԱնի նահատակեցին՝ ջախջախելով կացնաւ յոտից մինչեւ զգլուխ, նոյնպես եւ ոմն սարկաւագ ի Կարս քաղաքի քարկոծեցին, յորոց վերայ լոյս ճառագայթեցաւ ի տեսիլ ամենեցուն եւ եղեւ հաստատութիւն ի վերջին դարուս հաւատացս Քրիստոսի[703]:
1693	ՌՈՂԵ 1695	ՌՃԽԲ 1142	
1694	ՌՈՂԶ 1696	ՌՃԽԳ 1143	(Վ2261) Վարդան վարդապետ շինե(ա)ց զԱմիրդօլու Սուրբ Յովաննու վանքն պարսպովն եւ խցերով:

1695	ՌՈՂԷ 1697	ՌԵԽԴ 1144	(Վ2261) Սաստիկ շարժ եղեւ ի Բաղէշ, որ շատ տներ աւիրան եւ փլան՝ ՈԺԲ (612) եւ Մ (200) մարդ մեռան ի գիւղ եւ ի քաղաք:
1696	ՌՈՂԸ 1698	ՌԵԽԵ 1145	
1697	ՌՈՂԹ 1699	ՌԵԽԶ 1146	
1698	ՌՉ 1700	ՌԵԽԷ 1147	(Ե3701) ՅԱմթեցի Մինաս վարդապետն շարադրեաց ի միում տփի զկարգս թագաւորաց Հայոց եւ Յունաց եւ յանցք յաշխարհին Հայոց:
1699	ՌՉԱ 1701	ՌԵԽԸ 1148	(Ե3701) Այսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս տէր Նահապետ կաթողիկոսն էջմիածնայ զկնի է (7) ամաց կաթողիկոսութեան եւ թաղեցաւ ի զանկակատունն Սրբոյն Շողակաթի, եւ յաջորդեաց տէր Աղէքսադր Ջուղայեցի ամս Թ (9):
1700	ՌՉԲ 1702	ՌԵԽԹ 1149	(Մ482) Արզրումայ շեյթան Իբրահիմ փաշայն ՕՌ (50 000) արամբ եկն ի վերայ Պայազիտու բերդին եւ յոլով վնաս հասոյց երկրին:
1701	ՌՉԳ 1703	ՌԵՕ 1150	(Մ3965, Եփրեմ Ղափանցի)[704] Թուին ՌԵՕ (1701) եւ օգոստոսի ԻԳ (23) յաւուր շաբաթու զկնի յերեկոյեան ժամուն ի մէջ այս էտէրնէու հրկիզութիւն եղեւ նախ եւ առաջ բերդէն ի դուրսն այրվեցաւ եւ ապա թէ հուրն մտաւ ի մէջ բերդին եւ մինչեւ ի ԺԴ (14) ժամն վառեցաւ ըզ Ա (1) Լատինացոց եւ Ա (1) Հայոց եւ ԺԵ (15) սինովայ Հրէից եւ է (7) ջամի Տաճկաց, թէ ի դուրսն եւ թէ ի մէջ բերդին եւ Ռ եւ ԵԵ (1500) տուն, ասացին, թէ այրեցաւ, թէ՛ էքմէքչու փուռն եւ թէ՛ ջաղաց, թէ՛ տներ, եւ թէ՛ մեյխանայք[705], եւ թէ՛ ամենայն արհեստաւորաց խանութներ: Իսկ յետ այսորիկ եւ ես՝ էտրէնու առաջնորդ ծերունի Եփրէմ վարդապետս այլուի ՌԵՕ (1701) թուին յիշեցի զԱստուած եւ կանգնեալ կրկին անգամ շինել ետու մէր Հայոց եկեղեցին քան ըզառաջինն այլ պատուական եւ ի դեկտեմբերի ԻԳ-ի (23) ի տօնի Դաւթայ մարգարէին օծեցի զեկեղեցին եւ եդի յանունն Սուրբ Աստուածածին:
1702	ՌՉԴ 1704	ՌԵՕԱ 1151	(Մ3965, Եփրեմ Ղափանցի) Ի ՌԵՕԱ (1702) թուին Հայոց ես Եփրէմ վարդապետս, ելի ի յէտրէնու եւ եկեալ մտի ի Սուրբ էջմիածինս յամսեանն օգոստոսի Ա (1), յաւուր շաբաթու:

			(Մ7261) Վաղճանեցաւ Իսահակ վարդապետն՝ առաջնորդ Սուրբ Առաքելոյն Թադէոսի, յուլիս ամսոյ ԺԳ (13), ի ծագիլ արշալուսին, օրն երկուշաբթի եւ թաղեցաւ ի ձախակողման խորանին ի վանս Սրբոյն Գրիգորի, որ մականուամբ Ուչքիլիսայ կոչի, որ եւ նորոգեաց կաթուղիկէն եւ զսալարկսն կտրին եւ զպարիսպն եւ զխցերն եւ զարդարեաց հոգեւոր կարգաւորութեամբ հոգեւորական[706]:
1703	ՌՉԵ 1705	ՌԵՇԲ 1152	(Մ482) Վաղճանեցաւ Կոփեցի Սարգիս վարդապետն[707]:
1704	ՌՉԶ 1706	ՌԵՇԳ 1153	
1705	ՌՉԷ 1707	ՌԵՇԴ 1154	(Ե3701) Յայսմ ամի ի դեկտեմբեր ԺԸ (18) օրն երեքշաբթի, օծեցին զՀաճընցի Յովաննէսն կաթողիկոս Սսայ: Եւ ի Հալէպ սաստիկ մահ եղեւ: Ի նոյեմբերի ԺԳ (13)-ն ի Բերիայ շարժ ահագին եղեւ եւ տեւեաց կէս ժամ եւ երկիր գոռայր իբրեւ զամպ, սակայն վնաս չեղեւ ումեք, շնորհիւն Աստուծոյ: (Մ482) Սկիզբն արար շինութեան Մակուայ բերդին Մահմատխան սուլտանն, հրամանաւ շահ Հիւսէին թագաւորին եւ յօգնականութեամբ Երեւանայ Ապըլմահմատ խանին:
1706	ՌՉԸ 1708	ՌԵՇԵ 1155	(Մ482) Տէր Աղէքսանդր (կթղ.)՝ Ը (8): Աղէքսանդր վարդապետն Ջուղայեցի նստաւ կաթողիկոս ի Սուրբ Էջմիածին:
1707	ՌՉԹ 1709	ՌԵՇԶ 1156	
1708	ՌՉԺ 1710	ՌԵՇԷ 1157	(Մ482) Վաղճանեցաւ Նահապետ հոգեւոր տէրն ի Շատիկու անապատն եւ բերաւ մարմին նորա ի Սուրբ Էջմիածին եւ եդաւ ի Սուրբ Շողակաթն[708]: (Ե3701) Այսմ ամի յունիսի Ա (1) Բերիացի Պետրոս կաթողիկոսն օծաւ ի Յովաննէս կաթողիկոսեն եւ Բ (2) ի միասին վարեցին զիշխանութիւն կաթողիկոսութեան Սսայ:
1709	ՌՉԺԱ 1711	ՌԵՇԸ 1158	
1710	ՌՉԺԲ 1712	ՌԵՇԹ 1159	
1711	ՌՉԺԳ 1713	ՌԵԿ 1160	
1712	ՌՉԺԴ 1714	ՌԵԿԱ 1161	(Մ482) Աղեքսանդր հոգեւոր տէրն գնաց ի Սպահան եւ դարձեալ եկն ի Սուրբ Էջմիածին եւ վաղ-

			ճանեցաւ: Այս ամ եւս եկն Արզրումայ փաշայն, եկն ի վերայ Պայազիտու եւ բազում վնասս հասոյց բովանդակ նահանգացն եւ յոլով աւուրս նստեալ ի վերայ բերդին, ոչ կարաց առնուլ, այլ յաղթահարեալ յետս դարձաւ յամօթալի:
1713	ՌԶԺԵ 1715	ՌԵԿԲ 1162	
1714	ՌԶԺԶ 1716	ՌԵԿԳ 1163	
1715	ՌԶԺԷ 1717	ՌԵԿԴ 1164	(Մ482) Տէր Աստուածատուր (կթղ.): Աստուածատուր վարդապետն Համատանցի նստաւ կաթողիկոս ի Սուրբ Էջմիածին:
1716	ՌԶԺԸ 1718	ՌԵԿԵ 1165	
1717	ՌԶԺԹ 1719	ՌԵԿԶ 1166	(Մ482) Վաղճանեցաւ Սարգիս վարդապետն Կաֆայեցի եւ եդաւ մարմին նորին ի սուրբ աթոռն առաքելոյն Թադէոսի:
1718	ՌԶԻ 1720	ՌԵԿԷ 1167	
1719	ՌԶԻԱ 1721	ՌԵԿԸ 1167	(Ե3701) Յայսմ ամի ելին Լէկզի կոչեցեալ ազգն եւ առին զերկիրն Աղուանից մինչեւ ի գաւառն Գեղամայ, աւերեցին եւ գերեցին եւ անմարդաբնակ արարին, զծերս եւ զպարաւունս անողորմաբար կոտորեցին եւ զտղայս եւ զաղջկունս, ընչիւք հանդերձ աւար արարին: Եւ յայսմ ամի սաստիկ մահ եղեւ ի Հալէպ, ի Քիլիս եւ ի յԱնթափ. սկսեալ յունվարի ամսոյն եւ տեւեաց մինչեւ ցվերջն յունիսի եւ ի Հալէպ օրն ԲՌ (2 000) մարդ կմեռաներ:
1720	ՌԶԻԲ 1722	ՌԵԿԹ 1168	
1721	ՌԶԻԳ 1723	ՌԵՀ 1170	(Ե3701) Յայսմ ամի Միզրէիզօղլու Մահմուտ[709] կոչեցեալն յանկարծակի ուժգնակի արշաւամբ սրընթաց երիւարօք եւ անթիւ զօրօք ել ի Ղանտահարայ, եկն եւ պաշարեաց զարքայանիստ քաղաքն Ասպահան, տարի մի եւ Ժ (10) ամիս խսարեաց զքաղաքն նեղութեամբ սովով եւ ծարաւով նուաճեցոյց զբնակիչսն նորա, մինչ որ արքայն Պարսից անկար եղեալ յակամայ կամօք համայն մեծամեծօքն ելեալ ընդ յառաջ բռնակալին Մահմուտայ եւ սիրով առեալ մուծին ի քաղաքն եւ տարեալ ի պալատն արքունի՝ նստուցին զնա յաթոռն արքայական, որ եւ թա-

			գաւորեաց ի վերայ ազգին Պարսից ամս Ը (8): (Մ482) Սաստիկ շարժ եղեւ ի քաղաքն Թարվէզ, եւ բովանդակն ամենեւին կործանեցաւ, հազիւ նշմարանք շինութեան մնաց:
1722	ՌՉԻԴ 1724	ՌՃՀԱ 1171	(Ե3701) Յայսմ ամի նորոգեցաւ Սուրբ Աստուածածնայ եկեղեցին յԱնթապու Ե (5) խորան, որ յառաջ վիմափոր այր մի էր՝ նսեմ եւ խաւար:
1723	ՌՉԻԵ 1725	ՌՃՀԲ 1172	(Ե3701) Յայսմ ամի թագաւորն Օսմանցոց սուլթան Ահմէտն էառ զԹիֆլիս եւ ինքնագլուխ իշխանն Վրաց, տէրն Թիֆլիսու թողեալ զքաղաքն եւ փախեաւ զօրօքն իւրովք: (Մ482) Առաւ ի Պարսից Մակուայ բերդն Մարք:
1724	ՌՉԻՁ 1726	ՌՃՀԳ 1173	(Ե3701) Թագաւորն Օսմանցոց, զկնի առնելոյ զՏպխիս, խսարեաց զԵրեւանու բերդն ամիսս երիս եւ գերեաց զշրջակայ եղեալ գեղորայսն, որ յոյժ էր աղէտ տեսողացն եւ լալ գերեացն: Եւ թէպէտ զօրքն Պարսից, որ բերդին, յօժարութեամբ ոչ ետուն զբերդն, այլ յակամայ, զի անտիրացեալ էին, զի միզրէիզօղլին ի Շօշ էր եւ որդի արքային Պարսից ի Մաշաթ էր, եւ զայս տեսեալ բնակիչք քաղաքաց եւ գաւառաց, որ շուրջ զՆախջուան՝ այսինքն Աստապատ, Ագուլիս, Ջահուկ եւ ամենայն տունն Երնջակայ եւ Գողթնեաց խաս անուամբ կոչեցեալ գեղորայքն, եկին առ զօրապէտն Օսմանցոց եւ առին զդրօշ նորա, տարեալ յերկիրն իւրեանց նստուցին եւ այսու հնարիւք ազատեցան ի գերութենէ հնազանդելով նմա:
1725	ՌՉԻԷ 1727	ՌՃՀԴ 1174	(Ե3701) Այսմ ամի ազգն Օսմանցոց կարի յոյժ հզօրացեալ եւ առին զքաղաքս բազումս, այսինքն՝ զՆախջուան, զԽոյ, զՇահաստան, զՀամատան, զԿանճայ, եւ զայլ ամենայն գաւառս եւ զգեօղս նոցին եւ զանթիւ անձինս ի սուր սուսերի մաշեցին եւ գերեցին զկանայս եւ զմանկըտիս, եւ ոմն այլազգի Թուրք պատմեաց, թէ ի յայնմ ժամանակին անդ էի, տեսի, որ դաշտ մի քառակուսի, կէս մղոնի չափ, որ ի գրկաց մարցն ձգեալ երեխայքն՝ նոր ծնածէն մինչեւ յերից ամաց մանկունքն, լի էր դաշտն, ոմանք լային եւ

			ոմանք մեռեալ էին, որ հանգոյն մանկանցն Բեթղահէմի կոտորեալ էին, զոր Տէր Յիսուս փրկեսցէ զհամայն մանկունս քրիստոնէից. ամէն:
1726	ՌՉԻԸ 1728	ՌՃՀԵ 1175	(Մ482) Օծաւ կաթողիկոս ամենայն Հայոց Կարապետ վարդապետն Գաղատացին[710]:
1727	ՌՉԻԹ 1729	ՌՃՀԶ 1176	
1728	ՌՉԼ 1730	ՌՃՀԷ 1177	(Ե3701) Այսմ ամի շահ Թահմազ՝ որդի արքային Պարսից, որ փախեալ էր յերեսաց միզրէյի-զօղլուն եւ եկեալ բնակեալ էր ի Մաշադ ամս Ը (8), ելեալ ի Մաշաթայ անհուն զօրօք եւ եկն ի վերայ Սպահանայ եւ պատերազմեալ ընդ զօրս Միզրէյիլին յաւուրս չորեքտասն եւ կոտորեաց ի նոցանէ բազում զօրս եւ փախոյց զնա մինչեւ ցՂանտահար, յորմէ ելեալն էր, եւ որդի արքային նստաւ յԱսպահան յաթոռն հօր իւրոյ:
1729	ՌՉԼԱ 1731	ՌՃՀԸ 1178	(Ե1801) Թվ. ՌՃՀԸ (1729) Յունքն մոլորեցան ի սուրբ Զատկին, Ծաղկայզարդին արին Զատիկ եւ եղեն ծաղր ամենայն ազգաց եւս առաւել Տաճկաց, որ բազում հայհոյանք խոսեցան, որ ոչ է յիշելի, թէ՝ դուք սուտ եք, Երմենին շիտակ է, նոցայ ելաւ նորն եւ շնորհոք սուրբ Լուսաւորչին լուսն մեզ ելաւ սուրբ Յարութեան երեկոյի է (7-րդ) ժամու կեսն: Եւ Քրիստոսի փառք, ամէն[711]: (Մ482) Վաղճանեցաւ Կարապետ հոգեւոր տէրն եւ եդաւ մարմին նորին եւս ի Սուրբ Հռիբսիմէն:
1730	ՌՉԼԲ 1732	ՌՃՀԹ 1179	(Մ482) Տէր Աբրահամ աստուածաբան վարդապետն օծաւ կաթողիկոս ամենայն Հայոց[712]: Կրկին յետ առին Պարսիկք զքաղաքն Թարվէզ: (Ե3701) Եւ ի Սուրբ Խաչի Ը (8)-րդ յաւուրն սուլթան Մահմուտն թաղծն անցաւ:
1731	ՌՉԼԳ 1733	ՌՃՁ 1180	(Մ3965) Թվին ՌՃՁ (1731) Շահն եկաւ Երեւան, ի դառնալն եկաւ Չալտրան զօրք, եկան Թաթէ Առաքելոյ վանից ոչխարն, դաւարն, թէ՛ արծաթէղեն, թէ՛ ոսկէղեն, թէ՛ խաչ, թէ՛ ոգեստ ամէն կողոպտեցին, առին, կորան: (Ե3701) Այսմ ամի Ղալաթիու Սուրբ Լուսաւորչի եկեղեցին այրեցաւ:
1732	ՌՉԼԴ 1734	ՌՃՁԱ 1181	(Մ3965) Թվին ՌՃՁԱ-ին (1732) հաշտութիւն ար(արին) Օսմանցին եւ Կարմրագբակն, որ մա-

			կանուամբ Ղզլպաշ կոչին:
1733	ՌՉԼԵ 1735	ՌՃՉԲ 1182	(Ե3701) Այսմ ամի Ղալաթիու Սուրբ Լուսաւորչի եկեղեցին, որ այրեցաւ, դարձեալ նոր, ի հիմանէ շինեցաւ պայծառ, քան զառաջինն:
1734	ՌՉԼԶ 1736	ՌՃՉԳ 1183	(Մ482) Վաղճանեցաւ Աբրահամ կաթողիկոսն եւ եդաւ մարմին նորայ ի Սուրբ Գայիանէ: Օծաւ կաթողիկոս երկրորդ Աբրահամ վարդապետն Թաքրտաղցի[713]:
1735	ՌՉԼԷ 1737	ՌՃՉԴ 1184	(Մ3965) Թուին ՌՃՉԴ (1735) Պարսից զօրավարն ասպատակեաց երկիրն Բագրեւանդայ եկեալ հինառուքն հասին վանքն Սրբոյն Գրիգորի[714], իսպառ բնաջինջ արարին միաբանք ուխտին, անդ էր առաջնորդ մեծի Առաքելոյն Թադէոսի Յոհաննէս աստուածաբան վարդապետն, որ նահատակեցաւ Ժ (10) միաբանօվ, որոց յիշատակն աւրհնութեամբ եղիցի եւ աղօթիւք նոցին Տէր մեզ ողորմեսցի:
1736	ՌՉԼԸ 1738	ՌՃՉԵ 1185	(Ե3701) Այսմ ամի վաղճանեցաւ տէր Ղուկաս կաթողիկոսն Սսայ զկնի Ե (5) ամաց կաթողիկոսութեան եւ յաջորդէ զաթոռն եղբայրն նորին տէր Միքայէլ ամս Ի (20): Ի լրման ՃԵ-ին (85, իմա՝ 1736) վաղճանեցաւ Ղուկասն եւ ՃԶ-ին (86, իմա՝ 1737) նստաւ Միքայէլն:
1737	ՌՉԼԹ 1739	ՌՃՉԶ 1186	(Ե3701) Այսմ ամի օծեցաւ Միքայէլ կաթողիկոսն Սսայ ի տէր Յովանէս կաթողիկոսէն, որ հրաժարեցաւ ի կաթողիկոսութիւն Ղուկասու, զի դեռ կենդանի էր եւ նստէր ի Հաճնայ վանքն:
1738	ՌՉԽ 1740	ՌՃՉԷ 1187	
1739	ՌՉԽԱ 1741	ՌՃՉԸ 1188	
1740	ՌՉԽԲ 1742	ՌՃՉԹ 1189	
1741	ՌՉԽԳ 1743	ՌՃՂ 1190	
1742	ՌՉԽԴ 1744	ՌՃՂԱ 1191	(Ե3701) Այսմ ամի արք Բ (2) ի Բերիոյ, ազգաւ Յոյնք, գնացին ի մեծն Հռոմ յուխտ սրբոց առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի եւ առին անդ զաստիճան կուսակրօն քահանայութեան եւ դարձան եկին ի Բերիայ, եւ առաջնորդն նոցա ոչ ընդունեաց զնոսա, այլ փոխանակ մխիթարութեան բանիւ առնելով արտաքսեաց զնոսա յեկեղեցոյն, եւ մինն, որ կարճամիտ էր, ուրացաւ

			զՔրիստոս եւ եղեւ ֆախի եւ մօլլայ, եւ միւսն յամօթոյն եթող զքաղաքն եւ փախեաւ:
1743	ՌՉԽԵ 1745	ՌԵՂԲ 1192	(Ե3701) Յայսմ ամի ի Հալէպ եւ ի շրջակայ քաղաքացն՝ ի Քիլիս, յԱզազ եւ յԱնթապ եւ ի Պէրէճուկ, հանդերձ գեղորէիւք, եղեւ սով եւ մահ ի միասին, զի ի Բերիայ Ռ (1000) մեռաներ ի միում աւուր, եւ յԱնդապ՝ ԴՆ (400) ի Թուրքաց եւ ի քրիստոնէից: Եւ հացին լիտրն, որ ունի զծանրութիւն էՆ (700) եւ Ի (20) տրամից, ժէ (17) փարայ ծախէին:
1744	ՌՉԽԶ 1746	ՌԵՂԳ 1193	
1745	ՌՉԽԷ 1747	ՌԵՂԴ 1194	(Ե3701) Այսմ ամի Խոզագլուխ մակկոչեալն Գերմանիկեցի Կարապետ վարդապետն ի յԱնթափ քաղաքէ, զՔրիստոս ուրացաւ եւ գնաց ի Գերմանիկ, ամուսնացաւ ընդ կնոջ եղբօրն իւրոյ, զի եղբայրն մեռեալ էր, եւ զկնի միոյ ամի էառ զկին մի այլազգի ի վերայ նոյն կնոջն: Եւ յետ երից ամաց թողեալ զերկուսն եւ անյայտ եղեւ, եւ ոչ ոք գիտաց այնուհետեւ զուր գնալն:
1746	ՌՉԽԸ 1748	ՌԵՂԵ 1195	
1747	ՌՉԽԹ 1749	ՌԵՂԶ 1196	
1748	ՌՉՕ 1750	ՌԵՂԷ 1197	
1749	ՌՉՕԱ 1751	ՌԵՂԸ 1198	
1750	ՌՉՕԲ 1752	ՌԵՂԹ 1199	
1751	ՌՉՕԳ 1753	ՌՄ 1200	
1752	ՌՉՕԴ 1754	ՌՄԱ 1201	
1753	ՌՉՕԵ 1755	ՌՄԲ 1202	(Ե3701) Զկնի տեառն Մինասայ յԱնկընցոյ յաջորդէ տէր Աղէքսանդր Կեսարացի ամս Բ (2)[715]:
1754	ՌՉՕԶ 1756	ՌՄԳ 1203	(Ե3701) Այսմ ամի ի Կեսարիայ ոմն այլազգի Տաճիկ, դաւանեաց զՔրիստոս Որդի Աստուծոյ, վասն որոյ՝ խելացնոր եղեւ ասացին Տաճիկքն, եւ ըմբռնեալ եդին զնա ի բերդն ժամանակ ինչ: Եւ նա ի խոստովանել ոչ դադարեցաւ, եւ նոքա շատ ողոգանօք եւ սպառնալեօք ջանացին դարձուցանել զնա, եւ ոչ կարացին: Ապա վճիռ մահուան հատին եւ ի բերդն խեղդեալ կորուսին զմարմին նորա, զի մի՛ քրիստոնեայք պատվեն զնըշխարս նորա:
1755	ՌՉՕԷ 1757	ՌՄԴ 1204	

1756	ՌՉԾԸ 1758	ՌՄԵ 1205	(Ե3701) Աստ Բ (2) ամս անտերունջ մնաց Սուրբ էջմիածնայ յաթոռն, զի զկնի վաղջանման Աղէքսանդրի յաջորդեաց տէր Իսահակ Ահագին կոչեցեալն, բայց ոչ օծաւ եւ ոչ գնաց էջմիածին, այլ եկաց մնաց ի Կարին, ի վանքն, եւ միաբանք սրբոյ յաթոռոյն առաքեցին նմա հրաւիրակ զՅակոբ վարդապետն, եւ նա կամաւ հրաժարեցաւ, եւ ետ զկնիք կաթողիկոսութեան զՅակոբ վարդապետն, որ եւ գնաց օծեցաւ ի Սուրբ էջմիածին ի ՌՄԷ (1758) թվին Հայոց:
1757	ՌՉԾԹ 1759	ՌՄՁ 1206	(Ե3701) Նահատակեցաւ Միքայէլ կաթողիկոսն Սսայ թէլադրութեամբ Եղիազար վարդապետին[716], որ է թոռ հօր եղբօր Միքայել կաթողիկոսին, զի կամեցաւ յափշտակել զկաթողիկոսութիւնն եւ ոչ կարաց, վասն որոյ կաշառս ետ պարոնին Սսայ եւ ետ սպանանել զտէրն իւր հանգոյն Յուդայի, եւ սուգ զգեցոյց Տունն Կիլիկիոյ, եւ զայս տեսեալ իշխանքն եւ աթոռակալքն վիճակին Կիլիկիոյ ընտրեցին զեղբայրն նահատակին՝ զԳաբրիէլ վարդապետն, եւ օծեցին կաթողիկոս[717], եւ զԵղիազարն մերժեցին եւ զայլս տեսցես ի տեղին, ի պատմութիւն նոցա: Եւ յայսմ ամի ոմն Տաճիկ ի Սիս Եօնուզ անուն, որ բնակէր մերձ Սրբոյն Յակոբայ կոչեցեալ եկեղեցին, սա ի վաղուց հետէ կամէր զեկեղեցին զայն մզկիթ առնել, եւ ոչ կարէր յահէ Միքայէլ կաթողիկոսին, իսկ յորժամ նահատակեցաւ Միքայէլ կաթողիկոսն եւ մնաց աթոռն անտերունջ, եւ Գաբրիէլ կաթողիկոսն ի Բիւզանդ էր եւ դեռ չէր օծվեր, ժամ գտեալ չարութեամբ իւրոյ իւրացուցեալ զսուրբ եկեղեցին եւ արար ճամի եւ մէջիթ:
1758	ՌՉԿ 1760	ՌՄԷ 1207	(Ե3701) Յայսմ ամի յԱնտիոք շարժ եղեւ եւ փլաւ բազում տեղ, մանաւանդ հնագոյն պարիսպքն: Այսմ ամի ի կենդանութեան Իսահակայ նորին հրամանաւ նստի էջմիածին տէր Յակոբ կաթողիկոս ամս Ե (5): Եւ այսմ ամի պատրիարգն Կոստանդնուպօլսոյ Յակոբ վարդապետն՝ աստուածաբան կոչեցեալն, արար զգիրքն, որ կոչի Գանձարան ծանուցմանց Դ (4) հատորս:

1759	ՌՉԿԱ 1761	ՌՄԸ 1208	(Ե3701) Յայսմ ամի սով սաստիկ եղեւ ի Կեսարիոյ մինչեւ յԱմիթ, մինչ զի Ա (1) լիտր հունքէրի ալիւրն Ա (1) ոսկի եղեւ եւ ի յԱմիթ զմարմինս անասնոց անխտիր կերան, եւ բազումք ի սովոյն մեռանէին ի փողոցս եւ յանցս ճանապարհաց:
1760	ՌՉԿԲ 1762	ՌՄԹ 1209	(Ե3701) Յայսմ ամի յաւուր աւագ տօնից այրեցաւ Կեսարիոյ չարսուն[718], եւ յայսմ ամի ի Սիս Կիլիկեցոց շարժ եղեւ ի Վարդեւարի պահոցն, եւ փլաւ Սրբոյն Սոփիայի զանկակապուրճին կէսն եւ Սուրբ Աստուածածնայ մատուռն, որ ի Զապէլ դշխոհոյն շինեալ էր, յարեւմտից կողմանէ սրբոյն Սոփիայի եւ ի կողմն դարպասին[719]:
1761	ՌՉԿԳ 1763	ՌՄԺ 1210	(Ե3701) Յայսմ ամի ի հոկտեմբեր Լ (30) այրեցաւ դարձեալ Կեսարիոյ չարսին: Այսմ ամի ի Սիս քաղաքի ոմն ժանտ այլազգի, որ բնակէր մերձ եկեղեցոյն, որ Սուրբ Վասիլ[720] կոչեն, շինեաց զտունն իւր կից եկեղեցոյն եւ զեկեղեցին իւրացեալ արար մարագ յարդի:
1762	ՌՉԿԴ 1764	ՌՄԺԱ 1211	
1763	ՌՉԿԵ 1765	ՌՄԺԲ 1212	(Ե3701) Զկնի տեառն Յակոբայ, որ կալաւ զաթոռն ամս Ե (5) յաջորդէ տէր Սիմէոն ամս... ի Սուրբ էջմիածին[721]: Եւ յայսմ ամի սաստիկ մահ եղեւ ի Հալէպ եւ Անթէպ եւ ի Գերմանիկ, եւ ի Տրովաթայ շինեցին պարիսպ գերեզմանաց իւրեանց, զի որոշիցի ի փողոցացն:
1764	ՌՉԿԶ 1766	ՌՄԺԳ 1213	(Ե3701) Յայսմ ամի յերկիրն Հզուաց սպանեցին կտրատելով զԱբրահամ վարդապետն առաջնորդ Սրբոյ Կոնոնոսի վանիցն:
1765	ՌՉԿԷ 1767	ՌՄԺԴ 1214	
1766	ՌՉԿԸ 1768	ՌՄԺԵ 1215	
1767	ՌՉԿԹ 1769	ՌՄԺԶ 1216	(Ե3701) Սիմէոն կաթողիկոսն շինեաց եւ նորոգեաց զպարիսպն սրբոյ աթոռոյն էջմիածնայ սրբատաշ քարիւք, քանզի առաջինն հողաշէն էր: Եւ զգիւղն կից էր էջմիածնայ՝ Եճ (500) տուն՝ հանդերձ եկեղեցեաւն, փլոյց եւ հեռացոյց ի վանիցն յերկիւղէ թշնամեացն, զի մի ի գիւղն ամրացեալ եւ մարտնչին ընդ սրբոյ աթոռոյն, զի շահ ոչ գոյր ազգին Պարսից, եւ երկիրն ունայն

			եւ իւրաքանչիւր խանն զիւր տեղին կալեալ էր: Եւ յայսմ ամի ի Բաղէշ սպանեցին զԲաղիշեցի Աւետիք վարդապետն:
1768	ՌՉՀ 1770	ՌՄԺԷ 1217	
1769	ՌՉՀԱ 1771	ՌՄԺԸ 1218	
1770	ՌՉՀԲ 1772	ՌՄԺԹ 1219	
1771	ՌՉՀԳ 1773	ՌՄԻ 1220	
1772	ՌՉՀԴ 1774	ՌՄԻԱ 1221	(Ե3701) Այսմ ամի հունվարի Ժ (10)-ին մեռաւ սուլթան Մուստաֆայն եւ նստաւ սուլթան Հէմիտ եւ արար զհաշտութիւն ի Մոսկոֆու թագաւորին: Եւ յայսմ ամի ի դեկտեմբերի ամիսն Բերիոյ փաշայն նեղացաւ ի քրիստոնէից անչափ պաճուճմանց հանդերձից, եւ ի լրբենի համարձակութեան նոցա վերացոյց զփակէղն ի գլխոց նոցա եւ ի գլխոց Հրէիցն եւ հրամայեաց նոցա կտակ ագանէլ եւ սեւ հանդերձ զգենուլ:
1773	ՌՉՀԵ 1775	ՌՄԻԲ 1222	(Ե3701) Այսմ ամի Ապուտէհէպ մականուանեալն, որ է ինքն Միամատ պէկ՝ փեսայն Ալի պակին, դարձեալ եկն ի Յոպպէ եւ խսարեաց զնա քառասուն աւուր:
1774	ՌՉՀԶ 1776	ՌՄԻԳ 1223	(Ե3701) Ի ԺԶ (16) մարտի եկն ձիւն ի Բերիա:
1775	ՌՉՀԷ 1777	ՌՄԻԴ 1224	
1776	ՌՉՀԸ 1778	ՌՄԻԵ 1225	(Ե3701) Այսմ ամի անյուղայ ժողովուրդս Հայոց, որք բնակեալ են ի Մելիտինէ քաղաքի, ետուն կաշառս բռնաւորի քաղաքի իւրեանց, զի սպանցէ զառաջնորդն նոցա, եւ նա հանգոյն Պիղատոսի, առ ի հաճիլ զմիտս նոցա, կախեաց ի փայտէ զվարդապետն, որում անուն էր Ստեփանոս, որ էր Մելտինացի, յամսեանն…

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Ժամանակագրության վերնագրում տարբեր ձեռագրերում ընդմիջարկություններ են կատարվել. հնագույն ձեռագրում՝ Մ5619, «Սամուէլի քահանայի» բառերից հետո այլ գրով ավելացվել է «Անեցւոյ»: Հնությամբ երկրորդ ձեռագրում՝ Մ3613, «ծայրաքաղ» բառից հետո շարունակված է՝ «քաղաքաւ Անեցի»: Արդեն ավելի ուշ շրջանի ձեռագրերում «Անեցին» տեղ է գտել վերնագրի սկզբում, ինչպես օրինակ՝ Մ1865՝ «Սամուէլ յԱնեցւոյ հաւաքմունք…»: Այլ մատյաններում հանդիպում են՝ Մ1486՝ «Սամուէլ քահանաի Կաթողիկեցւոյ...», Մ1717՝ «Սամուէլի մարգարէի քահանայի…», Մ1484՝ «Տէր Սամուէլի պատմագրի…», Վ721՝ «Սամուէլի քահանայի լուծումն եւ հաւաքումն ի գրոց…»: Մ3681-ում՝ «ի գրոց պատմագրաց»-ը դարձել է «ի հնոց պատմագրաց»: Հետաքրքրական է, որ ընդօրինակողներն այսքան ազատորեն են վարվել ժամանակագրության վերնագրի հետ:

[2] Գործք, Ա, 7:

[3] Նոյի կնոջ Նոյեմզար անունը ժողովրդական ավանդության ծնունդ է: Որքան մեզ հայտնի է, Սամվել Անեցին հայ պատմիչներից առաջինն է այդ անունը տալիս:

[4] Հայ հեթանոսական Աստղիկ աստվածուհու անունը Նոյ նահապետի հետ է կապվել Վարդավառի տոնի քրիստոնեացման ընթացքում: Ինչպես նշում է Ա. Ղանալանյանը. «Բուն հեթանոսական Վարդավառի տոնը քրիստոնեական եկեղեցին փոխարինել է Քրիստոսի պայծառակերպության տոնով՝ պահպանելով, սակայն, ոչ միայն նրա հին անունը, այլեւ այն ծեսերն ու արարողությունները, որ կատարվել են նրա ժամանակ՝ հարմարեցնելով դրանք (ջուր սրսկելը, աղավնի բաց թողնելը) բիբլիական ջրհեղեղի եւ Նոյան աղավնու հետ, իսկ Աստղիկ դիցուհուն էլ դարձնելով Նոյի դուստր…» (Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երեւան, 1969, էջ ՁԹ, տե՛ս նաեւ Ս. Հարությունյան, Հին Հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երեւան, 2001, էջ 43):

[5] Հմմտ. Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի (նմանահանութիւն), Երեւան, 1991, էջ 20, այսուհետեւ՝ Մովսէս Խորենացի):

[6] Հմմտ. Ծննդ., Ժ, 30՝ «Եւ եղեւ բնակութիւն նոցա ի Մասեաց մինչեւ ի գալ ի Սովփերա լեառնն արեւելեայց»:

[7] Այս հատվածի մասին Ա. Տեր-Միքելյանը ծանոթագրություն է կատարել. «Շամիրամի մասին այս կտորը բաւական հետաքրքրական է եւ ուշադրութեան արժանի… Սամուէլի պատմածը ժողովրդական գոյն ունի» (Անեցի, 1893, էջ 16, 250): Թիլ - հողաբլուր, բառի եւ կիրառության մասին տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երեւան, 1973, էջ 183:

[8] Այս հատվածի լրացումների մասին, որ հավանորեն պատկանում են Հեթում Կոռիկոսցուն (Մ1898, 14ա-14բ) Ա. Տեր-Միքելյանը ծանոթագրում է՝ «Այս աւելորդաբանութիւնները չկան այլոց մէջ» (Անեցի, 1893, էջ 19):

[9] Հեղինակը նկատի ունի Իլիոն-Տրոյայի գրավումը՝ Տրոյական պատերազմի ավարտը, որը ժամանակակից գիտությունը թվագրում է Ք. ա. 1170-ական թվականներով: Այս դեպքը, որպես ժամանակագրական կողմնորոշիչ Սամվել Անեցին հիշատակում է նաեւ հետագա շարադրանքում:

[10] Տե՛ս Դ Թագ., ԺԸ, 4:

[11] Տե՛ս Ծննդ., ԽԹ, 10:

[12] Հերոդոտոսն այս մասին գրում է իր Պատմության սկզբնամասում (Կլիո, 8-14)՝ նշելով, որ Կանդավլես թագավորը, իր կնոջ գեղեցկությամբ հպարտանալով, իր թիկնապահ Գյուգեսին ստիպում է, որ նա գաղտնի կնոջը մերկացած տեսնի: Այդ բանը նկատելով եւ իմանալով, որ ամուսինն է դա կազմակերպել, կինը Գյուգեսից պահանջում է, որ նա սպանի Կանդավլեսին ու իր հետ ամուսնանալով՝ թագավոր դառնա, այլապես ինքը նրան սպանել կտա: Գյուգեսը որոշ երկմտանքից հետո համաձայնում է. սպանում է թագավորին ու ամուսնանալով նրա կնոջ հետ՝ դառնում է թագավոր (Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երեւան, 1986, էջ 7-10):

[13] Այս հատվածը բառացի, շարունակությունը՝ համառոտված, քաղված է Մովսես Խորենացուց (Մովսէս Խորենացի, էջ 39-40):

[14] Մովսես Խորենացու մոտ, հավանաբար, եղել է մեկ անուն՝ Վաստամկար, թեեւ ձեռագրերի մի մասում այն տրոհված է (Վաստամ, Կար): Իսկ Շարունակության մեջ Խորենացու հայտնած Գոռակ, Գզակ անունները Սամվել Անեցու մոտ դարձել են Գռակ, Գլակ (Մովսէս Խորենացի, էջ 62):

[15] Մովսես Խորենացու հրատարակության մեջ՝ «Սարասարայ» (Մովսէս Խորենացի, էջ 116): Կարծում ենք՝ ճիշտը Սանասարն է:

[16] Սամվել Անեցին հետեւյալ հաշվարկն է ներկայացնում՝ 2242 + 942 + 505 + 480 + 511 + 518 = 5198:

[17] Սամվել Անեցու Ժամանակագրության առաջին մասի ավարտից հետո՝ մինչեւ աղյուսակավոր երկրորդ մասին անցնելը, մի շարք ձեռագրերում գրիչներն իրենց հիշատակարաններն են թողել: Այս հատվածում կատարվել են նաեւ որոշ հավելումներ, իսկ Ե1288 ձեռագրում առաջին մասի վերջին բառից («անյապաղ») հետո ներմուծված է մի քանի նյութ (231բ): Դա հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ ձեռագիրը բավական հին է՝ գրված 1273 թ. Նոր Գետիկ վանքում: Առաջինը փոքր միավոր է՝ հետեւյալ սկսվածով. «Ի սփիւռս լեզուք եւթանասուն եւ երկու, իսկ որք դպրութիւն գիտեն եւ գրով վարին՝ երկոտասան…»: Դրանից հետո նույն էջում սկսվում է մեկ ուրիշը, որի սկզբում նշված է. «Ի քաշունէն քաղածու», որին հաջորդում է կարմիրով գրված վերնագիրը՝ «Ի ժամանակս Մահմեդի հասեալ առ մեզ»: Սույն բնագիրը հենց այս մատյանից հրատարակել է Բ. Կյուլեսերյանը՝ ենթադրելով, թե այն հատված է Մխիթար Անեցու կորած պատմությունից (Բ. Կիւլեսերեան, Իսլամը հայ մատենագրութեան մէջ, Վիեննա, 1930, էջ 190-192): Հեղինակի խնդրին հատուկ անդրադարձել է Ն. Ակինյանը, որը նշում է

բնագրի՝ իրեն հայտնի ուշ շրջանի եւս երկու ընդօրինակության մասին, ապա փորձելով պարզել հեղինակին՝ ոճից ելնելով՝ գրվածքը վերագրում է Շապուհ Բագրատունուն: Ենթադրության մի կռվան էլ նա համարում է «ի Քաշունէ» եւ «ի Շապուհէ» արտահայտությունների նմանությունը (Ն. Ակինեան, «Ի Քաշունէ քաղածու» գրուածքին հեղինակը, Հանդէս ամսօրեայ, 1930, էջ 620-624): Ն. Ակինյանը նաեւ նշում է, որ «քաշունի» նշանակում է ասորական գրով արաբերեն գրվածք (նույն տեղում, էջ 623): Մեր կարծիքով նշված բնագրի սկզբում հենց այդ արտահայտությունն է օգտագործված: Հ. Մարգարյանը նախորդ հետազոտողների տեսակետներին անդրադառնալուց հետո գրում է. «Դժվար է ասել, թե ե՞րբ է թարգմանվել եւ ո՞վ է թարգմանել այս երկը, ամբողջությա՞մբ, թե՞ թերի է այն հասել մեզ» (Մխիթար Անեցի, առաջաբան, էջ 26):

Ե1288 ձեռագրում քաշունից քաղված հատվածը հասնում է մինչեւ 238ա թերթի կեսը, որտեղ ձեռագրի Մխիթար գրչի փոքր հիշատակագրությունն է: Դրան հաջորդող նյութը վերնագրված է «Սակս աւերման Իլիոնի եւ շինելոյն Հռոմայ», որը շարունակվում է հաջորդ էջում, իսկ 239բ թերթից զետեղված է տոմարագիտական նյութ (սկիզբը՝ «Ի Յայտնութենէն մինչեւ ի Տեառնընդառաջին լրումն ԼԹ (39) աւր է, իսկ անտի մինչեւ ի գարնանայ մուտն ԼԷ (37) աւր է» եւ այլն): 242ա թերթի միջնամասում կարմիրով գրված է՝ «Յոհաննու քահանայի», որին հաջորդում են Հովհաննես Սարկավագի եւ Սամվել Անեցու ժամանակագրություններից քաղված տեղեկություններ՝ հասնելով մինչեւ 1198 թ. (244բ):

[18] Տեղեկությունը հիմնականում պարականոն բնույթ ունի:

[19] Սամվել Անեցու ժամանակագրական աղյուսակների սկզբնամասի հիմնական տեղեկությունները՝ Քրիստոսից մինչեւ 329 թվականը, բառացի կամ որոշ համառոտումներով քաղված են Եւսեբիոս Կեսարացու Քրոնիկոնից: Այստեղից են վերցված հռոմեական կայսրերի եւ հրեա թագավորների տարիները՝ ժամանակագրական սյունակներով, նաեւ Երուսաղեմի, Ալեքսանդրիայի եւ Անտիոքի եպիսկոպոսների մասին բոլոր տեղեկությունները (տե՛ս Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ ժամանականք, մասն Բ, Վենետիկ, 1818, էջ 260-304, այսուհետեւ՝ Եւսեբիոս Կեսարացի):

[20] Աղբյուրը Հեթում Կոռիկոսցու 1296 թ. ֆրանսերենից թարգմանած «Պատմութիւն խրոնիկոնին» ժամանակագրությանն է, որտեղ 1 թվականի դիմաց կարդում ենք. «Յառաջին ամի ծնընդեանն Քրիստոսի եղեւ գալ մոգուցն յերկրպագութիւն, եւ ընծայիլն Տեառն ի տաճարն, եւ գնալն յԵգիպտոս» (Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դդ., հ. 2, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երեւան, 1956, էջ 37):

[21] Քաղված է Հեթում Կոռիկոսցու թարգմանած «Պատմութիւն խրոնիկոնին» գործից (տե՛ս Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 37):

[22] Ըստ Մովսես Խորենացու՝ Աբգարը ոչ թե Հերովդեսի եղբայր Փերուրին է սպանել, այլ վերջինիս որդի Հովսեփին (Մովսէս Խորենացի, էջ 144):

[23] Հավանաբար ավետարանական Սիմէոն ծերունու մասին է:

[24] Այս մասին հանգամանորեն պատմում է Մովսես Խորենացին (Մովսէս Խորենացի, էջ 144):

[25] Սամվել Անեցին ժամանակագրական աղյուսակներում Պարսից Արշակունիների գահակալության թվերն ու տարիները, փոքր տարբերություններով, ներկայացնում է՝ ըստ Մովսես Խորենացու եւ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի (տե՛ս Լ. Շահինյան, Մովսես Խորենացի. պատմություն եւ ժամանակագրություն, Երեւան, 1989, էջ 173-174, Ստեփանոսի Տարօնեցւոյ Պատմութիւն տիեզերական, աշխատասիրութեամբ՝ Ստ. Մալխասեանցի, ՍՊբ, 1885, էջ 31): Սակայն այդ թվականները զգալիորեն տարբերվում են նշված գահակալների՝ այժմ գիտության մեջ ընդունված տարեթվերից:

[26] Տե՛ս Մովսէս Խորենացի, էջ 145-146:

[27] Հմմտ. Եւսեբիոս Կեսարացի, էջ 262-264:

[28] Հմմտ. Եւսեբիոս Կեսարացի, էջ 264-266:

[29] Սամվել Անեցին ժամանակագրական աղյուսակներում Հայոց Արշակունիների գահակալության թվերն ու տարիների քանակը վերցրել է Մովսես Խորենացուց, ըստ որի՝ Սանատրուկը գահակալել է 30 տարի՝ 37-67 թթ. (տե՛ս Լ. Շահինյան, Մովսես Խորենացի, էջ 201): Արդի պատմագրության մեջ Սանատրուկ Ա-ի գահակալության տարիներն են համարվում 34-35 թթ., Սանատրուկ Բ-ինը՝ 88-109 թթ. (Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 1, Երեւան, 1971, էջ 924-925):

[30] Հմմտ. Եւսեբիոս Կեսարացի, էջ 274:

[31] Համառոտված է Մովսես Խորենացու Պատմությունից (Մովսէս Խորենացի, էջ 176-177):

[32] Տե՛ս Մովսէս Խորենացի, էջ 174, 187:

[33] Հմմտ. Եւսեբիոս Կեսարացի, էջ 292:

[34] Ժամանակագրության վաղարշապատյան հրատարակության մեջ այս կայսեր անունն ու տարեթվերը բաց են թողնված (Անեցի, 1893, էջ 59): Դա նկատել է Լ. Շահինյանը, որը, սակայն, կարծել է, թե վրիպողը Սամվել Անեցին է եղել, որ մոռացել է Եւսեբիոսից այդ հատվածն արտագրել (Լ. Շահինյան, Մովսէս Խորենացի, էջ 17): Մինչդեռ Սամվել Անեցու բոլոր ձեռագրերում այն առկա է:

[35] Տե՛ս Մովսէս Խորենացի, էջ 199:

[36] Համառոտված է Մովսես Խորենացու Պատմությունից (Մովսէս Խորենացի, էջ 200):

[37] Քաղված է Սեբեոսի Պատմությունից (Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Երեւան, 1979, էջ 58): Գ. Աբգարյանը ենթադրել է, որ Կոնակի մասին հատվածը հետագայի հավելում է Սամվել Անեցու ժամանակագրության մեջ (Գ. Աբգարյան, Մատենագրական նորույթներ, ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1964, N 1, էջ 83, 84): Սակայն այն առկա է ժամանակագրության բոլոր հնագույն ձեռագրերում:

[38] Սամվել Անեցին այստեղ նկատի ունի Եւսեբիոս Կեսարացուն եւ Մովսես Խորենացուն, որոնց գործերից օգտվել է իր ժամանակագրության առաջին մասը գրելիս եւ նշում է առաջաբանում. «Եւ ի յոլովիցն առաւել զերկոքումքս թեւակոխեսցուք, ձեռնտու ունելով զնոսա, զԵւսեբի ասէմ եւ զՄովսէս Խորենացի»:

[39] Մոտավորապես նման վերնագիր ունի Մովսես Խորենացու պատմության երկրորդ գրքի ՁԲ գլուխը (տե՛ս Մովսէս Խորենացի, էջ 224-225):

[40] Վաղարշապատի եկեղեցիների հիմնադրման մասին է՝ Սուրբ Կաթողիկեն՝ Մայր տաճարը եւ ս. Հռիփսիմե ու ս. Գայանե նահատակ կույսերի հնագույն վկայարանները:

[41] Հայոց ամենանշանավոր վանքերից է Մշո Ս. Կարապետ (Գլակա) վանքը, որը քանդված հեթանոսական մեհյանի տեղում հիմնել է սուրբ Գրիգոր Լուսավորիչը, եւ որը գործել է մինչեւ 1915 թվականը: Գլակավանք է կոչվել առաջին վանահայր, ասորի Ձենոբ Գլակի անունով:

[42] Գառնիի «հովանոցի» կառուցումը Տրդատ Գ-ին վերագրելու ավանդությունը գալիս է դեռեւս Մովսես Խորենացուց. «...շինեալ եւ տուն հովանոց... ի համար քեռ իւրոյ Խոսրովիդխտոյ...» (Մովսէս Խորենացի, էջ 241-242): Իսկ «սարաւոյթ Տրդատայ» արտահայտությունն առաջին անգամ հանդիպում է Կիրակոս Գանձակեցու մոտ. «Այր ոմն առաքինի... Յովհաննէս անուն ի քաղաքագիւղէն Գառնւոյ, ուր զարմանալի սարաւոյթն է Տրդատայ» (Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երեւան, 1961, էջ 348):

[43] Միմյանց հաջորդած այս երեք հայրապետներից միայն Մաշտոց Ա Եղիվարդեցու համար է վկայված Գառնիում թաղված լինելը (Ստեփանոս Տարոնեցի, էջ 160, Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 1184) եւ անգամ պահպանվել է յոթ ամիս աթոռակալած այս կաթողիկոսի Հայոց ՅԽԶ (897) թվակիր արձանագրությամբ տապանաքարը (Հ. Պետրոսյան, Գառնին 9-14-րդ դարերում, Երեւան, 1988, էջ 27): Բայց ծնունդով գառնեցի էր նրան նախորդած Գեւորգ Բ Գառնեցի կաթողիկոսը (877-897): Հովհաննես Դրասխանակերտցին (898-929) հայտնում է, որ նա մահացել է Վասպուրականում եւ թաղվել «ի քնարանի Ձորոյ վանաց», այնուհետեւ նշելով Մաշտոցի կարճատեւ հաջորդելը, նրա թաղման վայրի մասին լռում է (Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ. եւ ծանոթագր. Գ. Թոսունյանի, Երեւան, 1996, էջ 184-187): Հովհաննեսն ինքն էլ վախճանվել է Վասպուրականում, բայց թաղման տեղի մասին ստույգ վկայություն չկա (Մ. Օրմանեան, նույն տեղում, էջ 1240-1242): Հետաքրքիր է, որ Կիրակոս Գանձակեցին նրան համարում է ծնունդով գառնեցի՝ «Սա էր այր իմաստուն եւ բանաւոր ի քաղաքագեղջէն Գառնւոյ, ուստի սուրբ հայրապետն Գէորգ էր» (Կիրակոս Գանձակեցի, էջ 82): Եթե հավատանք Նաթանայել Հավուցթառեցուն, որ այս երեք հայրապետները թաղված են եղել Գառնիում, ապա կարելի է ենթադրել, որ ինչպես Մաշտոց Եղիվարդեցու մասին է գրված,

թե հողին են հանձնել «նշխարք ոսկերաց նորա» (Ասողիկ), կարող էին նույն կերպ Գառնի փոխադրած լինել Գեւորգ Գառնեցու մասունքները, մանավանդ որ նա սերտորեն կապված էր ծննդավայրի հետ: Այդ դեպքում հասկանալի կդառնա նաեւ, թե ինչու է Գառնիում թաղվել այս բնակավայրի հետ ուղղակի կապ չունեցող, նրան հաջորդած կաթողիկոսը՝ Մաշտոց Եղիվարդեցին: Հնարավոր է, որ նույն ձեւով Գառնի են հասել նաեւ այս կողմերի ծնունդ Հովհաննես Դրասխանակերտցու (Ասողիկը նրան կոչում է Դվնեցի) մասունքները: Ամեն դեպքում 14-րդ դարում ապրող Նաթանայել եպիսկոպոսը պետք է ինչ-որ հիմք ունեցած լինի այս երեք հայրապետների հանգստարանը Գառնիում տեղորոշելու համար:

[44] Նաթանայելի հայտնած տեղեկությունը, որ Գրիգոր Լուսավորիչը կառուցել է Գառնիի Ս. Գրիգոր եկեղեցին եւ այստեղ խաչեր կանգնեցրել, այլ աղբյուրներից հայտնի չէ: Գր. Լուսավորչին բազմաթիվ եկեղեցիների հիմնադրում է վերագրվում ողջ Հայաստանով մեկ, բայց Տրդատին պատկանող Գառնիում նրա հայտնվելը բնական պիտի համարել: Նաթանայելի գրածի մեջ «կանկնե(ա)ց նշանք տէրունականս» խոսքերը իրականությանը շատ մոտ են, քանզի հայտնի է, որ Լուսավորիչն իր այցելած վայրերում խաչեր էր կանգնեցնում, որոնց տեղում հետագայում եկեղեցիներ էին կառուցվում: Գառնիի կենտրոնում պահպանվել է բազիլիկ եկեղեցու ավերակ, որը «միանավ, հարավային ավանդատնով եւ հարավային ու հյուսիսային սյունասրահով տուֆակերտ կառուցվածք է՝ բնորոշ 4-5-րդ դդ. հայկական ճարտարապետությանը» (Հ. Պետրոսյան, Գառնին 9-14-րդ դարերում, էջ 25): Հնարավոր է, որ այս եկեղեցին է Նաթանայելը Ս. Գրիգոր անվանել:

[45] Կոստանդին Մեծ կայսեր (306-337) Հռոմի պապ Սեղբեստրոսի (314-335) ձեռքով մկրտված լինելու ավանդությունը ծագել է 6-րդ դարում:

[46] Տե՛ս Եւսեբիոս Կեսարացի, էջ 304: Սամվել Անեցին նշում է մինչեւ այդ հատվածն իր ունեցած հիմնական աղբյուրի՝ Եւսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի» ավարտման մասին:

[47] Նշված է Նիկիայի 325 թ. առաջին տիեզերական ժողովը 318 հայրապետների մասնակցությամբ:

[48] Հռոմի կայսրերի համար Սամվել Անեցին աղյուսակի վերեւում գրում է «Հռոմայեցւոց», կամ կարճ՝ «Հռոմ», «Հռոմայեց.», սակայն Փրկչական ՅԼ (330) թվականի դիմաց ծանոթագրելով՝ «Յետ Ի (20) ամին Կոստանդիանոսի կոչեցան թագաւորք Յունաց եւ Հռոմոց, զի թագաւորեցին ի Կոստանդինուպալիս», այդուհետեւ բյուզանդական կայսրերի սյունակի վերնամասում գրում է. «Կոստանդ.», «Կոստ.», այսինքն՝ «ի Կոստանդնուպալիս»՝ նկատի ունենալով նրանց այստեղ գահակալելը: Պահպանելով հեղինակային սկզբունքը՝ մենք ժամանակագրության սկզբից մինչեւ 4-րդ դարի կեսը կայսրերի անունների մոտ փակագծում նշում ենք «Հռոմայեցւոց», որից հետո՝ «ի Կոստանդինուպալիս»:

[49] Տե՛ս Մովսէս Խորենացի, էջ 243-244:

[50] Տրդատ Գ-ի մահվան հանգամանքների մասին պատմում է Մովսես Խորենացին իր Պատմության չորրորդ գրքում (տե՛ս Ա. Մաթեւոսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» չորրորդ գիրքը, Երեւան, 1995, էջ 182-183):

[51] Անդրեաս Բյուզանդացի (Աթենացի), 4-րդ դարի հույն տոմարագետ, որը Նիկիայի եկեղեցական ժողովի (325 թ.) որոշմամբ կազմել է տոմարական 200-ամյա աղյուսակ՝ սկսելով 352-353 թվականներից:

[52] Հավանաբար, խոսքը 335 թ. Մազքութների Սանեսան թագավորի ասպատակիչների նկատմամբ ձեռք բերված հաղթանակի մասին է (Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1984, հ. 2, էջ 84):

[53] Արտեմոն՝ 3-րդ դարի աղանդավոր Հռոմում, որի հիմնած դավանական ուղղությունը մերժում էր Սուրբ Երրորդության գաղափարը:

[54] Տե՛ս Մովսէս Խորենացի, էջ 272:

[55] Պատմիչը, «ոչ ի նոյն ազգէ» ասելով, նկատի ունի, որ աթոռակալը Գրիգոր Լուսավորչի տոհմից չէր: Հովհաննես Դրասխանակերտցու գահացանկում՝ «ոչ ի Պահլաւեան ազգէ» (Մատենագիրք Հայոց, հ. ԺԱ, Ժ դար, Պատմագրութիւն, Անթիլիաս, 2010, էջ 603):

[56] Այս նախադասությունը նույնությամբ, ինչպես նաեւ հաջորդ կաթողիկոսների մասին տեղեկությունները հիմնականում քաղված են Հովհաննես Դրասխանակերտցու կազմած Հայոց հայրապետների գահացանկից (հրատարակիչ՝ Գ. Տեր-Վարդանյան, տե՛ս Մատենագիրք Հայոց, հ. ԺԱ, Ժ դար, էջ 603-608):

[57] Խադ եպիսկոպոսը փոխարինել է Ներսես Մեծին նրա աքսորում եղած տարիներին (Մովսէս Խորենացի, էջ 295):

[58] Ներսես կաթողիկոսի Կոստանդնուպոլսում գտնվելու եւ Թեոդոս կայսրից պատվի արժանանալու մասին տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 211-214:

[59] Կոստանդնուպոլսի 2-րդ տիեզերական ժողովը տեղի է ունեցել 381 թ.: Քանի որ, ըստ Սամվել Անեցու, Նիկիայի առաջին տիեզերական ժողովը տեղի է ունեցել 329-ին (իրականում՝ 325 թ.), դրանից մինչեւ Կոստանդնուպոլսի ժողովը (ըստ Սամվել Անեցու՝ 396 թ.) ընկած ժամանակը կազմում է 67 տարի:

[60] Վերաբերում է Հերոնիմոս Ստրիդոնացուն (տե՛ս Հ. Քյոսեյան, Եկեղեցու հայրեր, վարդապետներ, 4-8-րդ դդ., Երեւան, 2007, էջ 275-277):

[61] Պապի թագավորության թվականներն են համարվում 369-373 թթ., Ներսես Մեծ կաթողիկոսի աթոռակալությանը՝ 353-372 թթ.: Կաթողիկոսի մահվան մասին աղբյուրը Մովսես Խորենացին է (Մովսէս Խորենացի, էջ 305-306):

[62] Հեղինակային սխալ է, պետք է լինի Արշակունի: Հետագայի ընդօրինակողներն ուղղել են, օրինակ՝ (Մ1899) «…Շապուհ՝ արեւելեանս, զԽոսրով Արշակունի թագաւորեցուցեալ»:

[63] Ձեռագրում հավելումը կատարված է 38բ թերթի ձախակողմյան լուսանցքում (որոշակի թվականի դիմաց չէ): Հավելման հեղինակն օգտվել է Մովսես

Խորենացուց եւ առայժմ անհայտ այլ աղբյուրից: Պարսկաստանում Սահակ Պարթեւի աքսորավայրի մասին այլ տեղեկություն մեզ հայտնի չէ (տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 349): «Արտավազը» Արտազ գավառի անուններից մեկն է: Ինչ վերաբերում է կաթողիկոսին գրված նամակի եւ նրա աքսորված լինելու պատճառով այն չստանալու մասին պատմությանը, ապա այն, հավանաբար, հորինվել է միարարական միջավայրում:

[64] Սամվել Անեցու մոտ առկա է դանիելյան գրերի հետ կապված այն նույն թյուրիմացությունը, որն ուղեկցել է հայ մատենագրությանը դարեր շարունակ: Վերջին ուսումնասիրությունների արդյունքում հայտնի դարձավ, որ Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի նախնական մատյանում տեղի է ունեցել թերթերի տեղափոխություն, որը նաեւ փոխել է գրվածի իմաստը՝ ակամա մեծացնելով «դանիելյան» կոչված գրերի դերը: Իրականում այդ գիրը չի համապատասխանել հայերեն լեզվին, եւ Մեսրոպ Մաշտոցն այն անմիջապես մերժել է: Սա երեւում է Կորյունի ճշտված բնագրից եւ մի շարք հարակից փաստերից (հանգամանորեն տե՛ս Կորյուն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, աշխատասիրությամբ Ա. Մաթեւոսյանի, Երեւան, 1994, էջ 148-172):

[65] Նաթանայել եպիսկոպոսը Հավուց թառի հիմնադրումը վերագրում է Սահակ Պարթեւին եւ Մեսրոպ Մաշտոցին՝ հետեւելով այս շրջանի վանքերի վերաբերյալ գոյություն ունեցող ավանդությանը (Գ. Հովսեփյան, Հավուց Թառի ամենափրկիչը..., էջ 16): Նա նաեւ յուրովի ստուգաբանում է վանքի անունը՝ «աթոռ Հայոց» եւ «թառ թարգմանութե(անց)», որոնցից մեկի՝ երկրորդ, իսկ մյուսի՝ առաջին բառերից է առաջացել «Հայոց թառ» անվանումը: Ցավոք, շարունակությունն անընթեռնելի է, եւ չենք կարող ասել, թե Նաթանայելն ինչպես է բացատրում «Հայոց թառի» եւ «Հաւուց թառի» զուգադրումը: Իր գրություններում նա օգտագործում է երկու ձեւ էլ: Սեբաստիայի Ս. Նշանում պահված մի ձեռագրի անթվական հիշատակարանում Նաթանայելը Հավուց թառի կառուցման ու վերաշինման մասին գրում է. «Գիրքս Հայոց թառոյ է, որ է աղօթատեղ Սուրբ Լուսաւորչին, եւ հաստակառոյց հաստատեաց եւ հանդիսացոյց տեղի թարգմանութեան... սուրբ հայրապետն Սահակ եւ սուրբ վարդապետն Մեսրովբ եւ ետոյ նորոգեաց սպարապետն Գորք իշխան» (Գ. Հովսեփյան, Հավուց Թառի ամենափրկիչը..., էջ 24): Հնարավոր է, որ նույն աղբյուրից են օգտվել Նաթանայելը եւ Մատենադարանի թիվ 4166 ձեռագրի (Տօնապատճառ) հետագայի գրիչը, որը հայտնում է «Շինեցաւ սուրբ եւ հռչակաւոր բազմաժողով մեծ մենարանն Հայոց թառ ի սուրբ թարգմանչացն՝ ի Սահակ հայրապետէ Հայոց եւ ի Մեսրոփ վարդապետէ ԴԵ եւ ԻԳ (423) ամի ծնընդեանն Քրիստոսի…» (ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երեւան, 1950, էջ 351):

[66] Ս. Հովհաննես Ոսկեբերանի (347-407) մասին, նրա կենսագրության հիմքի վրա ավանդապատումի ոճով գրված, ժամանակագրորեն ոչ իր տեղում գտնվող տեղեկություն է:

[67] «Գետոց վանք» անունը երկիցս հիշատակող միակ հեղինակը Նաթանայել Հավուցքառեցին է: Քանի որ վանքը գտնվում էր «ի Գառնոյ ձորին ի վերա գետին», ապա գետամերձ լինելու հանգամանքը կարող էր այս անվան առաջացման պատճառ դառնալ: Ստեփանոս Օրբելյանը՝ Սմբատ Ա Բագրատունի թագավորի՝ 906 թ. Տաթեւի մեծ եկեղեցու կառուցման առիթով վանքին տված մեծարժեք նվիրատվությունների շարքում նշում է. «ի Գառնոյ ձորի զԳոտող վանս» (Ստեփանոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփղիս, 1910, էջ 229): Ա. Ա. Աբրահամյանը, այս տեղեկությունը ծանոթագրելով, գրում է. «Գառնու ձորի Գոտող (կամ Գոտոզ) վանքը միայն հիշվում է այստեղ: Անորոշ է, թե այդտեղի ո՞ր վանքն էր» (Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը եւ ծանոթագրությունները Ա. Աբրահամյանի, Երեւան, 1986, էջ 470): Հնարավոր է, որ այստեղ գործ ունենք հնագույն սկզբնաղբյուրում վանքի անվան գրության մաշվածության հետեւանքով առաջացած գրչական սխալի հետ, երբ Գետոցը կարող էր Գոտող կամ Գոտոզ ընկալվել (կամ հակառակը): Համենայն դեպս, կարծում ենք, որ Ստ. Օրբելյանը եւ Նաթանայելը նկատի են ունեցել Գառնու ձորի նույն վանքը: Սիմեոն Երեւանցին այն կոչում է Կուտուց վանք (այս մասին հանգամանորեն տե՛ս Կ. Մաթեւոսյան, Հավուց թառի վանքը, Երեւան, 2012, էջ 53-54):

[68] Տեղեկությունը զետեղված է 430-ական թվականների հատվածում (Մ3613, թերթ 39ա), վերաբերում է սուրբ Օգոստինոս Հիպպոնացուն (354-430), տե՛ս Հ. Քյոսեյան, նշվ. աշխ., էջ 280-281:

[69] Եփեսոսի 3-րդ տիեզերական ժողովը տեղի է ունեցել 431 թ., որից առաջ եղածներն են Կոստանդնուպոլսի 2-րդ (381 թ.) եւ Նիկիայի 1-ին (325 թ.) տիեզերական ժողովները: Բայց, ըստ Անեցու Եփեսոսի 3-րդ տիեզերական ժողովը եղել է 438-ին, որից առաջ եղած Կոստանդնուպոլսի 2-րդ ժողովը՝ 396-ին (42 տարի առաջ), եւ Նիկիայի 1-ին ժողովը՝ 329-ին՝ Եփեսոսի ժողովից 109 տարի առաջ (Անեցին, թերեւս սխալվելով, գրել է ՃԷ՝ 107):

[70] Աղանին բազմիցս հիշատակում է պատմիչ Թովմա Արծրունին, նրան կոչում է՝ «Սքանչելին Աղան Արծրունի, որդի Վասակայ» (Թովմա Արծրունի, էջ 80-84): Աղան Արծրունին մասնակցել է 449 թ. Արտաշատի ժողովին, եղել է պատմիչ Ղազար Փարպեցու ուսուցիչը (Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երեւան, 1942, էջ 97-98):

[71] Տեղեկությունը Սամվել Անեցու մոտ ՆԿԲ (462) թվականի դիմաց է՝ փոքր-ինչ այլ ձեւակերպմամբ:

[72] Եփեսոսում գումարված 2-րդ ժողովը (449 թ օգոստոսի 8-ին) պաշտոնապես տիեզերական չի համարվում:

[73] Պարսից Հազկերտ Բ-ը գահակալել է 438-457 թթ., մինչդեռ Սամվել Անեցու մոտ նրա թագավորությունը սկսում է 465-ից: Թվում է, թե այս պատճառով են իրենց ժամանակագրական տեղերից հեռացել Վարդանանց պատերազմի մասին եւ առնչակից տեղեկությունները (451-ի փոխարեն՝ 476 թ.):

[74] Մովսես Խորենացու Հայոց Մեծաց պատմության երեք գրքերն ավարտվում են «Ողբով»՝ 440 թվականով, սակայն այն ունեցել է հավելված՝ Չորրորդ գիրք, որի մեջ ներառված Աթանաս Տարոնացու ժամանակագրության 474 թ. դիմաց նշված է. «Մովսէս Խորենացի փիլիսոփա եւ մատենագիր»: Ա. Մաթեւոսյանը ենթադրում է, որ դա Խորենացու պատմության ավարտման թվականն է (Ա. Մաթեւոսյան, Մովսես Խորենացու պատմագրքի խորագիրը եւ ավարտման թվականը, «Էջմիածին», 1991, էջ 92-93): Սամվել Անեցու մոտ եղած նշումը Մովսես Խորենացու պատմության ավարտի 467 թվականի վերաբերյալ ցույց է տալիս, որ նրա ձեռքին եղած օրինակը 440 թվականով չի ավարտվել, այլ զգալի չափով շարունակվել է (տե՛ս նաեւ Սամվել Անեցու՝ 492 թվականի նշումը Խորենացու մասին եւ համապատասխան ծանոթագրությունը):

[75] Հայոց կաթողիկոս Գյուտ Ա Արահեզացի (461-478):

[76] Քաղկեդոնի ժողովը տեղի է ունեցել 451 թ. հոկտեմբերի 8-31-ին բյուզանդական Մարկիանոս կայսեր եւ Հռոմի Լեւոն Ա պապի նախաձեռնությամբ:

[77] Տե՛ս Եղիշեի՝ Վարդանի եւ Հայոց պատերազմի մասին (գրաբար, աշխարհաբար) թարգմանությունը եւ ծանոթագրությունները Ե. Տեր- Մինասյանի, Երեւան, 1989, էջ 280-281:

[78] Հայոց կաթողիկոս Հովհաննես Ա Մանդակունի (478-490):

[79] Կաթողիկոս Հովհաննես Մանդակունու աթոռակալության մասին գրելուց հետո Ասողիկը նշում է պարսիկ զորավարի հրամանով արշարունեցի Տեառնթագի նահատակության մասին (Ստեփանոս Տարոնեցի, էջ 80):

[80] Մանգնոս (տե՛ս նաեւ 484 թ. տեղեկության մեջ) անունն առաջին անգամ տալիս է Ասողիկը՝ նրան համարելով Վարդան Մամիկոնյանի որդին, որը Պերոզի ժամանակ 20 տարի վարել է սպարապետությունը (Ստեփանոս Տարոնեցի, էջ 79): Սակայն հայ պատմագրության մեջ ընդունված է սա պատմիչի սխալը համարել, որը շփոթել է նրան Վարդանի եղբայր Հմայակի որդի Վահան Մամիկոնյանի հետ: Մ. Օրմանյանը կարծում է, որ կա՛մ Մամիկոնյան բառի, կա՛մ Ma gars – «մեծ» բառի շփոթմունք է (Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 514, տե՛ս նաեւ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, էջ 198):

[81] Նշանավոր փիլիսոփա Դավիթ Անհաղթի մասին է:

[82] Սա, հավանաբար, Մովսես Խորենացու մահվան թվականն է, քանի որ մինչ այդ Սամվել Անեցին արդեն նշել է Խորենացու «Հայոց պատմության» ավարտման թվականը (467 թ.): Իր ժամանակագրությունը կազմելիս Սամվել Անեցին մեծապես օգտվել է Խորենացուց, տպավորված է եղել նրա երկից, ուստի պատահական չէ այս հատուկ վերաբերմունքը պատմահոր նկատմամբ:

[83] Թաթուլ եւ Վարոս ճգնավորների մասին տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 512:

[84] Խոսքը վերաբերում է էջմիածնի Մայր տաճարի հիմնովին վերակառուցմանը 484 թ., որից հետո եկեղեցին ստացել է ներկայիս հատակագծային եւ ծավալատարածական տեսքը:

[85] Ձեռագրում տեղեկությունը ՇԺԶ թվականի դիմաց է գրված, բայց այդ ժամանակ Պարսից թագավորը դեռ Կավատը չէր, ուստի այն տեղադրում ենք վերջինիս գահակալությանը վերաբերող մասում:

[86] «Գիրկ»՝ միջնադարյան Հայաստանում ընդունված երկարության միավոր, որը հավասար է 1, 39 մ (Ռ. Վարդանյան, Հայաստանի չափերն ու կշիռները, Երեւան, 1989, էջ 125,133):

[87] Մ7261 ձեռագրում այստեղ ավարտվում է: Ողջ հատվածը վերցված է շրջանակի մեջ եւ կից գրված՝ «Սուտ առասպել է» (թերթ 40ա):

[88] Ներսեսը ծնունդով Բագրեւանդի կամ Ալաշկերտի Աշտարակք գյուղից էր (այստեղից էլ Աշտարակեցի մականունը): Նրա հրավիրած Դվինի ժողովին հանգամանորեն անդրադարձել է Մ. Օրմանյանը, բայց նրա վկայակոչած տեղեկությունների մեջ խոսք չկա Երուսաղեմ գնալու արգելքի հաստատման մասին (Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 621, 633-641):

[89] Այստեղ շփոթված է Հայոց թվականի հիմնադրի անունը՝ Ստեփանոս, պետք է լինի՝ Աթանաս: Վերջինս նաեւ հեղինակել է մի արժեքավոր ժամանակագրություն (օգտվել է նաեւ Մովսես Խորենացուց), որը հասցրել է մինչեւ 584 թվականը, եւ պատահական չէ, որ այս վկայության մեջ անվանվում է «պատմագիր»: Աթանաս Տարոնացու մասին տե՛ս Ա. Մաթեւոսյան, Մովսես Խորենացին եւ Աթանաս Տարոնացու ժամանակագրությունը, «Պատմաբանասիրական հանդես», 1989, N 1, էջ 220-234:

[90] «Կրճիմն»՝ (գրաբ.) արգելք, անջրպետ, միջնորմ: Այս հատվածն արժեքավոր է շնորհիվ այն տեղեկության, ըստ որի՝ հայերը Քաղկեդոնի ժողովը մերժել են Պարսից թագավորի հարկադրանքով, բռնադատմամբ, որպեսզի տարանջատվեն հույներից ու հեռու մնան Բյուզանդիայի ազդեցությունից:

[91] Մամբրե վերծանողը Մովսես Խորենացու եղբայրն էր, ապրել է 5-րդ դ. 2-րդ կեսին: Տեղեկությունը քաղված է Ստեփանոս Տարոնեցուց (նրա մոտ՝ «գտեալ»): Նույն աղբյուրից է նաեւ Եզրաս Անգեղացու մասին գրեթե բառացիորեն քաղված հատվածը (Ստեփանոս Տարոնեցի, էջ 80, 82):

[92] Մախոժ պարսիկի (մկրտվելուց հետո՝ Յիզտբուզիտ՝ Աստվածատուր) մասին տեղեկությունը քաղված է Հովհաննես Դրասխանակերտցուց (Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 66):

[93] Տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 628-629:

[94] Էաս Ալեքսանդրացու տոմարական բարեփոխման եւ Հայոց Մեծ թվականի հաստատման մասին տե՛ս Գ. Բրուտեան, Օրացոյց Հայոց, էջ 56-59:

[95] Մ1486 ձեռագրի գրիչ Սահակ Երզնկացին, որը մատյանն ընդօրինակել է 1695 թ. եւ իր հիշատակարանում ժամանակագրությունը համարում է «անհասկանալի եւ խրթիմ» գիրք (130ա), այստեղ նշում է իր Գեւորգ վարդապետի մասին: Ձեռագրի համապատասխան էջում (138բ) պարզ երեւում է, որ

այդ հատվածը գրված է ավելի մանր տառերով եւ ակներեւորեն ընդմիջարկություն է ժամանակագրության մեջ: Քանի որ սույն հատվածը, առանց համապատասխան ծանոթագրության, տեղ է գտել 1893 թ. հրատարակության մեջ, ուսումնասիրողներից ոմանք սխալմամբ կարծել են, թե հիշյալ խոսքերը պատկանում են Սամվել Անեցուն եւ դրանից ելնելով Գեւորգ վարդապետին սխալմամբ համարել են նրա ուսուցիչ:

[96] Մ. Օրմանյանը Մախոժ-Յիզտբուզիտի նահատակության օրը համարում է 553 թ. փետրվարի 25-ը (Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 630):

[97] Հուստինիանոս Ա-ի (527-565) եւ Խոսրով Անուշիրվանի (531-579)՝ Բյուզանդիայի եւ Պարսկաստանի միջեւ հնգամյա զինադադար է կնքվել 552 թվականին (Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, էջ 238):

[98] Հայերի 571 թ. ապստամբությունը գլխավորում էր Վարդան Մամիկոնյանը: Սամվել Անեցու տեղեկության աղբյուրը Սեբեոսի Պատմությունն է (Պատմութիւն Սեբէոսի, էջ 68):

[99] Սմբատ Բագրատունի (Մանվելի որդի), 6-րդ դարի գործիչ: Ըստ Սեբեոսի պատմության՝ նրան գազանամարտի է նետել բյուզանդական Մորիկ կայսրը (Պատմութիւն Սեբէոսի, էջ 92-93):

[100] Սամվել Անեցին առաջին հեղինակն է, որ հայտնում է 6-րդ դարում ասորիների ձեռքով Հայաստան բերված ու հայերեն թարգմանված պարականոն գրքերի մասին եւ նշում դրանց անվանումները:

[101] Քաղված է Հովհաննես Դրասխանակերտցուց (Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 72-73):

[102] Խոսքը Հայաստանի Բյուզանդական մասում հաստատված եւ Ավանում 591-602 թթ. աթոռակալած Հովհան Բագարանցու մասին է (մահ. 611 թ., թաղված է Ավանում), որը, Դվինում նստող կաթողիկոսին հակաթոռ համարվելով, այժմ չի ընդգրկված Ամենայն Հայոց կաթողիկոսների ցանկում: Սակայն միջնադարում հարցի նման ընկալում չի եղել եւ նա համարվել է Հայոց կաթողիկոս:

[103] Սմբատ Բագրատունին հիմնովին վերաշինել է Դվինի Ս. Գրիգոր եկեղեցին, որի մասին պատմում են Սեբեոսն ու Հովհաննես Դրասխանակերտցին (տե՛ս Հայկական ճարտարապետության պատմություն, հ. Բ, Երեւան, 2002, էջ 260):

[104] Հովհաննես Դրասխանակերտցին, առանց թվական նշելու, հայտնում է, որ Մրենի եկեղեցին կառուցել է Դավիթ Սահառունին, բայց շինարարական արձանագրությունից երեւում է, որ Դավիթ Սահառունու կառավարման տարիներին (թերեւս նաեւ նրա աջակցությամբ) եկեղեցին կառուցել է Շիրակի եւ Արշարունիքի տեր Ներսեհ Կամսարականը: Առաջին անգամ կառուցման թվականը (613) հայտնում է Սամվել Անեցին (առանց կառուցողին նշելու), որի տեղեկությունը 13-րդ դարում կրկնել է Կիրակոս Գանձակեցին:

[105] Մուհամմեդը (մոտ. 570-632) հալածանքների պատճառով 622 թ. իր հետեւորդների հետ փախել է Մեքքայից եւ հասել Մեդինա: Այդ իրադարձու-

թյունը կոչվել է «Հիջրա» (տեղափոխություն, գաղթ), որը հետագայում մահմեդականները, համարելով դարակազմիկ իրադարձություն, իրենց տարեսկիզբը սկսել են հաշվել 622 թ. հուլիսի 16-ից:

[106] Հայոց կաթողիկոս Աբրահամ Աղբաթանեցու (607-615)՝ Կյուրոնին գրած թղթերը տե՛ս Գիրք թղթոց, 2-րդ հրատ, Երուսաղեմ, 1994, էջ 316, 333, 339:

[107] Սամվել Անեցին տեղեկությունը համառոտաբար քաղել է Հովհաննես Դրասխանակերտցուց (Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 76-78): Կոմիտաս Ա Աղցեցի (615-628) կաթողիկոսն, ըստ շինարարական արձանագրության, Վաղարշապատում Ս. Հռիփսիմեի տաճարը կառուցել է 618 թ.:

[108] Պատմիչը նկատի ունի արաբների եւ Սասանյան Պարսկաստանի միջեւ 636/637 թ. տեղի ունեցած Քադիսիայի բախտորոշ ճակատամարտը, որտեղ պարսիկները պարտվեցին:

[109] Կարինի եկեղեցական ժողովը տեղի է ունեցել 633 թ.: Ժամանակագրության այս հատվածը Մ3613 ձեռագրում քաղկեդոնական գրչի ձեռքով աղավաղվել է եւ իմաստափոխվել (տե՛ս աստ էջ 58, Կ. Մաթեւոսյան, Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերը…., էջ 121):

[110] Տեղանունների բառարանը նշում է Աղտք (Աղահանքեր) բնակավայր Կողբի մոտ (Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երեւան, 1986, էջ 198): Ժամանակագրության այս հատվածում, թերևս ուշ շրջանի ձեռագրերում եղած սխալագրության պատճառով, վաղարշապատյան հրատարակության մեջ տպվել է «եւ զաղսն բովանդակ» (Անեցի, 1893, էջ 80): Ավելի վաղ հեղինակների տեղեկություններ այս մասին չկան, իսկ հետագայի պատմիչներից Վարդան Արեւելցին գրում է. «առեալ զԱղցք եւ զերրորդ մասն Կողբայ» (Վարդան Արեւելցի, Տիեզերական պատմություն, աշխարհաբար թարգմ.՝ Գ. Թոսունյանի (գրաբար տեքստը՝ 1862 թ. Վենետիկի հրատարակությունից), Երեւան, 2001, էջ 69), Ստեփանոս Օրբելյանը՝ «զերրորդ մասն գիւղաքաղաքին Կողբայ եւ զաղսն բովանդակ» (Ստեփանոս Օրբէլեան, էջ 118): Քանի որ Կողբը հայտնի էր աղհանքերով, կարելի է ենթադրել, որ գրիչներից շատերին անծանոթ Աղտք անունը ձեւափոխվել է՝ զԱղտսն - զաղսն: Հասկանալի է, որ Կողբի մեկ երրորդ մասի վերաբերյալ պատմիչի նշումը հենց այդ վայրից աղի հանույթին է վերաբերում, իսկ Աղտքը թերևս ավելի փոքր մի աղհանք է ունեցել, որն էլ Հայոց կաթողիկոսությանն է տրվել ամբողջովին: Ուշագրավ է, որ Կողբի աղհանքից անհատույց օգտվելու իրավունքը Հայոց կաթողիկոսությունը պահպանել է ընդհուպ մինչեւ 20-րդ դարի սկիզբը (տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 805-806):

[111] Պատմիչն ուզում է ասել, որ ոչ ոք թող այս Սարգսի պատճառով չհամարձակվի «սուրբ հոր»՝ Հովհան Մայրագոմեցու մասին բամբասել (Հովհան Մայրագոմեցու մասին տե՛ս Հ. Քենդերյան, Հովհան Մայրագոմեցի, Երեւան, 1973):

[112] «Ոտք» եւ մի քանի այլ չափի միավորների մասին ձեռագրերից մեկում պահպանվել է հետեւյալ նշումը՝ «…նետաձիգն՝ ՃՕ (150) քայլ է, քայլն՝ վեց ոտն է, ոտն՝ տասն եւ վեց մատն է, Բ (2) մատն՝ մին քել է» (Ցուցակ հայերէն ձեռագրաց Ս. Նշան վանուց ի Սեբաստիա, կազմեց Թորգոմ արք. Գուշակեան, Վիեննա, 1961, էջ 102):

[113] 654 թ. Հռոդոս կղզին գրաված արաբները հանել եւ տարել են արդեն վաղուց ընկած վիճակում գտնվող, աշխարհի յոթը հրաշալիքներից մեկը հանդիսացող կոթողի պղնձե թիթեղները, որն, ըստ ավանդության, կազմել է 900 ուղտաբեռ:

[114] Սամվել Անեցու բնագրի այս պարբերությունը բացակայում է Ժամանակագրության վաղարշապատյան հրատարակության մեջ (Անեցի, 1893, էջ 80):

[115] Նկատի ունի Հովհաննես Դրասխանակերտցուն, որը պատմում է այդ մասին (Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 84-87), սակայն Դվինի գրավման առնչությամբ միայն գերիների թիվն է նշում՝ 35 000, իսկ սպանվածների մասին գրում է. «ոչ եւս կայր թիւ բազմութեան սպանելոց»:

[116] Խորբալ – (վրաց.) ցորեն:

[117] Այս հատվածն ուշագրավ տեղեկություններ է պարունակում ժամանակի տնտեսական պատմության համար (մանրամասնորեն տե՛ս Հ. Մանանդյան, Երկեր, հ. Բ, Երեւան, 1978, էջ 546-547):

[118] Կազմված է արաբերեն «ամիր» եւ «ալ-մումինին» բառերից, որ նշանակում է «հավատացյալների իշխան» եւ վերաբերում է խալիֆաներին:

[119] Նշվածներն իսլամի (սուննի) իրավագիտկան չորս հայտնի դպրոցներն (ուղղություններն) են:

[120] Ժամանակագրության վաղարշապատյան հրատարակությունից այս տեղեկությունը դուրս է մնացել: Ձեռագրերի մի մասում գրիչները, տեղեկության իմաստը չհասկանալով, երբեմն սխալվել են՝ գրելով, օրինակ, «Արծաթափառն» (Մ8481, 187բ): Ըստ պատմագրության մեջ այժմ ընդունված տեսակետի՝ արաբները Կոգովիտ գավառի Արծափ ամրոցը գրավել են 650 թ. օգոստոսի 8-ին (Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, էջ 370): Մանրամասները հաղորդում է Սեբեոսը (Պատմութիւն Սեբէոսի, էջ 145): Բերդի մասին տե՛ս Ի. Ղարիբյան, Արծափ-Մեղրաձոր, գիրք Ա, Երեւան, 2006, էջ 9-12:

[121] Արաբ խալիֆաների այս ցանկը զգալի տարբերություններ ունի ավելի վաղ շրջանի հայ հեղինակների՝ Թովմա Արծրունու եւ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի ներկայացրած ցանկերի համեմատությամբ (Ստեփանոս Տարոնեցի, էջ 135-136, Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երեւան, 1978, էջ 123, տե՛ս նաեւ Վ. Վարդանյանի ծանոթագրությունները յուրաքանչյուրի մասին՝ էջ 355-356, նաեւ՝ Brosset, p. 404):

[122] Հայկական եկեղեցական ավանդությունը Վարագա Ս. Խաչի հայտնությունը վերագրում է 653 թվականին:

[123] Ներսես Գ Տայեցի (641-661) կաթողիկոսի բոլոր երեք նշանավոր կառույցները (որոնց համար նա «Շինող» մականունն է ստացել) առաջին անգամ մեկ տեղում թվարկել է Սամվել Անեցին՝ նախ նշելով «զարմանացուցիչն տեսողաց» Ս. Գրիգորը (Զվարթնոց), ապա ավելի վաղ կառուցված Դվինի Ս. Սարգիս վկայարանը եւ մեկ այլ եկեղեցի՝ Խոր Վիրապում (վիրապի վրա):

[124] Գառնիի եկեղեցիներից մեկի կառուցումը Դվինի դաշտահայաց մասում Նաթանայելը վերագրում է Ներսես Գ Տայեցուն: Գառնիի եկեղեցիներից 7-րդ դարի է համարվում հեթանոսական տաճարի արեւմտյան կողմում գտնվող արտաքինից բոլորաձեւ քառախորան եկեղեցին, որի ճարտարապետական մանրամասներն առնչություններ ունեն Զվարթնոցի հետ (Ա. Սահինյան, Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը, Երեւան, 1983, էջ 198-201): Գրականության մեջ եկեղեցին կոչվում է Ս. Սիոն: Հնարավոր է, որ հենց սա է Նաթանայելի հիշատակած Եղիա մարգարեի անունով եկեղեցին:

[125] Սամվել Անեցու հղած սկզբնաղբյուրներից մեկը՝ Շապուհ Բագրատունու պատմությունը, չի պահպանվել, իսկ երկրորդի՝ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի՝ մեզ հասած պատմության մեջ չկա «Երեւանի կռվին» վերաբերող որեւէ տեղեկություն: Ըստ այդմ՝ Սամվել Անեցու կարծ հաղորդումը միակ վկայությունն է պատմական այդ դեպքի մասին:

[126] Հնարավոր է, որ Դվինի 653 թ. բյուզանդական գրավման մասին է խոսքը, իսկ Պտիզ անունով բնակավայր այլ աղբյուրներում չի հանդիպում:

[127] Անաստաս Ակոռեցի կաթողիկոսի հանձնարարությամբ Անանիա Շիրակացին կազմել է Հայոց անշարժ տոմարը, որը, սակայն, կաթողիկոսի մահվան պատճառով չի կիրառվել: Տոմարն ընդգրկված էր Շիրակացու հեղինակած «Քննիկոն» ծրագրային գրքի մեջ, որի անվան եւ բովանդակության մասին հայտնում է Գրիգոր Մագիստրոս Պահլավունին (տե՛ս Ա. Մաթեւոսյան, Անանիա Շիրակացու «Քննիկոնը», ՀՍՍՀ ԳԱ, «Լրաբեր», 1974, թիվ 7, 8):

[128] Խազարների դեմ պատերազմում զոհված Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանին (661-685) «պատրիկ» է կոչում Կիրակոս Գանձակեցին (Կիրակոս Գանձակեցի, էջ 62):

[129] Իր նստավայր Արուճի Կաթողիկե եկեղեցու շինարարությունը Գրիգոր Մամիկոնյանը սկսել է Դամասկոսից Հայաստան վերադառնալուց եւ Հայոց իշխանի տիտղոսը ստանալուց հետո՝ 662 թ., իսկ ավարտել Անաստաս Ակոռեցու աթոռակալության 5-րդ տարում, այսինքն՝ 666 թ.: Թվականը հստակեցնող միակ աղբյուրը Սամվել Անեցու Ժամանակագրությունն է: Եկեղեցու օծման ժամանակ տեղի է ունենում Սուրհան պարսիկ զորականի մկրտությունը, որն արաբական զորքում ծառայող ազնվական էր, բայց քրիստոնեություն ընդունելու խնդրանքով դիմել էր Գրիգոր իշխանին: Վերջինս, Սուրհանի կնքահայրը դառնալով, նրան անվանակոչում է իր հոր՝ Դավթի անունով, նաեւ կալվածք շնորհում Կոտայքի Ձագ գյուղը: Հետագայում՝ Գրիգոր Մամիկոնյանի մահից հետո, արաբները Դավթից պահանջում

են ուրացություն, բայց մերժվելով՝ սպանում են Դվինում (Կ. Մաթեւոսյան, Արուճ, Երեւան, 1987, էջ 13-14, 26-27, 54-59):

[130] 701 թ. Դվինում նահատակված եւ հենց այստեղ Ս. Գրիգոր եկեղեցու մոտ թաղված Դավիթ Դվնեցու վարքը հանրահայտ է (տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 94-99, Շնորհք արք. Գալուստեան, Հայազգի սուրբեր, Երեւան, 1997, էջ 228-229 եւ այլն): Նաթանայելը միակ հեղինակն է, որ գրում է Դավիթ Դվնեցու գլուխը (գանգը) Հավուց թառում թաղելու (վերաթաղելու) մասին:

[131] «Սահակն, գնաց ընդդէմ Տաճկաց» արտահայտությունը, հավանաբար, այս կաթողիկոսի մասին տարածված ձեւակերպում է եղել, որն օգտագործել է նաեւ Գր. Տաթեւացին (տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 877): Հիշված «Մահմէտը» Մուհամմեդ իբն Օկբան է:

[132] Արշարունիքի Գրիգոր եպիսկոպոսը հիշվում է Դվինի 645 թ. 4-րդ եկեղեցական ժողովի մասնակիցների թվում: Փիլոն Տիրակացին հայտնի է որպես Սոկրատեսի Եկեղեցական պատմության հայերեն թարգմանիչ: Անաստաս Ակոռեցու (661-667) մահվան մասին հայտնելուց հետո Ասողիկը գրում է. «ի սորա աւուրս էր Փիլոն Տիրակացին, որ զՍոկրատայ պատմութիւնն թարգմանեաց ի Հայ լեզու» (Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն Տիեզերական, «Մատենագիրք Հայոց», հ. ԺԵ, գիրք Բ, Երեւան, 2011, էջ 702): Վերը բերված վկայությունից պարզվում է, որ Փիլոնը գործել է նաեւ Ներսես (Ներսեհ) Կամսարականի իշխանության ժամանակ, որը Հայոց իշխան է եղել 688-692 թթ.: Հենց այդ տարիներին էլ Ներսեսն իր նստավայր Թալինում՝ նախկինում կառուցած փոքր Ս. Աստվածածին եկեղեցու մոտ, հիմնել է իշխանանիստ վայրին վայել մեծ Կաթողիկե եկեղեցին:

[133] Բնագրում՝ «կարա», բայց պետք է լինի «կարի», այսինքն՝ շատ, խիստ (ցուրտ ձմեռ): Նույն իմաստով հավելում կա Հայոց ՄԻ (771) թվ. դիմաց:

[134] Իր անշնորհակալ աշակերտներից ոմանց մասին նշում է նաեւ ինքը՝ Անանիա Շիրակացին, բայց առանց դավանաբանական հիմքի մասին խոսելու (Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Երեւան, 1979, էջ 28-29):

[135] Հայ իշխանների դաժան սպանդը՝ Նախճավանի եւ Խրամի եկեղեցիներում փակելով ողջակիզումը արաբ Կասիմ զորավարի կարգադրությամբ՝ տեղի է ունեցել 703 թ.:

[136] Սամվել Անեցին նկատի ունի Հովհաննես Դրասխանակերտցի պատմիչ կաթողիկոսին:

[137] Ղեւոնդ Երեցի պատմության մեջ հիշատակվող Շուշան իշխանուհին է, որը, 703 թ. Վարդանակերտի ճակատամարտից հետո գթասրտություն ցուցաբերելով պարտված արաբներին հետապնդող հայերից փրկեց նրանցից 300-ի կյանքը (Ղեւոնդ Երեց, Պատմաբանութիւն..., Մատենագիրք Հայոց, հ. Զ, Ը դար, Անթիլիաս, 2007, էջ 750): Սակայն արաբները հետագայում, երախտամոռ գտնվելով, նրան գերելով հավատափոխություն պարտադրեցին եւ կտտանքների ենթարկելով սպանեցին Խառանում: Շուշանի նահատա-

կության մասին նշում է նաեւ Գրիգորիս Արշարունին (տե՛ս նույն տեղում, էջ 92, նաեւ՝ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, էջ 181):

[138] Նաթանայել Հավուցքառեցու այս հավելումը դրված է Սամվել Անեցու՝ Հովհաննես Օձնեցուն վերաբերող հաջորդ հիշատակության մեջ՝ «Յոհան կանոնական կարգաւք պայծառացոյց զեկեղեցիս» բառերից հետո, բայց, քանի որ վերաբերում է Մանազկերտի ժողովին, դնում ենք այդ թեմայով հավելումից հետո:

[139] Վրաց Գաբրիել կաթողիկոսը մասնակցել է Հայոց կաթողիկոս Բաբկեն Ոթմսեցու (490-516) հրավիրած Դվինի 506 կամ 508 թ. ժողովին, որին, ըստ «Գիրք թղթոցում» պահպանված տեղեկության, մասնակցել է նաեւ 23 վրացի եպիսկոպոս (Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994, էջ 334, 343, Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 583-584): Նաթանայելի մոտ շփոթություն է տեղի ունեցել, Հովհաննես Օձնեցու հրավիրած Մանազկերտի հակաքաղկեդոնական ժողովում ասորիների մասնակցությունը շփոթվել է ավելի վաղ՝ Դվինում կայացած ժողովին վրացիների մասնակցության հետ:

[140] «Միլ» - մղոն չափի միավորի անվանումներից: «Մղոնն հազար քայլ եւ քայլն՝ վեց ոտն եւ ոտն՝ ԺՁ (16) մատն» (Ռ. Վարդանյան, Հայաստանի չափերն ու կշիռները, էջ 239):

[141] Մատթեոս Ուռհայեցու մոտ հիշվում է՝ «Մընպէճ» (Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները՝ Հ. Բարթիկյանի, Երեւան, 1991, էջ 70): Քաղաքը (Մանբիջ) գտնվում է Հալեպի եւ Եդեսիայի միջեւ:

[142] Խալիֆա Եզիդ Բ-ը (720-724) հրամայել էր ողջ տերության տարածքում ոչնչացնել խոզերին որպես անմաքուր կենդանիների: Նաեւ սրբապատկերների ու խաչերի ոչնչացման հրաման էր արձակել, որի մասին հայտնում է պատմիչ Ղեւոնդը (Ղեւոնդ Երեց, Պատմաբանութիւն..., էջ 804):

[143] Հոհան Տեկորեցու մասին տեղեկությունները սուղ եւ հակասական են (տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 984): Նրան հիշատակում է նաեւ Հովհաննես Սարկավագը. «...ի քաղաքի ժողովն, ի Սուրբ Կաթողիկէ... յորում որոշեցին զՅոհան Տիկորեցի, եւ էր թվականն Հայոց ՃՀԳ (724)» (Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 23, 147, տե՛ս նաեւ Գ. Բրուտեան, Յովհաննէս Սարկաւագի ժամանակագրական համակարգերը, Երեւան, 1999, էջ 59-61):

[144] Թերեւս կարելի է նաեւ «Շամա Հէշմ» ձեւով ներկայացնել՝ որտեղ Շամը (Սիրիա) տեղանուն է: Հիշամ իբն Աբդ ալ-Մալիի (724-743), հիշվում է նաեւ ժամանակագրության մեջ 648 թ. ներքո մուծված խալիֆաների ցանկում:

[145] Թղթի գրության ստույգ թվականն այլ աղբյուրներից հայտնի չէ, բայց հավանաբար ավելի վաղ է եղել, քանի որ Գերմանոսը մահացել է 728 թ. (Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 1003-1008):

[146] Վահան Գողթնեցին նահատակվել է 737 թ. (տե՛ս Շ. Գալուստեան, Հայազգի սուրբեր, էջ 196-199):

[147] Հնարավոր է, որ խոսքը Բագրեւանդի Ս. Գրիգորի մասին է, որի նկատմամբ ոտնձգություն են կատարել արաբները 8-րդ դ. սկզբին (Ղեւոնդ Երեց, Պատմաբանութիւն..., էջ 747): Բայց մեզ ավելի հավանական է թվում, որ նշված է Արագածոտնի Հովհաննավանքը: 12-րդ դարում այստեղ ձեռագիր ընդօրինակած գրիչ Հովհաննեսն իրեն կոչում է «նուաստ գրիչ ի Սուրբ Գրիգորիս» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 328): Սամվել Անեցին Հովսեփ Բ Փարպեցի կաթողիկոսի մասին (793 թ.) գրում է, թե նա Արագածոտնից էր՝ «ի բնակչաց Սրբոյն Գրիգորի»:

[148] Հավանաբար, Օմայանների տապալման եւ Աբբասյանների հաստատման (750 թ.) ժամանակի դեպքերն են ակնարկված: Լատ. հր.-ը տեղեկությունը դնում է 753 թ. ներքո:

[149] Նշվում են 774-775 թթ. հակաարաբական ապստամբության դեպքերը, որի ակտիվ մասնակիցներից էին Համազասպ եւ Սահակ Արծրունիները: Նրանք մահապատժի ենթարկվեցին ավելի ուշ՝ 786 թ. (վկայաբանությունը տե՛ս Ք. Տեր-Դավթյան, Հայկական սրբախոսություն, Երեւան, 2011, էջ 130-133):

[150] Քաղված է Հովհաննես Դրասխանակերտցուց, որը թվական չի նշում, այլ հայտնում է, որ դեպքը եղել է կաթողիկոս Սիոն Ա Բավոնեցու (767-775) աթոռակալության ժամանակ (Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 110): Այս հատվածում նշված Քաղին-Քաղիւնը (Քաղենի) առանց հիմնավորման նույնացվել է Ներքին Թալինի հետ (այժմ՝ Դաշտադեմ), որը համոզիչ չէ, քանի որ տեղում առկա երկու վիմագրերում եւ բնակավայրից հարավ գտնվող Ս. Քրիստափորի վանքի արձանագրությունների մեջ այն պարզապես Թալին է կոչվում (տե՛ս Կ. Մաթեւոսյան, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 247-251): Նշված տեղեկությունը հայտնում է նաեւ Կիրակոս Գանձակեցին, որի մոտ թերեւս ձեռագրերի գրչական սխալի պատճառով «Արենոյ»-ը դարձել է «Մրենոյ» (Կիրակոս Գանձակեցի, էջ 72): Բայց Արեն-Արենին Արագածոտնում, Կարբիի մոտ գտնվող գյուղ էր (տե՛ս Առաքել Դաւրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Խանլարյանի, Երեւան, 1990, էջ 215):

[151] Ստեփանոս Սյունեցու ուսուցիչը՝ Մովսես Քերթող (Սյունեցի), 7-րդ դարի կեսերին ապրած աստվածաբան, մեկնիչ, թարգմանիչ, եղել է Սյունյաց եպիսկոպոս:

[152] Հայոց կաթողիկոս Եսայի Ա Եղիպատրուշեցի (775-788):

[153] Վեց ամիս աթոռակալած այս կաթողիկոսի վերաբերյալ տեղեկությունը Սամվել Անեցին քաղել է Հովհաննես Դրասխանակերտցուց, որի մոտ նրա ծագման տեղի մասին նշված է. «Յովաբ... յՈստանէն, ի կուրապաղատին ապարանից» (Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 110), որը հավանաբար Դվինն է:

[154] Հայոց կաթողիկոսների այժմյան ցանկում Գեւորգ Ա Բյուրականցի (792-795) անունով հայտնի հայրապետի ծննդավայրի մասին առաջինը հայտնում է Ասողիկը՝ «տէր Գէորգ յԱրագածոտնէ, ի գեղջէ Աշտարակաց» (Ստե-

փանոս Տարոնեցի, էջ 106): Իսկ մականունն առաջին անգամ նշում է Սամվել Անեցին՝ «հոյլ որբուկն», որը Ժամանակագրության վաղարշապատյան հրատարակության մեջ ձեռագրերից միայն մեկի հիման վրա տպվել է «խուլ որբուկ» (Անեցի, 1893, էջ 90): Նորայր Բյուզանդացին բառերը յուրովի սրբագրել է «խոյլսրբուկ» եւ հետեւյալ բացատրությունն առաջարկել՝ «որ սրբէ կամ բժշկէ զխոյլս» (Նորայր Բիւզանդացի, Նախնիք, Ժնեւ, 1996, էջ 127): Ս. Բաբայանը մականունը կաթողիկոսի երբեմնի «կոչման» (՞) աղավաղված ձեւ է համարել (Ամենայն Հայոց կաթողիկոսներ, հանրագիտարան, էջ 36): Նկատի ունենալով, որ Գեւորգից քիչ առաջ աթոռակալած Եսայի հայրապետի համար Սամվել Անեցին ասում է, թե. «սա էր որդի կնոջ այրւոյ, որ շրջէր մուրացիկ առ դրունս կաթողիկոսարանին՝ սնուցեալ մեծաւ յուսով զորդին», այսինքն՝ միակողմանի որբ էր, ապա կարծում ենք, որ Գեւորգի վերաբերյալ «հոյլ որբուկ» արտահայտությունն արվել է «ամբողջովին որբ» իմաստով:

[155] Բյուզանդական կայսր Լեւոն Ե Հայի (813-820) մասին է, որը 815-ին եկեղեցական ժողով գումարելով՝ վերադարձավ պատկերամարտությանը: Հատվածի սկզբում ակնարկվում է նախորդ կայսեր ժամանակ՝ 812 թ. բուլղարների հասնելը Կոստանդնուպոլսի պարիսպներին՝ Ոսկե դարպասին:

[156] Հովհաննես Դրասխանակերտցին նրա մասին գրում է՝ «Սեւադա ոմն անուն ի Պարսիկ տոհմէ, որ առեալ էր իւր կին զԱրուսեակ ի Բագրատունի տանէ…» (Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 116-117): Նա ապստամբել էր ամիրապետի դեմ եւ իր կողմը գրավել նաեւ հայ իշխաններից ոմանց, բայց անհաջողության մատնվեց (տե՛ս նաեւ նույն տեղում՝ էջ 350-351):

[157] Սամվել Անեցին Երազգավորս-Շիրակավանի եկեղեցու կառուցող է համարել Սմբատ Բագրատունի (Աբլաբաս) Խոստովանողին (մահ. 859), եւ ոչ թե Սմբատ Ա Բագրատունի (890-914) թագավորին, ինչպես գրում է Հովհաննես Դրասխանակերտցին, եւ ինչն ընդունված է պատմագրության մեջ: Մ5596 ձեռագրի այս հատվածում «զարդուք» բառից սկսած հետագայի գրիչը սեւ թանաքով անցել է բուն գրչի աղոտ երեւացող բառերի վրայով: Հնարավոր է, որ տառերի մաշվածության պատճառով նա ճիշտ չի ընկալել տեքստը, որի հետեւանքով անորոշ նախադասություն է ստացվել: Ստորին լուսանցքում եղած սույն գրության ներքեւի մասում երեւում են բուն գրչի գրած վերջին բառի վերջին երկու տառերը՝ «ոց»: Հնարավոր է, որ բառը եղել է «Հայոց»:

[158] Քիլ (քիլք), նշանակում է բանսարկու, մատնիչ:

[159] Այստեղից սկսած Հեթում Կոռիկոսցին «Հռոմայեցւոց» ասելով նկատի ունի գերմանական «Հռոմեական սրբազան կայսրության» գահակալներին:

[160] Բուղայի արշավանքի եւ դրան հաջորդած դեպքերի մասին Սամվել Անեցին գրում է՝ օգտվելով Հովհաննես Դրասխանակերտցուց (Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 120-135):

[161] Կաթողիկոս Զաքարիա Ա Ձագեցու (855-876) ընտրությունը Հայ եկեղեցու պատմության մեջ աննախադեպ էր, քանի որ Սմբատ Բագրատունու (Խոս-

տովանող) հրավիրած ժողովում կաթողիկոս է ընտրվում ոչ թե եպիսկոպոսներից մեկը, այլ հոգեւոր աստիճան չունեցող մի մարդ, որը, սակայն, սպարապետի ու ժողովականների համոզմամբ կարող էր համախմբել ու զորացնել եկեղեցին: Մեկ օրում Զաքարիան ստանում է սարկավագության, քահանայության, եպիսկոպոսության աստիճանները եւ օծվում կաթողիկոս: Զաքարիան իսկապես կարողանում է համախմբել ու զորացնել եկեղեցին, որը դրական ազդեցությունն է ունենում երկրի միավորման գործում: Ժամանակագրության այս հատվածը Սամվել Անեցին շարադրել է՝ նյութը համառոտաբար քաղելով Հովհաննես Դրասխանակերտցուց, սակայն վերջինս չի նշում Զաքարիայի՝ մեկ օրում սարկավագությունից կաթողիկոսության հասնելու հանգամանքը: Այդ մասին գրում է Ասողիկը, որից էլ օգտվել է Սամվել Անեցին (Ստեփանոս Տարոնեցի, էջ 109): Այս հատվածը ցույց է տալիս, որ ժամանակագիրը համադրել է տարբեր աղբյուրների տեղեկությունները եւ ներկայացրել փոխլրացված տարբերակ:

[162] Հավելման հեղինակ Հայրապետ վարդապետն օգտվել է Մովսես Խորենացու խոսքերից, որ նա ասել էր Տիգրան Երվանդյանի մասին. «...զընդ լծով կացեալսս՝ լծադիրս եւ հարկապահանջս կացոյց բազմաց» (Մովսէս Խորենացի, էջ 72):

[163] Բյուզանդական Փոտ պատրիարքի՝ Հայոց Զաքարիա կաթողիկոսին ուղարկած նամակից հետո 862 թ. գումարված Շիրակավանի ժողովը ընդունել է դավանական փոխադարձ հանդուրժողականության մասին կանոններ (տե՛ս **R. Makdoudi an, The Chalcedonian issue and the early Bagratids: the council of Shirakavan,** “Revue des études Arméniennes ”, **T. XXI, Paris 1988-1989, p. 431-448.**, Պ. Անանեան, Փոտ պատրիարքի թղթակցութիւնը Հայոց հետ, «Բազմավէպ», 1989, էջ 37-66, Ա. Մահե եւ Ժ-Պ. Մահե, Գրիգոր Նարեկացին եւ իր «Մատեան ողբերգութեան» երկը, Երեւան, 2004, էջ 47): Մ. Օրմանյանն այլ տեսակետ է հայտնել՝ ըստ երեւույթին անհրաժեշտ աղբյուրներ չունենալու պատճառով (Ազգապատում, հ. Ա, էջ 1137-1139):

[164] Խոսքը Սմբատ Ա Բագրատունու եւ արաբ Ափշին (Աֆշին) ոստիկանի հակամարտության ժամանակ Գեւորգ Գառնեցի կաթողիկոսի գերության եւ երկամսյա բանտարկության մասին է, որն ավարտվեց փրկագնի վճարմամբ եւ Համամ Արեւելցու միջնորդությամբ, հավանաբար 894 թ. (Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 1173):

[165] Սա առայժմ միակ վկայությունն է այն մասին, որ Գեւորգ Գառնեցի կաթողիկոսը նորոգել ու պայծառացրել է Հավուց թառի վանքը: Առավել հետաքրքիր է Հավուց թառի՝ Գեւորգ կաթողիկոսի ամառային նստոց լինելու մասին վկայությունը: Հավանաբար, ամառանոցի նույն դերն է ունեցել Բյուրականը՝ քիչ հետո աթոռակալած Հովհաննես Դրասխանակերտցու համար, որտեղ նա նաեւ եկեղեցի է կառուցել: Հետաքրքիր է, որ 13-րդ դարի վերջերին Նորավանքում աթոռակալող Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանն ավե-

լի զով վայրում գտնվող Արատեսի վանքը դարձրել է ամառային նստոց (տե՛ս Կ. Մաթեւոսեան, Դրուագներ Նորավանքի եպիսկոպոսական աթոռի պատմութիւնից (Արատես եւ Վերին Նորավանք), «Նորավանք» հայագիտական տարեգիրք, Մոնրէալ-Երեւան, 2001, էջ 62-63):

[166] Ստեփանոս Օրբելյանը պատմում է, որ Աշոտոցի վանահայրության ժամանակ՝ Սեւանա կղզու եկեղեցիների կառուցումից հետո, այստեղ է գալիս իշխանաց իշխան Աշոտը, առատ նվիրատվություններ կատարում, այդ թվում՝ «ընծայէ զփրկական նշանն աստուածընկալ խաչին» (Ստեփանոս Օրբէլեան, էջ 174, տես նաեւ Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 1152): Խոսքը Աշոտ Ա-ի (իշխանաց իշխան՝ 862-ից, թագավոր՝ 885-890) մասին է: Իսկ խաչի ծագումը Նաթանայել Հավուցթառեցին կապում է բյուզանդական Վասիլ Ա կայսեր (867-886) անվան հետ:

[167] Այս եւ Հայրապետ վարդապետի հաջորդ հավելումն օգտակար են «տիեզերական» տիտղոսի խնդրի ուսումնասիրության առումով, որի առաջին կրողը Սմբատ Ա Բագրատունին էր (տե՛ս Հ. Մարգարյան, Բագրատունի թագավորների «տիեզերական» տիտղոսը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 6, Երեւան, 2005, էջ 99-106):

[168] Այստեղ «Սկիւթական ազգ», իսկ շարունակության մեջ «Սկիւթացի» ասելով (տե՛ս նաեւ աստ՝ 1045 թ. տեղեկությունը) Սամվել Անեցին նկատի ունի սելջուկներին: Այս առումով Մխիթար Գոշը հետեւյալն է ասում՝ «Սկիւթացին, որ ասին Թուրք» (Պ. Մուրադյան, ԺԲ-ԺԳ դարերի հայ-վրացական դավանական խնդիրները եւ Մխիթար Գոշի «Առ Վրացիսն» թուղթը, Ս. Էջմիածին, 2011, էջ 217):

[169] Սամվել Անեցին այստեղ ասում է, որ Մելիքշահի նախնիների մասին Հովհաննես Սարկավագի ձեռքով գրվածը ժամանակին ինքը տեսել է, եթե գտնի, այդ մասին կգրի, եթե ոչ՝ զանց կառնի:

[170] Սաղմոս, ՀԸ, 13:

[171] Հովհաննես Դրասխանակերտցին, գրելով այդ մասին, Ատրներսեհին կոչում է. «Մեծ կուրապաղատն Վրաց՝ Ատրներսեհ», եւ շարունակում, որ Սմբատը՝ «կացուցանէ զնա թագաւոր Վրաց աշխարհին» (Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 188):

[172] Նույնը ֆրանսերեն հրատարակության մեջ է (էջ 433): Սմբատավանը Բաբերդն է, ինչպես Վարդան Արեւելցին է նշում՝ հիշատակելով Բյուրատի որդի Սմբատին՝ «իշխանի Սմբատաւանայ, որ է Բաբերդ ի Սպեր գաւառի» (Վարդան Արեւելցի, էջ 83, աշխարհաբարը՝ էջ 115): Մ1899 ձեռագրում՝ «Սմբօսն շինեցաւ»: Սմբոս գետ կա Կիլիկիայում, բայց այդ անունով քաղաք աղբյուրներում մեզ չհաջողվեց գտնել:

[173] Գագիկ Արծրունու մասին է, որը Սմբատ Ա Բագրատունու կողմից կարգվել էր Հայոց բանակի հրամանատար, սակայն թագ ստանալու համար Ատրպատականի Յուսուֆ ամիրի կողմն անցավ:

[174] Աբլղարիբ Հավնունին եղել է Վասպուրականի Գագիկ Ա Արծրունի թագավորի զորավարը, որին նրա հաջորդը պաշտոնանկ է արել (տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, էջ 20-21):

[175] Գագիկ Արծրունին թագավոր է դարձել 908 թ., Աղթամարի Ս. Խաչը կառուցել է 915-921 թթ.:

[176] Մ9796 եւ Ե1221 ձեռագրերում հատվածի առաջին բառերն են՝ «Յաւուրս Աբասա եւ հրամանաւ նորա…»:

[177] Մ3613՝ «հռչակաւոր տունն» (49բ): Փոփոխությունը գրիչ Մխիթար Անեցունն է (հավանաբար նույնանուն պատմիչը), որն այդ ժամանակ Հոռոմոսի վանքի աշակերտ էր:

[178] Բերի՝ Հայոց Աբաս թագավորի դեմ կատարած արշավանքի ու անփառունակ վախճանի մասին հանգամանորեն պատմում է Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը. «Բիւրաւոր զօրօք ելանէր Բէրն բէլապէս ամբարտավանութեամբ, իշխանն Ափխազաց ի Սամարատացւոց աշխարհէն, որ յայնկոյս քան զԿովկասեան լերինս…»: Ըստ պատմիչի՝ նա Հայոց թագավորի վրա հոխորտում է, որ իր կառուցած եկեղեցին (Կարսի) հայկական ծեսով չօծի, այլ ինքը գալով՝ քաղկեդոնական կարգով կանի («զի ասէր իւրն գալ կատարէ քաղկեդոնական սահմանաւն», Ստեփանոս Տարոնեցի, էջ 172): Ժամանակագրության մեջ հավելված վերոնշյալ ուշագրավ վկայությունը Բերի քաղկեդոնական լինելու փաստին ավելացնում է այն, որ նա նաեւ վայելել է բյուզանդացիների աջակցությունը (չի բացառվում, որ հենց նրանց ուղորդմամբ է Աբասի դեմ դուրս եկել):

[179] Ժամանակագրության վաղարշապատյան հրատարակության մեջ, ի տարբերություն հնագույն ձեռագրերի, կաթողիկոսի անունը գրված է «Եղիա» (Անեցի, 1893, էջ 99): Կաթողիկոսի անունը ժամանակին ուղղել են Մ. Օրմանյանն ու Ն. Բյուզանդացին (Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 1261, Ն. Բիւզանդացի, նշվ. աշխ., էջ 353):

[180] Մ1899-ում՝ «Ի տէր Եղիայէն», որտեղից անցել է Ժամանակագրության 1893 թ. հրատարակությանը:

[181] Աղթամար կղզու դիմաց՝ Արտոս լեռան ստորոտում՝ Իլի բնակավայրում, Գագիկ Ա Արծրունի (մահ. 943) թագավորի կառուցած «Քառասուն խորան Ս. Աստվածածին» եկեղեցու մասին քիչ տեղեկություններ են հայտնի եւ անգամ ցայժմ անհասկանալի էր թվում, թե թագավորն ինչու է կառուցել այն: Սույն ընդմիջարկության շնորհիվ կարծես պարզվում է իրողությունը: Գագիկը Աղթամարի եկեղեցին, որն իր մայրաքաղաքի գլխավոր եկեղեցին էր, բայց նաեւ բազմանդամ սպասավորությամբ կաթողիկոսարանի եկեղեցին, վերցրել է Եղիշե կաթողիկոսից եւ նրան նոր նստավայր տվել կղզուց ոչ հեռու գտնվող Իլիում, ուր եւ հիմնել է գեղաշեն եկեղեցի եւ համապատասխան միաբանական կացարաններ:

Ուշագրավ է նաեւ այս կաթողիկոսի Բերդաձորի վանքում (Ս. Աստվածածին, գտնվել է Առտեր կղզու դիմացի ծովեզերքից 2-3 կմ խորք) թաղված լինելու

մասին նշումը, քանի որ ցայժմ ենթադրվել է, թե նա թաղվել է Աղթամարում (Հայ Եկեղեցու հանրագիտարան, պր. Ա, Ամենայն Հայոց կաթողիկոսներ, Ս. Էջմիածին, 2008, էջ 80):

[182] Հավելում կատարողը, թերեւս ուշ շրջանում ապրած մեկը լինելով, հավանաբար շփոթել է «Վարագա» եւ «Արգինա» անունները, քանի որ կաթողիկոս Անանիա Մոկացին, ինչպես հայտնի է, Վասպուրականից Բագրատունյաց թագավորություն փոխադրվեց եւ աթոռակալեց Շիրակի Արգինայում:

[183] Հայր Վարդիկի եւ հայր Կարմիրի մասին տեղեկությունները քաղված են Ստեփանոս Տարոնեցու Պատմությունից (Ստեփանոսի Տարօնեցւոյ Պատմութիւն, էջ 176-177):

[184] Վասպուրականի թագավոր Դերենիկ (943-958): Նրա եւ հաջորդ թագավոր Համազասպի անունը (Հայոց ՆԻԱ) Վասպուրականում գրված այս ձեռագրում ավելացվել են գրչությունից հետո, այլ գրով (Մ3681, 75բ, 77ա):

[185] Մոկքի եպիսկոպոս Դավիթը (կոչվել է «հրաշագործ») Ապարանից վանքի հիմնադիրն է, որը որոշ ժամանակ հետո շատ նշանավոր դարձավ Կոստանդնուպոլսից բերված Փրկչական Խաչի մասունքի շնորհիվ: Հ. Աճառյանը գրում է, որ նա մահացել է 925 թ. (Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, էջ 33), բայց դա անհնարին է, քանի որ, ինչպես հայտնի է, Դավթին եպիսկոպոս է ձեռնադրել Անանիա Մոկացին, որը կաթողիկոս դարձավ 946 թ.: Հետեւաբար՝ վերոնշյալ լրացման տարեթիվը (955) հավանաբար հենց Դավթի մահվան թվականն է:

[186] Քանի որ այս հատվածը եզակի է եւ ձեռագրական վկայությունը ձեռքի տակ չունենք, ներկայացնում ենք լատիներեն թարգմանության հատվածը. «**A sپt ivs dپn idات ivm sپnm cپnf irm av it G pپr p dپc e dپn ag iات a m ilitپm m illibپs prپ pپsi tپ**» (էջ 720): Մ. Բրոսսեն այն թարգմանել է ֆրանսերեն հետեւյալ կերպ. «**A chپt cپns plide sa pپs itپپn av m py پa d´پnپ arm nپ dپ 90 000 hپn m پs, cپ m m ادد e par G pپrh**» (էջ 437): Գոռի վերաբերյալ ուրիշ աղբյուր հայտնի չէ: Առաջին անգամ այն հիշատակել է Մ. Չամչյանը, առանց սկզբնաղբյուր նշելու (Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 837), բայց հնարավոր է, որ Սամվել Անեցու ժամանակագրության լատիներեն հրատարակության համար օգտագործված ձեռագրերից մեկի հենց այս վկայությունն է նկատի ունեցել: Գոռին նա համարում է Մարզպետունի, մի տոհմանուն, որը նույնպես սկզբնաղբյուրներից առայժմ հայտնի չէ: Հենց դա եւ այդ ժամանակի համար Գոռ անձնանվան անսովորությունն է պատճառ դարձել, որ մեր նախորդ հրատարակություններից մեկում ենթադրել ենք, թե Մատթեոս Ուռհայեցու մի վկայության «զմարզպետական գունդն» (Մատթեոս Ուռհայեցի, էջ 8) ձեւակերպման երկրորդ բառի եղծված լինելու պատճառով հավանաբար կարդացվել է «զմարզպետական Գոռն» (Կ. Մաթեւոսյան, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 112, տողտկ.): Վերոնշյալ հավելման շնորհիվ Գոռի անունը կարծես դուրս է

գալիս վիճարկման դաշտից, բայց այնտեղ դեռ մնում է աղբյուրներում չհանդիպող «Մարզպետունի» տոհմանունը:

[187] Համդունը Հալեպի ամիրն էր (Ալի իբն Աբու-լ-Հայջա Աբդալլահ իբն Համդան Սայֆ ալ-Դաուլա), որը մահացել է 967 թ.: Նրա մասին Մատթեոս Ուռհայեցին 959 թ. ներքո հետեւյալ վկայությունն ունի. «Յայսմ ամի կոտորեցին զօրքն Հայոց զՀամտուն զօրապետն Տաճկաց» (Մատթեոս Ուռհայեցի, էջ 8): Այն ծանոթագրելով՝ Հ. Բարթիկյանը վկայաբերելով Հովհաննես Սկիլիցեսի հաղորդումը այդ շրջանում բյուզանդական զորավար Լեւոն Փոկասի՝ Համդունի նկատմամբ տարած հաղթանակի մասին, նշում է, թե Ուռհայեցու ասածը վկայում է բյուզանդական զորքի, հայերից բաղկացած լինելու մասին (նույն տեղում, էջ 484): Մինչդեռ պատմիչի նույն վկայությունից ելնելով՝ Հ. Նալբանդյանը գրում է, որ Համդունը «ՆԸ թվին (959-960) պարտվեց Աշոտ III թագավորից» (Արաբական աղբյուրները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին, կազմեց Հ. Նալբանդյան, Երեւան, 1965, էջ 254): Համդունի կենսագրությունից հայտնի է նաեւ, որ նա հակասություններ է ունեցել Բաղդադի Աբբասյան խալիֆայի հետ: Սակայն Աշոտ Ողորմածի՝ Համդունի հետ բախման պատճառների եւ նրա երկու թագ ստանալու մասին այլ տեղեկություններ հայտնի չեն: Ուստի նկատի ունենալով սույն տեղեկության եզակի բնույթը եւ այն, որ հայերեն բնագիրը ձեռքի տակ չունենք, ներկայացնում ենք լատիներեն եւ ֆրանսերեն թարգմանությունները. «**Eum vero Amadadam qui a magno Amira defecerat oppressisset, duplici ad hoc tiara redimitus est**» (էջ 720) «**A yant vaincu Hamdan, ravoltant contre le chef des amirs, il reçut de celui-ci deux couronnes**» (էջ 437-438): Երկու թարգմանություններում Համդունի եւ ամիրապետի հարաբերությունների հատվածում որոշ անհամապատասխանություն կա, լատիներենում Համդունն ընկճված է ամիրապետից, ֆրանսերենում՝ դեմ է դուրս եկել ամիրապետին:

[188] Հմմտ. (Մ1899) «Գագիկ թագաւոր օծաւ Հայոց»: Աբասի որդի Աշոտ Գ Ողորմածին, որը թագավոր օծվեց Անիում 961 թ., Աշոտ-Գագիկ կամ Գագիկ է կոչում Մատթեոս Ուռհայեցին (Մատթեոս Ուռհայեցի, էջ 8-9): Ն. Ադոնցն Ուռհայեցու հայտնածը համարել է «խառնակ» տեղեկություն (Ն. Ադոնց, Երկեր, հ. Ա, Երեւան, 2006, էջ 521): Ներկայացված ժամանակագրական միավորը հաստատում է Ուռհայեցու հաղորդածն այն մասին, որ Աշոտ Ողորմածը «Աշոտ Գագիկ» երկանունն է ունեցել: Վերջինս միայն Գագիկ անունով է հիշվում մանր ժամանակագրություններից մեկում («Գագիկ օծաւ թագաւոր 411 (962) ի թուին Հայոց»), որը ծանոթագրելով՝ Վ. Հակոբյանը թյուրիմացաբար կարծել է, թե ժամանակագիրը նշել է ավելի ուշ՝ 989-ից թագավորած Գագիկ Ա-ին (Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 337, 347): Այս մասին տե՛ս Կ. Մաթեւոսյան, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 10:

[189] Ձեռագրում տեղեկությունը 981 թվականի դիմաց է, բայց պարզ է, որ դեպքը վերաբերում է Ռոմանոս Բ (959-963) կայսեր ժամանակ՝ 962 թ. Հա-

լեպի ուղղությամբ կատարված հաղթական արշավանքին, ուստի դնում ենք այս ժամանակահատվածում:

[190] Սամվել Անեցու Ժամանակագրության հին օրինակները չունեն Հաղբատի եւ Սանահինի կառուցման մասին տեղեկությունը: Իսկ ընդմիջարկությունները երեք կարգի են, որոնք ներկայացված են նաեւ 967 եւ 968 թթ. ներքո (տե՛ս ստորեւ 193 եւ 194 ծանոթագրությունները):

[191] Վահան Սյունեցու աթոռանկության մասին գրելիս Սամվել Անեցին օգտվել է Ասողիկից, սակայն եթե վերջինս որպես կաթողիկոսին առաջադրված մեղադրանք միայն նշում է «Սա ի քաղկեդոնականս սիրելութիւն եւ հաճութիւն կամեցաւ առնել թղթովք» (Ստեփանոս Տարոնեցի, էջ 181), ապա Անեցին էական լրացումներ է կատարում՝ հայտնելով, թե նա «դաշնադիր եղեւ ընդ Վիրս միաբան դաւանութեամբ», ավելացնելով նաեւ պատկերների ներմուծման մասին: Հետագայի պատմիչներ Կիրակոս Գանձակեցին եւ Վարդան Արեւելցին գրեթե կրկնում են Սամվել Անեցու խոսքերը, իսկ Ստեփանոս Օրբելյանը նշում է նաեւ սրբապատկերների ներմուծման մասին:

[192] Այս ամբողջ հատվածի համար Սամվել Անեցու աղբյուրը Ասողիկի պատմությունն է (Ստեփանոս Տարոնեցի, էջ 181-182, 185): Միայն նա երկու ուշագրավ լրացում է անում՝ այն, որ կաթողիկոս Վահան Սյունեցուն (968-969) հաջորդած Ստեփանոս Գ Սեւանցին (969-972) Մաշտոց Ա Եղիվարդեցի կաթողիկոսի ազգականն էր, իսկ Ստեփանոսի հաջորդը՝ Խաչիկ Ա Արշարունին (973-992) կաթողիկոս Անանիա Մոկացու (946-968) ազգականն էր:

[193] Սամվել Անեցու Ժամանակագրության 1893 թ. հրատարակության մեջ տեղ է գտել այս ընդմիջարկությունը՝ քաղված 17-րդ դարի մատյանից (Անեցի, 1893, էջ 100), որն ուսումնասիրողներն անվերապահորեն համարել են Սամվել Անեցու գրածը: Կ. Ղաֆադարյանը, մասնավորապես, նշում է. «Պետք է առանց վերապահության ընդունենք նաեւ Սամուել Անեցու՝ Հաղբատի հիմնադրման վերաբերյալ հիշատակած թվականը, 10 տարի Սանահինի հիմնադրումից հետո, այսինքն՝ 976/977 թվականին» (Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երեւան, 1963, էջ 10-12, տե՛ս նաեւ Դիվան հայ վիմագրության, պր. 9, Լոռու մարզ, կազմեցին՝ Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղումյան, Երեւան, 2012, էջ 125): Հենց 976-ն էլ, որպես Հաղբատի հիմնադրման թվական, լայն տարածում է գտել (տե՛ս Գ. Շախկյան, Լոռի. պատմության քարակերտ էջերը, Երեւան, 1986, էջ 96, ՀՍՀ, հ. 6, Երեւան, 1980, էջ 81 (նույնն է հայկական մյուս հանրագիտարաններում), տե՛ս նաեւ ամենավերջին հրատարակությունը՝ Հաղբատավանք, Ս. Էջմիածին, 2009, էջ 21 եւ այլն): Իրականում հին օրինակները հայտնում են Հաղբատի ավելի վաղ կառուցված լինելու մասին (տե՛ս հաջորդ ծանոթագրությունը):

[194] Վաղ շրջանի ընդմիջարկություններում նշվում է Հաղբատի՝ 10 տարով Սանահինից ավելի վաղ կառուցված լինելու մասին, որն ավելի հավաստի է թվում, եթե նկատի ունենանք, որ Վ511 ձեռագիրն ընդօրինակվել է 1206 թ. Սանահինի վանքում: Հմմտ. (Մ8481) «Ի ՆԺԷ (968) թւին շինեցաւ Հաղբատ ի

Խոսրովանոյշ թագուհոյ, կնոջէ Աշոտոյ Շահանշահի, եւ ապա զկնի Ժ (10) ամի՝ Սանահինն»: Մոտավորապես նույն տեղեկությունը պահպանվել է Սանահինի վանքի ավանդամատյանում (Քյոթուկ) ՆԺԵ (966) թվականի նշումով (Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քէօթուկը), աշխատասիրութեամբ Պ. Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 59), ինչպես նաեւ այլ ժամանակագրություններ (Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 25, հ. 2, էջ 501): Այս մասին հանգամանորեն տե՛ս Կ. Մաթեւոսյան, Սամվել Անեցին որոշ վանքերի կառուցման մասին, «Էջմիածին», 2012, Բ, էջ 16-18:

[195] Կաթողիկոս Խաչիկ Ա Արշարունու (973-992) Արգինայում Տրդատ Ճարտարապետի ձեռամբ կաթողիկոսարանի եւ եկեղեցու կառուցման մասին հանգամանորեն հայտնում է Ասողիկը (Ստեփանոս Տարոնեցի, էջ 184-185):

[196] Վասպուրականի թագավոր Աբուսահլ-Համազասպ (958-968):

[197] Տեղեկությունը վերաբերում է Հավուց թառում պահված սրբազան խաչերին եւ մասնավորապես Ամենափրկիչ անունով հայտնի, այժմ Ս. Էջմիածնում պահվող, Քրիստոսին խաչից իջեցնելու քանդակապատկերը ներկայացնող նշանավոր փայտյա խաչին: Գ. Հովսեփյանն այս կապակցությամբ ընդարձակ հետազոտություն է կատարել, որի սկզբում փորձում է պարզել սրբության ծագումը, բայց, վկայակոչելով հին ու նոր շրջանի մի շարք տեղեկություններ (մասնավորապես Մանուել Բջնեցու գրած գանձը), ուսումնասիրության առաջին մասը եզրափակում է հետեւյալ խոսքերով. «Հակասությունների մի բավիղ, որ թվում է, թե դժվար է միջից դուրս գալ» (Գ. Հովսեփյան, Հավուց Թառի ամենափրկիչը..., էջ 10): Նաթանայել Հավուցթառեցին Ամենափրկիչի ծագման մասին գրում է երկու տեղ, մեկի սկզբում որոշ վերապահությամբ նշում է՝ «ոմանք ասէն թէ»: Ըստ այս տեսակետի՝ Ամենափրկիչը եւ Տերունական խաչի մասունքը, որն անվանում է «Աստուածընկալ», Աշոտ թագավորին է տվել Վասիլ կայսրը: Քանի որ տեղեկությունը վերաբերում է Վասիլ Բ-ի (976-1025) գահակալության սկզբին, ապա ենթադրելի է, որ այստեղ Նաթանայելը նկատի ունի նրան եւ վերջինիս ժամանակակից Աշոտ Գ Ողորմածին (953-977): Ամենափրկիչի ծագման երկրորդ տեսակետի մասին Նաթանայելը գրում է քիչ հետո՝ 1002 թ. վերաբերող տեղեկության վերջում («Եւ աստ ասեն եկե(ա)լ ի Հայս Վա[սի]լ կայսր»)՝ խաչը ստացողի դերում նշելով Գագիկ Ա-ին:

[198] Հայրապետ վարդապետի այս հավելման մեջ հատկապես հետաքրքիր է Սմբատի հիմնադրած Կաթողիկե եկեղեցու անկյուններում նրա անվան գրության փաստի արձանագրումը: Այդ գրություններից մեկը, բարեբախտաբար, պահպանվել է: Տաճարի պատին «ՍՄՊԱ(Տ)» անվան տեղադրության մասին Անիի վիմագրական ժողովածուում նշվում է՝ «արտաքուստ, հյուսիսային պատի արեւելյան անկյունում» (Դիվան հայ վիմագրության, պր. 1, էջ 36): Հնարավոր է, որ Սմբատի «կանխաժաման» մահը եւ Կաթողիկեի անավարտ մնալն էր պատճառը, որ այս եղանակով արձանագրվել է նրա անունը, որը Հայրապետը բնորոշում է որպես «դրոշմ գծոյ անուան նորա»: Եկեղեցին

անավարտ էր, չէր գրված շինարարական արձանագրություն, եւ հնարավոր է, որ հենց այդ պատճառով կյանքից հեռացած արքայի անունը գրվել է պատերի այն մասում, ուր հասել էր շինարարությունը: Ըստ Ա. Ղուլյանի՝ Սմբատի ժամանակ եկեղեցու պատերը կառուցված են եղել «մոտ 10-11 մետր բարձրությամբ՝ մինչեւ ճակատների կամարաշարի վերին նիշը, կամ դրանից մի փոքր վեր՝ մինչեւ հորիզոնական քիվերը» (Ա. Ղուլյան, Անիի Մայր տաճարի հազարամյա խորհուրդը, «Հուշարձան» տարեգիրք Գ, Երեւան, 2005, էջ 29): Թերեւս պատերի բարձրության այդ չափն է նշել Հայրապետ վարդապետը՝ «...չափ աշտիճանացն եւ երկուս կարգս ի տաճարէն...»: Կարծում ենք, որ այս ձեւակերպումը հնարավոր կլինի ճիշտ մեկնաբանել, երբ հայտնի լինի, թե Սմբատի անվան գրությունը գետնից կամ գետնախարսխից ինչ բարձրության վրա է գտնվում: Ուշագրավ է նաեւ տաճարում աստիճանների մասին հիշատակությունը (արդյոք գետնախարի՞սխն է): Դրանց նորոգման մասին նշում է Տիգրան Հոնենցը 1213 թ. իր արձանագրության մեջ. «Ես Տիգրան... շինեցի հալալ ընչիւք իմով զաշտիճաներս մեծափառ սրբոյ Կաթողիկէիս, զոր ի բազում ամաց հետէ խարխալեալ էր...» (Դիվան հայ վիմագրության, պր. 1, կազմեց Հ. Օրբելի, Երեւան, 1966, էջ 34):

[199] Գրիգոր Պահլավունի Համզա, որդի Աբուղամրի, հայր Վասակ եւ Վահրամ Պահլավունիների: Կառուցել է Անիի Ս. Գրիգոր (Աբուղամրենց) եկեղեցին:

[200] Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիայի տաճարը վնասվել է 989 թ. հոկտեմբերի 25-ի երկրաշարժից (քանդվել է գմբեթը, որը նորոգել է Անիի Տրդատ ճարտարապետը): Նույն թվականի ապրիլի 13-ին Վասիլ Բ կայսրը ճակատամարտում ջախջախել է ապստամբած Վարդ Փոկասին (Վարդան Փոկաս կրտսեր): Նախօրինակում թերեւս «ի Վահան»-ի փոխարեն պետք է եղած լինի «ի Վասլէն»:

[201] Այն հանգամանքը, որ Սամվել Անեցին չի նշել Մարմաշենի շինարարության ավարտի մասին, գրավել է նաեւ ժամանակագրության հետագա ընդօրինակողների ուշադրությունը եւ նրանցից ոմանք պատմիչի նախադասությունը շարունակել են՝ «սկսեալ ի ՆԼԵ (986) թուին եւ ավարտեալ ի ՆԽԳ (994)-ին, որ լինի Ը (8) ամ»: Մարմաշենի վանքի Կաթողիկե եկեղեցու շինարարական ընդարձակ արձանագրության մեջ նշված է շինարարության սկզբի թվականը. «...սկսեալ ի ՆԼԷ (988) թուականին Հայոց», որն, ըստ էության, ներդաշնակ է Սամվել Անեցու եւ նրա շարունակողների հայտնած թվականներին: Սակայն հիշյալ արձանագրության մեջ անսովոր է թվում շինարարության ավարտի համար նշված 1029 թվականը (որով շինարարության տեւողությունը կազմում է 41 տարի):

[202] Առաջինը 1004 թ. իր պատմությունն ավարտած Ստեփանոս Ասողիկն է շեշտում, որ Գագիկ Ա-ի Անիում հիմնած Ս. Գրիգոր եկեղեցին կառուցվել է Վաղարշապատի Զվարթնոցի ճիշտ նմանությամբ՝ «նոյնաձեւ չափով եւ յօրինուածով», եւ նվիրվել Քրիստոսի ծննդյան 1000-ամյակին (Ստեփանոս Տարոնեցի, էջ 282): Հոհան Շիրակացի գրիչն Ասողիկի պատմության մեջ

հավելում է արել՝ նշելով, որ եկեղեցու ճարտարապետն էր Տրդատը: Իր ընդօրինակած Մ2865 ձեռագրում Ասողիկի Պատմության համապատասխան հատվածի վերնագիրը՝ «Յաղագս շինելոյն Գագկայ արքային ի քաղաքն Անւոյ զեկեղեցին մեծ անուամբ սրբոյն Գրիգորի» (240բ-241ա) Հոհանը լրացրել է նույն կարմիր թանաքով, զարդագիծ շրջանակի մեջ գրված հետեւյալ բառերով. «Տրդատ վարդպետ եկեղեցոյն» (Հոհան գրչի հավելումների մասին տե՛ս Կ. Մաթեւոսյան, Յոհան գրչի ընդօրինակած պատմական ժողովածուն եւ կատարած հավելումները, «Էջմիածին», 2008, Զ-Է, էջ 102-112, նույնի՝ Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը…, էջ 180):

[203] Հայտնի է, որ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկն իր պատմությունն ավարտել է 1004 թ., որի մասին գրում է պատմության վերջաբանում, որտեղ նաեւ պատվիրատու Սարգիս կաթողիկոսին դիմելով՝ նշում է, որ նրա հանձնարարությամբ իր բազմաթիվ շրջագայություններն ու եկեղեցու ամենօրյա գործերը թույլ չեն տվել, որ գործը լիարժեք լինի: Բնականաբար, պատմության շարադրումը մի քանի տարի է տեւել: Հնարավոր է, որ Ասողիկը պատմությունը գրելու կաթողիկոսական պատվերը ստացել է 998 կամ 1000 թվականին, եւ ներկայացվող տեղեկությունը դրա մասին է:

[204] Տեղեկությունը ձեռագրում 990-ական թվականների հատվածում է եւ ժամանակագրական առումով իր տեղում չէ, քանի որ Փիլարտոս Վարաժնունու իշխանությունը ստեղծվեց 1071 թ. Մանազկերտի ճակատամարտից հետո: Վկայությունը քաղված է Միքայել Ասորուց (Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորւոց պատրիարքի, Երուսաղէմ, 1871, էջ 399), որից օգտվել է նաեւ Կիրակոս Գանձակեցին (Կիրակոս Գանձակեցի, էջ 83):

[205] Մինչեւ այժմ Մխիթար Այրիվանեցու կարճ հաղորդմամբ հայտնի «Շինի եւ Հաւուց թառն ի Գէորգեայ իշխանէն Քեղւոյ» (Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, էջ 57) տեղեկությունը Նաթանայելը հարստացրել է Քեղի (Գեղի) ամրոցի տեր Գեւորգ իշխանի ծագման մասին եզակի վկայությամբ, նաեւ հանգամանորեն ներկայացնում է իշխանի Հավուց թառում կատարած աշխատանքները (Կ. Մաթեւոսյան, Հավուց թառի վանքը, Երեւան, 2012, էջ 13-19):

[206] Կեչառիսի վանքի 1003 թ. շինարարական արձանագրության մեջ Գրիգոր Ապիրատը հիշատակում է հորը՝ Հասանին: Մատթեոս Ուռհայեցին նույնպես նշում է նրա անունը. «Ապիրատ ոմն, որ էր մեծ իշխան Հայոց, որդի Հասանայ» (Մատթեոս Ուռհայեցի, էջ 16): Ն. Ակինյանը Հասանյան (Ապիրատյան) տոհմին նվիրված ուսումնասիրության մեջ գրում է. «Հասան. սա հայրն էր Ապիրատի. իր մասին աւելի բան չենք գիտեր» (Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 373): Ապիրատի մասին պահպանվել է նաեւ Մխիթար Անեցու հայտնած տեղեկությունը, որը մեզ է հասել Վարդան Արեւելցու միջոցով. «Զսմանէ (Ապիրատի մասին – Կ. Մ.) ասեն յանշանից մեծացեալ, եւ վասն խելացի եւ առատ ձեռացն մինչեւ լիներ տէր երկոտասան հազար հեծելոց, որ եւ շինեաց զսուրբ ուխտն Կեչառուս» (Վարդան Արեւելցի, էջ

102-103), որից ենթադրվել է, թե նա թերեւս իշխանական ծագում չուներ: Նաթանայելի հայտնած տեղեկության շնորհիվ պարզ է դառնում, որ Հասանը իշխան էր, եւ նրա որդիներն էին Ապիրատը եւ Գեւորգ իշխանը: Քեղի ամրոցը հորից ժառանգած Գեւորգը, հավանաբար, Հասանի ավագ որդին էր, իսկ Ապիրատը՝ կրտսերը, դրա համար է նրա առաջխաղացումը բնութագրվել «յաննշանից մեծացեալ» բառերով (այս մասին հանգամանորեն տե՛ս Կ. Մաթեւոսյան, Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը եւ նրա տոհմը 11-րդ դարում, «Բանբեր Մատենադարանի», 18, Երեւան, 2008, էջ 67-76):

[207] Մատենագրական աղբյուրները (Մխիթար Անեցի, Վարդան Արեւելցի, Մխիթար Այրիվանեցի, Սմբատ Սպարապետ) Ապիրատ անունով են կոչում Հասանի որդի մեծ իշխանին, որը կառուցել է Կեչառիսի վանքը, եւ որը նույն Կեչառիսում, Արզականում Գորգ քահանայի թողած 1001 թ. արձանագրության (Գ. Սարգսյան, Գրիգոր-Ապիրատ Հասանյան. Հիմնադիր Կեչառիսի վանքի «Վիմագրական նոր վկայություն», «Հին Հայաստանի մշակույթը», ժողովածու 12, Երեւան, 2002, էջ 111) եւ Տեկորում իր դստեր գրած արձանագրության մեջ (Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 135) անվանվում է Գրիգոր Մագիստրոս: Հայագետները խնդրի լուծման միջոց են առաջարկել իշխանին վերագրելով Գրիգոր Ապիրատ երկանունը (այս մասին տե՛ս Կ. Մաթեւոսյան, Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը եւ նրա տոհմը, էջ 67-72):

[208] Հավուց թառի համալիրի ուսումնասիրությամբ հանգամանորեն զբաղված Գագիկ Սարգսյանը եկել է այն եզրակացության, որ Կաթողիկե եկեղեցուց միայն հարավային պատն է պահպանվել, եւ ավելացնում է. «Ցավոք, այս կառույցի ճարտարապետական հորինվածքի մասին չենք կարող որոշակի կարծիք հայտնել, որովհետեւ մյուս պատերը հիմնովին քանդված են, իսկ տեղանքը ծածկված է հաստ հողաշերտով» (Գ. Սարգսյան, Հավուց թառի հիմնադրման վկայագրի շուրջ, ՀՀ ԳԱ «Լրաբեր» հաս. գիտ., 1988, թիվ 4, էջ 68): Նաթանայելի վկայությունից տեղեկանում ենք, որ եկեղեցին սկզբնապես ինը խորան է ունեցել: Այն կանգուն ու անխաթար է եղել մինչեւ 1679 թվականի մեծ երկրաշարժը, որի ժամանակ քանդվել է: Ցավոք, այն ոչ թե վերականգնել են, այլ Կաթողիկեի ու նրա արեւմտյան կողմում կառուցված մեծ ժամատան քարերով 1721 թ. սկսել են մի նոր եկեղեցի կառուցել, որն անավարտ է մնացել: Կաթողիկեի հիմքերն այժմ ծածկված են հողի շերտով (տե՛ս Կ. Մաթեւոսյան, Հավուց թառի վանքը, էջ 45-49):

[209] Սա Գառնիի եւ Գեղարդի միջեւ գտնվող Կոխթ (Գողթ) գյուղի մասին մատենագրության մեջ պահպանված ամենավաղ հիշատակությունն է: Ինքնին հետաքրքիր փաստ է, որ գյուղը 10-րդ դարի վերջին եղել է արքունի սեփականություն, եւ որ այն Գագիկ թագավորից եւ Հովհաննեսից (Հովհաննես Սմբատ) գնել ու որպես սեփականություն Հավուց թառի Կաթողիկեին է տվել Գեւորգ իշխանը:

[210] Այստեղ պետք է հասկանալ, որ իշխանն իր սեփականությունից «Հովայ» գյուղը, որպես «վանքագեղ», տվել է «Գետոց վանքին», որը նույնն է Հավուց

թառի հետ: Այս գյուղը Հովհաննես Դ Ովայեցի կաթողիկոսի (833-855) ծննդավայրն է, որի մասին Հովհաննես Դրասխանակերտցին գրում է՝ «Յովհաննէս ի գաւառէն Կոտայից ի գեղջէ Ովայից» (Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 118):

[211] Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի պատմությունը հասնում է մինչեւ 1004 թ., իսկ Արիստակես Լաստիվերցու պատմությունը սկսվում է 1001 թվականից: Պատմական վերջին տվյալը, որ արձանագրել է Արիստակես Լաստիվերցին, Ալփասլանի մահն է՝ 1072 թ.: Սա համարվում է Լաստիվերցու պատմության ավարտման ժամանակը, թեեւ ենթադրվել է նաեւ, որ պատմությունը նա գրել է 1072-79 թթ. ժամանակամիջոցում (Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, թարգմանությունը Վ. Գեւորգյանի, առաջաբանը եւ ծանոթագրությունները Գ. Մանուկյանի, Երեւան, 1971, էջ VIII): Գ. Մանուկյանը Արիստակես Լաստիվերցու մասին ավելացնում է. «…կարելի է նրա ծնունդը մոտավորապես դնել 1002 թ., իսկ մահը՝ 1080 թ.» (նույն տեղում): Հայտնի է, որ Արիստակես Լաստիվերցու պատմությունը բաղկացած է 25 մասից եւ վերջաբան հիշատակարանից, որն ի դեպ, անավարտ է: Հոհան գրչին պատկանող հնագույն ընդօրինակությունից (Մ2865) երեւում է, որ վերջից թերթ է ընկել եւ Լաստիվերցու երկի ավարտական հատվածը, փաստորեն, առայժմ հայտնի չէ: Լաստիվերցու հիշատակարանը սույն ձեռագրից հրատարակած Ա. Մաթեւոսյանն այն զետեղել է 1080 թվականի ներքո եւ անավարտ մնալու մասին ծանոթագրել. «Թերթ է պակաս: Գրվել է մինչեւ 1080 թվականը» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 115): Հավանաբար, նկատի է առնվել պատմիչի մահվան մասին եղած ենթադրությունը (1080 թ.): Սակայն վերը հրատարակված հավելման մեջ առկա՝ Լաստիվերցու պատմության ավարտի համար նշված ՇԼ (1081) թվականը թույլ է տալիս ենթադրել, որ այն եղել է պատմիչի հիշատակարանի վերջնամասում: Այդ թվականը նշում է նաեւ Առաքել Դավրիժեցին (Առաքել Դաւրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Խանլարյանի, Երեւան, 1990, էջ 468):

[212] Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի գրության ստույգ տարեթիվն է, որը նշված է հեղինակի հիշատակարանում:

[213] Մ1899 ձեռագրում՝ «Խոյլիկ», որտեղից անցել է ժամանակագրության 1893 թ. հրատարակության մեջ: Ն. Բյուզանդացին ուղղում է՝ «Խուլիկ» (Ն. Բիւզանդացի, էջ 145):

[214] Թագուհու անունը Սամվել Անեցին նշում է «Կատրամիդե», ինչպես որ Ասողիկի եւ այլ պատմիչների մոտ է: Հայրապետ վարդապետը (Մ1897) գրում է «Կտրանիդե», ինչպես որ Անիի Կաթողիկե եկեղեցու շինարարական արձանագրության մեջ է (Դիվան հայ վիմագրության, պր. 1, էջ 35):

[215] Ժամանակագրության 1893 թ. վաղարշապատյան հրատարակության մեջ նշված է միայն Փրկչական թվականը, որի պատճառով Բագնայրի վանքի կառուցումը նշված է 1012 թվականով (այդպես էլ տարածվել է գրականության մեջ, հայկական հանրագիտարաններում եւ այլուր), մինչդեռ ճիշտ է

փաստի արձանագրումը Հայոց թվականով, որը նույնպես նշված է Սամվել Անեցու ժամանակագրության մեջ եւ ՆԾԹ (1010) թվականն է: Այդպես են իրողությունն ընդունել հավանորեն Սամվել Անեցուց օգտված միջնադարյան մյուս հեղինակները: Օրինակ՝ Հովհաննես Սարկավագի ժամանակագրության շարունակողը՝ «ՆԾԹ (1010) թուին Սմբատ Մաքիստրոսն շինէ զԲգնայրն տուն Աստուծոյ» (Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 25), նաեւ պատմիչներ Կիրակոս Գանձակեցին եւ Մխիթար Այրիվանեցին: Գրականության մեջ վանքը կառուցող Սմբատ Մագիստրոսին թյուրիմացաբար համարել են սպարապետ Վահրամ Պահլավունու որդի, թեեւ այդ մասին ոչ մի աղբյուր չի հայտնում: Սմբատ Մագիստրոսն ու Վահրամ Պահլավունին միասին հիշատակվում են 998 թ. Ծմբոյի ճակատամարտում (Ասողիկ), երբ Վահրամը բավականին երիտասարդ էր եւ չէր կարող մագիստրոսական պատվաստիճանի հասած որդի ունենալ: Սմբատն այլ տոհմի ներկայացուցիչ է եղել (մանրամասները տե՛ս Կ. Մաթեւոսյան, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 58-67):

[216] Ինչպես երեւում է, Նաթանայելն այս հատվածում ներկայացնում է Հավուց թառի Ամենափրկիչ խաչի ծագման մեկ այլ վարկած, ընդ որում ցայժմ անհայտ, քանի որ Վասիլ կայսրից Ամենափրկիչը ստացողի դերում հանդես է գալիս Գագիկ Ա Բագրատունին (989-1017, մահվան թվականի մասին տե՛ս աստ՝ ծան. 219): Նա ժամանակակիցն էր Վասիլ Բ (976-1025) կայսեր եւ Հավուց թառի հովանավոր Գեւորգ իշխանի: Ստեփանոս Օրբելյանը վկայում է, որ Գագիկ Ա թագավորն ու Կատրամիդե թագուհին 1006 թ. Անիում նոր ձեռնադրված Սյունիքի Հովհաննես եպիսկոպոսին են նվիրել Տերունական Խաչի՝ ոսկու մեջ ագուցված մի մասունք, որը նրանց էր ուղարկել Վասիլ կայսրը (Ստեփանոս Օրբէլեան, էջ 304): Վասիլն ընդհանրապես կրոնական զգացումներով հայտնի գործիչ էր, եւ նրա՝ Հայոց թագավորին մասունքներ ուղարկելու այս փաստերը հայ-բյուզանդական առնչությունների տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

[217] Ցավոք, այս հատվածը շատ վնասված է, պահպանված տողերից կարելի է ենթադրել, որ Ամենափրկիչն ու Տերունական խաչի մասունքն ինչ-որ ժամանակ գտնվել են Երեւան գյուղաքաղաքում: Հնարավոր է նաեւ, որ այստեղ խոսվում է զարդարուն խաչվառի մասին:

[218] Պետրոս Ա Գետադարձի գահակալության թվի վերաբերյալ ձեռագրերում եղած նշումները բավականին տարբերվում են՝ (Մ9796, Ե1221) «Կաթողիկոս տէր Պետրոս ամս ԼԹ (39)», Մ1898 եւ Հ3՝ «ամս Խ (40)», (Մ1899) «Տէր Պետրոս ամս ԽԲ (42)», Մ3613՝ «ամս ԽԹ (49)»: Այս կաթողիկոսի տարիներին վերաբերող հատվածը Սամվել Անեցու մոտ ինչ-որ պատճառով թերի է: Այն սկսվում է աթոռակալության սկզբից, որ Փրկչական ՌԺԷ (1017), Հայոց ՆԿԴ (1015) թվականի դիմաց է, փոխանակ՝ 1019-ը լիներ, որի մասին այլ աղբյուրների վկայություններ կան: Տարիների քանակը՝ 30, նույնպես սխալ է, որն ինչպես վերեւում տեսանք, տարբեր ձեռագրերի գրիչներ փորձել են

յուրովի ուղղել՝ 39-ից մինչեւ 49 տարի նշելով: 1046 թ. բյուզանդացիների պարտադրանքով Անիից արտաքսված եւ ավելի ուշ Սեբաստիայում հաստատված Պետրոսի կյանքի վերջին տարիների մասին քիչ բան է հայտնի: Այստեղ կաթողիկոսն զգալի չափով մեկուսացման մեջ է եղել, քանի որ անգամ նրա մահվան թվականի մասին տեղեկությունները բավական տարբեր են: Գրականության մեջ ընդունված է Պետրոսի մահվան տարեթիվ համարել 1058 թ., որը գալիս է Մաղաքիա Օրմանեանից: Նա, տատանվելով տարբեր աղբյուրների հաղորդած 1053 կամ 1054 եւ 1058 թվականների միջեւ, ընտրել է վերջինը (Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 1460): Ռ. Վարդանյանը, Արիստակես Լաստիվերցու եւ Մատթեոս Ուռհայեցու հայտնած տվյալները համադրելով, Պետրոսի մահվան թվական է առաջարկում 1053 թ. (Ռ. Վարդանյան, Հայոց տոնացույցը, Երեւան, 1999, էջ 563): Սամվել Անեցու Ժամանակագրության հնագույն օրինակում (1176 թ.) Պետրոսի տարիները հասնում են մինչեւ Հայոց ՇԳ (1054) թվականը (Մ5619, 97ա): 1057 թ. գրված մի հիշատակարանում, ուր առաջին անգամ հիշվում է Պետրոսի հաջորդը՝ Խաչիկ Անեցին, որպես միանձնյա աթոռակալ, նշվում է. «Ի կաթողիկոսութեանն տեառն Խաչկա, յորժամ ի Թաւբլուրի վանսն էր» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 100): Հայտնի է, որ Պետրոսի մահից անմիջապես հետո Խաչիկին տարել են Կոստանդնուպոլիս եւ պահել երեք տարի, որից հետո նրան թույլատրել են հաստատվել Թավբլուրում: Այսինքն՝ հիշատակարանից դատելով՝ Պետրոսը մահացել է 1057 թվականից առնվազն երեք տարի առաջ: Ա. Մաթեւոսյանը Պետրոս Ա-ի տարեթվեր է նշել 1019-1054 թթ. (Նույն տեղում, էջ 102): Կարծում ենք, որ Սամվել Անեցու հնագույն ընդօրինակությունը եւ 1057 թ. հիշատակարանը նկատի ունենալով՝ պետք է հենց այս թվագրումն ընդունել եւ Պետրոսի մահվան թվական համարել 1054-ը:

[219] Գագիկ Ա Բագրատունու մահվան թվականը հայագիտության մեջ ընդունված է 1020-ը: Ըստ Կ. Յուզբաշյանի՝ Գագիկը մահացել է մոտ 1017 թվականին, եւ քանի որ այդ հարցում պատմիչները հստակ վկայություն չունեն, ուստի օգնության են գալիս վիմագրերը: Մաստարայի 1015 թ. արձանագրության մեջ հիշվում է Գագիկը, բայց արդեն Տեկորի 1018 թ.՝ ոմն Թաթուլի արձանագրության մեջ, հիշվում է Հովհաննես (Հովհաննես Սմբատ) թագավորը: Իր հերթին Արիստակես Լաստիվերցին, գրելով Գագիկին հաջորդած նրա որդիների՝ Հովհաննես Սմբատի եւ Աշոտի հակամարտության, վերջինիս Կոստանդնուպոլիս գնալու մասին, նշում է, որ դա տեղի է ունեցել մինչեւ 1018 թվականը: Այդ փաստերը նկատի ունենալով՝ Կ. Յուզբաշյանը եզրակացնում է. «Գագիկի մահը մենք թվագրում ենք 1017 թ., թեեւ չի բացառվում նաեւ 1016 թ.» (К. Юзбашян, Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., Москва, 1988, с.156-157): Գագիկի 1020 թ-ից վաղ մահացած լինելու մասին է վկայում նաեւ Մատթեոս Ուռհայեցու հայտնած տեղեկությունը Վասիլ Բ կայսեր Հայաստան ուղարկած եկեղեցատոնական

խնդրի վերաբերող մի նամակի մասին, որի հասցեատերերը Հովհաննես Սմբատ թագավորն ու Սարգիս Ա կաթողիկոսն էին («...թագաւորն Վասիլ յուղարկեալ ի Հայք առ Յովհաննէս շահնշահն եւ առ Տէր Սարգիս կաթուղիկոսն Հայոց...», Մատթեոս Ուռհայեցի, էջ 50): Սա նշանակում է, որ Հովհաննես Սմբատը հորը հաջորդել էր 1019 թվականից առաջ, երբ դեռ կաթողիկոսը Սարգիսն էր: 1019 թ. հենց Հովհաննես Սմբատի ցանկությամբ է տեղի ունեցել Սարգիս Ա-ի հրաժարումն աթոռից եւ Պետրոս Ա-ի կաթողիկոս դառնալը, որպեսզի վերջինս հարթի Հովհաննես Սմբատի եւ նրա եղբոր՝ Աշոտ Դ-ի միջեւ ծագած ու պատերազմի վերածած գահակալական վեճը, որին մինչ այդ միջամտել էր Վրաց Գեորգի Ա թագավորը՝ ոտնահարելով Հովհաննես Սմբատի շահերը (Արիստակես Լաստիվերցի, էջ 27, տե՛ս նաեւ Կ. Մաթեւոսյան, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 21-26):

Սամվել Անեցին Գագիկի մահն առանձին չի նշել: Մ1486 (1597 թ.) եւ Մ6354 ձեռագրերում այդ մասին հավելված տեղեկությունը Հայոց ՆԿԵ (1016) թվականի դիմաց է, իսկ Մ10983-ում, որի գրիչն օգտվել է 3 օրինակից, այն դրել է Փրկչական ՌԺԷ (1017), Հայոց ՆԿԴ (1015) թվականի ներքո, որին հաջորդող տարվա դիմաց գրել է՝ «Տէր Պետրոս ամս Լ (30)» (34բ): Այսինքն՝ ի տարբերություն այլ ձեռագրերի՝ Պետրոսի աթոռակալությունը նշել է Գագիկ Ա-ի մահից հետո: Մ1899 ձեռագրում (1677 թ.) հավելումը տեղադրել են Հայոց ՆՀ (1021) թվականի ներքո:

[220] Նույն դեպքին անդրադառնալով՝ Վարդան Արեւելցին նշում է, որ Սենեքերիմը գնաց «չորս որդւովք, որոց անունքն՝ Դաւիթ եւ Աբուսահլ, Ատոմ եւ Կոստանդին» (Վարդան Արեւելցի, էջ 97): Անունների այլ հերթականությամբ նրանց նշել է նաեւ Մատթեոս Ուռհայեցին՝ «...զԴաւիթ եւ զԱտոմ եւ զԱպուսահլ եւ զԿոստանդին» (Մատթեոս Ուռհայեցի, էջ 62): Ինչպես տեսնում ենք, այստեղ չկա Վեստ անունը: Այն առաջին անգամ հանդես է գալիս Անանուն Սեբաստացու (13-րդ դ.) տարեգրության մեջ (Մանր Ժամանակագրություններ, հ. 2, էջ 131), այնուհետեւ ուշ շրջանի աղբյուրներում, Գրիգոր Կամախեցու խմբագրած եւ Առաքել Դավրիժեցու օգտագործած ժամանակագրություններում (Մանր Ժամանակագրություններ, հ. 2, էջ 262, Առաքել Դաւրիժեցի, էջ 467): Բյուզանդական տիտղոս «վեստը» կարող էր վաղ շրջանում նաեւ անձնանուն դառնալ, սակայն Սենեքերիմի կարծեցյալ որդին միակն է, որ հայտնի է այդ անունով: Հնարավոր է, որ նախնական բնագրում (որից ծագում են հետագա ընդօրինակությունները) նշված է եղել Կոստանդինի տիտղոսը՝ վեստ: Ցավոք, հայտնի չէ, թե արդյոք նա ունեցել է այդ տիտղոսը, սակայն նկատենք, որ, ի տարբերություն իր մյուս եղբայրների, Կոստանդինը չի մնացել Սեբաստիայում, այլ գտնվել է բյուզանդական ծառայության մեջ, հավանաբար Կոստանդնուպոլսում (տե՛ս Վ. Վարդանյան, Արծրունիները Հայոց պատմության մեջ, Երեւան, 2002, էջ 171):

[221] Սարգիս Ա Սեւանցին աթոռից հրաժարվել է 1019 թ., Պետրոս Ա-ին կաթողիկոս օծել, իսկ մահացել է երկու տարի անց՝ 1021-ին, եւ թաղվել Անիի մեր-

ձակա Հոռոմոսի վանքում, որն Անիի Բագրատունի թագավորների դամբարանավայրն էր:

[222] Գրիգոր Ապիրատ Մագիստրոսն է, որը հրաժարվելով Աշոտ Դ-ի հրամանը կատարել եւ սպանել նրա եղբորը՝ Հովհաննես Սմբատին, խուսափելով Աշոտի վերժխնդրությունից գնացել է Դվինի ամիրի մոտ, որը եւ դավադրաբար սպանել է տվել նրան (տե՛ս Կ. Մաթեւոսյան, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 111-118):

[223] Վեստ Սարգսի շինարարական գործունեության վերաբերյալ Անեցու դրվատական հաղորդումը առաջին հայացքից անսովոր է թվում, երբ հիշում ենք Արիստակես Լաստիվերցու եւ Մատթեոս Ուռհայեցու կամ նրանց հետեւող այլ պատմիչների՝ Սարգսին տված բնութագրումները՝ «նենգաւոր», «անօրէն», «ապստամբ»: Սակայն այս խոսքերն ասվել են՝ Անին բյուզանդացիներին հանձնելու գործում Վեստ Սարգսի ունեցած տխրահռչակ դերակատարությունը նկատի ունենալով: Մինչդեռ Սամվել Անեցին Սարգսին այս դեպքերի առումով անվանապես չի հիշատակում: Հայտնի է, որ Վեստ Սարգիսը մեկն էր «ի գլխաւոր ազատացն Հայոց» (Արիստակես Լաստիվերցի, էջ 57) եւ կարեւոր դիրք ուներ արքունիքում, անգամ Հովհաննես Սմբատ թագավորի մահվան ժամանակ նրա հոգաբարձուն էր: Սարգսի կինը Կեչառիսի հիմնադիր Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի (մահ. 1021 թ.) դուստրն էր: Սարգիսը Սյունեցի լինելով հավանաբար արքունիքում բարձր դիրքի է հասել Գագիկ Ա-ի կնոջ՝ Կատրամիդե թագուհու հովանավորության շնորհիվ, որը Սյունյաց Վասակ թագավորի դուստրն էր: Անիի՝ բյուզանդական զավթումից հետ Վեստ Սարգսի անունն այլեւս չի հիշատակվում: Հայտնի է, սակայն, որ նրան պատկանած Ծառաքար-Մաղասբերդը հետագայում անցել է նրա կնոջ տոհմակիցներին (Կ. Մաթեւոսյան, Անի քաղաքը եւ Ծառաքար-Մաղասբերդը 11-14-րդ դդ., «Հուշարձան» տարեգիրք Դ-Ե, Երեւան, 2008, էջ 236-247): Դատելով այդ, ինչպես նաեւ այն փաստից, որ ո՛չ նրա եւ ո՛չ կնոջ թողած արձանագրություններում խոսք չկա նրանց զավակների մասին, հավանական է, որ Վեստ Սարգիսն անզավակ էր, եւ գուցե հենց դա է նրան համարձակություն տվել առաջադրելու իր անձը Անիի գահի վրա: Քանի որ միջնադարում տոհմական ժառանգականությունը օրինակարգության գլխավոր նախապայմանն էր, Վեստ Սարգիսը չէր կարող գահակալող տոհմի փոփոխության գնալ, այլ թերեւս առաջարկել է, որ միայն ինքը թագավորի իր կենդանության ժամանակ: Այդ պատճառով էլ բազմաթիվ համակիրներ է ունեցել, եւ Կարսի ու Տաշիր-Ձորագետի Բագրատունիները նրա դեմ դուրս չեն եկել: Բայց Անիի թագավորության մյուս զորեղ իշխանները՝ Պահլավունիները, չեն հանդուրժել իրենց հավասար մեկի՝ գահին տիրելու նկրտումը:

[224] Խծկոնքը հնում թերեւս կոչվել է նաեւ «Տեկորո վանք» անունով, որը հիշվում է Վեստ Սարգսի՝ Ս. Սարգիս եկեղեցու 1033 թ. նվիրատվական արձանագրության մեջ: Վեստ Սարգսի ձեռամբ Ս. Սարգիս եկեղեցու կառուց-

ման մասին Սամվել Անեցու հայտնած տեղեկությունը ժամանակագրական աղյուսակում Փրկչական ՌԻԶ (1026) եւ Հայոց ՆՀԳ (1024) թվականի դիմաց է, մինչդեռ երկի 1893 թ. հրատարակության մեջ նշված է միայն Փրկչական թվականը, ընդ որում ավելի առաջ տեղաշարժված՝ «ՌԻԹ» (1029) (Անեցի, 1893, էջ 106): Այդ պատճառով 1029 թվականը հայագիտության մեջ տեղ է գտել որպես Խծկոնքի կառուցման մասին «Սամվել Անեցու վկայություն» (Վ. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, Երեւան, 1992, էջ 240): Մ. Հասրաթյանը, Հայոց թվականի կիրառման դեպքում երկու տարվա տարբերության հանգամանքը նկատի ունենալով, Ս. Սարգիս եկեղեցու կառուցումը, «ըստ Սամվել Անեցի պատմիչի հիշատակության», դնում է 1027-ին (ՀՍՀ, հ. 5, Երեւան, 1979, էջ 55, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 435): Սակայն, ինչպես տեսանք, Խծկոնքի Ս. Սարգիս եկեղեցու կառուցման համար պատմիչը նշել է 1024 թվականը:

[225] Ըստ Սամվել Անեցու՝ Վեստ Սարգիսը բերդ է դարձրել Ծառաքարի վանքը, այն շրջապատել հզոր պարսպով: Անիի 11-12-րդ դարերի պատմության մեջ կարեւոր դեր է կատարել Ծառաքար եւ Մաղասբերդ անուններով հիշատակվող այս բերդը, որը 1222 թ. հիշատակարանում կոչվում է «Անի քաղաքի դռան վրա» գտնվող բերդ. «ի յԱնի քաղաքին դռան ի վերա բերդ եւ անունն Մաղասբերդ եւ բերդին անունն Ծարքար» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 131: Հմմտ. Անիի մերձակա Արջո Առիճի վանքի հիշատակումը՝ «...ուխտիս Արջուառճո, որ ի դրան մայրաքաղաքիս Անոյ...» Նույն տեղում, էջ 197): Սամվել Անեցու վկայությունը գալիս է լույս սփռելու բերդի երկանվանության խնդրի վրա: Եթե հիմք ընդունենք Անանուն զրուցագրի հաղորդումը Մախազի մասին, որը, հավանաբար, այս տեղում բյուզանդական ռազմական մի հենակետ է հաստատել 6-րդ դարի վերջերին (Պատմութիւն Անանուն զրուցագրի (կարծեցեալ Շապուհ Բագրատունի), թարգմանությունը գրաբարից ռուսերեն, առաջաբանն ու ծանոթագրությունները Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի, Երեւան, 1971, էջ 51), ապա պարզ է, որ դրան հաջորդած արաբական տիրապետության դժնդակ ժամանակներում, երբ Հայաստանում բերդ չի կառուցվել (եղածներն էլ մեծ մասամբ ավերվել են), այն եւս կորցրել է իր ռազմական դերը: Ժամանակի ընթացքում այստեղ հաստատվել է մի փոքրիկ վանք, որը Ս. Գեւորգ անունով եկեղեցի ուներ: Ծառաքարը հենց այդ վանքի անունն է: Վեստ Սարգիսը, Ծառաքարի դիրքը գնահատելով, տեղի վանքը բերդի վերածեց: Ճիշտ է, պատմիչի հաղորդմամբ նա այստեղ նաեւ երկու եկեղեցի կառուցեց, սակայն հավանաբար, դրանք փոքրիկ մատուռներ էին, որոնց շինությամբ յուրովի «քողարկվում էր» վանքը ռազմական կառույցի վերափոխելու բուն գործընթացը: Տեղին է հիշել, որ 19-րդ դարի սկզբին Մաղասբերդ այցելած Ն. Սարգիսյանն այստեղ տեսել է «աւերակք երից փոքր մատրանց» (Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ

125): Դրանցից մեկը, որը Սամվել Անեցին կոչում է Ս. Սեքենոս, այդ անունով միակ եկեղեցին է հայ իրականության մեջ: Ծառաքար-Մաղասբերդի մասին տե՛ս Կ. Մաթեւոսյան, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 216-235:

[226] Իրականում 1021-ին կատարված այս դեպքի մասին Ե3701 ձեռագիրը Հայոց ՇԱ (1052) թվականի ներքո սույն տարբերակն ունի. «Տէր Պետրոս կաթողիկոսն եբեր Կենաց փայտն ի Պոնտոս, որ է Տրապիզոն, ի ժամանակս Վասիլ կայսերն Յունաց եւ արար զջուրօրհնէքն եւ գետն արգելաւ յետս ժամ մի, եւ անտի դարձաւ ի Կոստանդնուպօլիս եւ եկաց անդ ամս Դ (4)»:

[227] Բյուզանդական Վասիլ Բ կայսեր դեմ ապստամբած Վարդ Փոկասի որդի, իրեն կայսր հռչակած Նիկեփոր Ծռվիզի մասին է խոսքը, որին դավադրաբար սպանել է Սենեքերիմ Արծրունու ավագ որդի Դավիթը (տե՛ս Արիստակես Լաստիվերցի, էջ 34, Մատթեոս Ուռհայեցի, էջ 58-59):

[228] Տեղեկությունը վերաբերում է Անիից Սեւանի վանք՝ Հովհաննես Կոզեռնի մոտ գնացած պատվիրակությանը, որին վարդապետն իր վախճանաբանական տեսիլքի հիման վրա զգուշացնում է երկրին առաջիկայում սպասվող դժբախտությունների մասին: Տե՛ս Պատմութիւն նշանաց, որ եղեն առաջիկա աւուրցն, որ կատարեցաւ, ասացեալ սուրբ վարդապետին Յոհաննիսի Կոզռան՝ Հայոց վարդապետի, Մատենագիրք Հայոց, հ. ԺՁ, ԺԱ դար, Երեւան, 2012, էջ 79-82):

[229] Ծագում է Հեթում Կոռիկոսցու «Պատմութիւն խրոնիկոնին» գործից՝ «ՌԼԱ (1031) եղեւ պատերազմ մաւտ ի Սուրբ Պետրոս, զոր Ջառլն արար» (Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 55):

[230] Սա չափազանց ուշագրավ տեղեկություն է, որը չի պահպանվել հայկական այլ աղբյուրներում, սակայն առկա է բյուզացի պատմիչ Հովհաննես Սկիլիցեսի մոտ, մի փոքր այլ ձեւակերպմամբ: Նա 1031 թվականի տեղեկությունների շարքում գրում է. «Ռոմանոս կայսրը իր զարմուհուն մեծ օժիտով կնության տվեց Մեծ Հայքի էքսուսիարխին» (Հովհաննես Սկիլիցես, թարգմանություն, առաջաբան եւ ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Երեւան, 1979, էջ 108): Հովհաննես Սկիլիցեսի գործը թարգմանած Հ. Բարթիկյանը, տեղեկությունը ծանոթագրելով, ենթադրում է, որ խոսքը Աշոտ Դ-ի մասին է, գրելով՝ «Քանի որ այդ ժամանակաշրջանում Բյուզանդիան օգնում էր Աշոտին՝ ընդդեմ Հովհաննեսի, հավանական է, որ Ռոմանոս կայսրը խնամիացել է Աշոտի հետ» (նույն տեղում, էջ 338): Կ. Յուզբաշյանը գտնում է, որ այստեղ ակնարկված է Հովհաննես Սմբատը (К. Юзбашян, նշվ. աշխ., էջ 159): Անեցու ժամանակագրության մեջ կատարված հավելումը հստակեցնում է, որ Հովհաննես Սկիլիցեսի նշած «Մեծ Հայքի էքսուսիարխը» Հովհաննես Սմբատն է:

[231] Արեւի խավարումը տեղի է ունեցել 1033 թ. հունիսի 29-ին (Բ. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, Երեւան, 1968, էջ 138-139): Այն մեծ տպավորություն է թողել ժամանակակիցների վրա և հիմք դարձել Հովհաննես Կոզեռնի տեսիլքի համար:

[232] Տեղեկությունը քաղված է Մատթեոս Ուռհայեցուց, բայց դրված սխալ թվականի տակ (տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, էջ 92): Սկզբնաղբյուրի հետեւողությամբ կրկնված է նաեւ Հովհաննես Սմբատի նախորդներին վերաբերող սխալը՝ Գագիկ Ա-ի հայր Աշոտ Գ Ողորմածը, Աբասի որդին էր, իսկ վերջինս՝ Աշոտ Երկաթի եղբայրը: Բագրատունիների մասին եւ նրանց տոհմածառը տե՛ս **Claude Mutafian, L'Arménie du Levant (XI-XIV siècle), Paris, 2012, Տոմ. I, էջ.49-54, 258-274, Տոմ. II, աղ. 2**:

[233] Պետրոսին աթոռի վրա վերահաստատող ժողովը գլխավորել է Աղվանից Հովսեփ կաթողիկոսը (Մատթեոս Ուռհայեցի, էջ 87):

[234] Հոռոմոսի Ս. Հովհաննեսի կառուցման թվականը միանգամայն ճիշտ է (նույն թվականն է եկեղեցու շինարարական արձանագրության մեջ): Այստեղ ուշագրավ է «վերի Սուրբ Յովհանէս» տեղագրական ձեւակերպումը, որն առաջին անգամ է հանդիպում: Հովհաննես Սմբատի կառուցած Ս. Հովհաննեսն իրոք ավելի բարձր դիրքում է գտնվում, քան վանքի հնագույն մյուս եկեղեցիները, որոնցից վաղագույնը՝ հավանաբար Աշոտ Գ Ողորմածի կառուցածը, դատելով հարակից վկայություններից, նույնպես Ս. Հովհաննես է կոչվել: Այս մասին տե՛ս Կ. Մաթեւոսյան, Հոռոմոսի վանքի հնագոյն եկեղեցու անուան շուրջ, «Հանդէս ամսօրեայ», 2013, էջ 311-326:

[235] Միքայել Ե կայսեր (1042) «Կալափատես» մականունն է Սամվել Անեցու մոտ դարձել «Կուռոգի»:

[236] Սամվել Անեցին միակ պատմիչն է, որն ակնհայտ քննադատական վերաբերմունք ունի Գագիկ Բ-ի նկատմամբ, քանի որ «ո՛չ պատերազմական արութեանց ջանայր՝ որով վարի իշխանութիւնն» (նրանից է օգտվել ժամանակագիր Դավիթ Բաղիշեցին, հմմտ. Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 338): Հետաքրքիր է, որ քահանա պատմիչը երիտասարդ թագավորին հանդիմանում է «գրքերով» տարված լինելու մեջ, այն դեպքում, երբ պատերազմում քաջանալու եւ ամուր կամք դրսեւորելու ժամանակն էր: Կարելի է ենթադրել, որ Գագիկ Բ-ի նկատմամբ եղած այսօրինակ քննադատական վերաբերմունքը ոչ միայն պատմիչի անձնական կարծիքն էր, այլ հետբագրատունյան շրջանում Անիում ձեւավորված տեսակետ: Հատկանշական է, որ անեցի հաջորդ պատմիչը՝ Մխիթար Անեցին, Բագրատունի թագավորների ցանկում Գագիկ Բ-ին ընդհանրապես չի հիշատակում (Մխիթար Անեցի, էջ 67): Սամվել Անեցին նաեւ միակ հեղինակն է, որ նշում է Գագիկ Բ-ի թագադրության տեղը՝ «...ժողովեցան առ դուռն մեծափառ Կաթուղիկէին՝ ի մայրաքաղաքս յԱնի»:

Գագիկի գահակալման թվականը Մ10983 ձեռագրում նշված է ՆՂԱ (1042):

[237] Բյուզանդիայի անկայուն վիճակի վերաբերյալ «...ընդ կնոջ ձեռամբն նուաճէր եւ նոցայն թագաւորութիւնն» ասելով՝ Սամվել Անեցին ակնարկում է Կոստանդին Ը-ի դուստր թագաժառանգ Զոեին, որի հետ ամուսնանալով՝ կայսր դարձավ Ռոմանոս Արգիրոսը (1028-1034): Վերջինիս սպանությունը կազմակերպելով՝ Զոեն կայսերական գահ բարձրացրեց իր սիրեկանին՝

Միքայել Պափլագոնացուն (1034-1041), որի մահից հետո ամուսին ընտրեց Միքայել Կալափատեսին: Սա փորձեց մեջտեղից վերացնել Զոեին, սակայն պարտվեց եւ ընդամենը չորս ամիս թագավորելուց հետո հարկադրաբար վանական դարձավ եւ կուրացվեց (1042): Զոեի ընտրած հաջորդ ամուսինը Կոստանդին Մոնոմախն էր (1042-1055): Տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ 99, 112-113, 133-137:

[238] Արիստակես Լաստիվերցին եւ Մատթեոս Ուռհայեցին Անիի ներքին իրավիճակի մասին վկայություններ ունեն միայն մինչեւ բյուզանդացիների մուտքը քաղաք: Սամվել Անեցին միակ հեղինակն է, որ թեեւ շատ հակիրճ, բայց գրում է բյուզանդացիների մուտքից հետո քաղաքում տիրող անառողջ ու խուճապային մթնոլորտի մասին, երբ քաղաքացիներն ու իշխանները փոխադարձ մեղադրանքներով, զրպարտանքներով ու նենգությամբ միմյանց կայսեր ձեռքն էին մատնում, եւ այդ բանսարկությունների ծիրի մեջ էր նաեւ կաթողիկոսը: Այդ ամենից օգտվելով՝ բյուզանդացիները շատերին, իրենց կամքին հակառակ, արտաքսում էին երկրից (այդպես վարվեցին նաեւ կաթողիկոսի հետ): Իսկ մնացածներն անտերունչ ու նվաստացած էին, եւ այս վիճակը շարունակվեց 21 տարի (իրականում Անիում բյուզանդական տիրապետության 1045-1064 թթ. ժամանակը կազմում է 19 կամ 20 տարի):

[239] Սամվել Անեցին մի շղթայի մեջ է ներկայացնում Անիի թագավորության անկումը, բյուզանդական զավթումն ու անփառունակ տիրապետությունը եւ Ալփասլանի (Ալփ Արսլան) կողմից քաղաքի գրավումը, որը նա համարում է երկնային պատիժ: Պատմիչը նշում է, որ թագավորության անկման պատճառով հետագա աղյուսակներում (կանոններում) դադարեցնելու է Հայոց թագավորների տարիների նշումը, քանի որ, թեեւ այլ տեղերում մնացին թագավորներ, ինչպես Կյուրիկյանները եւ ուրիշներ, սակայն սրանք, երբ տեսան գլխավոր տեղի՝ Անիի անկումը, իրենք էլ սելջուկներից նեղված թողեցին ու գնացին կայսեր մոտ, եւ եկվորները տիրեցին երկրին: Վերջում նշում է, որ շարադրանքը շարունակելով մինչեւ իր ապրած ժամանակը («մինչեւ ի մերս ժամանակ»)՝ պահպանելու է ժամանակագրական չորս սյունակ՝ սկզբում Փրկչականը («զմարդեղութեան Արարչին ըստ սահմանելոյս սկիզբն դնելով»), ապա՝ կայսրերի, Հայոց հայրապետների եւ Հայոց թվականի սյունակները:

[240] Ժամանակագրության վաղարշապատյան հրատարակությունից օգտվողներն այս վկայությունը համարել են Սամվել Անեցունը, մինչդեռ այն հավելում է, սակայն իրազեկ մեկի կողմից արված: Դավիթ Բաղիշեցու ժամանակագրության մեջ ասվում է, որ Գագիկին «Յոյնք, ըստ սովորութեան իւրեանց, խաբանօք առ ինքեանս կոչեն ի սադրելոյ իշխանացն Սարգսի եւ Գրիգոր Բճնեցոյ» (Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 338-339): Հետաքրքրական է, որ Մատթեոս Ուռհայեցին, որն իր ժամանակագրությունը գրել է Գրիգոր Մագիստրոսի ծոռների՝ կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու եւ նրա եղբայր ու գործակից Ներսես Շնորհալու ժամանակ, որոնք

հատուկ մեծարանքով էին պարուրել իրենց Պահլավունի նախնու անունը, այս դեպքի մասին զգուշավորությամբ գրում է՝ «Գագիկ ոչ էառ յանձն գնալ զհետ ստուքեանն, վասն զի գիտէր զՀոռոմոց նենգութիւնն: Յայնժամ նենգաւորն Սարգիս եւ այլ ոք յազատացն, յառաջ մատեան, որք բանատուք էին Մոնոմախին, եւ քաջալերէին զնա գնալ...» (Մատթեոս Ուռհայեցի, էջ 104):

[241] Մ1899 ձեռագիրը, քանի որ Գագիկի Կոստանդնուպոլիս գնալն ու գահազրկումը սխալմամբ դնում է Հայոց ՆՂԲ (1043) թվականի ներքո, այս տեղեկությունները նույնպես այդ տեղում է դնում:

[242] Սամվել Անեցին նկատի ունի Հայոց թագավորների տարիները նշող սյունակի (գավազան) դադարեցումը հետագա շարադրանքում: Հայոց թագավորության կորստի մասին այս փոքրիկ ողբը նա գրել է հենց այդ ժամանակագրական նեղ սյունակում, ամեն տողում մի քանի տառ տեղավորելով, որից հետո այլեւս աղյուսակներում Հայոց թագավորների տարիների սյունակ չի գծել, այլ թողել է չորս սյունակ (Փրկչական թվական, Բյուզանդական կայսրերի, Հայոց կաթողիկոսների տարիներ եւ Հայոց թվական): Այս հատվածում հետագայի գրիչներից մեկը հիշատակարան է գրել, որը անցել է նաեւ այլ ձեռագրերի (Մ3072, Մ1484, Մ1483 եւ այլն) եւ տպվել Ժամանակագրության 1893 թ. հրատարակության մեջ, որպես բնագրի մաս: Այն հետեւյալն է. «Արդ՝ ընդ այս խափանած գաւազանիս հարկ եղեւ եւ զմեր տարակուսանքս գծագրել, որ դառն էր ժամանակս ի վերայ մեր յամենայն դիմաց եւ սատանայ յարոյց ի վերայ մեր եւ սովաւ՝ կատարէ զկամս իւրոյ չարութեան, որ զքակտումն եւ զխափանումն ժամատեղեաց մտածեաց թէ ցրուեցէք ամենեքեան ինձ երէց չէ պիտոյ, կամ տուք զհարկն կամ գնացէք: Վանօրայքս ամեն աւերեցաւ եւ չկայ տեղի գնալոյ. ի՞նչ առնեմք. ի վերայ նեղչին եւ անիրաւ զրպարտողին աղօթս առնել հրամայեցաք ի Փրկչէն մեր, թէ մեք եղաք պատճառ եւ թէ ինքս Աստուած է իրաւարար, բայց զհանդիպողքդ սմին մոխրաթաւալ երեսօք եւ լի հառաչմամբ աղաչեմ թէ հանդիպիք սմա տեսութեամբ. մեղայ թողութիւն հայցեցէք յԱստուծոյ, յանցաւորացս եւ պատժապարտողին. զի բազում տրտմութեամբ վարանեալ եմ. նմին իրի գրեցի զայս սակաւ գիծս» (Անեցի, 1893, էջ 110):

[243] Շարունակությունը տե՛ս 1057 թ. ներքո՝ Վ959 ձեռագրի հավելումը, որը կրկնվում է Վ1227 ձեռագրում:

[244] Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, 1045-ին իր հայրենի Բջնին բյուզանդական կայսրությանը հանձնելով, ստացավ մագիստրոսի պատվաստիճան եւ զինվորական ծառայության անցավ Տարոնում ու Հյուսիսային Միջագետքում: Այդ շրջանում թերեւս նա որոշ ժամանակ գտնվել է նաեւ Կոստանդնուպոլսում: Հնարավոր է, որ վերոնշյալ տեղեկությունը վերաբերում է Գրիգոր Մագիստրոսի ձեռամբ Հազարտողյանի (համառոտված եւ չափածոյի վերածված Աստվածաշնչի) գրությանը, որը նա պատրաստեց արաբ գիտնական Մանուչեի հետ ունեցած վեճի արդյունքում:

[245] Հավանաբար, սկզբնագրում եղել է «կանգուն»:

[246] Կարսի Աբաս Բ թագավոր (1020-1049):

[247] Արծնի գրավման մասին հանգամանորեն պատմում է Արիստակես Լաստիվերցին, որն այն կոչում է իր հայրենի քաղաքը: Արծնի գրավման տարեթիվ է համարվում 1049-ը, իսկ տեղի ունեցած մեծ կոտորածի մասին նշում են նաեւ բյուզանդացի հեղինակները:

[248] Տաշիր-Ձորագետի թագավոր Դավիթ Անհողին (989-1048):

[249] Մատթեոս Ուռհայեցին դեպքերի ժամանակ է նշում 1051 թվականը, ամրոցներից մեկը կոչում է Արկնի (Մատթեոս Ուռհայեցի, էջ 119-121, 129-130):

[250] Սամվել Անեցին, 1054 թ. ներքո նշելով «Կուռաթոդոռն», հավանորեն նկատի ունի Թեոդորա կայսրուհուն, բայց այստեղ այդ անունը (Կիրթոտոռն) լրացվում է Կոմանոս մականունով, որի գործողությունները համապատասխանում են Իսահակ Ա Կոմնենոսին (1057-1059), որը կամովին իշխանությունը փոխանցել է Կոստանդին Ժ Դուկասին (նրա անունը մեր բնագրում նշվում է Դուկիծ, Տուկիծ ձեւով):

[251] Այս հատվածը, որը սելջուկ Աբու Դինարի 1058 թ. արշավանքի մասին է, համառոտված է Մատթեոս Ուռհայեցու ընդարձակ շարադրանքից (Մատթեոս Ուռհայեցի, էջ 40-43, տե՛ս նաեւ Ս. Բուռնազյան, Հայաստանը եւ սելջուկները 10-11-րդ դդ., Երեւան, 1980, էջ 81, 82):

[252] Մոթ (մոդ) - կազմում է 8,64 կգ (Ռ. Վարդանյան, Հայաստանի չափերն ու կշիռները, էջ 194):

[253] (Վ1253) «…ամս Ձ (6)»:

[254] Խոսքը Կարսի վերջին թագավոր Գագիկ Աբասյանի Մարիամ դստեր մասին է: Ըստ Վարդան Արեւելցու, նոր կաթողիկոսի ընտրության թույլատվության համար կայսերը խնդրել է հենց Գագիկը, իսկ Կղեմես Գալանոսի հաղորդմամբ այդ միջնորդությունն կատարել է նրա դուստր Մարիամը, Եվդոկիա կայսրուհու առաջ (տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 1486):

[255] Ե3701 ձեռագրի այս հատվածում նշված է՝ «եւ Գ (3) ամ արկ զնա ի բանտ...»: Հայ պատմիչները նույնպես Խաչիկ Ա Անեցու արգելափակումը Կոստանդնուպոլսում նշում են 3 տարի (Արիստակես Լաստիվերցի, էջ 82, Մատթեոս Ուռհայեցի, էջ 150):

[256] Տողրիլ, բեկ (մինչեւ 1058 թ.), սելջուկյան սուլթան (1058-1063), Ալփ Արսլան (Ալփասլան) սելջուկյան սուլթան (1063-1072):

[257] 1064 թ. Վրաց Բագրատ Դ թագավորի գործակալը դարանակալել ու ձերբակալել է Տաշիր-Ձորագետի թագավոր Կյուրիկե Բ-ին (1048-1089), ապա նրանից կորզել Սամշվիլդեն (Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երեւան, 1980, էջ 48):

[258] Հայոց կաթողիկոս Գրիգոր Բ Վկայասեր (1066-1105): Սամվել Անեցու ժամանակագրության մեջ այս կաթողիկոսի գահակալությունը հիշված է 1065-ից, տարիների քանակը՝ 20, բայց արդեն 1082 թ. դիմաց՝ 17 տարի անց, նշված է Վկայասերի քրոջ որդի Բարսեղ Ա Անեցու աթոռակալությունը:

[259] Խոսքը վերաբերում է Գրիգոր Մագիստրոս Պահլավունու ավագ որդի եւ

Գրիգոր (Վահրամ) Վկայասեր կաթողիկոսի եղբայր Անտիոքի դուքս Վասակին, որը դավադրաբար սպանվեց 1078 թ. (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. 1, էջ 418-419):

[260] Խորգ (խորք)՝ մազեղեն մեծ պարկ, քուրձ:

[261] Համառոտված է Մատթեոս Ուռհայեցու Ժամանակագրությունից (Մատթեոս Ուռհայեցի, էջ 195-199):

[262] Սուլեյման Ա (1077-1086), Ռումի (Իկոնիայի) սելջուկյան սուլթանության հիմնադիր:

[263] Կարսի վերջին թագավոր Գագիկին (Աբասի որդուն) «շահնշահ» տիտղոսով կոչելով (այդպես է վարվել նաեւ Մատթեոս Ուռհայեցին)՝ Սամվել Անեցին ցույց է տալիս, որ Անիի թագավորության անկումից հետո տեղի գահակալներին հատուկ այդ տիտղոսն անցել է Կարսի թագավորներին (տե՛ս Ռ. Մաթեւոսյան, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Երեւան, 1990, էջ 163, 239-240):

[264] Գիմիշտեգին իբն Դանիշմանդ (տե՛ս Իբն Ալ-Ասիր, թարգմանությունը եւ ծանոթագրությունները Ա. Տեր-Ղեւոնդյանի, Երեւան, 1981, էջ 231): Մատթեոս Ուռհայեցին նրան կոչում է Ալփասլանի սենեկապետ, մեծ ամիրա «Գոմէշ-Տիկին» (Մատթեոս Ուռհայեցի, էջ 200-205): Տե՛ս նաեւ 1071 թ. ներքո Հեթում Կոռիկոսցու հավելած տեղեկությունը:

[265] Նեսբին Մծբինի մեկ այլ անվանաձեւն է, հունարեն՝ Նիսբիս:

[266] Բյուզանդական կայսր Ռոմանոս Դ Դիոգենես (1067-1071):

[267] Մ2965՝ «ուխտադրուբեամբ հարկին» (104ա):

[268] Ճակատամարտի 1069 թվականն է հայտնում Անանուն Եդեսացին (Անանուն Եդեսացի, Ժամանակագրություն, թարգմանություն բնագրից, առաջաբան եւ ծանոթագրություններ՝ Լ. Տեր-Պետրոսյանի, Երեւան, 1982, էջ 29-30):

[269] Ձեռագրում գրված է «գողձախմատն»: Կարծում ենք, օտարահունչ անվան աղավաղված ձեւ է: Հնարավոր է նաեւ, որ մի անուն է, որի սկզբում նշված է «Գող» մականունը, ինչպես որ այս նույն շրջանում հիշվում է հայ իշխան Գող Վասիլը: Իսկ շարունակությունը կարող է լինել հնչյունափոխված Ահմատ անունը (Գող զԱխմատն): Թերեւս Հալեպի շրջանի սելջուկ զորավարներից մեկն էր:

[270] 11-րդ դարի քաղկեդոնականություն ընդունած Շիրակացի հայ իշխան, որի անունը հայ պատմիչները չեն տալիս, այլ նշում են միայն նրա պաշտոնից ծագող մականունը՝ «Պեխտ», «Եպիխտ» (Մատթեոս Ուռհայեցի) «Բեխդ» (Վարդան Արեւելցի): Փաստորեն, ներկա բնագրում առաջին անգամ հանդիպում ենք իշխանի ամբողջական անվանն ու մականվանը՝ Գրիգոր Պիխտ: Մ. Չամչյանն այս իշխանին նույնացրել է Անտիոքի դուքս Խաչատուրի հետ, մի տեսակետ, որը բավականին տարածվել է (Մ. Չամչեան, Հայոց Պատմություն, հ. Բ, Վենետիկ, 1785 էջ 972, տե՛ս նաեւ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երեւան, 1944, էջ 468, Ե. Քասունի, ԺԱ դարու Անտիոքի հայ կառավարիչներ Պեխտ-Խաչատուր եւ Վասակ Պահլավունի,

«Հայկազեան հայագիտական հանդէս», 1971, հ. Բ, էջ 123-133, **G. Dadayan, Les Arménien entre Grecs, Musulmans et Croisés, vol. 1-2, Lisbonne, 2004, p. 44-45**): Գրիգոր Պիխտի եւ Անտիոքի դուքս Խաչատուրի կենսագրություններն այնքան ընդհանրություններ ունեն, որ դժվար է նրանց տարբեր մարդիկ համարել: Հավանական է, որ Շիրակացի իշխանը Խաչատուր անունը ստացել է քաղկեդոնական դառնալու՝ կրկնամկրտության ժամանակ (հարցի հանգամանալից քննությունը տե՛ս Կ. Մաթեւոսյան, Գրիգոր Պիխտ Շիրակացի, «Էջմիածին», 2009, Ժ, էջ 95-105, նույնի, Անի-Շիրակի պատմության էջեր, Երեւան, 2010, էջ 150-168):

[271] Հարուն, Հարունիե բերդավանը գտնվում է Սարվանդիքարից հյուսիս, Մարաշից հարավ-արեւմուտք (Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, Երեւան, 2008, էջ 47, 48, Մարի-Աննա Շեվալիե, Կիլիկյան Հայաստանի եւ հոգեւոր ասպետական միաբանությունների փոխհարաբերությունների պատմությունից, Երեւան, 2007, էջ 25, 33, 35, 50), այստեղ պետք է եղած լինի նաեւ համանուն դաշտը: Հեղինակը նաեւ կոնկրետացրել է կռվի տեղը՝ «ի մամխենուտն», որ, հավանաբար, նշանակում է մամխենի (փշոտ վայրի սալորենի) ծառերով տեղանք, ինչպես օրինակ՝ տանձուտ, եղեգնուտ:

[272] 1067-68 թթ. Քարթլի է արշավել սուլթան Ալփ Արսլանը (տե՛ս Հ Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի, էջ 48):

[273] Սամվել Անեցին նկատի ունի Հովհաննես Իմաստասեր Սարկավագին, որի թղթից մեջբերում է կատարում:

[274] Հատվածն ընդարձակ մեջբերում է Հովհաննես Սարկավագի այժմ կորած պատմական բովանդակությամբ թղթից (տե՛ս Կ. Մաթեւոսյան, Հովհաննես Սարկավագի պատմական թղթերն ըստ Սամվել Անեցու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 6, Երեւան, 2005, էջ 122-131):

[275] Անդրիուն բերդը գտնվում է Մարաշից արեւմուտք: Կիլիկյան մի ձեռագրի 1332 թ. հիշատակարանում նշվում է, որ այն գրվել է «մերձ յաստուածապահ ամրոցն, որ կոչի Անդրունին բերդ» (ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 251): Անունը ուշ շրջանում թուրքերենի ազդեցությամբ դարձել է Էնդրուն (Հայաստանի ազգային ատլաս, էջ 49, 50, 55, 62, 80-81, 84, 88, 151, 167), այժմյան անունն է՝ Անդիրին:

[276] Վրաց թագավոր Բագրատ Դ (1027-1072):

[277] Օշին իշխանի Արցախից Կիլիկիա գնալու թվականը, որի վերաբերյալ Սամվել Անեցու ժամանակագրության մեջ արված հավելումն այդ մասին միակ սկզբնաղբյուրն է, ուսումնասիրողների քննության առարկան է դարձել՝ ժամանակագրության 1893 թ. հրատարակության մեջ սպրդած սխալի պատճառով: Բանն այն է, որ այդ հրատարակության 114-117 էջերում Հայոց ՇԻ (520) եւ ՇԼ (530) թվականներով բոլոր տեղեկությունները վրիպմամբ դարձել են ՇՀ (570)-ով սկսվող: Հետեւանքները պարզ են: Վրիպումը չնկատած Բ. Ուլուբաբյանն, օրինակ, քննադատելով նախորդ ուսումնասիրողներին,

գրում է. «...պատմաբան հետազոտողը մոտավորապես կրկնել է Ալիշանի սխալ կարծիքը Օշինի՝ Գանձակից ելնելու տարեթվի մասին. իբր թե, այդ կատարվել է 1073 թ., մինչդեռ Սամվել Անեցին՝ այս առթիվ տեղեկություն հաղորդող միակ աղբյուրը, տարեթիվ է համարում ՇՀԲ (1123)-ը» (Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երեւան, 1975, էջ 96): Նկատենք, սակայն, որ Ղ. Ալիշանն օգտվել է ժամանակագրության Վենետիկում պահվող ձեռագրերից եւ ոչ թե նրա 1893 թ. հրատարակությունից, դրա համար էլ ճիշտ թվականն է նշել:

[278] Ապլղարիպ Արծրունի իշխան: Իր ծառայությունների դիմաց Միքայել է Դուկաս (1071-1078) կայսրը նրան նշանակել է Կիլիկիայի ստրատեգոս (1072-ից): Ենթադրվել է, որ մահացել է 1078 կամ 1080 թվականին (Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, էջ 22, Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Ա, էջ 415-416): Պատմիչները նրա թաղման տեղը չեն նշում, բայց այդ մասին գրում է Սամվել Սկեւռացին 1190 թ. հիշատակարանում՝ ավելացնելով, որ իշխանը նախապես Պապեռոնում՝ «շինեալ եկեղեցի մեծ՝ դամբարան հանգստեան սահմանեաց իւր եւ իւրոցն» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ Ա. Մաթեւոսյանի, Երեւան, 1988, էջ 255): Մ2965 ձեռագրում տեղեկությունը դրված է 1075 թ. ներքո:

[279] Սարգիսը Պետրոս Գետադարձի քրոջ որդին էր, որը Գրիգոր Վկայասերի ժամանակ եւ նրա հավանությամբ դարձավ Փիլարտոս Վարաժնունու հիմնած Հոնիի կաթողիկոսարանի առաջին գահակալը: Մինչ այդ Փիլարտոսը Գրիգորին էր կանչել իր մոտ, բայց նրա բիրտ վարքուբարքին ծանոթ կաթողիկոսը հրաժարվել էր եւ առաջարկել Սարգսի թեկնածությունը: Ինչպես Մատթեոս Ուռհայեցին է վկայում, Վկայասերն իր հավանությունը փաստելու համար Սարգսին էր ուղարկել Պետրոսի քողը, գավազանը եւ խաչը (տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 1515):

[280] Վերջին նախադասության մեջ հեղինակն ուզում է ասել, որ Գրիգոր Վկայասերը մահանալիս իր քրոջ որդիներին՝ Գրիգորին ու Ներսեսին (ապագա Գրիգոր Գ Պահլավունի եւ Ներսես Շնորհալի) հանձնել է Բարսեղ Ա Անեցու խնամքին, որը Վկայասերից հետո կաթողիկոս եղավ 31 տարի: Սակայն Բարսեղը Վկայասերից հետո կաթողիկոս է եղել 8 տարի (1105-1113), իսկ 31 (կամ 32) տարի նա կաթողիկոս է եղել 1081 թ. Հաղբատում ձեռնադրվելուց հետո:

[281] Տեղեկությունը համառոտված է Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրությունից, որի մոտ դաշտի անունը գրված է «Առժախասայ» ձեւով (Մատթեոս Ուռհայեցի, էջ 236): Նույն ժամանակագրությունից օգտված Սմբատ Սպարապետը տեղանունը կոչում է «Առճիասու» (Սմբատ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 86): Գագիկ Բ-ի սպանության վերաբերյալ Ուռհայեցուց օգտվելով է գրված նաեւ Մ1486, Մ1899 ձեռագրերի 1081 թ. ներքո տրված տեղեկության սկզբնամասը:

[282] Սովի մասին Նաթանայելը գրում է՝ օգտվելով Մատթեոս Ուռհայեցուց, որի բազմաթիվ բառեր կրկնում է, սակայն տեղեկությունը վերաշարադրելով (հմմտ. Մատթեոս Ուռհայեցի, էջ 232-234):

[283] Մ1898 ձեռագրում այս եւ երեք ուրիշ ժամանակագրական միավորներ (1204, 1250 եւ 1268 թթ.) ավելացված են այլ գրչությամբ, որոնց հեղինակին պայմանականորեն անվանում ենք առաջին խմբագրող եւ, այդ պատճառով, ձեռագրի համարից հետո չենք նշում Հեթում Կոռիկոսցու անունը: Վերջինս Ռուբենի տարիների թիվը չի նշել: Այդ երեւում է նաեւ Մ2965 ձեռագրի (որի նախօրինակներից մեկը եղել է թիվ 1898 ձեռագիրը) համապատասխան հատվածից, ուր «ամս» բառից հետո թիվ չկա (թերթ 105ա): Իսկ Մ1898 մատյանում տարիների թիվը՝ ԺԵ (15) ավելացված է 19-րդ դարում Մեսրոպ Սմբատյանցի ձեռքով:

[284] Հնարավոր է, որ Կախեթ-Հերեթի թագավոր Աղսարթանի (1058-1084) մասին է: Աղսարթան անձնանունը 12-13-րդ դդ. հանդիպում է Կյուրիկյանների տոհմում (Ռ. Մաթեւոսյան, Տաշիր-Ձորագետ, Երեւան, 1982, էջ 109-111, Կիրակոս Գանձակեցի, էջ 153, 154):

[285] Դժվար է ասել, թե ժամանակի հատկապես որ վարդապետներն են նշված, բայց հավանական է, որ առաջինը Գեւորգ Ուռճացին է՝ Հովհաննես Սարկավագի ուսուցիչը, որը մահացել ու թաղվել է Կամրջաձորում 1091 կամ 1093 թ., իսկ երկրորդը գուցե Ստեփանոս Մանուկ Կարմիրվանեցին է:

[286] Բարսեղ Ա Անեցին 1081-ից համարվում է Գրիգոր Վկայասերի աթոռակիցը (քրոջ որդին էր), քանի որ կաթողիկոս էր ձեռնադրվել նրա հավանությամբ, իսկ վերջինիս մահից հետո՝ 1105 թվականից դարձավ միանձնյա կաթողիկոս (թեեւ կային հակաթոռներ): Բարսեղը դժբախտ պատահարի հետեւանքով մահացել է 1113-ին, այսինքն կաթողիկոս է եղել 32 տարի:

[287] Նշվում են Վրաց իշխան Լիպարիտը եւ Տաշիր-Ձորագետի Հայոց թագավոր Կյուրիկե Բ-ն (1048-1089): Վ511 ձեռագիրը (1206 թ), Ստ. Օրբելյանի շարունակած օրինակը (Մ8481) եւ Մ1899-ը այս դեպքը նշում են ՇԼԱ (1082) թվականին, իսկ հավանաբար 13-րդ դ. վերջերին գրված Մ1897 օրինակը՝ ՇԼԵ (1086) թվականին, Վ288 ձեռագրում՝ ՇԻԹ (1080):

[288] Տեղեկությունը Փրկչական ՌՁԴ (1084), Հայոց ՇԼԱ (1082) թվականի դիմաց է: Խոսքը վերաբերում է Ռումի սելջուկյան սուլթան Սուլեյման իբն-Կութուլմիշի (1077-1086) կողմից Անտիոքի գրավմանը 1084-ին:

[289] Բասած՝ բառացի՝ անցում (ֆր. passage), խորհրդանշում է խաչակրաց արշավանքը:

[290] Տե՛ս Բարսեղ Ա Անեցու մասին 1082 թ. տեղեկության ծանոթագրությունը:

[291] Ե3701 ձեռագիրը նույն տեղեկությունը դնում է ՇԼԹ (1090) թ. ներքո:

[292] Բնագրում՝ «ի քիրիստոնեաց»: Անտիոքի՝ սելջուկ թուրքերի կողմից գրավման թվականը՝ 1084 թ., ճիշտ է (հմմտ. Սմբատ Սպարապետ, էջ 89):

[293] Այս տեղեկությունը, փոքր տարընթերցումներով, տարբեր ձեռագրերում զետեղված է տարբեր թվականների ներքո՝ Մ1899-ի ՇԼԱ-ից (1082) մինչեւ՝

Վ911-ի՝ ՇԼԷ (1088): Սակայն ավելի ստույգ է Վ288-ը՝ ՇԼԴ՝ (1085 թ.), քանի որ հենց այդ թվականին Փիլարտոս Վարաժնունին եւս մի կաթողիկոս ձեռնադրել տվեց: Հոնիում Սարգսին հաջորդած Թեոդորոս Ալախոսիկ (Թորոս) կաթողիկոսին նա կանչեց իր նոր նստավայր Մարաշում աթոռակալելու, եւ երբ նա հրաժարվեց, այստեղ 1085 թ. նոր կաթողիկոս ձեռնադրել տվեց Վարագավանքի վանահայր Պողոսին (Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 1532): Հիշյալ հատվածի մի տարբերակը տեղ է գտել Անեցու ժամանակագրության 1893 թ. հրատարակության մեջ՝ 1082 թվականի ներքո՝ Մ1899 ձեռագրից քաղված, որը հետեւյալն է. «Ի սոյն ժամանակս ի Դ (4) բաժանեցաւ Հայոց կաթուղիկոսութիւն՝ տէր Վահրամ, տէր Գրիգորիս՝ յԵգիպտոս, տէր Բարսեղ՝ յԱնի, տէր Պօղոս հայրն Վարագայ՝ ի Մարաշ, տէր Թորոս՝ ի Հայնի»: Վահրամ-Գրիգոր Վկայասերի առժամանակ Եգիպտոսում գտնվելու, իսկ հետո որպես տեղի եպիսկոպոս (երբեմն նաեւ կաթողիկոս անվանված) իր քրոջորդի Գրիգորիսին թողնելու մասին (Մ. Օրմանեան, նույն տեղում, էջ 1500-1502, Կ. Մաթեւոսյան, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 37):

[294] Վրաց թագավոր Գեորգի Բ-ի (1054-1112) եւ Կյուրիկե Բ-ի մասին է խոսքը: Վ511 ձեռագիրը սույն դեպքը նշում է Փրկչական ՌՂ (1090), Հայոց՝ ՇԼԷ (1088) թ. դիմաց (թագավորի անունը՝ «Գւարգի»), Ե3701 ձեռագիրը՝ Փրկչական ՌՂԳ (1093), Հայոց՝ ՇԽ (1091) թ. դիմաց: Ժամանակագրության 1893 թ. հրատարակության մեջ վրիպմամբ ՇԼԶ-ի «Լ» (30)-ի փոխարեն տպվել է «Հ» (70), եւ ստացվել է 1127 թվականը, որն ուսումնասիրողի տարակուսանքն է հարուցել, քանի որ այլ աղբյուրներ հիշյալ դեպքի համար նշում են 1080-ական թվականները (տե՛ս Ռ. Մաթեւոսյան, Տաշիր-Ձորագետ, էջ 98):

[295] Փիլարտոս Վարաժնունի, Հյուսիսային Ասորիքում, Եփրատացիքում եւ Կիլիկիայում ստեղծված հայկական իշխանության հիմնադիր (1070-ական թթ. - 1086 թ.):

[296] Պարկիարուխ՝ Ռուքնեդդին Բարքիյարուք, սելջուկյան սուլթան (1094-1105):

[297] Սամվել Անեցին նկատի ունի Հովհաննես Սարկավագին:

[298] Սամվել Անեցու՝ Հովհաննես Սարկավագի թղթից մեջբերված այս հատվածում Սարկավագը ակնարկում է Բարսեղ Ա Անեցի կաթողիկոսի 1090 թ. այցելությունը Մելիքշահին:

[299] Սամվել Անեցին այստեղ (1094 թ.) խոսում է սովի մասին շատ ընդհանրացված ոճով՝ Աստվածաշնչի Թվոց գրքի պատմության մի դրվագ ակնարկելով (Թուեր, ԻԱ, 13-33): Մինչդեռ Վարդան Արեւելցին, գրելով Հոնիում աթոռակալած Թեոդորոս Ալախոսիկ հակաթոռ կաթողիկոսի մահվան մասին (այն տեղի է ունեցել 1095 թ., տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 1537), ակներեւորեն նույն սովը նկատի ունենալով՝ գրում է. «Յայնմ ժամանակի եղեւ ի պատճառս մարախոյ եւ երաշտոյ սով սաստիկ եւ ի յԱնի կարի իմն նեղութիւն մեծ…» (Վարդան Արեւելցի, գրաբ. էջ 113):

[300] Հմմտ. Հեթում Կոռիկոսցու ժամանակագրությունը՝ «ՇԽԵ (1096) շարժեաց Աստուած զմեծ բասաճն Ֆռանկաց գալ ի թափումն յԵրուսաղեմի…»: Նույն աղբյուրից են այս մատյանից քաղված հաջորդ երեք վկայությունները:

[301] Գոդֆրուա Բույոնցի (Godefroy de Bouillon), Երուսաղեմի խաչակրաց թագավորության հիմնադիր (1099-1100): Խաչակիրները Երուսաղեմը գրավել են 1099 թ. հուլիսի 15-ին:

[302] Կոստանդին Ա-ի իշխանության սկիզբը տարբեր աղբյուրներում նշվում է՝ 1093, 1095, 1097 թթ. (տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 76): Նույն 1098 թվականի դիմաց (Վ288) ձեռագիրն ունի՝ «Մեռաւ Կոստանտին որդին Ռուբենայ, տէրն Վահկայի, որ էր ի զօրացն Գագկայ»:

[303] Սուր - Տյուրոս քաղաքը Լիբանանում:

[304] Կիլիկիո իշխան Թորոս Ա, մոտ՝ 1100-1129 թթ.:

[305] Հավանաբար, համառոտված է Կիրակոս Գանձակեցու հայտնած տեղեկությունը. «Այս Թորոս իշխան եւ եղբայր իւր Ստեփանէ, որդիք էին իշխանին Լեւոնի, որդւոյ Կոստանդեայ, որդւոյ Ռուբենայ, թոռունք յառաջագոյն ասացեալ առնն, որ յազգականութենէ եւ ի զաւակացն Գագկայ Արծրունեաց» (Կիրակոս Գանձակեցի, էջ 109): Այս վկայությունը նպաստում է Ռուբեն Ա-ի ծագման քննությանը (տե՛ս Է. Բաղդասարյան, Կիլիկիայում Ռուբինյան հարստության հիմնադիր Ռուբեն Ա իշխանը եւ իր գործը, «Էջմիածին», 2006, Զ, էջ 92-93):

[306] Պաղտին՝ Բալդուին Ա Բույոնցի՝ Եդեսիայի կոմս (1098-1100), ապա Երուսաղեմի թագավոր (1100-1118):

[307] Կեսարիա Պաղեստինում, հայկական աղբյուրներում կոչվում է նաեւ Սզայր, խաչակիրներն այն գրավել են 1101 թ. մայիսին:

[308] Աքքան (Ակրա) խաչակիրները գրավել են 1104 թ. մայիսի 26-ին:

[309] Մ. Բրոսսեն նշելով, որ Խըզլի մասին որոշ այլ մանրամասներով հայտնում է նաեւ Վարդան Արեւելցին (13-րդ դ.), ենթադրում է, որ այդ տեղեկությունները, հավանաբար, հետագայի հավելում են Սամվել Անեցու բնագրում (**B rosse et, p.** 456): Սակայն դրանք Անեցու ժամանակագրության մաս են կազմում: Երկու հեղինակները, հավանորեն, ունեցել են տարբեր սկզբնաղբյուրներ:

[310] Տրապոլիս՝ Տրիպոլի (Տրիպոլիս), ծովափնյա քաղաքը Լիբանանում: Տարբերակ՝ (Մ1899) «ի ՇՕԸ (1109) թվին առաւ Տրապօլիս յանօրինաց»:

[311] Սամվել Անեցին Մանուչեի մահվան թվականը հայտնող միակ հեղինակն է (տե՛ս **B rosse et, p.** 456):

[312] Լիբանանի ծովափնյա քաղաքներ «Պերուքը» (Բեյրութ) խաչակիրները գրավել են 1110 թ. ապրիլի 2-ին, իսկ «Սայիտե» (արաբ.՝ Սայդա) Սիդոնը՝ դեկտեմբերի 4-ին: Տարբերակ՝ (Մ1899) «Ի ՇՕԹ (1110) թվին առաւ Պերուք եւ Սայիտէ յանօրինաց»:

[313] Քեսունի հայկական իշխանության հիմնադիր եւ շրջակա գավառների տեր նշանավոր իշխան Գող Վասիլը մահացել է 1112 թ.:

[314] Գրիգոր Գ Պահլավունին Գրիգոր Մագիստրոս Պահլավունու (Բջնեցու) որդի Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսի քրոջ որդի իշխան Ապիրատի որդին էր: Նրա եւ եղբոր՝ հաջորդ կաթողիկոս Ներսես Շնորհալու համար չափազանց կարեւոր էր իրենց տոհմական ծագումը, թեկուզ մայրական գծով, որովհետեւ Պահլավունիները համարվում էին սուրբ Գրիգոր Լուսավորչի տոհմակիցներ: Այդ էր պատճառը, որ այս տոհմը կաթողիկոսական աթոռն իր ձեռքում պահեց մինչեւ 13-րդ դարի սկզբները, մինչեւ Գրիգոր Զ Ապիրատը (տե՛ս Կ. Մաթեւոսյան, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 122-125):

[315] Սամվել Անեցին այստեղ իր պատվիրատու Գրիգոր Գ Պահլավունու գահակալումը եւ Երուսաղեմ կատարած այցը (տեղի է ունեցել 1142 թ.) փառաբանական ոճով նկարագրելուց հետո ուղիղ խոսքով դիմում է նրան՝ որպես իր «հրամանատուի»:

[316] Գրիգոր Գ Պահլավունին աթոռակալել է 53 տարի (1113-1166 թթ.), բայց որոշ ձեռագրերում, մասնավորապես նաեւ Կամրջաձորի հնագույն օրինակում՝ Մ5619 (1176 թ.) եւ Մ5596-ում նշված է 50 (Ծ):

[317] Գող Վասիլ՝ Հյուսիսային Ասորիքում եւ Եփրատացիքում ստեղծված հայկական զորեղ իշխանության հիմնադիր, որն այդտեղ իշխել է շուրջ 30 տարի (1082-1112)՝ իր շուրջը համախմբելով Բագրատունյաց անկումից հետո մնացած հայ ազնվականությանն ու զինվորականությանը: Նրա մոտ է հանգրվանել նաեւ Բարսեղ Ա Անեցի կաթողիկոսը: Իշխանի գործունեության մասին հանգամանորեն տե՛ս **G. Dadyan, Les Arménien entre Grecs, Musulmans et Croisés, vol. 2, Lisbonne, 2004, p. 1057-1141.**

[318] Որոշ օրինակներում՝ «Մօրոյ», խոսքը Հիսն-Մանսուրի մասին է:

[319] Սամվել Անեցու ժամանակագրության մի քանի ձեռագրերի մեջ մուծված այս տեղեկությունը գրեթե նույն բառերով հանդիպում է նաեւ այլ աղբյուրներում. Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 61, Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քէօթուկը), աշխատասիրութեամբ Պ. Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 59:

Մ5596 ձեռագրում տեղեկությունը ՇԿԱ-ՇԿԲ (1112-1113) թթ. հատվածում է:

[320] Վերցված է Միքայել Ասորու ժամանակագրությունից, որտեղ 1112 թվականի ներքո է (Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորւոց պատրիարքի, էջ 411-412), Մատթեոս Ուռհայեցին նույնը վերապատմել է համառոտված, 1123 թ. ներքո (Մատթեոս Ուռհայեցի, էջ 388-389): Նրանից օգտվել է Սմբատ Սպարապետը:

[321] Տարբերակ՝ (Հ3) «Շինեցին Ֆռանկք զՇապակք»: Հեթում Կոռիկոսցու թարգմանած «Պատմութիւն խրոնիկոնին» գործում նշվում է. «Քրիստոնեքն շինեցին զՇաւապաքոյ բերդն» (Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 56): Երուսաղեմի թագավոր Բալդուինը «Եգիպտոսի եւ Սիրիայի ցամաքային հաղորդակցության միակ ճանապարհը վերահսկելու նպատակով 1115 թ. Նեգեւի անապատի Շաուբակ բնակավայրում կառուցեց նշանավոր Քրաք դե Մոնրեալ բերդը» (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Ա, էջ 77):

[322] Բյուզանդական կայսր Հովհաննես Բ Կոմնենոսն է (1118-1143), որի անունը հայկական աղբյուրներում հիշվում է Պէրփէրօժան կամ Պերփեռուժեն (Porphyrogenitus, Ծիրանածին բառից) եւ նման այլ ձեւերով: Հեթում Կոռիկոսցին 1121 թ. դիմաց գրում է. «Թագաւորեաց Յունաց Յովհաննէս Պաւրֆիրաւժենն ամս ԺԳ (13): Սա էր որդի Ալէքսին» (Մ1898):

[323] Վրաց Դավիթ Շինարար թագավորը Տուղրիլ իբն Մահմուդին (Մլըք Տուղրիլ) եւ Նաջմ ադ-դին իլ-Ղազիին (էլխազի) հաղթել է 1121-ին (Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի…, էջ 56):

[324] Ժամանակագրության 1893 թ. վաղարշապատյան հրատարակության մեջ, հիշյալ հատվածում բացակայում են «երբեմն ի Վրաց» բառերը, որոնք առկա են բոլոր ձեռագրերում: Այդ բանն առաջինը նկատել է Հ. Մարգարյանը, որը նաեւ անդրադարձել է հիշյալ իրադարձությունների ժամանակ վրացիների ավարառուական գործունեությանը (Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի…, էջ 88):

[325] Սամվել Անեցին միակ հեղինակն է, որ հայտնում է Աբու-լ-Ասվարի մահվան հանգամանքների մասին (այն, որ նրանց բնակեցրել են «ի մահարար տեղւոջ»): Մ. Բրոսսեն ենթադրում է, որ գերված Աբու-լ-Ասվարին պահել են Ափխազիայում եւ փորձում է այդ մասին ակնարկ գտնել վրացական մի ազգանվան ստուգաբանության մեջ (M. Brosset op. t, p. 460):

[326] Դեպքերի մասնակիցների մասին տե՛ս նաեւ Պ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երեւան, 1977, էջ 229-230:

[327] Հայրենի քաղաքի հերոսական ինքնապաշտպանության մասին գրելիս Սամվել Անեցին, ասես հակիրճության իր սկզբունքից շեղվելով, ոգեշունչ տողերով արձանագրել է անեցի մի խիզախ կնոջ՝ Այծյամի անունը: Այս փոքրիկ հատվածը ցույց է տալիս, որ ամիրների 60-ամյա իշխանությունը թոթափած անեցիները ժողովրդական բուռն դիմադրություն են ցուցաբերել, կենաց մահու կռիվ մղել քաղաքի պաշտպանության համար: Անիի հերոսուհու անունը մի շարք հրատարակություններում նշվում է «Այծեմնիկ»: Այն նույնպես ծագում է այծյամ բառից, սակայն այլ անուն է (տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, էջ 142):

[328] «Մարդախանձութիւն» բառն ուշ շրջանի ձեռագրերում դարձել է «մարդածախութիւն» եւ այդպես էլ տպվել Ժամանակագրության 1893 թ. հրատարակության մեջ (Անեցի, 1893, էջ 127):

[329] Անիի բնակիչների նեղ կացությունը ներկայացնելուց հետո (բնութագրական է «հարկապահանջ յափշտակութեանց» արտահայտությունը), պատմիչը հաղորդում է չափազանց հետաքրքիր մի տեղեկություն, ըստ որի Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսը բանակցություններ էր սկսել Անիի ամիր Աբու-լ-Ասվարի հետ, եւ 1120-ական թվականների սկզբներին նրա ու ամիրայի միջեւ նախնական համաձայնություն էր կայացել կաթողիկոսական աթոռի Անի փոխադրման համար: Սակայն 1124-26 թթ. դեպքերն ինքնըստ-

ինքյան խափանել են այս կարեւոր ձեռնարկը, որը հարուցել է հայրապետի զայրույթը: Սամվել Անեցին այս մասին հայտնող միակ հեղինակն է:

[330] Այս հատվածի վերջում «զի զանձնէ ամբաստանեմ» բառերից հետո որոշ ձեռագրերում ավելացված է՝ «եւ չէ օգուտ», որը տեղ է գտել նաեւ վաղարշապատյան հրատարակության մեջ (Անեցի, 1893, էջ 128): Հետաքրքրական է, որ Սամվել Անեցու այդ վերջին խոսքերը համընկնում են նրա ուսուցիչ Հովհաննես Սարկավագի մի հայտնի աղոթքի խորագրին՝ «Ամբաստանութիւն զանձնէ», այսինքն՝ ինքնապախարակում (տե՛ս Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երեւան, 1956, էջ 127):

[331] Կիլիկիո իշխան Լեւոն Ա (1129-1137):

[332] Ծագում է «Պատմութիւն Խրոնիկոնին» ժամանակագրությունից (Մժ, հ. 2, էջ 57): Նշված է Գերմանիայի թագավոր և Հռոմեական սրբազան կայսրության տիրակալ Լոթար Գ-ն (1125-1137):

[333] Հետագայի հավելում հանդիսացող այս հատվածում վարդապետի անունը սխալագրության պատճառով դարձել է Սարգիս, փոխանակ՝ Սարկավագ, քանի որ հենց նա էր ծագումով Փառիսոսից, քահանայի որդի, եւ նրա աշակերտներն են թվարկվածները՝ Երեմիա Անձրեւիկն ու անեցիները, որոնց թվում եւ պատմիչ Սամվել Անեցին: Վ869 ձեռագրում Սարգիս անվան վրա նշան է դրված եւ լուսանցքում ուղղված է՝ «Սարկաւագ»:

[334] Բալդուին Բ Բուրգցի, Երուսաղեմի թագավոր (1118-1131), Ֆուլկ Անժուացի, Երուսաղեմի թագավոր (1131-1143):

[335] Սա Անիի ամիրաների մասին Սամվել Անեցու վերջին վկայությունն է: Փատլուն Ա ամիրի մահվան թվականը ճիշտ է նշված (1132), որին հաջորդել են եղբայրները՝ Խուշեր, Մահմուդ, Շադդադ (մինչեւ 1155 թ.): Անիի ամիրների ցանկը տե՛ս **V. Minorsky, Studies in Caucasian History, London, 1954, p. 89-100**, Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 203:

[336] Դեպքը եղել է 1137 թ., որը ճիշտ է նշված Հեթում Կոռիկոսցու ժամանակագրության մեջ («ՇՁԶ (1137) Թագաւորն Յունաց Պաւրֆիրաւժէն...»): Բայց Սամվել Անեցու ժամանակագրության մեկ այլ լրացնող եւս այն դնում է ավելի վաղ թվականով՝ «Ի ՇՁԱ (1132) ամին ել Պէռփէռօժէնն եւ էառ զԿիլիկիայ…» (Անեցի, 1893, էջ 130)

[337] Ե3701 ձեռագիրը տեղեկությունը դնում է ՇՀԴ (1125) թվականի ներքո:

[338] Տլսմաթ (արաբ. տիլիսմաթ) – կախարդանք, բժժանք:

[339] «Պատմութիւն Խրոնիկոնին»՝ «ՌՃԼԵ (1135) …Յայն ժամանակի եղեւ երկրորդ Քուռաթն ընբրուր, կացեալ ամս ԺԵ (15)» (Մժ, հ. 2, էջ 57): Ժամանակագրական ցանկը լրացնող գրիչը թվականը նշելու հարցում թյուրիմացության մեջ է ընկել, քանի որ հաջորդ տողում՝ հաջորդ տարվա՝ 1136 թվ. դիմաց տեսել է այլ կայսեր անուն, ուստի նախ, հավանաբար գրել է «ամս ԺԵ (15)», բայց հետո ջնջել, գրել է «ամս Ա (1)»: Մինչդեռ «Պատմութիւն Խրոնիկոնին» ժամանակագրությունը նույն թվականի դիմաց ունի նաեւ՝ «Եւ յայնմ ժամանակի եկաց ընբրուր Ֆրտրիկն ամս ԼԵ (35)»,

որից հետո պատմվում է նրա գործերի եւ Սելեվկիա գետում խեղդվելու մասին (նույն տեղում): Առաջին դեպքում խոսքը վերաբերում է Քուռաթին՝ Գերմանիայի կայսր Կոնրադ Գ-ին (1138-1152), երկրորդում՝ Ֆրիդրիխ Ա Բարբարոսսային (Շիկամորուսին), որն իրոք Հռոմեական սրբազան կայսրության կայսրն է եղել 35 տարի, սակայն 1155-1190 թվականներին: Այսպիսով՝ ներկա բնագրում առկա սխալը գալիս է «Պատմութիւն Խրոնիկոնին» ժամանակագրությունից, ուր ի սկզբանե, ինչ-որ պատճառով, 1155 թվականի տեղեկությունը հայտնվել է 1135 թվականի դիմաց:

[340] Տե՛ս նախորդ ծանոթագրությունը:

[341] Վրաց թագավոր Դեմետրե Ա-ի՝ ավատատիրական ընդվզումը ճնշելու մասին հայտնի տեղեկությունների շարքում այս մեկը կարեւոր է թվականի առումով (տե՛ս Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի…, էջ 138-139):

[342] Խոսքը վերաբերում է Գանձակի Կարա-Սունկուր աթաբեկին: «Գանչէնքը» Վրաստանում գտնվող Գաչիան (հայկական աղբյուրներում՝ Գաջենք) քաղաքն է (Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի…, էջ 72-73, 80): Մ1897-ում սխալմամբ գրված է «ի Խաչէնք»:

[343] Այն, որ Թոքակերի որդի Գրիգոր վարդապետը մահացել է Գանձակի երկրաշարժի ժամանակ, հայտնի էր Կիրակոս Գանձակեցու պատմությունից (Կիրակոս Գանձակեցի, էջ 200, տե՛ս նաեւ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, էջ 557): Սարգիս վարդապետի մասին ավելի քիչ տեղեկություններ են հայտնի (տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երեւան, 1948, էջ 412): Հայրապետ վարդապետի այս հավելման շնորհիվ իմանում ենք Սարգսի մականունը՝ Կորխեցի: Հավանաբար, այն ծագում է Ջավախքի Կորխ բնակավայրից (տե՛ս Ս. Կարապետյան, Ջավախք, Երեւան, 2006, էջ 304-307):

[344] Նուք՝ Ֆուլկ Անժուացի, Երուսաղեմի թագավոր՝ 1131-1143 թթ.:

[345] Կիլիկիո իշխան Թորոս Բ (1145-1168):

[346] Դեպքերը ներկայացված են ստույգ թվագրմամբ (տե՛ս Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի…, էջ 139-140):

[347] Խաչակրաց երկրորդ արշավանքը՝ 1147-1149 թթ.: «Քուռաթ ընբրուրն Ալամնաց»՝ Գերմանական (ալամնաց) կայսր (իմպերատոր – ընբրուր), Կոնրադ Գ (1138-1152): «Լօիզ ռե տէ Ֆռանսն»՝ Լյուդովիկոս է (1137-1180) Ֆրանսիայի թագավոր:

[348] «Պատմութիւն Խրոնիկոնին»՝ «ՌՃԽԶ (1146) …Յայսմ ամի թագեցին ընբրուր ի Հռոմ զԵ (5)-երորդն Հեռի» (Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 58): 1146-1150 թթ. Հռոմի թագավոր (Rex Romanorum) է եղել Կոնրադ Գ-ի որդի Հենրիխ Բեռենգարը: Բայց «Պատմութիւն Խրոնիկոնին» գործում վկայակոչված տեղեկության շարունակության մեջ նշվում է Հենրիի կնոջ անունը՝ Սիցիլիայի արքայադուստր Կոստանցիա: Վերջինս, սակայն, Հռոմեական սրբազան կայսրության կայսր Հենրիխ Զ-ի (1191-1197), (մինչ այդ՝

Գերմանիայի թագավոր՝ 1169-ից) կինն էր, ուստի՝ այստեղ, թերեւս տարբեր սկզբնաղբյուրների տվյալների օգտագործման պատճառով թյուրիմացաբար նույնացվել են Հենրիխ անունով երկու գործիչները:

[349] 12-րդ դարի նշանավոր վարդապետ Սարգիս Շնորհալին Կաթողիկեից թղթերի մեկնությունը կատարել է 1154 թ. (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 168):

[350] Խոսքը վերաբերում է Կիլիկիայի արեւմտյան կողմում գտնվող Սաւրիա (Իսավրիա) երկրամասին:

[351] Հռոմեական սրբազան կայսրության տիրակալ Ֆրիդրիխ Ա Բարբարոսսա (1155-1190): Ժամանակագիրն ուզում է ասել, որ 1151 թվականից 39 տարի հետո է խեղդվել, այսինքն՝ 1190 թ, որը ճիշտ է: Սակայն մեկ այլ ձեռագրում այդ մասին հավելում կատարողները դեպքը դրել են 1192-ի ներքո:

[352] Խաչակիրները Պաղեստինում գտնվող Ասկալոնը (Ասխալա) գրավել են 1153 թ.:

[353] Կարինի ամիր Սալդուխը (մոտ 1153-1164) այդ շրջանում Վրաստանի դեմ մահմեդական ամիրությունների մղած պայքարի գործուն մասնակիցներից էր (Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի... էջ 66, 98, 106, 107, 146, 208):

[354] Կիլիկիայում Թորոս Բ-ն իշխել է 1145-1168 թթ., Մլեհը՝ 1170-1175 թթ. (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 114-149):

[355] Հայ հեղինակի ձեռքին, հավանաբար, Բյուզանդական կայսրերի թերի ժամանակագրություն է եղել, քանի որ Պէրփէրօժան կոչված Հովհաննես Բ Կոմնենոսը (1118-1143) ավելի ուշ է մահացել:

[356] Այս դեպքի մասին հայտնող առաջին պատմիչն է Սամվել Անեցին: Ղ. Ալիշանը, հավանաբար, Վենետիկի ձեռագրերից մեկի հիման վրա, այս հատվածում եղած մի ընդմիջարկություն է նշում. «Զմեծ աւանն զԱշնակ՝ այրեաց չարագլուխ Ելտկուզն, զոր ՍՊ (2800) ասեն զայրածս կամ Ռ (5000)» (Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 143):

[357] Սամվել Անեցու ժամանակագրության վերջին տեղեկությունն է, որից հետո 1176 թ. հնագույն ձեռագրում (Կամրջաձորի օրինակ, Մ5619) ուղղագիծ ավարտանշան է դրված (նույն բանը պահպանվել է նաեւ Ե343 ձեռագրում): Այստեղ պատմվող դեպքերի մասին հայտնում են նաեւ այլ հեղինակներ, սակայն Սամվել Անեցու հաղորդումն աչքի է ընկնում ականատեսի անմիջականությամբ: Նա հայ հեղինակներից միակն է, որ նշել է Վրաց թագավոր Գեորգի Գ-ի (1156-1184) պարտությունը թշնամու անակնկալ հարձակման հետեւանքով (տե՛ս Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի... էջ 112-113):

[358] Սամվել Անեցու ժամանակագրության այս վերջին տեղեկության «զարհուրեցոյց զբնակիչք սորա» բառերից հետո գրիչներից մեկի վերոնշյալ հավելմանը Վ1253 (14-րդ դ.) ձեռագրից ծանոթ լինելով՝ Ղեւոնդ Ալիշանը, հատվածի փառաբանական ավարտը նկատի ունենալով, գրում է. «Եւ աս-

տանՀօր թուի աւարտեալ հեղինակին զժամանակագրութիւնն» (Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 100):

[359] Քաղված է Մ2965 ձեռագրից, որտեղ թերեւս ուշ ընդօրինակություն լինելու պատճառով ժամանակագրությունը խախտված է: Ծագում է Հեթում Կոռիկոսցու ժամանակագրությունից. «ՈԺԶ (1167) Ամառի թագաւորն յերուսաղեմի էառ զՍքանտարիայ եւ զՊլպէս» (Կ. Մաթեւոսյան, Հեթում պատմիչ Կոռիկոսցին..., էջ 47): Հ3 ձեռագիրը 1155 թ. դիմաց տալիս է այս տարբերակը՝ «Ամառի թագաւորն Երուսաղէմի էառ զՔանտարիայ եւ զՊլպէս»: Խոսքը Երուսաղեմի թագավոր Ամորի Ա-ի (1162-1174) եգիպտական Ալեքսանդրիայի (Իսքանտարիա-Քանտարիա) եւ Բելբեսի գրավման մասին է:

[360] Հայոց կաթողիկոս Ներսես Դ Շնորհալի (Կլայեցի) (1166-1173):

[361] Մ3613՝ ՌԵԿԸ-ի ներքո:

[362] Վ1253 ձեռագրում՝ «…մեծ իշխանաց իշխանն Հայոց, պատրոն Թորոս»: Սամվել Անեցու ժամանակագրության մեջ Կիլիկիո իշխաններից ոչ մեկի անունը չի նշված: Սակայն 1163 թվականով ավարտված ժամանակագրությունը, մինչեւ բազմացվելը, 1173 թվականին լրացվել է վերջին տասնամյակի կարեւոր դեպքերով, որոնցից մեկն էլ սույն վկայությունն է Թորոս Բ-ի (1145-1168) մահվան մասին:

[363] Խլաթի ամիր Շահ Արմենի՝ Խեդենեկ Արծրունուց Ամյուկը, իսկ Վիգենից Սասունը վերցնելու մասին հայտնում է նաեւ Վարդան Արեւելցին, առանց թվական նշելու (Վարդան Արեւելցի, էջ 127-128): Մ9796 ձեռագրում թվականն անորոշ է: 1169 թ. Սասունի Ավետարանի (Արիստակես գրիչ) հիշատակարանից երեւում է, որ Վիգենն այդ ժամանակ Սասունի տերն էր. «...ի տէրութեան Սանսնւոյ Վեգենայ...» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 194): Ուստի նրա հայրենազրկումը կատարվել է այդ թվականից հետո: Դիտելի է նաեւ, որ այս տեղեկության մեջ Վիգեն իշխանի եւ երկրամասի անունների գրության ձեւը նման է Սասունի Ավետարանում դրանց գրությանը: Իշխանի անվան առնչությամբ Ն. Ակինյանը գրում է. «Ճշտագոյնը կհամարիմ Վեգեն, ինչպես ներկայացուցած է ժամանակակից Արիստակէս գրիչ» (Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 404):

[364] 12-րդ դարում Դվինում նահատակված «նոր վկա» Հովսեփ Դվնեցու եւ նրա՝ Հավուց թառում թաղված լինելու վերաբերյալ հայտնի են նաեւ այլ սկզբնաղբյուրներ (Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Երեւան, 1999, էջ 96, էջ 175, Հայոց նոր վկաները (գիտական հրատ.), աշխատասիրութեամբ Յ. Մանանդեանի եւ Հ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903, էջ 46-60): Հովսեփի վկայաբանությանը, նրա դեգերումների ուղուն եւ թաղման տեղի ու դամբարանի հարցին անդրադարձել է Գ. Սարգսյանը (Գ. Սարգսյան, Վկայաբանությունները որպես պատմաաշխարհագրական սկզբնաղբյուր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 6, Երեւան, 2005, էջ 173-182):

[365] Փոքր համառոտմամբ քաղված է Հեթում Կոռիկոսցու «Պատմութիւն խրոնիկոնին» գործից (Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 59):

[366] Ծագում է Հեթում Կոռիկոսցու «Պատմութիւն խրոնիկոնին» գործից (Մժ, հ. 2, էջ 59): Պլինասը Կարմիր ծովի Աքաբայի ծոցում գտնվող էյլաթ ամրոցն է, որը Սալահեդդինի զորքերը գրավել են 1170 թ.:

[367] Տաշիր-Ձորագետի այս թագավորի մասին է, տե՛ս Ռ. Մաթեւոսյան, Տաշիր-Ձորագետ, էջ 109, Կյուրիկյանների տոհմածառը տե՛ս **Claude Mutafian**, L'Arménie du Levant, **Tome II, դ.Գ**: Գարդմանում գտնվող Մածնաբերդի անունը Ե1221 ձեռագրում լրիվ է, իսկ Մ8481-ում երեւում են սկզբի երկու տառերը «Մա» (թերթ 202ա), որից կատարված Ստ. Օրբելյանի ժամանակագրության հրատարակության մեջ այն բաց է թողնված («ի բերդին»):

[368] Ապիրատ իշխանն Անիի Բարսեղ Բ եպիսկոպոսի եղբայրն էր (Հասանյան-Ապիրատյան տնից), որը փրկագնվել է Վրաց թագավորի օգնությամբ (Վարդան Արեւելցի, էջ 133):

[369] Տե՛ս 1150 թ. ներքո Սարգիս Շնորհալու մասին տեղեկությունն ու համապատասխան ծանոթագրությունը:

[370] Հայոց կաթողիկոս Գրիգոր Դ Տղա (1173-1193): Ժամանակագրության այս հատվածում հնագույն ձեռագրերի մի մասում բացակայում է կաթողիկոսի մականունը՝ «Տղայ կոչեցեալն», օրինակ՝ Ե1801, Ե69, Մ1719, եւ այլն: Մ3613 ձեռագրում եղել է «Գրիգոր Տղա», որից հետո մեկ այլ գրիչ ավելացրել է՝ «ամս Ի (20)» (70բ): Բայց նույն գրիչը Մխիթարի գրած վերջին՝ «Տղա» բառի «տ»-ն դարձրել է «պ», «ղ» տառը ջնջել է, թողել «ա»-ն եւ շարունակել «լիաւունի»: Ստացվել է «տէր Գրիգոր Պալիաւունի»:

[371] Նկատի ունի Տլուք գավառի Ծով կամ Ծովք ամրոցը:

[372] Հիշատակագրողն ուզում է ասել, որ Գրիգոր Դ Տղան Ծովք ամրոցից դուրս է բերել Գրիգորիսի (Վկայասեր, նույն ինքը՝ տեր Վահրամ) նշխարները, որն իր պապի՝ Ապիրատի քեռին էր, եւ ամփոփել Հռոմկլայում, իր հորեղբայրներ Գրիգոր Գ եւ Ներսես Դ Շնորհալի կաթողիկոսների (երկու լուսավորիչների) աճյունների մոտ (տոհմածառը տե՛ս Կ. Մաթեւոսյան, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 137):

[373] Դեպքը տեղի է ունեցել 1185 թվականին (հանգամանքների մասին տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 159-163): Մ9796 եւ Ե1221, հավանաբար Կիլիկիայից հեռու վայրում լրացված օրինակները ՈԻԸ (1179) թվականի ներքո տալիս են հետեւյալ տարբերակը. «Անդիոքայ տէրն բրինձ անուանեալ, կոչէ զմեծ իշխանն Ռուբէն որդի Թորոսի, յաղակս սիրո եւ միաբանութեան, բազում երդմամբ եւ միջնորդօք քահանայապետաց իւրոց եւ մերոց, եւ իբրեւ գնաց առ նայ ուխտիւ խաղաղութեան, նենգեաց ուխտին եւ կալեալ եդ ի բանտի զամ մի եւ անթիւ գանձս առեալ եւ բազում գաւառս, եւ ապայ արձակեալ, որ եկեալ յերկիր իւր, զկնի մի ամի մեռանի, եւ յաջորդէ զթագաւորութիւն եղբայր նորին Լեւոն»:

[374] Ըստ Վարդան Արեւելցու 1174-ին Վրաց Գեորգի Գ թագավորին Անին գրավելու է դրդել ամիրսպասալար Իվանե Օրբելին («էառ Գէորգի զԱնի երկրորդ անգամ ի սադրելոյ Իւանէի...»), որը Կյուրիկյանների (Բագրատունիների) հետ ունեցած խնամիական կապը (նրա կինը Տաշիր-Ջորագետի թագավոր Կյուրիկե Գ-ի դուստրն էր) թերեւս բավարար հիմք էր համարում Բագրատունյաց նախկին մայրաքաղաքի նկատմամբ որպես ժառանգորդ հանդես գալու համար (Վարդան Արեւելցի, էջ 132, Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի... էջ 155-157, 118-119):

[375] Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրության հրատարակության մեջ իշխանի մահվան մասին նշված է 1176 թվականի դիմաց (Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 19): Իսկ Մատենադարանի թիվ 9796 ձեռագրում տեղեկությունը նախորդում է 1175 թվականին կատարված դեպքին. «ՈԻԴ (1175) թվին աթաբակ էլտկուզն պաշարեաց զԱնի եւ աւերեաց բազում եկեղեցիս ի Շիրակ...»: Մենք պայմանականորեն դնում ենք 1175 թ. ներքո:

[376] Վերջին բառերը կարելի է կարդալ նաեւ՝ «մերձ ի Կօնն»: Հավանորեն քաղված է Հեթում Կոռիկոսցու թարգմանած «Պատմութիւն խրոնիկոնին» ժամանակագրությունից՝ «Ի թուին Հայոց ՈԻԵ (1176) կայսրն Յունաց Մանուիլն յաղթեցաւ ի Խլիճ Ասլան սուլտանէն մերձ յԻկոնիա» (Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 59): Հիշատակված են բյուզանդական կայսր Մանուել Ա Կոմնենոսը (1143-1180) եւ Ռումի սուլթան Քըլըջ Արսլան Բ-ն (Ղլիճ Ասլան) (1156-1192), որը բյուզանդացիներին հաղթել է Իկոնիայի մոտ, Միրիոկեֆալոնի ճակատամարտում 1176 թ. սեպտեմբերին:

[377] Խոսքը Վրաց Գեորգի Գ թագավորի մասին է, որը 1174-ին գրավելով Անին, 1176-ին այն վերադարձրել է նախկին տերերին՝ Շադդադյան ամիրներին (Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի... էջ 122):

[378] Տեղեկությունը Աբաս Բ Կյուրիկյան (1170-1176) թագավորի մասին է:

[379] Երուսաղեմի թագավոր Բալդուին Դ-ի 1177 թ. նոյեմբերի 25-ին Սալահեդդինի նկատմամբ տարած հաղթանակի մասին է:

[380] Սամվել Անեցու ժամանակագրության ավարտին եւ դրա շարունակությանը վերաբերող այս հետագայի հավելումը տարբեր ձեռագրերում զետեղված է 1179 կամ 1180 թվականի ներքո: Այստեղ ուշագրավ է Սամվել Անեցու ժամանակագրության ստույգության մասին նշումը: Անանուն հեղինակը գրում է, որ շարունակության մեջ կրկին վերականգնվում է Հայոց գահակալների տարիների նշման սյունակը («կանոն իշխանութեան Հայոց»), սակայն դրանում սխալները հաճախակի են, ուստի վստահելին մնում են Փրկչական եւ Հայոց թվականները:

[381] Կիլիկիո իշխան Ռուբեն Գ (1175-1187):

[382] Իգնատիոս վարդապետի մեկնության գրության թվականը հայտնի չէ: Նա իր աշխատությունը հանձնել է Գրիգոր Դ Տղա (1173-1193) կաթողիկոսին (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 270-271): Ս42 ձեռագրում տեղեկությունը 1143 թվականի ներքո է:

[383] Գի դը Լուսինյան - Երուսաղեմի թագավոր (1186-1194), Կիպրոսի թագավոր (1192-1194):

[384] Վրաց թագավոր Գեորգի 3-րդը մահացել է, եւ դուստրը՝ Թամարը, փոխարինել է նրան 1184 թ.:

[385] Համառոտված է Հեթում Կոռիկոսցու «Պատմութիւն խրոնիկոնին» գործից, որտեղ նշված է. «ՌԵՁԱ (1181) Թագաւորեցուցին Երուսաղէմի է (7)-երորդ զՓոքր Պաղտինն, զորդի մարգիզ Կիլամին…» (Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 59): Երուսաղեմի մանկահասակ անվանական թագավոր Բալդուին Ե-ն (1185-1186), մահացել է 8 տարեկանում:

[386] Սույն ընդարձակ բնագրական հատվածի հեղինակը, որը դեպքերի ժամանակակիցն է եղել (նրան պայմանականորեն անվանել ենք Անանուն Տարոնեցի), պատմում է Սուքման Բ Շահ Արմենի մահից հետո՝ 1185-1186 թթ. Խլաթի ամիրությունում առաջացած անիշխանության ժամանակ տեղի ունեցած դեպքերի եւ առավել հանգամանորեն՝ Ս. Կարապետ վանքին բաժին հասած դժբախտությունների մասին, ապա անդրադառնում Ուխտիք (Օլթի) քաղաքի շուրջ ծավալված անցքերին, որին միջամտել են Կարինի ամիրը եւ Խլաթի նոր ամիր Բեկթամուրը (այլ մանրամասներ տե՛ս Կ. Մաթեւոսյան, Մշո Ս. Կարապետ վանքի պատմության մի դրվագ, «Պատմա-բանասիրական հանդես», 2007, N 1, էջ 188-197):

[387] Իբն ալ-Ասիրը հայտնում է, որ Շահ Արմենը մահացել է 1185-ի հունիսի 12-ին (Իբն ալ-Ասիր, թարգմանություն բնագրից, առաջաբան եւ ծանոթագրություններ Ա. Տեր-Ղեւոնդյանի, Երեւան, 1981, էջ 269): Փաստորեն, դրանից անմիջապես հետո սկսվել են հայ բնակչության վրա հարձակումները, քանի որ այդ մասին գրող մեր հեղինակը նշում է՝ «զի ժամ էր հնձոց» (հուլիս): Շահ Արմենի մահվան եւ 1185 թ. անցքերի մասին շատ համառոտ նշում են նաեւ Վարդան Արեւելցին «...մեռաւ Շահի-Արմէնն անորդի, եւ աւեր եւ սուր եւ գերութիւն բազմացաւ ի վերայ աշխարհի նորա ի շրջակայ ազգացն» (Վարդան Արեւելցի, էջ 135-136): Այս շրջանի իրադարձություններին համակողմանիորեն անդրադարձել է Հ. Մարգարյանը (Հ. Մարգարյան, Քաղաքական կացությունը Մերձավոր Արեւելքում եւ Հայաստանի ազատագրման հեռանկարները (12-13-րդ դդ.), Պատմա-բանասիրական հանդես, 1989, N 1, էջ 36-40):

[388] Տարընթերցում՝ (Մ8481) «Պարթեւական ազգին, որ Գունդն կոչի», (Ե3397), «Պարթեւական ազգին, որ Գուրդն կոչի»:

[389] Դեռեւս նախորդ դարի սկզբին Մշո Ս. Կարապետի միաբան Կարապետ վարդապետ Լուսարարյանը հրատարակել է վանքի պատմությունն ու առաջնորդների գավազանագիրքը (Կ. Լուսարարեան, Գաւազանագիրք յաջորդութիւնք վանահարց ուխտիս Ս. Կարապետի Տարօնոյ, Երուսաղէմ, 1912, էջ 64): Ս. Կարապետի վանահայր, 1185 թ. հուլիսին նահատակված Ստեփանոս եպիսկոպոսի («որդի Երեմիայի») անունը նրան հայտնի չի եղել:

[390] Ստեփանոս եպիսկոպոսը նահատակվել է «յաւուրս պահոց Վարդաւառի տօնին», այսինքն՝ 1185 թ. հուլիսի 20-ին (Վարդավառ) նախորդած շաբաթ-

վա մեջ (հուլիսի 14-19):

[391] Ստ. Օրբելյանի ժամանակագրության հրատարակության մեջ նույն հատվածը հետեւյալ տեսքն ունի. «...առին զԱստեղունից բերդն, որ այժմ կոչի Կաճկաւնից բերդ եւ զՀանդերձաբերդն» (Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 20): Բերդի մասին Ղ. Ինճիճյանը գրում է. «Ասղնաբերդը... Մուշէն ժամ մը հեռու» (Ղ. Ինճիճեան, Նոր Հայաստան, Վենետիկ, 1806, էջ 188): Սա այլ աղբյուրներում «Աստղօն», «Աստեղունք» անվանված Աստղաբերդն է (Մ. Յովհաննէսեան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 183-185): Ըստ Հովհան Մամիկոնյանի՝ Գրիգոր Լուսավորիչը Սյունյաց իշխանի հինգ հազար զինվորներին մկրտել է այս բերդի մոտ: (Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Երեւան, 1980, էջ 46): Հայտնի են Կարճկանի լեռնաշղթան, Կարճկանի գետը, Կարճկանի դաշտը (Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երեւան, 1991, էջ 50): Վերը բերված հատվածը կարելի է նաեւ հասկանալ այնպես, որ «Հանդերձաբերդը» Աստղաբերդ-Կարճկոնից բերդի երրորդ անունն էր:

[392] Համապատասխանում է 1185 թ. սեպտեմբերի 14-ին:

[393] Կարինի ամիրն այդ ժամանակ Նասիր ադ-դին Մուհամմադն էր, որի քույրը Սուքման Բ Շահ Արմենի կինն էր (Ա. Խաչատրյան, Կարնո Սալդուխյանների ժամանակագրությունը եւ տոհմաբանությունը ըստ արաբական վիմագիր աղբյուրների, «Արեւելյան աղբյուրագիտություն» ժողովածու 1, Երեւան, 1988, էջ 124):

[394] Կարինի ամիրն Ուխտիքը (Օլթին) գրավել է «ի նոյն ամի թշուառութեան», այսինքն՝ 1185 թ., «յաւուրս տօնի Սուրբ Աստուածնին»՝ օգոստոսի 17-ին: Հայտնի է, որ Ուխտիքը պատկանել է Կեչրորի Ղարաչա ամիրին, որին ինչ-որ պատճառով սպանել է նրա գերական՝ Շահ Արմենը 1182 թ. (Վարդան Արեւելցի, էջ 135): Դրանից հետո Ուխտիքը Շահ Արմենը հավանաբար հանձնել է նույն Ղարաչայի տնից որեւէ մեկին:

[395] Շահ Արմենի զորապետ ու նրա հաջորդ Բեկթամուրը (Մ8481) «բէկ Թամուրն» (Ե 3397), «Բեկդամուրն») փորձում է Ուխտիքը վերադարձնել նախկին տիրոջը: Նա արշավում է Կարին, բայց արդյունքի չհասնելով «յօր տաւնի Խաչ Գիւտին»՝ հոկտեմբերի 26-ին, այրում է քաղաքի մի մասը եւ ավարի առնում շրջակա գավառները, մասնավորապես նաեւ Կարինի եւ Ուխտիքի միջեւ գտնվող Բասենը:

[396] «Յաւուրս պահոց առաջաւորին», այսինքն՝ 1186 թ. հունվարի 19-23-ն ընկած ժամանակամիջոցում, Ուխտիքի բնակիչները ապստամբություն են բարձրացնում նախկին տիրոջը վերականգնելու պահանջով, սակայն Կարինի ամիրն, այդ մասին շուտ իմանալով, հարձակվում եւ գրավում է քաղաքն ու բերդը, բնակիչներին գերության մատնում: Ուխտիքի քաղաքացիների ապստամբության մասին տեղեկությունը պահպանվել է միայն այս աղբյուրում:

[397] Երկու ձեռագիր (Մ3072, Մ1869) տեղեկությունը դնում են Հայոց ՈԼԲ (1183) թվականի ներքո եւ գյուղի անունը նշում Սարթխան՝ «Շահի Արմէնն մեռաւ ի Սարթխան գեաւղն»:

[398] Երուսաղեմի թագավոր Բալդուին Դ (1174-1185):

[399] Համառոտված է Հեթում Կոռիկոսցու «Պատմութիւն խրոնիկոնին» գործից, ուր նշված է. «ՌԵՁԶ (1186) Մեռաւ թագաւորն Երուսաղէմի Պաղտին Փոքրն եւ եկաց ի թագաւորութիւնն Ը (8)-երորդ մայր նորա, Սպիլ թագուհին եւ իր հայրգիրն Կի տը Լըզինայն» (Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 59):

[400] Լեւոնի իշխանության սկիզբը՝ ՈԼԵ (1186) թվականին է նշված նաեւ Հեթում Կոռիկոսցու ժամանակագրության մեջ (Կ. Մաթեւոսյան, Հեթում պատմիչ Կոռիկոսցին..., էջ 48):

[401] Գրիչը հավանաբար չի հասկացել, որ անձնանվան հետ գործ ունի, ուստի գրել է «զկին թագաւորին», մինչդեռ խոսքը Երուսաղեմի Կի, այսինքն՝ Գի դը Լուսինյան թագավորի մասին է, եւ նախնական բնագրում պետք է եղած լինի «զԿի թագաւորն»:

[402] Բրինձ – պրինց (այս տիտղոսով էին կոչվում Անտիոքի իշխանները):

[403] Այս մասին հաղորդում են մի քանի պատմիչ, հնագույնը Վարդան Արեւելցին է, որից էլ բառացիորեն քաղված է հատվածը: Բայց եթե Արեւելցու մոտ թարգմանության ժամանակը հստակ չի նշված, ապա Առաքել Դավրիժեցու մոտ 1187 թվականն է, որն առկա է նաեւ ներկա հավելման մեջ (մանրամասները տե՛ս Հ. Մարգարյանի մեկնաբանութան մեջ՝ Մխիթար Անեցի, էջ 7-9):

[404] Տեղեկությունը Ե3701 ձեռագրում ՈԼԷ (1188) թվականի դիմաց է:

[405] Քաղված է Հեթում Կոռիկոսցու «Պատմութիւն Խրոնիկոնին» գործից (Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 60): Հեռին Հռոմեական սրբազան կայսրության կայսր Հենրի Զ-ն (1191-1197) է:

[406] Ռոստոմի եւ նրա արշավանքի մասին հանգամանորեն տե՛ս Վ. Տեր-Ղեւոնդյան, Կիլիկյան Հայաստանը եւ Մերձավոր Արեւելքի երկրները 1145-1226 թվականներին, Երեւան, 1994, էջ 94-97:

[407] Վ1253 ձեռագրի այս տեղեկությունը Հայոց ՈԾԲ (1203) թվականի դիմաց է, բայց քանի որ վերաբերում է նույն դեպքին, դնում ենք այստեղ:

[408] Տե՛ս 1151 թ. Հեթում Կոռիկոսցու տեղեկությունն ու ծանոթագրությունը:

[409] Հայոց կաթողիկոս Գրիգոր Ե Քարավեժը (1193-1194) «Տղա» մականունով է կոչվել երիտասարդ տարիքում աթոռակալելու պատճառով:

[410] Ստեփանոս Օրբելյանը պատմում է Գրիգոր Դ Տղային հաջորդած կաթողիկոսների մասին, նախ նշելով Գրիգոր Ե Քարավեժին (որին հին հեղինակներից ոմանց պես Տղա մականունն է տալիս՝ երիտասարդությունը նկատի ունենալով), ներկայացնում նրա ողբերգական մահը: Ապա՝ Օրբելյանը նշում է Գրիգոր Զ Ապիրատին եւ հայտնում մի տեղեկություն, որ հայ պատմիչներից ոչ մեկը չունի եւ միայն Միքայել Ասորի պատրիարքի ժամանակագրության մեջ է արձանագրված: Ներսես Շնորհալու մահից հետո նրա մոտ գտնվող Գրիգոր Ապիրատը ստանձնել է կաթողիկոսական պարտականությունները,

որը շատ կարճ է տեւել, քանի որ աթոռը նախանշված հավակնորդ է ունեցել հանձինս Գրիգոր Տղայի («վայելչագեղն Գրիգորիս»), որն էլ իր քրոջ ամուսին՝ Կիլիկիո Մլեհ իշխանի աջակցությամբ շուտով գրավել է այն՝ Գրիգոր Ապիրատին տալով Լամբրոնի եւ Տարսոնի եպիսկոպոսությունը: Վերջինս կաթողիկոս է դարձել Գրիգոր Տղայից եւ Գրիգոր Քարավեժից հետո: (Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորւոց պատրիարքի, էջ 472-473):

[411] «Այցելու»՝ օգտագործված է «եպիսկոպոս» իմաստով: Ստեփանոս Օրբելյանին այդպես է կոչում նաեւ Գլաձորի համալսարանի ուսուցչապետ Եսայի Նչեցին նրա պատվերով գրած երկի նախաբանում. «Տէր Ստեփաննոս՝ այցելու եւ վերադիտող գերահռչակ եւ առաքելական աթոռոյ Տանդ Սիւնեաց…» (Մ1276, 3ա):

[412] Այստեղ եւ Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրության մեջ (հաջորդ թվականի ներքո) հիշվող էդիլը Սալահեդդինի եղբայր ալ-Մալիք ալ-Ադիլն է (ծնվ. 1143, մահ՝ 1218, տե՛ս նաեւ հաջորդ ծանոթագրությունը):

[413] Սալահեդդինը (Սալահ ալ-Դին) մահացել է 1193 թ., որին մի քանի տարվա գահակալական կռիվներից հետո հաջորդել է եղբայրը՝ Ադիլը (տե՛ս նախոր ծանոթագրությունը), որը որպես սուլթան իշխել է 1196-1218 թթ.: Այս հավելումից ավելի ուշ ֆրանսերենից թարգմանված «Պատմութիւն խրոնիկոնին» գործում նշվում է. «ՌՃՂԶ (1196) Մեռաւ Սալահատինն եւ իր աղբայրն Սէֆտինն հայրենէթփեց զաղբրորդիքն եւ ինք տիրեաց Մսրա եւ Դմշխա» (Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 60):

[414] Հատվածի սկզբի («...Սարգսի՝ Զաքարէի, Իւանէի») անհարթության մասին հանգամանորեն ծանոթագրել է Վ. Հակոբյանը (Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 51, ծան. 8):

[415] Ճաֆ (Յաֆֆա)՝ ծովափնյա քաղաք Պաղեստինում:

[416] «Թագաւոր»՝ համառոտագրված «թգր» բառից հետո Մ1486-ի գրիչն ավելացրել է համառոտագրված (պատվագրված) հետեւյալ բառերը. «եւ թագել եղեւ առաքել թգրն» (163բ), որը Ա. Տեր-Միքելյանը վերծանել է՝ «եւ թագաւորեալ եղեւ առաքեալ թագաւորն» (Անեցի, 1893, էջ 144, ծան. 6): Բայց այդպես ստացվում է իմաստազուրկ նախադասություն: Կարծում ենք՝ նախորդող տեքստը նկատի ունենալով՝ պետք է վերծանել՝ «…առաքելով նմա թագ երկուց կայսերացն՝ Յունաց եւ Ֆռանգաց, որով օծեալ եղեւ ի կաթուղիկոսէն Հայոց տէր Գրիգորէ՝ թագաւոր, եւ թագադրեալ եղեւ առաքեալ թագերովն»:

[417] Պաղրաս-Բաղրաս անառիկ բերդ, որը երկար ժամանակ վիճելի տիրույթ էր հայերի եւ տաճարական ասպետների միջեւ, քանի որ վերահսկում էր Կիլիկիայից Սիրիա տանող ճանապարհը (տե՛ս Վ. Տեր-Ղեւոնդյան, Կիլիկյան Հայաստանը..., էջ 104):

[418] Տարբեր աղբյուրներում Ռուբեն Ա-ի (Ռուբինյանների) ծագումն ավելի հաճախ կապվել է Բագրատունիների եւ Արծրունիների տոհմի, անգամ Հայկազունների հետ (Է. Բաղդասարյան, Կիլիկիայում Ռուբինյան հարստության

հիմնադիր Ռուբեն Ա իշխանը եւ իր գործը, «Էջմիածին», 2006, Զ, էջ 87): Ուշագրավ է, որ այստեղ կոչվում են Արշակունի:

[419] Հայոց կաթողիկոս Գրիգոր Զ Ապիրատ (1194-1203):

[420] Պատմագրության մեջ բավական ժամանակ Անիի Զաքարյաններին անցնելու թվական է համարվել 1199-ը, սակայն վերջին շրջանում ի հայտ են եկել 1198-ը նշող մի քանի աղբյուրներ, որոնց գումարվում է նաեւ ներկա հավելումը: Այս խնդրի մասին տե՛ս Կ. Մաթեւոսյան, Անիում Զաքարյանների հաստատման ժամանակն ըստ նորահայտ հիշատակարանի, «Պատմա-բանասիրական հանդես», 1997, N 1, էջ 280-283: Ա. Շահնազարյան, Զաքարյանների ազատամարտերի առաջին փուլը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 6, Երեւան, 2005, էջ 140-142:

[421] Հայոց ՈԾ (1201) թվականի դիմաց Ստ. Օրբելյանը (կամ նրա գործն ընդօրինակողը) տեղեկությունը կրկնել է՝ «Զաքարէ էառ զԱնի»:

[422] Պէմունտ՝ Անտիոքի պրինց (իշխան) Բոհեմունդ Գ Կակազ (1163-1201):

[423] Ռումի սուլթան Ռուքն ադ-Դին Սուլեյման Բ-ի (1196-1204) պարտության թվականը Ստեփանոս Օրբելյանը ճիշտ է նշում, ի տարբերություն վրաց աղբյուրների (1205-1206 թթ.), (Մանր ժամանակագրություններ, հ, 1, էջ 52):

[424] Խոսքը Զեբե Նոյին եւ Սուբեդեյ բահատուր մոնղոլ զորավարների ներխուժման մասին է, որը տեղի է ունեցել 1220 թ. (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1976, հ. 3, էջ 600-601):

[425] Կոստանդնուպոլսի առաջին լատին կայսր Բալդուին Ա (1204-1206):

[426] Այսինքն՝ Ֆլանդրիայի կոմսը եւ Վենետիկի դուքսը:

[427] Հմմտ. Հեթում Կոռիկոսցու ժամանակագրությունը եւ Հեթում Նղիրցու ժամանակագրությունը (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 539): Այս հավելումը Մ1898 ձեռագրի տեքստի առաջին խմբագրողի երկրորդ միջամտությունն է:

[428] Հայոց կաթողիկոս Հովհաննես Զ Սսեցի (1203-1207, 1211-1221) եւ կաթողիկոս Դավիթ Արքակաղնեցի (1207-1211): Այս դեպքերի մանրամասները տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 1833-1836:

[429] Հեթում Կոռիկոսցու «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԴ (1204) թագաւորն Կիպրոսի Հէմրի յղրկեց զիր ղալէքն ի Կիպռաւսա եւ ի Սեիլէն՝ յԵգիպտոս, որ աւերեցին զՖաւճն եւ բերին մեծ շահ» (Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 61): Հէմրին Կիպրոսի թագավոր Ամորի Ա-ն է (1194-1205):

[430] Կարսի գրավման 1206 թվականը հաստատում են նաեւ այլ աղբյուրներ (Վարդան Արեւելցի, Իբն ալ Ասիր): Ե3701 ձեռագիրը սխալմամբ դնում է 1214-ի ներքո՝ «ԶԿարս էառ Զաքարէ ի Տաճկաց»:

[431] Թամար թագուհու մահվան ստույգ թվականը հայտնի չէ: Օրբելյանից բացի 1207 թվականը նշում են նաեւ այլ աղբյուրներ (տե՛ս Մժ, հ, 1, էջ 53): Մ1484, Մ1589, Վ288, Տ93 ձեռագրերում նշվում է 1205-ը՝ «Թուին ՈԾԴ (1205)

մեռաւ Թամարն եւ Լաշն նստաւ»: Կան նաեւ 1209-ը վկայող տվյալներ, թեեւ գրականության մեջ առավել տարածված է 1213 թվականը:

[432] Քաղված է Հեթում Կոռիկոսցու ժամանակագրություններից (Կ. Մաթեւոսյան, Հեթում պատմիչ Կոռիկոսցին…, էջ 49, 64): Լեւոնի ձերբակալած անձանց հիշատակում է Սմբատ Սպարապետը նրա թագադրության հանդեսի մասնակիցների թվում (Սմբատ Սպարապետ, էջ 201):

[433] Աւդուն -- Գերմանական կայսր Օտոն Դ (1198-1218):

[434] (Մ2965) ձեռագիրը Իվանեի գերությունը նշում է 1210 թ. ներքո՝ «զԻւանէ աթապէկն կալան ի Խլաթ»: Իվանեի գերության մասին հայկական աղբյուրներին (նաեւ՝ Կիրակոս Գանձակեցի եւ Վարդան Արեւելցի) լրացնում է Աբուլ-Ֆիդան՝ գրելով. «Նրանց (Վրաց) թագավոր Իվանեն, գինուց տաքացած, անմտաբար քսան ձիավորով պարիսպների տակ զբոսնելու ժամանակ, մահմեդականները դուրս եկան, ձիուց վայր գլորեցին եւ ձերբակալեցին: Նա ազատություն ձեռք բերեց, խոստանալով վերադարձնել բազմաթիվ ամրոցներ եւ 5 000 մահմեդական գերի, վճարել 10 000 ոսկեդրամ, զինադադար կնքել 20 տարով եւ իր Թամթա դստերը կնության տալ Ավադին» («Հանդէս ամսօրեայ», 1896, էջ 262):

[435] Այլ ձեռագրերում դեպքը նշվում է 1215-ին՝ «Հայերն ի Մանազկերտոյ ելան» (Ե3701), կամ 1213-ին, բայց կարծում ենք, որ Օրբելյանի մոտ եղած թվականը (1209) ավելի մոտ է իրականությանը եւ այդ գաղթը Զաքարյանների՝ Խլաթի մոտ ձախողվելու բացասական հետեւանքներից մեկն էր:

[436] Զաքարե ամիրսպասալարը մահացել է 1212 թ, թաղվել՝ Սանահինում: Այս հատվածում հակիրճ նշված են նաեւ տեղեկություններ դրան նախորդած եկեղեցական ժողովների մասին, որոնք տեղի են ունեցել 1206 և 1207 թթ. (Լոռե, Անի): Հետաքրքիր է, որ այստեղ որպես ժողովի վայր նշվում է Մխիթար Գոշի վանքը՝ Նոր Գետիկը (Գոշավանք): Ժողովականներից Կեչառիսի վանահայր Գրիգոր Մանոնիկը, որ մասնակցել էր առաջին ժողովին, Անիի 1207 թ. ժողովի ժամանակ արդեն մահացել էր (տե՛ս Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 73-74, 327):

[437] Այս վկայությունը հետաքրքիր է նրանով, որ ցույց է տալիս հավելման կատարման թվականը: Լեւոնն իշխան է եղել 1187-1198 թթ. (11 տարի) եւ թագավոր՝ 1198-1219 թթ. (21 տարի), լրացում կատարողը, 25 տարի նշելով, հավանորեն նկատի է ունեցել նրա իշխանությունը՝ սկզբից հաշված: Ըստ այդմ՝ նա ապրել է 1187-ից 25 տարի անց՝ 1212 թվականին եւ հենց այդ ժամանակ (իր համար՝ «այժմ») Սամվել Անեցու ժամանակագրության իր ունեցած օրինակում կատարել վերոնշյալ հավելումը:

[438] Գերմանական կայսր Ֆրիդրիխ Բ (1212-1250):

[439] Կիլիկիո Լեւոն Ա թագավորն Անտիոքի պրինց է դարձրել իր եղբոր թոռ Ռուբենին (1216 թ.): Կիլիկիո թագավորների տոհմածառը տե՛ս **Բ Ladde Mrt afiad, L 'A ra dai e dv L evadt, Tom e II, d. 45 -47.**

[440] Մ3072 ձեռագիրն այս տեղեկությունը դնում է ՈԿԳ (1214) թ. ներքո:

[441] Երանը Իրանն է:

[442] Սիր Ադանի (Ատան) մասին Կիրակոս Գանձակեցին նույնպես գրում է, որ «էր Հոռոմ դաւանութեամբ» (Կիրակոս Գանձակեցի, էջ 187): Հայագիտության մեջ, դեռ Ղ. Ալիշանից սկսած, ընդունված է նրան հունադավան հայ կոչել (Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 314): Այս տեսակետից շատ հետաքրքրական են վերջերս հրապարակված 1221 թ. մի չափածո հիշատակարանի տեղեկությունները: Այստեղ ասվում է, որ Լեւոն թագավորն արու զավակ չունենալով, իր յոթնամյա դստերը խնամակալ է նշանակում քաղկեդոնական հայ Ատոմին՝ նրան նաեւ պայլի պաշտոնը տալով. «Եւ զի չէր նորա որդի / Որ լինէր ժառանգ այսմ աշխարհի, / Ապա աղջիկ մի իւր ցանկալի, / Տղա գոլով եւթն ամի, / Զոր եդ ժառանգ այսմ աթոռի, / Եւ էր իշխան մի իւր սիրելի, / Որո անուն Ատոմ իւր ճանաչի, / Ազգաւ էր Հայկազնի, / Բայց հաւատովն Յոյն՝ ընդ ժողովոյն Քաղկեդոնի, / Զնա եդ իւր պայլի, / Եւ տեսուչ տղայի, որ ասացի... / Զպայլն զայն սրով խոխոխեցին / Այլասեռ ազգն Հաշիշի»: Տե՛ս **A ma Sirianad, Da Drazark a Kpma: mna pag ina di storia ciliciana ne l corlofpne del manos critto Arch. Cap. S. Pietro B 77, in** "Bnagirk' yišatakac". **Dall'Italia e dal l'Armenia. Studi in onore di Gabriella Uluhogian, a cura di V. Calzolari, A. Sirinian, B.L. Zekiyan, Bologna 2004, p. 74**:

[443] Սիր Ատանի մասին այլ աղբյուրներում միայն նշվում է, որ հաշիշյանների (իսմայիլականների) ձեռքով է սպանվել, մինչդեռ վերոնշյալ տեղեկությունը բացահայտում է պատվիրատուներին (տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 243-244):

[444] «Կոյր բրինձը» Անտիոքի պրինց Բոհեմունդ Դ Միակնանին է (հայկական աղբյուրներում՝ Պեմունդ), որ գահակալել է 1201-1216, 1219-1233 թթ.:

[445] Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրության մեջ նախ նշվում է Հովհաննես կաթողիկոսի մահը՝ «Ի ՈԿԸ (1219) թւին վճարեցաւ Յոհաննէս կաթողիկոս», այնուհետեւ աթոռի պարապ մնալու մասին սույն վկայությունն է, որից հետո՝ ՈՀԱ (1222) թվականին նշվում է Կոստանդին Բարձրբերդցու գահակալությունը:

[446] Տե՛ս Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրության 1203 թ. տեղեկությունը եւ համապատասխան ծանոթագրությունը:

[447] Կիլիկիո Հայոց թագավոր Փիլիպոս (Ֆիլիպ) (1222-1225), որդին էր Անտիոք-Տրիպոլիի կոմս Բոհեմունդ Դ Միակնանու:

[448] Մ. Օրմանյանը Կոստանդին Բարձրբերդցու հոր մասին գրում է. «հայրն ալ սոսկական անձ մը եղած էր Վահրամ անունով» (Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ, էջ 1872): Ստեփանոս Օրբելյանի վկայությունից երեւում է, որ Վահրամը Թափիչ մականունն է ունեցել (որպես հավատի անաղարտության պահպանման նշանակ), ինչը նաեւ զուգահեռվում է 1248 թ. մի հիշատակարանի տեղեկության հետ, որտեղ Կոստանդինը համարվում է «որդի առն արդարոյ խաղաղականի Վահրամ կոչեցելոյ»: Կաթողիկոսի մոր անունը

Շուշիկ էր (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթեւոսյան, Երեւան, 1984, էջ 244, 302):

[449] Վրաց թագավոր Գեորգի Լաշա (1213-1222) եւ թագուհի՝ Ռուսուդան (1222-1245):

[450] Վանական վարդապետը (1181-1251) Մխիթար Գոշի (մահ. 1213 թ.) աշակերտն էր:

[451] Գառնիի ճակատամարտի մասին ճիշտ թվագրմամբ այս տեղեկությունը ժամանակագրության 1893 թ. հրատարակության մեջ ՈՀԵ (1226) թվականի դիմաց է եւ տեղանվան սխալով՝ «… ի Կարնի» (Անեցի, 1893, էջ 149):

[452] Այս տեղեկությամբ հավանորեն ակնարկվում է այն մասին, որ Վրաց թագուհի Ռուսուդանն այդ ժամանակ ամուսնացած չէր:

[453] Հեթում Կոռիկոսցին իր ժամանակագրության մեջ 1227 թ. ներքո գրում է. «Քուրետինն տիրեաց Դամասկոսի»: (Կ. Մաթեւոսյան, Հեթում պատմիչ Կոռիկոսցին…, էջ 51):

[454] Հայոց թագավոր Հեթում Ա (1226-1269):

[455] Անունը հավանաբար համառոտագրությամբ է եղել, եւ գրիչն այն սխալմամբ կարդացել է Աննա, մինչդեռ պետք է լինի Անանիա, որն այս շրջանում գործած հակաթոռ կաթողիկոս էր (տե՛ս հաջորդ ծանոթագրությունները):

[456] Սկզբնապես հավանորեն եղել է «Հոռոմ», քանի որ խոսքը Ռումի (Իտոնիայի) սուլթանության մասին է: Ինչպես Կիրակոս Գանձակեցին է գրում՝ «Անանիա չոգաւ առ սուլտանն, զոր Հոռոմոց կոչեն եւ ետ նմա կաշառս եւ նստաւ կաթողիկոս ի Սեւաստ...» (Կիրակոս Գանձակեցի, էջ 148, 149):

[457] Այս ամբողջ հատվածի համար Վ. Հակոբյանը հետեւյալ ծանոթագրությունն է կատարել. «Այս ավանդությունն ըստ երեւույթին տարածված չի եղել, որը հայտնի չի Չամչյանին եւ Օրմանյանին (Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 57): Իրականում այստեղ արտահայտված է Ռումի (Իկոնիայի) սելջուկյան սուլթանի կամքով 1201-ին Կեսարիայում, ապա Սեբաստիայում հաստատված հակաթոռ կաթողիկոս Անանիայի (Անանէ) մահվան դրվագը, որը համընկել է Կոստանդին Բարձրբերդցու աթոռակալության սկզբին: Այդ հակաթոռ կաթողիկոսության ստեղծմամբ Ռումի սուլթանության տարածքի հայերը եկեղեցավարչական առումով կտրվում էին Հռոմկլայի աթոռից: Անանիայի մասին թեեւ բազմաթիվ տեղեկություններ կան, բայց նրա գործունեության պատկերը նախորդ ուսումնասիրություններում թերի է, քանի որ հին հեղինակներին հիմնականում ծանոթ է եղել Կիրակոս Գանձակեցու տեղեկությունը եւ տապանագրի սխալ թվագրությամբ արձանագրությունը, մինչդեռ շատ կարեւոր հանգամանքներ են պարզում հայերեն ձեռագրերի հիշատակարանները (տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 12, 35, 75, 139, Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, էջ 153, Գ. Սրուանձտեան, Թորոս աղբար, Կ. Պոլիս, 1879, էջ 179, **H. Berbarian, Le patriarcat arménien du sultanat de Rum, l'église catholique Arménie,** "Revue des études Arméniennes", T. 3, p. **243-243).**

[458] Գերմանական կայսր Ֆրիդրիխ Բ-ի եւ Եգիպտոսի սուլթան ալ-Մալիք ալ-Քամիլի (1218-1238) միջեւ 1229 թ. փետրվարի 18-ին կնքված 10-ամյա խաղաղության պայմանագրի մասին է, ըստ որի՝ քրիստոնյաներին անցան Երուսաղեմի, Նազարեթի, Տորոնի եւ Լիդդայի շրջանները: Վերջինիս անունը այստեղ եւ Հեթում Կոռիկոսցու ժամանակագրության մեջ «Լիոն» է, մինչդեռ «Պատմութիւն խրոնիկոնին» գործում ավելի ճիշտ է՝ «Լիտ» (Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 65): Այս հատվածում նշված ճօֆը, այլուր՝ ճաֆ, Յաֆֆան է:

[459] Հ. Մարգարյանը գտնում է, որ Յասսի Չիման տեղանունն աղավաղվել ու դարձել է «Սուչման ամիրայ» (Հ. Մարգարյան, Ջալալ Ադ-Դինի Հայաստան եւ Վրաստան կատարած արշավանքների պատմության շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, 1981, թիվ 4, էջ 134): Տե՛ս նաեւ աստ՝ Ե3701 ձեռագրի 1235 թ. տեղեկությունը:

[460] «փրէրքն Դամփլուն» փրեր/ֆրեր՝ ֆրանս.՝ եղբայր, Դամփլուն՝ Տամպլիեր (Templiers), Տաճարականների հոգեւոր-ասպետական միաբանություն:

[461] Տեղեկությունը գերմանական կայսր Ֆրիդրիխ Բ-ի արշավանքի եւ խաչակիրների ներքին հակասությունների մասին է:

[462] Հ. Մարգարյանը պարզել է, որ այստեղ սխալագրություն կա, պետք է լինի՝ «...էառ զՈւռհայ, զԽառ, զՍեւերակսն» (Հ. Մարգարյան, Ջալալ Ադ-Դինի..., էջ 137), հմմտ. աստ՝ 1243 թվականի ներքո եղած տեղեկությունը:

[463] «Թաթարն էառ զԱնի եւ զամենայն տիեզերս»: 1236 թվականի դիմաց նշված այս տեղեկությունը նույնությամբ հանդիպում է նաեւ այլ տեղերում, որոնցից հնագույնը հավանաբար 13-րդ դարի կեսերին Հոհան Շիրակացու հավելումն է Արիստակես Լաստիվերցու Պատմության մեջ (Արիստակես Լաստիվերցի, էջ 136, Կ. Մաթեւոսյան, Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերը..., էջ 180, 184):

[464] Դարպսակը Կիլիկիայի հարավ-արեւելյան սահմանային բերդ է, որտեղ հաստատվել էին Տաճարական ասպետները (Դամբլցիք):

[465] Լանկուպարտքն՝ Լանգոբարդներ անունով (նույնանուն գերմանական ցեղը նկատի ունենալով) հեղինակը կոչում է գերմանական կայսեր ուղարկած զորքերը:

[466] Հավանաբար նախօրինակում եղել է «Թաթարն»:

[467] Նավարայի թագավորի եւ այլ քրիստոնյա առաջնորդների զորքերը 1239 թ. նոյեմբերին պարտվել են Գազայի (Ղազե/Խազե) մոտ:

[468] Բաբա Իսհակն է (Baba Ishak), որը գլխավորել է Ռումի սելջուկյան սուլթանության արեւելյան շրջաններում 1239-1241 թթ. ծավալված կրոնական, սոցիալական հուժկու շարժումը: 1249 թ. երկու վկայություններում նրա անունը հիշվում է «Պապայ» ձեւով:

[469] Բնագրում՝ «սնովլա», որը կարծում ենք գրչական սխալ է:

[470] Ստեփանոս Օրբելյանը նկատի ունի այն, որ մոնղոլական արշավանքին մասնակցող հայ իշխանները, Կարինի գրավումից հետո այնտեղից զգալի

թվով ձեռագրեր փրկելով, բերեցին Սյունիք եւ Արցախ (տե՛ս Ա. Մաթեւոսյան, Թարգմանչաց Ավետարանը, «Էջմիածին», 1992, Թ-Ժ-ԺԱ, էջ 102-114):

[471] Ժամանակին այս հատվածը մենք հրատարակել ենք «Կլիմցիք արմտերն գողցան զՊռականա ի Թուրքէն» բառանշատմամբ (Կ. Մաթեւոսյան, Հեթում պատմիչ Կոռիկոսցին..., էջ 91), սակայն ավելի հավանական է թվում «Կլիմցի քարմտերն...» տարբերակը (առաջարկությունը Սամվել Գրիգորյանի): Այդ դեպքում խոսքը կարող է վերաբերել քարմուտ կոչվող մարդկանց: Հեթում Կոռիկոսցու ժամանակագրության մեջ 1245 թ. դիմաց նշված է. «Թագաւորն Հայոց Հեթում էառ զՊռականա ի Հաւռմաց սուլտանէն քարմտիւք...» (նույն տեղում, էջ 51): Իսկ Հեթում Նղիրցու ժամանակագրությունը, որը սկզբնամասում գրեթե բառացիորեն քաղված է Հեթում Կոռիկոսցու գործից, հիշյալ հատվածում ավելի պարզորոշ նշում է. «...Հեթում էառ զՊռականա ի Հուռոմաց սուլտանէն քարմուտ արամբք» (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 540): Այստեղից կարելի է եզրակացնել, որ Պռականա բերդի գրավումը կատարվել է քարագնաց (լեռնագնաց) մարտիկների՝ քարմուտ/քարամուտ արանց հանդուգն ներխուժման շնորհիվ: Հայկազյան բառարանը նշում է՝ «Քարամուտ - որ մտանէ ընդ ծերպս քարանց կամ ի ծակս վիմաց» եւ օրինակ բերում Մխիթար Գոշի առակներից՝ «քարամուտ եմք ի բերդս թշնամեաց» (Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2-րդ, Վենետիկ, 1837, էջ 996): Բայց այս բառի ավելի վաղ հիշատակություն ունի Մատթեոս Ուռհայեցու շարունակող Գրիգոր Երեցը, որը Քեսունի մոտ Պեհեսնի անառիկ բերդի դեմ Թորոս Բ-ի (1145-1168) եղբայր Ստեփանեի արշավանքի առիթով գրում է, որ Թորոսը եղբորը տվել էր նաեւ «արս ոմանս, զոր ինքեանք Քարմուտ ասէին» (Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ, Երուսաղէմ, 1869, էջ 522): Այս հատվածն Ուռհայեցու ժամանակագրության վաղարշապատյան 1893 թ. հրատարակությունից վերահրատարակած Հ. Բարթիկյանը խնդրո առարկա բառը նշում է «Քեարմուտ», եւ այն ծանոթագրում. «Քյարմուտները 9-րդ դարում ծագած Իսմայիլիտների աղանդի երկու թեւերից մեկի կողմնակիցներն էին» (Մատթեոս Ուռհայեցի, էջ 456-457, 514): Մեզ թվում է, որ Թորոս Բ-ի, առավել եւս՝ Հեթում Ա-ի զորքի մեջ, դժվար թե Իսմայիլիտներ լինեին, մանավանդ, մասնակցեին մահմեդականներից բերդեր գրավելուն: Հավանաբար, երկու դեպքում էլ խոսքը բարձունքներ մագլցելու եւ դժվարամուտ ծերպերը սողոսկելու մեջ հմտացած հայ մարտիկների խմբի մասին է՝ «զոր ինքեանք քարմուտ ասէին»: Սակայն հարցի վերջնական պարզաբանմանը թերեւս կարող է նպաստել Սամվել Անեցու ժամանակագրության մեջ Հեթում Կոռիկոսցու կատարած վերը բերած հավելումը, որտեղ նշվում է այս մարդկանց ծագման մասին՝ «Կլիմցի», որի բացատրությունը, ցավոք, առայժմ չունենք:

[472] Պռականան բերդ է Կիլիկիայում, Սելեւկիայի մոտ:

[473] Բնագրում գրչական վրիպմամբ՝ «զՂասարիա»:

[474] Սէիլ (արաբ.՝ ծովափ), Սիրիայի ծովափնյա երկրամասի անվանումը:

[475] Սղարել (ղսարել)՝ պաշարել: Այս դեպքի մասին մանրամասն նշված է Հեթում Կոռիկոսցու եւ Հեթում Նղիրցու ժամանակագրություններում (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 540):

[476] Ընբրուր կամ ըմբրուր՝ աղավաղված «իմպերատոր» բառն է, հանդես է գալիս նաեւ «ումբրուր» ձեւով (1229 թ.):

[477] Կիպրոսի թագավոր Հանրի Ա (1218-1253):

[478] Այս մասին մանրամասնորեն պատմում է Կիրակոս Գանձակեցին, որը ճանաչում էր Թադեի վանքի առաջնորդ Հովսեփ վարդապետին (Կիրակոս Գանձակեցի, էջ 311-312, 328, տե՛ս նաեւ Ա. Հախնազարյան, Արտազի երեք վանքերը, Երեւան, 2012, էջ 42-43):

[479] Եգիպտոսի սուլթան Սալիհ Նաջմ ալ-Դին Այյուբը (1240-1249) 1247-ին գրավել է Տիբերիադա (Տապարի) քաղաքը Գալիլիայում եւ Ասկալոն ամրոցը:

[480] Պետք է լինի Խիաթադին (այդպես է ժամանակագրության 1241 եւ 1243 թթ. տեղեկություններում եւ այլուր), որը Ռումի սելջուկ սուլթան Ղիյաս-ալ-Դին Քեյ-Խոսրով Բ-ն է (1237-1246):

[481] Վրաց թագավոր Դավիթ Զ Նարին (1247-1293):

[482] Տե՛ս 1240 թ. ներքո Ստեփանոս Օրբելյանի հաղորդած տեղեկությունն ու ծանոթագրությունը:

[483] Տամիաթ՝ Դամիետան գտնվում է Եգիպտոսում, Նեղոսի դելտայում:

[484] «Ըռէ տը Ֆրանցն» (roi de France) Ֆրանսիայի թագավորը (գերված ու փրկագնված) Լյուդովիկոս Թ-ն էր (1226-1270): Հմմտ. Հեթում Կոռիկոսցու եւ Հեթում Նղիրցու ժամանակագրությունները (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 540):

[485] «Կայսր եկաց» բառերով սկսվող տողը Մ1898 մատյանի առաջին խմբագրողի հավելումն է: Աղբյուրը՝ «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «...Ալամնաց զգունդը Կիլամ տը Հաւռլանտն, որ թագաւորեալ էր ի վերայ Ալամնաց եւ ունէր ընդ ձեռամբ զիրաւունք ընբրուրութեանն...» (Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 68), վերաբերում է Գիյոմ Հոլանդացուն (**Guillaume de Hollande**), որը չճանաչված թագավոր էր 1247-1254 թթ.՝ Ֆրիդրիխ Բ-ի եւ Կոնրադ Դ-ի ժամանակ:

[486] Մ. Օրմանյանը, այս դեպքը ներկայացնելով, Վարդան Հաղբատեցուն կոչում է Կայէնի Վարդան, իսկ Ղ. Ալիշանը՝ Վարդան Տաշրցի (Մ. Օրմանեան, Ազգապատում հ. Բ, էջ 1917, Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 102, տե՛ս նաեւ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Երեւան, 1962, էջ 86, № 100 եւ 105):

[487] Մ7261 ձեռագրի այս հատվածում ավելացված է՝ «եւ աշակերտ նորա յաւել Յայսմաւուր գիրսն ճառս ՃԺԲ (112)»: Խոսքը Վանական վարդապետի

աշակերտ, Հայսմավուրքը խմբագրող Կիրակոս Արեւելցու մասին է, որը գրում է. «Ես... Կիրակոս վարդապետ ի թուականիս Հայոց ՉԲ (1253) աշխատասիրեալ յաւելի... ճառս համառաւտս ՃԺԲ (112)...» (Մ7433, էջ 428, Ա. Մաթեւոսյան, Ս. Մարաբյան, Գրիգոր Ծերենց Խլաթեցի, Երեւան, 2000, էջ 77):

488 Սիր Հալկամը Սմբատ Սպարապետի հաղորդմամբ «էր Յոյն ազգաւ», որին Հեթում Ա-ն Իսավրիայի եւ Սելեւկիայի շրջանում «կացուցեալ էր անդ կողմնապահս»: Սպանվել է 1263-ին Կարամանների (խարաման)՝ վրանաբնակ քոչվորների հարձակման ժամանակ (Սմբատ Սպարապետ, էջ 238):

489 Հատվածը բացակայում է Հեթում Կոռիկոսցու մյուս գործերում եւ առկա է միայն Սամվել Անեցու Ժամանակագրության՝ նրա լրացրած օրինակում:

490 Անտիոքի պրինց Բոհեմունդ Ձ (1252-1275):

491 Մանգու - մոնղոլական մեծ խան (1251-1260):

492 Ամբողջությամբ կրկնվում է Հեթում Կոռիկոսցու ժամանակագրության մեջ (Կ. Մաթեւոսյան, Հեթում պատմիչ Կոռիկոսցին..., էջ 52):

493 Այս Ավետիսն այլ աղբյուրներում չի հիշատակվում, սակայն հնարավոր է, որ նա նշանավոր մեծահարուստ Սահմադինի նույնանուն հայրն է: Այս ենթադրության օգտին է խոսում Քաջբերունիքի (որն ընդգրկում էր Արճեշը) եպիսկոպոս Աբրահամի 1291 թ. արձանագրությունը, որտեղ նա հողային նվիրատվության համար երախտագիտությամբ հիշատակելով Սահմադինին, շեշտում է նաեւ նրա նախնուն, այսինքն՝ հորը («Աղաչեմ... յիշեսջիք ի Քրիստոս պարոն Սահմադին, նախնի իւր եւ հարազատք...», Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, էջ 268): Սա նշանակում է, որ Սահմադինի տոհմը կապ է ունեցել այս կողմերի հետ:

494 Արղուն-աղա՝ Իրանի մոնղոլ կառավարիչ (1243-1255, մահ.՝ 1275 թ.), որի նախաձեռնած աշխարհագիրը տեղի է ունեցել 1251-1254 թթ.:

495 Դեպքերի մանրամասները տե՛ս Հեթում Կոռիկոսցու «Պատմութիւն խրոնիկոնին» ժամանակագրության մեջ: Այնտեղ եւս կրկնվում է «յայտնեցան Աղաճարիքն եւ Իսլամպակն» (Մժ, հ. 2, էջ 69) նախադասությունը, որը վերաբերում է վրանաբնակ մի թուրքմենական ցեղի ու դրա առաջնորդին եւ որի պարզաբանումը գտնում ենք Սմբատ Սպարապետի մոտ (Սմբատ Սպարապետ, էջ 230):

496 Քուռաթ - Կոնրադ Դ (1228–1254), գերմանական կայսր Ֆրիդրիխ Բ-ի որդին:

497 Մոնղոլական Իրանի իլխան Հուլաղուն (1256-1265) իրանական իսմայիլականների (հաշիշիք) կենտրոն Ալամուտ բերդը գրավել է 1256 թ. դեկտեմբերի 15-ին: Գանձակեցու մոտ՝ «Հուլաւու... գնաց յերկիրն մուլհեդաց, յԱլամութ» (Կիրակոս Գանձակեցի, էջ 376):

498 Աննշան տարբերություններով կրկնված է Հեթում Կոռիկոսցու ժամանակագրության մեջ: Մուռանտինը բերդ է Փոքր Ասիայում, Հերակլինայի մոտ: «Ձիաւորեցոյց»՝ նշանակում է ձիավորի (այժմյան ընկալմամբ՝ ասպետության) կոչում շնորհեց:

499 Արղուն՝ մոնղոլական Իրանի իլխան (1284-1291):

[500] Հաշիշիք (հաշիշյաններ)՝ իսմայիլական ֆանատիկոս աղանդավորներին տրված անվանում (ակնարկվում է նրանց հաշիշ օգտագործելու հանգամանքը):

[501] Հուլաղույի որդի Յաշմուտը Մուֆարդինը գրավել է 1259 թ. (Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 59):

[502] Մունդաս (Մինդոս)՝ Կիլիկիայի սահմանամերձ բերդ, որի համար հայերը պայքարել են Ռումի սուլթանության դեմ (Սմբատ Սպարապետ, էջ 234-235): Այս հատվածը համառոտված է «Պատմութիւն խրոնիկոնին» ժամանակագրությունից, ուստի այն ամբողջովին հասկանալու համար բերենք այդ գործի համապատասխան հատվածը. «ՌՄԾԹ (1259) Թագաւորն Հայոց Հեթում գնաց ի յաւգնութիւն իր փեսային բրընծին ի Տրապաւլիս, զի ունէր շմոր ընդ իւր իշխանքն եւ ընդ ծիաւորքն, զոր յետոյ եղեւ խաղաղութիւն յիրենց մէջն թագաւորին միջնորդութեամբն, եւ թագաւորն դարձաւ յերկիրն իւր: Եւ ծիաւորեցոյց զորդին իւր զԹորոս եւ ձեռնադրեցաւ եպիսկոպոս թագաւոր եղբայրն տէր Յոհաննէս: Եւ գողնալով առին զՄունտաս բերդն յանաւրինաց, զոր եկեալ զաւրքն սուլտանին Հոռոմոց պաշարեաց զՄունտաս եւ նեղէր զնոսա: Եւ թագաւորն Հեթում գնաց անդր Հայոց զաւրաւքն եւ պատերազմեալ խանգրեաց զնոսա եւ կոտորեաց բազումք յանաւրինացն եւ այնպէս վերոյց զՄունտասոյ սղարն» (Մժ, հ. 2, էջ 70):

[503] «Շամպուն»՝ նկատի է առնված Սիրիան:

[504] Եգիպտոսի մամռուք սուլթան Բայբարս ալ-Բունդուկդարի (1260-1277):

[505] Հեթում Կոռիկոսցու հայտնած այս տեղեկությունն այլ աղբյուրներում չի հանդիպում: Ուշն այստեղ կարելի է համարել տեղանուն, բայց հնարավոր է նաեւ, որ այն թուրքերեն իմաստին համապատասխան պարզապես սահմանային շրջան կամ հենակետ է նշանակում: Իսկ Ալիճախը (Ալթունպա Շեմսեդդին Ալիչախ) հայկական աղբյուրներում թերեւս միակ անգամ հիշատակվող սելջուկյան պետության բարձրաստիճան պաշտոնյա՝ աթաբեկ է եղել, որը հայտնի է նաեւ Իկոնիայում հոգեւոր դպրոց (մեդրեսե) հիմնելու փաստով (տե՛ս В. Гордлевский, Государство сельджукидов Малой Азии, М-Л, 1941, с. 76-77, 187): Հնարավոր է, որ Հեթում թագավորն այս գործչի հետ շփում է ունեցել Կիլիկիայի թագավորության եւ Ռումի սուլթանության միջեւ սահմանային հարցերի առնչությամբ: Սույն ծանոթագրությունը կատարել ենք Սամվել Գրիգորյանի օգնությամբ (շնորհակալություն ենք հայտնում):

[506] Մ1484 «Զաքարէն սպանին: Շահինշահն մեռաւ»: Շահնշահ Ա Զաքարյանի որդի Զաքարիայի՝ մոնղոլների ձեռքով կատարված դաժան սպանության մասին է, որի կսկիծից մահացավ հայրը: Մանրամասները պատմում է Կիրակոս Գանձակեցին (Կիրակոս Գանձակեցի, էջ 393):

[507] Քաղված է Հեթում Կոռիկոսցու ժամանակագրությունից (Կ. Մաթեւոսյան, Հեթում պատմիչ Կոռիկոսցին..., էջ 53):

[508] «Ոսպեթլու» (յոսպեթլու)՝ Հոսպիտալիերներ (Ordre des Hospitaliers), Հիվանդանոցային (Հիվանդախնամ կամ Հյուրընկալների) հոգեւոր-ասպետական միաբանություն:

[509] Հուգո դը Լուսինյան (մահ. 1267 թ.):

[510] Բյուզանդական կայսր Միքայել Ը Պալեոլոգոս (1242-1258):

[511] Նույն թվականի այլ տեղեկության մեջ՝ «Պալախէն եւ Ղուլին», Կիրակոս Գանձակեցու մոտ՝ «զՂուլի եւ զԲալախայն», որն էլ պատմում է Դերբենդի ճակատամարտից հետո այս զորավարների փախուստին մասին (Կիրակոս Գանձակեցի, էջ 394-395):

[512] Կարնեցի հայ մեծատուն Ումեկը (նրա տոհմը ծագումով Մանազկերտից էր) Տփղիսում հաստատվել է 1242 թ. Կարինի մոնղոլական գրավումից հետո եւ այստեղ մեծ հեղինակություն վայելել: 1251-ին նա քաղաքում կառուցել է Կաթողիկե Ս. Աստվածածին (հետագայում Մեյդանի Ս. Գեւորգ կոչված) եկեղեցին: Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ Ումեկը՝ 1267-ին, իսկ նրա ավագ որդի Ճարը՝ 1287-ին, մահացել են Տփղիսում (տե՛ս աստ էջ 253, 262, Ումեկի եւ նրա տոհմի մասին, տե՛ս նաեւ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, էջ 202, Պ. Մուրադյան, Հին Թիֆլիսի Հայոց եկեղեցիները, Ս. Էջմիածին, 2009, էջ 35-36, Ս. Ավագյան, Վիմագրական պրպտումներ, Երեւան, 1986, էջ 94-111):

[513] Տփղիսում բնակվող այս հայ մեծահարուստը, որ Վրաց ժամանակագրության մեջ հիշվում է Շադին անունով, բավական մեծ հեղինակություն է ունեցել, քանի որ 1264 թվականին հենց նա է Վարդան Արեւելցուն ուղեկցել Հուլաղու խանի մոտ, իսկ 1283 թվականին մահացել է Տփղիսում, որի մասին հիշատակում է Ստեփանոս Օրբելյանը (տե՛ս աստ էջ 252, 257, նաեւ՝ А. Маргарян, К вопросу о личности и деятельности некоего Шадина, Кавказ и Византия, вып. 3, Ереван, 1982, с. 64-72):

[514] Հովհաննես Գառնեցին մահացել է Հռոմկլայում, բայց մահվան թվականն այլ աղբյուրներից հայտնի չէ: Նրա մասին տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, էջ 582-583, Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության, աշխատասիրությամբ Պ. Խաչատրյանի եւ Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2003, էջ 554:

[515] Ստեփանոս Հուսկանորդի (Տերհուսկանորդի) սրբակյաց վարդապետը, դեռեւս կենդանության ժամանակ սրբի համարում է ունեցել, մահացել է 1251 թ.: Նրա գործունեության մասին տե՛ս Կ. Մաթեւոսյան, Երեք երեւելի վարդապետ, «Գարուն», 1991, էջ 82:

[516] Այս դեպքի մասին Հ. Աճառյանը գրում է, որ Սարգիս արքեպիսկոպոսը «Հուլաղու խանի կողմից դեսպան ուղարկվեց հունաց Միքայել Պալէոլոգ կայսեր մոտ եւ նրա Մարիամ աղջկան հարս բերավ Հուլաղուին: Բայց Հուլաղուն մեռած լինելով՝ որդին՝ Ապաղա խանը, ամուսնացավ նրա հետ: Այս առթիվ Ապաղա խանը քրիստոնյա դարձավ, եւ Սարգիսը մկրտեց ու

պսակեց նրան (1265 թ.)» (Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երեւան, 1948, էջ 425):

[517] Դոկտոր Հ. Մարգարյանը նկատում է, որ այստեղ գործ ունենք ա-տ շփոթի հետ. պետք է լիներ Տաւնղուզ:

[518] Հայկական աղբյուրները շուրջ 20 տարի մոնղոլական իլխանության գլխավոր վեզիր եղած Շամսեդդին Ջուվեյնիին (մահ. 1284), որպես կանոն, պաշտոնի անունով կոչում են Սահիպ Դիվան: Ամուսնացել է Ավագ Զաքարյանի դստեր՝ Խոշաքի հետ (տե՛ս աստ 1269 թ. տեղեկությունը):

[519] Խոսքը Հեթում Բ-ի մասին է, որի հայր Լեւոնն այդ թվականին ամուսնանալով Լամբրոնի իշխանադուստր Կեռանի հետ, դեռ թագավոր չէր: Հեթում Բ-ի ծննդյան նույն թվականն է նշվում Հեթում Կոռիկոսցու ժամանակագրության մեջ (Կ. Մաթեւոսյան, Հեթում պատմիչ Կոռիկոսցին..., էջ 53):

[520] Անթվական տարբերակ՝ (Մ7261) «Կոստանդին կաթողիկոսն եբեր (ջնջված բառ է, դատելով հիմնական տարբերակից, եղել է «ի Ֆրանկաց») զվերջին օծման կարգի օրինակն, զձեթ աւրհնութեան հիվանդաց եւ հրամայեաց կատարել անյապաղ: Զնոյն եւ Յոհաննէս հայրապետն Օձնեցին հրամայեաց յիւր կանոնսն»:

[521] Այս հատվածը Մ1898 ձեռագրի առաջին խմբագրողի չորրորդ եւ վերջին հավելումն է: Այն, թերեւս, սխալ հաշվարկ է ներկայացնում, քանի որ Անտիոքը խաչակիրները գրավել են 1098 թ., եթե դրան ավելացնենք 166 տարի, կստացվի 1264 (մինչդեռ տեղեկությունը 1268 թվականի դիմաց է գրված):

[522] Հայոց կաթողիկոս Հակոբ Ա Կլայեցի (1268-1289):

[523] Վրաց թագավոր Դավիթ Ը Ուլու (1247-1270):

[524] Հայոց թագավոր Լեւոն Բ (1269-1289), գրականության մեջ հաճախ կոչվում է Լեւոն Գ, սակայն ավելի ճիշտ է Կիլիկիո թագավորների թվակարգումը սկսել թագավորության սկզբնավորումից, Լեւոն Բ իշխանին թագ ստանալուց հետո կոչելով Լեւոն Ա թագավոր եւ շարքը եզրափակել վերջին թագավոր Լեւոն Ե-ով, որի Սեն Դենիում գտնվող տապանաքարին հենց այդպես էլ գրված է:

[525] Վրաց թագավոր Դեմետրե Բ Ինքնազոհ (1270-1289):

[526] Երզնկայի Սարգիս արքեպիսկոպոսը (նրա տոհմից էր Հովհաննես Երզնկացի Պլուզ նշանավոր վարդապետը) ժամանակին մեծ հռչակ է ունեցել, իսկ նրա որդին՝ Հովհաննեսը, եղել է աշխարհիկ իշխանավոր: Այդ մասին վկայություն է պահպանվել 1272 թ. Երիզա վանքում գրված հիշատակարանում՝ «Գրեալ եղեւ սա ի գաւառս Երիզա, որ յորջորջի Եկեղեաց գաւառ, ի հայրապետութեան տէր Սարգսի, իշխանակալութեան որդոյ նորա պարոն Յոհանիսի, որ է ի ժամանակս սոցա խաղաղութիւն Քրիստոնէից» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 426): Հատկանշական է, որ Վ1253 ձեռագիրը, որը դատելով հավելումների բնույթից, Երզնկայում է գրվել ու տեղական նորություններով լրացվել, 1275 թվականի դիմաց հայտնում է՝ «Կատարեցաւ Սուրբ Կաթողիկէն յԵզնկայն»: Այսինքն, այդ

ժամանակ քաղաքում եկեղեցի է կառուցվել, որն էլ, հնարավոր է՝ մահմեդականների դժգոհությունն է հարուցել եւ պատճառ դարձել մեկ տարի հետո տեղի ունեցած ողբերգության: Ըստ Է. Բաղդասարյանի՝ 1276-ին Սարգիս եպիսկոպոսը սպանվել է Խարբերդից եկած թուրքերի ձեռքով: Ուշագրավ է, որ Սարգիս արքեպիսկոպոսը սերտ կապեր է ունեցել մոնղոլների հետ, որի վկայությունն է նույն Վ1253 ձեռագրի հայտնած տեղեկությունը 1264 թվականին նրան հանձնարարված խնամախոսության մասին (տե՛ս 1264 թ. ծանոթագրությունը): Պատահական չէ նաեւ, որ մոնղոլները լուծել են Սարգսի սպանության վրեժը (տե՛ս Յովհաննէս Երզնկացի, Մատենագրություն, հ. Ա, ներածականը Է. Բաղդասարյանի, Երեւան, 2013, էջ 20-21, Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, էջ 425, Հ. Մանանդյան, Երկեր, հ. Գ, Երեւան, 1977, էջ 310-311):

[527] Նիկիտա, Նիկտե, Նիկիֆորիոն, Ռակկա՝ քաղաք Վերին Միջագետքում:

[528] Մուինեդդին Փարվանա՝ Ռումի սուլթանության մեծ վեզիր, մոնղոլների դրածո եւ երկրի փաստացի կառավարիչ (1244-1277), որին Աբաղան սպանել է Ալադաղում 1277 թ.:

[529] 1282 թ. մոնղոլների նախաձեռնած եւ հայերին ներգրաված այս անհաջող եգիպտական արշավանքի մասին պատմում է դեպքին ժամանակակից Հեթում Պատմիչ Կոռիկոսցին իր երեք երկերում (տե՛ս Կ. Մաթեւոսյան, Հեթում Պատմիչ Կոռիկոսցին…, էջ 55, 76): Մ1483, Մ1484 ձեռագրերն այս տեղեկությունը սխալմամբ դնում են ՉԻԲ (1273) թվականի ներքո:

[530] Նշանավոր իշխան Սադուն Բ Արծրունին մահացել է 1282 թ., թաղված է Հաղբատում: 1286-ի ներքո Վ288 ձեռագիրը նշում է. «Շարժն երեկ ի Տփխիս եւ Սադօն ի Տաշիր մեռաւ»: Հավանաբար, Տփղիսի երկրաշարժը նույնպես 1282-ին է եղել:

[531] Այս հատվածում «Համիանը» պետք է լինի Համադան, որտեղ, ըստ Ռաշիդ ադ-Դինի, 1282 թ. ապրիլի 1-ին մահացել է Ապաղան: Վ. Հակոբյանը նկատում է, որ այդ ամսաթիվը համընկնում է նույն թվականի հայոց սահմի ամսվա 22-ին (Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 62):

[532] Հնարավոր է, որ այս Սարգսին է պատկանում Նորավանքում պահպանված 1331 թվականի առյուծաքանդակ տապանաքարը. «Այս է տապան պարոն Սարքսի, որ առիւծաբար յաղթէր ի պատերազմունս…» (Ս. Սաղումյան, Նորահայտ վիմագրեր Նորավանքից, «Հուշարձան» տարեգիրք, Բ, Երեւան, 1993, էջ 98-101):

[533] Վ. Հակոբյանը ենթադրում է, որ Այջեն Հուլաղուի ութերորդ որդին է, որն Արղունի ժամանակ ստացավ Վրաստանը (Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 63):

[534] Այս տեղեկությունը ճշգրտում է կաթողիկոս Կոստանդին Բ Կատուկեցու (1286-1289) մականվան հարցը: Նրան տված «Պրունգործ» մականունը բավական մեծ տարածում է գտել, որով հիշվում է բազմիցս (Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 105, 107, հ. 2, էջ 148, 149, 347 եւ այլն):

Մաղաքիա Օրմանյանը փորձել է պարզել մականվան ծագումը («Կոստանդին Կատուկեցի՝ Պրօնագործ (ՍՄԲ. 125) կամ Պրօնգործ (ՍԱՄ. 152) մականունով ալ կը յիշուի, որ կը նշանակէ պրօն կամ այծի բուրդ գործող արհեստաւոր մը, ինչ որ կրնայ՝ կամ Կոստանդինի հօրը արհեստը եղած ըլլալ, կամ թէ նոյնիսկ Կոստանդինի վանական անձնաւորութեան մէջ՝ ձեռագործ զբաղումը ենթադրուիլ»), սակայն հստակ փաստ չունենալով՝ ամփոփել է՝ «Պատմութիւնը մականունին ծագումը չտար» (Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, էջ 1986): Ներկա գրառման հեղինակը, Կոստանդին Կատուկեցուն անվանելով «Պրունգործի որդի», միանշանակ պարզում է կաթողիկոսի մականվան ծագումը:

535 Կոստանդին Բ Կատուկեցու վերաբերյալ Մ1899 ձեռագրում կա ընդարձակ հավելում, ուր նա նույնացվել է Կոստանդին Կեսարացու հետ. «Տէր Կոստանդին Պրօնգործն՝ որ է Կատուկեցի, եւ ասի Կեսարացի, սա եղեւ առաջին աղթարմայ ի Սիս, վասն որոյ յետ Գ (3) ամաց աքսորեալ եղեւ ի Հեթմոյ արքայէ: Եւ նստաւ տէր Ստեփանոս Հռոմայեցին՝ ամս Դ (4): Եւ յետ նորա տէր Գրիգոր Անաւարզեցին՝ ամս ԺԳ (13): Եւ յետ տեառն Գրիգորի, դարձեալ լինի կաթուղիկոս տեր Կոստանդին Կեսարացին, որ է նոյն Պրօնգործն, ամս ԺԶ (16): Եւ հանէ ի գլուխ զաղանդն, եւ լինի միաբան ընդ Ֆռանգաց, օգնականութեամբ նոյն Պարոն Հեթմոյ թագաւորին, որ յառաջն աքսորեաց զնա յաղագս նոյն աղանդոյն աղթարմայութեան՝ եւ յայնմ՝ վայրի հաւանեալ օգնական լինի»: Այս նույնացումը փաստարկված եւ հիմնավորապես հերքել է Մ. Օրմանյանը (Ազգապատում, հ. Բ, էջ 1983-1985):

536 Ճարը Տփղիսում հաստատված հայ մեծատուն Ումեկի ավագ որդին էր, որն անվանակոչվել էր պապի անունով: Գոշավանքի արձանագրության մեջ նա գրում է. «Ես՝ Ճարս, որդի պարոն Ումեկի, թոռն Ճարին, աշխարհաւ Մանածկերտացի...» (Գ. Հովսեփյան, Վախտանգ որդի Ումեկի եւ նորա տոհմը, Նյութեր եւ ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Ա, Երեւան, 1983, էջ 225, տե՛ս նաեւ աստ 1262 թ. տեղեկությունը եւ համապատասխան ծանոթագրությունը):

537 «Թուխլուխ»՝ արքունի դրոշ, պատվանշան ունեցող զինվորական:

538 Այս դեպքերի մասին Ստեփանոս Օրբելյանն ավելի համառոտ գրում է իր պատմության մեջ (Ստեփանոս Օրբէլեան, էջ 430, տե՛ս նաեւ Ն. Թամամյան, Արղուն խանի դեմ կազմակերպված դավադրության եւ դրա գրական արձագանքների մասին, «Պատմաբանասիրական հանդես», 2006, N6, էջ 115-120):

539 Խուբլու Բուղայի (մահապատժի է ենթարկվել 1293-ին) գործունեության մասին հանգամանորեն տե՛ս Հ. Մարգարեան, Մահկանաբերդցիների (Սադունյանների) իշխանական տունը ԺԲ-ԺԴ դարերում, «Հայկազեան հայագիտական հանդէս», 1998, էջ 25-29:

540 Նկատի է առնված Ուրմիա (Կապուտան) լիճը:

[541] Ստեփանոս Օրբելյանը նոր կաթողիկոսի ընտրության կապակցությամբ իր Սիս հրավիրման եւ այն մերժելու մասին գրում է նաեւ իր Պատմության մեջ (Ստեփանոս Օրբէլեան, էջ 440-441):

[542] Սա Ստեփանոս Օրբելյանի՝ շուրջ մեկ հարյուրամյակ ընդգրկող ժամանակագրության վերջին մեծ հատվածն է, որն ավարտվում է նրա հոր՝ Տարսայիճ Օրբելյան իշխանի մահվան մասին տեղեկությամբ: Սյունյաց մետրոպոլիտը, որն այդ ժամանակ դեռ չէր գրել իր կոթողային Սյունյաց պատմությունը, ձեռքին ունենալով Սամվել Անեցու Ժամանակագրության մի օրինակ, որը հասնում էր 1192 թվականին, այն շարունակել եւ հասցրել է մինչեւ 1290 թվականը:

[543] Ծռազատիկը եղել է 1292 թ.: Կիլիկյան արքունիքի պարտադրանքով հայոց վերնախավը Զատիկը նշել է հույների հետ, բայց եղել են նաեւ մեծ թվով ավանդապահներ (Տե՛ս Հեթում Պատմիչ Կոռիկոսցի, էջ 40-41):

[544] Հռոմկլան գրավվել է 1292 թ. հունիսի 28-ին, ստույգ ամսաթիվը հայտնում է Հեթում Կոռիկոսցին 1293 թ. իր ստացած Ավետարանի հիշատակարանում (տե՛ս Ս. Էջմիածին, ձեռ. թիվ 1250, 450բ, Մանր ժամանակագրություններ, հ. Ա, էջ 99, Կ. Մաթեւոսյան, Հեթում պատմիչ Կառիկոսցին..., էջ 99):

[545] Կաթողիկոս Գրիգոր Անավարզեցու (1293-1307) մականունը հայտնի է «Տուրքերիցանց» ձեւով (Անեցի, 1893, էջ 153): Մ. Օրմանյանն այս մականունն անբացատրելի է համարում եւ գրում է, թե Անավարզեցուն «տրուած է Տուրքերիցանց մականունը (ՀԵԹ. 85), որուն ոչ բացատրութիւնը ունինք եւ ոչ մեկնութեամբ կը գտնենք. զի եթէ երիցու տուրք կամ քահանայի որդի իմանանք, անմեկնելի կը մնայ երիցանց յոգնակի կիրառութիւնը» (Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ, էջ 2033): 13-րդ դ. վերջին եւ 14-րդ դ. սկզբին Կիլիկիայում աշխատած Ստեփանոս Գոյներերիցանց նշանավոր գրչի անունը մեկնաբանվում է «Գոյներ երեցի որդի»: Տուրք անձնանունից առաջացած «Տուրքերիցանց» մականունը նույն իմաստն ունի եւ Անավարզեցու՝ Տուրք երեցի որդին լինելն է մատնանշում: Իր լատինասեր ընթացքի համար այս կաթողիկոսին մականվանել են նաեւ «Զրող» (պատարագի խորհրդական բաժակին ջուր խառնել սկսելու համար) եւ «Հոռոմ»: Տեղին է հիշել նաեւ Անավարզեցու՝ Հռոմին կատարած դավանաբանական զիջումների եւ Սյունյաց աթոռից նույնը պահանջող նամակի պատճառով Ստեփանոս Օրբելյանի՝ կաթողիկոսին ուղղված աննախադեպ խիստ տոնով շարադրված թուղթը: Չի բացառվում, որ Սամվել Անեցու ձեռագրում հավելում կատարողը, նկատի ունենալով Անավարզեցու գործունեության այս կողմերը, կաթողիկոսի Տուրքերիցանց մականունը ձեւափոխել է Թուրքերիցանցի:

Կաթողիկոսի գահակալության տարիները նշելով «ամս :ԺԴ: Ե:»՝ գրիչը նկատի ունի 14 տարի, 5 ամիս: Նման մանրամասնությամբ է գրել, քանի որ Անավարզեցին իր ապրած ժամանակի կաթողիկոսն էր:

[546] Մ1898 ձեռագրում ժամանակագրության վերջին նշումն է (1294 թ.): Այստեղ Հռոմի Սելեստինոս Ե պապին հաջորդած Բոնիֆացիոս Ը-ի (1294-1303)

տարիների քանակը չի նշված: Նախադասության վերջին «ամս» բառից հետո գրիչը ոչ միայն թվական չի գրել, այլեւ, ի տարբերություն մյուս բոլոր ժամանակագրական միավորների, վերջակետ չի դրել՝ ակներեւորեն հետագա ընթերցողին թողնելով տարիների քանակը ավելացնելու գործը:

[547] Մ1484-ում՝ ՉԽԴ (1295), «Նաւռօզ»: Թադեի վանքում գրված Մ482 ձեռագրում մի ժամանակագրական թվաշարքում նշվում է. «ԷՃԽԶ (1297) էր աշխարհակալ Ղազանն, եւ եպիսկոպոս Սիւնեաց Ստեփաննոս, Տարսայիճի որդին, եւ եպիսկոպոս Թադէոս առաքելոյն՝ Տիրացու, որ բազում նեղութիւնս կրեաց յանօրինաց, յաւերեալ տանց եւ շինուածոց վանից ի չարագլխէն Նաւրզոյ…» (54ա): Ղազան խանի զորավար, վեզիր Արղունի որդի Նավրուզի՝ հայկական եկեղեցիներ քանդելու եւ հոգեւորականներին հալածելու մասին հանգամանորեն պատմում է Ստեփանոս Օրբելյանը (Ստեփանոս Օրբէլեան, էջ 471-473, Հ. Մանանդյան, Երկեր, հ. Գ, էջ 318):

[548] Եգիպտացի մամլուքների ներխուժումը տեղի է ունեցել 1298 թ.:

[549] Եգիպտոսի մամռուք սուլթան Հուսամ ադ-Դին Լաչին (1296-1299):

[550] Տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց Նորայր եպս. Պողարեան, հ.Դ, Երուսաղէմ, 1969, էջ 76: Նույն տեղեկությունը Ե3701 ձեռագրում 1299 թվականի դիմաց է, Տ93-ում՝ 1301 թ., Մ1484-ում՝ 1303 թ., Մ5619-ում՝ 1305 թ. (այդ ձեռագրի նշված հատվածում եղած մյուս բոլոր տեղեկությունները ժամանակագրական առումով իրենց տեղում չեն): Նախընտրելի ենք համարում 1300 թվականը Երուսաղեմի եւ Սանկտ-Պետերբուրգի ձեռագրերից: Աղանդավորների վերաբերող հիշյալ ուշագրավ տեղեկությունն առաջին անգամ հրատարակել է Լ. Խաչիկյանը (Աշխատություններ, հ. Գ, Երեւան, 2008, էջ 457):

[551] Ե3701 ձեռագրում տեղեկությունը Հայոց ՉԽԲ (1293) թվականի ներքո է:

[552] Խոսքը Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» երկի (1302 թ.) մասին է:

[553] Խանական հրամանով քրիստոնյաների աջ ուսին սեւ լաթ են կարել, ինչպես հաջորդ տեղեկությունների մեջ է նշվում («կարկատան մի սեւ ի վերայ աջոյ ուսոյն կարեսցէն, նախատինք վասն Քրիստոսի»): Այս հատվածում հեղինակն ուզում է ասել, որ վերնազգեստ չունեցող աղքատ քրիստոնյաների մաշկի վրա կարեցին անարգանքի նշանը:

[554] Տարբերակ՝ (Վ288) «ՉԿ (1311) Գնաց Օշին յԱրեւելք եւ վասն ջրի ասաց ժողով լինել, եւ ոչ եկին»:

[555] Ս42 ձեռագիրն այս տեղեկությունը ՉԿԴ (1315) թվականի ներքո է դնում: Մելետնի-Մելիտինե-Մալաթիա քաղաքի (Փոքր Հայք) գրավման մասին է խոսքը, որը հավանորեն տեղի է ունեցել Եգիպտոսի մամլուքների ավարառուական արշավանքի ժամանակ:

[556] Տարբերակներ՝ (Մ1899) «Թագաւոր Լեւոնն՝ որդի թագաւորին Օշնի Ժ (10)-ամեայ օծեալ եղեւ ի Սիս թագաւոր կացեալ ամս…»: (Ե3701) «...երկոտասան ամեայ, թագաւորեաց ամս Ի (20)»:

[557] Մովսես Երզնկացին հայտնի է 1307 թ. Սսի ժողովի մասին գրությամբ, որտեղ բուռն կերպով հակադրվում է Կիլիկիո արքունիքի որդեգրած լատինամետ ընթացքին (տե՛ս Անեցի, 1893, էջ 298-301, ծան. 82 եւ 89):

[558] Մխիթար Սասնեցի (մահ. 1337 թ.) ռաբունապետի մասին է (տե՛ս Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության, էջ 649):

[559] Ամիր Չոբան, փոքրահասակ Աբու Սայիդ խանի առաջին տարիներին որպես գլխավոր զորահրամանատար երկրի փաստական տերն էր, բայց հետո Աբու Սայիդը թշնամացավ նրա հետ, եւ ի վերջո պատերազմում պարտվելով՝ ամիր Չոբանն սպանվեց 1326 թ. (Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1972, հ. 4, էջ 16):

[560] Հակոբ Բ Անավարզեցի՝ 1327-1341 (14 տարի), կրկին՝ 1355-1359 թթ.:

[561] Հեթում Կոռիկոսցու որդիներ Օշին պայլի եւ Կոստանդին գունդստաբլի՝ Լեւոն Դ-ի խնամակալության եւ հետագա ողբերգական դեպքերի մասին հանգամանորեն տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 395-404:

[562] Ե3701 ձեռագիրը տեղեկությունը բերում է ՉՀԷ՝ 1328 թվականի ներքո:

[563] «Հուքմ»՝ (արաբ., պարսկ.) հրաման, վճիռ:

[564] Աղթամարի կաթողիկոս Զաքարիա Ա Սեֆեդինյան (1296-1336):

[565] Թագավորաշենը, ամենայն հավանականությամբ, Դաշտային Կիլիկիայում գտնվող Լեւոնկլայի երկրորդ անունն է:

[566] Ս42 ձեռագրում՝ «յԱրաքնայն»:

[567] Տեղեկությունը սխալ թվականի դիմաց է, պետք է լիներ 1342 թ. ներքո, որը համապատասխանում է Կիլիկիո Լեւոն Դ թագավորի մահվանը եւ Ջիվան (Ջեհան) Լուսինյանի կարճ կառավարմանը (տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 407-415):

[568] Գլաձորի համալսարանի ուսուցչապետ Եսայի Նչեցին մահացել է 1338 թ.: Մ7261 եւ Մ10202 ձեռագրերը վարդապետի մահը սխալմամբ դնում են 1343 թվականի ներքո՝ նշելով. «Մեռաւ Եսայի վարդապետն, աշակերտ Ներսէսի, որ արար զՄեկնութիւն Եզեկիելի մարգարէին»:

[569] Մ1483, Մ1484, Մ1869 ձեռագրերի խմբում այս տեղեկությունը 10 տարվա տարբերությամբ դրված է 1328 թվականի ներքո:

[570] Չոբանի որդի Թամուրտաշի որդի «Հասան-Քուչուկը 1344 թ. դեկտեմբերի 15-ին խեղդամահ արվեց իր կնոջ ձեռքով» (Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, էջ 17):

[571] Պաղտին մարաջախտի որդի Կոստանդին Գ թագավոր (1344-1362):

[572] Հայոց կաթողիկոս Մխիթար Ա Գռներցի (1341-1355):

[573] Հովհաննես Քռնեցին (մահ. 1347 թ.), Գլաձորի համալսարանի շրջանավարտ լինելով, գնացել է Մարաղա, կաթոլիկություն ընդունել եւ 1330-ին նշանակվել Երնջակի դոմինիկյանների առաջնորդ:

[574] Ն. Պողարյանի մոտ հրատարակված է «Լիպարենց», բայց հնարավոր է, որ ձեռագրում կամ նախօրինակում եղած լինի «Լիպարտենց»՝ Կիլիկիո այդ շրջանի հայտնի ավագ մարաջախտ Լիպարիտի անունից:

[575] 1357 թ. Ոսկե Հորդայի խան Ջանիբեկի կողմից Չոբանյան հարստության վերջին դաժան տիրակալ Մելիք Աշրաֆի պարտությունից ու սպանությունից հետո իշխանությունն անցնում է ամիր Ախիջուքին (Ախի), որի դեմ 1358-ին պատերազմ է սկսում Ջելաիրյան սուլթան Ուվեյսը (Վայիս) եւ հաղթում (Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, էջ 20):

[576] «Ղազայ»՝ աղետ, փորձանք, չարիք:

[577] Խոսքը Կիլիկիայի Հայոց Կոստանդին Դ (1344-1362) եւ Կոստանդին Ե (1365-1373) թագավորների մասին է (այս ժամանակաշրջանի մասին տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 409-437): Տեղեկությունը հետաքրքիր է նաեւ նրանով, որ պարզում է հավելումների մի մասի հեղինակի ժամանակը: Դժվար է ասել, թե հավելումների որ մասն է պատկանում այդ անանուն հեղինակին, որը լրացումներն արել է Կոստանդին Ե-ի ժամանակ («…որ յայժմ ունի զթագաւորութիւնն»), մինչեւ նրա մահը՝ 1373 թ.:

[578] Տարսոնի Մանչուկ ամիրն է: Կիլիկիո Լիպարիտ ավագ մարաջախտը զոհվել է 1369 թ.:

[579] Կոստանդին Ե Սսեցի (1372-1376):

[580] «Այշեխուր» անվանվածը Հալեպի ամիր Իշիկ (Աշըգ) Թեմուրն է: Նրան այդպես է կոչել նաեւ Մաղաքիա դպիրը (Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 542, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 784):

[581] Պողոս Ա Սսեցի (1376-1382):

[582] Թեոդորոս Բ Կիլիկեցին (1382-1392) Եգիպտոս է մեկնել Լեւոն Ե վերջինի եգիպտական գերությունից ազատվելուց անմիջապես հետո եւ ընդունելություն գտել նորահաստատ սուլթան Բարքուքի մոտ: Ե3701 ձեռագրում տեղեկությունը ՊԼ (1381) թվականի ներքո է, սուլթանի անունը՝ «Բարղուզ»: Կաթողիկոսի՝ 16 հայ տանուտերների հետ սպանվելու մասին հայտնում է Թովմա Մեծոփեցին: Իսկ սպանողը եղել է Սսում իշխող Օմարը (տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ, էջ 2295, 2322):

[583] Այս տեղեկությունը որոշ տարընթերցումներով տեղ է գտել այլ մանր ժամանակագրություններում, սակայն Հայոց ՊԼԶ (1387) թվականի դիմաց (Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 167, հ. 2, էջ 265, 351, 392):

[584] Հովհան Որոտնեցին մահացել է 1386 թ.: Հեղինակը նշում է, որ Տաթեւացին «նստել է» Հայոց ռաբունապետության աթոռին:

[585] Կախիկը Հովհան Որոտնեցու մականունն է:

[586] Հայոց կաթողիկոս Կարապետ Ա Կեղեցի (1392-1404):

[587] Նկատի ունի Գրիգոր Տաթեւացու «Լուծումն պարապմանց սրբոյն Կիւրղի» գործը:

[588] Եղիսաբեթ Խառաբաստացու (Արճեշի Խառաբաստա գյուղից էր) նահատակության պատմությունը Հայսմավուրք է մուծել Գրիգոր Խլաթեցին (տե՛ս Ա. Մաթեւոսյան, Ս. Մարաբյան, Գրիգոր Ծերենց Խլաթեցի, էջ 162-163):

[589] Ավագ Սալմաստեցու վկայաբանությունը շարադրած Գրիգոր Խլաթեցին նշում է, որ նա նահատակվել է Բաղեշում 1390 թվականին (Ա. Մաթեւոսյան, Ս. Մարաբյան, Գրիգոր Ծերենց Խլաթեցի, էջ 101, 155-159):

[590] 1398-ին Ոստանում նահատակված Թամար Մոկացու վարքը Հայսմավուրք է մուծել Գրիգոր Խլաթեցին (տե՛ս Ա. Մաթեւոսյան, Ս. Մարաբյան, Գրիգոր Ծերենց Խլաթեցի, էջ 159-162):

[591] Ամբերդի տեր Աղիդանի անունն ընդմիջարկողը գրում է Ղիտան, ինչպես որ Մեծոփեցու ձեռագրերի մեծ մասում է (Թովմա Մեծոփեցի, էջ 120): Ընդունված կարծիքի համաձայն, Ամբերդը գոյատեւել է «մինչեւ Լենկթեմուրի աշխարհավեր արշավանքները», որից հետո կործանվել է եւ դադարել «որպես ամրոց գոյություն ունենալուց» (Ս. Հարությունյան, Անբերդ, Երեւան, 1978, էջ 30): Աղիդանի մասին Մեծոփեցու տեղեկությունը՝ «…եւ ազատորդի մի Աղիդան անուն՝ ի յԱրարատեան գաւառէ, ի գեղջէն Աղցուց» (Թովմա Մեծոփեցի, էջ 109), մեր ձեռագրի գրիչը լրացրել է «տէրն Անբերթի յԱրարատէ» ուշագրավ ձեւակերպմամբ: Այստեղ տեղանվան շփոթության մասին խոսք լինել չի կարող, քանի որ Մեծոփեցին գրում է, որ ազատորդին ծագումով Աղցք գյուղից էր, իսկ հավելում կատարողը նշում է, որ նա Ամբերդի տերն էր: Այն, որ Ամբերդն այս շրջանում կործանված չի եղել, երեւում է նաեւ այլ փաստերից: 1460 թ. հիշատակվում է «վարդապետն Ստեփաննոս յԱրարադեան գաւառէ, ի յականաւոր եւ յանմատոյց դըղեկէն Անբերդւոյ…» (ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, էջ 436), իսկ 1469 թ. Բյուրականում գրված ձեռագրում հիշվում է. «զԱնբերդոյ ժողովուրդն առհասարակ» (ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, էջ 290):

[592] Հայ իշխանների նկատմամբ գործադրված բռնությունը տեղի է ունեցել մոտ 1405-1406 թթ., քանի որ դրանից հետո Լենկ Թեմուրի որդիները Կարա Յուսուֆի ճնշմամբ կորցրեցին իրենց իշխանությունը: Մեծոփեցու եւ այս ձեռագրի վկայությունների մեջ հետաքրքրական է հատկապես իշխանների մասին ասվածը: Մեծոփեցին նախ պատմում է Թեմուրի որդի Միրանշահի եւ սրա որդի Օմարի (Միրզա-Օմար) մասին, որի իշխանության առաջին տարում կրոնափոխ են արվել երեք հայ իշխաններ («Գ (3) իշխան յազգէս մեր») (Թովմա Մեծոփեցի, էջ 108): Դրանք են Իվանեի որդի Բուրթելը (Բուրթել մեծի թոռը, որ հիշվում է 1403-1407 թթ.), «յազգէ Օրբէլեանց, զտէրն Որոտան», սրա եղբայր Սմբատը, որոնք տարվել են Սամարղանդ, եւ Գորգունի որդի Տարսայիճը՝ «զտէրն Եղեգեաց» (հիշվում է 1403-1419 թթ.) (Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, Բանբեր Մատենադարանի, 9, Երեւան, 1969, էջ 180, 182, 188): Ապա առանց անունը տալու նշում է Մակվի երկաբնակ հայ իշխանին՝ «զտէրն Մակուայ» եւ «ազատորդի» Աղիդանին: Քիչ անց նույն դեպքը համառոտելով՝ նշում է Մակվի իշխանին՝ «Սօր-

ղաթմիշն»: (Թովմա Մեծոփեցի, էջ 109, 120): Մեր ձեռագրի գրիչն օգտվել է երկու վկայություններից, սակայն զանց է առել Սմբատ Օրբելյանի անունը եւ մի քանի այլ մանրամասներ:

[593] Տեղեկությունները նշված ձեռագրերում 1383-1399 թթ. հատվածում են, աղբյուրը՝ Թովմա Մեծոփեցու պատմությունը, որի մասին նշում է հենց ընդ-միջարկություն կատարողը (Թովմա Մեծոփեցի, էջ 34-36, 108-109, 119-120):

[594] Գրիգոր Խլաթեցու ձեռքով Հայսմավուրքի խմբագրության թվականի վե-րաբերյալ մի հիշատակարանում ասվում է, որ դա տեղի է ունեցել «...մե-ռումս ժամանակի, որ էր թվական... ՊՕ (1401)» (Ա. Մաթեւոսյան, Ս. Մարաբ-յան, Գրիգոր Օերենց Խլաթեցի, էջ 74-78):

[595] Լենկ Թեմուրի (1335-1405), նրա որդիներ Միրանշահի (Եարանշահ) եւ Շահռուխի, Ջելաիրյան սուլթան Ահմադի, ինչպես նաեւ կարա-կոյունլու թուրքմեն Կարա-Յուսուֆի (մահ. 1420), նրա որդի Իսքանդարի (մահ. 1437), սրա եղբայր Ջհանշահի (մահ. 1467), ակ-կոյունլու Ռզուն Հասանի (մահ. 1478), նրա որդի Յաղուբի (1478-1490) մասին տե՛ս Հայ ժողովրդի պատ-մություն, հ. 4, էջ 24, 32-53, Գ. Կիրակոսյան, Հայաստանը Լանկ-Թամուրի եւ թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում, Երեւան, 1997, էջ 74-118: Շահ Մուհամմադ Խուդաբանդայի (1578-1587), նրա նախորդ եւ հաջորդ շահերի մասին տե՛ս Առաքել Դաւրիժեցի, էջ 440-441, 474-475, 521:

Այս տեղեկությունը գրողը նշված հատվածում հիշատակված պարսից վեր-ջին գահակալ Շահ Սուլեյման Ա-ի (1667-1694) ժամանակակիցն է եւ այս տեղեկությունն արձանագրել է 1687 թվականին:

[596] Հակոբ Գ Սսեցու աթոռակալության շրջան է համարվում 1404-1411 թթ., մահացել է թունավորմամբ (Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ, էջ 2372):

[597] Սարգիս Սորբեցու կամ Ապրակունեցու մահվան թվականը գրականության մեջ նշվում է 1401 կամ 1404 (Թովմա Մեծոփեցի, էջ 74, Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, էջ 440-441, Ա. Մաթեւոսյան, Մեծոփավան-քի գրչության կենտրոնը, Ս. Էջմիածին, 1997, էջ 58):

[598] Գրիգոր Ը Խանձողատ կաթողիկոսի գահակալման տարիներ են համար-վում 1411-1418 թվականները:

[599] Լենկ Թեմուրը մահացել է 1405 թ.: Հավելման հեղինակն օգտվել է Թովմա Մեծոփեցուց (Թովմա Մեծոփեցի, էջ 112-113):

[600] Այս տեղեկության որոշ տարբերություն եւ ժամանակակցի հիշատակա-րանային բնույթի լրացում ունեցող տարբերակը տե՛ս 1419 թ. ներքո:

[601] Գրիգոր Տաթեւացին Մեծոփավանքում է եղել 1408-1409 թվականներին, մահացել է 1410-ին:

[602] Պողոս Բ Գառնեցին թունավորվել է: Ըստ Մ. Օրմանյանի՝ աթոռակալել է 1418-1430 թթ. (Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ, էջ 2406): Ե3701 ձե-ռագրում տեղեկությունը Հայոց ՊԿ (1411) թվականի ներքո է:

[603] Հմմտ. Մաղաքիա դպիրի ժամանակագրությունը, որից օգտվել է Ղ. Ալիշա-նը (Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 542): Նույն դեպքի մասին նշել են նաեւ Հակոբ

Սսեցին եւ Ավետիք Տիգրանակերտցին, իսկ Կիլիկիայից այդ մեծ արտագաղթը տեղի է ունեցել 1404-ին (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 573):

[604] Տեղանունների բառարանը Սեղմ բերդը նշում է Աղձնիքում, Հողց գյուղի մոտ, միաժամանակ ավելացնելով, որ երկուսի տեղադրությունն էլ որոշված չէ (Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Երեւան, 1998, էջ 566): Վերը բերված վկայությունից կարելի է ենթադրել, որ Սեղմա գավառը սահմանակից է եղել Բաղեշի շրջանին:

[605] Խոսքը Կարա-Յուսուֆի որդի Իսկանդարի (մահ. 1437) մասին է, որն այս ժամանակագրության մեջ հաճախ հիշվում է նաեւ Սկանդար անվանաձեւով:

[606] Ժամանակը խախտված է: Այստեղ հավանաբար խոսքը երեք տարի աթոռակալած Գրիգոր Թ Մուսաբեկյանցի (1439-1441) մասին է, որի ժամանակ Ս. Գրիգոր Լուսավորչի Աջը Սսից բերվեց Վաղարշապատ՝ «ի գաւառ իւր»:

[607] Գրիգոր Խլաթեցին նահատակվել է 1425 թ. (Ա. Մաթեւոսյան, Ս. Մարաբյան, Գրիգոր Ծերենց Խլաթեցի, էջ 34-36): Մ5889 ձեռագիրը ոչ ճիշտ՝ 1416 թվականի ներքո հետեւյալ տարբերակն ունի. «Գրիգոր Խլաթեցին Ծերենց կոչեցեալ կատարի մարտիրոսական մահուամբ ի Ցիպնայ վանսն»:

[608] Այս դեպքերի մասին գրում է Թումա Մինասենցը (1428 թ.): Մակվի «երկաբնակներին» (կաթոլիկ հայերին) պատկանելու մասին նա չի նշում, բայց գրում է, որ բոլոր քրիստոնյաները կսկիծ ապրեցին, «զի բոլոր աշխարհացս այս մին բերթն միայն էր մնացեալ ի ձեռս քրիստոնէից»: Նաեւ նշում է, որ Սքանդարը հասել է «մինչ ի Հէշատ եւ ի Նըւան»: Լ. Խաչիկյանն այս վերջինի «վայրն անորոշ» է համարել (ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, կազմեց Լ. Խաչիկյան, Երեւան, 1955, էջ 374-376, 807), իսկ Ս. Երեմյանն այն նույնացրել է Ուրմիա լճի ափին գտնվող Նախճավանի հետ (տե՛ս Վ. Վարդանյան, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, Երեւան, 1969, էջ 199): «Նըւանի» 15-րդ դ. սկզբներին քրդերին պատկանելը հայտնի է դառնում միայն վերը ներկայացված ժամանակագրության միջոցով: Թադեի վանքում գրված Մ482 ձեռագրում պահպանված մի վկայություն այս դեպքն այլ տեսանկյունով է ներկայացնում. «Ի թուականութեանս… ՊՀԶ (1427) ամի ի կաթողիկոսութեան տէառն Պօղոսի վերադիտողի ամենայն Հայոց եւ ի հայրապետութեան մերոյ նահանգի տէր Գրիգոր վարդապետի աթոռակալի աթոռոյն Թադէոսի եւ ի բռնակալութեան այլասէռ փաթշահի Սքանտար Միրզայի, որդւոյ Ղարայ Ուսուֆի, որ օգնականութեամբն Աստուծոյ եւ առաջնորդութեամբ սրբոյն առաքելոյն Թադէոսի, եկն եւ էառ զանառիկ ամուր դղեակն Մակուայ եւ Նվանայ» (53ա):

[609] Ժամանակի հիշատակարանների համաձայն՝ դեպքերը տեղի են ունեցել 1429-1430 թթ. (ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ XXV, 419):

[610] Կոստանդին Ջ Վահկացի (1430-1439) կաթողիկոսի մահից (թունավորումից) հետո Հովսեփ անունով մեկին որպես կաթողիկոս հիշատակում է Առաքել Դավրիժեցին: Սակայն այլեւայլ հանգամանքների համադրմամբ Մ. Օրմանյանը եկել է այն եզրակացության, որ Հովսեփն օրինական կաթողիկոս չի եղել, այլ աթոռը կարճ ժամանակով գրաված մի մարդ էր (Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ, էջ 2435): Այնուամենայնիվ, այս հարցը պատմագիտության մեջ դեռեւս բաց է մնում, մանավանդ, եթե նկատի ունենանք այս նույն ձեռագրի (Ե3701) 1439 թվականի տեղեկությունը, որտեղ նշված է Հովսեփի չորս տարվա աթոռակալության մասին:

[611] Հայ վարքագրական գրականության մեջ այս նահատակը հայտնի է Մուրատշահ Արծկեցի անունով, իսկ մահը, «Հայոց նոր վկաներում» նշված է 1420 թ., ըստ Մ. Չամչյանի (տե՛ս Հայոց նոր վկաները, էջ 230, Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 441): Սակայն Թովմա Մեծոփեցին, որն իր պատմության մեջ երկու անգամ խոսում է այս մարդու մասին, առաջին անգամ նրան հիշում է 1430 թ.՝ Իսկանդարի կողմից Արծկեի պաշարման ժամանակ, որպես երեք հայ համարձակ բանագնացներից մեկը, որոնց շնորհիվ քաղաքը զերծ է մնում ավերածությունից: Հավանաբար դրանից հետո Մուրատշահի հեղինակությունն աճել է, պատմիչի թեկուզ չափազանցված բնութագրմամբ՝ «Եւ էր իբրեւ զթագաւոր քրիստոնէից ի մէջ ծովու բոլորիս»: Որոշ ժամանակ անց Մեծոփեցին գրում է նաեւ նրա դավադիր սպանության մասին, սակայն առանց թվական նշելու (Թովմա Մեծոփեցի, էջ 1157-158, 189-190, տե՛ս նաեւ Ք. Տեր-Դավթյան, Հայկական սրբախոսություն, էջ 292): Բարեբախտաբար, նույն Թովմա Մեծոփեցին Մուրատշահի մահվան մասին գրել է նաեւ 1435 թ. ավարտած մի ձեռագրի հիշատակարանում՝ խնդրելով հիշել. «զխոջա Մուրատշէն, որ ի սըմին աւուր նահատակեցաւ յԱրծկէ քաղաքի ի յանօրինաց» (ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմող՝ Լ. Խաչիկյան, մասն Ա, Երեւան, 1955, էջ 453): Ըստ այդմ, Սամվել Անեցու Ժամանակագրության մեջ արված վերոնշյալ հավելումը պահպանել է Մուրատշահի նահատակության իրականությանը մոտ թվականը (1436):

[612] Իսկանդարը, իր եղբայր Ջհանշահի դեմ մղվող պատերազմից հյուծված, 1437 թ. Երնջակի բերդում սպանվել է իր որդի Շահ Կուբադի ձեռքով:

[613] Առաքել Բաղիշեցու 1434 թ. գրած «Տաղ Յովասափու» պոեմի հիմքում ընկած է Բուդդայի կենսագրության քրիստոնեական տարբերակներից մեկը:

[614] Վ2261 ձեռագիրն ավելի հակիրճ տեղեկություն ունի, որը սխալմամբ դրված է ՊՁ (1431) թ. ներքո՝ «Ջհանշէն զՇամշուլտոյ բերդն առաւ»: 1340-ին Շամշուլդե (Սամշվիլդե) հայ-վրացական բնակչությամբ քաղաքաբերդի գրավման ժամանակ զոհերի թվի մասին տարբեր տեղեկություններ կան, իսկ 1458 թ. Հովհաննես գրիչն այդ դեպքի մասին վկայաբանություն է կազմել եւ մուծել Հայսմավուրք՝ «Յայսմ աւուր յիշատակ է եւ վկայաբանութիւն կոտորելոցն ուղղափառ եւ անմեղ քրիստոնէիցն Հայոց եւ Վրաց՝ Շամշուլտէ

քաղաքին» (ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 506-507, Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, էջ 41):

[615] Այս դեպքերի մասին հանգամանորեն պատմում է Թովմա Մեծոփեցին (Թովմա Մեծոփեցի, էջ 218-275, տե՛ս նաեւ՝ Կ. Մաթեւոսյան, Հայոց պատմության բախտորոշ 1441 թվականը, «Էջմիածին», 1991, Է-Ը, էջ 5-17):

[616] Տարբերակ՝ (Մ2965) «Ընկեցին զտէր Կիրակոս նախանձու եւ Գրիգոր եպիսկոպոս Մաթուցի (Մակուեցի – Կ. Մ.) նստաւ Թուրքով եւ ղաբալով» (ղաբալ – հակառակություն): Տե՛ս նաեւ Թովմա Մեծոփեցի, էջ 264-272:

[617] Թովմա Մեծոփեցին մահացել է 1446 թ.:

[618] Թուրքերը Կոստանդնուպոլիսը գրավել են 1453 թ. մայիսի 29-ին: Վերջին կայսրը՝ Կոստանդին ԺԱ Պալեոլոգը (1449-1453) Մանուել Բ-ի (1391-1425) որդին էր, որի անունը նշվում է ժամանակագրական հաջորդ միավորի մեջ:

[619] Զաքարիա Գ Աղթամարցին, որն աթոռակալում էր 1434 թվականից, 1461 թ. օգտվելով այն հանգամանքից, որ Գրիգոր Լուսավորչի Աջը Վաղարշապատից գողացվել ու տարվել էր Ջհանշահի մոտ, վայելելով վերջինիս բարյացակամությունը, ստանում է այն, եւ Գրիգոր Մակվեցուն աթոռանկ հայտարարելով՝ միավորում Ս. Էջմիածնի ու Աղթամարի կաթողիկոսական աթոռները: Սակայն 1462-ին նա ստիպված է լինում թողնելու Վաղարշապատը եւ Աջը վերցրած վերադառնում է Աղթամար (տե՛ս ժամանակագրության 1462 թ. տեղեկությունը): Տարին չբոլորած Զաքարիան կրկին գնում է Էջմիածին, սակայն 1464 թ. ընդդիմադիր միաբանների ձեռքով թունավորվում ու մահանում է (տե՛ս Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը, հեղինակ-կազմող Կ. Մաթեւոսյան, Ս. Էջմիածին, 2013, էջ 95-102):

[620] Այս եւ 1467, 1468, 1469 թթ. Սիս քաղաքում կատարված դեպքերի մասին հատվածները ծագում են Ղ. Ալիշանի հրատարակած մի բնագրից, որի հեղինակին նա կոչում է «ժամանակագիր Կիլիկիոյ» (Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 544): Այնտեղ շարադրանքն ավելի հանգամանալից է, բայց կան տեղեր, օրինակ, այս միավորի վերջնամասում, երբ ներկա բնագիրն ուշագրավ մանրամասներ է ավելացնում:

[621] 1441-ին Լուսավորչի Աջի Սսից անհետանալուց հետո կիլիկեցիները հատուկ մարդ են կարգել կաթողիկոսարանի մյուս Աջերը պահպանելու համար, եւ նա կոչվել է Աջպան: Առաջին հիշատակված անձը Հեթում Խազենց Սպիտակն է, որ հետո քահանա է դարձել (Սպիտակերեց): Վտանգի պահին նա Աջերը տարել է Կոպիտառա անառիկ բերդը: Մահացել է 1469 թ. համաճարակի ժամանակ: Նրանից հետո այս պաշտոնում եղած մարդիկ հիշվում են 17-րդ դարում: Այս պաշտոնի անվանումից է առաջացել Աջապահյան ազգանունը (տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 539-540): Ժամանակագրության վերոնշյալ հատվածում եւ հետագա տեքստում գրառողն Աջպանը որպես հատուկ անուն է օգտագործում, ուստի պահպանում ենք այդ ձեւը:

[622] Այս եւ հաջորդ երկու թվականների դեպքերի մասին տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 545:
[623] Ըռզակ՝ ապրանք, ինչք:
[624] Բնագրում՝ «Աջբան»:
[625] Ե3701 ձեռագիրը տեղեկությունը սխալմամբ դնում է մեկ տարի առաջ, բայց ճշտորեն նշում է նահատակության օրը. «(ՋԻԲ) Եւ յայսմ ամի նահատակեցաւ ի Խարբերթ Դաւիթ, որ է որդի Գրիգորի քահանային, յունվարի ԺՁ (16)»: Տե՛ս նաեւ Հայոց նոր վկաները, էջ 306-308:
[626] Մոլդովայի իշխան Ստեֆան 3-րդ Մեծի մասին է խոսքը, որը 1474-75 թթ. խոշոր հաղթանակ տարավ թուրքական գերակշիռ ուժերի նկատմամբ, սակայն հետո զիջեց դիրքերը:
[627] Օսմանցի թուրքերը Կաֆան (Թեոդոսիա) եւ ողջ Ղրիմը ճենովացիներից գրավել են 1475 թ.:
[628] Խոսքը Երուսաղեմում գտնվող սրբավայրի մասին է, որն այդ ժամանակ Հայ եկեղեցու վերահսկողությունից անցել է վրացիներին:
[629] Խոսքը Ամիրդովլաթ Ամասիացու մասին է (մոտ 1420/25-1496):
[630] Բառացի՝ «Դեղագիտարան», խոսքը հավանաբար «Անգիտաց անպետ» աշխատության մասին է:
[631] Ե3701 ձեռագիրը բավականաչափ տեղեկություններ է պարունակում Սսի վերաբերյալ: Այս մեկը, որը վերաբերում է 1479 թ. Լուսավորչի Աջը նորից Սիս բերելուն եւ կրկին անհետանալուն, ուշագրավ է նաեւ այն առումով, որ գրիչը նշում է, թե այն չկա մինչեւ հիմա՝ 38 տարի, հետեւաբար այդ գրառումը, հավանաբար նաեւ Սսին վերաբերող մյուս նշումները, կիլիկեցի անանուն հեղինակը կատարել է 1517 թվականին:
[632] Տեղեկությունները վերաբերում են Եգիպտոսի ներքին գահակալական վեճերին: Հետաքրքրական է, որ ժամանակագիրը գահընկեցությունը նշում է արաբերեն բառով՝ «մազուլ» (մանզուլ), որ նշանակում է իջեցնել, նաեւ՝ իշխանությունից հրաժարեցնել: Իսկ հատվածի վերջում սուլթանին դրվատական բնութագիր է տալիս դարձյալ արաբերեն բառով՝ «ատիլ», որը նշանակում է «արդար մարդ»:
[633] Այս նահատակի մասին Հայոց նոր վկաներում միայն մեկ կարճ տեղեկություն կա քաղված Մ. Չամչյանից. «Ի թուին ՋԽԳ (1494) յօգոստոսի 1. նահատակեցաւ Թորոս Հռոմկլայեցի՝ որդի Սուլթանշային» (Հայոց նոր վկաները, էջ 332, Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հ. Գ, էջ 515):
[634] Դեպքը տեղի է ունեցել 1506 թ. հոկտեմբերի 17-ին (տե՛ս Հայոց նոր վկանեը, էջ 340-345):
[635] «Հայոց նոր վկաներում» երկուսի նահատակությունն էլ նշվում է 1524 թվականին (Հայոց նոր վկաները, էջ, 359-361):
[636] Խոսքը նշանավոր Վահկա բերդի եւ նրան կից առաջացած ավանի մասին է (նաեւ Վագա կամ Վաքա կոչված), որը Կիլիկիայի հայկական թագավորության անկումից (1375 թ.) հետո երկար ժամանակ մնացել է հայերի

ձեռքում: Սույն ժամանակագրության մեջ այն Վագայ անունով հիշվում է 1467 թ. դեպքերի առնչությամբ: 1525 թ. այստեղի Ս. Թորոս եկեղեցու մոտ թաղվել է Սսի Հովհաննես Թլկուրանցի բանաստեղծ կաթողիկոսը:

[637] Թուրք-հունգարական պարտերազմի մասին է: «Պուտումը» Բուդան է (Բուդա-Պեշտ), կամ այլ անվամբ՝ Օֆենը:

[638] Ուռհայեցի Թորոսի նահատակության մասին «Հայոց նոր վկաների» հեղինակները տեղեկություն են քաղել միայն Մ. Չամչյանի գրքից (տե՛ս Հայոց նոր վկաները, էջ 369):

[639] Գրչի վրիպումն է, պետք է լինի զԸնկռզու, այսինքն՝ հունգարների, ոչ թե զԻնկլիզու, որ կնշանակի անգլիացիների:

[640] «Հայոց նոր վկաներում»՝ Կոկճայ, նահատակությունը՝ 1536 թ., ըստ Հովասափ Սեբաստացու տաղի: Մեկ այլ աղբյուրում անունը՝ Ոգջայ (Հայոց նոր վկաները, էջ 373-375): Ներկա ժամանակագրության մեջ Ե3701 ձեռագրում նույն թվականի ներքո հիշվում է սեբաստացի երկու նահատակ՝ «զխոճայ Խուպիճանն եւ զԿօկճան»:

[641] Ճուղապ (ջուղաբ)՝ պատասխան:

[642] Խոնթքար (խոնդքար) – (պարսկ.) տիրակալ, թագավոր, անվանում, որով նշվում են թուրքական սուլթանները: Սույն ժամանակագրության 1474 թ. տեղեկության մեջ՝ «հունքէր»:

[643] Նշված բնակավայրերը նույն հերթականությամբ թվարկելով՝ դեպքի մասին պատմում է Զաքարիա Քանաքեռցին (Զաքարիա Սարկաւագ, Պատմագրութիւն, հ. Ա, Վաղարշապատ, 1870, էջ 11):

[644] 1551 թվականին նախահարձակ էին եղել պարսիկները, օսմանցիները պատասխան արշավանք ձեռնարկեցին 1554-ին:

[645] Լամբերդը «Լեւոն բերդի» մեկ այլ անվանաձեւն է, ինչպես Ղ. Ալիշանի վկայակոչած աղբյուրն է նշում՝ «զոր այժմ այլազգիքն Լմբերթ կոչէն» (Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 534): Կիլիկիայում եղել է Լեւոնբերդ (Լեւոնկլա) անունով երկու բերդ, մեկը Մսիսի մոտ, մյուսը հյուսիսային կողմում՝ Վահկայի մոտ, Կեսարիա տանող Խոզձորի ճանապարհին (տեղանշումը՝ Սամվել Գրիգորյանի): Դժվար է ասել, թե վերոնշյալ տեղեկության մեջ ո՞ր բերդի մասին է խոսքը, բայց հետաքրքրական է, որ 16-րդ դարի վերջերին այն գտնվել է հայերի վերահսկողության ներքո: Բերդանունը կրկնվում է նաեւ նույն ձեռագրի 1642 թ. տեղեկության մեջ:

[646] Կիպրոսի թուրքական գրավման թվականը ճիշտ է նշված, մինչդեռ մեկ այլ մատյանում տեղեկությունը 1574 թ. դիմաց է՝ (Մ7261) «ԶԿիպրոս էառ սուլթան Սէլիմն»:

[647] Այս երեւույթի մասին որոշ տարընթերցումներով (առանց գիշերային ժամերի հիշատակության) նշվում է նաեւ այլ ժամանակագրություններում (Մանր ժամանակագրություններ, հ 1, էջ 172, հ. 2, էջ 355):

[648] Տարբերակ՝ (Ե3701) «Յայսմ ամի զԵրեւան առին»:

[649] Տարբերակ՝ (Մ2965) «Լալա փաշէն գերեաց զԵրեւան»:

[650] Ղուլօղլի Երզնկացին համարվում է առաջին հայ հայտնի աշուղներից մեկը: Սույն երկրաշարժի մասին համառոտ պահպանվել է նաեւ Մ2965 ձեռագրում. «Շարժեցաւ Եզնկան յունիսի ԺԷ (17), Գ (3) ժամուն Ս. Լուսաւորչի երկուշաբաթ փլաւ քաղաքն եւ մեռան ԺԵՌ (15 000) արք եւ կանայք: ԵՌ (5000) մարդիկ մնացին ի ներքոյ երկրի, զորս յերկրէ կիսամահ, ոմանք մեռան եւ կէս՝ խեղացան»:

[651] Ե3701 ձեռագիրը 1590 թ. ներքո է դնում Ֆահիրատ փաշայի արշավանքը. «Յայսմ ամի Ֆահիրատ փաշայն Գանճայն էառ»:

[652] Առաքել Դավրիժեցու մոտ՝ «Գզիրօղլի»: Այս հատվածից սկսած Ե3701 ձեռագրում՝ հատկապես Օսմանյան կայսրության պատմությանը վերաբերող տվյալները, ակնառու կերպով զուգահեռվում են Առաքել Դավրիժեցու կազմած ժամանակագրության մեջ եղած տեղեկությունների հետ (հաճախ բառացի կրկնվելով), որոնց զգալի մասը հանգամանորեն ծանոթագրել է հրատարակիչ Լ. Խանլարյանը (տե՛ս Առաքել Դաւրիժեցի, էջ 475-486), ուստի դրանք չենք կրկնում:

[653] Ջալալիների շարժման եւ Կարա Յազըճու ապստամբության մասին հանգամանորեն տե՛ս Մ. Ջուլալյան, Ջալալիների շարժումը եւ հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Երեւան, 1966, էջ 142-190:

[654] Տեղեկությունն առկա է նաեւ այլ աղբյուրներում, որոնք անասնամահը դնում են 1595 թ. ներքո (տե՛ս Լ. Խանլարյանի ծանոթագրությունը՝ Առաքել Դաւրիժեցի, էջ 476, 552, ծան. 607:

[655] Կարա Յազըճու ապստամբության այս դրվագի մանրամասները, ավելի ընդարձակ շարադրանքով, տեղ են գտել Առաքել Դավրիժեցու կազմած ժամանակագրության մեջ, բայց առկա են նաեւ որոշ տարբերություններ (հմմտ. Առաքել Դաւրիժեցի, էջ 476):

[656] Ուռհայեցի երկու հայերի նահատակության մասին (տե՛ս նաեւ՝ Մ2965՝ «Ղարայ Եազիճեն գլխատեաց յՈւրհայ զմի քահանայ՝ Աբրահամ անուն եւ զոմն տանուտէր Սքանտար անւամբ») հայտնի է միայն Սամվել Անեցու ժամանակագրության մեջ կատարված սույն հավելման շնորհիվ (տե՛ս Հայոց նոր վկաները, էջ 422):

[657] Հմմտ. Առաքել Դաւրիժեցի, էջ 477:

[658] Հմմտ. Առաքել Դաւրիժեցի, էջ 477, 553, ծան. 615:

[659] «Ղուլայ» նշանակում է պարսպաբուրգ:

[660] Նույնությամբ տե՛ս. Առաքել Դաւրիժեցի, էջ 477-478:

[661] Այս եւ հաջորդ մի շարք տեղեկություններ կարելի է տեսնել Առաքել Դավրիժեցու կազմած ժամանակագրական նյութերի հավաքածուի մեջ (Առաքել Դաւրիժեցի, էջ 478):

[662] Հմմտ. Առաքել Դաւրիժեցի, էջ 479:

[663] Ըստ Առաքել Դավրիժեցու՝ Անդրեասին կախաղան են բարձրացրել 1617 թ. նոյեմբերի 18-ին (Առաքել Դաւրիժեցի, էջ 291):

[664] Տուլպէնտ (տոլպանդ) – Գլխանոց, գլխի փաթթոց (չալմա):

[665] Այս տեղեկության հակիրճ տարբերակն ունի նաեւ Մ2965 ձեռագիրը:

[666] Լրացնողը «Մովրով»-ը որպես հատուկ անուն է նշել՝ նկատի ունենալով Գեորգի Սաակաձեին (1570-1629), որը հայտնի է եղել նաեւ «Մեծ Մովրով» անունով (ուստի մենք էլ այն պահում ենք որպես հատուկ անուն): Այդ բառը վրացերեն նշանակում է կառավարիչ: Գեորգի Սաակաձեին Մովրով է կոչում նաեւ Առաքել Դավրիժեցին:

[667] Տարբերակ՝ (Մ2965) «Վրացի Մովրովն կոտորեաց զհեծեալս բազումս Ղզլպաշին՝ եւ զՂառչղա խանն եւ զԵսուֆ խանն եւ զՂազախ խանն»: Այս դեպքի մասին պատմիչ Զաքարիա Քանաքեռցին գրում է. «Վրացիքն՝ ի վերայ Պարսիցն, եւ կոտորեցին զնոսա որպէս մրջիւն ջերմ ջրով, եւ սպանին զՂառչղայ խանն, զՅուսուփ խանն եւ զՂազաղ խանն» (Զաքարիա Սարկաւագ, Պատմագրութիւն, հ. Ա, էջ 28):

[668] Հմմտ. Առաքել Դաւրիժեցի, էջ 481:

[669] Կաթողիկոս Մովսես Գ Տաթեւացու մասին է, որը մինչեւ աթոռակալությունը (1629-1632) Սպահանում 1627 թ. Շահ Աբասից ստացել է Ս. Էջմիածնի լուսարարի պաշտոնը եւ մայրավանքը նորոգելու թույլատվություն (հատուկ հրովարտակով) եւ իրագործել է այն: Այս մասին ավելի ամբողջական են Ե3701 ձեռագրի տեղեկությունները:

[670] Տարբերակ՝ (Մ2965) «ԶՄօսէս վարդապետն յունուարի ԺԳ (13) ձեռնադրեցին կաթողիկոս էջմիածնի եւ գնացեալ ի Սպահան՝ եբարձ զճ (100), թուման ղապալէն Սուրբ էջմիածնի»:

[671] Երեւանի Կոզեռն գերեզմանոցը (այժմյան Կոնդ թաղամասում), որն այդ անունով է կոչվել 11-րդ դարի նշանավոր վարդապետ Հովհաննես Կոզեռնի այդտեղ թաղված լինելու պատճառով:

[672] Հմմտ. Առաքել Դաւրիժեցի, էջ 483, հանգամանալից ծանոթագրությունը՝ անդ, էջ 556 (ծան. 666):

[673] Առաքել Դավրիժեցու մոտ զորքի թիվը՝ ՁՌ (80 000), տե՛ս Առաքել Դաւրիժեցի, էջ 483:

[674] Հավանորեն սկզբնական օրինակում եղել է «զԱզախու», քանի որ 1643 թ. տեղեկության մեջ նշվում է Ազախ, իսկ խոսքը վերաբերում է Դոնի ափին գտնվող Ազովին (թուրքերեն՝ **Azak**):

[675] Որքան մեզ հայտնի է, այլ աղբյուրում այս տեղեկությունը չի հիշվում:

[676] Թուրքերեն՝ «Շահանի կամրջով չե՛նք անցնի»: Այս կամուրջի մնացորդները պահպանվել են մինչեւ այժմ:

[677] Այս դեպքի ավելի ընդարձակ նկարագրությունն առկա է Առաքել Դավրիժեցու վկայաբերած ժամանակագրության մեջ (Առաքել Դաւրիժեցի, էջ 485):

[678] Այսինքն՝ 700 000: Նշված հնդկաց մեծ մողոլ թագավորի անունն է՝ Շահ Ջահան (1628-1658): Այս հատվածի նաեւ մյուս տվյալների մասին տե՛ս Լ. Խանլարյանի հանգամանալից ծանոթագրությունները (Առաքել Դաւրիժեցի, էջ 486, ծան. 695-699):

[679] Բախչիսարայ – Ղրիմի խանության կենտրոնը, Ղրիմ թերակղզու հարավային մասում:

[680] Փիլիպոս Ա Աղբակեցին մահացել է 1655-ին, Ներսես Ա Սեբաստացին՝ 1654-ին, իսկ Արիստակես վարդապետը 1654 թ. հիշվում է Խարբերդում՝ «…զծերունի վարդապետն Խարբերդցի Արիստակէս, մականուն Ղարփուզ կոչեցեալ» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ժէ դար, հ. Գ, կազմեց Վ. Հակոբյան, Երեւան, 1984, էջ 596):

[681] Հայոց կաթողիկոս Փիլիպոս Ա Աղբակեցու (1632-1655) մահվան եւ Հակոբ Դ Ջուղայեցու (1655-1680) աթոռակալության վերաբերյալ ներկայացված են ստույգ ամսաթվեր (տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ, էջ 2889-2891, 2911):

[682] Այս դեպքն ավելի հանգամանորեն ներկայացված է Առաքել Դավրիժեցու վկայաբերած ժամանակագրության մեջ (Առաքել Դաւրիժեցի, էջ 486-487):

[683] Մեգրելիայի իշխան Լեւան Բ Դադիանի (1611-1657):

[684] Դեպքը նկարագրված է Ե3701 ձեռագրում 1660 թ. ներքո, ինչպես նաեւ՝ ավելի հանգամանորեն՝ Առաքել Դավրիժեցու ժամանակագրության մեջ, (Առաքել Դաւրիժեցի, էջ 487-488):

[685] Կէմէրէկը Կամարակն է Սեբաստիայից հարավ-արեւմուտք, որից մի փոքր հեռու է (դեպի հարավ-արեւելք) Ազիզիե (Ազիազոն) քաղաքը (ծանոթագրությունը՝ Գեղամ Բաղալյանի):

[686] «Պէնկլի» - այսինքն խալավոր: Շարունակության մեջ ասվում է, որ երեխաները ծնվեցին վզերի մոտ խալերով «հանգոյն քռմնեկի», այսինքն՝ քառամանյակի (գոհարազարդ վզնոցի) նման:

[687] Վտաւան - երկարության չափ, հավանաբար մեկ ասպարեզ:

[688] Մեր ձեռագրում գրված է «Ղալ», բայց խոսքն Արագվիի էրիսթավության եւ նրա ղեկավար Ջաալի մասին է (Առաքել Դաւրիժեցի, էջ 487, ծան. 713, 714):

[689] Այդպես է կոչվում Արեւմտավրացական կամ Իմերեթի թագավորությունը (ծանոթագրությունը՝ Հայրապետ Մարգարյանի):

[690] Հմմտ. Առաքել Դաւրիժեցի, էջ 487, տե՛ս անդ՝ ծան. 715-717:

[691] Թուշ եւ Փշավը Արեւելյան Վրաստանի լեռնային մասի ցեղերից են:

[692] Հմմտ. Առաքել Դաւրիժեցի, էջ 488:

[693] Այս հատվածում ժամանակագրության Մ7261-ի տարբերակի կազմողը Փրկչական թվականին զուգահեռ դրվող Հայոց թվականի երկու տարին բաց է թողել (որը անցել է նաեւ այս խմբի մյուս ձեռագրերին), որպեսզի համապատասխանեցման համար ոչ թե 553 գումարվի, այլ՝ 551: Այսպես՝ Փրկչական ՌՈԿԴ (1664) թվականի դիմաց Հայոց ՌԵԺԱ (1111+553=1664) թվականն է, որից հետո Հայոց ՌԵԺԲ, ՌԵԺԳ թվականների դիմաց Փրկչական թվական չի նշված: Այնուհետեւ Փրկչական ՌՈԿԵ (1665) թվականի դիմաց դրված է Հայոց ՌԵԺԴ (1114+551=1665) թվականը: Փաստորեն, այս խմբի ձեռագրերում, շարունակության մեջ, Փրկչական թվականը համապատասխանում է մեր ցանկում նշված «արդի» թվականի տարիներին: Միայն Մ6354

ձեռագրի գրիչը, թեեւ «Հայկականի զաւելեալ թիւն» դուրս թողնելու մասին նշումն արել է (324բ), բայց թվականների ցանկերը շարունակել է առանց փոփոխության:

Ժամանակագրության այն տարբերակը, որը հրատարակել է Վ. Հակոբյանը Մ482 ձեռագրից, այս հատվածի (50բ) համառոտագրված ու մասամբ եղծված լինելու պատճառով ճիշտ չի վերծանել եւ ներկայացրել է հետեւյալ կերպ. «Հայկական զատելի թիւն ի բաց ձգեցաք եւ զԼատինացւոց համեմատ գրեցաք զփրկիչն մերոյ ընդ մերոյս» (Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 326): Վ. Հակոբյանը նաեւ ծանոթագրել է. «Սույն հատվածի վերջին բառը չկարողացանք ընթեռնել, միայն պարզ երեւում է առաջին «հ» եւ վերջին «րս» տառերը. գուցե «հորս»: Սակայն հատվածից հետո, տեղեկությունները հիշատակվում են հայոց եւ այժմ մեր կողմից գործածվող տարեթվերի ոչ թե 553 : 1 հարաբերությամբ, ինչպես մինչեւ այդ, այլ 551 : 1 հարաբերությամբ» (Նույն տեղում, էջ 331): Ինչպես տեսնում ենք, իրականում գրված է եղել «Հայկական ի զաւելեալ թիւն ի բաց ձգեցաք եւ ըստ Լատինացւոց համեմատութեամբ գրեցաք զՓրկչին մերոյ ընդ մերոյս հաւասար»:

[694] Գրիգոր Զեյթունցին հիշվում է նաեւ 1633-ին, 1655 թ. Մաշտոց է ընդօրինակել (Մժ, հ. 2, էջ 519, Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ, հ. Գ, կազմեց Վ. Հակոբյան, Երեւան, 1984, էջ 685-686):

[695] Դավիթ Բաղիշեցին Եսայուն հիշատակում է որպես կաթողիկոս Փիլիպոս Աղբակեցու (1633-1655) ժամանակի նշանավոր վարդապետներից մեկը: 1653-55 թթ. նա հիմնովին նորոգել է Երնջակի Ս. Կարապետ վանքը, մասնակցել 1665 թ. եկեղեցական ժողովին (Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 359, հ. 1, էջ 400-401, Ա. Այվազյան, Հայոց եկեղեցին 18-րդ դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, Երեւան, 2003, էջ 199, 205, 232): Սույն տեղեկության մեջ Եսայու տարիքը մատնանշող թվատառը եղծված է, բայց երեւացող եզրագծից դատելով՝ «Ձ» (80) կամ «Ղ» (90) է (Մ3965, 81բ):

[696] Մահմեդականություն եւ Շահնավազ (Շահ Նավազ) անունն ընդունած Վրաց Վախտանգ 5-րդ թագավորի մահվան մասին հայտնում է նաեւ Զաքարիա Ագուլեցին, այլ մանրամասներով (Մանր ժամանակագրություններ, հ 1, էջ 290): Ամսաթվի եւ մահվան հանգամանքների առումով ներկա տեղեկությունն ավելի հանգամանալից է, իսկ վերջին բառերից կարելի է ենթադրել, որ այն հենց այդ ժամանակ, այսինքն՝ 1676 թ. դեկտեմբերի վերջին է գրվել (տե՛ս Կ. Մաթեւոսյան, ժամանակագրական նոր միավորներ Սամվել Անեցու ձեռագրերից, «Էջմիածին», 2007, Ե, էջ 50-59):

[697] Երկրաշարժը տեղի է ունեցել 1679 թ. հունիսի 4-ին:

[698] Հայոց կաթողիկոս Եղիազար Ա Այնթապցի (1681-1691):

[699] Տեղեկությունը 1683-1687 թթ. ավստրո-թուրքական պատերազմի մասին է: «Պուտումը» Հունգարիայի մայրաքաղաք Բուդան է, որը 1686 թ. գրավել է քրիստոնյա զորքը, ապա առաջացել ու հասել է Բելգրադ: Հեղինակը

սկզբում «ալամանայ կայսրին» հետո կոչում է «Նամցա կայսրն» (հմմտ. «Նէմցա», Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 404-405): Հետաքրքիր է նաեւ քրիստոնյա մյուս առաջնորդներին անվանելու կերպը. «Լէհայ գռալն» լեհական թագավորը՝ «կառոլն» է, իսկ վենետիկցիների «թուճն»՝ Վենետիկի դոժը: 1687 թվականի ներքո եղած այս հատվածը Մ6354 ձեռագրի վերջին տեղեկությունն է (թեեւ աղյուսակը գծված է մինչեւ ՌՃԶԴ (1735):

[700] Հայոց կաթողիկոսներ՝ Եղիազար Ա Այնթապցի եւ Նահապետ Ա Եդեսացի (1691-1705):

[701] Տեղեկությունը Բաղեշի (Բիթլիսի) մոտ գտնվող հնագույն ժամանակներից գոյություն ունեցող վանքում եկեղեցու կառուցման մասին է (տե՛ս Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երեւան, 1988, էջ 745):

[702] Անմիջական տպավորություններ արտահայտող եւ ստույգ մանրամասներ պարունակող (մորեխի՝ օգոստոսին գալը, բամբակի տերեւներն ուտելը եւ այլն) այս վկայությունը ենթադրել է տալիս, որ այն արձանագրողը բնակվել է այս տարածքում՝ Արարատյան երկրամասում:

[703] 17-րդ դարի վերջին Անիում երեք քրիստոնյաների նահատակության մասին վկայությունը հետաքրքրական տեղեկություն է: Ընդունված է կարծել, որ 15-17-րդ դարերում Անին լքված ու անմարդաբնակ էր: Սակայն, ինչպես երեւում է, բնակավայրը, թեկուզ խղճուկ վիճակում, շարունակել է գոյատեւել: Ուշագրավ է, որ 1658 թ. Կարսում Աթանաս երեցն իր ընդօրինակած ավետարանի գրչության վայրը նշելիս գրում է. «...ի քաղաքս Ղարս կոչեցեալ, հուպ ի Շիրակայս յԱնու...» (Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Գ, էջ 1658, տե՛ս նաեւ Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 562): Պատահական չէ, որ 17-րդ դարի վերջերին վերականգնվել է Անիի մերձակա Հոռոմոսի վանքը (Կ. Մաթեւոսյան, Հոռոմոսի վանքի պատմության նոր էջեր (ԺԴ-ԺԹ դդ.), «Էջմիածին», 1993, Դ-Ե-Զ, էջ 77): Անիում երեք քրիստոնյաների եւ Կարսի սարկավագի նահատակությունը՝ «յորոց վերայ լոյս ճառագայթեցաւ ի տեսիլ ամենեցուն», հեղինակը համարում է «վերջին դարում» քրիստոնյաների հավատն ամրապնդող փաստ: Բարեբախտաբար, կարսեցի սարկավագի անունը հայտնի է եւ ընդգրկված Հայոց նոր վկաների ցանկում՝ Սարգիս սարկավագ Կարսեցի, նահատակության վայրը՝ Կարս, 1691-92 (Հայոց նոր վկաները, էջ 528-530):

[704] 18-րդ դարի սկզբին ձեռագիրը (Մ3965) պատկանել է Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք Եփրեմ Ղափանցուն, որն իր ժամանակին վերաբերող տեղեկություններ է մուծել ժամանակագրության վերջին հատվածում: Մեկընդմեջ երկու անգամ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքի եւ Ադրիանապոլսի (Էդրինե) առաջնորդի աթոռը զբաղեցրած Եփրեմ Ղափանցին 1699-ին Ադրիանուպոլսում էր: 1701 թվականի օգոստոսին այս քաղաքում պատահած մեծ հրդեհի մասին Սամվել Անեցու ժամանակագրության վերջում ավելացրած հատվածում նա իրեն համարում է «ծերունի վարդա-

պետ»: 1701 թ. սեպտեմբերի 1-ին նա կրկին պատրիարք է ընտրվում, սակայն շարունակում է մնալ Ադրիանապոլսում, ուր այդ տարվա վերջին ավարտում է իր հիմնած Ս. Աստվածածին եկեղեցու կառուցումը (Եփրեմ Ղափանցու մասին տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ,էջ 3080, 3089, 3109, 3122, Յ. Սիրունի, Պոլիս եւ իր դերը, հ. Ա, Պէյրութ, 1965, էջ 599-603):

[705] Այս հատվածում մի քանի թուրքերեն բառեր են օգտագործվել՝ «ջամի»՝ մզկիթի մի տեսակ է, «էքմեքչի»՝ հացագործ կամ հացթուխ, «մեյխանա»՝ գինետուն:

[706] Թադեի վանքի առաջնորդ Իսահակ վարդապետի (Արդար Իսահակ, Իսահակ Մակվեցի) (1664 – 1702, եպիսկոպոս՝ 1677-ից) մահվան մասին վկայող տեղեկություններ են պահպանվել այլ ժամանակագրությունների մեջ (Մժ. հ. 1, էջ 304, 311, 315, 328, Մժ. հ. 2, էջ 414, 420), նաեւ նրա աշակերտ Իգնատիոս Համբեցու հիշատակարանում, որը նշում է, թե Արդար Իսահակը մահացել է ՌՃՕԱ (1702) թ. եւ թաղվել «յՈւչքիլիսէն, ի յիւրում աթոռին, ի ծախակողմն խորան» (Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ժ, Մանր մատենագիրք, ԺԵ-ԺԹ դար, հրատարակեց Գիւտ Աղանեանց, Թիֆլիս, 1912, էջ 381, Իսահակի մասին տե՛ս նաեւ՝ Կ. Ամատունի, ԺԷ դարու երեւելի վարդապետներ, Վենետիկ, Ս. Ղազար 1989, էջ 81-84, Ա. Հախնազարյան, Արտազի երեք վանքերը, էջ 90-91): Սակայն վերը հրապարակված տեղեկությունն առավել հանգամանալից է եւ ճշգրիտ մանրամասներով է ներկայացնում Բագավանում (Ուչքիլիսե) նրա կատարած աշխատանքները: Ձեռագիրը, որտեղ կատարված է սույն հավելումը, պահվել է Ս. Թադեի վանքում եւ հավանաբար տեղեկությունը գրվել է հենց այնտեղ:

[707] Մանր ժամանակագրություններից մեկում նշվում է՝ «ՌՃՕԲ (1703) մարտի ԼԱ (31-ին) մեռաւ Կոփեցին» (Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 311):

[708] Ինչպես այս, այնպես էլ 1701 թվականի դիմաց նշված տեղեկությունը Նահապետ կաթողիկոսի մահվան մասին, ժամանակագրորեն իրենց տեղում չեն, քանի որ նա մահացել է 1705 թ.:

[709] Միր Մահմուտ Հոտակի, Կանդահարի ամիրը, որը Սպահանը գրավելով՝ դարձավ Իրանի աֆղան հարստության առաջին շահը:

[710] Հայոց կաթողիկոս Կարապետ Բ Ուլնեցի (1726-1729):

[711] Այս գրառումը վստահաբար կատարվել է Երուսաղեմում, որտեղ այդ ժամանակ պահվում էր ձեռագիրը:

[712] Հայոց կաթողիկոս Աբրահամ Բ Խոշաբեցի (1730-1734):

[713] Հայոց կաթողիկոս Աբրահամ Գ Կրետացի (1734-1737): Սա Մ482 ձեռագրի վերջին տեղեկությունն է:

[714] Խոսքը Բագավանի մեծաշեն եկեղեցու (Ուչքիլիսե) մասին է (տե՛ս Պ. Մուրադեան, Կովկասեան մշակութային աշխարհը, էջ 211-218):

[715] Նշվում են Հայոց կաթողիկոսներ Մինաս Ա Անկեցին (1751-1753) եւ Ալեքսանդր Բ Բյուզանդացին (1753-1755):

[716] Ե3701 ձեռագրի գրիչը, որ վարդապետ բառը, սովորաբար, նշում է համառոտագրությամբ՝ «վրդպտ», այս դեպքում Եղիազարի տմարդի արարքը նկատի ունենալով՝ գրել է «վրպտին», այսինքն՝ «թելադրութեամբ... վայրապետին»:

[717] Սսի կաթողիկոսների պատմությունը գրած Բ. Կյուլեսերյանը չի նշում Միքայել կաթողիկոսի սպանության դրդապատճառի մասին, այլ միայն, որ նրան թունավորել է Ղոզանօղլու Յուսուֆ աղան 1758 թ. օգոստոսի 31-ին: Իսկ Միքայելի եղբոր՝ Գաբրիելի մասին (որը մինչ այդ Հալեպի առաջնորդն էր) գրում է. «Յայտնի չէ իր օծման եւ գահակալութեան պատմութիւնը» (Բ. Կիւլեսերեան, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, Անթիլիաս, 1939, էջ 489-499, 501):

[718] Կեսարիայի շուկայի (չարսու) մասին է, իսկ ավագ տոնի օրերի վերաբերյալ ասվածը հավանորեն վերաբերում է զատկական շաբաթին:

[719] Այս տեղեկությունը հետաքրքրական է նախ նրանով, որ նշում է Սսի Ս. Աստվածածին եկեղեցու՝ Զաբել թագուհու ձեռամբ կառուցված լինելու մասին: Հայտնի է, որ Զաբելը Սսում կառուցել է հիվանդանոց 1241-ին, որի մասին վկայող վիմագիր է գտնվել 19-րդ դարում (Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 222-223): Հնարավոր է, որ Ս. Աստվածածին մատուռը հիվանդանոցին կից էր: Ուշագրավ է նաեւ այդ կառույցի տեղանշումը՝ Սսի Ս. Սոֆիայի եկեղեցու արեւմտյան կողմում՝ դեպի դարպասը, այսինքն, դեպի նախկին թագավորական պալատը:

[720] Ղ. Ալիշանն իր գրքում, աղբյուրներում պահպանված տեղեկություններով հանդերձ, հատ-հատ թվարկում է Սսի 16 եկեղեցիները, որոնց մեջ չկա Ս. Վասիլ, ուստի այս վկայությամբ լրացվում է քաղաքի եկեղեցիների ցանկը (տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 222-223):

[721] Տեղեկությունը գրվել է Սիմեոն Ա Երեւանցի (1763-1780) կաթողիկոսի ժամանակ, այդ պատճառով լրացնողը չի նշել նրա աթոռակալության տարիների թիվը, եւ տեղը դատարկ է թողել:

Ց Ա Ն Կ Ե Ր

ՍԱՄՎԵԼ ԱՆԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Համա-ռոտ.	Գրչու-թյան ժամա-նակը	Գրիչ կամ լրացում-ների հեղինակ	Գրության վայրը	Հավաքածուն եւ ձեռագրի համարը	Ծանոթագրություն
Մ 5619	1176 թ.	Ավետիս	Կամրջաձոր	Մատեն., ձեռ. թիվ 5619	Հասնում է 1173 թ., լրացումներով՝ 1499 թ.
Մ 3613	1177 թ՞.	Մխիթար Անեցի	Հոռոմոս	Մատեն., ձեռ. թիվ 3613	Հասնում է 1173 թ., առանձին մատյան է
Ե1801	12-րդ դ. վերջ		Անի կամ Հոռոմոս	Երուսաղեմ, ձեռ. թիվ 1801	Հասնում է 1173 թ.
Վ511	1206 թ.	Հովհան-նես կր.	Սանահին	Վենետիկ, ձեռ. թիվ 511	Հասնում է 1173 թ.
Ե1288	1273 թ.	Մխիթար	Գետկա վանք	Երուսաղեմ, ձեռ. թիվ 1288	Հասնում է 1196 թ., աղյուսակներ չունի
Հ3	1287 թ.	Ստեփանոս քհ.	Կիլիկիա	Հռոմ, Վատիկան ձեռ. թիվ 3	Հասնում է 1271 թ.
Մ1897	13-րդ դ. սկիզբ	Հեղինակ՝ Հայրապետ վրդ.	Ենթադրաբար Անիի շրջան	Մատեն., ձեռ. թիվ 1897	Հասնում է 1173 թ.
Մ1898	13-րդ դ. վերջ	Վասիլ, հեղինակ՝ Հեթում Կոռիկոսցի		Մատեն., ձեռ. թիվ 1898	Հասնում է 1294 թ.
Մ 5596	13-րդ դ.			Մատեն., ձեռ. թիվ 5596	Հասնում է 1124 թ. (վերջից թերի է),
Մ 3681	1315 թ.	Հայրապետ, հեղինակ՝ Նաթանայել եպս.	Ուռընկար	Մատեն., ձեռ. թիվ 3681	Հասնում է 1173 թ.
Վ 959	1324 թ.	Սարգիս, Մարտիրոս		Վենետիկ, ձեռ. թիվ 959	Հասնում է 1304 թ., աղյուսակներ չունի
Վ1253	14-րդ դ.	Հակոբ	Երզնկա՞	Վենետիկ, ձեռ. թիվ 1253	Հասնում է 1301 թ.
Մ8481	14-15-րդ դ.	Հեղինակ՝ Ստեփանոս Օրբելյան		Մատեն., ձեռ. թիվ 8481	Հասնում է 1290 թ.
Ե343	1480 թ.	Ներսէս Ամասիացի	Կ. Պոլիս	Երուսաղեմ, ձեռ. թիվ 343	Հասնում է 1202 թ.
Մ 6644	1532 թ.	Եղիշե Արցախեցի	Եւդոկիա	Մատեն., ձեռ. թիվ 6644	Հասնում է 1173 թ.
Վի89	1585 թ.	Հովհան-նես աբդ. Այնթափցի	Սեբաստիա՞	Վիեննա, ձեռ. թիվ 89	Հասնում է 1346 թ., առանձին մատյան է

Մ1869	1589 թ.	Անդրեաս	Եւդոկիա	Մատեն., ձեռ. թիվ 1869	Հասնում է 1424 թ.
Մ1770	1589 թ.	Աստվածա-տուր		Մատեն., ձեռ. թիվ 1770	Հատված
Վ1734	1595 թ.	Բարսեղ Սասնցի	Ուռհա	Վենետիկ, ձեռ. թիվ 1734	հասնում է 1335 թ.
Մ1486	1597 թ.	Սահակ Երզնկացի	Բաբե՞րդ	Մատեն., ձեռ. թիվ 1486	Հասնում է 1335 թ.
Վի167	16-րդ դ.			Վիեննա, ձեռ. թիվ 167	Հասնում է 1338 թ.
Ե1221	16-րդ դ.	Դավիթ		Երուսաղեմ, ձեռ. թիվ 1221	Հասնում է 1292 թ.
Մ 6354	16-17-րդ դ.	Հովհան-նես		Մատեն., ձեռ. թիվ 6354	Հասնում է 1687 թ.
Մ6513	1608 թ.	Հակոբ Արթուն	Կ. Պոլիս	Մատեն., ձեռ. թիվ 5613	հասնում է 1161 թ., վերջից թերի է:
Մ1719	1615-1616 թթ.	Զատիք		Մատեն., ձեռ. թիվ 1719	Հասնում է 1173 թ.
Վ1246	1616 թ.			Վենետիկ, ձեռ. թիվ 1246	Թերի է, աղյուսակ-ներ չունի
Ե743	1618 թ.	Ասար Սեբաս-տացի	Իլով	Երուսաղեմ, ձեռ. թիվ 743	Հասնում է 1165 թ.
Վ911	1626 թ.			Վենետիկ, ձեռ. թիվ 911	Հասնում է 1305 թ.
Փ192	1636 թ.	Մինաս, Ստեփանոս	Ամիթ	Փարիզի Ազգային գրադարան, 192	Հասնում է 1335 թ.
Ջ207	1648 թ.	Կարապետ երեց	Եւդոկիա	Ջմմառ, ձեռ. թիվ 207	Ավարտվում է 1077 թվականով (թերի է)
Ե1553	1649 թ.	Դավիթ աբդ. Բաղիշեցի	Բաղեշ	Երուսաղեմ, ձեռ. թիվ 1553	Ա մասը չունի, Հասնում է 1326 թ.
Վ1227	1650 թ.	Զաքարիա վրդ. Սյունեցի	Հռոմ կամ Լեհաստան	Վենետիկ, ձեռ. թիվ 1227	Հասնում է 1222 թ.
Վ1023	1656 թ.	Սարգիս Եդեսացի	Ուրհա	Վենետիկ, ձեռ. թիվ 1023	Հասնում է 1348 թ., միայն աղյու-սակներով մասն է
Մ1865	1656 թ.	Թորոս եպս.	Երուսաղեմ	Մատեն., ձեռ. թիվ 1865	Հասնում է 1346 թ., աղյուսակներ չունի
Մ1484	1661-1671 թթ.	Հովհան-նես		Մատեն., ձեռ. թիվ 1484	Հասնում է 1424 թ.
Մ1717	1664 թ.	Թորոս եպս.		Մատեն., ձեռ. թիվ 1717	Աղյուսակի ավարտը՝ 1165 թ.
Մ1899	1676-1677 թթ.	Պողոս Գավառցի	Ամրդոլու վանք	Մատեն., ձեռ. թիվ 1899	Հասնում է 1335 թ.
Վ869	1683 թ.	Դավիթ Ճնճղուկ	Բաղեշ	Վենետիկ, ձեռ. թիվ 869	Հասնում է 1683 թ.

Մ1483	1688 թ.	Մկրտում Ջուղայեցի	Եւդոկիա	Մատեն., ձեռ. թիվ 1483	Հասնում է 1424 թ.
Վ288	1696 թ.	Միքայել	Եւդոկիա	Վենետիկ, ձեռ. թիվ 288	Հասնում է 1424 թ., միայն աղյուսակներով մասն է
Մ481	17-րդ դ.			Մատեն., ձեռ. թիվ 481	Հասնում է 1676 թ.
Մ1718	17-րդ դ.	Ներսես Կամենեցի	Կամենեց	Մատեն., ձեռ. թիվ 1718	Հասնում է 1202 թ.
Մ2965	17-րդ դ.			Մատեն., ձեռ. թիվ 2965	Հասնում է 1666 թ., 2 օրինակից է արտագրվել
Մ 3072	17-րդ դ.	Կարապետ		Մատեն., ձեռ. թիվ 3072	Հասնում է 1425 թ.
Մ 3965	17-րդ դ.	Ներսես	Կամենեց	Մատեն., ձեռ. թիվ 3965	Հասնում է 1735 թ.
Մ 5120	17-րդ դ.			Մատեն., ձեռ. թիվ 5120	Սկզբից թերի է, սկսվում է 1124 թ., հասնում՝ 1335 թ.
Մ 5889	17-րդ դ.			Մատեն., ձեռ. թիվ 5889	Հասնում է 1455 թ.
Մ 7261	17-րդ դ.	Մինաս	Թադեոս առաքյալի վա՞նք	Մատեն., ձեռ. թիվ 7261	Հասնում է 1702 թ.
Մ 9796	17-րդ դ.			Մատեն., ձեռ. թիվ 9796	Հասնում է 1187 թ.
Մ10200	17-րդ դ.	Սարգիս, Ամիրաս	Տրապիզոն	Մատեն., ձեռ. թիվ 10200	Հասնում է 1335 թ.
Մ10202	17-րդ դ.			Մատեն., ձեռ. թիվ 10202	Հասնում է 1692 թ.
Վ721	17-րդ դ.		Կ. Պոլիս	Վենետիկ, ձեռ. թիվ 721	Հասնում է 1173 թ.
Վ1769	17-րդ դ.			Վենետիկ, ձեռ. թիվ 1769	Հասնում է 1220 թ.
Ս42	17-րդ դ.			Սանկտ Պետերբուրգ, B 42	Հասնում է 1346 թ.
Տ93	17-րդ դ.	Կարապետ		Տյուբենգենի համալսարան, 93	Հասնում է 1423 թ.
Ե1051	17-րդ դ.			Երուսաղեմ, ձեռ. թիվ 1051	Հասնում է 1344 թ.
Ե3397	17-րդ դ.	Բարսեղ, Հովհան-նես		Երուսաղեմ, ձեռ. թիվ 3397	Հասնում է 1193 թ.
Ե783	1721 թ.	Նիկողայոս վրդ.	Արմաշ	Երուսաղեմ, ձեռ. թիվ 783	Հասնում է 1173 թ. , առանձին մատյան է
Ե69	1728-1730 թթ.	Արություն Ատանացի	Կեսարիա	Երուսաղեմ, ձեռ. թիվ 69	Հասնում է 1177 թ.

Մ482	1711-1751 թթ.		Թադեոս առաքյալի վանք	Մատեն., ձեռ. թիվ 482	Ժամանակագրության հատված՝ 1453-1734 թթ.
Ե169	1756 թ.	Բաղդա-սար		Երուսաղեմ, ձեռ. թիվ 169	
Մ 6483	1757 թ.	Բաղդա-սար երեց	Կարին	Մատեն., ձեռ. թիվ 6483	Հասնում է 1320 թ., միայն աղյուսակներով մասն է
Ե3701	18-րդ. դ.			Երուսաղեմ, ձեռ. թիվ 3701	Հասնում է 1776 թ.
Վի465	18-րդ դ.	Եփրեմ աբղ.		Վիեննա, ձեռ. թիվ 465	Թերի է
Վի65	18-19-րդ դ.			Վիեննա, ձեռ. թիվ 65	Հասնում է 1338 թ.
Վ2261	1833 թ.			Վենետիկ, ձեռ. թիվ 2261	Հասնում է 1696 թ.
Ե2170	1840 թ.	Եղիազար քհ.		Երուսաղեմ, ձեռ. թիվ 2170	
Մ10983	1849 թ.	Եղիազար քհ.		Մատեն., ձեռ. թիվ 10983	Հասնում է 1335 թ., 3 օրինակից է արտագրվել
Մ 9795	1872 թ.	Մեսրոպ արք.	Ամիթ	Մատեն., ձեռ. թիվ 9795	Փոքր հատված
Մ 6331	19-րդ դ.			Մատեն., ձեռ. թիվ 6331	Հասնում է 1187 թ.
Մ10485	19-րդ դ.			Մատեն., ձեռ. թիվ 10485	Փոքր հատված

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբաս (Կարսի թագ.) 188, 190
Աբաս (Հայոց թագ.) 172-175, 379
Աբաս (Տաշիրի թագ) 213, 222
Աբբիա 90
Աբգար 113, 115-118, 125
Աբդաս (Երուսաղեմի եպս.) 128
Աբդըլա (խալիֆա) 156, 159, 211
Աբդլմլըք (Աբդ ալ-Մալիք, արաբ խալիֆա) 151, 154
Աբեղեանք 111
Աբիղիոս (Ալեքսանդրիայի եպս.) 120
Աբիմելեք 89
Աբիուդ 91
Աբլղարիբ Հաւնունի 171
Աբրահամ (նահապետ) 80, 82, 84, 86, 87, 89, 91, 95, 103, 111, 113, 116, 150
Աբրահամ Ա Աղբաթանեցի (Հայոց կթղ.) 144, 145, 147
Աբրահամ (աթոռակից կթղ.) 298
Աբրահամ Բ (Հայոց կթղ.) 352
Աբրահամ Գ (Հայոց կթղ.) 353
Աբրահամ երեց (Ս. Անեցու թոռ) 17
Աբրահամ քհ. նահատակ 324
Աբրահամ վրդ. նահատակ 308
Աբուսահլ Արծրունի 178
Աբուսահլ (Սենաքերիմի որդի) 183, 390
Ագաթանգեղոս 25, 79
Ագամեստովր
Ագար (Հագար) 87, 149
Ագրիպպա 118
Ագրիպպինոս (Ալեքսանդրիայի եպս.) 123
Ադամ (նախահայր) 80-88, 89, 90, 113, 116, 144, 161
Ադիլ (Էդիլ) 232-234, 238, 239
Ադրամելիք (Ադրամոզան) 110
Ադրիան պապ 215
Ադրիան Ե պապ 255
Ադրիանոս կայսր 121
Ազարիա (Անանիայի աշակերտ) 155
Ազարիա (Կիլիկիո կթղ.) 323
Ազարիա (Ոզիայ) 90
Ազովր 81, 91
Աթաբակ (Ձալալի որդի) 262
Աթաբեկեանք 214
Աթանագինե 132, 224
Աթանաս պատրիարք 211
Աթենադորոս Տարսոնացի 116
Աթենացւոց թագավորներ (ցանկ) 104, 105
Աթմաճա 308
Աժդահակ 97, 110, 112
Ալադին սահիպ 257
Ալադին սուլթան 243-247, 291
Ալաւիկ Ապութորապ 169
Ալեքսանդր տե՛ս Աղեքսանդր
Ալէքս (Ալեքսանդր) կայսր 171
Ալէքս (Ալեքսիոս Ա) կայսր 196, 197, 200, 205, 214
Ալէքս (Վրաց թագ.) 290
Ալի Արմնի (ոստիկան) 166
Ալի բեկ 310, 311
Ալի պակ 357
Ալի փաշա Ձանփոլատցի 342
Ալիճախ 251
Ալինախ (Հեթում Բ-ի եղբայր) 262, 272, 273
Ալինախ (մոնղոլ) 259, 260
Ալիփաշա նուին 276, 278
Ալիքչահբան 261
Ալխազ իմիրզա 314
Ալվանտ սուլթան 304
Ալփասլան (Ալփ Արսլան, սելջուկ սուլթան) 170, 185, 190-194

Ալփի սուլթան 256, 265, 279
Ալֆիօս 114
Ախի 280
Ախսենղուտ 198
Ակէացի (տոհմ) 112
Ահարոն Ռաշիտ (Հարուն ալ-Ռաշիդ, խալիֆա) 161, 164
Ահարովն 88, 90
Ահմատ (խալիֆա) 167
Ահմատ խան 267, 282-284
Ահմատ խան (Օյիսի որդի) 286
Ահմատ սուլթան 288
Ահմատ վեզիր 315
Ահմատ փաշա 298
Ահմատ փաշա (Վանի) 341
Ահմետ փաշա 325
Ահմէտ Ա սուլթան 326, 327, 329
Ահմէտ Բ սուլթան 339
Ահմէտ Գ սուլթան 351
Ահմէտ (Պայալիտի որդի) 305
Աղաճարիք 250
Աղան Արծրունի 137
Աղապիտոս պապ 173
Աղաւրոս 84
Աղեքսանդր Բ պապ 190
Աղեքսանդր Դ պապ 250
Աղեքսանդր Մակեդոնացի 91, 93, 99, 101, 103, 111
Աղեքսանդրայ (Սաղինա)
Աղեքսանդրոս (Հռոմի եպս.) 120
Աղեքսանդրոս (Ալեքսանդրիայի եպս.) 129
Աղէքսանդր Ա (Հայոց կթղ.) 348, 349
Աղէքսանդր Բ (Հայոց կթղ.) 354, 355
Աղէքսանդրոս (Երուսաղեմի եպս.) 124
Աղէքսանդրոս (Իմերեթի թագ.) 342
Աղէքսանդրոս Մամեա 125
Աղմեղովն 84
Աղսարթան 196
Ամաթի 86
Ամառի (Ամորի, Երուսաղեմի թագ.) 219, 220
Ամատունի տոհմ 121
Ամարիայ 108
Ամբակ 84
Ամբակում 110
Ամեսիայ 90
Ամերիկոս Վեսպուճինոս 303
Ամէգաղարոս 84
Ամինադաբ 89
Ամիրատին 280
Ամիրգունա խան 331
Ամիրզա պարոն 52
Ամիր Հաճ 282
Ամիր Սարգիս 51
Ամմենովն 84
Ամովս 91
Ամր (Օմար) 150, 151, 155
Ամրամ 88
Ամրան 149
Այիոս (Երուսաղեմի եպս.) 122
Այծեամ (Անեցի) 207
Այշեխուր 281
Այջէ 261
Անագուրակ նուին 247
Անակ 126
Անակլիտոս (Հռոմի եպս.) 120
Անանիա Ա Մոկացի (Հայոց կթղ.) 173, 175, 176
Անանիա (Շիրակացի) 152, 155
Անանիաս (Ալեքսանդրիայի եպս.) 119
Անանուն (Եդեսիայի թագ.) 118
Անաստաս կայսր 139
Անաստաս Ա Ակոռեցի (Հայոց կթղ.) 152
Անաստաս վրդ. 160
Անաստաս պապ 215
Անաստասիոս պապ 138
Անատողէս 127

Անատօլա Ա 311
Անատօլա Բ 302, 306, 311
Անբերիս 84
Անդրեաս (տոմարագետ) 131, 142
Անդրեաս քի. նահատակ 329
Անդրոնիկոս կայսր 257
Անիկետոս (Հռոմի եպս.) 122
Անձեւացի (տոհմ) 112
Աննա (Աստվածածնի մայրը) 114
Աննա (Անանիա) Խայտ (հակաթոռ կթղ.) 243, 419
Անոշ (Աժդահակի կինը) 110
Անտերոս (Հռոմի եպս.) 125
Անտիգոնոս 100
Անտիոքոս Եպիփանէս 93, 94
Անտիոքոս Թեոս 111
Անտիոքոս Սովտեր 111
Անտիպատրոս 115
Անտոնինոս (Երուսաղեմի եպս.) 123
Անտոնինոս Սեւերիոս (Կաղղում) 124
Անուշաւան 109
Աշակ 264
Աշոտ Ա Բագրատունի (Հայոց թագ.) 166-168, 171, 172
Աշոտ Արծրունի 178
Աշոտ Բ Երկաթ (Հայոց թագ.) 172, 185
Աշոտ Բագրատունի (Հայոց իշխան) 153
Աշոտ Բագրատունի (մահ. 722 թ.) 157
Աշոտ Բագրատունի (այլ) 159, 163
Աշոտ Բագրատունի Մսակեր 161
Աշոտ Գ Ողորմած (Գագիկ) (Հայոց թագ.) 174-178, 185, 381
Աշոտ Դ Բագրատունի (Հայոց թագ.) 183, 185
Ապազա փաշա 330-332, 334
Ապահունյաց տոհմ 112
Ապաղա խան 250, 253-259, 267
Ապդալա (խալիֆա) 151, 159
Ապդլազիզ 151
Ապիոն (Երուսաղեմի եպս.) 122
Ապիրատ իշխան (Հասանի որդի) 181, 183, 385
Ապիրատ (Շիրակի իշխան) 221
Ապիրատ (Ներսես Շնորհալու հայր) 222
Ապլղարիպ Արծրունի 195, 196
Ապլղարիփ Պահլավունի 209
Ապլմահմատ խան 349
Ապլսուար (Աբու-լ-Ասվար, Անիի ամիր) 206, 208
Ապլտափ 169
Ապողինարես Ասիացի 123
Ապողոն 89
Ապուաբդիալա (խալիֆա) 167
Ապուբաքր ամիր 150, 151
Ապուլէթ 207, 209, 210, 212
Ապուղամր Պահլավունի 179
Ապուսահակ Մահմետ (խալիֆա)
Ապու Սայիտ խան 273, 275, 276
Ապուսէթ (ոստիկան) 164
Ապուսիճ (ոստիկան) 169-172
Ապուտէհէպ Միամատ 357
Առան 86, 87
Առաւան 110
Առաւանեան տոհմ 110, 112
Առաւեղեան տոհմ 121
Առաւնղուզ 253
Առաքել (աթոռակից կթղ.) 320
Առաքել Բաղիշեցի վրդ. 290, 292
Առաքել Դաւրիզեցի 326, 344
Առաքել (Վանականի աշակերտ) 246
Առնակ 110
Առուխ 260
Ասայ 90
Ասողիկ (Ասղնիկ, Ստեփանոս Տարոնեցի) 79, 80, 141, 152, 180, 181
Աստղիկ 82
Աստվածատուր Ա (Հայոց կթղ.) 350
Աստվածատուր նահատակ 303

Ասպուրակէս (Հայոց կթղ.) 133
Ասքանազ 86
Աւագ Բաղիշեցի 285
Աւագ (Զաքարյան) 236, 245, 248
Աւագ Սարգիս (Զաքարյան) 254
Աւգոստոս (Օգոստոս կայսր) 101, 107, 113,, 115, 116
Աւդալ խան 341
Աւդուն (Օտոն) 236, 238
Աւետիս 250
Աւետիս գրիչ 56
Աւետիս նահատակ 341
Աւետիք Բաղիշեցի նահատակ 357
Ավետիք վրդ. 347
Աւթման (Օթման ամիր) 149, 151
Աւլջա խաթուն 264
Աւնաւրիոս (Հոնորիոս) պապ 145
Աւնաւրիոս Գ պապ 238
Աւնաւրիոս Դ պապ 261
Աւրեղիանոս կայսր 139
Աւովդ 89
Ավիադին 237
Ատէաւդիոս պապ 148
Ատիլ (Նասրեդինի որդի) 307
Ատոմ (Աղթամարի կթղ.) 304
Ատոմ Արծրունի 183, 390
Ատոմ (նահատակ) 165
Ատրներսեհ (Վրաց թագ.) 171, 378
Արա Գեղեցիկ 84, 109
Արադէոն 86
Արադնան 277
Արազ խաթուն 52
Արամ 83, 84, 109
Արամ (որդի Եզրովի) 89
Արամազդ 93
Արամայիս 84
Արամանեակ 84, 108
Արբէլ 84
Արբէղ 84
Արբոկ 110
Արբուն 110
Արգիացւոց թագավորներ (ցանկ) 104
Արդէ 142
Արիոս 129, 130, 149, 150
Արիստաբուլոս 94
Արիստակէս Ա (Ռստակես, Հայոց կթղ.) 130
Արիստակէս Բ (Հայոց կթղ.) 293, 298, 299, 302
Արիստակէս Զեյթունցի վրդ.. 316
Արիստակէս Լաստիվերցի 181
Արիստակէս Խարբերդցի վրդ. 340, 442
Արիստակէս վրդ. (Տաթեւ) 342
Արծրունի տոհմ 110, 111, 137, 171, 172
Արկադէս կայսր 133, 134
Արղուն-աղա 250, 251, 255, 256
Արղուն խան 257-261, 263-266
Արղուչի 265
Արմայիս 108
Արմոգ 110
Արշակ Բ (Հայոց թագ.) 131-133
Արշակ Գ (Հայոց թագ.) 133
Արշակ (Մեծ, եղբայր Վաղարշակի) 111, 113
Արշակ (Պարսից թագ.) 120
Արշակ (Պարթեւ թագ.) 100, 101, 111, 113
Արշակ (Վաղարշակի որդի) 112
Արշակունի տոհմ 87, 100, 113, 136, 168, 234
Արշանակ 113
Արշաւիր 113
Արշէս 113
Արջամ (Արշամ) 113
Արտաշես Ա (Հայոց թագ.) 120, 121
Արտաշէս Գ (Արտաշիր) որդի Վռամշապուհի 134, 136

Արտաշէս (Արշակ Պարթեւի որդի) 111, 112
Արտաշէս (Պարսից թագ.) 93, 98, 116
Արտաշէս Երկայնաբազուկ 98
Արտաշիր (Սասանի որդի) 125, 127
Արտաշիր (Պարսից թագ.) 134
Արտաշիր (Պարսից թագ. այլ) 147
Արտաւազդ (Արտաշեսի որդի) 121
Արտաւազդ (Տիգրանի որդի) 113
Արտաւան (Պարսից թագ.) 124, 125
Արտեմ կայսր 157
Արտեմոն 131
Արփա խան 276
Արփաքսաթ 82-84
Արքեղաոս 115
Արքեղաւոս 130
Արուսեակ Բագրատունի 126, 376
Արուխ 264
Ափշին ամիր 169, 171
Ափսիմերիոս Տիբերիոս կայսր 154
Աքազ 91
Աքահայ Սելոնացի 89
Աքայաբ 90, 92
Աքիղղաս (Ալեքսանդրիայի եպս.) 129
Աքին 91

Բաբ 84
Բաբ (Տիգրանի որդի) 110
Բաբ Ռասուլ (Պապայ) 245, 248
Բաբելոնի թագավորներ (ցանկ) 94-96
Բաբիլացւոց (Ասորեստանի) թագավոր-ներ (ցանկ) 96-97
Բաբիղաս (Անտիոքի եպս.) 126
Բաբկեն Ա (Հայոց կթղ.) 139
Բագամ 110
Բագարատ (4-րդ դ.) 131
Բագարատ (թագադիր ասպետ) 111
Բագարատ իշխան 164
Բագարատ Դ (Վրաց թագ.) 190, 193, 194
Բագրատ Ե (Վրաց թագ.) 283
Բագրատ (Իմերեթի թագ.) 343
Բագրատունի տոհմ 110, 162, 168, 169, 222
Բադու (Բաթու) խան 250
Բազուկ 110
Բաթուէլ 87
Բալախան 252
Բալդուին տե՛ս Պաղտին
Բակուրան 220
Բաղդին (Պաղտին) մարաջախտ 278
Բաղդ 88
Բաղտասար (մոգ) 115
Բաղտատայ 264
Բայբուզան 279
Բաչօ (Պաչօ) նուին 246, 247, 250
Բառաք 81
Բասիլիսկոս 138
Բատօ խան 267
Բարակ 89
Բարաքէ 251, 253
Բարդուլիմոս եպս. 279
Բարդուղիմէոս առաքյալ 118
Բարիանոս (Հռոմի եպս.) 125
Բարխուղ 282, 293
Բարսամ ճգնավոր 138
Բարուք 93
Բարսեղ Ա Անեցի (Հայոց կթղ.) 191, 195, 197, 198, 203, 204
Բարսեղ (աթոռակից կթղ.) 318
Բարսեղ Կեսարացի 132
Բարսեղ Ճոն 215
Բարսեղ վրդ.. (Սեւան) 342
Բեդնա 81
Բել (Բէլ, Նեբրովք) 84, 94-96, 103, 108
Բելասիոս պապ 138
Բելես 96

Բեկթամուր 226
Բեղոքոս 110
Բենեդիքտոս Բ պապ 152
Բենեդիքտոս Ե պապ 174
Բենեդիքտոս Զ պապ 175
Բենեդիքտոս է պապ 178
Բենեդիքտոս Ը պապ 182
Բենիամին (Երուսաղեմի եպս.) 121
Բերոս 122
Բեքիարուխ (Բարքիյարուխ, Մելիքշահի որդի) 198-200, 202
Բզնունի տոհմ 108, 112
Բէր 173, 379
Բիկտոր (Հռոմի եպս.) 123
Բլաժանս (Կիպրոսի թագուհի) 252
Բխիրա 149
Բոոս 90
Բորն (Պարսից թագ.) 148
Բրիսոս 89
Բրքիշոյ 136
Բուզան ամիրա 197, 198
Բուխա (Բուղա, ոստիկան) 164, 165
Բուղա (մոնղոլ) 260-264
Բուսայիտ խան 276, 289
Բուրթէլ Օրբելեան 285
Բուրհան ղատի 283
Բօրբօն 308

Գաբաղ 111
Գաբեղ 111
Գաբեղեանք տոհմ 111
Գաբրիել (Կիլիկիո կթղ.) 355
Գաբրիել (Վրաց կթղ.) 156
Գագիկ Ա (Հայոց թագ.) 175, 179-183, 185, 384
Գագիկ Արծրունի թագ. 171-173, 202, 403
Գագիկ Բ (Հայոց թագ.) 185-187, 191, 192, 195, 196, 201, 216, 228, 395, 403
Գագիկ (Կարսի թագ.) 190, 192
Գաղղիանոս 126
Գամեր 84, 86
Գայիանոս (Երուսաղեմի եպս.) 122
Գայիոս (Հռոմի եպս.) 127
Գայիոս Յուլիոս (Կեսար) 101, 107
Գայիոս 118
Գառնիկ (Գեղամի որդի) 109, 111
Գառնիկ (ճգնավոր) 130, 139
Գասպար (մոգ) 115
Գեդեովն 89
Գեղամ 84, 108, 109, 111
Գեորգ Ա Բիւրականցի (Հայոց կթղ.) 161, 375
Գեորգ Բ Գառնեցի (Հայոց կթղ.) 129, 167, 169, 362
Գեորգ Սկեւռացի 270
Գեորգի Բ (Վրաց թագ.) 198
Գեորգի (Գուորգի) Գ (Վրաց թագ.) 216, 218, 219, 222, 223, 411
Գեորգի Լաշա 236, 239-241
Գերմանիոն (Երուսաղեմի եպս.) 123
Գերմանոս 157
Գէորգ իշխան (Հասանի որդի) 181, 182, 365, 385
Գէորգ (Լոռեցի) 195
Գէորգ (Հաղբատի առաջն.) 219
Գէորգ (սուրբ) 230
Գէորգ վրդ. Մեղրիկ 204
Գէորգ վրդ. (Սահակ Երզնկացու ուսուցիչ) 142
Գէորգ վրդ. (11-րդ դ.) 196
Գիգէս 98
Գիւտ Ա Արահեզացի (Հայոց կթղ.) 137
Գլակ 110
Գնթունի տոհմ 110, 111
Գնունի տոհմ 108, 110, 111
Գոնցա 248
Գոդոնիէլ 88

Գողթնեցի տոհմ 112
Գողձախմատ 192
Գող Վասիլ իշխան 202-204
Գոմեշտիկին ամիրա 192, 193, 398
Գոռ զորապետ 175
Գռակ 110
Գորդիանոս կայսր 125, 132
Գրիգոր Ա Լուսաւորիչ (Հայոց կթղ.) 79, 113, 128, 130-132, 134, 136, 141, 145, 147, 151, 175, 179, 203, 224, 272, 290, 352
Գրիգոր Անեցի 209
Գրիգոր Ասորի 142
Գրիգոր Աստուածաբան 83, 132
Գրիգոր (Արշարունյաց եպս.) 154
Գրիգոր Բ Վկայասէր (Վահրամ), (Հայոց կթղ.) 190-192, 194, 195, 198, 200, 202, 222
Գրիգոր (Բերդուսի տեր) 236
Գրիգոր Գ Պահլաւունի (Հայոց կթղ.) 80, 114, 195,203, 204, 208, 220, 222, 231
Գրիգոր Դ Տղա (Հայոց կթղ.) 221, 231
Գրիգոր Դ պապ 163
Գրիգոր Ե Քարավեժ (Հայոց կթղ.) 231-233
Գրիգոր Ե պապ 180
Գրիգոր Զ Ապիրատ (Հայոց կթղ.) 231-234
Գրիգոր Զեյթունցի վրդ. 344
Գրիգոր է Անաւարզեցի (Հայոց կթղ.) 267, 275, 428
Գրիգոր Ը Խանձողատ (Հայոց կթղ.) 286
Գրիգոր Ը պապ 223
Գրիգոր Թ Մուսապէկենց (Հայոց կթղ.) 289-291
Գրիգոր Թ պապ 243
Գրիգոր Ժ Մակվեցի (Հայոց կթղ.) 291, 293
Գրիգոր Ժ պապ 255
Գրիգոր ԺԱ (Հայոց կթղ.) 310, 313, 314
Գրիգոր ԺԲ (Հայոց կթղ.) 319
Գրիգոր Թոքակերի որդի 212, 213
Գրիգոր իշխան (Կիլիկիա, 15-րդ դ.) 294
Գրիգոր Խլաթեցի 287, 289, 435
Գրիգոր Կարնեցի նահատակ 346
Գրիգոր Կեսարացի վրդ. 333, 336
Գրիգոր Մագիստրոս 185, 187, 188, 190, 191, 395
Գրիգոր Մամիկոնեան (Հայոց իշխան) 152, 153
Գրիգոր Նարեկացի 178, 179, 181
Գրիգոր Նիւսացի 132
Գրիգոր Պահլավունի (10-րդ դ.) 179
Գրիգոր Պիխտ 193, 194
Գրիգոր Սկեւռացի 243
Գրիգոր վրդ. (6-րդ դ.) 144
Գրիգոր վրդ. (15-րդ դ.) 435
Գրիգոր Տաթեւացի 283, 284, 287
Գրիգոր քհ. (15-րդ դ.) 299
Գրիգոր (Քուրդիկի որդի) 162
Գրիգորիս (Գր. Լուսավորչի թոռ) 130, 131
Գրիգորիս եպս. Կարնո 275
Գուշար 112
Գուրգեն Արծրունի 178
Գուրգեն – տե՛ս Կիւրիկէ Ա
Գուրդիանոս (Երուսաղեմի եպս.) 123
Գօնդօփրէ 200, 202
Գօրգուն 283

Դադիանի (Լեւոն) 342
Դահմազղուլի խան 334
Դամասիոս պապ 131
Դանիէլ (մարգարէ) 94, 97, 114 , 166
Դանիէլ (ասորի) 135
Դանիէլ քահանայ 131
Դաւիթ Ա Արամոնեցի (Հայոց կթղ.) 157
Դաւիթ Ալաւկայ որդի 210

Դաւիթ Անհաղթ 138
Դաւիթ Անհողին թագ. 188
Դաւիթ (Աղթամարի կթղ.) 204
Դաւիթ Արքակաղնեցի կթղ. 236, 237
Դաւիթ Բ Կակաղեցի (Հայոց կթղ.) 162
Դաւիթ գրիչ 65
Դաւիթ Դ (Հայոց կթղ.) 322, 328
Դաւիթ Դ Շինարար (Վրաց թագ.) 205-208
Դաւիթ (Դեմետրէ Բ-ի որդի) 264
Դաւիթ Դվնեցի (Սուրհան) 153
Դաւիթ Ե (Վրաց թագ.) 215
Դաւիթ Զ (Վրաց թագ.) 248, 251
Դաւիթ Ը (Վրաց թագ.) 252, 254
Դաւիթ (Թամրազի որդի) 338
Դաւիթ (Իսրայէլի թագ.) 89, 90, 110
Դաւիթ (Լաշայի որդի) 239
Դաւիթ Խարբերդցի 299
Դաւիթ Կուրապաղատ 180
Դաւիթ Հոռոմաեցի վրդ. 160
Դաւիթ (Մոկաց եպս.) 174
Դաւիթ նահատակ 305
Դաւիթ (Շինարար, Վրաց թագ.)
Դաւիթ Սահառունի (Հայոց մարզպան) 146
Դաւիթ (Սենեքերիմի որդի) 183, 184, 390
Դաւիթ (Սոնաց թագ.) 265
Դաւուր ջալալի 327
Դաւփի 262
Դատ 111
Դարեհ (Պարսից թագ.) 94
Դարեհ (Պարսից թագ. այլ) 119
Դարեհ Արշամայ 99, 103
Դարեհ Վշտասպ 98
Դեբովրայ 89
Դեկոս կայսր 126
Դեմետրէ Ա (Վրաց թագ.) 206, 208, 209, 212, 213, 215
Դեմետրէ Բ Ինքնազոհ (Վրաց թագ.) 255, 257, 262, 264, 265
Դեմետրէ էրիսթավ 289
Դեմետրէ (Վրաց թագաժառանգ) 251
Դեմետրիանոս (Ալեքսանդրիայի եպս.) 124
Դեմետրիանոս (Անտիոքի եպս.) 126
Դեմետրիոս Պողիորկետես 100
Դերենիկ Արծրունի 172
Դերենիկ (Վասպուրականի թանգ.) 174
Դէոկէս 96
Դէոսկորոս (Հայոց կթղ.) 185
Դըդուշ (Մելիքշահի եղբայր) 199, 193
Դիադին 282
Դիզակղիբադ 82
Դիմակսեան տոհմ 121
Դինար ամիրա 189
Դիոկղետիանոս կայսր 127
Դիոնէսիոս (Ալեքսանդրիայի եպս.) 124
Դիոնէսիոս Կորնթացի 120, 123
Դիոնէսոս (Հռոմի եպս.) 126
Դիոս (Երուսաղեմի եպս.) 123
Դիուժէն (Դիոգենես) կայսր
Դնա 81
Դողիքիանոս (Երուսաղեմի եպս.) 123
Դոմետրիանոս 120
Դոմնոս 120
Դուկիծ (Դուկաս) կայսր 188, 190

Եաղուպ (Յաղուբ) 286, 301, 302
Եաշպատին 278
Եբեր 82, 84
Եգիպտական արքայատոհմեր (ցանկ) 102-103
Եդնա 83
Եզդի (ամիր) 287, 288
Եզդինշեր 298
Եզեկ եպս. 256
Եզեկիա 91, 136

Եզեկիէլ (Անանիայի աշակերտ) 155
Եզիթ Ա 151, 153
Եզիթ Բ 151, 157, 159
Եզր Ա Փառաժնակերտցի (Հայոց կթղ.) 148
Եզր քահանա 93
Եզրաս Անգեղացի 141
Եզրովն 89
Ելական 279
Ելտկուզ (Գանձակի ամիր) 214, 218, 219, 222
Ելխազի (ամիր)
Եկղիպիադէս (Անտիոքի եպս.) 124
Եղակիմ (Յովակիմ) 91, 97
Եղիազար (Ահարոնի որդի) 90
Եղիազար Դամասկացի 87
Եղիազար Կլայեցի (Հայոց կթղ.) 346, 347
Եղիազար վրդ. 355
Եղիա մարգարե 152
Եղիայ Ա Արճիշեցի (Հայոց կթղ.) 154
Եղինոս Պերտինաքս 124
Եղիշէ 79, 138
Եղիշէ (աթոռակից կթղ.) 304, 308
Եղիսա 86
Եղիսաբեթ 90
Եղիսաբեթ Արճիշեցի 284
Եղիսէ Ա Ռշտունի (Հայոց կթղ.) 173
Ենապակ (էլնպէկ) 279
Ենեկաս (Երուսաղեմի եպս.) 121
Ենովս 81
Ենովք 81, 82
Եպիփան Ամանտացի 90
Եպիփան Կիպրացի 83, 90, 148
Եռինե (Երինե կայսրուհի) 160, 161
Եսայի մարգարե 92
Եսայի Ա Եղիպատրուշեցի (Հայոց կթղ.) 160
Եսայի (Նչեցի) 278, 431
Եսայի վրդ. 345
Եսաւ 88
Եսեբոն 89
Եւա (նախամայր) 81
Եւագր 114
Եւգինես Ա պապ 147
Եւգինես Բ պապ 163
Եւդոքիա թագուհի 137
Եւմենես (Ալեքսանդրիայի եպս.) 121
Եւոդիոս (Անտիոքի եպս.) 118
Եւսեբիոս Կեսարացի 25, 79, 80, 83, 88, 94, 97, 98, 102, 114, 123, 129
Եւտիքիոս 137
Երանշահ (Միրանշատ) 285, 286
Երաստ 108
Երգիտեոս 111
Երեմիա (Անձրեւ) 209
Երեմիա մարգարե 93
Երեմիա (Ստեփանոս եպս.-ի հայր) 225
Երնջի 274
Երոս (Անտիոքի եպս.) 122
Երուազ 120
Երուանդ 110
Երուանդ (Հայոց թագ.) 119, 120
Եփեստոս 94
Եփրեմ (Երուսաղեմի եպս.) 121
Եփրեմ Ղափանցի 53, 348
Եփրեմ վրդ. 160
Եօնուզ 355

Զակքէոս (Երուսաղեմի եպս.) 121
Զամբրի
Զամես (Նինուաս) 109
Զապէլ թագուհի 239-241, 249, 356
Զապլուն (Հեթում Բ-ի քույր) 274
Զաւան 110
Զաւեն Ա Մանազկերտցի (Հայոց կթղ.) 133
Զաւրաբաբել 91, 93, 98

Զարեայ
Զարեհ (Ներսեհի որդի) 110
Զարեհաւանեան տոհմ 110, 112
Զարմայր 110
Զարմդուխտ (Պարսից թագուհի) 148
Զաքարէ ամիրսպասալար 232-237, 245
Զաքարէ (Ամիր) 241
Զաքարէ (Շահնշահ Ա-ի որդի) 251, 424
Զաքարէ վանահայր (Ս. Թադեի) 274
Զաքարիա Ա Ջագեցի (Հայոց կթղ.) 164, 165
Զաքարիա Ա (Աղթամարի կթղ.) 276, 285
Զաքարիա Բ (Հայոց կթղ.) 306
Զաքարիա Գ (Աղթամարի կթղ.) 293, 294
Զաքարիա (Սարգիս Զաքարյանի պապը) 237
Զաքարիա (սուրբ) 342
Զեբեդոս 114
Զեբենոս (Անտիոքի եպս.) 125
Զեկմունդ Կոստանդին 302
Զեղփ 88
Զենոն կայսր 138, 139
Զեւիղայ
Զեւքսիպոս
Զեփիւնոս (Հռոմի եպս.) 124
Զիուրա 82
Զրադաշտ մոգ 109
Զուատ 182, 183
Զուբայ 82
Զուիթ երեց 133

էաս 142
էդիլ - տե՛ս Ադիլ
էլիան 198
էլիաս պապ 136
էլխազի (Ելխազի) 205, 206
էլտկուզ - տե՛ս Ելտկուզ
էճիանոս պապ 122
էմիրտովլէթ (Ամիրդովլաթ) Մարսվանեցի 300
էջան 250, 253
էվանդ 303
էտիլ (Ֆարսախ) 297
էրմանի 51
էուբ 217

Ընծակ 110

Թագանա 260, 265
Թագղաթփաղսար 96
Թագուդար (Ահմատ) 253, 254, 257-260, 265
Թադէոս 114
Թադէոս (աթոռակից կթղ.) 304, 320
Թադէոս առաքեալ 117, 118, 128, 204
Թաթէոս վրդ. 309
Թաթուլ (ճգնավոր) 138
Թահմազ Ա շահ 286, 308, 310, 312-316, 318, 319
Թահմազ Բ շահ 352
Թաղիադին 223
Թամար Մոկացի նահատակ 285
Թամար (պարոն) 51, 52
Թամար (Սադունի կին) 257
Թամար Վրաց թագուհի, 223, 230, 237
Թամթա 237
Թամրազ (Թեյմուրազ Ա, Վրաց թագ.) 338, 344
Թամրազ (Թեյմուրազ Ա-ի թոռ) 344
Թամրազ խան 283
Թամուրտաշ 273, 275, 277, 278, 280
Թանզուբ 52
Թաւդան 256
Թաւուլ 325
Թարայ 83, 84, 86, 87, 95
Թեոդոս Ա կայսր 156

Թեոդոս Մեծ կայսր 132, 133
Թեոդոս Փոքր կայսր 136
Թեոփիլոս (Անտիոքի եպս.) 123
Թէոփիլոս կայսր 163
Թէոդորոս Ա Ռշտունի (Հայոց կթղ.) 172
Թէոդորոս Բ (Հայոց կթղ.) 282, 285
Թէոդորոս Ռշտունի (Հայոց իշխան) 148
Թէոդորոս պապ 146
Թէովնաս (Ալեքսանդրիայի եպս.) 127
Թէոփիլոս կայսր 163
Թիրաս 83, 84, 86,
Թոբել 86
Թոդա Մանկու 263
Թոմա (սուտ թագ.) 162, 163
Թոռնիկ Մամիկոնյան 189
Թովղայ 89
Թովմա Մեծոփեցի 285, 291
Թորգոմ 84, 86, 108
Թորոս Ա իշխան 201, 202, 208, 209, 216, 217
Թորոս Ա (Կիլիկիո կթղ.) 314, 316, 318
Թորոս Բ իշխան 201, 208, 210-217, 220-229
Թորոս եպս. (Կիլիկիա) 297
Թորոս (Թեոդորոս) կթղ. 198
Թորոս Թոխատեցի 318
Թորոս Լիպարենց 279
Թորոս (Հեթում Ա-ի որդի) 251, 253, 424
Թորոս (Հեթում Բ-ի եղբայր) 262, 268-270
Թորոս (Հռոմի եպս.) 123
Թորոս Հռոմկլայեցի նահատակ 302, 438
Թորոս Ուռհայեցի նահատակ 308
Թուղթում 282
Թուրքչա Պիլմեզ 328
Թոտոն 278

Իգնատիոս (Անտիոքի եպս.) 119, 120
Իգնատիոս վրդ. 223
Իզիտ – տե՛ս Եզիթ
Իլդրում (Յըլդըրմ) Պայազիտ 282, 284
Իղոն 89
Իմամ Ղուլի խան 330
Ինաւսանդ պապ 208
Ինաւսանդ Գ պապ 236
Ինաւսանդ Դ պապ 247
Ինջուղա 326
Իշտոն (Իշիտոն) 279
Իպն Դաւկլ 160
Իպրահիմ Ա սուլթան 335, 336, 338
Իպրահիմ փաշա 310, 311, 322, 325, 335
Իպրահիմ փաշա (Արզրումի) 348
Իռիոն 143
Իսահակ 83, 87, 88
Իսահակ Ահագին 355
Իսահակ նահատակ 288
Իսահակ վրդ. 349
Իսթեր 98, 99
Իսլամպակ 250
Իսկանդար – տե՛ս Սկանդար
Իսմայէլ 87, 149, 230
Իսմայէլ Ա շահ 286, 302, 304-308
Իսմայէլ Բ շահ 319, 320
Իսրայէլ Ա Ոթմսեցի (Հայոց կթղ.) 153
Իրենիոս եպս. 123
Իւանէ աթաբեկ Զաքարյան 232-237, 242, 243, 245, 248, 417
Իւանէ (Ապուլեթի որդի) 207, 209, 210, 212
Իւանէ (Վրաց իշխ. 11-րդ դ.) 191
Իւանէ (Վրաց իշխ. 12-րդ դ.) 213, 222
Իւանէ Օրբելյան 285
Իւրեգինէս (Որոգինէս) 83, 124, 125
Իփիտոս Պրաքսիւոն 105

Լալա փաշա 320

Լանկ Թամուր 282-287, 298
Լաչին (Հուսմ ադ-Դին) 269
Լաւիզ 164
Լաւիզ (Լյուդովիկոս Թ) Ֆրանս. թագ. 248
Լավանտ Սաթռճի 325
Լատինացուց թագավորներ (ցանկ) 106-107
Լեւոն Ա կայսր 157
Լեւոն Ա Կիլիկիո իշխան 201, 202, 208-211, 213, 216, 217, 234
Լեւոն Ա Հայոց թագ. (Բ Կիլիկիո իշխան) 222, 223, 226-241, 249
Լեւոն Բ (Հայոց թագ.) 250, 253-255, 257, 261, 262, 265, 272
Լեւոն Բ պապ 151
Լեւոն Գ (Հայոց թագ.) 262, 269, 270, 272, 278, 431
Լեւոն Գ (Լեոնիդիոս կայսր) 160
Լեւոն Դ (Հայոց թագ.) 274, 275, 278
Լեւոն Դ պապ 159
Լեւոն Ե կայսր 162
Լեւոն Ե (Հայոց թագ.) 281
Լեւոն ԺԷ պապ 172
Լեւոն ԺԸ պապ 173
Լեւոն ԺԹ պապ 174
Լեւոն իշխան (15-րդ դ.) 294
Լեւոն մարաջախտ 250
Լեւոն Մեծ կայսր 168
Լեւոն Փոքր կայսր 138
Լիաւն պապ 135
Լիա 88, 89
Լիդացուց թագավորներ (ցանկ) 98
Լիպարիտ (սպարապետ) 281
Լիպարիտ (Վրաց իշխան) 182, 197
Լիպարիտ Օրբելյան 266
Լիպերինոս կայսր 143
Լիպերիոս պապ 130, 131
Լիւսիայ 115
Լիւսիոս պապ 213
Լոյս պարոն 295
Լօիզ (Լուի) 213

Խաղ եպս. 132
Խալիդ աղա 276, 278
Խալիլ փաշա 331, 332
Խալիֆա Շահալի 310, 311
Խաչատուր Ա Չորուկ (Կիլիկիո կթղ.) 317, 318
Խաչատուր Անեցի 209
Խաչատուր Գ (Կիլիկիո կթղ.) 345
Խաչատուր (Հայրապետ գրչի եղբայր) 39
Խաչիկ Ա Արշարունեցի (Հայոց կթղ.) 176, 177, 179
Խաչիկ Բ Անեցի (Հայոց կթղ.) 188-191, 389
Խաչիկ վրդ. 160
Խարա Նօիա 265
Խարա Սնգուռ (Կարա-Սունկուր) 209, 213
Խարաունաս 264
Խարբանտա 270, 271, 273
Խարիպ 273
Խըզըլ (Արսլան) 202
Խիաթատին (Ղիյաս ալ-Դին) 246-248, 259
Խլիճ Ասլան 214, 220, 222, 232, 236
Խոշաք 248, 254
Խոշուռ 197
Խոռ 108, 111
Խոռեմ (Պարսից թագ.) 147
Խոռխոռունեաց տոհմ 108
Խոսրով Ա (Հայոց թագ.) 124, 126
Խոսրով (Անուշիրուան, Պարսից թագ.)
Խոսրով Անձեւացի 179, 181
Խոսրով Բ (Հայոց թագ.) 128
Խոսրով Գ (Հայոց թագ.) 133, 134

Խոսրով Շահ սուլթան 236
Խոսրով (Պարսից թագ.) 141, 142, 144, 146, 147
Խոսրով (Վռամշապուհի եղբ.) 136
Խոսրովանուշ թագուհի 175, 176
Խոսրովիդուխտ 129, 362
Խոսրոֆ փաշա 325, 332, 333
Խորիշահ 290
Խուբլու Բուղա 265
Խուբուզ սուլթան 251
Խուպիճան նահատակ 311
Խուտապանտա շահ 286, 320

Ծռվիզ - տե՛ս Նիկեփոր Ծռվիզ

Կադմոս 108, 112
Կալիստո պապ 205
Կահաթ 88
Կաղիւստոս (Հռոմի եպս.) 124
Կամբիրոս Քաղդէացի 95
Կայինան 81 , 83, 84
Կայպակ 110
Կանդաւղէս 98
Կանքարիս 88
Կաորիմոս (Ալեքսանդրիայի եպս.) 121
Կապթորիմ 86
Կասիանոս (Երուսաղեմի եպս.) 122
Կասիմ ամիր 154
Կատրամիդե (Հայոց թագուհի) 182, 387
Կար 110
Կարապետ Ա (Հայոց կթղ.) 284, 285
Կարապետ Բ (Հայոց կթղ.) 352
Կարապետ գրիչ 71
Կարապետ եկեղեցապան 308
Կարապետ Խոզագլուխ 354
Կարապետ (Կիլիկիո կթղ.) 291, 293, 300
Կարապետ (Հայրապետ գրչի եղբայր) 39
Կարաս (Կարոս) կայսր 127
Կարդոս 109
Կարին 127
Կարմիր վրդ. 174
Կաւատ Ա (Պարսից թագ.) 139
Կաւատ Բ (Պարսից թագ.) 140
Կաւատ Գ (Պարսից թագ.) 147
Կաւնոն պապ 152
Կեդրոն (Ալեքսանդրիայի եպս.) 120
Կեկրովփս երկրորդ
Կեղադիոն (Ալեքսանդրիայի եպս.) 122
Կենտուղայ 98
Կետիկ Ահմադ փաշա 299
Կետիկ Հասան փաշա 298
Կետիկ Մահմուտ փաշա 301
Կեչեղակ վրդ. 281
Կեռան թագուհի 261
Կեռսակ 239
Կերդոն Մարկիոնացի 121
Կերինթոս 149, 150
Կի (Գի դը Լուսինյան) Երուսաղեմի թագ. 223, 228, 229
Կիլամ Հաւլանդ 248, 422
Կիլամ մարկիզ 412
Կիտիիս 86
Կիրակոս Ա Վիրապեցի (Հայոց կթղ.) 290, 291
Կիրակոս (Անանիայի աշակերտ) 155
Կիրակոս Արեւելցի վրդ. 422
Կիրակոս (Գանձակեցի) 246, 249
Կիրակոս վրդ. 208
Կիրակոս վրդ (Կիլիկիա) 255
Կիրիոն (Կիւրիոն, Վրաց կթղ.) 147
Կիուկ խան 247
Կիւրեղ հայրապետ 130
Կիւրէղ Ալեքսանդրացի 137
Կիւրենիոս 115
Կիւրիկէ Ա թագ. 175, 187

Կիւրիկէ Բ թագ. 190, 197, 198, 205, 221
Կիւրղոս (Անտիոքի եպս.) 127
Կիւրոս (Պարսից թագ.) 97, 98
Կլաւդայր (Լոթար) Ա կայսր 164
Կլաւդայր Գ կայսր 209
Կլաւժան (Պէռփէռօժան), Յովհաննես Կոմնենոս կայսր 205, 208, 210, 211, 216, 217, 406
Կլեմայես պապ 196
Կլեմայես Դ պապ 252
Կլեմայես Ե պապ 255
Կլեմենտես Գ պապ 233
Կլեմէս 342
Կղաւդիոս կայսր 118, 126
Կղեմես երէց 124
Կղէմէս (Հռոմի եպս.) 120
Կղեոպա 114
Կղէոպատրայ (Կլեոպատրա) 101
Կոմանոս (Իսահակ Բ) կայսր 188
Կոմիտաս Ա Աղձեցի (Հայոց կթղ.) 147
Կոմոդոս 123
Կոնակ (Կորնակ) սպարապետ 127
Կոռնելիոս (Հռոմի եպս.) 121, 126
Կոստանդ (Կոստանդիանոսի որդի) 130
Կոստանդիանոս կայսր 128, 129
Կոստանդին Ա Բարձրբերդցի (Հայոց կթղ.) 240-243, 247, 249, 253, 426
Կոստանդին Ա Կիլիկիո իշխան 197, 200-202, 209, 216, 217, 228, 403
Կոստանդին Արծրունի 183, 390
Կոստանդին Բ (Հայոց կթղ.) 261, 262, 266
Կոստանդին (Բաղդինի որդի, թագ.) 278, 279, 280
Կոստանդին Գ Կեսարացի (Հայոց կթղ.) 270, 272, 274, 428
Կոստանդին գունդստաբլ (ավագ պարոն) 239-242, 252
Կոստանդին գունդստաբլ (Կոռիկոսցի) 274, 276
Կոստանդին Դ Լամբրոնացի (Հայոց կթղ.) 275
Կոստանդին Ե Սսեցի (Հայոց կթղ.) 281
Կոստանդին Եռինէի որդի 160, 161
Կոստանդին Զ Վահկացի (Հայոց կթղ.) 289
Կոստանդին ԺԱ Պալեոլոգ կայսր 292
Կոստանդին (Թորոս Ա-ի որդի) 208
Կոստանդին Լամբրոնացի 239, 246
Կոստանդին (Լեւոն Ա իշխանի որդի) 209
Կոստանդին Ծիրանածին կայսր 173
Կոստանդին կայսր (Լեւոնի որդի) 158, 159
Կոստանդին կայսր (Հերակլի որդի) 145, 149
Կոստանդին կայսր (Կոստանդի որդի) 153
Կոստանդին կայրս (Ռոմանոսի որդի) 177
Կոստանդին (Հեթում Բ-ի եղբայր) 262, 268, 269
Կոստանդին (Հեթումի որդի, թագ.) 280, 281
Կոստանդին Զուան (Հայոց թագ.) 278, 279
Կոստանդին (Սարվանդիքարի տեր) 252
Կոստանտոս 130
Կոստանց Խումարտաշ 236
Կոստաս 130
Կորդուացի տոհմ 112
Կորնթացւոց թագավորներ (ցանկ) 106
Կռոնակ 110
Կռոնոս 95
Կւռաթոդոռ (Թեոդորա) կայսրուհի 188
Կւռժան կայսր 176

Կուռոզի կայսր 185
Կրոյիսոս 98
Կուզ ամիրա 210
Կուտ (Բուլղ. թագ.) 180

Հաբել (եպս.) 145
Հալկամ 195
Համազասպ Արծրունի 177
Համազասպ Մամիկոնեան (Հայոց իշխան) 152
Համամ Բարեպաշտ 167
Համզա միրզա 320
Համիդ Ա սուլթան 357
Համտուն 174, 175
Հայկ Նահապետ 84, 95, 108, 111, 112
Հայկազն տոհմ 110, 111
Հայկակ 110, 112
Հայտար շահ 286, 301, 302, 320
Հայրապետ աբղ. 310
Հայրապետ գրիչ 63
Հայրապետ քհ. 59
Հասամանկլի 259, 261
Հասան (Ապիրատի հայր) 181, 385
Հասան (Ապլղարիպի հայր) 195
Հասան (Դոփյան) 262
Հասան (Վզրուկ խոջա) 199
Հասան փաշա 325-328
Հարմա 84, 108, 109
Հաւանակ 110
Հալլաչաւ 261
Հաւնունի տոհմ 111
Հաւրա 110
Հարոն 261
Հարան 304
Հարուն 151
Հաֆիզ Ահմատ փաշա 331
Հեթում Ա Հայոց թագ. 240-244, 246-255, 424
Հեթում Բ Հայոց թագ. 253, 262, 265-273, 428
Հեթում (Բաղդինի հայր) 278
Հեթում (Գր. Ապիրատի քրոջորդի) 233
Հեթում Կոռիկոսցի 40, 41
Հեթում Նղիրցի 274
Հեթում Սպիտակերեց (Աջպան) 295, 297, 298
Հեղի 89
Հեմրի (Ամորի Ա Կիպրոսի թագ.) 236
Հեռի (Հենրիխ) Ա կայսր 178
Հեռի Բ կայսր 182
Հեռի Գեր (Կիպրոսի թագ.) 247
Հեռի Ե կայսր 213
Հեռի Զ կայսր 230
Հեռի սեւաստ 236
Հերակլ կայսր 79, 145-147, 149
Հերմոն (Անանիայի աշակերտ) 155
Հերմոն (Երուսաղեմի եպս.) 128
Հերովդէս 94, 107, 113, 115, 116
Հերովն (Անտիոքի եպս.) 120
Հէշմ (Հիշան, խալիֆա) 151, 157
Հիւրկանոս (Յովնաթէս) 94
Հոյ 110
Հոռիան (Խոռիան, Պարսից զորավար) 145
Հռաքել 88
Հռիփսիմեանք 128
Հռիփսիմէ (կույս) 147
Հռութ Մովաբացի (Ամովնացի) 90
Հւգենէս (Հռոմի եպս.) 121
Հրանտ 110
Հրանուշիկ 200
Հրաչեա 110
Հուլաչու 260, 265
Հուլաւու (Հուլայու) խան 250-253
Հումա 312
Հուսէյն 282
Հուսէյն էֆենտի 334

Հուսէյն Ղարայօղլու 306
Հուսէյն շահ 349
Հուսէյն փաշա 308, 324

Ջիւնական տոհմ 111

Ղաբան 87, 88
Ղաբդովն 89
Ղազախ խան 331
Ղազան (զորավար) 264
Ղազան խան 265-268, 270, 430
Ղազար Ա Ջեյթունցի (Կիլիկիո կթղ.) 314
Ղազարիկ (Ղազար Փարպեցի) 79, 139
Ղազի (Մելիք Ղազի) 240, 241, 243
Ղամեք 81
Ղաւնղութ 259
Ղատա խան 250
Ղատինոս Սիղուիաս 106
Ղարա Եազիճ 322-325
Ղարա Յուսուֆ 286, 287, 289, 292, 298
Ղարա Պաղտօն 299, 312
Ղարաղաշ 325, 326
Ղարչղա խան 331
Ղէոնիդէս 124
Ղեւի 88-90
Ղեւի (Երուսաղեմի եպս.) 121
Ղեւոնդ Ա Եռաստեցի (Հայոց կթղ.) 140
Ղեւոնդ երեց (պատմագիր) 79
Ղզլպէկ դատավոր 292, 293
Ղըլճ Ասլան բեկ 295
Ղինոս (Հռոմի եպս.) 119
Ղիտան (Աղիդան) 285, 433
Ղովտ 86
Ղուլ 290
Ղուլի (Խուլի) 252
Ղուլօղլի 322
Ղուկաս Ա (Կիլիկիո կթղ.) 353
Ղուկաս ավետարանիչ 223
Ղուկաս Կեղեցի 317
Ղուկիոս Աւրեղիոս Կամոդոս 122
Ղուկիոս (Հռոմի եպս.) 126
Ղուռումչի 274

Ճար (Ումեկի որդի) 262
Ճաւֆրի (Սարվանդիքարի տեր) 252
Ճելայզ պապ 205
Ճէրոնիմոս 133
Ճիլարտ 214
Ճիհր Բուրզեն (Պարսից մարզպան) 146
Ճիհր Վղով (Պարսից մարզպան) 146
Ճիհր Վշնասպուհեն (Պարսից մարզպան) 146
Ճուան (Երուսաղեմի թագ.) 237
Ճուան (Կիպրոսի թագ.) 293
Ճուլիան 249, 251
Ճօշլին 236
Ճօսէ Սեֆեր 324

Մագովք 86
Մադա 86
Մաթուսաղա 81
Մաժդատինթար 261
Մաժուն 264
Մախոժ (Յիզտիբուզիտ) 141, 142
Մախսուտ բեկ 324
Մակեդոնացւոց թագավորներ (ցանկ) 99-100
Մահմատ Բ սուլթան 291-294, 299-301
Մահմատ Գ սուլթան 322, 326
Մահմատ Դ սուլթան 338, 346, 347, 352
Մահադի (խալիֆա) 151, 160
Մահմատ (խալիֆա) 162, 167
Մահմատխան 349
Մահմետ (արաբ զորավար) 154
Մահմետ (խալիֆա) 167
Մահմետ (Մուհամմեդ) մարգարե 146-151, 169, 212, 230, 257, 258, 272, 295, 301, 359

Մահմետ փաշա 324
Մահմետ Փոքր 158
Մահմուտ (Անիի ամիր) 210
Մահմուտ (սելջուկ սուլթան) 167, 170, 175
Մահմուտ (Տափարի որդի) 199
Մաղազ խաթուն 52
Մաղաղեդ 81
Մաղաղիէլ 81
Մաղաքիա Դերջանցի 313, 314
Մաղաքիա ճգնավոր 283
Մաղխազ 111
Մաղխազունի տոհմ 111
Մաճակ 281
Մամբրէ Վերծանող 141
Մամին փաշա 335
Մամլան ամիրա 180
Մամունի 211
Մայմուն (խալիֆա) 151, 163
Մանաճիհր (Գրիգոր) 141
Մանասէ 91
Մանաւազ 108
Մանաւազեան տոհմ 108, 112
Մանգու Դէմուր 257
Մանգու խան 248-251
Մանդակունի տոհմ 112
Մանեթ 102
Մանի 144
Մանիլ (Մանուել կայսր) 210-214, 221, 222
Մանիտոն 82
Մանկնոս 138
Մանսուր Օսման 293
Մանտալէ 195, 201
Մանուէլ Բ կայսր 292
Մանուչէ (Անիի ամիր) 202, 206
Մանօղլի 334
Մանօնիկ (Գրիգոր) 237
Մաշտոց Ա Եղիվարդեցի (Հայոց կթղ.) 129, 168, 169, 175
Մաւի (Մուավիա խալիֆա) 148-152
Մաւշէ (Մուշէ) Ա Այլաբերցի (կթղ. Հայոց) 139
Մաւսէ (խալիֆա) 161
Մաւրբոս Հիւթացի 83
Մաւրիկ կայսր 109, 144
Մատաթիայ 94
Մատաթիաս (Երուսաղեմի եպս.) 121
Մատթանի 91
Մատթէոս ավետարանիչ 91, 118
Մարաց թագավորներ (ցանկ) 97-98
Մարգարեներ Իսրայելի (ցանկ) 92-93
Մարդին Ա պապ 147
Մարդին Բ պապ 173
Մարթին Լութեր 306
Մարիա թագուհի 237
Մարիամ Աստվածածին 89, 113, 114
Մարիամ (Աստվածածնի խորթ քույր) 114
Մարիամ (Գագիկ Կարսեցու դուստր) 190
Մարկեղինոս (Հռոմի եպս.) 128
Մարկիանոս կայսր 137
Մարկիանոս 125
Մարկոս ավետարանիչ 118, 119
Մարկոս Աւրեղիոս Անտոնիոս 122
Մարկոս (Երուսաղեմի եպս.) 121
Մարկոս մետրոպոլիտ 191
Մարկոս պապ 129
Մարկովն (Ալեքսանդրիայի եպս.) 122
Մարտիրոս վրդ. 57
Մաքսիմիանոս կայսր 125
Մաքսիմոս (Ալեքսանդրիայի եպս.) 126
Մաքսիմոս (Անտիոքի եպս.) 123
Մաքսիմոս (Երուսաղեմի եպս.) 122
Մելքիսեդեկ Քանանացի 87

Մելիք Աշրաֆ 236, 237, 241, 244, 245, 247
Մելիք Աշրաֆ Ղաթիպա 295, 302, 303
Մելիք Աշրաֆ Ջամպլադ 305, 307
Մելիք Աշրաֆ սուլթան 267, 278-280, 301
Մելիք Հոշղատեմ 298
Մելիք Մանսուր 293
Մելիք Մեյիսէ 298
Մելիք Մօլտին 298
Մելիք Նասր 246
Մելիքշահ (սելջուկ սուլթան) 170, 194-199, 202
Մելիք Տահիր Թամղա 301
Մելիք Տահիր Ջախմախ 293, 301, 305
Մելիք Տահիր Պլպա 301
Մելիք (Տափարի որդի) 199
Մելիք Օմար 294
Մելիքսեթ Երզնկացի 318
Մելքիսեթ (աթոռակից կթղ.) 322, 327
Մեղքայ 83, 87
Մեստրայիմ (Մեծրայիմ) 83, 84, 95
Մեսրոպ Ա Արտազեցի (Հայոց կթղ.) 280
Մեսրոպ Մաշտոց 50, 135, 137, 365
Մէմնդին 279
Մըզբանոս (Երուսաղեմի եպս.) 126
Մլըք Տուղրիլ 205, 206
Մժեժ Գնունի 141, 143
Միանդակ 112
Միզրէյիլ 352
Միհրդատ 112
Միղտիադէս (Հռոմի եպս.) 128
Մինաս Ա Ակնեցի (Հայոց կթղ.) 354
Մինաս գրիչ 68
Մինաս Համթեցի վրդ. 348
Միքայէլ Ա Աջապահեան (Կիլիկիո կթղ.) 353, 355
Միքայէլ Ա կայսր 162
Միքայէլ Ա (Հայոց կթղ.) 317, 318
Միքայէլ Բ կայսր 162
Միքայէլ Գ կայսր 164
Միքայէլ Դ կայսր 184
Միքայէլ է Դուկաս կայսր 193
Միքայէլ Ը Պալեոլոգ կայսր 257, 258
Միքիա Մորստացի 91
Մլեհ (Կիլիկիո իշխան) 210, 216, 217, 220, 231
Մխիթար Ա Գռներցի (Հայոց կթղ.) 278
Մխիթար Անեցի 57, 230
Մխիթար Գոշ 237, 238, 241, 246
Մխիթար (Սասնեցի) 275
Մկրտիչ Նաղաշ 290, 298
Միմատ խան 311
Մշակ 109
Մոնոմախ (Կոստանդին) կայսր 185, 186, 188, 396
Մոսոք 86
Մովսէս (Աստուածաշնչ.) 79, 88, 90, 91, 116, 150
Մովսէս Բ Եղիվարդեցի (Հայոց կթղ.) 141
Մովսէս Գ Տաթեւացի (Հայոց կթղ.) 331-333, 441
Մովսէս Խորենացի 79, 80, 83, 94, 95, 97, 98, 109, 110, 113, 127, 137, 138, 141
Մովսէս վրդ. Երզնկացի 274
Մովսէս վրդ. (Ստեփանոս Սիւնեցու ուսուցիչ) 160
Մովրով (Գեորգի Սաակաձե) 331, 332, 441
Մսլիմ 154
Մսեհ փաշա 301
Մուրդատ 149
Մրուան (խալիֆա) 151, 153, 158
Մուզէֆէ խան 310
Մուհէմէտ շահզատէ 312
Մուշեղ (սպարապետ) 149

Մուշեղ Մամիկոնեան 160
Մուշեղ Մամիկոնյան (Թոռնիկի հայր) 189
Մուսա (Մուսի) խան 276
Մուսատ սուլթան 214
Մուսի 151
Մուստաֆա Ա սուլթան 329, 330
Մուստաֆա Գ սուլթան 357
Մուրատ Բ սուլթան 288, 292
Մուրատ Գ սուլթան 319-322
Մուրատ Դ սուլթան 330, 333, 335
Մուրատ փաշա 327, 328
Մուրատշահ նահատակ 289, 436
Մուրաց 112
Մուրթազա փաշա 333, 335
Մուքա 82
Մօր Պարսամ 136

Յաբեթ 81, 83, 84, 86, 108
Յաղներ (Եղնա) 81
Յազ 149
Յազկերտ Ա (Պարսից թագ.) 135, 136
Յազկերտ Բ (Պարսից թագ.) 137
Յազկերտ Գ (Պարսից թագ.) 148
Յակոբ Ա (Հայոց կթղ.) 253, 254, 261
Յակոբ Բ (Հայոց կթղ.) 275
Յակոբ Գ (Հայոց կթղ.) 286
Յակոբ Դ (Հայոց կթղ.) 341, 346
Յակոբ Ե (Հայոց կթղ.) 355, 356
Յակոբ Կառկառեցի վրդ. 339
Յակոբ Մծբնա հայրապետ 177
Յակոբ պատրիարք 355
Յակոբ Սանահնեցի 189
Յակոբ ստացող 65
Յակոբ վրդ. (Տաթեւ) 342
Յակոբոս Մեծ 114
Յակոբոս Տեառնեղբայր 118, 119
Յակովբ 88, 89
Յայիր 89
Յաւան 86
Յարեդ 81
Յեսու որդի Նաւեայ 88-90, 110
Յեսսէ 90
Յեսքայ 83
Յեփթայի 89
Յեքոնիայ 91
Յզմխուաստ 142
Յիսէ որդի Շեխայ 169
Յիսուս Քրիստոս 80, 86, 91, 94, 106, 113-118, 129, 135, 138-140, 142, 153, 161, 165, 171, 173, 174, 177, 180, 184, 189, 195, 196, 203, 205, 208, 211, 214, 220-223, 234, 235, 239, 249, 252, 254, 261, 262, 265, 366, 270, 274, 282, 285, 289, 298, 303, 308, 313, 341, 344-348, 345-348, 354
Յոհան Բագարանցի (Հայոց կթղ.) 145
Յոհան Մայրավանեցի (Մայրագոմեցի) 148
Յոհան (Ոհան) 142
Յոհան (Ոհան) Տիկորեցի 157, 374
Յոհան Ոսկեբերան 133-135
Յոհան Քռնեցի 279
Յոհաննէս – տե՛ս Յովհաննէս
Յովաթամ 90
Յովաբ Ա Դվնեցի (Հայոց կթղ.) 161
Յովակիմ 114
Յովակիմ (Յեքոնիայ) 91, 97
Յովաս 90, 92
Յովասափ Սեբաստացի 311
Յովել 149
Յովհաննէս Ա (Կիլիկիո կթղ.) 301, 302
Յովհաննէս Ա Մանդակունի (Հայոց կթղ.) 138
Յովհաննէս Բ Գաբեղենցի (Հայոց կթղ.) 141
Յովհաննէս Բ Թլկուրանցի (Կիլիկիո կթղ.) 302, 308

Յովհաննէս Գ Աւծնեցի (Հայոց կթղ.) 155-157, 426
Յովհաննէս Գ Քիլիսցի (Կիլիկիո կթղ.) 308, 312, 339
Յովհաննէս գրիչ 59
Յովհաննէս Դ Ովայեցի (Հայոց կթղ.) 163, 165, 386
Յովհաննէս Ե Դրասխանակերտցի (Հայոց կթղ.) 79, 129, 155, 169
Յովհաննէս Ե (Կիլիկիո կթղ.) 349
Յովհաննէս Ե պապ 139
Յովհաննէս եպս. (Հաթում Ա-ի եղբայր) 424
Յովհաննէս Զ (Կիլիկիո կթղ.) 353
Յովհաննէս Զ պապ 152
Յովհաննէս Զ Սսեցի (Հայոց կթղ.) 234, 235
Յովհաննէս է (Հայոց կթղ.) 299, 300
Յովհաննէս է պապ 153
Յովհաննէս ԺԲ պապ 172
Յովհաննէս ԺԳ պապ 173
Յովհաննէս ԺԴ պապ 174
Յովհաննէս ԺԶ պապ 179
Յովհաննէս Ժէ պապ 180
Յովհաննէս ԺԸ պապ 181
Յովհաննէս ԺԹ պապ 181
Յովհաննէս Անեցի 209
Յովհաննէս ավետարանիչ 114, 115, 120, 235
Յովհաննէս Գառնեցի 252
Յովհաննէս եպս. Սյունիքի 249
Յովհաննէս (Երուսաղեմի եպս.) 121
Յովհաննէս Կոզեռն 183, 184, 333
Յովհաննէս (Հաղբատի առաջնորդ) 220
Յովհաննէս Մկրտիչ 116, 177
Յովհաննէս Որոտնեցի 283
Յովհաննէս Չմշկիկ կայսր 176, 177
Յովհաննէս պարոն (Երզնկա) 426
Յովհաննէս Սարկաւագ վրդ. 170, 194, 200, 209, 360
Յովհաննէս Սմբատ (Հայոց թագ.) 181, 183-186, 389
Յովհաննէս վրդ. (Թադեի վանք) 353
Յովհաննէս վրդ. ստացող 63
Յովսապատ 90
Յովսեպոս պատմիչ 83, 117, 119
Յովսէ 114
Յովսէփ (Յակոբի որդի) 88, 89
Յովսէփ (նոր վկա) 220
Յովսէփ (Մարիամի ամուսին) 114
Յովսէփ Ա (Հայոց կթղ.) 137
Յովսէփ Բ (Հայոց կթղ.) 161
Յովսէփ Գ (Հայոց կթղ.) 289, 290
Յովսէփ նահատակ 161
Յովսեփ վրդ. (Աղջոց վանք) 257
Յովսեփ (Ուսեփ, Վանականի աշակերտ) 246
Յովսի (Երուսաղեմի եպս.) 121
Յովսիայ 91, 93
Յովրամ 90
Յորոբովան 90
Յուբիանոս կայսր 131
Յուդա (Երուսաղեմի եպս.) 121
Յուդա (Մակաբէ) 101
Յուդա (Մատաթիայի որդի) 94
Յուդա (Յակոբի որդի) 89
Յուդաս Գալիլէացի 115
Յուլարդստի 326
Յուլիանոս (Երուսաղեմի եպս.) 122
Յուլիանոս (Ալեքսանդրիայի եպս.) 123
Յուլիանս կայսր 131
Յուլիոս (Երուսաղեմի եպս.) 122
Յուլիոս պապ 130
Յունան 96
Յուսա 83
Յուսակ 110
Յուսիկ (Հայոց կթղ.) 131, 132-134

Յուսիկ քհ. 252
Յուսեփ (Յուսուֆ) ամիրա 169, 171, 172
Յուստիանոս Ա կայսր 140
Յուստիանոս Բ կայսր 141-143
Յուստինիանոս կայսր 154
Յուստոս (Ալեքսանդրիայի եպս.) 121
Յուստոս (Երուսաղեմի եպս.) 121
Յուսուֆ խան 331

Նաասովն 89, 90
Նաբատ 90
Նաբուզարդան 97
Նաբուքոդոնոսոր 91-93, 97, 110
Նաթանայել եպս. 50, 52
Նահապետ (Հայոց կթղ.) 347, 348
Նաշիտօն 278
Նասրդօղ ամիրա 189
Նաւատիս 126
Նարկեսոս (Երուսաղեմի եպս.) 123
Նասիֆ փաշա 328
Նասր սուլթան 275-277
Նասրեդին Թումա 307
Նաւռուզ 265, 430
Նաքովր 82-84, 86, 87
Նեեմի 93
Նեռ 132
Նեստոր 136, 137, 144
Նեստոր (13-րդ դ.) 266
Ներոն 118, 119
Ներսեհ (Առաւենա որդի) 110
Ներսեհ (Պարսից թագ.) 130
Ներսեհ Կամսարական (Հայոց իշխան) 152-154
Ներսէս Ա Մեծ (Հայոց կթղ.) 131-134, 255
Ներսէս (աթոռակից կթղ.) 304
Ներսէս Բ Բագրեւանդցի (Հայոց կթղ.) 140, 185
Ներսէս Գ Տայեցի (Հայոց կթղ.) 149, 151, 180
Ներսէս Դ Կլայեցի (Հայոց կթղ.) 195, 220, 222, 231, 232, 317
Ներսէս եպս (Անկուրիա) 294, 295
Ներսէս Լամբրոնացի 221, 232, 235
Ներսէս (Հեթում Բ-ի եղբայր) 262
Ներսես Մշեցի 431
Ներսէս Սեբաստացի (Կիլիկիո կթղ.) 337, 340, 341
Ներուաս 120
Նեփթաղիիմ 86
Նեքաւով (փարավոն) 91
Նըսր (Սբքի) ամիրա 169
Նիկաւլայոս պապ 166
Նիկաւլայոս պապ (ի կարգէ Մնուրացն) 261
Նիկեփոր Ծռվիզ 184
Նիկիփոր կայսր 161, 162
Նիկիփօռ կայսր 176, 177
Նիկօլ (Թորոսովիչ) 333, 340
Նինոս 84, 87, 95, 109, 116
Նիուաս 84
Նիւքար Մադէս 109
Նոյ նահապետ (Զրուան) 80-84, 86
Նոյեմզար 81
Նորայր 110
Նուեն 81
Նումերիանոս 127
Նուռ Ալի 305
Նուրադին (Հալեպի ամիր) 217, 231

Շահ Աբաս Ա 286, 310, 325-332
Շահ Աբաս Բ 286, 336, 341-344
Շահ Արմէն (Խլաթի ամիր) 218, 220, 224-226, 412, 414
Շահալի 293
Շահբանդա (Շահբանդին) 252, 257
Շահզատա 282

Շահակ Ա Մանազկերտցի (Հայոց կթղ.) 133
Շահին (Շահան) Չէլէպի 336
Շահիջան 340
Շահմելիք 240
Շահնշահ Ա Զաքարյան 245, 251, 253 , 424
Շահնշահ Գ Զաքարյան 51, 52
Շահնուազ խան 343, 345
Շահպանտա խան 331
Շահռուխ 285, 286, 288-291
Շահսուար 295-297
Շահսուար Ա 302, 311
Շահսուար Բ 306, 311
Շամբաթ (Սմբատ) 110
Շամիրամ 84, 87, 95, 109, 116
Շապուհ Ա (Պարսից թագ.) 127, 128
Շապուհ Բ (Պարսից թագ.) 131-134
Շապուհ Բագրատունի (պատմագիր) 79, 152, 360
Շապուհ որդի Յազկերտի 136
Շարա 108, 112
Շարամէնտ 296, 297
Շարաշան 112
Շաւարշ 110
Շէխ Հասան 276, 278
Շէխ Հասան Փոքր 277, 278
Շէխ Սոֆի 293
Շէհիթ բեկ 304
Շէնսուար 302, 303
Շիմոն քհ. 264
Շիպաուչին 257
Շիրաքօ 217
Շխիճան փաշա 335
Շմաւովն 88
Շմաւոն (Սիմոն) 119
Շմուէլ 137
Շնմզդի 287, 288
Շնոֆոր (Շնորհաւոր) նահատակ 302
Շրվանշահ Զաքարյան 52
Շուշան Կամսարական 155

Ոհան – տե՛ս Յոհան
Ոճիքէ 230
Ոյկ (Հուգո Լուսինյան) 252
Ոնիայ (Մենեղաւոս) 93, 94
Ոնորիոս կայսր 133
Ոսկան Երեւանցի 344
Ովբեթ 90
Ովբել 142
Ովսէ 92
Ովրազանկէք 340
Որդունի տոհմ 112
Որմիզդ Ա (Պարսից թագ.) 130
Որմիզդ Բ (Պարսից թագ.) 144
Ոքոզիայ 90
Որոգինէս պապ 213

Չաղաթայ 242, 245
Չանկըզ ղան (Չինգիզ խան) 239, 240, 244
Չարմաղան 244, 245
Չաքամ 296
Չիլ փաշա 328
Չօլի ամիրա 213
Չօպան (Ամիր Չոբան) 275, 279
Չորման 242, 245

Պաապիս Քաաղայ Տիտանեան 109
Պալ 300
Պալիալաւղ (Պալեոլոգ) կայսր 252, 253
Պահլավունի (Պալհաւիկ) տոհմ 87, 113, 134, 190, 364
Պաղտին Ա (Երուսաղեմի թագ.) 201, 202, 206
Պաղտին Ա (Կ. Պոլսի լատին կայսր) 235
Պաղտին Գոդի 223

Պաղտին (հայ իշխան) 236
Պաղտին (Մարաշի տեր)
Պաղտին (Յոհաննէսի որդի) 153
Պաղտին տը Պուրք 205, 210
Պաղտին Փոքր 223, 227, 412
Պաղտին (Ֆուքի որդի) 213
Պաղտօն 294
Պայազիտ Բ սուլթան 300-302, 305
Պայազիտ (Սուլեյման Ա-ի որդի) 318
Պանոս պապ 176
Պանտենոս փիլիսոփա 124
Պապ (Հայոց թագ.) 132, 133
Պապայ – տե՛ս Բաբ Ռասուլ
Պապառատին 258
Պասկալ պապ 202
Պասքամ 110, 112
Պաւղիկարպոս 122, 123
Պաւղոս – տե՛ս Պողոս
Պաւնաւֆանց Ա (Բոնիֆացիոս) պապ 140
Պաւնաւֆանց Բ պապ 177
Պաւնաւֆանց Ը պապ 267
Պաւնիոս պապ 151
Պատրոսոնիմ 86
Պարէտ 110
Պարոյր (Սկայորդու որդի) 96, 110
Պարսից (Աքեմենյան) թագավորներ (ցանկ) 98-99
Պելիան 252
Պեխ 308
Պեկպար 256
Պեռոս 188
Պետրոս (Ալեքսանդրիայի եպս.) 128
Պետրոս Ա Գետադարձ (Հայոց կթղ.) 182, 183, 185-190, 393
Պետրոս առաքեալ 117-119, 176, 195
Պետրոս երեց նահատակ 289
Պետրոս (Կիլիկիո աթոռակից կթղ.) 349
Պերճ 110
Պերոզ (Պարսից թագ.) 121
Պերոզ (Յազկերտի որդի, Պարսից թագ.) 138
Պէմունդ (Անտիոքի պրինց) 226, 235
Պէմունդ Դ (Անտիոքի պրինց) 249
Պէշգէն Օրբելյան 290
Պէտեւին 209
Պէքիր փաշա 330
Պիլարդու 262, 272
Պիխտ – տե՛ս Գրիգոր Պիխտ
Պիղատոս 116, 117, 357
Պիոս (Հռոմի եպս.) 122
Պնտուխտար սուլթան 251, 254, 256
Պողիկրապէս (Կեսարիայի եպս.) 124
Պողոս Ա Սսեցի (Հայոց կթղ.) 282
Պողոս առաքեալ 118, 119, 144, 297
Պողոս Բ Գառնեցի (Հայոց կթղ.) 288, 435
Պողոս Վարագեցի կթղ. 198
Պողոս Սամոստացի (Անտիոքի եպս.) 126
Պողքեր 137
Պոմպիս (Պոմպեոս) 94
Պոնտիանոս (Հռոմի եպս.) 125
Պուպղիոս (Երուսաղեմի եպս.)
Պռիամ 110
Պռոշ իշխան 258
Պտղոմեան թագավորներ (ցանկ) 89, 101-102
Պտղոմէոս Ղագիոս 100, 101
Պտղոմէոս Փիլիադելփոս 93, 101, 111
Պրոբոս կայսր 127
Պուտախ բեկ 302, 308

Ջաբա (Ջեբե) 235
Ջաբր 151
Ջալալ (Խաչենի իշխան) 251
Ջալալ Թորա 257, 258
Ջալալադին (Խորեզմշահ) 241

Ջալալադին (13-րդ դ. վերջ) 264
Ջալալօղլի սարդար 326
Ջալապի 256
Ջամասպ (Պարսից թագ.) 140
Ջանիբեկ 280
Ջառլ 184, 393
Ջաւջկապ 265
Ջափր (Ջաֆար) 158, 164
Ջաֆար փաշա 323
Ջէումուտին 265
Ջհանշահ (մեծ մողոլ) 286, 290-292, 295, 298

Ռաբուիա 82, 83
Ռագաւ 82, 84
Ռահաբ (Ռէքաբ) 90
Ռամատանցի 311
Ռապան Սումա 266
Ռատ 182, 183
Ռեբեկա 87, 88
Ռըստոմ (Ռոստոմ) 230
Ռիթա (Հեթում Ա-ի դուստր) 252
Ռնալտ 229
Ռշտունի տոհմ 112
Ռոբովամ (Սողոմոնի որդի) 90, 91
Ռոմանոս (Ալեքի հաջորդ)
Ռոմանոս Ա կայսր 172
Ռոմանոս Բ կայսր 174, 175, 177
Ռոմանոս Գ կայսր 184, 393
Ռոմէլոս (Ռոմեղղոս) 91, 107
Ռստոմ փադիշահ 303
Ռուբէն Ա Մեծ 196, 200-202, 209, 216, 217, 228, 403
Ռուբեն (Անտիոքի պրինց) 238
Ռուբեն (Լեւոն Ա իշխանի որդի) 208, 210, 216
Ռուբեն (Ստեֆանեի որդի) 216, 220, 222, 223, 226-229, 234
Ռուբենեանք 216, 234
Ռուճել 204
Ռուսուդան Վրաց թագուհի 239, 240, 248
Ռուքնադին սուլթան 235, 247

Սաբա (Սուբեդեյ) 235
Սաբէլ 122
Սադադին 261
Սադովկ 91
Սադուն (Արծրունի) 257, 265, 247
Սաթիպէկ 279
Սալահատին (Ուսուֆ) 217, 218, 220, 222, 223, 226, 228-230, 232, 238
Սալդուխ (Կարինի ամիր) 215
Սահակ Ա (Կիլիկիո կթղ.) 345
Սահակ Ա Պարթեւ (Հայոց կթղ.) 50, 134-137, 147, 365
Սահակ Արծրունի 159, 160
Սահակ (աթոռակից կթղ.) 330
Սահակ Բ Ուղկեցի (Հայոց կթղ.) 139
Սահակ Բագրատունի (8-րդ դ.) 159
Սահակ Գ Ջորոփորեցի (Հայոց կթղ.) 153, 154
Սահակ Երզնկացի գրիչ 66
Սահակ իսմայէլացի նահատակ 161
Սահակ (վկա) 142
Սահիպ Դիվան 253, 254, 259, 260
Սահմադին 423
Սաղաթիէլ 91
Սաղայ 82-84
Սաղմանասար 91, 92, 96
Սամրին 86
Սամուել 89
Սամուէլ Ա Արծկեցի (Հայոց կթղ.) 139
Սամուէլ Անեցի 79
Սամուէլ Մամիկոնեան 160
Սամուէլ (վկա) 142
Սամփսովն 89, 106
Սայդուլէ խան 340

Սանասար (Սենեքերիմի որդի) 110, 112
Սանատրուկ (Հայոց թագ.) 118, 130
Սանդուխտ 118
Սանուիել քի. 13
Սասան 125, 151
Սաւուղ 89
Սաւփար 169
Սարա (Սառռայ) 87, 149
Սարգիս Ա Սեւանցի (Հայոց կթղ.) 179, 183, 389
Սարգիս Բ (Հայոց կթղ.) 295, 299
Սարգիս Գ (Հայոց կթղ.) 300-304
Սարգիս Դ (Հայոց կթղ.) 307, 308, 303
Սարգիս եպս. Երզնկայի 248, 252, 256, 426
Սարգիս երեց նահատակ 305
Սարգիս Զաքարյան 233, 237
Սարգիս իշխան 149
Սարգիս հակաթոռ կթղ. 195
Սարգիս Կաֆայեցի վրդ. 350
Սարգիս Կորխեցի վրդ. 212, 213
Սարգիս Կոփեցի վրդ. 349
Սարգիս (Մայրագոմեցու աշակ.) 148
Սարգիս Շնորհալի 215, 221
Սարգիս պատրիարք 339
Սարգիս (Սյունեցի իշխան) 260, 427
Սարգիս (Սորբեցի) 286
Սարգիս վրդ. (15-րդ դ.) 294
Սարգիս քի. (12-րդ դ.) 220
Սարդանապալլոս (Թոնոս Կոնկողերոս) 96, 97, 110
Սարդիպէկ 277
Սարխաթ 250
Սարկաւագ քի. (Ս. Անեցու որդի) 17
Սարչուկ (սելջուկ սուլթան) 170
Սաֆար նահատակ 308
Սբուք (Ատրպատականի ամիր)
Սեբեոս 79
Սեբտոս 144
Սելեստիանոս պապ 213
Սելեստիանոս Դ պապ 246
Սելեստիանոս Ե պապ 267
Սելեւկիոս Նիկանովր 95, 100, 111
Սեղբեստրոս Ա պապ 129
Սեղբեստրոս Բ պապ 180
Սելեւկյան թագավորներ (ցանկ) 100-101
Սեկունդոս Պութագորեան 115
Սեմ 81, 83, 84, 86, 89, 94, 107
Սենեքերիմ 95, 97, 110, 111
Սենեքերիմ Արծրունի 178, 180, 181, 183, 184
Սեւադա 162, 376
Սեւերոս 124
Սերապիոն (Անտիոքի եպս.) 123
Սերգի 142
Սերճիոս Անտիոքացի պապ 152
Սերճիոս պապ 164
Սերուք 82, 84
Սէթ 81
Սէլիմ Ա սուլթան 305-307, 331
Սէլիմ Բ սուլթան 318, 319
Սէյիտ Խօրօն 281
Սէֆի շահ 286, 332, 334, 335
Սըմըլմօթ 253
Սիդոն 86
Սիզիանոս պապ 153
Սիզմաքոս պապ 138
Սիկոնացւոց թագավորներ (ցանկ) 103-104
Սիղուէստրոս (Հռոմի եպս.) 129
Սիմաւոն Բաղիշեցի 335
Սիմաքոս (Երուսաղեմի եպս.) 122
Սիմբլիսիոս պապ 137
Սիմէոն Ա Երեւանցի (Հայոց կթղ.) 356
Սիմէոն Ա Զեյթունցի (Կիլիկիո կթղ.) 312
Սիմէոն Բ Սեբաստացի (Կիլիկիո կթղ.) 334, 339

Սիմէոն ծերունի 116
Սիմէոն Ջուղայեցի վրդ. 342
Սիմէոն (Ռապան Աթա) 246
Սիմէոն Սյունակյաց 136, 139
Սիմոն (Աննայի որդի) 114
Սիմոն (16-րդ դ.) 319
Սիմովն որ եւ Թարոսի
Սիոն Ա Բավոնեցի (Հայոց կթղ.)
Սիսակ 112
Սիսակեան տոհմ 112
Սիրամոն 254, 256
Սիր Ադան (Ատոմ) 239, 418
Սիր Հալկամ 249
Սիրիկոս պապ 132
Սկայորդի Հայկազն 110
Սկանդար (Իսկանդար) 286, 288, 289, 298, 299, 309, 435
Սղաք 112
Սմբատ Ա Բագրատունի (Հայոց թագ.) 168, 171, 185
Սմբատ Բ Բագրատունի (Հայոց թագ.) 175, 178, 181, 182, 383
Սմբատ Բագրատունի (Խոստովանող Ապլաբասն) 162-166
Սմբատ Բագրատունի (Հայոց մարզ-պան) 144-146
Սմբատ Բագրատունի (սպարապետ) 160,161
Սմբատ Բագրատունի Բիւրատեան (Հա-յոց իշխան) 154
Սմբատ Գունդստաբլ 247
Սմբատ թագ. (Կիլիկիա) 262, 268, 269, 272, 273
Սմբատ իշխան (12-րդ դ.) 209
Սմբատ Մագիստրոս 182
Սմբատ Օրբելյան 255, 259, 266
Սմբատ Օրբելյան (15-րդ դ.) 290
Սնուն փաշա 305
Սոկրատէս (պատմագիր) 79, 373
Սողոմոն (Սաղովմովն) 90, 96, 113, 274
Սողոմոն Ա (Հայոց կթղ.) 161
Սովսարմոս 97, 98
Սովտեր (Հռոմի Եպս.) 123
Սորղան (Տօրխան) 279
Սորմակ Բարդէշ (քահանայ) 134
Սպանդունի տոհմ 111
Սպիլ (Երուսաղեմի թագուհի) 227
Սպիլ (Հեթում Ա-ի դուստր) 249
Ստեփան (Պուղտանու տեր) 315
Ստեփանոս (Հռոմի Եպս.) 126
Ստեփանոս Ա Դվնեցի (Հայոց կթղ.) 161
Ստեփանոս Առնջեցի (աթոռակից կթղ.) 300, 301, 319
Ստեփանոս Բ Ռշտունի (Հայոց կթղ.) 172
Ստեփանոս Գ Սեւանցի (Հայոց կթղ.) 175, 176
Ստեփանոս Դ (Հայոց կթղ.) 262, 263, 267
Ստեփանոս Ե Սալմաստեցի (Հայոց կթղ.) 312, 314
Ստեփանոս Ը պապ 172
Ստեփանոս Թ պապ 173
Ստեփաննոս (Աթանաս) Տարոնեցի 140
Ստեփանոս Իմաստասեր 9
Ստեփանոս եպս. 225
Ստեփանոս եպս Սեբաստիո 283, 284
Ստեփանոս Լեհացի վրդ. 347
Ստեփանոս Կոն 166
Ստեփանոս Հիզանցի նահատակ 288
Ստեփանոս Մելտինացի վրդ.. 357
Ստեփանոս Յուսկանորդի 252
Ստեփանոս Սալնաձորցի (Կիլիկիո կթղ.) 300, 301
Ստեփանոս Սիւնեցի վրդ. 157, 160
Ստեփանոս վրդ. (11-րդ դ.) 196
Ստեփանոս Օրբելյան 44, 45, 232, 270, 415, 430

Ստեփանե (Լեւոն Ա իշխանի որդի) 202, 210, 211, 214-216, 200, 222, 223, 226, 228, 229, 234
Ստեֆան Պօվայտ 299
Ստիֆար 318
Սրապիոն Ուռհայեցի (Հայոց կթղ.) 325
Սուլեյման (Սէֆի) շահ 286, 344, 345
Սուլեյման Ա սուլթան 307-314, 316, 317, 319
Սուլեյման Բ սուլթան 347
Սուլէման խան 276
Սուլթանշահ 438
Սուլիման (խալիֆա) 157
Սուլիման (սելջուկ սուլթան) 192, 198, 200
Սուլիման (քուրդ) 217
Սուլուպէկ 278
Սուչման 243, 244
Սուր 110
Սուրիոս 304
Սուրմակ եպս. 134, 136
Սքէնտէր տանուտեր 342
Սօղովմե (Աննայի ամուսին) 114
Սօղրաթմիշ 285
Սօֆի Մուրատ 305
Սֆըտին – տե՛ս Ադիլ

Վալենտիանոս պապ 163
Վակոն (ելուզակ) 113
Վահագն (Տիգրանի որդի) 110, 112
Վահան Ա Սիւնեցի (Հայոց կթղ.) 175
Վահան Ամատունի 131
Վահան Արծրունի 159
Վահան Գողթնեցի 157
Վահան Կամսարական 155
Վահան Մամիկոնեան 139, 141
Վահէ 111
Վահրամ Զաքարեան 237
Վահրամ Թափիչ 240, 418
Վահրամ Պահլավունի 179
Վահրատ փաշա 311
Վահունի տոհմ 110, 112
Վաղարշ (Պարսից թագ.) 122
Վաղարշ (Պերոզի եղբ., Պարսից թագ.) 139
Վաղարշակ (Հայոց թագ.) 111-113, 124, 126
Վաղարշակ (Պապի որդի) 133
Վաղեգիոս Պերոզ (Պարթեւ թագ.) 122, 123
Վաղենտիանոս կայսր 132
Վաղենտինոս 121
Վաղերիանոս կայսր 126
Վաղէս կայսր 132
Վաղթանկ (Վրաց թագ.) 264
Վաղոսիանոս 126
Վայիս (Ուվեյս) սուլթան 280, 282
Վան 111
Վանական վրդ. 241, 246, 249
Վաշտակ 110
Վասակ Մամիկոնեան 143
Վասակ (Բարսեղ Ա կթղ.-ի հայր) 197
Վասակ (Գրիգոր Մագիստրոսի որդի) 191
Վասակ Պահլավունի 187
Վասակ Սյունի 138
Վասիլ Ա կայսր 167, 168, 178
Վասիլ Բ կայսր 177, 179-184, 389, 393
Վասիլ դպիր 41
Վասիլ մարաջախտ 279
Վարազդատ (Հայոց թագ.) 133
Վարաժ 119, 111
Վարաժնունի տոհմ 109, 111
Վարբակէս Մեդացի 96, 97, 110
Վարդ (Համշենի պարոն) 293
Վարդ (Հայոց մարզպան) 141, 143
Վարդան Արեւելցի 246, 252, 255, 270
Վարդան Բաղիշեցի վրդ. 347

Վարդան Հաղբատեցի 249
Վարդան Մամիկոնյան 137, 138
Վարդան (Վարդ Փոկաս) 179, 184
Վարդանանք 138, 229
Վարդուկ վրդ. 174
Վարք պատրիկ 148
Վարոս 138
Վեհմիհր Շապուհ 136
Վեսպիանոս կայսր 119
Վեստ Արծրունի 183
Վեստ Սարգիս 183, 187, 395, 396
Վէգեն (Վիգեն) իշխան 220, 222, 409
Վէլիթ բեկ 304
Վէքէ 293
Վիդելիանոս պապ 147
Վլիթ (Վալիդ, խալիֆա) 151, 155, 158
Վիքտորիոս պապ 197
Վռամ (Պարսից թագ.) 136, 137
Վռամ Կրման (Պարսից թագ.) 135
Վռամշապուհ (Հայոց թագ.) 134, 136
Վստամ 110
Վրդանէս եպս. 300
Վրթանէս (Հայոց կթղ.) 130, 131
Վրթանէս Քերթող 144

Տաթար 256
Տահիր 284
Տանա 89
Տանգրի 204
Տաւտան 110
Տարսաիճ Օրբելյան 259, 266, 430
Տարսաիճ Օրբելյան (14-րդ դ.) 285
Տափար 199
Տեղեսփորոս (Հռոմի եպս.) 121
Տէառնթագ 138
Տիբեր Ա կայսր 116, 117
Տիբեր Բ կայսր 144
Տիգրան (Երուանդեան) 110
Տիգրան (Արտաշեսի որդի, Հայոց թագ.) 113, 122
Տիգրան Մեծ 168
Տիգրան Հայկազն 97, 98
Տիգրան (Հոնենց) 384
Տիմոթեոս 139
Տիմունդ (Բոհեմունդ) 232
Տիտոս կայսր 119
Տիտոս Անտոնինոս 122
Տիրան (Արտաշեսի որդի, Հայոց թագ.) 121
Տիրան (Հայոց թագ.) 131
Տիրան (Տիգրանի որդի) 110
Տիրանոս (Անտիոքի եպս.) 128
Տիրատուր (Կիլիկիո կթղ.) 323
Տիրացու եպս. 430
Տմըշխ խոճա 275
Տմուրիս (բամբիշ - թագուհի) 98
Տովբիաս (Երուսաղեմի եպս.) 121
Տրայիանոս կայսր 120
Տրդատ (Անանիայի աշակ.) 155
Տրդատ (Հայոց թագ.) 127-130
Տրդատ Ա Ոթմսեցի (Հայոց կթղ.) 155, 157, 158
Տրդատ Բ Դասնավորեցի (Հայոց կթղ.) 159
Տրդատ վարդպետ 385
Տրունի տոհմ 121
Տուղլուբէկ (Տաւղրիլ, սելջուկ սուլթան) 170, 190
Տուրզու Հոռոմ 308
Տուրղար Իրլի 311
Տուրք Անգեղ 112
Տուրքիկ վրդ. 237

Ռիփաթ 86

Ցոլակ 108

Ուզուն Հասան 286, 295, 298, 299
Ուլուբեկ 285
Ուղայուն 250
Ուճան 264
Ումեկ 252, 253
Ուրբանոս (Հռոմ եպս.) 125
Ուրբանոս Ա պապ 198
Ուրբանոս Բ պապ 223
Ուրբանոս Դ պապ 251
Ուրուկ խաթուն 266
Ուրուստամ 309

Փաբիանոս (Անտիոքի եպս.) 126
Փաղեկ 82
Փառնակ 110
Փառնաւազ 110
Փառներսեհ Աշտիշատցի (Հայոց կթղ.) 131
Փաւոս 110
Փաւստոս Բուզանդ 79
Փատլուն (Անիի ամիր) 206, 207, 210
Փատլուն (Գանձակի ամիր) 193, 195, 197
Փարախ 254
Փարեհ 89
Փարոխ 108
Փարուանա 256
Փելայ փաշա 324
Փելաւտոնոս 89
Փելիքս (Հռոմի եպս.) 127
Փենեհեզ 142
Փերուրի 115
Փէճ (Ֆերդինանտ Ա) 312, 318
Փիլարտոս (Վարաժնունի) 180
Փիլիկոս Վարդան 155
Փիլիմոն 89
Փիլիպ (Հայոց թագ.) 239-241
Փիլիպոս Աղբակեցի (Հայոց կթղ.) 333, 335, 339-341
Փիլիպոս (Անտիոքի եպս.) 125
Փիլիպոս (Երուսաղեմի եպս.) 121
Փիլիպոս կայսր 125
Փիլոն Աղեքսանդրացի 118
Փիլոն վրդ. 154
Փիլոն Տիրակացի 373
Փիր Ալի 282
Փիր էհմէտ պէկ 294
Փղաբիանոս (Ֆլավիանոս) 137
Փղեգոն 117
Փոլատ 248
Փոկաս կայսր 145
Փոտ (պատրիարք) 167

Քալպի Ալի խան 335
Քահանայապետք Իսրայելի 92-94
Քաղաթու խան 266
Քաղարթ (Քըղըրթ) 149, 151
Քամ (Տիտան) 81, 83, 84, 86, 94, 95-97
Քայղաթու 261
Քանան 86, 111
Քասղնիիմ 86
Քաքայուզ 238, 239
Քեղայո խան 282
Քեմիլ 243-245, 247
Քետէիմ 86
Քետուրայ 87
Քէրէզ 303
Քիյիրօղլի 322
Քիթպաւղա 251
Քուշ 84, 95
Քսեստոս (Հռոմի եպս.) 121, 126
Քսերքսէս 98
Քրիստափոր Ա (Հայոց կթղ.) 140
Քրիստափոր Բ (Հայոց կթղ.) 148
Քրիստափոր վրդ. 56
Քրիստափոր Կօլումպ 303
Քրիստոս – տե՛ս Յիսուս Քրիստոս

Քուռաթ (Կոնրադ Գ) կայսր 212, 213, 407
Քուռաթ (Կոնրադ Դ) կայսր 250
Քուրետին 242, 419

Օգոստինոս 135
Օգոստոս – տե՛ս Աւգոստոս
Օգջա (Կօկճա) նահատակ 310, 311
Օթման – տե՛ս Աւթման
Օմառ 151
Օմար (Լանկ Թամուրի թոռ) 285
Օյիս խան 283, 286
Օշին թագ. (15-րդ դ.) 302
Օշին (Հայոց թագ.) 262, 272-275, 430, 431
Օշին իշխան (Արցախ) 195
Օշին պայլ 274, 276
Օշին սինեգալ 272
Օսման 246, 291
Օսման Բ սուլթան 329, 330
Օսման փաշա 322
Օրբելեան տոհմ 255, 266, 433
Օքուզ Ահմատ փաշա 329

Ֆախրատին 239
Ֆահրատ փաշա 322
Ֆաւդոս 145
Ֆէրաղաթին 295
Ֆիլիքս Ա պապ 131
Ֆիլիքս Բ պապ 137
Ֆիլիքս Գ պապ 139
Ֆիմի 249
Ֆրանկի 328
Ֆրտրիկ (Ֆրիդրիխ Ա Բարբարոսսա) կայսր 212, 213, 230
Ֆրտրիկ (Ֆրիդրիխ Բ) կայսր 238, 243, 247
Ֆուք (Ֆուլկ, Երուսաղեմի թագ.) 210, 213

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ագուլիս 329, 351
Ադեմ 86
Ադռաս 110
Ադրիանապոլիս (Ատրանա, Էդրիներ) 53, 162, 307, 348
Ազազ 354
Ազախ (Ազով) 336, 337
Ազիազոն (Մուտառային) 342
Ազրաթ բերդ 310
Աժդանական 110
Ալաման (Գերմանիա) 303, 346
Ալամուդ 250, 423
Ալաշկերտ 325
Ալատաղ 256, 258, 261
Ալիւս գետ 158
Ախալցխա 291
Ախլքաղաք 190
Ախուրյան գետ 178
Ակներ վանք 233, 239
Աղեքսանդրիա (Սկանտարիա) 100, 101, 103, 118, 119, 124, 125, 129, 139, 219, 280, 301, 409
Աղթամար 148, 172, 173, 204, 276, 285, 294, 300, 304
Աղի ծով (Ուրմիա) 265
Աղձնիք 109
Աղսարայ բերդ 294
Աղրիպու բերդ 295
Աղց 433
Աղուանք 110, 112, 130, 131, 167, 185, 195, 241, 244, 350
Աղքիրմէ (Ակերման) 301
Աղտս 148
Աղւոյովիտ 150
Աղփագ (Աղբակ) գավառ 165
Ամասիայ 306, 312, 318, 323, 324
Ամարաս 130
Ամերիգա (Նոր Աշխարհ) 303
Ամիթ (Համիթ) 139, 149, 192, 205, 243, 244, 246-248, 290, 298, 306-308, 317, 322, 324, 325, 327, 328, 330, 335, 348, 356
Ամյուկ (Ամկոյ բերդ) 287
Ամովպողիս 94
Ամուտա բերդ 210, 211
Այաս 275, 296
Այլուխ 309
Անաստապալիս 139
Անարզաբա (Անաւարզա) 174, 201, 211, 214, 215, 272, 296
Անբերդ 233, 235, 285, 433
Անգեղատուն 110, 112
Անդրիուն բերդ 194, 399
Անենք 152
Անթապ (Այնթապ) 339, 345, 350, 351, 354, 356
Անի 39, 59, 175, 177, 178, 180, 182, 185-188, 190, 191, 198, 202, 206, 208, 209, 215, 218, 222, 234, 235, 245, 246, 258, 392, 402, 411, 444
Անկղ 163
Անկուրիա 294, 330
Անյուշ բերդ 133
Անձեւաց աշխարհ
Անտիոք 118, 119, 136, 141, 175, 188, 191, 197, 198, 200, 201, 204, 209-211, 221, 222, 226, 229, 232-235, 238-241, 249, 254, 265, 296, 301, 355, 410
Անց Յակոբայ 220
Անցմկցա կամուրջ (Սիս) 294
Աշնակ ավան 218, 408
Աշոցք 112
Աշտարակ գյուղ 374
Աշտարակք գյուղ 140

Աշտիշատ 131
Աշրաֆ քղք. 332, 344
Ապահունիք 180
Ապարանից վանք 174
Ապլասթան (Ապլստան) 256, 313
Ապնաք 309
Առան տե՛ս Աղուանք
Առիւծ բերդ 201
Առճեասա դաշտ 196
Ասիաստան
Ասիա (Ասիաստան) 95, 109, 134
Ասխալա (Ասկալոն) 215, 216, 228, 229, 245, 248
Ասղունից (Աստղունից, Կարճկօնից) բերդ 225
Ասմալ բերդ 301
Ասորեստան 85, 96, 97, 109, 110
Ասորիք 142, 158, 162, 163, 192, 282
Ասպահան – տե՛ս Սպահան
Աստարապետ 344, 351
Ասֆեր 138
Ատանա 209, 210, 270, 275, 277, 296, 311
Ատիմաճա բերդ 310
Ատրպահական (Հատլպեճան) 325, 326
Արաբիա (Արապստան) 147, 307
Արագած 108
Արագածոտն 161, 374
Արակլիա (Հերակլիա) 174, 294, 295
Արամուն 157
Արայրադ (Արարադեան աշխարհ) 108, 237, 242, 285, 288, 335, 337, 347
Արասուս գավառ 233
Արգի 142
Արգինա 177
Արեբան քղք. 118
Արենի (Արագածոտնում) 195
Արզրում տե՛ս Կարնոյ քղք.
Արիաստան 95
Արծափ 151
Արծկէ 280, 281, 287, 289, 304, 315, 326, 436
Արծն քղք. 188
Արկադուպոլիս 162
Արկղնի (Արկնի) 188
Արձն գավառ 112
Արճես (Արճեշ) 147, 236, 250, 255, 258, 284, 287, 289, 310, 313, 315
Արմաւիր 108, 109
Արշարունիք 132, 138, 154, 173
Արջո Առիճ 392
Արսուֆ 255
Արտազ 258, 282
Արտաշատ 120, 133
Արտաւազ գաւառ 134
Արտաւիլ 237, 304
Արուճ 152
Արքակաղնի (Խճկտոր) ուխտ 233
Արքու գյուղ 153
Ափխազք 222, 251, 254, 256
Ափրիկա (Աֆրիկա) 110, 135, 212
Աքադ 85
Աքքա (Ակրա) 202, 221, 229, 230, 245, 255

Բաբելոն 85, 93, 96, 99, 100, 108, 111
Բաբերթ (նաեւ՝ Սմբատաւան) 302, 313-315, 378
Բագավան (Բագուան, Ուչքիլիսէ) 154, 159, 349, 445
Բագարան 145
Բագնայր 182
Բագրեւանդ 132, 141, 154, 353
Բալու 327
Բակտրոն 85
Բաղաղա 286
Բաղէշ 226, 247, 282, 285, 287, 288, 313, 335, 341, 348, 357

Բաղի 111
Բաղտատ (Բաղդատ) 155, 158, 176, 183, 247, 248, 250, 252, 257, 266, 267, 283, 284, 295, 298, 310, 327, 330, 331, 333-335
Բաջիբաթիար 340
Բասեան (Բասեն) 124, 226, 314, 315
Բասենոյ հովիտ 112
Բասրա 169
Բարձրբերդ (Կիլիկիա) 239, 240, 268, 296
Բարքուշատ 235
Բեդղէհեմ 115
Բեդրինա գյուղ 140
Բեթիր 309
Բեհեսնի 204
Բերդաձոր 173
Բերդուս (Կիլիկիա) 236
Բերկրի 184, 252, 258
Բզնունիք 150, 289
Բզնունեաց ծով 154
Բիւզանդիա 162, 188, 268, 355
Բիւզու 162
Բիւթանիայ 116, 117, 156
Բիւրիտոն 177
Բջնի 233, 235, 283
Բուլղարիա 162, 180, 182
Բուխարա 158
Բուրսա 246, 291, 294

Գագ 208, 219
Գադիրոն 86
Գազա 86
Գալիգերար 86
Գալլիա 116, 123, 130
Գաղատիա 352
Գամաղիէլի վանք 289
Գամբանիա 147
Գամիրք 142
Գանձակ (Գանճայ) 164, 195, 197, 199, 212, 213, 244, 322, 326, 327, 335, 351
Գանձասար վանք 251
Գանջէնք 213
Գառնի 109, 129, 151, 167, 241, 283, 362
Գառնո ձոր 135, 366
Գարդաքու բերդ 265
Գեղ (լեռ) 108
Գեղարդի վանք 346
Գեղարքունիք (Գեղամա) գավառ 274, 304, 350
Գեղարքունի (շեն) 108
Գեղարքունւոյ (Գեղամա) ծով 108, 154, 168
Գետակ (Գետիկ) վանք 237, 238
Գետարգելի վանք 346
Գետոց վանք 135, 181
Գիլան (Կիլիա) 292, 310, 325
Գոգարչինլուկ դաշտ 327
Գողգոթա 300
Գողթն 110
Գողթնյաց խաս 351
Գոմոր 86
Գոտող վանք 366
Գուգարք 156

Դաղմատիա 146
Դամասկոս (Դմիշկ, Դմշխ) 83, 149, 154, 200, 213, 214, 233, 242, 251, 256, 270, 283, 307, 419
Դամուր-Ղափու 320
Դաշտ 341
Դառն դաշտ 258
Դասնավոր 159
Դարբանդ (Դերբենդ) 157, 263
Դարգազի 333
Դարպսակ (Կիլիկիա) 245
Դեգիս գավառ 163

Դերջան 313-315
Դիարբեքիր (Տիարպէքիր) 306
Դիպիւրդեն 147
Դլմաց աշխարհ 169
Դմանիս 209
Դպրէվանք 173
Դւին 140, 146, 149-153, 157, 160, 161, 169-172, 202, 217, 219, 220, 222, 235, 259
Դրազարկ (Կիլիկիա) 201, 208, 215, 216, 222, 227, 232, 254, 261, 273, 274
Դրուց աշխարհ 183

Եամանու երկիր 309
Եասսի Ջիմէ 124
Եգիպտոս (Մսր) 84, 85, 88-90, 95, 101, 102, 115, 198, 211, 217, 219, 228, 235, 236, 244, 251, 254, 256, 257, 265, 267, 273-278, 281, 282, 287, 293, 295, 296, 298-303, 305-307, 345
Եդեսիա - տե՛ս Ուռհա
Եզնիկ 309
Եթովպիա 142
Ելիոն – տե՛ս Իլիոն:
Եկբատան 97
Եկեղեաց գավառ 256, 262
Եղեգիս 285
Եղիպատրուշ 160
Եվրոպա 194
Երազգաւորս – տե՛ս Շիրակաւան
Երան (Իրան) 239
Երապոլիտացւոց նահանգ 123
Երասխ 108, 109, 120, 235, 325
Երեւան 152, 182, 316, 320, 321, 325, 326, 329, 334-336, 341, 349, 351, 352, 440
Երզնկա (Եզնկա) 220, 221, 239, 244-248, 250, 255-257, 261, 263, 271, 275, 277, 278, 280, 281, 290, 292, 293, 300, 301, 304, 314, 319, 321, 322, 426, 440
Երնջակ 283-285, 351
Երուանդայ քղք. (Երվանդաշատ) 120
Երուսաղէմ 87, 90, 94, 97, 98, 110, 113, 115-117, 119, 130, 140, 145, 147, 148, 155, 164, 176, 177, 181, 184, 200, 202, 203, 205, 206, 210, 213, 215, 219, 220, 233, 226, 228-231, 238, 242-247, 251, 278, 280, 282, 284, 303, 307, 339, 340
Եփեսոս 136, 137
Եփրատ 162, 299, 317

Ջարտալ 309
Ջեյթուն 312, 313, 316, 344
Ջիլիֆքու բերդ 298
Ջուպատիր քղք. 163

Էաս 255
Էյտուս բերդ 309
Էջմիածին – տե՛ս Վաղարշապատ
Էվլէն 311
Էվնիկ բերդ 310
Էրմենիկու բերդ 298

Ըրչի 309
Ըսկուտար (Սկյուբար) 309

Թաբօր լեռ 117, 156
Թագաւորաշէն (Կիլիկիա) 277
Թաթարստան (Դադարստան) 329
Թալին 159
Թաւբլուր 191, 389
Թավրէժ (Թավրիզ) 265, 279, 282, 283, 285-287, 289, 304, 310, 313-315, 322, 323, 325-328, 334-336, 351, 352
Թարմար-Թարախջա 309
Թարսիս 110
Թաքրտաղ 353

Թեբաիս 89
Թէճպալա 309
Թէմոն 293
Թըլխմօ 205
Թիլ 167, 214, 215, 222, 227, 255, 267
Թիֆլիզ – տե՛ս Տփխիս
Թկրիթ 217
Թորդան 130, 139, 245
Թրակ (Թրակիա) 127, 200, 214
Թուգամի 309
Թուխուրկա 336
Թումարզա 333-336
Թօխաթ 299, 300, 305, 313, 320, 323, 325, 332, 333, 335, 342

Իզնիկ բերդ 293
Իլախաց երկիր 314
Իլի վանք 173
Իլիոն (Ելիոն, Մաստուսիա, Տրոյա) 86, 89, 96, 103
Իլով (Լվով) 333-340
Իկոնիա (Կոնիա) 214, 222, 231, 232, 236, 318, 411
Ինաքիայ աշխարհ 104
Իսաւրիա տե՛ս Սաւրիա
Իստենիկ բերդ 309
Իսրայէլ - տե՛ս Հրէաստան
Իտալիա 119, 143, 302

Լամբրոն 195, 222, 226, 231, 233, 239
Լասա 86
Լաւռէ (Լօռի) 202, 245, 256
Լատիկ 221
Լատուն 287
Լեհ (Լահաստան) 333
Լեւոն բերդ (Լամբերդ) 296, 336
Լեւքօշէ 319
Լիոն 243
Լիսանկա (Կիլիկիա) 252
Լուլվա բերդ (Կիլիկիա) 238

Խախ 262
Խաչեն 213, 249, 251
Խառան 87, 153, 155, 245, 247
Խաւտանէք 214
Խարբերդ 244, 256, 299, 327, 340, 438
Խլաթ 226, 232, 237, 240-245, 255, 258, 279, 313, 315
Խնուս 314, 315, 326
Խոզան 163
Խոյ 325, 351
Խոր Վիրապ 290
Խորազմ 241
Խորասան 169, 190, 194, 197, 198, 206, 214, 218, 241, 254, 256-259, 265, 289, 292, 306, 310
Խորին վանք (Խորնի) 252, 262
Խցաձոր 329
Խցկուն (Խծկոնք) 17, 183
Խուժաստան 133
Խունան 209
Խուշկառ 345

Ծաղկոցաձոր (Անի) 178
Ծաղկոցաց գավառ 336
Ծամնդավ 187
Ծառաքար վանք 183
Ծար 283
Ծով ամրոց 222
Ծոփք 109, 112, 130

Կախեթ 335, 343, 344
Կաղզվանա ձոր 174
Կամախ 162, 250, 276, 279, 284, 306
Կամէնեց 314
Կամրջաձոր 56, 173
Կայենո բերդ 245
Կայկաղ (Կակաղ) գյուղ 162

Կանա գյուղ 346
Կանգար 112
Կապաքովկիա 323
Կապան բերդ (Կիլիկիա) 238, 239, 268, 315
Կապուտքար 173
Կառկառ 339
Կասբից դրունս 281
Կաստաէոն 197, 201
Կարբի 283
Կարնոյ քղք. (Արզրում) 148, 159, 161, 162, 174, 225, 226, 235, 240, 243-246, 249, 275, 314, 315, 326-328, 330, 332, 346, 348, 350, 354
Կարմիր ծով 85
Կարմիր վանք 202
Կարմիրովիտ 205
Կարս 173, 236, 237, 245, 347, 444
Կարքեդոն 89
Կաֆա 295, 299, 300, 314, 326, 328, 329
Կեղի 314, 315
Կենդռոսկո (Կիլիկիա) 195, 196, 201
Կեչառուս 258, 385
Կեսարիա (Մաժաք) 109, 124, 128, 176, 191, 192, 224, 231, 247, 256, 268, 299, 301, 312, 324, 325, 333, 354, 356
Կեսարիա (Պաղեստինում) 116, 202
Կէմէրեկ (Կամարակ) 342
Կիզիստռո բերդ 196
Կիլիկիա 59, 89, 140, 162, 180, 195, 198, 201, 210, 211, 214, 216, 220, 222, 226, 228-234, 241, 243, 246, 253, 255-257, 261, 266, 267, 269, 270, 272-278, 311, 355, 406
Կիւրինե 89
Կիպրոս 148, 236, 244-248, 252, 273, 293, 319
Կղէսուր 112
Կոգովիտ 145
Կոզեռն (թաղ Երեւանում) 333
Կոխք (Գողք) 181
Կողբ 148, 283, 370
Կոռվա բերդ (Կիլիկիա) 296
Կոստանդնուպաւլիս (Ըստամպոլ) 129, 130, 133-136, 140, 143, 156, 167, 173, 176, 188, 190-192, 194, 200, 210, 211, 213, 215, 216, 235, 236, 253, 268, 269, 281, 291-293, 295, 301, 305-309, 312-315, 318, 327-330, 332, 334, 339, 340, 345, 346, 355
Կոստանդնուպոլսի Ոսկե դուռ 162
Կովկաս 112, 343
Կոտայք 157, 163, 164, 336
Կոտման 235
Կոռմոզոլո բերդ 196, 216
Կոպիտառա (Կոսիտառռ) բերդ 196, 231, 232, 296, 297
Կռոմանա ջուր 240
Կրիտ (Կրետե) 336, 337
Կուր գետ 235, 253, 262, 264
Կօլանճէ Հիսար 294
Կօկիսոնի բերդ 294, 306
Կօմրկեն 342
Կօռիկոս 256, 274, 275

Հալեպ (Բերիա) 174, 198, 217, 221, 243, 245, 247, 249, 251, 257, 276, 277, 296, 299, 304, 307, 326, 339, 345, 349, 350, 353, 354, 356, 357
Հաղբատ 174, 175, 197, 202, 209, 212, 213, 219-221
Հաճն 307, 349, 353
Համատան 292, 333, 350, 351
Համբայ ջուր 283
Համպատ 243
Համսա դաշտ 257

Հայաստան (Հայք) 79, 110, 111, 113, 118, 128, 132-134, 136, 138, 141, 144, 148, 155, 156, 158, 163, 164, 169, 172, 175, 179, 182, 189, 192, 198, 203, 207, 223, 234, 235, 241, 244, 254, 255, 277, 279-282, 287, 288, 304, 316, 348
Մեծ Հայք 109, 325, 393
Առաջին Հայք 109
Երկրորդ Հայք 109
Երրորդ Հայք 109
Չորրորդ Հայք 109, 112
Տուն Թորգոմա 82, 233
Հասարըրահնի բերդ 309
Հաւուց Թառ (Հայոց Թառ) 50, 52, 134, 135, 153, 167, 168, 178, 181, 220, 346, 365, 385
Հարունոյ դաշտ 193
Հարք 108, 133, 138
Հեյնի (Հոնի) 198
Հեր 276
Հերեթ գյուղ 138
Հերսիքե բերդ 293
Հզուաց երկիր 356
Հէշատ 435
Հիզան 288
Հնդկաց աշխարհ 85, 95, 132, 154, 221, 340
Հոնաց երկիր 294
Հոռոմ (Ռումի սուլթանություն) 243-247, 250, 256-259, 268, 275, 281, 284, 299, 308, 339
Հոռոմոսի վանք 57, 173, 185
Հռոմ 91, 107, 115, 118, 119, 122, 125, 129, 130, 134, 145, 149, 160, 212, 243, 269, 270, 272, 308, 321, 353
Հռոմկլա (Կլայ) 175, 204, 221, 233, 236, 267, 302, 317, 346
Հրե քաղաք (Հերաթ) 285
Հրէաստան (Իսրայէլ, Յուդա) 88, 91-93, 94, 96, 97, 110
Հուրմուս քղք. 330

Ձագ գյուղ 164
Ձորավան 185
Ձորափոր 153
Ձորոյ վանք 362

Ղազզէ 245
Ղազմին (Ղազվին) 251, 292
Ղալաթիա 292, 304, 305, 336, 352, 353
Ղանտահար (Կանդահար) 309, 330, 338, 340, 350, 352
Ղարաբաղ 288, 289
Ղարահիսար 295
Ղարաման 278, 294
Ղարայ Ղալխան 342
Ղարանճա 309
Ղրիմ 282, 294, 299, 329
Ղունգուն քղք. 123
Ղօշղատամէ 301

Ճաֆ (Յաֆֆա) 233, 249
Ճէզայիր 311
Ճօֆ 243

Մազազ գավառ 163
Մալթա կղզի 297, 337
Մալ-թէփեսի 301
Մածնաբերդ 221
Մակեդոնիա 99, 142
Մակու 285, 336, 349, 351, 435
Մաղըսբերդ 52, 392
Մամբրէ քաղաք 87
Մամուէստիա (Կիլիկիա) 277
Մայրեաց ջուրք 195
Մանազկերտ (Մանծկերտ) 133, 155, 157, 192, 193, 235, 237

Մանեայ այր 130, 139
Մանիսա 312
Մանղուս 319
Մաշաթ 351, 352
Մաշկեւորի վանք 201, 216
Մասեաց լեռներ 85
Մասեացոտն («որ է Տամբատ») 110
Մասիս (Մասիք) 108
Մասրա 204
Մատրավան 128
Մարաղա 279
Մարաշ (Գերմանիկե) 174, 180, 198, 204, 209, 214, 215, 295, 306, 310, 311, 354, 356
Մարաստան (Մարաց երկիր) 86, 96, 97, 341
Մարմաշէն 179
Մարսվան (Մարզվան) 290, 320, 324
Մարտիւրոսաց քղք. (Տիգրանակերտ, Մայա-Ֆարկին) 109
Մաքենոցաց վանք 161
Մելիտինէ (Մելտենի) 109, 136, 189, 273, 308, 357
Մեծակերտ 163
Մեծամաւր գետ 120
Մեծոփա վանք 275, 287
Մեծքար վանք (Կիլիկիա) 255
Մերճ 307
Մընբէճ 156, 374
Մէհէլլէն գետ 320
Մէտինէ (Մեդինա) 301
Մէրտին (Մարդին) 279, 313
Միակեցեր վանք (Կիլիկիա) 252
Միլան (Մելան) 190, 218, 246
Միջագետք 87, 127, 149, 217, 243, 246, 284, 291, 323, 346
Միտիլ 294
Մլիճի վանք (Կիլիկիա) 257
Մլիդստան 265
Մլիէտ 250
Մլունի դաշտ (Կիլիկիա) 277
Մծբին 112
Մոլեւոն (Կիլիկիա) 263
Մոկք 174, 285
Մոռայու երկիր (Մորավիա) 293
Մովդէիմ 94
Մսիս (Մամեստիա) 154, 175, 209, 210, 215, 222, 227, 256
Մսր – տե՛ս Եգիպտոս
Մրեն 146
Մուղան 256, 261, 264, 283
Մունդաս (Կիլիկիա) 251, 424
Մուշ 236, 243, 280
Մուռանտին 250
Մուֆարղին 136, 189, 251
Մօսկոֆ 357
Մօսուլ 204, 252, 276

Յարդուխ յօվասի 311
Յարկա 221
Յիպօնիա քաղաք 135
Յոպպէ 357
Յորդանան գետ 88, 90, 116

Նազարեթ 115, 243
Նախճաւան (Նախիջեւան) 155, 283, 316, 325, 345, 351
Նաւարա 245
Նեգրոպօնթ 297
Նեսբին – տե՛ս Մծբին
Նըլան 289, 435
Նիգ 160, 179, 336
Նիկիա 117, 129, 130, 133, 136, 139, 156, 200, 321
Նիկիտա (Նիկտէ) 256
Նիկոմեդիա 158
Նինուէ (Նինոս) 85, 96
Նորբերդ (Կիլիկիա) 249

Նորավանք 45, 266
Նորիբերդ 209

Շահաստան 240, 351
Շամ (Սիրիայի տարածքը) 251, 284, 287, 296, 299, 306, 307
Շամախի 304, 322, 326, 327
Շամշուլտէ (Սամշվիլդե) 190, 195, 290, 437
Շամպ 247
Շամրին 93
Շամքոր 230
Շատիկ վանք 349
Շատրւան (Շատվան) 287
Շար (Շարուն) 264
Շաքի 197
Շէզառ (Շայզար ամրոց) 202
Շիրազ 292
Շիրակ 108, 173, 182, 206, 222
Շիրակաւան (Երազգավորս) 163, 166
Շնքուռկու գյուղ 310
Շրուան (Շիրվան) 320, 322, 326
Շօշ – տե՛ս Սպահան
Շօպագ 205

Ոթմուս (Աւթմսոյ գիւղ) 158
Ոստան (Բուն Ոստան) 112, 141, 161, 374
Ոստան քղք (Վաստան) 226, 285, 287, 288, 310
Ովայ գյուղ 163, 181, 386
Որեդ 85
Որոտան բերդ 283, 285, 433

Չալտրան 306
Չէրքեզու երկիր 314
Չինամեչին 240
Չմշկածագ 176
Չօռոմ 323, 324
Չօրլու 307

Պախջայ Սարայ (Բախչիսարայ) 340
Պահռիս 312
Պաղեստին 169, 220, 257
Պաղին (Պաղրաս) բերդ 163, 188, 233, 296
Պայազիտ (Բայազետ) 348, 350
Պաշխաչուխ (Իմերեթ) 342
Պապեռոն (Կիլիկիա) 195, 220, 274
Պառատիս գետ 201
Պատմոս կղզի 120
Պարխազ 309
Պարսկաստան 99, 128, 141, 153, 158, 175, 198, 199, 241, 282, 299, 316, 325
Պաւտամինոս գետ 86
Պէր (Պիր, Պէրէճուկ) 299, 317, 354
Պէլըրղատ (Բելգրադ) 308, 334, 347
Պէրուք (Բեյրութ) 202, 251
Պիաֆորդ (Բոֆոր) 251
Պլինաս 221
Պլպէս (Բելբես) 219, 409
Պոնտոս 109
Պոնտոսի ծով 281, 319
Պռականա (Կիլիկիա) 246, 247, 249, 421
Պտիզ 152
Պտղոմիդա 89
Պուղտնան 315
Պուռունուն 293
Պուտա (Բուդա) 309, 347
Պուտում (Բուդրոմ) 308-309
Պօսնայու երկիր (Բոսնիա) 293

Ջահան գետ 241, 256
Ջահուկ 351
Ջավախք (Ջավախեթ) 112, 222
Ջուղա (հին) 325
Ջուղա (նոր) 325

Ռահբէ 257
Ռապան 204
Ռասեման 85
Ռէ 292
Ռինոյկորուր 85, 86
Ռշտունիք 298, 326
Ռոբովք 85
Ռօտոն (Հռոդոս) 148, 309

Սագաստան 145
Սալմաստ 276
Սալնապատ 185
Սալչուկ 339
Սախոտէ 235
Սահաթ 316
Սամարիա 90-92, 97
Սամարղանդ 282, 283, 285
Սամոսատ 174
Սամցխե 197, 248
Սայիտէ (Սիդոն) 202, 214, 249, 251
Սանահին 174, 175, 185, 202, 237
Սառացու (Տեւու) վանք 310
Սարաւոյթ (թախտ) Տրդատայ 129, 346, 362
Սասուն 164, 220, 222
Սաւա 292
Սաւրիա (Իսավրիա) 210, 215, 216, 274
Սարդխան (Սարթիան) 224, 226, 414
Սարվանդիքար 209, 210, 227, 252
Սեբաստիա (Սեւաստ) 171, 180, 183, 185, 188, 188-190, 247, 248, 277, 283, 284, 299, 302, 308, 310, 311, 317, 318, 322, 325, 328, 339-341
Սեբոիմ 86
Սելէնիկ 333
Սելեւկիա 95, 231
Սելեւկիա գետ 215, 231
Սեղմա գավառ 288
Սեւերեկ 247
Սեւ լեռ (Ամանոս) 191, 192
Սեւան կղզի 154, 168, 175, 342
Սեւետիա գավառ 301
Սեւորդեաց գավառ 175
Սէիլ (Սիրիայի ծովափնյա շրջան) 221, 228, 247
Սիկիլիա կղզի 276
Սիմ լեռ (Տաւրոս) 110, 112, 159, 164
Սինա անապատ 149
Սիւնիք (Սիսական, Բաղք) 44, 45, 109, 175, 204, 283, 415
Սիս 216, 220, 232, 233, 239, 240, 253, 255, 266, 268, 270, 272, 273, 279, 281, 285, 288, 290, 291, 293-298, 300, 302, 308, 312-316, 318, 323, 325, 334, 336, 337, 339-341, 345, 349, 353, 355, 356, 431
Սկեւռա վանք 257
Սղկունիք 112
Սմբատաւան 171, 378
Սնապու բերդ (Սինոպ) 293
Սոդոմ 86
Սպահան (Ասպահան, Շօշ) 95, 199, 200, 292, 325, 326, 328, 332, 335, 341-343, 346, 349-352
Սպանիա (Իսպանիա) 212, 245, 280, 302, 313, 323
Սպեռիոս 86
Սպեր 314, 315, 378
Սպիտակ ջուր 263
Ստամբուլ – տե՛ս Կոստանդնուպոլիս
Սրուճ 82
Սուլթանիա 285, 287
Սումթուն 309
Սուր (Տյուրոս) 89, 201, 208, 221, 228, 229
Սուրբ Ամենափրկիչ (Անի) 209
Սուրբ Աննա (Թոխաթ) 300

Սուրբ Աստուածածին (Ադրիանապոլիս) 348
Սուրբ Աստուածածին (Աղթամար) 172
Սուրբ Աստուածածին (Այնթապ) 351
Սուրբ Աստուածածին (Խնդրակատար, Բաղեշ) 347
Սուրբ Աստուածածին (Սիս) 356
Սուրբ Գայիանէ 353
Սուրբ Գէորգ (Ծառաքար) 183
Սուրբ Գրիգոր (Անի) 179, 384
Սուրբ Գրիգոր (անորոշ) 245
Սուրբ Գրիգոր (Բագավան) 349
Սուրբ Գրիգոր (Բագրեւանդ) 154, 353
Սուրբ Գրիգոր (բնակավայր Արագածոտնում) 161
Սուրբ Գրիգոր (Գառնի) 129
Սուրբ Գրիգոր (Դվին) 146
Սուրբ Գրիգոր (Զվարթնոց) 151
Սուրբ Գրիգոր (Խոր վիրապ) 151
Սուրբ Գրիգոր վանք 158, 375
Սուրբ Դանիէլի վկայարան 166
Սուրբ Եղիա (Գառնի) 152
Սուրբ Զորավար 167
Սուրբ Թադէի վանք 68, 247, 274, 291, 349, 350, 352, 353, 430, 435
Սուրբ Թէոդորոս (Դէդորոս, Թորոս, Ամիթ) 290, 307
Սուրբ Թորոս (Վահկա) 308
Սուրբ Լուսաւորիչ (Ղալաթիա) 304, 352, 353
Սուրբ Լուսաւորիչ (Սեբաստիա) 322
Սուրբ Խաչ (Աղթամար) 172
Սուրբ Կաթողիկե (Անի) 178, 181, 186, 384
Սուրբ Կաթողիկե (Արգինա) 177
Սուրբ Կաթողիկե (Արուճ) 152
Սուրբ Կաթողիկե (Գառնու ձոր) 135
Սուրբ Կաթողիկե (Երզնկա) 255
Սուրբ Կաթողիկե (Էջմիածին) 128, 129, 332
Սուրբ Կաթողիկե (Կարս) 173
Սուրբ Կաթողիկե (Հավուց թառ) 181
Սուրբ Կաթողիկե (Մրեն) 146
Սուրբ Կանոնոսի վանք 356
Սուրբ Կարապետ (Գլակավանք) 128, 189, 224, 225
Սուրբ Կարապետ (Նախճուան) 345
Սուրբ Հռիփսիմէ 147, 341, 352
Սուրբ Մարի (Սուրմարի) 245, 283
Սուրբ Միաբանից եկեղեցի 327
Սուրբ Յակոբ (Երուսաղեմ) 339
Սուրբ Յակոբ (Սիս) 355
Սուրբ Յարութիւն (Երուսաղեմ) 184, 280, 288, 303
Սուրբ Յովհաննէս (Ամիր Դօլու) 347
Սուրբ Յովհաննէս (Լեւոնբերդ) 317
Սուրբ Յովհաննէս (Ծառաքար) 183
Սուրբ Յովհաննէս (Հոռոմոս) 185, 394
Սուրբ Նիկողայոս (Թոխաթ) 323
Սուրբ Նշան (Երզնկա) 322
Սուրբ Նշան (Սեբաստիա) 185
Սուրբ Շողակաթ 348, 349
Սուրբ Սարգիս (Անի) 17
Սուրբ Սարգիս (Դվին) 149, 151
Սուրբ Սարգիս (Խծկոնք) 17, 183
Սուրբ Սարգիս (խաչ Գագում) 219
Սուրբ Սեքենոս (Ծառաքար) 183
Սուրբ Սիօն (Երուսաղեմ) 303
Սուրբ Սոփիա (Կոստանդնուպոլիս) 143, 179, 292
Սուրբ Սոփիա (Սիս) 356
Սուրբ Ստեփանոս (Թոխաթ) 323
Սուրբ Պետրոս 184
Սուրբ Պետրոս (Անտիոք) 188
Սուրբ Վասիլ (Սիս) 356
Սուրբ Փրկիչ (Ուլաշ) 328

Սուրբ Քառասնից վանք (Սեբաստիա) 283
Սուրբ Քառասունք (Հալեպ) 304
Սուրսիկ բերդ 309
Սփերա լեռ 85

Վագայ (նաեւ՝ Վահկա) 296, 308
Վալան 221
Վալմունդ 221
Վակունիք 113
Վահկա 196, 201, 210, 211, 216, 341
Վաղարշապատ (Նոր քաղաք, էջմիածին) 124, 128, 290, 291, 293, 298-301, 305, 313, 314, 318, 325, 328, 331-335, 340, 341, 345-350, 355, 356, 441
Վաղարշաւան 124
Վայոց ձոր 266
Վան 109, 282-284, 287-289, 304, 313, 326, 327, 334, 338, 339, 341
Վանանդ 192
Վաստան – տե՛ս Ոստան
Վասպուրական 154, 159, 172, 174, 175, 177-180, 185, 289, 303, 325
Վատնիանեան դաշտ (Վատներան) 130
Վարագ 151, 173, 183, 198, 266, 304, 338
Վարդանակերտ 154
Վնէժ (Վենետիկ) 236, 318
Վրանջունիք 110
Վրաց աշխարհ (Վիրք, Վրացտուն) 171, 175, 182, 206, 207, 231, 236, 237, 244, 248, 255, 283, 284, 287, 290, 293, 295, 312, 328, 344
Վրկան 145

Տաբարիա (Տապարի) 222, 248
Տաթեւի Մեծ Անապատ 342, 343
Տաթեւի վանք 287, 343
Տաճկաստան 146, 174, 200
Տամիաթ (Դամիետ) 248, 301
Տայուշ (Տավուշ) 213
Տաշիր 112
Տարախլը 293
Տարոն 131, 150, 167, 189, 253, 315
Տաւրոս 191, 195
Տարսոն (Թարսիս) 89, 175, 176, 195, 196, 209, 210, 215, 229, 243, 261, 270, 272-274, 277, 296
Տերաճ բերդ 293
Տէմիր-ղափի 314, 327
Տէրէնտու բերդ 297
Տէրունական 208
Տիլղուվար 309
Տիւրիկ 303
Տլուք գավառ 175, 191
Տրապիզոն 183, 255, 256, 258, 293, 319, 329, 331, 393
Տրապօլիս (Լիբանանում) 202, 221, 222, 228, 235, 251, 262, 265, 424
Տրովաթա 356
Տփխիս (Թիֆլիզ) 206, 235, 253, 257, 258, 262, 265, 283-285, 312, 338, 343, 351
Տօղատափ 243

Ցիպնա վանք 289, 435
Ցոլակերտ 108

Ուլահ 315
Ուլաշ գյուղ 328
Ուչքիլիսե - տե՛ս Բագավան
Ուռընկար 63
Ուռհա (Եդեսիա) 116, 125, 156, 173, 184, 192, 193, 198, 200-202, 204, 205, 210, 227, 245, 247, 299, 300, 308, 313, 324, 440
Ուռումէլի 295

Փառիսոս 209
Փարզման 204
Փարոխոտ 108
Փիզան բերդ 341
Փռիւգիա 196
Փօլեայ կղզի 301

Քաղանէ 85
Քաղիւն 159
Քաղավազ դաշտ 109
Քաղդեացւոց աշխարհ 80, 87
Քաղկեդոն 137, 139, 140, 144, 147, 166, 175
Քանանացւոց երկիր 87
Քաշան քղք. 292, 336
Քապիկ գյուղ 330
Քասաղ գետ 124
Քարաք (Կրակ) 205
Քարթլի 193
Քարման (Կերման) 292
Քեթու 257, 258
Քեղի բերդ 242, 385
Քեսուն 204
Քիլի 301
Քիլիս 326, 350, 354
Քրտստան 310
Քուբաթիս 197

Օխթիք (Օլթի) 226
Օսխորդ գյուղ 335
Օրէլ քղք. 287
Օրտուպազար 340

Ֆահրապատ 332, 344
Ֆարսախ 297
Ֆլանտր (Ֆլանդրիա) 236
Ֆռնօս 314
Ֆրանցա (Ֆռանկստան) 281, 288, 309, 311, 322
Ֆրատօս 301

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՑԱՆԿ

Ազգային, էթնիկական եւ տեղային ծագմամբ անուններ

Աթենացիք 86, 104
Ալամանք (գերմանացի, նեմցա) 212, 213, 244, 248, 347
Ալան 139
Ալեա 211
Ամաթուսացի 86
Ամինացի 86
Ամուրիացի 86
Ասիացի 99, 100, 200
Ասորեստանեայք (ասորի) 82, 85, 100, 101, 109, 144, 149, 155, 202, 246, 284, 285, 334
Արաբացիք (արապ) 85, 115, 146, 221, 297, 300
Արադացիք 85, 86
Արամացիք (որ եւ Ասորիք անուանին) 85
Արգիացի 104
Արիանացիք 85
Արուկացի 86
Ափխազ 222
Ափրիացիք 85
Բաբիլացի 96, 97, 98
Բակտրիանոսք 85, 170
Բիզան 213
Բուլղար 180
Գաղատացիք 86
Գամբանացի 139, 145, 243
Գասփաենացիք 85
Գարգարացի 112
Գարդմանացի 112
Գերգեսացի 86
Գինոսոփիստայք 85
Դակեցիք (դակեր) 86
Դիպուրսացի 137
Դուսկան (դուսգան) 119, 135, 139
Եբրայեցիք 80, 85
Եբուսացի 86
Եգիպտացի (մսրցի) 87, 88, 95, 149, 150, 248, 251, 253, 256, 257, 261, 269, 270, 275, 278
Եթովպացի 103, 110
Եմուղացիք 85
Ընկլիզ (անգլիացի) 215, 323
Ընկռուզ (մաճառ, հունգար) 308-310, 322
Թաթար (տաթար, նետողաց ազգ) 239-242, 244-249, 251, 257-259, 268, 269, 271, 273, 299, 303, 314, 328, 329, 335, 336, 340
Թետաղք 86
Թրակացիք 86
Թուշ 343
Թուրք 180-184, 190, 192, 196, 198, 205, 224, 237, 249, 251, 256, 262, 281, 283, 289, 291, 292, 296, 297, 299, 300, 308, 315, 319, 342, 343, 345, 351
Թուրքման 220, 230, 251, 283, 286, 287, 288, 294, 296
Իլամացիք 85
Ինկլիզ (անգլիացի) 312
Իհալացի 303
Լանկուպարտք (լոմպարտ) 143, 223, 245
Լատինացիք 86, 106, 107, 133, 248, 320, 344, 348
Լեհ 302, 329, 332, 334, 347
Լէկզի (լեզգի) 350
Լիբեացիք 85
Լիկեացիք 86
Լիւդացի 98
Լիւրիկեցիք 86
Խազիք (խազար) 152, 153
Խարաման (կարաման) 261
Խեւացի 86
Խորազմիք (խորեզմցի) 242-248

Ծաւդէացի 112
Կամեղացիք 85
Կապադովկացի 109
Կեղտք (կելտ) 86
Կորնթացի 106
Կրետացիք 86
Կեդրուսացիք 85
Հայք (Հայոց ազգ, արմէն) 86, 109, 132, 145, 149, 150, 156, 166, 191, 202, 205, 221, 223, 231, 234, 235, 237, 242, 267, 273, 388, 290, 294, 300, 305, 308, 313, 315, 316, 321, 322, 325, 326, 331, 334, 348, 352, 357
Հապաշ (հաբեշ) 334
Հելլէնք 86
Հնդիկք 85, 115, 170
Հոռոմք (հռոմայեցի) 86, 100, 106, 107, 113, 114, 123, 129-132, 137, 138, 147, 149, 152, 159, 163, 168, 180, 190, 191, 193, 200, 203, 212, 214, 221, 223, 234, 236, 242, 300, 317, 323, 334
Հրեա (եբրայեցի, իսրայելացի, ջհուտ) 82, 87, 88, 94, 96-98, 101, 107, 110, 111, 114, 115, 117, 119, 149, 151, 161, 164, 168, 217, 218, 302, 321, 326, 341, 348, 357
Ղագացիք 85
Ղազոնացիք 85
Ղզլպաշ (կարմրագբակ) 302, 304, 315, 318, 327, 331, 338, 352
Ղիդացիք 85
Ղփտի 334
Մակեդոնացիք 86, 99, 100, 111, 162
Մասագեցի 98
Մարք 86, 96-98, 109, 110, 149, 170, 304, 351
Մեդացի 96, 170
Մոսէնացիք 85
Յարաքացիք 85
Յոյն (հույն, հելլեն) 86, 109, 110, 122, 129, 132, 133, 140, 143, 144, 146, 153, 158, 166, 173, 176, 185, 186, 189, 190, 192, 196, 200, 211, 217, 220-222, 230, 233, 234, 257, 266-268, 292, 294, 312, 312, 319, 334, 340, 348, 352, 353
Յուդա 90
Շամցի (սիրիացի) 296
Որթոսեցի 86
Չերքէզ 307, 314
Պաղեստինացի 149, 200, 202
Պամփիւղացիք 85
Պարթեւ 87, 94, 100, 108, 111, 116, 123, 149, 224
Պարսիկ 99, 103, 109, 112, 114, 115, 133, 134, 136, 138, 140, 143, 144, 146, 147, 149, 151, 163, 170, 175, 189, 192, 193, 197, 199, 200, 202, 230, 309, 331, 335, 341, 344, 350-352, 356
Ջաղաթայ (չաղաթայ) 285, 288, 289, 291
Ջինիվիզացի (Ջենովացի) 282, 303
Ռաժիկ 141
Սարակինոս (սարաճինացի) 87, 245
Սարմատք 86
Սարտայ 136, 138
Սաքսոն 180, 136
Սեւք 297
Սիդովնացիք 86
Սիկիլացիք 86, 152
Սիկոնացի 103
Սկիւթացիք 85, 169, 170, 186, 200, 202, 206
Սպանացի (իսպանացի) 131, 139
Սուրիացի (սուրինա) 122, 153
Վէնէտիկցիք 282, 337, 347
Վիրք (վրացի) 86, 112, 143, 147, 182, 206, 215, 223, 233-236, 240, 242, 259, 264, 284-286, 300, 331, 343, 351
Վրկանիկք 85
Տաճիկ 87, 143, 146-149, 151, 158, 168, 175, 184, 195, 200, 205, 215, 216, 220, 227, 228, 233, 235, 236, 255, 258,

280, 281, 293, 294, 296, 300, 305, 307, 322, 326, 334, 337, 348, 352, 354, 355
Տիւրենացիք 86
Տրիպողիտ 86
Տրոգղացիք 85
Տրովացի 104
Ուռուս (ռուս) 329-331, 336, 337
Ուտեացի 112
Փիւնիկեցիք 85
Փղշտացիք 86
Փշաւ 343
Քանանացի 86, 97, 110
Քաղդեացի 80, 82, 85, 88, 96
Քետացի 86
Քէնքշո 265
Քուշացիք 85
Քուրդ 217, 224, 250, 289, 322, 341
Օսմանցի (Օսմանլու) 246, 288, 291, 293, 298-301, 307, 309, 310, 319, 325-327, 330, 331, 334-338, 246, 347, 351, 352
Ֆռանցեզք 212
Ֆրանկ (փռանգ) 88, 114, 197, 200-203, 205, 208-210, 213, 215, 220, 222, 228, 229, 231, 233, 235, 236, 238, 240, 241, 244, 245, 247, 252, 253, 270, 274, 276, 278-280, 284, 300, 319, 347

Ամիսներ (հին)
Ահեկան 130
Արաց 161
Արեգ 146, 257
Մարերի 209
Մեհեկան 165
Նաւասարդ 257, 329
Սահմի 257
Քաղոց 146

Անբնական երեւույթներ, ծնունդներ 140, 158, 303, 313, 319, 322, 323, 331, 337, 338, 340
Աշխարհագիր 250, 255, 318
Աշտարակաշինություն 80, 82, 108, 113
Աստղագիտություն 88, 321
Ատրուշան 141

Աշխարհագրական անվանումներ
Անտառ 144, 187
Բլուր 87, 120, 151
Գետ 86, 108, 158, 162, 184, 235, 323, 273, 281, 299, 320, 323, 336
Դաշտ 108, 130, 151, 189, 193, 196, 205, 210, 214, 219, 277, 327, 351
Լեռ 85, 161, 162, 210, 211, 313, 315, 323, 347
Ծով 85, 88, 162, 198, 210, 236, 242, 243, 285, 292, 293, 305, 311, 319, 330, 337, 342
Կղզի 86, 132, 186, 276, 297, 301, 337
Հովիտ 112
Ձոր 135
Օվկիանոս 86, 214, 242, 285, 305

Առարկաներ
Գահ (աթոռ) 165, 265, 317
Գաւազան 317
Բահ 146
Կաթսա 215
Կնիք 355
Կռան 337
Ձիատոպրակ 150
Մատանի 147
Նալ 146
Ներկ 95
Նկար (ի կտաւսն) 95
Պարան 150
Սեղան 136
Սկուտեղ 201

Արհեստ, մասնագիտություն
Երաժիշտ 89, 224, 344
Ձինագործություն 82
Էքմեքչի (հացթուխ) 348
Պրունգործ 261
Վիպասան (պատմիչ) 80, 82, 97, 98
Բաղնիս 294, 320

Բանտ (զնդան) 88, 128, 143, 213, 232, 241, 265, 268-270, 273, 287, 297, 354
Բժիշկ 300
Բնական երեւույթներ, տարերք
Ագեւոր (գիսավոր) աստղ (երկնաքար) 156, 177, 181, 182, 192, 202, 240, 307, 317, 319, 320, 329, 344
Արեւի խավարում 116, 117, 141, 146, 176, 184, 190, 204, 210, 222, 230, 245, 278, 280, 288, 323, 340, 341
Երկրաշարժ (շարժ) 116, 117, 145, 161, 162, 167, 181, 183, 184, 204, 206, 212, 213, 220, 221, 245, 250, 255, 257, 258, 262, 274, 280, 281, 293, 300, 301, 313, 319-321, 323, 329, 335, 336, 338, 339, 346, 348, 349, 351, 355, 356
Չյուն (սաստիկ) 189, 218, 221, 281, 286, 328
Մորեխ (մարախ) 174, 204, 242, 249, 273, 287, 288, 329, 336, 337, 347
Չրհեղեղ 80-82, 113, 240, 258, 271, 305, 321, 326
Փոթորիկ 87, 156
Բույսեր
Գարի 189, 323, 325
Թութուն 334
Խոտ 189
Ծառ 144
Սոխ 244
Ցորեն 189
Գանձ 146, 190, 201, 211, 237, 268, 310, 312, 319, 330
Գանձագին գյուղ 181
Գրքեր, գրություններ
Ադամայ ապաշխարութիւն 144
Աղօթք
Անթաքչելի մատեան 144
Աստուածաշունչ (գիր աստուածային) 83, 94, 149, 267, 339, 344
Աւետարանի մեկնութիւն Մանեայ 144
Գիրք Արարածոց 80
Գիրք Մակաբայեցոց 101
Գիրք Մնացորդաց 92, 93
Կաթողիկեից թղթեր 215, 221
Կտակարան 224, 225
Մատթեոսի Աւետարան 89
Մարկոսի Աւետարան 215
Ղուկասի Աւետարան 223
Յոթանասնից թարգմանություն 80-83, 89, 91
Յովհաննու Աւետարան 117
Արտաքին գրքեր 82, 84, 342
Գանձարան ծանուցմանց 355
Գաւրտոսակ 144
Գիրք (գիր, գրություն) 123, 127, 135, 137, 139, 144, 181, 339
Գիրք տպագրել
Դիաթեկ 144
Թարգմանություն 93, 101, 133, 135, 144, 191, 230, 235, 347
Թուղթ (նամակ) 147, 157, 221, 247, 295
Ժամանակագրութիւն 79, 80, 88, 94
Լուծմունք նուրբ գրեանց 253
Կիրակոսակ 144
Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց 270
Հարցմանց գիրք 284
Հրովարտակ 271
Ղուրայան 292
Ճառ 132, 135
Ճիռն աւրհնութեան 144
Մանկութիւն Տեառն 144
Մեկնութիւն Աւետարանի 215, 223
Մեկնութիւն Երգ երգոցին 178
Մեկնութիւն Գործոց առաքելոցն 191
Մեկնութիւնք (տարբեր) 191, 232, 235
Մուրհակ 150
Մուրէտէտ (դեղագիրք) 300
Յայսմաւուրք 286
Շարական 138, 267
Ողբ 309, 315, 322

Ոտանաւոր 292, 311, 318
Պատմագրութիւն (պատմություն) 137, 152, 170, 181, 285, 327, 344
Պատմութիւն Յովասափու 290
Պարապմանց լուծմունք 284
Պաւղոսի տեսիլն 144
Սաղմոս 203, 235, 319, 339
Տաղ 318
Տոմար 152, 315, 317, 320, 321
Քրոնիկոն 80, 129, 142
Դաշնադրություն 192
Դարպաս (պալատ) 192, 294, 298, 304, 356
Դեւ 87
Դրախտ 80, 81
Դրամական միավորներ (փող)
Դահեկան (դեկան) 183, 209, 217, 227, 271
Դրամ 150, 159, 269, 298, 313, 328, 354
Թումման 332
Ղուռուշ 297, 323, 325
Մառչիլ 312, 313, 340
Մարկ 248
Շահի 317
Ռիալ (իռիալ) 333-335, 337
Փարա 354
Փող 140
Ֆլորի 324
Եկեղեցական ժողով 129, 133, 136, 140, 143, 144, 148, 152, 155-157, 166, 175, 176, 237, 266, 270, 272, 290, 321
Եկեղեցական տոներ
Աւագ շաբաթ 155
Աւետարանչաց 305
Գիւտ Խաչի 226
Դավիթ Դվնեցու 341
Դավիթ մարգարեի 348
Զատիկ 123, 142, 143, 152, 159, 181, 234, 255, 267, 270, 272, 283, 312, 321, 352
Ծաղկազարդ (ծառզարդար) 202, 253, 312, 341, 352
Ծնունդ 134, 138, 140, 270, 272
Համբարձում 277
Հրեշտակապետաց 286
Մկրտութիւն 134, 140
Յայտնութեան 149, 234, 332, 352
Պենդեկոստէ 117
Պետրոս եւ Պողոս առաքյալների 221
Սուրբ Աստուածածնի 190, 226, 316
Սուրբ Գեւորգ 345
Սուրբ Խաչ 221, 225, 266, 283, 305, 352
Սուրբ Յակոբա 334
Սուրբ Սարգսի 335
Սուրբ Քառասնից 284
Վարդավառ 225, 356
Տեառնընդառաջ 138
Եկեղեցական սրբություններ
Ամենափրկիչ խաչ 178, 182
Աջ (Գրիգոր Լուսաւորչի) 267, 289-291, 294, 298, 300, 328, 335
Աջ (այլ) 296, 297
Դաստառակ 227, 324
Խաչափայտ (խաչ փրկական) 146, 147, 178, 182, 228, 230
Խաչ քարից 337
Խաչալամ 197
Նշխար 128, 130, 147, 153
Սիկի 339
Սրբություններ (սրբազան առարկաներ) 146, 183, 224, 292, 294, 297, 316, 352
Սուրբ Սեղան 149, 339
Զենք
Թվանկ 282
Թոփ 282, 332, 334
Նետ 146, 211, 297
Սակեր 292
Սուր (թուր) 149, 197, 330
Խաշնամահ 162, 333

Խաչակիրների միաբանություններ
Դամփլուն (Տամպլիեր) 244, 245, 251
Ոսպեթլու (Հոսպիտալիեր) 252
Կախարդություն 87, 212
Կաշառք (կաշառ) 160, 208, 228, 324, 355, 357
Կենդանիներ
Անասուններ 89
Արագիլ 205
Արծիվ 111
Առյուծ 144, 158, 166, 174
Արջ 144
Բու 322
Գայլ 242, 279, 327
Գառ 103
Դաւար (տավար) 352
Եզ 159
Երէ 189
Ձեպր 330
Ընծուղտ 132, 322
Թռչուն 89, 189
Խոյ 322
Խորդ (կռունկ) 205
Կատու 326
Հորթ 331
Ձի (երիվար) 130, 144, 149, 177, 197, 198, 211, 218, 273, 296, 297, 309, 323, 350
Ձուկ 156, 162, 198, 249
Մալ 297
Մայմուն 322
Միեղջերու 330
Շուն 192, 287, 327, 330
Ոչխար 159, 352
Պիծակ 214, 340
Ձորի 177, 296, 332
Վիշապ 110, 174
Ցլափիղ 132
Ցուլ 144
Ուլ 342
Ուղտ 332
Փիղ 330, 338
Քոշ (քաւշ - այծ) 112
Օձ 88, 219, 322
Կտակ 274
Կրոնական, դավանական պատկանելություն
Աղանդ 63, 144, 148, 271, 306
Արիանոսացի 132, 149
Երկաբնակ 155, 289, 316
Թոնդրակեցիներ 181
Իսմայելացի 87, 160, 166, 169, 186, 210, 269, 278
Հագարացի 155, 162, 186, 200, 233, 273
Հակոբիկյան 211
Հեթանոս 87, 106, 121
Հերետիկոս (հերձուածող) 122, 126, 175
Հոռոմ 239
Մահմետական 313, 343
Մանիքեցւոց աղանդ 127
Նեստորական 270
Պատկերապաշտություն 87
Ռաֆթի 216
Սունի 216
Փափադավանություն (պապադավանություն) 333
Օձապաշտություն 88, 91
Կրոնական հալածանք, բռնություն
Բանադրանք 247, 340
Բռնի մահմեդականացում 271, 272, 283, 285, 312, 340, 342
Ծռազատիկ 157, 159, 181, 202, 266, 312, 334
Կուռք խորտակել 128
Նահատակություն (վկայություն) 119, 123, 124, 128, 129, 131, 133, 138, 141, 142, 155, 157, 159, 161, 165, 166, 220, 283-286, 288, 289, 299, 302-305, 308, 310, 311, 329, 346, 347, 353, 355, 357
Նզովք 122, 144, 156

Վիրապընկեց 128
Ուրացություն 165
Կուռք 87, 128, 131
Հագուստ եւ պարագաներ
Գաւազան 339
Գոտի 317
Գտակ (գլխարկ) 321, 330, 357
Գրպան 147
Թագ 94, 110, 111, 166, 175, 233, 234
Ծիրանազգեստ 228
Ձեռնարար (ձեռնոց) 150
Մազեղեն հագուստ 134
Միթր (խույր) 339
Չալմա 290
Սաղաւարտ 339
Վարսակալ 109
Փակեղ 321, 357
Քուրձ 193
Հայերեն լեզու 109, 140, 300, 347
Հավերժահարս 140
Հարկ (խարճ) 113, 120, 150, 229, 233, 250, 271, 279, 312, 322, 324, 325, 331
Հարսանիք 277
Հովիվ 130
Ձիավորեցնել (ասպետության արժանացնել) 250, 251
Ղաւախանա 334
Մահտարաժամ (մարդամահ, համաճարակ) 141, 143, 279-281, 289, 293, 298, 300, 304, 318, 325, 346, 356
Մարդակերություն 327
Մզկիթ (ճամի) 206, 292, 298, 312, 338, 348, 355
Մեյխանա (գինետուն) 348
Մետաղներ, հանածոներ
Արծաթ 158, 201, 248, 292, 317, 352
Երկաթ 212, 282, 307
Լեղակ 334
Ծծումբ 307
Կուպր 162
Պղինձ 148, 212
Նավթ 162, 215
Ոսկի 158, 215, 268, 277, 292, 312, 317, 331, 352, 356
Մթերք
Ալյուր 337, 356
Գարի 323, 325
Գինի 135, 156
Թան 156
Խորբալ 150
Կաթ 158
Հարիսա 318
Հաց 328, 333, 354
Ձու 156
Ձեթ 156, 253
Նախարարություն 111, 112
Նահապետություն 108, 111, 112
Նավ (ղալե - գալեր, ղատրշա) 211, 273, 288, 292, 299, 314, 326, 329, 338
Շինարարություն
Եկեղեցու 128, 143, 146, 147, 151, 152, 157, 163, 173, 177, 178, 180-184, 201, 221, 247, 252, 266, 274, 290, 304, 328, 348, 353
Ձանգակատուն 339-341
Խաչ կանգնեցնել 129
Կաթողիկոսարանի 157, 160
Կամրջի 294, 299, 311, 333, 336
Հովանոցի 128
Պարսպի 107, 124, 178, 183, 243, 313, 331, 332, 349, 356
Վանքի 128, 134, 173-175, 179, 182, 183, 201, 233, 347
Վկայարանի 128, 147, 149, 151
Քաղաքի, բերդի 82, 87, 89, 91, 94, 95, 97, 109, 116, 120, 124, 139, 154, 158, 162, 183, 286, 321, 349
Չարսու (շուկա) 356
Չափի միավորներ
Բեռ 148
Գիրկ 140, 162
Թիզ (թզաչափ) 221, 249

Լիտր 307, 323, 325, 334, 337, 354, 356
Կանգուն 95, 281
Միլ 156, 281
Մղոն 352
Մոդ (մոթ) 150, 189, 323
Ոտն 148
Վտաւան 342
Պանդոկ (խան) 336, 340

Պաշտոններ, տիտղոսներ, կոչումներ

Աթապակ 214, 256
Ամիրա 146, 149, 154, 158, 159, 171, 189, 192, 197, 202, 206, 210, 214, 223, 226, 231, 237, 244, 256, 276, 277, 320, 326
Ամիրապետ (խալիֆա) 162, 164-166, 169, 175, 206, 213
Աւագ պարոն 239-242, 252, 269, 270, 272
Բազեակիր (Բազեակալ) 111
Բդեշխ 110, 112
Բիւրաւոր 90
Բրինձ (պրինց) 222, 226, 229, 232, 235, 238, 265, 281
Գունդստաբլ 239, 247, 262, 272, 274, 276
Գռալ (կառոլ) 309, 312, 347
Դահճապետ 97
Դիդօփլ (թագուհի Վրաց) 237
Դիկտատոր 107
Երիսթավ (զորագլուխ) 343
Էֆէնտի 334
Ընբրուր (իմպերատոր) 214, 243, 244, 250
Ըռէ տը Ֆրանց (Ֆրանսիայի թագավոր) 213, 214, 248-250
Թագավոր 83, 97-99, 106, 111, 128, 129, 133-136 (բազմիցս)
Թագադիր ասպետ 111, 168
Թուճ (դոժ) 347
Իշխան 90, 140, 148, 149, 152-155, 159, 160, 162, 164, 171, 179, 185-189, 191, 195, 196, 200-205, 212, 213, 216, 220, 228-231, 237-241, 251, 255, 258-262, 266, 268-273, 275, 278-282, 287, 289, 294, 297, 298, 315, 320, 323, 334, 335, 343, 344, 351, 355
Իշխանաց իշխան 166-168, 179, 181, 195, 162, 409
Խալիֆա 155, 176, 177, 183, 211, 212, 218, 250, 308
Խան (ղան) 246-248, 253, 258, 261, 265-268, 270, 276, 278, 280, 289
Կայսր 107, 115, 127, 129, 145, 163, 168, 176, 178, 180, 182, 186-188, 210, 220-222, 238, 268, 269, 347
Կատապան 186
Կողմնապետ 109
Կոմս (նաեւ՝ գունթ) 201, 202, 210, 222, 235
Կուսակալ 111
Կուրապաղատ 161, 171, 180
Հազարապետ 79, 199
Ձյունակիր 111
Ղատի 283
Մագիստրոս 182, 185, 188, 190, 191
Մարաջախտ 279
Մարգիզ 223, 227
Մարզպան 136-138, 145, 153, 209
Մելիք 199, 232, 293
Մովրով 331, 332
Նախարար 111, 131, 134, 166
Նուին 244, 247, 256, 262, 272, 275, 276
Շահ 37, 286, 304, 306-308, 310, 312-320, 325-336, 338, 341-345, 349, 352, 356, 357
Շահնշահ 176, 178, 179, 181, 182, 192

Շեյխ (շեխ) 271, 293, 320
Ոստիկան 116, 164, 166, 169, 171, 172
Չորրորդապետ 116
Պայլ 239, 240, 252, 274
Պատրիկ 148, 152
Պատրոն 409
Պարոն 208, 211, 214-217, 223, 227, 228, 232, 239-242, 250-253, 262, 268-274, 278-280, 283, 293, 295-297, 300, 310, 311, 316, 319, 324, 334, 355
Ռամկապետ 107
Սահիպ 257, 264
Սարդար 326, 327, 340
Սեւաստ 236
Սինեգալ 272
Սպա 149, 340
Սպասալար 111, 237, 265
Սպարապետ 89, 96, 127, 149, 164-166, 233, 235, 281
Սուլթան (հոնտքար) 258, 282, 311 (բազմիցս)
Վեզիր 307, 310, 315, 324, 328, 331-333
Տակառապետ 93
Տանուտէր 282, 298, 325
Տուկ (դուքս) 200, 236
Փաշա 298, 299, 301, 305, 308, 310, 311, 315, 320, 322-235, 341, 348, 350, 357
Փարավոն 88
Պատերազմ եւ հետեւանքներ
Այգի կտրել 315
Արշավանք 123, 124, 180, 182, 214
Գերություն 91, 94, 97, 119, 159, 188, 190, 205, 210, 214, 218, 224, 225, 244, 256, 265, 269, 274, 277, 278, 282, 284, 289, 299, 300, 309, 312, 319-321, 328, 351
Եկեղեցի, վանք քանդել 185, 224, 283, 313, 315, 316
Կոտորած 119, 181, 188-190, 200, 205, 229, 236, 251, 256, 265, 277, 278, 283, 284, 287, 290, 299, 300, 302, 305, 315, 319, 329, 351
Ճակատամարտ, կռիվ 218, 229, 230, 235, 238, 292, 299, 301, 307, 312, 324, 327
Պատերազմ եւ ավերածություն 83, 91, 95, 97, 100, 119, 120, 127, 149, 155, 184, 193, 205, 265, 275, 336
Սուրգուն (արտաքսում) 294, 301, 326, 328, 334
Պատմագիր 127, 140, 216, 217, 233
Չրաղաց 348
Սանճախ (սանջակ) 306
Սինովա (սինագոգ) 348
Սով 141, 143, 162, 174, 184, 190, 192, 193, 196, 198, 200, 207, 235, 240, 269, 279, 289, 324-326, 328, 337, 354, 356
Սպանություն, մահ
Բրածեծ անել 131
Գազանակուր 120
Գլխատում 305, 311, 324, 333, 343
Եռացող կաթսայում եփել 215
Թունավորում (դեղակուր, դեղ մահու) 130, 132, 133, 136, 180, 199, 204, 208, 286, 288, 290, 344
Խեղդամահ 194, 324, 330, 338, 354
Կախաղան 153, 324, 357
Հրկիզում 96, 290, 308, 310
Չիաքարշ 130
Նետահարություն 108
Ձախջախում կացնով 347
Քարկոծում 119, 284, 285
Վաճառական 149, 150, 312, 313
Վաճառանոց (խանութ) 140, 340, 348
Տղայ ժողով (մանկահավաքություն) 295, 306, 307, 309, 311-315, 330
Տպագրատուն (տպագրութիւն) 319, 344
Փողոց 140, 189, 265, 335, 345, 356
Փուռ 348
Քուրմ 104, 112
Ֆրերք (փրերք) 229, 244

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ 5
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
Սամվել Անեցի 8
«Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» Ժամանակագրությունը 19
Ձեռագրերը 28
Հրատարակությունները 31
Ժամանակագրության լրացումներն ու հավելումները 33
Սամվել Անեցու շարունակողները 36
Անանուն Տարոնեցի 37
Հայրապետ վարդապետ..... 39
Հեթում Կոռիկոսցի..... 40
Ստեփանոս Օրբելյան 44
Նաթանայել Հավուցքառեցի 50
Եփրեմ Ղափանցի 53
Ներկա հրատարակության հիմնական ձեռագրերը 55
Բացատրություն բնագրի վերաբերյալ 74
ԲՆԱԳԻՐ 77
Ա
ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ՄԱՍՆ Ա (Ադամից մինչեւ Քրիստոսի ծնունդը) 79
ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԼՐԱՑՈՒՄՆԵՐՈՎ
ՄԱՍՆ Բ (Քրիստոսի ծննդից մինչեւ 1163 թ.).....115
Բ
ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑՈՒ ՇԱՐՈՒՆԱԿՈՂՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ
(1164 – 1776 թթ.) 220
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 358
ՑԱՆԿԵՐ
Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերը 447
Անձնանուններ 451
Տեղանուններ 481
Առարկայական 494

ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿՈՂՆԵՐ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Ադամից մինչեւ 1776 թ.

Աշխատասիրությամբ Կարեն Արտաշեսի Մաթեւոսյանի

Խմբագիր՝ Վահան Տեր-Ղեւոնդյան

Ձեւավորումը՝ Կ. Մաթեւոսյանի
Սրբագրիչ՝ Անի Մաթեւոսյան

Պատվեր՝ 37: Տպաքանակ՝ 500
Գինը՝ պայմանագրային

«Նաիրի հրատարակչություն» ՓԲԸ
Երեւան-9, Տերյան 91

«Նաիրի» հրատարակչության տպագրատուն
Երեւան-9, Իսահակյան 28